Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary



ԱՄԱՍՏԵՂԾՈՂ ԱՄԻՍՅԱՆ

1917-2000

ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

գիրք Գ
1985-2000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՄԱՐՏՆՉՈՂ ԱՐՑԱԽԸ
1917 – 2000

ԳԻՐՔ Գ
1985 – 2000

40 402

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Մշակութանակերպ
«Դիզակ պլյուս» ՍՊԸ
2007

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.3 (2 Հ)
Ա 161

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Նվիրվում է Արցախի ազգային ազատագրական պայքարում զոհված ազատամարտիկների հիշատակին: Փա՛ռք նրանց

Խմբագիր՝ ԳԵՂԱՄՅԱՆ Գ.Մ.
պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր

Գրախոսներ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Կ. Ա. - պատմագիտության դոկտոր
ՄԻՆԱՍՅԱՆ Է. Գ. **պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր**

Աբրահամյան Հրանտ Բ.
Ա 161 Մարտնչող Արցախը (1917-2000).- Գիրք Գ (1985 – 2000). – Ստեփանակերտ: Դիզակ պլյուս, 2007. –744 էջ:

Հրանտ Աբրահամյանի «Մարտնչող Արցախը» մենագրության սույն գրքում պատմագիտական հետազոտությունների, արխիվային հարուստ նյութերի, մամուլի և այլ փաստական տվյալների հիման վրա շարադրված է Ադրբեջանի բռնատիրության դեմ արցախահայության 1985–2000թթ. մղած ազգային-ազատագրական պայքարի պատմությունը:

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

ԳՄԴ 66.3 (2 Հ)

ISBN 978-9939-800-27-1

©Հ. Աբրահամյան, 2007թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արցախ-Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարը նոր վերելք ապրեց 1985 թվականից սկսած՝ գորբաչովյան վերակառուցման շրջանում: Ակնհայտ է, որ Մոսկվան և Բաքուն անտեսում էին արցախահայության արդարացի պահանջը և ավելի էին ուժեղացնում ճնշումը նրա վրա: Այդ ամենի հետևանքով Արցախ-Ղարաբաղը գնալով հայաթափվում էր, իսկ մարզի տնտեսական, սոցիալական և գիտամշակութային զարգացումը խոչընդոտվում էր:

Ազգային խտրականությունը, ճնշումն ու մարդկանց հետապնդումը դրսևորվում էին ամենուր: Արցախի ինքնավարությունը, փաստորեն, ձևական բնույթ էր կրում: Երկրամասի բնակչության մի մասը հարկադրված էր արտագաղթել: Մարզի համար ստեղծվել էր չափազանց ծանր վիճակ: Արցախցիների աչքի առաջ էր Նախիջևանի օրինակը: Այդ ամենը տեսնելով՝ արցախահայությունը ելավ ազգային-ազատագրական պայքարի:

Արցախ-Ղարաբաղում ստեղծված անտանելի վիճակը հարկադրված էր խոստովանել նույնիսկ Արկադի Վոլսկին. «Հիշենք թեկուզ, թե ինչպես է ծագել ու զարգացել Ղարաբաղյան շարժումը: Ինչո՞ւ մարդիկ անվերապահորեն Հայաստանին միանալու հարցը դրեցին: Որովհետև տեսնում էին, թե ինչպես է Ադրբեջանի ղեկավարությունը մարզը հետզհետե փակուղի մտցնում, ձգտում է խլել հայ բնակչության բնական կապը Հայաստանի հետ մշակույթի ու լեզվի ոլորտներում և որոշակի խոչընդոտներ է հարուցում հայալեզու մտավորականության դեմ: Այդ բոլորն իրականություն է: Այդ ամենը՝ ճշմարտություն: Իմ ուղևորությունների ժամանակ երկրամասում ոչ մի տեղ չեմ հանդիպել մարդկանց ճակատագրի հանդեպ այնպիսի բարձիթողության ու արհամարհանքի, ինչպիսին Լեռնային Ղարաբաղում»[1]: Իսկ դրանից առաջ 1988թ. օգոստոսի 24-ին, տեղի ունեցած մարզխորհրդի 20 րդ գումարման ութերորդ նստաշրջանում ունեցած իր ելույթում նա ասել է, որ ԽՄԿԿ Կենտկոմում բաժնի վարիչ եղած ժամանակ եղել է Բրեստից մինչև Խաբարովսկ և «ոչ մի տեղ չի տեսել ավելի բարձիթողի քաղաք, որքան Ստեփանակերտը: Ես

[1] *"Правда", 15.01.1989.*

դա ձեզ ասում եմ ամենայն պատասխանատվությամբ... Դուք շատ համբերատար ժողովուրդ եք»[2]:

Արցախի պատմության ուսումնասիրության սույն ժամանակաշրջանը կարելի է բաժանել երեք փուլի՝ 1985-ից մինչև 1992 թվականի մայիսը, այսինքն՝ շարժման սկզբից մինչև Շուշիի ու Լաչինի ազատագրումը և Հայաստանի հետ միջանցքի բացումը, 1992թ. մայիսից մինչև 1994թ. մայիսը, այսինքն՝ մինչև զինադադարի հաստատումը և հանրապետության սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակը՝ մինչև 2000 թվականը: Արխիվային նյութերի, մամուլի և բազմաթիվ աղբյուրագիտական փաստերի հիման վրա ուսումնասիրության մեջ գիտաքննական մոտեցմամբ լուսաբանվել են արցախյան շարժման նոր վերելքը համազգային պայքարի համատեքստում, Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու նպատակով համազգային շարժման ծավալումը, Ադրբեջանի իշխանությունների կողմից հայերի նկատմամբ իրագործված բռնարարքների քաղաքականությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը և այն որպես արցախյան հիմնահարցի լուծման միջոց, Արցախ-Հայաստան անմիջական կապի հաստատումը, հայ-ադրբեջանական չհայտարարված պատերազմը, պատերազմում դժվարությունների հաղթահարումից մինչև հաղթական ավարտը, Արցախի պաշտպանական բանակի ստեղծումը, Արցախյան շարժումը և սփյուռքահայությունը, Արցախյան շարժումը և հայ հասարակական-քաղաքական ուժերը, արցախյան հիմնահարցի միջազգայնացումը, ԼՂՀ սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակը 1994–2000 թվականներին և այլ հարցեր:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում հայ ժողովրդի համառ, անզիջում պայքարի և սահմանադրական իրավունքի շրջանակներում ձեռնարկված գործողությունների շնորհիվ որոշ չափով կասեցվեցին Մոսկվա-Բաքու հակահայկական նկրտումները: Դա հնարավոր դարձավ անկասելի ցույցերի, հանրահավաքների, համազգային գործադուլների, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության պետական ու քաղաքական մարմինների ընդունած օրինական որոշումների, աշխարհասփյուռ հայության կողմից արցախցիներին ցուցաբերած նյութական և բարոյական աջակցության ու ամենակարևորը՝ համայն

[2] *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվ, (այսուհետև՝ ԼՂՀ ՊԱ) ֆ.1, գ.2, գ. 266, թ. 44:*

հայության հերոսական պայքարի շնորհիվ: Արցախյան հիմնախնդրի լուծման գործընթացում դրական ու վճռորոշ դեր խաղաց նաև ազգային ժողովրդավարական վերափոխումների իրականացումը Հայաստանում և Արցախում: Այդ ամենի արդյունքում Արցախ-Ղարաբաղը ձեռք բերեց անկախություն, և աստիճանաբար սկսեցին ամրապնդվել Հայաստանի ու Արցախի տնտեսական, քաղաքական և մշակութային կապերը:

Արցախյան հիմնախնդիրը և դրա հետ կապված բազմաթիվ հարցերի պարզաբանումը առնչվում է լուրջ դժվարությունների հետ: Առաջ քաշված վերոնշյալ հարցերին պատասխանելու համար պահանջվեցին հետազոտական լուրջ աշխատանքներ և բացահայտել տասնամյակներ շարունակ անդուլ պայքարի արմատներն ու խնդիրները: Դրա համար, բացի նրանից, որ օգտագործել ենք հրապարակված գրականությունը և ժամանակի մամուլը, հանգամանորեն ուսումնասիրել ենք նաև Հայաստանի ազգային (ՀԱԱ) և ԼՂՀ պետական արխիվներում պահվող հարյուրավոր գործեր[3], ինչպես նաև 1960-1980-ական թվականներին հրատարակված վիճակագրական մի շարք ժողովածուներ[4], որոնցում կան փաստական տվյալներ Արցախի ազատագրական պայքարի նախընթաց ժամանակաշրջանում երկրամասի տնտեսության ընդհանուր վիճակի վերաբերյալ:

Լեռնային Ղարաբաղի ազգային–ազատագրական պայքարի հենց սկզբից Երևանում, Ստեփանակերտում և Բաքվում տպագրվել են փաստաթղթերի բազմաթիվ ժողովածուներ, որտեղ խոսվում է Արցախի թնջուկի այս կամ այն հարցի մասին: Արժե հիշատակել ակադեմիկոս Վարդգես Միքայելյանի խմբագրությամբ լույս տեսած փաստաթղթերի և նյութերի ժողովածուն[5], որտեղ բազմաթիվ նյութերում, մանավանդ Վ.Միքայելյանի գրած պատմական ակնարկում, հանգամանորեն խոսվում է Արցախի հիմնախնդրի մասին և կատարվում լրջմիտ եզրակացություններ: Այդ շրջանում հրատարակվել են նաև ժողովա-

[3] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 82, 83, 84, 85, 87, 127, ֆ. 4516, 4517, 4535, 4514, ԼՂՀ ՊԱ, ֆ.1,2,250,254 և այլն:*

[4] *Sti u Нагорный Карабах за годы советской власти, Степанакерт, 1960. Достижения Нагорного Карабаха в девятой пятилетке, Степанакерт, 1976. Народное хозяйство Азербайджанской ССР в 1984 году (статистический ежегодник), Баку, 1985 և այլն:*

[5] *Нагорный Карабах в 1918-1923гг. Сборник документов и материалов, Ереван, 1992.*

ծուներ[6], որոնց կազմող հեղինակները դրանցում տեղադրել են այնպիսի նյութեր, որոնք անմիջապես կապ ունեն արցախյան հիմնախնդրի հետ և բխում են նրա արդարացի շահերից: Ասենք նաև, որ դրանցում բավականին տվյալներ կան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) հետպատերազմյան շրջանում սոցիալ-տնտեսական կյանքի տեղաշարժի և քայքայված տնտեսության վերականգնման վերաբերյալ:

Արցախյան պայքարի սկզբին Ստեփանակերտում հայերեն և ռուսերեն լեզուներով տպագրվել է մի ժողովածու[7], որի հեղինակները, 60 փաստաթղթեր և նյութեր շրջանառության մեջ դնելով, փաստորեն պատասխանել են Ադրբեջանի իշխանությունների մեքենայություններին: Առանձնապես հետաքրքրություն է ներկայացնում այդ աշխատանքում տեղ գտած «Պատմա-քաղաքական տեղեկագիր Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի մասին» հոդվածը, որտեղ շարադրված է Լեռնային Ղարաբաղի ինքնավարության ծագման հետ կապված Ադրբեջանի իշխանությունների կողմից Արցախի նկատմամբ իրագործված ճնշման քաղաքականության, վերակառուցման շրջանում բարձրացած արցախյան և այլ խնդիրների հետ կապված հարցերի պատասխանները: Այդուհանդերձ, պետք է նշել, որ հեղինակների ուշադրությունից վրիպել են բազմաթիվ նյութեր, մանավանդ խորհրդային տարիներին արցախահայության կողմից Մոսկվա ուղարկված տասնյակ բողոք-նամակները, որոնք ժամանակին տպագրվել են արտասահմանյան հայ մամուլում:

Ակադեմիկոս Գ.Գալոյանի և պրոֆեսոր Կ.Խուդավերդյանի խմբագրությամբ 1988-ին հրատարակվել է «Լեռնային Ղարաբաղ» պատմական տեղեկագիրը[8], որտեղ համառոտակի շարադրված է Արցախ-Ղարաբաղի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև պայքարի նոր շրջանի սկիզբը: Տեղեկագրում

[6] *Азербайджанская аргументация и ее опровержение, Ереван, 1989, Правда о Нагорном Карабахе, весна-осень 1990, документы и материалы, Ереван, 1990. Нагорный Карабах и вокруг него. Глазами независимых наблюдателей, Ереван, 1991. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, Ստեփանակերտ, 2001: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանները թվերով, Ստեփանակերտ, 2003: Լեռնային Ղարաբաղը թվերով, Ստեփանակերտ, 2004: Մեղադրվում են, Երևան, 1989 և այլն:*

[7] Թովմասյան Վ.Հ., Աթաջանյան Վ.Ա., Ներսիսյան Յու.Բ., *Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ, 1991:*

[8] *Нагорный Карабах Историческая справка, Ереван, 1988.*

առաջ քաշված հիմնախնդիրը հանգեցնում է Արցախը Հայաստանի հետ վերամիավորելուն: Այն ոգևորել է և պայքարի կոչել հազարավոր մարդկանց: Ասենք նաև, որ Արցախյան պայքարը ոգևորել է նաև պատմաբան Ռ.Ազիզբեկյանին: Նա առաջիններից մեկն էր, որն իր գրքում[9] տվել է Սումգայիթում տեղի ունեցած ողբերգության, արցախահայության նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների կողմից իրագործված բռնարարքների և արցախյան հիմնահարցի լուծման հետ կապված այլ հարցերի պատասխաններ: Ռ.Ազիզբեկյանի գրքում խոսք կա նաև այն մասին, որ Հայաստանի իշխանությունները, հենց սկզբից քաղաքական զգուշավորություն հանդես բերելով, իրենց հեռու էին պահում պայքարից, որի հետևանքով հանրապետության կուսակցական և պետական մարմինները կտրվեցին հասարակությունից:

Արցախ-Ղարաբաղում բռնկված ազգային-ազատագրական պայքարի սկզբից Վահան Հարությունյանը ջանասիրաբար հավաքել է Արցախի վերաբերյալ մամուլում հրապարակված նյութերը, ինչպես և հետագայում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում ստացված բազմաթիվ նյութեր և այն ծանր տարիներին կազմել ժամանակագրական ժողովածուներ ու տպագրել[10] Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի երաշխավորությամբ: Այդ ծավալուն աշխատանքը, իրոք, աղբյուրագիտական արժեք ունի Արցախ-Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարի պատմությունը ուսումնասիրելու համար: Սակայն պետք է նշել, որ դրանում տեղ են գտել նաև որոշ անստույգ գնահատականներ: Օրինակ՝ հեղինակը մի շարք մեկնաբանություններում ճիշտ չի բնութագրել այս կամ այն քաղաքական գործչի գործունեությունը կամ էլ ֆետիշացրել է նրանց:

Կային նաև հեղինակներ, որոնց թվում՝ մոսկվաբնակ հանրահայտ գիտնական Յուրի Բարսեղովը, որոնք Արցախի հիմնահարցը քննության ենթարկեցին միջազգային իրավունքի տեսանկյունից: Յուրի Բարսեղովը, իր մի շարք աշխատություններ-

[9] Ազիզբեկյան Ռ.Լ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Երևան, 1992:

[10] **Արտյոնյան Վ.Բ.**, *Սոբիտիա ի Հագորնոմ Կարաբախ, գ 1-6, Երևան, 1990 – 1997.*

ում[11] վերլուծելով այդ հարցը, հանգեց այն հետևության, որ Արցախի հիմնահարցի արդարացի լուծմանը կարելի է հասնել խաղաղ, սահմանադրական և ժողովրդավարական ճանապարհով՝ ազգերի ինքնորոշման իրավունքը հակադրելով տարածքային ամբողջականության խնդրին:

Կարևոր նշանակություն ունի նաև Հրայր Բալայանի աշխատությունը[12], որտեղ քննարկված են Լեռնային Ղարաբաղում ադրբեջանական բռնարարքների ուժեղացումը, Արցախի շրջափակումը, կազմակերպված ջարդերը Բաքվում, ինքնորոշումը Լեռնային Ղարաբաղում և այլ հարցեր:

Արցախյան պայքարի և դրա հետ առնչվող Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) պատմությամբ առաջինը զբաղվել է լրագրող Վլադիմիր Գրիգորյանը[13]: Նա, օգտվելով Հայաստանի ազգային արխիվում գտնվող համապատասխան նյութերից և ժամանակի մամուլից, շարադրել է Արցախում և Հայաստանում 1988-1989 թվականներին տեղի ունեցած իրադարձությունների պատմությունը և ջանացել է տալ մի շարք հարցերի պատասխաններ: Սակայն հեղինակը իր նախաձեռնության մեջ բավականին հեռու է գնացել՝ գովերգելով և գերագնահատելով Հայոց համազգային շարժման դերը, որի հետ դժվար է համաձայնել:

Քսաներորդ դարի 50-60-ական թվականներին վեր բարձրացող Արցախյան շարժման ակունքներում կանգնած գրող, պատմաբան Բագրատ Ուլուբաբյանն այն հեղինակներից է, որը խորհրդային իշխանության տարիներին, մանավանդ արցախյան պայքարի վերելքի շրջանում, ձգտել է խորհրդային իշխանության վերադաս մարմիններին տեղյակ պահել արցախյան պայքարի հիմնական պատճառները և պահանջել այն լուծել արդարացիորեն[14]: Բագրատ Ուլուբաբյանը, լինելով 1965թ. Մոսկվա ուղարկված 13-ի հայտնի նամակի հեղինակներից մեկը և կազմակերպիչը, բազմիցս հանդես է եկել հրապարակայնորեն, ինչպես և իր մի շարք աշխատություններում՝ ու մամուլում հրապարակված հոդվածներում հետապնդել Արցախի հիմնահարցը լուծել ազգերի ինքնորոշման հիման վրա և այն վերամիավորել Մայր Հայաստանի հետ:

Պատմաբան Կիմ Ղահրամանյանի «Հյուսիսային Արցախ» ուսումնասիրությունը[15], որի մեջ էջեր է նվիրված Արցախյան շարժման պատմությանը, մանավանդ Գետաշեն-Շահումյանում տեղի ունեցած իրադարձություններին, նույնպես ներկայացնում է հետաքրքրություն: Այդ տարածքների հայությունը, արձագանքելով Արցախի մարզխորհրդի 1988թ. փետրվարի 20-ի պատմական որոշմանը, ոտքի ելավ Ադրբեջանի բռնատիրության դեմ և պահանջեց Գետաշեն-Շահումյանը միավորել Լեռնային Ղարաբաղի հետ: Սակայն, պիտի ասել, հեղինակը չի խորացել այդ երևույթների վերլուծության մեջ և հիմնախնդրին մոտեցել է մակերեսորեն:

Վերջերս լույս է տեսել Անդրանիկ Արշակյանի «Արցախյան գոյապայքարը (1985–1992թթ.)» մենագրությունը[16], որը հայ պատմագրության մեջ առաջին փորձն է՝ ցույց տալ նշված ժամանակաշրջանում արցախահայության մղած հերոսական պայքարի պատմությունը իր գոյատևության և անկախության համար: Հեղինակը արխիվային բազմաթիվ նյութերի, տպագրված աշխատությունների և մամուլում հրապարակված հոդվածների հիման վրա շարադրել է արցախահայության գոյապայքարի առաջին փուլի՝ մինչև Արցախ-Հայաստան ցամաքային ճանապարհի բացման պատմությունը: Հեղինակը, հիմնավորելով արցախահայության ազգային-ազատագրական պայքարի արդարացի լինելը, առաջ է քաշել ինքնորոշման իրավունքի պաշտպանության խնդիրը:

Ուշադրության է արժանի տնտեսագետ Վլադիմիր Խոջաբեկյանի տեսակետը, որը շարադրված է նրա «Արցախը փորձության ժամին» գրքում[17]: Նա, օգտագործելով բազմաթիվ վիճակագրական տվյալներ և այլ նյութեր, ապացուցել է արցախահայության ազատագրական պայքարի արդարացի լինելը: Այդ

---

[11] **Барсегов Ю.Г.,** *Право на самоопределение – основа демократического решения межнациональных проблем. К проблеме Нагорного Карабаха, Ереван, 1989, его же, Народ Нагорного Карабаха–Субъект права на самоопределение, Москва, 1993 և այլն:*

[12] **Балаян Грайр,** *Нагорный Карабах и национальные конфликты в Союзе в свете прав человека, Ереван, 1991.*

[13] **Григорян Владимир,** *Армения 1988 – 1989, Ереван, 1999.*

[14] **Ուլուբաբյան Բագրատ,** *Արցախյան գոյապայքարը, Երևան, 1994, նույնի՝ Արցախյան գոյապայքարի տարեգրությունը, Երևան, 1997:*

[15] **Ղահրամանյան Կիմ,** *Հյուսիսային Արցախ. գոյության պայքար, գիրք Բ, Երևան, 1993:*

[16] **Արշակյան Անդրանիկ,** *Արցախյան գոյապայքար (1985–1992թթ.), Երևան, 2004:*

[17] **Խոջաբեկյան Վ.Ե.,** *Արցախը փորձության ժամին, Երևան, 1991:*

ուսումնասիրության մեջ հեղինակը ուշադրություն է դարձրել Ադրբեջանից հայության բռնագաղթի, նրանց նկատմամբ իրագործված հալածանքների, ինչպես նաև Հայաստանից հեռացած ազգաբնակների խնդիրների հետ կապված բազմաթիվ հարցերի: Այդ տեսանկյունից արժե ընդգծել ակադեմիկոս Գրիգոր Ավագյանի «Լեռնային Ղարաբաղ» գիրքը[18]: Վիճակագրական հավաստի աղբյուրների հիման վրա հեղինակը բազմաթիվ հոդվածներում, նամակներում և հրապարակային ելույթներում մերկացրել է Ադրբեջանի իշխանությունների հայատյաց քարոզչությունը և արցախահայության նկատմամբ գործադրված բռնաճնշումները:

Արցախյան պայքարի վերաբերյալ առանձին գրքերով և բազմաթիվ հոդվածներով հանդես են եկել նաև արտասահմանյան մի շարք հայ հեղինակներ[19], ինչպես օրինակ՝ Լևոն Մկրտչյանը և Յակոբ Պալեյանը: Առաջինը, դեռևս 1988-ին հրատարակած «Արցախ-Ղարաբաղը՝ իր անցյալով և ներկայով» աշխատության մեջ շարադրելով Արցախի համառոտ պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, մերկացրել է Ադրբեջանի բռնարարքները և պաշտպանել արցախահայության հերոսական պայքարը: Իսկ Արցախյան հիմնախնդրին նվիրված Փարիզի ռադիոյի հայկական հաղորդումների նյութերը հավաքելով և ստվար հատորով հրատարակելով՝ Յակոբ Պալեյանը հետապնդել է մի կարևոր նպատակ՝ աշխարհին ցույց տալ, որ սփյուռքահայությունը միշտ էլ պաշտպանել է արցախահայության հերոսական պայքարը: Չափազանց արժեքավոր է վերջերս Ռոստով քաղաքում լույս տեսած ԽՍՀՄ ՆԳ նախարարության նախկին սպա, ներկայումս պաշտոնաթող Վիկտոր Կրիվոպուսկովի «Տագնապալից Ղարաբաղը» օրագրային գիրքը[20], որտեղ նկարագրված են 1990 թվականի հոկտեմբերից մինչև 1991թ. գարունն ընկած ժամանակաշրջանում թուրք-ազերիների դեմ արցախահայության մղած պայքարի բազմաթիվ փառավոր էջեր:

Արցախի ազատագրական պայքարն իր վրա է կենտրոնացրել նաև բազմաթիվ գրողների, լրագրողների և հրապարակա-

[18] **Аваян Григор,** *Нагорный Карабах. Ответ фальсификаторам, Ереван, 1991.*

[19] Մկրտչյան Լևոն, *Արցախ-Ղարաբաղը իր անցյալով և ներկայով, Աթենք, 1988:* Պալեյան Հակոբ, *Արցախի ազատագրական պայքարը՝ պրիսմակես դիտուած, Փարիզ, 2001:*

[20] **Кровопусков Виктор,** *Мятежный Карабах. Из дневника офицера МВД СССР, Ростов-на-Дону, 2003.*

խոսների ուշադրությունը, որոնք պաշտպանել են արցախահայության հերոսական պայքարը և մերկացրել Ադրբեջանի իշխանությունների հակաարցախյան, հակահայկական գործողությունները: Արժե հիշատակել, արդարև, Զորի Բալայանին և Բակուր Կարապետյանին[21]: Պայքարի ամբողջ շրջանում նրանք, հաճախակի լինելով Արցախում, իրենց հրապարակած նյութերում, հետագայում նաև գրքերում նոր շունչ են հաղորդել Արցախյան պայքարին: Զորի Բալայանը, Արցախի ճակատագրի մասին ահազանգ հնչեցնելով աշխարհի առաջ, կարևոր դեր է խաղացել այն միջազգայնացնելու գործում:

Արցախի հերոսական պայքարի պատմությանն են նվիրված արցախցի հեղինակներ Սենոր Հասրաթյանի և Միհր Հարությունյանի ուսումնասիրությունները[22], որոնցում նկարագրված են պատերազմական գործողությունների ընթացքը և հայ ազատամարտիկների հերոսական պայքարը:

Պակաս արժեքավոր չէ նաև 1992թ. Սանկտ Պետերբուրգում հրատարակված Իգոր Բաբանովի և Կոնստանտին Վոյովոդսկու «Ղարաբաղյան ճգնաժամ» գիրքը[23]: Հեղինակները, օգտվելով բազմաթիվ աղբյուրներից, կարողացել են ճիշտ ընկալել Արցախյան պայքարի արդարացիությունը և խորհրդային հասարակայնությանը ապացուցել այդ պայքարը հաղթանակով ավարտելու կարևորությունը:

Արցախի հիմնախնդրի բացահայտմանը, այնտեղ տեղի ունեցած իրադարձությունների վերլուծությանը, Ադրբեջանի իշխանությունների հակահայկական գործողությունների մերկացմանն են ուղղված նաև Հրանտ Աբրահամյանի մի շարք գրքեր[24]:

[21] Բալայան Զորի, *Դժոխք ու դրախտ, Երևան, 1995, նույնի Բժիշկ Սարգսյանը և նրա «Պատերազմի հետքը երկար է մնում», Երևան, 1999:* Կարապետյան Բակուր, *...եվ նրա շուրջ, Երևան, 1990, նույնի Անգլուհու պարպիտան ոդիսականը, Երևան, 1994 և այլն:*

[22] Հասրաթյան Սենոր, *Ղարաբաղյան պատերազմ, Երևան, 2001:* Հարությունյան Միհր, *Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Երևան, 2000:*

[23] **Бабанов Игор, Воеводский Константин,** *Карабахский кризис, Санкт-Петербург, 1992.*

[24] Աբրահամյան Հրանտ, *Արցախյան գոյամարտ, Երևան, 1991, նույնի երբ հայրենիքը վտանգի մեջ է, Երևան, 1997, Ճակատագրին ընդառաջ, Երևան, 2001:*

Մենք օգտագործել ենք նաև բազմաթիվ այլ հեղինակների ուսումնասիրություններ[25], որոնցում նյութեր կան Արցախի ազատագրական պայքարի այս կամ այն հարցի հետ առնչվող:

20-րդ դարի 80-90-ական թվականներին մի շարք կուսակցական, պետական և հասարակական գործիչներ հետագայում գրել են հուշեր և հրապարակել հոդվածների ժողովածուներ[26], որոնցում շոշափված է արցախյան հիմնահարցի հետ կապված մի շարք հարցեր:

Արցախյան հիմնախնդրին որոշ առիթներով անդրադարձել են նաև այլ հեղինակներ[27], որոնց տեսակետները չեն անտեսվել մեր կողմից, և դրանք օգտագործվել են որոշ առիթներով:

---

[25] Մինասյան Էդիկ, *Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990–2000թթ.), Երևան, 2003:* Մելքումյան Սերգեյ, *Լեռնային Ղարաբաղ, Երևան, 1990, նույնի Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Երևան, 2001:* Մկրտչյան Շահեն, *Արցախ, Երևան, 1991, նույնի՝ Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա, Երևան, 1996:* Հակոբջանյան Արտաշես, *Արցախյան ազատամարտի ակունքների մոտ, Երևան, 2001:* Մովսիսյան Վլադիմիր, *Հողի ճակատագրով: Մտորումներ տքնության, Երևան, 2001,* Ղևոնիկյան Վարդան, *Շնչված և չավարտված պատերազմը, Երևան, 2004: Միքայելյան Դավիթ, Հոգևոր կյանքի վերածնունդն Արցախում, Երևան, 2001:*

[26] Մկրտչյան Արթուր, *Ի՞նչ է տեղի ունեցել Հադրութում, Երևան, 1992:* Մանուկյան Վազգեն, *Հայկական երազանքը գոյատևման փակուղում, ելույթների և հոդվածների ժողովածու, Երևան, 2002:* Սարգսյան Վազգեն, *Ոգու փորձություն, Երևան, 2000:* Գալստյան Համբարձում, *Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ..., Երևան, 2002:* Պետրոսյան Ռազմիկ, *Արցախ, պատերազմ, զինադադար, Երևան, 2001:* Օհանջանյան Փաշա, *Ղարաբաղի ազատագրման պատերազմը, Երևան, 2000:* Բաղրյան Վարդգես, *Ֆենոմեն, Ստեփանակերտ, 1998:* Սարենց Մուշեղ, *Բեկոր, Երևան, 1993:* Գևորգյան Համլետ, *Պետոն, Պէյրութ, 1996:* Սողոմոնյան Նվարդ, *1991: «Կոլցո», I, II, III մասեր, Ստեփանակերտ, 1994–2000թթ.* Բունիաթյան Արցախ, *Արյունոտ օրեր, Մարտակերտ 1992 հոկտեմբեր–1993 մարտ, Երևան, 2001:* Բաբայան Բելա, *Արցախցի կինը պատմության մեջ, Ստեփանակերտ, 1998:* Խաչատրյան Սերգեյ, *Վատնված պատիվ, Ստեփանակերտ, 2002,* Դանիելյան Կոմիտաս, *Արցախը չսանձված նժույգ, Երևան, 2001:* Աղաջանյան Վահրամ, *Ազգային հերոս Սամվել Բաբայան, Երևան, 2002:* Բեգլարյան Միքայել, *Ղարաբաղի մեր Քարահունջը, Ստեփանակերտ, 2004:* Գրիգորյան Համլետ, Հարությունյան Գրիշա, *Արցախի դպրոցը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան 2005 և այլն:*

[27] **Манасян А.С.,** *Карабахский конфликт. Ракурсы правого подхода, Ереван, 1997, его же Карабахский конфликт. Ключевые понятия и хроника, Ереван, 2005:* **Хуршудян Л.Н.,** *Истина единственный критерий исторической науки, Ереван, 1989:* **Сахаров Андрей,** *О Нагорном Карабахе, Ереван, 1996.* **Камалян Сейран,** *Карабах. На пути к бессмертию, Краснодар, 1994 և այլն:*

Հայտնի է նաև, որ Ադրբեջանի իշխանությունները որդեգրել էին ադրբեջանահայության նկատմամբ իրագործված բռնագաղթեցման պետական քաղաքականություն: Ակնհայտ է, որ հարյուր հազարավոր հայեր բռնագաղթեցվել են Ադրբեջանից՝ այնտեղ թողնելով իրենց ունեցվածքը: Նրանք ենթարկվել են դաժան ճնշումների և հալածանքների, ունեցել հարյուրավոր զոհեր, իսկ Ադրբեջանի կողմից հրահրված պատերազմի հետևանքով զոհվել, գերվել և պատանդ են վերցվել հազարավոր անմեղ մարդիկ: Այդ ամենը արտացոլվել է բազմաթիվ հեղինակների ուսումնասիրություններում[28]:

Վերջին տարիներին մի շարք հեղինակներ հրապարակել են գիրք-հուշամատյաններ[29], որտեղ խոսվում են Արցախյան

---

[28] Մովսեսովա Ի., Հովնանյան Ա., *Բաքվի ջարդերը, Երևան, 1992:* Մելիք-Շահնազարյան Լևոն, *Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երևան, 1962:* Ղազարյան Ռաֆայել, *Հաշվետու եմ..., Երևան 2003:* Հարությունյան Սենոր, *Գեներալ Իվանյան, Երևան, 2004:* **Кокс Керолайн, Айбнер Джон,** *Этническая чистка продолжается. Весна в Нагорном Карабахе, Ереван, 1998.* **Мелик-Шахназарян Левон,** *Гандзак. Неупроченный мир, (Воспоминание очевидца), Степанакерт, 1996.* **Барсегян Хикар,** *Истина дороже... К проблеме Нагорного Карабаха, Ереван, 1992.* **Чобанян С.,** *Государственно-организованный терроризма, SOS!, Геноцид армян 1988–1991 гг., Ереван, 1992.* **Улубабян Г., Золян С., Аршакян А.,** *Сумгаит... Геноцид... Гластность?, Ереван, 1992.* **Вермишева Седа,** *Депортация населения армянских сел НКАО и прилегающих районов: апрель-июнь 1991 года, Ереван, 1995.* **Арабян И.,** *Геноцид и его наказуемость, Ереван, 1999. Геноцид армян в Азербайджане и Нагорном Карабахе, Степанакерт, 1998.* **Али Абасов, Арутюн Хачатрян,** *Карабахский конфликт, Варианты решения. Идеи и реальность, Москва 2004. Перестройка и национальное отношение, Ереван, 1989 և այլն:*

[29] Արշակյան Անդրանիկ, *Մահ չիմացյալ՝ մահ, մահ իմացյալ՝ անմահություն, Երևան, 1993:* Աբրահամյան Հրանտ, Մկրտչյան Շահեն, *Արցախի համար զոհված դիզակցիները, Երևան, 2000:* Աբրահամյան Հրանտ, Հարությունյան Համլետ, *Արցախի համար զոհված վարանդացիները (1988–2001), Երևան, 2003:* Առուստամյան Գայյա, *Սպասում, Ստեփանակերտ, 1996, նույնի՝ Իմ սիրտ ծեզ հետ է, ողջեր և նահատակներ, Երևան, 1998, Ստեփանակերտ Փառքի հուշամատյան 1988-2004, Երևան, 2005:* Նանագուլյան Մարտակ, *Արծիվները բարձունք են տենչում, գիրք Ա, Բ և Գ, Երևան, 1992–1994, նույնի՝ Շահեն, Երևան, 1993:* Եսայան Էռնեստ, *Բույլ նահատակաց, Երևան, 1996:* Խաչատրյան Գրիշա, *Ցավ հայրենյաց մորմոք վարժապետի, Երևան, 1997:* Պետրոսյան Դերենիկ, *Հայրիկս ինչո՞ւ չի գալիս, Երևան, 2001:* Բակունց Պապա, *Թալիշ: Գոյության պայքար, Երևան, 2001:* Մելքումյան Սերգեյ, *Ծարտար, 2003:* Սուսայելյան Բաբկեն, *Հանուն Արցախի և հայրենի Ապարանի, Ստեփանակերտ, 1998:* Աբայան Իվան, *Ընդմիշտ մեզ հետ, Ստեփանակերտ, 1995:* Միրզոյան Վազգեն, *Սարգսաշեն, Ստեփանակերտ, 1995:*

ազատագրական պայքարում զոհված ազատամարտիկների և խաղաղ բնակչության մասին:

Արցախի ուսումնասիրվող պատմության նշված շրջանի համար աղբյուրագիտական նշանակություն ունի նաև վերջերս լույս տեսած «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994» հանրագիտարանը[30]: Ասենք, որ այն, լինելով պատմական կարևոր երևույթ, զերծ չէ բազմաթիվ թերություններից: Նրանում տեղ են գտել մի շարք անճշտություններ՝ սկսած Արցախյան պայքարի մասնակիցներից մինչև թվական տվյալներ:

Վերջին տարիներին բազմաթիվ գրքեր և ժողովածուներ են հրատարակվել նաև Ադրբեջանում, որոնք նվիրված են արցախյան հիմնահարցին[31]: Հավատարիմ լինելով իրենց բռնատիրական քաղաքականությանը՝ այդ հեղինակներն, առանց որևէ բացառության, նենգափոխել են պատմական ճշմարտությունը և դեպքերն ու իրադարձությունները ներկայացրել Ադրբեջանի համար շահեկան կտրվածքով: Ադրբեջանի քարոզչությունը շարունակում է Արցախի հիմնահարցը աշխարհին ներկայացնել թուրքագերական ձգտումների տեսանկյունից, որն, անշուշտ, ժխտվում է ինչպես հայ, այնպես էլ աշխարհի առաջադեմ ուժերի կողմից:

Ինչպես տեսանք, Արցախի հիմնախնդրի վերաբերյալ հրապարակված բազմաթիվ ուսումնասիրություններում, գրքերում, հրապարակված այլ նյութերում իրենց մեջ պարունակում են Արցախ-Ղարաբաղի հիմնահարցի տարբեր խնդիրների հետ առնչվող հարցերի պատասխաններ: Արժանին մատուցելով նրանց՝ ասենք նաև, որ այդ ամենի հետ միասին մինչև հիմա հրապարակի վրա չկա որևէ աշխատանք, որում ընդհանրացված լինի արցախահայության հերոսական պայքարի ողջ պատմությունը: Այդ բացը լրացնելու համար ձեռնարկված այս առաջին փորձը, անշուշտ, զերծ չէ նաև մասնակի թերություններից, որի վերաբերյալ բոլոր դիտողությունները կընդունվեն սիրով:

Դավթյան Բահադուր, Բաղդասարյան Նիկոլայ, *Դաս հայրենյաց, Երևան, 1997:* Մարգարյան Սիլվա, *Մարտակերտ: Չհայտարարված պատերազմի կիզակետ, 1999: Բաքու, N 1-6, Պեյրութ, 1993, նույնը՝ N 9-12, 1996 և այլն:*

[30] *Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, 1988-1994, հանրագիտարան, Երևան, 2004:*

[31] *Хроника НКАО, февраль 1988 – февраль 1990, Баку, 1990. Конфликты в Нагорном Карабахе, Баку, 1990. К истории образования Нагорно-Карабахской области Азербайджанской ССР 1918–1925, документы и материалы, Баку, 1989.* **Алиев И.,** *Нагорный Карабах. История, факты, события, Баку, 1989 և այլն:*

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԸ (1985–1988 թվականներ)

1. ՊԱՅՔԱՐԻ ՄԵԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

ԽՍՀՄ-ը գտնվում էր սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի մեջ, որից դուրս գալու որոշ քայլեր ձեռնարկվեցին 1985թ. տեղի ունեցած ԽՄԿԿ մարտյան պլենումից հետո, երբ գլխավոր քարտուղար ընտրվեց Միխայիլ Գորբաչովը: Սակայն գնալով ավելի սրվեցին հակասությունները կենտրոնի և ազգային հանրապետությունների միջև: Ավելին՝ ոչ մի քայլ չձեռնարկվեց ազգամիջյան հարաբերությունները կարգավորելու և ազգերի ինքնորոշման իրավունքը կենսագործելու ուղղությամբ: Հենց այդ ժամանակ էլ կրկին սրվեց Արցախ-Ղարաբաղի հիմնահարցը: Ստեղծվել էր մի այսպիսի վիճակ. կա՛մ Արցախը պետք է արժանանար Նախիջևանի ճակատագրին և լրիվ հայաթափվեր, կա՛մ արցախցիները պետք է ոտքի ելնեին՝ իրենց բնօրրանը, իրենց մարդկային իրավունքները, իրենց պատիվը պաշտպանելու համար: Արցախցիներն ընտրեցին երկրորդ ուղին: Խմորումները, որոնք սկսվել էին Մ. Գորբաչովի իշխանության գալով, սկսեցին աստիճանաբար թուլացնել պետական ամբողջատիրությունը: Խորհրդային Միությունում ապրող փոքր ազգությունները ձգտում էին անկախության: Այդ ժամանակ խոր հակասություն գոյություն ուներ հայերի և ադրբեջանցիների միջև, որը գալիս էր անցյալից: Վեր բարձրացող հակասություններն ավելի լիս խորանում:

Անկախ այդ ամենից՝ մարզի աշխատավորներն ամեն կերպ ջանում էին կատարել 11-րդ հնգամյա պլանը: Ժամկետից շուտ ավարտվեցին պետությանը վաճառվող հացահատիկի, խաղողի, բանջարեղենի, պտղի, բոժոժի, մսի, կաթի, բրդի և այլ գյուղատնտեսական մթերքների պլանները: Հիմնական ֆոնդերի ներդրումը 1984թ. համեմատությամբ աճել էր 28,3 %-ով: Կառուցվել լիս մի շարք նոր դպրոցներ, հիմնարկ-ձեռնարկություններ, ճաշարաններ: Սակայն 5 ձեռնարկություն չէր կատարել տարեկան արտադրանքի պլանը, արտադրանքի իրացման պլանը չէր կատարել 6 ձեռնարկություն, աշխատանքի արտադրության պլանը՝

9 ձեռնարկություն: Հետ էին մնում շինարարությունը, տրանսպորտային կազմակերպությունը, կապը, էներգետիկան, ցածր մակարդակի վրա էին գտնվում սարքավորումների նորացումը և առաջավոր տեխնոլոգիան: Ըստ էության, ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդները, տնտեսական և կուսակցական մարմինները դեռ անբավարար էին ղեկավարում սոցիալական և տնտեսական զարգացման պլանների կատարումը[1]:

1986թ. հուլիսի 26-ին տեղի ունեցած ԼՂ մարզխորհրդի նստաշրջանը, քննարկելով 1986-1990թթ. մարզի տնտեսական և սոցիալական զարգացման պլանը, առաջ քաշեց մի շարք խնդիրներ, որոնք բխում էին մարզի կենսական պահանջներից: Սակայն 1987թ. հունվարի 20-ին տեղի ունեցած մարզխորհրդի գործկոմի նիստում, երբ քննարկվում էր 1986թ. պլանների կատարման հարցը, պարզվեց, որ մարզի մի շարք ձեռնարկություններ շարունակում էին ետ մնալ: Օրինակ՝ անբավարար էին աշխատում կարի և կահույքի ֆաբրիկաները, N 9 արդկոմբինատը, գորգերի գործարանը («Ղարաբաղ»), չէր կատարվել կապիտալ ներդրումների պլանը, խախտվում էին շինարարության ժամկետները, ետ էր մնում առևտրի աճը, բնակչությանը սննդամթերքներով ապահովելը գտնվում էր ցածր մակարդակի վրա և այլն[2]:

Մարզում գյուղատնտեսության մեջ ամենաշահութաբեր ճյուղը հանդիսանում էր խաղողագործությունը: Միայն 1986թ. արտադրվել էր 142239 տ խաղող, և զգալիորեն գերակատարվել էր պետական վաճառքի պլանը[3]: Եվ ահա Բաքվի պահանջով մարզի խաղողի այգիները պետք է կրճատվեին 50 %-ով, և ազատված տարածքները պետք է զբաղեցնեին բանջարաբուծությունը, պտղաբուծությունը և կերակուլտուրաները[4]: Դա խիստ բողոք առաջ բերեց մարզում: Բացի այդ, մարզի արդյունաբերական ձեռնարկությունները չէին ապահովվում նյութերով, արտադրության իրացման գործում առաջ էին գալիս խոչընդոտներ, որոնց վերացումը կախված էր հանրապետության ղեկավարության քմահաճույքներից: Իսկ արցախցիները չէին կարող այլևս գտնվել միշտ համբերողի դերում: Ինչպես ասում են, դանակը հասել էր ոսկորին:

[1] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, գ.2, գ.. 221, թ. 19-22.*
[2] *Նույն տեղում գ. 238, թ. 4-5:*
[3] *«Սովետական Ղարաբաղ», N 41, 19.02.1987.*
[4] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, գ.2, գ. 251, թ. 11:*

XX դ. 80-ական թթ. կեսերին արցախցիներն իրենց պայքարը սկսեցին հիմնականում ստորագրահավաքով: Իգոր Մուրադյանը պատմում է, որ երբ վրա հասան գորբաչովյան փոփոխությունների ժամանակները, և ղարաբաղցիներն ավելի համարձակ սկսեցին զբաղվել իրենց հայրենիքի՝ Ղարաբաղի ճակատագրով, հստակեցվում էին յուրաքանչյուրի ֆունկցիաներն ու խնդիրները: 1985թ. անհրաժեշտ էին մարդիկ, որոնք կարողանային համակարգել այդ նվիրյալների գործունեությունը: Ըստ Իգոր Մուրադյանի՝ նման մարդ գտնվեց: «Իր և Աստծո կամոք այդ մարդը,– գրում է Իգոր Մուրադյանը,– Սլավա Սարգսյանը եղավ՝ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության աշխատակից, մասնագիտությամբ՝ պատմաբան, կոչումով՝ «ընդհատակյա կազմակերպիչ», որտեղ «1985-ից մինչև 1988-ը իրականացվում էր «կիսաբացահայտ» և «կիսաչեզոք» գործունեություն, որը համակարգվում էր Սլավա Սարգսյանի կողմից: Այդ հաստատությունում ընդհատակյա գործողություն էին ծավալել Մանվել Սարգսյանը, Շողիկ Ասոյանը, Սամվել Կարապետյանը, Շահեն Մկրտչյանը և այլք, սակայն գլխավոր դեմքը հենց Սլավան է եղել»[5]: Ստորագրահավաքը կատարվում էր գաղտնի: Այն իրականացվեց 1986–1987թթ. «Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու օգտին»[6]: Այսպիսով՝ Ղարաբաղյան շարժման նոր փուլը սկսվեց գորբաչովյան վերակառուցման սկզբից[7]:

1985թ. հունիսից մինչև 1986թ. մայիսն ընկած ժամանակահատվածում, ժամանակակիցների վկայությամբ, Ղարաբաղյան շարժումը դրսևորվում էր ոչ մեծ հավաքներով, որոնց շատ քիչ մարդ էր մասնակցում: Շարժման ղեկավարներից Իգոր Մուրադյանը վկայում է, որ 1986–1987թթ. Ստեփանակերտում ստորա-

[5] *"Голос Армении", 10.03.1998. Սլավա Սարգսյանը ծնվել է Ասկերանի շրջանի Խնապատ գյուղում: Նրա գրչին են պատկանում «Արցախ. պատմաճարտարապետական ճշգրտումներ», «Խաչենի ամրոցները», «Ասկերանի բերդ», «Տիգրանակերտ», «Պատարա», «Խնապատ» և այլ աշխատություններ: 1999 թվականից Սլավա Սարգսյանը աշխատում է ԼՂՀ հուշարձանների պահպանության և ուսումնասիրման վարչության պետի պաշտոնում:*
[6] ***Арутюнян В. Б.***, События в Нагорном Карабахе, ч. 1, Ер., 1990, с. 32 (այսուհետև՝ ***Арутюнян В. Б. ...***).
[7] *Ոմանք Ղարաբաղյան շարժման նոր շրջանի սկիզբը համարում են 1988 թ. փետրվարի 20-ը, որի հետ չենք կարող համաձայնվել:*

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ

գրահավաքը հիմնականում իրականացվել է քաղաքի բուժպոլիկլինիկայի գրանցման բաժնի աշխատողների օգնությամբ[8]:

Ըստ էության՝ Արցախ-Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելուն միտված քարոզչական աշխատանքը մարզում ավելի լայն ծավալ է ստացել 1986թ. ամառվանից: Դրանում ակտիվորեն ներգրավվեցին Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի մի խումբ ուսանողներ: Թե՛ ինստիտուտում, և թե՛ քաղաքում ստեղծվեցին շարժումը խթանող մանր խմբեր, որոնք հրավիրում էին գաղտնի ժողովներ, հանգանակում դրամական միջոցներ, ձեռք բերում զենք, պատրաստում թռուցիկներ և այլն: Նախաձեռնում էին գյուղական, ավանային ու քաղաքային խորհուրդների նիստեր գումարել և քննարկել «Հայկական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի վերամիավորման հարցը», պատվիրակություններ ուղարկել Մոսկվա, ինչպես նաև միջոցներ ձեռք առնել «առաջին առճակատման ժամանակ ինքնապաշտպանության համար»[9]:

Արցախյան Շարժման առաջին մասնակիցներից Սերժ Առուշանյանը վկայում է, որ 1986թ. հուլիսին Ստեփանակերտում հիմնվել է ընդհատակյա կազմակերպություն, որը ստացել է «Արցախյան միություն» անունը: Այն ղեկավարում էր 11 հոգուց բաղկացած կոմիտեն: Միությունն ուներ ծրագիր և կանոնադրություն[10]: Ս.Առուշանյանը նշում է, որ կազմակերպության անդամները գտնվում էին պետանվտանգության մարմինների հսկողության կենտրոնում: Ստորագրահավաքների բլանկները պատրաստելու համար ստիպված էին գրամեքենա ձեռք բերել Երևանում, որի տառատեսակը հայտնի չէին մարզի պետանվտանգության մարմիններին[11]: Սերժ Առուշանյանը պատմում է, որ «Արցախյան միությունը» բաժանմունքներ ուներ մարզի բոլոր շրջկենտրոններում: Դրանք հաղորդում ղեկավարում էին Արթուր Մկրտչյանն ու Էմիլ Աբրահամյանը, Մարտունիում՝ Վլադիմիր Խաչատրյանը, Գրիգոր Ուլուբաբյանը, Անգելինա Հովսեփյանը, Ասկերանում՝ Սլավիկ Առուշանյանը, Սլավիկ Միրզոյանը, Կոմիտաս Դանիելյանը, Մարտակերտում՝ Վիգեն Շիրինյանը, Վագիֆ

[8] *«Հայոց աշխարհ», 20.01.1998:*
[9] *Նույն տեղում, 21.01.1998.*
[10] «10-րդ նահանգ», Ստեփանակերտ, 12.02.2000:
[11] *Նույն տեղում:*

Պալստյանը[12]: Մասնակիցներից մեկը վկայում է, որ Մարտակերտի կաթսայատան պետ Վիգեն Շիրինյանի աշխատասենյակում 1984–85թթ-ից տեղի էին ունենում գաղտնի հավաքներ, իսկ 1986–87թթ. այն վերածվել էր ընդհատակյա քաղաքական կազմակերպության, որը վերջնական կապեր հաստատեց Ստեփանակերտում գործող կազմակերպության հետ: Վիգեն Շիրինյանը Մարտակերտի շրջանում անառարկելի հեղինակություն էր: Նրա ղեկավարած կազմակերպությունն ուներ ծրագիր և կանոնադրություն, հրապարակում էր թռուցիկներ: Վիգենի ակտիվ մասնակցությամբ զենք և զինամթերք էր ձեռք բերվում ու պահեստավորվում: 1987թ. ապրիլից Հայաստանի հետ վերամիավորվելու պահանջով շրջկենտրոնում և գյուղերում սկսել էին ստորագրություններ հավաքել[13]:

Սերժ Առուշանյանը նշում է, որ 1987թ. ամռանը և աշնանն իրագործվել է միության նվազագույն ծրագիրը՝ անց է կացվել Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու համար ոչ պաշտոնական հանրաքվե, և հավաքվել է ավելի քան 80

[12] *«ԼՂ Հանրապետություն», 22.01.1998: «Հայոց աշխարհ», 24.01.1998: Արշակյան Ա., Արցախյան գոյամարտը (1995–1992), Ե., 2004, էջ 16: Ի դեպ, Կոմիտաս Դանիելյանը նշում է, թե «հենց 1987-ի օգոստոսի սկզբից շրջաններում սկսեցին ստեղծվել ընդհատակյա կազմակերպություններ, ոչ թե ավելի վաղ: Մինչ այդ կային ընդամենը համակիրների խմբեր, սրանց չէր կարելի կազմակերպություններ անվանել... Եվ ոմանց այն պնդումը, թե իբր շարժումը նախապատրաստել է 1986թ. Ստեփանակերտում ստեղծված ինչ-որ գաղտնի կազմակերպություն, հեռու է իրականությունից» (Դանիելյան Կ., Արցախը չսանձած նժույգ, Ե., 2001, էջ 23): Կ.Դանիելյանը, անկասկած, ունի Սերժ Առուշանյանի վերոհիշյալ վկայությունը՝ 1986թ. հուլիսին ստեղծված միության մասին: Կ.Դանիելյանն իր ասածը հաստատելու համար վկայակոչում է Իգոր Մուրադյանին, որը 1998-ի հունվարին «Հայոց աշխարհում» տպագրած իր հուշերում չի հիշատակել այդ միության գոյության մասին:*
[13] *«ԼՂ Հանրապետություն», 31.03.1998.*

հազար ստորագրություն[14]: Հանրաքվեի արդյունքները Մոսկվա ուղարկվեցին նույն թվականի նոյեմբերի վերջին[15]:

Արցախի ազգային-ազատագրական պայքարին նոր թափ հաղորդեց Ֆրանսիայի կոմկուսի օրգան «Յումանիտե» թերթում 1987թ. նոյեմբերին տպագրված Խորհրդային Միության բարձրակարգ տնտեսագետ, ակադեմիկոս Աբել Աղանբեկյանի հարցազրույցը: Անվանի գիտնականն իր պատասխանում շեշտում էր, որ Լեռնային Ղարաբաղը տնտեսապես ավելի կապված է Հայաստանի, քան Ադրբեջանի հետ: Ակադեմիկոսը, լիովին հնարավոր համարելով վերակառուցման պայմաններում Լեռնային Ղարաբաղի միավորումը Հայաստանի հետ, իր տեսակետը գրավոր ներկայացրել է խորհրդային բարձրագույն իշխանություններին: Դեռևս 1986թ. փետրվարին տեղի ունեցած ԽՄԿԿ 27-րդ համագումարի նախօրյակին ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ա. Գրոմիկոյին Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ներկայացվել էր նամակ՝ ազգությամբ հայ հինգ ակադեմիկոսների, երեք գեներալների և ԽՍՀՄ ժողովրդական երեք դերասանների ստորագրությամբ: Նրանց թվում էր նաև Աբել Աղանբեկյանը, որն այդ ժամանակ Մ. Գորբաչովի խորհրդականն էր: Դա առիթ տվեց կարծելու, թե իբր Ղարաբաղյան շարժումը նախատեսված էր ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի կողմից[16]:

Իգոր Մուրադյանի վկայությամբ՝ արդեն 1987թ. դեկտեմբերի սկզբներին Ստեփանակերտում գործում էր ճյուղավորված երիտասարդական կազմակերպություն՝ կոմերիտական կազմակերպության սկզբունքով: Այն ուներ փոխադրական և նյութական միջոցներ, վառելանյութ և այլն: Դեկտեմբերի 12-ի լույս 13-ի գիշերը Ստեփանակերտում տարածվել է բողոքի կոչող մոտ 10 հազար թռուցիկ, իսկ դեկտեմբերի 13-ին այնտեղ տեղի ունեցավ բազմամարդ հանրահավաք՝ ուղղված ադրբեջանական վարչակարգի դեմ[17]:

Մոսկվան շարունակում էր լռել: Նոր պատվիրակություն ուղարկելը դարձել էր օրախնդիր: Դրա կազմում ընդգրկվեցին ԽՄԿԿ անդամներ, կոլտնտեսականներ, պատերազմի և աշխատանքի վետերաններ, մշակույթի ներկայացուցիչներ և այլք[18]: Պատվիրակության անդամները Երևան հասան առանձին-առանձին տարբեր ճանապարհներով: Յուրաքանչյուրն իր հաշվին արձակուրդ էր ձևակերպել՝ իբր անձնական գործով է գնում: Ընտանիքներում, ինչպես վկայում է պատվիրակության անդամ Զամիլ Մարտիրոսյանը, նույնպես չգիտեին, թե ուր են գնում և ինչու[19]: Պատվիրակությունը Երևանից Մոսկվա մեկնեց 1988-ի հունվարի 5-ին՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Վազգեն Բալայանի գլխավորությամբ[20]: Այն Մոսկվա տարավ Լեռնային Ղարաբաղի բոլոր մակարդակների պատգամավորների և ղեկավար աշխատողների 260 ստորագրությամբ հանրագիր և մարզի տնտեսությանը, պատմությանն ու մշակույթին վերաբերող 84

---

[14] *Նույն տեղում, 22.01.1998: Нагорно-Карабахская республика, Степанакерт, 2001, ст.80. Իգոր Մուրադյանը իր վերոհիշյալ հուշերում նշում է, թե Ղարաբաղում անցկացված ստորագրահավաքին մասնակցել է 125 հազար մարդ, ինչը, մեր կարծիքով, չի կարելի հավաստի համարել թեկուզ այն պարզ պատճառով, որ այդ ժամանակ մարզի ամբողջ հայ բնակչությունը չէր անցնում 130 հազարից:*

[15] *Մոսկվա մեկնած պատվիրակության կազմը. Վլադիմիր Խաչատրյան (Մարտունի), Սաղաթել Պետրոսյան (Սոս), Էմիլ Աբրահամյան (Հադրութ), Ռաֆիկ Ասրյան (Ասկերան), Կամո Սաֆարյան (Ճարտար) և Ներսես Դանիելյան («ԼՂ Հանրապետություն», 31.01.1998): Պատվիրակությունը Մոսկվա է մեկնել նոյեմբերի 28-ին և դեկտեմբերի 1-ին ստորագրահավաքի փաստաթղթերը հանձնել են ԽՄԿԿ Կենտկոմի ընդունարանի վարիչ Ս. Կրիգինին: Հետագայում պարզվել է, որ դրանք այդպես էլ մնացել են նրա ընդունարանում:*

[16] *«Հայոց աշխարհ», 22.01.1998:*

[17] *Նույն տեղում:*

[18] *«ԼՂ Հանրապետություն», 22.01.1998:*

[19] *«ԼՂ Հանրապետություն», 22.01.1998:*

[20] *Պատվիրակությունը բաղկացած էր 13 հոգուց՝ Արկադի Կարապետյան (Ստեփանակերտ), Սերժ Առուշանյան (Ստեփանակերտ), Քրիստափոր Խաչատրյան (Ստեփանակերտ), Արթուր Մկրտչյան (Հադրութ), Ռոբերտ Բալայան (Հադրութ), Վազգեն Բալայան (Սոս), Յուրի Գրիգորյան (Գիշի), Արմո Առստամյան (Գիշի), Գուրգեն Շահրամանյան (Մարտունի), Գևորգ Հասդյան (Մարտունի), Սլավիկ Առուշանյան (Ասկերան), Զամիլ Մարտիրոսյան (Նորագյուղ) և Իգոր Մուրադյան (Երևան): Իգոր Մուրադյանի կողմից հավաքատեղի էր ընտրվել Զարեհ Մելիք-Շահնազարյանի տունը: Ուրբանն անգ այդ բոնցքամարտիկը իր ամբողջ կյանքը նվիրել էր հայրենի Արցախի ազատագրության պայքարին: Զարեհ Մելիք-Շահնազարյանի բնակարանում պատվիրակությանն ընդունել են Բագրատ Ուլուբաբյանը և Զորի Բալայանը, ինչպես և ՊԱՀ-ի մի հայրենասեր աշխատակից (Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, էջ 292): Վերոհիշյալ Զամիլ Մարտիրոսյանը չի նշում Բագրատ Ուլուբաբյանի անունը, հիշատակում է միայն Իգոր Մուրադյանի և Սերո Խանզադյանի անունները («ԼՂ Հանրապետություն», 31.01.1998):*

փաստաթուղթ[21]: Պատվիրակությունը Մոսկվայում իմանում է, որ հունվարի 4-ին ստեղծվել էր ԽՄԿԿ Կենտկոմի ագիտացիայի և պրոպագանդայի ազգամիջյան հարցերի ենթաբաժին, որի ղեկավար էր նշանակվել մասնագիտությամբ պատմաբան Վյաչեսլավ Միխայլովը: Քանի որ նա այդ օրերին հիվանդ էր, ուստի նրա հետ հանդիպումը հետաձգվում է: Պատվիրակությանը հունվարի 8-ին ընդունում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ, ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ Պ. Դեմիչևը, որին և հանձնվում են համապատասխան փաստաթղթերն ու հանրագիրը[22]: Վերջինիս հետ հանդիպում են պատվիրակության անդամներ՝ Վազգեն Բալայանն ու Արթուր Մկրտչյանը և քննարկում Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու հարցը: Պ. Դեմիչևը պատասխանում է, թե իբր խորհրդային իշխանությունները մտահոգված են Լեռնային Ղարաբաղի հարցով, և, ըստ երևույթին, կստեղծվի Գերագույն խորհրդի հանձնաժողով՝ հարցը հանգամանորեն ուսումնասիրելու համար: Նա նաև նշել է, որ «Խորհրդային կառավարությունը Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու պահանջը չի համարում ազգայնական, առավել ևս հակախորհրդային», և որ ինքը բոլոր միջոցները ձեռք կառնի հարցը բարձրացնող անձանց դեմ տեղական իշխանությունների անօրինական ձեռնարկումները խափանելու համար[23]:

Հունվարի 11-ին պատվիրակությանը հաջողվում է հանդիպել Վ. Միխայլովի հետ, որին հանձնեցին տարված փաստաթղթերի կրկնօրինակները: Նա խոստացավ հարցն ուսումնասիրել և ամեն ինչի մասին զեկուցել Կենտկոմի բարձր ատյաններին: Հունվարի 12-ին պատվիրակության անդամները, վերադառնալով Երևան, կրկին հանդիպեցին Զարեհ Մելիք-Շահնազարյանի բնակարանում և հանրագումարի բերեցին Մոսկվայում կատարած իրենց աշխատանքները: Բաքվում արդեն գիտեին Մոսկվա մեկնած պատվիրակության մասին և վերին աստիճանի անհանգիստ էին: Ահա թե ինչու հունվարի 13-ին Արցախ վերադարձած պատվիրակության անդամներին կանչում էին կուսակցական մարմիններ և «զրույցներ» ունենում նրանց հետ[24]:

[21] *«ԼՂ Հանրապետություն», 31.01. 1998.*
[22] *Նույն տեղում, 22.01.1998.*
[23] *Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, էջ 293.*
[24] *«ԼՂ Հանրապետություն», 31.01.1998.*

Մոսկվայից վերադառնալուց հետո պատվիրակության անդամները քարոզչական լայն աշխատանք են ծավալում մարզում: Մարդկանց տեղյակ պահելով Մոսկվայում ունեցած իրենց հանդիպումների և կատարած աշխատանքների մասին՝ կոչ էին անում ելնել համաժողովրդական պայքարի: Հրապարակում էին տեղեկատվական թերթիկներ և բաժանում բնակչությանը: Պատվիրակության անդամ Սլավիկ Առուշանյանը պատմում է, որ Հայաստանի հետ վերամիավորվելու հռչակագիրը լայնորեն քննարկվում էր աշխատավորական կոլեկտիվների և հասարակության ներկայացուցիչների ժողովներում, որի գաղափարը տրվել էր Նորագյուղում տեղի ունեցած գաղտնի ժողովում[25]:

Արցախից շարունակում էին հարյուրավոր նամակներ ու հեռագրեր ուղարկվել Մոսկվա և պահանջել Լեռնային Ղարաբաղը միավորել Հայաստանի հետ: Դեռևս 1988-ի հունվարի սկզբներին արցախցիների՝ Կրեմլին հասցեագրված մեծաթիվ նամակների մի ճամպրուկ Մոսկվա էին հասցրել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի դասախոսներ Համլետ[26] և Լենա Գրիգորյաններն ու Նիկոլայ Ավագումյանը[27]:

[25] *Նույն տեղում, 13.02.1998.*
[26] *«Արցախի համալսարան», N 2-3, 1998. Համլետ Վաղարշակի Գրիգորյանը ծնվել է 1941թ. սեպտեմբերի 17-ին Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Հերհեր գյուղում, ուսուցչի ընտանիքում: Գյուղի միջնակարգն ավարտելուց հետո սովորել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում: Ապա որպես ուսուցիչ, աշխատել է Մարտունու շրջանի մի շարք դպրոցներում: 1961-ին զորակոչվել է խորհրդային բանակ: Զորացրվելուց հետո ավարտել է Բաքվի Վ.Ի.Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը և աշխատել Ստեփանակերտի N1, հետո N5 հանրակրթական դպրոցներում, որտեղ դասավանդել է մաթեմատիկա: 1981-ին ատենախոսություն է պաշտպանել և ստացել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հետո աշխատանքի է անցել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ամբիոնում: Վերջին տարիներին աշխատել է ԼՂՀ կրթության և գիտության նախարար, ապա՝ Արցախի համալսարանի ռեկտոր: Արցախյան շարժման նվիրյալներից է:*
[27] *Նիկոլայ Արսենի Ավագումյանը ծնվել է 1932թ. Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Գիշի գյուղում՝ կոլտնտեսականի ընտանիքում: Տեղի միջնակարգը ավարտելուց հետո ընդունվել է Բաքվի Վ. Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, որը գերազանցությամբ ավարտել է 1954թ.: Նախ աշխատել է որպես մանկավարժ, ծառայել խորհրդային բանակում, իսկ զորացրվելուց հետո աշխատել Մարտունու շրջկոմում: Ապա աշխատանքի է տեղափոխվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ: Ատենախոսության թեզը պաշտպանել է*

Թե՛ Ստեփանակերտում և թե՛ մարզի շրջկենտրոններում շարունակում էին ընթանալ գաղտնի ժողովներ, հանդիպումներ, որտեղ որոշումներ էին ընդունում Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու կարևորության մասին: Ղարաբաղյան շարժման այդ փուլում առանձնապես ակտիվ էին գործում Ասկերանի կուսշրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանը[28] և մարզային ագրոարդի նախագահ Հենրիխ Պողոսյանը[29]: Մարզի բնակչության զանգվածային ելույթները նախապատրաստելու համար 1988-ի հունվարի կեսերին Ասկերանի շրջանի Նորագյուղ գյուղում հրավիրվեց այդ շրջանի կոլտնտեսությունների և գյուղխորհուրդների 40 նախագահների մասնակցությամբ գաղտնի ժողով, որը էական

փիլիսոփայությունից: Ղարաբաղյան պայքարի ակտիվ մասնակից էր: Մահացել է 1992-ին:

[28] Վաչագան Սանթուրի Գրիգորյանը ծնվել է 1935թ. հունվարի 10-ին Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Մամնա գյուղում: 1960թ. ավարտել է Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտը, ապա՝ ասպիրանտուրան: Աշխատել է Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսական մարմիններում: 1973թ. նշանակվել է մարզմետաբսի պետ, 1976-ին՝ կուսակցության ԼՂ մարզկոմի հրահանգիչ, նույն տարում՝ Ստեփանակերտի խորհտնտտեխնիկումի տնօրեն, 1977-ին՝ ԼՂԻՄ գյուղատնտեսության վարչության պետ: 1978թ. Ասկերանի շրջանի կազմավորումից հետո Վ. Գրիգորյանն ընտրվել է կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար: 1988-ին նշանակվել է մարզգործկոմի նախագահի առաջին տեղակալ: Նույն թվականի օգոստոսին ընտրվել է Մարտունու կուսշրջկոմի առաջին քարտուղար: 1989թ. օգոստոսին տեղի ունեցած ԼՂԻՄ ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարը նրան ընտրել է նախագահ: 1989թ. ընտրվել է ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր: 1991-ի հունվարից ԽՍՀՄ ԳԽ անդամ էր: Մահացել է 1991թ. ապրիլի 27-ին: Վ.Գրիգորյանն իր ողջ կյանքը նվիրել է հարազատ Արցախին:

[29] Հենրիխ Անդրեի Պողոսյանը ծնվել է 1930թ. հուլիսի 28-ին Ստեփանակերտ քաղաքում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, 1950թ. ընդունվել է Մոսկվայի գյուղատնտեսության մեքենայացման և էլեկտրիֆիկացման ինստիտուտ, որն ավարտելուց հետո վերադարձել է հայրենի երկրամաս: Իր մասնագիտությամբ աշխատել է մի շարք պաշտոններում: Արդեն 1985-ին ԼՂ մարզխորհրդի նախագահի առաջին տեղակալն էր: 1988-ի փետրվարի 23-ին ընտրվել է ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար: Նա մեծ հեղինակության հասավ 1988թ. հուլիսի 18-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահության նիստում ունեցած իր ելույթով: 1989թ. Ղարաբաղից ընտրվել է ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր: Մահացել է 2000թ. հունվարին Մոսկվայում: Հ. Պողոսյանը արցախյան պայքարի նվիրյալներից էր:

դեր խաղաց արցախահայության շարժումն առաջ տանելու գործում: Այստեղ էլ հստակեցվեց, որ «Ղարաբաղը պատրաստ է կազմակերպված ելույթի»: Դա ոգևորեց շատերին և խթանեց պայքարի հետագա ծավալումը[30]:

[30] «Հայոց աշխարհ», 24.01.1998: «Արցախի համալսարան», թ. 2-3, 1998: «Հայրենյաց պաշտպան», Ստեփանակերտ, թ. 22, 2003: Ստեփանակերտի համալսարանի դասախոս Լենա Գրիգորյանը այդ ժողովն անվանել է «Շարժման մեկնակետ», և որ «Արցախը մայր Հայաստանի հետ վերամիավորվելու մասին հռչակագիրը... մշակվել և ընդունվել է Ասկերանի շրջանի Նորագյուղ գյուղում կայացած գաղտնի հավաքում՝ շարժման նախակարապետ Իգոր Մուրադյանի նախաձեռնությամբ» («Արցախյան համալսարան», թ. 2-3, 1998): Նա հետագայում իր այդ հուշերի մեջ կատարելով լրացումներ՝ գրել է. «Արցախը Մայր Հայաստանի հետ վերամիավորելու մասին հռչակագիրը, որի տակ հետագայում իրենց ստորագրությունները պիտի դնեին ավելի քան 80 հազար արցախցիներ, մշակվել և ընդունվել է Ասկերանի շրջանի ակտիվիստների՝ Նորագյուղում կայացած գաղտնի հավաքում, շարժման նախակարապետ Իգոր Մուրադյանի մասնակցությամբ...» («Հայրենյաց պաշտպան», թ. 22, 2003): Ստացվում է հակասություն. Արցախում ստորագրահավաքը տեղի է ունեցել 1987թ. ամռանը և աշնանը, որը Մոսկվա է տարվել նույն թվականի նոյեմբերի վերջին, մինչդեռ Նորագյուղի գաղտնի ժողովը տեղի է ունեցել 1988-ի հունվարի կեսերին, որտեղ և մշակվել է հռչակագիրը: Տիկին Լենան այստեղ ինչ-որ բան չփոթում է: Նրա ամուսինը՝ Կոմիտաս Դանիելյանը, որն այդ ժամանակ Ասկերանի շրջանային «Կարմիր դրոշ» թերթի խմբագիրն էր, գրել է. «ԼՂՄ-ն մայր Հայաստանին վերամիավորելու մասին հռչակագիրը, որի տակ իրենց ստորագրություններն են դրել ավելի քան 80 հազար արցախցիներ կամ՝ մարզի բոլոր չափահաս հայ բնակիչները, մշակվել և ընդունվել է հենց Ասկերանում՝ շրջանի ակտիվիստների Նորագյուղում կազմակերպված գաղտնի ժողովում՝ Ի. Մուրադյանի մասնակցությամբ: Ի դեպ, վերջինիս հորդորով հիշյալ հռչակագիրը՝ իբրև առաջին նամակ, անշնաշան փոփոխությամբ Կրեմլ է ուղարկվել Արցախի մի խումբ ստեղծագործող մտավորականների ստորագրությամբ» (Դանիելյան Կ., Արցախը չսանձված նժույգ, էջ 28): Ինչպես տեսնում եք, նույն սխալը կատարում է նաև ամուսինը: Վարդան Հակոբյանը, Հրաչիկ Բեգլարյանը և ուրիշներ վկայում են, որ այդ «ստեղծագործող մտավորականների ստորագրությամբ» նամակը մշակվել և Մոսկվա է ուղարկվել 1988թ. հունվարի սկզբին, այսինքն՝ Նորագյուղում մշակված հռչակագրից 10-15 օր առաջ: Ինչպե՞ս կարող էր այդ հռչակագիրը Կրեմլ ուղարկվել «իբրև առաջին նամակ»: («Ազատ Արցախ», 16.01.2003: Հրաչիկ Բեգլարյան, Արցախ-Նամե, Ստեփանակերտ, 2000, էջ 4):

2. 1988Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Սկսված ազատագրական պայքարի ալիքն ընդգրկեց ամբողջ Արցախը: Օր օրի ավելանում էր շարժման կողմնակիցների թիվը: Արցախցիները սպասում էին բաղձալի լուրի, սակայն Մոսկվան շարունակում էր համառորեն լռել: Այսպիսի վիճակում արցախցիները ստիպված էին Մոսկվա ուղարկել նոր պատվիրակություն[1]: Այն Երևանից Մոսկվա մեկնեց փետրվարի 8-ին: Պատվիրակության անդամ, բանաստեղծ Հրաչյա Բեգլարյանը հետագայում նշել է, որ պատվիրակությունն իր հետ Մոսկվա էր տարել Մ. Գորբաչովին ուղղված նամակ, որտեղ մանրամասն նկարագրվում էր արցախահայությանը վիճակված տխուր ճակատագիրը Ադրբեջանի կազմում ապրելու տարիներին և խնդրվել է նրան ընդառաջել արցախահայության պահանջներին՝ Արցախը վերամիավորել մայր Հայաստանի հետ: Այդ նամակի տակ ստորագրել էին 17 մտավորականներ, որոնցից Մաքսիմ Հովհաննիսյանը և Գուրգեն Գաբրիելյանը ստորագրել էին նաև դեռևս 1967թ. Մոսկվա ուղարկված համանման բովանդակությամբ նամակում, որի համար ենթարկվել էին հալածանքների[2]: Պատվիրակությանը փետրվարի 10-ին ընդունեց ԽՄԿԿ Կենտկոմի ազգային հարաբերությունների արդեն սեկտորի վարիչ դարձած Վ. Միխայլովը, որը հուսադրեց նրանց: Հայաստանի անվտանգության կոմիտեի մի զեկուցագրից երևում է, որ Արցախի պատվիրակությանը և նրանց համախոհներին Մոսկվայում «հասկացրել են, որ պետք է նախ դիմել մարզային խորհրդին և կարողանալ որոշում ընդունել տալ ԼՂԻՄ-ը Հայաստանին միավորելու մասին և այն ուղարկել ըստ ատյանների...»[3]: Այդ փաստաթղթից

[1] Պատվիրակության կազմը. գրողներ Վարդան Հակոբյան (ղեկավար), Հրաչյա Բեգլարյան, Գուրգեն Գաբրիելյան, դերասաններ Ժանննա Գալստյան, Բենիկ Օվչյան, երաժիշտ Էդուարդ Ղազարյան, քանդակագործ Արմեն Հակոբյան, Սոցիալիստական աշխատանքի հերոս Գոհարիկ Սարինյան և Երևանից՝ դերասան Վաչե Սարուխանյան:

[2] «ԼՂ Հանրապետություն», 23.07.1996:

[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 11, թ. 83: «ԼՂ Հանրապետություն», 14.02.1998: «Հայաստանի Հանրապետություն», 3.03.2000:

կարելի է ենթադրել, որ հենց Մոսկվան է արցախցիներին առաջինը հուշել հրավիրել ԼՂԻՄ մարզխորհրդի նստաշրջան և պահանջում ընդունել մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմից դուրս բերելու և Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու վերաբերյալ: Այդ օրերին Ղարաբաղից Մոսկվա է տարվել համախոհականների մի մեծ կապոց և հանձնվել ԽՄԿԿ Կենտկոմին ու ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: Սակայն ոչ մի պատասխան: Պատվիրակության անդամ Գուրգեն Գաբրիելյանը հետո կասի. «Լավ է՝ մեր ժողովուրդը շուտ սթափվեց և ցույցերից հետո բռնեց բացահայտ գինված պայքարի ուղին: Եվ հաղթեց»[4]: Իսկ պատվիրակության մեկ այլ անդամ Ժանննա Գալստյանը ասաց. «Մեր՝ մտավորականներիս Մոսկվա կատարած առաքելությունը ես որակում եմ որպես ուժանակ այն մեծ պայթյունի, որը տեղի ունեցավ նրան հաջորդող տարիներին»[5]:

Արցախահայության այդ երրորդ պատվիրակությունը Մոսկվայից վերադարձավ փետրվարի 17-ին[6]: Մինչ վերադարձը պատվիրակությունը փորձել էր հանդիպել այդ օրերին Մոսկվայում գտնվող Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի հետ, սակայն վերջինս հրաժարվել է: Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում պատվիրակությանը դիմավորեց մոտ 50 հոգուց բաղկացած մի խումբ՝ Իգոր Մուրադյանի գլխավորությամբ: Հենց օդանավակայանում տեղի ունեցած միտինգում Վաչե Սարուխանյանը և Գուրգեն Գաբրիելյանը, պատմելով մոսկովյան հանդիպումների մասին, կոչ արեցին «միավո-

[4] «ԼՂ Հանրապետություն», 23.07.1996:

[5] Նույն տեղում:

[6] Արցախահայության ազատագրական պայքարի ակտիվ մասնակից Սերգեյ Խաչատրյանը իր հուշագրքում նշում է, որ պատվիրակությունը Մոսկվայից վերադարձել է փետրվարի 14-ին և այդ օրը «շրջադարձային դարձավ արցախյան շարժման համար»: Նույնիսկ պնդում է, թե այդ նույն երեկոյան ժամը 5-ին նրանք կանգնած էին Լենինի արձանի տրիբունայում (Խաչատրյան Ս., Վաստակած պատիվ, էջ 232–233): Դա ճիշտ չէ: ՀՀ պետանվտանգության կոմիտեի նախագահ Մ. Յուզբաշյանի 1988թ. փետրվարի 18-ին Հայկոմկուսի Կենտկոմ ուղարկած տեղեկագրում նշված է, որ Ղարաբաղից գնացած պատվիրակությունը Մոսկվայում մնացել է փետրվարի 8-17-ը (ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 11, թ. 83): Այդ նույն օրը Հայկոմկուսի Կենտկոմ ուղարկված երկրորդ զեկուցագրում ասված է, որ պատվիրակությունը Երևան է վերադարձել փետրվարի 17-ին և նույն օրն էլ մեկնել Ստեփանակերտ (նույն տեղում, թ. 86):

ռել բոլոր ուժերը և հասնել հարցի դրական լուծմանը»[7]: Պատվիրակությունը նույն օրը օդանավով վերադարձավ Ստեփանակերտ: Իսկ քաղաքն արդեն եռում էր: Լենինի անվան հրապարակում նրանց սպասում էր հանրահավաքի եկած մի քանի տասնյակ հազար մարդ: Իգոր Մուրադյանը հեռախոսով իր համախոհներին պատվիրել էր «արժանավայել դիմավորել պատվիրակության անդամներին»[8]: Պատվիրակության անդամները, հաշվետվություն տալով հանրահավաքի մասնակիցներին, կոչ էին անում լինել անգիջում և երբեք չնահանջել պայքարից:

Մինչ պատվիրակությունը գտնվում էր Մոսկվայում, ի՞նչ էր տեղի ունեցել Արցախում: 1988-ի փետրվարի սկզբից շարժումը գլխավորում էին Արկադի Մանուչարովը[9], Ռոբերտ Քոչարյանը[10], Համլետ Գրիգորյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Մաքսիմ Միրզոյանը, Վասիլի Աթաջանյանը, Մուրադ Պետրոսյանը[11], Արկադի

---

[7] ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 11, թ. 85:

[8] Նույն տեղում:

[9] Արկադի Մանվելի Մանուչարովը Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու վերաբերյալ 1965թ. հունիսին կազմված և Մոսկվա ուղարկված նամակի 13 հեղինակներից մեկն էր: Նա Արցախից արտաքսվել էր 1965-ին և այնտեղ էր վերադարձել 1977թ. ու նշանակվել Ստեփանակերտի շինանյութերի կոմբինատի տնօրեն:

[10] Ռոբերտ Սեդրակի Քոչարյանը ծնվել է 1954թ. օգոստոսի 31-ին: Միջնակարգ կրթություն է ստացել Ստեփանակերտում: Ապա ծառայել է խորհրդային բանակում: 1982-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրատեխնիկական ֆակուլտետը: 1980թ–ից տարբեր պաշտոններ է զբաղեցրել Լեռնային Ղարաբաղի կոմերիտական և կուսակցական մարմիններում:

Նա 1989 և 1990թթ. ընտրվել է Հայաստանի Գերագույն խորհրդի ժողովրդական պատգամավոր: 1991թ. ընտրվել է ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի ժողովրդական պատգամավոր: 1988-ի փետրվարից Արցախյան շարժման քաղաքական առաջնորդներից է: 1992թ. օգոստոսին ստանձնել է ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի նախագահի և ԼՂՀ վարչապետի պաշտոնները: 1994թ. դեկտեմբերի 24-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի որոշմամբ, իսկ 1996թ. նոյեմբերին՝ համաժողովրդական ընտրություններով Ռոբերտ Քոչարյանը ընտրվել է ԼՂՀ նախագահ: 1997թ. մարտից Հայաստանի Հանրապետության վարչապետն էր, իսկ 1998 և 2003թթ. ընտրվել է ՀՀ նախագահ:

[11] Մուրադ Ազատի Պետրոսյանը ծնվել է 1946թ. Արցախի Շոշ գյուղում: Ունի թերի բարձրագույն փիլիսոփայական կրթություն: 1966թ. ծերբակալվել է Երևանում պետհամալսարանից զենքի առևանգման ժամանակ և 1967-ին դատապարտվել 10 տարվա ազատազրկման: 1977-ին ազատվելուց հետո վերադարձել է Ղարաբաղ: 1988թ. օգոստոսից մինչև 1 գ1թ. եղել է «Ղարա-

Կարապետյանը[12], Ռոլես Աղաջանյանը և ուրիշներ: Նրանց կոչերով մարզի բոլոր ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, ուսումնական հաստատություններում և մշակույթի օջախներում տեղի էին ունենում ժողովներ, կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների նիստեր, գյուղական, ավանային, քաղաքային և շրջանային խորհուրդների նստաշրջաններ, որտեղ քննարկվում էին Արցախ-Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Այն ժամանակ Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի տնօրեն Բորիս Առուշանյանը[13] հետագայում պնդել է, որ 1988-ի փետրվարյան այդ օրերին առաջին ժողովը տեղի է ունեցել իր տնօրինած գործարանում փետրվարի 8-ին: Այդ ժողովում ընդունվել է Արցախը Հայաստանի հետ միավորելու մասին հռչակագիր, որը, ըստ հեղինակի, «մեծ իրարանցում է բարձրացրել մարզի ղեկավարության շրջանում»: Իսկ փետրվարի 10-ից սկսած՝ համանման ժողովներ են տեղի ունեցել քաղաքի մի շարք հիմնարկ–ձեռնարկություններում[14]: Դրանցից էր գյուղմեքենաների գործարանը, որտեղ ընդհատակյա աշխատանքներ էին տարվում 1987 թ–ից: Արտադրամասի պետ Միքայել Ղայամյանը, կապիտալ շինարարության բաժնի պետ Վլադիմիր Աղասարյանը, հաճախակի գործարան գնացող «Դաշնակ Ագոն» և ուրիշներ բանվորներին հասկացնում էին Արցախը Հայաստանի հետ միավորելու անհրաժեշտությունը և կոչ անում հանդես գալ միասին ու ետ չմնալ ընդհանուր պայքարից: Եվ երբ հունվարին պետք է

ռադ» կոմիտեի ներկայացուցիչը Լեռնային Ղարաբաղում: 1991թ. նշանակվել է ինքնապաշտպանական ուժերի գլխավոր հրամանատարի առաջին տեղակալ: Նույն թվականին ընտրվել է Գերագույն խորհրդի պատգամավոր: 1992–1993թթ. եղել է ԼՂՀ պարետը: 1994թ. նշանակվել է ԼՂՀ պաշտպանության բանակի գլխավոր հրամանատարի տեղակալ:

[12] Արկադի Կարապետյանը («Դաշնակ Ագո») ազգային-ազատագրական շարժման նշանավոր դեմքերից է: Նա հանդիսացել է Ղարաբաղում ընդհատակյա շարժման կազմակերպիչը և ինքնապաշտպանական ուժերի առաջին հրամանատարը:

[13] Բորիս Առուշանյանը ծնվել է 1948թ. Ասկերանի շրջանի Ռեվ գյուղում: Ավարտել է Ստեփանակերտի N2 դպրոցը, ապա՝ Մոսկվայի էներգետիկայի ինստիտուտը: 1972 թվականից աշխատել է Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանում, 1987թ–ից՝ տնօրեն: 1991թ. դեկտեմբերի 28-ին ընտրվել է ԼՂՀ ժողովրդական պատգամավոր, իսկ 1992թ. փետրվարին նշանակվել է ԼՂՀ նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ:

[14] «Ազատ Արցախ», 19.03.2002:

տեղի ունենար արիմիության ընդհանուր ժողով. Միքայել Ղարամյանի առաջարկությամբ օրակարգի հարց դարձավ Արցախը Հայաստանի հետ միավորելու հարցը, և միաձայն որոշեցին պաշտպանել այդ պահանջը: Հետո գործարանի աշխատողները հրապարակում հիմնական տեղ ունեին և 5–մետրանոց ցուցատախտակ[15]:

Ադրբեջանի ՊԱԿ-ը և ներքին գործերի նախարարությունը հանձնարարություն ունեին ամեն կերպ կանխել սկսված ժողովրդական պայքարը, չեզոքացնել շարժման առաջնորդներին և ակտիվիստներին: Սակայն փետրվարի 10-ին քաղաքի մի խումբ երիտասարդներ համարձակորեն շրջում էին Ստեփանակերտի փողոցներով՝ վանկարկելով՝ «ԼՂԻՄ–Հայաստանի միացում»[16]:

Վահան Հարությունյանը պատմում է, որ փետրվարի 11-ին Ադրբեջանի կոմկուսի ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կևորկովը մարզկոմի աշխատակիցներին հայտնել է, թե Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմից հաղորդել են, որ ԼՂԻՄ-ը չի տրվի Հայկական ԽՍՀ-ին, և այդ հարցը չի քննարկվի ԽՄԿԿ Կենտկոմում ու ԽՍՀՄ Գերագույն խորհրդում[17]: Այդ լուրը արագորեն տարածվել էր Ստեփանակերտում, և տեղ-տեղ տարերայնորեն հավաքվում էին մարդիկ ու հայտնում իրենց դժգոհությունը: Նույն օրը Ստեփանակերտում տարածվել էին թռուցիկներ և բաց նամակ, որոնցում կոչ էր արվում մարզը դուրս բերել Ադրբեջանի կազմից և միացնել Հայաստանին: Քաղաքի դպրոցականներն ու ինստիտուտի ուսանողները դիմել էին դասադուլի[18]: Փետրվարի 12-ին Ստեփանակերտում տեղի էին ունեցել նոր հուզումներ: Այդ նույն օրը հրավիրվել էր մարզի կուսակցական-տնտեսական ակտիվի նիստ, որին մասնակցեցին մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կևորկովը, Ստեփանակերտ ժամանած Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի երկրորդ քարտուղար Վ. Կոնովալովը, բաժնի վարիչ Մ. Ասադովը, ԽՄԿԿ Կենտկոմի ապարատի աշխատակից Գ. Սեպտան և այլ պաշտոնյաներ: Նրանք Ղարաբաղ էին եկել՝ Արցախի և Հայաստանի վերամիա-

[15] *«ԼՂ Հանրապետություն», 15.01.1998:*
[16] Օհանջանյան Փ., *Ղարաբաղի ազատագրական պատերազմը, էջ 9:*
[17] Արտյոնյան Վ. Բ., *նշվ. աշխ., մաս 1, էջ 33:*
[18] Золян С., Мирзоян Г., *Нагорный Карабах и вокруг него. Глазами независимых наблюдателей. Сборник документов, Ер., 1991, с. 7 (այսուհետև՝ Нагорный Карабах и вокруг него...).*

վորման պահանջը դատապարտող որոշումներ կորզելու մարզի կուսակցական ու պետական մարմիններից ու ամեն կերպ փակելու արցախահայության ինքնորոշման ճանապարհը: Բացելով ակտիվի նիստը՝ Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար Զ. Մովսիսյանը հայտարարում է, թե վերջերս մի խումբ ծայրահեղականներ, հաշվի չառնելով ժողովրդի կարծիքը, Ղարաբաղը Հայաստանին միացնելու ստորագրություններ են հավաքում[19]: Այնուհետև ելույթ ունեցան Բ. Կևորկովն ու Վ. Կոնովալովը: Թե՛ նրանց և թե՛ մյուսների ելույթները հեռախոսներով հաղորդվում էին Երևան՝ Իգոր Մուրադյանին, և Մոսկվա՝ Արցախի պատվիրակությանը[20]: Բաքվից եկած էմիսարների դիրքորոշումը պաշտպանում է Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկայի արհկոմի նախագահ Ա. Շահրամանյանը: Ամբիոն բարձրանալով՝ N2718 ավտոշարասյան պետ Մաքսիմ Միրզոյանը դիմում է Կոնովալովին. «Դուք, հարգելի՛ Կոնովալով, մեզ բոլորիս անվանեցիք էքստրեմիստներ: Սխալվում եք: Մեր հայրերը կռվել և հասել են մինչև Ռայխստագ և նրա պատերի վրա թողել իրենց անունները... Դուք վիրավորում եք մեզ բոլորիս: Փոխանակ խորքով քննարկելու մարզի նկատմամբ տարվող Ադրբեջանի անմարդկային քաղաքականության պատճառները, թեթև մի հայտարարությամբ ուզում եք փակել հարցը: Այն կացությունը, որ ստեղծվել է Ղարաբաղում, մեկ օրվա, մեկ տարվա գործ չէ, դա հետևողական կուրս է: Հերթով փոխվում են Ադրբեջանի ղեկավարները, սակայն կուրսը մնում է անփոփոխ: Այսօր այդ կուրսի ջահակիրը Ղարաբաղում մարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կևորկովն է...»[21]: Ապա ելույթ է ունենում քաղաքի թեթև արդյունաբերության ձեռնարկություններից մեկի տնօրեն Վլադիկ Սարգսյանը և դատապարտում շարժման դեմ ուղղված Ադրբեջանի իշխանությունների գործողությունները: Այդքանից հետո քաղկոմի առաջին քարտուղար Զավեն Մովսիսյանը քաջություն է ունենում վերջում հայտարարել, թե ինքը միանում է ժողովրդին: Կազմվում է մարզկոմի պատասխանատու 20 աշխատակիցների ստորագրությամբ հեռագիր և փետրվարի 16-ին ուղարկվում Մոսկվա: Այնտեղ ասված է. «ԼՂԻՄ կուսակցության մարզկոմի ապարատի աշխատողները լրջորեն անհանգստացած են մար-

[19] *«Եղիցի լույս», Ստեփանակերտ, N3-4, 2000:*
[20] *Նույն տեղում:*
[21] *Նույն տեղում:*

զում ստեղծված արտակարգ լարված իրավիճակից, որը լեցուն է վտանգավոր հետևանքներով: Համառորեն պահանջում ենք ԽՄԿԿ Կենտկոմի հանձնաժողովի ժամանումը»[22]:

Այսպիսով՝ Ղարաբաղյան շարժման մասնակիցները Ստեփանակերտի ակտիվի նիստում առաջին անգամ բացահայտ մերկացնում են Մոսկվա–Բաքու հակահայկական, հակաարցախյան դիրքորոշումը և վճռականորեն պահանջում մարզը դուրս բերել Ադրբեջանի կազմից ու վերամիավորել Հայաստանի հետ: Այդ մասին անմիջապես իմանում են մարզի բոլոր բնակավայրերում, ինչը ավելի է ոգևորում բնակչությանը: Հարկավոր էր դիմել ավելի լայն ու բացահայտ գործողությունների: Արկադի Կարապետյանը պատմում է, որ ծրագրվել էր փետրվարի 15-ին Ստեփանակերտում անցկացնել առաջին հանրահավաքը, որին պետք է մասնակցեր մոտ երեք հազար մարդ: Հանրահավաքի ցուցապաստառները և պահվում էին Ասկերանի կոմերիտշրջկոմի աշխատակից՝ բադարեցի Կարեն Արզումանյանի տանը: Սակայն հանգամանքները ստիպեցին հանրահավաքը հրավիրել երկու օր շուտ՝ փետրվարի 13-ին: Բաքվից եկած էմիսարները ճնշումներ էին գործադրում մարզի կուսակցական և պետական մարմինների աշխատակիցների վրա: Վ. Կոնովալովը որոշել էր փետրվարի 13-ին գումարել կուսմարզկոմի բյուրոյի ընդլայնված նիստ և ստիպել որոշում ընդունել՝ հրաժարվել մարզը Հայաստանի հետ վերամիավորելու պահանջից: Անհրաժեշտ էր ցուցադրել ժողովրդի միասնական պահանջը: Ս. Կարապետյանը առավոտ շուտ Ասկերանի ճանապարհին հանդիպում է շրջանային կուսկոմիտեի քաղլուսաբաժնի վարիչ Սլավիկ Առուշանյանին, որը հայտնում է, թե Ստեփանակերտում տեղի ունենալիք հանրահավաքը կայանալու է այդ նույն օրը՝ ժամը 11-ին, որին կմասնակցի մոտ 400 հոգի: Արկադի Կարապետյանը դժվարությամբ է համաձայնվում Ս. Առուշանյանի հետ: Անհրաժեշտ էր գործել արագ, լինել բոլոր ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում ու բոլորին կոչ անել դուրս գալ հրապարակ: Հիմնարկ-ձեռնարկությունների աշխատողները, բարձր դասարանների աշակերտներն ու ուսանողները պետք է հրապարակ մտնեին ցուցապաստառներով: Առաջինը պետք է հրապարակ մտնեին գյուղատնտեսական տեխնիկումի ուսանողները՝ տանելով ցուցապաստառները: Քաղաքի «Պյատաչոկի» մոտ նրանց

[22] *Նույն տեղում:*

միանում են ասկերանցիները: Ցուցարարներին ընդառաջ գալով՝ բյուրոյի առաջին քարտուղար Զավեն Մովսիսյանը և ներքին գործերի մարզային վարչության պետ Արմեն Իսագուլովը փորձում են համոզել նրանց հրաժարվել հրապարակ մտնելուց: Սակայն ցուցարարները մտնում են Լենինի անվան հրապարակ[23]:

Փոխանակ Սլավիկ Առուշանյանին. փետրվարի 12-ի երեկոյան Ստեփանակերտի ավտոտրանսպորտային ձեռնարկության տնօրենի խորհրդական Վլադիմիր Մելքումյանը Ասկերան է տանում իրենց կոլեկտիվի ժողովի որոշումը, որտեղ պաշտպանվում էր Լեռնային Ղարաբաղի հայկականությունը: Այստեղ էլ քննարկվում է հաջորդ օրը Ստեփանակերտի հրապարակում ցույց կազմակերպելու հարցը: Վ. Մելքումյանը խոստանում է փետրվարի 13-ին՝ ժամը 11-ին, իրենց կոլեկտիվի կրկին հրապարակում: Այդ մասին իբր անմիջապես տեղյակ է պահել Արկադի Կարապետյանին, չնայած վերջինս պնդում է, որ այդ մասին իմացել է փետրվարի 13-ի առավոտյան: Իսկապես փետրվարի 13-ին ժամը 11-ն անց 10 րոպեին Լենինի անվան հրապարակը մարդկանցով լեցուն էր: Ուսուցիչները և աշակերտները Լենինի նկարը բարձր պահում էին մանկավարժական ինստիտուտի և գյուղատնտեսական տեխնիկումի ուսանողները[24]: Մանկավարժական ինստիտուտի դասախոս Գրիգոր Ադամյանը պատմում է, որ երբ ուսանողները հրապարակ չհասցրին էին դեպի հրապարակ, ակամայից մոտեցել է նրանց՝ իրեն պատասխանատու համարելով նրանց հավաքների համար: Հրապարակում մի պահ ստեղծվել էր անհասկանալի վիճակ. հազարավոր մարդիկ հավաքվել էին և չգիտեին ինչ անել: Եվ ահա ամբիոն է բարձրանում Գրիգորի Ադամյանը և դիմելով ժողովրդին՝ բացատրում այդտեղ հավաքվելու նպատակը[25]: Ապա ամբիոն են բարձրանում և ելույթ ունենում խորհրդային Արաքսյա Հայրապետյանը, Արկադի Կարապետյանը, Սլավիկ Առուշանյանը և ուրիշներ: Նրանք իրենց ելույթներում մերկացնում են Ադրբեջանի իշխանությունների հակահայկական քաղաքականությունը և կոչ անում մարզը դուրս բերել Ադրբեջանի կազմից ու վերամիավորել Հայաստանի հետ: Հանրահավաքում նաև կոչեր հնչեցին պաշտպանել հրապարա-

[23] *«ԼՂ Հանրապետություն», 12.02.1998:*
[24] *Նույն տեղում, 13.02.1998:*
[25] *Նույն տեղում:*

կայունությունը, ամրապնդել ժողովուրդների բարեկամությունը, ճիշտ իրագործել ազգային քաղաքականությունը և սատար կանգնել գորբաչովյան վերակառուցմանը[26]:

Հանրահավաքը շարունակվեց մինչև ժամը 13-ը: Հավաքվել էր մոտ 7000 մարդ, չնայած կենտրոնական հեռուստալիքը օգտագործել է 500 թիվը: Ականատեսները պատմում են, որ ամբողջ ցույցի ընթացքում Բ. Կևորկովն ու բաքվեցի իր «հյուրերը» մարզկոմի շենքի պատուհաններից դիտում էին հանրահավաքը:

Այսպիսով՝ ընդհատակից դուրս եկավ շարժումը և ընդունեց համազգային բնույթ: Այն բռունցքվեց հանուն ազգի փրկության՝ ապավեն ունենալով հայ ժողովրդի նախնիների հզոր ու անընկճելի ոգին:

Ադրբեջանի իշխանությունները շփոթության մեջ էին: Այդ նույն օրը Ստեփանակերտ էին ժամանել նոր էմիսարներ՝ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քարտուղարներ Թ. Օրուջևը, Ռ. Մեհտիևը, ներքին գործերի նախարարի տեղակալ Ռ. Մամեդովը և ուրիշներ: Նրանք բացեիբաց հայտարարեցին, թե Մոսկվան մտադիր չէ ազգային հարց քննարկել, հետևապես արցախցիների պահանջն անիմաստ է: Այդ նույն երեկոյան Բ. Կևորկովն իր մոտ է կանչում Արկադի Կարապետյանին և նրան սթափության կոչում: Սակայն ստանում է կտրուկ մերժում[27]:

Շարժման ակտիվիստների կոչով փետրվարի 12–13-ը հանրահավաքներ և ցույցեր էին տեղի ունենում նաև մարզի շրջկենտրոններում ու գյուղերում: Փետրվարի 13-ին Մարտակերտում տեղի ունեցած հանրահավաքում նրա կազմակերպիչ Ներսես Օհանջանյանը հայտարարում է. «Ո՛չ մի շղթա, ո՛չ մի արգելք չի կարող մեզ ետ պահել մեր ճանապարհից: Ժողովուրդն է իր ճակատագրի տերը»: Այդ օրը Մարտակերտի շրջգործկոմի շենքի վրա բարձրանում է Խորհրդային Հայաստանի դրոշը[28]:

Կուսակցական-տնտեսական ակտիվի շրջանային հավաքները, որոնք հրավիրվեցին այդ օրերին, պաշտպանեցին արցախցիների պահանջը՝ ԼՂԻՄ-ը վերամիավորել Հայկական ԽՍՀ-ին: Իշխանությունները փորձեցին ժողովներ հրավիրել և անցկացնել իրենց տեսակետը, սակայն այդ փորձերը ձախողվեցին, քանի որ

[26] **Арутюнян В. Б.,** *նշվ. աշխ., էջ 34:* **Бабонов И., Воеводский К.,** *Карабахский кризис, с. 6:*
[27] *«ԼՂ Հանրապետություն», 12.02.1998:*
[28] *Նույն տեղում, 31.03.1998:*

մարդիկ այլևս չէին ցանկանում դատարկ ճառեր լսել: Ստեփանակերտի այն ժամանակ քաղկոմի երկրորդ քարտուղար Հասմիկ Միքայելյանը պատմում է. «Առաջին ցույցից հետո, որը ղեկավարների մեծ մասին հանկարծակի բերեց, սկսվեց կրիտիկական վիճակից ելքի որոնումը: Ամբողջ օրը շշպռումներ ու բղավոցներ էին տեղում, իսկ ուշ երեկոյան Կևորկովի և այլ անմանց շուրջերից անսքող սպառնալիքներ լսվեցին՝ եթե վաղը հուզումները կրկնվեցին, հետևանքները կանխատեսել անհնար կլինի. Նույնիսկ ակնկալվում էր՝ «հարյուր հազար ֆանատիկներ» կարող են բաղաք ներխուժել և այլն: Ի՞նչ անել: Գիշերը քաղկոմ կանչեցին շուրջ 750 հոգու՝ սկսած գլխավոր դիրեկտորներից մինչև տեղային կոմիտեների նախագահները: Մյուսների թվում ես ինքս էլ բնականաբար բնակարանից բնակարան էի գնում:

Իսկ առավոտյան մոտավորապես ժամը 4-ին, ձեռ ու ոտից [illegible], [illegible], [illegible], մենք կոլեկտիվ հեռագիր [illegible] Մոսկվա Ի՞նչ հեռագիր: Այն մասին, որ Ստեփանակերտի [illegible] [illegible] Լ [illegible]: Այդ խառնաշփոթ [illegible] [illegible] [illegible]: Կոնֆլիկտի սեղմված [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]»[29]:

[illegible] [illegible] [illegible] [illegible] [

ժամանակ ներխուժել Ղարաբաղ և կազմակերպել սպանդ»[32]: Այդ նույն գիշերը Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար Զավեն Մովսիսյանն այդ մասին հաղորդում է բոլոր խոշոր ձեռնարկությունների ղեկավարներին, իսկ երբ նրանից պահանջում են այդ մասին հեռագրով հայտնել Մոսկվա, նա հրաժարվում է: Սակայն ստիպված էր այդ հեռագիրն ուղարկել չորս օր հետո»[33]:

Փետրվարի 14-ին և 15-ին Ստեփանակերտի Լենինի անվան հրապարակում շարունակվում էին հանրահավաքները, որոնց մասնակցում էին տասնյակ հազարավոր մարդիկ: Փետրվարի 16-ից մինչև մարտի 2-ը ցուցարարները չէին հեռանում հրապարակից, օր ու գիշեր այնտեղ էին, չնայած ցուրտ, ձյունախառն եղանակ էր: Այդ օրերին հրապարակում «վրաններ էին սարքել, խարույկներ էին վառում: Գյուղերից ցուցարարների համար փայտ, հաց, մթերք էին բերում»[34]: Հանրահավաքներին մասնակցում էին մարզի շրջաններից եկած հազարավոր մարդիկ, որոնց թիվը երբեմն հասնում էր 50–60 հազարի: Այստեղ՝ Լենինի անվան հրապարակում, կազմվում էին հարյուրավոր հեռագրեր և դիմումներ, ուղարկվում Մոսկվա և Երևան, որոնցում առաջ էին քաշվում տարբեր պահանջներ ու խնդիրներ: Օրինակ՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի 28 դասախոսների ստորագրությամբ Մ. Գորբաչովին ուղարկված հեռագրում պահանջվում էր «Ղարաբաղի քաղաքական հարցը ճիշտ որոշելու համար ստեղծել կառավարական հանձնաժողով»[35]:

Սակայն շարժումը ընթանում էր տարերայնորեն, և չկար ընդհանուր ղեկավարություն: 1988թ. փետրվարի կեսերին ստեղծում է նախաձեռնող խումբ, որը ղեկավարում էր Արկադի Մանուչարովը: Խմբի շտաբ է ընտրվում «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրությունը: Թերթի գրականության և արվեստի բաժնի վարիչ բանաստեղծ Գուրգեն Գաբրիելյանի աշխատասենյակը, որն ուղիղ նայում էր Լենինի անվան հրապարակին, դարձել էր Ստեփանակերտի «Սմոլնին»: Այդ օրերին Արկադի Մանուչարովի գլխավորությամբ մի պատվիրակություն է հանդիպում Բ. Կևորկովի հետ, և նրան առաջարկվում է կանգնել ժողովրդական պայ-

[32] *Нагорный Карабах и вокруг него..., с. 77-78: Տե՛ս նաև «Հայաստանի Հանրապետություն», 20.02.1999:*

[33] *Нагорный Карабах и вокруг него..., с. 78.*

[34] *«Ազատ Արցախ», 12.03.2002:*

[35] Աբրահամյան Հ., *Ճակատագրին ընդառաջ, Ե., 2001, էջ 16:*

թարի գլուխ: Բ. Կևորկովը կտրուկ հրաժարվում է և պատվիրակությունից պահանջում ցուցարարներին համոզել վերադառնալ իրենց տներն ու գյուղերը[36]: Պատվիրակությունը մերժել է նրա պահանջը: Մարզի բոլոր կուսշրջկոմները, բացի Շուշիից, փետրվարի 16-ին հեռագրեր են ուղարկել ԽՍԿԿ Կենտկոմ և խնդրել հանձնաժողով ուղարկել Լեռնային Ղարաբաղ՝ տեղում հարցը լուծելու համար: Այդ հեռագրերի առթիվ փետրվարի 17-ին քրեական գործ էր հարուցվել, որի հետաքննությունը վարում էր Ադրբեջանի դատախազությունը:

1988թ. փետրվարի 19–20-ը անց են կացվել ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների շրջանային խորհուրդների նստաշրջաններ, որտեղ պահանջվել է հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան և որոշում ընդունել Լեռնային Ղարաբաղը դուրս բերել Ադրբեջանի կազմից ու վերամիավորել Հայաստանի հետ: Փետրվարի 18-ին Ստեփանակերտի քաղխորհրդի 52 պատգամավորներ քաղխորհրդի գործկոմից պահանջում են հրավիրել արտահերթ նստաշրջան և քննարկել ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու հարցը: Գոյություն ունեցող կարգի համաձայն՝ փետրվարի 20-ի առավոտյան հրավիրված Ստեփանակերտի քաղխորհրդի 20-րդ գումարման չորրորդ արտահերթ նստաշրջանը, որի 110 պատգամավորներից մասնակցում էին 98-ը, 90 ձայնով որոշեց. «Խնդրել ԼՂԻՄ-ի մարզխորհրդի գործկոմին՝ նստաշրջանում քննարկել ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից հանելու և Հայաստանին միավորելու հարցը»[37]:

Այժմ պարզենք, թե ինչ է տեղի ունեցել 1988 թ. փետրվարի 20-ին, որը հանգամանորեն չի պարզված: Այդ օրը մարզխորհրդի 67 պատգամավորներ գրավոր պահանջել էին հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Այդ պահանջը սահմանադրական էր և լիովին բխում էր մարզխորհրդի կանոնադրության սկզբունքներից: Պատգամավորների բարձրացրած հարցին պատասխան տալու համար շտապ հրավիրվում է մարզխորհրդի

[36] *Նույն տեղում, էջ 18: Բ. Կևորկովն իր կյանքի վերջին տարիներն ապրել է Մոսկվայում: Նա չէր ցանկանում հանդիպել մարդկանց հետ: Մարզկոմի նախկին քարտուղար Ե. Սարգսյանը, որին Բ. Կևորկովը վստահում էր, հանդիպել էր նրա հետ: Նա ինձ հաղորդել է, որ Բ. Կևորկովը գրել է հուշեր, որոնց ճակատագիրը դեռևս մնում է անհայտ:*

[37] Կարապետյան Բ., *նշվ. աշխ., էջ 42 – 44:*

գործկոմի նիստ, որին ներկա էին մարզխորհրդի նախագահ Վլադիմիր Օսիպովը, մարզգործկոմի անդամներ Վաչագան Գրիգորյանը (Ասկերանի կուսշրջկոմի առաջին քարտուղար), Սեմյոն Բաբայանը («Գյուղտեխնիկա» գործարանի տնօրեն), Լիդա Ղազիյանը (կուլտուրայի բաժնի վարիչ), Արաքսյա Տոնոյանը (պլանային բաժնի պետ), Բորիս Կևորկովը (մարզկոմի առաջին քարտուղար)[38], Արմեն Իսագուլովը (ներքին գործերի վարչության պետ), Վիգեն Հայրապետյանը (մարզժողկրթբաժնի վարիչ), Շմավոն Պետրոսյանը, Հենրիխ Պողոսյանը, Ֆարուխ Հուսեյինովը (գործկոմի նախագահի տեղակալներ), հրավիրված Կարեն Բաբուրյանը (մարզկոմի կազմիրահանձնչական բաժնի վարիչ) և այլն: Նախագահությունը քննարկել է «ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու մասին» հարցը, որի վերաբերյալ հաղորդումով հանդես է եկել Կարեն Բաբուրյանը: Ելույթ են ունեցել Վ. Գրիգորյանը, Լ. Ղազիյանը, Ս. Բաբայանը, Ա. Տոնոյանը, Բ. Կևորկովը, Հ. Պողոսյանը, Վ. Հայրապետյանը, Մ. Դանիելյանը և Վ. Օսիպովը[39]:

Ընդունված որոշումը մեջ ենք բերում առանց թարգմանության. "В связи с тем, что так называемом списке депутатов, обратившихся в исполком с требованием созвать внеочредную сессию областного Совета народных депутатов для рассматрения вопроса о сложившейся ситуации в связи с требованием с передачи НКАО из состава Азербайджанской ССР в Армянскую ССР, отсутствуют данные об избирательных округах, подтверждающих полномочия их избирателей исполком Нагорного Карабаха облостного Совета народных депутатов

РЕШИЛ

1. Отклонить рассмотрение вопроса о созыве чрезвычайной сессии

2. Поручить председателю совместно с мандатной комиссии проверить достоверность полномочий и данных о депутатах потребования проведения сессии.

Председатель облисполкома Осипов В. В.

[38] *Մարզխորհրդի նախկին որոշ պաշտոնյաներ վկայում են, թե մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կևորկովը իր պաշտոնավարության ընթացքում ոչ մի անգամ չի մասնակցել մարզգործկոմի նիստերին, մինչդեռ բոլոր արձանագրություններում նշված է նրա մասնակցությունը:*

[39] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 273, թ. 4:*

Секретарь облисполкома Хачиян Р. В."[40].

Ինչպես երևում է, ընդունված որոշմամբ մերժվում է արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջը, և մարզգործկոմը թերահավատ էր մարզային խորհրդի այն պատգամավորների նկատմամբ, ովքեր պահանջել էին հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Հետաքրքիրն այն է, որ մարզխորհրդի գործկոմի անդամներից ոմանք կողմնակից էին հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Սակայն ինչո՞ւ են նրանք քվեարկել արտահերթ նստաշրջան հրավիրելու դեմ: Դա խորհելու առիթ է տալիս:

Ընթերցողներին տեղյակ պահենք, որ մարզխորհրդի 20-րդ գումարման պատգամավորների ընտրությունները տեղի էին ունեցել 1987 թ. հունիսի 21-ին, և ընտրվել էր 150 պատգամավոր: Նույն թվականի հուլիսի 8-ին տեղի ունեցած 20-րդ գումարման առաջին նստաշրջանը հաստատել էր ընտրությունների արդյունքները և ճանաչել ընտրված պատգամավորների լիազորությունները[41]: Իմիջիայլոց, ի տարբերություն նախորդ ընտրությունների, այս անգամ մեկ տեղի համար առաջադրվել էր մի քանի թեկնածու, ըստ որում՝ ընտրված պատգամավորներից 69-ը բանվորներ էին, 17-ը՝ կոլտնտեսականներ: Այդ նստաշրջանում մարզխորհրդի նախագահ է ընտրվում Վլադիմիր Օսիպովը: Եվ ահա 7 ամիս անց մարզխորհրդի գործկոմը կասկածի տակ էր դրել նստաշրջան պահանջող պատգամավորների լիազորությունները[42]: Միանգամայն ակնհայտ է, որ այդ որոշումով մարզգործկոմը փորձում էր անհիմն պայմաններով հետաձգել և ապա կանխել մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի հրավիրումը: Այդ մասին իմանալով՝ հրապարակում հավաքված տասնյակ հազարավոր ցուցարարներ անընդհատ գոչում էին՝ «սեսիա»:

Այստեղ անհրաժեշտ է նշել նաև հետևյալը. 1988թ. փետրվարի 20-ին տեղի ունեցած մարզգործկոմի նույն նիստը քննարկել է նաև «Մարզի փողոցներում, հրապարակներում, պողոտաներում, պուրակներում, այգիներում և պարտեզներում ժողովներ, հանրաքվեներ, փողոցային երթեր, ցույցեր և այլ միջոցառումներ անցկացնելու ժամանակավոր կանոնների և կարգի

[40] *Նույն տեղում:*

[41] *Նույն տեղում, գ. 260, թ. 6:*

[42] *Նույն տեղում, թ. 24:*

մասին» հարցը, որի վերաբերյալ հաղորդումով հանդես է եկել մարզխորհրդի նախագահ Վ. Օսիպովը: Հարցի շուրջ ելույթ են ունենում Ա. Իսագուլովը, Մ. Դանիելյանը, Ս. Բաբայանը, Ա. Տոնոյանը, Ռ. Խաչիյանը, Հ. Պողոսյանը և Ռ. Իգոշկինան: Բանն այն է, որ փետրվարի 13-ից սկսած՝ մասսայական հավաքներ և ցույցեր էին տեղի ունենում Ստեփանակերտում, որոնք փետրվարի 17-ից դարձել էին անընդմեջ, օր ու գիշեր, անկառավարելի: Դա խիստ անհանգստացնում էր մարզի և հանրապետության ղեկավարությանը: Ահա թե ինչու «ժամանակավոր կանոնների» ընդունումը մարզային իշխանությունների համար դարձել էր անհրաժեշտ, որը պետք է նպաստեր կանխել մասսայական ելույթները և հրապարակը ազատել միտինգավորներից: Այդ կանոնները դեռևս քննարկվել էին փետրվարի 18-ին տեղի ունեցած գործկոմի նիստում, որի օգտին քվեարկել էին Վլադիմիր Օսիպովը և Արմեն Իսագուլովը, դեմ էին քվեարկել Հ. Պողոսյանը, Շ. Պետրոսյանը, Վ. Հայրապետյանը, Ա. Բաբայանը, Լ. Ղազիյանը, Մ. Դանիելյանը, ձեռնպահ էին մնացել Ա. Տոնոյանը և Ռ. Խաչիյանը[43]: Երկրորդ անգամ անդրադառնալով նույն հարցին՝ գործկոմի նիստը պատգամավորական հանձնաժողովներին, հիմնարկ-ձեռնարկությունների և կազմակերպությունների ղեկավարներին հանձնարարել էր մարզի բնակչության շրջանում տանել բացատրական աշխատանք: Դրա պատասխանատվությունը դրվել էր մարզխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ Շմավոն Պետրոսյանի վրա[44]:

Ըստ արխիվային նյութերի, կանոնների ընդունման հարցը կրկին քննարկվել է փետրվարի 27-ին տեղի ունեցած մարզգործկոմի նիստում և որոշվել այն գործածության մեջ դնել մարտի 1-ից: Սակայն ժողովրդական հուժկու պոռթկումը հոդս ցնդեցրեց իշխանությունների այդ մեքենայությունները:

Այսպիսով՝ ԼՂԻՄ մարզային խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու և մարզը Ադրբեջանի կողմից դուրս բերելու հարցի քննարկումը դարձել էր հրամայական պահանջ: Այն ժամանակ ԼՂԻՄ մարզային խորհրդի գործկոմի նախագահի տեղակալ Շմավոն Պետրոսյանը[45] հիշում է. «Փետրվարի 19-ին...

[43] *Նույն տեղում, թ. 24:*

[44] *Նույն տեղում, թ. 10:*

[45] *Շմավոն Պետրոսյանը ծնվել է 1927 թ., Մարտունու շրջանի Ճարտար գյուղում: Գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո սովորել և ավարտել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի անասնաբուժական բաժինը: Աշխատել է որպես Ճարտարի «Կոմունիզմ» կոլտնտեսության անասնաբույժ, ապա՝ կուսկազմակերպության քարտուղար: Ավարտել է Բաքվի կուսակցական բարձրագույն դպրոցը: Եղել է Մարտունու կուսշրջկոմի առաջին քարտուղար: Այնուհետև ղեկավարել է ԼՂԻՄ գյուղատնտեսությունը: Պաշտոնի բերումով եղել է նաև ԼՂԻՄ մարզգործկոմի նախագահի տեղակալ: Մահացել է 2005 թ.:*

դրվա երկրորդ կեսին ինձ մոտ եկան պատգամավորներ Վարդան Հակոբյանը, Արմեն Ծատուրյանը, գրող Գուրգեն Գաբրիելյանը և իմ սեղանին դրեցին մարզխորհրդի 67 պատգամավորների ստորագրությամբ առաջարկը՝ նույն օրը արտահերթ նստաշրջան հրավիրելու մասին: Ես նրանց բացատրեցի, որ կանոնակարգի համաձայն՝ նստաշրջան պետք է հրավիրվի խորհրդի գործկոմի որոշմամբ... Իմ աշխատասենյակ հրավիրեցի գործկոմի անդամներին... Զանգեցի մարզխորհրդի նախագահ Վ.Օսիպովին, որն այդ օրերին գրեթե գտնվում էր կուսակցության մարզկոմում՝ Բ. Կևորկովի աշխատասենյակում, և խնդրեցի ներկայանալ խորհրդի շենք: Նա եկավ, սակայն իմանալով իմ մտադրությունը՝ գործկոմի նիստ հրավիրելու առաջարկը մերժեց՝ փորձելով մեզ համոզել, որ իբր փետրվարի 20-ի առավոտյան Ստեփանակերտ են ժամանելու Ադրբեջանի ղեկավարները՝ Ք. Բաղիրովի գլխավորությամբ, և հարցը տեղում «քննության կառնվի և վճիռ կկայացվի»[46]:

Լենինի անվան հրապարակում հավաքված տասնյակ հազարավոր ցուցարարներ պահանջում էին «սեսիա»: Փետրվարի 20-ին Ստեփանակերտ են ժամանում Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ք. Բաղիրովը և ԽՄԿԿ Կենտկոմի պրոպագանդայի բաժնի հրահանգիչ Վ. Յաշինը: Այդ օրը Ստեփանակերտ տանող բոլոր ճանապարհները փակվել էին, որպեսզի մարզխորհրդի պատգամավորները չկարողանային շրջաններից հասնել Ստեփանակերտ: Սակայն նրանք, հաղթահարելով բոլոր դժվարությունները, տեղ են հասնում լեռնային ճանապարհներով և կածաններով: Պատգամավորներին Ստեփանակերտ հասցնելու գործում կարևոր դեր են խաղացել հատկապես նախաձեռնող խմբի և նրա շրջանային ենթախմբերի անդամները: Առանձնապես ակտիվ էր գործում Ռազմիկ Պետրոսյանի խումբը[47]:

[46] *«Հայաստանի հանրապետություն», 20.02.1999:*

[47] *«Եղիցի լույս», N5, 2000:*

Նախատեսված էր մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը սկսել փետրվարի 20-ին, ժամը 16-ին: Սակայն պատգամավորների մի մասը, չկարողանալով ժամանակին հասնել Ստեփանակերտ, նիստը սկսվեց ուշ՝ երեկոյան ժամը 20-ն անց 20 րոպեին, երբ հայտնի դարձավ, որ մարզխորհրդի 149 պատգամավորներից ներկայացել էին 110-ը[48]: Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանին մասնակցելուց հրաժարվել էին ադրբեջանցի պատգամավորները: Այդ օրերին տեղի ունեցած իրադարձություններին քաջատեղյակ Կիմ Գաբրիելյանը գրում է, թե իբր նստաշրջանի գումարմանը խոչընդոտում էին մարզգործկոմի ղեկավարները: Որպես օրինակ նշել է, որ մարզգործկոմի նախագահի տեղակալ Շմավոն Պետրոսյանը «ջանք չէր խնայում՝ կասեցնելու պատգամավորների նախաձեռնությունը՝ պատճառ բռնելով քվորումի բացակայությունը: Անգամ պատգամավորների երկու երրորդի գրավոր համաձայնությունը հիմք չդարձավ գործկոմի փոխնախագահի համար: Շ.Պետրոսյանը պահանջեց յուրաքանչյուր պատգամավորի գրավոր համաձայնությունը»[49]: Իսկ Շմավոն Պետրոսյանը վկայում է, որ 15 տարվա ընթացքում առաջին անգամ Բ. Կևորկովը գալիս է մարզգործկոմի շենք, որի հետ էր մարզխորհրդի նախագահ Վ. Օսիպովը: Առաջարկվում է հրավիրել գործկոմի նիստ: Նիստը բացում է Բ. Կևորկովը և առաջարկում որոշում ընդունել հանրահավաքներն արգելելու մասին ու արագորեն «մաքրել» հրապարակը: Դա նշանակում էր ուժային մարմիններին իրավունք տալ բռնություն կիրառել ցուցարարների դեմ: Առաջարկվում է նաև հրաժարվել նստաշրջան հրավիրելուց: Սակայն գործկոմի անդամների ճնշող մեծամասնությունը մերժում են նրա առաջարկությունը: Ձայների մեծամասնությամբ որոշվում է նստաշրջանը հրավիրել նույն օրը՝ փետրվարի 20-ին[50]: Այդ ժամանակ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ք. Բաղիրովը որոշում է դիմել խորամանկության՝

[48] *Որոշ աղբյուրներում նշված է, թե ներկայացել էին 111-ը (Ղարաբաղյան հարց..., էջ 85), մեկ այլ տեղ ասված է, թե նստաշրջանին ներկայացել էր 112 պատգամավոր («Ազգ», 20.02.2002):*

[49] *«Ազգ», 20.02.2002:*

[50] *«Գարդմանք», N2, 1999: Շ. Պետրոսյանի այդ վկայությունը հակասում է փետրվարի 20-ին տեղի ունեցած մարզգործկոմի նախագահության վերոնշյալ որոշմանը, որի արձանագրությունը մեջ է բերվել բնագրով: Եթե Շ. Պետրոսյանը ճիշտ է, ապա կարելի է ենթադրել, որ գործկոմի նախագահության նիստի արձանագրությունը կեղծվել է:*

մարզկոմ կանչել շրջգործկոմների քարտուղարներին և նրանց պահել այնտեղ: Այդ փորձը ևս հաջողություն չի ունենում: Դրանից հետո գալիս է գործկոմ և թուրքավարի ելույթ ունենում: Դա էլ չի անցնում[51]: «Այդ ժամանակ,— պատմում է Վիգեն Հայրապետյանը,— Լենինի անվան հրապարակը մարդկանցով լեփ լեցուն էր Նստա-շըր-ջան,– վանկարկում էր ժողովուրդը: Ստեփանակերտ հասած պատգամավորներին մարդիկ ընդունում էին որպես հերոսներ: Մարդկային ծովը նրանց համար ճանապարհ էր բացում դեպի մարզխորհրդի շենքը: Ամեն անգամ, երբ պատգամավորների թիվն ավելանում էր թեկուզ մեկով, հավաքվածներն անսահման ուրախանում էին: Ճանապարհները փակ էին, իշխանություններն ամենուրեք պատգամավոր էին «որսում»: Բայց նրանք, այնուամենայնիվ, եկան՝ շրջանցելով պահակակետերը, անտառներով ու լեռներով: Ինչ-որ մեկի խելքը կտրեց նրանց կերակրել: Ոտքի վրա նրանք մի կտոր հաց էին ուտում ու ներս մտնում...

Կևորկովը երեք անգամ զանգահարում և փորձում է իր մոտ կանչել կոմունիստ պատգամավորներին, սակայն ոչ մեկը չի գնում: Իր շքախմբով մարզխորհրդի նիստերի դահլիճ եկավ Բաղիրովը: Նա «խոնարհ ու բարի» խոստումներ է տալիս, «կոկորդիլոսյան» արցունքներ թափում: Հետո ելույթ է ունենում Մոսկվայի ներկայացուցիչը: Այնուհետև ամբիոնին է մոտենում բանաստեղծ Վարդան Հակոբյանը և ասում. «Դուք խանգարում եք մեզ: Մենք հիմա սկսում ենք նստաշրջանի աշխատանքը: Կարող եք նստել, կարող եք և գնալ՝ ինքներդ որոշեցեք...»[52]:

Հիմա լսենք Վարդան Հակոբյանին, որը նստաշրջան հրավիրելու գլխավոր նախաձեռնողներից մեկն է: Նա գտնում է, որ սխալ է նստաշրջանի պատրաստումը վերագրել որևէ անձի: Այն պատրաստել է ամբողջ ժողովուրդը: Սակայն չի ժխտում, որ, այնուամենայնիվ, անհատներն ունեցել են կարևոր դեր: Նա հիշում է, որ մտավորականների նամակը Մոսկվա ուղարկվելուց առաջ երբ այն ստորագրում էր ԼՂ կրթության բաժնի վարիչ, մարզխորհրդի պատգամավոր Վիգեն Հարությունյանը, ասել է. «Դե էլ ինչո՞ւ ենք հեռու գնում, էնա մի սեսիա անենք, պրծավ, գնաց, էլի»: Մոսկվա մեկնած մտավորականների պատվիրակությանը օգնում էր Մոսկվայի պետական համալսարանի դասա-

[51] *Նույն տեղում::*

[52] *«Խորհրդային Ղարաբաղ», 20.02.1991:*

խոս, անվանի պատմաբան, գարդմանցի Հրանտ եպիսկոպոսյանը: Պատվիրակությանը Մոսկվայից ճանապարհելուց առաջ նա ասել է. «Տղե՛րք, հենց հասնեք Ստեփանակերտ, սեսիա արեք. ճիշտը դա է»:

1988թ. փետրվարի երկրորդ տասնօրյակի վերջին օրերին Արկադի Մանուչարովի գլխավորությամբ ստեղծված նախաձեռնող խումբը, որի կազմում ընդգրկվել էին Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչյա Բեգլարյանը, Մաքսիմ Հովհաննիսյանը, Վարդան Հակոբյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Ռոլես Աղաջանյանը, Բենիկ Օվչյանը, Ժաննա Գալստյանը, Էդվարդ Ղուկասյանը, Համլետ Գրիգորյանը, Արմո Ծատուրյանը, Էռնեստ Հայրապետյանը, Պավել Նաջարյանը, Վալերի Մարությանը, Արմեն Հակոբյանը, Էդվարդ Ղազարովը, Ռուդիկ Աթայանը և ուրիշներ, ակտիվորեն նախապատրաստվում էին հրավիրել մարզխորհրդի արտահերթ նիստ: Կային նաև ենթախմբեր՝ հրաշալի տղաներից կազմված, որոնք, արհամարհելով տեղացող առատ ձյունն ու բուքը, գաղտնագիր-ված, գրեթե փակ ճանապարհներով ապահովում էին պատգամավորների ներկայությունը: Կարեն Բաբուրյանը[53] դարձել էր նստաշրջանը օրինական անցկացնելու իրավաբանական խորհրդատուն: Առանձնապես մեծ էր Արկադի Մանուչարովի և Ռազմիկ Պետրոսյանի դերը: Շարժման շտաբը վերածվել էր ժիր մեղվափեթակի: Պատգամավորների գրանցումը հանձնարարվել էր Վարդան Հակոբյանին: Այդ աշխատանքը նա կատարում էր Արմո Ծատուրյանի հետ: Կանայք շրջապատել էին մարզկոմի շենքը և թույլ չէին տալիս՝ այնտեղ ծվարած Մոսկվայից և Բաքվից եկածները նույնիսկ գնան ճաշելու: Արդեն երրորդ օրն էր, ինչ չէին կարողանում դուրս գալ մարզկոմի շենքից և գնալ հյուրանոց: Նրանք իրենց մոտ հրավիրեցին Ռազմիկ Պետրոսյանին և Ռոլես Աղաջանյանին ու պահանջեցին բացել ճանապարհը: Նրանք էլ իրենց հերթին պահանջեցին բացել Խոջալուի ճանապարհը, որպեսզի Ասկերանի պատգամավորները կարողանային գալ Ստեփանակերտ: Ի վերջո երկկողմյա համաձայնության են գալիս:

[53] *Կարեն Բաբուրյանը ծնվել է 1954թ. հուլիսի 2-ին Ստեփանակերտում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: Ծառայել է ԽՍՀՄ բանակում: Այնուհետև ավարտել է Բաքվի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Նրա քաղաքական գործունեությունը սկսվել է 1980թ-ից: Ընտրվել է քաղաքային և մարզային խորհուրդների պատգամավոր, եղել է ԼՂՀ Գխ իրավունքի և օրինականության մշտական գործող հանձնաժողովի նախագահ: Նա Արցախի անկախության ջատագովներից է:*

Նստաշրջանը սկսելու համար երեք պատգամավորի բացակայության պատճառով քվորում չէր ապահովում, չէր հերիքում: Նախաձեռնող խմբից Սերժիկ Ասատրյանը մեկնեց Աշան և այնտեղից Ստեփանակերտ բերեց մի կնոջ, որը, չնայած հիվանդ էր՝ սիկողնային վիճակում, սակայն սիրով համաձայնվել էր մասնակցել նստաշրջանին: Պատգամավոր բերվեց նաև Քարինտակից: Ք. Բաղիրովը ցանկացավ հանդիպել Վարդան Հակոբյանի հետ: Նույնիսկ փորձեցին վախեցնել նրան: Սակայն Վ.Հակոբյանի պատասխանը մերժողական էր: Նստաշրջանը սկսվելուց առաջ մարզխորհրդի նիստերի դահլիճ եկավ Ք. Բաղիրովը և փորձեց պատգամավորներին համոզել ետ կանգնել իրենց որոշումից, բայց երբ նա մերժված իր շքախմբով հեռացավ, ժողովուրդը պահանջեց սկսել նստաշրջանը: Վարդան Հակոբյանի առաջարկությամբ նախագահ ընտրվեց Վիգեն Հայրապետյանը: Պարզվեց, որ նստաշրջանը զեկուցող չուներ: Առաջինը ելույթ ունեցավ Վարդանը: Նրա ելույթը ձևակերպվեց որպես զեկուցում: Միլիցիայի աշխատող Վալերի Քոչարյանը դահլիճ բերեց փոքրիկ բարձրախոս, որով և հավաքված տասնյակ հազարավոր բնակչությանը հայտնեցին արցախցիների բարի կամքով կայացած պատմական որոշման մասին: Ուրախությունից շատերի աչքերը լցվել էին արցունքներով:

Հետո իր ելույթը շարունակում է Վարդանը, բայց որոշման ձևակերպումն առանց Շմավոն Պետրոսյանի հնարավոր չէր, մանավանդ որ մարզգործկոմի նախագահ Օսիպովը կնիքը գողացել և տարել էր: Կարեն Բաբուրյանի և Ստեփանակերտի քաղդատավոր Ռազմիկ Սարգսյանի համատեղ ուժերով ձևակերպվեց որոշումը: Այն պետք է Երևան հասցվեր ավտոմեքենայով: Սակայն Շուշի չհասած՝ հանդիպեցին թուրքերի թափորին ու ետ վերադարձան: Ի՞նչ անել: Գտնվում է ելքը. նվիրյալների մի փոքրիկ խմբի ուղեկցությամբ «մահացած» հին կոմունիստի դագաղը, որի մեջ էր որոշումը, «շտապօգնություն» մեքենայով տարվում է Ստեփանակերտի օդանավակայան և ուղղաթիռով ուղարկվում Երևան[54]:

Նստաշրջանում, որը քննարկեց «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզային խորհրդի միջնորդությունը մարզը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից հանելու և Հայկական ՍՍՀ-ի կազմի մեջ մտցնելու մասին» հարցը, ելույթ ունեցան 45 պատ-

[54] *«Ազատ Արցախ», 16.01.2003:*

գամավորներ: Նրանք միաձայնակ արտահայտեցին ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից հանելու և Հայկական ԽՍՀ-ի կազմի մեջ մտցնելու օգտին: Նստաշրջանն ընդունում է հետևյալ որոշումը. «Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն սովետին՝ խորն ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ՍՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»[55]:

Հրապարակում հավաքված տասնյակ հազարավոր ցուցարարները ցնծությամբ են ընդունում այդ որոշումը: Քանի որ մարզխորհրդի նախագահ Վ.Օսիպովը վերցրել էր մարզգործկոմի կնիքն ու անհետացել, ստիպված էին որոշումը վավերացնել մարզխորհրդի գործկոմի շտամպով և մարզխորհրդի գործկոմի նախագահության անդամների ստորագրություններով: ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի նյութերը և ընդունված որոշումը հրապարակվեցին փետրվարի 21-ին «Սովետական Ղարաբաղ» և «Սովետսկի Կարաբախ» մարզային թերթերում: Այդ օրը հազարավոր ցուցարարներ շրջապատել էին Ստեփանակերտի տպարանը՝ ապահովելու թերթերի տպագրությունը: Օրվա երկրորդ կեսին թերթերը հասցվեցին Երևանի Թատերական հրապարակ, որտեղ տասնյակ հազարավոր ցուցարարներ անհամբեր սպասում էին Արցախից ստացվող լուրերին:

Արցախ աշխարհը ցնծության մեջ էր: Մարզխորհրդի 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանին մասնակցած պատգամավորները, կեսգիշերին միանալով ցուցարարներին, իրենց ելույթները շարունակում էին Լենինի անվան հրապարակում: Արցախցիներն այն կարծիքին էին, թե մարզխորհրդի որոշումով կվճռվի Արցախի հիմնահարցը: Ճիշտ է, մարզխորհրդի որոշումը չնայած խառնեց Մոսկվայի և Բաքվի խաղաքարտերը, սակայն ղարաբաղյան հիմնախնդիրը, դեմ առնելով գորբաչովյան ապառաժին, շատ ծանր հարվածներ կրեց: Առաջին հարվածը հասցրեց Մոսկվան, երբ հենց փետրվարի 21-ին հապշտապ ընդունվեց «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի որոշումը, որտեղ ԼՂԻՄ մարզխորհրդի

[55] *«Սովետական Ղարաբաղ», 21.02.1988:*

որոշումը բնութագրվեց որպես մի խումբ «անջատողականների» գործողության արդյունք: Այդ որոշման մեջ եզրակացվում էր, թե իբր ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ից անջատելը հակասում է հայ և ադրբեջանական ժողովուրդների շահերին ու ցանկություններին[56]:

Փետրվարի 22-ին Ք.Բաղիրովին և նրա թիմին Մոսկվայից օգնության եկան ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Գ.Ռազումովսկին ու ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի առաջին տեղակալ Պ.Դեմիչևը: Այդ օրերին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի պահանջով Լեռնային Ղարաբաղի մարզային թերթերը տպագրվում էին Բաքվում, իսկ Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահ Էլմիրա Կաֆարովան, ելույթ ունենալով հանրապետության հեռուստատեսությամբ, հայտարարեց, թե Ադրբեջանում Ղարաբաղի ոչ մի հարց չկա, վերացված է *մարզ* հասկացությունը, իսկ եթե հայերը Հայաստան են ուզում, թող գնան. ճանապարհը բաց է: Կաֆարովայի այդ սանձարձակ ելույթը, ինչպես և Արցախ եկող հայաստանյան համարանիշներով ավտոմեքենաների վրա ազերիների հարձակումները խիստ վրդովեցնում են արցախցիներին: Փետրվարի 21-ի օրվա երկրորդ կեսին տեղի ունեցած ԼՂԻՄ մարզկոմի բյուրոն, փոխանակ իր վերաբերմունքն արտահայտելու այդ ելույթների նկատմամբ, որոշում է ընդունում՝ միջոցառումներ ձեռնարկել ԽՄԿԿ Կենտկոմի փետրվարի 21-ի որոշումն իրագործելու վերաբերյալ: Որոշվում է շրջաններ ուղարկել մարզկոմի բյուրոյի անդամներին՝ տեղերում հրավիրելու շրջգործկոմների պլենումներ և ակտիվի նիստեր ու որոշումներ ընդունել ԽՄԿԿ Կենտկոմի փետրվարի 21-ի որոշմանը հավանություն տալու և մարզը Հայաստանի հետ վերամիավորելու արցախահայության պահանջը մերժելու վերաբերյալ: Ի պատասխան մարզկոմի բյուրոյի այդ որոշման՝ նախաձեռնող խմբի կոչով Ստեփանակերտում և մարզի շրջկենտրոններում շարունակվում էին հանրահավաքներ, որտեղ կոչեր էին հնչում չիրագործել կուսակցական մարմինների որոշումները: Փետրվարի 22-ին Ասկերանում նոր էր ավարտվել շրջանային ակտիվի նիստը, որին մասնակցում էին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քարտուղարներ Հասան Հասանովը և Թելման Օրուջևը, երբ լուր ստացվեց, թե մի խումբ ծայրահեղական ազգայնամոլների գլխավորությամբ 8–10 հազար ազերիներ Աղդամի կողմից հար-

[56] *"Правда", 22.02.1988:*

ձակվել են Ասկերանի շրջանի վրա: Այդ կատաղած ամբոխը, շարժվելով Աղդամ-Ասկերան-Ստեփանակերտ երկաթգծով և ավտոճանապարհով, ներխուժում է մարզի տարածք, ավերում նավթաբազան, քանդում Նելսոն Ստեփանյանի անվան կոլտնտեսության ջրաղացը, ավտոտեսչության պահակակետը և ընդհուպ մոտենում Ասկերան ավանին: Նրանք անարգել առաջանում էին կարգուկանոնի մի խումբ «պահապանների»՝ միլիցիոներների ուղեկցությամբ[57]: Դեռևս փետրվարի 21-ի երեկոյան Աղդամում տեղի էր ունեցել կուսակցական ակտիվի նիստ, որին մասնակցել էր Ք.Բաղիրովը[58]: Հենց այդտեղ էլ կոչեր էին հնչել ներխուժել Լեռնային Ղարաբաղ ու ամեն ինչ հողին հավասարեցնել: Ասկերանի մատույցներում ավանի և մոտակա գյուղերի բնակիչները փակում են ջարդարարների ճանապարհը: Նրանց օգնում է այդտեղ գտնվող կայազորը: Փետրվարի 26-ի երեկոյան կենտրոնական լրատվամիջոցները հաղորդում են ԽՍՀՄ Գերագույն դատախազի տեղակալ Ա.Կատուսևի սադրիչ ելույթը: Նա հայտնում է, թե Ասկերանի մոտ տեղի ունեցած բախման ժամանակ սպանվել են երկու ադրբեջանցի՝ չնշելով, որ հայերից 25 հոգի ստացել էին ծանր մարմնական վնասվածքներ: Իրականում երկու ադրբեջանցիները սպանվել էին թուրք միլիցիոներների կրակոցներից[59]:

Կենտրոնական լրատվամիջոցները սադրանքներ էին տարածում, թե իբր Լեռնային Ղարաբաղում լարված վիճակ ստեղծողները մի խումբ «անջատողականներ» և «ծայրահեղականներ» են, որոնք անտեսում են ԽՄԿԿ Կենտկոմի փետրվարի 21-ի որոշումը և հրահրում ազգամիջյան ընդհարումներ, ինչը զոհերի և ավերածությունների պատճառ է դառնում: Այդ նույն օրը՝ փետրվարի 22-ին, ազերիները Ֆիզուլու և Ջեբրայիլի կողմից շրջափակել էին Հադրութի շրջանը, բացի այդ՝ ավազակային հարձակումներ էին գործել Մարտունի-Աղդամ, Մարտակերտ-Աղդամ ճանապարհներով երթևեկող հայ ուղևորների վրա: Ի պատասխան այդ ամենի՝ Ստեփանակերտի Լենինի անվան հրապարակում հավաքված տասնյակ հազարավոր ցուցարարներ որոշում են փետրվարի 22-ից մարզում հայտարարել համընդհանուր գործադուլ: Նույնիսկ առաջարկվում է պարապմունքները դադարեցնել ուսումնական հաստատություններում: Նախաձեռ-

[57] Դանիելյան Կ., *նշվ. աշխ., էջ 60:*
[58] **Бабанов И., Воеводский К.,** *նշվ. աշխ., էջ 6:*
[59] *«Եղիցի լույս», թ. 6, 2000:*

նող խմբի համար դժվար էր միանգամից կողմնորոշվել: Չէ՞ որ խորհրդային իրականության մեջ, մանավանդ Լեռնային Ղարաբաղի նման փոքր ազգային շրջանում, համընդհանուր գործադուլը բացառիկ երևույթ էր:

Լեռնային Ղարաբաղում Բ. Կևորկովի և ադրբեջանամետ մյուս պաշտոնյաների նկատմամբ օր օրի ավելի էին մեծանում համընդհանուր ատելությունն ու ընբոստությունը: Բ. Կևորկովը 18 տարի իշխում էր մարզում և անսքող կատարում Ադրբեջանի իշխանությունների պահանջները: Նրան մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնից ազատելը դարձել էր երկրամասի ողջ հասարակության պահանջը: Փետրվարի 23-ին տեղի ունեցած ԼՂԻՄ մարզկոմի պլենումը Բ.Կևորկովին պաշտոնազրկեց և մարզկոմի առաջին քարտուղար ընտրեց Հենրիխ Անդրեի Պողոսյանին: Պլենումի որոշման մասին, որին անհամբեր սպասում էին հրապարակում հավաքված ավելի քան 50 հազար արցախցիներ, միտինգավորներին հաղորդում է Ասկերանի կուսշրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանը, որն ընդունվում է բուռն ծափահարություններով: Այնուհետև ոգևորիչ ճառով հանդես են գալիս նախաձեռնող խմբի ղեկավար Արկադի Մանուչարովը և նոր ընտրված մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանը: Վերջինս բնակչությանը կոչ է անում դադարեցնել գործադուլը և վերսկսել աշխատանքը: Համանման կոչով բնակչությանը դիմում են նաև Պ.Դեմիչևն ու Գ.Ռազումովսկին: Սակայն ժողովուրդը հրաժարվում է դադարեցնել գործադուլը: Լենինի անվան հրապարակում տարածված այն լուրը, թե Հայաստանում ի պաշտպանություն արցախահայության ինքնորոշման իրավունքի՝ հայտարարվել է համընդհանուր գործադուլ, ոգևորում և նոր լիցք է հաղորդում արցախահայությանը:

Օր օրի ավելի էր շիկանում մթնոլորտը: Թուրք-ազերիները, դիմելով իրենց նախասիրած մեթոդին, փակում են Միրբաշիրի, Աղդամի, Աղջաբադիի, Ֆիզուլու, Ջեբրայիլի, Լաչինի, Քելբաջարի և Խանլարի կողմերից Արցախ բերող ճանապարհները: Արցախահայության ժողովրդական պայքարի ակտիվիստները, պլանով պայքարի հետագա վտանգավորությունը, սկսում են վերջ կուտակել և պահեստավորել: Ըստ Իգոր Մուրադյանի՝ 1988թ. փետրվարին Լեռնային Ղարաբաղում կար երկու տասնյակի հասնող ինքնաձիգ, մինչև 100 կարաբին ու «Մոսին» հրացան, մի զույգ ձեռքի գնդացիր և մոտ երեք տասնյակ ատրճանակ: Նա նաև վկայում է, որ արդեն 1988-ի սեպտեմբերին արցախահայերի

և հայաստանյան ինքնապաշտպանների ձեռքին կար մոտ հազար միավոր մարտական զենք[60]: Արցախյան հերոսամարտի կազմակերպիչներից Ռազմիկ Պետրոսյանը հետագայում գրել է. «Քիրս սարի ստորոտներին և Վերին Հոռաթաղում ստեղծել էինք պահեստներ, որտեղ զենք էինք կուտակել: Այս գործում մեծ աշխատանք տարավ Չանախչիի (Ավետարանաց) դպրոցի տնօրեն Իվան Աթայանը: Զենքի կուտակման, ջոկատների կազմավորման ու ղեկավարման գործում մեծ դեր էին խաղում Մարտակերտում՝ Վիգեն Շիրինյանը, Ասկերանում՝ Սլավիկ Միրզոյանը, Հադրութում՝ Վիգեն Գրիգորյանը, Մարտունիում՝ Վոլոդյա Խաչատրյանը..., Բերդաձորում՝ Առնո Մկրտչյանը, Հրաչիկ Պետրոսյանը...»[61]: Ստեփանակերտում այդ հարցերով զբաղվում էր Ռազմիկ Պետրոսյանը, Ռոլես Աղաջանյանը, Արթուր Ալեքսանյանը, Մուրադ Պետրոսյանը և ուրիշներ:

1988թ. փետրվարի 26-ին Մ.Գորբաչովն ընդունում է Զորի Բալայանին և Սիլվա Կապուտիկյանին: Զրույցից պարզվում է, որ Մ. Գորբաչովը քաջատեղյակ էր Ղարաբաղում և Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին: Հայ մտավորականության ներկայացուցիչները փորձում էին երկրի ղեկավարին բացատրել, որ արցախահայությունն, ավելի քան 60 տարի գտնվելով Ադրբեջանի տիրապետության տակ, փաստորեն արժանանում է Նախիջևանի հայության ճակատագրին: Մ.Գորբաչովը վստահեցնում է, որ առաջիկայում ԽՄԿԿ Կենտկոմի ազգային հարցին նվիրված պլենումը անպայման կանդրադառնա Ղարաբաղի հարցին: Նա նաև զգուշացնում է, թե պետք է մտածել Բաքվում ապրող ավելի քան 200 հազար հայերի մասին[62]: Մ. Գորբաչովն, առաջ տանելով իր աչքակապությունը, այդ նույն օրը՝ փետրվարի 26-ին, դիմում է հղում «Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին»: Նա նշում է, որ ինքնավար մարզը Ադրբեջանական ԽՍՀ-ից Հայկական ԽՍՀ-ի կազմի մեջ անցնելու հարցին հաղորդվել է այնպիսի սրություն և լարվածություն, որոնք հանգեցրել են անգամ օրենքի շրջանակներից դուրս եկող գործողությունների: Գլխավոր քարտուղարը կոչ էր անում «Ժողովուրդների իսկական եղբայրության և միասնության»: Նա, ընդունելով, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզում քիչ թերություններ

[60] *«Հայոց աշխարհ», 21.01.1998:*
[61] Պետրոսյան Ռ., *Արցախ. պատերազմ. զինադադար, էջ 72:*
[62] Ուլուբաբյան Բ., *Արցախյան գոյապայքարի տարեգրություն, էջ 72:*

ու դժվարություններ չեն կուտակվել, անհրաժեշտ էր համարում կենտրոնական ստեղծված իրավիճակի հաղթահարման, Ադրբեջանում ու Հայաստանում կուտակված տնտեսական, սոցիալական, էկոլոգիական և այլ պրոբլեմների լուծման վրա՝ «մեր ամբողջ երկրում իրականացվող վերակառուցման ու նորացման քաղաքականության ոգով»[63]:

Այդուհանդերձ, այդ դիմումն արցախահայության համար ոչ մի արժեք էլ չունեցավ: Համընդհանուր գործադուլը շարունակվում էր: Կենտրոնական և ադրբեջանական լրատվամիջոցները, խեղաթյուրելով ճշմարտությունը, կանգ չէին առնում ոչ մի գրպարտության առաջ և ամեն կերպ փորձում էին արատավորել հայ ժողովրդին, մանավանդ արցախահայությանը: Այդ առթիվ Արցախից Մոսկվա էին ուղարկվում հարյուրավոր բողոք-հեռագրեր: Շատերը, կարծելով, թե շրջափակման պատճառով իրենց նամակ-բողոքները տեղ չեն հասնում, միլիցիայի աշխատակիցների օգնությամբ Լաչինով գնում էին Գորիս կամ Կապան և այնտեղից ուղարկում իրենց հեռագրերը:

Այն ծանր ու դժվարին օրերին, երբ արցախցիները փորձում էին իրենց պայքարը շարունակել խաղաղ, քաղաքակիրթ ձևերով, Ադրբեջանում գերադասեցին դրան պատասխանել բիրտ ուժով և ահաբեկչությամբ: Դրա վառ օրինակը հանդիսացավ 1988թ. փետրվարի 27–29-ը Բաքվից 25 կմ հեռավորության վրա գտնվող Սումգայիթ քաղաքում ապրող 18 հազար հայերի նկատմամբ իրագործված եղեռնագործությունը: Սումգայիթը նախօրոք պլանավորված և հետևողականորեն իրագործված աննախադեպ վայրագություն էր: Սումգայիթը կազմակերպվել էր Ղարաբաղի հիմնախնդրի լուծումը վիժեցնելու նպատակով: Ադրբեջանի պարագլուխները պլանավորել էին հայերին հարվածել Սումգայիթում, որովհետև նրանք այնտեղ անպաշտպան էին: Հանրապետության այլ վայրերից Սումգայիթ ուղարկվեցին հարյուրավոր բրեական տարրեր և Հայաստանից եկած «փախստականներ»: Տեղական պաշտոնյաները նախօրոք կազմել էին հայերի ցուցակները, պարզել հասցեները և պլանավորել բոլորին ոչնչացնել:

Սումգայիթում հայերի ջարդերի կազմակերպիչը և ամենամեծ հանցագործը եղել է Ադրբեջանի իշխանությունը: Հետո նոր «սումգայիթներ» կազմակերպվեցին Կիրովաբադում, Մինգեչաու-

[63] *«Երեկոյան Երևան», 26.02.1988:*

ռում, Շուշիում, Աղդամում, Շամախում, Բաքվում, Ֆերգանայում, Նովի Ուզենում, Թբիլիսիում, Աբխազիայում, Մերձբալթիկայում և այլ տեղերում: Այդ ամենը կբացառվեր, եթե Մոսկվան Սումգայիթի սպանդին տար քաղաքական գնահատական և օրենքի խստությամբ պատժեր հանցագործներին: Սումգայիթյան ջարդերի հաջորդ օրը Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի պատասխանատու աշխատողներից մեկը հայտարարել է, թե արդեն ոչնչացվել են ջարդերի բոլոր վկայությունները: Հանցագործության հետքերը կորցնելուն մեծապես նպաստեցին միութենական լրատվությունն ու ԽՍՀՄ գլխավոր դատախազությունը: Հանցագործներին խարազանելու փոխարեն մոսկովյան լրագրողներ Օվչարենկոյի և Չերնենկոյի նմանները գերադասեցին խոսել «Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ իրադարձությունների մասին»՝ լրիվ ապատեղեկացնելով հասարակայնությանը[64]: ԽՍՀՄ դատախազությունը արել էր ամեն ինչ, որպեսզի թաքցվեն հանցագործության իրական չափերը, և կազմակերպիչները խուսափեն պատասխանատվությունից: Քրեական գործը մասնատեցին բազմաթիվ առանձնացված մասերի, ու դատաքննությունը տեղի ունեցավ 12 տարբեր դատարաններում և, ամենաանարդարը՝ սումգայիթյան այդ ահավոր հանցագործությունը չորակվեց որպես ցեղասպանություն[65]: Հենց այդ օրերին պրոֆեսոր Իոսիֆ Արաբյանը հիմնավորել է, որ Սումգայիթում հայության նկատմամբ Ադրբեջանի իշխանությունները «իրագործել են ցեղասպանություն, որը հանդիսացել է ոչ թե պատահականություն, այլ պետական քաղաքականություն և ադրբեջանական ղեկավարության հանցավոր գործողությունների հետևանք»[66]: Ակնհայտ է, որ Ադրբեջանի իշխանությունները, հայերի ցեղասպանությունը սկսելով Սումգայիթում, այն շարունակել են Շահումյանում և Արցախի այլ բնակավայրերում[67]: Իսկ Ադրբեջանում Զ.Բունիաթովը և ուրիշներ, փորձում էին հերքել «Սումգայիթը», դրանում մեղադրել հայերին կամ էլ մոռացության տալ այն[68]:

---

[64] *Сумгаит... Геноцид... Гласность?. Е. 1989, с. 30.*

[65] *Նույն տեղում:*

[66] **Арабян И. А.,** *Геноцид и его наказуемость. Ер., 1999, с. 44.*

[67] **Чобанян С. С.,** *Государственно-организованный терроризм. Ер., 1992, с. 5.*

[68] *Азербайджанской аргументация и ее опровержение. Ер. 1989. с. 21-26. Хроника НКАО. февраль 1988 – февраль 1990, Баку. 1990 և այլն:*

Անկասկած, Սումգայիթում հայերի նկատմամբ իրագործվել են վանդալիզմ և ամենադաժան բարբարոսություններ: 1988թ. գարնանը Հայկոմկուսի Կենտկոմում ստացված մի փաստաթղթում նշված է, որ Սումգայիթում սպանվել են ոչ թե 26 հայ, այլ ավելի քան 400, և խեղվել ու տուժվել են մոտ 1000 հոգի, որոնց շարքում՝ մեծ թվով կանայք, ծերունիներ և երեխաներ: Թաքցնելու համար դիակները տարվել են Բաքու, հանրապետության այլ քաղաքներ, իսկ շատերն էլ նետվել են ծովը[69]: Հայերը երեք օր թողնվել էին լրիվ անպաշտպան: Սումգայիթի մոտ տեղակայված խորհրդային բանակի ստորաբաժանումները ուշացան ճիշտ այնքան, որքան անհրաժեշտ էր հայերի նկատմամբ ծայր առած վանդալիզմն ավարտելու համար: Դեռևս Սումգայիթից առաջ՝ հունվարի կեսերին, Ադրբեջանի մամուլում տպագրված Զ.Բունիաթովի և ուրիշների հակահայ բազմաթիվ հոդվածներ և նամակներ ուղարկվել էին Հայաստանի իշխանություններին, որոնցում զգուշացվում էր, թե Ադրբեջանում «կկազմակերպվի 1915 թիվ»: Եվ, իրոք, Ադրբեջանը՝ այդ երկրորդ Թուրքիան, դարձավ խորհրդային ժամանակաշրջանի հայոց նոր գերեզմանոց[70]:

---

[69] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 87, գ. 18, թ. 10: Այդ օրերին ՏԱԱՍ-ը Սումգայիթի գործողությունները որակել է որպես «խուլիգանական» արարք, որի հետևանքով իբրև զոհվել է տարբեր ազգությունների 32 մարդ, տուժվել է 197 քաղաքացի, այդ թվում միլիցիայի մոտ 100 աշխատող, կատարվել է 12 բռնաբարություն, թալանվել է մոտ 100 բնակարան, վնասվել են կենցաղային 26 շինություն, ավելի քան 20 ավտոմեքենա: ՏԱԱՍ-ը նաև հաղորդել է, որ ձերբակալվել է 42 հոգի, որոնց մեջ կան քրեական հանցագործությունների համար նախկինում դատապարտվածներ: Տե՛ս* **Григорян Вл.,** *Армения – 1988 1989. Ер., 1999, с. 105-106.*

[70] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 87, գ. 18, թ. 10-12:*

3. ՇԱՐԺՄԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

1985թ. ապրիլին տեղի ունեցած ԽՄԿԿ Կենտկոմի պլենումն, ընդունելով հասարակության արմատական «վերակառուցման» կուրս, ըստ էության, արագացրեց խորհրդային կայսրապետության փլուզման գործընթացը: Հայաստանում Խորհրդային Միությանը հատուկ դժվարություններին ավելացան նաև Արցախի խնդիրը, Սպիտակի երկրաշարժի ծանր հետևանքները, հարյուր հազարավոր փախստականների առկայությունը, տնտեսական շրջափակումը և այլն: Հայաստանում կուսակցական-պետական և տնտեսական ղեկավար մարմինները շարունակում էին աշխատել հին ոճով, չէին ընդունում իրենց հասցեին արված քննադատությունը: Հանրապետությունում հատկապես ծանր վիճակ էր ստեղծվել բնապահպանության, բնակարանային շինարարության, առևտրի, կենցաղային, բժշկական սպասարկման, դատաիրավական և այլ բնագավառներում:

Ութսունական թվականների երկրորդ կեսին լուրջ խնդիր էր դարձել բնապահպանական հարցը: Վտանգավոր վիճակ էր ստեղծվել Երևանում, Աբովյանում, Ալավերդիում, Վանաձորում և այլ տեղեր: Դա էլ նպաստեց Հայաստանում բնապահպանությանը նպատակաուղղված ժողովրդական ելույթների ծավալմանը: Համբարձում Գալստյանը պատմում է, որ 1988-ի փետրվարի 18-ի երեկոյան Երևանի թատերական հրապարակում նշանակված էր հանրահավաք, որի կազմակերպիչները բնապահպանության ակտիվիստներն էին: Հիմնական նպատակը Աբովյանում կառուցվող լիգինի գործարանի շինարարության կասեցումն էր: «Սհագին ժողովուրդ էր հավաքվել, երևի մի քանի հազար,– շարունակում է Հ.Գալստյանը:– Սկզբում Թատերական հրապարակում էինք հավաքված, հետո ինչ-որ մեկի առաջարկով շարժվեցինք դեպի Բաղրամյան պողոտա ու... առաջին անգամ Կենտկոմի շենքի դիմաց փողոցն ու ամբողջ երթևեկությունը փակեցինք: Շատ սպասեցինք, ու միայն ժամը 20–21-ի արանքում հայտնվեցին սպասվելիք միտինգի հիմնական գործող անձինք՝ աբովյանցիները: Սակայն թափորով եկող երկու-երեք հարյուր մարդկանց ձեռքի տրանսպարանտներն ու լոզունգները, ինչպես նաև կոչերը, կարծես թե առանձնապես մեծ կապ չունեին

գոյապահպանման խնդիրների.... հետ. եկողները միայն բարձրաձայնում էին Ղարաբաղի մասին»[1]:

Երևանում համանման հավաքներ ու միջոցառումներ անց էին կացվում 1987 թվականի ամառվանից սկսած: Դրանք հիմնականում տեղի էին ունենում Թատերական հրապարակում, Մարտիրոս Սարյանի անվան այգում, ուսումնական հանրակացարաններում, արդյունաբերական ձեռնարկություններում, մշակույթի օջախներում և այլ տեղեր: Այդ հավաքներում ելույթներ էին ունենում Զորի Բալայանը, Սիլվա Կապուտիկյանը, Իգոր Մուրադյանը, Սոս Սարգսյանը, լրագրողներ, գիտնականներ, արտադրության ներկայացուցիչներ: Այդ ժամանակ չէր տարբերվում, թե հավաքներից որն էր նվիրված բնապահպանությանը, սոցիալական հարցերին կամ Արցախի հիմնախնդրին: Ելույթ ունեցողներն առանց կոնկրետ հարցեր նշելու շոշափում էին սոցիալ-տնտեսական, բնապահպանական, Արցախի հիմնախնդրի հետ առնչվող հարցեր: Ակնհայտ է, որ Շարժումն աստիճանաբար խորանում էր, հետզհետե դառնում ավելի համարձակ, իսկ առաջ քաշված ծրագրերը՝ որոշակի ու հստակ: Շարժման ակտիվիստները, լինելով ոչ հակախորհրդային և ոչ էլ «այլախոհներ», ստացել էին «ազնիվ ազգայնականներ» անունը[2]: Կան վկայություններ, որ Երևանում գործող այդ մանր կազմակերպությունները, որոնք հիմնականում զբաղվում էին քարոզչությամբ, հավաքագրում էին մարդկանց, անցկացնում գաղտնի ժողովներ, հայթայթում դրամական միջոցներ, ձեռք բերում գինամթերք:

---

[1] *«Առավոտ», 18.02.1998: ԽՍՀՄ պետանվտանգության նախկին աշխատողներ Վ. Լուցենկոն և Վ. Խմելևը, ռուսական "Общая газета" թերթում հանդես գալով Ղարաբաղյան հիմնահարցի արմատների հարցի շուրջը (այն արտատպվել է "Голос Армении" թերթի 2001թ. փետրվարի 8-ի համարում), խեղաթյուրել են ճշմարտությունը և փորձել ամեն ինչ շուռ տալ գլխիվայր: Նրանք խոսելով Հ. Գալստյանի նշած աբովյանցիների Երևան կատարած երթի մասին նշում են, թե իբր այն տեղի է ունեցել 1987թ. հոկտեմբերին և որի ժամանակ կոչեր են հնչել Ղարաբաղի համար: Դա ճիշտ չէ: Մինչև 1988 թ. փետրվարը տեղի ունեցած ցույցերում նման կոչեր չեն հնչել: Այդ պարոնները ղարաբաղյան շարժումը դիտում են որպես «Ստեփանակերտի ֆունկցիոներների կոռումպացված չինովնիկների գործ», իբրև որպեսզի նրանք «դառնան հարստությունների տեր և այն չկիսեն Բաքվի հետ»: Նրանք նաև հորինել են, թե իբր հայերը 1988-ի փետրվարյան օրերին Կապանից դուրս են քշել մեծ թվով ադրբեջանցիների, մինչդեռ ակնհայտ է, որ վերջիններս հեռացել էին իրենց կամքով:*

[2] *«Հայոց աշխարհ», 20.01.1998:*

Իգոր Մուրադյանը վկայում է, որ 1986թ. ամռանը կազմվել էր մեկ տարվա գործողությունների ծրագիր, որը նախատեսում էր Լեռնային Ղարաբաղում ստեղծել գաղտնի կազմակերպություն, իսկ Հայաստանում՝ «հումանիտար բնագավառների մասնագետներից կազմված համակիրների խմբեր, որոնք կկարողանային փորձագետների դեր կատարել, կազմել անհրաժեշտ փաստաթղթեր կառավարական ոլորտների և արտասահմանյան մամուլի համար», կազմակերպել Արցախի և հարակից հայկական շրջանների բնակչության գերակշիռ մասն ընդգրկող հանրաքվե, անցկացնել գյուղխորհուրդների, ավանային խորհուրդների և քաղխորհուրդների նիստեր ու քննության դնել Հայկական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի միավորման հարցը, Լեռնային Ղարաբաղից պատվիրակություններ ուղարկել ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ և ԽՄԿԿ Կենտկոմ, նախապատրաստվել հնարավոր առճակատման դեպքում դիմել ինքնապաշտպանության[3]:

1988թ. փետրվարի կեսերից Երևանում ամեն օր հանրաքվեներ էին տեղի ունենում: Փետրվարի 20-ին Թատերական հրապարակում հավաքված հազարավոր ցուցարարներ ընդունեցին «Ղարաբաղ. այսօր կամ երբեք» կարգախոսը: Փետրվարի 21-ին Իգոր Մուրադյանը ցուցարարներին հայտնեց ԼՂԻՄ մարզխորհրդի նստաշրջանի ընդունած որոշման մասին, իսկ այդ նույն երեկոյան ստացվեցին «Սովետական Ղարաբաղ» և «Սովետսկի Կարաբախ» թերթերի այդ օրվա համարները, որոնք ձեռքից ձեռք էին անցնում: Հանրահավաքի մասնակիցները կենտրոնական իշխանություններից պահանջում էին իրագործել արցախահայության արդարացի և սահմանադրական պահանջը:

Հաջորդ օրը՝ փետրվարի 22-ին, Թատերական հրապարակը մարդկանցով լեփ-լեցուն էր: Ծավալվող և համաժողովրդական բնույթ ընդունող Ղարաբաղյան Շարժումը ղեկավարելու, ընթացք տալու և կազմակերպված հունի մեջ դնելու համար անհրաժեշտ էր ստեղծել մի ղեկավար մարմին: Եվ ահա նույն գիշերը ձևավորվեց «Ղարաբաղի պաշտպանության կոմիտեն», որը կարճ անվանվեց «Ղարաբաղ» կոմիտե: Կոմիտեի առաջին կազմի մեջ մտան Իգոր Մուրադյանը (տնտեսագետ), Վաչե Սարուխանյանը (թատերական գործիչ), Գագիկ Սաֆարյանը (մանկավարժ), Մանվել Մարգսյանը (ծառայող), Սամսոն Ղազարյանը

[3] *Նույն տեղում, 21.01.1998:*

(մանկավարժ) և էլի մի քանի հոգի[4]: Միևնույն ժամանակ ստեղծվեց Ավագների խորհուրդ, որի մեջ մտնում էին շարժման ակտիվ մասնակից գրողներ, գիտնականներ, մշակութային և հասարակական-քաղաքական գործիչներ[5]: «Ղարաբաղ» կոմիտեի հիմնական խնդիրն էր արցախահայության պահանջին սատար կանգնելու համար ոտքի հանել նաև աշխարհասփյուռ հայությանը և խորհրդային Միության մյուս ժողովուրդներին: Ի պաշտպանություն արցախցիների պահանջի՝ փետրվարի 22-ին Հայաստանում հայտարարվեց համընդհանուր գործադուլ: Հաջորդ օրը թատերական հրապարակում հավաքված հարյուր հազարի հասնող մարդիկ պահանջում էին հրավիրել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան և քննարկել արցախցիների խնդրանքը: Այդ օրը հանրահավաքն ավարտվում է երթով դեպի Հայկոմկուսի Կենտկոմի շենք: Փետրվարի 24-ին կայացած հանրահավաքում առաջարկվում է հանրապետությունում անցկացնել Ղարաբաղյան հիմնահարցին նվիրված հանրաքվե: Իգոր Մուրադյանը հայտարարում է, թե կազմկոմիտեն իր վրա է վերցնում հանրապետությունում շարժման հետ առնչվող բոլոր գործողությունների ղեկավարման պատասխանատվությունը: Նաև հայտարարում է, թե կազմկոմիտեի մեջ են մտել Վիկտոր Համբարձումյանը, Վլադիմիր Բարխուդարյանը և Հովհաննես Չեքիջյանը: Հրապարակը թնդում է բուռն ծափահարություններից: Վազգեն Մանուկյանը հայտարարում է, որ պետք է արագացնել «Ղարաբաղ» կոմիտեի բջիջների ստեղծումը հիմնարկ-ձեռնարկություններում և շարունակել պահանջել հրավիրել Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան ու քննարկել Արցախի հիմնահարցը: Ալեքսան Հակոբյանը առաջարկում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի

[4] *1999թ. «Հայաստանի Հանրապետություն» թերթում տպագրված մի նյութում «Ղարաբաղ» կոմիտեի առաջին կազմում թվարկված է 11 հոգի՝ Վազգեն Մանուկյան, Լևոն Տեր-Պետրոսյան, Բաբկեն Արարքցյան, Վանո Սիրադեղյան, Ալեքսան Հակոբյան, Սամսոն Ղազարյան, Համբարձում Գալստյան, Դավիթ Վարդանյան, Մանվել Գևորգյան, Աշոտ Մանուչարյան և Ռաֆայել Ղազարյան: Սխալ է «Ղարաբաղ» կոմիտեի երկրորդ կազմը շփոթված է առաջինի հետ:*

[5] *Հրապարակված նյութերում թե՛ «Ղարաբաղ» կոմիտեի և թե՛ Ավագների խորհրդի կազմի մասին կան հակասական տվյալներ: Իգոր Մուրադյանը «Ղարաբաղ» կոմիտեի անդամների շարքում թվարկում է նաև Աշոտ Մանուչարյանի, Համբարձում Գալստյանի, Ալեքսան Հակոբյանի, Վազգեն Մանուկյանի և Լյուդվիգ Խաչատրյանի անունները:*

բոլոր պատգամավորներին և ԽՄԿԿ Կենտկոմի բոլոր անդամներին ուղարկել Ղարաբաղի մասին տեղեկանքներ, գրքույկներ և գրքեր[6]:

Փետրվարի 25–26-ին Երևանում ցուցարարների թիվը հասել էր աննախադեպ չափերի: Դա ԽՍՀՄ պատմության մեջ ամենախոշոր ցույցն էր: Երևանում տեղի ունեցած ցույցերը ուղղված չէին որևէ ժողովրդի, այդ թվում և ադրբեջանցիների դեմ: Հատուկ ընդգծվում էր, որ ադրբեջանական ժողովուրդը մեղավոր չէ ստալինյան ռեժիմի թույլ տված սխալների համար, որոնք ուղղված էին մի ամբողջ ժողովրդի դեմ: «Ղարաբաղ» կոմիտեն այն կարծիքին էր, որ երկրի ղեկավարությունը միայն հանգիստ պայմաններում կարող է որոշում ընդունել Ղարաբաղի հիմնահարցի վերաբերյալ: Իգոր Մուրադյանը, միտինգավորներին ներկայացնելով «Ղարաբաղ» կոմիտեի ծրագիրը, հանրապետության իշխանություններից պահանջում էր լրատվամիջոցներով լուսաբանել Լեռնային Ղարաբաղում տիրող վիճակը և կոմիտեականներին հնարավորություն տալ օգտվելու զանգվածային տեղեկատվության միջոցներից[7]:

Հայաստանում տեղի ունեցող հանրահավաքներն ու ցույցերը և դրանցում առաջ քաշված պահանջները անհանգստացրել էին հանրապետության ղեկավարությանը: Փետրվարի 21-ի երեկոյան հրավիրված Հայկոմկուսի Կենտկոմի բյուրոյի նիստը հավանություն է տալիս ԽՄԿԿ Կենտկոմի այդ նույն օրվա որոշմանը: Անկասկած, Հայաստանի իշխանությունները չէին ցանկանում հարաբերությունները բարդացնել վերադաս մարմինների հետ և կորցնել իրենց աթոռները: Այդ նույն նիստում քննարկելով «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» հարցը, ելույթ են ունենում 18 հոգի, որոնք միաբերան պաշտպանում են ԽՄԿԿ Կենտկոմի՝ «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» օրապակաս որոշումը և այն գնահատում որպես «գործողության ուղեցույց», իսկ «ստեղծված վիճակը» բնորոշում որպես «քաղաքական լուրջ իրադարձություն»: Բյուրոն գտնում էր, որ «գոյություն ունեցող ազգային տարածքային կառուցվածքի վերանայման նպատակին ուղղված գործողություններն ու պահանջները հակասում են Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Հայաստանի շահերին, վնաս հասցնում ազգամիջյան հարաբերություններին», հետևապես՝ «եթե... անհրաժեշտ միջոցառումներ չձեռնարկվեն, ապա այն կհասցնի անկանխատեսելի ու դժվարուղղելի հետևանքների»: ՀԿԿ ղեկավարության կարծիքով, այդ բոլորը հնարավոր էր դարձել «առանձին ծայրահեղական տրամադրություններով անձանց անպատասխանատու կոչերի և գործողությունների» հետևանքով: Բյուրոն անհրաժեշտ էր գտնում իրագործել ԽՄԿԿ Կենտկոմի որոշումը՝ ելնելով այն բանից, որ «ազգային հարցը պահանջում է սևեռուն և մշտական ուշադրություն»: Բյուրոն քաղկոմներին և շրջկոմներին հանձնարարում է լայն աշխատանք ծավալել և կոնկրետ միջոցառումներ ձեռնարկել «չեզոքացնելու Հայաստանի և Ադրբեջանի աշխատավորների շահերին դիպչող բոլոր գործողությունները»: Որոշվում է հրավիրել հանրապետական ակտիվի նիստ և քննության առնել Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված վիճակը: Հանրապետության նախարարների խորհրդին հանձնարարվում է Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ սոցիալ-տնտեսական բնույթի առաջարկություններ նախապատրաստել և անհրաժեշտության դեպքում ներկայացնել ԽՍՀՄ նախարարների խորհուրդ: Հաստատվում է ընդունված որոշման իրագործման միջոցառումների պլան[8]:

Հայկոմկուսի Կենտկոմի բյուրոյի հանձնարարությամբ՝ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը, փետրվարի 22-ին հանդես գալով հանրապետության հեռուստատեսությամբ, փորձում էր հանրապետության բնակչությանը հանգստացնել հայտնելով, որ Լեռնային Ղարաբաղում կիրագործվեն սոցիալ-տնտեսական բնույթի միջոցառումներ: Նա պնդում էր, որ «մեր անգնահատելի նվաճումը հանդիսացող ժողովուրդների բարեկամությունը հանդիսանում է հայ ժողովրդի հետագա բարգավաճման երաշխիք... և պետք է այն աչքի լույսի պես պահպանենք»[9]:

1988թ. փետրվարի 23-ին տեղի է ունենում Հայաստանի կուսակցական ակտիվի ժողով, որին մասնակցում էին Երևան ժամանած ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարներ Վ.Դոլգիխը, Ա.Լուկյանովը, ԽՍՀՄ ներքին գործերի նախարարի տեղակալ Վ.Տրուշինը: Վլադիմիր Գրիգորյանը վկայում է, որ այդ խորհրդակցության ժամանակ Կարեն Դեմիրճյանը հուսահատված ասել է. «Ես

[6] ՀԱԱ, ֆ. 4546, ց. 1, գ. 1, թ. 8-16:
[7] Նույն տեղում, թ. 18-19:

[8] Նույն տեղում, ֆ. 1, ց. 82, գ. 21, թ. 23:
[9] «Սովետական Հայաստան», 23.02.1988:

չգիտեմ ինչպես որոշել այս (այսինքն՝ Ղարաբաղի – Հ.Ա.) հարցը: Եթե դահլիճում որևէ մեկը գիտի, թող զբաղեցնի իմ տեղը»[10]: Մոսկվայից եկած էմիսարներն իրենց ելույթներում փորձում էին հայ ժողովրդին համոզել «հավատարիմ մնալ խորհրդային սկզբունքներին»: Ակտիվի նիստը որոշեց «վճռական միջոցառումներ ձեռնարկել ստեղծված վիճակը բարելավելու, մասսաների և աշխատանքային կոլեկտիվների շրջաններում բացատրական լայն աշխատանք ծավալելու» ուղղությամբ և խնդրել ԽՄԿԿ Կենտկոմին, ազգային հարցի վերաբերյալ պլենումի նախապատրաստման ժամանակ քննարկել նաև Լեռնային Ղարաբաղի հարցը[11]: Փետրվարի 24-ին Վ.Դոլգիխը, հանդես գալով Հայաստանի հեռուստատեսությամբ, նշում է, որ իրադարձությունների այսպիսի զարգացումը «պղտորում է հայ և ադրբեջանցի ժողովուրդների եղբայրական հարաբերությունները»: Նա նաև հայտնում է, թե իբր ԼՂԻՄ-ում «կոմունիստների և բնակչության գերակշիռ մեծամասնության դրսևորած զսպվածության ու քաղաքական պատասխանատվության շնորհիվ իրադրությունը կայունանում է», մինչդեռ «Երևանում... շարունակվում են բազմամարդ ցույցերը, որոնց մասնակցում են բնակչության տարբեր խավերի ներկայացուցիչներ, ինչը բարդացնում է քաղաքացիների կյանքը...»: Գովերգելով երկրում տեղի ունեցող վերակառուցման կուրսը և դեմոկրատական գործընթացը՝ Վ.Դոլգիխը կոչ էր անում հանրապետության բնակչությանը կատարել Հայաստանի կուսակցական ակտիվի փետրվարի 23-ին կայացած ժողովի պահանջները, «դրսևորել հասունություն, վերահաստատել Երևանի և հանրապետության կյանքի ու աշխատանքի կանոնավոր ռիթմը»[12]:

1988թ. փետրվարի 26-ին տեղի ունեցած Հայկոմկուսի Կենտկոմի պլենումում Կարեն Դեմիրճյանը, պաշտպանելով Մ.Գորբաչովի կոչը, հորդորեց կարգ հաստատել և իրագործել «Գորբաչովի առաջ քաշած պահանջները»[13]: Երիցս ճիշտ էր Սիլվա Կապուտիկյանը, երբ 1990թ. հունվարին Հայկոմկուսի Կենտկոմում հրավիրված խորհրդակցությունում շեշտեց, որ «հայ ժողովրդի սխալներից մեկն էլ այն է, որ հավատաց գորբաչովյան

[10] **Григорян В.**, *նշվ. աշխ., էջ 55:*
[11] *«Սովետական Հայաստան», 24.02.1988:*
[12] *Նույն տեղում, 25.02.1988:*
[13] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 82,գ. 21, թ. 4-5:*

վերակառուցմանը: Իսկ այդ կույր հիվանդությամբ ամենից առաջ տառապում էր հայ ժողովրդի ուղեցույց Հայկոմկուսը»[14]: Պլենումում ելույթ ունեցած 29 հոգուց քչերը քննադատական խոսք ասացին հայ ժողովրդին «ծայրահեղականներ» և «ազգայնամոլներ» անվանելու առթիվ, սակայն վերադաս մարմիններից պահանջեցին արդարացիորեն լուծել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը[15]: Պլենումը տեղական իշխանություններին հանձնարարում է «անհրաժեշտության դեպքում օգտագործել իրենց տրված լիազորությունները՝ խստագույնս ապահովելու օրինաչափությունը և հասարակական կարգը հանրապետության ամբողջ տարածքում»[16]:

Այդ նույն երեկոյան Վ.Դոլգիխը հայկական հեռուստատեսությամբ ընթերցեց Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդներին ուղղված Մ.Գորբաչովի դիմումը: Թե՛ Հայկոմկուսի Կենտկոմի պլենումի որոշումը, և՛ թե Մ.Գորբաչովի դիմումը Հայաստանում և ԼՂԻՄ-ում ընդունվեցին ոչ միանշանակ: Դա պատահական չէր, որովհետև հանրապետության բարձրագույն կուսակցական մարմնի իրար ետևից ընդունած այդ որոշումները և երկրի առաջին դեմքի կոչերը միայն նպատակ ունեին Հայաստանի և Արցախի հասարակայնությանը շեղել բուն խնդրից, քանի որ Խորհրդային Միությունում վերակառուցումն առնչվել էր զանգվածային ելույթների հետ, որոնք վտանգում էին գործող համակարգի գոյությանը: Ուստի օրինաչափ է, որ միութենական լրատվամիջոցները շարունակում էին միտումնավոր խեղաթյուրել Արցախում և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունները և պիտակավորել արցախյան շարժման մասնակիցներին: Այդ ամենին, անշուշտ, նպաստում էր Հայաստանի կուսակցական ղեկավարության ոչ ժողովրդամետ կեցվածքը: Օրինակ՝ Կարեն Դեմիրճյանը, ջերմորեն պաշտպանելով գորբաչովյան կոչերը, պահանջում էր «անել ամեն ինչ, որպեսզի հանրապետության ադրբեջանական բնակչությունը անհանգստանալու ոչ մի հիմք չունենա» և «աչքի լույսի պես պահել ու պահպանել, պրակտիկ գործով ամրապնդել» ժողովրդական բարեկամությունը[17]:

[14] *Նույն տեղում, ց. 82, գ. 1, թ. 80:*
[15] *Նույն տեղում, թ. 2-51:*
[16] *Նույն տեղում, թ. 52-54:*
[17] *«Սովետական Հայաստան», 01.03.1988:*

1988թ. մարտի 3-ին՝ ՀԿԿ Կենտկոմի բյուրոն, քննության առնելով «Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունների հետ կապված հանրապետությունում վիճակը կայունացնելու ուղղությամբ աշխատանքներն ուժեղացնելու» հարցը, ընդգծում է, որ ամենակարևորը հանրապետությունում աշխատանքային ռիթմի և հասարակական կյանքի կայունացումն է: Բյուրոն գտնում է, որ պետք է «թույլ չտալ կոլեկտիվներում ինչ-որ խմբերի ստեղծում՝ կապված ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին միավորման հետ» դա բացատրելով ԼՂԻՄ-ի շուրջ վիճակը բարելավելու գործում դրանց կործանարար լինելով[18]: Իսկ մարտի 7-ին տեղի ունեցած բյուրոյի նիստը, լսելով մի շարք ձեռնարկությունների տնօրենների հաղորդումները, արձանագրեց, որ հանրապետությունում ընդհանուր վիճակը կարգավորվել է և «Հայաստանի ու Ադրբեջանի աշխատողները գործում են Մ.Գորբաչովի դիմումի համաձայն»: Բյուրոն տնօրեններին և կուսկազմակերպությունների քարտուղարներին հանձնարարեց աշխատավորներին բացատրել Մ.Գորբաչովի դիմումի էությունը, ապահովել կոլեկտիվների նորմալ կյանքն ու աշխատանքը, պատվախնդրորեն կատարել իրենց վրա դրված պարտականությունները, ամեն կերպ կանխել ազգամիջյան ընդհարումները և անվստահության սերմանումը, թույլ չտալ ինտերնացիոնալ համախմբվածության խախտման որևէ նշույլ[19]: Այդուհանդերձ, 1988թ. մարտի 9-ին ԽՄԿԿ Կենտկոմում տեղի ունեցած խորհրդակցությունը ստիպված էր ընդունել «մի քանի խնդիրների առկայությունը» Արցախի տնտեսական և մշակութային կյանքում: Լսելով Ադրբեջանի և Հայաստանի կոմկուսների կենտկոմների առաջին քարտուղարներ Ա.Բաղիրովի և Կ.Դեմիրճյանի հաղորդումներն այդ հանրապետություններում ստեղծված քաղաքական վիճակի մասին, խորհրդակցությունը առաջարկեց այն կարգավորելու համար «որոշումներ մշակել», բայց միայն Լեռնային Ղարաբաղի մարզի շրջանակներում: Խորհրդակցությունում նույնիսկ կարծիք հայտնվեց հանրաքվեի միջոցով Լեռնային Ղարաբաղը ժամանակավորապես թողնել Կենտրոնի ենթակայության տակ: Այդ գաղափարի կողմնակիցներ գտնվեցին նաև Ղարաբաղում: Հայկոմկուսի Կենտկոմի բյուրոն, մարտի 10-ին քննարկելով վերոհիշյալ խորհրդակցության որոշումներից բխած

[18] ՀԱԱ, ֆ. 1, g. 82, գ. 21, թ. 25:
[19] Նույն տեղում, թ. 20-21:

հանրապետության կուսակցական կազմակերպությունների խնդիրները, վճռեց «լրիվ և ամբողջովին պաշտպանել խորհրդակցության գնահատականներն ու եզրակացությունները», իրագործել նրանում Մ.Գորբաչովի առաջարկությունները, աշխատանքների հիմքում դնել ժողովուրդների լենինյան բարեկամությունը, «չդիպչել և վնաս չհասցնել ինտերնացիոնալիզմին և միասնությանը»: Ի գիտություն ընդունվեց քաղբյուրոյի առաջարկությունը Կենտկոմի քարտուղարությանը՝ խոր ու բազմակողմանիորեն ուսումնասիրելու ԼՂԻՄ-ում կուտակված պրոբլեմներն ու ազգամիջյան հակասությունների սրման պատճառները, համապատասխան առաջարկություններ պատրաստել և պատրաստ լինելու դեպքում դրանք քննարկել ԽՄԿԿ Կենտկոմում ու ԽՍՀՄ կառավարությունում: Բյուրոն որոշեց մարտի 11-ին հրավիրել հանրապետության կուսակցական ակտիվի խորհրդակցություն և լայնորեն քննարկել վերոնշյալ խորհրդակցությունում առաջ քաշված խնդիրները[20]:

1988թ. մարտի 20-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն, կրկին անդրադառնալով «Հանրապետությունում իրավիճակը նորմալացնելու անհետաձգելի միջոցառումների մասին» հարցին, նշեց, որ հանրապետությունում վիճակը մնում է լարված ու պայթյունավտանգ, և որ «Ղարաբաղ» կոմիտեն, ընդլայնելով իր գործունեությունը, կուսակցական և պետական մարմինների նկատմամբ դիմում է սպառնալիքի ու շանտաժի, անցնում օրինականության սահմանները: Շեշտվեց, որ «Ղարաբաղ» կոմիտեի գաղափարական չեզոքացման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը անհրաժեշտ արդյունքներ չեն տալիս, և որ վիճակն ավելի է սրվել Սումգայիթում իրագործված ոճրագործությունների հետևանքով: Բյուրոն որոշեց թույլ չտալ մարտի 26-ին հայտարարված համընդհանուր հանրահավաքը և սկզբնական կուսակցական կազմակերպությունների միջոցով չեզոքացնել տեղական «կոմիտեների» գործունեությունը, քանի որ այն «քաղաքական վտանգավոր բնույթ» ունի և իբր «հակասում է ժողովուրդների շահերին»[21]:

Հայաստանում ղարաբաղյան շարժումը օր օրի իր մեջ ներառում էր ժողովրդական ավելի մեծ զանգվածներ: Այդ մասին հայտարարվեց փետրվարի 28-ին գրողների տանը տեղի ունեցած «Ղարաբաղ» կոմիտեի ընդլայնված նիստում, որին մասնակ-

[20] "Правда", 10.03.1988.
[21] ՀԱԱ, ֆ.1, g. 82, գ. 21, թ. 36:

ցեցին ավելի քան 300 հոգի: Իգոր Մուրադյանը ի լուր ամենքի հայտարարեց, որ վերանայվել է «Ղարաբաղ» կոմիտեի կազմը, և նրանում ընդգրկվել են Լեռնային Ղարաբաղից վեց հոգի: Հաղորդվեց նաև, որ կոմիտեն որոշել է հանրապետության բոլոր ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում և ուսումնական հաստատություններում շաբաթ օրերին ժամը 18[00]-ից անցկացնել ժողովներ և քննարկել Լեռնային Ղարաբաղի հետ կապված հարցեր: Քանի որ նախօրոք որոշվել էր մարտի 23-ին անցկացնել Լեռնային Ղարաբաղի հետ համերաշխության միջոցառումներ, առաջարկվեց այդ օրը տեղափոխել մարտի 26-ը՝ շաբաթ օրը, որպեսզի վնաս չհասցվի արտադրությանը: Նիստի մասնակիցներին տեղյակ պահվեց, որ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ միավորելու օգտին միտինգներ ու հանրահավաքներ են տեղի ունենում նաև Խորհրդային Միության այլ քաղաքներում[22]:

1988թ. փետրվարի վերջին և մարտի սկզբներին, մանավանդ սումգայիթյան բարբարոսությունից հետո, ոտքի էր կանգնել ամբողջ հայ ժողովուրդը, որի արդար պայքարին իրենց համերաշխությունն էին հայտնում հանրապետության ազգային փոքրամասնությունները: Նրանք՝ հայ, ռուս, եզդի, քուրդ, հույն և այլ ազգերի ներկայացուցիչները, դատապարտում էին սումգայիթյան եղեռնագործությունը, վճռականորեն պահանջում Սումգայիթում տեղի ունեցածին տալ քաղաքական գնահատական և խստագույնս պատժել այդ ողբերգության կազմակերպիչներին: Հանրահավաքներից մեկում քրդերի ներկայացուցիչը իր ազգակիցներին կոչ արեց համընդհանուր պայքար սկսել Ադրբեջանում քրդերի իրավունքները վերականգնելու համար և պաշտպանել ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու համաժողովրդական շարժումը[23]: Խորհրդային Հայաստանի աշխատավորները հանրապետության իշխանություններից համառորեն պահանջում էին կանգնել հայ ժողովրդի ազգային շահերի պաշտպանության դիրքերում և ստրկամտորեն չծառայել Կրեմլին: Նրանք բազմաթիվ նամակներ և հեռագրեր էին ուղարկում հանրապետության բարձրագույն իշխանություններին, որոնցում պահանջում էին «անմիջապես դադարեցնել «Ղարաբաղ» կոմի-

[22] *Նույն տեղում, թ. 43: Տես նաև Սովետական Հայաստան», 23.03.1988:*

[23] *Նույն տեղում, գ. 87, գ. 11, թ. 135-136:*

տեի ենթախմբերի և ակտիվիստների նկատմամբ սպառնալիքներն ու ճնշման փորձերը»[24]:

1988թ. մարտի 19-ին Կինոյի տանը տեղի ունեցավ «Ղարաբաղ» կոմիտեի ընդլայնված նոր նիստ: Ելույթ ունեցողները՝ Իգոր Մուրադյանը, Արմեն Հովհաննիսյանը, Սոս Սարգսյանը, Հենրիխ Իգիթյանը, Գրիգոր Ավագյանը, Ռաֆայել Ղազարյանը, Վլադիմիր Բարխուդարյանը, Մանվել Սարգսյանը, Լենսեր Աղալովյանը, Սիլվա Կապուտիկյանը, Զորի Բալայանը, Վաչե Սարուխանյանը, Ալեքսան Հակոբյանը, Ղարաբաղի ներկայացուցիչը[25] և ուրիշներ, խստագույնս դատապարտեցին «սումգայիթ» կազմակերպողներին և Հայաստանի իշխանություններից պահանջեցին մարտի 25-ին հրավիրել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջան ու քննարկել Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Նրանք նաև կոչ արեցին անհրաժեշտության դեպքում դիմել համընդհանուր գործադուլի, ստեղծել համահայկական ճակատ և պայքարել մինչև վերջ, կանխել բոլոր տեսակի ահաբեկչությունները: Ադրբեջանում հայերի նկատմամբ իրագործվող բռնարարքները կանխելու համար դիմել միջազգային դատարան, Մոսկվայից պահանջել հատուկ հանձնաժողով ուղարկել Հայաստան և միասին վճռել Արցախի հարցը: «Ղարաբաղ» կոմիտեն ներկայացրեց մոտակա օրերի գործողությունների ծրագիրը: Այն խնդիր էր դնում ԽՄԿԿ Կենտկոմից պահանջել դադարեցնել զրպարտությունները հայ ժողովրդի և Ղարաբաղյան շարժման հասցեին, ընդունել, որ արցախահայության պահանջը ծայրահեղականների և ազգայնականների պայքար չէ, այլ օրինական է, սումգայիթյան իրադարձությունները լրիվ բացահայտելու համար ստեղծել կառավարական հանձնաժողով, կենտրոնական թերթերում տպագրել ԼՂԻՄ մարզկոմի մարտի 17-ի պլենումի որոշումը: ՀԽՍՀ կառավարությունից պահանջվում էր իր պաշտոնական վերաբերմունքն արտահայտել ԼՂԻՄ-ի և Հայաստանի վերամիավորման հարցի վերաբերյալ, ընդունել ԼՂԻՄ-ը վերաբնակեցնելու պետական ծրագիր, Արցախի հարցով դիմել աշխարհի երկրների կառավարություններին, խորհրդարաններին, հասարակական

[24] *Նույն տեղում, գ. 12, թ. 76-77:*

[25] *Անվտանգության նպատակով փաստաթղթերում չեն նշվել ոչ «Ղարաբաղ» կոմիտեի արցախցի անդամների անունները և ոչ էլ ելույթ ունեցողի անունը:*

կազմակերպություններին և այլ ատյանների: Որպեսզի մարտի 26-ին նշանակված համընդհանուր հանրահավաքը անցներ կազմակերպված, որոշվեց բուհերի բարձր կուրսերի ուսանողներից և երիտասարդ բանվորներից ստեղծել ջոկատներ, որոնք պետք է համագործակցեին ՆԳ նախարարության աշխատակիցների հետ: Խորհրդակցության վերջում «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ ընտրվեցին Վազգեն Մանուկյանը և Համբարձում Գալստյանը[26]:

Արցախյան շարժումը գնալով ընդունում էր համընդհանուր բնույթ: Դա անընդունելի էր հանրապետության բարձրագույն իշխանությունների համար: ՀԿԿ Կենտկոմը կուսակցական կազմակերպություններից պահանջում էր քննարկել և դատապարտել ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումը՝ այն գնահատելով որպես հակախորհրդային, հակաժողովրդական և ազգայնամոլ որոշում: Եվ երբ Մոսկվայի պահանջով ՀԿԿ բյուրոն 1988թ. մարտի 23-ին քննարկեց «Ղարաբաղ» կոմիտեն անօրեն ճանաչելու մասին հարցը, ելույթ ունեցողներից և ոչ մեկը չփորձեց պաշտպանել «Ղարաբաղ» կոմիտեին: Բյուրոյի ընդունած որոշման մեջ նշված է, որ «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությունը իբր չի համապատասխանում Հայկական ԽՍՀ Սահմանադրությանը և գործող օրենսդրությանը, և որ այն «ձեռք է բերել քաղաքական վտանգավոր բնույթ ու հակասում է ժողովրդի շահերին»: Ելնելով դրանից՝ Հայկոմկուսի Կենտկոմի բյուրոն որոշեց «Ղարաբաղ» կոմիտեն ճանաչել անօրեն և դադարեցնել նրա գործունեությունը: Բյուրոն հավանություն տվեց այդ հարցի վերաբերյալ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրի նախագծին[27]: Հաջորդ օրն ընդունվեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը՝ «Ղարաբաղ» կոմիտեն օրենքից դուրս հայտարարելու մասին և արգելվեց մարտի 26-ի հանրահավաքը[28]: Մարտի 25-ին քրեական գործ հարուցվեց Պարույր Հայրիկյանի դեմ, իսկ 28-ին նրան ձերբակալեցին՝ մեղադրանք ներկայացնելով ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածով, հետո էլ արտաքսեցին հայրենիքից:

---

[26] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 87, գ. 12, թ. 156-160:*
[27] *Նույն տեղում, գ. 82, գ. 21, թ. 47:*
[28] *«Սովետական Հայաստան», 25.03.1988:*

1988թ. մարտի 24-ին տեղի ունեցավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստ, որտեղ Մ.Գորբաչովը դեմ արտահայտվեց ԼՂԻՄ պատկանելությունը փոխելուն: Այդտեղ որոշվեց «անթույլատրելի համարել... ազգային-պետական և ազգային-վարչական սահմանների փոփոխությունը»[29]: Մինչ այդ որոշման ընդունումը, վերակառուցման գլխավոր գաղափարախոսներից Ա. Յակովլևը մարտի 21-ին հանդիպելով Անդրեյ Սախարովի հետ, ասել էր, թե «ոչինչ չի կարելի փոխել վարչա-ազգային կառուցվածքում, որովհետև դա, ընդհանրապես, անսովոր և վտանգավոր նախադեպ է»: Նա նաև նշել է, որ ԽՍՀՄ-ում շատ «տաք կետեր» կան, որտեղ ցանկացած պահի կարող են բորբոքվել ազգային կրքեր[30]:

* * *

1988թ. փետրվարյան իրադարձություններից և սումգայիթյան ողբերգությունից հետո Լեռնային Ղարաբաղում վիճակը խիստ լարված էր: Փետրվարի 22-ից մարզում սկսվել էր համընդհանուր գործադուլ: Փետրվարի 27-ին կենտրոնական իշխանությունների մի խումբ պատասխանատու աշխատողների հետ Լեռնային Ղարաբաղ ժամանեց ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ Կ. Բրուտենցը: Նրանք պետք է մոտիկից ծանոթանային մարզի տնտեսական վիճակին և Կենտկոմ ներկայացնեին համապատասխան զեկուցագիր: Ստեփանակերտում հանդիպեցին Ղարաբաղյան շարժման արցախցի ղեկավարների և ակտիվիստների հետ, այցելեցին արդյունաբերական ձեռնարկություններ, ուսումնական հաստատություններ և պատրաստեցին հիմնավորված զեկուցագիր: Արցախցիները Կ. Բրուտենցի միջոցով մի շարք փաստաթղթեր և նամակ-բողոքներ ուղարկեցին միութենական ամենավերին իշխանություններին: Փետրվարի 29-ին կրկին Ստեփանակերտ ժամանեց ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Պ.Դեմիչևը և, ելույթ ունենալով Լենինի անվան հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում, հայտարարեց, թե ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն կրկին անդրադարձել է Ղարաբաղի խնդրին և հանձնարարել ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարությանը հանգամանորեն ուսումնասիրել Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակը:

---

[29] *"Правда", 25.03.1988.*
[30] **Сахаров А.**, *Горький, Москва, далее везде..., с. 88.*

Դեռևս փետրվարյան օրերին անհրաժեշտություն զգացվեց ունենալ մի քաղաքական կազմակերպություն, որը կկարողանար իր ետևից տանել ժողովրդին, և ցույցերին ու հանրահավաքներին տալ կազմակերպված բնույթ, այսինքն՝ լուծեր շարժման մարտական և ռազմավարական խնդիրները: Սերգեյ Խաչատրյանը պատմում է, որ նման քաղաքական կազմակերպություն ստեղծելու գաղափարը փետրվարի 24-ին արտահայտել է Արկադի Մանուչարովը: Այդ օրերին նա արդեն կազմել էր նման կազմակերպություն ստեղծելու պլան և ծրագիր ու այդ մասին նույնիսկ խոսել կուսմարզկոմի, մարզխորհրդի, Ստեփանակերտի քաղկոմի և քաղխորհրդի ղեկավարների հետ: Հետո հավաքվելով քաղկոմի քարտուղար Հասմիկ Միքայելյանի աշխատասենյակում՝ հանգամանորեն քննարկել են հարցը և որոշել քաղաքի յուրաքանչյուր ձեռնարկությունից, հիմնարկությունից, ուսումնական հաստատությունից երկուական հոգի առաջադրել կազմակերպությունը ստեղծելու համար[31]:

Հանրահավաքներն ու ցույցերը կարգավորելու նպատակով, Ստեփանակերտի քաղխորհուրդը մարտի 1-ին ընդունեց «Ստեփանակերտի փողոցներում, հրապարակներում և պուրակներում ժողովներ, միտինգներ, փողոցային շքերթներ, ցույցեր և այլ միջոցառումներ անցկացնելու ժամանակավոր կանոնների ու կարգի մասին» որոշումը[32]: Այդ նույն օրը նախաձեռնող խումբը որոշում է մարտի 2-ից, Մ.Գորբաչովի ծննդյան առթիվ, դադարեցնել գործադուլը: Արցախցիներն այդ մասին հեռագիր են ուղարկում Մ.Գորբաչովին, շնորհավորում ծննդյան օրը և հույս հայտնում, որ նա արդարացի կերպով կլուծի իրենց պահանջը: Մարտի 1-ի լույս 2-ի գիշերը Ստեփանակերտի Լենինի անվան հրապարակում հավաքված տասնյակ հազարավոր արցախցիներ ընտրում են 66 հոգու, որոնք, հավաքվելով «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրության դահլիճում, ընտրում են 13 հոգուց բաղկացած խորհուրդ, որին կոչում են «Կռունկ»: Որոշ աղբյուրներում այն անվանվում է նաև կոմիտե: Խորհրդի նախագահ է ընտրվում Արկադի Մանուչարովը, տեղակալ՝ Վարդան Հակոբյանը, քարտուղարներ՝ Սերգեյ Խաչատրյանը, Կարեն Օհանջանյանը և Կարեն Անդրյանը: Առաջին նիստում ստեղծվում են 10 հանձնաժողովներ, որոնցում ընդգրկվել էին մոտ 50 հոգի:

[31] Խաչատրյան Ս., *նշվ. գիրքը, էջ 243–245:*
[32] *«Սովետական Ղարաբաղ», 02.03.1988:*

Խորհրդի մարտի 3-ի ընդլայնված նիստում քննարկվում է «Կռունկի» կանոնադրության նախագիծը և միաձայն ընդունվում: Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմը մարտի 5-ին գրանցում է «Կռունկ» հասարակական կազմակերպությունը և հաստատում նրա կանոնադրությունը[33]:

«Կռունկը», ըստ էության, «Ղարաբաղ» կոմիտեի բաժանմունքն էր Արցախում: Այն գործում էր ԽՍՀՄ սահմանադրության 51-րդ հոդվածին համապատասխան և կանգնած էր արցախահայության ազատագրական պայքարի գլուխ՝ համագործակցելով մյուս հասարակական կազմակերպությունների հետ: «Կռունկի» կանոնադրության մեջ չնայած քաղաքական նպատակներ չէին առաջադրվել, սակայն նախատեսվել էր մշակել միության ծրագիրը, որտեղ պետք է տեղ գտնեին քաղաքական հարցեր:

Իր ձևավորման սկզբից «Կռունկը» լայն աշխատանք էր տանում բնակչության շրջանում: Այն, ի հիշատակ Սումգայիթի

[33] *Արձանագրություն թ. 6, որոշում՝ 3/65: Պատճեն՝ հեղինակի անձնական արխիվ: «Կռունկ» կոմիտեի քարտուղար Սերգեյ Խաչատրյանը անդամների թիվը ցույց է տվել 50-60 հոգի, իսկ նախագահության կազմը՝ 13՝ Արկադի Մանուչարով, Վարդան Հակոբյան, Գուրգեն Գաբրիելյան, Հրաչիկ Բեգլարյան, Վալերի Սարության, Սաքսիմ Միրզոյան, Ժաննա Գալստյան, Ռոբերտ Քոչարյան, Համլետ Գրիգորյան, Համլետ Սովսիսյան, Բենիկ Օվչյան, Արկադի Կարապետյան, Յուրի Ներսիսյան: Վերջին երկուսը հրաժարվել են կոմիտեի անդամ լինելուց, չնայած շարունակել են ակտիվորեն մասնակցել նրա աշխատանքներին (Խաչատրյան Սերգեյ, նշ. գիրքը, էջ 245): Շարժման ակտիվիստներից Բորիս Առուշանյանը, առարկելով Սերգեյ Խաչատրյանին, նշում է, որ «Կռունկի» անդամների թիվը հասնում էր 150-ի, իսկ կոմիտեի անդամների թիվը՝ 11-ի («Ազատ Արցախ», 18.03.2002): Սերգեյ Խաչատրյանը գրում է, որ քաղաքի N 1 դպրոցի ռազմագիտության դասատու Արսեն Լաչինյանի առաջարկությամբ ստեղծված 10 հանձնաժողովներն էին՝ միտինգների (ցույցերի) կազմակերպման գծով՝ 5 հոգի, լոզունգների պատրաստման գծով՝ 3 հոգի, ֆինանսների գծով՝ 4 հոգի, միգրացիայի և էմիգրացիայի գծով՝ 3 հոգի, քաղաքական հարցերի գծով՝ 6 հոգի, լրատվության բաժնի գծով՝ 3 հոգի, հասարակական կարգի պահպանման գծով՝ 12 հոգի, անվտանգության հարցերի գծով՝ 7 հոգի, քարտուղարություն՝ 3 հոգի (Խաչատրյան Ս., նշվ. աշխ., էջ 223–224):*

1992թ. մայիսի 8-ին Շուշիի ազատագրման առաջին օրը բանտում հայտնաբերվեց լուսանկարների մի ալբոմ, որտեղ զետեղված էին «Կռունկի» անդամների լուսանկարները՝ նրանց անձնական գործերի համարներով («ԼՂ Հանրապետություն», 09.07.1996):

«Կռունկի» ստեղծմանը հետագայում անդրադարձել են Ռազմիկ Պետրոսյանը, Էռնեստ Հայրապետյանը, Համլետ Գրիգորյանը և ուրիշներ (նույն տեղում, 13.07.1996):

/տների, մարտի 6-ին կազմակերպեց սգո հանրահավաք, որտեղ հնչեցին ցասումնալից ելույթներ, ու ծաղկեպսակներ դրվեցին Սումգայիթում զոհվածների հուշարձանին: Հաջորդ հանրահավաքը տեղի ունեցավ մարտի 8-ին: Քանի որ մարզային համալիրը շրջապատված էր զինվորներով, ուստի հանրահավաքը տեղի ունեցավ մեծ Հայրենականի թանգարանի դիմաց: Ելույթ ունեցան Սվետլանա Պետրոսյանը (Ղարմետաքսկոմբինատից), Գուրգեն Գաբրիելյանը (բանաստեղծ), Նադյա Բաղդասարյանը (քաղաքի բնակչուհի), Արզիկ Մխիթարյանը (դասախոս), Ռիմա Քոչարյանը (ջուլհակուհի), սումգայիթցի մի փախստական կին և ուրիշներ, որոնք անարգանքի սյունին գամեցին «սումգայիթ» կազմակերպողներին:

«Կռունկը» մշտական կապի մեջ էր կուսակցության ԼՂԻՄ մարզկոմի ու մարզխորհրդի հետ ու ջանում էին համատեղ ուժերով մարզում վերականգնել աշխատանքային ռիթմը և ապահովել բնակչության անվտանգությունը: Այդուհանդերձ, մարզի ղեկավարությունը դեռևս կուրորեն հավատում էր, որ ԽՄԿԿ Կենտկոմը իբր «խորն ըմբռնումով է վերաբերվում ինքնավար մարզում կատարված ոչ քիչ թերություններին ու դժվարություններին», և որ այն ԼՂԻՄ-ի հիմնախնդրի վերաբերյալ «հատուկ հանձնարարություններ է տվել և անմիջականորեն կհետևի դրանց իրականացմանը»: Մարզի ղեկավարությունը բնակչությանը կոչ էր անում «պահպանել հանգստություն, դրսևորել ողջամտություն, քաղաքական հասունություն և զսպվածություն, սթափ գնահատել ստեղծված իրավիճակը, որը կարող է հասցնել լուրջ բարդությունների, անկանխատեսելի հետևանքների»[34]:

Ժողովրդական պայքարից կտրված էին մնում նաև մարզի լրատվամիջոցները: «Կռունկի» խորհրդի անդամ Համլետ Գրիգորյանը և Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի դասախոսներ Արզիկ Մխիթարյանն ու Լենա Գրիգորյանը, «Սովետական Ղարաբաղ» թերթի մարտի 15-ի համարում հանդես գալով «Ողջախոհության ձայնին ունկնդիր» վերտառությամբ բաց նամակով, խիստ անհանգստություն էին հայտնում, որ ինչ-ինչ պատճառներով Լեռնային Ղարաբաղում ստեղծված վիճակը «հստակորեն ու ամբողջությամբ» չի արտացոլվում մարզային թերթում, և որ լրատվամիջոցներում «մարզում տեղի ունեցող զանգվածային շարժումն արժանի գնահատական չի ստացել»:

[34] *«Սովետական Ղարաբաղ», 02.03.1988:*

Նամակի հեղինակները մարզային լրատվամիջոցներից պահանջում էին «ժամանակին արձագանքել իրադարձություններին և միայն ճշմարտությունը տպագրել թերթի էջերում»: Այդ նամակը կարևոր դեր խաղաց մարզային լրատվամիջոցները ժողովրդական պայքարին ծառայեցնելու գործում:

«Կռունկի» խորհուրդը մարզային իշխանություններից պահանջում էր աներկբա կանգնել ժողովրդական պայքարի գլուխ և ջանքեր գործադրել մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումն իրագործելու համար: «Կռունկը» մարզային իշխանություններից նաև պահանջում էր չենթարկվել Ադրբեջանի իշխանություններին և չկատարել նրանց պահանջները: «Կռունկի» խորհուրդը հրապարակում է «Ղարաբաղի հերոսական ժողովուրդը» կոչը, որում ասված է, որ Հայաստանի հետ վերամիավորվելու համար արցախահայության պայքարը հասել է վճռական պահի, և որ կենտրոնական իշխանությունները փորձում են երկրամասի բնակչության աչքերը փակել մարզի տնտեսական զարգացման ինչ-որ պլանով: Խորհուրդը կոչ էր անում պայքարում ցուցաբերել «համբերություն, խելամտություն և յուրաքանչյուր քայլի, յուրաքանչյուր բառի հավասարակշռություն, հոգեպես չընկճվել, մինչև վերջ կանգնել», քանի որ միայն «ժողովրդի միասնությունն ու համախմբվածությունը մեզ կհասցնի հաղթանակի: Դեմոկրատիան, վերակառուցումը և հրապարակայնությունը քննություն են հանձնում Ղարաբաղում: Մեր գործն արդար է, մենք կհաղթենք»[35]:

ԽՄԿԿ Կենտկոմի հանձնարարությամբ 1988թ. մարտի 2-ին Մոսկվայից Արցախ ժամանեց գիտնականների մի խումբ, որի կազմում էին ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Տ.Խաչատուրովը, Ն.Ենիկոլոպյանը, թղթակից անդամներ Ի. Աթաբեկովը, Ա.Սարգսյանը, պրոֆեսորներ Մ.Սարգիսովը և Ռ. Սրապենյանցը: Նրանք, մի շաբաթ մնալով Լեռնային Ղարաբաղում, կազմեցին մարզի սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ հարցերի վերաբերյալ հիմնավորված զեկուցում ու ներկայացրին ԽՄԿԿ Կենտկոմ, ինչպես նաև Հայաստանի և Ադրբեջանի իշխանություններին: Նրանք եզրակացրին, որ ստեղծված վիճակից դուրս գալու միակ և ճիշտ ելքը ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին միավորելն է[36]:

[35] *Կոչի պատճեն՝ հեղինակի անձնական արխիվ:*
[36] **Арутюнян В. Б.**, *նշվ. աշխ., էջ 48-49.*

Իսկ թե այդ օրերին Մոսկվայում ինչպես էին հասկանում ու գնահատում արցախյան շարժումը, բերենք հետևյալ օրինակը. ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտում անց է կացվել բանավեճ՝ նվիրված Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորվելու դեպքում ստեղծված իրավիճակի վերլուծությանը: Եզրակացությունները, որոնք կազմել էր ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Գեորգի Կիմը, հետևյալն էին. Լեռնային Ղարաբաղի հարցով ստեղծվելիք հանձնաժողովը որքան հնարավոր է պետք է ձգձգի հարցի քննարկումը: Ղարաբաղի միացումը Հայաստանին անկարելի է: Կարելի է որոշ զիջումներ կատարել սոցիալ-կենցաղային ոլորտներում, կարելի է ղեկավարության մի մասին զոհաբերել՝ մեղքը բարդելով քիչ հայտնի անձնավորությունների վրա և ձգտել հանգստացնել բնակչությանը: Կարելի է բորբոքել և առաջ բերել փոքր ընդհարումներ ու մեղավոր համարել հայերին: Պետք է համարձակորեն ներթափանցել հայկական միջավայր և հասնել հայերի ու քրդերի բարեկամական հարաբերությունների խզմանը: Խորհրդային Հայաստանի ՊԱԿ-ը, ուսումնասիրելով այդ փաստաթուղթը, Հայկոմկուսի Կենտկոմ ուղարկած զեկուցագրում ամփոփեց՝ դատելով ամեն ինչից, այդ եզրակացությունը պետք է իրագործվի խորհրդային իշխանությունների կողմից[37]: Մեկնաբանությունը թողնվում է ընթերցողին:

Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Թ. Օրուջևը, Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ և Պետպլանի նախագահ Ա. Մութալիբովը, ինչպես և մի շարք այլ պաշտոնյաներ, մարտի 9-ին ժամանելով Ստեփանակերտ, փորձեցին մարզի սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ հանրապետության համապատասխան մարմինների կազմած պլանը փաթաթել արցախցիների վզին, սակայն այն մերժվեց: Այդ նույն հարցով Թ.Օրուջևը կրկին Ստեփանակերտ եկավ մարտի 11-ին, այս անգամ ԽՄԿԿ Կենտկոմի սեկտորի վարիչ Վ.Մաքսիմովի հետ: Մոսկվայից ժամանել էր նաև ԽՄԿԿ Կենտկոմի պատասխանատու աշխատող Լ. Շիշովը: Նրանց մասնակցությամբ կուսակցության ԼՂԻՄ մարզկոմի բյուրոն, քննարկելով «ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ առաջարկությունների մասին» հարցը, մերժում է այն:

Մինչ այդ մարտի 9-ին, նոր պատվիրակություն էր մեկնել Մոսկվա: Պատվիրակության կազմում էին Ղարմետաքսկոմբինատի կուսակազմակերպության քարտուղար Ռոբերտ Քոչարյանը, Ստեփանակերտի ավտոտրանսպորտային ձեռնարկության 2718-րդ ավտոշարասյան պետ Մաքսիմ Միրզոյանը, Սոցիալիստական աշխատանքի հերոս, ջուլհակուհի Քնարիկ Առաքելյանը, կուսմարզկոմի բյուրոյի անդամ, ջուլհակուհի Սահդա Օրբելյանը, մարզխորհրդի պատգամավոր, բանվորուհի Տատյանա Սոբոլևան, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանող Սերգեյ Շահվերդյանը և Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն, ԽՍՀՄ ժողովրդական ուսուցիչ Իվան Աթայանը: Պատվիրակությունը, Մոսկվայում ջանում էր անպայման հանդիպել երկրի առաջին դեմքի՝ Մ.Գորբաչովի հետ և նրան հասցնել Արցախի ժողովրդի ձայնը: Պատվիրակությունը տարել էր ստորագրությունների նոր կապոց և բազմաթիվ բողոքնամակներ: Նրանց չհաջողվեց հանդիպել Մ. Գորբաչովի հետ, որովհետև նա մեկնել էր արտասահման: Մարտի 16-ին պատվիրակությունը հանդիպեց Ե. Լիգաչովի հետ: Վերջինս փորձում էր ապացուցել, թե արցախցիների ընդվզումը ծնունդ է առել սոցիալ-տնտեսական հողի վրա: Պատվիրակությունը հակադրվելով նրան, ընդգծում է, որ շարժումը չի ուղղված ո՛չ կուսակցության, ո՛չ կառավարության և ո՛չ էլ Ադրբեջանի ժողովրդի դեմ, այլ իրենք պայքարում են քաղաքական ազատության համար, մայր ժողովրդի հետ նույն հարկի տակ ապրելու իրավունքի համար և ոչ մի սոցիալ-տնտեսական հարցեր իրենց չեն մտահոգում: Ե.Լիգաչովը վստահեցնում է իրենց այդ հանդիպման մասին տեղյակ պահել Մ. Գորբաչովին, և խոստանում է, որ կմշակվեն հիմնահարցի վճռման զանազան տարբերակներ[38]:

1988թ. մարտի 16-ին Ստեփանակերտ է ժամանում ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի, ԽՍՀՄ Պետպլանի և մի շարք այլ նախարարությունների և գերատեսչությունների պատասխանատու աշխատողներից կազմված մի խումբ, որի նպատակն էր կուսակցության ԼՂԻՄ մարզկոմի բյուրոյին և մարզխորհրդի գործկոմին ծանոթացնել ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի և ԽՄԿԿ Կենտկոմի պատրաստած՝ ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ որոշման նախագծի հետ: Մարզկոմի բյուրոն և մարզգործկոմը, դրան ծանոթանալով, հայտարարում են, թե Ղարաբաղի հայությունը պահանջում է նախ վճռել մարզը Հայկական ԽՍՀ-ի հետ միավորելու հարցը, որից հետո միայն կարելի կլինի խոսել

[37] ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 19, թ. 75:

[38] «ԼՂ Հանրապետություն», 17.08.1996:

երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացման հարցի շուրջը: Մարզային ակտիվը, «Կռունկի» գլխավորությամբ հավաքվելով Լենինի անվան հրապարակում, մարզկոմից և մարզխորհրդից պահանջում են մերժել այդ պլանը: Առանց դրական պատասխան ստանալու, հանձնաժողովը հաջորդ օրը մեկնում է Արցախից: Մի քանի օր անց ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի սոցիալական հարցերի գծով բյուրոյի նախագահի առաջին տեղակալ Վ. Լախտինը, պատասխանելով «Իզվեստիա» թերթի թղթակցի հարցին, չի թաքցնում, որ ԼՂԻՄ-ի բնակչությանն ավելի շատ հետաքրքրում են մարզի կարգավիճակի փոփոխման, քան թե տնտեսական հարցերը[39]:

Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի փետրվարի 20-ի որոշումից անցել էր երկու շաբաթ, սակայն կուսակցության ԼՂԻՄ մարզկոմը դեռ չէր ասել իր վճռական խոսքը, մինչդեռ երկրամասի բնակչությունը նրանից պահանջում էր դրսևորել վճռականություն և առանց երկմտանքի հանդես գալ մարզի աշխատավորների շահերի պաշտպանության օգտին: Փետրվարի վերջին և մարտի սկզբին կուսակցական սկզբնական կազմակերպություններում ստորագրություններ էին հավաքում՝ պահանջելով հրավիրել մարզային կուսակցական կազմակերպությունների արտահերթ կոնֆերանս և քննարկել Արցախի հիմնահարցը: Մարզի 285 կուսակցական սկզբնական կազմակերպություններից հավաքվում է 7260 ստորագրություն[40]: Սակայն մարզկոմը հապաղում էր և չէր համարձակվում հրավիրել կոնֆերանս: Կոնֆերանս հրավիրելու պահանջով արցախցիները մարտի 15-ին կրկին դիմում են համընդհանուր գործադուլի: Ի վերջո, մարզկոմը տեղի է տալիս: Մարտի 17-ին հրավիրվում է կուսակցության մարզկոմի պլենում, որի աշխատանքներին մասնակցում էին ԽՄԿԿ Կենտկոմի կուսակցական-կազմակերպչական աշխատանքների բաժնի վարիչի տեղակալ Գ. Խարչենկոն, Կենտկոմի պատասխանատու աշխատող Ի. Շվեցը և Ադրբեջանի Կենտկոմից՝ Թ. Օրուջևը: Պլենումը քննարկում է «Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդներին ՍՍԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովի հղած դիմումից բխած Լեռնային Ղարաբաղի մարզային կուսակցական խնդիրների մասին» և «ԼՂԻՄ-ը Հայկական ՍՍՀ-ին միացնելու հարցի վերաբերյալ ինքնավար մարզի աշխա-

[39] *"Известия", 20.03.1988.*

[40] **Արտյոնյան Վ.Բ.,** *նշվ. աշխ., էջ 76:*

տավորների, կոմունիստների պահանջի մասին» հարցերը: Ձեկուցումով հանդես է գալիս մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանը: Առաջին հարցի վերաբերյալ ընդունված որոշմամբ վստահություն է հայտնվում, որ «կուսակցական կոմիտեները, սկզբնական կազմակերպությունները, բոլոր կոմունիստները անհրաժեշտ միջոցառումներ կձեռնարկեն մարզի իրադրության առողջացման և Մ.Ս.Գորբաչովի դիմումից բխած խնդիրների կատարման համար», իսկ երկրորդ հարցի վերաբերյալ ընդունած որոշման մեջ ասված է. «Հաշվի առնելով ինքնավար մարզի հայ բնակչության իղձերը, Լեռնային Ղարաբաղի ճնշող մեծամասնության կամքը՝ խնդրել ԽՄԿ Կենտկոմի քաղբյուրոյին՝ քննարկել և դրականորեն լուծել Արցախի ինքնավար մարզը Հայկական ՍՍՀ-ին միացնելու հարցը՝ դրանով իսկ ուղղելով 20-ական թվականների սկզբին Լեռնային Ղարաբաղի տարածքային պատկանելությունը որոշելու ժամանակ թույլ տված պատմական սխալը»[41]:

Մարզկոմի պլենումի մասնակիցները գիշերվա ժամը 3^{00}-ին միանում են Լենինի անվան հրապարակում անհամբեր սպասող տասնյակ հազարավոր ցուցարարներին: Արկադի Մանուչարովը հայ ժողովրդի անունից շնորհակալություն է հայտնում մարզկոմի պլենումի անդամներին և հույս հայտնում, որ Արցախ-Ղարաբաղն ընդմիշտ կլինի մայր հայրենիքի հետ: Այդ գիշեր հրավիրված «Կռունկի» խորհրդի արտահերթ նիստը որոշում է մարզի բոլոր բնակավայրերում անցկացնել միտինգներ և հեռագրերով ու նամակներով «հեղեղել» Կրեմլը: Արցախցիները դեռևս հավատում էին, թե Մոսկվան կընդառաջի իրենց խնդրանքին: Սակայն «Պրավդայի» 1988թ. մարտի 21-ի համարում տպագրված «Հույզեր և բանականություն» սադրիչ հոդվածը ցույց տվեց, որ այդ հորինվածքի հեղինակները գտնվում էին պատրանքների մեջ: Նրանք, փորձելով պարզել, թե ինչ է տեղի ունենում Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը, եզրակացնում են, թե արցախյան պայքարի մասնակիցների մոտ իբր «տեղական շահերը գերադասվել են պետականից»: Ճիշտ բնորոշելով, որ ռեգիոնի տերիտորիալ պատկանելությունը, թերևս, ամենաբարդն է Անդրկովկասի ժողովուրդների ազգամիջյան հարաբերություններում, դժվար լուծելի խնդիր է: Ասված է, որ վեճերը երկու հանրապետությունների միջև հասցվել է նրան, որ մոռացության են տրվել լենինյան

[41] *«Սովետական Ղարաբաղ», 18.03.1988:*

ազգային քաղաքականության սկզբունքները: Նշում են, որ Ղարաբաղում կան բավականին խնդիրներ, որոնք իբր պետք է լուծվեն կոմպլեքսային կարգով ամբողջ երկրի համար: Փորձելով ստվեր նետել ղարաբաղյան պայքարի վրա՝ առաջ են մղում հետևյալ միտքը. Լեռնային Ղարաբաղում իրադարձությունները սկզբում ընթանում էին դեմոկրատիայի շրջանակներում, որը հետո իբրև գերաճել է «ազգայնական դրսևորումների»: Խոսելով սումգայիթյան ոճրագործության մասին՝ անամոթաբար ասում են. «Օգտվելով պայթյունալի իրադարձությունից՝ քրեական տարրերը կողոպուտի նպատակով ներխուժել են որոշ բնակարաններ, ուր հայեր էին ապրում: Օրինազանցությունը, բռնությունը, ծաղրուծանակը մարդկանց նկատմամբ այդ բազմազգ քաղաքում հեռուն են գնացել...»: Հետո եզրակացնում են, թե այդ ամենը իբր չեն կարող «սասանել ադրբեջանական և հայ ժողովուրդների բարեկամությունը»: Իրոք, սա իսկական ծաղր էր, ամոթալի երևույթ: Եվ դա «Պրավդայի» էջերում, այն թերթի, որը պարտավոր էր լինել անաղարտ, ճշմարտախոս ու արդարամիտ:

Ի պատասխան այդ սադրանքի՝ արցախահայությունը մարտի 24-ին դիմեց համընդհանուր գործադուլի, որը շարունակվեց մինչև ապրիլի 5-ը: «Կռունկը» փորձեց կանխել գործադուլը, սակայն չհաջողվեց: ԼՂԻՄ մարզկոմի բյուրոն, քննարկելով այդ հոդվածը, հիմնավորված և մերկացնող պատասխան ուղարկեց խմբագրությանը:

1988թ. մարտի 24-ին ԽՄԿԿ Կենտկոմը և ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդն ընդունեցին «Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը 1988–1995թթ. արագացնելու միջոցառումների մասին» որոշումը: Այդ նպատակի համար հատկացվում էր 400 միլիոն ռուբլի, որը պետք է իրացվեր Ադրբեջանի իշխանությունների կողմից մինչև 1995 թվականը, ինչը ձեռնտու չէր ԼՂԻՄ-ին: Ակնհայտ է, որ այդ պլանը կազմվել էր Բաքվում: Մոսկվան համաձայնվել էր այդ գումարը տրամադրել Ադրբեջանին՝ Արցախի հիմնահարցն իսպառ ջնջելու համար: Այլ հարց էր, եթե այդ գումարն ուղիղ հատկացվեր Լեռնային Ղարաբաղի տնօրինությանը: Բնականաբար, արցախահայությունը կտրուկ մերժեց այդ որոշումը:

Այդ որոշումն ընդունվելուց տասը տարի անց այն ժամանակ կուսմարզկոմի բյուրոյի անդամ Վլադիմիր Թովմասյանը «ԼՂ Հանրապետություն» թերթին տված հարցազրույցում նշել է, որ այդ որոշման հիմնական նպատակն է եղել Լեռնային Ղարաբաղի

հանրությանը շեղել քաղաքական պայքարի ճանապարհից: Վերևում համոզված էին, որ այդ որոշումով արցախահայությունը կարող էր հանգստանալ: Նրանք կարծում էին, թե արցախահայության խռովքի գլխավոր պատճառը սոցիալ-տնտեսական խնդիրներն էին: Շատ լավ գիտեինք, որ որոշման նախագիծը պատրաստվել էր Բաքվում: Որոշումը մեծամասնությամբ պետք է ծառայեր մարզի տարածքում ադրբեջանական բնակավայրերի զարգացմանը: Օրինակ՝ նախատեսված էր բացվելիք ձեռնարկություններից չորսը 1090 աշխատատեղով կառուցել Շուշիում, այդ այն դեպքում, երբ մարզում ընդամենը պետք է բացվեր 1980 աշխատատեղ: Իսկ չէ՞ որ Շուշիի բնակչությունը կազմում էր մարզի բնակչության 7,3 տոկոսը: Նախատեսված էր ամբողջ տնաշինարարական ծավալի 53,3 տոկոսը կատարել սեփական տների կառուցման հաշվին: Դա ռեալ չէր, որովհետև ԽՍՀՄ-ը իր պատմության մեջ չգիտեր նման օրինակ, երբ հնարավոր լիներ շինարարական աշխատանքների ավելի քան կեսը կատարել սեփականի հաշվին:

Ադրբեջանը չնայած հոխորտում էր, թե այդ որոշումը կկատարվի, սակայն դա շինծու էր: Օրինակ՝ 1988–1989թթ. ապրանքների առաքումը Ադրբեջանից Ղարաբաղ տարբեր բնագավառներում նվազել էր և կազմել 46 – 86 տոկոս: Մեկ ուրիշ օրինակ՝ 1989թ. 9 ամսում խտացված կերերով մարզը Ադրբեջանի կողմից ապահովվել էր 31 տոկոսով, կամ պակաս 10500 տոննայով: Իսկ այդքան կերերով կարելի էր արտադրել 1500 տոննա խոզի միս:

Երբ քննարկվում էր պլանի նախագիծը, մարզային իշխանությունները և մասնագետները պնդեցին, որ արցախահայության բարձրացրած հարցը քաղաքական է և ոչ թե տնտեսական: Ներկա Ա.Մութալիբովին ուղղակի ասացին, որ մերժում են, որովհետև այդ միլիոնները պետք է տրվեն Ղարաբաղին, այլ ոչ թե Բաքվին[42]:

Այդ պլանում առաջադրված կոմպլեքսային ծրագրում տեղ էր հատկացված նաև Հայկական ԽՍՀ-ին, որը, համագործակցելով Ադրբեջանական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի հետ, պետք է մասնակցեր Արցախի կյանքի զանազան ոլորտներին առնչվող խնդիրների լուծմանը: Այդ որոշումն ընդունվելուց հինգ ամիս անց, Հայաստանի ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ.Սարգսյանը Արմենպրեսի թղթակցի հետ ունեցած զրույցում նշել է, որ Շու-

[42] *«ԼՂ Հանրապետություն», 28.03.1998:*

շիում, Հադրութում և Մարտունիում Հայաստանի կողմից երեք վերահեռարձակող կայանների տեղադրման շնորհիվ Հայաստանի հեռուստատեսության առաջին ծրագրի հաղորդումներն ընդունվում են ԼՂԻՄ-ի գրեթե բոլոր շրջաններում և օգտվում են բնակչության ավելի քան 80 տոկոսը: Ստեփանակերտի ռադիոհեռարձակիչ ցանցը ընդունում է Հայաստանի ռադիոհաղորդումները, կազմակերպվել է Երևան-Գորիս-Ստեփանակերտ նոր փոստուղի, ավելի քան երեք անգամ մեծացվել է Երևանի և Արցախի շրջանների միջև ուղղակի միջքաղաքային հեռախոսականչերի քաղաքային կապերը: Պլանավորվել էր մինչև 1989թ. մայիսի մեկը վերակառուցել Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհը: Ֆ. Սարգսյանը բողոքում էր, որ այդ որոշումը լրիվ չի կատարվում, դեռևս չի սկսվել նախատեսված օբյեկտների շինարարությունը: Պլանի համաձայն պետք է լայն թափ հաղորդվեր բնակարանաշինարարությանը: Հայկական ԽՍՀ-ն պիտի մի քանի ինը հարկանի կոմպլեքս խոշորապանել բնակելի տներ հավաքեր Ստեփանակերտում և իրագործեր բազմաթիվ այլ կառույցներ: Հայաստանի մշակույթի հիմնարկները և ստեղծագործական միությունները պետք է իրագործեին Լեռնային Ղարաբաղի պատմության և մշակույթի հուշարձանների վերակառուցման կոմպլեքսային աշխատանքները: Հայաստանը առանձնապես մեծ անելիքներ ուներ մարզի ժողովրդական կրթության զարգացման գործում[43]: Սակայն Ադրբեջանը արգելակում էր Հայաստանին կատարել այդ աշխատանքները, չնայած վերջինս շահագրգռված էր և փորձում էր վերացնել ստեղծվող արգելքները: 1989 թվականի հունիսին Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհուրդը, քննարկելով «Պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնման և նորոգման աշխատանքներում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզին օգնություն ցույց տալու մասին» հարցը, ընդունեց որոշում, որտեղ նշված է, որ Լեռնային Ղարաբաղի տարածքում կա պատմության և մշակույթի 2800 հուշարձան, որոնցից 1040-ը ճարտարապետական է և 310-ը՝ հնագիտական, որոնց զգալի մասը կառուցվել է IV–XIII դարերում: Դրանք գիտամշակութային մեծ արժեք են ներկայացնում և կարևոր նշանակություն ունեն Արցախի ու ամբողջ հայ ժողովրդի պատմության ուսումնասիրման համար: Ընդունված որոշմամբ հանձնարարվեց պատմության և մշակույթի հուշարձանների

[43] *Նույն տեղում, 17.09.1988:*

պահպանման ու օգտագործման գլխավոր վարչությանը կարճ ժամկետում կոմպլեքսային գիտարշավ կազմակերպել ԼՂԻՄ-ի տարածքում գտնվող պատմության և մշակույթի բոլոր հուշարձանների մանրակրկիտ հաշվառման, անձնագրավորման և արձանագրման համար: Նախատեսվում էր դրանցից շատերի նորոգման և բարեկարգման աշխատանքների ֆինանսավորումը կատարել 1988–1995 թվերին[44]: Սակայն այդ որոշումը մնաց թղթի վրա, որովհետև Ադրբեջանը թույլ չտվեց՝ Հայաստանը իրագործի իր ընդունած որոշումը, որը բխում էր ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի վերոհիշյալ որոշումից:

1988թ. մարտի 24-ին Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց «Լեռնային Ղարաբաղի, Ադրբեջանական և Հայկական ՍՍՀ-ների իրադրությունների առթիվ միութենական հանրապետությունների դիմումներին առնչվող միջոցառումների մասին» որոշումը, որով հանձնարարվում էր «տասնօրյա ժամկետում մշակել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տնտեսական և սոցիալ-մշակութային զարգացման հասունացած հարցերի լուծման նպատակին ուղղված համալիր միջոցառումներ... և ընդունել համապատասխան որոշում»[45]: Այդ նույն որոշմամբ արգելվեց «Կռունկի» և նրա ղեկավար մարմնի գործունեությունը: Պարզապես Մոսկվայից թելադրված նույն սցենարով միաժամանակ արգելվեցին «Ղարաբաղ» կոմիտեն և «Կռունկը»: Այդ որոշման պահանջի իրագործումը դրվեց Ադրբեջանի իրավապահ մարմինների վրա: «Կռունկի» խորհուրդը որոշեց անցնել ընդհատակ:

«Ղարաբաղ» կոմիտեի և «Կռունկի» արգելումը լայն բողոք առաջ բերեց ոչ միայն Հայաստանում և Արցախում, այլև Խորհրդային Միությունում և սփյուռքահայության շրջանում: Հրապարակախոս Հ. Բորովիկի հետ 1988թ. մարտի 28-ին Երևանում ունեցած հանդիպման ժամանակ Սիլվա Կապուտիկյանը հայ ժողովրդի անունից խիստ անհանգստություն հայտնեց «Ղարաբաղ» կոմիտեի և «Կռունկի» գործունեությունն արգելելու առթիվ: «Վերջերս, – այսպես ավարտեց իր խոսքը հայ բանաստեղծուհին, – վերացվեց Ղարաբաղի հարցը տնօրինող մեր հանրապետական կոմիտեն, և պարզ է, որ կոմիտեականները դեռևս հնարավորություն կունենան ազատ ու հանգիստ շարունակելու

[44] *Նույն տեղում, 16.06.1989:*
[45] *"Бакинский рабочий", 25.03.1988.*

իրենց առօրյա գործն ու կյանքը: Իսկ ի՞նչ պիտի կատարվի Ղարաբաղի այդ նույն կոմիտեի անդամների հետ: Մենք չենք մոռացել այնտեղ տասնամյակների մոլեգնած շովինիզմի և բռնությունների դեպքերը: Ուրեմն՝ մենք պարտավոր ենք սատար կանգնել մեր արյունակիցներին ու վերին ղեկավարության միջամտությունն ապահովել, որպեսզի Ղարաբաղը այս անգամ ևս չդառնա դաժան հաշվեհարդարի ասպարեզ»[46]: Իսկ Արկադի Մանուչարովը 1990թ. փետրվարի 16-ին Մոսկվայի Բուտիրյան բանտում հայտարարել է. «Իմ և իմ գլխավորած «Կռունկ» կոմիտեի գործունեությունը կրում էր խաղաղ և սահմանադրական բնույթ և իմ ժողովրդի նկատմամբ պրովոկացիայի ոչ մի առիթ չի տվել»[47]: Այդ դեպքում Մոսկվան ինչո՞ւ գնաց նման գործողության:

Այսպիսով՝ 1988թ. մարտի վերջերին Ղարաբաղյան շարժումը թևակոխել էր պայքարի նոր փուլ: Համընդհանուր բնույթ ստացած Շարժումն, առաջ մղելով Արցախի հիմնախնդիրը, խորհրդային վերադաս մարմիններից պահանջում էր այն լուծել ժողովրդավարական պահանջներին համապատասխան:

[46] Ուլուբաբյան Բ., *նշվ. աշխ, էջ 61:*
[47] *Ղարաբաղյան հարց..., էջ 150:*

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՅՔԱՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՄԱՐ (1988 ՄԱՐՏ – 1991 ՍԵՊՏԵՄԲԵՐ)

1. ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԽՈՐԱՑՈՒՄԸ

Երկրում հետզհետե ավելի էր սրվում ազգային հարցը: Կենտրոնը, խուսափելով որևէ հիմնահարցի արմատական լուծումից և վարելով երկդիմի ու խուսանավող քաղաքականություն, բացահայտորեն մերժում էր հայ ժողովրդի բարձրացրած Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման պահանջը, որը, ըստ հետազոտող Էդիկ Մինասյանի, «ոգեշնչեց Ադրբեջանի ազգայնամոլ ուժերին, որոնք բռնեցին հայության դեմ բացահայտ հակամարտության ճանապարհը», և որի արդյունքում այնտեղ տեղի ունեցան «արյունալի իրադարձություններ, հայերի նկատմամբ դաժան հալածանքներ և կոտորածներ...»[1]: Այդ ամենը արդարացնելու և ղարաբաղյան շարժումը վարկաբեկելու նպատակով երկրի կենտրոնական լրատվամիջոցները նորանոր հերյուրանքներ էին հորինում: Արցախյան պայքարի առաջամարտիկ Համլետ Գրիգորյանի «Եթե մեր պահանջը չկատարվի, ապա պարտիզանական պատերազմ կսկսվի»[2] կոչը լայն արձագանք գտավ ամբողջ երկրում: Միության տարբեր ակնյուններից բազմաթիվ նամակներ և հեռագրեր էին ստացվում Ստեփանակերտում, որոնցում «ողջախոհության» էին հորդորում արցախցիներին: Հռչակավոր գիտնական Ա.Սախարովը 1988թ. մարտի 21-ին Մ.Գորբաչովին ուղղած նամակում անհանգստություն է հայտնում Լեռնային Ղարաբաղում տիրող վիճակի համար, որը Խորհրդային Ադրբեջանին բռնակցվելուց հետո դարձել էր «ազգամիջյան բախումների մշտական աղբյուր», որտեղ «տեղ են գտել ազգային խտրականության թելադրանքի, հայկական մշակույթի սահմանափակման բազմաթիվ փաստեր»[3]: Անվանի գիտնականը իր նամակում բացահայտում էր խորհրդային բարձրագույն իշխա-

[1] Սինասյան Է., *Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990–2003թթ.), Եր., 2003, էջ 18:*
[2] *"Известия", 24.03.1988.*
[3] *Андрей Сахаров о Нагорном Карабахе, Ер., 1996, с. 5.*

նությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հակասահմանադրական և վարկաբեկիչ գործողությունները: Նա գրել է. «Խորհրդային իշխանության մարմնի միջնորդության նորմալ, սահմանադրորեն քննարկման փոխարեն սկսվեցին գերազանցապես հայերին ուղղված խուսանավումներն ու հորդորները, միաժամանակ մամուլում ու հեռուստատեսությամբ երևան եկան հաղորդումներ, որոնցում իրադարձությունները շարադրվում էին ոչ լրիվ և միակողմանի, իսկ հայ բնակչության օրինական խնդրանքները սկսեցին հայտարարվել որպես ծայրահեղական, և կարծես թե նախօրոք կանխորոշվում էր բացասական պատասխանը: Ցավոք, հարկադրված ենք արձանագրել, որ արդեն առաջին անգամ չէ սրված իրադրության մեր հրապարակայնությունը ճնշվում հենց այն ժամանակ, երբ հատկապես պետք է»[4]: Հայտնի իրավապաշտպանը հույս ուներ, որ «երկրի ղեկավարությունը, քաղբյուրոն, ԽՄԿԿ Կենտկոմը և Գերագույն խորհուրդը կգտնեն իրադրությանը համապատասխան վճռական, ժողովրդավարական և սահմանադրական միջոց»[5]:

* * *

«Կռունկը» արգելվելուց հետո խորհրդի անդամներն աշխատանքները շարունակում էին ընդհատակում: Այդ օրերին Լենինի անվան հրապարակը շրջափակվել էր ոստիկանության կողմից: Շարժման ակտիվիստները որոշել էին հանրահավաքները շարունակել Հաղթանակի հրապարակում, որը գտնվում է քաղաքի արևելյան կողմից մուտքի մոտ:

1988թ. մարտի վերջին, իբրև Շարժման ղեկավար, «Կռունկին» փոխարինեց տնօրենների խորհուրդը, որը ստեղծվել էր դեռևս 1980-ական թվականների սկզբին: Խորհրդի նախագահ ընտրվեց Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի տնօրեն Բորիս Առուշանյանը: Տնօրենների խորհրդի կազմի մեջ մտնում էին Ստեփանակերտի արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարները, «Կռունկի» խորհրդի անդամները և մտավորականներ: «Կռունկը», գործելով ընդհատակում, օգնում էր տնօրենների խորհրդին: Նրանք կազմում էին մի միասնություն[6]: 1988թ. մարտի 28-ին «Կռունկի» խորհրդի վերջին նիս-

[4] *Նույն տեղում:*
[5] *Նույն տեղում, էջ 6:*
[6] *«Ազատ Արցախ», 18.03.2002, 14.03.2002:*

տում լսվեց նրա հաշվետվությունը[7]: «Կռունկի» և նրա խորհրդի այդ կարճատև գործունեությունը գնահատվեց դրական և որոշվեց չլուծարել ու աշխատանքները շարունակել ընդհատակում, տնօրենների խորհրդի հետ համատեղ:

Մարզում շարունակվում էր գործադուլը: ԼՂԻՄ մարզկոմը, դիմելով երկրամասի կոմունիստներին և աշխատավորներին, խնդրում էր դրսևորել «հանգստություն, զսպվածություն, տոկունություն ու վերադառնալ աշխատատեղերը»[8]: Սակայն «Բակինսկի ռաբոչի» թերթի մարտի 26-ի համարում տպագրված Լ.Պոլոնսկու «Տարերայնորե՞ն, թե՞ կազմակերպված» սադրիչ հոդվածն ավելի բորբոքեց մարզի աշխատավորներին: Այն, գրված լինելով Բաքվի իշխանությունների պատվերով, խեղաթյուրված էր ներկայացնում Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ ծավալվող իրադարձությունները:

ԼՂԻՄ մարզկոմի բյուրոն, մարտի 31-ին քննարկելով Ստեփանակերտի ձեռնարկություններում ստեղծված վիճակը կարգավորելու հարցը, որոշեց մարզային իշխանությունների անունից դիմել մարզի աշխատավորներին և կոչ անել «վճռականորեն հրաժարվել ամեն տեսակի հրահրողներից, պրովոկատորներից, բանսարկուներից, մեր ընդհանուր գործի հակառակորդներից, ունկնդրել բանակցության ձայնին, դրսևորել պատասխանատվություն, քաղաքացիական և քաղաքական հասունություն, կազմակերպված դուրս գալ աշխատանքի»[9]:

Արցախում, մանավանդ Ստեփանակերտում, ստեղծված վիճակը քննարկվեց նաև մարտի 30-ին տեղի ունեցած Ստեփանակերտի քաղկոմի պլենումում: Քաղկոմի առաջին քարտուղար Զ.Սովսիսյանը նշեց, որ գործադուլների հետևանքով միայն հունվար-մարտ ամիսներին կորցրել են 100 հազար աշխատանքային մարդ-օր, և նոր տնտեսավարկի սկզբունքով աշխատող ձեռնարկությունները չեն ստացել 1,6 մլն ռուբլու շահույթ[10]: Պլենումը դատապարտեց երկրի ղեկավարության կողմից իրագործվող «ուժային ճնշման» մարտավարությունը: Ընդունված որոշ-

[7] *"Известия", 30.03.1988.*
[8] *«Սովետական Ղարաբաղ», 24.03.1988:*
[9] *Նույն տեղում, 01.04.1988:*
[10] *"Аргументы и факты", 1988, N7, с. 7.*

ման մեջ հստակորեն ասված է, որ «Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը մնում է օրակարգի մեջ և պետք է լուծվի»[11]:

Գործադուլից դուրս գալու համար լայն աշխատանք էին ծավալել սկզբնական կուսակցական կազմակերպությունները: Ղարմետաքսկոմբինատի կուսկազմակերպության քարտուղար, տնօրենների խորհրդի անդամ Ռոբերտ Քոչարյանը մարտի 30-ին լրատվամիջոցներին տեղեկացրեց, որ կոմբինատում արդեն աշխատանքի են դուրս եկել 308 հոգի, որը կազմում էր կոմբինատի աշխատողների մեկ հինգերորդ մասը: Իսկ վաստակավոր դերասանուհի Ժաննա Գալստյանը դժգոհություն էր հայտնում ղարաբաղցիներին «ծայրահեղական» պիտակավորելու համար: Նա բացատրում էր, որ «աշխատանքի դուրս չգալը միայն խանգարում է մեզ հուզող հարցի ճիշտ վճռին» և բոլորին կոչ էր անում դուրս գալ աշխատանքի[12]:

Ապրիլի 5-ին կուսմարզկոմի բյուրոն, քննարկելով մարզի բոլոր ձեռնարկությունների աշխատանքային ռիթմը վերականգնելու հարցը, մշակում է կոնկրետ միջոցառումներ: Բյուրոն մևնույն ժամանակ դատապարտող որոշում է ընդունում «Բակինսկի բաբոչի» թերթի էջերում լայնածավալ հակաարցախյան, հակահայկական սադրիչ նյութեր տպագրելու համար[13]: Ապրիլի 4 – 5-ը գործադուլը դադարեցվեց:

Հայաստանում, Արցախում և Ադրբեջանում տեղի ունեցող իրադարձություններն անաչառ լուսաբանելու նպատակով մարտի վերջերին իր ստեղծագործական խմբով Երևան, Ստեփանակերտ և Բաքու էր եկել անվանի հեռուստալրագրող ու հրապարակախոս, Կենտրոնական հեռուստատեսության «Դիրքորոշում» հաղորդաշարի հեղինակ և վարող Հենրիխ Բորովիկը: Նա ամենուր կինոխցիկի առաջ ազատ արտահայտվելու հնարավորություն տվեց մարդկանց: Իմիջիայլոց, մարտի երկրորդ կեսին Մոսկվայից Լեռնային Ղարաբաղ եկած մի քանի լրագրողներ ևս փորձում էին ճշմարտությունն ասել Ղարաբաղյան շարժման մասին: «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթի մարտի 26-ի և 27-ի համարներում տպագրված Ա.Աֆանասևի, Դ.Մուրատովի, Ա.Մուրսալիևի և Ա.Սարգսյանի «Տագնապով ու հույսով» հոդվածում հեղինակները փորձում էին հասկանալ ու ճիշտ ներկայացնել

[11] *"Известия", 01.04.1988.*
[12] *Նույն տեղում:*
[13] *Арутюнян В. Б., նշվ աշխ., էջ 75:*

իրադարձությունների պատճառները և բացահայտել խորացող հակասությունների արմատները: Նրանք, լինելով Երևանում, Բաքվում, Սումգայիթում, Ստեփանակերտում ու Աղդամում, ունեցել են տասնյակ հանդիպումներ և ներկայացրել այն, ինչ տեսել ու լսել են: Սակայն թե՛ նրանք և թե՛ մյուս լրագրողները, հավատարիմ մնալով կոմունիստական վարչակարգի «ազգային քաղաքականությանը» և «ինտերնացիոնալ բարեկամությանը», չկարողացան դուրս գալ այդ կաղապարից և Հ.Բորովիկի նման ասել ողջ ճշմարտությունը: Բայց և այնպես, նրանք իշխանություններին մեղադրում էին ժամանակին արցախահայության վիճակի մասին չհոգալու համար:

Մեկը մյուսի ետևից Ստեփանակերտ լուրեր էին հասնում, թե Մարտունու, Մարտակերտի և Հադրութի շրջաններում, ինչպես և Խոջալուում ու Շուշիում ադրբեջանցիները հարձակումներ են գործում հայերի վրա: Հայաստանից Արցախ գնացող և եկող ավտոմեքենաներն Ադրբեջանի տարածքում ենթարկվում էին հարձակումների ու թալանի: Ազերիները, զենք գործադրելով, հափշտակում էին կոլտնտեսությունների մանր և խոշոր եղջերավոր անասունները: Մարդկանց պատանդ էին վերցնում և ազատելու համար նրանց հարազատներից կորզում մեծ գումար: Դա կանխելու համար «Կռունկի» և տնօրենների խորհրդի հանձնարարությամբ մարզի բոլոր բնակավայրերում կազմակերպվում էր շուրջօրյա հերթապահություն:

1988թ. ապրիլի 10-ին Ստեփանակերտ ժամանեց ԽՄԿԿ Կենտկոմի մեքենաշինության բաժնի վարիչ Արկադի Վոլսկին: Նա Մոսկվայից մինչ այդ եկած էմիսարներից երևի միակն էր, որը հասկացավ մարզի առաջ ծառացած բազմաթիվ կնճռոտ հարցերի էությունը և խոստացավ այդ ամենի մասին անձամբ տեղյակ պահել երկրի առաջին դեմքին՝ արդարացիորեն մոտենալ Ղարաբաղյան հիմնահարցին:

Ապրիլի 26-ին կենտրոնական հեռուստատեսությամբ ցուցադրվեց Հենրիխ Բորովիկի «Լեռնային Ղարաբաղ. բարձրաձայն խորհում» հաղորդումը՝ նվիրված Լեռնային Ղարաբաղի ազատագրական պայքարին: Հեռուստադիտողների ցանկությամբ այդ հաղորդումը կրկնվեց մայիսի 12-ին: Ղարաբաղյան հիմնահարցի մասին այդ հաղորդումը, թերևս, առաջին ճշմարիտ խոսքն էր, որը թե՛ Լեռնային Ղարաբաղի և թե՛ Հայաստանի բնակչությունն ընդունեց գոհունակությամբ: Արցախից և Հայաստանից բազմաթիվ հեռագրեր և նամակներ էին ուղարկվում Հ.Բորովիկին, որոնց հե-

ղինակները իրենց շնորհակալությունն էին հայտնում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի և Սումգայիթի ողբերգական իրադարձությունների վերաբերյալ կենտրոնական հեռուստատեսությամբ առաջին անգամ ճշմարիտ հաղորդում տալու համար: Մինչդեռ Ադրբեջանում կազմակերպվեցին հակաբորովիկյան ցույցեր, և Հ.Բորովիկին մեղադրող հարյուրավոր հեռագրեր ու նամակներ ուղարկվեցին կենտրոնական իշխանություններին: Բացի այդ, մայիսի 17-ին կենտրոնական հեռուստատեսության «Ժամանակ» ծրագրով Ադրբեջանի գրողների միության առաջին քարտուղար Անարը հայտարարեց, թե իբր Հ.Բորովիկի հաղորդման մեջ սկզբունքային հարցը սխալ դիրքերից է գնահատվել:

1988 թ. ապրիլի 26-ին տեղի ունեցած մարզխորհրդի 20-րդ գումարման 5-րդ նստաշրջանը նախ մարզխորհրդի նախագահի պաշտոնից ազատեց նախագահ Վ. Օսիպովին, որը մի քանի ամիս առաջ էր հեռացել Արցախից և պաշտոնակատար հաստատեց Շմավոն Պետրոսյանին, ապա քննարկեց 1987 թվականի տնտեսական պլանների կատարման և ընթացիկ տարվա խնդիրները վճռելու մասին հարցը, որից հետո անդրադարձավ արցախյան հիմնախնդրին: Ստեփանակերտի տպարանի տնօրեն Յու. Ներսիսյանը իր ելույթում մարզխորհրդին մեղադրեց այն բանի համար, որ նա անբավարար մոտեցում էր ցույց տալիս փետրվարի 20-ի մարզխորհրդի որոշման և Սումգայիթից բռնագաղթվածների նկատմամբ: Նա նաև նշեց, որ արցախահայությունը չի կարող զարգանալ Ադրբեջանի կազմում: Առաջարկվեց մեկ անգամ ևս խնդրել Ադրբեջանի իշխանություններին համաձայնություն տալ ԼՂԻՄ-ը միավորել Հայաստանի հետ: Մարզկոմի քարտուղար Հ. Պողոսյանը, դերասան Բ. Օվչյանը և ուրիշներ իրենց ելույթներում պաշտպանեցին Յու. Ներսիսյանի բարձրացրած հարցը: Հ. Պողոսյանը տեղեկացրեց, թե Սումգայիթից բռնագաղթվածներից 1000 հոգի է մնացել Արցախում, մնացածը տեղափոխվել են Ռուսաստան: Պարզապես իշխանությունները նեղվում էին քաղաքում բնակարանների պակասությունից, մանավանդ, որ շատերը հրաժարվում էին գյուղ գնալ, որտեղ ազատ բնակարաններ շատ կային[14]:

Նույն տարվա մայիսմեկյան տոնակատարությունը Ստեփանակերտում վերածվեց համընդհանուր ցույցի: «Հավատում ենք. լենինյան դիրքերից կվճռվի Ղարաբաղի խնդիրը» կարգախոսը տանում էին բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների կոլեկտիվները[15]: Արցախցիների այդ համառությունը չէին կարող տանել Ադրբեջանի իշխանությունները: Հենց նրանց գրգռմամբ մայիսի 8-ին Շուշիում վեց ադրբեջանցիներ ծեծելով սպանում են 22-ամյա Վիտալի Պետրոսյանին և շրջանային հիվանդանոցում նրա մահը «որակում» որպես սրտի կաթված: Այդ օրերին մի քանի ազերիներ հարձակվում են Ստեփանակերտի մանկապարտեզներից մեկի վրա և ջարդում ամեն ինչ: Բանը հասել էր նրան, որ նույնիսկ ԼՂԻՄ գլխավոր դատախազի տեղակալ էր նշանակվել ազգությամբ ադրբեջանցի: Ի բողոք դրան՝ մարզում տեղի էին ունենում ցույցեր և հանրահավաքներ, իսկ մայիսի 12-13-ը՝ համընդհանուր գործադուլ: Ստեփանակերտի ցուցարարների անունից մայիսի 12-ին բողոքի հեռագիր է ուղարկվում ԽՄԿԿ Կենտկոմ: Կենտրոնական իշխանություններին բողոք է ուղարկվում նաև մի խումբ պատգամավորների, սոցիալիստական աշխատանքի հերոսների և կուսակցության մարզկոմի անդամների անունից, որում պահանջվում էր անհապաղ լուծել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը և բավարարել նրա բնակչության արդարացի պահանջը[16]: Ի վերջո՝ չեղյալ է հայտարարվում մարզային դատախազի տեղակալի պաշտոնում ադրբեջանցի նշանակվելու որոշումը:

1988թ. մայիսյան այդ օրերին հայ-ադրբեջանական հարաբերությունները սրվել էին առանձնապես Շուշիում: Այնտեղ տեղի ունեցող հանրահավաքները, որոնց մասնակցում էին նաև հարևան գյուղերից եկած ազերիներ, կրում էին բացահայտ հակահայկական բնույթ: Շուշիի թուրք-ազերիները սպառնում էին հաշվեհարդար տեսնել քաղաքի հայ բնակչության հետ, ինչպես դա արվել էր 1920թ. մարտին: Նրանք այն աստիճանի էին դարձել սանձարձակ, որ հանրապետության իշխանություններից պահանջում էին լուծարել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը: Քաղաքի հայերին թույլ չէին տալիս գնալ աշխատանքի, իսկ երեխաներին՝ դպրոց: Մարտի 16-ից սկսած՝ երեք օրվա ընթացքում քաղաքի հայերի մեծամասնությունը վտարվում է քաղաքից, իսկ նրանց տներն ու ամբողջ ունեցվածքը՝ կողոպտվում: Նրանց մի մասը ոտքով հասնում է Քարինտակ, Մխիթարաշեն և Շոշ գյուղերը, մի մասն էլ՝ Ստեփանակերտ: Հիսունվեց ընտանիք

[14] *ԼՂՀ, ՊԱ, ֆ 1, g. 2, գ. 263, p. 5-53:*

[15] *«Սովետական Ղարաբաղ», 03.05.1988:*

[16] **Арутюнян В. Б.**, *նշվ. աշխ., էջ 83:*

տեղավորվում է Ստեփանակերտի հյուրանոցում, իսկ տասնյակ ընտանիքներ էլ՝ Ստեփանակերտից հեռացած ազերիների բնակարաններում: Շուշիում մնացած մի քանի տասնյակ հայ ընտանիքներ ստիպված էին քաղաքից հեռանալ նույն թվականի սեպտեմբերի 18-ին: Ադրբեջանի լրատվամիջոցները փորձում էին հավատացնել, թե իբր հայերը Շուշին լքել են ինքնակամ և ոչ մի բռնության չեն ենթարկվել: Մայիսի 17–19-ը Բաքվում տեղի ունեցած բազմահազարանոց հանրահավաքները պաշտպանեցին Շուշիի ազերիների այդ հակահայկական գործողությունները և կոչ արեցին՝ մյուս քաղաքներում ևս հետևեն շուշեցիների օրինակին ու դուրս քշեն բոլոր հայերին:

ԼՂԻՄ կուսմարզկոմի բյուրոն. մայիսի 17-ին քննարկելով «Շուշի քաղաքում պրովոկացիաների մասին» հարցը, խստորեն դատապարտեց կուսշրջկոմի առաջին քարտուղար Ն.Հաջիևին, որը նպաստել էր քաղաքում հակահայկական գործողությունների ծավալմանը: Այդ նույն օրը ԼՂԻՄ կուսմարզկոմը նոր նամակ է հղում ԽՄԿԿ Կենտկոմ, որում մի անգամ ևս խնդիր էր դրվում լուծել Ղարաբաղի հիմնահարցը: Կուսմարզկոմը դեռևս վստահ էր, որ տեղի ունեցող իրադարձությունները «չեն կարող սասանել հայ և ադրբեջանցի ժողովուրդների բարեկամությունն ու փոխըմբռնումը»: Մարզկոմը երկրամասի բնակչությանը խնդրում էր «կրկին ու կրկին դրսևորել զգոնություն, տոկունություն, զսպվածություն, բարձր կազմակերպվածություն և միասնություն, չշիկացնել կրքերը, չենթարկվել սուտ լուրերին և սադրանքներին, պահպանել աշխատանքային ռիթմը: Մարզկոմի ղեկավարները կուրորեն հավատում էին, որ «իրադրության ոչնչով չհիմնավորված բարդացումը միայն խանգարում է Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը օբյեկտիվորեն լուծելու համար բարենպաստ պայմանների ստեղծմանը»[17]:

Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմը և Գերագույն խորհուրդը, իրենց հերթին մայիսի 18-ին հանդես գալով կոչով, կեղծ տագնապ ու անհանգստություն էին հայտնում հայ-ադրբեջանական փոխհարաբերությունների սրման սոր բռնկումների վերաբերյալ: Սակայն գործնականում ոչ մի քայլ չէր ձեռնարկվում ադրբեջանցիների կողմից հայերի նկատմամբ իրագործվող բռնարարքները կանխելու համար: Ավելին, Բաքվում տեղի ունեցած բազմահազարանոց հանրահավաքներում, որին հիմնականում մասնակ-

[17] *«Սովետական Հայաստան», 18.05.1988:*

ցում էին երիտասարդներն ու մտավորականները, հնչում էր «Մահ հայերին, մահ Բորովիկին» կոչը: Հակահայկական ցույցեր էին անցկացվում նաև Աղդամում, Միրբաշիրում, Ֆիզուլիում, Շուշիում, Մինգեչաուրում, Կիրովաբադում և այլ քաղաքներում:

Արցախցիները դեռևս այն կարծիքին էին, թե Մոսկվան կկատարի իրենց խնդրանքը: Այդ հույսով էլ կրկին Մոսկվա ուղարկվեց պատվիրակություն՝ Համլետ Գրիգորյանի գլխավորությամբ[18], որը այնտեղ ունեցավ բազմաթիվ հանդիպումներ, սակայն չհասնելով որևէ շոշափելի արդյունքի՝ մայիսի 24-ին վերադարձավ Երևան: Հաջորդ օրը ելույթ ունենալով Թատերական հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում՝ Համլետ Գրիգորյանը հայտարարեց, որ Մոսկվայում իրենց հասկացրել են, թե Լեռնային Ղարաբաղի հարցը առայժմ չի քննարկվելու վերևում, քանի դեռ այն չի քննարկվել ոչ Հայաստանի և ոչ էլ Ադրբեջանի Գերագույն խորհուրդներում, իսկ առանց դրա հնարավոր չէ լուծել հիմնախնդիրը: Նա կոչ արեց Հայաստանի Գերագույն խորհրդին քննարկել ԼՂԻՄ մարզխորհրդի 1988թ. փետրվարի 20-ի որոշումը[19]:

Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի պլենումը 1988թ. մայիսի 21-ին զբաղեցրած պաշտոնից ազատեց Ք.Բաղիրովին և կենտկոմի առաջին քարտուղար ընտրեց Ա.Վեզիրովին: Պլենումի աշխատանքներին մասնակցած ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Եգոր Լիգաչովը հայտարարեց, թե ԼՂԻՄ-ը Հայաստանին վերադարձնելու հարցը ԽՄԿԿ Կենտկոմը չի քննարկելու, քանի որ նա միտում չունի Միությունում տարածքային փոփոխություններ կատարել: Ե.Լիգաչովի հայտարարությունն արցախցիներին դրդեց նոր գործադուլի, որը սկսվեց մայիսի 23-ին և շարունակվեց մինչև հուլիսի 24-ը՝ երկու ամիս: Ի բողոք Ե.Լիգաչովի հայտարարության՝ ԼՂԻՄ մարզկոմի բյուրոյի և մարզի մի շարք պաշտոնյաների ստորագրությամբ մայիսի 27-ին ընդարձակ նամակ ուղարկվեց ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրո, որում շարադրվում է ադրբեջանահայության դեմ Ադրբեջանի իշխանությունների գոր-

[18] *Մոսկվա մեկնած պատվիրակության կազմը. Համլետ Գրիգորյան (Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ), Լեոնիդ Մաիլյան (Ճարտարի կոլտնտեսության նախագահ), Վաղարշակ Հայրապետյան (Ղարաբուլաղ գյուղ, պատերազմի վետերան), Արգիկ Մխիթարյան (Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ) և Լավրենտ Ղալայան (նկարիչ):*

[19] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 87, գ. 19, թ. 102:*

ծաղրած հանցագործությունները, և պահանջվում էր մինչև մարզի հիմնախնդրի վերջնական լուծումն այն դուրս բերել Ադրբեջանի կազմից[20]: Որպես պատասխան՝ խորհրդային իշխանությունները սկսեցին նոր հալածանքներ. Ստեփանակերտում ամենուր զրահաբաճկոններով հանդերձավորված, դագանակներով ու վահաններով զինված զինվորականներ էին շրջում, որոնք արգելում էին փողոցներում չորս հոգուց ավելի մարդկանցով խմբվելը, շրջապատել էին մի շարք հիմնարկ-ձեռնարկություններ, հատկապես մանկավարժական ինստիտուտը: Շարժման ղեկավարներն ու ակտիվիստները խիստ հսկողության տակ էին:

Մ.Գորբաչովի հրավերով ԼՂԻՄ կուսմարզկոմի առաջին քարտուղար Հ. Պողոսյանը, հունիսի 9-ին մեկնեց Մոսկվա: Գլխավոր քարտուղարի հետ հանդիպմանը մասնակցում են նաև Ադրբեջանի և Հայաստանի կոմկուսների կենտկոմների առաջին քարտուղարները: Հ.Պողոսյանը Մոսկվայից վերադառնալով հունիսի 11-ին, հրավիրում է խորհրդակցություն, որտեղ համոզմունք է հայտնում, որ երկրի ղեկավարները չեն ցանկանում կարեկից լինել Լեռնային Ղարաբաղի հոգսերին և ցավերին: Այդ հանդիպման ժամանակ Մ.Գորբաչովը Հայաստանի և Ադրբեջանի կոմկուսների կենտկոմների առաջին քարտուղարներին հանձնարարել էր իրենց հանրապետությունների Գերագույն խորհուրդներում քննարկել ԼՂԻՄ մարզխորհրդի 1988թ. փետրվարի 20-ի որոշումը և ընդունել համապատասխան որոշումներ: Ադրբեջանի ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը հունիսի 13-ին քննարկելով հարցը, գտնում է, որ այն հակասում է «հայ և ադրբեջանցի ժողովուրդների շահերին» և չի համապատասխանում «մեր երկրի բոլոր ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը, վերակառուցման խնդիրներին»[21]: Այդ որոշումը հաստատվում է Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն խորհրդի հունիսի 17-ին տեղի ունեցած արտահերթ նստաշրջանում: Իսկ մինչ այդ՝ հունիսի 15-ին, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը համաձայնություն էր տվել ԼՂԻՄ-ը ընդունել Հայկական ԽՍՀ կազմի մեջ: Այդ որոշման առաջին կետը ասում է. «Համակողմանիորեն ուսումնասիրելով Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի որոշումը և իրավիճակը, ինչպես նաև ԼՂԻՄ-ի և Հայկական ՍՍՀ հայ բնակչության կամքի արտահայտությունը, ղեկավարվելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի մասին ՍՍՀՄ սահմանադրության 70 հոդվածով՝ համաձայնություն տալ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզը Հայկական ՍՍՀ կազմի մեջ մտնելուն»[22]:

1988թ. հունիսին տնօրենների խորհրդի և «Կռունկի» ստեղծած հանձնաժողովը կարողանում է համոզել մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանին և մարզխորհրդի նախագահի պաշտոնակատար Շմավոն Պետրոսյանին հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան և քննարկել մարզում ստեղծված իրավիճակը: Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը հրավիրվեց հունիսի 21-ին, որը քննարկեց «Մարզում ստեղծված իրավիճակի և նրա կայունացման միջոցառումների մասին» հարցը: Մարզխորհրդի նախագահի պաշտոնակատար Շ. Պետրոսյանը հաղորդում է, որ հունիսի 19-ին ավելի քան 70 պատգամավորներ գրավոր պահանջել են հրավիրել արտահերթ նստաշրջան, որին մասնակցում են 110 պատգամավոր[23]: Նստաշրջանի աշխատանքներին մասնակցում էին նաև ԽՄԿԿ Կենտկոմի պատասխանատու աշխատող Լ.Շիշովը և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ս.Թաթլիևը: Նստաշրջանում ելույթ ունեցան 15 պատգամավոր: Նրանք ձգտում էին արտահայտվել զուսպ, առանց բորբոքվելու և զգացմունքների՝ պաշտպանելով փետրվարի 20-ի որոշումը: Ստեփանակերտից պատգամավոր Վ. Համբարձումյանը նշում է, որ եթե անցկացնենք զուգահեռ և իրար կողքի դնենք երիտթուրքերի ու ադրբեջանցիների արարքները, ապա ոչ մի տարբերություն չեք տեսնի: Ինչպե՞ս կարելի է համբերել հայ ժողովրդի նկատմամբ Խուրաման Աբբասովայի արտահայտած վիրավորանքները: Մի՞թե մեկը չկարողացավ նրան հասկացնել, որ ազերիների նախնիները երբ դեռ մագլցում էին ծառերի վրա, հայերն ունեին գիր ու գրականություն: «Այո՛,- ավարտեց իր ելույթը,- ընկե՛ր պատգամավորներ, եկել է ժամանակը «ոչ» ասելու այն ճնշմանը, որը մենք տարել ենք դարեր շարունակ: Մարզը պետք է դուրս բերել Ադրբեջանի կազմից և միավորել Հայաստանի հետ: Հենց այսօրվանից պետք է հանել Ադրբեջանի դրոշը, որը կանգնեցված

[20] **Арутюнян В. Б.,** *նշվ. աշխ., էջ 91–101:*
[21] *"Бакинский рабочий", 14.06.1988.*

[22] *«Սովետական Հայաստան», 16.06.1988:*
[23] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 264 թ. 3:*

է մարզխորհրդի շենքի վրա, և տեղը դնել Հայաստանի դրոշը»[24]: Գեներալ-լեյտենանտ Վ. Կրաևը իր ելույթում հաղորդեց, որ ինքը արդեն փետրվարի 29-ին Սումգայիթ քաղաքի պարետն էր: «Այդ գիշեր շատ ծանր տարա և ինձ հարցնում էի. ինչո՞ւ եմ աշխարհում ապրել 50 տարի: Որպեսզի այդպիսի սարսափներ տեսնեի՞»: Վերջում կոչ է անում համբերել և լեզու գտնել ադրբեջանցիների հետ: Պատգամավորները նրա այդ կոչը դիմավորում են աղմուկով[25]: Անընդունելի էր նաև մարզկոմի քարտուղար Հենրիխ Պողոսյանի ելույթի որոշ դրույթներ: Օրինակ՝ նա նշեց, որ եթե Լեռնային Ղարաբաղը դուրս ենք բերում Ադրբեջանի կազմից, ապա ի՞նչ պիտի պատասխանեմ Բաքվում ապրող իմ 60 հարազատներին և նրանց 110 երեխաներին: Պատգամավորների աղմուկից փոխում է խոսելու տոնը և նշում, որ մենք ցանկանում ենք հարցը լուծել այնտեղ, որտեղ դրա համար չկա քաղաքական հիմք: Ապա առաջարկում է վերջ տալ գործադուլին և այդ մասին Գորբաչովին հեռագրել Ստեփանակերտի ցուցարարների անունից՝ պաշտպանելով նրա քաղաքական կուրսը[26]: Նստաշրջանն ընդունեց որոշում, որում հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության կամքը՝ անհրաժեշտ համարեց «մեկ անգամ ևս անմիջականորեն դիմել ՍՍՀՄ Գերագույն խորհրդին՝ խնդրելով ամենայն ուշադրությամբ քննարկել Հայկական ՍՍՀ հունիսի 15-ի նստաշրջանի որոշումը, որը համաձայնություն տվեց ԼՂԻՄ-ը ընդունել Հայկական ՍՍՀ կազմի մեջ...»: Իսկ մարզում ստեղծված արտակարգ բարդ իրադրությունը կայունացնելու և աշխատանքային նորմալ ռիթմը վերականգնելու նպատակով հարկ համարվեց «խնդրել ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը՝ մինչև Լեռնային Ղարաբաղի հարցի վերջնական և դրական լուծումը ժամանակավորապես, որպես այդ փուլում միակ ընդունելի տարբերակ, ամենակարճ ժամանակում ինքնավար մարզը հանել Ադրբեջանական ՍՍՀ կազմից և հանձնել ՍՍՀՄ կառավարության տնօրինությանը[27]»: Նստաշրջանը միաժամանակ դատապարտեց սումգայիթյան ցեղասպանությունը, պահանջեց դրա կազմակերպիչներին տալ արժանի պատիժ, իսկ մարզի աշխա-

[24] *Նույն տեղում, թ. 14:*
[25] *Նույն տեղում, թ. 19-25:*
[26] *Նույն տեղում, թ. 19-25:*
[27] *Նույն տեղում, թ. 45-48: Տես նաև «Սովետական Հայաստան», 24.06.1988:*

տավորներին կոչ արեց վերադառնալ աշխատատեղեր և վերականգնել նորմալ աշխատանքային ռիթմը: Նստաշրջանի անունից հեռագիր ուղարկվեց Մ. Գորբաչովին՝ հույս ունենալով, որ Լեռնային Ղարաբաղի հարցը արդարացի լուծում կստանա[28]: Չնայած մարզխորհրդի նստաշրջանի բարձրագույն իշխանություններին առաջարկվեց ամենահարմար տարբերակը, որը չէր հակասում ԽՍՀՄ սահմանադրությանը, այդուհանդերձ, Մոսկվան մնաց անդրդվելի և չցանկացավ արձագանքել արցախահայության պահանջին: Եթե ընդունվեր արցախահայության առաջարկը, և մարզը ժամանակավորապես դուրս բերվեր Ադրբեջանական ԽՍՀ կազմից ու հանձնվեր ԽՍՀՄ կառավարության տնօրինությանը, թերևս, հնարավոր կլիներ խուսափել հետագայում տեղի ունեցած հազարավոր զոհերից և նյութական զգալի վնասներից: Ինչպես սպասվում էր, մարզխորհրդի այդ որոշումից Ադրբեջանի իշխանությունները ավելի կատաղեցին: Հանրապետության լրատվամիջոցները աջ ու ձախ վարկաբեկում էին Շարժումը, նրա ղեկավարներին, իսկ համապատասխան մարմինները նրանց դեմ քրեական գործեր էին հարուցում:

Դեռևս 1988թ. ապրիլի կեսերին ԽՍՀՄ հասարակական գիտությունների ակադեմիայում տեղի ունեցած սեմինարում ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարի անդամ Ա.Յակովլևը հայտարարել էր, թե ԽՄԿԿ 19-րդ կուսկոնֆերանսից հետո պետք է մասնակիորեն լուծվի Լեռնային Ղարաբաղի հարցը[29]: Սակայն կոնֆերանսի որոշման մեջ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ ասված անորոշ, խաբուսիկ հանձնարարականները միայն մարզում սրեցին վիճակը: Եվ դա ստիպեց անհապաղ նոր պատվիրակություն ուղարկել Մոսկվա[30]: Պատվիրակությանը հունիսի 28-ին ընդունեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ա.Գրոմիկոն: Նա պատվիրակությանը հասկացրեց, որ գործող Սահմանադրությամբ առանց Ադրբեջանական ԽՍՀ համաձայնության հնարավոր չէ ԼՂԻՄ-ը դուրս բերել նրա կազմից: Ա.Գրոմիկոն նաև նշեց, որ Ղարաբաղի հիմնահարցը ուսումնասիրվում է և կքննարկվի Գերագույն խորհրդի նախագահության առաջիկայում տեղի ունենալիք նիստում: Երբ Արցախում հայտնի

[28] *«Սովետական Հայաստան», 23.06.1988:*
[29] *«Սովետական Հայաստան», 23.06.1988:*
[30] *Պատվիրակության կազմը՝ Հ. Պողոսյան, Բ. Մալկով, Ռ. Բալայան, Ա. Աղաջանյան, Ա. Գրիգորյան:*

դարձավ, որ հուլիսի 18-ին տեղի ունենալիք ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում պետք է քննարկվի ԼՂԻՄ-ի հիմնահարցը, մարզի աշխատավորների ճնշման տակ հուլիսի 12-ին հրավիրվեց ԼՂԻՄ-ի մարզխորհրդի 20-րդ գումարման յոթերորդ արտահերթ նստաշրջանը: Այն քննարկեց «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի՝ Ադրբեջանական ՍՍՀ կազմից դուրս գալու հռչակման մասին» հարցը: Ելույթ ունեցած 13 հոգին էլ առաջարկեցին մարզը դուրս բերել Ադրբեջանի կազմից[31]: Ի նկատի ունենալով ստեղծված վիճակը, Արցախի բնակչության ճնշող մեծամասնության պետական կամքը և ելնելով ազգերի ինքնորոշման իրավունքի մասին սկզբունքից՝ մարզային խորհուրդը որոշեց «Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի դուրս գալու» մասին: Եվ, ի նկատի ունենալով, որ Ադրբեջանական ԽՍՀ-ի հետ կապերը գործնականում խզված են, մարզի համար ընդունելի է համարվում «Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի 1988 թվականի հունիսի 15-ի նստաշրջանի որոշման իրագործումը»[32]: Մարզխորհրդի նստաշրջանը մարզային խորհրդի գործկոմին հանձնարարում է «սահմանված կարգով միջնորդություն հարուցել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Արցախի Հայկական Ինքնավար մարզ վերանվանելու մասին»[33]:

Մարզխորհրդի նստաշրջանն ավարտվելուց հետո պատգամավորները շտապում են Հաղթանակի հրապարակ, որտեղ հազարավոր մարդիկ սպասում էին նրանց: Այստեղ էլ իմանում են, որ Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդը բեկանել է ԼՂԻՄ մարզխորհրդի հենց նոր ընդունած որոշումը: Զարմանալին այն է, որ ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից դուրս բերելու հարցը օրակարգ էր մտցվել նստաշրջանի ընթացքում պատգամավորների պահանջով: Ինչպե՞ս կարող էին Բաքվում նախազգալ և ձեռքի տակ որոշում չունենալով՝ այն բեկանել, մանավանդ, որ ընդունված որոշումն ու արձանագրությունը Բաքու չեն ուղարկվել[34]:

Հետաքրքիր է նաև այն, որ Ե.Լիգաչովը Մոսկվայից անմիջապես զանգել էր Հենրիխ Պողոսյանին ու պահանջել հրավիրել

[31] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 265, թ. 37-64:*
[32] *Նույն տեղում, թ. 65-67*
[33] *Նույն տեղում:*
[34] **Арутюнян В. Б.,** *նշվ. աշխ., էջ 118:*

կուսմարզկոմի բյուրո և ըստ արժանվույն գնահատական տալ մարզխորհրդի որոշմանը: Մարզկոմի բյուրոն, հուլիսի 13-ին քննության առնելով Ե.Լիգաչովի պահանջը, արձանագրում է, որ մարզկոմի բյուրոն բազմիցս է հայտարարել, թե համամիտ է մարզի բնակչության և կոմունիստների պահանջի հետ ու պաշտպանում է ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու պահանջը[35]: Ահա այսպիսինն էր վիճակը Արցախ-Ղարաբաղում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988թ. հուլիսի 18-ի նիստի նախօրյակին:

* * *

«Ղարաբաղ» կոմիտեն արգելվելուց հետո Հայաստանում համաժողովրդական պայքարը սուր բնույթ ընդունեց: Հանրապետությունում հասունանում էր Մոսկվային չենթարկվելու գաղափարը: Այդ ժամանակ Հայաստանի ղեկավարությունը շարունակում էր մնալ հակառակ ճամբարում: Կարեն Դեմիրճյանը ճգնում էր բնակչությանը համոզել, թե «միտինգային մեթոդներով» դժվարին հարցերի որոշումը հնարավոր չէ[36]: Մայրաքաղաքի երկնքում սավառնում էին ռազմական ուղղաթիռները՝ փորձելով բնակչության վրա ահ ու սարսափ տարածել: «Սովետական Հայաստան» թերթի մարտի 23-ի «Կուսակազմակերպությունների խնդիրը» առաջնորդողում հրահանգվում էր կուսակցական կազմակերպությունները «հաստատակամորեն, վճռականորեն հակադրվեն» հասարակական ուժերին: Ինչպես երևում է, Հայկոմկուսի ղեկավարությունը չէր կարողանում սթափ գնահատել հանրապետությունում ստեղծված իրավիճակը և հայ ժողովրդի տրամադրվածությունը: Մինչդեռ 1988թ. փետրվար-մարտին տեղի ունեցած իրադարձություններից հետո բավականին թվով կուսակցականներ ու պետական մարմինների ղեկավար այրեր շրջադարձ էին կատարել դեպի ժողովրդական պայքարը, աջակցում էին «Ղարաբաղ» կոմիտեին և գտնում, որ խորհրդային հասարակարգը գտնվում է խոր ճգնաժամի մեջ ու այլևս նահանջի ճանապարհ չկա: Հայաստանում, մանավանդ Երևանում, տեղի ունեցող հանրահավաքներում և միտինգներում կոչեր էին հնչում շարունակել պայքարը և Արցախը դուրս բերել Ադրբեջանի կազմից ու վերամիավորել Հայաստանի հետ: «Ղարաբաղ» կոմիտեն,

[35] *Նույն տեղում, էջ 117:*
[36] *«Սովետական Հայաստան», 24.03.1988:*

չնայած արգելվել էր, շարունակում էր գործել: Կոմիտեի համալսարանի բաժանմունքը, դիմելով հայ ժողովրդին, կոչ էր անում «ապրիլի 5-ից սկսել համազգային գործադուլ-դասադուլ և շարունակել այնքան ժամանակ, քանի դեռ չի բավարարվել Ղարաբաղի արդար պահանջը»: Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորներից պահանջվում էր բարձրացնել Լեռնային Ղարաբաղի հարցը, հրավիրել նստաշրջան և բավարարել «ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի խնդրանքը՝ ընդունել ԼՂԻՄ-ը ՀՍՍՀ կազմում»[37]: Հայաստանի ՊԱԿ-ի մի հաղորդումից իմանում ենք, որ մարտի 26-ի համընդհանուր հանրահավաքը տեղի չունենալուց հետո կոմիտեի որոշ անդամների ռազմավարության մեջ տեղի էին ունեցել փոփոխություններ: Կոմիտեի անդամներից ոմանք գտնում էին, որ պետք է հրաժարվել հանրահավաքներից, ցույցերից և գործադուլներից, որովհետև իբր դրանք վնասում են «Լեռնային Ղարաբաղի հարցի արդյունավետ քննարկմանը»: Ըստ այդ փաստաթղթի՝ նման առաջարկություն մտցրել էր շարժման առաջնորդներից Իգոր Մուրադյանը: Այդ փաստաթղթից նաև իմանում ենք, որ այն ժամանակ առաջ էր քաշվել Ղարաբաղյան հիմնահարցի լուծման երեք տարբերակ. 1. ԼՂԻՄ-ի և Հայկական ԽՍՀ միավորում, 2. ԼՂԻՄ-ի միավորում ՌԽՖՍՀ-ին, 3. ԼՂԻՄ-ի կարգավիճակի փոփոխում՝ այն դարձնելով ինքնավար հանրապետություն Ադրբեջանի կազմում: Ակնհայտ է, շարունակում է փաստաթուղթը, որ հանրապետության աշխատավորական կոլեկտիվները, մտավորականությունը, ուսանողները վստահ են, որ կիրագործվի առաջին տարբերակը: Հայության մեջ տարածվել էր այն գաղափարը, որ եթե ընդունվի երրորդ տարբերակը, ապա պայքարը կշարունակվի «մինչև հաղթանակ»[38]:

Հայաստանի իշխանությունները չէին հրաժարվում Շարժման ղեկավարների նկատմամբ բռնություններ գործադրելուց: Այսպես՝ 1988թ. մայիսյան շքերթի ժամանակ ձերբակալվեցին շարժման ութ մասնակիցներ: Այդ և այլ իրադարձություններ հանրապետությունում վիճակը ավելի սրեցին:

Այդ օրերին լուր տարածվեց, թե Բաքվից Երևան է գալիս հատուկ տուրիստական գնացք՝ բարեկամական ժեստով: Հազարավոր ցուցարարներ, հավաքվելով ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահության շենքի մոտ, հանրապետության իշ-

[37] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 87, գ. 18, թ. 66:*
[38] *Նույն տեղում, թ. 58-59:*

խանություններից պահանջեցին չընդունել այդ գնացքը[39]: Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը վստահեցրեց ցուցարարներին, որ գնացքը Երևան չի մտնի[40]: Իրոք, այն Թբիլիսիից հետ վերադարձավ:

1988թ. մայիսի 12-ին տեղի ունեցած հանրահավաքում Իգոր Մուրադյանը հայտարարեց, թե «ղարաբաղցիները ցուցաբերում են զանգվածային անհնազանդություն և ոչ մի հարցում չեն ենթարկվում Ադրբեջանին: Խաղաղ պայքարի բոլոր միջոցները սպառվել են: Հաջորդ էտապը, հավանական է, կլինի զենքի դիմել»[41]: Մայիսի 17-ից Երևանում հանրահավաքները տեղի էին ունենում խառն իրավիճակում, որը կապված էր «Ղարաբաղ» կոմիտեի ներսում տեղի ունեցած խմորումների հետ: Կոմիտեի անդամների միջև գոյություն ունեցած տարաձայնությունները հնարավորություն չտվեցին ունենալ մոտակա գործողությունների քաղաքական ծրագիր: Բանն այն է, որ նրա անդամները չունեին նույն ձգտումներն ու նպատակները: Մարտի վերջից և ապրիլի սկզբից սկսած աշխուժանում էին կոմիտեի տեղական բաժանմունքները, որոնցից մի քանիսը նույնիսկ ձգտում էին գործել անջատ: Ավելին, կոմիտեի ղեկավար Իգոր Մուրադյանի առաջ քաշած խնդիրները երբեմն չէին պաշտպանվում կոմիտեի որոշ անդամների կողմից: Բացի այդ, կոմիտեն այդպես էլ չկարողացավ ունենալ քաղաքական գործողությունների պլան: Եվ երբ հրապարակվեց կոմիտեի լուծարման վերաբերյալ Հայաստանի Գերագույն խորհրդի 1988թ. մարտի 24-ի որոշումը, կոմիտեականների միջև տարաձայնություններն ավելի մեծացան: Իսկ մայիսի երկրորդ կեսին տեղի ունեցած հանրահավաքներում ավելի էին բորբոքվում զգացմունքները: Հարթակից անգամ շեշտվում էր, որ նախկին կոմիտեականներն այլևս ի զորու չեն ղեկավարել «ժողովրդական հեղափոխությունը»: Ըստ երևույթի, Իգոր Մուրադյանը կատարել էր իր պատմական դերը, մանավանդ Շարժմանը կազմակերպչական բնույթ տալու գործում: Նոր խնդիրները պահանջում էին ավելի «լայն քաղաքական մտահորիզոն ունեցող ղեկավարների»[42]: Սակայն ակնհայտ էր մի պարզ ճշմարտություն. կոմիտեի նորեկ անդամները հիմնականում ձգտում էին

[39] *Նույն տեղում, թ. 66:*
[40] *Նույն տեղում, թ. 67:*
[41] *Նույն տեղում, թ. 81-85:*
[42] **Григорян В.**, *նշվ. աշխ., էջ 132:*

հասնել իշխանության: Հետագայում պարզվեց, որ Ղարաբաղի հիմնախնդիրը նրանցից շատերին չէր հետաքրքրում և այն օգտագործվում էր իրենց նպատակներին հասնելու համար: Մինչդեռ ղարաբաղյան հարցում Իգոր Մուրադյանը անզիջում էր: Ահա թե ինչու նրան և նրա համախոհներին կոմիտեից հեռացնելը դարձել էր նորեկների հիմնական խնդիրը: Իգոր Մուրադյանը հայտարարեց, թե ոչ ոք չի կարող վախեցնել ղարաբաղցիներին և ժողովրդական շարժումը կշարունակվի մինչև հաղթանակ: Նա նաև նշեց, որ Լեռնային Ղարաբաղը փաստորեն դուրս է եկել Ադրբեջանի կազմից և այլևս ոչ մի վերադարձ չի լինի[43]: Այդ հանրահավաքում նորեկ կոմիտեականներից ոմանք խիստ բացասական արտահայտվեցին Հայաստանի կուսակցական և պետական մարմինների ղեկավարների հասցեին և կոչ արեցին նրանց բոլորին հեռացնել պաշտոններից: Սակայն Իգոր Մուրադյանը նշեց, թե դա ճիշտ չի լինի, և պահանջեց հանրապետության ղեկավարների նկատմամբ չցուցաբերել նիհիլիզմ: «Կանցնի որոշ ժամանակ,– ավարտեց իր խոսքը,– և մենք ձեզ հետ կհասկանանք, որ այս վճռական պահին մեր ղեկավարները մեր ժողովրդին բառացիորեն փրկել են գնդակից: Քաղաք մտած տասնյակ հազարավոր զինվորները եկել են հայ ժողովրդի համար բաղնիք սարքելու: Սակայն այն կանխվել է: Ամենից առաջ ի շնորհիվ մեզ, նաև՝ Դեմիրճյանի»[44]: Իգոր Մուրադյանի այդ բացատրությունը, ըստ էության, պահի գնահատականն էր, որը հանրահավաքի մասնակիցները ճիշտ չընկալեցին, իսկ նորաթուխ կոմիտեականներն այն օգտագործեցին նրա դեմ: Դա կատարվեց մայիսի 18-ին արդեն Թատերական հրապարակում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ: Այդ հանրահավաքի մասին նախօրոք գիտեին բոլոր շրջկոմների և քաղկոմների աշխատողները, Հայկոմկուսի Կենտկոմի անդամները, հիմնարկ-ձեռնարկությունների տնօրենները: Ձեռնարկությունների ղեկավարներն իրենց հերթին աշխատողներին հորդորում էին դադարեցնել աշխատանքները և մասնակցել հանրահավաքին: Պարզվում է, որ հանրապետության ղեկավարությունը բավականին ուշացումով որոշել էր նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը և ղեկավարել ժողովրդական պայքարը: Սակայն դա նրանց չհաջողվեց: Մայիսի 19-ի հանրահավաքում նորեկները հայտարարեցին, թե հանրապետության ղեկավարները չեն եղել ժողովրդի հետ և չեն լինի, քանի որ նրանք «կաշառված» են: Ապա սպառնացին, թե «կոմիտեի մեծամասնությունը կթողնի ու կհեռանա և ամբողջ պատասխանատվությունը կընկնի Իգոր Մուրադյանի վրա»[45]: Նրանց այդ «վերջնագիրը» հավաքվածների կողմից ընդունվեց հավանությամբ: Հաջորդ օրը՝ մայիսի 20-ին, Համբարձում Գալստյանի, Վազգեն Մանուկյանի, Սամվել Գևորգյանի, Սամսոն Ղազարյանի, Վանո Սիրադեղյանի, Աշոտ Մանուչարյանի և Ալեքսանդր Հակոբյանի անունից տարածվեց մի հայտարարություն, որում Իգոր Մուրադյանը մեղադրվում էր «ինքնագլուխ» գործունեության մեջ, և նրանից պահանջվում էր վերջ տալ «միանձնյա կարգադրություններին»[46]: Պարզապես առաջ եկած հակասությունների հիմնական պատճառն այն էր, որ նորեկ կոմիտեականները ձգտում էին Արցախյան շարժումը վերագրել իրենց, որպեսզի կարողանան հասնել իշխանության: Ահա և բոլորը: Այլ տեսակետը, ըստ երևույթին, բացառվում է:

«Ղարաբաղ» կոմիտեն պառակտելու և նրա հիմնական ղեկավարներին ապարեզից հեռացնելու գործում պակաս դեր չխաղաց նաև Հայաստանի ՊԱԿ-ը: Դա է ապացուցում նրա նախագահ Մ. Յուզբաշյանի ստորագրությամբ 1988թ. հուլիսի 14-ին Հայկոմկուսի Կենտկոմ ուղարկված գաղտնի տեղեկագիրը, որտեղ ասված է, թե «Ղարաբաղ» կոմիտեում գլուխ է բարձրացրել «երկրորդ սերունդը», որը, «նեղելով առաջին սերնդին», «գրավել է նրա տեղը»: Նա չէր թաքցնում, որ երկու սերունդները գործում էին միասին և «հանրապետության ՊԱԿ-ը գործադրել է որոշ ջանքեր, որպեսզի նրանց միջև սեպ խրի և քայքայի կոմիտեն»: ՊԱԿ-ի նախագահը նաև հայտնում է, որ իրենց մտահղացումն իրականացվել է. Իգոր Մուրադյանը թույլ է տվել որոշ կոպտություններ և կոմիտեի անդամների նկատմամբ գործադրել է ուժ, որի պատճառով «նա տառացիորեն շպրտվել է բեմահարթակից»: Ըստ Մ.Յուզբաշյանի՝ «առաջին սերունդը» հասկանում էր «երկրորդ սերնդի» վտանգավոր նպատակները և «պատասխանատվությունը՝ նրանց առաջ քաշելու գործում»: ՊԱԿ-ի նախագահը համոզված էր, որ կոմիտեի «երկրորդ սերունդն» ավելի վտանգավոր է[47]:

---

[43] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 87, գ. 18, թ. 176:*
[44] *Նույն տեղում, թ. 186 -187:*
[45] *Նույն տեղում, գ. 19, թ. 13-14:*
[46] *Նույն տեղում, գ. 14, թ. 100:*
[47] *Նույն տեղում, գ. 15, թ. 36-37:*

Եվ այսպես՝ «Ղարաբաղ» կոմիտեից դուրս մղվեց «առաջին սերունդը», այսինքն՝ Իգոր Մուրադյանը և նրա ընկերները, ովքեր դարաբաղյան շարժման գլուխ էին կանգնել հենց սկզբից: Ըստ Մ. Յուզբաշյանի՝ նրանք հակաօրինական գործողություններ չեն կատարել և վտանգավոր չէին: Հայկոմկուսի Կենտկոմի շենքի դիմաց մայիսի 31-ին տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ հայտարարվեց, որ «Ղարաբաղ» կոմիտեն լրացվել է նոր անդամներով՝ Վազգեն Մանուկյան, Համբարձում Գալստյան, Աշոտ Մանուչարյան, Սամսոն Ղազարյան, Սամվել Գևորգյան և Վանո Սիրադեղյան: Նաև ասվեց, որ Իգոր Մուրադյանը կոմիտեի մեջ չի մտնում, իբր նա իր «չմտածված գործողություններով պառակտում է առաջ բերել Շարժման շարքերում»[48]:

1988թ. մայիսի 21-ին տեղի ունեցած Հայկոմկուսի Կենտկոմի պլենումը Կարեն Դեմիրճյանին ազատեց Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի և Կենտկոմի բյուրոյի անդամի պարտականություններից: Պլենումը ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընտրեց Սուրեն Հարությունյանին, որը, հունիսի 1-ին ելույթ ունենալով՝ Թատերական հրապարակում տեղի ունեցած բազմահազարանոց հանրահավաքում, բնակչությանը կոչ արեց թույլ չտալ չմտածված գործողություններ[49]:

Սակայն հանրահավաքներն ու ցույցերը շարունակվում էին բոլոր քաղաքներում և խոշոր բնակավայրերում, և ամենուր հնչում էին համընդհանուր գործադուլի դիմելու կոչեր[50]:

Այդ օրերին պայքարի ձևերից էին նստացույցը, դասադուլը, հացադուլը, գործադուլը, շքերթները և այլն: Թատերական հրապարակն ամեն օր լեցուն էր մարդկանցով, որտեղ քննարկվում էին Շարժման հետ կապված զանազան հարցեր, պատրաստում նամակ-բողոքներ, ձևակերպում հեռագրեր, ցուցապաստառներ և այլն: Փաստորեն, Թատերական հրապարակը դարձել էր գործունեության ասպարեզ: Ազատության և անկախության հարցի քննարկումը հետզհետե դառնում էր Թատերական հրապարակում քննարկվող կարևոր հարցերից մեկը: Ղարաբաղն ու անկախությունն աստիճանաբար կարծր նստվածք էին տալիս մարդկանց գիտակցության մեջ և ընդգրկում շատերին: Թատերական հրապարակում կոչեր էին հնչում սննդամթերքներով և դրամա-

[48] *Նույն տեղում:*
[49] «Խորհրդային Հայաստան», 22.05.1988:
[50] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 19, թ. 98, գ. 14, թ. 94-96:*

կան միջոցներով օգնել արցախցիներին: Հանգանակությանը ակտիվորեն մասնակցում էին ինչպես հայերը, այնպես էլ եզդիները, քրդերը, ռուսները, հույները և մյուս էթնիկական փոքրամասնությունները: Հայաստանի իշխանությունները միջոցառումներ էին ձեռնարկում Արցախում հեռուստահաղորդումների որակի բարձրացման, պատմական հուշարձանների վերականգնման, ավտոճանապարհների շինարարության և այլ հարցերի լուծման գործում[51]:

1988թ. մայիսի վերջին և հունիսի սկզբին Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները առնչվում էին գործադուլներն ու ցույցերը կանխելու և հունիսի 15-ին տեղի ունենալիք Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանին նախապատրաստելու հարցի հետ:

Մայիսի 30-ի հանրահավաքում ելույթ ունեցողները հանրապետության մի շարք պաշտոնյաների մեղադրում են ԼՂԻՄ մարզխորհրդի 1988թ. փետրվարի 20-ի որոշմանը պատասխան չտալու համար: Նրանք կոչ են անում որպեսզի հանրապետության Գերագույն խորհրդի առաջիկա նստաշրջանը դրական որոշում ընդունի Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ[52]: Այդ կոչի հիման վրա Ղարաբաղյան շարժման նվիրյալները հունիսի 4-ից սկսում են ստորագրահավաք՝ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորներից պահանջելով առաջիկա նստաշրջանում պաշտպանել ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումը: Միայն հունիսի 4-ին և 5-ին ստորագրել և համաձայնություն էին տվել 100 պատգամավոր[53]: Այդ օրերին տարածվել էր բնակչությանն ուղղված՝ Շարժման ակտիվիստների դիմումը, որում կոչ էր արվում պատգամավորներից պահանջել պաշտպանել ԼՂԻՄ մարզխորհրդի որոշումը:

1988թ. հունիսի 12-ին Թատերական հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում, որին ՊԱԿ-ի տվյալներով մասնակցում էին շուրջ 70 հազար մարդ, Սիլվա Կապուտիկյանը ելույթ ունենալով, հայտարարեց, որ եթե ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը չպաշտպանի ԼՂԻՄ մարզխորհրդի 1988թ. փետրվարի 20-ի որոշումը, ինքը կմիանա նստացույցի մասնակիցներին, իսկ Իգոր Մուրադյանը կոչ արեց ստեղծել «Ղարաբաղի

[51] *Նույն տեղում, թ. 1-3:*
[52] *Նույն տեղում, թ. 144-146:*
[53] *Նույն տեղում, թ. 178:*

փրկության» կազմակերպություն՝ հայկական սփյուռքի մասնակցությամբ: Հունիսի 13-ի օրվա երկրորդ կեսին Թատերական հրապարակում հայտարարվեց, որ Երևանի և հանրապետության այլ բնակավայրերի տասնյակ ձեռնարկությունների աշխատավորներ դիմել են գործադուլի: Կանգ էր առել Երևանի ամբողջ տրանսպորտը: Երևանի և մոտակա բնակավայրերի հազարավոր բնակիչներ շտապում էին Թատերական հրապարակ: Միտինգավորների առաջ ելույթ ունենալով՝ Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը նրանց հավաստիացրեց, որ հանրապետության աշխատավորների պահանջը կկատարվի, և բոլորին կոչ արեց վերադառնալ աշխատատեղեր: Չնայած շատերը հեռացան Թատերական հրապարակից, սակայն նստացույցերը շարունակվում էին թե՛ այնտեղ, թե՛ Գերագույն խորհրդի դիմաց, թե՛ Կիրովականում և թե՛ Լենինականում: Հացադուլավորների 9 հոգուց չորսը հրաժարվում էին սննդից և նույնիսկ հայտարարեցին, թե ԼՂԻՄ-ի մարզխորհրդի որոշումը չընդունվելու դեպքում կդիմեն ինքնահրկիզման[54]:

Հունիսի 14-ին արդեն չէին աշխատում Երևանի բազմաթիվ խոշոր ձեռնարկություններ: Այդ նույն երեկոյան Թատերական հրապարակում տեղի ունեցած հարյուր հազարավոր միտինգավորների առաջ հանդես գալով՝ Լևոն Տեր-Պետրոսյանը ՀԽՍՀ Գերագույն խորհրդին առաջարկեց անմիջապես դիմել ԽՍՀՄ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդներին՝ դրականորեն լուծել Ղարաբաղյան հիմնախնդիրը[55]:

1988թ. հունիսի 15-ին տեղի ունեցած Հայկական ԽՍՀ 11-րդ գումարման Գերագույն խորհրդի 7-րդ նստաշրջանը: Քննարկելով «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմի մեջ միավորելու վերաբերյալ Ադրբեջանական ՍՍՀ և Հայկական ՍՍՀ Գերագույն խորհուրդների առջև միջնորդելու մասին» Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի որոշման մասին» հարցը, ինչպես նշվել է, որոշեց «համաձայնություն տալ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ՍՍՀ-ի կազմի մեջ մտնելուն»: Միևնույն ժամանակ ԽՍՀՄ Գերագույն խորհրդին խնդրվում էր

[54] *Նույն տեղում, թ. 205:*
[55] *Նույն տեղում, թ. 221:*

քննարկել և դրական լուծել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմի մեջ անցնելու հարցը: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը, դիմելով Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին, հույս էր հայտնում, որ նման որոշումը չի խախտի երկու հանրապետությունների ավանդական բարիդրացիական հարաբերությունները և ըմբռնումով կընկալվի ադրբեջանական ժողովրդի կողմից[56]:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը միաձայն ընդունեց որոշում, որով դատապարտեց սումգայիթյան ոճրագործությունը՝ խոր ցավակցություն հայտնելով զոհվածների ընտանիքներին ու հարազատներին: Թե՛ Հայաստանում և թե՛ Արցախում ՀԽՍՀ Գերագույն խորհրդի այդ որոշումներն ընդունվեցին ցնծությամբ:

ԽՄԿԿ 19-րդ համամիութենական կոնֆերանսի ամբիոնից հունիսի 29-ին Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը սխալ համարեց ստեղծված վիճակը բացատրել միայն «ծայրահեղական խմբերի» գործողություններով: Նա առաջարկեց ճշտորեն լուծել ազգամիջյան հարաբերությունների խնդիրը[57]: Այդուհանդերձ, կուսակցության կոնֆերանսը չարդարացրեց հայ ժողովրդի սպասումները:

Հայ ժողովրդի պայքարի սկզբից, թերևս, վիճակը երբեք այնքան լարված չի եղել, որքան 1988թ. հուլիսի սկզբին: Այդ օրերին տեղի ունեցած իրադարձություններից մեկ ամիս անց՝ օգոստոսի 14-ին, հանրապետության ՊԱԿ-ի մի տեղեկագրում կարդում ենք, որ որոշվել էր Երևան տեղափոխել նոր զորամասեր, որի համար պահանջվում էր 118 ինքնաթիռ: Դա նշանակում էր օդանավակայանը որոշ ժամանակով փակել քաղաքացիական ուղևորների համար: Կոմիտեականների կոչով անհանգստացած հարյուրավոր մարդիկ Թատերական հրապարակից ավտոբուսներով մեկնում են «Զվարթնոց» օդանավակայան՝ իբր իմանալու ճշմարտությունը: Նրանք պատրաստվում էին վերադառնալ, երբ զինվորականները գրոհում են օդանավակայանի վրա: Դրա հետևանքով զոհվում են երկու հոգի, որոնցից մեկը՝ զինվորների գնդակից, իսկ մյուսը՝ սրտի կաթվածից: Տասնյակ մարդիկ վիրավորվում են: Իմիջիայլոց, դեպքերին ականատես մի լենինգրադցի, պատմելով «զինվորների

[56] *«Սովետական Հայաստան», 16.06.1988:*
[57] *Նույն տեղում, 30.06.1988:*

անխղճության մասին», կարծիք է հայտնել, որ ՊԱԿ-ն անմասն չէր այդ գործողություններից[58]:

Հուլիսի 4-ից Երևանում սկսեց ընդհանուր գործադուլ: Այդ օրերին «Գարուն» կարի արտադրական միավորման Մասիսի մասնաճյուղում թունավորվեցին 51 աշխատող: Լուր էր տարածվել, թե իբր բանվորներին թունավորել էին ադրբեջանցիները: Սակայն ԽՍՀՄ առողջապահության նախարարության հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության հանձնաժողովի հետ միասին պարզեցին, որ թունավորումը մարդկային գործոնի հետևանք չէր[59]: Այդուհանդերձ, ինքը փաստը նոր թափ էր հաղորդել գործադուլային շարժմանը:

1988թ. հուլիսի 5-ին Թատերական հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում Լևոն Տեր-Պետրոսյանը կոչ արեց հուլիսի 6-ից դուրս չգալ տներից և Երևանը հայտարարել «մեռյալ» քաղաք[60], իսկ հուլիսի 6-ին տեղի ունեցած հանրահավաքում հայտարարեց, թե հանրապետությունում գործադուլն ու ապստամբությունն ընդունել են համազգային բնույթ, որոնք «միակ միջոցն են, որոնց օգնությամբ կարելի է հասնել նրան, որ բանակը դուրս բերվի քաղաքից, և կատարվի մեր պահանջները»[61]:

Հայաստանում օր օրի վիճակն ավելի էր ծանրանում: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն հուլիսի 7-ին հանդես գալով հայկական հեռուստատեսությամբ, նախ ցավ հայտնեց «Զվարթնոց» օդանավակայանի շրջակայքում տեղի ունեցածի առթիվ, ապա շեշտեց, որ արցախահայության պահանջը սահմանադրական է և օրինական: Հայոց կաթողիկոսը հույս է հայտնում, որ Ղարաբաղյան հիմնախնդրի «արդար լուծումը պիտի շարունակվի հետապնդվել, մանավանդ, որ կենտրոնական վերին մարմինները ևս լրջորեն մտահոգված են և ցանկանում են նպաստել հարցի լուծման, սահմանադրության նախատեսումների ու ժողովուրդների բարեկամության ուխտի հիմքի վրա»: Նա կոչ էր անում չմոռանալ «ժողովրդի և հայրենիքի գերագույն շահերը», խնայել Արարատին[62]: Իսկ Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը, հուլիսի 9-ին հանդես գալով, զգուշացրեց, որ չդադարող հանրահավաքները, գործադուլները ու սպառնալիքները ջլատում են հանրապետության նորմալ կենսագործունեությունը: Շեշտեց, որ հանդես են եկել մարդիկ, որոնք փորձում են «էլ ավելի բորբոքել իրադրությունը, հրահրել գործադուլներ, հասարակական կարգուկանոնի խախտումներ»: Նա պնդում էր, որ «անպատասխանատվությունը, հույզերի շիկացումը, հակաօրինական գործողությունները... Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի լուծման ուղի չեն: Դրանք... հղի են ողբերգական հետևանքներով», և «բարոյաքաղաքական խոշոր վնաս են հասցնում հանրապետությանը»: Նա կրկնեց, որ «Լեռնային Ղարաբաղի հարցը համակողմանիորեն ուսումնասիրվում է կուսակցության Կենտրոնական կոմիտեում, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունում» և որ այդ չափազանց բարդ խնդիրը շուտով հստակ քննության կառնվի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում: Սուրեն Հարությունյանը նաև նշեց, որ հանրապետությունում կուտակվել են բազում խնդիրներ, այդ թվում՝ Սումգայիթից բռնագաղթված 800 հայ ընտանիքների հոգսերը: Դիմելով հանրապետության բնակչությանը՝ նա կոչ արեց «օգնել՝ կայունացնելու իրադրությունը հանրապետությունում, վերադառնալ աշխատատեղերը, թույլ չտալ խախտումներ աշխատանքում, չենթարկվել պրովակացիաների, հակահարված հասցնել նրանց, ովքեր խաղում են ժողովրդի վսեմ զգացմունքների հետ, մարդկանց հրահրում անխոհեմ ու վտանգավոր գործողությունների»[63]:

Հայաստանում շարունակվում էր համընդհանուր գործադուլը: Հուլիսի 11-ին Մատենադարանի դիմաց տեղի ունեցած հանրահավաքում Լևոն Տեր-Պետրոսյանը կոչ արեց արցախահայության հերոսական պայքարը պաշտպանելու համար Հայաստանում չդադարեցնել գործադուլը: Նա շեշտեց. «Մոսկվայի առաջ երկու ուղի կա՝ կա՛մ Ղարաբաղի հիմնահարցը լուծել դրականորեն, կա՛մ էլ այն ճնշել տանկերով»: Լևոն Տեր-Պետրոսյանը «Ղարաբաղ» կոմիտեի անունից վճռականորեն հայտարարեց, որ եթե հուլիսի 18-ին որոշում չընդունվի Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու մասին, ապա գործադուլը կշարունակվի և ԼՂԻՄ-ի օրինակով կհրավիրվի Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջան, ու Մոսկվայի կամքին հակառակ՝ Ղարաբաղը կհայ-

[58] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 87, գ. 15, թ. 30:*
[59] *«Խորհրդային Հայաստան», 03.07.1988:*
[60] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 87, գ. 21, թ. 69:*
[61] *Նույն տեղում, թ. 89:*
[62] *«Սովետական Հայաստան», 10.07.1988:*

[63] *Նույն տեղում, 10.07.1988:*

տարարվի Հայաստանի կազմում[64]: Հուլիսի 14-ին ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ղեկավարության ստորագրությամբ դիմում հղվեց ԽՍՀՄ և ՀԽՍՀ ղեկավարությանը, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահությանը և միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիաներին, որտեղ նշված էր, որ Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը խորապես անհանգստացած է ԼՂԻՄ-ում տեղի ունեցող ողբերգական իրադարձություններից: Ազգամիջյան ընդհարումներին վերջ տալու միակ ուղին, գտնում էին հայ գիտնականները, ԼՂԻՄ խնդրի քաղաքական լուծումն է: Խոսելով ԼՂԻՄ-ում մարդու իրավունքների և սահմանադրության կոպիտ խախտումների մասին դիմումի հեղինակները խորհրդային իշխանությանը հիշեցնում էին, որ վտանգի տակ է ոչ միայն ԼՂԻՄ բնակչության կյանքը, այլև խորհրդային պետության բարոյական հեղինակությունը: Հայտնելով իրենց բողոքը, ԼՂԻՄ-ում տեղի ունեցող իրադարձությունները կենտրոնական լրատվամիջոցների կողմից միակողմանի լուսաբանելու վերաբերյալ պահանջում էին վերջ տալ այդ երևույթին[65]:

Այսպիսով 1988թ. կեսերին, երբ մոտենում էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստի օրը, Արցախում և Հայաստանում մթնոլորտը շիկացած էր և պայթյունավտանգ: Հենց դա ի նկատի ուներ Լևոն Տեր-Պետրոսյանը, երբ հուլիսի 16-ին կայացած հանրահավաքում հայտարարեց, թե «աշխարհը զարմացած է, որ մեզ հաջողվել է այսպիսի երկարատև և կազմակերպված համազգային գործադուլ կազմակերպել: Գործադուլի քաղաքական նպատակն այն է, որ հայ ժողովուրդը լի է վճռականությամբ և այլևս չի կարող համաձայնել Ղարաբաղի հիմնահարցի դոփման հետ: Համոզված ենք, որ գործադուլները դրական կազդեն ԽՍՀՄ ԳԽ նախագահության հուլիսի 18-ի նիստի որոշման վրա...»[66]:

[64] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 87, գ. 21, թ. 192:*
[65] *Նույն տեղում, գ. 127, գ. 698, թ. 102-103:*
[66] *Նույն տեղում, գ. 87, գ. 22, թ. 10-11:*

2. ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ 1988Թ. ՀՈՒԼԻՍԻ 18-Ի ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1988թ. հուլիսի 18-ին տեղի ունեցած ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստը քննարկեց «Լեռնային Ղարաբաղի մասին Հայկական ՍՍՀ և Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն խորհուրդների որոշումների մասին» հարցը: Նիստը բացելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ա.Գրոմիկոն նշեց, որ ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեն և կառավարությունը մշակել և իրականացնում են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տնտեսական ու սոցիալ-մշակույթի զարգացման հասունացած հարցերի պատմական լուծման միջոցառումներ: «Սակայն,– շարունակեց նա,– դրանից հետո էլ Լեռնային Ղարաբաղի շուրջ իրադրությունը շարունակում է շիկանալ: Ադրբեջանի և Հայաստանի դիրքորոշումները մատնանշող յուրօրինակ սահմանագիծ դարձան այդ հանրապետությունների իշխանության բարձրագույն մարմինների վերջերս կայացած նստաշրջանները»: Նա գտնում էր, որ «Հանուն խորհրդային ժողովրդի բարձրագույն շահերի», պահանջվում է իրադրության ամբողջ բարդության ըմբռնում, հույզերից և տարբեր կարգի վիրավորանքներից վեր կանգնելու կարողություն: Նրա կարծիքով պետք է հիմնախնդրի վերաբերյալ կայացնել ճիշտ որոշում, որը պետք է բխի «ԽՍՀՄ սահմանադրության, սոցիալիստական արժեքների, ժողովուրդներից յուրաքանչյուրի կարծիքի, ավանդույթների, ազգային արժանապատվության փոխադարձ հարգանքի շրջանակներում»[1]:

Այնուհետև հաղորդումներով հանդես եկան Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հ.Ոսկանյանը և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ս.Թաթլիևը: Հայաստանից ելույթ ունեցան ակադեմիկոսներ Վիկտոր Համբարձումյանն ու Սերգեյ Համբարձումյանը, Վարդգես Պետրոսյանը, Սուրեն Հարությունյանը և ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանը:

Իր ելույթում լուրջ առաջարկություններ արեց ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը: Նա ներկայացրեց ղարաբաղյան թնջուկի լուծման հետևյալ տարբերակները. ԼՂԻՄ-ում ժամանա-

[1] *"Правда", 20.08.1988:*

կավոր ստեղծել նախագահական կառավարում կամ էլ այն ժամանակավոր դուրս բերել Ադրբեջանի ենթակայությունից և ենթարկել հատուկ մարմնի[2]:

Արցախահայությունը և, ընդհանրապես, ամբողջ հայությունը ջերմորեն ընդունեց Հենրիխ Պողոսյանի ելույթը: Նա ասաց, որ «Լեռնային Ղարաբաղը մշտնջենական բնակեցված է եղել հայերով և հանդիսանում է նրանց հայրենիքի մի հատվածը», որը հետո Ի.Ստալինի և այլոց մեղքով հայտնվել է Ադրբեջանի կազմում ու 65 տարի շարունակ ենթարկվել «ստորացման, վիրավորանքների և ամեն տեսակի ճնշումների»: Նա համոզիչ փաստերով ցույց տվեց, որ խորհրդային իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղի բնակչությունն ինչպիսի տնտեսական, քաղաքական ու մշակութային ճնշումների է ենթարկվել Ադրբեջանի իշխանությունների կողմից: Նա ի լուր բոլորի հայտարարեց, որ «Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող են լուծել միայն Լեռնային Ղարաբաղի բնակիչները», և «Սումգայիթի ուրվականով ու բազմաթիվ սպառնալիքներով պատին սեղմված Բաքվի և Ադրբեջանական ՍՍՀ այլ վայրերում ապրող հայերը հարկադրված են ստորագրել ցանկացած փաստաթղթի տակ, միայն թե անվտանգ լինի իրենց և իրենց երեխաների ապագան»: Արցախի ներկայացուցիչը վերջում անվարան հայտարարեց, որ «ստեղծված իրավիճակում միակ ճշմարիտ լուծումը կարող է լինել Լեռնային Ղարաբաղի դուրս բերումը Ադրբեջանի կազմից»[3]:

Վերջում ելույթ ունենալով՝ Մ. Գորբաչովը նշեց, որ այսօրվա քննարկվող խնդիրը կենսականորեն կարևոր է մեր բազմազգ պետության համար: Դա համամիութենական մասշտաբի խնդիր է, և բոլորս կենսականորեն շահագրգռված ենք՝ հարցը լուծվի հանգիստ, հիմնավորապես, մեր ընդհանուր շահերին համապատասխան: Հարցը բնորոշելով որպես «գերկարևոր» և «գերբարդ», որը լուծելու համար «պետք է շատ հաստատակամ և խիզախ քայլ կատարել», որի համար «հարկավոր են հանդիպական քայլեր»: Նա, այդ նիստը բնորոշելով «պատմական», հույս է հայտնում, որ կգտնվի հարցի լուծման բանալին: Գլխավոր քարտուղարը երկու հանրապետությունների քաղաքացիներին կոչ արեց «հասունություն, իսկական հայրենասիրություն դրսևորել, առավելագույն ջանքեր գործադրել՝ նորմալացնելու իրադրությունը, կարգավորելու մարդկանց լավ հարաբերությունները»: Նա չժխտեց, որ Լեռնային Ղարաբաղին առնչվող իրադարձությունները «արդեն խոր դրոշմ են թողել երկու ժողովուրդների հարաբերությունների վրա», որը կարգավորելու համար «ժամանակ է պահանջվում»: Նա, նույնիսկ չշոշափելով սումգայիթյան խնդիրը, կոչ արեց անհրաժեշտ որոշում ընդունել «Լեռնային Ղարաբաղին առնչվող իրադարձությունների վտանգավոր զարգացումը կանգնեցնելու համար»[4]:

Ի վերջո, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունեց որոշում, որտեղ ասված է, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը, քննարկելով Լեռնային Ղարաբաղի հարցի առթիվ Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդների որոշումները, «անհնար է համարում Հայկական ՍՍՀ-ի և Ադրբեջանական ՍՍՀ-ի սահմանների և սահմանադրության հիման վրա հաստատված նրանց ազգային-տերիտորիալ բաժանման փոփոխումը», և որ «այլ որոշումը կհակասեր երկու հանրապետությունների ժողովուրդների շահերին, լուրջ վնաս կհասցներ այդ ռեգիոնի ազգամիջյան հարաբերություններին»: Որոշման մեջ նաև ասված է, որ թեև խորհրդային իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղի աշխատավորները տնտեսության, գիտության զարգացման ասպարեզներում և սոցիալական կյանքի այլ ոլորտներում հասել են նշանակալից հաջողությունների, այդուհանդերձ, «ինքնավար մարզում երկար ժամանակ չէին լուծվում հայ բնակչության ազգային շահերը շոշափող հարցեր, հատկապես մշակույթի, կրթության ոլորտում, կադրային քաղաքականության մեջ: Խախտվում էին ինքնավար մարզի սահմանադրական իրավունքները»: Այդ ամենի հետևանքով Ադրբեջանում և Հայաստանում «սրվել է իրադրությունը, մեծ վնաս է հասցվել տնտեսությանը, Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդների ազգամիջյան հարաբերություններին»: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը, ելնելով այն դրույթից, թե «միութենական հանրապետության տարածքը չի կարող փոփոխվել առանց նրա համաձայնության», երկու հանրապետությունների աշխատավորներին կոչ էր անում «հնարավոր ամեն ինչ անել, որպեսզի վերականգնվեն ադրբեջանական և հայ բնակչության բարի, եղբայրական հարաբերությունները»: Նպատակահարմար էր գտնվում քննարկվող հարցի «ուսումնասիրումը հանձնարարել

[2] *Նույն տեղում:*
[3] *Նույն տեղում:*
[4] *Նույն տեղում:*

Ազգությունների խորհրդի հատուկ ստեղծվող հանձնաժողովին, որն իր առաջարկությունները պատրաստ լինելուն պես կներկայացնի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության քննարկմանը»[5]:

Փաստորեն, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի այս որոշումը ոչինչ չտվեց հայ ժողովրդին և, ընդհակառակը, ավելի բարդացրեց Ղարաբաղյան հիմնախնդիրը:

Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը չէր կարող դժգոհ չլինել այդ որոշումից: Ամենուր տեղի էին ունենում ժողովներ ու հանրահավաքներ և ընդունվում որոշումը դատապարտող փաստաթղթեր ու բողոք-նամակներ: «Հայկոմմունախագիծ» ինստիտուտից 346 հոգու ստորագրությամբ ուղարկված բողոք-նամակում ասված է, որ Մոսկվան բացահայտ ատում է հայ ժողովրդին և ոտնահարում նրա շահերը[6]: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության որոշման դեմ բողոքներով հանդես եկան հանրապետության հարյուրավոր հիմնարկ-ձեռնարկություններ[7]: Հուլիսի 20-ին ելույթ ունենալով Երևանում տեղի ունեցած հանրահավաքում Սիլվա Կապուտիկյանը հույս էր ներշնչում, որ հայ ժողովուրդն անպայման կհաղթի: Նա կոչ էր անում դադարեցնել գործադուլը և կիրառել պայքարի սահմանադրական մեթոդներ: «Հիշեցե՛ք,– ասաց նա,– պետք է գործել այնպես, որպեսզի Ղարաբաղը հպարտանա մեզնով: Եկե՛ք պայքարենք ժողովրդական ձևով, ԼՂԻՄ-ի հետ ամրապնդենք տնտեսական ու մշակութային կապերը»[8]: Այդ առթիվ Հենրիխ Պողոսյանը Մոսկվայում լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց, թե հուլիսի 18-ի որոշումից հետո ավելի լայն են բացվել «դռները Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև»[9]: Հուլիսի 21-ին Երևանում տեղի ունեցած հանրահավաքում Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, թե հինգ ամիս կայսրապետությունից անկախ ապրող Ղարաբաղն այսօր կազմում է Հայաստանի մի մասը, ինչը պետք է ցույց տալ «ԼՂԻՄ-ի հետ տնտեսական և մշակութային կապերն ամրապնդելու միջոցով, որպեսզի Մոսկվան

[5] *Նույն տեղում:*
[6] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 568, թ. 99-112:*
[7] *Նույն տեղում, գ. 553, թ. 61-77:*
[8] *Նույն տեղում, ց. 87, գ. 22, թ. 78:*
[9] *"Московские новости", N33, 1988.*

կանգնի կատարված փաստի առջև»[10]: Հուլիսի 29-ին տեղի ունեցած հանրահավաքում Երևանի բազմաթիվ հիմնարկ-ձեռնարկությունների ներկայացուցիչներ դատապարտեցին վերոհիշյալ որոշումը: «Ղարաբաղ» կոմիտեն պատրաստում է այդ որոշումը դատապարտող կոչ ու բողոքից պահանջում ստորագրել դրա տակ և ուղարկել երկրի բարձրագույն իշխանություններին: Այդ կոչում ասված է, որ «Գխ նախագահության հուլիսի 18-ի որոշումը հայ ժողովրդի համար անընդունելի է, ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ միավորելու հարցը համահայկական խնդիր է, որի իրագործման համար շահագրգռված են մեր ժողովրդի բոլոր խավերը»[11]: Հանրահավաքում Լ.Տեր-Պետրոսյանը «Ղարաբաղյան շարժման Հայաստանի (արդեն այդպես էր անվանում «Ղարաբաղ» կոմիտեին-Հ.Ա.) կոմիտեի» անունից հայտարարում է, թե Ղարաբաղյան շարժման ընթացքում «1. ԼՂԻՄ-ում և Հայաստանում հաստատվել է իսկական ժողովրդավարություն, 2. ԼՂԻՄ-ում և Հայաստանում տեղի են ունենում հարյուր հազարանոց հանրահավաքներ և ցույցեր, որոնք իրենց կազմակերպվածությամբ և մասսայականությամբ հանդիսանում են անկրկնելի ոչ միայն մեր երկրում, այլև ամբողջ աշխարհում:

Եվ ամենակարևորը՝ այդ հանրահավաքների ժամանակ չի եղել ոչ մի կարգազանցություն: Մեր պայքարը չի վերջացել: Հիշեցե՛ք. Հայաստանն առանց Արցախի գոյություն չունի»[12]:

Թե՛ Արցախում և թե՛ նրա սահմաններից դուրս ապրող բազմաթիվ հայեր ողջունում և պաշտպանում էին ԼՂՀՄ մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանի վերոհիշյալ ելույթը: ԼՂՀ պետական արխիվում պահվում են հարյուրավոր նամակ-հեռագրեր, որոնց հեղինակները, բացի Հ. Պողոսյանի ելույթը պաշտպանելուց, վստահություն են հայտնում, որ իրենք պատրաստ են իրենց զոհաբերել Արցախի պաշտպանության համար:

Չնայած արցախահայությունը մերժեց Գխ նախագահության հուլիսի 18-ի որոշումը, սակայն գիտակցում էին, որ գործադուլով չեն փրկի սկսված ազգային-ազատագրական պայքարը: Առաջարկվեց ընդառաջել Ստեփանակերտի քաղկոմի և մարզկոմի առաջարկություններին ու դուրս գալ աշխատանքի, սակայն չթուլացնելով համընդհանուր պայքարը: Արդեն հուլիսի

[10] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 22, թ. 96:*
[11] *Նույն տեղում, թ. 162:*
[12] *Նույն տեղում, թ. 168:*

25-ի տվյալներով Ստեփանակերտի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատավորների մեծամասնությունը դուրս էր եկել աշխատանքի, լրիվ աշխատանքի էին դուրս եկել կենցաղսպասարկման կոմբինատի և 91 շինվարչության կոլեկտիվները, Ղարմետաքսկոմբինատի բանվորների 90 տոկոսը[13]: Ստեփանակերտի արտադրական կոմբինատի կոլեկտիվը որոշեց աշխատել նաև շաբաթ օրերին, ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա կիրակի օրերից մեկը: Արտադրության ծավալն անընդհատ աճում էր գրեթե բոլոր ձեռնարկություններում[14]: Մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանը, պատասխանելով «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագիր Մաքսիմ Հովհաննիսյանի հարցերին, այն միտքը արտահայտեց, որ հնարավոր է մարզին տրվի ինքնավար հանրապետության իրավունք, որն իբր կունենա մեծ առավելություն: Ապա նշեց, որ մարզի անունից պահանջվել է, որ Հայկական ԽՍՀ-ն ամենաակտիվ մասնակցություն ունենա մարզի շինարարական գործերում[15]:

Հայաստանում գործադուլը դադարեցվեց հուլիսի 18-ին: Աշխատավորները կորցրածը վերականգնելու համար հաճախ աշխատում էին նաև շաբաթ և կիրակի օրերին: Արդեն հուլիսի վերջին աշխատատեղեր էին վերադարձել Երևան քաղաքի Լենինյան շրջանի աշխատավորների 96 տոկոսը: Սակայն աշխատանքային ռիթմը դանդաղ էր վերականգնվում և շրջանի արդյունաբերական ձեռնարկությունները հուլիսի սկզբի համեմատությամբ 25 մլն ռուբլով պակաս արտադրանք էին տվել: Բաց թողնվածը լրացնելու նպատակով շրջանի ձեռնարկությունների 15 տոկոսը աշխատում էին շաբաթ, իսկ 10 տոկոսը՝ նաև կիրակի օրերին[16]: Գրեթե նույն վիճակում էր գտնվում նաև քաղաքի մյուս շրջանները:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988թ. հուլիսի 18-ին ընդունված որոշումից հետո Մոսկվայի հրահանգով ուժեղացվել էր ճնշումը Շարժման ակտիվիստների նկատմամբ: Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում 1988թ. օգոստոսի 5-ին կազմված և երկրի տարբեր հասցեներով ուղարկված մի նամակում նշված է, որ ԽՍՀՄ

[13] *«Սովետական Ղարաբաղ», 28.07.1988:*
[14] *Նույն տեղում, 10.08.1988:*
[15] *Նույն տեղում, 12.08.1988:*
[16] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 553, թ. 2-3:*

Գերագույն խորհրդի նախագահության հուլիսի 18-ի անարդարացի որոշումից հետո «զանգվածային տեղեկատվության միջոցների կողմից հետապնդման, հերյուրանքի և բացահայտ լուտանքների լայն կոմպանիա» է սկսվել «Ղարաբաղ» և «Կռունկ» կոմիտեների ամդամների դեմ, որոնց գործունեությունը ոչ մի դեպքում չի անցել խորհրդային սահմանադրության սահմանները[17]:

1988թ. հուլիսի 18-ի որոշումը դատապարտվեց ոչ միայն հայ ժողովրդի, այլև երկրի առաջադեմ մտավորականության կողմից: Նիստից անմիջապես հետո Անդրեյ Սախարովը նոր նամակ հղեց Մ.Գորբաչովին, որը, սակայն, հրապարակվեց բավականին ուշ՝ «Նեզավիսիմայա գազետա»-ի 1992թ. հոկտեմբերի 27-ի համարում: Այդ նամակում Ա.Սախարովը Ղարաբաղյան հիմնախնդրի հետ կապում է ոչ այնքան բարեփոխումների ճակատագիրը, որքան մարդու իրավունքները և ապրելու իրավունքը: Նա գտնում էր, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը դարձել է վերակառուցման քաղաքականության փորձաքարը, ապա շեշտում է, որ ընդունված որոշումը հիասթափեցրել է հայ ժողովրդին, իսկ Լեռնային Ղարաբաղում՝ պարզապես հուսահատեցրել[18]: Հակադրվելով Մ.Գորբաչովին՝ Ա.Սախարովը գտնում էր, որ Սումգայիթում կատարվածն առանձին խուլիգանների ձեռքի գործ չէ և ոչ էլ բանակի երեք ժամ ուշանալու հետևանք: Նա վճռականորեն շեշտում է, որ Սումգայիթի դեպքերից հետո Ադրբեջանից Լեռնային Ղարաբաղի անջատումը և Հայաստանի հետ միացումը դարձել էր անհետաձգելի խնդիր, որի լուծման փոխզիջումային տարբերակը, եզրակացնում է Ա.Սախարովը, ամբոխավարություն է, որից պետք է հրաժարվել[19]: Մեծ իրավապաշտպանի ու հումանիստի մտորումները միս ու արյուն չստացան, որովհետև երկրի ղեկը գտնվում էր այլ արժեքների տուրք տվող մարդկանց ձեռքին:

1988թ. հուլիսի 26-ին մամուլում հրապարակվեց ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության «Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ընդունած որոշումը գործնականում իրագործելու միջոցառումների մասին» որոշումը, որի համաձայն ԼՂԻՄ ուղարկվեց ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախա-

[17] *Նույն տեղում, գ. 651, թ. 50:*
[18] *Андрей Сахаров о Нагорном Карабахе, с. 13:*
[19] *Նույն տեղում, էջ 14-15:*

գահության ներկայացուցիչ Արկադի Վոլսկին, որի հիմնական խնդիրը պետք է լիներ կազմակերպել և համակարգել Ադրբեջանի, Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ընդունված որոշումները: Դրան զուգահեռ կազմակերպվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի պատգամավորներից կազմված «հատուկ հանձնաժողով»[20]:

Երևանում և հանրապետության այլ քաղաքներում չէին դադարում հանրահավաքներն ու շքերթները: Սեպտեմբերի սկզբից կրկին սկսվեցին նստացույցերը, դասադուլները և հացադուլները: Պահանջները նույնն էին՝ Արցախը վերամիավորել Հայաստանին, դադարեցնել հայերի նկատմամբ բռնարարքները, Սումգայիթի հանցագործներին տալ արժանի պատիժ, վերացնել Հայաստանի և Ղարաբաղի շրջափակումները, չնայած «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն», դեռևս հուլիսի 28-ին քննարկելով Շարժման հեռանկարների հարցը, անհրաժեշտ էր համարել ժամանակավորապես դադարեցնել գործադուլները, հանրահավաքներն ու միտինգները, մշակել պայքարի նոր ռազմավարություն, խորհրդային բանակը դուրս բերել Հայաստանից, Հայաստանի և ԼՂԻՄ-ի միջև ամրապնդել տնտեսական համագործակցությունը և այլն[21]:

«Ղարաբաղ» կոմիտեի նախաձեռնությամբ Հայաստանում ստորագրություններ էին հավաքվում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հուլիսի 18-ի որոշման դեմ: Համանման ստորագրություններ հավաքվում էին նաև երկրի այլ տարածքներում: Օրինակ՝ Էստոնիայի Տարտու քաղաքում ստորագրություններ էին հավաքվում ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու օգտին, իսկ լիտվացիները հրապարակայնորեն պաշտպանում էին ղարաբաղցիների արդար պահանջը: Հայաստանի ՊԱԿ-ի մի հաղորդագրության մեջ նշված է, որ տարբեր ազգային շրջանների, քաղաքների, «շարժումների» և «հոսանքների» ներկայացուցիչներ Երևանի հանրահավաքներում հայտարարում են, թե եկել են «տեղական խնդիրներն ու փորձը ուսումնասիրելու» և իրենց երախտագիտությունն են հայտնում հայ ժողովրդին, մանավանդ արցախահայությանը, որոնք «նիրհից արթնացրել են խորհրդային երկրի ժողովուրդներին»[22]: «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի» անդամները մեկնում էին Մասիս, Լենինական, Կիրովական, Նոյեմբերյան և հանրապետության այլ բնակավայրեր, կազմակերպում հանրահավաքներ, բնակչությանը կոչ անում պաշտպանել Ղարաբաղյան շարժումը և «Ղարաբաղ» կոմիտեի բոլոր ձեռնարկումները: Օգոստոսի 19-ին տեղի ունեցած հանրահավաքում «Ղարաբաղ» կոմիտեն հրապարակեց պայքարի նոր ծրագիր, որը հետո դարձավ 1989թ. նոյեմբերի սկզբին տեղի ունեցած Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) առաջին համագումարում ընդունված կանոնադրության հիմքը: «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն», որը նախկին ձևով շարունակում էր իրեն կոչել «Ղարաբաղ» կոմիտե, հայտարարեց, թե ներկա ժամանակաշրջանում հայ ժողովրդի պայքարի միակ և ճիշտ ճանապարհը ԼՂԻՄ-ի բարդույթի քաղաքական լուծումն է, և որ ստեղծված պայմաններում ԼՂԻՄ-ի ու Հայաստանի սոցիալ-տնտեսական կապերի համաձուլումը հնարավոր չէ, որովհետև դրան խիստ խոչընդոտում են Մոսկվան և Բաքուն[23]: Ի լուր բոլորի՝ Վազգեն Մանուկյանը հայտարարեց, թե Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն, վերածվել է Հայոց Համազգային Շարժման, որի հիմնական նպատակն է Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանին: Նա նաև նշեց, որ ՀՀՇ-ն կազմել է նոր փաստաթուղթ, որում, բացի ղարաբաղյան հիմնախնդրից, առաջ է քաշվում համազգային հարցեր: Հայ ժողովրդի առաջ, շարունակում է նա, բացի ղարաբաղյան հիմնախնդրից, դրված են շատ հարցեր, որոնց մեծ մասը գոյություն է ունեցել մինչև 1988թ. փետրվարը: Եվ չնայած ղարաբաղյան շարժումը դուրս է եկել իր խնդիրների շրջանակներից, այդուհանդերձ պահպանվել է ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ միավորվելու հիմնական պահանջը, որը դարձել է համազգային թե՛ բնակչության մասնակցության և թե՛ առաջ քաշված խնդիրների բնույթի տեսակետից[24]:

1988թ. օգոստոսի 19-ին տարածված «Հայոց համազգային Շարժում» փաստաթղթում ասված է, թե Ղարաբաղյան շարժումը, որին մասնակցում է ամբողջ հայ ժողովուրդը, առաջ է եկել Արցախի հայության ինքնորոշման բնական և արդար իրավունքի իրագործման նպատակով: «Ամեն խնդիր չէ,– գրված է այդ փաստաթղթում,– որ կարող է արթնացնել ժողովրդին և ազգը միավորել մի այնպիսի միասնական գաղափարի շուրջ, ինչպիսին

[20] *"Правда", 26.07.1988.*
[21] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 15, թ. 85:*
[22] *Նույն տեղում, գ. 22, թ. 251, գ. 15, թ. 85:*
[23] *Նույն տեղում, գ. 22, թ. 229:*
[24] *Նույն տեղում, թ. 135:*

հանդիսացավ Արցախի վերամիավորման հարցը: Զարթոնք ապրող ազգը արդեն սկսում է ավելի սուր զգալ նաև իր մյուս չլուծված խնդիրների ցավը, հասկանալ, որ այդ բոլոր խնդիրները կազմում են մեկ շղթա, և դրանցից յուրաքանչյուրի լուծումը պայման է ստեղծում առաջիկայում քայլեր կատարել մյուս խնդիրների լուծման ուղղությամբ»[25]: Իրոք, ինչպես հուշում է այդ ծրագրային փաստաթուղթը, պայքարի ընթացքում առաջ քաշված խնդիրներից յուրաքանչյուրը սերտորեն կապված էր հայ ժողովրդի գոյատևման հետ: Հետո այդ խնդիրները բնականորեն միահյուսվեցին Ղարաբաղյան շարժմանը: Եվ չնայած վերջինս «դուրս եկավ իր առաջ դրված խնդիրների լուծման շրջանակներից», այդուհանդերձ կարողացավ պահել հիմնական ուղղությունը՝ «Արցախի վերամիավորումը Հայաստանի հետ՝ դառնալով իսկական համազգային շարժում ինչպես ներգրավված մասնակիցների քանակով, այնպես էլ առաջ քաշված խնդիրների բազմազանությամբ»: Որպեսզի շարժմանը տրվեր կազմակերպված և հստակ ձև, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն մինչև Հայաստանի և Ղարաբաղի միավորումը պետք է պահպաներ Ղարաբաղյան շարժում անունը[26]:

1988թ. օգոստոսի 26-ին Երևանում տեղի ունեցած հանրահավաքում Ռաֆայել Ղազարյանը հայտարարեց, որ Ղարաբաղյան շարժումն «ազգային-ազատագրական պայքար է»: Նա հանրապետության բարձրագույն իշխանություններին կոչ արեց հանդես գալ հայ ժողովրդին մրոտող լրատվամիջոցների դեմ, մերկացնել «զվարթնոցն» ու «սումգայիթը» և ամուր պաշտպանել Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը[27]: Ապա Լ.Տեր-Պետրոսյանը պաշտպանեց ԼՂԻՄ մարզխորհրդի օգոստոսի 24-ի որոշումը, որը մերժել էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հուլիսի 18-ի որոշումը և Հայաստանի Գերագույն խորհրդից պահանջեց հետևել ղարաբաղցիների օրինակին: Նա Հայաստանի Գերագույն խորհրդին առաջարկեց ստեղծել հանձնաժողով և ստուգել խորհրդային իշխանության 68 տարիների ընթացքում Ադրբեջանի կողմից հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանության փաստերը[28]: Թատերական հրապարակում սեպտեմբերի 9-ին տեղի ունեցած հանրահավաքում Հադրութի երկրագիտական թանգարանի տնօրեն Արթուր Մկրտչյանը հաղորդեց, թե արցախցիները չեն ընդունում ԼՂԻՄ-ի վերաբերյալ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հուլիսի 18-ի որոշումը, և նրանք կպայքարեն մինչև վերջնական հաղթանակ: Նա նաև նշեց, որ արցախցիները հայ ժողովրդից սպասում են ավելի վճռական գործողություններ: Հռետորը քննադատական խոսք հնչեցրեց Հայաստանի լրատվական միջոցների հասցեին, որոնք պահանջածին, արժանի ձևով չէին պաշտպանում Արցախի հիմնախնդիրը[29]: Թաթուլ Սաֆարյանը հաղորդեց, որ Շուշիի շրջանի հայկական գյուղերը վեր են ածվում ավերակների, և բոլոր երևանաբնակ արցախցիներին կոչ արեց վերադառնալ իրենց պապենական հողերը[30]: Ռաֆայել Համբարձումյանը շեշտեց, որ «Ղարաբաղ» կոմիտեի առաջ քաշած ծրագիրը հնարավոր է իրագործել, եթե հանրապետությունը հասնի անկախության: Ապա հաղորդեց, որ ստեղծվել է Ազատ Հայաստանը միավորելու խորհուրդ, որը պատրաստ է համագործակցել «Ղարաբաղ» կոմիտեի հետ[31]:

Ռաֆայել Ղազարյանը մեկ օր առաջ էր վերադարձել Ստեփանակերտից: Նա հաղորդեց, որ այնտեղ վիճակը շատ ծանր է: Ղարաբաղցիները մարզի ղեկավարների հետ միավորվել և մի բռունցք են դարձել: Այդ միասնության մեջ են մտնում ԼՂԻՄ-ի ղեկավարությունը, տնօրենների խորհուրդը, «Կռունկը» և ամբողջ ժողովուրդը: Հայաստանից հեռացած ադրբեջանցիները բնակեցվում են Շուշիում և մարզի ադրբեջանական գյուղերում: Միայն Շուշիում բնակեցվել են 1700 մարդ: «Եթե այդ թափով շարունակվի,– շարունակեց նա,– ապա մեկ տարուց հետո Ղարաբաղի հարցը կվճռվի հօգուտ Ադրբեջանի: Արցախցիները դա լավ են հասկանում և մտածում են փակել դրա ճանապարհը... Ես մասնակցել եմ տնօրենների խորհրդի նիստին և հիացել նրանց կազմակերպվածությամբ: Կարճ, գործնական ելույթներ և առաջարկություններ: Նրանք դեմ են որևէ ձևով Ադրբեջանին ենթարկվելուն: Նրանց պահանջը միանշանակ է՝ եթե հիմա չմիանան Հայաստանին, ապա գոնե անջատվեն Ադրբեջանից: Հիմա արցախցիների նոր կարգախոսն է՝ անջատում»[32]:

[25] *Նույն տեղում, գ. 15, թ. 113:*
[26] *Նույն տեղում:*
[27] *Նույն տեղում, թ. 85:*
[28] *Նույն տեղում, թ. 86:*

[29] *Նույն տեղում, գ. 23, թ. 16:*
[30] *Նույն տեղում, թ. 18:*
[31] *Նույն տեղում, թ. 29:*
[32] *Նույն տեղում, թ. 40-41:*

Հայաստանում և Արցախում վիճակն ավելի բարդացավ 1988-ի սեպտեմբերի կեսերից հետո: Հանրահավաքներում կոչեր էին հնչում՝ դիմել համընդհանուր գործադուլի: Այդ օրերին տեղի ունեցած Հայկոմկուսի Կենտկոմի պլենումը խիստ անհանգստություն հայտնեց հանրապետությունում ստեղծված ընդհանուր վիճակի համար և որոշեց այն կարգավորելու քայլեր ձեռնարկել[33]: Սեպտեմբերի 25-ին Թատերական հրապարակում շարունակվող հանրահավաքը պահանջեց հրավիրել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան և քննարկել ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Այդ հանրահավաքում նաև պահանջվեց բանակը դուրս բերել Հայաստանից[34]: Սակայն Հայաստանի իշխանությունները դեռևս չէին հրաժարվում ժողովրդի դեմ ուժ գործադրելու ցանկությունից: Օրինակ՝ Չարենցավանում տեղի ունեցած միտինգում շրջկոմի առաջին քարտուղար Հ. Քոթանջյանը և շրջգործկոմի նախագահ Խ.Հարությունյանը պաշտոնապես հայտարարեցին, որ եթե շարունակվեն չթույլատրված միտինգները, ապա «միջոցառումներ կկիրառվեն կազմակերպիչների նկատմամբ»[35]: Նման սպառնալիքներ հնչեցին նաև այլ տեղեր, որոնք արժանացան բնակչության ցասումին:

Երևանի բնակիչները, շրջափակելով ճանապարհներն ու ավտոհավաքակայանները, կանգնեցրին քաղաքի տրանսպորտը: «Ղարաբաղ» կոմիտեի կոչով մարդկանց խմբերը գնում էին արդյունաբերական ձեռնարկություններ և պահանջում դադարեցնել աշխատանքը: Նման գործողություններ կատարվում էին նաև մյուս արդյունաբերական կենտրոններում: Ավելի քան 200 հոգի, հավաքվելով ատոմակայանի մոտ, պահանջում էին այն փակել: Սեպտեմբերի վերջին արդեն չէին աշխատում «Երազ» և «Լույս» արտադրական միավորումները, կիսով չափ չէին աշխատում «Հայէլեկտրաշարժ», «Էլեկտրատրանսպորտ», «Արդկապ», «Թունել ջոկատ» ձեռնարկությունները: Ռազմական արդյունաբերական ձեռնարկություններում աշխատող ավելի քան 60 հազար բանվորներից գործադուլի մեջ էին 35 հազարը[36]:

[33] *«Սովետական Հայաստան», 18.09.1988:*
[34] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 87, գ. 15, թ. 217:*
[35] *Նույն տեղում, թ. 218:*
[36] *Նույն տեղում, թ. 212:*

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջը համակել էր շատերին: Նրանք կարծում էին, թե այն «կլիցքաթափի պայթյունավտանգ վիճակը հանրապետությունում և ԼՂԻՄ-ում» և դա «կլինի այն բանի ապացույցը, որ ...Ղարաբաղյան շարժումը չի թելադրված առանձին ծայրահեղականների և ազգայնամոլների կողմից, կկանխի ակտիվիստների նկատմամբ հնարավոր ճնշումը», ու «ԼՂԻՄ-ը կվերամիավորվի Հայաստանին»[37]: Հանրապետության անվտանգության մարմիններն այդ օրերին իրենց կազմած փաստաթղթերում նաև գրանցել են, որ հանրապետությունում շարունակվում էին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորների «մշակումը», և որ սեպտեմբերի 26-ի դրությամբ հաջողվել էր 340 պատգամավորներից «մշակել» 154-ին[38]: Այդ նույն օրը «Ղարաբաղ» կոմիտեի ներկայացուցիչները, հանդիպելով ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության անդամների հետ, համաձայնության էին եկել հրավիրել Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան: Միայն դրա փոխարեն պետք է դադարեցվեին գործադուլները ու դասադուլները[39]: Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորները, կոչերով դիմելով բուհերի աշխատողներին և ուսանողներին, նշում էին, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ կապված՝ հանրապետությունում ստեղծված իրավիճակը ավելի է սրել դրությունը, ինչը անհանգստություն է պատճառում շատերին: Նրանք շեշտում էին, որ բուհերում և ուսումնական մյուս հաստատություններում պարապմունքների խափանումը մեծ հարված է հայ ժողովրդի հոգևոր զարգացմանը, թուլացնում է նրա մտավոր ուժը: Ուսանողներին կոչ էին անում վերադառնալ լսարաններ[40]: Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտից (ներկայումս՝ համալսարան) 1988թ. հոկտեմբերի 10-ին Հայկոմկուսի Կենտկոմ և ՀԽՍՀ Գերագույն խորհուրդ ուղարկված նամակում ասված է. «Ինստիտուտի ուսանողությունը, արտահայտելով իր համերաշխությունը Արցախի հայության արդարացի և վճռական պահանջին, ինչպես նաև ի բողոք Արցախյան պրոբլեմի լուծման ձգձգման, հայտարարել էր դասադուլ հետևյալ պահանջներով. 1. Արցախը անհապաղ դուրս

[37] *Նույն տեղում, թ. 212-213:*
[38] *Նույն տեղում, թ. 214:*
[39] *Նույն տեղում:*
[40] *«Սովետական Հայաստան», 29.09.1988:*

բերել Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից: 2. Ապահովել Ադրբեջանում բնակվող հայության անվտանգությունը: 3. Ջորքն անհապաղ դուրս բերել Երևանի սահմաններից: 4. Վերացնել Արցախի «հատուկ» դրությունը: 5. Դադարեցնել արցախյան շարժման վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով տրվող ոչ ճիշտ հաղորդումները»: Նամակի հեղինակները ՀԿԿ Կենտկոմին և ՀԽՍՀ Գերագույն խորհրդին խնդրում էին արագացնել վերոհիշյալ պահանջների արդարացի լուծումը[41]:

Հայաստանում և Արցախում հանրահավաքները, ցույցերը, գործադուլներն ու դասադուլները ավելի մեծ թափով շարունակվեցին 1988թ. հոկտեմբեր-նոյեմբերին: Այդ ամիսներին «Ղարաբաղ» կոմիտեի անդամներից ոմանք հաճախակի էին լինում Արցախում, ոգևորում արցախցիներին և նրանց վստահեցնում, որ ամբողջ հայությունը կանգնած է նրանց թիկունքում ու պաշտպանում է նրանց արդարացի պայքարը: Հիշական ներկայացուցիչները հանրահավաքներում պահանջում էին՝ Հայաստանի Գերագույն խորհուրդը «դառնա ժողովրդավարական խորհրդարան, որը պետք է վճռի հայ ժողովրդի խնդիրները»[42]: Նրանք նաև շեշտում էին, որ «առանց Ղարաբաղի Հայաստանը գոյություն ունենալ չի կարող: Հետևապես պայքարը պետք է ավելի զանգվածային բնույթ ընդունի»[43]: Քանի որ Արցախի ադրբեջանաբնակ գյուղերում Ադրբեջանի իշխանությունները ծավալել էին շինարարական լայն աշխատանք, ուստի Երևանում տեղի ունեցող հանրահավաքներում կոչեր էին հնչում ամեն կերպ խոչընդոտել դրան և «Ղարաբաղում Ադրբեջանի շինարարությանը հակադրել Հայաստանի շինարարությունը»[44]:

Մոսկվայի և Բաքվի կողմից ուժեղացվող բռնություններին Արցախում և Հայաստանում պատասխանում էին ուժերի համախմբումով, արիությամբ ու տոկունությամբ: Հոկտեմբերի 8-ին տեղի ունեցած հանրահավաքում Լ.Տեր-Պետրոսյանը հայտարարեց, թե Արցախի ժողովուրդը «վեր է ածվել ազգի և որոշում է իր ազգային խնդիրները»: Իսկ դրա համար անհրաժեշտ է «իշխանության գլուխ կանգնած լինեն ժողովրդի ընտրյալները»: Նա պահանջում էր, որ Հայաստանի Գերագույն խորհուրդը ևս դառնա «ժողովրդավարական խորհրդարան, որը պետք է վճռի հայ ժողովրդի խնդիրները»[45]:

Հոկտեմբերի 21-ի հանրահավաքում հայտարարվեց, որ Մոսկվան Լեռնային Ղարաբաղում իր հակահայկական քաղաքականությունը դրսևորել է նոր գործողությամբ՝ փակել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը: Այդ փաստը վրդովեցրել էր ոչ միայն արցախցիներին, այլև ողջ հայությանը: Նոյեմբերի 5-ին տեղի ունեցած հանրահավաքում Լ.Տեր-Պետրոսյանը, որը նոր էր վերադարձել Լեռնային Ղարաբաղից, հայտարարեց, թե Ադրբեջանի իշխանությունները Շուշիում և մարզի ադրբեջանաբնակ գյուղերում արագացրել են շինարարությունը և ադրբեջանցիների զանգվածային բնակեցումն այդ բնակավայրերում: Նշեց, թե Մ. Գորբաչովը կա՛մ պետք է Ղարաբաղը տա Հայաստանին, կա՛մ էլ ռազմական ուժերի օգնությամբ այն ճզմի տանկերի տակ: «Գորբաչովը, – շարունակեց, – ըստ էության, ընտրել է երկրորդ ուղին... Նա պետք է հասկանա, որ մենք ոչ մի անգամ չենք հրաժարվի մեր արդար դատից և մինչև վերջին հայը կկանգնենք Ղարաբաղի համար: Մենք ունենք պայքարի մի շարք ձևեր, որոնցից առայժմ ընտրել ենք գործադուլը: Ժամանակն է՝ դիմենք վճռական գործողությունների»[46]: Նաև նշեց, որ Ղարաբաղի համար «պայքարը պետք է ավելի զանգվածային բնույթ ընդունի»[47]: Նոյեմբերի 6-ին տեղի ունեցած հանրահավաքում հիշական առաջնորդը ավելի վճռական էր: Նա հայտարարեց, թե Ղարաբաղը կորցնում ենք Մոսկվայի ակտիվ աջակցությամբ: Կոչ արեց ամեն կերպ խոչընդոտել Ադրբեջանի կողմից Ղարաբաղում ծավալված շինարարությանը: Իսկ դա հնարավոր էր, եթե, ըստ հռետորի, «Ղարաբաղում Ադրբեջանի շինարարությանը հակադրենք Հայաստանի շինարարությունը, որպեսզի այնտեղ բնակվեն ցանկացողները: Այդ հարցում մեզնից կպահանջվի մարդկային հնարավորություններից վեր ջանքեր: Մեր ապագա սերունդը մեզ չի ների, եթե բաց թողնենք ներկա հնարավոր պահը»[48]:

Լեռնային Ղարաբաղում շինարարական աշխատանք ծավալելու վերաբերյալ «Ղարաբաղ» կոմիտեի կոչը լայն արձագանք գտավ Հայաստանում: Մի քանի օրվա ընթացքում կազմ-

[41] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 127, գ. 564, թ. 98:*
[42] *Նույն տեղում, գ. 87, գ. 24, թ. 55:*
[43] *Նույն տեղում, թ. 113-114:*
[44] *Նույն տեղում, ֆ. 4516, գ. 1, գ. 10, թ. 38:*

[45] *Նույն տեղում, գ. 87, գ. 24, թ. 55:*
[46] *Նույն տեղում, թ. 106:*
[47] *Նույն տեղում, 113-114:*
[48] *Նույն տեղում, ֆ. 4516, գ. 1, գ. 10, թ. 38:*

վեց շինանյութերով բեռնված երկու ավտոշարասյուն: Դրանցից մեկը, որը բաղկացած էր 60 ավտոմեքենայից, հանրապետության նախարարների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանի գլխավորությամբ ճանապարհվեց Գորիս-Հադրութ, իսկ երկրորդը, որը բաղկացած էր 20 ավտոմեքենայից, Իջևան-Ստեփանակերտ երթուղիներով: Այդ շարասյուները տեղ հասան լուրջ դժվարություններ հաղթահարելով: Նոյեմբերի 16-ին Թատերական հրապարակում հայտարարվեց, թե շուտով կկազմակերպվի երրորդ ավտոշարասյունը: Արցախցիները երախտագիտությամբ էին ընդունում Հայաստանի օգնությունը: Նոյեմբերի 17-ի հանրահավաքում հայտարարվեց, թե նոյեմբերի 16-ին Ստեփանակերտում տեղակայված զինված ուժերի և քաղաքի բնակչության միջև տեղի է ունեցել ընդհարում, և բանակի կողմից կատարվել են ձերբակալություններ: Նաև տեղեկացվեց, որ այդ վերջին օրերին Արցախ է ուղարկվել 200 ավտոմեքենա շինանյութ[49]:

Ահա այս իրավիճակում 1988թ. նոյեմբերի 23-ին իր աշխատանքները սկսեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը: Նստաշրջանը սկսվելուց առաջ՝ նոյեմբերի 20-ին, տեղի էր ունեցել մեկօրյա ընդհանուր գործադուլ, որին ուղեկցել էր տասնյակ հազարավոր մարդկանց շքերթը Երևանի փողոցներով: Դրա հիմնական պատճառը Ստեփանակերտում բնակչության և բանակի միջև տեղի ունեցած ընդհարումն էր, որի հետևանքով յոթ հոգի ստացել էին մարմնական վնասվածքներ: Բացի այդ՝ լուրեր էին տարածվել, թե Հայաստանից Ղարաբաղ շինանյութ տեղափոխող ավտոշարասյուները կանգնեցվել են Ադրբեջանի տարածքում և չեն կարողանում տեղ հասնել: Այդ օրերին հայ-ադրբեջանական պատերազմի վտանգը խիստ մոտ էր: Ահա այդպիսի դժվար կացության մեջ հանրապետության Գերագույն խորհրդի ղեկավարությունը նպատակահարմար գտավ հետաձգել նստաշրջանի աշխատանքները, որպեսզի տեղերում ապահովեն հասարակական կյանքը: Նստաշրջանին մասնակցող Արկադի Վոլսկին, հանդես գալով Ադրբեջանում և Հայաստանում ստեղծված տագնապալի վիճակի մասին հաղորդումով, հասկացրեց, որ նման պայմաններում անիմաստ է շարունակել նստաշրջանը: Գերագույն խորհրդի նորընտիր պատգամավոր Աշոտ Մանուչարյանն առաջարկեց 2-3 օրով հետաձգել նստաշրջանը՝ այդ բարդ իրավիճակում ժողովրդի հետ լինելու համար: Նստաշրջանն ընդ-

[49] *Նույն տեղում, ֆ. 1, ց. 87, գ. 25, թ. 7:*

հատվեց առանց քննարկելու օրակարգի մեջ մտցված «ԼՂԻՄ-ի վերաբերյալ ՍՍԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ ԳԽ նախագահության և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումների կատարման մասին» հարցը[50]:

Նոյեմբերի 24-ին Թատերական հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում, որին մասնակցում էր ավելի քան 150 հազար մարդ, հաղորդվեց, որ Նախիջևանում և Կիրովաբադում մտցվել է պարետային ժամ: Հայաստանի կուսակցական և պետական բարձրաստիճան այրերը գտնում էին, որ ստեղծված նման իրավիճակում նպատակահարմար չէ վերսկսել Գերագույն խորհրդի նստաշրջանը: Սակայն ցուցարարները պահանջում էին նստաշրջանը վերսկսել այդ նույն երեկոյան: Լ.Տեր-Պետրոսյանը հայտարարեց, թե քանի որ հանրապետությունը զրկված է իշխանությունից, ապա այսօրվա «իշխանությունն ու կառավարությունը դուք եք. պետք է վճռեք, թե ինչ անել[51]»: Եվ այդ նույն օրը՝ երեկոյան, մոտ 200 հոգի, այդ թվում՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 171 պատգամավոր, հավաքվելով օպերայի և բալետի թատրոնի դահլիճում, ընդհատված նստաշրջանը հայտարարեցին վերսկսված: Նրանք քննարկում են օրակարգի մեջ մտցված հարցերը և ընդունում համապատասխան որոշումներ[52]: Քանի որ վերսկսված նստաշրջանի օրինականությունը խիստ կասկածելի էր, հետևապես այն չընդունվեց իշխանությունների կողմից:

Հայաստանում նոյեմբերի 18-ին սկսված համընդհանուր գործադուլի մասնակիցները պահանջում էին ապահովել հայերի անվտանգությունն Ադրբեջանում, վերացնել Երևանում անհիմն մտցված պարետային ժամը, վավերացնել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նոյեմբերի 24-ի նստաշրջանի որոշումները: Թատերական հրապարակում տեղի ունեցած խոշորածավալ հանրահավաքում Լ.Տեր-Պետրոսյանը «Ղարաբաղ» կոմիտեի անունից հայտարարեց, թե կոմիտեն իր վրա է վերցնում հանրապետության ադրբեջանաբնակ բոլոր վայրերում հայերի ինքնապաշտպանությունն ապահովող ջոկատների կազմակերպումը, որոնց նպատակը պետք է լինի հանրապետությունում հայ-ադրբեջանական պատերազմի կանխումը և ընդհարումներից խուսափելը[53]:

[50] *Նույն տեղում, թ. 87:*
[51] *Նույն տեղում, թ. 93:*
[52] *Նույն տեղում, թ. 103-104:*
[53] *Նույն տեղում, թ. 72:*

1988թ. նոյեմբերի 24-ին բանակը մտցվեց Երևան, և ժամը 24^{00}-ից քաղաքում հայտարարվեց պարետային ժամ: Հանրապետության 16 շրջաններում պարետային ժամ մտցվեց դեկտեմբերի 5-ից: Հանրապետության բնակչությունը խիստ վրդովված էր և պահանջում էր պարետային ժամը վերացնել թե՛ Հայաստանում և թե՛ Լեռնային Ղարաբաղում: Աշխատանքային կոլեկտիվները դատապարտում էին խորհրդային իշխանության այդ քայլերը և համապատասխան բողոքներ ուղարկում վերադաս մարմիններին[54]: Սակայն իրադրությունը փոխվեց 1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած Սպիտակի երկրաշարժի հետևանքով:

* * *

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988թ. հուլիսի 18-ի որոշումը առանձնապես ծանր ազդեցություն ունեցավ արցախահայության վրա: Ճիշտ է, հուլիսի 24-ին դադարեցվել էր մայիսի 23-ից սկսված գործադուլը, սակայն մարզի տարածքում չէին դադարում հանրահավաքներն ու ցույցերը: Ադրբեջանի իշխանություններն օր օրի ավելի էին ուժեղացնում հակահայկական, հակաարցախյան քարոզչությունը: Նրանք ջանում էին իրենց քարոզչությամբ Հայաստանից հեռացնել ազերիներին և նրանց բնակեցնել Շուշիում, մարզի ադրբեջանաբնակ բնակավայրերում և այդ ճանապարհով փոխել Լեռնային Ղարաբաղի ազգային կազմը հօգուտ ադրբեջանցիների: Շուշիում գտնվող Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Թ.Օրուջևի կարգադրությամբ Հայաստանից եկած ազերիներից 100 ընտանիք օգոստոսի 4–9-ը տեղավորվեցին Մալիբեկլու, Խոջալու, Խոջավենդ, Կրկժան և այլ ադրբեջանաբնակ գյուղերում: Օգոստոսի 13-ին և 15-ին Ստեփանակերտում տեղի ունեցած հանրահավաքները մարզի ղեկավարությունից պահանջեցին թույլ չտալ մարզի տարածքում բնակեցնել Հայաստանից տեղափոխված ադրբեջանցիներին: Ադրբեջանի կոմկուսի առաջին քարտուղար Ա.Վեզիրովը ստիպված էր տեղի տալ և հայտարարել, թե մինչև օգոստոսի 15-ը Հայաստանից ԼՂԻՄ եկած ադրբեջանցիներին կտեղափոխեն այլ շրջաններ: Սակայն դա հերթական ածպարարություն էր, որովհետև օգոստոսի 16-ի դրությամբ Հայաստանից

[54] *Նույն տեղում, գ. 127, գ. 651, թ. 72-73:*

եկած 1842 ադրբեջանցիներից հանրապետության այլ շրջաններ տեղափոխվել էին միայն 288-ը[55]:

1988թ. օգոստոսի 11-ին Ստեփանակերտում տեղի ունեցած մարզի կուսակցական կազմակերպությունների քարտուղարների և հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների խորհրդակցությունում հաղորդումով հանդես գալով՝ Ա.Վոլսկին փորձեց ներկաներին համոզել, որ ԼՂԻՄ-ի վերաբերյալ վերադաս իշխանությունների ընդունած վերջին որոշումները իբր բխում են արցախահայության շահերից, և պետք է ձգտել կատարել դրանք[56]: Արկադի Վոլսկին այդ նույնը պնդեց նաև օգոստոսի 19-ին տեղի ունեցած մարզային ակտիվի խորհրդակցությունում: Օգոստոսի 20-ին Ստեփանակերտում տեղի ունեցած հանրահավաքն ընդունեց բանաձև և երկրի ղեկավարներին ուղղված կոչ, որոնցում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հուլիսի 18-ի որոշումը բնորոշվեց որպես «հարցի վերջնական որոշման» ոչ բավարար տարբերակ[57]:

ԼՂԻՄ օգոստոսի 24-ին տեղի ունեցած մարզխորհրդի 20-րդ գումարման 8-րդ նստաշրջանը քննարկեց «1988–1995 թվականներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման միջոցառումների մասին» ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1988 թվականի մարտի 24-ի որոշման կատարման ընթացքի և նրա իրականացման ուղղությամբ մարզի տեղական խորհուրդների խնդիրների մասին» հարցը, որի վերաբերյալ զեկուցեց մարզխորհրդի նախագահի տեղակալ, պլանային հանձնաժողովի նախագահ Ա. Տոնոյանը: Նստաշրջանին ներկա էին 106 պատգամավորներ և 101 հրավիրյալներ, ինչպես և Ա. Վոլսկին, ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ Գ. Խարչենկոն և մարզի ու շրջանների մի շարք ղեկավար անձնավորություններ: Զեկուցման մեջ հանգամանորեն խոսվում է մարզում տարվող աշխատանքների և հեռանկարային պլանների մասին: Ըստ որում՝ առաջ է քաշվում նոր տպարան, մսի կոմբինատ, անասնակերերի արտադրության գործարան, թեթև արդյունաբերության նոր մասնաճյուղեր կառուցելու, օդանավակայանը, կոշիկի ֆաբրիկան և այլ արդյունաբերական ձեռ-

[55] **Арутюнян В. Б.,** *նշվ. աշխ., էջ 133:*
[56] *Նույն տեղում, էջ 131: Տես նաև «Սովետական Ղարաբաղ», 12.08.1988:*
[57] **Арутюнян В. Б.,** *նշվ. աշխ., էջ 134:*

նարկություններ վերակառուցելու, մի շարք բնակավայրերի ջրամատակարարումը կարգավորելու, մարզի տրանսպորտը և էլեկտրաֆիկացումը բարելավելու, գյուղերը գազով ապահովելու, մշակույթի և այլ կենսական նշանակություն ունեցող հարցեր լուծելու մասին: Զեկույցում առանձնապես շեշտվում էր, որ այդ ամենում իր վճռական դերը պետք է ունենար Հայաստանի Հանրապետությունը, առանց որի մասնակցության հնարավոր չէր այդ բոլոր հարցերը լուծել: Օրինակ՝ կնքված պայմանագրերի համաձայն՝ Հայաստանը Ստեփանակերտում պետք է կառուցեր մշակույթի պալատ, պիոներների տուն, գրադարան, Ասկերանում՝ մշակույթի տուն, մի շարք դպրոցներ, մանկամսուրներ, հիվանդանոցներ, վերականգներ բազմաթիվ պատմական հուշարձաններ և այլն: Հայաստանի մի շարք ձեռնարկություններ պարտավորվել էին իրենց միջոցներով կառուցել բազմաթիվ ձեռնարկություններ և կատարել շինարարական աշխատանքներ: Արցախահայությունը համոզված է,– ասված է զեկուցման վերջում,– այդ ամենը հնարավոր է իրագործել, եթե Լեռնային Ղարաբաղը գտնվի Հայաստանի կազմում[58]:

Ելույթ ունեցողներ Ա. Մանուչարովը, Հ. Պողոսյանը, Զ. Մովսիսյանը, Բ. Օվչյանը և Մ. Խաչատուրովը պաշտպանեցին զեկուցման մեջ առաջ քաշված հարցերը և արեցին մի շարք դիտողություններ[59]:

Մարզխորհրդի նստաշրջանը հավանություն տվեց մարզի աշխատանքային կոլեկտիվների նախաձեռնությանը՝ Հայկական ԽՍՀ համապատասխան ձեռնարկությունների հետ հաստատել համագործակցություն: Որոշման մեջ նաև ասված է, որ մարզի տնտեսական և սոցիալական միջոցառումների իրականացումը, առանց խնդիրներն ամբողջությամբ լուծելու, չի համապատասխանում Լեռնային Ղարաբաղի բնակչության ճնշող մեծամասնության պահանջին, որը ձևակերպված է նախորդ նստաշրջանի որոշումներում: Մարզխորհրդի նստաշրջանը մի անգամ ևս հաստատեց մարզի բնակչության վճռականությունը՝ հասնել ԼՂԻՄ-ն Ադրբեջանական ԽՍՀ վարչական ենթակայությունից հանելուն և Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելուն: ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհրդի նստաշրջանը խնդրեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի հանձնաժողովին

[58] ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 226, թ. 9-18:.
[59] Նույն տեղում, թ. 46:

ընդհանրացնել և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը ներկայացնել Լեռնային Ղարաբաղի խնդիրն արդարացի լուծելու առաջարկությունները: Նստաշրջանը ԼՂԻՄ խորհրդի գործկոմի նախագահ ընտրեց Ստեփանակերտի գյուղատնտեսական մեքենաների գործարանի տնօրեն, մարզխորհրդի պատգամավոր Սիմոն Հմայակի Բաբայանին[60]:

1988թ. պայքարի այդ շրջանում կարևոր էր դարձել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հարցը: Ինստիտուտի ղեկավարության կողմից նամակ էր ուղարկվել վերադաս մարմիններին՝ 1988թ. սեպտեմբերի 1-ից ինստիտուտում ադրբեջանական բաժանմունք ունենալու անհամապատասխանության մասին: Այդ նամակը կազմվել էր հիմնավորված, մանավանդ, որ Բաքվի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի փակելը և Ստեփանակերտում առանձին մանկավարժական ինստիտուտ բացելը, թերևս, Բաքվի համար ընդունելի էր, որտեղ ադրբեջանական բաժին ունենալը Ադրբեջանի իշխանությունների համար ռազմավարական նշանակություն ուներ: Ադրբեջանական բաժնի ուսանողների միայն 5-6 տոկոսն էին դարաբաղցիներ, իսկ մնացածը՝ մոտ 800 հոգի, հանրապետության այլ շրջաններից էին: Բացի դրանից՝ ադրբեջանական բաժնում աշխատող 30 դասախոսներից վեցն էին տեղացի, մնացածները հրավիրվել էին դրսից: Իսկ դա նշանակում է՝ նրանց բոլորին պետք է բավարարեին բնակարաններով և Ստեփանակերտում բացեին ադրբեջանական նոր դպրոց: Արցախահայության պահանջով 1988թ. սեպտեմբերի 1-ից փակվեց Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ադրբեջանական բաժինը:

Շուշիից վերջին հայերը հեռացան սեպտեմբերի 18-ին: Այդ օրն էլ Ստեփանակերտում լուր էր տարածվել, թե քաղաքի ադրբեջանցիները շտապ հեռանում են, որովհետև իբր նրանց նկատմամբ իրագործվելու է ահաբեկչություն: Այդ կեղծ լուրը տարածել էին իրենք՝ ադրբեջանցիները, որպեսզի մեղադրեն հայերին: 1988թ. սեպտեմբերի 18-ը կիրակի էր՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի և ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի ծննդյան օրը: Տնօրենների խորհրդում որոշվել էր հանրահավաքը նվիրել նրանց մեծարմանը: Այդ նույն օրը Հայաստանից Արցախ եկող ավտոմեքենաները Աղդամում և Խոջալուում ջարդվում և թալանվում էին, իսկ ուղևորները՝ ծեծվում: Սեպտեմբերի 18-ի

[60] Նույն տեղում, թ. 60: Տես նաև «Սովետական Ղարաբաղ», 25.08.1998:

հանրահավաքի ժամանակ իմանալով այդ մասին՝ միտինգավորները շարժվում են դեպի Խոջալու: Հասնելով այնտեղ՝ նրանք ընդհարվում են ադրբեջանական զինված ջոկատների հետ: Երկու կողմերից էլ լինում են վիրավորներ: Հայերից վիրավորվում են 40 հոգի, որոնցից 23-ը տեղափոխվում են հիվանդանոց: Այդ օրերին Ստեփանակերտի Կրկժան թաղամասից, որտեղ հիմնականում ապրում էին ադրբեջանցիներ, անընդհատ հրետակոծվում էին մոտակա հայկական թաղամասերը: Որպես կենտրոնական իշխանությունների դեմ բողոքի նշան՝ Ստեփանակերտում սեպտեմբերի 19-ից սկսվում է նստացույց, որին մասնակցում էին ուսանողներ, դասախոսներ, հիմնարկ-ձեռնարկությունների աշխատողներ:

1988թ. սեպտեմբերի 17-ին կուսմարզկոմի բյուրոն, քննարկելով «Ստեփանակերտ քաղաքում վերջին օրերի իրադարձությունների մասին» հարցը, արձանագրել է, որ իրադարձությունները համոզում են, որ «առանձին խմբերի գործողությունների մեջ սկսել են դրսևորել ազգայնական, հակակառավարական և հակապետական ուղղության տարրեր»: Բյուրոն չէր թաքցնում, որ քաղաքական իրադրությունն ավելի է վատթարացել գործադուլային շարժման հետևանքով, որի մեջ ներգրավվել էին նաև երեխաները, մասնավորապես դադարեցվել էին դպրոցների, մանկական հիմնարկների աշխատանքները: Դրա հիմնական պատճառներից մեկը եղել են Հայաստանից տեղափոխված ադրբեջանցիները, որոնց ԼՂԻՄ-ից դուրս բերելու համար վճռական միջոցառումներ չէին ձեռնարկվում: Ընդհակառակը, երեք միլիոն ռուբլի էր հատկացվել Շուշիում նրանց համար բնակարաններ կառուցելու համար: Մարզկոմի բյուրոն բացասական գնահատեց առանց մարզի ղեկավարության հետ համաձայնեցնելու ԼՂԻՄ-ում տարբեր տեսակի ստուգումներ անցկացնելու հանրապետական մարմինների փորձերը: Բյուրոն կոչ էր անում մարզի բնակչությանը պահպանել հանգստություն, զսպվածություն և չենթարկվել սադրիչների անպատասխանատու հայտարարություններին[61]:

Լեռնային Ղարաբաղում ստեղծված ծանր իրավիճակի առթիվ մի խումբ կոմունիստներ և պատերազմի ու աշխատանքի վետերաններ, սեպտեմբերի 20-ին դիմելով Ա.Վոլսկուն, նշում են, որ իրենք իրենց խաբված են զգում խորհրդային վարչակարգից և

[61] *«Սովետական Ղարաբաղ», 18.09.1988:*

կառավարության ոչ ճիշտ քաղաքականությունից: Նամակի հեղինակները շեշտում են, որ «ստեղծված ներկա իրադրությունը պահանջում է» ղարաբաղյան հիմնախնդրի «վերջնական և արդարացի լուծում»[62]: Ա.Վոլսկին, սեպտեմբերի 21-ին կոչով դիմելով մարզի բնակչությանը, հիշեցնում է, որ կուսակցությունն ու կառավարությունն ընդունել են ԼՂԻՄ-ի զարգացման վերաբերյալ մի շարք որոշումներ: Դրանք ոմանց «չեն բավարարում», ինչի պատճառով էլ իրադրությունը մարզում խիստ բարդացել է: Նա պահանջում էր «մեղավորներին և սադրիչներին» պատժել: «Երբ արյուն է հեղվում, պետությունը չի կարող մի կողմ քաշվել»,– նշում է նա և առաջարկում Լեռնային Ղարաբաղում ու Աղդամի շրջանում մտցնել հատուկ դրություն՝ հաստատելով պարետային ժամ[63]: Հետո՝ 1989 թվականին, «Սոցիալիստական ինդուստրիա» թերթին տված հարցազրույցում նա փորձում էր արդարացնել, թե իբր «պետությունը ուրիշ ելք չուներ», չնայած լավ կլիներ, «եթե այն ընդհանրապես չկիրառվեր»[64]:

Այսպես՝ 1988թ. սեպտեմբերի 21-ին հրապարակվեց «Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի և Աղդամի շրջանի տարածքում հատուկ դրություն մտցնելու մասին» Ադրբեջանական ԽՍՀ ԼՂԻՄ և Աղդամի շրջանի պարետի հրամանը, ըստ որի արգելվում էր «օրվա ցանկացած ժամին քաղաքացիների ցույցեր, միտինգներ, փողոցային երթեր և տեսարանային միջոցառումներ անցկացնելը», «ցանկացած բնույթի գործադուլներ և, առաջին հերթին, մարդկանց կենսապահովման հետ կապված մասնագիտությունների գծով...», «16 տարեկան և բարձր տարիքի քաղաքացիներին՝ առանց անձը հաստատող փաստաթղթերի իրենց բնակարաններից դուրս գտնվելը», «քաղաքացիների բնակարաններում և այլ վայրերում հրազեն, վտանգապայթունակ առարկաներ և հրակիզվող խառնուրդներ պահելը», «ցանկացած տարիքի քաղաքացիներին 21^{00} ժամից մինչև առավոտյան 6^{00} ժամը առանց հատուկ անցագրի ոչ իրենց բնակարաններում հայտնվելը և նրանց ազատ անցուդարձը քաղաքների ու բնակավայրերի փողոցներով» և այլն: Հետո առաջարկվում էր ունեցած հրազենը հանձնելու մասին, ըստ որում՝ զենքը չհանձնողները ենթակա էին խիստ պատասխանատվու-

[62] *Նույն տեղում, 1.10.1988:*
[63] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 564, թ. 87-92:*
[64] *"Социалистическая индустрия", 30.04.1989.*

թյան: Սեպտեմբերի 22-ից մտցվում էր անձնագրային կարգ: Հանձնարարվում էր ձեռնարկությունների ղեկավարներին՝ ապահովել աշխատանքային գործունեության նորմալ ռեժիմը: Իսկ վերջում կոչ էր արվում «պահպանել հանդարտություն և կարգապահություն»[65]:

Լեռնային Ղարաբաղում հատուկ դրություն մտցնելը և պարետային ժամի սահմանումը խիստ դժգոհություն և վրդովմունք առաջ բերեց մարզի բնակչության շրջանում: Բազմաթիվ նամակ-բողոքներ և հեռագրեր էին ուղարկվում կենտրոնական իշխանություններին ու պահանջում այն վերացնել: Սակայն, ի պատասխան դրան, Լեռնային Ղարաբաղ մտցվեցին ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ներքին զորքերի ստորաբաժանումներ, որոնց համակազմերը հիմնականում ռուսներ էին: Պարետ, գեներալ-մայոր Վ.Սաֆոնովը արցախցիներին համարում էր հակախորհրդային, հակաադրբեջանական, ազգայնական և անջատողական: Նա սքողված և բացահայտ նպաստում էր ադրբեջանցիների հակահայկական գործողություններին: Ադրբեջանում կազմակերպվեցին հատուկ նշանակության միլիցիայի ջոկատներ (օմոն), որոնց գործողությունները բացահայտ ուղղված էին արցախահայության դեմ: Մարզային և շրջանային միլիցիայի մարմիններում ավելացվեց ադրբեջանցիների թվաքանակը: Այդ ամենի հիմնական նպատակն էր ամեն գնով ԼՂԻՄ-ը ենթարկել Ադրբեջանին:

1988թ. ամռան վերջին և աշնան սկզբին Արցախում տեղի էին ունենում հիմնախնդրի բազմաթիվ քննարկումներ ու վերլուծություններ: Արդյունքում Շարժման ղեկավարները հանգեցին նրան, որ ռազմավարական տեսակետից նպատակահարմար է կատարել որոշ նահանջ, այսինքն «միացում» կոչը փոխարինել «անջատում» կոչով: Այդ ժամանակավոր նահանջը, համաձայն Շարժման արցախցի ղեկավարների մեկնաբանության, թելադրված էր ժամանակի պահանջով: Այդ մասին հայտարարվեց սեպտեմբերի 14-ին Թատերական հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում:

Մոսկվան և Բաքուն շարունակում էին ուժեղացնել ճնշումը Լեռնային Ղարաբաղի վրա: Բաքվից Ստեփանակերտ ժամանեց ութ հոգուց բաղկացած քննչական խումբ, որն անմիջապես երեք օրով փակեց թաղման բյուրոն և անկարգություն սարքեց քա-

[65] *«Սովետական Ղարաբաղ», 25.09.1988:*

ղաքային գերեզմանոցում: Այդ անօրինությունը կազմակերպել էր Ադրբեջանի գլխավոր դատախազը: Ադրբեջանի իշխանությունների նպատակն էր՝ քրեական գործ հարուցել Արկադի Մանուչարովի, տպարանի տնօրեն Յուրի Ներսիսյանի, մետաքսի կոմբինատի տնօրեն Ռաֆիկ Աթայանի և Շարժման այլ ղեկավարների ու ակտիվիստների նկատմամբ: Ի պատասխան դրան՝ մարզում սեպտեմբերի 12-ից հայտարարվեց համընդհանուր գործադուլ՝ պահանջելով Արցախից դուրս բերել բոլոր ադրբեջանցի «փախստականներին», դադարեցնել նրանց բնակարաններ հատկացնելը, մինչև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծումը դադարեցնել բոլոր տեսակի ստուգումներն ու վերստուգումները, ԼՂԻՄ դատախազությունը հանել Ադրբեջանի դատախազության ենթակայությունից և թողնել ԽՍՀՄ Գերագույն դատախազության ենթակայության տակ, դադարեցնել հայերի նկատմամբ բոլոր տեսակի ստորացումները[66]: 1988թ. սեպտեմբերի 25-ին Թատերական հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում տեղյակ պահելով ցուցարարներին նաև ընթերցվեց Ստեփանակերտի տնօրենների խորհրդի 17 անդամի ստորագրությամբ նամակը, որը յուրահատուկ պատասխան էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հուլիսի 18-ի որոշմանը և Ա.Վոլսկու դիրքին: Նամակը վերջանում էր այն համոզվածությամբ, որ «ոչ մի ուժ չի կարող սեպ խրել Արցախի և Հայկական ՍՍՀ-ի միջև»[67]:

Մոսկվան և Բաքուն շտապում էին արցախահայությանը զինաթափել և զրկել հետագա պայքարի հնարավորությունից: 1988թ. սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին սկսեցին հավաքել արցախցիների որսորդական հրացանները: Հոկտեմբերի 2-ի դրությամբ հավաքվել էր 834 միավոր որսորդական հրացան, որոնցից միայն ութն էր ապօրինի[68], իսկ հոկտեմբերի 10-ի դրությամբ հավաքվել էր Լեռնային Ղարաբաղում գրանցված 2500 որսորդական հրացանների 54 տոկոսը[69]: Եվ, չնայած Ադրբեջանի անվտանգության մարմինների համառ ջանքերին, նրանց չհաջողվեց գտնել զենքի որևէ պահեստ: Արցախցիները նորատիպ որսորդական հրացանները թաքցնում էին և չէին հանձնում:

[66] *Նույն տեղում, 24.09.1988:*
[67] *ՀԱԱ, ֆ. 4516, ց. 1, գ. 18, թ. 23-24:*
[68] **Арутюнян В. Б.,** *նշվ. աշխ., էջ 143:*
[69] *«Սովետական Ղարաբաղ», 11. 10.1988:*

1988թ. հոկտեմբերի 3-ին Ստեփանակերտ ժամանեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի նախագահ Ավգուստ Վոսի գլխավորած հանձնաժողովը, որը ստեղծվել էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հուլիսի 18-ի որոշմամբ: Արցախահայությունն այդ հանձնաժողովի հետ որոշ հույսեր էր կապում: Այն չորս օր ուսումնասիրում էր Լեռնային Ղարաբաղի ընդհանուր վիճակը և Մոսկվա վերադառնալուց հետո զեկուցեց ուր հարկն էր: Այդ հանձնաժողովի աշխատանքներին աջակցելու համար Երևանից ժամանել էին «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ Լ.Տեր-Պետրոսյանը և Բ.Արարքցյանը: Երևան վերադառնալուց հետո հոկտեմբերի 6-ի հանրահավաքում Լ.Տեր-Պետրոսյանը մանրամասն պատմեց Արցախում տիրող ընդհանուր վիճակի մասին: Նա հաղորդեց, որ Արցախում գործադուլն ընդգրկել է նաև գյուղական շրջանները: Ստեփանակերտը լի է տանկերով, գրահապատ մեքենաներով և ավտոմատավոր զինվորներով: Յուրաքանչյուր պահի կարող են ստուգել ցանկացած մարդու: Օդանավակայանից մինչև քաղաք մի քանի անգամ ստուգում են փաստաթղթերը և ճամպրուկները: Երեկոյան ժամը 21[00]-ից հետո ոչ ոք իրավունք չունի երևալ քաղաքում: Մոսկվայից ժամանած հանձնաժողովը հոկտեմբերի 4-ին հանդիպել է խոշոր ձեռնարկությունների ղեկավարների հետ, հոկտեմբերի 5-ին այցելել գործարաններ, իսկ երեկոյան՝ հանդիպել պատերազմի և աշխատանքի վետերանների հետ: Դրանից հետո կայացել է հանդիպում՝ մշակույթի ներկայացուցիչների և մտավորականության հետ: Այդ հանդիպման ժամանակ ելույթ ունեցողները պահանջել են ԼՂԻՄ-ը դուրս բերել Ադրբեջանի կազմից և վերամիավորել Հայաստանի հետ: Որպես ժամանակավոր քայլ՝ առաջարկվել է Արցախը ժամանակավոր թողնել Մոսկվայի ենթակայության տակ: Ի տարբերություն Հայաստանի՝ Ղարաբաղում այդ պահանջը ներկայացրել է ամբողջ ժողովուրդը և մարզի ղեկավարությունը[70]:

Արցախի ադրբեջանական բնակավայրերում զինվորականների հսկողությամբ օր օրի ավելի էր ծավալվում բնակարանների և զանազան օբյեկտների շինարարությունը: Ըստ ադրբեջանական աղբյուրների՝ միայն Խոջալուում արագորեն կառուցվում էր 42 տուն[71]: Իսկ երբ արցախցիները նախատեսում էին որևէ շինարարություն, ապա ադրբեջանցիներն ընդդիմանում էին: Այսպես՝

[70] *ՀԱԱ, ֆ. 4516, գ. 1, գ. 9, թ. 6:*
[71] *Хроника НКАО, февраль 1988 – февраль 1990, Баку, 1990, с. 19-20.*

Շոշ գյուղի կոլտնտեսությանը պատկանող Խաչին տափ կոչված տեղամասում նոյեմբերի 9-ից սկսվել էր Երևանի ալյումինի գործարանի բանվորների համար հանգստյան տան շինարարությունը, որի համար կային պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Այդ առթիվ Ադրբեջանում սկսվեց նոր հիստերիա՝ չխորշելով կեղծիքի, շանտաժի, սեփական ժողովրդին խաբելու մեթոդներից: Եվ ի՞նչ. Արկադի Վոլսկու ցուցումով Խաչին տափի շինարարությունը դադարեցվեց, մինչև Մոսկվայից հատուկ հանձնաժողովի գալը: Նոյեմբերի 25-ին այդ հանձնաժողովը եզրակացրեց, որ շինարարությունն օրինական է, և Ադրբեջանի բոլոր՝ անհիմն: Այդ հանձնաժողովը նաև նշեց, որ Խոջալուում կատարվող շինարարությունն ապօրինի է:

Ադրբեջանի իշխանությունների հակաղարաբաղյան գործողությունների հաջորդ քայլը հանդիսացավ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի փակումը: Դա կատարվեց ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Նիկոլայ Ռիժկովի 1988թ. հոկտեմբերի 18-ի հրամանով՝ առանց որևէ համոզիչ հիմնավորման: 1988 թ. հոկտեմբերի 5-ին ԽՄԿԿ Կենտկոմ ուղարկած գաղտնի նամակում Արկադի Վոլսկին հաղորդում է, որ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում սովորում են 2270 ուսանողներ, որոնցից 1134-ը՝ հեռակա բաժնում: Ինստիտուտում աշխատում են 115 հոգի: Ուսուցումը տարվում է երեք լեզուներով: Ապա գրում է, որ ազգամիջյան հակասությունների հետևանքով ինստիտուտում պարապմունքները դադարեցվել են: Հաղորդում է, որ երկու անգամ հանդիպել է հայ և ադրբեջանցի դասախոսների հետ, սակայն «երկու կողմերն էլ ցուցաբերել են անհաշտ դիրքորոշում: Նրանց հայացքները ակտիվորեն պաշտպանում են ուսանողները»: Հետո նշում է, որ մարզկոմը և մարզխորհուրդը խնդրանքով դիմել են ԽՍՀՄ ժողովրդական կրթության կոմիտեին՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը փակելու համար, և որ այդ որոշումը պաշտպանել է Ստեփանակերտի կուսակցական-տնտեսական ակտիվը: Հարցը համաձայնեցվել է Հայաստանի և Ադրբեջանի կենտկոմների հետ: Ուսանողներին առաջարկվում է տեղափոխվել Բաքվի և Երևանի ուսումնական հաստատություններ[72]: Ինստիտուտի դասախոսները դեմ էին ինստիտուտը փակելուն: Այդ են վկայում մարզկոմի քարտուղար Վ. Աթաջանյանին ուղղված 45 դասախոսների դի-

[72] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 2, գ. 1, գ. 2, թ. 2-3:*

մումները: Նրանցից Ժ. Ֆարսյանը, Հ. Գրիգորյանը, Ա. Պետրոսյանը, Հ. Խաչատրյանը, Ռ. Բալայանը, Օ. Եսայանը, Գ. Բաղդասարյանը, Ա. Մխիթարյանը, Գ. Հարությունյանը և շատ ուրիշներ, իրենց դիմումներում նշելով, որ ինստիտուտի դասախոսական կազմը, որը խիստ անհրաժեշտ է սկսված սուրբ պայքարում և մարզի հոգևոր զարգացման գործում, մանավանդ որ մարզից մտավորականության արտաքսումը հակասում է արցախահայության ընդհանուր շահերին, խնդրում են չփակել ինստիտուտը և իրենց հնարավորություն տալ աշխատել հայրենի Արցախում: Դասախոսներից մեկը՝ Հ. Խաչատրյանը, ուղղակի գրում է. «Ես, լինելով ղարաբաղցի, ոչ մի բարոյական իրավունք չունեմ պայքարի թեժ պահին լքել հարազատ երկրամասը», իսկ Հ. Գրիգորյանը հայտարարում է. «Ձեզ տեղյակ եմ պահում, որ ես հրաժարվում եմ թողնել ԼՂԻՄ սահմանները»[73]: Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի ուսանողներին առաջարկվեց մինչև նոյեմբերի մեկը տեղափոխվել և ուսումը շարունակել Երևանի, Կիրովականի և Լենինականի մանկավարժական ինստիտուտներում[74]: Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի փակումը նպատակ ուներ Արցախից հեռացնել հայ մտավորականությանը, որը հարված էր արցախահայության ազատագրական պայքարին: Ի պատասխան դրան՝ հոկտեմբերի 20-ից Ստեփանակերտում սկսվեց դասախոսների ու ուսանողների հացադուլ և նստացույց[75]: Հայկոմկուսի Կենտկոմի բյուրոն, 1988 թ-ի հոկտեմբերի 31-ին քննարկելով Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանողներին և դասախոսներին Հայաստանի մանկավարժական ինստիտուտներում տեղավորելու Մոսկվայի առաջարկությունը, հանձնարարեց նրանց համար ստեղծել «բոլոր հնարավոր պայմանները»[76]: Նպատակահարմար գտնվեց Ստեփանակերտից տեղափոխված բոլոր ուսանողներին և դասախոսներին տեղավորել Կիրովականի մանկավարժական ինստիտուտում:

Արցախցիները հերթական գործադուլից դուրս եկան հոկտեմբերի 9-ին, որովհետև թե՛ Արկադի Վոլսկին և թե՛ Ստեփանակերտ ժամանած ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի նախագահի տեղակալ Ավգուստ Վոոսը հույսեր էին նկարշնչել նրանց: Այդ օրերին կրկին Ղարաբաղ այցելեց Սուրեն Հարությունյանը: Նա, հանդիպումներ ունենալով Ա.Վոլսկու, Հ. Պողոսյանի և Բաքվից ժամանած Ա.Վեզիրովի հետ, վերադառնալով, Հայկոմկուսի բյուրոն հոկտեմբերի 13-ին լսելով Լեռնային Ղարաբաղում նրա ունեցած հանդիպումների մասին հաղորդումը, ստեղծված վիճակից դուրս գալու համար առաջարկեց որոնել Ադրբեջանի հետ փոխհամաձայնության տարբերակ՝ մեկը մյուսին ընդառաջ գնալ և «կանխել երկու ժողովուրդների խորթացումը...»: Հայկոմկուսի բյուրոն գտնում էր, որ «ԼՂԻՄ-ի խնդիրը հնարավոր է լուծել միայն հանգիստ պայմաններում՝ ցուցաբերելով ճկուն, հավասարակշռված մոտեցում, գնալով փոխադարձ համաձայնության»[77]: Այդ գաղափարները արտահայտել էր Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Հ.Պողոսյանը Ստեփանակերտում Ս.Հարությունյանի, Ա.Վեզիրովի և Ա.Վոլսկու հետ ունեցած հանդիպման ժամանակ[78]:

Արցախ-Ղարաբաղի համար առաջ էին եկել նաև այլ դժվարություններ: Երկրամասը տնտեսական կապեր ուներ երկրի շատ քաղաքների ու ազգային շրջանների հետ: Անընդհատ գործադուլների և շրջափակման հետևանքով արցախցիները չէին կարողանում կատարել իրենց պարտականությունները: Այստեղից էլ առաջ էին գալիս դժգոհություններ: 1988թ. «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրությունը Կիևից ստացել էր ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ Ֆյոդոր Դրիգայլոի նամակը, որտեղ նշված է, թե Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունները խիստ անհանգստություն է առաջ բերում ողջ խորհրդային ժողովրդի մեջ: Այդ առթիվ բավականին նամակներ էր ստացել «Ռադյանսկա Ուկրաինա» թերթը, որտեղ տպագրվել էր Լվովի «Էլեկտրոն» գործարանի բանվոր Վ.Սիմոնովի նամակը: Այնտեղ նշված է, թե իրենց գործարանը կապ ունի Ստեփանակերտի Նոր գործարանի հետ, որը չի կատարում իր պարտականությունները և 1988թ. չի առաքել 840 հազար կոնդենսատորներ, իսկ դա նշանակում է՝ գործարանի հոսքագծից չեն իջել 76 հազար գունավոր հեռուստացույցեր, որը մեծ վնաս է բերել գործարանին: Ստեփանակերտի Նոր գործարանի աշխատանքային

[73] *Նույն տեղում, գ. 62, թ. 3, 6 և այլն:*
[74] *Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի փակման հետ կապված նյութերի պատճենները տե՛ս հեղինակիս անձնական արխիվ:*
[75] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 87, գ. 16, թ. 142:*
[76] *Նույն տեղում, գ. 82, գ. 104, թ. 2:*

[77] *Նույն տեղում, ֆ. 1, գ. 87, գ. 24, թ. 3:*
[78] *«Սովետական Ղարաբաղ», 12.10.1988:*

խորհրդի նախագահ Գեորգի Պետրոսյանը, պատասխանելով Վ. Սիմոնովի նամակին, նշում է, որ այնտեղ բերված տեղեկությունները թերի են, խեղաթյուրված: Մի՞թե ձեզ չեք հարցնում, թե այս ինչպես եղավ, որ պայմանագրային պարտավորությունները չխախտող կոլեկտիվը հանկարծ դիմել է գործադուլի, որը հուսահատված քայլ է: Ադրբեջանը մեր արդար պահանջին պատասխանեց Սումգայիթով, Խոջալուով: Իսկ դուք արձագանքեցի՞ք, պաշտպանեցի՞ք մեր արդար պահանջը: Գեորգի Պետրոսյանն ապա խոստանում է գործով վերականգնել հուսալի պարտնյորի համբավը[79]:

Ինչպես նշվել է, Ադրբեջանի իշխանությունները լայն շինարարություն էին ծավալել մարզի ադրբեջանաբնակ գյուղերում: 1988թ. հոկտեմբերի 28-ին կուսակցության մարզկոմի բյուրոն և մարզգործկոմը, համատեղ քննարկելով այդ հարցը, դատապարտեցին առանց հողամասերի հատկացման և առանց տեղական մարմինների հետ համաձայնության նման շինարարության ծավալումը: Այդ առթիվ դիմելով ԽՄԿԿ Կենտկոմին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը՝ խնդրում են ներգործել Ադրբեջանի ղեկավարության վրա, որպեսզի դադարեցվի անօրեն կերպով սկսված շինարարությունը: 1988թ. նոյեմբերի 2-ին Ադրկոմկուսի քարտուղար Թ.Օրուջևը փորձեց արդարացնել Ադրբեջանի իշխանությունների այդ ձեռնարկումը և հրաժարվել շինարարությունները դադարեցնելու վերաբերյալ Արցախի իշխանությունների պահանջը[80]: Ավելին, Ադրբեջանը Մոսկվայի աջակցությամբ շարունակում էր իր «հաղթարշավը»: Քանի որ Շուշին հսկում էր Գորիս-Ստեփանակերտ, իսկ Խոջալուն՝ Աղդամ-Ստեփանակերտ ճանապարհները, դրանց վրա գտնվող ազերիների բնակավայրերի ամրապնդումը Ադրբեջանի համար ուներ ռազմավարական նշանակություն: Հոկտեմբերի 17-ին Աղդամում հավաքվելով՝ Ադրբեջանի կառավարության անդամներն ու այլ ղեկավարներ մի ամբողջ շաբաթ քննարկեցին Խոջալուում և Շուշիում շինարարությունը ծավալելու հարցը: Այդ օրերին Աղդամ էին բերվում շինարարական հզոր տեխնիկա, շինանյութերով բարձված բեռնատար ավտոմեքենաներ, աշխատող ուժ, մասնագետներ: Ադրբեջանը պլանավորել էր 2500 բնակիչ ունեցող Խոջալուն շատ կարճ ժամկետում դարձնել տասը հազարանոց քաղաք:

[79] *Նույն տեղում, 20.10.1988:*
[80] *Նույն տեղում, 15.11.1988:*

Հոկտեմբերի 24-ի առավոտյան Խոջալու են գնում Ասկերանի կուսշրջկոմի առաջին քարտուղար Ա.Քոչարյանը և շրջանի պարետն ու պահանջում անհապաղ դադարեցնել ապօրինի շինարարությունը, քանի որ շրջգործկոմը դրա համար տարածք չէր հատկացրել: Սակայն երկու ժամ անց Ադրկոմկուսի երկրորդ քարտուղար Կովալյովի հրամանով բանակը, տանկերը, զրահապատները Ասկերանի շրջանի պարետի գլխավորությամբ գալիս են Խոջալու, և աշխատանքները վերսկսում: Միանգամից կառուցում էին բնակարաններ, արդյունաբերական ձեռնարկություններ, մշակույթի և առևտրի օջախներ: Նախատեսված 220 ֆիննական տներից 45-ը ավարտվեցին երեք օրում, մինչդեռ մարզում փախստականների համար նախատեսված նման 500 տներից մեկ ամսում կառուցվել էին ընդամենը տասը: Շուշիում «փախստականների» անվան տակ կուտակվել էին Հայաստանից հեռացած 14 000 ադրբեջանցիներ: Որոշվել էր Շուշին դարձնել 100 հազարանոց քաղաք: Ա.Վեզիրովը, հանդես գալով հանրապետության հեռուստատեսությամբ, կոչ էր անում շատ կարճ ժամկետում իրագործել այդ պլանը: Դրան հակառակ՝ արցախցիները չունեին ո՛չ շինանյութ, ո՛չ տեխնիկա, ո՛չ ֆինանսներ: Ադրբեջանը Հայաստանին արգելում էր Արցախում որևէ աշխատանք կատարել[81]: Հայաստանի ՊԱԿ-ի նոր նախագահ Վ.Բաղամյանցը 1988թ. հոկտեմբերի 31-ին Հայկոմկուսի Կենտկոմին հաղորդել է, թե «Ղարաբաղ» կոմիտեն պլանավորել է քարոզչական լայն աշխատանք ծավալել Խոջալու գյուղում սկսված շինարարական աշխատանքների դեմ: Նրանք ձգտում էին հասնել նրան, որպեսզի Ասկերանի շրջանային իշխանությունները որոշում ընդունեն Խոջալուում շինարարությունը դադարեցնելու մասին: Հայաստանի ՊԱԿ-ի նախագահը հաղորդում է, թե Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի կողմից կատարվող շինարարությունը մարզը «ադրբեջանացնելու» քայլերից է, և որ Ադրբեջանն այդ «նպատակաուղղված քաղաքականությունը» իրականացնում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման միջոցների հաշվին[82]: Մարզում Ադրբեջանի իշխանությունների կողմից շինարարության ծավալումը խիստ վրդովեցնում էր ԼՂԻՄ բնակչությանը:

[81] *ՀԱԱ, ֆ. 4516, գ. 1, գ. 10, թ. 6-7:*
[82] *Նույն տեղում, գ. 87, գ. 16, թ. 165:*

Երևանում լույս տեսնող «Կոմունիստ» թերթի 1988թ. նոյեմբերի 4-ին տված հարցազրույցում ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանը տեղյակ է պահում մարզի բնակչության անհանգստությունը խոջալուում և մարզի մյուս ադրբեջանաբնակ վայրերում ծավալված ապօրինի շինարարության կապակցությամբ: Նա նշեց, որ Ստեփանակերտում 500 փախստականներ կան միայն Շուշիից, իսկ Սումգայիթից, Բաքվից, Աղդամից, Միրբաշիրից, Կիրովաբադից և Ադրբեջանի այլ վայրերից բռնագաղթվածներին մարզում բնակեցնելը կապված է չափազանց բարդ խնդիրների հետ. չկա աշխատանք, բնակարան և ապրելու միջոցներ: Ձեռնարկությունները գրեթե չեն աշխատում: Հ.Պողոսյանը նշում է, որ սկզբում հարցը դրվել է միանալ Հայաստանի հետ: Քանի որ դա հանդիպել է իշխանությունների լուրջ դիմադրությանը, ուստի ստիպված էինք փոխել պահանջը և առաջարկել ժամանակավորապես լինել Մոսկվայի ենթակայության տակ: «Կարծում ենք,- ասում է կուսմարզկոմի քարտուղարը,- որ երկրի կառավարման մարմիններին ենթարկվելը մարզին թույլ կտա նորից ապրել նորմալ, լիարյուն կյանքով: Հիմնախնդրի նման լուծումը կբավարարեր Ղարաբաղի հայ բնակչությանը» և կվերացներ հատուկ դրությունը:

1988 թ. հոկտեմբերի 18-ին Մոսկվայում սկսվել էր Սումգայիթի հանցագործների դատավարությունը: Հայաստանից, Արցախից և երկրի այլ վայրերից ուղարկվում էին բազմաթիվ հեռագրեր և նամակներ, որոնց հեղինակները պահանջում էին արժանի պատիժ տալ ոճրագործներին: Հայաստանի ՊԱԿ-ի նոյեմբերի 3-ի հաղորդումից իմանում ենք, որ «սումգայիթյան դատավարությանը մասնակցելու և ճնշում գործադրելու համար» Մոսկվա են մեկնել Սիլվա Կապուտիկյանը, Զորի Բալայանը, Գևորգ Եմինը, «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ Հ.Գալստյանը, Վ.Սիրադեղյանը, Սումգայիթի ողբերգությունը հետաքննող Հ.Ուլուբաբյանը և ուրիշներ: Մոսկվայից նրանք խնդրում էին այնտեղ ուղարկել նաև Մարո Մարգարյանին, Արտաշես Պողոսյանին, ինչպես նաև դրամ՝ Մոսկվայում գտնվող սումգայիթցի փախստականներին օգնություն ցույց տալու համար[83]:

Մոսկվան և Բաքուն նոր սադրանքներ էին հյուսում արցախահայության դեմ: Չնայած մարզային իշխանությունները և

[83] *Նույն տեղում, թ. 186: Բաքվից իր հերթին Մոսկվա էր մեկնել մի մեծ խումբ՝ Սումգայիթի դահիճներին սատարելու համար:*

բնակչությունը վերադասից պահանջել էին առժամանակ մինչև լարվածության թուլացումը, մարզում ոչ մի ստուգում չկատարել՝ իբրև յուրացումներ հայտնաբերելու ակնկալիքով նրանք փորձում էին ստուգումներ կատարել մարզի այն հիմնարկ-ձեռնարկություններում, որոնց ղեկավարները շարժման ակտիվ մասնակիցներ էին, մյուս կողմից էլ Ադրբեջանի գանգվածային լրատվության միջոցները շարունակում էին «մրոտել» հայ ժողովրդին: Այդ ամենն արցախահայությանը ստիպեց նոյեմբերի 14-ից դիմել համընդհանուր գործադուլի, որը շարունակվեց մինչև դեկտեմբերի 7-ը: Գործադուլավորները պահանջում էին.

1. ԼՂԻՄ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորներից պահանջել քննարկման մտցնելու Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միավորելու հարցը:

2. Պահանջել ԽՍՀՄ Գերագույն խորհրդից քաղաքական գնահատական տալ փետրվարի 27-29-ը Սումգայիթում տեղի ունեցած սպանդին և պատասխանատվության ենթարկել կազմակերպիչներին:

3. Ադրբեջանի ղեկավարությունից պահանջել Լեռնային Ղարաբաղից դուրս բերել «հայաստանցի փախստականներին»:

4. Անհապաղ դադարեցնել ապօրինի շինարարությունները:

5.Վերացնել պարետային ժամը:

6. Պաշտոնից հեռացնել ԽՍՀՄ դատախազության ներկայացուցիչ Վասիլենկոյին:

7. ԼՂԻՄ-ում դադարեցնել բոլոր տեսակի ստուգումներն ու վերստուգումները:

8. Մարզային ղեկավարներին հնարավորություն տալ հանդես գալու կենտրոնական մամուլի էջերում և կենտրոնական հեռուստատեսությամբ:

9. Անհապաղ վերացնել Հայաստանից Լեռնային Ղարաբաղ տանող ճանապարհների շրջափակումը[84]:

Նոյեմբերի 3-ին տեղի ունեցած Ստեփանակերտի քաղաքային խորհրդի նստաշրջանը, որի աշխատանքներին մասնակցում էր ԽՄԿԿ Կենտկոմի պատասխանատու աշխատող Բ.Նեֆեդովը, քննարկելով Խոջալուում և Մալիբեկլուում շարունակվող անօրեն շինարարության հարցը, խնդրեց մարզխորհրդին միջոցառումներ ձեռնարկել կարգուկանոնն ու օրինականությունը վե-

[84] *Նույն տեղում, ֆ. 4516, ց. 1, գ. 10, թ. 62-63:*

ռականգնելու և մարզի սահմանադրական իրավունքները պաշտպանելու համար[85]:

Նոյեմբերի 4-ին տեղի ունեցած ԼՂԻՄ մարզխորհրդի նստաշրջանը ընդունեց որոշում՝ «1988–1995 թվականներին ԼՂԻՄ սոցիալ-տնտեսական զարգացման արագացման միջոցառումների մասին» ԽՄԿԿ կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1988 թվականի մարտի 24-ի N 371 որոշման կատարման ընթացքի մասին» հարցի վերաբերյալ, որում արտահայտվել է մարզի բնակչության դժգոհությունը լրատվական միջոցների նկատմամբ, որոնք ղարաբաղյան իրադարձությունները լուսաբանում էին միտումնավոր և անաչառու կերպով: Որոշման մեջ ասված է, որ «միայն մարզի աշխատավորության քաղաքացիական տոկունության և քաղաքական գիտակցության շնորհիվ իրենց նպատակին չեն հասել մամուլի և հեռուստատեսության պարզապես սադրիչ ելույթները: Մարզխորհուրդը դատապարտեց Ադրբեջանի մամուլում հնչող և հեռուստատեսությամբ հաղորդվող հակահայկական ելույթները և վերադաս իշխանություններից պահանջեց հրաժարվել նման ազգայնական քաղաքականությունից[86]:

Ադրբեջանի իշխանությունները լայն քարոզչություն էին ծավալում մանավանդ Արկադի Մանուչարովի դեմ: Նրանք հասել էին նրան, որ տխրահռչակ Կատուսևը հրաման էր արձակել Մանուչարովին ձերբակալելու վերաբերյալ: Նոյեմբերի 17-ի լույս 18-ի գիշերը հինգ տանկով և 500 զինվորներով շրջապատել էին այն շենքը, որտեղ գտնվում էր Արկադի Մանուչարովի բնակարանը: Շարժման ղեկավարներին հաջողվեց Ա.Մանուչարովին փրկել ձերբակալությունից և տեղափոխել Երևան, որտեղ նոյեմբերի 28-ին ձերբակալվեց Հայաստանի ներքին գործերի նախարարության կողմից ու հանձնվեց Ադրբեջանի հոշոտմանը: Ա.Մանուչարովին ձերբակալելու փորձի գիշերը զինվորականները բահերով և դագանակներով անխնա ծեծում են աղմուկի հետևանքով փողոց դուրս եկած մարդկանց ու պատճառում մարմնական վնասվածքներ[87]:

Նման չափազանց լարված իրավիճակում 1988թ. նոյեմբերի 25-ին տեղի ունեցած կուսակցության ԼՂԻՄ մարզկոմի պլենումը, ընդառաջելով մարզի հայ կոմունիստների միահամուռ

[85] *«Սովետական Ղարաբաղ», 4.11.1988:*
[86] *Նույն տեղում, 6.11.1988: Տես նաև ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 267, թ. 25:*
[87] Աբրահամյան Հ., *Ճակատագրին ընդառաջ, էջ 68:*

պահանջին, անվստահություն հայտնեց Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմին: Իսկ դա նշանակում էր՝ անհարիր է ԼՂԻՄ մարզային կուսակազմակերպության հետագա գտնվելը Ադրբեջանի կոմկուսի կազմում: Պլենումը ԽՄԿԿ Կենտկոմին խնդրում է կուսակցության ղարաբաղյան կազմակերպությունն ուղղակի ենթարկեցնել իրեն՝ այն կոչելով ԽՄԿԿ Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտե[88]: Սակայն, ինչպես միշտ, այս անգամ ևս արցախցիների պահանջը դարձյալ մնաց անպատասխան:

3. ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՆՈՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ

1988թ. նոյեմբերի 29-ին իր աշխատանքները սկսեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 12-րդ նստաշրջանը: Հայկական ԽՍՀ պատգամավորների կողմից մտցվում է հարցապնդում, որտեղ ասված էր. «Ադրբեջանական ՍՍՀ-ում և Հայկական ՍՍՀ-ում ԼՂԻՄ-ի հարցի շուրջը իրավիճակի կտրուկ սրման և բավարար տեղեկատվության բացակայության կապակցությամբ Հայաստանի պատգամավորների խումբը առաջարկում է այս նստաշրջանում լսել 1988 թվականի հուլիսի 18-ի ՍՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի հանձնաժողովի նախագահ Ա.Վոլսի հաղորդումը հանձնաժողովի աշխատանքի ընթացքի և դրա նախնական արդյունքների մասին և ՍՄԿԿ Կենտկոմի ու ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ներկայացուցիչ Ա.Վոլսկու հաղորդումը տարածաշրջանում և դրա նոր սրման պատճառների մասին»[1]: Հարցապնդմանը պատասխանելով՝ Ա.Վոլսկին նշեց, որ Լեռնային Ղարաբաղում տնտեսությունը գտնվում է խիստ բարձիթողի վիճակում: Այնտեղ չափազանց ծանր են սոցիալական պայմանները: «Եվ ներում չկա այն անձանց,– շեշտեց նա,– ովքեր նման վիճակի են հասցրել այդ լեռնային երկրամասը, որտեղ ապրում են բարի և աշխատասեր մարդիկ»: Ապա ասաց, որ տարածաշրջանում ընդհարումները սկսվել են ազգամիջյան հակասությունների հիման վրա, և ճիշտ համարեց Հայաստանի ու Ադրբեջանի մի շարք տեղերում մեկ շաբաթ առաջ հատուկ դրություն մտցնելն ու պարետային ժամի սահմանումը[2]: ԽՍՀՄ Գերագույն

[88] **Арутюнян В. Б.,** *նշվ. աշխ., էջ 151–153:*
[1] *"Правда", 30.11.1988:*
[2] *Նույն տեղում:*

խորհրդի նստաշրջանը ընդունեց որոշում, որով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը հանձնարարվում էր կուսակցական, պետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ԼՂԻՄ-ից, Ադրբեջանական և Հայկական ԽՍՀ-ներից ընտրված պատգամավորների հետ տարածաշրջանում իրավիճակը կարգավորելու նպատակով անցկացնել խորհրդակցություններ և վերականգնել ինտերնացիոնալ բարեկամությունը հայերի և ադրբեջանցիների միջև[3]:

Այդ որոշումն ընդհանուր վիճակը չփոխեց: 1988թ. նոյեմբերի վերջին և դեկտեմբերի սկզբին ոչ միայն Լեռնային Ղարաբաղում, այլև Ադրբեջանում ապրող հայերի նկատմամբ իրագործվում էին բռնարարքներ և ստիպում հեռանալ հանրապետությունից: Դեկտեմբերի 4-ին Աբուլֆազ էլչիբեյի գլխավորությամբ ստեղծված Ադրբեջանական ժողովրդական ճակատը (ԱԺճ) իր վրա վերցրեց «Ադրբեջանից հայերին քշելու» պատրաստակամությունը: Ասենք, որ Արցախի ազգային ազատագրական պայքարի համար խիստ հարված էր Ստեփանակերտից մանկավարժական ինստիտուտի տեղափոխումը և Արկադի Մանուչարովի ձերբակալությունը: «Կռունկը» համարյա դադարել էր գործել, իսկ տնօրենների խորհրդի գոյությունը դարձել էր աննկատ: Ամբողջ մարզը գործադուլի մեջ էր: Այն դադարեցնելու համար իշխանությունների գործադրած ջանքերն անցնում էին անտեղի: Ամեն օր Ղարաբաղ էին գալիս հարյուրավոր բռնագաղթված ընտանիքներ: Նրանց տեղավորմանը լծվել էին մարզային իշխանությունները, հասարակական ուժերն ու մտավորականությունը: Ստեփանակերտցիները Հայաստանից բերվող շինանյութերով փախստականների համար տներ էին կառուցում քաղաքի Հայկական արվարձանում: Եվ չնայած հատուկ դրությանը՝ Հաղթանակի հրապարակում շարունակվում էին հանրահավաքները:

Հայության համար մեծագույն ողբերգություն էր 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի ահավոր երկրաշարժը, որն ընդգրկեց հանրապետության տարածքի 40 %-ը: Սգի մեջ էր նաև ամբողջ Արցախը: Գործադուլն անմիջապես դադարեցվեց, և դեկտեմբերի 8-ից աշխատանքները վերսկսվեցին: Այդ նույն օրը տեղի ունեցած կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմում հրավիրված խորհրդակցությունը որոշեց նյութական օգնություն ցույց

[3] *Նույն տեղում:*

տալ ինչպես երկրաշարժից տուժվածներին, այնպես էլ Ադրբեջանից բռնագաղթվածներին: Որոշվեց օրվա աշխատանքային տևողությունը երկարացնել 1-2 ժամ և դրանից եկած օգուտները մտցնել երկրաշարժից տուժածների օգնության ֆոնդը[4]: Ստեփանակերտի քաղաքային պոլիկլինիկայում և մարզային հիվանդանոցում բազմաթիվ մարդիկ արյուն էին տալիս երկրաշարժի պատճառով տուժածների համար: Արցախցիները պատրաստակամություն հայտնեցին երկրամասում տեղավորել անօթևան մնացած մի քանի հազար ընտանիքի: Ստեփանակերտի բնակսոցբանկում աղետյալներին օգնելու համար բացվեց հատուկ հաշիվ: Արդեն դեկտեմբերի 19-ի դրությամբ այդ հաշվին փոխանցվել էր 4 477 800 ռուբլի, այդ թվում՝ 625 500ռ.՝ կանխիկ[5]: Ստեփանակերտից աղետի գոտի մեկնեց ավտոշարասյուն՝ աղետյալներին օգնելու համար: Հարյուրավոր արցախցիներ մասնակցեցին փրկարարական աշխատանքներին: Երկրաշարժի հետևանքները վեր անցնելու համար տարվող աշխատանքները ղեկավարող ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովը և Հայաստանում գտնվող ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Ն.Սլյունկովը դեկտեմբերի 15-ին Երևանում ընդունեցին ԼՂԻՄ-ի պատվիրակությանը, որը գլխավորում էր ԼՂԻՄ մարզխորհրդի նախագահի տեղակալ Շմավոն Պետրոսյանը[6]: Այդ հանդիպման ժամանակ մասնավորապես քննարկվեց Ղարաբաղի և Հայաստանի միջև անվտանգ ավտոբուսային հաղորդակցության ապահովման հարցը: Նիկոլայ Ռիժկովը խոստացավ այդ հարցը կարգավորել կարճ ժամանակամիջոցում: Սակայն դա մնաց միայն խոստում, որովհետև դեկտեմբերի 19-ից Հայաստան–Արցախ ավտոբուսային երթևեկությունը լրիվ դադարեց: Գրեթե փակվեց նաև օդային կապը: Երևանի «Էրեբունի» օդանավակայանում, երկաթուղային կայարանում և ավտոկայանում հազարավոր արցախցիներ օրերով ու շաբաթներով սպասում էին, սակայն չէին կարողանում մեկնել հայրենիք, որովհետև Ադրբեջանի իշխանությունները դիտավորյալ ստեղծել էին արհեստական արգելքներ: Հենց այդ օրերին՝ դեկտեմբերի 24-ին, Լեռնային Ղարաբաղ այցելեց Ա.Սախարովը՝ կնոջ՝ Ելենա Բոնների հետ: Նրանց ուղեկցում էին պատմագիտության դոկտոր

[4] *«Սովետական Ղարաբաղ», 09.12.1988:*
[5] **Арутюнян В. Б.**, *նշվ. աշխ., էջ 160:*
[6] *«Մեղադրվում են», Եր., 1989, էջ 86:*

Լեոնիդ Բարկինը, գիտությունների թեկնածուներ՝ Գալինա Ստարավոյտովան և Անդրեյ Զուբովը: Մինչև Լեռնային Ղարաբաղ ժամանելը, նրանք Բաքվում հանդիպել էին Ա.Վեզիրովի հետ: Վերջինս, փոխանակ խոսելու Ղարաբաղի հիմնախնդիրը լուծելու հնարավորությունների և պայմանների մասին, հայ-ադրբեջանական հարաբերությունների շուրջ «դասախոսություն» էր կարդացել: Նրան հիշեցվել է, որ «եղբայր ժողովուրդները պետք է իրենց անհաշտությունը մոռանան դժբախտության օրերին, իսկ այդպիսի ողբերգություն է Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժը, և հենց հիմա ամենահարմար պահն է Ղարաբաղը հանձնելու Հայաստանին»: Ա.Վեզիրովը սանձարձակորեն պատասխանել է, թե «հողը չեն նվիրում, հողը նվաճում են. արյամբ»[7]:

Անդրեյ Սախարովը Ստեփանակերտում և Շուշիում հանդիպեց փախստականների, Արցախի մտավորականության և մարզի ղեկավարության հետ: Նա հանդիպում պահանջեց այդ ժամանակ Շուշիի բանտում գտնվող Արկադի Մանուչարովի հետ: Սակայն նրան միայն թույլատրեցին ընդամենը նայել բանտախցի դռնակի փոքրիկ անցքից:

Մեծ գիտնականը մինչև մահ պաշտպանում էր արցախցիների արդար դատը: Դեռևս 1988թ. հոկտեմբերի 13-ին պատասխանելով լրագրողներից մեկի հարցին՝ հստակ ասել է, որ պետք է «դադարեցնել Ղարաբաղի ենթակայությունը Ադրբեջանին», քանի որ Սումգայիթից հետո «հնարավոր չէ ադրբեջանցիների հետ միասին ապրել»: Նա նաև նշել է, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հուլիսյան որոշումից հետո «ոչ մի լավ բան տեղի չի ունենում, իրավիճակն ավելի է սրվում»: -Միակ ելքը,- շարունակել է նա,- «Ղարաբաղը Ադրբեջանի կազմից դուրս բերելն է» և այնտեղ «կենտրոնական իշխանության կառավարում» ստեղծելը: Նրա կարծիքով երկրի նախագահի կողմից նշանակված ներկայացուցիչը պետք է իր վրա վերցնի մարզի կառավարումը: Ըստ Ա.Սախարովի, երկիրն ուներ ուժեղ բանակ, որը կարող էր մտցնել Ադրբեջան, կանխել հնարավոր ազգամիջյան ընդհարումները: «Իսկ մինչ այդ,– շեշտել էր նա,– պետք է ճիշտ ձևակերպվի խնդիրը: Լեռնային Ղարաբաղի բնակչության

[7] *Андрей Сахаров о Нагорном Карабахе, с. 18.*

կամքի համաձայն, ժողովրդական հիմքի վրա: Այդ դեպքում ոչ մի նոր սումգայիթ չի լինի: Դա ձեռնտու կլինի նաև Ադրբեջանին»[8]:

Մ.Գորբաչովը Երևան ժամանեց դեկտեմբերի 9-ին: Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 10-ին՝ ձերբակալվեցին «Ղարաբաղ» կոմիտեի մի շարք անդամներ: Մոսկվան պահանջում էր «մերկացնել հայկական ազգայնամոլությունը», քանի որ այդպիսինն էր «կուսակցության Կենտկոմի գաղափարախոսական բաժնի ցուցումը»[9]: Անկասկած, երևանյան ձերբակալությունները տեղի էին ունեցել անմիջապես Մ.Գորբաչովի պահանջով: Ձերբակալությունները ձևակերպվեցին որպես վարչական կալանք՝ կապված արտակարգ դրության ռեժիմի «խախտումների» հետ: Ազատ մնացած կոմիտեականները շարունակում էին գործել ընդհատակում: Ձերբակալվածների վարչական կալանքի ավարտին երկու օր մնացած՝ ձերբակալվեցին նաև կոմիտեի ազատ մնացած անդամները: 1989թ. հունվարի 9-ին նրանց տեղափոխեցին Մոսկվայի բանտերը, որտեղ պահվեցին մինչև 1989թ. մայիսի վերջը:

Հայաստանում հասարակական կյանքը շարունակվում էր անկում ապրել: Այստեղ 1988թ. վերջին կային 6036 կուսակցական սկզբնական կազմակերպություններ, որոնցից 1550-ը՝ արդյունաբերական, տրանսպորտի, կապի և շինարարության բնագավառներում, 540-ը՝ պետտնտեսություններում, 275-ը՝ կոլտնտեսություններում: Հանրապետությունում կուսակցականների թիվը հասնում էր 196 838-ի[10]: Սկսվել էին ինքնալուծարվել կուսակցական սկզբնական կազմակերպությունները և կուսակցության շարքերից հեռանալ հարյուրավոր կուսակցականներ: 1988-ի վերջին արդեն ինքնալուծարվել էին ավելի քան 90 սկզբնական կուսակցական կազմակերպություններ, իսկ տեղական խորհուրդներից հեռացել էին ավելի քան 2000 պատգամավորներ, փակվել էին ավելի քան 80 դպրոց և 10 բուժկետ[11]: Հատուկ շրջանի պարետ գեներալ Ա.Մակաշովի ստորագրությամբ «Ղարաբաղ» կոմիտեի մասին վարկաբեկիչ նյութեր էին հաղորդվում Հայաստանի կենտրոնական լրատվամիջոցներով: Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը, դեկտեմբերի 17-ին՝ հանդես գալով Հայաստանի հեռուստատեսու-

[8] *Նույն տեղում, էջ 19-20:*
[9] *"Московские новости, N33, 19.08.1990.*
[10] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 87, գ. 27, թ. 6:*
[11] *"Коммунист", 27.12.1988.*

թյամբ՝ «Ղարաբաղ» կոմիտեին բնորոշեց որպես հայ ժողովրդի N առաջին թշնամի[12]:

Արցախ-Հայաստանում վիճակը մնում էր ծանր: Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա.Վեզիրովը, դեկտեմբերի 28-ին հանդես գալով Բաքվի կուսակազմակերպության հաշվետու-ընտրական կոնֆերանսում, հայտարարեց, թե իբրև հիմնականում հայերի մեղքով նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրավիճակը ավելի է սրվել Ադրբեջանում[13]: Ադրբեջանում նման սադրանքներ հաճախակի էին հնչում: Այնտեղ էլ ավելի սանձարձակ էր դառնում Ազգային ճակատը, որի հրավիրած հանրահավաքներում հնչում էին միայն հակահայկական լուտանքներ ու կոչեր: Եվ այդ ամենի հանդեպ կենտրոնական իշխանությունները շարունակում էին լռել:

1989թ. հունվարի 11-ին տեղի ունեցավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստ, որտեղ քննարկվեց ԼՂԻՄ-ի հարցը: Ընդունվեց հրամանագիր «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզում կառավարման հատուկ ձև սահմանելու մասին», որի առաջին կետի համաձայն՝ ԼՂԻՄ-ը թողնվում էր Ադրբեջանական ԽՍՀ կազմում, իսկ երկրորդ կետում ասված է, որ «Հատուկ կառավարման կոմիտեն լրիվ ծավալով օժտված է ինքնավար մարզի ժողովրդական պատգամավորների խորհրդի և նրա գործադիր կոմիտեի լիազորություններով, իսկ կոմիտեի նախագահը՝ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահի իրավունքներով ու պարտականություններով»[14]: Հրամանագրի համաձայն դադարեցվում են ԼՂԻՄ 20-րդ գումարման ժողովրդական պատգամավորների խորհրդի լիազորությունները մինչև խորհրդի նոր կազմի ընտրությունների անցկացումը: Կոմիտեի վրա էին դրված տեղական պետական մարմինների և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ղեկավարումը, ինչպես նաև ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի գործադիր կոմիտեի լիազորությունները: Մարզի մշակութային, լրատվական, հրատարակչական, կրթական և այլ մարմիններ պետք է ենթարկվեին կոմիտեի ղեկավարին կամ նրա ներկայացուցչին, իսկ դատարանն ու դատախազությունը՝ ըստ ենթակայության: Հրամանագրի ձևակերպումից երևում է, որ մարզի տնտեսությունը մնում էր Ադրբեջանից կախվածության մեջ: Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը հանձնարարվում էր «հրամանագրից բխող համապատասխան որոշումներ» ընդունել: Հրամանը պետք է կիրառվեր 1989թ. հունվարի 20-ից: Կոմիտեի նախագահ հաստատվեց Ա.Վոլսկին[15]:

Մոսկվա-Բաքու համաձայնությամբ ծնված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության այդ հրամանագիրը նպատակ էր հետապնդում Լեռնային Ղարաբաղը կրկին հանձնել Ադրբեջանի տնօրինությանը: Հրամանագրի հետ միասին «Պրավդայում» տպագրված Ա.Վոլսկու «Խաղաղություն Ղարաբաղի հողին» հոդվածում նա խոստանում էր զարգացնել Ղարաբաղի տնտեսական կապերը Հայաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի, Ուկրաինայի և մյուս հանրապետությունների հետ, զարկ տալ մարզի տնտեսությանն ու մշակույթին: Նա շեշտում է, որ Ղարաբաղի կյանքի արմատական հարցերը կարող են լուծվել միայն մարզի բնակչության ուժերով՝ լինելով համոզված, որ «Մարզն ինքնուրույն կլուծի այն ամենը, ինչ-որ նա կարող է լուծել՝ կադրային հարցերից մինչև ինքնաֆինանսավորումը»: Ա.Վոլսկին, Մոսկվայից վերադառնալով, լինում է Բաքվում և Երևանում, հանդիպում երկու հանրապետությունների առաջին դեմքերի հետ և քննարկում Ղարաբաղում ինքնուրույն տնտեսավարկով աշխատող միավորումներ ստեղծելու հարցը, որում կարևոր դեր պետք է ունենային կուսակցական և պետական մարմինները[16]: Ա.Վոլսկին, փետրվարի 6-ին հանդիպելով Ստեփանակերտի Կոշիկի ֆաբրիկայի աշխատողների հետ, հայտարարեց, թե Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը կլուծվի փուլ առ փուլ, աստիճանաբար: Իսկ դրա համար առաջին և կարևոր քայլը աշխատելն է[17]: Այդուհանդերձ, հետագա իրադարձությունները համոզեցին, որ Մոսկվայի այդ կոսմետիկ քայլը լոկ աչքակապություն էր: Եվ,

---

[12] *«Սովետական Հայաստան», 18.12.1988:*

[13] *"Бакинский рабочий", 29.12.1988.*

[14] *"Правда" 15.01.1989: Կառավարման հատուկ կոմիտեի անդամներ են հաստատվում Վ. Մ. Միշինը (Համամիութենական արհմիության քարտուղար), Վ. Ա. Սիդորովը (ԽՍԿԿ Կենտկոմի ենթաբաժնի վարիչի տեղակալ), Վ. Ծ. Պլիսովը (ԽՍՀՄ ծանր մեքենաշինության նախարարի տեղակալ), Ս. Հ. Բաբայանը (ԼՂԻՄ մարզգործկոմի նախագահ), Վ. Ա. Թովմասյանը (ԼՂԻՄ ժողովրդական վերահսկողության կոմիտեի նախագահ), Վ. Դ. Զաֆարովը (կուսակցության Շուշիի շրջկոմի առաջին քարտուղար):*

[15] *"Известия", 21.01.1989.*

[16] *"Правда", 29.01.1989.*

[17] *"Социалистическая индустрия", 30.04.1989.*

չնայած դրան, Լեռնային Ղարաբաղում Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումով ի հայտ եկան կյանքի աշխուժացման որոշ նշաններ, մանավանդ տարբեր բնույթի կոոպերատիվների գործունեության բնագավառում: Նախանշվեց մարզում կառուցել համակցված կերերի գործարան, վերակառուցել Ստեփանակերտի ջրամատակարարման և էլեկտրամատակարարման համակարգերը: Անհատական շինարարությունն ընդլայնելու համար մշակվեց լրացուցիչ հողամասեր հատկացնելու և շինանյութերի առևտրի կազմակերպման պլան, որոշվեց Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկան մտցնել «Հարավկահույք» արտադրական միավորման կազմի մեջ, ստեղծել շինափայտի մթերման, վերամշակման և բնակչությանը փայտից պատրաստված արտադրատեսակների վաճառքի ֆիրմա: Քայլեր էին ձեռնարկվում մարզում ստեղծել նոր նյութատեխնիկական մատակարարման տարածքային մարմին, որը պետք է ուղիղ ենթարկվեր ԽՍՀՄ Պետմատին:

Երկու ամիս անց Ա.Վոլսկին հայտարարեց, թե Ստեփանակերտի դրամատիկական թատրոնի աշխատողները կմտնեն Հայաստանի թատերական գործիչների միության մեջ, կկազմակերպվի կոմպլեքսային հնագիտական վերականգնիչ արշավախումբ, որը կզբաղվի մարզի պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնման աշխատանքներով, կվերականգնվի Ամարասի վանական համալիրը: Նաև նշեց, որ ԽՍՀՄ կառավարությունը թույլատրել է թթի օղու թորումը և արտահանումը արտասահման, Ղարաբաղի գյուղատնտեսությունն ազատվում էր բոժոժի արտադրությունից, օրակարգ մտցվեց մսի կոմբինատի վերակառուցումը, ոչխարների գլխաքանակի շեշտակի նվազեցումը և այլն, որոնք բխում էին արցախահայության կենսական շահերից[18]: Սակայն Արցախի սոցիալ-տնտեսական վիճակը մնում էր անտանելի: Արդեն 1989թ. փետրվարի սկզբին մարզում կային 11,5 հազար փախստականներ, որոնցից 8,5 հազարը՝ Ստեփանակերտում: Քաղաքի դպրոցներում արտասովոր ծանրաբեռնվածություն էր. մեկ դասարանում պարապում էր 60 աշակերտ, մանկապարտեզներում 2-3 երեխայի բաժին էր ընկնում մեկ մահճակալ[19]: Քաղաքային գրադարանը, երաժշտական դպրոցը և մշակույթի շատ օջախներ գտնվում էին անտանելի

[18] *«Սովետական Ղարաբաղ», 24.03.1989:*
[19] *Նույն տեղում, 09.02.1989:*

վիճակում: Հատուկ կառավարման կոմիտեի անդամ Վալերի Սիդրովը փորձում էր արցախցիներին համոզել, թե այդ ամենը կհարթվի, և որ մարզը պետք է հասնի լիակատար ինքնուրույնության ու ինքը լինի իր կյանքի տերը[20]: Շատ ծանր հետևանքներ էին թողնում գործադուլները: Օրինակ՝ նախատեսված 35 հազար քառակուսի մետր բնակտարածությունից գործարկվել էր ընդամենը 2,5 հազարը: Չէր կառուցվել ոչ մի դպրոց, հիվանդանոց, նախադպրոցական հիմնարկ, բնակարանամուտ տոնելուց գրկվել էր 1600 ընտանիք[21]: Ա.Վոլսկին նշում է, որ գյուղերում փախստականներին են սպասում 2500 բնակարաններ՝ իրենց տնամերձ հողերով, սակայն փախստականները հրաժարվում էին գյուղ գնալ: Եվ դա այն դեպքում, երբ պետությունը պատրաստ էր նրանց տալ անսահմանափակ վարկ, օգնել ձեռք բերել անասուններ: Նա գտնում էր, որ «ժամանակն է բոլոր օղակներում խոսքից գործի անցնել և մարզի քայքայված տնտեսությունն ու մարդկային խարխլված հարաբերությունները վերականգնել»[22]: Չնայած Ա.Վոլսկին տեսականորեն ճիշտ էր, սակայն արցախցիների հիմնական խնդիրը դա չէր, այլ՝ երկրամասը դուրս բերել Ադրբեջանի կազմից և միավորվել մայր Հայաստանի հետ: Այդ դեպքում նրանք անհոգ կաշխատեին և կվերականգնեին ամբողջ կորցրածը: Մարզի բնակչությունը շարունակում էր չվստահել Հատուկ կոմիտեին: Այդ հիմքի վրա էլ մարտի 6-ից մինչև 13-ը մարզում տեղի ունեցավ նոր գործադուլ, որը Հատուկ կոմիտեից պահանջում էր նախ և առաջ լուծել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանից դուրս բերելու հարցը[23]: Մինչդեռ Ադրբեջանը հարձակման էր անցել բոլոր ճակատներով՝ լրատվությունից մինչև շրջափակում և ծայրամասային գյուղերի վրա հարձակումից մինչև մարդկանց պատանդ վերցնելը: Առանձնապես զանգվածային բնույթ էին ընդունել անասնագողությունը և հայերի ունեցվածքի հափշտակումները: Հենց այդ օրերին պլանավորված էր մարտի 9-ին Մոսկվայում անցկացնել ԽՍՀՄ նախարարների խորհրդի նիստ, որտեղ պետք է քննարկվեր ԼՂԻՄ-ի տնտեսական կառավարման կազմակերպման հետ կապված հարցը, սակայն այն վիժեցվեց Ադրբեջանի կողմից: Բաք-

[20] *«Գրական թերթ», 24.02.1989:*
[21] *«Սովետական Ղարաբաղ», 10.02.1989:*
[22] *Նույն տեղում, 09.02.1989:*
[23] *Նույն տեղում, 08.03.1989:*

վում և հանրապետության մյուս քաղաքներում չէին դադարում հակահայկական հանրահավաքներն ու ցույցերը, որոնց հիմնական կարգախոսներն էին՝ «Հայե՛ր, կորե՛ք ադրբեջանական հողից», «Հայերը մեր թշնամիներն են» և այլն:

Ընդհանրապես, մարզի բնակչությունը դժգոհ էր Հատուկ կոմիտեի գործունեությունից: 1989 թ. ապրիլ-մայիս ամիսներին հասարակական ընդհանուր ժողովներ տեղի ունեցան մարզի բոլոր բնակավայրերում, հիմնարկ-ձեռնարկություններում և հասարակական կազմակերպություններում, որտեղ քննարկվեց «Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրադրության մասին» հարցը ու ընդունվեցին որոշումներ: Այդ ժողովների արձանագրությունները պահվում են ԼՂՀ պետական արխիվի «ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեի» ֆոնդում: Մեջբերենք 1989թ. ապրիլի 30-ին Ասկերանի շրջանի Բաղարա գյուղի հասարակության ընդհանուր ժողովի որոշումը, որը բնորոշ է մյուս բոլոր հասարակական ժողովների ընդունած որոշումների համար: Այն մեջ ենք բերում մասնակի կրճատումներով. «1. Խնդրել ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեին իր ընդլայնված նիստում քննարկել մարզի հայ բնակչության՝ Լեռնային Ղարաբաղը հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու պահանջը և համապատասխան որոշմամբ դիմել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 1989 թ. մայիսին կայանալիք համագումարին ու ԽՄԿԿ ազգային հարցի մասին պլենումին...

2. Պահանջել ԽՍՀՄ դատախազությունից ազատել Ա.Մ. Մանուչարյանին և «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին...

3. Անհապաղ դադարեցնել Ադրբեջանական ԽՍՀ-ի նախարարների կամայականությունները մարզի տարածքում և, առանց շրջանային համապատասխան կազմակերպությունների համաձայնության, չկատարել շինարարական աշխատանքներ ու մարզի ժողովրդագրական դեմքը խախտող այլ գործողություններ:

4. Ադրբեջանական ԽՍՀ կառավարությունից պահանջել հատուցել Բաքվից և հանրապետության այլ քաղաքներից բռնագաղթեցված բնակիչների կրած նյութական վնասները:

5. Պատվիրան տալ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ Ա. Ի. Վոլսկուն, Բ.Վ. Դադամյանին և Զ. Հ. Բալայանին, որ հարց բարձրացնեն Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմի մեջ մտնելու վերաբերյալ Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշումը փոխելու, ինչպես նաև Ադրբեջանական ԽՍՀ Շահումյանի շրջանը ԼՂԻՄ կազմի մեջ ընդգրկելու մասին՝

ելնելով նրանից, որ պատմական Գյուլիստանը Ադրբեջանական ԽՍՀ կառավարության 1923թ. որոշմամբ արհեստականորեն անջատվել է Արցախից:

6. ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի վերամիավորելու հարցում գյուղի հասարակությունը համերաշխություն է հայտնում մարզի բանվոր դասակարգի և մտավորականության հետ»[24]:

1989թ. մարտի 26-ը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունների օրն էր[25]: Տնօրենների խորհրդի, «Կռունկի» նախկին անդամների և Շարժման ակտիվիստների, հասարակական կազմակերպությունների, կուսակցական ու պետական մարմինների ղեկավար ուժերի նվիրված աշխատանքի հետևանքով քաղաքական նշանակություն ունեցող այդ միջոցառումը Ղարաբաղում կազմակերպվեց բարձր մակարդակով, և առաջադրված բոլոր թեկնածուներն էլ ընտրվեցին ժողովրդական պատգամավոր:

1989թ. գարնանը «Սովետական Ղարաբաղը» մարզի միակ զանգվածային թերթն էր, որի յուրաքանչյուր համար Արցախում և նրա սահմաններից դուրս սպասվում էր անհամբերությամբ: Թերթի բաժանորդների թիվը հասել էր աննախադեպ քանակի՝ 40 հազարի: Սակայն նման տպաքանակ ապահովելը մարզային տպարանի համար հնարավոր չէր: Արցախում մտածում էին թերթի տպաքանակի մի մասը տպագրել Երևանում: Հատուկ կառավարման կոմիտեի անդամ Վալերի Սիդրովը փետրվարի 21-ին Հայկոմկուսի կենտկոմի քարտուղար Գալուստ Գալոյանին խնդրում է ընդառաջել արցախցիների ցանկությանը, որը և կատարվեց[26]: «Սովետական Ղարաբաղ» թերթը, իրոք, դարձել էր Արցախ աշխարհի ժողովրդական պայքարի մարտական օրգանը, որը երկրի տարբեր ծայրամասեր էր հասցնում երկրամասում տեղի ունեցող իրադարձությունների մասին լուրեր և արձագանքում ստացվող հարյուրավոր նամակների: Թերթը հույս և հավատ էր

---

[24] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 2, g. 1, գ. 3, թ. 13-14:*

[25] *ԼՂԻՄ-ից թեկնածուներ էին առաջադրվել Հենրիխ Պողոսյանը (Ստեփանակերտի ազգային-տարածքային ընտրական շրջան), Զորի Բալայանը (Ասկերանի ընտրական շրջան), Վաչագան Գրիգորյանը (Մարտունու և Հադրութի ընտրական շրջան), Վահան Գրիգորյանը (Մարտակերտի ընտրական շրջան), Բորիս Դադամյանը (ԼՂԻՄ տարածքային ընտրական շրջան). Վագիֆ Զաֆարովը (Շուշիի ընտրական շրջան), և Արկադի Վոլսկին (ԼՂԻՄ և հարակից ադրբեջանական չորս շրջանները միավորող տարածքային ընտրական շրջան):*

[26] *ՀԱԱ, ֆ. 1, g. 83, գ. 68, թ. 24:*

ներշնչում բոլոր ընթերցողներին, որ արցախահայությունը կհաղթի:

1989թ. մարտի 5-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Հայկական արցախյան բարեգործական «Ամարաս» ընկերության հիմնադիր համագումարը, որի ընդունած ծրագրային փաստաթղթի բնորոշմամբ «Ամարասը» զանգվածային հասարակական կազմակերպություն էր, որը հիմնված էր աշխատավորների հայրենասիրական ակտիվության վրա և հանդես էր գալիս հանուն մարդկային փոխհարաբերությունների հումանիզացման ու հասարակության բարոյական մաքրման: Պաշտպանելով մարդու կյանքի ու ազատության իրավունքը՝ «Ամարասը» հետևողականորեն հանդես էր գալիս հանուն խաղաղության, դատապարտում բռնությունը, մարտնչում ինչպես առանձին քաղաքացիների, այնպես էլ հասարակական խմբերի ու ժողովուրդների հանդեպ ամեն մի անարդարության և կամայականության դեմ: «Ամարասը» հանդես էր գալիս ամեն տեսակ ազգային անարդարության դեմ, մերժում ռասիզմը, ազգայնամոլությունը: Ընկերությունն իր ամենագլխավոր խնդիրներից մեկն էր համարում երեխաներին, հիվանդներին, ծերերին, հաշմանդամներին անշահախնդիր օգնություն ցույց տալը: Համագումարն ընկերության վարչության նախագահ ընտրեց Բորիս Դաղամյանին[27]:

Հայտնի է, որ Ադրբեջանի իշխանությունների կողմից Լեռնային Ղարաբաղի հավատացյալների նկատմամբ իրագործվող բռնությունների և հալածանքների հետևանքով 1933թ. դադարեցվել էր Ղարաբաղի թեմի գործունեությունը[28]: Գորբաչովյան վերակառուցման շրջանում ազգային-ազատագրական շարժման վերելքի հետ միասին վերականգնվեց նաև Արցախի հոգևոր կյանքը, և այստեղ վերածնունդ ապրեց քրիստոնեությունը: Արկադի Վոլսկու միջնորդությամբ՝ 1989թ. ապրիլից Արցախի եկեղեցիները գործելու իրավունք ստացան: Առաջինը դողանջեցին Ամարասի, ապա Գանձասարի զանգերը: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի օծությամբ 1989թ. հունիսի 6-ին

[27] *«Ամարաս», N 3, 1989: Տես նաև «Հայրենիքի ձայն», N22: Իմիջիայլոց, «Ամարասը» Արցախում ստեղծված առաջին բարեգործական ընկերությունն էր, որը կարճ գոյատևեց: Նրա պաշտոնական օրգան «Ամարասը» ունեցավ մի քանի համար:*

[28] *ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2740, թ. 1: Ավելի մանրամասն տես Աբրահամյան Հ., Արցախի թեմն իր գոյության վերջին տարիներին, «Էջմիածին», Զ., 2003:*

Արցախի թեմի առաջնորդ ձեռնադրվեց Պարգև սրբազան Մարտիրոսյանը[29]:

Հատուկ կոմիտեի խնդիրներից էր Լեռնային Ղարաբաղի բնակչության բժշկական սպասարկումը բարելավելու հարցը: Կոմիտեի ընդունած «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի բնակչության բժշկական սպասարկման վիճակի և հետագա բարելավման միջոցառումների մասին» որոշման մեջ հանգամանորեն վերլուծվել են մարզի բնակչության բժշկական սպասարկման վիճակը, բացահայտվել բոլոր թերությունները և միջոցառումներ մշակվել այն բարելավելու ուղղությամբ: Օրինակ՝ մանկական մահացության մակարդակը 1988թ. աճել էր 4,3%: 1988թ. ԼՂԻՄ առողջապահական հիմնարկները պակաս են ստացել 5,4 տոննա միս, 375 կգ յուղ, 6,4 տոննա կաթ, 49-156 հատ ծու: Երկար տարիներ չէին լուծվել բուժպրոֆիլակտիկ հիմնարկները բժշկական կադրերով համալրելու հարցերը, Հադրութի և Ասկերանի շրջաններում չկային հաստիքային մանկաբարձագինեկոլոգներ: Մարզում սուր կերպով զգացվում էր մանկաբարձների, նյարդաբանների, դատաբժշկական փորձագետների, ռենտգենոլոգների, ուռուցքաբանների պակաս: Այդ և այլ աղաղակող թերությունները վերացնելու համար կատարվել են կոնկրետ առաջարկություններ[30]:

Արցախում ձեռնարկվում էին նաև այլ միջոցառումներ: 1989թ. ապրիլի 15-ին կազմակերպվեց շաբաթօրյակ, որին մասնակցեցին բնակչության մեծամասնությունը: Ակտիվորեն մասնակցեցին Ստեփանակերտ քաղաքի, Մարտունու և Մարտակերտի շրջանների բնակիչները[31]: Ամբողջ մարզում շաբա-

[29] *Պարգև սրբազանը ծնվել է 1954թ. Սումգայիթ քաղաքում, արցախցու ընտանիքում: Նրա աշխարհական անունը Գուրգեն է: 1971-ին ավարտել է Երևանի N 132 մաթեմատիկական թերումով դպրոցը, իսկ 1976-ին՝ Վ. Բրյուսովի անվան ինստիտուտը, գերազանցության դիպլոմով: 1980թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան և ավարտել 1984-ին: Ապա ավարտել է Սանկտ Պետերբուրգի հոգևոր ակադեմիային կից ասպիրանտուրան, պաշտպանել ատենախոսություն և ստացել աստվածաբանության թեկնածուի գիտական աստիճան: Նրան հոգևորական Պարգև անունը տվել է Վեհափառ Վազգեն Ա-ն, որի կողմից էլ 1988թ. ձեռնադրվել է եպիսկոպոս, իսկ 1989-ին նշանակվել Արցախի թեմի առաջնորդ: Նրա դերը զգալիորեն մեծ է արցախահայության ազատագրական պայքարի ոգևորման գործում:*

[30] *«Սովետական Ղարաբաղ», 11.04.1989:*

[31] *Նույն տեղում, 16.04.1989:*

թոյլակներին մասնակցեցին 85 915 մարդ, որոնք աշխատեցին արդյունաբերական ձեռնարկություններում, գյուղատնտեսության մեջ, շինարարությունում և ժողտնտեսության այլ ճյուղերում: Այդ օրը թողարկվել է 573,6 հազար ռուբլու արդյունաբերական արտադրանք, իսկ գյուղի աշխատավորների ավանդը կազմել է 101. 587 ռուբլի[32]:

Կոմիտեի նախագահ Արկադի Վոլսկին "Социалистическая индустрия" թերթին տված վերոհիշյալ հարցազրույցում չի թաքցրել, որ Հատուկ կառավարման կոմիտեն որոշ չափով ոտնահարում էր քաղաքացիների որոշակի իրավունքներ, սահմանափակում մարզային խորհրդի լիազորությունները. կանգնեցվել էր կուսակցության մարզկոմի գործունեությունը, և իբրև «դա միակ հնարավոր միջոցն էր, եթե կուզեք, առավել մարդասիրական, դեմոկրատական վճիռ բռնության սանձազերծման դեմ»: Նա պնդում էր, թե իբրև կոմիտեն պաշտպանում էր «ամբողջ դարաբաղյան ժողովրդի շահերը, աշխատում դեմոկրատական սկզբունքներով, կոլեգիալության հիման վրա»: Ա.Վոլսկին բերում է այսպիսի օրինակ. 1987թ. ԼՂԻՄ բնակչության մեկ շնչին բաժին է ընկել ընդամենը 7,6, իսկ 1988 թ-ին՝ 8,3 կգ միս, երշիկեղեն՝ 1,2 կգ, պանիր՝ 2,6-ական կգ, մսի պահածոներ՝ մեկ շնչի հաշվով՝ մեկական տուփ, ձու՝ տարվա մեջ ընդամենը 29 հատ: Մարզը չուներ մեծածախ առևտրական բազաներ, պահեստամասեր, սառնարաններ: Ապրանքաշրջանառությունը գտնվում էր ամենացածր մակարդակի վրա: Անկասկած, պահանջվում էին երկրամասի տնտեսության խոր վերափոխումներ, որը խիստ անհանգստացնում էր թե՛ մարզի բնակչությանը և թե՛ Հատուկ կոմիտեին[33]:

1989թ. մայիսի 1-ին մարզում տարածվեցին թռուցիկներ, որոնցում կոչ էր արվում դադարեցնել աշխատանքը, սկսել համընդհանուր գործադուլ և Հատուկ կառավարման կոմիտեին ներկայացնել մի շարք կոնկրետ պահանջներ: Մայիսի 3-ից Ստեփանակերտի արդյունաբերական ձեռնարկությունների և հիմնարկների մեծամասնությունը դադարեցրել էին աշխատանքները: Մարզի հայ բնակչությունը խիստ դժգոհ էր Հատուկ կառավարման կոմիտեից, որի թույլտվությամբ Ադրբեջանի իշխանությունները մարզի ադրբեջանաբնակ վայրերում ծավալել էին բնա-

[32] *Նույն տեղում, 20.04.1989:*
[33] *"Социалистическая индустрия", 30.04.1989.*

կարանների, արդյունաբերական ձեռնարկությունների, սոցիալ-տնտեսական օբյեկտների, Շուշի քաղաքից դեպի ադրբեջանական բնակավայրեր տանող ճանապարհների և այլ լայնածավալ շինարարություն: Առանց մարզային և շրջանային իշխանությունների իմացության, Խոջալուում կառուցվում էին 600 բանվորական տեղով տեքստիլ ֆաբրիկա, Բարդայի կարի ֆաբրիկայի 100 տեղանոց մասնաճյուղ, 50 մահճակալով հիվանդանոց, 500 աշակերտական տեղով դպրոց, մանկապարտեզ, մշակույթի պալատ և այլ օբյեկտներ: Նույնը կատարվում էր նաև մարզի ադրբեջանական մյուս գյուղերում, ինչպես նաև Ստեփանակերտի մեջ մտնող Կրկժան քաղամասում, որտեղ նախատեսվել էր կառուցել կարի և տրիկոտաժի 500 տեղով ֆաբրիկաներ, ստեղծել ավտոշարասյուն, ընդարձակել գործող արդյունաբերական ձեռնարկությունները, կառուցել դպրոցական նոր շենք և այլն: Մարզի կուսակցական և խորհրդային մարմինների մի խումբ ղեկավարներ, մայիսի 3-ին բաց նամակով դիմելով Մ.Գորբաչովին, նշել են, որ նույնիսկ կառավարման հատուկ ձև մտցնելը մարզը չի պաշտպանել Ադրբեջանի կոպիտ, անպարկեշտ միջամտությունից: «Ի հակակշիռ ԼՂԻՄ սոցիալ-տնտեսական զարգացման մասին ընդունված որոշումների,– գրում են նամակի հեղինակները,– տեղի է ունենում... ադրբեջանական գյուղերի հապշտապ կառուցապատում, որտեղ աշխատանքներ են ընթանում արդյունաբերական և սոցիալական նշանակության օբյեկտների, ճանապարհների, բնակարանների շինարարության ուղղությամբ»: Արցախի ղեկավարները գտնում էին, որ «կառավարման հատուկ ձևը չպետք է փոխարինի տեղական կուսակցական և խորհրդային մարմինների կառուցվածքներին, այլ պետք է վեր կանգնի նրանցից՝ փոխարինելով հանրապետության ղեկավարությանը, որը լրիվ վարկաբեկել է իրեն և շարունակում է նախկին շովինիստական քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ»: Նամակի հեղինակները պահանջում էին քաղաքական գնահատական տալ Սումգայիթի կոտորածին և պնդում ԼՂԻՄ-ը դուրս բերել Ադրբեջանական ԽՍՀ ենթակայությունից ու միավորել Հայաստանի հետ[34]:

Լեռնային Ղարաբաղի ղեկավարությունը, դեռևս մայիսի 9-ին դիմելով երկրամասի աշխատավորներին, կոչ էր արել ցուցաբերել իմաստություն, չթույլատրել անխոհեմ քայլեր և գոր-

[34] *«Սովետական Ղարաբաղ», 05.05.1989:*

ծողություններ: Նրանք համոզված էին, որ Հայկական ԽՍՀ-ի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման համար ընթացող ժողովրդական շարժումը չի վարկաբեկվի որևէ անխոհեմ քայլով, և խնդրում էին չենթարկվել սադրանքների, որտեղից էլ դրանք բխեին: Ստեղծված իրավիճակը, գտնում էին նրանք, պահանջում է ցուցաբերել կազմակերպվածություն և նորմալ աշխատանք կենսապահովման բոլոր ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում: Մարզի ղեկավարները վստահեցրին, որ միայն խաղաղ ճանապարհով և Շարժումը ժողովրդավարական ուղու վրա դնելով է հնարավոր լուծել Ղարաբաղի հիմնախնդիրը[35]:

1989թ. մայիսի 18-ին տեղի ունեցած ժողովրդական պատգամավորների Ստեփանակերտի 20-րդ գումարման քաղաքային խորհրդի նստաշրջանը, քննարկելով քաղաքում ստեղծված ծայրաստիճան բարդ իրադրությունը, կրկին հարց բարձրացրեց երկրի բարձրագույն մարմինների առաջ՝ խնդրելով քննարկել և արդարացիորեն լուծել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, նաև պահանջում էին վերացնել 1921թ. հուլիսի 5-ի կովբյուրոյի անօրեն որոշումը: Նստաշրջանն անհրաժեշտ համարեց պահանջել շուտափույթ վերականգնել կուսակցության մարզկոմի ու ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի իրավունքները և խնդրեց ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա.Սուխարևին փոխել Արկադի Մանուչարովի նկատմամբ խափանման միջոցն ու նրան ազատել ձերբակալումից[36]:

Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Արկադի Վոլսկին շարունակում էր իր ճամարտակությունները և մի անգամ ևս փորձում մոլորության մեջ գցել թե՛ արցախահայությանը և թե՛ վերադաս իշխանություններին: Նա հպարտանում էր, թե բոլորին զինաթափել են ու առգրավել 3,5 հազար միավոր տարբեր տեսակի զենքեր: Բանն այն է, որ մարզի հայերից վերցրել էին բոլոր որսորդական հրացանները, մինչդեռ ադրբեջանցիների զենքի միայն մի չնչին մասն էին առգրավել: Ա.Վոլսկին մարզի բնակչությանը հույս էր ներշնչում, թե որոշում է ընդունվել մարզում կառուցել 13 մլն ռուբլի արժողությամբ մարզային հիվանդանոց, թոքախտաբանական դիսպանսեր և կարգավորել Ստեփանակերտի ջրամատակարարումը[37]: Սակայն Հատուկ կառավարման կոմիտեն սկսել էր համոզվել, որ այդ ամենը արցախցիներին չէր հետաքրքրում, որովհետև նրանց գերխնդիրն էր վերամիավորվել Հայաստանի հետ կամ էլ ժամանակավորապես գտնվել Մոսկվայի ենթակայության տակ:

Բոլոր դեպքերում՝ Հատուկ կառավարման կոմիտեն չկարողացավ և չէր էլ կարող վստահության կամուրջ ձգել հայ և ադրբեջանական ժողովուրդների միջև: Չկարողացավ, որովհետև Ա.Վոլսկին Մոսկվայի կամակատարն էր և չէր կարող դուրս գալ նրա գծած շրջանակներից: Պարզից էլ պարզ է, որ առանց Ղարաբաղի հիմնահարցի քաղաքական լուծման, հազիվ թե հնարավոր լիներ այլ բնույթի որևէ էական հարց լուծել: Որ Հատուկ կառավարման կոմիտեի խոստումները և որոշումները չափից դուրս առատ էին, իսկ արդյունքը՝ շատ նվազ, դա տեսանելի էր բոլորի համար: Արցախցիները ձանձրացել էին դատարկ խոստումներից և սին հույսերից: Օրինակ՝ նախատեսված էր մարզում կապիտալ շինարարության ծավալն ավելացնել երեք անգամ, սակայն դա մնաց օդում: Մարզի շինարարական ամենամեծ կազմակերպությունը՝ 9-րդ շինտրեստը, տարվա պլանով իրեն հարկադրված միջոցների նույնիսկ 10 տոկոսը չէր իրացրել: Նման բնույթի թերությունները բավականին շատ էին, իսկ դրանց վերացման գերխնդիրը մնում էր չլուծված: Հենց դա էր հիմնական պատճառը, որ կուսակցության Ստեփանակերտի քաղկոմը, մարզի կուսշրջկոմների առաջին քարտուղարները, շրջխորհուրդների նախագահները, մարզից ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորները և Հատուկ կառավարման կոմիտեի մի քանի անդամներ, տարածաշրջանի իրավիճակը ներկայացնող բաց նամակով դիմելով Մ.Գորբաչովին, պնդում էին ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ից անհապաղ, իրական դուրս բերման անհրաժեշտությունը և գտնում, որ խնդրի ճիշտ լուծումը եղել և մնում է երկրամասի վերամիավորումը Հայաստանի հետ[38]:

Մոսկվան ժամանակից ժամանակ տարբեր առիթներով անդրադառնում էր Լեռնային Ղարաբաղի հարցին: 1989թ. մայիսի 19-ին Ն.Ռիժկովի նախագահությամբ տեղի ունեցած ԽՄԿԿ Կենտկոմի ազգամիջյան հարաբերությունների գծով հանձնաժողովի նիստը քննարկեց այդ վերջին օրերին Լեռնային Ղարա-

[35] *Նույն տեղում, 09.05.1989:*
[36] *Նույն տեղում, 20.05.1989:*

[37] *"Коммунист", 03.05.1989.*
[38] *«Սովետական Ղարաբաղ», 18.05.1989:*

բաղում և նրա շուրջ տեղի ունեցած իրադարձությունները, որի վերաբերյալ հաղորդումներով հանդես եկան Ա.Վոլսկին, Ա.Վեզիրովը և Ս.Հարությունյանը: Հիմնականում խոսվեց մայիսի 3-ից մարզում սկսված ընդհանուր գործադուլի բացասական հետևանքների մասին և առաջարկվեց գործադուլավորների պահանջներին մոտենալ ամենայն լրջությամբ: Արցախցիների պահանջով վերացվել էր պարետային ժամը: Սակայն դա ոչ մի նշանակություն չունեցավ գործադուլավորների համար: Նրանք համառորեն չէին ցանկանում վերադառնալ աշխատատեղեր, քանի դեռ չէր լուծվել Արցախի հիմնախնդիրը: ԽՄԿԿ Կենտկոմի հանձնաժողովը, որը ժամանել էր Արցախ, փոխանակ ԼՂԻՄ-ի քաղաքական խնդրի վերաբերյալ առաջարկություններ մշակելու և վերադաս իշխանություններին ներկայացնելու, առաջարկեց արդյունավետ լուծել «ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական խնդիրները և ընդլայնել հատուկ կոմիտեի իրավունքները»՝ երբեք չխախտելով «տեղական իշխանությունների իրավունքները»[39]: Անշուշտ, այդ հանձնաժողովը չէր կարող Արցախի հիմնահարցին արմատական լուծում տալ, որովհետև նա կատարում էր Կրեմլի պատվերը: Դա էր հիմնական պատճառը, որ 1988թ. փետրվարից սկսած՝ Ղարաբաղյան շարժման վերաբերյալ մոսկովյան և ոչ մի քննարկում չի տվել դրական արդյունք, որովհետև ընդունված որոշումները չէին բխում բուն հիմնահարցից և ի սկզբանե մերժված էր: Ավելին, այդ կոմետիկ որոշումները միայն բացասական հետևանքներ էին թողել, է՛լ ավելի էին շիկացրել մթնոլորտը տարածաշրջանում, բորբոքել հայ ժողովրդի ազգային զգացմունքները: Վերադաս իշխանությունները շարունակ պաշտպանում էին Ադրբեջանի իշխանությունների հակահայկական գործողությունները և դրսևորում բացահայտ ադրբեջանամետ դիրքորոշում: Այդ առթիվ ԼՂԻՄ-ի Մարտունու շրջկոմի առաջին քարտուղար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Վաչագան Գրիգորյանը, պատասխանելով լրագրողի հարցերին, նշել է, որ Արցախի քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացմանն առնչվող հարցերը համաձայնեցվում են Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարության և անձամբ Ա.Վեզիրովի հետ, ինչի անհրաժեշտության մասին ոչ մի խոսք չկա ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հունվարի 12-ի հրամանագրում: Լրագրողի այն հարցին, թե Ղարաբաղյան շարժումը հաճախ ենթարկվում է անհիմն կշտամբանքի,

[39] *"Правда", 20.05.1989.*

ներկայացվում է որպես ազգայնական և անտեսվում է Շարժման բուն էությունը, Գրիգորյանը պատասխանել է. «Ղարաբաղյան շարժումն իր էությամբ խորապես արդարացի է, այն ազգային է, ժողովրդական և, որպես այդպիսին, սկիզբ է առել մաքուր ակունքներից ու պարզ ջրերի նման հոսում է իր հունով, իսկ նրան միացող բոլոր պղտոր առուները կկորչեն ջրերի մեջ»: Հետո զարմանքով նշել է, որ եթե «Կռունկի» և «Ղարաբաղ» կոմիտեի անդամները «կաշառակերներ» են, ապա ովքե՞ր են Ալիևը, Բաղիրովը, Սեյիդովը և Կևորկովը[40]:

1989 թ. մայիսի 25-ին Մոսկվայում իր աշխատանքները սկսեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարը: Այդ օրերին Լեռնային Ղարաբաղից և Հայաստանից հարյուրավոր հեռագրեր, նամակներ և դիմումներ էին ուղարկվում համագումարին՝ խնդրելով և պահանջելով վերականգնել պատմական արդարությունը ու Լեռնային Ղարաբաղը վերամիավորել Հայաստանի հետ: Հայ ժողովուրդը փայփայում էր այն հույսը, թե համագումարը կլուծի Արցախի հիմնախնդիրը: Համագումարի ամբիոնից Հենրիխ Պողոսյանի, Զորի Բալայանի, Բորիս Դադամյանի, Հայաստանից մի շարք պատգամավորների առաջարկություններն արժանանում էին բազմաթիվ պատգամավորների հավանությանը: Մինչև անգամ Սանկտ Պետերբուրգից Ա.Սոբչակը և Ա.Դենիսովը հայտարարեցին, թե իրենք հրաժարվում են ԽՍՀՄ Գերագույն խորհրդում իրենց մանդատից՝ հօգուտ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների: Սակայն ադրբեջանցի պատգամավորները ամեն կերպ փորձում էին խոչընդոտել ԼՂԻՄ-ից և Հայաստանից պատգամավորների գործունեությունը: Համագումարին տված զեկուցման մեջ Մ.Գորբաչովը նշեց. «Ազգային ինքնորոշման սկզբունքը, որն առաջ է քաշել Լենինը, եղել և մնում է կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության գլխավոր տարրերից մեկը»[41]: Որպես դրա պատասխան՝ մի քանի օր անց համագումարի ամբիոնից Բորիս Դադամյանը հարց դրեց. «Եկե՛ք ինքներս մեզ հարցնենք, թե հանուն ինչի, հանուն այդ որ բարձրագույն սկզբունքների պետք է տառապի Ղարաբաղի հայ ժողովուրդը: Դա ի՞նչ ինքնորոշում է, եթե փոքրաթիվ ազգը ինքնորոշման համար պետք է թույլտվություն խնդրի ավելի մեծ ազգից: Վերջինս

[40] *«Երեկոյան Երևան», 19.05.1989:*
[41] *"Известия", 31.05.1989.*

կարող է ողորմածաբար թույլատրել կամ ամբարտավանորեն արգելել: Սա ի՞նչ մեծապետական թույլատրական ինքնորոշում է»[42]: Այդպես էլ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ո՛չ առաջին և ո՛չ էլ մյուս համագումարները ոչինչ էլ չարեցին Ղարաբաղի հիմնախնդիրը լուծելու համար:

* * *

Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժը, հանրապետությունում ապաստանած հարյուր հազարավոր փախստականների առկայությունը, Երևանում շարունակվող պարետային ժամը, «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալությունը և սկսված շրջափակումը ստեղծել էին պայթյունավտանգ իրավիճակ: Չնայած ղեկավարների ձերբակալությանը, «Ղարաբաղ» կոմիտեն շարունակում էր գործել: Տեղական կոմիտեները լայն աշխատանք էին ծավալում հիմնարկ-ձեռնարկություններում և գյուղերում: Նրանք փորձում էին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների թեկնածուներ առաջադրել կոմիտեի ձերբակալված անդամներին: Ըստ ՊԱԿ-ի մի զեկուցագրի՝ կոմիտեին պաշտպանողները դիմում էին «շանտաժի, սպառնալիքի, հոգեբանական ճնշման, ձգտում էին վարկաբեկել ձեռնարկությունների ղեկավարներին, հիմնարկ-ձեռնարկությունների կուսակցական կազմակերպություններին»: Կոմիտեականների և նրանց համախոհների գործունեությունն այնքան բացահայտ էր, որ որոշ ձեռնարկությունների ղեկավարներ ստիպված էին դիմել իրավապահ մարմիններին՝ նրանց նկատմամբ միջոցներ ձեռնարկելու համար: ՊԱԿ-ի զեկուցագրում օրինակ է բերվում Երևանի Ռելեի գործարանը, որի ղեկավարությունը դիմել էր հանրապետության դատախազությանը՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել Շարժման ակտիվիստներ Վ.Իվանյանի և Օ.Հարությունյանի նկատմամբ, որոնք բանվորներին կոչ էին անում գործադուլի և ձախողում նախընտրական աշխատանքները: Նրանք վարչական կարգով ձերբակալվեցին 30-ական օրով[43]:

Ամբողջ հանրապետությունում կուսակցական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունները շարունակում էին քայլեր ձեռնարկել հասարակության ղեկավարումն իրենց ձեռքում պահելու համար: ԽՄԿԿ Կենտկոմ ուղարկված Սուրեն

[42] *«Սովետական Հայաստան», 08.06.1989:*
[43] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 27 գ. 35, թ. 1-2:*

Հարությունյանի մի նամակ-զեկուցագրից իմանում ենք, որ մարտի 8-ին ժամը 12[00]-ին Երևանի դրամատիկական թատրոնի դիմացի պուրակում հավաքվել էին մոտ 500 մարդ, այդ թվում՝ 200 կին և երեխաներ: Նրանք այնտեղ գնացած իշխանության ներկայացուցիչներից պահանջել էին ազատել «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին, կոչ էին արել Արցախի համար պայքարել մինչև վերջ, պահանջել էին վերացնել պարետային ժամը, բանակը դուրս բերել քաղաքից, փախստականներին ապահովել բնակարաններով: Ապա ասված է, որ ցուցարարները բարձր պահել էին եռագույն դրոշը և ցուցապաստառները, որոնց վրա գրված էին՝ «Ազատություն Հայաստանին» և «Անկախ Հայաստան»: Ժամը 14-ին ցուցարարները շարժվել էին դեպի Մարշալ Բաղրամյան պողոտա ու մոտեցել Հայկոմկուսի շենքին: Ժամը 15[00]-ին մոտ 500 հոգի երթը շարունակել էին դեպի Իսահակյան փողոցի կողմը, սակայն այստեղ կանգնեցվել էին միլիցիայի և բանակի կողմից: Հետո շարժվել են Լենինի հրապարակի կողմը: Այդ ժամանակ նրանց թիվը հասել էր մոտ երկու հազարի: Այնտեղ նրանց ճանապարհը փակվել է, և ցրվել են ժամը 17[30]-ին: Այդ գործողության ակտիվ մասնակիցները ձերբակալվել են և տույժի ենթարկվել[44]:

Հայաստանում տեղակայված N 25685 զորամասի քաղբաժնի պետ գեներալ-մայոր Մ.Սուրկովը Երևանի քաղկոմ ուղարկած գրություն-զեկուցագրում մեղադրում էր հայ քաղաքական ուժերին ու կազմակերպություններին, որոնք իբր անհրաժեշտ բացատրական աշխատանք չէին տանում բնակչության շրջանում, իսկ կուսակցական ակտիվը չէր կարողանում ճիշտ գնահատել ստեղծված վիճակը[45]:

Երևանի քաղկոմի քարտուղար Մ.Մինասբեկյանը փետրվարի 11-ին Հայկոմկուսի Կենտկոմ ուղարկված նամակում հաղորդել է, թե քաղկոմը տեղեկություն է ստացել, որ առանձին ծայրահեղական խմբեր նախապատրաստվում են նշել փետրվարի 18-ը «որպես դաշնակցության խռովության օր»: Քաղկոմի քարտուղարը Կենտկոմին առաջարկում էր «ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, շքերթներն ու ժողովները կանխելու համար»: Նա նպատակահարմար էր գտնում փետրվարի 18-ին նախորդած օրերին հանրապետության մամուլում և հե-

[44] *Նույն տեղում, ց. 127, գ. 735, թ. 1-2:*
[45] *Նույն տեղում, գ. 698, թ. 37-38:*

ռուստատեսությամբ «դաշնակցության ռեակցիոն քաղաքականությունը մերկացնող» հոդվածներ տպագրել[46]: Այդ օրերին, ինչպես երևում է Մ.Մինասբեկյանի նամակից, հանրապետությունում, մանավանդ Երևանում, պատրաստվում էին նշելու Սումգայիթի ողբերգության մեկ տարին, նախաձեռնությունը առաջին հերթին պաշտպանում էին ուսանողները, երիտասարդները, ստեղծագործական և գիտատեխնիկական մտավորականության ներկայացուցիչները: Նույնիսկ հատուկ շրջանի պարետությունից քաղկոմը ստացել էր պաշտոնական գրություն, որտեղ առաջարկվում էր իրավունք տալ անցկացնել սգո շքերթ: Չնայած քաղկոմը դեմ չէր այդ միջոցառմանը, սակայն երկյուղում էր, որ «բազմամարդ շքերթը կարող է բերել անկանխատեսելի հետևանքներ» և չէր բացառում, որ այն վեր կածվի «այսպես կոչված «Ղարաբաղ» կոմիտեի անդամների պաշտպանության միտինգի»: Քաղկոմի քարտուղարը ժողովրդական զանգվածների ելույթներից վախենում էր նաև նրա համար, որ այն կարող էր բացասաբար ազդել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրությունների վրա: Նա նույնիսկ ենթադրում էր, որ Երևանում տեղի ունենալիք նման քայլերը «կարող են բացասական ազդել Ադրբեջանական ԽՍՀ վիճակի վրա ու այնտեղ ուժեղացնել անառողջ տրամադրությունները» և նորից առաջ բերել ազգամիջյան ընդհարումներ: Ամենակարևորը, որ նա գտնում էր՝ «նման միտինգները և շքերթները կարող են առաջ բերել նոր բախումներ ու լուրջ վնաս հասցնել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանը»: Ելնելով այդ ամենից Երևանի քաղկոմը Հայկոմկուսի Կենտկոմին հուշում էր, որ փետրվարի 28-ին սգո միտինգ անցկացնելը «պայթյունավտանգ է, ժողովրդի շահերին հակասող»: Առաջարկում էր «այն կանխելու համար ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ»՝ ներկայացնելով կոնկրետ պլան[47]:

Սումգայիթյան ողբերգության տարելիցի օրը Հայաստանում ապաստանած սումգայիթցիները, նամակ հղելով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պերես դե Կուրլյարին, արդարացիորեն բողոքում էին, որ Ադրբեջանում հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ցեղասպանությունը համապատասխան քաղաքական գնահատականի չի արժանացել Խորհրդային Միության պետական մարմինների կողմից: Նամակի հեղինակները շեշտել են, որ

[46] *Նույն տեղում, թ. 28-29:*
[47] *Նույն տեղում, թ. 29-31:*

Ադրբեջանի իշխանությունները հայերի նկատմամբ ցեղասպանություն են իրագործել ոչ միայն Սումգայիթում, այլև Նախիջևանում, Ղարաբաղում, Կիրովաբադում և այլուր: Նամակում նաև ասված է, որ Ադրբեջանում տեղի ունեցող հայերի ցեղասպանությունը թաքցվում է խորհրդային և համաշխարհային հանրությունից: Իսկ դրա ամենամեծ մեղավորը, ըստ նամակի հեղինակների, համարվում էին խորհրդային իշխանությունները[48]:

Հայաստանում շարժման ակտիվիստների նկատմամբ շարունակվում էին ուժ և ճնշում գործադրել: Հանրապետության ներքին գործերի նախարար Հուսիկ Հարությունյանի՝ ստորագրությամբ մի փաստաթղթից իմանում ենք, որ միայն 1989թ. մարտին վարչական կալանքի էին ենթարկվել 25 հոգի, տուգանվել 12-ը, 87-ը ստացել նախազգուշացում, 2 հոգի ենթարկվել քրեական պատասխանատվության: Երևանում, Էջմիածնում և Կիրովականում թռուցիկներ տարածելու համար ձերբակալվել էին 12 հոգի, իսկ ժողինստիտուտի ուսանող Ա.Սարգսյանը ձերբակալվել էր այն բանի համար, որ կոչ էր արել բոյկոտել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունները: ՆԳ նախարարը Հայկոմկուսի Կենտկոմին հաղորդել է, որ շքերթի դուրս եկած բնակչությանը շրջափակել էին ՆԳ նախարարության ուժերը, որոնք նրանցից խլել էին 5 եռագույն դրոշ, 6 ցուցապաստառ՝ հետևյալ գրություններով՝ «Օկուպանտներ, հեռացե՛ք Հայաստանից», «Դադարեցնել բռնությունները», «Ազատություն «Ղարաբաղ» կոմիտեին»: Ձերբակալվել են 17 օրինազանցներ: Այդ ամենը կազմակերպողների գործերն ուղարկվել են դատախազություն[49]:

Հանրապետության բնակչության զանգվածային բողոքներն իշխանություններին ստիպեցին թույլատրել ազատ հանրահավաքներն ու ցույցերը: Մայիսի 11-ին տեղի ունեցած թույլատրված առաջին հանրահավաքում ելույթ ունեցողները պահանջեցին վերացնել անցաթղթային կարգը, դժգոհություն հայտնվեց Հայաստանի իշխանությունների դանդաղկոտության համար, տեղյակ պահվեց, որ Ա.Վոլսկու ղեկավարած կոմիտեն ոչինչ չի անում ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու հա-

[48] *Նույն տեղում, գ. 87, գ. 35, թ. 79:*
* *Հուսիկ Հարությունյանը զոհվել է 2006թ. մայիսի 3-ին Երևան-Սոչի չվերթն իրականացնող «A-320» ինքնաթիռի կործանումից:*
[49] *Նույն տեղում, գ. 37, թ. 2 և 39:*

մար և այլն: Շեշտվեց, որ ղարաբաղցիներն ավելի համառ են և կրկին դիմել են համընդհանուր գործադուլի: Հանրահավաքում ելույթ ունենալով՝ Հատուկ շրջանի պարետ Ն.Պիշչևը հայտարարեց, թե արդեն սկսվել է տեխնիկայի տեղափոխումը, և աշխատանքներ են կատարվում անցաթղթային կարգը վերացնելու համար: Նրա այն հաղորդումը, թե Երևանում պարետային ժամ է մտցվել ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների նախագահությունների որոշումներով, ընդունվեց խիստ վրդովմունքով: Դրանից հետո ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ Ս.Ավետիսյանը ելույթ ունենալով, մի փոքր խմբագրեց պարետի հայտարարությունը՝ բացատրելով, որ Երևանում պարետային ժամը մտցվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության համաձայնությամբ: Ապա ելույթ ունեցած Արցախի թեմի առաջնորդ Պարգև սրբազան Մարտիրոսյանը արցախցիների անունից դժգոհություն հայտնեց Հայաստանի իշխանությունների դանդաղկոտության համար և օրինակ բերեց, թե Բաքուն ինչպիսի ծավալներով է շարունակում հակահայկական քարոզչությունը: Նա հիշեցրեց Ա. Վոլսկու «Հայաստանը միայն խոստանում է, սակայն համարյա ոչինչ չի անում» պնդումը[50]: Այդ հանրահավաքում ելույթ ունեցավ նաև Հայաստանից ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր ընտրված Գալինա Ստարավոյտովան, որը մեծ հեղինակություն ուներ Հայաստանում և Արցախում: Նա, խարազանելով լրագրող Գ.Օվչարենկոյի հակահայկական կեցվածքը, գովասանքի խոսք ասաց Տանյա Լիխանովային, որը, որպես բողոքի նշան, դուրս էր եկել ԽՍՀՄ ժուռնալիստների միությունից: Առանձնապես հիացմունքով խոսեց Կոլյա Ժուրովսկու մասին, որը Ազատության հրապարակում հացադուլի էր նստել, ապա Սպիտակում փլատակներից հանել ու փրկել էր հայ երեխայի: Նա հաղորդեց, որ հայ ժողովրդի պաշտպանության համար Մոսկվայում ստեղծվել է «Արդարություն» (“Справедливость”) կոմիտեն, որի մեջ մտնում են Անդրեյ Սախարովը, Յուրի Աֆանասևը, Բուլատ Օկուջավան, Անատոլի Պրիստակինը և ինքը[51]:

Մայիսի 18-ին տեղի ունեցած հանրահավաքը պահանջեց հրավիրել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան և

[50] *Նույն տեղում, գ. 39ա, թ. 16-17:*
[51] *Նույն տեղում:*

քննարկել հանրապետությունում ստեղծված ծանր վիճակը: «Սահմանադրական իրավունք» միության անդամ Հրանտ Խաչատրյանը հայտարարեց, թե հանրապետության բնակչությունը խիստ դժգոհ է ՀԽՍՀ Գերագույն խորհրդից և չի վստահում նրան: Իսկ Հայաստանի գրողների միության անդամ Հ.Թամրազյանը կարդաց «14-ի պաշտպանության» կոմիտեի նամակը, որում անհանգստություն էր հայտնվում բանտարկվածների առողջության համար[52]: Շարժման ակտիվիստներից Երջանիկ Աբգարյանն իր ելույթում վերլուծեց Մոսկվայի քաղաքականությունը, որը ձգտում էր չեզոքացնել Ղարաբաղյան շարժումը: Նրա կարծիքով Արկադի Վոլսկու գլխավորած կոմիտեն իրեն չի արդարացնում և նպատակ ունի պաշտպանել ԼՂԻՄ-ի նկատմամբ Ադրբեջանի քաղաքականությունը[53]: Ավելի կազմակերպված անցավ մայիսի 22-ի հանրահավաքը: Վրդովված ամբոխը կարիք ուներ ձերբակալված կոմիտեականների և Ղարաբաղի հիմնահարցի վերաբերյալ ցանկալի լուրերի: Հրապարակում կոչեր հնչեցին ընդհանուր գործադուլ սկսել հետևյալ պահանջներով. 1. Բանտարկությունից անմիջապես ազատել «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին: 2. Պահանջել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարի օրակարգի մեջ մտցնել Ղարաբաղյան հարցը և ընդունել արդարացի որոշում: 3. Տալ հավաստիացում, որ Ադրբեջանում և Ղարաբաղում տեղի չեն ունենալու ազգամիջյան ընդհարումներ: Միևնույն ժամանակ առաջարկվեց գործադուլի օրերին բացառել շքերթները մայրաքաղաքում, իսկ նստացույց անցկացնել Մատենադարանի դիմաց[54]:

Մայիսի 30-ին Մատենադարանի դիմաց տեղի ունեցած ցույցի ժամանակ հայտարարվեց, թե «Ղարաբաղ» կոմիտեի անդամները բանտից ազատվել են և վերադարձել Երևան: Նրանցից Բաբկեն Արարքցյանն իրենց ազատության համար շնորհակալություն հայտնեց հայ ժողովրդին: Անկասկած, «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին կալանքից ազատելը ամենից առաջ հայ ժողովրդի հերոսական պայքարի արդյունք էր:

[52] *Նույն տեղում, թ. 35-38:*
[53] *Նույն տեղում, թ. 53:*
[54] *Նույն տեղում, թ. 57:*

* * *

1989թ. մայիսի 28-ին Ստեփանակերտում առաջին անգամ զանգվածաբար նշվեց Հայաստանի առաջին հանրապետության հռչակման տարելիցը: Հազարավոր ստեփանակերտցիներ, անտեսելով հատուկ դրությունը, հավաքվելով քաղկոմի շենքի դիմաց, շարժվեցին Ս.Շահումյանի անվան մարզադաշտ, որտեղ և տեղի ունեցավ բազմահազարանոց հանրահավաք: Ելույթ ունեցողները պահանջում էին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի համագումարի օրակարգում մտցնել Լեռնային Ղարաբաղի հարցը: Հունիսի 4-ին Հաղթանակի հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում ելույթ ունեցողները խստորեն դատապարտեցին Բաքվի իշխանությունների հակահայկական գործողությունները և հույս հայտնեցին, որ կկատարվի արցախահայության ցանկությունը: Միտինգավորները շնորհավորեցին բանտից ազատված «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին, և դրա հետ կապված բազմաթիվ հեռագրեր ուղարկվեցին Երևան: Արցախցիները վճռականորեն պահանջում էին ազատել նաև Արկադի Մանուչարովին:

Ս.Գորբաչովը հունիսի 19-ին ընդունեց Լեռնային Ղարաբաղի մի խումբ պատասխանատու աշխատողների և ժողովրդական պատգամավորների[55]: Ընդունելությանը ներկա էին նաև Ն.Ռիժկովը, Վ.Չեբրիկովը և Ա.Վոլսկին: Մ.Գորբաչովը խոստացավ մոտակա օրերին վերականգնել մարզխորհուրդը, կուսակցության մարզկոմը, ինչպես նաև ընդլայնել Հատուկ կառավարման կոմիտեի իրավունքներն ու լիազորությունները: Սակայն նրա այդ խոստումը նոր լարախաղացություն էր:

Արցախահայության ազգային-ազատագրական պայքարը գնալով ավելի էր խորանում և ամրանում: Շարժման ղեկավարները հատուկ ուշադրություն էին դարձնում պայքարի առաջին շարքերում գտնվող բանվորների համախմբմանը: Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկայի արտադրամասի պետ Ռաֆայել Գաբրիելյանը առաջարկեց ստեղծել բանվորական խումբ, որը ցանկացած պահի պետք է պատրաստ լիներ կատարելու «Կռունկի» և տնօրենների խորհրդի հանձնարարությունները: Քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններից ընտրվեցին «հատուկ

[55] *Նրանք էին՝ Զորի Բալայան, Վալերի Աթաջանյան, Սեմյոն Բաբայան, Վահան Գաբրիելյան, Վաչագան Գրիգորյան, Մաքսիմ Միրզոյան, Հենրիխ Պողոսյան և Վլադիմիր Թովմասյան:*

բանվորներ», որոնց առաջին հավաքը տեղի ունեցավ 1988թ. մայիսին Սպայի տանը: Բանվորական խմբի հետ կապը պահպանում էր տնօրենների խորհրդի անդամ Ռոբերտ Քոչարյանը: Խմբի երկրորդ հավաքը, որը տեղի ունեցավ նույն թվականի աշնանը, նախագահ ընտրեց Ռ.Գաբրիելյանին: Բանվորական խումբը մասնակցում էր հանրահավաքների և շքերթների կազմակերպմանը, զենք ու զինամթերք ձեռք բերելուն, կազմակերպում էր ընդհատակյա ռադիոկայան, տարածում էր թռուցիկներ, հանդիպումներ էր ունենում Ա.Վոլսկու հետ և այլն[56]:

1989թ. մայիսի 31-ից սկսած՝ Ստեփանակերտում չէին դադարում չարտոնված հանրահավաքները: Արդեն երկու ամիս էր, ինչ մարզի արդյունաբերական ձեռնարկությունները չէին աշխատում: Ծանր կացության մեջ գտնվող Արցախին օգնության էին հասնում Հայաստանից և այլ տեղերից: Հուլիսի վերջին Ստեփանակերտ հասավ հատուկ ավտոշարասյուն՝ բաղկացած 7 բեռնատար ավտոմեքենաներից, որոնք Վրաստանի Բոգդանովկայի շրջանից Ղարաբաղ էին հասցրել 36 տոննա սննդամթերք՝ 20 տոննա ալյուր, 2 տոննա շաքար, 2 տոննա արևածաղկի յուղ, պանիր, բրինձ և այլն[57]:

Արցախ-Ղարաբաղում վիճակը ծանրանում էր նաև նրանով, որ օրեցօր ավելանում էր փախստականների թիվը: 1989թ. հուլիսի 1-ի տվյալներով մարզի տարածքում կային 18 525 փախստականներ[58]: «Կռունկը» չկար, իսկ տնօրենների խորհուրդը փաստորեն դադարել էր գործելուց: Ահա թե ինչու 1989թ. ամռանը անհրաժեշտ դարձավ որևէ կազմակերպության ստեղծումը, որը կարող էր գլխավորել ժողովրդական շարժումը և երկրամասը դուրս բերել ճգնաժամային վիճակից: Մինչ այդ՝ հունիսի 27-ին, Հաղթանակի հրապարակում տեղի ունեցած արտոնված հանրահավաքում ելույթ ունեցած Հատուկ կառավարման կոմիտեի անդամներ Սեմյոն Բաբայանը և Վլադիմիր Թովմասյանը, Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար Վալերի Աթաջանյանը, Մարտունու և Մարտակերտի կուսշրջկոմների առաջին քարտուղարներ Վաչագան Գրիգորյանն ու Վահան Գաբրիելյանը երկրի իշխանություններից պահանջեցին կատարել Մ.Գորբաչովի

[56] *Բանվորական խմբի գործունեության մասին տե՛ս «Ազատ Արցախ», 4, 6 և 27.05.1999:*

[57] Աբրահամյան Հ., *Ճակատագրին ընդառաջ, էջ 86:*

[58] **Арутюнян В. Б.**, *Նշվ. աշխ., մաս 2, ե., 1953, էջ 88:*

տված վերջին խոստումը և վերականգնել կուսմարզկոմն ու մարզխորհուրդը: Իսկ Ռոբերտ Քոչարյանն իր ելույթում առաջարկեց մարզում ստեղծել ժողովրդական ճակատ, որի միջոցով հնարավոր կլիներ կենտրոնացնել համաժողովրդական պայքարի ղեկավարումը: Այդ առաջարկությունն արժանացավ միտինգավորների հավանությանը: Եվ ահա հուլիսի 8-ին Ղարմետաքսկոմբինատի դահլիճում տեղի ունեցավ «Միացում» ժողովրդական շարժման Ստեփանակերտի քաղաքային հիմնադիր կոնֆերանսը[59]: Սերժ Սարգսյանի բացման խոսքից հետո նախաձեռնող խմբի աշխատանքների և առաջարկությունների մասին զեկուցեց Ռոբերտ Քոչարյանը: Կոնֆերանսը հաստատեց Հայոց համազգային շարժման հետ «Միացում» ժողովրդական շարժման միավորման հնարավորության հարցը: Կոնֆերանսն ընտրեց «Միացում» ժողովրդական շարժման քաղաքային խորհուրդ՝ բաղկացած 11 հոգուց[60]: Բաց քվեարկությամբ խորհրդի նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը, տեղակալ՝ Սերժ Սարգսյանը: «Միացում» ժողովրդական շարժման առաջնահերթ նպատակն էր ԼՂԻՄ-ի վերամիավորումը Հայկական ԽՍՀ-ի հետ, որը «մարզի հասարակական-քաղաքական կյանքը բնականոն հունի մեջ կմտցնի և թույլ կտա ըստ փուլերի վճռել համազգային և համադեմոկրատական խնդիրները»[61]:

Կոնֆերանսի ընդունած «Հռչակագրում» ասված է, որ Ստեփանակերտում ստեղծվել է հասարակական-քաղաքական նոր կազմակերպություն, որը ներկայացնում է բնակչության բոլոր խավերին և միավորում շարժման բոլոր մասնակիցներին: Նաև ասված է, որ «Հայոց արցախյան «Միացում» ժողովրդական շարժումը համերաշխ է ինքնորոշման, դեմոկրատիայի և սոցիալական արդարության սկզբունքները հարգող բոլոր շարժումների հետ, մերժում է ազգային խտրականությունը և շովինիզմը՝ դրանց ցանկացած դրսևորումներով[62]:

[59] *«Միացում» ժողովրդական շարժման Ստեփանակերտի հիմնադիր կոնֆերանսի նյութերը տես «Միացում» տեղեկագիր, N1, 09.08.1989:*

[60] *«Միացում» ժողովրդական շարժման քաղաքային խորհրդի անդամներ ընտրվեցին Ռոլես Աղաջանյանը, Գրիգոր Աֆանասյանը, Համլետ Գրիգորյանը, Արմեն Դանիելյանը, Էռնեստ Հայրապետյանը, Էդուարդ Ղուկասյանը, Լևոն Միրզոյանը, Գարիկ Պետրոսյանը, Գեորգի Պետրոսյանը, Սերժ Սարգսյանը և Ռոբերտ Քոչարյանը:*

[61] *«Միացում», N1, 1989:*

[62] *Նույն տեղում:*

«Միացում» ժողովրդական շարժման Ստեփանակերտի հիմնադիր կոնֆերանսը հանդես եկավ հայ ժողովրդին ուղղված դիմումով, որտեղ ասված է, որ «հայ ժողովրդի երկու՝ արհեստականորեն բաժանված հատվածների նպատակներն ու ձգտումները չեն կարող անջատ լինել իրարից, և դիմում են Հայոց արցախյան «Միացում ժողովրդական շարժումը Հայոց Համազգային շարժման բաղկացուցիչ մաս ճանաչելու խնդրանքով»՝ հույս հայտնելով, որ դա «կդառնա Մայր Հայաստանի հետ Արցախի միավորման նախագուշակ»: Նաև ասված է, որ «այսօր ամեն մի հայ, անկախ իր քաղաքական համոզմունքներից, ապրում է Հայաստանի հետ Արցախի վերամիավորման... գաղափարով»[63]: Կոնֆերանսը դատապարտեց Կովբյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշումը, ինչպես նաև Ռուսաստանի և Թուրքիայի միջև 1921թ. մարտի 16-ին կնքված մոսկովյան պայմանագիրը:

«Միացում» ժողովրդական շարժման խորհուրդն օգտվում էր հեղինակությունից: Նրա հասցեով ամեն օր ստացվում էին բազմաթիվ նամակներ և դիմումներ: Շուտով Շարժման բաժանմունքներ ստեղծվեցին մարզի բոլոր շրջաններում, իսկ «Միացում» տեղեկատուն ձեռքից ձեռք էր անցնում:

Այդ ժամանակ Ադրբեջանում հակահայ մոլուցքը զանգվածային բնույթ էր ստացել: Վայրենացած ազերի ամբոխը 1989թ. հուլիսի 13-ին պղծեց Շուշիում դրված Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի, ականավոր պետական գործիչ Իվան Թևոսյանի, Բաքվի 26 կոմիսարներից Բաղդասար Ավագյանի և Արամ Կոստանդյանի կիսանդրիները: Բարբարոսները Կիրովաբադում նույն կերպ վարվեցին Խորհրդային Միության կրկնակի հերոս, Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանի կիսանդրու, Բաքվում՝ Ստեփան Շահումյանի և այլ հայ ականավոր գործիչների հուշարձանների հետ: Բաքվի հանրահավաքներում կոչեր էին հնչում՝ հայերին ոչնչացնել կամ էլ դուրս քշել քաղաքից: Հակահայկական, հակադարաբաղյան այդ հիստերիան բորբոքողներից էին պատմության հայտնի կեղծարար Զիա Բունիաթովը և նրա գաղափարակիցները[64]:

Այդ ամենն ի նկատի ունենալով՝ կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի քարտուղար Վալերի Աթաջանյանի և քաղ-

[63] *Նույն տեղում:*

[64] *Զիա Բունիաթովը ահաբեկչության է ենթարկվել Բաքվում 1997թ. փետրվարին:*

խորհրդի գործկոմի նախագահ Մաքսիմ Միրզոյանի ստորագրությամբ հուլիսի 10-ին տագնապալի հեռագիր ուղարկվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանին, որտեղ ասված է. «ԼՂԻՄ-ի ադրբեջանցի բնակչության կողմից վերջին օրերին հաճախակի ու առավել դաժան են դարձել հայերի դեմ գործադրվող դավերը, որոնք խրախուսվում են հանրապետության ղեկավարության կողմից: Դրա նպատակն է, իհարկե, հայերին հրահրել համապատասխան գործողությունների: Մարզի շուրջ բոլոր ճանապարհները փակված են, գտնվում են ադրբեջանցիների հսկողության տակ: Ջարդում են հայերի մեքենաները: Սակայն զինվորականությունը չի կանխում, չի արգելում այդ վայրագությունները: Իսկ հայ բնակչության կողմից կիրառվող որևէ գործողություն արժանանում է խստագույն պատժի... Դրությունը բարդ է, հղի ամենածանր հետևանքներով: Խնդրում ենք ձեր անհետաձգելի միջամտությունը»[65]: Իսկ ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի կուսակցական ապարատի յոթ բաժինների վարիչների և 26 պատասխանատու աշխատողների ստորագրությամբ երկու օր անց՝ հուլիսի 12-ին, Մ.Գորբաչովին ուղարկված հեռագրում նշվել է, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վճռման ձգձգումը հասցրել է իրավիճակի հերթական լարվածության. մարզը գտնվում է շրջափակման մեջ, զոհվում են մարդիկ, ձեռնարկությունները ենթարկվում են ջարդարարության և հրդեհման: Այդ ամենը կատարվում է ՆԳՆ աշխատողների և խորհրդային բանակի աչքի առաջ, որոնք կոչված են կանխելու նման հանցավոր գործողությունները: Դրան նպաստում են նաև «ժամանակ» ծրագրի հակահայկական հաղորդումները: Բնակչությունը վրդովված է, որ հանցագործները մնում են անպատիժ: Բանը հասել է նրան, որ Շուշիում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ որոշում են ընդունել հայերին արտաքսել Լեռնային Ղարաբաղից: Հեռագրի հեղինակները պահանջում էին ձեռնարկել անհետաձգելի միջոցառումներ[66]: ԼՂԻՄ-ում ահաբեկչությունը կանխելու և իրավիճակը կայունացնելու խնդրանքով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանին դիմում էր նաև մարզում բնակվող ռուս ազգաբնակչությունը: Սակայն Մոսկվան՝ երկրի բարձրագույն իշխանությունները, նպատակ չունեին փոխելու իրենց քաղաքականությունը:

[65] Ուլուբաբյան Բ., *նշվ. աշխ., էջ 110:*
[66] **Арутюнян В. Б.,** *նշվ. աշխ., էջ 93-95:*

Հատուկ շրջանի նոր պարետ գնդապետ Սուսատովը, հուլիսի 14-ին դիմում հղելով Ստեփանակերտի և մարզի բնակչությանը, կոչ արեց չխանգարել Մոսկվայից սպասվող հանձնաժողովի աշխատանքներին, չընդհարվել զինվորականների և միլիցիայի աշխատողների հետ[67], դա այն դեպքում, երբ հենց նրանք էին սադրանքներ կազմակերպում, անհիմն ձերբակալում մարդկանց, ծեծում կամ էլ այլ պատիժների ենթարկում: Բավական է նշել, որ միայն 1989թ. յոթ ամիսների ընթացքում տարբեր պատճառներով մարզում կալանավորվել էր 15 200 մարդ, որոնցից 14836-ը՝ հայ: ԽՍՀՄ դատախազության տվյալներով 1988 թվականից մինչև 1992թ. մայիսը ԼՂԻՄ-ում, Հայաստանի սահմանամերձ գյուղերում սպանվել են 388 և բռնագաղթվել 302 հազար հայ[68]:

1989թ. հուլիսի 20-ին Լեռնային Ղարաբաղ ժամանեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հերթական հանձնաժողովը[69], որը գլխավորում էր Գ.Տարազևիչը: Հանձնաժողովի հիմնական խնդիրն էր՝ տեղում լսել մարդկանց, նյութեր հավաքել, ծանոթանալ իրավիճակին և զեկուցագիր ներկայացնել ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ: Հանձնաժողովը մարզում մնաց մինչև հուլիսի 28-ը: Հանդիպեց երկրամասի աշխատավորների, պատերազմի ու աշխատանքի վետերանների, կրթության և մշակույթի աշխատողների հետ: Սակայն, ինչպես պարզվեց հետո, երբ հանձնաժողովի կատարած աշխատանքը գնահատվում էր, Բորիս Օլեյնիկը, ելույթ ունենալով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում, գրեթե գլխիվայր ներկայացրեց իրական պատկերը՝ խեղա-

[67] *Նույն տեղում, էջ 90-92:*
[68] *Նույն տեղում:*
[69] *Հանձնաժողովի կազմը՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի միութենական խորհրդի նախագահի տեղակալ Ա. Մոկունի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի նախագահի տեղակալ, Ուկրաինայի գրողների միության քարտուղար Բ. Օլեյնիկ, ԽՍՀՄ ԳԽ քաղաքացիների, հրապարակայնության, իրավունքի և դիմումների կոմիտեի նախագահ Վ. Ֆոտեև, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ածխիոնի վարիչ, պրոֆեսոր Ա. Եմելյանով, Էստոնական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտական աշխատող է. Խալլիկ, Մոսկվայի քաղաքային խորհրդի և պատերազմի ու աշխատանքի վետերանների խորհրդի նախագահ Ն. Սըչևա և ուրիշներ: Հանձնաժողովի անդամների մի մասը Լեռնային Ղարաբաղ ժամանեց մի քանի օր ուշ:*

թյուրելով այն ամենը, ինչ տեսել ու լսել էին Լեռնային Ղարաբաղում[70]:

1989թ. հուլիսյան իրադարձությունների համապատկերում առանձնացվում է շահումյանցիների համարձակ քայլը[71]: Շահումյանի շրջանային խորհրդի նստաշրջանը հուլիսի 26-ին որոշում ընդունեց շրջանը ԼՂԻՄ-ին միավորելու վերաբերյալ: Իմիջիայլոց, այդ շրջանի բնակիչները համանման որոշում ընդունել էին նաև 1919 թվականին: Սակայն 1923թ.՝ Ինքնավար մարզի ստեղծման ժամանակ, Ադրբեջանի իշխանությունները սահմաններն այնպես վերածևեցին, որ ամբողջ Հյուսիսային Արցախն անջատվեց Լեռնային Ղարաբաղից[72]: Մի քանի օր անց՝ օգոստոսի 6-ին, Շահումյանի կուսշրջկոմի առաջին քարտուղար, Բաքվի դրածո Ռոլանդ Միրզոևը պաշտոնանկ արվեց, և առաջին քարտուղար ընտրվեց Վլադիմիր Աղաջանյանը: Հայտնի է, որ խորհրդային իշխանության տարիներին բազմիցս հարց է բարձրացվել Շահումյանի շրջանն ընդգրկել ԼՂԻՄ-ի կազմի մեջ, սակայն միշտ էլ մերժվել է Ադրբեջանի իշխանությունների կողմից: Ղարաբաղյան պայքարի հենց սկզբից Շահումյանի շրջանի և Խանլարի շրջանի Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչությունը ակտիվորեն պահանջում էին Լեռնային Ղարաբաղի հետ միասին միավորվել Հայաստանի հետ:

---

[70] *«Սովետական Ղարաբաղ», 08.08.1989:*

[71] *Ավելի քան 4000 շահումյանցիներ, 1989թ. հուլիսի 25-ին շրջկենտրոնում հավաքվելով միտինգի, պահանջեցին անհապաղ հրավիրել շրջխորհրդի նստաշրջան և որոշել շրջանը միավորել ԼՂԻՄ-ի հետ: Այդ հանրահավաքում էլ որոշվում է նստաշրջանը հրավիրել հաջորդ օրը՝ ժամը 10-ին: Իսկ երբ պարզվում է, որ Բաքվից պիտի ժամանեն էմիսարներ, շահումյանցիները որոշում են նստաշրջանը սկսել մինչև նրանց գալը՝ ժամը 11-ին: Շրջխորհրդի 75 պատգամավորներից ներկա էին 69-ը: Ադրբեջանցի պատգամավորները հեռացել էին նիստից: Ելույթ ունեցավ 25 հոգի (Սամվել Շահմուրադյան, Ճակատագրի շրջա, «Գրական թերթ», 02.08.1989: Տե՛ս նաև* **Арутюнян В. Б.**, *նշվ. աշխ., էջ 119):*

[72] *Այդ ժամանակ պատմական Գյուլիստանի մելիքության տարածքը բռնակցվել է Գանձակի շրջանին: 1930թ. այն առանձնացվել է և ստեղծվել Շահումյանի գյուղական շրջան՝ 583 քառակուսի կիլոմետր տարածքով, որտեղ 1989 թ. մարդահամարի տվյալներով ապրում էր 20625 մարդ, որից 15973-ը՝ հայ, 2889-ը՝ ադրբեջանցի և 763-ը՝ ռուս: 1940-ական թթ. Կասում Իսմայիլի շրջանից Զեյվա, Շաֆազ, Գյուլզալար, իսկ Խանլարի շրջանից՝ Տոզան գյուղերը միավորել էին Շահումյանի շրջանին: Շրջանը ԼՂԻՄ-ի հետ ուներ ավելի քան 50 կիլոմետր երկարությամբ սահման:*

ԼՂԻՄ-ի հետ Շահումյանի շրջանի վերամիավորման վերաբերյալ որոշումը Ստեփանակերտում ընդունվեց ջերմորեն: Այդ օրերին Գետաշենի ենթաշրջանի (Գետաշեն, Ազատ, Կամո, Մարտունաշեն և այլ գյուղեր) գյուղական խորհուրդների նստաշրջանները նույնպես պահանջել էին Շահումյանի շրջանի կազմում միավորվել ԼՂԻՄ-ի հետ: Այսպիսով՝ Հյուսիսային Արցախը, որը նույնպես ընդգրկված էր ազգային-ազատագարկան պայքարի մեջ, առաջ էր քաշում կենսական նշանակություն ունեցող հարցեր:

Արցախում ստեղծված բարդ իրադրության պայմաններում, չնայած իր բավականին ակտիվ գործունեությանը, «Միացում» շարժումը չկարողացավ կանգնել Ղարաբաղյան շարժման գլուխ: Դրա հիմնական պատճառը, թերևս, շարունակվող համընդհանուր գործադուլն էր, որի վրա չկարողացավ որևէ ազդեցություն ունենալ: Իսկ դա կարևոր խնդիր էր:

Շրջափակման և գործադուլի մեջ գտնվող Արցախը շնչահեղձ էր լինում: Հայաստանից եկող ավտոշարասյուները տեղ չէին հասնում, իսկ Բաքվից ուղարկվող ապրանքները չէին ընդունվում արցախցիների կողմից: Երրորդ ամիսն էր, ինչ մարդիկ աշխատավարձ չէին ստանում: Անգամ ԽՍՀՄ ներքին գործերի նախարար Յ.Շատալինը, լինելով Ստեփանակերտում և Լաչինի շրջանում, չկարողացավ (թե չցանկացավ) անվտանգ դարձնել Գորիս-Ստեփանակերտ ճանապարհը: Ստեփանակերտում օգոստոսի 4-ին տեղի ունեցած հանրահավաքը[73], ելնելով ստեղծված իրավիճակից, բնակչությանը կոչ արեց դադարեցնել գործադուլը հատկապես շինարարական օբյեկտներում և վերականգնել աշխատանքային ռիթմը, որպեսզի փախստականների համար կառուցվեին բնակարաններ, ապահովվեր ապրելու կենսապայմանները, ամեն տեղ վերականգնել կարգ ու կանոնը և այլն: Իրոք, մարզը ծանր վիճակից դուրս բերելու ամենաճիշտ ուղին գործադուլը դադարեցնելն էր: Բայց ո՞վ կարող էր իր վրա վերցնել գործադուլավորներին համոզելու պատասխանատվությունը: Հատուկ կառավարման կոմիտեն ի վիճակի չէր, որովհետև արցախցիները նրան չէին հավատում ու վստահում: Ահա այստեղ

---

[73] *Այդ հանրահավաքում ելույթ ունեցան մարզային հիվանդանոցի գլխավոր վիրաբույժ, Շարժման առաջամարտիկներից Է.Ղուկասյանը, Ասկերանի շրջժողկոթբաժվար Ա.Գրիգորյանը, փախստականների կոմիտեի նախագահ Յ.Դանիելյանը և ուրիշներ:*

է, որ օգնության հասավ Ղարաբաղի հերոսական անցյալի փորձը: Նպատակահարմար գտնվեց 1918թ. օրինակով ստեղծել Ազգային խորհուրդ, որը կգլխավորեր ազատագրական պայքարը և իր ետևից կտաներ երկրամասի բնակչությանը: Այդ նպատակով օգոստոսի 7-ին Շոշ գյուղում տեղի ունեցավ հավաք[74], որին մասնակցեցին Ասկերանի, Հադրութի, Մարտունու, Մարտակերտի կուսշրջկոմների բյուրոների, մարզային արհմիութենական խորհրդի նախագահության, մարզի, կոմերիտմիության բյուրոյի անդամները, ԼՂԻՄ մարզային, քաղաքային և շրջանային խորհուրդների ժողովրդական պատգամավորները, «Միացում» կազմակերպության վարչության անդամները: Հավաքը քննարկեց ստեղծված այդ դժվարին և ծանր պայմաններում կուսակցական և պետական մարմինների, հասարակական ու քաղաքական կազմակերպությունների գործողությունների միասնությունն ապահովելու հարցը: Հավաքը տեղի ունեցավ կիսագաղտնի պայմաններում: Որոշվեց հետագա գործողությունների ծրագիր մշակելու համար շուտափույթ հրավիրել ԼՂԻՄ բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումար: Այն նախապատրաստելու համար ստեղծվեց կազմկոմիտե՝ մարզգործկոմի նախագահի տեղակալ Շմավոն Պետրոսյանի գլխավորությամբ:

Որպես համագումարին նախապատրաստվելու գործնական քայլ՝ օգոստոսի 11-ին Ստեփանակերտի հաղթանակի հրապարակում հրավիրվեց հանրահավաք: Բացելով այն՝ «Միացում» շարժման խորհրդի անդամ Սերժ Սարգսյանը նշեց, որ Ադրբեջանը փորձում է ջլատել արցախահայության շարժումը: Սակայն արցախցիները համագումար հրավիրելով պետք է ապացուցեն, թե իրենք ինչի են ընդունակ: Իսկ Բորիս Դադամյանը բնակչությանը կոչ արեց իշխանությունը խլել և մարզի ապագայի համար պատասխանատվությունը վերցնել իրենց վրա: Դրա համար նախ և առաջ պետք է վերջ տալ գործադուլին, հիմնական ուշադրությունը դարձնել բնակարանաշինությանը, որի կարիքը հատկապես զգում են փախստականները: Ելույթ ունեցան նաև բանաստեղծ Վ.Հակոբյանը, բանվոր Գ.Պետրոսյանը, դասախոս

[74] *Փաշա Օհանջանյանի «Ղարաբաղի ազատագրական պատերազմ» գրքի 42-րդ էջում գրված է. «1989-ի օգոստոսին Ասկերանի շրջանի Շոշ գյուղում գաղտնիության պայմաններում գումարվում է ԼՂԻՄ-ի ազգաբնակչության լիազոր-ներկայացուցիչների անորանիկ համագումարը»: Հեղինակը խորհրդակցությունը շփոթել է համագումարի հետ:*

Գ.Աֆանասյանը և ուրիշներ: Հանրահավաքը Հատուկ կառավարման կոմիտեից պահանջեց երեք օրվա ընթացքում վերացնել մարզի շրջափակումը և բողոք ներկայացրեց ԽՍՀՄ բարձրագույն իշխանություններին՝ պահանջելով կալանքից ազատել Արկադի Մանուչարովին[75]:

1989թ. օգոստոսի 16-ին Ստեփանակերտի պետական դրամատիկական թատրոնի շենքում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր–ներկայացուցիչների համագումարը: Մարզում ստեղծված իրավիճակի մասին զեկուցումով հանդես եկավ Վ.Թովմասյանը: Մտքերի փոխանակությանը մասնակցեցին շուրջ 20 հոգի: Համագումարի անունից դիմումներ հղվեցին համապատասխան մարմիններին՝ Արկադի Մանուչարովին և այդ օրերին Չափար գյուղից անհիմն ձերբակալված մի խումբ բնակիչների նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխելու պահանջով: Համագումարն ընդունեց որոշում «Մարզում ստեղծված իրավիճակի մասին», «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղն անկախ հայտարարելու վերաբերյալ», դիմում՝ «Հատուկ շրջանի պարետին, խորհրդային բանակի և ՍՍՀՄ ՆԳՆ ստորաբաժանումների սպաներին»: Հայտարարվեց նաև, որ Լեռնային Ղարաբաղի «Ազգային խորհուրդը ժողովրդական ինքնակառավարման դեմոկրատական մարմին է՝ ծնված վերակառուցմամբ ու ժողովրդական զանգվածների ստեղծագործությամբ, կոչված է «ՍՍՀՄ-ում ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին» քաղաքական հիմնակազմային սկզբունքը գործնականում հանգեցնել իրական բովանդակության»: Համագումարը խստագույն կերպով մերժեց «մարզի ներքին գործերին Ադրբեջանի կառավարության կողմից միջամտություն ցույց տալու յուրաքանչյուր փորձ և ինքնավար մարզի հանդեպ անընդունելի» համարեց «թելադրանքի քաղաքականությունը»: Որոշվեց «որպես պետական իշխանության խորհրդանիշ՝ մարզի տարածքում ընդունել ՍՍՀՄ պետական դրոշը»: Համագումարն ընդգծեց, որ «ՍՍՀՄ սահմանադրությունը ոչ մի մարմնի, այդ թվում և ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը իրավունք չի վերապահում դադարեցնել նույնիսկ գյուղական և ավանային խորհուրդների գործունեությունը», և որ «ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989թ. հունվարի 12-ի հրամանագրով Հատուկ կառավարման կոմիտեին այդպիսի իրավունքով օժտելը

[75] **Арутюнян В. Б.,** *նշվ. աշխ., էջ 143-144:*

հիմնական օրենքի երկրորդ հոդվածի կոպիտ խախտում է»: Հռչակվեց, որ «Ազգային խորհուրդը անկախ է իր գործունեության մեջ, վերահսկելի է միայն համագումարի կողմից: Նրա որոշումները պարտադիր են Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածքում կատարելու համար»: Հռչակագրում ասված է, որ «ԼՂԻՄ-ի գործերին Ադրբեջանական ՍՍՀ-ի միջամտությունը գնահատվելու է որպես ագրեսիայի ակտ և կստանա համարժեք պատասխան»: Համագումարը, դիմելով ժողովրդավարական պետությունների կառավարություններին և ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, խնդրում էր օժանդակել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ինքնորոշման և անվտանգության ձգտումներին[76]:

Համագումարն ընտրեց 80 հոգուց բաղկացած Ազգային խորհուրդ և 21 հոգանոց նախագահություն: Ազգային խորհրդի նախագահ ընտրվեց Մարտունու կուսշրջկոմի առաջին քարտուղար Վ.Գրիգորյանը, տեղակալներ՝ Վ.Աթաջանյանը և Վ.Թովմասյանը: Համագումարի կոչով օգոստոսի 21-ից դադարեցվեց գործադուլը, և արդեն 28-ին բոլոր ձեռնարկությունները աշխատում էին: Ադրբեջանի իշխանությունների հաշվարկներով 1988 – 1989թթ. ԼՂԻՄ-ում տեղի ունեցած 10 գործադուլների հետևանքով իբր տնտեսությանը հասցված նյութական վնասը կազմել է մոտ 67 միլիոն ռուբլի[77]:

4. ԱՐՑԱԽ–ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ

ԼՂԻՄ լիազոր–ներկայացուցիչների համագումարը և նրա ընդունած որոշումները սվիններով ընդունվեցին Ադրբեջանի իշխանությունների կողմից: Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդն օգոստոսի 23-ի նիստում որոշում ընդունեց արձակել Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների կողմից ընտրված Ազգային խորհուրդը: Այդ նիստում՝ ազերի պատգամավորների պահվածքն ու վարքագիծը պարզապես անբարոյական էր: Նրանց հանգստացնելու համար Ա.Վեզիրովը հայտարարեց՝ թե՛ պատգամավորները և թե՛ ժողովուրդը չպետք է անհանգստանան, քանի որ «Լեռնային Ղարաբաղը մերն է, միշտ էլ կմնա

[76] *Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարի նյութերը, Ստեփանակերտ, 1989: Տես նաև «Սովետական Ղարաբաղ», 17.08.1989:*

[77] *Хроника НКАО, февраль 1988 – февраль 1990, Баку, 1990, с. 34.*

մերը, որովհետև մեր թիկունքում կանգնած են և մեզ պաշտպանում են Մ.Գորբաչովն ու Ե.Լիգաչովը»[1]:

Մինչ այդ՝ օգոստոսի 15-ին, Բաքվում ստեղծվել էր «Ղարաբաղին օգնելու համազգային շարժում» կազմակերպությունը, որի հիմնական խնդիրն էր Լեռնային Ղարաբաղը լրիվ ադրբեջանականացնելու համար չխնայել «ոչ ֆինանսական և ոչ էլ այլ միջոցներ»[2]: Այդ նույն օրն էլ Բաքվի մտավորականության ժողովը, որին մասնակցեցին նաև քաղաքի հասարակայնության ներկայացուցիչները, դիմելով ադրբեջանական ժողովրդին, բացահայտ կոչ արեց դիմել բռնությունների՝ «արհեստականորեն ստեղծված ԼՂԻՄ-ի խնդրին վերջ տալու նպատակով»: Խեղաթյուրելով պատմական ճշմարտությունը և Ղարաբաղյան շարժման էությունը՝ Ադրբեջանի մտավորականները, փորձում էին ամեն ինչ գլխիվայր շուռ տալ և նույնիսկ հայտարարեցին, թե իբր հայերը «խարխլում են ադրբեջանցիների հեղինակությունն ամբողջ աշխարհում»[3]: Ադրբեջանի մտավորականներն իրենց ժողովրդին մոլորության մեջ գցելով, հայտարարում էին, թե իբր ոչ թե ադրբեջանցիները, այլ հայերն են շրջափակել ԼՂԻՄ-ը և Ադրբեջանից Հայաստան գնացող երկաթուղին ու հարձակվում են ադրբեջանական գնացքների վրա: Արցախցի մի խումբ մտավորականներ, ի պատասխան այդ սադրանքների, հերթական անգամ մերկացրին ազերի մտավորականների այդ խեղաթյուրումները[4]:

Ադրբեջանում անընդհատ դիմում էին նոր սադրանքների և կեղծիքների: Օգոստոսի 18-ին մամուլում հրապարակվեց Բաքվի Նիզամիի շրջանի աշխատավորների դիմումը՝ ուղղված ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներին[5], որի կազմողները փորձում էին համոզել, թե իբր «Միայն Ադրբեջանի բազմազգ ժողովուրդն է իրավասու որոշելու իր սուվերեն հանրապետության տարածքային կարգավորման հարցը», և որ օրենքի խախտումը «կարող է հանգեցնել բարդ հասարակական-քաղաքական հետևանքների»: Այդ սպառնալիքը, ըստ էության, ադրբեջանական մտավորականության նախորդ դիմում-գառանցանքի հետևողական շարու-

[1] *"Бакинский рабочий", 24.08.1989:*

[2] *Նույն տեղում, 17.08.1989:*

[3] *Նույն տեղում:*

[4] *«Սովետական Ղարաբաղ», 25.08.1989:*

[5] *"Бакинский рабочий", 18.08.1989.*

նակությունն էր, որն ամբողջական տեսք ստացավ սեպտեմբերի 15-ին տեղի ունեցած Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանում, երբ դարձյալ քննարկվում էր ԼՂԻՄ-ի հարցը[6]:

Ի պատասխան ադրբեջանական մտավորականության՝ արցախյան շարժման նվիրյալ Գալինա Ստարավոյտովան արդարացիորեն գտնում էր, որ «Ղարաբաղի հիմնախնդիրը, նույնիսկ, այնքան էլ ազգային չէ, չնայած այստեղ կա ազգամիջյան որոշակիորեն ձգձգված բախում», և որ «հարցն, ավելի ճիշտ, քաղաքական է ու պետական, ազգի ինքնորոշման իրավունքն ավելի բարձր է պետական անկախության գաղափարից»: Նա շեշտում է, որ «այս մեկուկես տարում Ղարաբաղը դարձել է երկրի կենտրոնը և ձեռք բերել ընդհանուր նշանակություն»[7]:

Ադրբեջանը, հավատարիմ մնալով իր հակահայ քաղաքականությանը, շարունակում էր ավելի սեղմել Արցախի շրջափակման օղակը: Ելույթ ունենալով սեպտեմբերի 8-ին Ստեփանակերտում տեղի ունեցած հանրահավաքում՝ Սերժ Սարգսյանը, Համլետ Գրիգորյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչիկ Բեգլարյանը, Էռնեստ Հայրապետյանը և ուրիշներ պահանջեցին վերջ տալ մարզի շրջափակմանը և ադրբեջանական բնակավայրերում ապօրինի շինարարությանը: Նրանք կոչ արեցին բոլոր ուժերը կենտրոնացնել՝ վերացնելու երկարատև գործադուլի՝ զգացնել տվող հետևանքները, փակել ազերի անասնագողերի ճանապարհը, ուժեղացնել հայկական սահմանամերձ գյուղերի պաշտպանությունը և այլն: Նրանք նաև կոչ արեցին չենթարկվել սադրանքների ու խուճապի, և դրսևորել կազմակերպվածություն, շրջահայացություն, ամրապնդել մարզի և ամբողջ հայության միասնությունը: Որոշվեց հանրահավաքի անունից դիմել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խնդրելով անհապաղ հրավիրել արտահերթ նստաշրջան և քննարկել Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը[8]: Ելնելով այդ պահանջներից՝ Ազգային խորհրդի նախագահության սեպտեմբերի 9-ի նիստը, քննարկելով «Կուսակցության ազգային քաղաքականությունը արդի պայմաններում», «Բերքահավաքի ընթացքը մարզի կոլտնտեսություններում և պետական տնտեսություններում» և «Ազգային խորհրդի նախագահության առաջնահերթ

[6] *Նույն տեղում, 19.09.1989:*
[7] *«Սովետական Ղարաբաղ», 22.08.1989:*
[8] *Նույն տեղում, 10.09.1989:*

աշխատանքների ծրագրի մասին» հարցերը, ընդունեց մի շարք կարևոր որոշումներ, որոնք բխում էին մարզի կենսական շահերից ու առաջնահերթ խնդիրներից:

Ազգային խորհուրդը, դիմելով Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին, խնդրեց քննարկել ԼՂԻՄ ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների հռչակագիրը և իրեն ճանաչել որպես մարզում միակ ժողովրդական իշխանություն, ինչպես նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջիկա նստաշրջանում օգտագործել միութենական հանրապետության բոլոր իրավունքները՝ Հայկական ԽՍՀ-ի հետ ԼՂԻՄ-ի վերամիավորման հարցը դրականորեն լուծելու համար[9]: ԼՂԻՄ Ազգային խորհուրդը նաև նամակ հղեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ նշելով, որ ընտրվել է երկրամասի բնակչության 80 տոկոսը կազմող հայության լիազոր ներկայացուցիչների կողմից և հուսով է, որ Անվտանգության խորհուրդը կօժանդակի Ղարաբաղի հայության անվտանգության ապահովմանը: Նամակում հիշեցվում էր, որ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948թ. դեկտեմբերի 10-ի դեկլարացիան միշտ խախտվել է Ղարաբաղում, որը ներկայումս գտնվում է ամենադաժան պաշարման պայմաններում, և որ այնտեղ շարունակվում են սպանություններն ու բռնությունները, իրականացվում տեղաբնիկների բռնագաղթեցում[10]:

Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունները շարունակում էին մնալ խորհրդային երկրի ժողովուրդների ուշադրության կենտրոնում: Նրանք իրենց գործողություններով, բազմաթիվ նամակներով ու հեռագրերով պաշտպանում էին Արցախ-Հայաստան միավորման գաղափարը: 1989թ. սեպտեմբերի 16–18-ը Լենինգրադում տեղի ունեցած ժողովրդական շարժումների և կազմակերպությունների համամիութենական կոնֆերանսին Արցախից մասնակցեցին «Միացում» ժողովրդական շարժման ներկայացուցիչներ Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը: Կոնֆերանսի հիմնական խնդիրն էր համախմբել և կոորդինացնել ժողովրդավարական ուժերին, մշակել գործողությունների կոնկրետ սկզբունք և ծրագիր: Նախքան կոնֆերանսը, Լենինգրադի ժողովրդական ճակատի ներկայացուցիչները եղել էին Ադրբեջանում, Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում: Նրանք հանգամանորեն ծանոթացել էին Լեռնային Ղարաբաղի

[9] *Նույն տեղում, 10.09.1989 և 15.09.1989:*
[10] *«Դրոշակ», 1989, N11, էջ 19:*

հիմնախնդրի հետ: Ադրբեջանի ժողովակատը հրաժարվել էր մասնակցել կոնֆերանսի աշխատանքներին: Կոնֆերանսի նախագահ անվանի գիտնական Սելյեն դա բացատրեց նրանով, որ իբր Բաքվում տեղի է ունենում Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջան, որին մասնակցում են նաև ժողովակատի ղեկավարները: Այդ օրերին Հայաստանում ևս տեղի էր ունենում նման նստաշրջան, սակայն Հայաստանի ժողովակատի՝ ՀՀՇ-ի ներկայացուցիչները մասնակցեցին կոնֆերանսի աշխատանքներին: Սերժ Սարգսյանն իր ելույթում ներկայացրեց Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ տիրող իրադարձությունների իրական պատկերը, որն առաջ բերեց ներկաների վրդովմունքը: Կոնֆերանսի ընդունված դիմումի մեջ ասված է. «Մենք ողջունում ենք Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների համագումարում ընտրված Ազգային խորհրդին և ՍՍՀՄ ժողպատգամավորներին կոչ ենք անում այն ճանաչել որպես ինքնավար մարզի ժողովրդական ինքնակառավարման միակ ընտրովի մարմին»[11]:

1989թ. սեպտեմբերի 19–20-ը տեղի ունեցած ԽՄԿԿ Կենտկոմի պլենումը, քննարկելով Մ.Գորբաչովի՝ «Կուսակցության ազգային քաղաքականությունը ժամանակակից պայմաններում» զեկուցումը, անհրաժեշտ համարեց ազգային, այդ թվում նաև Լեռնային Ղարաբաղի հարցին մոտենալ բոլոր կողմերի ներկայացուցիչների պարտադիր մասնակցությամբ: Պարզապես կենտրոնը չէր ցանկանում տեսնել, որ հումքի և շինանյութերի բացակայության պատճառով ԼՂԻՄ-ում պարապուրդ էր, միայն Ստեփանակերտի սննդի ձեռնարկություններն օրական 300–350 հազար՝ ռուբլու վնաս էին կրում, Ստեփանակերտի արտադրական կոմբինատի պահեստում ու արտադրամասերում կուտակվել էր մոտ 700 հազար, էլեկտրատեխնիկական գործարանում՝ մեկ միլիոնից ավելի, Ղարմետաքսկոմբինատում՝ ավելի քան 1,2 միլիոն ռուբլու արտադրանք: Վիճակը նույնն էր նաև մյուս ձեռնարկություններում[12]: Լեռնային Ղարաբաղի հասցեով ուղարկվող հարյուրավոր բեռնված վագոններ տեղ չէին հասնում, քանի որ թալանվում էին Ադրբեջանի տարածքում: Տարբեր ապրանքներով բեռնված 100 ավտոմեքենա մոտ մեկ ամիս կանգնած էր

[11] «Միացում» տեղեկագիր, N4, հոկտեմբեր, 1989: Օգոստոսին, երբ տեղի ունեցավ Ազգային խորհուրդը, «Միացում» շարժումը, չնայած մտավ նրա կազմի մեջ, սակայն պահեց իր ներքին ինքնուրույնությունը:
[12] «Մոսկովսկայա Պրավդա», 29.09.1989:

Գորիսում, և նույնիսկ զինուժի օգնությամբ չէին կարողանում դրանք Լաչինի շրջանի տարածքով հասցնել Արցախ: Շրջափակման պատճառով Արցախի արտադրանքը չէին կարողանում առաքել հասցեատերերին[13]:

Արցախ-Ղարաբաղում դժվարությամբ էին ընթանում նաև գյուղատնտեսական աշխատանքները: Վառելիքի և պահեստամասերի բացակայության պատճառով գյուղտեխնիկան չէր աշխատում. բերքը մնում էր դաշտերում ու այգիներում, ծգծգվում էր այգեկութը: Երկրի վերադաս իշխանություններին մարզի երկրագործների ուղղած բազմաթիվ նամակ-բողոքները մնում էին անպատասխան: Ճիշտ է, հոկտեմբերի 3-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդում քննարկվեց Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի շրջափակման հարցը, և դատապարտվեցին Ադրբեջանի ապօրինությունները, սակայն դրանից ոչինչ չփոխվեց: Խոսվեց նաև Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ: Ն.Ռիժկովն իրավացիորեն շեշտեց, որ ԼՂԻՄ հիմնախնդիրը պետք է վճռվի քաղաքական ճանապարհով և ոչ թե սվիններով: Նրանից հետո հանդես եկած Մ.Գորբաչովն, ընդունելով Ղարաբաղի հիմնախնդրի վաղուց գոյություն ունենալու փաստը, նշեց, որ այն, այնուամենայնիվ, պետք է լուծվի առանց սահմանների վերանայման[14]:

1989թ. հոկտեմբերը չափազանց ծանր էր արցախահայության համար: Ադրբեջանը շարունակում էր Արցախը ծնկի բերելու իր քաղաքականությունը: Նրա և խորհրդային զինված ուժերի կողմից Արցախում կազմակերպվող սադրանքների և ահաբեկչությունների վերջը չէր երևում: Այսպես՝ Սվերդլովսկի հրշեջ-տեխնիկական ուսումնարանի սովորողները Շուշի քաղաքից հոկտեմբերի 10-ին պետք է գնային Կիրովաբադի օդանավակայան՝ մշտական տեղավորման վայր մեկնելու համար: Ավտոշարասյունը գլխավորում էր փոխգնդապետ Վ.Ժիրովը, որը պետք է գործեր կանոնադրության և հրահանգների համաձայն: Ավտոշարասյունը պետք է Շուշիից գնար Կարկառի ափով, սակայն շրջվել և մտել էր Ստեփանակերտ՝ նախօրոք տեղյակ չպահելով քաղաքի և մարզի ղեկավարությանը: Մեքենաներն ընթանում էին ձայնային ազդանշանների ուղեկցությամբ: Այդ արտառոց տեսարանը դիտելու համար փողոց դուրս եկած մարդկանց վրա մեքենաներից կրակում են սովորողներն ու սպաները: Վիրավորվում

[13] Նույն տեղում, 11.10.1989:
[14] "Правда", 04.10.1989.

են տասնյակից ավելի անմեղ մարդիկ, որոնցից մեկը մահանում է[15]: Պարզվում է, որ այդ սադրանքը նախօրոք պլանավորված է եղել հատուկ շրջանի պարետ, տխրահռչակ գեներալ Վ.Սաֆոնովի կողմից: Այդ ողբերգության հաջորդ օրն ամբողջ Ստեփանակերտը դուրս էր եկել չարտոնված հանրահավաքի և պահանջում էր մեղավորներին ենթարկել պատասխանատվության: ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի անդամ Վ.Սիդորովը, պատասխանելով լրագրող Ն.Չապլիգինի հարցերին, շեշտեց, որ ողբերգություն է Սումգայիթում տեղի ունեցածը, երկու հանրապետություններից 300 հազար փախստականների առկայությունը, հարյուրավոր զոհերը, ինքնավար մարզը շրջափակման մեջ պահելը, զինծառայողների վրա հարձակվելը և այլ գործողություններ[16]: Նա նաև նշեց, որ ԼՂԻՄ-ի հայ բնակչությունը սոցիալական բողոքների հիմքեր միշտ էլ ունեցել է, և որ Ադրբեջանի նախկին ղեկավարությունը վարել է մեծապետական, ազգայնամոլ քաղաքականություն՝ ձգտելով հասնել Ղարաբաղի հայաթափմանը: Վ.Սիդորովը գտնում էր, որ արցախահայության ժողովրդական շարժման պատճառների և հետևանքների մեջ խորամուխ լինելու փոխարեն Ադրբեջանի ղեկավարությունը սկսել է պիտակավորել այն և փորձում է ճնշել ուժային մեթոդներով[17]:

1989թ. հոկտեմբերի 10-ին, երբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդում կրկին քննարկվում էր Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի ԽՍՀ-ի շրջափակման հարցը, Ն.Ռիժկովը խիստ դատապարտեց շրջափակումը, մինչդեռ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Ա.Լուկյանովը դրանում վտանգավոր ոչինչ չէր տեսնում: Վերջում ընդունվեց մի որոշում, որը հուշում էր, թե շրջափակումը կարելի է շարունակել[18]: Հաջորդ օրը ԼՂԻՄ-ից ընտրված պատգամավորների անունից Զ.Բալայանը Ա.Լուկյանովին հանձնեց կատարվածը դատապարտող հայտարարություն և հեռացավ դահլիճից: Գերագույն խորհրդի այդ որոշումը հարուցեց հայ ժողովրդի բողոքը, ադրբեջանցիների՝ գոհունակությունը:

1989թ. հոկտեմբերի 19-ին ԼՂԻՄ Ազգային խորհուրդը, քննարկելով «Ինքնորոշված ԼՂԻՄ-ը Հայկական ՍՍՀ կազմ մտցնելու՝ մարզի հայ բնակչության արտահայտած կամքի գործնական իրականացման միջոցառումների մասին» հարցը, արձանագրեց, որ սկսած 1988թ. փետրվարից մարզի հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքը կառուցվում է այդ ժամանակաշրջանում մարզխորհրդի ընդունած որոշումներին համապատասխան, և որ դրա առավել բնական լուծումը ինքնորոշված ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու ուղղությամբ կատարվող գործողություններ են: Ելնելով դրանից՝ Ազգային խորհուրդը որոշեց խնդրել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին քննարկել ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկելու հարցը: Միաժամանակ, Ազգային խորհուրդը դատապարտեց հոկտեմբերի 10-ին Ստեփանակերտում տեղի ունեցածը և վերադաս իշխանություններից պահանջեց պատասխանատվության ենթարկել այդ ողբերգության մեղավորներին[19]: Սակայն այդ պահանջը ևս մնաց անհետևանք:

1989թ. հոկտեմբերի 19-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը դարձյալ քննարկեց Լեռնային Ղարաբաղի հարցը և հաջորդ օրը՝ հոկտեմբերի 20-ին ձևակերպեց մի որոշում, որը նոր աչքակապություն էր: Գերագույն խորհրդի նախագահությունը, լսելով և քննարկելով Գ.Տարազևիչի գլխավորած հանձնաժողովի հաղորդումը, գտավ, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծումը հնարավոր է հայկական և ադրբեջանական կողմերի ներկայացուցիչների միջև քաղաքական երկխոսության պայմաններում: Նաև նշվեց, որ Ադրբեջանական ԽՍՀ-ն պետք է ԼՂԻՄ-ին տա լրացուցիչ իրավունքներ, բավարարի արցախահայության մի շարք պահանջները և ապահովի նրանց բնականոն կյանքը: Նախագահության այդ նիստում հայ պատգամավորները կրկին պահանջեցին իրագործել ԼՂԻՄ մարզխորհրդի 1988թ. փետրվարի 20-ի որոշումը: Ասենք, որ Գ. Տարազևիչի գլխավորած հանձնաժողովի ներկայացրած նախագծի ոչ բոլոր կետերն էին գոհացնում հայկական կողմին: Այսպես,

---

[15] *«Սովետական Ղարաբաղ», 14.10.1989:*

[16] *Վալերի Սիդորովը պետք է ասեր, որ սեպտեմբերի 18-ին Աղդամի շրջանի Գիասլը գյուղի մոտ ազերիների կողմից սպանվել էին սպաներ Անդրեյ Տյուգաևը և Սերգեյ Գաբան, որոնք Ստեփանակերտում տեղակայված ՆԳՆ ուժերի հրամանատարության կողմից այնտեղ էին ուղարկվել տեղի ունեցած անօրեն գործողությունները քննելու համար: Արցախցիները ցավակցեցին սպանվածների հարազատներին ("Правда", 27.0.1989, "Аргументы и факты", N39, 1989):*

[17] *"Аргументы и факты", N39, 1989.*

[18] *"Известия", 11.10.1998.*

[19] *«Սովետական Ղարաբաղ», 21.10.1989:*

օրինակ, առաջարկվել էր ԼՂԻՄ-ը թողնել Ադրբեջանի սահմաններում, սակայն՝ կենտրոնի ենթակայության տակ, և Հատուկ կառավարման կոմիտեն վերանվանել Լեռնային Ղարաբաղը կառավարելու արտակարգ հանձնաժողով, որի կազմի մեջ պետք է մտներ նաև Բաքվի ներկայացուցիչը: Ստացվում է, որ Լեռնային Ղարաբաղը պետք է ենթարկվեր ոչ թե Կենտրոնին, այլ գտնվեր մոսկովյան-ադրբեջանական համատեղ ղեկավարության տակ, ինչը, բնականաբար, անընդունելի էր: Այդ նիստում ելույթ ունենալով՝ Զ. Բալայանը ցույց տվեց կազմված նախագծի անհիմն լինելը և պնդեց, որ առանց Արցախի ազատության հաշտության մասին խոսք լինել չի կարող[20]: Մ.Գորբաչովն առաջարկեց մեկ շաբաթվա ընթացքում լրամշակել որոշման նախագիծը: Նոյեմբերի 9-ին կրկին Ստեփանակերտ ժամանելով՝ Գ.Տարազևիչը մարզի ղեկավարությանը ներկայացրեց Գերագույն խորհրդի որոշման նախագիծը: Հաջորդ օրը նա հանդիպեց մարզի կուսակցական-տնտեսական ակտիվի և հասարակայնության ներկայացուցիչների հետ ու լսեց ԼՂԻՄ-ում իրադրության քաղաքական կարգավորման շուրջ մարզի հայ բնակչության կարծիքը: Գ.Տարազևիչը հանդիպում ունեցավ նաև Խոջալուի ադրբեջանցիների հետ:

Գ.Տարազևիչի նոր առաջարկությունը, ըստ որի պահանջվում էր վերականգնել մարզի նախկին վիճակը, խիստ վրդովեցրեց արցախահայությանը: Նրանք Գ.Տարազևիչից պահանջեցին ելույթ ունենալ նոյեմբերի 11-ին արտոնված հանրահավաքում և պարզաբանել Մոսկվայի մոտեցումը Արցախի հիմնախնդրին, սակայն նա հրաժարվեց: Արցախցիներն իրենց պահանջներն ու առաջարկությունները ներկայացրին գրավոր: Հանրահավաքը պահանջեց մարզային կուսակցական և պետական մարմինները վերականգնել նոր կարգավիճակով՝ դրանք մտցնելով Հայկական ԽՍՀ համապատասխան համակարգերի մեջ: Գ.Տարազևիչը Մոսկվա մեկնելուց առաջ լրագրողներին խոստովանեց, որ «իրավիճակը մարզում բարդ է, հակասությունը՝ շատ խոր: Եվ ելք պետք է որոնել՝ հաշվի առնելով մարդկանց այն կարծիքները, որոնք ես լսեցի այստեղ»[21]:

«Սովետական Ղարաբաղ» թերթը նոյեմբերի 11-ին հրապարակեց ԼՂԻՄ-ից Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի

[20] *«Ավանգարդ», 25.10.1989:*
[21] *«Սովետական Ղարաբաղ», 12.11.1989:*

հայ պատգամավորների բաց նամակը Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը, որտեղ ասված է, թե իրենք չեն կարող սեփական ժողովրդին ծառայել մի խորհրդարանում, որը լի է ատելությամբ հայ ժողովրդի նկատմամբ և պատասխանատու է հայության դեմ գործած բոլոր արյունոտ խարդավանքների համար: Արցախցի պատգամավորները հրաժարվեցին իրենց պատգամավորական լիազորություններից: Նույն թերթի նոյեմբերի 16-ի համարում հրապարակվեց մարզի մի շարք ղեկավարների բաց նամակը՝ ուղղված Ադրբեջանի իշխանություններին, որտեղ նշված է, որ Ադրբեջանն ակնհայտորեն որոշել է արագորեն թուլացնել Լեռնային Ղարաբաղը՝ այնտեղ բերելով 15 հազար թուրք-մեսխեթցիների: Նամակի հեղինակները պահանջում էին դադարեցնել այդ կեղտոտ քաղաքականությունը:

Արցախահայությունը դեռ ինչ-որ տեղ կարծում էր, թե վերակառուցման ու ժողովրդավարության պայմաններում հնարավոր է լուծել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը, մանավանդ որ երկրամաս եկած ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովը ուսումնասիրել էր արցախահայության ներկայացրած պահանջը և խոստացել ճշմարտությունը հասցնել վերևներին: Սակայն հետագայում պարզ դարձավ, որ այդ հանձնաժողովի առաջարկությունները ձևափոխվել էին անձամբ Մ.Գորբաչովի կողմից: Երբ քննարկվում էր հարցը, հայ պատգամավորները առաջարկեցին այն հետաձգել, մինչև հնարավոր կլիներ հանգիստ և գործնական պայմաններում փոխհամաձայնեցված որոշում ընդունել: Սակայն այն մերժվեց:

* * *

Կալանքից ազատված «Ղարաբաղ» կոմիտեի անդամները հայրենիք վերադառնալուց հետո նոր մարտավարությամբ ծավալեցին իրենց գործունեությունը: Այդ օրերին ավելի էր բարձրացել նրանց հեղինակությունը: Հանրահավաքներում և հիմնարկ-ձեռնարկություններում նրանք ընդունվում էին որպես «ազգի փրկիչներ» և «հերոսներ»: Ներքևից բարձրացող «թավշյա հեղափոխությունը» օր օրի ընդգրկում էր ավելի ու ավելի լայն զանգվածների: Հայաստանի իշխանությունները, մանավանդ Հայկոմկուսի ղեկավարները, փորձում էին ամրապնդել, իրենց սասանված իշխանությունը: Իսկ դրա համար նախ և առաջ պետք է չեզոքացնեին և հեղինակազրկեին «Ղարաբաղ» կոմիտեին: Իշ-

խանության ձգտող կոմիտեականները, դա լավ հասկանալով, ուժեղացնում էին պայքարը: Այդ նպատակով 1989թ. ամռանը և աշնանը հանրապետությունում, հատկապես Երևանում տեղի ունեցող հանրահավաքներում Ղարաբաղյան հիմնախնդրի հետ միասին առաջ քաշվեց ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանին (և ոչ միայն նրան) զբաղեցրած պաշտոնից ազատելու հարցը: Պարզից էլ պարզ էր, որ Հայկոմկուսը վաղուց էր սպառել իրեն և հեղինակազրկվել: Ասպարեզից նրա հեռանալը դարձել էր օբյեկտիվ անհրաժեշտություն: Աղետի գոտին, տասնյակ հազարավոր փախստականները, ղարաբաղյան հիմնախնդիրը, հանրապետությունում առկա բազմաթիվ չլուծված այլ հարցեր Հայկոմկուսին «դեմ էին արել պատին» և խիստ բարդացրել հանրապետության ընդհանուր վիճակը: Սուրեն Հարությունյանն այդ ամենը Ն.Ռիժկովին ներկայացրել էր դեռևս 1989թ. հունիսի 24-ին ուղղված նամակում[22]:

1989թ. ամռանը և աշնանը ՀՀՇ ակտիվիստները, իրենց պայքարը հիմնականում ուղղելով խորհրդային կարգերի, մանավանդ կոմունիստական բռնատիրության դեմ, պարզապես դարձել էին բացահայտ ընդդիմադիր ուժ, որի հիմնական խնդիրն էր տապալել գոյություն ունեցող կարգը և գրավել իշխանությունը: Դեռևս նույն թվականի հունիսի 23-ին տեղի ունեցած Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 9-րդ նստաշրջանում զեկուցումով հանդես գալով՝ Սուրեն Հարությունյանը, անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հարցին, հայտնեց Հայաստանի իշխանության դիրքորոշումը, ըստ որի մարզի բնակիչներն իրենց ճակատագիրը պետք է որոշեին հանրաքվեի միջոցով: Ս.Հարությունյանը նաև նշել է, որ Հայաստանի իշխանությունները կենտրոնական իշխանություններից պահանջել են Լեռնային Ղարաբաղում վերականգնել կուսակցական և պետական մարմինների իրավունքները[23]: Հիշականներն այդ պահանջները քիչ էին համարում և ավելի էին ուժեղացնում իրենց ճնշումը հանրապետության իշխանությունների վրա:

1989թ. ամռանը, երբ Ղարաբաղում իրավիճակը խիստ բարդացել էր, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի նախագահությունը հանդես եկավ կոչով, որում նշվում էր, որ «սումգայիթյան ընդհարումների դադարեցման միակ ուղին հանդիսանում է ԼՂԻՄ բարդույթի քաղաքական լուծումը ազգերի ինքնորոշման լենինյան սկզբունքի հիման վրա»: Ակադեմիայի նախագահությունը բողոքում էր ԼՂԻՄ-ի շուրջ կենտրոնական լրատվամիջոցների միակողմանի, հակահայկական հրապարակումների դեմ: Կոչն ուղարկվել էր ԽՍՀՄ ղեկավարությանը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդին և միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիային[24]: Բացի այդ, հայ մտավորականները Արցախի հայ ժողովրդի պատմությանը և ազգային-ազատագրական պայքարին նվիրված բազմաթիվ նամակներ, հեռագրեր, արխիվային նյութեր, գրքեր և բրոշյուրներ էին ուղարկում երկրի ամենատարբեր հասցեներով: Նրանց հիմնական նպատակն էր մարդկանց համոզել, որ արցախցիների պայքարն արդարացի է, և պետք է այն պաշտպանել՝ պահանջելով, որ Ադրբեջանը վերջ դնի հայերի նկատմամբ իրականացվող բռնություններին:

Ադրբեջանում հայության նկատմամբ շարունակվում էր վանդալիզմը: Հայկոմկուսի Կենտկոմի բյուրոն 1989թ. օգոստոսի 18-ին ճիշտ գնահատական տվեց Ադրբեջանի անպատասխանատու, ծայրահեղական տարրերին, որոնք ձգտում էին «ամեն գնով ապակայունացնել տարածաշրջանի իրադրությունը, առաջացնել կրքերի նոր բորբոքում»: Հայկոմկուսն այդ ամենը գնահատում էր որպես «Սումգայիթում կատարվածի անմիջական շարունակություն, որպես ցեղասպանության գործողություններ»[25]: Սեպտեմբերի 16-ին տեղի ունեցած Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանը գտավ, որ «հանրապետության առաջ կուտակված խնդիրների լուծումը հապաղում չի հանդուրժում»: Դրանք էին՝ ազգային հարցը, երկրաշարժի հետևանքների վերացումը, փախստականների հետ կապված խնդիրները, տնտեսական շրջափակումը և դրա հետևանքների հաղթահարումը, Արցախի ու Ադրբեջանի հայ բնակչության անվտանգության երաշխիքների ապահովումը և այլն: Նստաշրջանում ելույթ ունենալով՝ Ս.Հարությունյանը նշեց, որ արտակարգ պայմաններում ստեղծված ԼՂ Ազգային խորհուրդը ձգտում է «համակողմանիորեն նպաստել իրավիճակի կայունացմանը և խորհրդային իշխանության մարզային մարմինների վերականգնմանը»[26]: Իսկ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Զորի Բալայանը իր

[22] ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 691, թ. 8:
[23] «Սովետական Հայաստան», 24.06.1989:

[24] Նույն տեղում, 08.08.1989:
[25] Նույն տեղում, 19.08.1989:
[26] Նույն տեղում, 17.09.1989:

ելույթում շեշտեց, որ «Սումգայիթով և շրջափակմամբ ադրբեջանական ղեկավարությունը ստորագրել է իր դատավճիռը»[27]:

Հայաստանում տեղի ունեցող հանրահավաքներում քննարկվող հարցերի շարքում գլխավորը մնում էր Արցախ-Ղարաբաղի հարցը: Սեպտեմբերի 11-ին Երևանում տեղի ունեցած հանրահավաքում շեշտվեց, որ Արցախում իրավիճակի սրմանը նպաստում է Ա.Վոլսկու գլխավորած Հատուկ կառավարման կոմիտեն: Հիշականները ողջունեցին Ղարաբաղում Ազգային խորհրդի ստեղծումը և պահանջեցին. 1. Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության և հանրապետության կառավարության հրաժարականը, 2. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանի հրավիրում, 3. Արցախի Ազգային խորհրդի ճանաչում, 4. շրջափակման վերացում և Արցախում հայերի անվտանգության ապահովում, 5. լեզվի մասին օրենքի մշակում, 6. աղետի գոտու աշխատանքների ակտիվացում, 7. փախստականների համար բնակարանային շինարարության արագացում[28]:

Աշխարհում քիչ մարդիկ չկային, որոնք ջերմորեն պաշտպանում էին արցախահայության հերոսական պայքարը: Լվովից ավագ սպա Սերգեյ Կովները Արցախ ուղարկած իր նամակում գրում է, թե ինքը, 1988թ. հոկտեմբերին լինելով Լեռնային Ղարաբաղում, վերադառնալուց հետո ուսումնասիրել է Լվովում գտնվող հայկական համայնքի պատմությունը, ծանոթացել հայ ժողովրդի ողբերգական պատմությանը, որն ակնածանք է ծնել իր մոտ: «Իմ ծառայության ամիսներին,– շարունակում է նա,– մոտիկից շփվել, ծանոթացել եմ մարդկանց հետ, ինձ գրավել են նրանց անսահման պարզությունը, բարյացակամությունը, հպարտությունը, իրենց իրավունքների համար պայքարելու կամքը, աղետի, դժբախտության մեջ իրար սատար կանգնելու պատրաստակամությունը: Ես իմ աչքով տեսա, սրտով ընկալեցի ղարաբաղյան հյուրընկալությունը»: Այնուհետև նշում է, որ արցախցիներին հասկանալ է հարկավոր: Մինչդեռ «վերևներում» չեն հասկանում կամ չեն ուզում հասկանալ: «Ես,– եզրափակում է նամակագիրը,– հպարտ ու երջանիկ եմ, որ ճակատագիրը ինձ հանդիպեցրել է Արցախին, որին սիրահարվել եմ առմիշտ ու անվերադարձ: Խաղաղություն եմ ցանկանում այս երկրին, արդարության հաղթանակ Արցախին և նրա հրաշալի ժողովրդին[29]»: Նման օրինակներ կարելի է շատ բերել: Սակայն, ինչ օգուտ, որ Ադրբեջանը հայությանը խեղդելու իր ճիգերն էր գործադրում: Հայկոմկուսի Կենտկոմի քարտուղար Օ.Լոբովը հոկտեմբերի 19-ին ԽՄԿԿ Կենտկոմ ուղարկած բողոք-նամակում հաղորդել է, որ 1989թ. հուլիս-օգոստոսին Ադրբեջանի երկաթուղային գծերով գնացքների շարժման դադարեցման և այլ հաղորդակցության ուղիների խանգարման պատճառով Հայկական ԽՍՀ-ում ստեղծվել է ծանր վիճակ: Այդ պատճառով էլ բազմաթիվ ձեռնարկություններ չէին կարողացել կատարել իրենց արտադրական պլանները: Փաստորեն, չէին գործում Նորաշեն-Եվլախ և Աղստաֆա-Իջևան երկաթուղիները[30]:

Հանրապետության վիճակի հետզհետե ծանրացումը ավելի էր սրում հակասությունները իշխանությունների և բնակչության միջև: Հանրահավաքներում կոչեր էին հնչում այն մասին, որ ժողովուրդն ինքը պետք է որոշի իր խնդիրները և անկախության պայմաններում «մշակի իր ազգային ծրագիրը»[31]: Հանրապետության ներքին գործերի նախարար Հուսիկ Հարությունյանի ստորագրությամբ նոյեմբերի 9-ին Հայկոմկուսի Կենտկոմ ուղարկած հաղորդագրության մեջ նշված է, որ նոյեմբերի 7-ին Թատերական հրապարակից մինչև Լենինի հրապարակ տեղի է ունեցել չարտոնված շքերթ: Նրանք վառել էին թուրքական դրոշը և վանկարկել՝ «Անկախ Հայաստան» և «Բոլշևիկնե՛ր, հեռացե՛ք»: Այդ նույն օրը Մոսկովյան և Բաղրամյան փողոցների խաչմերուկում ոստիկանության և ցուցարարների միջև տեղի էր ունեցել ընդհարում, որի հետևանքով 11 հոգի ստացել էին մարմնական վնասվածքներ[32]:

Ահա այդպիսի իրադարձություններում 1989թ. նոյեմբերի 4-ին իր աշխատանքները սկսեց Հայոց համազգային շարժման առաջին համագումարը, որի աշխատանքներին մասնակցեցին նաև Մոսկվայի, Լենինգրադի, միութենական հանրապետությունների ժողովրդական ճակատների, Խորհրդային Միության հայաշատ վայրերի մշակութային և բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչներ, սփյուռքահայ համայնքների

[27] *«Գրական թերթ», 22.09.1989:*
[28] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 39ա, թ. 132-133:*

[29] *«Սովետական Ղարաբաղ», 10.10.1989:*
[30] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 33, թ. 119-120:*
[31] *Նույն տեղում, գ. 39 ա, թ. 161:*
[32] *Նույն տեղում, գ. 39, թ. 58:*

պատվիրակներ, Հայաստանի, Խորհրդային Միության և արտասահմանյան մամուլի ներկայացուցիչներ: Համագումարում ՀՀՇ-ի խնդիրների մասին զեկուցումով հանդես եկավ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամ Լ.Տեր-Պետրոսյանը: Լեռնային Ղարաբաղից համագումարի աշխատանքներին մասնակցեցին 12 հոգի: Նրանց անունից ելույթ ունեցավ «Միացում» կազմակերպության ներկայացուցիչ Սերժ Սարգսյանը, որը ներկայացրեց արցախահայության խնդիրներն ու պահանջները[33]: Համագումարն ընդունեց ՀՀՇ ծրագիրն ու կանոնադրությունը և ընտրեց ՀՀՇ վարչություն, որի մեջ Արցախից մտավ Ռոբերտ Քոչարյանը:

ՀՀՇ-ի համագումարի ընդունած որոշման մեջ Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ ասված է. «Հայ ժողովուրդը, ներառյալ բռնի և ապօրինի անջատված Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը, բոլոր ժողովրդական, օրինական և խաղաղ միջոցներով արդեն արտահայտել է միավորվելու իր անսասան կամքը», որը «դրսևորվեց հանրաքվեների և հանրագրերի միջոցով, Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի ղեկավար մարմինների որոշումներով, ինչպես նաև կուսակցական և հասարակական կազմակերպությունների որոշումներով»: Համագումարն արձանագրեց, որ արդեն երկու տարի է, ինչ Լեռնային Ղարաբաղը խզել է իր քաղաքական, տնտեսական և սոցիալական բոլոր կապերը Ադրբեջանական ԽՍՀ-ի հետ, այսինքն՝ հասել է փաստական անկախության: Այդ կապակցությամբ համագումարը դիմեց միջազգային ընկերակցություններին և ՄԱԿ-ին՝ առաջարկելով Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների համագումարը և նրա ստեղծած Ազգային խորհուրդը ճանաչել որպես Լեռնային Ղարաբաղի միակ օրինական իշխանություն: Որոշման մեջ նշված է, որ «Հայաստանի Սովետական Հանրապետությունը չի կարող հրաժարվել բռնությամբ անջատված և իր իսկ տարածքում բանտարկված իր հայրենակիցների ինքնորոշմանը սատար կանգնելուց: Մարզի անկախության դեմ ոտնձգություններ լինելու դեպքում հայ ժողովուրդը հնարավոր բոլոր միջոցներով սատար կկանգնի Արցախի հայության ազգային-ազատագրական պայքարին»: Որոշման 6-րդ կետում նշված է, որ «ԼՂԻՄ և Հայկական ՍՍՀ-ի պատգամավորները չեն ստորագրի որևէ փաստաթուղթ, որը կարող է ուղղված լինել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման անկապտելի իրավունքի դեմ»: Առաջարկվեց ստեղծել Հայկական ԽՍՀ և ԼՂԻՄ միացյալ հանձնաժողով, որի խնդիրը պետք է լիներ Լեռնային Ղարաբաղը ՀԽՍՀ-ի հետ վերամիավորելուն կապված բոլոր քաղաքական, իրավական, տնտեսական և սոցիալական հարցերի գործնական լուծումը: ՀԽՍՀ Գերագույն խորհրդից և կառավարությունից պահանջվեց Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների համագումարը և Ազգային խորհուրդը պաշտոնապես ճանաչել որպես Լեռնային Ղարաբաղի միակ օրինական իշխանություն և նրա հետ հաստատել պաշտոնական հարաբերություններ: Հանրապետության կուսակցական և պետական մարմիններից նաև պահանջվեց կարճ ժամկետում, ոչ ֆորմալ կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, մշակել Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու քաղաքականության պետական ծրագիր: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին և կառավարությանն առաջարկվեց Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների համագումարի և Ազգային խորհրդի պատգամավորների հետ բանակցությունների մեջ մտնել պայմանագիր կնքելու համար, որն իրավաբանորեն կկարգավորեր կենսական բոլոր բնագավառներում Հայաստանի երկու բաժանված մասերի փոխհարաբերությունները[34]: Այսպիսով՝ ՀՀՇ-ն Ղարաբաղի հիմնահարցի վերաբերյալ իր սկզբունքները ամրագրեց համագումարի փաստաթղթերում:

Արցախի հիմնախնդրի լուծման ուղիների հարցը 1989թ. աշնանը դարձել էր վիճաբանության առարկա: Հիշականները, ինչպես նշվել է, գտնում էին, որ Լեռնային Ղարաբաղը, փաստորեն, հասել է անկախության: Սակայն նրանք չէին ցանկանում Արցախը հայտարարել Հայաստանի անբաժան մաս, իբր դա կլիներ «միջազգային իրավունքի կոպիտ խախտում»: Լ.Տեր-Պետրոսյանը, հանդես գալով «Արցախյան խնդրի լուծման ուղին» հոդվածով, բացահայտեց ՀՀՇ-ի կարծիքը: Նա նշեց, թե իզուր են ոմանք անհանգստանում և պայքարի սահմանադրական միջոցները սպառված համարում: Նա ակնարկում էր, թե Մոսկվան ստիպված փոքրիկ զիջումներ է կատարում Արցախի հիմնախնդիրը լուծելու համար: Որպես օրինակ բերում է մինչ այդ ընդունված մի քանի որոշումներ և պնդում, որ Մոսկվան խոստովանել է «Արցախի հարցի առկայությունը և նրա լուծման անխու-

[33] *«Սովետական Ղարաբաղ», 08.11.1989:*

[34] *«Միացում» N 5, 1989:*

սափելիության փաստը»: Ապա եզրակացնում է, թե այդ ամենը հնարավոր դարձավ հայ ժողովրդի «համառ պայքարի և սահմանադրական շրջանակներում ձեռնարկված հատուկ և հետևողական քաղաքական գործողությունների շնորհիվ»: Նա շարունակում է. «Լեռնային Ղարաբաղը հայ ժողովրդի համառ պայքարի ու զոհանքների գնով փաստորեն հասել է անկախության, ու աստիճանաբար ամրապնդվում են Հայաստանի և Արցախի տնտեսական-մշակութային կապերը»: ՀՀՇ-ն, չնայած պաշտպանում էր արցախահայության ինքնորոշման իրավունքը, սակայն գտնում էր, որ ներկա «քաղաքական հանգամանքներում միանգամայն խոցելի է» Արցախը հայտարարել Հայաստանի անբաժան մասը, քանի որ «դա արդեն կարող է ներկայացվել իբրև միջազգային իրավունքի կոպիտ խախտում և հաստատել Հայաստանի տարածքային նկրտումները Ադրբեջանի նկատմամբ»: ՀՀՇ-ի ղեկավարը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման ուղի էր տեսնում «Ինքնորոշված, անկախ Արցախի Ինքնավար մարզը և Հայաստանի Հանրապետությունը, որպես խորհրդային պետական կառուցվածքի երկու ինքնուրույն կազմավորումներ, պայմանագրեր են կնքում իրար հետ և այդ երկու կազմավորումները հայտարարում մեկ միացյալ հանրապետություն»: Նման լուծումը, – գտնում էր նա, – անխոցելի է միջազգային իրավունքի տեսակետից: Արցախի և Հայաստանի իշխանությունների այդ համատեղ հայտարարությանը պետք է հետևեին վերամիավորումն իրագործելու ուղղությամբ կատարվող գործնական քայլեր, որոնցից կարևորագույնն է Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրությունը Արցախի ընտրական տեղամասերից[35]:

Լեռնային Ղարաբաղի հարցը նախատեսված էր քննարկել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989թ. նոյեմբերի 28-ի նիստում: Նոյեմբերի 27-ի առավոտվա նիստի ժամանակ Մ.Գորբաչովին հանձնվեց Հայաստանից և Լեռնային Ղարաբաղից հայ պատգամավորների դիմումը, որտեղ ասված է, որ Լեռնային Ղարաբաղի ու նրա շուրջը իրավիճակն ավելի է բարդացել և Հայաստանի ու Ադրբեջանի ժողովուրդներին հասցրել է ազգամիջյան պատերազմի սահմանին: Ապա նշված է, որ կես տարի է անցել այն ժամանակներից, երբ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարը հանձնաժողով է ուղարկել Լեռնային Ղարաբաղ՝ հարցը տեղում ուսումնասիրելու համար: Սակայն մինչև հիմա կոնկրետ ոչինչ չի արվել, և արտաքին ճնշման հետևանքով հանձնաժողովի եզրակացությունները ենթարկվել են հայ ժողովրդի համար անընդունելի փոփոխությունների[36]: Սակայն Մ. Գորբաչովն անուշադրության մատնեց հայ պատգամավորների այդ բողոքը: Նոյեմբերի 28-ին տեղի ունեցած Գերագույն խորհրդի նիստում հայ պատգամավորներ Սուրեն Հարությունյանը, Հրանտ Ոսկանյանը, Գալուստ Գալոյանը, Գոհար Ենոքյանը, Սերո Խանզադյանը և Սերգեյ Համբարձումյանը ելույթ ունենալով առաջարկեցին Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման փոխզիջումային տարբերակ, որը մերժվեց: Դրանից հետո, արտահայտելով որոշման նախագծի հետ իրենց անհամաձայնությունը, հայ պատգամավորները հեռացան նիստերի դահլիճից:

Համաձայն ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989թ. նոյեմբերի 28-ի՝ «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» որոշման՝ ԼՂԻՄ-ը թողնվում էր Ադրբեջանական ԽՍՀ կազմում, իսկ Հատուկ կառավարման կոմիտեն վերացվում էր: Փոխարենը ստեղծվում էր Ադրբեջանի հանրապետական կոմիտե: Վերականգնվում էր ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման խորհրդի և նրա գործադիր կոմիտեի գործունեությունը, ապահովվում էր ԼՂԻՄ-ի իրական ինքնավարության կարգավիճակի բարձրացումը և բոլոր ծագող խնդիրների սահմանադրական լուծումը: ԼՂԻՄ-ում իրադրության կայունացման միջոցառումները վերահսկելու և դրանց իրականացմանն օգնելու համար ստեղծվում էր միութենական դիտորդ վերահսկիչ հանձնաժողով՝ այն ենթարկելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: Արգելվում էր խախտել ժողովրդագրական իրավիճակը, գաղթականների հարցը լուծելու համար ստեղծվում էր հատուկ հանձնաժողով, մարզում թողնվում էր ներքին զորքերի համապատասխան գորաբաժին և այլն[37]:

Հայաստանում և Արցախում մեծ գայրույթով ընդունեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի այդ որոշումը: Նոյեմբերի 29-ին Ստեփանակերտում տեղի ունեցած հանրահավաքում այն որակվեց իբրև հայ ժողովրդի դեմ ուղղված սադրանք և հայ-ադրբեջանական հարաբերությունները սրելու նոր քայլ: Արցախցիները անվստահություն հայտնեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդին, նրա

[35] *«Ավանգարդ», 19.11.1989:*

[36] *«Սովետական Հայաստան», 28.11.1989:*

[37] *"Правда", 29.11.1989.*

նախագահությանը և նախագահին: Այդ որոշումը դատապարտեցին նաև Հայաստանի հարյուրավոր հիմնարկ-ձեռնարկություններ, հասարակական և քաղաքական ուժեր:

Ստեղծված նման պայմաններում Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը և ՀՀՇ-ն պահանջեցին հրավիրել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ նիստ ու վճռել Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Ասենք, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը չնայած Ադրբեջանի իշխանություններն ընդունել էին գոհունակությամբ, սակայն Ազգային ճակատը դժգոհ էր և կոչ էր անում չընդհատել նոյեմբերի 27-ից այնտեղ սկսված ընդհանուր գործադուլը, պահանջում էր հրավիրել Ադրբեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան և քննարկել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի վերոհիշյալ որոշումը[38]:

1989 թ. նոյեմբերի 30-ին Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի անդամների մասնակցությամբ Երևանի Ստեփան Շահումյանի անվան մշակույթի պալատում իր աշխատանքները սկսեց Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանը: Այդ օրը պալատի շուրջ հավաքվել էին մի քանի հարյուր հազար մարդ, որոնք ջերմ ողջույններով դիմավորեցին Ղարաբաղի Ազգային խորհրդի անդամներին: Ոգևորված և անհամբեր ժողովուրդը սպասում էր նստաշրջանի որոշմանը: Նստաշրջանն ընթացավ բուռն վիճաբանություններով և շիկացած մթնոլորտում[39]: Ի վերջո, դեկտեմբերի 1-ի երեկոյան ընդունվեց «Հայկական ՍՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» և «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» ՍՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թ.՝ նոյեմբերի 28-ի որոշման մասին» որոշումները[40]: Երկրորդ որոշումով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989թ. նոյեմբերի 28-ի որոշումը բնորոշվում էր որպես ԼՂԻՄ-ի նկատմամբ «Բռնացման նոր ակտ», «Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշման իրավունքի ժխտում», «ամբողջ հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքի անտեսում... և կոպտորեն ոտնահարում»: Ելնելով դրանից, նստաշրջանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նոյեմբերի 28-ի որոշումը հայտարարեց «անվավեր Հայկական ՍՍՀ-ի և

[38] *"Известия", 01.12.1989.*
[39] *Այդ մասին մանրամասն տես* Ուլուբաբյան Բ., *նշվ. աշխ., էջ 116-123:*
[40] *«Սովետական Հայաստան», 03.12.1989:*

Լեռնային Ղարաբաղի համար և ոչ մի իրավական հետևանքներ չստեղծող»: Առաջին որոշմամբ՝ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը ճանաչում է ԼՂԻՄ-ի ինքնորոշման փաստը, նրա լիազոր ներկայացուցիչների համագումարը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը որպես մարզում գործող միակ օրինական իշխանություն: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը հռչակում են «Հայկական ՍՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը»: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը պարտավորվում են ներկայացնել Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության ազգային շահերը: Պահանջվեց իրագործել ընդունված որոշումից բխող անհրաժեշտ միջոցառումներ՝ «իրականացնելու համար Հայկական ՍՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի քաղաքական, տնտեսական և մշակութային կառուցվածքների իրավական միաձուլումը միասնական պետական-քաղաքական համակարգում»[41]:

Ինչպես սպասվում էր, Ադրբեջանում կատաղությամբ են ընդունում Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի որոշումները: Այնտեղ շտապ ստեղծվեց հանրապետական կազմկոմիտե՝ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի երկրորդ քարտուղար Վիկտոր Պոլյանիչկոյի գլխավորությամբ: Ամբողջ հանրապետությունով մեկ բացահայտ որսում էին հայերին և ենթարկում բռնությունների: Ադրբեջանի լրատվամիջոցները հիստերիայի մեջ էին: Դեկտեմբերի 4-ին լրանում էր Ադրբեջանի ժողովրդական ճակատի ստեղծման մեկ տարին. նրա ներկայացուցիչները իրենց մարտակոչերով ավելի էին շիկացնում ազգամիջյան հարաբերությունները: Ադրբեջանի պետական և հասարակական կազմակերպությունների մի խումբ ներկայացուցիչներ փորձեցին մտնել Լեռնային Ղարաբաղ, սակայն արցախցիները փակեցին նրանց ճանապարհը: Մոսկվայի վրա ճնշում գործադրելու նպատակով Ադրբեջանի Ազգային ճակատի ուժերը դեկտեմբերի 4-ին փորձեցին հարձակվել խորհրդահրանական սահմանի վրա: Սահմանային գոտու ավերումը կրկնվեց դեկտեմբերի 12-13-ին և 30-

[41] *1989թ. դեկտեմբերի 1-ի Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման վերաբերյալ որոշումն ընդունվել է Լ. Տեր-Պետրոսյանի նախաձեռնությամբ: Սակայն հետո թե՛ նա և թե՛ հիշյալ որոշ պարագլուխներ հետ կանգնեցին այն իրագործելուց:*

31-ին: Հիմնահատակ ավերվեցին 120 կմ երկարությամբ լարափակոցներ և բազմաթիվ կառույցներ: Հետաքրքիրն այն է, որ Մոսկվան լռությամբ տարավ ազերիների այդ վայրագությունները[42]:

* * *

1990 թվականը արցախահայության համար սկսվեց էլ ավելի ծանր պայմաններում: Հունվարի 2-ին Աղդամից Շուշի էր գնում հինգ ավտոբուսից, մեկ բեռնատարից և մեկ զրահամեքենայից կազմված շարասյուն, որն իբր Կրասնոյարսկի միլիցիայի դպրոցի սաների ուղեկցությամբ 150 «խաղաղ» ադրբեջանցիներ էր փոխադրում: Դա, անկասկած, հոկտեմբերի 10-ի սադրանքի կրկնությունն էր, երբ Սվերդլովսկի հրշեջ-տեխնիկական ուսումնարանի սաները Ստեփանակերտում արյունոտ

[42] *Նպատակահարմար է այստեղ մտցնել հետևյալ պարզաբանումը: 1989 թ. դեկտեմբերի 8-ին Հայկական ԽՍՀ-ից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորները հանդես եկան հայտարարությամբ, դեկտեմբերի 12-ին համատեղ հայտարարությամբ հանդես եկան Հայկական ԽՍՀ-ից և ԼՂԻՄ-ից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորները: Հարցը հետևյալն էր. ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի ազգային քաղաքականության և ազգամիջյան հարաբերությունների հանձնաժողովին հանձնարարել էր քննության առնել ԼՂԻՄ-ում տիրող վիճակը և արդյունքների մասին զեկուցել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: Սակայն նստաշրջանի աշխատանքի վերջին օրը՝ 1989թ. նոյեմբերի 28-ին, Գերագույն խորհրդի նիստում հանձնաժողովի եզրակացության հրապարակման և քննարկման փոխարեն ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության անունից ներկայացվեց որոշման նախագիծ, որը նախագահությունում չէր քննարկվել, և Գերագույն խորհրդի անդամները դրան նախապես չէին ծանոթացել: Փաստորեն, Գերագույն խորհրդի նախագահությունը լիովին անտեսել էր Ղարաբաղյան հիմնախնդիրն ուսումնասիրած հանձնաժողովի կարծիքը և պարտադրել իր նախագիծն ու քննարկման իր սխեման: Ահա այս վիճակում, ի նշան բողոքի, Հայկական ԽՍՀ և ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորները հարկադրված հեռացել էին դահլիճից: Ակնհայտ է, որ Գերագույն խորհրդի ընդունած որոշումը չվերացրեց շրջափակումը և չդադարեցրեց ազերիների կողմից վանդալիզմի գործողությունները: Հայ պատգամավորները, 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշումը գնահատեցին որպես Կենտրոնի կապիտուլացում Ադրբեջանի ժողովրդական ճակատի ծայրահեղականների առջև: Հայ պատգամավորները դիմելով ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների երկրորդ համագումարին, հավատացած էին, թե այն ազդու միջոցներ կձեռնարկի՝ այլևս թույլ չտալու խորհրդարանական ընթացակարգի խախտումներ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նիստերում:*

ոճիր կատարեցին: Շարասյունը Կարկառի ափով ուղիղ Շուշի գնալու փոխարեն դիտմամբ մտավ Ստեփանակերտ՝ առաջ բերելով քաղաքի բնակչության զայրույթը: Քաղաքացիներից ոմանք քարկոծեցին շարասյունը: Շարասյունից զինվորները կրակ բացեցին, որի հետևանքով զոհվեցին քանդակագործ Արմեն Հակոբյանը և Ռոզա Բալայանը: Այս անամոթ ոճիրը պաշտպանության տակ վերցրեցին կենտրոնական լրատվամիջոցները, մանավանդ «Իզվեստիան»[43]: Այդ առթիվ Լեռնային Ղարաբաղից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորները խիստ բողոք ներկայացրին Մ.Գորբաչովին՝ մերկացնելով կենտրոնական իշխանությունների հակահայկական այդ նոր սադրանքը[44]: Բացի այդ, հունվարի սկզբից Կրկժանում, Խոջալուում, Մալիբեկլուում, Ջանհասանում և մյուս ադրբեջանաբնակ վայրերում բույն դրած ադրբեջանցիների ավազակախմբերն ավելի էին ծավալում իրենց հակահայ գործողությունները: Նրանք փակում էին բնակավայրերի մոտով դեպի հայկական գյուղերը տանող ճանապարհները, գնդակոծում հայկական գյուղերը, կոլտնտեսային ֆերմաներից հափշտակում մեծ թվով անասուններ, թալանում ճանապարհներով անցնող ավտոմեքենաները, հափշտակում մարդկանց և այլն: Եվ այդ ամենի դեմ բոլոր բողոքները մնում էին անհետևանք:

1990 թ. հունվարի 8-ին Մոսկվայից Ստեփանակերտ վերադարձավ Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Արկադի Վոլսկին: Նա մարզի ակտիվին և իր ղեկավարած արդեն հոգեվարքի մեջ գտնվող կոմիտեի անդամներին հայտնեց, որ հունվարի 9-ին Ստեփանակերտ կժամանեն ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Ա.Գիրենկոն, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի նախագահ Ռ.Նիշանովը և Վ.Պոլյանիչկոն: ԼՂ Ազգային խորհուրդը և «Միացումը» որոշեցին նրանց թույլ չտալ մտնել Ստեփանակերտ: Այդ առթիվ հատուկ հանձնարարություն տրվեց բանվորական խմբի ղեկավար Ռաֆայել Գաբրիելյանին[45]: Անկոչ «հյուրերը» մնացին Ստեփանակերտի օդանավակայանում, չնայած այդ օրը քաղաք տանող ճանապարհը բռնված էր զորքերով, որոնք անընդհատ կրակում էին աջ ու ձախ: Այդ կրակոցներից ավտոբազայի մոտ վիրավորվեցին բանվորներ Իշխան Խաչիկյանը, Լևոն Մուքանյանն ու Սամվել Միրզոյանը: Ստեփա-

[43] *"Известия", 04.01.1990: «Սովետական Ղարաբաղ», 04.01.1990:*
[44] *«Սովետական Ղարաբաղ», 04.01.1990:*
[45] *Այդ մասին տե՛ս Ռ.Գաբրիելյանի վերոհիշյալ հուշերը:*

նակերտի ակտիվը, հավաքվելով քաղկոմի առաջին քարտուղար Վ.Աբաջանյանի մոտ, որոշեց «հյուրերին» ետ դարձնել, եթե նրանց նպատակն է արցախահայության վզին փաթաթել նոյեմբերի 28-ի որոշումը և դեկտեմբերի 4-ին Բաքվում ստեղծված Վ.Պոլյանիչկոյի գլխավորած կազմկոմիտեն[46]: Այդ ամենի մասին Վ.Աբաջանյանը տեղյակ է պահում օդանավակայանում գտնվող Ա.Գիրենկոյին և Ռ.Նիշանովին: Նրանք Վ.Պոլյանիչկոյի խմբին ռազմական ուղղաթիռով ուղարկում են Շուշի, իսկ իրենք վերադառնում Բաքու և այստեղ հայտարարում, թե հակամարտող կողմերը պետք է լեզու գտնեն և լուծեն իրենց բարձրացրած հարցերը: Այդ նույն օրը Ստեփանակերտում լուր է ստացվում, որ Շահումյանի շրջանի 19 ղեկավար աշխատողներ, կուսշրջկոմի առաջին քարտուղար Վլադիմիր Աղաջանյանի գլխավորությամբ, հունվարի 9-ին գնացել էին Գետաշեն՝ ազերիների կողմից սպանված երկու գետաշենցու թաղման արարողությանը մասնակցելու համար: Վերադարձին ազերի ավազակները նրանց պատանդ էին վերցրել և տարել Կիրովաբադ: Հաջորդ օրը Լեռնային Ղարաբաղի մարզային և շրջանային ղեկավարության անունից բողոք է ներկայացվում դեռևս Բաքվում գտնվող Ա.Գիրենկոյին և խնդրվում միջոցներ ձեռնարկել շահումյանցիներին ազատելու համար: Այդ խնդրանքը կատարվում է մասամբ:

1990թ. հունվարի 9-ին իր աշխատանքները վերսկսեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը, որին մասնակցեցին ԼՂ Ազգային խորհրդի անդամները: Երբ հաստատվում էր հանրապետության 1990թ. բյուջեն, նստաշրջանը, հիմք ընդունելով ՀԽՍՀ ԼՂԻՄ միավորման մասին 1989թ. դեկտեմբերի 1-ի որոշումը, միացրեց ՀԽՍՀ և ԼՂԻՄ բյուջեները: Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորները, անկասկած, գիտակցում էին իրենց այդ քայլի կարևորությունը: Դա «խիստ կարևոր ներդրում էր Արցախյան պահանջատիրության շրջագծի մեջ», և այդ որոշման հետևողական գործողությունից էր կախված Խորհրդային Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի իրական միացման իրագործումը[47]:

Մոսկվան քաջատեղյակ էր, թե ինչ է կատարվում Հայաստանում, Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղում: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1990թ. հունվարի 10-ին բեկանեց Հայկական ԽՍՀ և ԼՂ Ազգային խորհրդի դեկտեմբերի 1-ի, ինչպես և 1990թ. հունվարի 9-ի որոշումները, Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի դեկտեմբերի 4-ի որոշման որոշ կետեր, որոնք անմիջապես առնչվում էին Լեռնային Ղարաբաղին: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի այդ որոշման մեջ նշված է, որ Ադրբեջանը չի կատարել նոյեմբերի 28-ի որոշումը, չի վերականգնել մարզային ղեկավար մարմինները, չի մշակել մարզի կարգավիճակը բարելավելու միջոցներ, չի ամրապնդել մարզի իրավունքները[48]: Դրա փոխարեն Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունել է որոշում, որով համարյա չեղյալ և անընդունելի է համարել նոյեմբերի 28-ի որոշման կետերի մեծամասնությունը:

Ադրբեջանական ազգայնամոլ տարրերը 1990 թ-ը սկսեցին նոր բարբարոսություններով: Հունվարի 13-ից մինչև 20-ը՝ Բաքվում տեղի ունեցած վանդալիզմի ժամանակ, նրանք մեկ անգամ ևս աշխարհին ցույց տվեցին իրենց իսկական՝ վայրենի դեմքը[49]: Դեռևս Բաքվում հայերի և մյուս ազգությունների ներկայացուցիչների ջարդերը սկսվելուց չորս օր առաջ Հայաստանի Գերագույն խորհուրդը դիմել էր Մ.Գորբաչովին և նրան տեղյակ պահել, որ Բաքվում, Շահումյանի և Խանլարի շրջաններում, Գետաշեն, Կամո, Ազատ գյուղերում, ինչպես և այլ տեղերում ստեղծվել է արտակարգ իրադրություն: Տեղի են ունենում սպանություններ, հրկիզումներ, շրջափակում են ճանապարհները, կամուրջները, առևանգում պատանդներ: Հայաստանի Գերագույն խորհուրդը Մ.Գորբաչովից խնդրում էր «անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու հայ բնակչության անվտանգությունը և դադարեցնելու համար բարբարոսական գործողությունները, որոնք կարող են հանգեցնել անուղղելի կործանարար հետևանքների ամբողջ տարածաշրջանում»[50]: 1990թ. հունվարյան այդ օրերին ազերիների զինված ջոկատների թիվը հասնում էր մի քանի հազարի: Մամուլը հաղորդում էր, որ հունվարի 14-ին Գետաշեն էին թռել ռազմական ուղղաթիռներ, որոնք Հաջիքենդի մոտ կարկտահար հրանոթներից գնդակոծվել են ազերիների կողմից: Նրանք ճանապարհներին կառուցել էին արգելապատ-

[46] *«Սովետական Ղարաբաղ», 11.01.1990:*
[47] *«Դրոշակ», N21, 1990, էջ 5:*

[48] *"Правда", 11.01.1990.*
[49] *1990թ. հունվարին Բաքվում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների մասին մանրամասն տես Սոսեսովա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը, Եր., 1992:*
[50] *«Իրավունք», N1, 2000:*

նեշներ և կուտակել հարյուրավոր ավտոմեքենաներ: Հավաքված ամբոխները խոչընդոտում էին ներքին ուժերի զորամասերի անցմանը: Ադրբեջանում օդաչուներին սպառնում էին հաշվեհարդար տեսնել նրանց ընտանիքների հետ: Անհայտ էր մնում հարյուրավոր հայ պատանդների ճակատագիրը: Այդ օրերին Երևանում տեղի ունեցած հանրահավաքը կոչ էր անում կազմակերպել կամավորական ջոկատներ, օգնության գնալ շահումյանցիներին և գետաշենցիներին[51]: Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահությունը, հանդես գալով հայտարարությամբ, նշում է, որ Բաքվում կազմակերպվում է նոր «սումգայիթ»: Խորհրդային և համաշխարհային հասարակայնությունից պահանջվում էր վճռաբար դատապարտել ադրբեջանցիների հերթական միջնադարյան գազանությունները, որոնք կրկին հրեշավոր ոճիրներ են գործում ընդդեմ մարդկության: Ապա տեղյակ է պահվում, որ արցախահայությունը միշտ էլ պատվով և արժանապատվությամբ է դիմագրավել հայրենի հողը պղծելու ամեն տեսակ փորձերին[52]:

Բաքվում տեղի ունեցող վայրագությունների առթիվ Մ.Գորբաչովին ուղղված նամակում իրենց ցասումն արտահայտեցին ԽՍՀՄ ԳԽ ժողովրդական պատգամավորներ Զորի Բալայանը, Վահան Գաբրիելյանը, Վաչագան Գրիգորյանը, Բորիս Դադամյանը և Հենրիխ Պողոսյանը, որտեղ ասված է, որ հունվարի 13-ին՝ ժամը 20-ն անց 30 րոպեին, Ադրբեջանի ազգային ճակատի ներկայացուցիչները և Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ա.Վեզիրովը, հանդես գալով հեռուստատեսությամբ, ադրբեջանական ժողովրդին կոչ էին անում հարձակում գործել Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի հայաբնակ բնակավայրերի վրա: Վեզիրովը նույնիսկ կոչ էր անում հակահայկական գործողություններն ավարտել մինչև հունվարի 16-ը[53]: Արդեն հունվարի 18-ի տվյալներով հայտնի էին 44 զոհ, որից 34-ը հայեր էին[54]:

Բաքու ժամանած ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Միության խորհրդի նախագահ Ե.Պրիմակովը, ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ, ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Ն.Սլյունկովը և ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Ի.Սիլաևը նույնիսկ չփորձեցին իմանալ, թե ինչու էր Հայաստանի Գերագույն խորհուրդը նման ահազանգ հնչեցրել: Բաքվի ջարդերի մասին առաջին տեղեկությունները կենտրոնական թերթերը սկսեցին տպագրել միայն հունվարի 16-ից: Հայկոմկուսի կենտկոմը, Գերագույն խորհրդի նախագահությունը և նախարարների խորհուրդը հունվարի 15-ին կենտրոնական իշխանություններից պահանջեցին վերջ տալ Բաքվում և Ադրբեջանում հայերի նկատմամբ չդադարող բռնություններին և կատարվածին տալ քաղաքական գնահատական[55]:

Ադրբեջանի ազգայնամոլ ուժերը արյուն էին տենչում: Կենտկոմի առաջին քարտուղար Ա.Վեզիրովը կոչ էր անում «ազգովին միանալ և ջախջախել Լեռնային Ղարաբաղն ու Ստեփանակերտը», որովհետև իբր նրանք են հանդիսանում «Ադրբեջանի ժողովրդի դժբախտության հիմնական պատճառը», իսկ Ազգային ճակատի պարագլուխներից Ա.Փանախովը, հունվարի 13-ի երեկոյան հանդես գալով հեռուստատեսությամբ, ազգակիցներին կոչ արեց «հայերի դեմ պատերազմի»: Նրանց ելույթներից հետո Բաքվում սկսվել էին հայ ընտանիքների դեմ հարձակումներն ու բարբարոսությունները[56]: Հունվարի 13-ին Բաքվի փողոցներում թափված էին կտտանքների ենթարկված տասնյակ հայերի դիակներ: Կողոպտված ու խոշտանգված բազմաթիվ հայեր լաստանավերով փոխադրվում էին Կրասնովոդսկ: Ջարդերի առաջին օրը Բաքվի հեռուստատեսային կայանի սարքավորումները շարքից հանվել էին, իսկ Շուշիի կայանից գիշեր ու ցերեկ եթեր էին տրվում հակահայկական հայհոյանքներ ու լուտանքներ: Թե՛ Բաքվում և թե՛ Ադրբեջանի մյուս բնակավայրերում չէր գործում պարետային ժամը: Նրանք, ովքեր փորձում էին ճշմարիտ խոսք ասել ու դատապարտել Բաքվում սկսված վանդալիզմը, ծերբակալվում էին ու նետվում բանտ: Այդպես վարվեցին «Սովետական Ղարաբաղ» թերթի գլխավոր խմբագրի տեղակալ Արկադի Ղուկասյանի, Շարժման առաջամարտիկներ Ռազմիկ Պետրոսյանի, Ռոլես Աղաջանյանի, Ավետիք Գրիգորյանի և Ռուդիկ Ազարյանի հետ, որոնց մեկ ամիս պահեցին Նովոչերկասկ քաղաքի N3 բանտում: 1990թ. հունվարյան այդ օրերին, 12-14-ին, ազերիների կողմից կրկնվեցին հարձակումները Գետաշենի և Մարտունաշենի վրա: Սակայն, ստանալով արժանի հակահարված, հակառակորդը հետ քաշվեց:

[51] *«Սովետական Ղարաբաղ», 16.01.1990:*
[52] *Նույն տեղում:*
[53] *Նույն տեղում:*
[54] *Նույն տեղում, 18.01.1990:*
[55] *«Սովետական Հայաստան», 16.01.1990:*
[56] *ՀԱԱ., ֆ. 1, ց. 87, գ. 49, թ. 4:*

Ադրբեջանում տեղի ունեցող այդ հակամարդկային արարքները Կենտրոնի, եթե ոչ քաջալերանքի, ապա լուռ համաձայնության արդյունք էր: Դա ավելի էր խորացնում հայ ժողովրդի դժգոհությունը և անվստահությունը մոսկովյան իշխանությունների նկատմամբ: Հայ ժողովուրդը անարգանքի սյունին էր գամում Բաքվի և նրա հովանավոր Մոսկվայի մոլեգնող հակահայ գործողությունները: Ն.Սլյունկովը հունվարի 15-ին, Հայաստանի կուսակցական ակտիվի հետ ունեցած հանդիպման ժամանակ, չնայած ցավակցություն հայտնեց Բաքվում տեղի ունեցած ողբերգության առթիվ, սակայն դա չփոխեց Կենտրոնի նկատմամբ ունեցած հայ ժողովրդի խիստ դժգոհությունը: Հենց այդ նույն օրը՝ հունվարի 15-ին, Գերագույն խորհրդի գորբաչովյան նախագահությունը ընդունեց մի որոշում, որով փորձեց իրադարձությունների հիմնական մեղքը բարդել արցախահայության վրա: Այդ որոշման առաջին կետով արտակարգ դրություն հայտարարվեց ԼՂԻՄ-ում և պետական սահմանի՝ Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում եղած սահմանամերձ գոտում[57]: Անհեթեթություն էր, բայց փաստ, որ հայերին և ռուսներին կոտորում էին Բաքվում, սակայն պարոն Գորբաչովն արտակարգ դրություն էր մտցնում Ղարաբաղում: Արտակարգ դրության պահանջների համաձայն՝ կասեցվում էին օրինական կազմակերպությունները, սահմանափակվում քաղաքացիների տեղաշարժը, իրավունք էր տրվում կարգը խանգարողներին ժամանակավորապես արտաքսել իրենց բնակավայրերից, կասկածելի քաղաքացիները 30 օր պահվում էին կալանքի տակ: Մինչև անգամ Հայկական ԽՍՀ ղեկավարությունից պահանջվում էր ամենավճռական քայլեր ձեռնարկել վերջ տալու իբրև «հանրապետության տարածքից գնացող սադրիչ գործողություններին, որոնք ազգամիջյան-կրքեր և ազգային թշնամանք են բորբոքում երկու ժողովուրդների միջև»: Այդ հրամանագրով արգելվեց Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը, «Միացում» կազմակերպությունը, խիստ հսկողություն սահմանվեց տնօրենների խորհրդի և տեղեկատվության միջոցների նկատմամբ[58]: Արցախը կրկին մնաց առանց օրինական իշխանության: Այստեղ իշխում էին զինվորականները՝ ի

[57] *Նույն տեղում:*

[58] *"Правда", 16.01.1990: Տես նաև «Սովետական Հայաստան», 17.01.1990:*

դեմս արտակարգ դրության շրջանի պարետ Յու. Կոտլապովի, որին շուտով դարձյալ փոխարինեց Վ.Սաֆոնովը:

Բաքվում և հանրապետության մի շարք տեղերում իշխանությունը անցել էր ԱԺԵ-ի ձեռքը: Այնտեղ արտաքին դրություն մտցվեց միայն հունվարի 20-ին, երբ բանակը մտել էր քաղաք: Հունվարի 21-ի տվյալներով Բաքվում զոհվել էր 60 ադրբեջանցի, 14 զինվորական, վիրավորվել 76 զինծառայող: Կան նաև տվյալներ, որ զոհվել են 134, վիրավորվել 800 մարդ: Մեկ այլ հաղորդման համաձայն՝ այդ օրերին Բաքվում զոհվել է 1000 մարդ[59], ըստ որում՝ հայերի զոհերի թիվն անցել է 400-ից[60]: Այնտեղ հայերի նկատմամբ իրագործված ջարդերի վերաբերյալ գործի քննություն չկատարվեց: Ինչպես Սումգայիթի դեպքում Մոսկվան չցանկացավ բացահայտել սպանդի ու ջարդի կազմակերպիչներին և ոգևորողներին, այնպես էլ՝ այս դեպքում: Ադրբեջանում սպանված ջարդարարները հայտարարվեցին «ազգային հերոսներ» և տեղ գտան «եղբայրական գերեզմանոցում»: ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա.Սուխարևը լռությամբ պաշտպանեց Բաքվում կատարված վանդալիզմը: Իրոք, եթե «սումգայիթին» տրվեր քաղաքական գնահատական, և իսկական հանցագործները պատասխանատվության ենթարկվեին, ապա հազիվ թե կրկնվեին «շուշին», «կիրովաբադը», «բաքուն»: Իմիջիայլոց, Բաքվում հայերի ցեղասպանությունը նորություն չէր: Հայտնի վիճակագիր Բախշի Իշխանյանի հաշվումներով միայն 1918թ. սեպտեմբերյան ջարդերի ժամանակ Բաքվի 88673 հայերի 59,57 տոկոսը տուժել են: Նրանցից 5248-ը զոհվել են, 3572-ը անհետ կորել, 3396-ը գերվել, 253-ը ձերբակալվել, 288-ը բռնաբարվել, 31293-ը դարձել գաղթականներ[61]:

Բաքվում տեղի ունեցած այդ դաժանությունը վրդովեցրել էր նաև համաշխարհային հանրությանը: Ամերիկյան սենատորներ Փիթ Վիլսոնը, Փոլ Սայմոնը, Լարի Պրեստոնը, Ջոն Քերտին և Կլեյբորն Պելը, դիմելով Մ.Գորբաչովին, խիստ անհանգստություն հայտնեցին Բաքվի իրադարձությունների առթիվ և պահանջեցին միջոցառումներ ձեռնարկել՝ կանխելու նոր սպանությունները:

[59] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 87, գ. 49, թ. 15:*

[60] *Մելիք-Շահնազարյան Լ., Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության նկատմամբ, Եր., 1998, էջ 40:*

[61] Իշխանյան Բ., *Բաքվի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920, էջ 4-24:*

Նրանք նաև շեշտեցին, որ Հայաստանի հետ Ղարաբաղի վերամիավորումը խիստ անհրաժեշտություն է[62]: Այդ օրերին Մոսկվա ժամանած ԱՄՆ-ի Սենատի Արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Էլեյբորն Պելը ադրբեջանցիների կողմից իրագործվող հայկական ջարդերի վերաբերյալ իր բողոքը հայտնեց ԽՍՀՄ իշխանություններին ու առաջարկեց Ղարաբաղը դուրս բերել Ադրբեջանի ենթակայությունից: Նա գտնում էր, որ ադրբեջանցիներին թույլ տալ վերահսկել Լեռնային Ղարաբաղը կնշանակի էլ ավելի խորացնել բռնությունները և առիթ տալ նոր ընդհարումների[63]: Նման բողոքներ և պահանջներ ստացվում էին նաև աշխարհի այլ երկրներից, քաղաքական և պետական գործիչներից ու անվանի մարդկանցից: Իսկ արցախցիները, հունվարի 21-ին դիմելով աշխարհի բնակչությանը, խնդրում էին «իրենց ձայնը բարձրացնել ի պաշտպանություն պաշարված Ղարաբաղի և օգնության ձեռք մեկնել նրան»[64]:

Հաջորդ օրը՝ հունվարի 22-ին տեղի ունեցած մարզխորհրդի գործկոմի նիստը մերկացրեց Բաքվում տեղի ունեցած բարբարոսությունները, որոշեց դատապարտել և չճանաչել Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989թ. նոյեմբերի 28-ի որոշումը, հնարավոր չհամարեց ԼՂՀՄ-ում հանրապետական կազմկոմիտեի գործունեությունը, ճանաչել Ազգային խորհրդի ու նրա նախագահության բոլոր որոշումները մինչև տեղական խորհուրդների նոր ընտրությունները և մարզխորհրդի իրավունքների վերականգնումը, որը «ինքնիշխան մարմին է ԼՂՀՄ-ում»: Առաջարկվեց այդ որոշումը հասցնել մարզի տեղական իշխանությունների գիտակցությանը և բնակչությանը կոչ արեց պահպանել զսպվածություն, ամրապնդել կարգապահությունը և ամեն կերպ համագործակցել ռազմական զորամասերի հետ[65]:

1990թ. հունվարի 15-ին, ինչպես ասվել է, ԼՂԻՄ-ում և Շահումյանի շրջանում մտցվեց արտակարգ դրություն, որին հաջորդեց Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումը Շահումյանի շրջանը լուծարելու վերաբերյալ: Ադրբեջանում շարունակվող հակահայ քաղաքականությունը քննության առնվեց Հայ-

[62] *«Հայք», 28.01.1998:*
[63] *Նույն տեղում:*
[64] *«Որոշակ», N21, 1990:*
[65] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 294, թ. 5-6:*

կոմկուսի Կենտկոմում տեղի ունեցած խորհրդակցությունում, որտեղ դատապարտվեցին Ադրբեջանում կիրառվող բարբարոսությունները, և կենտրոնական իշխանություններից պահանջվեց վերջ տալ այդ ամենին: Խորհրդակցությանը ներկա Ն.Սլյունկովը, իր ելույթում կեղծելով իրականությունը, փորձում էր ներկաներին համոզել, թե իբր կենտրոնական իշխանությունները քայլեր են ձեռնարկում Գետաշենը, Ազատը և Կամոն Ադրբեջանի իշխանություններից պաշտպանելու[66]: Մի քանի օր անց՝ հունվարի 25-ին կայացած Հայկոմկուսի Կենտկոմի բյուրոն, քննադատելով Բաքվում և Ադրբեջանի մյուս հայաբնակ վայրերում հայ ժողովրդի նկատմամբ իրագործվող բռնություններն ու վայրագությունները, ընդունեց համապատասխան հայտարարություն, որտեղ ասված էր, որ Ադրբեջանը լուծարել է Շահումյանի շրջանը, Բերդաձորի, Գետաշենի ենթաշրջանի և Մարտունու շրջանի գյուղերի վրա վտանգ է կախված, Ադրբեջանի հատուկ նշանակության միլիցիայի ջոկատները շարունակում են անօրինությունները, զինված հարձակումներ են գործում Ղարաբաղ գնացող ավտոմեքենաների վրա, իշխում են Ստեփանակերտի օդանավակայանում, Խոջալու գյուղում ապօրինի շինարարություն է կատարվում, ինչը խստորեն վնասում է օդանավակայանի աշխատանքին, իսկ արցախահայությունից պահանջում են հեռանալ իրենց օրրանից: Հայկոմկուսի Կենտկոմի բյուրոն գտնում էր, որ այդ ամենում մեղք ուներ Կենտրոնը, որը չէր հետևում իր իսկ 1989թ. նոյեմբերի 28-ի որոշման կատարմանը: Ղարաբաղի վրա կախված էր Ադրբեջանի իշխանությունների կողմից ինքնավար մարզը լուծարելու իրական վտանգ: Այդ ամենից անհանգստացած՝ Հայկոմկուսի Կենտկոմի բյուրոն հայ ժողովրդին կոչ արեց մի կողմ թողնել «քաղաքական տարաձայնությունները» և համատեղ հանդես գալ «ի պաշտպանություն ԼՂԻՄ խաղաղ հայ բնակչության»[67]: Ասենք, որ Հայկոմկուսի որոշ ղեկավար այրեր դեռևս հավատում էին, որ կենտրոնական իշխանությունները «բոլոր անհրաժեշտ միջոցառումները կձեռնարկեն ռեգիոնում բռնության ծավալումը կասեցնելու, ջարդերի և վանդալիզմի քայլերի կազմակերպիչներին խիստ պատասխանատվության ենթարկելու համար»[68]:

[66] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 131, թ. 1-82:*
[67] *Նույն տեղում, ց. 85, գ. 31, թ. 48-50:*
[68] *«Սովետական Հայաստան», 22.01.1990:*

Ստեղծված իրավիճակը շտկելու համար զգալի աշխատանք էր կատարում Հայաստանի Արտակարգ դրության հանրապետական խորհրդի օպերատիվ շտաբը: Խորհրդին առընթեր գործում էր նաև հասարակական-քաղաքական իրավիճակի վերլուծման ու կանխատեսման խումբ, որի գործունեությանն աջակցում էին բազմաթիվ կոլեկտիվներ, Երևանի օդանավակայանն աշխատում էր լրիվ ծանրաբեռնվածությամբ, գալիս էին գաղթականներ, որոնց օգնում էին Արտակարգ դրության հանրապետական խորհուրդը, նրա օպերատիվ շտաբը, հասարակական կազմակերպությունները, քաղաքի բնակչությունը: Նրանք զբաղված էին 100 հազար գաղթականներին տեղավորելու և նրանց համար ապրելու պայմաններ ապահովելու դժվարին գործով:

1990թ. հունվարի 10-ից լրիվ դադարեցվեց գնացքների ժամանումը ադրբեջանական երթուղով և, Հայաստանը չստացավ 450 հազար տոննա զանազան ժողովրդատնտեսական բեռներ: Հանրապետությունում, փաստորեն, լրիվ սպառված էին ավտոբենզինի, դիզելային վառելանյութի և մազութի պաշարները: Կանգնելու սպառնալիքի տակ էին Երևանի ջերմաէլեկտրակայանը և Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանը: Էլեկտրաէներգիայի պակասության պատճառով ձախողվում էր շատ ձեռնարկությունների և կազմակերպությունների նորմալ աշխատանքը[69]: Եվ, չնայած այդ դժվարություններին, Հայաստանը շարունակում էր օգնություն ցույց տալ Լեռնային Ղարաբաղին և սատար կանգնել նրա ազատագրական պայքարին:

1990թ. հունվարի 23-ին Ստեփանակերտ ժամանեց արտակարգ դրության շրջանի ռազմական պարետի պաշտոնում վերահաստատված գեներալ-մայոր Վլադիսլավ Սաֆոնովը: Հենց սկզբից նա, կոչով դիմելով մարզի բնակչությանը, զգուշացրեց, որ «ԼՂԻՄ-ում և հարակից շրջաններում կիրառվի Գերագույն խորհրդի հրամանը՝ նրանից բխած բոլոր հետևանքներով»[70]: Իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառումների հետևանքով Արցախն ամբողջովին կտրվել էր արտաքին աշխարհից: Հունվարի 26-ին Ստեփանակերտ ժամանած ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ.Յազովի և ՆԳ նախարար Վ.Բագատինի կարգադրությամբ դադարեցվեցին ուղղաթիռների չվերթերը Երևանից Ստեփանակերտ, Շահումյան և Գետաշեն: Հունվարի

[69] *Նույն տեղում:*
[70] *«Սովետական Ղարաբաղ», 24.01.1990:*

27-ին Ստեփանակերտ եկավ Վ.Պոլյանիչկոյի ղեկավարած տխրահռչակ հանրապետական կազմկոմիտեն[71], որի միակ գործակիցը ռազմական պարետ Վ.Սաֆոնովն էր: Կազմկոմիտեն տեղավորվեց կուսակցության մարզկոմի շենքում: Ի նշան բողոքի՝ մարզկոմի դեռևս գործող բաժինների աշխատողները լքեցին շենքը: Որպես անհնազանդության և բողոքի նշան, մարզի աշխատավորները հունվարի 25-ից սկսեցին ընդհանուր գործադուլ: Իրենց աշխատանքները թողել էին մետաքսկոմբինատի, կոշիկի ֆաբրիկայի, էլեկտրատեխնիկական գործարանի, N 91 շինվարչության, արդյունաբերական և շինարարական մյուս ձեռնարկությունների ու կազմակերպությունների կոլեկտիվները: Չէին գործում հասարակական տրանսպորտը, բնակչության կենցաղսպասարկման օջախները, ուսումնական հաստատություններն ու նախադպրոցական հիմնարկները: Դադարեցվեցին մարզային ռադիոհաղորդումները: Գործադուլը շարունակվեց մինչև ապրիլի 2-ը, այն էլ՝ արտակարգ դրության պայմաններում[72]:

* * *

ՀՀՇ-ի առաջին համագումարից հետո կոմիտեականների գործունեությունը հիմնականում ընթանում էր երկու ուղղությամբ՝ պաշտպանել և օգնել Արցախի ազգային-ազատագրական պայքարին և հանրապետությունում իշխանությունը վերցնել իրենց ձեռքը: Մնացած գործողությունները նրանց համար ածանցյալ էին: 1990թ. հունվարի կեսերից վերսկսվել էին հանրահավաքները: Թատերական հրապարակը դարձել էր կամավորական ուժերի կազմակերպման, Գերագույն խորհրդի նախընտրական քարոզչության և Արցախին նյութական ու ռազմական օգնություն կազմակերպելու վայր: Հունվարի 13-ին տեղի ունեցած հանրահավաքում հայտարարվեց, որ Հայոց համազգային ճակատի ինքնապաշտպանական ուժերը թե՛ շրջաններում և թե՛ Երևանում բերվել են ռազմական պատրաստության: Հանրապետության բնակչությանը կոչ արվեց ունեցած զենքը կա՛մ հանձնել «Ղարաբաղ» կոմիտեին, կա՛մ էլ զենքով ներկայանալ կոմիտե: Այդ նույն երեկոյան հաղորդվեց, որ Բաքվում տեղի ունեցած հանրահավաքում Ադրբեջանի ժողովրդական ճակատը պա-

[71] *Կոմիտեի կազմը՝ Ռ. Ասադով, Ս. Վելիմամեդով, Ա. Գոլուբև, Շ. Քերիմով, Մ. Ռաղա, Վ. Զաֆարով:*
[72] *«Սովետական Ղարաբաղ», 21.02.1990 և 03.04.1990:*

տերագմ է հայտարարել Հայաստանին և ադրբեջանցիներին կոչ արել արագորեն պատրաստվել դրան: Միտինգավորներին նաև հաղորդվեց, որ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ Բ.Արարքցյանը, Վ.Մանուկյանը և Լ.Տեր-Պետրոսյանը մտել են կառավարական օպերատիվ շտաբի մեջ, որը ստեղծվել էր այդ օրերին[73]: Այսպիսով՝ ՀՀՇ-ն և օպերատիվ շտաբը գործում էին համատեղ, որի խնդիրն էր կազմակերպել կամավորական ջոկատներ և ձեռք բերել զենք: Բացի այդ, ՀՀՇ-ն ստեղծեց ռազմական շտաբ, որին պետք է ենթարկվեին ամբողջ հանրապետությունը, անգամ ՆԳՆ-ը, ՊԱԿ-ը, Հայկոմկուսի Կենտկոմը և Գերագույն խորհուրդը: Հունվարի 14-ին տեղի ունեցած հանրահավաքում ՀՀՇ-ն պնդեց, որ եթե կենտրոնական շտաբ չստեղծվի, ապա ՀՀՇ-ն ստիպված կլինի հունվարի 15-ին իշխանությունը վերցնել իր ձեռքը: Իրոք, 1990թ. հունվարյան այդ օրերին ՀՀՇ-ականները իրենց անզուսպ և հախուռն ցանկություններով շատ հեռուն էին գնացել: Ճիշտ է, վիճակը Նախիջևանի հետ սահմանամերձ շրջաններում, Արցախում, Շահումյան-Գետաշենում, մանավանդ Բաքվում խիստ բարդացել էր, և ժողովրդին պայքարի հանելու գործում ՀՀՇ-ն և թե մյուս ուժերը վճռական էին: Նրանք անտեսում էին, որ Հայաստանում տեղակայված խորհրդային 7-րդ բանակը պատրաստ էր պաշտպանել Հայաստանի իշխանություններին: Պակաս ուժ չէին նաև Հայկոմկուսը, ՆԳՆ և ՊԱԿ-ը: Հիշականները թեթևամտորեն հայտարարում էին, որ եթե բանակը «Հայաստանում ուժ գործադրի, ապա կստանա արժանի հակահարված»[74]: Խորհրդային բանակին «հարվածելու» նպատակով նրանք հայ զինվորներին կոչ էին անում լքել զորամասերը, վերադառնալ հայրենիք և մտնել ինքնապաշտպանական ջոկատներ: Թատերական հրապարակից կոչեր էին հղվում շրջանների ղեկավարներին տեղերում ստեղծված շտաբներին օգնություն ցույց տալ ավտոմեքենաներով, վառելանյութով, հագուստով, սննդամթերքներով: Ամենուր կարգ ու կանոն հաստատելու համար ՀՀՇ-ն նախաձեռնեց ստեղծել հատուկ ջոկատներ[75]: Նման ինքնագործունեությունը և խառնաշփոթի ստեղծումը չէր կարող դժգոհություն առաջ չբերել հանրապետության կուսակցական-պետական և իրավապահ մարմիններում: Բանն այն է, որ հան-

[73] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 87, գ. 49, թ. 1-2:*
[74] *Նույն տեղում, թ. 6:*
[75] *Նույն տեղում:*

րապետությունում, մանավանդ Երևանում, հանդես էին եկել զինված ջոկատներ, որոնց գործողությունները հաճախ ուղեկցվում էին ավազակային արարքներով: ՀՀՇ-ն ստիպված էր նրանց դեմ պայքարելու համար ստեղծել համապատասխան մարմին-շտաբ, որն օժտված էր «արտակարգ իրավունքներով»: Այն պետք է գործեր միլիցիայի հետ համատեղ, միատեսակ հագուստով, տարբերանշանով և ՀՀՇ-ի վարչության կնիքով հաստատված փաստաթղթերով: Նաև հայտարարվեց, որ ով զենք կգործադրի հայի դեմ, «նա պատասխան կտա ռազմական ժամանակի օրենքով»[76]: ՀՀՇ-ի այդ օրերի միտումները հստակ արտահայտեց Վազգեն Մանուկյանը՝ «պայքարը շարունակելու համար անհրաժեշտ է զինվել: Մեր պայքարը նպատակ ունի իրագործել քաղաքական խնդիրներ: Մենք կհաղթենք այն ժամանակ, երբ կլինենք զինված, կազմակերպված և հզոր: Այդ դեպքում կունենանք անկախ պետություն՝ մեր ազգային շահերով»[77]:

Հայոց հողը պաշտպանող ինքնապաշտպանական ջոկատները Երասխավանում և սահմանամերձ մյուս հատվածներում Ադրբեջանի ազգային ճակատի հրահրած ընդհարումների ժամանակ արժանի հակահարված հասցրին հակառակորդին: Երասխավանում ինքնապաշտպանական ուժերի հաջողությունները ՀՀՇ-ականները փորձում էին լիովին վերագրել իրենց և նույնիսկ հայտարարեցին, թե Երևանում կարող է կարգ ու կանոն հաստատել միայն «Ղարաբաղ» կոմիտեն: ՀՀՇ-ի վարչությունը վճռականորեն պահանջում էր բնակչության մոտ եղած զենքերը հանձնել «Ղարաբաղ» կոմիտեին՝ իբրև դրանք սահմանամերձ շրջաններ ուղարկելու համար[78]:

1990թ. գարնան շեմին կրկին բարդացել էր Շահումյան-Գետաշենի վիճակը: Գետաշենի ենթաշրջանի Ազատ և Կամո գյուղերի բնակչությանն արտաքսելու հարցը ազերիների համար դարձել էր օրերի խնդիր: Երևանյան հանրահավաքներում ճառողները հանրապետության ղեկավարությանը մեղադրում էին Շահումյանի և Գետաշենի հայության ճակատագրով մտահոգված չլինելու համար: Փետրվարի 9-ի հանրահավաքում ունեցած իր ելույթում Լ.Տեր-Պետրոսյանը գտնում էր, որ հայ ժողովուրդը չպետք է շեղվի իր ռազմավարական ուղուց: Նա կոչ արեց օգնել

[76] *Նույն տեղում, թ. 8:*
[77] *Նույն տեղում, թ. 9:*
[78] *Նույն տեղում, թ. 21:*

Արցախին՝ «վճռական հարված հասցնել 70-ամյա նեխած նոմենկլատուրային» ու հանրապետության Գերագույն խորհրդին ստիպել «կատարել Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու վերաբերյալ որոշումը»[79]: Այդ օրերին Հայկոմկուսում և պետական բարձրագույն մարմիններում ամեն օր ստացվում էին բազմաթիվ նամակներ ու հեռագրեր, որոնց հեղինակներն իշխանություններին կոչ էին անում ոչ մի դեպքում չթուլացնել Արցախին տնտեսական և ռազմական օգնություն ցույց տալը[80]:

1990թ. փետրվարի 5-6-ը տեղի ունեցած ԽՄԿԿ Կենտկոմի պլենումում ելույթ ունենալով՝ Ս.Հարությունյանը փորձեց հիմնավորել ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի լինելը: Նա ասաց. «Հին մտածողության իներցիան այնքան ուժեղ գտնվեց, որ վերակառուցման շնորհիվ կյանքի կոչված ԼՂԻՄ-ի հայ բնակչության կամքի արտահայտությունն ընկալվեց որպես Հայկական ԽՍՀ-ի ոտնձգություն հարևան հանրապետության տարածքի նկատմամբ»: Ապա շեշտեց, որ ԼՂԻՄ-ի հարցը տարածքային վեճ չէ, այն առաջադրել է Լեռնային Ղարաբաղի բնակչությունը, և որ հարցի էությունը ժողովրդի ինքնորոշումն է: Որպես պատասխան,– շարունակեց նա,– կազմակերպվեց «սումգայիթ», շրջափակվեց Հայաստանը, և ազգամիջյան կոնֆլիկտը վերածվեց միջհանրապետականի: Ս.Հարությունյանը նաև նկատեց, որ կենտրոնական իշխանությունների կողմից «Հայաստանում և Ադրբեջանում տեղի ունեցած դեպքերի միջև հավասարության նշան դնելը... նշանակում է մոլորության մեջ գցել հասարակական կարծիքը»[81]:

1990թ. փետրվարից սկսած Հայաստանում քայլեր էին ձեռնարկվում բնակչության ձեռքում գտնվող զենքը հավաքելու համար: Հանրապետության Նախարարների խորհրդի նախագահ Վ.Մարգարյանցի՝ փետրվարի 14-ին Հայկոմկուսի Կենտկոմ և Գերագույն խորհուրդ ուղարկված նամակում խոսվում է 7-րդ բանակի հրամանատար, գեներալ-մայոր Ն.Պիշչևի ծածկահեռագրի մասին, որտեղ գեներալը պահանջում էր հավաքել ոչ օրինական պահվող բոլոր զենքերը: Վ.Մարգարյանցը Գերագույն խորհրդին առաջարկում էր հատուկ հրամանագիր արձակել և այդ առթիվ բանակցել օրինական և ոչ օրինական կազմակերպությունների

[79] *Նույն տեղում, թ. 22-23:*
[80] *Նույն տեղում, գ. 127, գ. 814, թ. 120-128, 179-182 և այլն:*
[81] *«Սովետական Հայաստան», 08.02.1990:*

ղեկավարների հետ[82]: Այդ պահանջը մնաց անկատար, որովհետև օրինական և ոչ օրինական կազմակերպությունները դա համարեցին անպատեհ, քանի որ հանրապետությունում կազմավորվում էին ինքնապաշտպանական ջոկատներ, որոնք զենքի և զինամթերքի մեծ կարիք ունեին, մանավանդ Արցախի պաշտպանությունն ապահովելու համար: Ընդհակառակը, հանրապետությունում նոր թափ ընդունեց զենք և զինամթերք ձեռք բերելու շարժումը:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկու պալատների համատեղ դռնփակ նիստը մարտի 1-ին ավարտեց մինչ այդ սկսած՝ Ադրբեջանական ԽՍՀ-ում և Հայկական ԽՍՀ-ում ստեղծված իրադրության հարցի քննարկումը: Ելույթ ունեցողները «ցավով էին խոսում Բաքվում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների մասին, որոնք ուղեկցվել» էին «մարդկանց սպանություններով», և երկու հանրապետություններին առաջարկեցին «միմյանց ընդառաջ գնալ»[83]: Սակայն առաջարկված որոշման նախագիծը լոկ կոսմետիկ բնույթ ուներ և չէր տալիս Բաքվում տեղի ունեցածի ո՛չ քաղաքական և ո՛չ էլ բարոյական գնահատականը: Այդուհանդերձ, այդ նախագիծն ընդունվեց հիմք՝ լրամշակելու և մարտի 5-ի նիստում կրկին քննարկելու համար: Այդ նիստում անհրավազոր համարվեցին Հայկական ԽՍՀ-ի Գերագույն խորհրդի ընտրությունների կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը՝ կապված ԼՂԻՄ-ի տարածքում Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունների ընտրական շրջաններ ստեղծելու հետ: Այդ նույն նիստում քննարկվեց նաև վերոհիշյալ որոշման նախագծի լրամշակված տարբերակը, որը գրեթե ոչնչով չէր տարբերվում նախորդից: Երեկոյան նիստում, չնայած հայ պատգամավորների բողոքին, ԽՍՀՄ Գերագույն օրենսդիր մարմինը հերթական անգամ ընդունեց «Ադրբեջանական ՍՍՀ-ում և Հայկական ՍՍՀ-ում տիրող դրության և այդ ռեգիոնում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին»[84] որոշում, որը, ինչպես և նախորդները, ի վիճակի չէր լարվածությունը վերացնել և դատապարտված էր չիրագործվելու:

Մինչ այդ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը մարտի 2-ին հանդես էր եկել հայտարարությամբ, որտեղ միան-

[82] *ՀԱԱ, Ֆ. 1, գ. 87, գ. 44, թ. 27-32:*
[83] *«Սովետական Հայաստան», 17.02.1990:*
[84] *Նույն տեղում, 07.03.1990:*

գամայն ճիշտ էր բնորոշվել տարածաշրջանում ստեղծված իրավիճակը: Այդ հայտարարության մեջ ասված է. «Վերջին օրերս ադրբեջանական իշխանությունները և Ադրբեջանի ժողովրդական ճակատի ներկայացուցիչները խորհրդային բանակի և ներքին զորքերի ստորաբաժանումների հովանավորությամբ եռանդուն գործողություն են ծավալել Խանլարի շրջանի Ազատ, Կամո, Մարտունաշեն և Գետաշեն հայաբնակ գյուղերի տեղահանման նկատմամբ: Մութ գործարքների, տների կեղծ առուծախի միջոցով արդեն դատարկվել է Ազատ գյուղը, մարտի 2-ին սկսվել է Կամո գյուղի բնակիչների տեղահանությունը: Նույն վտանգը սպառնում է Մարտունաշեն, Գետաշեն, իսկ այնուհետև նաև Շահումյանի շրջանի հայկական գյուղերին»: Այնուհետև նշվում է, որ Ազատ և Կամո գյուղերի տեղահանությունը սկսվել է միայն այն բանից հետո, երբ այդ գյուղերում տեղաբաշխվել էին խորհրդային բանակի և ներքին զորքերի ստորաբաժանումները: Միանգամայն հստակ է, որ այդ գործողությունը խրախուսվում կամ նույնիսկ ղեկավարվում էր կենտրոնական իշխանությունների կողմից: Հայաստանի բարձրագույն օրենսդիր մարմինը կենտրոնական իշխանություններից պահանջում էր «զորքերն անհապաղ դուրս բերել Հյուսիսային Արցախից՝ դրանք տեղավորելով հայկական և ադրբեջանական գյուղերի սահմանազտիչ գոտիներում»[85]: Քանի որ երկրի բարձրագույն իշխանությունները չարձագանքեցին այդ տագնապալի ահազանգին, Հայաստանի Գերագույն խորհուրդը մարտի 9-ին դիմում հղեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը, որտեղ կրկին տագնապ հայտնեց Հյուսիսային Արցախում ստեղծված ծանր վիճակի առթիվ՝ դրանում մեղադրելով նաև ԽՍՀՄ զինված ուժերին: Որպես հրատապ խնդիր՝ պահանջվեց Ազատ, Կամո գյուղերը և Գետաշենի ենթաշրջանը հանձնել Շահումյանի շրջանին: «Հակառակ դեպքում,– ասված է այդ փաստաթղթում,– անկանխատեսելի հետևանքների ողջ պատասխանատվությունն ընկնում է երկրի կենտրոնի իշխանությունների վրա»[86]: Սակայն այդ բողոք-դիմումը մնաց անհետևանք: Կենտրոնական իշխանությունները շարունակում էին բացահայտ և լկտի գործել հայության նկատմամբ:

1990թ. գարնանը Հայաստանում և Արցախում ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախընտրական լայն արշավ էր ընթանում: Հայ-

[85] *Նույն տեղում, 03.03.1990:*
[86] *Նույն տեղում, 12.03.1990:*

կոմկուսը, ՀՀՇ-ն և մյուս քաղաքական ուժերը շատ ընտրատարածքներում առաջ էին քաշել իրենց թեկնածուները: Հիշականների նախկին կոչերը իրենց տեղը զիջել էին սահմանադրական ճանապարհով իշխանության հասնելու մարտավարությանը: Սակայն քաղաքական ընդհանուր վիճակը հանրապետությունում մնում էր չափազանց լարված: Բերենք մի օրինակ. Հայկական ԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի պետական կոմիտեի նախագահ Ս.Պողոսյանը 1990թ. փետրվարի 23-ին Հայկոմկուսի Կենտկոմ ուղարկած նամակում ահազանգել էր, որ հայ ժողովրդի համար ստեղծվել է վտանգներով և փորձություններով լի կացություն: «Հանրապետության ղեկավարության թույլտվությամբ,– գրում էր նա,– մի խումբ իշխանասիրահարների, արկածախնդիրների և քաղաքական քայլլագյոզների հաջողվել է անցած երկու տարում մեծ ու փոքր ազգային հարցեր լուծելու դրոշի տակ... խաբել լայն հասարակայնությանը, չեզոքացնել գոյություն ունեցող ֆորմալ և ոչ ֆորմալ կազմակերպություններին ու միություններին և հանրապետության կյանքում գրավել ինքնիշխան դիրք:

Արտաքուստ թվում է, թե մեզ մոտ ստեղծված է երկիշխանություն, մինչդեռ միակ իրական իշխանությունը Հայկական համազգային շարժումն է (ՀՀՇ), որը քողարկվում է զանազան ճարպիկ կոչերով և հասարակական կարծիքը մոլորության մեջ գցում անամոթ և անմաքուր մեթոդներով»[87]: Այդ ամենից խիստ անհանգստացած՝ Ս.Պողոսյանը նաև մեղադրում էր մի շարք բարձր պաշտոնյաների, որոնք «իրենց գործնականում տվել են ՀՀՇ-ի ողորմածությանը, դարձել են նրանց կամակատարներ կամ էլ ձգտում են նրանց օգտագործել և կյանքում իրագործել իրենց անձնական, եսասիրական և իշխանատենչ ծրագրերը»: «Այդ ամենը,– շարունակում է նամակի հեղինակը,– հասարակությանը գցել է շփոթության և հուսահատության մեջ: Հանրապետության կյանքը կազմալուծված է, տապալված են աղետի գոտու աշխատանքները, փախստականների շարքում տիրում է քաոս, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով աշխատանքները ձախողվել են կենսագործունեության բոլոր բնագավառներում»: Նա հանդգնությունք էր հայտնում, որ ստեղծված նման պայմաններում Հայկոմկուսի Կենտկոմի բյուրոն պետք է կա՛մ դիմի գործնական քայլերի, կա՛մ էլ հրաժարական տա, որովհետև նման գործունեու-

[87] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 87, գ. 44, թ. 14:*

թյամբ նա փաստորեն «նպաստում է միայն ՀՀՇ-ի իշխանության և կարիերիստական ձգտումների իրականացմանը»: Ս. Պողոսյանը առաջարկում էր «հիմնովին և անհետաձգելիորեն վերանայել կուսակցական, պետական և տնտեսական մարմինների, առաջին հերթին լրատվամիջոցների ղեկավար կազմը, սկզբունքային գնահատական տալ վարչական մարմինների և նրանց ղեկավարների «հումանիստական խաղերին», հանրապետությունում ստեղծված վիճակին, ֆորմալ և ոչ ֆորմալ կազմակերպությունների գործունեությանն ու վարքագծին, պետական մարմիններին և ստեղծված վիճակից հանրապետությունը դուրս բերելու համար ակտիվացնել հասարակությանը»[88]:

Ս.Պողոսյանը միանգամայն ճիշտ է նկարագրել այդ օրերին հանրապետությունում ստեղծված քաղաքական վիճակը: Անկասկած, կոմկուսն իրեն սպառել էր և զրկվել իր հիմնական հենարանից՝ ժողովրդի պաշտպանությունից: Սակայն հանրապետությունում իշխանությունը ՀՀՇ-ին հանձնելը մի այլ ծայրահեղություն էր, կոպիտ սխալ: Երբ դա զգացվեց, արդեն ուշ էր: Այն ժամանակ ո՛չ Ս.Պողոսյանի և ո՛չ էլ ուրիշների անհանգստությունն ու առաջարկություններն արդեն չէին կարող տեղ հասնել: Քաղաքական ուժերը և հասարակական շարժումը, ներքաշվելով նախընտրական պայքարի մեջ, մոռացության տվեցին հանրապետության հասարակական և տնտեսական կյանքը: Գաղափարական պայքարում ՀՀՇ-ականներին հեղինակություն և մասնակցություն էին բերում անկախության և Արցախի գաղափարները: Հենց դա ի նկատի ունենալով՝ Իգոր Մուրադյանը այդ օրերին գրել է. «Միայն երկու խնդիր կարող են ոտքի հանել հայ ժողովրդին, համախմբել նրա հոգևոր ու ֆիզիկական ուժերը: Դրանք են՝ Արցախն ու անկախությունը: Սակայն հենց Արցախի պրոբլեմի լուծման ճանապարհին է ծառայում ազգային անկախության խնդիրը՝ որպես Արցախյան պրոբլեմի բանալի»: Հենց դրանից օգտվում էր ՀՀՇ-ն, որը «փաստորեն ներկայացնում է առանձին սոցիալական խմբերի շահերը, որոնք, հակառակ համազգային շահերի, ձգտում են քաղաքական իշխանության և դրան ուղեկցող բարիքներին...»[89]: Հայ հասարակությունը դեռևս պատրաստ չէր «անձնազոհության՝ հանուն ամենաթանկ բանի՝ անկախության»: Եվ «հենց այդ գործով է պայմանավորված ՀՀՇ-

[88] *Նույն տեղում, թ. 14-15:*
[89] *«Դրոշակ», N1, 1990, էջ 27:*

ի ակտիվ գործունեությունը, և հենց դրանում է դրսևորվում այս *հակազգային կազմակերպության* քաղաքական սնանկությունը»[90]: Այդ օրերին շատերը դեռևս չէին հասկանում ՀՀՇ-ի վարքագիծը, այն ՀՀՇ-ի, որը մի քանի ամիս շարունակ դեմ է եղել 1989թ. դեկտեմբերի 1-ի որոշումն ընդունելուն, իսկ որոշումն ընդունվելուց հետո Արցախը նրա համար հանդես էր գալիս որպես հեռվում երևացող շղարշ՝ «իր հախուռն ու անմռունչ իշխանամոլությունն իրագործելու համար»: Իգոր Մուրադյանը գտնում էր, որ «ՀՀՇ-ն *պետք է չքանա* ոչ թե որպես կազմակերպություն, այլ որպես գաղափար՝ ապագայի համար պահպանելով նրա մեջ մտած առողջ տարրերը...»[91]:

Այնուհանդերձ, ՀՀՇ-ական ուժերը իրենց տեսակետները առաջ էին տանում հանրահավաքներում, հիմնարկ-ձեռնարկություններում տեղի ունեցող ժողովներում և մարդկանց հետ հանդիպումների ժամանակ: Նրանք պահանջում էին պաշտոնից ազատել Վ.Մարգարյանին, Ս.Հարությունյանին և հանրապետության մյուս բարձրաստիճան պաշտոնյաներին[92]: 1990թ. ապրիլի 6-ին տեղի ունեցած Հայկոմկուսի Կենտկոմի պլենումը բավարարեց Ս.Հարությունյանի խնդրանքը և նրան ազատեց զբաղեցրած պաշտոնից: Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց Վլադիմիր Մովսիսյանը, որը մինչ այդ աշխատում էր որպես ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ: Վ. Մովսիսյանը Ղարաբաղյան շարժման նվիրյալներից է: Միանգամայն պարզ է, որ հակաղարաբաղյան կեցվածք ունեցած մոսկովյան իշխանությունների հետ հարաբերությունները չպետք է հարթ ընթանային: ԽՍՀՄ ներքին գործերի նախարար Վ.Բակատինը ապրիլի 20-ին Վ.Մովսիսյանին ուղարկած գրության մեջ հիշեցնում էր, որ 1990թ. հունվարի 10–11-ը Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը համատեղ որոշել են հանրապետական խորհուրդների համատեղ ընտրություններ անցկացնել: Դրանից ելնելով՝ Հայաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը Լեռնային Ղարաբաղում ստեղծել է ընտրական շրջաններ: Հիշեցնելով, որ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը մարտի 5-ին դա ճանաչել է անօրինական, Վ.Բակատինը Լեռնային Ղարաբաղից Հայաս-

[90] *Նույն տեղում:*
[91] *Նույն տեղում, էջ 28:*
[92] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 49, թ. 48:*

տանի Գերագույն խորհրդի պատգամավորներ ընտրելու վերաբերյալ սկսված նախընտրական քարոզչությունը համարում էր հարևան հանրապետության ներքին գործերի միջամտություն: Նա պահանջում էր բեկանել Հայաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը, հակառակ դեպքում ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության «ՍՍՀՄ Գերագույն խորհրդի մարտի 5-ի որոշման համաձայն չի կարող ապահովել տարածաշրջանի քաղաքացիների իրավունքներն ու անվտանգությունը»[93]: Վ.Մովսիսյանը ապրիլի 25-ին Վ.Բակատինին ուղարկած պատասխանում մերժեց նրա պահանջը՝ շեշտելով, որ Հայաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը պետք է դիտել որպես Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի կապերն ամրապնդելու միջոց, այլ ոչ թե հարևան հանրապետության ներքին գործերին միջամտելու փորձ, և որ Լեռնային Ղարաբաղի մասնակցությունը Հայաստանի Գերագույն խորհրդի ընտրություններին երբեք էլ չի հակասում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի մարտի 5-ի որոշմանը[94]:

Սա այսպիսին էր իրավիճակը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունների նախօրյակին:

5. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԳԱ ՍԱՍՏԿԱՑՈՒՄԸ

1990 թ. գարունը ծանր էր նրանով, որ Ադրբեջանը ավելի ուժեղացրեց բռնություններն ու դաժանությունները Արցախում և Գետաշեն-Շահումյանում: Ապրիլի 29-ին տեղի ունեցած Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանը այդ ամենի համար նախ մեղավոր համարեց կենտրոնական իշխանություններին: Հայկոմկուսի Կենտկոմը և Գերագույն խորհուրդը կենտրոնական իշխանություններին խնդրում են Ստեփանակերտ ուղարկել հատուկ հանձնաժողով և ստուգել Ադրբեջանի իշխանությունների կողմից իրագործվող բարբարոսությունները, ԽՍՀՄ Գերագույն խորհրդում անհապաղ քննարկել ԼՂԻՄ-ում ստեղծված ծանր վիճակը, շտապ միջոցառումներ ձեռնարկել մարզի հայ բնակչության շահերը պաշտպանելու համար, բեկանել Ադրբեջանի Գերագույն խորհրդի ապրիլի 21-ի՝ Լեռնային Ղարաբաղում տարածքային-վարչական մասնակի փոփոխություններ

[93] *Նույն տեղում, գ. 44, թ. 23:*
[94] *Նույն տեղում, թ. 21-22:*

կատարելու վերաբերյալ որոշումը, համապատասխան մարմիններին հանձնարարել մանրամասն քննել ապրիլի 26-ին Ստեփանակերտում տեղի ունեցած գործողությունները և շրջանի իշխանություններն ուղիղ ենթարկեցնել հսկիչ-դիտորդ հանձնաժողովին[1]: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը քննարկեց նաև 1989թ. հոկտեմբերի 10-ին Ստեփանակերտում բնակչության դեմ խորհրդային զորքի կողմից զենքի գործադրման ու պատճառած վնասների մասին ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակը կարգավորելու հարցերը: Նստաշրջանի ընդունած որոշումները հիմնականում ուղղված էին կենտրոնական իշխանությունների և անձամբ Մ.Գորբաչովի դեմ, որը հանդիսանում էր «այդ ամենի գլխավոր ռեժիսորը»[2]: Այդ ամենի համար կենտրոնական իշխանությունները սպառնում էին Խորհրդային Հայաստանին: ԽՍՀՄ ՆԳ նախարարի տեղակալ Յու. Շատալինը մայիսի 11-ին Հայկոմկուսի Կենտկոմ ուղարկած նամակում գրում էր, թե հայ-ադրբեջանական սահմաններում գտնվող ներքին գործերի նախարարության 1293 զինվորները մինչև հունիսի 15-ը ետ կքաշվեն թիկունք[3], իսկ ՆԳ նախարարի պաշտոնակատար Վ.Երինը մայիսի 22-ին Հայկոմկուսի Կենտկոմ ուղարկած նամակում պահանջում էր հավաքել հափշտակված զենքերը, ռազմական հանդերձանքը, պայթուցիկ նյութերը և այլ միջոցներ[4]: Բանը հասել էր նրան, որ «Կրասնայա զվեզդա» թերթի «Սրն օտեչեստվա» հավելվածի 1990թ. մայիսի 18-ի համարում ոմն Յու. Յանչիկովան Հայաստանում զենքի հափշտակումը, ինքնապաշտպանական ջոկատների ստեղծումը և ընդհանուր վիճակն «անկայունացնելու» համար մեղադրում էր Վ. Մովսիսյանին: Հայկոմկուսի Կենտկոմի քարտուղար Գ. Գալոյանը այդ կապակցությամբ հունիսի 6-ին բողոք-նամակ է ուղարկում ԽՍՀՄ ներքին գործերի նախարար Վ.Բակատինին և հերքում անօրեն մեղադրանքը[5]:

Մոտենում էր ՀԽՍՀ ԳԽ ընտրությունների օրը՝ մայիսի 20-ը: Մայիսի 18-ին Թատերական հրապարակում տեղի ունեցած վերջին նախընտրական հավաքում ելույթ ունեցողները կոչ էին

[1] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 127, գ. 794, թ. 27-31:*
[2] *«Սովետական Հայաստան», 05.05.1990:*
[3] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 87, գ. 44, թ. 38, 48-50:*
[4] *Նույն տեղում:*
[5] *Նույն տեղում, թ. 51-52:*

անում իրենց ձայնը տալ ՀՀՇ-ի թեկնածուների օգտին: Նույնիսկ պատգամավորության թեկնածու Վաչե Հարությունյանը հայտարարեց, թե իր տեղը զիջում է Շահումյանի շրջանից թեկնածու Վլադիմիր Աղաջանյանին՝ բացատրելով, որ այնտեղ բնակվող շուրջ 21 հազար հայերը պետք է անպայման ներկայացուցիչ ունենան Հայաստանի խորհրդարանում[6]: Վարդան Զուռնաչյանը և Ասքանազ Գալստյանը կոչ արեցին ընտրությունների օրը, ժամը 7-ից շրջապատել ընտրական տեղամասերը՝ ընտրական հանձնաժողովների ու հասարակայնության ներկայացուցիչների հետ միասին թույլ չտալ, որ «ապարատն ու կոմկուսը դիմեն խարդավանքների»[7]: Հանրահավաքը եզրափակող Լ.Տեր-Պետրոսյանը կոչ արեց «նոր խորհրդարանի կազմում ընտրել միայն նրանց, ովքեր պետությունից ոչինչ չեն գողացել»[8]:

Հայկոմկուսն, իր հերթին, փորձում էր ազդել ընտրողների վրա, որպեսզի չքվեարկեն ՀՀՇ-ականների օգտին: Կոմկուսի բյուրոն, մայիսի 18-ին քննարկելով ընտրությունների հետ կապված հարցը, նշեց, որ ծայրահեղական տրամադրություններ ունեցողները ձգտում են հանրապետությունում ապակայունացնել հասարակական-քաղաքական կյանքը, սրել հակասությունները խորհրդային բանակի և հանրապետության բնակչության միջև: Օրինակներ բերվեց, որ հարձակումներ են եղել տանկային զորամասի վրա, իսկ երկաթգծի կայարանից Արարատի շրջան է փախցվել հինգ տանկ: Հայկոմկուսի բյուրոն կոչ է անում վերջ տալ նման անցանկալի երևույթներին[9]: Իսկ մայիսի 27-ին Երևանում տեղի ունեցան արյունալի ընդհարումներ խորհրդային բանակի զինվորների և Երևանի բնակիչների միջև:

Մինչ այդ՝ մայիսի 26-ին, Երևան էին ժամանել մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ՝ ԽՍՀՄ ՆԳ նախարարի տեղակալ Շիլովը, ներքին զորքերի հրամանատար Շատալինը, ՊԱԿ-ից՝ Լուկինը և ուրիշներ: Իբրև նրանք պահազանգ էին ստացել, թե մայիսի 27–28-ին Երևանում տեղի են՝ ունենալու զանգվածային անկարգություններ: Եվ, իրոք, մայիսի 27-ի առավոտյան Երևանի երկաթուղային կայարանում լուրջ բախում է տեղի ունենում երկաթուղու զինվորական պահակախմբի և մի զինված ջոկատի

[6] *Նույն տեղում, գ. 49, թ. 59:*
[7] *Նույն տեղում:*
[8] *Նույն տեղում, թ. 59-60:*
[9] *Նույն տեղում, գ. 104, էջ 2:*

միջև: Վերջինս զենք հափշտակելու մտադրությամբ երկաթուղային կայարանի սպասասրահում հարձակվել էր Երևան-Կապան գնացքին ուղեկցող պահակային զինված ջոկատի վրա, որի հետևանքով զոհվում են 6 քաղաքացի և վիրավորվում 10 զինվոր: Միջադեպը զսպվում է: Սակայն կայարանամերձ հրապարակից հեռանալուց հետո զինվորականները շրջապատում են Երեբունի թաղամասի հիվանդանոցի դիահերձարանը, ուր տեղափոխվել էին զոհվածների մարմինները: Այդ ժամանակ զինված մի խումբ փորձում է փակել Նուբարաշեն-Երևան խճուղին, սակայն չի հաջողվում, որովհետև զրահապատ մեքենաները ճեղքում են շրջափակումը և, թափանցելով Երեբունի թաղամաս, անկանոն կրակ են բացում բնակելի շենքերի վրա, որի հետևանքով զոհվում են 17 և վիրավորվում շուրջ 40 քաղաքացի: Զոհվում է նաև մեկ սպա: ՀՀՇ ղեկավարների և աշխարհազորի մի շարք հրամանատարների ներդրած ահռելի ջանքերի գնով հաջողվում է դադարեցնել փոխհրաձգությունը: Միանգամայն ակնհայտ է, որ քաղաքական նպատակներով մայիսի 23-28-ին կենտրոնական և տեղական իշխանությունների որոշ շրջանակների հանցավոր համագործակցությամբ հայ ժողովրդի դեմ կատարվել է հրեշավոր ոճրագործություն, որի հետևանքով զոհվել է 26 և վիրավորվել շուրջ 60 մարդ[10]:

Աշոտ Մանուչարյանը, Վազգեն Մանուկյանը, Մարտին Հովհաննիսյանը և Լևոն Հակոբյանը, հանդես գալով «Հայք» թերթի հունիսի 2-ի համարում, փորձեցին տեղի ունեցածի ամբողջ մեղքը բարդել զինվորականների վրա: Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն և Հայոց համազգային շարժման վարչությունը, մայիսի 30-ին հանդես գալով «Մոսկվայի ոճրագործ սադրանքը» վերտառությամբ հայտարարությունով, դատապարտեցին խորհրդային զորքերի այդ սանձազերծ վայրագությունը[11]: Իսկ Հայոց ազգային բանակի (ՀԱԲ) ռազմական խորհրդի նախագահ Վարդան Վարդանյանը, հանդես գալով հայտարարությամբ, նշել է, որ իրենք «կտրականապես դեմ են առճակատմանը կայսրության զինված ուժերի հետ»: Նա տեղյակ պահեց, որ

[10] *«Հայք», 02.06.1990: Այդ մասին մանրամասն տե՛ս Արշակյան Ա., Մահ չիմացյալ՝ մահ, մահ իմացյալ՝ անմահություն, Եր., 1993, էջ 148–187: Ըստ Արշակյանի՝ զոհվել են հայազգի 21 քաղաքացի և խորհրդային բանակի մի զինվոր:*
[11] *«Հայք», 02.06.1990:*

մայիսի 10-ին ստեղծված զինված տարբեր ջոկատների ռազմական խորհրդի ընդունած սկզբունքներից մեկի համաձայն, առանց ռազմական խորհրդի հանձնարարականի ոչ մի զինված միավոր կամ ջոկատ իրավունք չունի ինքնագլուխ դիմել գործողությունների[12]: Հետագայում նման երևույթները կանխելու համար ՀԱԲ-ի ռազմական խորհուրդը կոչ է արել՝ «Հայաստանի բոլոր քաղաքական կուսակցությունները և կազմակերպությունները իրենց զինված ուժերը մտցնեն Հայոց ազգային բանակի մեջ»[13]:

Այդ օրերին իրավիճակը խիստ սրվել էին նաև Արցախում և Շահումյան-Գետաշենում: Հայաստանից ԽՍՀՄ ժողովրդական մի խումբ պատգամավորներ, հունիսի 7-ին դիմելով Մ.Գորբաչովին, նշել են, որ «ռազմաքաղաքական դաժան ճնշումը, որին ենթարկվում է ԼՂԻՄ-ի հայ բնակչությունը... Ադրբեջանի այսպես կոչված հանրապետական կազմկոմիտեի կողմից... վերջին ամիսներին, հիրավի, հրեշավոր է դարձել»: Նրանք երկրի նախագահից պահանջում էին վերջ տալ «հայ ժողովրդի նկատմամբ ֆիզիկական և բարոյահոգեբանական ահաբեկչական գործողություններին... հայ ժողովրդի տառապանքներին ԼՂԻՄ-ում անհրաժեշտ պայմաններ ապահովել ինքնորոշման նրա բնական իրավունքի իրականացման համար»[14]: Ընդհատակ անցած ԼՂԻՄ Ազգային խորհուրդը, «Միացում» կազմակերպությունը և տնօրենների խորհուրդը որոշել էին չհամագործակցել հանրապետության կազմկոմիտեի հետ, որը, Ստեփանակերտ ժամանելով, անմիջապես մարզգործկոմի շենքի վրայից իջեցրել էր Հայաստանի դրոշը և փոխարենը դրել Ադրբեջանի դրոշը: ԼՂԻՄ-ի և Ադրբեջանական ԽՍՀ հարակից շրջանների արտակարգ դրության շրջանի պարետ, գեներալ Վ.Սաֆոնովի հրամանով «Սովետական Ղարաբաղ» թերթը ենթարկվելու էր արտակարգ դրության շրջանի պարետությանը, իսկ տպաքանակը տպագրվելու էր Ստեփանակերտում: Թերթը տարածվելու էր միայն մարզի տարածքում: Արգելվում էր թերթի էջերի բնօրինակները, մատրիցաները, ժապավենները և ստերեոտիպերը մարզի տարածքից դուրս բերել[15]: Այդ ժամանակ «Սովետական Ղարաբաղի» ռուսերեն տարբերակը առաքվում էր ԽՍՀՄ ավելի քան 300 քաղաք և ուներ 60 հազար բաժանորդ: Թերթի տպաքանակը հիմնականում տպագրվում էր Երևանում: Կատարել Վ.Սաֆոնովի հրամանը նշանակում էր Արցախը լրիվ կտրել դրսի աշխարհից: Թերթի խմբագրության աշխատակիցների, կուսակցական կազմակերպության և ստեղծագործական կոլեկտիվների համատեղ ժողովը, քննարկելով գեներալ Վ.Սաֆոնովի հրամանը, նշեց, որ այն կամայականորեն է մեկնաբանում հունվարի 15-ի հրամանագրի որոշ հոդվածներ, և որ, ըստ էության, պարետությունը ստանձնել էր մարզի քաղաքական ղեկավարման ֆունկցիան, որը լիովին հակասում էր ԽՍՀՄ Սահմանադրությանը: Ընդունված որոշման մեջ շեշտված էր, որ Ադրբեջանի լրատվամիջոցները շարունակում են բորբոքել ազգամիջյան երկպառակություն և ատելություն հայ ժողովրդի նկատմամբ: Այդ փաստը մեկ անգամ ևս հաստատում էր, որ արտակարգ դրությունը, մասնավորապես գրաքննությունը, տարածվում էր միայն ԼՂԻՄ-ի վրա և հետապնդում էր մարզի բնակչության կամքի ազատ արտահայտումը ճնշելու նպատակ: Ժողովականները գտնում էին, որ անհնարին է կատարել գեներալ Վ.Սաֆոնովի հրամանը[16]:

Այդ օրերին մամուլը հաղորդել է, որ Ստեփանակերտում չեն աշխատում հիմնարկ-ձեռնարկությունները, կապեր չկան Ստեփանակերտում գտնվող հանրապետական կազմկոմիտեի անդամների և տեղական իշխանությունների միջև[17]: Ընդհատվել էր Ստեփանակերտի և մարզի շրջանների կապը, իսկ հունվարի 31-ից փակվել էր Ստեփանակերտի օդանավակայանը: Արցախցիները հույս ունեին, թե մարտի 5-7-ը տեղի ունենալիք ԽՄԿԿ Կենտկոմի պլենումը Արցախի օգտին որևէ որոշում կընդուներ: Պլենումի նախօրյակին մարզի բոլոր մակարդակի ղեկավարների և Արցախից ժողովրդական պատգամավորների կողմից դիմումբողոք ուղարկվեց ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ, որտեղ մասամբ ասված է. «Անչափ բարդ իրավիճակում առնվազն անբարոյական է ԼՂԻՄ-ը այն հանրապետության հովանավորությանը բռնի վերադարձնելու հասնելը, որը բացահայտել է իր հակախորհրդային, շովինիստական էությունը», և անթույլատրելի է «ինքնավար մարզ ուղարկել Ադրբեջանի ներկայացուցիչներ...»: Նամակի

[12] *«Սովետական Հայաստան», 05.06.1990:*
[13] *Նույն տեղում:*
[14] *Նույն տեղում, 07.06.1990:*
[15] *«Երեկոյան Երևան», 12.02.1990:*
[16] *Նույն տեղում:*
[17] *«Սովետական Ղարաբաղ», 06.02.1990:*

հեղինակները պահանջում էին՝ կազմկոմիտեն հեռանա մարզի սահմաններից[18]: Սակայն այդ բողոքը ևս մնաց անհետևանք: Ընդհակառակը, մարզում ավելի ուժեղացվեց ճնշումը, և նոր թափ առան ծերբակալությունները: Ձերբակալվածները տարվում էին Ադրբեջանի կամ Ռուսաստանի բանտերը: Տասներկու ավտոմատավոր օրուգիշեր հսկում էին որպեսզի մարզխորհրդի գործկոմի շենքի վրայից չիջեցվի Ադրբեջանի դրոշը[19]: Վ.Սաֆոնովն Ադրբեջանի իշխանությունների առաջ պարծենում էր, թե հայերի մոտ ոչ մի հրացան ու դանակ չի թողնի, ադրբեջանական գյուղերում շինարարական աշխատանքները կշարունակվեն ավելի մեծ թափով և շինարարության մեջ կաշխատեն նույնիսկ զինվորականները: Ամեն օր որսում էին պայքարի ակտիվիստների, վառում հայերի տներ, կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների անասնապահական ֆերմաներ, դաշտային օթևաններ: Բարձրախոսներով և ռադիոհեռարձակման ցանցով անպատվում էին ԼՂԻՄ-ից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներին, մարզային և շրջանային հայազգի ղեկավարներին: Փորձում էին արցախցիների դեմ լարել Ստեփանակերտում տեղակայված 366-րդ հրաձգային գնդի և Հադրութի սահմանապահ ջոկատի զինվորներին: Ադրբեջանի կազմկոմիտեն տպագրում էր մեծ թվով թռուցիկներ և ուղղաթիռներով ցրում հայկական բնակավայրերի վրա: Այդ թռուցիկները լի էին կեղծիքներով և հակահայկական զրպարտություններով: Բաքվի այդ անզուսպ սադրանքներին տոն էր տալիս Մոսկվան: Օրինակ՝ 1990թ. փետրվարի 19-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանում Մ.Գորբաչովը հայտարարեց, թե ազգամիջյան երկպառակությունը ԼՂԻՄ-ից տարածվել է Բաքու և Դուշանբե: Ըստ նրա՝ ԽՍՀՄ-ում սկսած ազգամիջյան ընդհարումներն իբր սկսվել են ԼՂԻՄ-ից[20]: Լեռնային Ղարաբաղից ժողովրդական պատգամավոր Բորիս Դաղամյանն իր ելույթում ուղղակի հարցրեց, թե ինչպես կարող է 190 հազարանոց Լեռնային Ղարաբաղը սպառնալ 7 միլիոնանոց Ադրբեջանին: Վերջինիս կողմից ներկայացվող և Կենտրոնի կողմից պաշտպանվող սադրանքներն անհարիր են արցախցիների ազատագրական պայքարին: Արցախցիները, ասաց նա, երբեք ազգային ընդհարումների առիթ չեն տվել և չեն

[18] *«Երեկոյան Երևան», 12.02.1990:*
[19] *«Հայք», 28.01.1990:*
[20] *"Правда", 20.02.1990.*

վտանգել ռուս զինվորներին: Արցախցիների ռուսական կողմնորոշման 300 տարվա պատմությունը անժխտելի է[21]: Գորբաչովյան վերոհիշյալ կեղծիքը մերկացրեց նաև Զորի Բալայանը[22]: Այդ նստաշրջանում ելույթ ունեցած բոլոր 25 պատգամավորները, Բաքվում տեղի ունեցած վանդալիզմը դատապարտելուց բացի, ընդունեցին, որ Լեռնային Ղարաբաղի հայությունը գտնվում է գերու և պատանդի վիճակում: Նաև հնչեց այն միտքը, որ ադրբեջանական իշխանությունների նպատակն է հայերին դուրս քշել Ղարաբաղից, ինչպես դա արեցին Բաքվում[23]: ՆԳ նախարար Վ.Բակատինը, ռազմական նախարար Դ.Յազովը, պատգամավոր Մ.Պետրուշենկոն, Բաքվում տեղի ունեցածը խստորեն քննադատելով, գտնում էին, որ Լեռնային Ղարաբաղը պետք է դուրս բերել Ադրբեջանի կազմից և դնել Կենտրոնի ենթակայության տակ: Նույնիսկ խոսվում էր Լեռնային Ղարաբաղում նախագահական կարգ մտցնելու մասին, մինչդեռ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Ա.Լուկյանովը դա ժխտեց՝ ասելով, որ այդ մասին Մ.Գորբաչովը «ոչ մի մուրհակ էլ չի տվել»[24]:

Լեռնային Ղարաբաղի առաջ կանգնած կենսահույզ հարցերին լուծում տալու համար անհրաժեշտ էր հրավիրել ԼՂԻՄ մարզխորհրդի նոր նստաշրջան: Նստաշրջան հրավիրելու պահանջ ներկայացրին 59 պատգամավորներ: Նախատեսվեց այն հրավիրել մարտի 27-ին: Չնայած Վ.Պոլյանիչկոյի և Վ.Սաֆոնովի համառ ջանքերին՝ նրանց չի հաջողվում խափանել նստաշրջանի հրավիրումը: Նստաշրջանը, որի աշխատանքներին մասնակցեցին նաև մարզից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորները, միաձայն որոշեց ԽՍՀՄ Սահմանադրության հիման վրա, որպես ի կատարում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989թ. նոյեմբերի 28-ի որոշման, վերականգնել մարզխորհուրդը և նրա գործադիր կոմիտեն: Մարզխորհրդի գործադիր կոմիտեին հանձնարարվեց համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ մարզում աշխատանքային ռիթմը վերականգնելու, ժողովրդական տնտեսությունը նորմալ հունի մեջ դնելու և մարզի տարածքում բոլոր հարցերը ժողովրդական ուղիներով լուծելու համար[25]:

[21] **Арутюнян В. Б.,** *նշվ. աշխ., էջ 183-184:*
[22] *«Ականգարդ», 22.02.1990:*
[23] *Նույն տեղում:*
[24] *"Коммунист", 24.03.1990:*
[25] *ԼՂՀ ՊԱ, ֆ.1, ց. 2, գ. 296, թ. 6-8:*

Մարզխորհրդի նստաշրջանի հրավիրումը համբերությունից հանել էր Ադրբեջանի պարագլուխներին: Ադրկոմկուսի Կենտկոմի նորընտիր առաջին քարտուղար Այազ Մութալիբովը երդվեց՝ ինչ էլ որ լինի, Լեռնային Ղարաբաղում վերականգնել Ադրբեջանի իշխանությունը: Նա նույնիսկ Մարտունու շրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանից պահանջեց ներկայանալ Բաքու՝ մասնակցելու Կենտկոմի բյուրոյի ապրիլի 23-ի նիստին, որտեղ պետք է «քննարկվեր» նրա կուսակցական հարցը, սակայն ստացավ մերժում[26]: Պարզապես՝ արցախցիներին պատժելու առիթը Ադրբեջանը բաց չէր թողնում, իսկ Վ.Սաֆոնովը մասնագիտացել էր Արցախի տարբեր տեղերում սպանություններ կազմակերպելու գործում: Այսպես, նրա հրամանով, իբր զենք առգրավելու նպատակով, Մարտակերտի շրջան մեկնած զինվորականները Չայլու գյուղում գնդակահարեցին 12-ամյա Արմեն Մկրտչյանին: Այդ ոճրագործության առթիվ արցախաբնակ ուսուցչուհի Ելենա Բաղյակինան, Վ.Սաֆոնովին հղած նամակում պաշտպանելով արցախահայության պատմական իրավունքները, գտնում էր, որ «հուսալ, թե այդ հպարտ ու խիզախ ժողովրդին կարելի է սպառնալիքներով կամ շրջափակումներով ծնկի բերել, առնվազն միամտություն է: Ավելի լավ կլինի, եթե կառավարությունը վերջիվերջո լսի ժողովրդի ձայնը և ճանաչի նրա օրինական իրավունքը»[27]:

Ադրբեջանի իշխանությունները ձգտում էին ձախողել Արցախում Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունները: Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը, 1990թ. ապրիլի 21-ին քննարկելով ԼՂԻՄ-ում ստեղծված վիճակը, որոշեց մարզի բնակչությանն արգելել մասնակցելու Հայաստանի Գերագույն խորհրդի ընտրություններին[28]: Բացի այդ, Ադրբեջանի Գերագույն խորհուրդը որոշեց մարզի տեղանունների և վարչատարածքային բաժանման մեջ մտցնել փոփոխություններ: Նախ՝ Ստեփանակերտը վերանվանվեց Խանքենդ, Մարտունին՝ Խոջավենդ, Մարտակերտի շրջանը՝ Աղդարայի շրջան, Ասկերանի շրջանը՝ Խոջալուի շրջան, Շուշիի շրջանը ճանաչվեց որպես ադրբեջանական շրջան, Խոջալու գյուղը հայտարարվեց քաղաք՝ ստեղծելով Խոջալուի քաղխորհուրդ և Մեշալիի գյուղխորհուրդ, մասամբ ադրբեջանցիներով բնակվող Ստեփանակերտի Կրկժան թաղամասին տրվեց առանձին ադրբեջանական քաղաքատիպ ավանի կարգավիճակ, Մարտունի քաղաքի Խոջավենդ թաղամասը հայտարարվեց քաղաքատիպ ավան և շրջկենտրոն: Տողի և Հախուլուի ադրբեջանական թաղամասերը ճանաչվեցին առանձին գյուղեր: Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահության ապրիլի 21-ի այդ որոշումը քննարկման ենթարկվեց ապրիլի 29-ին տեղի ունեցած մարզխորհրդի գործկոմի նիստում, և այն որակվեց հակասահմանադրական, որը հետապնդում էր ազգայնամոլ նպատակ և ավելի էր բորբոքում վիճակը տարածքում: Ադրբեջանը կոպտորեն խախտում էր միութենական և սեփական օրենքները: Այդ որոշման նպատակը միանգամայն ակնհայտ էր. արհեստականորեն և անօրեն գրանցումների միջոցով բարձրացնել ադրբեջանական գյուղերի ստատուսը, խախտել ՍՍՀՄ Գերագույն խորհրդի 1989թ. նոյեմբերի 28-ի որոշման 7-րդ կետը և շարունակել տարածքում ստեղծել անկայուն վիճակ: Ընդունած որոշումը ԽՍՀՄ Գլխավոր դատախազությունից, ԽՍՀՄ Գերագույն խորհրդից և Սահմանադրական հանձնաժողովից պահանջում է կանխել այդ անօրեն որոշման կատարումը, հակառակ դեպքում մարզային իշխանությունները իրենցից վերցնում են պատասխանատվությունը[29]: Այդ անօրինության դեմ մարզխորհրդի գործադիր կոմիտեի և շրջխորհուրդների նախագահների ստորագրությամբ բողոք ուղարկվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը, ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության կոմիտեին և ԽՍՀՄ դատախազությանը, որը դարձյալ մնաց անհետևանք: Ավելին՝ Մոսկվա-Բաքու հանցավոր ուժերը ԼՂԻՄ-ի տարածքում մտցրին պատժիչ նոր ձև՝ անձնագրային ստուգում, որն իրագործվում էր չափազանց դաժանությամբ: Անձնագրային ստուգման անվան տակ մարդիկ ձերբակալվելով տարվում էին պարետատներ, որից հետո Շուշիի, Աղդամի, Միրբաշիրի, Ֆիզուլու, Ջեբրայիլի, Բաքվի և այլ բանտեր: Իսկ Շուշիի բանտը դարձել էր ղարաբաղցիների տանջարան: Ստուգելով հայերի տները՝ շորթում էին թանկարժեք իրերն ու դրամը, նրանց վախեցնում ադրբեջանական բանտեր տեղափոխելով: Այդ կեղտոտ գործողություններում ադրբեջանցիների հետ համագործակցում էին խորհրդային զինվորականներ, որոնցից շատերը դարձել էին դրամաշորթներ:

[26] *Նույն տեղում, էջ 207:*
[27] *«Երեկոյան Երևան», 07.04.1990:*
[28] *"Бакинский рабочий", 22.04.1990.*
[29] *ԼՂՀ ՊԱ, ֆ.1, գ. 298, թ. 8:*

1990թ. ապրիլին լրանում էր հայոց ցեղասպանության 75 տարին: Արցախի ազատագրական պայքարի ղեկավարները որոշեցին օգտագործել առիթը և Ստեփանակերտի եղբայրական գերեզմանոցում անցկացնել հանրահավաք: Ընդհատակում գործող «Միացում» կազմակերպությունը հրահանգել էր հանրահավաքներ և երթեր կազմակերպել նաև մարզի շրջկենտրոններում ու գյուղերում: Գեներալ Վ.Սաֆոնովը, տեղեկանալով այդ մասին, հրամայեց արգելել այդ միջոցառումները: Սակայն ապրիլի 24-ին Ստեփանակերտի եղբայրական գերեզմանոցում կազմակերպվեց սգո հանրահավաք, որին մասնակցեց մի քանի տասնյակ հազար մարդ: Արտակարգ դրության պայմաններում այդպիսի բազմամարդ հանրահավաքի կազմակերպումը եզակի դեպք էր, որտեղ խստորեն դատապարտվեց ցեղասպանությունը և մերկացվեցին հայերի նկատմամբ թուրք դահիճների բարբարոսությունները: Վ.Սաֆոնովի և Վ.Պոլյանիչկոյի կարգադրությամբ հաջորդ օրերին ձերբակալվեցին սգո միտինգում ելույթ ունեցածներն ու Շարժման մի խումբ ակտիվիստներ: Նրանց մի մասին տուգանեցին, իսկ մի մասին էլ տարան Պյատիգորսկի «Սպիտակ կարապ» բանտը, 37 հոգու էլ ենթարկեցին տնային կալանքի[30]: Ապրիլի վերջին մարզի ղեկավարների և ժողովրդական պատգամավորների կողմից Մոսկվա՝ կենտրոնական իշխանություններին և մամուլին ուղարկված բողոք–նամակում պահանջվում էր վերջ տալ նման բռնարարքներին: Այդ նամակում նաև նշված է, որ Լեռնային Ղարաբաղում արտակարգ դրություն մտցնելը ձեռնտու է միայն մարզի տարածքում գտնվող ադրբեջանական գյուղերին, որտեղ արագորեն կատարվում էր ապօրինի շինարարություն: Նամակի հեղինակները հավաստում էին, որ արցախահայության հետ դահճի լեզվով խոսելը ոչ մի արդյունք չի տա, և որ «ԼՂԻՄ-ում ստեղծված բարդ իրավիճակը պետք է դառնա ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հատուկ քննարկման առարկա և մարզում մտցվի նախագահական կառավարում»[31]: Այդ օրերին 50 հոգու ստորագրությամբ նման բովանդակությամբ հեռագիր ուղարկեցին նաև Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Վ.Մովսիսյանին[32]:

[30] *«Երեկոյան Երևան», 11.05.1990:*
[31] *«Սովետական Հայաստան», 27.04.1990:*
[32] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 818, թ. 40:*

Մոտենում էր Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունների օրը: Լեռնային Ղարաբաղից պատգամավորների թեկնածուները ստիպված էին ընտրողների հետ հանդիպել գաղտնի կամ էլ կիսաազատ պայմաններում: Այդուհանդերձ, ընտրությունն անցան կազմակերպված, առանց որևէ միջադեպի: Ընտրություններով զբաղվողները, արկղերը գրկած, գիշերը բնակարանից բնակարան էին անցնում և ընտրողներին քվեարկելու հնարավորություն ընձեռում: Կազմակերպիչները գործում էին վերին աստիճանի զգույշ, որովհետև գեներալ Վ.Սաֆոնովը նոր զորամասեր էր մտցրել մարզի տարածք և ամեն կերպ փորձում էր ծախողել ընտրությունները: Զինվորականները շրջապատել էին բոլոր ընտրական տեղամասերը և Ստեփանակերտում անընդհատ շրջող զրահամեքենաներից բարձրախոսներով սպառնում էին բանտարկել բոլոր նրանց, ովքեր կմասնակցեն ընտրություններին: Այդ ամենն արհամարհելով՝ Արցախի 100 հազար ընտրողների 94 տոկոսը մասնակցեցին ընտրություններին: Ըստ էության՝ դրանով Արցախը մեկ անգամ ևս անցկացրեց հանրաքվե: Արցախից Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորներ ընտրվեցին Սերժ Սարգսյանը, Գեորգի Պետրոսյանը, Համլետ Գրիգորյանը, Էդուարդ Ղուկասյանը, Վահրամ Աթանեսյանը, Սլավիկ Առուշանյանը, Մանֆրեդ Բախշյանը, Ռազմիկ Դանիելյանը, Գրիշա Բաղյանը, Վիգեն Շիրինյանը և Զավեն Իշխանյանը: Նրանցից բացի, Չարենցավանի 143-րդ ընտրատարածքում կրկին պատգամավոր ընտրվեց բանտում գտնվող Արկադի Մանուչարովը, իսկ Կիրովականի 199-րդ ընտրատարածքում՝ Ռոբերտ Քոչարյանը: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորներ ընտրվեցին նաև արցախյան շարժման նվիրյալներ Վլադիմիր Աղաջանյանը, Ռազմիկ Պետրոսյանը և Ռոլես Աղաջանյանը:

Ինչպես սպասվում էր, կենտրոնական իշխանություններն անվավեր հայտարարեցին մայիսի 20-ին Արցախում անցկացված ընտրությունները: Իսկ Բաքվում որոշվեց ավելի խիստ պատժել արցախահայերին: Մայիսի վերջին ազերիները մի շարք վայրագ գործողություններ կատարեցին Ավդուռ, Մյուրիշեն, Մաճկալաշեն, Քաջավան, Քարինտակ և տասնյակ այլ գյուղերում: Անձնագրային ռեժիմի ստուգման և զենք առգրավելու պատրվակով բարբարոսներն ավերեցին բազմաթիվ գյուղեր և բնակարաններ, պետական ու հասարակական շինություններ, մի շարք կոլտնտեսություններ զրկվեցին հազարավոր հեկտար հողատարածու-

թյուններից և մի քանի հազար գլուխ անասուններից[33]: Գեներալ Վ.Սաֆոնովի հրամանով հերկվեց Մարտակերտի օդանավակայանը, որպեսզի ոչ մի ինքնաթիռ այնտեղ վայրէջք չկատարի: Մայիսի 23-ին Տողում օմօնականները ձերբակալեցին հինգ հայի և տարան Ֆիզուլի: Մայիսի 24-ին Ստեփանակերտում տեղի ունեցած զինվորականների շքերթի ժամանակ քաղաքի բնակչության և զորքի միջև տեղի ունեցավ ընդհարում: Վ.Սաֆոնովի հրամանով մայիսի 24-ից Ստեփանակերտում արգելվեց սեփական ավտոմեքենաների երթևեկությունը, փողոցներում և բնակարաններում մարդկանց խմբվելը, փակվեցին քաղաքի բոլոր ճաշարաններն ու խորտկարանները: Մայիսի 28-ից անջատվեցին բոլոր ղեկավարների հեռախոսները: Մայիսի 31-ին մարզի բոլոր շրջկենտրոններում տեղի ունեցան զինվորական շքերթներ: Այդ ամենը ցույց էր տալիս, թե խորհրդային վերադաս մարմինները Լեռնային Ղարաբաղում ինչպիսի մարտավարություն էին իրականացնում: Ներկայացված բողոքների հետ կապված՝ գեներալ Յու.Շատալինը կրկին Արցախ եկավ մայիսի 22-ին և նույնիսկ եղավ Մարտակերտում: Ենթադրվում է, որ հենց այդ տխրահռչակ գեներալի հետ է կապված Կամո և Ազատ գյուղերի հայաթափումը, ինչպես նաև 1990թ. մայիսի 27-ին Երևանում տեղի ունեցած ողբերգությունը[34]: Չբավարարվելով տարբեր հասցեներով ուղարկված բազմաթիվ բողոքներով՝ մայիսի 12-ին Արցախից Մոսկվա մեկնեց մի նոր պատվիրակություն, որը, մինչև մայիսի 21-ը մնալով այնտեղ, հանդիպեց ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Ա.Գիրենկոյի, ինչպես և Գ.Տարազևիչի հետ ու փորձեց նրանց համոզել Լեռնային Ղարաբաղում կուսակցական և պետական մարմինների վերականգնման անհրաժեշտությունը: Պատվիրակությունը հանգամանորեն ներկայացրեց մարզում ստեղծված ծանր վիճակը: Նրանք բացատրեցին, որ Բաքվից Ղարաբաղ ուղարկված կազմկոմիտեն մեռելածին է, և որ մարզում ոչ ոք չի ճանաչում նրա գոյությունը: Պատվիրակությունը առաջարկեց կազմկոմիտեի փոխարեն ստեղծել մարզային կոմիտե, որի խնդիրը պետք է լիներ կուսակցության մարզկոմի անհապաղ վերականգնումը: Պատվիրակության հետ վերջին հանդիպման ժամանակ Ա.Գիրենկոն խորհուրդ տվեց լեզու գտնել Ադրբեջանի

[33] Աբրահամյան Հ., *Երբ հայրենիքը վտանգի մեջ է, էջ 17:*
[34] Ուլուբաբյան Բ., *Նշվ. աշխ., էջ 166:*

իշխանությունների հետ և հարցը վճռել կազմկոմիտեի միջոցով[35]: Սակայն Ադրբեջանի իշխանությունների պահանջը միանշանակ էր՝ Լեռնային Ղարաբաղը պետք է ընդունի Բաքվի գերիշխանությունը: Մայիսի երկրորդ կեսին կրկին Բաքու կանչվեց Մարտունու կուսշրջկոմի առաջին քարտուղար Վ.Գրիգորյանը՝ իբր պարզելու, թե ինչու Մարտունու կուսշրջկոմը չի ենթարկվում Ադրբեջանի իշխանություններին: Բացի այդ, Վ.Գրիգորյանը մեղադրվում էր շրջանում ազգամիջյան ընդհարումներ տեղի ունենալու և անջատողական քաղաքականություն վարելու համար: Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմը, առանց որևէ հիմնավորման, Վ.Գրիգորյանին հեռակա հեռացրեց զբաղեցրած պաշտոնից և ԽՄԿԿ շարքերից[36]:

1990թ. հունիսի 1-ի առավոտյան Ստեփանակերտը վերածվել էր ռազմական ճամբարի: Գեներալ Վ.Սաֆոնովը քաղաքը լցրել էր զինվորներով, տանկերով և զրահամեքենաներով: Միայն հաջորդ օրը՝ հունիսի 2-ին, հայտնի դարձավ, որ Ադրբեջանի նախագահ Ա.Մութալիբովը բարեհաճել էր ժամանել Ստեփանակերտ և մեդալներ հանձնել դահիճ Վ.Սաֆոնովին, ռազմական պարետության քաղբաժնի պետ, գնդապետ Պ.Բոգոդուխովին և ԼՂԻՄ պետանվտանգության կոմիտեի նախագահ, գնդապետ Ե. Վոյկովին: Հետո նա այցելել է Խոջալու և մասնակցել գործվածքային ֆաբրիկայի բացման արարողությանը: Նա իր ելույթում չմոռացավ հայտարարել, թե արցախահայերը Ղարաբաղում եկվորներ են և հյուրեր:

Ադրբեջանի ղեկավարությունը որդեգրել էր մարզի կուսակցական և խորհրդային մարմինների վերացման քաղաքականություն: Այսպես՝ 1990թ. հունիսի 18-ին զինված ջոկատներով Հադրութ ժամանելով՝ Վ.Պոլյանիչկոն և Ե.Վոյկովը շրջապատեցին կուսշրջկոմի շենքը, ներխուժեցին կուսշրջկոմի առաջին քարտուղար Գրիշա Բաղյանի առանձնասենյակը, այնտեղ հրավիրեցին կուսշրջկոմի բյուրոյի անդամներին և լկտիաբար հայտարարեցին, թե կուսշրջկոմի առաջին քարտուղար Գրիշա Բաղյանը հեռացված է կուսակցության շարքերից ու զբաղեցրած պաշտոնից, կասեցված է Հադրութի կուսշրջկոմի գործունեու-

[35] **Арутюнян В. Б.,** *Նշվ. աշխ., էջ 261-263: Պատվիրակության կազմը՝ մարզկոմի բաժնի վարիչներ Վ. Գրիգորյան, Յու. Սահակյան, Է. Վարդանյան, Ս. Ղաղայան և Ա. Պողոսյան:*
[36] *"Бакинский рабочий", 24.05.1990.*

թյունը, որի փոխարեն կազմակերպվում է Հադրութի շրջանային կազմակերպչական բյուրո՝ ոմն Մ.Զուբկովի նախագահությամբ: Վ.Պոլյանիչկոն անամոթաբար սպառնում էր, որ եթե չկատարվեն այդ պահանջները, ապա Հադրութի շրջանից կարտաքսվեն բոլոր հայերը[37]: Դա երբեք էլ զարմանալի չէր, որովհետև հունվարի 12-ի հրամանագրով Մ.Գորբաչովը կասեցրել էր ԼՂԻՄ մարզկոմի և մարզխորհրդի գործունեությունը, հիմա էլ Ա.Մութալիբովը նույնը կրկնում էր մարզի շրջկոմների և շրջխորհուրդների նկատմամբ ու փորձում այդ ճանապարհով տեղերում հաստատել Ադրբեջանի բռնատիրություն: Հադրութում կատարվածը ավարտվեց նրանով, որ Վ.Սաֆոնովի հրամանով հունիսի 21-ին ձերբակալվեցին շրջանի տասնյակ ակտիվիստներ և տարվեցին Ֆիզուլի:

1990թ. հունիսին Բուտիրյան կալանքից ազատվեց «Կռունկի» նախագահ Արկադի Մանուչարովը, և վերադառնալով Արցախ՝ շարունակեց իր գործունեությունը՝ նախ և առաջ կատարելով Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորի իր պարտականությունները: Արցախի ազատագրական պայքարի ազատամարտիկը վերջապես ազատության մեջ էր, որը դեռևս անելու շատ բան ուներ:

Արցախ-Ղարաբաղի նկատմամբ օրավուր սաստկացող բռնությունների հանդեպ Հայաստանի իշխանությունները չէին կարող անտարբեր գտնվել: Հայկոմկուսի Կենտկոմը, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Նախարարների խորհուրդը հանդես գալով համատեղ հայտարարությամբ, մերկացրին Ադրբեջանի բռնարարքները, որոնց նպատակն էր վերացնել ԼՂԻՄ-ը: Հայաստանի իշխանությունները կոչ էին անում վերականգնել ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի իրավունքները, վերացնել շրջափակումը, հունվարի 15-ին մտցված արտակարգ դրությունը և լուծարել Ադրբեջանի հանրապետական կազմկոմիտեն[38]:

Արցախն ապրում էր իր ծանր շրջանը: Այնտեղ համատարած քաղաքական անհնազանդությունը դարձել էր նրա ազգային-ազատագրական պայքարի ամենազորեղ զենքը: Հայաստանը արցախահայության անվտանգության միակ երաշխավորն էր: Ամենակարևորը՝ արցախյան բարդույթի քաղաքական լուծումն է, որի համար մեծագույն ջանքեր էին գործադրվում թե՛

[37] *Նույն տեղում, 21.06.1990:*
[38] *«Սովետական Հայաստան», 24.06.1990:*

Արցախում և թե՛ Հայաստանում: Ի պատասխան դրան՝ Ադրբեջանի իշխանությունները տենդագին ձգտում էին փոխել մարզի ժողովրդագրական հաշվեկշիռը՝ հոգուտ ազերիների: Մի կողմից մեծ թվով ազերիներ էին տեղափոխվում ու բնակեցվում Արցախի տարածքում, իսկ մյուս կողմից էլ փորձեցին փակել Հայաստանից և այլ տեղերից երկրամաս տեղափոխվողների ճանապարհը: Ադրբեջանի Գերագույն խորհուրդը 1990թ. հունիսի 11-ին որոշում ընդունեց հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով Ադրբեջանի տարածքում հինգ կիլոմետրանոց լայնությամբ ռազմական գոտի ստեղծելու մասին: Մոսկվան Հայաստանից պահանջեց ընդունել համանման որոշում, սակայն Հայաստանի Գերագույն խորհուրդը մերժեց: Որ Մոսկվան և Բաքուն բացահայտորեն վարում էին հայասպան քաղաքականություն, այդ մասին բացեիբաց նշեց Անդրեյ Սախարովը՝ ֆրանսիական «Ֆիգարո» թերթին տված հարցազրույցում: Նա ասաց. «Միխայիլ Գորբաչովին սպառնում է պատմության մեջ հայերի երկրորդ ցեղասպանության պատասխանատու մնալու վտանգը»[39]: Մինչդեռ Մ.Գորբաչովը հետևյալ կերպ էր դատում. «Եթե մենք հիմա մեզ թույլ տանք ներքաշվել սահմանազատման, պառակտումների, տարանջատումների մեջ, ապա դա պարտության կմատնի կոմունիստական շարժումը, կթուլացնի այն և հնարավորություններ կստեղծի մյուս քաղաքական ուժերի դիրքերի ուժեղացման համար»[40]: Նա չարաչար սխալվում էր. չէ՞ որ ի վերջո պարտվեց նրա պաշտպանած «կոմունիստական շարժումը», և այն մերկացրեց իրեն: Իրականացվե՞ց սահմանազատում: Եվ ինչո՞ւ երկրի առաջին դեմքը կուրորեն դա չէր ուզում տեսնել:

Արցախից ընտրված պատգամավորները պատրաստվում էին մեկնել Երևան՝ մասնակցելու Գերագույն խորհրդի նստաշրջանին: Վ.Սաֆոնովը և Վ.Պոլյանիչկոն փորձում էին արգելել նրանց Երևան մեկնել՝ չխորշելով ամեն տեսակ խարդավանքներից: Օրինակ՝ հուլիսի 18-ին կազմկոմիտեն հրապարակեց արցախահայությանը տեղահանելու պլանը: Այդ հրեշավոր գործողությունը պետք է իրագործվեր միաժամանակ մարդատար ավտոմեքենաներով և գնացքներով: Վ.Պոլյանիչկոն չթաքցրեց, որ այն քննարկվել է Ադրկոմկուսի Կենտկոմի բյուրոյում և արժանացել հավանության: Համաձայն այդ պլանի՝ նախ պետք է

[39] *«Գրական թերթ», 07.09.1990:*
[40] *"Правда", 29.06.1990.*

արտաքսվեին Շարժման ղեկավարները, ակտիվիստները, բոլոր մակարդակի պատգամավորները և աչքի ընկնող այլ անձինք: Հետո պիտի հաշվեհարդար տեսնեին մնացած բնակչության հետ: ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Զորի Բալայանը և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Ռոբերտ Քոչարյանը հուլիսի 20-ին Հայաստանի խորհրդարան ուղարկած հեռագրում պահանջեցին Ադրբեջանի իշխանությունների այդ չարանենգ պլանի մասին տեղյակ պահել հանրապետության բնակչությանը, աշխարհասփյուռ հայությանը և աշխարհի բոլոր երկրների խորհրդարաններին: «Թող բոլորն իմանան,– ասված է հեռագրում,– որ դարաբաղցիները, ինչպես դա եղել է բոլոր ժամանակներում, չեն լքի հայրենի հողը և կպաշտպանեն իրենց օջախները»[41]: Ադրբեջանի հանցավոր ուժերը՝ դիմելով նման սադրանքի, փորձում էին Արցախում իրագործել պանթուրքիստներին բնորոշ տեղահանությունների և ջարդերի զուգորդման գործելակերպը:

Արցախից ընտրված պատգամավորները մեկնեցին Երևան: Հայաստանի նորընտիր խորհրդարանն իր աշխատանքները սկսեց խիստ լարված պայմաններում: Հիշականների ճնշման տակ տասնյակ կոմունիստ-պատգամավորներ, հրաժարվելով իրենց սկզբունքից, քվեարկեցին Գերագույն խորհրդի նախագահի համար ՀՀՇ-ական թեկնածուի օգտին: Օգոստոսի 4-ի նիստում Լևոն Տեր-Պետրոսյանն ընտրվեց Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ: Փոխնախագահ ընտրվեց Բաբկեն Արարքցյանը: Մի քանի օր անց Նախարարների խորհրդի նախագահ նշանակվեց Վազգեն Մանուկյանը: Այսպիսով՝ ՀՀՇ-ական քաղաքական «գործիչների» առաջ բացվեց երկիրը թալանելու, տասնամյակների ընթացքում ստեղծված ազգային սեփականությունը փոշիացնելու, հանրապետությունում ահաբեկչությունը փարթամացնելու և հայ ժողովրդի նկատմամբ սպիտակ տեռոր իրականացնելու բոլոր ուղիները: Հանրապետության Գերագույն խորհուրդը օգոստոսի 6-ին հայտարարեց. «Հայաստանի իշխանությունները կարճ ժամանակի ընթացքում ի վիճակի են սեփական ուժերով լուծելու հանրապետության ներքին կյանքի... հանրապետության քաղաքական-հասարակական վիճակի կայունացմանն ուղղված բոլոր խնդիրները, պայմանով, որ բացառված լինի արտաքին միջամտությունը»[42]: Ավելի ինքնավստահ էր

[41] *«Դրոշակ», N8, 1990, էջ 7:*
[42] *«Հայք», 09.09.1990:*

Լ.Տեր-Պետրոսյանի՝ հայ ժողովրդին ուղղված դիմումը և խորհրդարանում նրա արտասանած ճառը: Նա նախ հայ ժողովրդին շնորհակալություն հայտնեց իշխանությունը իրեն մատուցելու համար, ապա ամեն ինչի մասին տվեց վարդագույն խոստումներ, բացի Արցախի հիմնախնդրից: Եվ պատահական չէր, որ երբ քննարկվում էր Հայաստանի անկախության Հռչակագրի նախագիծը, որոշ պատգամավորներ դժգոհություն հայտնեցին, որովհետև նրանում ընդամենը գրեթե ոչինչ չասող երկու արտահայտություն կար Արցախի մասին[43]:

1990թ. հուլիսի 25-ին հրապարակվել էր ԽՍՀՄ նախագահի հրամանագիրը, որը Հայաստանի իշխանություններից պահանջում էր զինաթափ անել բոլոր զինվածներին, բացի բանակից և ներքին ուժերից: Լևոն Տեր-Պետրոսյանը հնարավոր էր համարում ոչ միայն զինաթափ անել, այլև Ադրբեջանի հետ սկսել անմիջական բանակցություններ[44]: Անկասկած, Սաֆոնով-Պոլյանիչկո հանցախումբն ուշադիր հետևում էին Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանի աշխատանքներին և փորձում նոր ճնշում գործադրել Արցախի վրա: Նրանք սեպտեմբերի 7-ին շրջապատեցին Մարտունու կուսշրջկոմի շենքը՝ ցանկանալով կրկնել Հադրութում և Շահումյանում կատարվածը: Սակայն մարտունեցիները չենթարկվեցին սադրանքի և դահիճներին հարկադրեցին հեռանալ քաղաքից: Արցախում տեղի ունեցած համանման մի շարք փաստեր ի նկատի ունենալով՝ Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Վ.Մովսիսյանի՝ Մ.Գորբաչովին հղած նամակում, Կենտրոնին և Բաքվին մեղադրում էր Շահումյանի շրջանում, Գետաշենում և Արցախում հայության դեմ իրագործվող չարագործությունների, Լեռնային Ղարաբաղի իշխանությունների վերականգնումը դիտավորյալ հետաձգելու և երկրամասում ազգամիջյան պատերազմն անխուսափելի դարձնելու համար: Մ.Մովսիսյանը զգուշացնում էր, որ այդ և նման բազմաթիվ հարցեր չլուծելու պատճառով ինքը ստիպված կլինի հրաժարական տալ և դուրս գալ ԽՄԿԿ Կենտկոմի

[43] *Հայաստանի Գերագույն խորհուրդը ստեղծեց Արցախի հարցերով հատուկ հանձնաժողով, որի կազմի մեջ մտան Համլետ Գրիգորյանը, Սլավիկ Առուշանյանը, Գրիշա Բաղյանը, Էդուարդ Ղուկասյանը, Ռոբերտ Քոչարյանը, Գեորգի Պետրոսյանը, Ռազմիկ Պետրոսյանը և Վիգեն Շիրինյանը:*
[44] *"Московские новости", N38, 19.08.1990.*

քաղբյուրոյի կազմից[45]:

Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վրա ճնշումն ուժեղացնելու նպատակով՝ 1990թ. սեպտեմբերի 4-ին Ստեփանակերտի օդանավակայանում ԽՍՀՄ ներքին զորքերի կողմից «ձերբակալվեցին» Հայաստանի քաղաքացիական ավիացիային պատկանող հինգ «Յակ-40» ինքնաթիռ: Հաջորդ օրը դա կրկնվեց վեց ինքնաթիռի նկատմամբ: Ինքնաթիռների հրամանատարները և Արցախից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորները բողոքհեռագիր ուղարկեցին ԽՍՀՄ ներքին զորքերի նախարար Վ.Բակատինին և քաղաքացիական ավիացիայի նախարար Վ.Պանյուկովին՝ պահանջելով վերջ տալ այդ ապօրինությանը: Բացի այդ, ԼՂԻՄ մարզգործկոմի նախագահ Սեմյոն Բաբայանը, Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար Վալերի Աթաջանյանը և քաղխորհրդի նախագահ Մաքսիմ Միրզոյանը ԽՍՀՄ կապի նախարար Է.Պետրուշինին ուղարկած հեռագրում դատապարտում են Մոսկվայի հետ Լեռնային Ղարաբաղի հեռախոսակապի անջատումը[46]: Արցախից մի խումբ պաշտոնյաներ և ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ՝ սեպտեմբերի 11-ին Վ.Բակատինին ուղարկած բաց նամակում շարադրելով արտակարգ դրության շրջանի պարետության և նրան ենթակա ներքին զորքերի կողմից Արցախում իրագործվող հակահայկական գործողությունները, խնդրում էին լրջորեն զբաղվել և ներքին գործերի նախարարության ԼՂԻՄ-ում գտնվող զորքերից պահանջել կատարել իրենց անմիջական պարտականությունները[47]: Այդ նամակում նաև շեշտված է, որ ներքին զորքերը՝ դուրս գալով իրենց տրված իրավունքներից, սկսել են միջամտել մարզի տնտեսական և քաղաքական հարցերին, պաշտպանել Ադրբեջանի օմոնականներին, մասնակցել հայերին իրենց բնակավայրերից տեղահանելուն, ավելի ակտիվորեն ներգրավվել մարզի շրջաններում խորհրդային և կուսակցական մարմինների լուծարքի ենթարկման, մարզը կազմացրելու գործում[48]: Որպես այդ նամակի շարունակություն է հանդիսանում Մարտունու, Ասկերանի և Հադրութի կուսշրջկոմների առաջին քարտուղարներ Օ.Եսայանի, Վ.Քոչարյանի և Գ.Բաղյանի՝ Մ.Գորբաչովին և մյուս

[45] *"Голос Армении", 05.09.1990.*
[46] *Նույն տեղում, 09.09.1990:*
[47] *«Սովետական Ղարաբաղ», 13.09.1990:*
[48] *Նույն տեղում:*

ղեկավարներին սեպտեմբերի 14-ին գրած բողոք-նամակում, որտեղ նշված է, որ ԼՂԻՄ-ի տարածքում Ադրբեջանի ղեկավարության կողմից կազմակերպվող սադրանքների վերաբերյալ միութենական բոլոր ատյաններին հղված բազմաթիվ դիմումները մնում են անարձագանք, ինչը հանրապետության պաշտոնական շրջաններին ոգեշնչում է հակահայկական նոր ձեռնարկումների: Ապա նշված է, որ ՆԳ նախարարության զինված մի խումբ սպաներ սեպտեմբերի 7-ին ներթափանցել են Մարտունու, սեպտեմբերի 14-ին՝ Ասկերանի շրջկոմների և շրջգործկոմների շենքերը ու փորձել դրանք գրավել ուժով: Այդ սադրանքները պաշտպանում էին զինվորական դատախազությունները: Նամակի հեղինակները պահանջում էին վերջ տալ նման անօրինություններին[49]: Որ ՆԳ նախարարությունը նպաստում էր հակահայկական գործողությունների ակտիվացմանը, նաև վկայում է հետևյալ փաստը. այդ նախարարության զորքերի հրամանատար, գեներալ Յու.Շատալինը, 1990-ի սեպտեմբերի 16-ին հանդես գալով «Վրեմյա» ծրագրով, հայ ժողովրդին մեղադրում էր ազգամիջյան հակասություններ բորբոքելու մեջ: Խորհրդային Միության հերոս, գեներալ-մայոր Ա.Ամատունին Շատալինին հղած պատասխան բաց նամակում նրա ելույթը բնորոշեց իբրև «կոպիտ պրովոկացիա», որը «ոչ թե նպատակ ունի կայունացնելու իրավիճակը տարածքում, այլ՝ ավելի խորացնելու հակասությունները»[50]: Սակայն կենտրոնական իշխանությունները, շարունակելով իրենց հակահայ քաղաքականությունը, ամեն կերպ փորձում էին տարածքում խորացող հակասությունների հիմնական մեղքը բարդել արցախահայության վրա: Արտակարգ դրության շրջանի պարետի պաշտոնակատար գնդապետ Վ.Ավչիննիկովը ԼՂԻՄ քաղաքացիներին սեպտեմբերի 14-ին հղած դիմումում մարզում որպես իրավիճակի սրման հիմնական պատճառ համարում էր Արցախի «ծայրահեղորեն տրամադրված քաղաքացիների և խուլիգանամետ տարրերի գործողությունները Ասկերանի, Հադրութի և Մարտունու շրջկենտրոններում», որոնք «ուղեկցվում են քաղաքացիների մեծ հավաքներով, շրջկոմների զավթումով և զինվորական անձնակազմի հասցեին սպառնալիքներով»: Նա նաև նշել է, որ մարզում լայն տարածում է ստացել այսպես կոչված «քարե պատերազմը», որին ակտիվորեն

[49] *Նույն տեղում, 18.09.1990:*
[50] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 814, թ. 28:*

մասնակցում են դպրոցականներն ու դեռահասները: Նա խոստանում էր դրա դեմ «կիրառել խստիվ միջոցներ»[51]: Սակայն հենց այդ օրերին, մեկ այլ զինվորական՝ փոխգնդապետ Ալեքսանդր Ա. Իշչուկը, հանդես գալով Հայաստանի հեռուստատեսությամբ, մեղադրում էր ԽՍՀՄ իշխանություններին, որոնց պահանջով ներքին զորքերը, մանավանդ Լեռնային Ղարաբաղում, օգտագործվում էին խաղաղ բնակչության դեմ: Ա.Իշչուկը գտնում էր, որ նպատակահարմար չէ «վերացնել արտակարգ դրության ռեժիմը և ներքին զորքերը դուրս բերել Հայաստանից, քանի որ դա ավելի կսրեր իրադրությունը ԼՂԻՄ-ում և ադրբեջանական սպառազեն կազմավորումներին հնարավորություն կտար ներխուժել երկրամաս ու հայերի նկատմամբ հաշվեհարդար տեսնել»[52]:

1990թ. սեպտեմբեր-հոկտեմբերին քանի գնում, վիճակն ավելի էր ծանրանում: Հայության բողոքի նոր արտահայտություն հանդիսացավ Մոսկվայում սեպտեմբերի 9-ից Զորի Բալայանի հացադուլի նստելը: Սեպտեմբերի 12-ին նրան միացավ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, 13-ին՝ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, դերասան Սոս Սարգսյանը, Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահ, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Վաչագան Գրիգորյանը, ԼՂԻՄ-ի մարզխորհրդի նախագահ Սեմյոն Բաբայանը, Լեռնային Ղարաբաղի մի շարք պատասխանատու աշխատողներ, ինչպես նաև տաջիկ և ուզբեկ գիտնականներ Ռոստամ Շուքուրովն ու Սուրաբ Շարաֆուտդինովը: Հացադուլավորները պահանջում էին վերջ տալ Արցախում տեղի ունեցող ապօրինություններին և լուծել երկրամասի հիմնախնդիրը: Աշխարհի շատ ազնիվ մարդիկ ցնցված էին հացադուլավորների այդ խիզախ արարքից:

Օր օրի հացադուլավորների առողջական վիճակը ծանրանում էր: Սեպտեմբերի 29-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի խնդրանքով հացադուլը դադարեցվեց: Հացադուլավորների օրինական պահանջը Կենտրոնն անպատասխան թողեց: Սակայն այդ օրերին Հայաստանի Գերագույն խորհուրդը, դիմելով աշխարհի բազմաթիվ երկրների խորհրդարաններին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդարանի նստաշրջանին և ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովին՝ կոչ արեց պաշտպանել հայ

[51] *«Սովետական Ղարաբաղ», 14.09.1990:*
[52] *Նույն տեղում:*

ժողովրդի օրինական պահանջը[53]: Իսկ Հայկոմկուսի Կենտկոմի պլենումը սեպտեմբերի 22-ին ընդունեց որոշում՝ «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում խորհրդային և կուսակցական մարմինների վերականգնման մասին», որտեղ երկրի նախագահից և ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյից պահանջում էր անհապաղ միջոցներ ձեռնարկել վերականգնելու խորհրդային իշխանության սահմանադրական մարմինները ԼՂԻՄ-ում, ինչպես նաև մարզի կուսակցական կոմիտեները, ԼՂԻՄ-ից, Շահումյանի շրջանից և Գետաշենից դուրս բերել ադրբեջանական բոլոր անօրինական կազմավորումները, վերացնել ԼՂԻՄ-ի և Հայաստանի Հանրապետության քաղաքական, տնտեսական, տրանսպորտային և լրատվական շրջափակումները՝ մարզի ու հանրապետության կանոնավոր կենսագործունեությունն ապահովելու համար: Հայաստանի կոմկուսը, բարձր գնահատելով հացադուլավորների հայրենասիրական և անձնվեր քայլը, խնդրեց նրանց դադարեցնել այդ ծայրահեղ միջոցը՝ հացադուլը[54]:

1990թ. սեպտեմբերյան այդ օրերին, ի պատասխան Արցախ-Շահումյանում ազերիների և խորհրդային ուժերի գործադրվող դաժանություններին, սեպտեմբերի 25-ին կանգ էին առել Ստեփանակերտի բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները, շինհարթակները, կազմակերպություններն ու հիմնարկները, առևտրի և բնակչության կենսապահովման օբյեկտները, դադարեցվել էին ուսումնական հաստատությունների պարապմունքները: Լենինի անվան հրապարակն ու դրան հարող փողոցները շրջապատված էին ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի զինվորներով, զրահամեքենաներով, ռազմական այլ տեխնիկայով: Ժողովրդի հավաքատեղին դարձել էր քաղաքի գլխավոր՝ Կիրովի պողոտան: Ցուցարարների պաստառների վրա գրված էր. «Կորչի կազմկոմիտեն», «Պոլյանիչկո՛, դո՛ւրս Ղարաբաղից, Ղարաբաղն Աֆղանստան չէ», «Զինվորնե՛ր, մի կրակե՛ք ձեր եղբայրների վրա», «Զինվորնե՛ր, մի՛ ենթարկվեք սադրանքների, Արցախի ժողովուրդը ձեր դեմ չէ», «Ժողովրդական բանակը պետք է լինի ժողովրդի հետ»: Զինվորները, ճիշտ գնահատելով ստեղծված իրավիճակը, ցուցաբերեցին սառնասրտություն և զսպվածություն[55]:

[53] *«Սովետական Հայաստան», 14.09.1990:*
[54] *«Սովետական Ղարաբաղ», 25.03.1990:*
[55] *Նույն տեղում, 27.09.1990:*

ելնելով ստեղծված վիճակից՝ ժողովրդական պատգամավորների ԼՂ մարզային, քաղաքային, շրջանային խորհուրդների պատգամավորները սեպտեմբերի 27-ին նոր բողոք-նամակ հղեցին ԽՍՀՄ նախագահ Մ.Գորբաչովին, պետական և կուսակցական մյուս մարմիններին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին, որտեղ զայրույթով նկարագրված է ԼՂԻՄ-ում տեղի ունեցող բռնությունների մասին: Նամակի հեղինակները հայտնում էին, որ մարզի աշխատավորները 24 ժամով դադարեցրել են աշխատանքը և շրջապատել բիրտ ուժով զավթված կուսակցության մարզկոմի շենքն ու պահանջել՝ այնտեղից հեռանա հանրապետական կազմկոմիտեն: Նաև նշված է, որ Ադրբեջանի իշխանությունները հայերի նկատմամբ գործադրում են բարոյական և ֆիզիկական ահաբեկչություն, ամեն միջոց գործադրում են, որպեսզի արցախահայությունը հրաժարվի ազգային ինքնորոշման գաղափարից: Փաստորեն իրագործվում է ցեղասպանություն: Ապա շեշտված է, որ արցախահայությունը պատրաստ է մինչև վերջ մարտնչել իր ազատության համար, և ոչ մի արցախցի չի նահանջի, պայքարը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ ողջ է նրանցից թեկուզ մեկը[56]:

1990թ. սեպտեմբերի 22-ին Մոսկվայում տեղի ունեցավ ազգային-պետական և ազգային-տարածքային կազմավորումների ներկայացուցիչների առաջին համագումարը, որի աշխատանքներին մասնակցեց նաև ԼՂ պատվիրակությունը: Համագումարն ընդունեց դիմում ԽՍՀՄ ինքնավար կազմավորումներին և որոշում, որոնցում ԽՍՀՄ բարձրագույն իշխանություններից պահանջվեց վերականգնել ԼՂ մարզային խորհուրդը և ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերին հեռու պահել մարզի քաղաքական ու տնտեսական կյանքին միջամտելուց: Ընդունված որոշման մեջ ասված է. «Համագումարն անթույլատրելի է համարում ազգային ինքնավարությունները վերացնելու, իշխանության սահմանադրական կառուցվածքների լուծարմամբ, տնտեսական ինքնուրույնության և հոգևոր զարգացման ազատության սահմանափակմամբ նրանց օրինական իրավունքներից զրկելու միաբենակա և հանրապետական իշխանությունների ամեն մի փորձ»: Համագումարը նշում է, որ նման գործողությունները հակասում են միջազգային իրավունքին, և դրանք որակում է իբրև ապարտեիդ: Համագումարը դատապարտում է ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզային խորհրդի լուծարումը, դա գնահատում իբրև բոլոր ինքնավարությունների ապագայի համար անկանխատեսելի հետևանքներ ունեցող նախադեպ և ԽՍՀՄ նախագահին ու Գերագույն խորհրդին կոչ է անում «անհապաղ լիովին վերականգնել հայկական ազգային ինքնավարության ոտնահարված իրավունքները»[57]: Ասենք նաև, որ խաղաղության պաշտպանության խորհրդի կոմիտեի անունից կոմիտեի նախագահ, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Հ.Բորովիկի և նախագահության բյուրոյի մի քանի անդամների ստորագրությամբ ԽՍՀՄ բարձրագույն մարմիններին ուղարկած բողոք-նամակում նշվել է, որ Լեռնային Ղարաբաղին պետք են իշխանության ընտրովի մարմիններ: Նրանք ԽՍՀՄ Գերագույն խորհրդին կոչ էին անում հասնել 1989թ. նոյեմբերի 28-ի իր որոշման կատարմանը ու Լեռնային Ղարաբաղում վերականգնել խորհրդային իշխանությունը[58]:

1990թ. հոկտեմբերի 4-ին Մոսկվայից Ստեփանակերտ վերադարձավ քաղաքական հացադուլին մասնակից, մարզխորհրդի գործկոմի նախագահ Սեմյոն Բաբայանը, որին բնակչությունը դիմավորեց ցնծությամբ: Մարզխորհրդի գործկոմի նիստերի մեծ դահլիճում տեղի ունեցավ հանդիպում Սեմյոն Բաբայանի հետ: Հանդիպումը բացեց Արկադի Մանուչարովը: Նա նշեց, որ հացադուլավորներն իրենց այդ քաղաքական բողոքով ձգտել են համընդհանուր ուշադրության հրավիրել ղարաբաղյան արդարացի հիմնախնդրի, արցախյան հինավուրց հողում մարդու իրավունքների կոպիտ խախտումների և մյուս կամայականությունների վրա: Այդ անձնուրաց քայլին ժողովրդի ընտրյալները դիմել էին այն ժամանակ, երբ Կենտրոնի թողտվությամբ մարզի նկատմամբ Ադրբեջանի կողմից չեռնարկվող տնտեսական, բարոյական և ուժային ճնշումը հասել էր իր գագաթնակետին: Պահանջելով Լեռնային Ղարաբաղում վերականգնել սահմանադրական իշխանությունը՝ իրենց աննախադեպ ձեռնարկումով նրանք մեկ անգամ ևս հավաստեցին ողջ արցախահայության նվիրվածությունը մայր Հայաստանի հետ վերամիավորվելու ազնիվ գաղափարին[59]:

---

[56] *Նույն տեղում:*

[57] *Նույն տեղում, 03.10.1990:*

[58] *Նույն տեղում, 05.10.1990:*

[59] *Նույն տեղում:*

Արցախից ընտրված պատգամավորները շարունակում էին իրենց պարտականությունները կատարել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդում: Աշնանային նստաշրջանի որոշմամբ Գերագույն խորհրդում ստեղծվեց «Արցախի կանչ» անվանումով խորհրդարանական խումբ, որի համանախագահներ ընտրվեցին Սուրեն Զոլյանը, Համլետ Գրիգորյանը և Սամվել Շահմուրադյանը, իսկ քարտուղար՝ Մանֆրեդ Բախշյանը: Կանոնադրության համաձայն խումբը պետք է հետապնդեր «1989թ. դեկտեմբերի 1-ի Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման արագ ու գործնական իրականացման» նպատակին[60]:

Արցախցի տարբեր մակարդակներում ընտրված պատգամավորները ծավալուն աշխատանք էին կատարում Արցախից դուրս՝ Հայաստանում, Մոսկվայում, Լենինգրադում, Յուսիսային Կովկասում և այլուր, նրանք սերտ կապերի մեջ էին ռուս և այլազգի բազմաթիվ մտավորականների, գիտնականների, ռազմական, քաղաքական և հասարակական գործիչների հետ: Նրանց էին ուղարկվում Ղարաբաղի պատմությանը և քաղաքական կյանքին վերաբերող փաստաթղթեր, գրքեր, լրագրեր, լուսանկարներ, կինոժապավեններ: Դա, անկասկած, վրդովմունքով էր ընդունվում Ադրբեջանում: Եվ պատահական չէր, որ Ադրբեջանի Գերագույն խորհուրդը 1990թ. սեպտեմբերի 27-ին որոշում ընդունեց՝ «Ադրբեջանական ՍՍՀ ԼՂԻՄ-ից Հայաստանում Գերագույն խորհրդի անօրեն ընտրված անձանց վրա պատգամավորական անձեռնմխելիությունը չտարածելու մասին», որը բացահայտ ապօրինություն էր: Այդ որոշման մասին Ադրբեջանի կազմկոմիտեն պաշտոնական գրությամբ հայտնեց Հայաստանի Գերագույն խորհրդին[61]: Ադրբեջանի Գերագույն խորհրդի այդ որոշումը հիմք հանդիսացավ Վ.Պոլյանիչկոյի և Վ.Սաֆոնովի համար՝ որսալ ՀՀ Գերագույն խորհրդի արցախցի պատգամավորներին: Հոկտեմբերի 9-ին և 10-ին ձերբակալվեցին ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորներ Ռոլես Աղաջանյանն ու Համլետ Գրիգորյանը և տարվեցին Սարատովի բանտ: Հայաստանի Գերագույն խորհուրդը հոկտեմբերի 16-ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորների ապօրինի կալանավորման մասին» որոշումը, որով Մ.Գորբաչովից պահանջվեց կալանված ՀՀ ժողովրդական պատգամավորներին անհապաղ ազատել և դրանում մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկել[62]:

Իրենց զավակներին սատար կանգնելու համար ոտքի ելան արցախցիները: Հոկտեմբերի 12-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ անհնազանդության զանգվածային նախազգուշական ակտ: Մեկ օրով կանգնեցվեցին քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները, շինարարական աշխատանքները, տրանսպորտը: Դպրոցներում և մյուս ուսումնական հաստատություններում դադարեցվեցին պարապմունքները: Չաշխատեցին նաև մանկական նախադպրոցական հիմնարկները, կենցաղ-սպասարկման կետերը և մշակույթի օջախները: Մարզի աշխատավորական կոլեկտիվներն ու կազմակերպությունները բազմաթիվ բողոքներ ուղարկեցին կենտրոնական իշխանություններին՝ պահանջելով ազատել կալանված պատգամավորներին[63]: Հենց այդ օրերին Ստեփանակերտում էին գտնվում միութենական դիտորդ, վերահսկիչ հանձնաժողովի նախագահ Վ.Ֆոտեևը և Ուկրաինայից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, զինվորական Վիլեն Մարտիրոսյանը, որոնք նույնպես դատապարտեցին Պոլյանիչկո-Սաֆոնով հանցախմբի այդ բռնարարքը: Պատգամավորների ձերբակալության հանգամանքներն ուսումնասիրելու և խորհրդարանին զեկուցելու համար Հայաստանից Լեռնային Ղարաբաղ մեկնեցին խորհրդարանի իրավական հարցերի հանձնաժողովի անդամներ Կիմ Բալայանն ու Համլետ Հովսեփյանը: Գեներալ Վ.Սաֆոնովն իր անօրեն գործունեությունն արդարացնելու համար պնդում էր, որ եթե Վ.Ֆոտեևը նստեր Ստեփանակերտում, ապա ինքը կկատարեր նրա և ոչ թե Վ.Պոլյանիչկոյի հանձնարարությունները: Իսկ այն հարցին, թե ինչու մինչև հիմա չի վերացվել Գորիս-Լաչին ճանապարհի շրջափակումը, գեներալը պատասխանեց, թե «վերևից» հրաման չկա: Մինչդեռ շրջափակումը վերացնելու վերաբերյալ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը որոշումներ էր ընդունել 1989թ. հոկտեմբերի 9-ին և 1990թ. մարտի 5-ին: Հայ պատգամավորներին կալանքից ազատելու համար ծավալված պայքարն ավարտվեց նրանով, որ հոկտեմբերի 22-ին արդեն նրանք Հայաստանում էին, և հոկտեմբերի 24-ին այդ մասին հայտնեց «Իզվեստիան»:

---

[60] Աբրահամյան Հ., *Ճակատագրին ընդառաջ, էջ 112:*
[61] *Նույն տեղում, էջ 113:*
[62] *«Սովետական Հայաստան», 17.10.1990:*
[63] *«Սովետական Ղարաբաղ», 13.10.1992:*

Աշխարհի տարբեր ծայրերից նամակ-բողոքներ և հեռագրեր էին ուղարկվում Մոսկվա և Երևան: Մոսկվաբնակ մի խումբ անվանի հայ գիտնականներ՝ Մոսկվայի հայ հասարակայնության Ասոցիացիայի համակարգող խորհրդի հանձնարարությամբ, Մ. Գորբաչովին և ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության կոմիտեի նախագահ Ս.Ալեքսեևին ուղարկած բաց նամակում մերկացնում էին Վ.Սաֆոնովին, որի հանցավոր արարքի հետևանքով հայաթափվել էին Խանլարի շրջանի Ազատ և Կամո հայկական գյուղերը, դաժան բռնարարքներ էին կատարվում Շահումյանի շրջանի և Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ, հարյուրավոր անմեղ մարդիկ անօրեն ձերբակալվում և տարվում էին Ադրբեջանի բանտերը: Նամակի հեղինակները պահանջում էին Վ.Սաֆոնովին հեռացնել Ղարաբաղից: Բողոք-նամակներով շարունակում էին հանդես գալ հատկապես Արցախի և Հայաստանի հասարակական-քաղաքական, բարեգործական և այլ կազմակերպություններ[64]:

Արհամարհելով այդ ամենը՝ ադրբեջանական օմօնականները ԽՍՀՄ ՆԳ նախարարության ուժերի հետ շարունակում էին իրենց վայրագությունները: Նորանոր հանցագործություններ կատարեցին Մարտակերտի շրջանի Քաջավան և Մարտունու շրջանի Ավդուռ գյուղերում[65]: Հադրութի շրջգործկոմի նախագահի տեղակալ Է.Սաֆարյանը պատմում է, որ սեպտեմբերի 29-ից սկսած վիճակը չափազանց ծանր էր շրջանի Տող, Սալաքյաթին և Հախուլլու գյուղերում: Ազերիների զինված խմբերը գործում էին անպատիժ և ահաբեկում էին խաղաղ բնակչությանը: Քաղաքական այդ վիճակը, որին ավելանում էին նաև տնտեսական և սոցիալական հոգսերը, դառնում էր ուղղակի անտանելի[66]: Զինված ելուզակները մեկ շաբաթում Արծվաշենից հափշտակեցին 103, իսկ Լենինավանից՝ 750 կով: Համանման հանցագործություններ կատարվեցին նաև մարզի այլ գյուղերում: Այդ առթիվ ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորների և Հայրենական պատերազմի 22 վետերանների կողմից Հայրենական մեծ պատերազմի վետերանների համամիութենական

[64] *Նամակի պատճեն. տես Հ. Աբրահամյանի անձնական արխիվ:*

[65] *Քաջավանի և Ավդուռի իրադարձությունների մասին տես «Սովետական Ղարաբաղ», 27.10.1990, «Սովետական Հայաստան», 12.02.1991, «Իրավունք», 04.02.2000 և այլն:*

[66] *«Սովետական Ղարաբաղ», 07.10.1990:*

կոմիտեի նախագահ, Խորհրդային Միության մարշալ Ն. Օգորկովին ուղարկած նամակում խիստ բողոք էր հայտնվում և խնդրվում նրա միջամտությունը: Հայաստանից ԽՍՀՄ ժողովրդական մի խումբ պատգամավորներ դեկտեմբերի 2-ին նոր նամակ հղեցին Մ.Գորբաչովին և Ա.Լուկյանովին, որտեղ նշված է, որ իրենք չեն կարող մասնակցել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 4-րդ համագումարին, և դա հանգամանորեն բացատրեցին նրանով, որ չի կատարվել Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ընդունված և ոչ մի որոշում: Արցախ-Ղարաբաղը շարունակում էր մնալ շրջափակման մեջ, որտեղ ապօրինի մտցված էր արտակարգ դրություն, անհետևանք էին մնում կենտրոնական իշխանություններին ուղարկված բողոքները, Ադրբեջանում չէին դադարում հակահայկական սադրանքները: Պատգամավորները համառում էին, որ իրենք չեն մասնակցի համագումարի աշխատանքներին, քանի դեռ «չի պահպանված մարդու տարրական իրավունքները ԼՂԻՄ-ում, չի բեկանված արտակարգ դրությունը և մարզում վերականգնված սահմանադրական իշխանությունը»[67]: ՀՀ Գերագույն խորհուրդը հայտարարեց, որ պաշտպանում է Հայաստանից ու ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորների դեկտեմբերի 2-ի հայտարարության մեջ առաջ քաշված պահանջները[68]: 1990թ. դեկտեմբերի 20-ին «Իզվեստիան» հանդես եկավ «Ինչո՞ւ համագումարում չկան Հայաստանի պատգամավորները», անշուշտ, պատվիրված հոդվածով: Դեկտեմբերի 24-ի համարում ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ Վ. Մարտիրոսյանը, Վ.Բադամյանցը և Մ.Սուրկովը հանդես եկան հայտարարությամբ, որտեղ հեղինակները, պաշտպանելով հայ պատգամավորներին, պահանջում էին կարճ ժամանակամիջոցում Լեռնային Ղարաբաղում վերականգնել սահմանադրական կարգերը[69]:

1990թ. աշնանը և նրան հաջորդած ամիսներին Արցախում տեղի ունեցած իրադարձությունների և ադրբեջանական իշխանությունների բռնարարքների մասին հանգամանորեն խոսվում է 1990թ. հոկտեմբերին Լեռնային Ղարաբաղ ուղարկված ԽՍՀՄ ՆԳՆ օպերատիվ-քննչական խմբի շտաբի պետ Վիկտոր Կրիվոպուսկովի "Мятежный Карабах" գրքում: Հեղինակը իր դիտար-

[67] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 814, թ. 114-115:*

[68] *Նույն տեղում, թ. 115:*

[69] *"Известия", 24.12.1990.*

կումներով և անհերքելի փաստերով ցույց է տալիս, թե ինչպես Հատուկ շրջանի պարետ Վ.Սաֆոնովը և Ադրբեջանի կազմկոմիտեի նախագահ Վ.Պոլյանիչկոն ամեն կերպ սրում էին հայ-ադրբեջանական հարաբերությունները և փորձում Արցախը լիովին ենթարկացնել Ադրբեջանին: Հեղինակը, մեջբերելով այն փաստը, որ 1990թ. Լեռնային Ղարաբաղում ազգային ընդհարումների հետևանքով զոհվել է 45 մարդ, որից 28-ը՝ հայ, 15-ը՝ ադրբեջանցի և երկուսը զինվորական, վերցվել է 72 պատանդ, որոնցից 46-ը՝ հայ, 22-ը՝ ադրբեջանցի և ներքին գործերի նախարարության 4 զինվորական, ընթերցողին համոզում է, որ ազգամիջյան ընդհարումները դրական ոչինչ չեն խոստանում, հետևապես պետք է կանխել դրանք: Վիկտոր Կրիվոպուսկովը նաև նշում է, որ այդ տարիներին ինքնավար մարզի տարածքից ազերիները տարել են հայերին պատկանող 5 հազար խոշոր-եղջերավոր անասուն: Հեղինակը բերում է նաև այսպիսի օրինակ. 1990թ. հոկտեմբերին Ստեփանակերտում բացված զտիչ կայան հոկտեմբեր-դեկտեմբերին տարված 3569 հայերից տուգանվել են 599-ը[70]: Օպերատիվ-քննչական խմբին հաջողվել է Մոսկվա ուղարկել ծածկագիր, որտեղ նշված է, որ 1990թ. ԼՂԻՄ-ում կատարվել է 160 օպերատիվ-բանակային գործողություն՝ քաղաքացիների անձնագրային ռեժիմը ստուգելու համար, որոնցից 156-ը կատարվել է բացառապես հայ բնակչությամբ քաղաքներում և գյուղերում: Շատ դեպքերում, ներքին զորքերի հրամանատարության թողտվությամբ, դրանք ուղեկցվել են բնակարանները ջարդելով, անձնական իրերի, ստուգվող բնակիչների, տնային անասունների և թռչունների թալանով ու կողոպուտով: Քաղաքի փողոցներում և գյուղերում պարեկություն անողների կողմից կատարվում էին անհիմն ձերբակալություններ և ծեծի ու ստորացումների ենթարկում քաղաքացիներին: Ադրբեջանցիների կողմից կտրուկ մեծացել էր հայկական գյուղերից անձնական և կոլեկտիվ տնտեսությունների անասունների գողությունները: Օրինակ՝ 1990թ. 10 ամսում գողացվել է 1252 խոշոր եղջերավոր անասուն և 2150 գլուխ ոչխար: Գրանցվել է հայկական բնակավայրերի վրա 23 զինված հարձակման դեպք, հայկական տների բազմաթիվ գնդակոծություններ: Հարձակվող ադրբեջանցիների

[70] *Кривопусков В., Мятежный Карабах, Ростов-на-Дону, 2002, с. 17-18 и 53. Գիրքը լրամշակվել և վերահրատարակվել է Մոսկվայում, 2007թ.:*

կազմում եղել են միլիցիայի և օմոնական տարազով ավտոմատավորներ[71]:

Արցախահայությունը համառորեն պայքարում էր վերականգնել խորհուրդների տեղական իշխանությունները: 1990թ. մարտի 27-ին տեղի ունեցած ԼՂԻՄ մարզխորհրդի 20-րդ գումարման 10-րդ նստաշրջանի ընդունած որոշումը իրագործելու համար անհրաժեշտ էր նախապատրաստվել և անցկացնել մարզխորհրդի 21-րդ գումարման խորհուրդների ընտրություններ, անկախ նրանից, թե Ադրբեջանի իշխանությունները ցանկանում են, թե ոչ: Նույն թվականի հուլիսի 31-ին տեղի ունեցած մարզխորհրդի գործկոմի նիստը հաստատեց ընտրված օկրուգները՝ 150 մարզխորհրդի, 100 Ստեփանակերտի քաղխորհրդի, 75-ական մնացած շրջանները[72]: Օգոստոսի 17-ին տեղի ունեցած մարզգործկոմի նիստը հաստատեց 21-րդ գումարման ընտրություններն անցկացնող հանձնաժողովների կազմը, իսկ օգոստոսի 28-ին տեղի ունեցած գործկոմի նիստը որոշեց ընտրությունները անցկացնել հոկտեմբերի 14-ին[73]: Սակայն Ադրբեջանի իշխանությունների խարդախության հետևանքով այդ օրը ընտրությունները տեղի չունեցան: Տեղական խորհուրդների ընտրություններն անցկացնելու հարցը դարձյալ քննարկվեց նույն թվականի դեկտեմբերի 25-ին տեղի ունեցած մարզգործկոմի նիստում: Նշվեց, որ տեղական խորհուրդների ընտրություններն անցկացնելու համար կատարվել են զգալի աշխատանքներ: Հոկտեմբերի 14-ին ընտրությունները չեն կայացել, որովհետև Ադրբեջանի իշխանությունները, օգտագործելով արտակարգ դրության շրջանում գործող պարետային ժամը, փաստորեն խափանել են ընտրությունները: Մինչ այդ՝ օգոստոսի 20-ին, Ադրբեջանի Գերագույն խորհուրդը որոշում էր ընդունել մարզում ընտրական գործընթացը կանգնեցնել մինչև տարածքում վիճակի կարգավորումը, իսկ ընտրությունների նախօրյակին՝ սեպտեմբերի 29-ին, նոր որոշում էր ընդունել, համարել տեղական խորհուրդների

[71] *Նույն տեղում, էջ 109: Ավելացնենք, որ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Բորիս Դադամյանին դեկտեմբերի 25-ին Ստեփանակերտի օդանավակայանում կոպտորեն խցկել էին «ՈՒԱԶ» ավտոմեքենայի մեջ և տարել Աղդամ: Նրան տարել էին ՊԱԿ-ի մի ռուս գնդապետ և ադրբեջանական ՕՄՕՆ-ի աշխատողները: Բ. Դադամյանին Աղդամում ենթարկել են ստորացումների:*

[72] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 302, թ. 8:*

[73] *Նույն տեղում, թ. 10-11:*

ժամկետն անցկացած և արգելել ընտրություններ անցկացնել: Փաստորեն՝ Ադրբեջանը գնացել է մարզը վերացնելու ուղով: Չգտելով ստեղծել քաոս՝ պաշտոնական Բաքուն փորձում էր արագորեն փոխել մարզի ազգային կառուցվածքը: Նրանք, չեզոքացնելով 1989թ. նոյեմբերի 28-ի որոշումը, խախտելով սահմանադրական պահանջները, ամեն կերպ խոչընդոտում էին մարզում խորհրդային իշխանության վերականգնմանը: Մարզխորհրդի գործկոմը որոշում է ընտրողների ցուցակները կախել հունվարի 13-ին, քվեարկության թերթիկները տեղ հասցնել հունվարի 24-ին, իսկ ընտրություններն անցկացնել հունվարի 27-ին[74]: Սակայն Ադրբեջանի իշխանություններին հաջողվեց այս անգամ ևս խափանել ընտրությունները:

6. ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՄԱԳՐԱՎՈՒՄ ԷՐ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՆՈՐ ՃՆՇՈՒՄՆԵՐԻՆ

1991թ. արցախահայության համար ավելի ծանր տարի էր: 1991թ. հունվարի 1-ին Արցախի ժողովրդին ուղղված ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ուղերձում ասված է. «Դուք եղել եք հայոց ազգային նոր զարթոնքի կարապետը, և այժմ մեր ողջ ժողովրդի պարտքն է երախտագիտությամբ հատուցել ձեր կրած զրկանքները և սատար կանգնել ձեր գերմարդկային սխրանքներին: Իսկ Հայաստանի իշխանությունները պարտավոր են լինել ձեր անվտանգության և բարօրության երաշխավորը՝ ուղիներ որոնելով Արցախի հարցում արդար քաղաքական լուծում գտնելու համար՝ հիմնված ազգերի ինքնորոշման անսասան սկզբունքի վրա»[1]:

Այդ օրերին շրջափակման պատճառով հիմնովին խաթարվել էր մարզի տնտեսական գործունեությունը: Երկրամասում հաստատված արտակարգ դրությունը մեկ տարվա ընթացքում չկարողացավ կայունացնել վիճակը: Ադրբեջանի կազմկոմիտեն իր քաղաքականությունն իրագործում էր զինվորական ուժերի

[74] *Նույն տեղում, գ. 308, թ. 8-9:*
[1] *«Սովետական Ղարաբաղ», 01.01.1991:*

միջոցով: Արցախահայությունը, դիմանալով այդ ճնշմանը, կարողանում էր վանել ամեն մի սադրանք[2]:

Չափազանց ծանր վիճակում էր երկրամասի տնտեսությունը: Նախատեսված 300 մլն ռուբլու փոխարեն 1990թ. արտադրվել էր 180 մլն ռուբլու արտադրանք: Մարզի արդյունաբերական ձեռնարկությունները պայմանագրային պարտականությունները կատարել էին 70 տոկոսով, կամ էլ մեկ տարում պակաս էին արտադրել 57 միլիոն ռուբլու ապրանքներ[3]: Առանձնապես նահանջ էր ապրել մարզի անասնապահությունը: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը պակասել էր 6883-ով, խոզերինը՝ 8987-ով, ոչխարներինը՝ 17372-ով: Մարզի 145 կոլտնտեսություններից, խորհտնտեսություններից և գյուղատնտեսական ձեռնարկություններից միայն 16-ն էին գերազանցել կաթի արտադրության նախորդ տարվա ցուցանիշը[4]:

Օգտվելով այս վիճակից, Մոսկվան և Բաքուն ավելի էին ուժեղացնում ճնշումներն ու բռնարարքները: Ամանորի նախօրյակին Ավդալ և Գյուլափլու գյուղերից ավազակային խմբերը նոր հարձակումներ կատարեցին հարևան հայկական գյուղերի վրա, հափշտակեցին անասուններ և վառեցին կոլտնտեսությունների խոտերի և ծղոտի դեզերը: Այդ նույնը կրկնեցին հունվարի 6-ին[5]: Ազերիների զինված կազմավորումները հունվարի 12-13-ին գնդակոծեցին Բերդաձորի հայկական գյուղերը՝ Հին շենը, Մեծ շենը, Եղծահողը և Ծաղկաձորը: Ադրբեջանական օմօն-ը բոլոր կողմերից շրջապատել էր հայկական այդ բնակավայրերը և ԽՍՀՄ ներքին զորքերի հետ միասին անց էր կացնում անձնագրային ստուգում: Այն ուղեկցվում էր խիստ դաժանություններով[6]: 1991թ. հունվար ամիսը պատահականորեն չի անվանվել «Արյունոտ հունվար»[7]:

Արցախում բողոքի ցույցեր էին տեղի ունենում Ստեփանակերտում, Մարտունիում, Մարտակերտում, Ասկերանում և այլ տեղերում: Ցուցարարները պահանջում էին անհապաղ ճանաչել ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ խորհրդի և նրա գործ-

[2] *Նույն տեղում:*
[3] *Նույն տեղում, 10.01.1991:*
[4] *Նույն տեղում, 24.01.1991:*
[5] *Նույն տեղում, 04.01.1991 և 09.01.1991:*
[6] *Նույն տեղում, 15.01.1991:*
[7] *Նույն տեղում:*

կոմի լիազորությունները, մարզի տարածքից հեռացնել կազմկոմիտեն և ադրբեջանական միլիցիայի հատուկ նշանակության ջոկատները, բեկանել Շահումյանի շրջանը լուծարելու վերաբերյալ Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության ապօրինի որոշումը[8]:

Ադրբեջանի իշխանությունները կազմակերպում էին նորանոր սադրանքներ և ահաբեկչություններ: 1991թ. հունվարի 9-ին Լաչինի և Շուշիի սահմանների վրա տեղի ունեցավ ընդհարում, որի ժամանակ զոհվեցին փոխգնդապետ Օլեգ Իլլարիոնովը, մայոր Իգոր Իվանովը, սերժանտ Իվան Գոյեկը և լրագրողուհի Սալաթ Ազիզ կզի Ասկերովան: Արցախի ղեկավարները և ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորները ցասումով նշեցին, որ ամեն անգամ Լեռնային Ղարաբաղի հարցի քննարկման նախօրյակին իրադրությունը շիկացնելու նպատակով Ադրբեջանի կողմից կազմակերպվում են սադրանքներ: Օրինակ՝ վերջին երեք տարում ավելի քան 10 զինված ավազակային հարձակումներ են կատարվել հայկական բնակավայրերի վրա, որոնք հանգեցրել են մարդկային զոհերի: Ցավակցական հեռագրերում նշված է, որ, ինչպես անցյալում, այնպես էլ հիմա, ազերիները սպանում են ռուս զինվորների և դա վերագրում հայերին: Մինչդեռ ակնհայտ է, որ մարզի տարածքում հայի ձեռքով ռուս զինվոր չի զոհվել[9]:

Այազ Մութալիբովի հունվարի 2-ի հրամանի համաձայն՝ ԼՂԻՄ-ում և նրա հարակից շրջաններում մտցվել էր Ադրբեջանի նախագահական կառավարում, իսկ հունվարի 14-ին Ադրբեջանի Գերագույն խորհուրդն ընդունեց մի նոր հակահայկական որոշում, որի համաձայն Շահումյանի հայկական և Կասում-Իսմայիլի ադրբեջանական շրջանները միավորվում էին նոր կազմակերպվող Գերանբոյի շրջանի մեջ[10]: Դրա նպատակն էր վերացնել

[8] *Նույն տեղում, 24.01.1991:*
[9] *Նույն տեղում, 12.01.1991:*
[10] *Դեռևս 1989թ. հուլիսի 25-ին Շահումյանի շրջանային խորհրդի ճստաշրջանը դիմել էր Ադրբեջանի Գերագույն խորհրդին ԼՂԻՄ կազմի մեջ մտնելու խնդրանքով: Օգոստոսի 1-ին Բաքուն պատասխանել է մերժումով: 1990թ. հունվարի 15-ին Շահումյանի շրջանում հայտարարվեց արտակարգ դրություն: 1990թ. օգոստոսի 29-ին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն կասեցրեց Շահումյանի շրջկոմի գործունեությունը և ԽՄԿԿ շարքերից վտարեց նրա առաջին քարտուղար Վլադիմիր Աղաջանյանին: Սեպտեմբերի 2-ին Ազերինֆորմը տարածեց մի տեղեկատվություն, որտեղ կասկածի տակ էր դրված Շահումյանի շրջանի՝ իբրև վարչական միավորի գոյության անհրա-*

հայկական մի շրջան ևս: Ադրբեջանի Գերագույն խորհրդի այդ անօրեն որոշումը բողոքի մեծ ալիք առաջ բերեց Շահումյանի շրջանում և Լեռնային Ղարաբաղում: 1991թ. հունվարի 22-ին աշխատանքները դադարեցրին Ստեփանակերտի բոլոր ձեռնարկությունները, կոլեկտիվներն ու հիմնարկները: Չէին գործում հասարակական տրանսպորտը, բնակչության կենցաղային սպասարկման, առևտրի, մշակույթի օբյեկտները: Պարապմունքները դադարեցվել էին բոլոր ուսումնական հաստատություններում: Հիմնարկ-ձեռնարկություններում անց էին կացվում հանրահավաքներ և ժողովներ, որոնց մասնակիցները դատապարտում էին Ադրբեջանի ղեկավարության բացահայտ հակահայկական քաղաքականությունը: Ընդունեցին հայտարարություններ, որոնցում դատապարտվում էին Գետաշենի և Շահումյանի շրջաններում Ադրբեջանի իշխանությունների կողմից իրագործվող հակաժողովրդական գործողությունները[11]: Մ.Գորբաչովին ուղարկված հեռագրում շեշտվում էր, որ Շահումյանի շրջանում և Գետաշենում արտակարգ դրությունը վեր է ածվել ռազմական դրության ռեժիմի: Որ Արցախում հանցագործությունների մեծ մասը կատարում էին զինվորական և միլիցիայի համազգեստով ավտոմատավորները, դրանում ոչ մի կասկած չկար[12]:

Շահումյանի շրջանի լուծարման վերաբերյալ Հայաստանի Գերագույն խորհուրդը, հանդես գալով հայտարարությամբ, այդ որոշումը բնորոշեց որպես սադրանք, որը նպատակ ուներ հասարակայնության ուշադրությունը շեղել կազմակերպված զանգվածային այն հանցագործություններից, որոնք տեղի էին ունեցել վերջին օրերին ԼՂԻՄ-ում՝ հայազգի անձանց սպանություններ, հայաբնակ գյուղերի իսպառ ոչնչացում և մարդու տարրական իրավունքների սանձարձակ ոտնահարում ռազմական բռնա-

ժեշտությունը: Սեպտեմբերի 28-ին Ադրբեջանի ԳԽ նախագահությունը շրջանի տարածքում արգելեց հանրապետական և տեղական խորհուրդների ընտրությունները, դադարեցրեց գոյություն ունեցող խորհուրդների գործունեությունը և նրանց լիազորությունները հանձնեց ժամանակավոր կազմակերպական բյուրոյին, որն անմիջապես ենթարկվում էր հանրապետական իշխանություններին: Շահումյանի շրջանի 20-հազարանոց բնակչության 82%-ը կազմում էին հայեր, իսկ Կասում-Իսմայիլի շրջանի 50-հազարանոց բնակչությունը հիմնականում ադրբեջանցիներ էին (Шевелев М., "Московские новости", N 5, 03.02.1991).
[11] *«Հայաստանի Հանրապետություն», 23.01.1991:*
[12] *Նույն տեղում, 05.01.1991:*

պետության կողմից: ՀՀ ԳԽ-ն զգուշացնում էր, որ կձեռնարկի անհրաժեշտ բոլոր քայլերը՝ ապահովելու համար այդ շրջանի հայ ազգաբնակչության կյանքի և գույքի անվտանգությունը[13]:

1991թ. հունվարի 22-ին Ստեփանակերտում տեղի ունեցած հանրահավաքը վերադաս իշխանություններից պահանջեց ճանաչել Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի և նրա գործկոմի լիազորությունները, երկրամասից դուրս բերել բոլոր սպառազեն կազմավորումները, արտակարգ դրության շրջանում թողնել միայն ներքին զորքերը՝ բնակչության անվտանգությունը ապահովելու համար, բեկանել Շահումյանի շրջանը լուծարելու մասին Ադրբեջանի Գերագույն խորհրդի հակահրավական որոշումը[14]: Մինչ այդ՝ հունվարի 13-ի լույս 14-ի գիշերը, պարետային ժամի գործողության պայմաններում, Ստեփանակերտում տարածվել էին վերջնագրային բնույթի թռուցիկներ, որտեղ ասված էր. «Ստեփանակերտի ու մարզի հարգելի՛ բնակիչներ: Երևանցի գրոհայինները իրենց սև գործերն են կատարում ԼՂԻՄ-ում: Զգուշացնում ենք՝ եթե օրվա ընթացքում նրանք չհեռանան Լեռնային Ղարաբաղից, ապա կոչնչացվեն հատուկ ջոկատների կողմից: Կրակի կմատնվեն այն բնակավայրերը, որոնցում թաքնվում են գրոհայինները: Մինչև այս տարվա հունվարի 20-ը կարտաքսվեն Չայքենդի (այսինքն՝ Գետաշեն) և Մարտունաշենի բնակիչները: Կդադարեցվի գազի մատակարարումը Հայաստանին ու Ստեփանակերտին, և կփակվի այնտեղ տանող երկաթուղին: Կփակվի օդանավակայանը... 72 ժամ ժամանակ ենք տալիս...»[15]: ԼՂՀ պատերազմի, աշխատանքի և զինված ուժերի վետերանների Լեռնային Ղարաբաղի մարզային խորհուրդը, հունվարի 25-ին դիմելով Լեռնային Ղարաբաղի տարածքում գտնվող ներքին զորքերի զինծառայողներին, նշեց, որ Արցախում տեղի ունեցած իրադարձությունները խախտել են արցախցիների ունեցած հարգանքը ռուս զինվորի նկատմամբ: Վետերանների խորհուրդը 32 հազար անդամների անունից պատրաստակամություն հայտնեց երկրամասի բնակչության հետ միասին համագործակցել զինվորականների հետ և խաղաղություն հաստատել արցախյան հողում[16]:

[13] *Նույն տեղում, 17.01.1991:*
[14] *«Սովետական Ղարաբաղ», 29.01.1991:*
[15] *«Հայաստանի Հանրապետություն», 16.01.1991:*
[16] *«Սովետական Ղարաբաղ», 26.01.1991:*

Ադրբեջանական բարբարոսները շարունակում էին գործել ավելի կատաղի: Փետրվարի 1-ին նրանք պայթեցրին Ստեփանակերտի թիվ 1 ջրամաքրիչ կայանը, և քաղաքի զգալի մասը մնաց առանց ջրի: Փետրվարի 3-ին ադրբեջանական օմօնականները հարձակվեցին Ասկերանի շրջանի Հովսեփավան նորակառույց կոոպերատիվ բնակավայրի վրա, ավերեցին կոոպերատիվի շենքը, մի շարք բնակելի տներ, ձերբակալեցին գյուղաշինական կոոպերատիվի տնօրեն, Շարժման ակտիվ մասնակից Յուրի Ջհանգիրյանին և տանջամահ արեցին Բաքվի բանտում[17]: Այդ օրերին արյունալի մարտեր տեղի ունեցան նաև Քարինտակ գյուղում: Պարզապես Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության բացարձակ ոչնչացումը դարձել էր Ադրբեջանի պետական քաղաքականություն:

1991թ. հունվարից Ադրբեջանում տենդագին աշխատանքներ էին տարվում ազգային բանակ ստեղծելու համար, որին զինելու նպատակով զավթում էին հանրապետության տարածքում տեղակայված խորհրդային բանակի զենքն ու զինամթերքը: Կողոպտվեցին Կիրովաբադի, Քյուրդամիրի, Բաքվի և Ապշերոնի խորհրդային զորանոցներն ու զինապահեստները: Այդ զենքերի մի մասն օգտագործվում էր արցախահայության դեմ: «Բակինսկի րաբոչին» հունվարի 31-ին հրապարակեց «Լեռնային Ղարաբաղի հայերի դիմումը ադրբեջանական ժողովրդին» սադրանքը, որի տակ իբր ստորագրել էր 122 հայ: Այդ գրպարտագրում դատապարտվում էին արցախահայության ազգային-ազատագրական

[17] *Յուրի Ջհանգիրյանը ծնվել է 1935թ. Դաշբուլաղ (Աստղաշեն) գյուղում: Ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը: Այնուհետև պաշտպանել է գիտական թեզ: Աշխատել է Կարմիր շուկայի գինու գործարանում, ապա՝ Ասկերանի, իսկ հետո՝ Ստեփանակերտի համանման գործարաններում: Նա պայքարի սկզբին վարձակալեց 40 հա հողատարածք՝ բռնաջարդվածների համար ավան կառուցելու նպատակով: Հովսեփավանը գտնվում էր հենց թուրքի քթի տակ: Ավանի շինարարությունը սկսվել է 1990թ. մարտին՝ մարզային իշխանությունների որոշմամբ: Մեկ ու կես տարում դրվեց 42 բնակելի տան հիմք: Ադրբեջանը չէր կարող տանել դա: Սնընդհատ կատարում էին զինված հարձակում ավանի վրա: 1992թ. Ադրբեջանի ԳԽ Յուրի Ջհանգիրյանին դատապարտեց պատժի գերագույն չափի՝ գնդակահարության, իբր ազգամիջյան կրքեր բորբոքելու համար: Նույն թվականի հունիսի 9-ին այդ պատիժը իրականացվեց Շուվելյան բանտում: Օգոստոսի 15-ին Տող գյուղի սահմանագլխին հաջողվեց դիակը փոխանակել: Ներկայումս Հովսեփավանն ունի 127 բնակիչ («Հայրենյաց պաշտպան», N27-28, 2003):*

պայքարը և նրա «մարդատյաց» ղեկավարները: «Սովետական Ղարաբաղ» թերթը փետրվարի 6-ին գրեց, որ այդ «նողկալի զառամախտը միանգամայն ճիշտ է բնութագրում Բաքվի գաղափարախոսներին: Դրա կազմակերպիչները փորձ արեցին սկսել առճակատման նոր շրջապտույտ՝ ստեղծելով «Լեռնային Ղարաբաղի ազգամիջյան հաշտեցման կոմիտե»: Սակայն արցախահայությունը մերժեց այդ սադրանքը՝ շատ լավ իմանալով, թե ովքեր են ցեղասպանություն, շրջափակում, անասնագողություններ և ավազակություններ կազմակերպողները:

Համանման բազմաթիվ փաստեր ի նկատի ունենալով՝ Հայկոմկուսի Կենտկոմը, 1991թ. հունվարի 25-ին հանդես գալով հայտարարությամբ, մերկացրեց Ադրբեջանի իշխանությունների կողմից արցախահայության դեմ ձեռնարկվող բռնարարքները և բոլոր կոմունիստներին կոչ արեց իրենց բողոքի ձայնը բարձրացնել ի պաշտպանություն ԼՂԻՄ-ի խաղաղ բնակչության և ընդդեմ Ադրբեջանի սադրիչ գործողությունների[18]: Բողոքի ցույցեր և հանրահավաքներ էին տեղի ունենում Հայաստանի բազմաթիվ բնակավայրերում, ինչպես և Ռուսաստանի հայաշատ վայրերում՝ պահանջելով պատժել հանցագործներին և ապահովել Ղարաբաղի, Շահումյանի շրջանի, Գետաշենի ենթաշրջանի հայության կյանքն ու անվտանգությունը[19]: Մոսկվայի հայկական ընկերությունների միությունն իր հերթին ծավալում մեղադրական փաստաթուղթ է ներկայացնում ԽՍՀՄ դատախազությանը՝ Վ.Սաֆոնովի դեմ դատական գործ հարուցելու համար[20]: 1991թ-ի փետրվարի 8-ի լույս 9-ի գիշերը Ստեփանակերտում խորհրդային բանակի շուրջ 150 զինծառայողներ դուրս էին եկել հանրահավաքի՝ «Մեզ վերադարձրե՛ք տուն» և «Կորչի Ադրբեջանի ՕՄՕԼ-ը» կարգախոսներով: Սակայն անհնազանդ զինվորներին բռնությամբ ստիպեցին վերադառնալ զորանոցները[21]: Իսկ Հեյդար Ալիևը այդ օրերին Ադրբեջանի խորհրդարանում պարծենում էր, թե իր իշխանության 12 տարիներին Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության 10 տոկոսը գաղթել է երկրի ուրիշ տարածքներ, 30 տոկոսով ավելացել է ազերիների թիվը[22]: ԼՂԻՄ իրավապահ մարմինների

[18] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 85, գ. 31, թ. 48-50:*
[19] *Նույն տեղում, ց. 127, գ. 833, թ. 12:*
[20] Օհանջանյան Փ., *նշվ. աշխ., էջ 66:*
[21] *«Սովետական Ղարաբաղ», 13.02.1991:*
[22] *Նույն տեղում, 14.02.1991:*

կոլեկտիվները, նամակ հղելով Մ.Գորբաչովին և մյուս բարձրաստիճան պաշտոնյաներին, մերկացնում էին Ադրբեջանի իշխանություններին և հանրապետության ՆԳ նախարար Ասադովին ու մյուսներին, որոնք օր օրի ուժեղացնում էին բռնաճնշումը: Նամակի հեղինակները պահանջում էին պատժել հանցագործներին[23]:

Ադրբեջանի կողմից սաստկացող ճնշումները ստեփանակերտցիներին կրկին տարան Հաղթանակի հրապարակ: Բացի այդ, փետրվարի 20-ին լրանում էր ԼՂԻՄ մարզխորհրդի պատմական որոշման երեք տարին: Այդ օրը ամբողջ քաղաքը Հաղթանակի հրապարակում էր: Մարդկանց գլխավերևում ծածանվում էր Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշը: Ցուցապաստառները խոսուն էին՝ «Ղարաբաղցիներն արյան գնով պաշտպանում են 1988թ. փետրվարի 20-ի նստաշրջանի որոշումը», «Պահանջում ենք վերականգնել խորհրդային իշխանությունը ԼՂԻՄ-ում», «Արցախը պինդ ընկույզ է դեմոկրատիայի հակառակորդների համար», «Պոլյանիչկո՛, Ղարաբաղը Աֆղանստան չէ», «Օմօնականնե՛ր, դուրս Արցախից» և այլն: Երկու տասնյակի հասնող ելույթ ունեցողները խստորեն դատապարտեցին Ադրբեջանի իշխանությունների հակահայկական քաղաքականությունը և ղարաբաղյան հիմնահարցում Կենտրոնի դիրքորոշումը: Հանրահավաքի անունից դիմում հղվեց Լ.Տեր-Պետրոսյանին, որտեղ ասված է. «Պարո՛ն նախագահ: Եղբայրնե՛ր և քույրե՛ր: Ծանր է պահը, բայց մենք հաստատակամ ենք մեր որոշման մեջ: Ոչ մի ուժ չի կարող ղարաբաղցուն շեղել իր նպատակից՝ Մայր Հայաստանի հետ վերամիավորվելուց: Ուստի Ձեզ կոչ ենք անում մինչև վերջ սատար լինել մեզ, պատրաստ լինել ամեն ինչի: Կենացմահու պայքարը շարունակվում է»[24]: Հանրահավաքի անունից նամակ ուղարկվեց նաև Մ.Գորբաչովին և մի շարք այլ հասցեներով, որտեղ կոչ էր արվում լուծել Արցախի բարդությունը[25]: Իր հերթին, արցախահայությունը դիմում հղեց ՀՀ Գերագույն խորհուրդ, որտեղ շեշտվում էր, որ երեք տարի առաջ արցախցիների միասնական կամքով արտահայտված օրինական որոշումը՝ Արցախը մայր հայրենիքին վերամիավորելու մասին, սկզբնավորեց ողջ հայության ազգային զարթոնքը: Նաև նշված է, որ ստեղծված

[23] *Նույն տեղում, 22.02.1991:*
[24] *Նույն տեղում, 21.02.1991:*
[25] *Նույն տեղում:*

պայմաններում Հայաստանի Հանրապետությունը ձգտում է արցախյան հիմնախնդրի քաղաքական լուծմանը, որի ճշմարիտ ուղին բռնության բացառումն է և Արցախի բնակչության ազատ ինքնորոշման իրավունքի իրագործումը: ՀՀ Գերագույն խորհուրդը Արցախին վստահեցնում էր, որ հավատարիմ կմնա «զորավիգ կանգնելու, ձեր կյանքն ու կենսական շահերը բոլոր միջոցներով պաշտպանելու իր անփոփոխ վճռականությանը և ամեն ինչ կանի Արցախի վերամիավորումը մայր հայրենիքին ավարտին հասցնելու համար»[26]:

ԽՍՀՄ և աշխարհի շատ ժողովուրդներ շարունակում էին պաշտպանել արցախահայության արդար պահանջը: 1991թ. հունվարի 31-ին Լենինգրադի քաղաքային խորհրդում տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին նվիրված երրորդ պատգամավորական խորհրդակցությունը, որին ԼՂԻՄ-ից մասնակցեցին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Բ.Դաղամյանը, ՀՀ ժողովրդական պատգամավորներ Ս.Մարգսյանը, Ս.Շահմուրադյանը, Շ.Պետրոսյանը և ՀՀՇ վարչության անդամ Դ.Շահնազարյանը: Խորհրդակցությունում զեկուցումներով հանդես եկան Տ.Լիխանովան, Վ.Սերգեևը և Վ.Տուրչինը, որոնք այդ վերջին օրերին եղել էին Լեռնային Ղարաբաղում: Նրանք իրենց խոսքում ներկայացրին խորհրդային զինվորականների վայրագությունները Լեռնային Ղարաբաղում: Բերելով բազմաթիվ օրինակներ՝ ցույց տվեցին, որ «Հայ և ռուս ժողովուրդների եղբայրությունն այսօր արյան մեջ տրորվել է...»: Լենինգրադի քաղաքային խորհուրդը ընդունեց բանաձև, որտեղ ասված է, որ միութենական և ադրբեջանական ղեկավարության, զինվորական իշխանությունների օրինազանց ու անմարդկային գործողությունները մարզը զրկել են տեղական իշխանության օրինական մարմիններից: Չեն դադարում բնիկ հայ բնակչության խոշորածավալ տեղահանման սպառնալիքները: Մարզի տնտեսությունը հասցվել է փլուզման եզրին, բնակչությանը սպառնում է սովի վտանգը: Լեռնային Ղարաբաղն օգտագործվում է որպես փորձադաշտ՝ զինծառայողների մեջ դաժանություն, անբարոյականություն, անպատժելիություն դաստիարակելու համար: Զեկուցողները պահանջում էին Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության լիակատար վերականգնում, շրջափակման անհապաղ վերացում, մարզին

[26] *Նույն տեղում, 22.02.1991:*

ազատ զարգացնելու հնարավորության ընձեռում, բնակչության՝ իր ճակատագիրն ինքնուրույն վճռելու իրավունք[27]:

1991թ. հունվարի 28-ից Ժնևում ընթանում էր ՄԱԿ-ի մարդու իրավունքների հերթական 47-րդ նստաշրջանը, որի աշխատանքներին մասնակցող ՀՀ-ից ԳԽ մարդու իրավունքների և ազգությունների հանձնաժողովի նախագահ Ռաֆայել Պապոյանը իր ելույթում Ղարաբաղի հարցի վերաբերյալ ասաց, որ այնտեղ խեղաթյուրվում են մարդու իրավունքները, նույնիսկ արգելվում է ՀՀ հեռուստահաղորդումների ընդունումը: Այնտեղ իշխում է բանակը, փաստորեն ռազմական դիկտատուրա է, օրինական իշխանության մարմինները ջախջախված են միլիցիայի հատուկ ջոկատների և բանակի համատեղ ջանքերով: Միլիցիայի ջոկատները բանակի օգնությամբ հաճախակի ներխուժում են հայկական գյուղերը և ավերում: Ապա բերում է բազմաթիվ համոզիչ փաստեր[28]:

Արդեն երեք տարի է, ինչ գործում էր «Մոսկովյան ամբիոնը» ("Московская трибуна") հասարակական կազմակերպությունը, որը միավորել էր Մոսկվայի ժողովրդական մտավորականության լավագույն ուժերը: Դրա ոգևորողը և գաղափարախոսը մինչև կյանքի վերջը հանդիսացել է Անդրեյ Սախարովը: Կազմակերպության անդամներից էին Գալինա Ստարավոյտովան, Վիկտոր Շեյնիսը, Անդրեյ Նույկինը, Լեոնիդ Գուլմանը և այլ հայտնի մտավորականներ: «Մոսկովսկայա տրիբունա»-ն աչքի էր ընկնում Հայաստանին, մասնավորապես Արցախին վերաբերող հարցերի նկատմամբ իր անաչառ սկզբունքային դիրքորոշմամբ: Կազմակերպությունը, քննարկելով Արցախ-Հայաստանում ստեղծված ծանր վիճակը, մարտի 3-ին ընդունեց դիմում՝ ուղղված ՀՀ ԳԽ-ին, ինչպես նաև հայտարարություն՝ նախագահ Գորբաչովին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: Այդ փաստաթղթերում պաշտպանվում է Արցախի բնակչության շահերը և դատապարտվում Ադրբեջանի մարդասպաններին ու պահանջում դատի տալ և պատժել հանցագործներին, վերականգնել ԼՂԻՄ իշխանությունների պետական կառուցվածքը, ԽՍՀՄ ՆԳ զորքերը խորապես ենթարկել Կենտրոնին և նրանց հանձնարարել խաղաղարարական, այլ ոչ թե պատժիչ ֆունկցիաներ[29]:

[27] *«Հայաստանի Հանրապետություն», 07.02.1991:*
[28] *Նույն տեղում, 23.02.1991:*
[29] *Նույն տեղում, 06.03. 1991:*

Արցախին գորավիգ էին նաև ռուս շատ այլ մտավորականներ: Մարտի 21-ին Մոսկվայում ռուս գրողներ Վալենտին Օսկոցկու, Անդրեյ Նույկինի, Յուրի Չերնիչենկոյի և Թիմուր Գայդարի նախաձեռնությամբ Գրողների տանը տեղի ունեցավ Ղարաբաղի օգնության ռուսաստանյան կոմիտեի հիմնադիր ժողովը, որտեղ նշվեց, որ չնայած ուշացումով, Ռուսաստանում սկսել են հասկանալ, որ ղարաբաղյան հարցը սերտորեն կապված է ռուս ժողովրդի ապագայի հետ, որ Ղարաբաղում իրականացվող ժողովրդավարական ուժերի խեղդման քաղաքականությունը և մարդու իրավունքների կոպիտ ոտնահարումը վաղ թե ուշ կշրջվի ռուս ժողովրդի դեմ: Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը չպետք է զոհաբերվի երկրի ներկայիս ղեկավարության քաղաքական պատվախնդրությանը: Որոշվեց ստեղծել Արցախի օգնության համառուսաստանյան կոմիտե, և դիմում հղվեց բոլոր ջանքերը գործադրել Լեռնային Ղարաբաղի լրատվական շրջափակումը ճեղքելու համար[30]:

Արցախ-Ղարաբաղում ստեղծված ծանր վիճակն արցախցիներին հարկադրեց 1991թ. փետրվարի 12-ին նոր պատվիրակություն ուղարկել Մոսկվա[31], որին ընդունեց ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Վիտալի Պավլովը: Այդ հանդիպմանը ներկա էր նաև Հայաստանից ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Վ.Լոբովը: Վերջինս մանրամասն ներկայացրեց Արցախում ստեղծված վիճակը և իր հերթին խնդրեց օգնել Լեռնային Ղարաբաղում գարնանացանը կատարելու համար: Վ. Պավլովի կարգադրությամբ ԼՂԻՄ ուղարկվեց 12 հազար տոննա վառելանյութ, և Արցախում կատարվեց 1991թ. գարնանացանը: Արցախի պատվիրակությունը նաև հանդիպումներ ունեցավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ազգությունների խորհրդի նախագահ Ռ.Նիշանովի, Գերագույն խորհրդի նախագահ Ա.Լուկյանովի և ներքին գործերի նախարար Բ.Պուգոյի հետ: Պատվիրակությունը Մոսկվայից վերադարձավ հիմնականում հիասթափված[32]:

---

[30] *Նույն տեղում, 22.03.1991:*

[31] *Պատվիրակության կազմը՝ Գեորգի Պետրոսյան, Համլետ Գրիգորյան, Մաքսիմ Միրզոյան և Կարեն Բաբուրյան: Մոսկվայում նրանց միացան Զորի Բալայանը, Բորիս Դաղամյանը, Վահան Գրիգորյանը և Հենրիխ Պողոսյանը: Այդ օրերին ժողպատգամավոր Վաչագան Գրիգորյանը վատառողջ էր:*

[32] *Այդ հանդիպումների մասին տես Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 124-126:*

Ադրբեջանը նոր քայլեր էր ձեռնարկում Արցախում ադրբեջանական բնակավայրերն անառիկ դարձնելու համար: Հանրապետության ՆԳ նախարար Ասադովը բացեիբաց հայտարարեց, թե այդ բնակավայրերում ստեղծվել են ՆԳ նախարարության բաժանմունքներ՝ 600 զինված աշխատակիցներով, որոնց թիվը ապագայում կհասցվի ավելի քան հինգ հազարի[33]: Դեռ ավելին՝ Ադրբեջանի ԳԽ-ն որոշում ընդունեց փակել Շահումյանի ու Մարտակերտի շրջանների միջև հաղորդակցությունը: Նույնիսկ որոշվեց խոչընդոտել փետրվարի 18-ին ԽՍՀՄ ԳԽ նստաշրջանում Արցախի հարցի քննարկմանը՝ այն համարելով միջամտություն Ադրբեջանի ներքին գործերին[34]:

Արդեն 1991թ. գարնան սկզբին հստակ երևում էր, որ ԽՍՀՀ-ը կորցրել էր իր մենիշխանությունը: Նա բոլոր ջանքերը գործադրում էր Միությունը փրկելու համար: Այդ նպատակով որոշվեց երկրում անցկացնել հանրաքվե, որն անտեսվեց Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Մոլդովայի, Լատվիայի, Լիտվայի և Էստոնիայի կողմից: Լիտվան փետրվարի 9-ին կայացրել էր ԽՍՀՄ-ից անջատվելու հանրաքվե, որի օգտին քվեարկել էր հանրապետության բնակչության 75 տոկոսը: Լատվիան և Էստոնիան նախատեսել էին հանրաքվեներ անցկացնել մարտի 3-ին, Հայաստանը՝ սեպտեմբերի 21-ին, իսկ Վրաստանը՝ սեպտեմբերի 30-ին: Երկրում հանրաքվեն պետք է անցկացվեր մարտի 17-ին: Ադրբեջանը որոշել էր մասնակցել հանրաքվեին: ԼՂԻՄ մարզգործկոմը, Ստեփանակերտի և շրջանների շրջգործկոմները ԽՍՀՄ նախագահ Մ.Գորբաչովին, փոխնախագահ Գ.Յանաևին և Գերագույն խորհրդի նախագահ Ա.Լուկյանովին ուղարկած նամակում գրել են՝ «Մենք ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների խորհուրդների անունից լիազորված ենք հայտարարելու, որ միութենական մարմինների կողմից ինքնավար մարզի սահմանադրական իշխանության լիազորությունների ճանաչման հարցը լուծված չլինելու կապակցությամբ 1991 թվականի մարտի 17-ի հանրաքվեի անցկացումը ԼՂԻՄ-ի տարածքում ձախողվում է:

Խորհրդային իշխանության մարմինների լիազորությունների ճանաչման դեպքում հնարավոր ենք համարում հանրաքվեի անցկացման հարցին անդրադառնալ ԽՍՀ Միության պահպան-

---

[33] *«Հայաստանի Հանրապետություն», 16.02.1991:*

[34] *Նույն տեղում:*

ման հարցի նկատմամբ ԼՂԻՄ-ի բնակչության վերաբերմունքը պարզելու համար»[35]:

Ըստ Ադրբեջանի ԳԽ որոշման՝ հանրաքվեն պետք է անցկացվեր նաև ԼՂԻՄ-ում: Այնտեղ ստեղծել էին ընտրական օկրուգ: Բայց ո՞վ պետք է անցկացներ. Արտակարգ շրջանի պարետությո՞ւնը: Իսկ չէ՞ որ Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքում ձևակերպված է, որ արտակարգ շրջանի պարետությունը չի կարող իրենով փոխարինել տեղական իշխանություններին, հետևապես չի կարող օգտվել տեղական իշխանությունների իրավունքներից և լիազորություններից: Հանրաքվեի նախօրյակին՝ մարտի 14-ին, հաղորդվեց Մ.Գորբաչովի դիմումը Ադրբեջանի ժողովրդին և ԼՂԻՄ բնակչությանը, որն առաջ բերեց արցախահայության վրդովմունքը: Երկրի նախագահը կրկին անտեսում էր արցախահայության ազգային շահերը, խաղարկում էր «ղարաբաղյան» խաղաքարտը, ավելի խճճում առանց այն էլ բազմակնճիռ հայ-ադրբեջանական հարաբերությունները: Մարտի 15-ին Ստեփանակերտում հանրահավաքի էին դուրս եկել հազարավոր մարդիկ: Նրանք շրջապատվեցին զրահամեքենաներով և ներքին զորքերի ծառայողներով: Հանրահավաքում ելույթ ունեցողները շեշտեցին, որ ԼՂԻՄ-ը և ամբողջ պատմական Արցախը հանդիսանում են Հայաստանի անքակտելի մասը, և միանշանակ մերժեցին երկրի նախագահի դիմումը: Հանրահավաքի մասնակիցները մարզի բնակչությանը կոչ արեցին չենթարկվել սադրանքների, դրսևորել համախմբվածություն և միասնություն՝ հանուն ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի լուծման[36]:

1991թ. մարտի 17-ին հրապարակվեց ինքնիշխան հանրապետությունների համագործակցության պայմանագրի նախագիծը: Հիշենք. մեկ տարի առաջ, ապրիլի 3-ին, հրապարակվել էր «ԽՍՀՄ-ից դուրս գալու միութենական հանրապետությունների կարգի մասին» հռչակագիրը, ըստ որի ՍՍՀՄ-ից կարող էին դուրս գալ միութենական հանրապետությունները, իսկ ազգային-տարածքային սուբյեկտները մնում էին միութենական հանրապետությունների կազմում: Այդ պայմանագիրը ԼՂԻՄ-ին չէր վերաբերում, քանի որ նա Ադրբեջանի կազմից դուրս էր եկել մինչև այդ հռչակագրի ընդունումը: ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ Ադրբեջանի հանրաքվեի անցկացումը տեղի ունեցավ նախատեսված օրը՝ մարտի 17-ին: Լեռնային Ղարաբաղը չմասնակցեց հանրաքվեի անցկացմանը: Արցախցիները գտնում էին, որ հանրաքվեն հնարավոր կլինի միայն մարզում խորհրդային իշխանությունները վերականգնվելուց հետո: Ինչպես նշվեց, Մ.Գորբաչովը, դիմելով Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի աշխատավորներին, կոչ արեց ակտիվորեն մասնակցել հանրաքվեին[37]: ՀՀ Գերագույն խորհուրդն, այդ առթիվ հանդես գալով հայտարարությամբ, բողոք հայտնեց Մ.Գորբաչովի սադրիչ կոչի դեմ[38]: Ստեփանակերտի պարետ Գ.Կուդրյավցևը, որն իր վրա էր վերցրել ԼՂԻՄ-ում հանրաքվեի անցկացման պատասխանատվությունը, ղարաբաղցիներից պահանջեց մասնակցել հանրաքվեին: Արցախցիները բոյկոտեցին հանրաքվեն՝ դրանով իսկ մերժելով գորբաչովյան կոչերը:

Լեռնային Ղարաբաղի բնակչությանը խիստ անհանգստացնում էր Հյուսիսային Արցախի ճակատագիրը: Դատարկվել էին Գետաբեկի, Թովուզի, Շամխորի և Դաշքեսանի շրջանների հայկական գյուղերը: Նման վիճակ ստեղծվել էր նաև Խանլարի շրջանում: Հայությունից նախ դատարկվեցին շրջկենտրոնը, Զուռնաբադն ու Մոռուտը, հետո հերթը հասավ Գետաշենին և նրա ենթաշրջանում գտնվող մի քանի հայկական գյուղերի: Դեռևս 1988-ի նոյեմբերի 23-ին Գետաշենի գյուղական խորհրդի գործկոմի նախագահ Հ.Գյուրջինյանի կողմից Հայկոմկուսի Կենտկոմ, Գերագույն խորհուրդ և Մինիստրների խորհուրդ ուղարկված նամակում զգուշացվում էր, որ ամեն պահի սպասվում է ազերիների ներխուժումը Գետաշեն: Եվ «չնայած հաստատակամ ենք, սակայն պաշտպանական միջոցների պակասության պատճառով չենք կարող արդյունավետ ո՛չ պաշտպանություն կազմակերպել, ո՛չ էլ օգնություն ցույց տալ շրջակա գյուղերի հայ բնակչությանը»: Հ.Գյուրջինյանը Գետաշեն, Կամո, Ազատ, Մարտունաշեն և Արմավիր գյուղերի բնակիչների անունից Հայաստանի ղեկավարությունից խնդրում էր «միջոցներ ձեռնարկել» և ապահովել նրանց անվտանգությունը[39]: Սակայն գետաշենցիների այդ ահազանգը մնաց «ձայն բարբառոյ հանապատի»: Գյուղը

[35] *«Խորհրդային Ղարաբաղ», 24.03.1991:*
[36] *Նույն տեղում, 16.03.1991:*

[37] *"Правда", 14.03.1991.*
[38] *«Հայաստանի Հանրապետություն», 18.03.1991: Տե՛ս նաև "Зов Арцаха", март, 1991:*
[39] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 564, թ. 103-104:*

շրջափակեցին բոլոր կողմերից: Գետաշենցիներին օգնության հասան Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանական ջոկատները: Հակառակորդի անընդհատ հարձակումներին հայ կամավորներն ու տեղական ուժերը պատասխանում էին անզիջում: Թշնամին, տալով բազմաթիվ զոհեր ու վիրավորներ, հետ նահանջեց: Ի հակակշիռ Բաքվի սադրանքներին՝ Հյուսիսային Արցախը գերմարդկային ճիգերով շարունակում էր դիմադրել: Թեև ուժերն անհավասար էին, այդուհանդերձ, Շահումյանում և Գետաշենում մարդիկ ապրում էին այն գիտակցությամբ, որ միայն հայրենի հողի վրա է իմաստավորվում կյանքը: Նրանց ուժ ու ոգի էր տալիս այն, որ նրանց թիկունքում կանգնած էր Արցախը, Հայաստանի Հանրապետությունը և ողջ հայ ժողովուրդը[40]: 1991թ. ապրիլի սկզբին Մոսկվայում տեղի ունեցած «Ղարաբաղ» կոմիտեի հիմնադիր ժողովը, հանդես գալով հայտարարությամբ, պահանջեց ԼՂԻՄ-ի, Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի սահմաններում ժողովրդագրական իրավիճակի կանխամտածված փոփոխման հանգեցնող քաղաքականության կասեցում[41]:

Գետաշենցիները պատրաստել էին երդման տեքստ, որի տակ ստորագրել էին գյուղի բոլոր չափահաս տղամարդիկ: Այնտեղ ասված է. «Պետք է կամ ապրենք մեր պապերի գերեզմանների կողքին, կամ մեռնենք»: Թուրք-ազերիները, խորամանկաբար տիրանալով Կուշչի-Արմավիրին, սեպ էին խրել Շահումյանի և Գետաշենի միջև: Իրար հետևից դիրքերը զիջեցին նաև Ազատ, Կամո և Այգեստան գյուղերը: Գետաշենցիները 2,5 ամիս հերոսաբար պաշտպանեցին Կուշչի-Արմավիրը: Սակայն այդ գյուղերի ղեկավարներն անամոթաբար գրեցին Բաքու, թե իրենք ցանկանում են հեռանալ գյուղից, սակայն գետաշենցիները չեն թողնում: Միայն այդ դավաճանությունից հետո խորհրդային զինված ուժերի օգնությամբ գյուղերը լրիվ դատարկվեցին և բնակեցվեցին ազերիներով[42]:

Գետաշեն-Շահումյանի և Արցախի նկատմամբ Ադրբեջանի կողմից սաստկացվող ճնշման կապակցությամբ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը դեռևս 1990թ. մարտի 9-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահությանն ուղղած դիմումում նշել էր. «Բռնության ակտերով ուղեկցվող վախի ներշնչման, բացահայտ շանտաժի և սպառնալիքների մթնոլորտը, ճանապարհների երկարատև շրջափակումը և օդային տրանսպորտի թռիչքների արգելումը, որը գործնականում բնակչությանը զրկել էր կենսապահովման և բուժօգնության միջոցներից, հանգեցրին նրան, որ Ադրբեջանական ԽՍՀ Խանլարի շրջանի Գետաշենի ենթաշրջանի Ազատ և Կամո գյուղերի բնիկ հայ ազգաբնակչությունը մի քանի օրվա ընթացքում լքեց իր նախնիների հողը: Այսօր նույն սպառնալիքը կախվել է Արցախի, Խանլարի և Շահումյանի շրջանների ու ԼՂԻՄ-ի մյուս հայկական գյուղերի վրա»: Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահությունը զգուշացնում էր հայերի և ադրբեջանցիների միջև պատերազմական գործողությունների մոտալուտ վտանգից, որի պատասխանատվությունը ընկնում էր երկրի կենտրոնական իշխանությունների վրա[43]: Սակայն ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը անտեսեց այդ դիմումը ևս:

Ավելին, Բաքուն Մոսկվայի սատարմամբ պլանավորել էր 1991թ. գարնանը զանգվածային բռնություններ իրագործել Գետաշեն-Շահումյանում: Կամո գյուղի վերջին 12 ընտանիքները, որոնք չէին ցանկանում լքել հայրենի գյուղը, 1990թ. մարտի 8-ին նամակ էին հղել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարին, որտեղ նշել էին, թե ինչպես իրենց գյուղ եկած ԽՍՀՄ ներքին զորքերի հրամանատար գեներալ Յու.Շատալինը խոստացել էր հանձնաժողով ստեղծել և ստուգել Խանլարի իշխանությունների կողմից իրենց գյուղերի տների վաճառքի օրինականությունը, սակայն դա չի արվել: Ազատ և Կամո գյուղերի բնակիչները իրենց տները ադրբեջանցիներին վաճառել էին խորհրդային զինվորականների ճնշման տակ: Նամակի հեղինակները հայտնում էին, որ 1990թ. մարտի 8-ին ներքին զորքերի հրամանատարության թողտվությամբ ադրբեջանցիները ներխուժել են Կամո, և իրենք հարկադրված տեղափոխվել են Գետաշեն[44]:

Ադրբեջանի իշխանությունները գնալով ուժեղացնում էին ճնշումները Գետաշենի և Մարտունաշենի բնակիչների վրա՝ փորձելով նրանց ևս ստիպել հեռանալ Հայաստան: Գետաշենի գյուղխորհրդի նախագահ Հ.Գյուրջինյանը և պետական տնտեսության տնօրեն Շ.Մարությանը գյուղի բնակչության անունից դեռևս 1990թ. սեպտեմբերի 20-ին Հայաստանի ղեկավարությանը տեղ-

---

[40] *«Խորհրդային Ղարաբաղ», 15.03.1991:*
[41] *Նույն տեղում, 05.05.1991:*
[42] *«Սովետական Հայաստան», 26.01.1990:*
[43] *Նույն տեղում, 12.03.1990:*
[44] *«Հայք», 18.03.1990:*

յակ էին պահել, որ Խանլարի շրջանի ղեկավարները պահանջում են երեք օրվա ընթացքում ազատել Գետաշենն ու Մարտունաշենը: Նաև հաղորդել են, որ այդ գյուղերի տները գնելու համար Ադրբեջանի կառավարությունը որոշել է հատկացնել մի քանի միլիոն ռուբլի: Հրաժարվելու դեպքում գետաշենցիներին սպառնում էին դուրս քշել ջարդերով և կոտորածներով: Գետաշենցիներն այդ մասին հաղորդել էին նաև Մ.Գորբաչովին[45]:

1990թ. դեկտեմբերի 1-ին ԽՍՀՄ ներքին գործերի նախարար էր նշանակվել Բ.Պուգոն, տեղակալ՝ գեներալ Բ.Գրոմովը: Նույն ամսին ԽՍՀՄ նախագահի տեղակալ էր ընտրվել Գ.Յանաևը: 1991թ. հունվարից ԽՍՀՄ կառավարությունը ղեկավարում էր Վ.Պավլովը, իսկ մարտին ԽՍՀՄ պաշտպանության խորհրդի նախագահի տեղակալ էր նշանակվել Օ.Բակլանովը: Հենց նրանք, ինչպես և նույն թվականի օգոստոսյան խռովության ակտիվ մասնակիցներ Ա.Լուկյանովը, Վ.Կրյուչկովը և Դ.Յազովն էին անմիջապես պատասխանատու Գետաշեն-Շահումյանում և Լեռնային Ղարաբաղում իրագործված հանցագործությունների համար: Անշուշտ, ամենամեծ մեղքը պատկանում է Ադրբեջանի իշխանություններին և Ադրբեջանի ժողովրդին[46]: Այդ նրանք էին անբարո հայտարարում ու աղաղակում, թե իբր հայ-ադրբեջանական սահմանամերձ շրջաններում անկայունություն ստեղծողները հայ ինքնապաշտպանական և մարտական ջոկատներն են: Ադրբեջանի և կենտրոնական լրատվամիջոցները շրջանառության մեջ էին դրել 40 հազար հայ զինյալների առկայության վերաբերյալ լեգենդը, որոնք իբր վարժեցվել են Լիբանանում և զինված են իսրայելական զենքերով: Մինչդեռ փաստ է, որ երբ 1991թ. մայիս և հունիս ամիսներին ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի մարդու իրավունքների կոմիտեում Լեռնային Ղարաբաղի տարածքում կատարված գործողությունների մասին լսումներ էին տեղի ունենում, բանակի ներկայացուցիչները ստիպված էին խոստովանել, որ հայ ինքնապաշտպանական ուժերից ոչ մեկն արտասահմանում ռազմական պատրաստություն չի անցել և զինված չէ արտասահմանյան զենքով: Իսկ ինչ վերաբերում է 40 հազարանոց ինքնապաշտպանական ուժերին, ապա այդ կեղծիքը շրջանառության մեջ էր դրել ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ.Յազովը դեռևս 1990թ. գարնան սկզբին արած հայ-

[45] *«Հայաստանի Հանրապետություն», 15.05.1991:*
[46] **Бабанов И., Воеводский Константин,** *նշվ. աշխ., էջ 45:*

տարարության մեջ[47]: Ադրբեջանի նախագահ Ա.Մութալիբովը 1990թ. նոյեմբերին Մ.Գորբաչովին հղած նամակում նրան դաս էր տալիս՝ «Անջատողական բախումների լուծման համաշխարհային փորձը համոզում է, որ դրանք չեն լուծվում դեմոկրատական հիմունքներով»[48]: Նա դրանով իսկ ձգտում էր արդարացնել Ադրբեջանի կողմից նախապատրաստվող արցախահայության սպանդը: Այդ ժամանակ Մոսկվան բացահայտ երկակի խաղ էր խաղում: Նա մի կողմից Ադրբեջանին օգտագործում էր Հայաստանի դեմ՝ կազմակերպելով արցախահայության բռնագաղթեցումը և ապակայունացնելով Հայաստանի սահմանների շրջանների վիճակը, իսկ մյուս կողմից էլ արցախահայության հիմնախնդիրն օգտագործում էր Ադրբեջանի վրա ճնշում գործադրելու համար: Այսպես թե այնպես Ա.Մութալիբովը հարկադրված էր ժողովրդի ճնշումներին հակազդելու համար կատարել Մոսկվայի պահանջները: Դա նշանակում էր արագացնել «Կոլցո» («Օղակ») ռազմական գործողության իրականացումը, որը սկսվեց 1991թ. ապրիլի վերջին:

Մինչ այդ՝ ապրիլի սկզբին, ՀՀ կառավարությունը, հանդես գալով հայտարարությամբ, նշել է, որ վերջին ժամանակներում միութենական իշխանությունների թողտվությամբ, իսկ մի շարք դեպքերում էլ ուղղակի քաջալերությամբ, կատարվել են հակահայկական բազում սադրիչ գործողություններ: Ադրբեջանի հրոսակները հարձակվում էին Ղարաբաղի հայկական գյուղերի և Հայաստանի սահմանների, մանավանդ ԼՂԻՄ-ի Շուշիի և Շահումյանի շրջանի ու Գետաշենի ենթաշրջանի՝ արտաքին աշխարհից լիովին կտրված հայկական գյուղերի վրա: Կատարվում էին սպանություններ վայրագ սադիզմով, պատանդների առևանգում, տների հրկիզում: Վերջնագրային ձևով հայ բնակչությունից պահանջում էին թողնել բնակության վայրը: Այդ հակահրավական գործողությունները կանխելու համար միութենական ղեկավարությունը ոչ մի միջոց չէր ձեռնարկում: Ավելին, նա շարունակում էր զենք մատակարարել Ադրբեջանի օմոնական խմբավորումներին, իսկ զանգվածային լրատվական միջոցներով ապակողմնորոշում էր հասարակայնությանը և Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման շարժումը ներկայացնում էր որպես միջէթնիկական կամ տարածքային կոնֆլիկտ: ՀՀ կառավարությունը

[47] *Նույն տեղում, էջ 41-42:*
[48] *Նույն տեղում, էջ 46:*

միութենական իշխանություններից պահանջում էր վերջ տալ այդ ամենին՝ գտնելով, որ ստեղծված ճգնաժամից դուրս գալու միակ ուղին Լեռնային Ղարաբաղում իշխանության օրինական մարմինների անհապաղ վերականգնումն է և նրանց հետ կոնֆլիկտի կարգավորման քաղաքական ուղիների որոնումը[49]: Մի քանի օր անց ՀՀ Գերագույն խորհուրդը և Նախարարների խորհուրդը, հանդես գալով համատեղ հայտարարությամբ, նշել են, որ Ադրբեջանի կոմունիստական վարչակարգը, ընտրելով նպատակադրված առճակատման գործելակերպ, ինչպես Արցախում, Շահումյանի շրջանում և Գետաշենի ենթաշրջանում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության հետ մերձսահմանային գոտում, կատարում են բարբարոսություններ, բոլոր ուղղություններով, իսկ միութենական ղեկավարությունը շարունակում է զինել Ադրբեջանին: Հայաստանի իշխանությունները պահանջում էին վերջ տալ այդ ամենին[50]: Այդ օրերին Մ.Գորբաչովին և երկրի մյուս ղեկավարներին ուղարկված բողոք՝ նամակում ԼՂԻՄ-ի և Ադրբեջանական ԽՍՀ հարակից շրջանների արտակարգ դրության շրջանի պարետատան ներքին զորքերի անձնակազմի ընդհանուր ժողովը պահանջում էր վերջ տալ ստեղծված ծանր վիճակին, որի հետևանքով արյուն էր թափվում և մարդիկ զոհվում: Ջինվորականները պահանջում էին գտնել և պատժել մարդասպաններին: «Մենք մերժում ենք,– գրում էին նրանք,– բռնությունը, անօրինականությունը, կամայականությունը խաղաղ բնակչության և ներքին զորքերի մարտիկների նկատմամբ, մերժում ենք, երկու ժողովուրդների միջև հավատարմության քաղաքականությունը և փոխադարձ ատելության բորբոքումը, դաժանությունը, ազգային թշնամանքը»[51]:

Այդուհանդերձ, Ադրբեջանի օմօնականները 1991թ. մարտի 25-ից սկսած անընդհատ ռմբակոծում էին Գետաշենը, որի ենթաշրջանից դուրս էին բերվել ԽՍՀՄ ներքին զորքերի ստորաբաժանումները՝ պատճառաբանությամբ, թե իբր Գետաշենի ենթաշրջանը չի մտնում ԼՂԻՄ-ի մեջ: Այստեղ վիճակն ավելի ծանրացավ մանավանդ ապրիլի 16-ին Բաքվում տեղի ունեցած խորհրդակցությունում Ա.Մութալիբովի տված ցուցումներից հետո: Ադրբեջանի իշխանությունները վճռել էին խորհրդային ուժե-

[49] *«Հայաստանի Հանրապետություն», 09.04.1991:*
[50] *Նույն տեղում, 16.04.1991:*
[51] *Նույն տեղում, 19.04.1991:*

ի աջակցությամբ բռնագաղթեցնել գետաշենցիներին: Խանլարի շրջգործկոմի նախագահ Ն.Մամեդովը Գետաշենի և Մարտունաշենի բնակչությունից պահանջում էր մշտական բնակության համար տեղափոխվել այլ տեղ: Նա, ինչպես և ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ներքին ուժերի դիվիզիայի հրամանատարի տեղակալ գնդապետ Ե.Միշինը խոստանում էին մինչև հունիսի մեկը ավարտել Գետաշենի ու Մարտունաշենի բնակիչների տների վաճառքը: Նրանք չէին թաքցնում, որ գետաշենցիների տեղահանումը համաձայնեցվել էր ԽՍՀՄ-ի և Ադրբեջանի ներքին գործերի նախարարությունների ղեկավարությունների հետ[52]:

Կիրովաբադից այդտեղ փոխադրված խորհրդային զորամասերը ապրիլի 18–22-ին հրազենի տարբեր տեսակներից սկսեցին գնդակոծել Գետաշենը, Մարտունաշենը և Շահումյանի շրջանի մի շարք գյուղեր: Այդ առթիվ Լ.Տեր-Պետրոսյանը բողոք-նամակ հղեց ԽՍՀՄ նախագահ Մ.Գորբաչովին: Նա պահանջում էր պատասխանատվության ենթարկել հանցագործներին: Ապրիլի 25-ին հրավիրված ՀՀ Գերագույն խորհրդի արտահերթ լիագումար փակ նիստը, քննարկելով Արցախում և Գետաշեն-Շահումյանում ստեղծված վիճակը, պահանջեց անհապաղ հրավիրել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի արտահերթ նիստ[53]: ՀՀ ԳԽ նստաշրջանում ստեղծվում է հանձնաժողով[54], որը մեկ ամսում պետք է տեղեկանք ներկայացներ ՀՀ ԳԽ-ին՝ Գետաշենում, Արցախում և Շահումյանում ստեղծված վիճակի վերաբերյալ: Խորհրդային զինված ուժերի գործողությունները դատապարտեց նաև Մոսկվայի «Ղարաբաղ» կոմիտեն և դիմեց Մ.Գորբաչովին՝ վերջ տալ այդ բարբարոսությանը:

Արցախում և Շահումյանի շրջանում ապրիլի 25–26-ին տեղի ունեցան իսկական պատերազմական գործողություններ: Հայ ինքնապաշտպանական մարտական ջոկատները բնակչությանը պաշտպանում էին ադրբեջանական օմօնականների հարձակումներից: Ա.Մութալիբովը, ապրիլի 27-ին հանդես գալով ադրբեջանական հեռուստատեսությամբ, ԼՂԻՄ-ի և Գետաշեն-Շահումյանի հայությանը ներկայացրեց վերջնագիր՝ կամ ընդունել Ադրբեջանի

[52] Սողոմոնյան Ն., *1991. «Կոլցո», Ստեփանակերտ, 1-ին մաս, 1994, էջ 9:*
[53] *«Հայաստանի Հանրապետություն», 26.04.1991:*
[54] *Հանձնաժողովի կազմը՝ Վլադիմիր Աղաջանյան, Կիմ Բալայան, Ալբերտ Բաղդասարյան, Սեյրան Գրիգորյան, Գառնիկ Իսագուլյան, Հրանտ Խաչատրյան, Հակոբ Հակոբյան, Աղվան Հովսեփյան և Վիգեն Շիրինյան:*

օրենքները, կամ էլ հեռանալ հանրապետության տարածքից[55]: ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ներքին զորքերը և Ադրբեջանի օմօնականներն 1991թ. ապրիլի 30-ին համատեղ լայնածավալ գործողություններ սկսեցին՝ իբր Գետաշենում ու Մարտունաշենում գտնվող ապօրինի զինված միավորումներին զինաթափելու համար: Դա «Կոլցո» գործողությունն էր, որի հիմնական նպատակը Գետաշենի ու Մարտունաշենի բնակչության բռնագաղթեցումն էր: Արցախի և նրան հարակից շրջանի արտակարգ դրության պարետության ռազմաքաղաքական մասի պետ Պոլոզովի տված բացատրությունից երևում է, որ խորհրդային զինվորականները միայն հրամաններ էին կատարում: Այն հարցին, թե առաջինն ովքեր են մտել Գետաշեն, ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության հատուկ միլիցիայի վարչության պետ, գեներալ-մայոր Բալախանովը պատասխանել է, թե այնտեղ անցագրային ռեժիմի ստուգումն անց է կացվել Ադրբեջանի ՕՄՕՆ-ի կողմից: Իրականում՝ ապրիլի 30-ին ներքին զորքերի Բաքվի գնդի ստորաբաժանումները գնդապետ Մաշկովի հրամանատարությամբ գրավել էին Գետաշենի մերձակա բարձունքները և այդ նույն օրվա ժամը 18-ին ադրբեջանական օմօնականների հետ գրոհել գյուղի վրա:

ՀՀ Անվտանգության կոմիտեի նախագահ Հուսիկ Հարությունյանը հետագայում նշել է, որ «Կոլցո» գործողության մասին ԽՍՀՄ-ում գիտեին մարդկանց շատ նեղ շրջանակ, և որ ԽՍՀՄ իշխանությունները ցանկանում էին ապացուցել աշխարհին, թե իբր Հայաստանի ոչ օրինական զինվորական ջոկատները «սպառնում էին խեղճ Ադրբեջանին»: ՀՀ ՊԱԿ-ի ղեկավարը նաև նշում է, որ դեռևս ապրիլի 16-ին իրեն մոտ անձնավորություններից մեկը իրեն տեղյակ էր պահել, որ ամենաբարձր մակարդակներում որոշվել է ապրիլի 30-ին սկսել «Կոլցո» գործողությունը, և որ արդեն մշակվել են գրաֆիկն ու դերակատարումները: Նա այդ մասին անմիջապես տեղյակ է պահել Լ.Տեր-Պետրոսյանին: Համաձայն այդ տեղեկատվության՝ արվել է ամեն ինչ,

[55] *"Бакинский рабочий", 28.04.1991. Հայոց այդ հնագույն բնակավայրը՝ Գետաշենը, հիմնվել է 1400 տարի առաջ, այսինքն՝ ազերիների նախնիներ թուրք-սելջուկների Անդրկովկասում երևալուց մոտ 500 տարի առաջ: Գետաշենը 1600 զինվոր է ուղարկել Հայրենական մեծ պատերազմ, որոնցից 850-ը զոհվել են խորհրդային երկրի համար: Ղարաբաղյան շարժման նախօրյակին գյուղն ուներ 5000 բնակիչ: Շարժման հենց սկզբից գետաշենցիները պայքարի առաջին գծում էին:*

որպեսզի այդ գործողությունը ձախողվեր[56]: Իսկ վերոհիշյալ Վիկտոր Կրիվոպուսկովը պատմում է, որ դեռևս 1990թ. նոյեմբերին ԽՍՀՄ ՆԳՆ օպերատիվ-քննչական խմբի ձեռքն էր ընկել Շահումյանի շրջանի հայերին բռնագաղթեցնելու վերաբերյալ Ադրբեջանի ՆԳՆ կողմից մշակված գաղտնի պլանը: Եվ պատահական չէր, որ 1991թ. փետրվարի սկզբին Վ.Պոլյանիչկոն նշել էր. «1991թ. հայտարարվել է Ղարաբաղի տարի: Այս տարի կլինի Ադրբեջանի դժվարությունների վերջին տարին: Ղարաբաղի հողը մեր հողն է, այն պետք է նվաճենք մեր երեխաների համար: Օդանավակայանն արդեն մերն է: Բայց պետք է ավելացնենք օմօնականների թիվը...»: Վ.Կրիվոպուսկովը շատ է ափսոսում, որ իրենց չի հաջողվել կանխել «Կոլցո» գործողության իրագործումը[57]:

«Կոլցո» գործողությունը սկսվելուց առաջ Անդրկովկասի հակաօդային պաշտպանության ուժերի հրամանատար Ա.Արխարովի հրամանով արգելվել էին ուղղաթիռների թռիչքները Գետաշեն, Շահումյան և Լեռնային Ղարաբաղ: Երևանի «Էրեբունի» օդանավակայանի պետ Ք.Մնացականյանը նրանից խնդրել էր թույլ տալ ուղղաթիռ ուղարկել Գետաշեն՝ վիրավորներին ու հիվանդներին տեղափոխելու համար, սակայն Ա.Արխարովը կոպտորեն մերժել էր: Նա չէր թույլատրել նույնիսկ բժիշկներ ուղարկել Գետաշեն: Անկասկած, այդ ամենը կատարվում էր ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ.Յազովի անմիջական ցուցումով: ՀՀ Գերագույն խորհուրդը, ապրիլի 30-ին հանդես գալով հայտարարությամբ, նշել է, որ Ադրբեջանի կոմունիստական վարչակարգը ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության թողտվությամբ և ԽՍՀՄ ներքին գործերի անմիջական մասնակցությամբ, ոտնահարելով համամարդկային արժեքները և մարդու իրավունքի միջազգային նորմերը, շարունակում է իրականացնել իր բնօրրանից հայ ազգաբնակչության բռնի տեղահանման քաղաքականությունը: Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահությունը պնդում էր անհապաղ հրավիրել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի արտահերթ նիստ և քննարկել ստեղծված վիճակից դուրս գալու խնդիրը[58]:

Լեռնային Ղարաբաղի, Գետաշենի և Շահումյանի իրադարձությունների վերաբերյալ այդ օրերին Մ.Գորբաչովին դիմել էր

[56] *"Голос Армении", 27.03.2003.*
[57] **Кривопусков В.**, *նշվ. աշխ., էջ 161–162:*
[58] *«Խորհրդային Ղարաբաղ», 02.05.1991:*

նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Տ.Տ.Վազգեն Առաջինը: Նա գրել է. «Հայաստանի Հանրապետության և արտասահմանի ավելի քան երկու միլիոն հայերի վիշտը մեր սրտում՝ դիմում ենք Ձեզ, որ այս օրերին չզլանաք Ձեր մարդասիրական ուշադրությունը մի պահ կենտրոնացնել Լեռնային Ղարաբաղի և շրջակայքի հայ ազգաբնակչության ողբերգական կացության վրա՝ արդար և օրինավոր մի վճիռ կայացնելու Ձեր պրեզիդենտական իրավասություններով...

Տառապյալ հոգով սպասում ենք լսել Ձեր խոսքի ձայնը, Ձեր պրեզիդենտական արդար խոսքը...»[59]:

Լ.Տեր-Պետրոսյանը, մայիսի 1-ին պատասխանելով Գետաշենի և Մարտունաշենի իրադարձությունների վերաբերյալ «Լրաբեր» հեռուստատեսային լրատվական ծրագրի հարցերին, նշել է, որ այնտեղ հայերի նկատմամբ տեղի է ունեցել հերթական հրեշավոր հանցագործություն, որը կատարել է խորհրդային բանակը, մասնավորապես ներքին զորքերը և ադրբեջանական խուժանը: Նա նաև նշել է, որ այդ վտանգը զգացվում էր դեռևս ապրիլի 3-ից: Եվ չնայած այդ մասին բազմիցս զգուշացվել էր կենտրոնական իշխանություններին, սակայն արդյունքը դրական չէր: Ըստ Լ.Տեր-Պետրոսյանի՝ դա պարզապես Մոսկվայի և Բաքվի գործարքն էր, և որ հանցանքի մեջ մեղքի իրենց բաժինն ունեին Բ.Պուգոն և Յու.Շատալինը: Նրանք դեռևս ապրիլի կեսերին մի վարկած էին մշակել, ըստ որի իբր Գետաշենում և Մարտունաշենում հայ բնակչություն չկա, այնտեղ միայն հայ գրոհայիններ են, և այդ գյուղերը պետք է մաքրել նրանցից: ՀՀ ԳԽ նախագահը Մ.Գորբաչովից պահանջում էր թույլ տալ ուղղաթիռների անարգել թռիչքներ դեպի նշված շրջանները և ոչ մի կերպ թույլ չտալ Գետաշենի ու Մարտունաշենի բնակչության տեղահանությունը[60]: Մինչդեռ երկրի նախագահը, փոխանակ կատարելու Հայաստանի ԳԽ նախագահի պահանջը, նրան հորդորում էր «ադրբեջանցիների հետ հաշտության եզրեր որոնել»:

1991թ. ապրիլի 30-ին Գետաշենի ռադիոկայանից հաղորդվեց հետևյալ հեռագիրը.

«SOS! SOS! SOS!

Մենք՝ երկու հայկական գյուղերի՝ Գետաշենի և Մարտունաշենի բնակիչներս, աղաչում ենք փրկել մեզ: Խորհրդային բանա-

[59] *«Հայաստանի Հանրապետություն», 02.05.1991:*
[60] *Նույն տեղում:*

կը ոչնչացնում է խորհրդային քաղաքացիներին: Կրակում են գետնից, օդից, հրանոթից, ավտոմատից: Մեզ ճնշում են տանկերը: Ադրբեջանական ՕՄՕՆ-ը պատանդ է վերցնում երեխաներին, կանանց և ծերերին: Մեր տները թալանում, վառում են: Բանակի դեմ որսորդական հրացաններով կանգնել չենք կարող: Մարդի՛կ աշխարհի, օգնեցեք:

SOS! SOS! SOS!»[61]:

100–120 գրահամեքենա շրջապատել և անընդհատ հրետակոծում էին գյուղը, որի բնակիչներն ու ինքնապաշտպանական ջոկատները հերոսաբար դիմադրում էին: Գետաշեն ներխուժած զինվորականներին ուղեկցում էին ազերի օմօնականները, որոնք դաժան հաշվեհարդար էին տեսնում գյուղի բնակչության հետ: Ինքնապաշտպանության ուժերին հաջողվում է գերել 14 զինվորականի: Մայիսի 1-ի գիշերը գյուղի դպրոցի ներքնահարկում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ ինքնապաշտպանության ջոկատի հրամանատար Բ.Բոյախչյանը հայտնում է, որ զենք կարող են վերցնել 200 հոգուց ավելին, սակայն ընդամենը ունենք մեկ գնդացիր, 4-5 ավտոմատ, 150 որսորդական հրացան և ինքնաշեն նռնակներ: Չնայած դրան՝ այնուամենայնիվ Գետաշենը դիմադրում էր հերոսաբար: Թաթուլ Կրպեյանը, ծգանը հանած, նռնակն ափի մեջ, գնդապետ Մաշկովին ստիպում է բանակցությունների մեջ մտնել ինքնապաշտպանների հետ: Վերջիններս պահանջում են անձնագրային ստուգում անցկացնել առանց ՕՄՕՆ-ի և ազատել 90-ից ավելի պատանդներին: Հենց գնդապետ Մաշկովից խլվեց «Կոլցո» պատժիչ գործողության ծածկագիրը, որի իրագործման ղեկավարներն էին գնդապետներ Մաշկովն ու Միշինը: Կան տվյալներ, որ այդ ծածկագրի վրա աշխատել է նաև գեներալ Գրոմովը, որը սպառնում էր Ղարաբաղը հավասարեցնել «Բեռլինի պարիսպներին»[62]:

Մայիսի 1-ին հրապարակվեց ՀՀ ԳԽ հայտարարությունը, որտեղ ասված է, որ Լեռնային Ղարաբաղում, Շահումյանի շրջանում, Գետաշենի ենթաշրջանում, Ադրբեջանի և Հայաստանի միջսահմանային գոտում ստեղծվել է պատերազմական վիճակ: Ադրբեջանի իշխանությունները, ԽՍՀՄ ներքին զորքերի անմիջական մասնակցությամբ, ոտնահարելով համամարդկային արժեքները և մարդու իրավունքների միջազգային նորմերը, շարունա-

[61] Սողոմոնյան Ն., *նշվ. աշխ., էջ 7-8:*
[62] **Бабанов И., Воеводский К.,** *նշվ. աշխ., էջ 51:*

կում է իրականացնել իր բնօրրանից հայ ազգաբնակչության բռնի տեղահանման քաղաքականությունը: ՀՀ ԳԽ, հիշեցնելով իր նախորդ հայտարարությունները, նշում է, որ իրավիճակի հետագա սրման ողջ պատասխանատվությունը ընկնում է վերադաս իշխանությունների վրա: Ապա դիմելով աշխարհի ժողովուրդներին՝ իրազեկ է դարձնում, որ Մոսկվան պատերազմ է հայտարարել հայ ժողովրդի դեմ, որը պետք է կանխվի: Ամեն տեղ կատարվում են ահաբեկչություններ, Ադրբեջանը հայերից պահանջում է կամ ընդունել իրենց օրենքները, կամ հեռանալ հանրապետությունից[63]:

«Կոլցո» ծածկագրից հստակ երևում է, թե խորհրդային հրամանատարությունն ինչպես էր նախապատրաստվել բռնագաղթեցնելու Գետաշենի և Մարտունաշենի բնակչությանը: Այդ ծածկագրի համաձայն՝ նախ Գետաշեն մտան Անդրկովկասյան ռազմական օկրուգի չորրորդ բանակի զորամասերը՝ իրենց հետևից բերելով ադրբեջանական օմօնականների ավազակախումբը: Նրանց դեմ գետաշենցիների հերոսական պայքարը գլխավորում էր Թաթուլ Կրպեյանը: Գյուղի հիվանդանոցի գլխավոր բժիշկ Ա.Հակոբջոխվյանը, Երևանից այնտեղ գործուղված բժիշկներ Վ.Խաչատրյանը և Գ.Գրիգորյանը բոլոր ջանքերը գործադրում էին՝ վիրավորների կյանքը փրկելու համար: Հիվանդանոցի դիարանում կար 20 սպանված: Ռադիոկայանով ուղղաթիռներ էին խնդրում՝ ծանր վիրավորներին տեղափոխելու համար, սակայն Երևանից եկող ուղղաթիռները զինվորականների և օմօնականների կողմից արգելվում էին վայրէջք կատարել: Ինքնապաշտպանները գերված զինվորներին փոխարինում են 27 պատանդ գետաշենցիների հետ: Ավելի էր ուժեղանում գյուղի գնդակոծումը: Դրությունը ահավոր էր. զոհվել էին Թաթուլ Կրպեյանը, Արթուր Կարապետյանը, Վալերի Նազարյանը, Մարտունաշենի պաշտպանության ղեկավար Սիմոն Աչիգյոզյանը, Զարզանդ (Հրաչ) Դանիելյանը և ուրիշներ: Բժիշկները գերի էին տարվել Կիրովաբադի բանտ, որտեղ 17 օր շարունակ ենթարկվել են անասելի տանջանքների[64]:

Մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետություն» թերթի ճակատին խոշոր տառերով գրվել է. «Այսօր հանրապետությունում սգո օր է: Մեր նվիրական եռագույնի հետ խոնարհենք գլուխները

[63] *«Հայաստանի Հանրապետություն», 01.05.1991:*
[64] *«Գարդմանք», N6, 1999:*

Գետաշենի հերոսամարտի զոհերի հիշատակի առջև և բռունցքվենք»: Մայիսի 1–5-ը գրեթե ամեն օր տեղի էր ունենում ՀՀ Արտակարգ վիճակի հանրապետական ժամանակավոր խորհրդի նիստեր, որը հայ ժողովրդին հավաստիացնում էր, որ «կգործադրեն հնարավոր ամեն ջանք Արցախի և հարակից շրջանների հայ բնակչության իրավունքները պաշտպանելու համար[65]: Մայիսի 6-ին տեղի ունեցած ՀՀ ԳԽ փակ նիստը դիմում հղեց ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Պերես դը Կուելյարին, ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովին, ինչպես նաև հայտարարություն՝ ուղղված հանրապետության բնակչությանը, որոնցում կոչ էր արվում պատժել հանցագործներին և պաշտպանել հայության շահերը[66]:

1991թ. մայիսի լույս 6-ի գիշերը Գետաշենի ինքնապաշտպանական ուժերի խորհրդակցությունում որոշվում է զենքը և փամփուշտը ամբողջովին դուրս բերել գյուղի տարածքից, 300 – 350 հոգի պիտի հեռանային խմբերով, երեք հերթով, գիշերը: Պետք է գնային դեպի Քյափազ սարը, այնտեղից անցնեին Շահումյանի կողմը: Նրանք իրենց հետ տանում են գնդապետ Մաշկովից խլված «Կոլցո» ծածկագիրը, որ հետո ներկայացնեն աշխարհին: Մայիսի 7-ին երեք հազար կին, երեխա, ծեր ռազմական ուղղաթիռներով տեղափոխվում են Ստեփանակերտ, այնտեղից էլ՝ Հայաստան, իսկ 700 տղամարդկանց ավտոբուսով տանում են Իջևանի մոտերքը: Գյուղի գրեթե բոլոր ինքնապաշտպանները տեղափոխվում են Շահումյանի շրջան: Գետաշենում իրագործված «Կոլցո» գործողության նախնական փուլում զոհվել է 41 մարդ, վիրավորվել 70 խաղաղ գյուղացի, կանայք ու երեխաներ: Անհայտ ուղղությամբ պատանդ է տարվել 335 հոգի, որոնցից ազատ են արձակվել 189-ը[67]: Զոհվածներից 18-ը հայաստանցի ազատամարտիկներ էին[68]:

Գետաշեն-Մարտունաշենի հերոսական պաշտպանության օրերին՝ մայիսի 3-ին, Լ.Տեր-Պետրոսյանը Մոսկվայում հանդիպել էր Մ.Գորբաչովի հետ: Սակայն վերջինս չէր ընդառաջել ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի առաջարկություններին: Մինչդեռ մայիսի 1-ին՝ Լ.Տեր-Պետրոսյանի և Մ.Գորբաչովի հեռախոսազրույցի

[65] *«Հայաստանի Հանրապետություն», 03.05.1991:*
[66] *Նույն տեղում, 07.05.1991:*
[67] *Հասրաթյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, Եր., 2001, էջ 16:*
[68] *«Հնչակ Հայաստանի», Ա տարի, N13-14, մայիս, 1991:*

ժամանակ, վերջինս խոստացել էր իր անմիջական հսկողության տակ վերցնել Գետաշենի վիճակի կայունացման հարցը: Երկրի նախագահը հերթական անգամ ստեց և չկատարեց իր խոստումը: Այդուհանդերձ, հայ ժողովրդի և ՀՀ իշխանությունների ճնշման տակ Մոսկվան համաձայնվեց թույլ տալ՝ վիրավորներին և հիվանդներին տեղափոխելու համար չորս ուղղաթիռ թռչեն Գետաշեն:

Գետաշենում տեղի ունեցած վայրագությունների դեմ բողոքի ալիքը տարածվել էր ամբողջ երկրում: Ռուսաստանի սահմանադրական ժողովրդավարների կուսակցության Մոսկվայի քաղկոմը հայ ժողովրդին ուղղված նամակում գրել է. «Թանկագի՛ն եղբայրներ: Դժվար է գտնել բառեր՝ մեր ցավն ու վրդովմունքն արտահայտելու համար: Չորրորդ տարին է, ինչ հանցագործ ռեժիմը պատերազմ է մղում ձեր երկրի և ժողովրդի դեմ: Ընդունե՛ք մեր խոսքերը որպես անկեղծ ցավակցություն և հնարավոր ցանկացած օգնություն ցույց տալու պատրաստակամության արտահայտություն»[69]: «Մոսկովսկայա տրիբունա», «Մեմորիալ» միջհանրապետական ընկերությունը, մի խումբ ժողովրդական պատգամավորներ, ռուսաստանյան մտավորականության «Ղարաբաղ» կոմիտեի անդամները մայիսի 5-ին դուրս եկան Կարմիր հրապարակ հետևյալ ցուցապաստառներով ու կարգախոսություններով՝ «Խատին, Սոնգի, Հալաբջա, հիմա՝ Գետաշեն», «Դատապարտում ենք Կենտրոնի և նրա զորքերի գործողությունները», «Կանգնեցնել բնակիչների բռնատեղահանությունը» և այլն: Ցուցարարների կողմից Մ.Գորբաչովին և պաշտպանության ու ներքին գործերի նախարարներին հղած դիմումում պահանջվում էր օգտագործել ունեցած բոլոր միջոցները՝ դադարեցնելու զորքերի սանձարձակ գործողությունները, Ադրբեջանի հայաբնակ գյուղերի շրջափակումն ու գնդակոծությունները: Նաև ասված է, որ այնտեղ սպանում են խաղաղ բնակիչների, կանանց ու երեխաների[70]: Սանկտ Պետերբուրգի քաղխորհրդի հրապարակում նույնպես տեղի ունեցավ բողոքի ցույց: Մերկացնող հայտարարությամբ հանդես եկավ «Դեմոկրատական Ռուսաստան» շարժման համակարգող խորհուրդը, որտեղ երկրի իշխանություններից պահանջվեց ճշմարիտ հաղորդումներ տալ

[69] *Նույն տեղում: Տե՛ս նաև «Հայաստանի Հանրապետություն», 03.05.1991:*

[70] *«Հնչակ Հայաստանի», Ա տարի, N13-14, մայիս, 1991:*

Գետաշենի և Մարտունաշենի իրադարձությունների վերաբերյալ[71]: ՀՀ ՆԳ նախարարությունը, հանդես գալով հայտարարությամբ, հասարակայնությանը տեղյակ պահեց, որ Լեռնային Ղարաբաղում կատարվում են խուզարկումներ և անտեղի կալանավորում են մարդկանց: Այդ ամենը ուղեկցվում են խոշտանգումներով և բռնարարքներով: Դրանում մեղավոր են ԽՍՀՄ ներքին զորքերը և ադրբեջանական օմոնականները: ՀՀ ՆԳ նախարարությունը հայ ժողովրդին կոչ էր անում համախմբվել և պաշտպանել ազգի շահերը[72]: Նման բողոքներն ու պահանջները բազմաթիվ էին: Մամուլում հրապարակված մի շարք նյութերում դատապարտվում էր Ադրբեջանի իշխանությունների վայրագությունները: ՀՀ ԳԽ նախագահությունը, մայիսի 8-ին հանդես գալով հայտարարությամբ, նշեց, որ Գետաշենում և Մարտունաշենում կատարված արյունալի տեղահանումներին զուգընթաց, խորհրդային բանակը շարունակում է իր բռնարարքները Հայաստանի դեմ: Բռնության և ավերածությունների ենթարկված գյուղերի ցանկն ավելացավ Ոսկեպար, Կիրանց, Տեղ, Կոռնիձոր, Շուռնուխ, Խոզնավար, Արևաշեն և Հայաստանի այլ բնակավայրերով: Խաղաղ գյուղերի ռմբակոծումն ու գնդակոծումը օդից և ցամաքից խորհրդային իշխանությունները որակավորում էր որպես «անձնագրային ռեժիմի ստուգում», այլ ոչ թե պատերազմ: ՀՀ ԳԽ պահանջում էր անհապաղ վերջ տալ ագրեսիային հայ ժողովրդի նկատմամբ, միութենական և միջազգային իրավասու մարմինները քննության առնեն իրադարձությունները և տան համապատասխան եզրակացություններ, կատարված բարբարոսությունների ոգեշնչողների, կազմակերպիչների և կատարողների պատասխանատվության հարցը անխուսափելիորեն պետք է դառնա միջազգային հանրության քննության առարկա[73]: Սակայն Ադրբեջանի իշխանությունները փորձում էին այդ ամենի համար իրենց պատասխանատու չզգալ: Բանը հասել էր նրան, որ Ադրկոմկուսի Կենտկոմի քարտուղար Ա.Դաշտամիրովը լպիրշաբար հայտարարեց, թե «Մենք հազիվ պաշտպանվում էինք հայ գրոհայիններից, մեր ամբողջ ջանքերը դրան էին ուղղված: Եթե մենք այդ չանեինք, հայերը մեզ կկոտորեին»[74]: Իսկ հանրապետության

[71] *«Խորհրդային Ղարաբաղ», 07.05.1991:*

[72] *«Հայաստանի Հանրապետություն», 04.05.1991:*

[73] *Նույն տեղում, 09.05.1991:*

[74] *«Երեկոյան Երևան», 24.05.1991:*

գլխավոր դատախազ Ա.Գայիբովը, հրապարակայնորեն շնորհակալություն հայտնելով բանակին, խորհուրդ էր տալիս գործել «ավելի ակտիվ, համարձակ և մեծ հարձակողականությամբ»[75]:

* * *

1991թ. գարնանը ԽՍՀՄ-ը հասել էր փլուզման եզրին: Ազգամիջյան բախումներ էին տեղի ունենում ոչ միայն Ադրբեջանում, այլև Վրաստանում, Մոլդավայում, Տաջիկստանում, Ղազախստանում, Ռուսաստանի Դաշնության և երկրի կայսերապետության այլ տարածքներում: Այդ բոլոր տեղերում ազգային հարցն ուներ յուրահատկություններ և արժանանում էր տարբեր գնահատականների: Օրինակ՝ Ադրբեջանի իշխանությունները հայտարարում էին, թե «Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը միայն Ադրբեջանի ներքին հարցն է»: «Մենք,– պնդում էր Ա.Մութալիբովը,– պետք է այն լուծենք՝ չխառնելով ոչ մի հայի: Երբ մենք կանոնավորենք վիճակն այդ օջախում, երբ վերացնենք առճակատումը, այդ ժամանակ կանցնենք Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունների պարզմանը»: Նա հետո անամոթաբար հայտարարեց, թե ներկա իրադարձություններում «գոյություն ունի ոչ թե ժամանակի, այլ արյան գործոն: Եվ, այնուամենայնիվ, այն արյունը, որն անխուսափելի է զենքի առգրավման գործողությունների ընթացքում, կարող է կաթիլ թվալ այն բանի համեմատ, եթե իրագործվի... ուղղակի բախումը պայքարում...»: Ադրբեջանի նախագահը համոզված էր, որ ինքը կարող է «կարգուկանոն» հաստատել իր տանը, այսինքն՝ Ադրբեջանում[76]:

Ղարաբաղյան շարժման հենց սկզբից աշխարհի տարբեր վայրերում, ինչպես անվանարկվել է, ստեղծվեցին բազմաթիվ կազմակերպություններ, ընկերություններ ու միավորումներ, որոնք իրենց համերաշխությունն էին հայտնում Շարժմանը: Նշվել է, որ ռուս մտավորականների «Ապրիլ» կազմակերպության կազմկոմիտեի 22 անդամներ 1991թ. մարտին հռչակեցին «Ղարաբաղ» կոմիտեի հիմնադրման մասին, որի հիմնական խնդիրն էր պաշտպանել ղարաբաղցիների արդար պահանջը: Այդ կազմակերպության անդամ Ելենա Բոնները՝ Անդրեյ Սախարովի կինը, գերմանական «Գալլեր Տագ բլատտ» թերթում աշխարհին կոչ արեց «փրկել Ղարաբաղը»: Համանման կոչեր զանազան տեղերից հնչում էին ամեն օր, սակայն Արցախ-Ղարաբաղի հիմնահարցը շարունակվում էր ավելի խճճվել: Երկրի տարբեր ծայրերից հարյուրավոր նամակներ ու հեռագրեր էին հեղեղում Կրեմլը, որի հեղինակները պահանջում էին անհապաղ լուծել Ղարաբաղի հարցը: ԼՂԻՄ աշխատավորների կոլեկտիվների ժողովները մայիսի 7-ին բանաձև ընդունեցին Գետաշենի և Մարտունաշենի իրադարձությունների վերաբերյալ, որն ուղարկեցին ԽՍՀՄ բարձրագույն մարմիններին և ՀՀ Գերագույն խորհրդին: «Այդ բարբարոսական արարքը,– ասված է այդ բանաձևում,– Ադրբեջանում հայերի ցեղասպանության շարունակությունն է, ցեղասպանություն, որն այդ հանրապետության ղեկավարությանը հասցրել է Խորհրդային Միության ղեկավարների կողմից պաշտպանվող պետական քաղաքականության աստիճանի»: Արցախցիներն ի լուր աշխարհի նշում են. «Աշխարհում ոչ մի տեղ այնպես չեն ոտնահարվում մարդու իրավունքներն ու ազգային արժանապատվությունը, ինչպես որ Ադրբեջանում է արվում հայ բնակչության նկատմամբ»: Նրանք երկրի ղեկավարությունից պահանջում էին շտապ միջոցներ ձեռնարկել Գետաշենի և Մարտունաշենի գյուղերի բնակիչների բռնի տեղահանումը դադարեցնելու և նրանց համար իրենց հողում անվտանգ ապրելու պայմաններ ստեղծելու համար[77]:

1991թ. մայիսը հայ ժողովրդի համար չափազանց ծանր շրջան էր: Անհրաժեշտ էր բոլոր ուժերը միավորել և պաշտպանվել խորհրդային անվերջ հարվածող մուրճից: ՀՀ ԳԽ-ը, մայիսի 6-ին դիմելով հայ ժողովրդին, դատապարտում էր ԽՍՀՄ բարձրագույն իշխանությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ կիրառվող սադրանքները: Շեշտվում է, որ այդ «ողբերգություններից խուսափելու միակ ճանապարհը անկախությունն է», և որ այդ ճանապարհին «արմատական քայլեր են կատարվել բազմակուսակցական համակարգի, սեփականության տարբեր ձևերի, ժողովրդավարության հաստատման ուղղությամբ»: Այնուհետև ասված է, որ մոսկովյան կենտրոնական իշխանությունները փորձում են սադրանքներով կոտրել իրավական ճանապարհով դեպի անկախություն գնացող հայ ժողովրդի կամքը՝ բռնություններ գործադրելով Արցախում, Գետաշենում, Շահումյանում, ազգամիջյան ընդհարումներ հրահրելով Ադրբեջանի հետ սահմանամերձ շրջաններում: ՀՀ Գերագույն խորհուրդը հանրապետու-

[75] **Бабанов И., Воеводский К.,** *նշվ. աշխ., էջ 50:*
[76] *"Независимая газета", 02.04.1991.*

[77] *«Խորհրդային Ղարաբաղ», 08.05.1991:*

թյան բոլոր քաղաքական ուժերին և սոցիալական խմբերին կոչ էր անում համախմբվել Հայոց պետականության շուրջը, քանի որ «դա մեր ազգային իղձերի իրականացման հաստատ» երաշխիքն է[78]:

Ակնհայտ է, որ խորհրդային բռնատիրությունը նահանջելու ոչ մի միտում չուներ: ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության զորքերը, ազերի օմօնականների ամենաակտիվ մասնակցությամբ, 1991թ. ապրիլի վերջին խուզարկելով Հադրութի շրջանը,՝ պատանդ տարան 38 հոգու[79]: Հայաստանին պատերազմական գործողությունների մեջ ներքաշելու նպատակով ապրիլի 26-ից սկսած ազերիները հարձակվում էին Արարատի, Նոյեմբերյանի, Տավուշի, Կապանի և այլ շրջանների սահմանամերձ գյուղերի վրա[80]: Այազ Մութալիբովը ապրիլի 27-ին ելույթ ունենալով Ադրբեջանի հեռուստատեսությամբ, Ադրբեջանում ապրող հայերից կտրականապես պահանջեց կամ հեռանալ հանրապետությունից, կամ էլ ընդունել Ադրբեջանի օրենքները ու պահանջները[81]:

Մոսկվան բացահայտորեն իր վրա էր վերցրել Ադրբեջանի զավթողական քաղաքականության պաշտպանությունը: Մոսկվայում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Ֆելիքս Մամիկոնյանը, երբ մայիսի 2-ին ԽՍՀՄ ներքին գործերի նախարարի տեղակալ, գեներալ Յու.Շատալինին բողոքում է Գետաշենում և Ղարաբաղում կատարվող վայրագությունների մասին, վերջինս սպառնում է Հայաստանը հողին հավասարեցնել՝ հիշեցնելով, որ Հայաստանի ատոմակայանի բանալին գտնվում է իր գրպանում: Նա նաև սպառնում էր շրջափակել Մոսկվայում գտնվող Հայաստանի ներկայացուցչությունը և ծերբակալել բոլորին՝ չմոռանալով ավելացնել՝ «Այդ մասին կարող եք տեղեկացնել Գորբաչովին»: Իսկ երբ մայիսի 6-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդում քննարկվում էր ՀՀ Գերագույն խորհրդի ապրիլի 25-ի պահանջը՝ հրավիրել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտակարգ համագումար և քննարկել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրն ու հայ-ադրբեջանական հարաբերությունների հարցը, Բ.Պուգոն

[78] *Նույն տեղում:*
[79] *«Հնչակ», N13-14, մայիս, 1991:*
[80] *Նույն տեղում:*
[81] *"Бакинский рабочий", 28.04.1991: Տե՛ս նաև «Խորհրդային Ղարաբաղ», 30.04.1991:*

և Ա.Լուկյանովը հակահայ ելույթներ ունեցան, և Հայաստանի պահանջը մերժվեց[82]:

1991թ. մայիսի 10-ին հրապարակվեց ԽՍՀՄ բարձրագույն մարմիններին, աշխարհի մի շարք խոշոր պետությունների ղեկավարներին, հասարակական-քաղաքական մարմիններին ուղղված Գետաշեն և Մարտունաշեն գյուղերից բոլոր տեղահանվածների անունից 205 հոգու ստորագրությամբ նամակ-բողոքը, որտեղ նշված է, որ երեք տարի շարունակ իրենք պայքարել և տոկունությամբ տարել են «ադրբեջանական ավազակային կազմավորումների հանցավոր արարքները»՝ պաշտպանելով իրենց պատմական հողը: Նրանք վստահ հայտնում են, որ «այդ անգամ ևս կպաշտպանեին, եթե չլիներ երկրի զինված ուժերի և ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի ենթգ միջամտությունը»: Միջազգային հանրությունից, բոլոր պետություններից և կազմակերպություններից խնդրում էին օգնել վերադառնալու իրենց բնակավայրերը և հրապարակավ դատ անել Մարտունաշեն և Գետաշեն գյուղերում արյունահեղ սպանդի կազմակերպման գործում մեղավոր անձանց նկատմամբ: Նաև պահանջում էին «այդ գյուղերը մտցնել ԼՂԻՄ-ի կազմի մեջ՝ իբրև մեր վաղնջական հողերում մեր հետագա անվտանգ բնակության միակ երաշխիք»[83]:

Գետաշեն-Մարտունաշենը հայաթափվելուց հետո Արցախում և Հայաստանի սահմանամերձ շրջաններում վիճակն ավելի էր ծանրացել: Հայաստանի Ոսկեպար գյուղի մոտ մայիսի 5-ին տեղի ունեցավ մեծ ողբերգություն, որի հետևանքով խորհրդային զենքից զոհվեցին 14 հոգի[84]:

Ստեղծված բարդ վիճակը հաշվի առնելով՝ մարզի իշխանությունները պատրաստակամություն հայտնեցին քաղաքական բանակցություններ սկսել Ադրբեջանի ղեկավարության հետ և ԽՍՀՄ սահմանադրության ու օրենքների շրջանակներում փոխզիջումային լուծումներ գտնել: 1991 թ. մայիսի 15-ին տեղի ունեցած մարզգործկոմի ընդլայնված նիստը, լսելով մարզխորհրդի գործկոմի նախագահ Ս. Բաբայանի հաղորդումը մարզում ստեղծված իրադրության մասին՝ արձանագրեց, որ մայիսի 15-ի վաղ առավոտյան այսպես կոչված «անձնագրային ռեժիմը ստու-

[82] *«Հայաստանի Հանրապետություն», "Голос Армении", 04.05.1991, 09.05.1991 և այլն:*
[83] *«Խորհրդային Ղարաբաղ», 10.05.1991:*
[84] *"Правда", 20.05.1991.*

գելու համար» մեծ թվով զինվորականների ու տեխնիկայի մասնակցությամբ, օմօնականների ուղեկցությամբ մարզի բոլոր շրջաններում տեղի են ունենում անկարգություններ և բնակչությանը տեղահանելու համար ուժի գործադրում: Անհրաժեշտ է որոշել իշխանությունների վերաբերմունքը այդ անօրենությունների նկատմամբ: Պետք է ամբողջ հասարակությունը ոտքի ելնի և մասսայական բողոք հայտնի: Այլապես մարզը կհայտնվի բռնագաղթեցման առաջ: Մարզային դատախազը և օրինապահ մյուս մարմինները պետք է պատասխան տան, թե ինչ է կատարվում մարզում: Հայաստանի Գերագույն խորհրդի արցախցի պատգամավորները ևս չպետք է լռեն: Այդ ամենը գալիս է Մոսկվայից, որտեղ մշակվել է այդ պլանը: Ելույթ են ունենում Կարեն Այվազյանը, Հրաչիկ Բեգլարյանը, Օլեգ Եսայանը, Համլետ Գրիգորյանը, Շմավոն Պետրոսյանը, Վալերի Ղազարյանը, Զավեն Մովսիսյանը, Էդուարդ Ղուկասյանը, Մաքսիմ Միրզոյանը, Արկադի Մանուչարովը, Վարդան Հակոբյանը և ուրիշներ: Հայաստանի ազգային խորհրդի պատգամավոր Համլետ Գրիգորյանը իր ելույթում նշում է, որ Մոսկվայի ու Բաքվի վերաբերմունքը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ չորրորդ տարին է, ինչ նույնն է: Մարզխորհուրդը ներկա կազմով ոչինչ անել չի կարող: Պետք է զորահավաք հայտարարվի ամբողջ Ղարաբաղում: Ով ինչ կարող է, թող վերցնի և դուրս գա հայրենիքը պաշտպանելու համար[85]: Հրաչիկ Բեգլարյանը կոչ է անում մահվան պատրաստ լինել: Ի՞նչ կա որ. կմեռնենք: Հարկավոր է մարզում հայտարարել ռազմական դրություն: Այո՛, Մոսկվան երես է թեքել մեզնից: Մենք ինքներս մեզ կպաշտպանենք: Կուտակված զենքը պետք է բաժանել ժողովրդին: Պետք է պայքարել: Շմավոն Պետրոսյանը շեշտում է, որ նույնիսկ խախտվել է արտակարգ դրության կարգը: Անձնագրային ստուգում անցկացնել, այդ չի նշանակում, որ կարելի է գիշերը մարդկանց դուրս հանել տեղաշարից և առանց բացատրելու տանել նրանց: Հարկավոր է բանակցությունների գնալ նույնիսկ Պոլյանիչկոյի հետ: Վարդան Հակոբյանը նշում է, որ պետք է փրկել մարդկանց, կանխել ավերումը, արյունահեղությունը և մեր կանանց պատիվը: Բոլորս պետք է կենտրոնանանք Արցախում[86]: Լեոնարդ Պետրոսյանը առաջարկում է գնալ բանակցությունների ադրբեջանական կողմի հետ: Մարզխորհրդի գործկոմը որոշում է

[85] *ԼՂՀ ՊԱ, ֆ.1, գ. 2., գ. 314, թ. 2:*
[86] *ԼՂՀ ՊԱ, ֆ.1, գ .2., գ. 314, թ. 2:*

մարզում հայտարարել արտակարգ դրություն և ստեղծել ժամանակավոր արտակարգ հանձնաժողով մարզխորհրդի գործկոմի նախագահությամբ[87]:

Մարտի 16-ին կրկին տեղի ունեցած մարզխորհրդի գործկոմի ընդլայնված նիստը, քննության առնելով մարզում ստեղծված ծանր վիճակը, նպատակահարմար գտավ ադրբեջանական կողմի հետ բանակցությունների գնալ ոչ թե Արցախի քաղաքական հարցը քննարկելու, այլ մարզը ներկա ծանր վիճակից դուրս բերելու համար: Բոլոր ելույթ ունեցողներն էլ պաշտպանեցին այդ առաջարկությունը: Մարզխորհրդի գործկոմն ընդունեց հայտարարություն, ըստ որի պատրաստակամություն հայտնվեց Արցախում խախտված սահմանադրական իրավունքները վերականգնելու համար բանակցությունների մեջ մտնել ադրբեջանական կողմի հետ[88]: Այդ նպատակով ընտրվեց 5 հոգուց բաղկացած մի պատվիրակություն[89]: Սակայն Ադրբեջանի իշխանությունները ոչ միայն հրաժարվեցին այդ առաջարկությունն ընդունել, այլև որոշեցին իրագործել մի նոր հանցագործություն, ըստ որի նախատեսվում էր Ստեփանակերտում ձերբակալել 200 հոգու: Շարժման ղեկավարներին հաջողվել էր ձեռք բերել այդ ցուցակը և զգուշացնել բոլորին: Այդուհանդերձ, այդ նույն գիշերը ձերբակալվեցին ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Համլետ Գրիգորյանը ու բանվորական խմբի ղեկավար Ռաֆայել Գաբրիելյանը և տարվեցին անհայտ ուղղությամբ: Շուրջ 32 օր նրանք տանջանքների ենթարկվեցին Բաքվի Շուվելյան բանտում[90]: Մայիսի 17-ին ՀՀ Գերագույն խորհուրդը բողոք ուղարկեց ԽՍՀՄ գլխավոր դատախազին՝ ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորին անօրեն ձերբակալելու մասին, և նրանից պահանջվեց ապահովել Հ.Գրիգորյանի պատգամավորական անձեռնմխելիությունը:

Նման վայրագությունները Ադրբեջանի իշխանությունների համար սովորական երևույթ էին: Մայիսի սկզբին, ըստ Մ.Գորբաչովի, Ադրբեջանի 500 հազար հայերից 300 հազարը բռնագաղթվել էին, իսկ Հայաստանը լքել էին 150-160 հազար ադրբեջանցիներ: 1991թ. մարտ-մայիս ամիսներին Լեռնային Ղարաբա-

[87] *Նույն տեղում, թ. 7-10:*
[88] *Նույն տեղում, գ. 315, թ. 7-8:*
[89] *Նույն տեղում, գ. 315, թ. 7-8:*
[90] *Այդ մասին տես Սողոմոնյան Ն., նշվ. աշխ.:*

ղում և միա շրջակա տարածքում կատարվել էր 235 հարձակում և գնդակոծություն, ըստ որում 153-ը ձեռնարկվել է հայերի, 82-ը՝ ադրբեջանցիների կողմից: Սպանվել են 20 ադրբեջանցի և 10 հայ, 115 անգամ գնդակոծվել են ԽՍՀՄ ներքին զորքերի միավորումները: Զոհվել է ինը զինվոր, 15-ը վիրավորվել[91]: Երկրի նախագահը զլանում էր ասել, որ միայն Հայաստանում մայիսի առաջին շաբաթում սպանվել էր 24 մարդ, որից՝ 14-ը՝ միլիցիայի աշխատակից, խլվել էր 166 միավոր հրազեն, որից 124-ը՝ միլիցիայի աշխատակիցներից[92]:

ՀՀ Գերագույն խորհուրդը մայիսի 17-ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության՝ Ադրբեջանի հետ սահմանակից շրջաններում և Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակի մասին» որոշում, որտեղ նշված է, որ մայիսի սկզբին Գետաշեն և Մարտունաշեն գյուղերում, Ադրբեջանի հետ Հայաստանի սահմանակից շրջաններում ու Լեռնային Ղարաբաղում ԽՍՀՄ զինված ուժերի և ադրբեջանական օմոնականների կողմից մոտ 500 հոգի առևանգվել ու գրոհայինների անվան տակ հանձնվել են Ադրբեջանի իրավապահ մարմիններին: ՀՀ Գերագույն խորհուրդը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունից պահանջեց նրանց դուրս բերել Ադրբեջանի տարածքից և հարուցված քրեական գործերը հանձնել երկրորդ կողմի վարույթ[93]: ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը դիմում հղեց նաև ԽՍՀՄ ինքնավար հանրապետությունների Գերագույն խորհուրդների նախագահներին, որտեղ հանգամանորեն պատմելով Գետաշենում, Մարտունաշենում, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի սահմանամերձ շրջաններում խորհրդային բանակի բուն արարքների հետևանքների մասին, շեշտվում է, որ մարզի հայկական գյուղերի գրեթե բոլոր տղամարդկանց կալանում և տեղափոխում էին Ադրբեջանի տարածք: Օրինակ է բերվում, որ մայիսի 16-ին իրենց մշտական բնակության վայրերից բռնագաղթեցվել են Հադրութի շրջանի և Բերդաձորի ենթաշրջանի 15 գյուղերի խաղաղ բնակիչներ: ՀՀ Գերագույն խորհուրդը խնդրում էր ներկայացուցիչներ ուղարկել ԼՂԻՄ և Հայաստանի սահմանամերձ շրջաններ ու միջոցառումներ ձեռնարկել բռնի տեղահանվածներին իրենց բնակավայրերը վերադարձնելու[94]:

Իսկ մայիսի 30-ին տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի մարզխորհրդի գործկոմի նիստը, քննարկելով բռնագաղթեցման հարցը, ընդգծեց, որ Գետաշենի ենթաշրջանից, Հադրութի և Շուշիի շրջաններից բռնությամբ տեղահանվել են շուրջ 5 հազար մարդ: Մարզգործկոմը վճռականորեն դատապարտում է ադրբեջանական իշխանությունների կողմից հայ ժողովրդի բռնագաղթեցումը և միութենական բարձրագույն մարմիններից պահանջում միջոցառումներ ձեռնարկել նոր բռնագաղթեցումը կանխել ու բռնագաղթվածներին անհապաղ իրենց բնակավայրերը վերադարձնել, ինչպես և դատախազությունից և արտակարգ դրության շրջանի պարետությունից պահանջել իրագործել իրենց վրա դրված պարտականությունները[95]:

Ազերի վայրագները հայերին որսալու և հանրապետության բանտերը տանելու համար Ադրբեջանի իշխանություններից ստանում էին մեծ գումարներ, նվերներ ու պաշտոններ: Պատմական Ամարաս վանքը գտնվում է Արցախի Մարտունու շրջանի Սոս գյուղից յոթ կիլոմետր հարավ: 1990թ. սեպտեմբերի 9-ին գյուղում լուր տարածվեց, թե զինվորական համազգեստով մարդիկ հարձակվել են վանքի և նրանից ոչ հեռու գտնվող կոլտնտեսության անասնապահական ֆերմայի վրա: Գյուղի տղամարդիկ շտապում են վանք և ֆերմա: Ճանապարհին նրանց շրջապատում են խորհրդային ներքին զորքերի և Ֆիզուլու ներքին գործերի բաժնի միլիցիոներներից բաղկացած ստորաբաժանումները: Շատերին ձերբակալելով՝ մեքենաներով տանում են Ֆիզուլի, որտեղ նրանց ենթարկում են ծեծի ու պահում մեկ շաբաթ: Սեպտեմբերի 17-ին նրանցից ինը հոգու տեղափոխում են Բաքու՝ Բայիլովի բանտը, որտեղ նրանց ենթարկում են անասելի տանջանքների: Այս խնդրի առնչությամբ բոլորին էլ դատապարտում են ազատազրկման և 1991թ. գարնանը տեղափոխում Հայաստանի բանտերը: Նրանց օգնեց ԽՍՀՄ կառավարությունը, որը որոշում ընդունեց տարբեր հանրապետություններում դատված կամ պատիժ կրող դատապարտյալներին իրենց ազգային հանրապետություններն ուղարկելու վերաբերյալ: Անօրեն դատա-

[91] *«Հայաստանի Հանրապետություն», 10.05.1991:*
[92] *Նույն տեղում, 11.05.1991:*
[93] *Նույն տեղում, 21.05.1991:*
[94] *Նույն տեղում:*
[95] *ԼՂՀ ՊԱ, ֆ.1, գ. 2, գ. 316, թ. 14-15:*

պարտված սոսեցիները շուտով ազատվեցին բանտից և վերադարձան հայրենի օջախներ[96]:

Այսպիսի օրինակները շատ-շատ են: «Նովոստի» լրատվական գործակալության ոչ հաստիքային թղթակից 23-ամյա Վարդան Հովհաննիսյանը 1991թ. մայիսի 6-ին Գետաշենում օմօնականների կողմից գերվել և տարվել էր Կիրովաբադի (հետո՝ Գյանջա) բանտ: Նա, ինչպես և Գետաշենում մյուս ձերբակալվածները, բանտում ենթարկվում էին դաժան կտտանքների: Բուլղարուհի կինովավերագրող Ցվետանա Պասկալևան համառ ջանքերով Ադրբեջանի իշխանություններից իրավունք է ստանում հանդիպել Վ.Հովհաննիսյանի հետ: Ց.Պասկալևայի բնորոշմամբ՝ Շուշիի և Կիրովաբադի բանտերում իր տեսած բանտարկյալներից Վ.Հովհաննիսյանը ամենասարսափելի վիճակում էր: Վերջինիս փրկելու համար նա հանդես է գալիս «Մոսկովսկիյե Նովոստիի» թերթում, հաղորդումներ տալիս «Սվոբոդա» ռադիոկայանով, բողոքներ ուղարկում բազմաթիվ հասցեներով: Այդ ամենի շնորհիվ Վ.Հովհաննիսյանն ազատվում է բանտից[97]: Կամ ուրիշ օրինակ. Ստեփանակերտի օդանավակայանը դարձել էր հայերին ստորացնելու, ծաղրուծանակի ենթարկելու, անտեղի ձերբակալելու և պատանդ վերցնելու վայր: Մարտունու շրջանի «Քարակերտ» կոոպերատիվի նախագահ Բորիս Բաղրյանը գրավոր դիմել էր Արտակարգ դրության շրջանի պարետ, գնդապետ Վ.Ժուկովին՝ հայտնելով, որ օդանավակայանում իրենից ամեն ինչ խլել են, նույնիսկ իր ղեկավարած կոոպերատիվի կնիքն ու դրոշմանիշը: Վ.Ժուկովը նրան գրավոր պատասխանել է, թե կնիքն ու դրոշմանիշը վերցրել են, որովհետև «նրանց վրա գրված տեքստերն ադրբեջաներեն չեն, մինչդեռ կոոպերատիվը գրանցված է Ադրբեջանում: Այդ պատճառով էլ կնիքն ու դրոշմանիշը հնարավոր չէ վերադարձնել կոոպերատիվին»[98]: Ասենք նաև, որ 1991-ի գարնանը Հադրութի շրջանից և Բերդաձորի ենթաշրջանից հազարավոր ընտանիքներ, ենթարկվելով բռնագաղթման, ապաստանել էին Գորիսի շրջանում: Հայ ժողովուրդը խիստ անհանգստացած էր Արցախում ստեղծված այդ վիճակի համար: Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի գիտխորհուրդը, քննարկելով Արցախում և Հայաստանի սահմանամերձ գյուղերում ստեղծված տագնապալի վիճակը, դիմեց աշխարհի բոլոր ազնիվ մարդկանց՝ կոչ անելով իրենց ձայնը բարձրացնել արցախահայության տեղահանումը կանխելու համար[99]: Համանման կոչեր ու բողոքներ էին ընդունում հարյուրավոր հիմնարկ-ձեռնարկություններ և ուղարկում աշխարհի տարբեր հասցեներով:

1991թ. հունիսին Լեռնային Ղարաբաղ ժամանեց Վ.Ֆոտեևի գլխավորած դիտորդ հանձնաժողովը: Այդ ժամանակ արդեն հայտնի էր դարձել Վ.Պոլյանիչկոյի հայտարարությունն այն մասին, որ պետք է լրիվ հայաթափվի ոչ միայն Լեռնային Ղարաբաղը, այլև Զանգեզուրը, որը, իբր, ադրբեջանական տարածք է: Այդ դահիճը փորձում էր զինվորական վերնախավին և դիտորդ հանձնաժողովին համոզել, որ Հադրութի շրջանում սկսված հայաթափումը կշարունակվի նաև Մարտակերտի ու Շահումյանի շրջաններում: Նա Մոսկվայից պահանջում էր պատժիչ նոր գործողություններ իրագործել Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում: Հենց Պոլյանիչկոն էր, որ հունիսի 16-ին առաջարկեց տեղահանել Հադրութի շրջանի Տող գյուղի հայերին: Նա նույնիսկ առաջարկեց Արցախում գտնվող խորհրդային ուժերը հունիսի 15-ից փոխարինել նոր զորամիավորումներով: Այդ նպատակով Ադրբեջանի ներքին զորքերի նախարար Ռ.Ասադովը Յու.Շատալինից պահանջել էր Շահումյանի շրջանից դուրս բերել խորհրդային ներքին զորքերի զորամասերը: Վ.Պոլյանիչկոն գտնում էր, որ խորհրդային ներքին զորքերը պետք է դուրս բերվեն նաև Լեռնային Ղարաբաղից: 1991թ. հունիսի երկրորդ կեսին Արցախում տեղակայված խորհրդային զորամասերը փոխարինեցին նորերով: Մոսկվայի այդ քայլը նոր հաճույք պատճառեց Բաքվին: Այդ օրերին Ադրբեջանի բանտերում տանջամահ էին արվում խորհրդային զինվորների կողմից ձերբակալված և Ադրբեջանին հանձնված 350 հայորդիներ: Ստեփանակերտում իր ծառայողական պարտականությունը կատարելու ժամանակ ձերբակալվել էր միլիցիայի մայոր Հրաչիկ Շահբազյանը, տարվել Շուշիի բանտը և հունիսի 13-ին դաժանաբար սպանվել, հետո հայտարարվել, թե նա բանտախցում ինքնասպանություն է կատարել: Բանտում տանջանքներին չդիմացավ նաև Կիչան գյուղի կոլտնտե-

[96] *Սոսեցի անմեղ կալանավորներին Բաքվի Բայիլովի բանտում հանդիպել և որոշ օգնություն է ցույց տվել նույնպես կալանավոր Դենպր Բաղդասարյանը (այդ մասին տես Բաղդասարյան Դ., Դիմակայություն, Եր., 1998, էջ 49-52):*

[97] *"Зов Арцаха", N6, 1991.*

[98] *Գնդապետ Վ. Ժուկովի պատասխանի պատճեն. տես հեղինակի անձնական արխիվ:*

[99] *«Պոլիտեխնիկ», 10.06.1991:*

սության նախագահ Յուրի Ղուլյանը: Ազերի օմօնականները նրան պատանդ էին վերցրել մայիսի 14-ին: Դահիճները փորձում էին համոզել, թե իբր Յու. Ղուլյանը հանկարծամահ է եղել ստամոքսի խոցից:

Արցախ-Ղարաբաղում իրագործվող այդ բռնությունների և վանդալիզմի մասին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորները բողոք-նամակ ուղարկեցին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պերես դե Կուելյարին, իսկ Մոսխորհրդի 105 ժողպատգամավորներ բողոք ուղարկեցին Մ.Գորբաչովին և Գերագույն խորհրդի նախագահությանը՝ պահանջելով անհապաղ դադարեցնել Հայաստանի տարածքում իրագործվող պատժիչ գործողությունները և արցախահայության բռնի տեղահանությունը[100]: Սանկտ Պետերբուրգի մտավորականության «Լենինգրադսկայա տրիբունա» կազմակերպությունը՝ հանդես գալով կենտրոնական իշխանություններին մեղադրող հայտարարությամբ, աշխարհին տեղյակ պահեց, որ հայ ժողովրդի դեմ հակաօրինական գործողությունները կատարվում են պետական մակարդակով, բանակային ստորաբաժանումների և Ադրբեջանի հատուկ ջոկատայինների ուժերով: Այդ փաստաթղթի հեղինակները խորհրդային իշխանությունից պահանջում էին ամենասեղմ ժամկետում պետական մակարդակով կատարել հետաքննություն, ձեռնամուխ լինել ավերված բնակավայրերի վերականգնմանը, ԼՂԻՄ-ի հիմնահարցի և դրա հետ առնչվող հարցերի հրապարակային քննարկմանը, իսկ որոշում ընդունելիս ղեկավարվել նախ և առաջ մարդու իրավունքների միջազգային սկզբունքներով[101]: Որ խորհրդային բանակը Արցախում իրագործում էր պատժիչ գործողություններ, դա բացահայտ էր: Խորհրդային բանակի սպա Օլեգ Կրաևսկին, ելույթ ունենալով մայիսի 24-ին Երևանի Ազատության հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում, հայտարարեց. «Ես չեմ ուզում ծառայել խորհրդային զինված ուժերում... այն պատճառով, որ վերջին ժամանակներս բանակը կատարում է պատժիչ գործողություններ խաղաղ բնակչության նկատմամբ»[102]:

Այդ կապակցությամբ բերենք մեկ ուրիշ օրինակ. 450 տնտեսություն և 1775 բնակիչ ունեցող Պառավաքար գյուղի վրա մայիսի 10-ի առավոտյան ժամը 7-ին զինվորականները սկսեցին

[100] *«Ազգ», 25.05.1991:*
[101] *«Հայաստանի Հանրապետություն», 04.06.1991:*
[102] *Նույն տեղում, 30.05.1991:*

համատարած ռմբակոծություն: Այդ գործողություններին մասնակցում էին 50 տանկ և զրահամեքենա, 10 ռազմական ուղղաթիռ: Իրագործելով «Պառավաքար» ռազմական գործողությունը՝ խորհրդային ուժերը դա իրականացնում էին պետական ամենաբարձր մակարդակով, որը հանդիսանում է պետական ահաբեկչության դասական օրինակ[103]: Հայտնի դարձավ, որ ԽՍՀՄ փոխնախագահ Գ.Յանաևը համաձայնություն էր տվել Արցախ-Հայաստանում իրագործված այդ ահաբեկչություններին: Նա համաձայնվել էր, որ գործողություններին պետք է մասնակցեին Ադրբեջանի հատուկ ջոկատները՝ թվով 1000 մարդ: Գործողություններին մասնակցող խորհրդային ստորաբաժանումները և հատուկ ջոկատայինները ենթարկվում էին Ադրբեջանի ներքին գործերի նախարարությանը: Հատուկ ջոկատայինների անվտանգությունն ապահովում էին խորհրդային զորամասերը: Ստեղծվել էին գտման կետեր, որոնք գտնվում էին Ջեբրաիլի, Ֆիզուլու, Աղդամի, Միրբաշիրի և Շուշիի շրջաններում: Բոլոր ձերբակալվածները փոխադրվում էին այդ կետերը: Գործողության պլանի համաձայն՝ ադրբեջանական բնակավայրերը ստուգման ենթակա չէին[104]: Բերդաձորից տարել էին 60 տղամարդ, որոնցից 40-ը պահվել էին: Օմօնականները բերդաձորցիներից պահանջել էին ստորագրել դիմումներ՝ իբրև կամավոր Հայաստան տեղափոխվելու խնդրանքով: Հայկական շատ գյուղեր վերցվել էին հսկողության տակ: Խուզարկումներ կատարվեցին նաև Մարտունու շրջանի Գիշի, Սպիտակաշեն, Եմիշճան, Բերդաշեն, Սոս, Մաճկալաշեն գյուղերում, և ձերբակալվեց 35 մարդ: Մայիսի 16-ին Արփագյադուկ գյուղի տարածքում գտնվել են թոշակառուներ Հայկանուշ Մանասյանի, Հայասեր Հակոբյանի, Սուրեն Կարապետյանի և Եմմա Կարապետյանի դիակները: Փորձեցին տեղահանել Քարինտակի տղամարդկանց, սակայն արտակարգ դրության զինվորական ջոկատները պաշտպանեցին նրանց[105]: Ըստ տվյալների՝ 1991թ. մայիսի 17-ի դրությամբ Արցախում ձերբակալվել էին ավելի քան 300 մարդ, որից 70-ը՝ Մարտունու շրջանից, որոնց թվում էին քաղգործկոմի նախագահը, շրջանի դատախազը, ավտոշարասյան պետը, էլեկտրացանցի պետը և այլն[106]:

[103] *Նույն տեղում, 14.05.1991:*
[104] *Նույն տեղում, 16.05.1991:*
[105] *Նույն տեղում, 17.05.1991:*
[106] *Նույն տեղում, 15.05.1991:*

Այդ չափազանց լարված և ծանր շրջանում Հայաստանի իշխանությունները սկսել էին զարմանալիորեն նահանջել իրենց դիրքերից: Այսպես՝ 1991թ. հունիսի 5-ին ՀՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում քննարկվում էր «Հանրապետության քաղաքական վիճակի մասին» հարցը: Պատգամավոր Իգոր Մուրադյանն, իր ելույթում վերլուծելով հանրապետության իշխանությունների կողմից տարվող քաղաքականության սխալներն ու թերությունները, առաջարկեց պաշտոնազրկել ազգային խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին: Արցախյան պայքարի ալիքների վրա իշխանության հասած Լ.Տեր-Պետրոսյանը քննարկումն ամփոփելիս անվայել վիրավորեց Իգոր Մուրադյանին և արցախահայությանը: Նա երևանաբնակ արցախցիներին մեղադրում էր իբր Մոսկվայի կամակատարներ դառնալու և այն բանի մեջ, որ նրանք սկսել էին «ժողովրդի մտքերը խռովելու գործարշավ՝ ցույց տալու համար, թե իբր Արցախը փրկելու ուրիշ ճանապարհ չկա, եթե ոչ հրաժարվել անկախությունից, հրաժարվել մեր ինքնուրույնությունից»[107]: Դա բացահայտ կեղծիք էր, քանի որ արցախցիները երբեք դեմ չեն եղել և չէին էլ կարող լինել անկախությանը: Ազատության հրապարակում «Արցախ» հայրենակցական միության կողմից դեռևս 1991թ. մարտին հրավիրված հանրահավաքում խստագույնս քննադատվել էր ՀՀՇ-ական պարտվողական կուրսը և որոշվել ճնշում գործադրել խորհրդարանի վրա ու պահանջել չնահանջել Ղարաբաղի հիմնախնդրից[108]: «Արցախ» հայրենակցական միության կոչով երևանաբնակ հազարավոր արցախցիներ, հավաքվելով Ադամյան փողոցում, պահանջում էին իրենց ներկայացուցիչներին թույլ տալ ելույթ ունենալ Գերագույն խորհրդի նստաշրջանում և Արցախում տեղի ունեցող իրադարձությունների մասին ողջ ճշմարտությունն ասել թե՛ խորհրդարանում և թե՛ լրատվամիջոցներով: Սակայն Հայաստանի Գերագույն խորհրդում 1991թ. հունիսի 6-ին տեղի ունեցած բանավեճը ցույց տվեց, որ Հայաստանի ՀՀՇ-ական ղեկավարությունն, ըստ էության, հրաժարվել էր Արցախի նկատմամբ ունեցած պատասխանատվությունից: Որոշ պատգամավորներ իրենց ելույթներում պնդում էին, թե Ղարաբաղի հայերն իրենք պետք է պաշտպանեն «իրենց ազգային շահերը»՝ մոռանալով 1989թ. դեկտեմբերի 1-ի որոշումը, և այն, որ Ղարաբաղը

[107] *«Ավանգարդ», 13.06.1991: "Голос Армении", 10.06.1991:*
[108] Աբրահամյան Հ., *Երբ հայրենիքը վտանգի մեջ է, էջ 34:*

Հայաստանի մասն է: Այդ ժամանակ ՀՀՇ-ի համար ընդունելի չէր, որ Լեռնային Ղարաբաղի մարզխորհուրդը ղեկավարում էր մի այնպիսի սկզբունքային անձնավորություն, ինչպիսին Սեմյոն Բաբայանն էր: ՀՀ ԳԽ հունիսի 5-ի նստաշրջանում ելույթ ունենալով՝ Լ.Տեր-Պետրոսյանը՝ նշել է, որ Արցախում գտնվել են ուժեր, որոնք պատրաստ են բանակցությունների գնալ ադրբեջանցիների հետ և ստորագրել համաձայնագիր: Հայաստանի ազգային խորհրդի նախագահը այն մտքին էր, որ առճակատումը այլևս չի կարող օգուտ բերել, հետևապես «անհրաժեշտ է անցնել բանակցությունների գործելակերպին», և որ բոլոր «կողմերը պետք է վերանայեն 1988 թվականից հետո հարցի վերաբերյալ կայացրած որոշումները» և վերականգնել «ստատուս քվոն»[109]: ԽՍՀՄ արցախցի պատգամավոր Հենրիխ Պողոսյանը նույնպես առաջարկում էր «առճակատման քաղաքականությունից անցնել երկխոսության քաղաքականության»: Նա շեշտում էր, որ Արցախի փրկության միակ ուղին բանակցություններն են, և անմտություն էր համարում ուրիշ տարբերակ փնտրելը, քանի որ «այն կարող է կործանարար լինել ոչ միայն Արցախի, այլև անկախության ուղին ընտրած ողջ հայ ժողովրդի համար»: Հ.Պողոսյանը նաև շեշտել է, որ երկխոսությունը հնարավոր կլինի այն ժամանակ, երբ Ադրբեջանը հրաժարվի բռնի ուժի քաղաքականությունից: Նա առաջարկում էր փոխել ԼՂԻՄ քաղաքական կուրսը, և չպետք է խաղալ մի ամբողջ ժողովրդի ճակատագրի հետ[110]: Իսկ ո՞վ պետք է փոխեր ԼՂԻՄ քաղաքականությունը: ՀՀՇ-ն ճնշում էր գործադրում Լեռնային Ղարաբաղի մարզխորհրդի գործկոմի նախագահ Ս. Բաբայանի վրա և նրանից պահանջում հեռանալ զբաղեցրած պաշտոնից: Եվ ահա հունիսի 11-ին տեղի ունեցած մարզգործկոմի նիստը, քննարկելով Ս. Բաբայանի՝ պաշտոնից հեռանալու վերաբերյալ հայտարարությունը, հարգեց նրա խնդրանքը, և գործկոմի նախագահի պարտականությունների կատարումը դրվեց Լեոնարդ Պետրոսյանի վրա[111]: Հիշականներն բացահայտորեն իրենց հույսը դրել էին Լեոնարդ Պետրոսյանի վրա: Եվ ահա, հաշվի առնելով ստեղծված բարդ, վերին աստիճանի խրթին իրավիճակը՝ անհրաժեշտ էր մշակել մարտավարության նոր գիծ: 1991թ. հունիսի 19-

[109] *«Հայաստանի Հանրապետություն», 11.06.1991:*
[110] *Նույն տեղում, 19.06.1991:*
[111] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, գ. 2, գ.316, թ. 14-15:*

ին տեղի ունեցած մարզխորհրդի գործկոմի ընդլայնված նիստը, քննարկելով «ԼՂՀՄ-ում սահմանադրական նորմերը վերականգնելու և իրավիճակը կարգավորելու միջոցառումների մասին» հարցը, նշեց, որ ստեղծված ծանր իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է միութենական մարմինների և Ադրբեջանի Հանրապետության իշխանությունների հետ առճակատումից անցնել երկխոսության, որի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունը պետք է համապատասխանի Սահմանադրությանը և ԽՍՀՄ օրենքներին: Նաև նշվեց, որ երկխոսության ժամանակ առաջին հերթին պետք է քննարկել ԼՂՀՄ պետական իշխանության սահմանադրական մարմինների վերականգնման հարցը, բռնագաղթեցման նոր փաստերի բացառում, միջոցառումներ ձեռնարկել բռնագաղթվածներին իրենց բնակավայրերը վերադարձնելու և արգելել հակաժողովրդական բոլոր տեսակի գործողությունները[112]: Ելնելով դրանից՝ որոշվեց մասնակցել Ադրբեջանի կազմկոմիտեի աշխատանքներին: 1991թ. հունիսի 18-ին կայացած կազմկոմիտեի նիստին առաջին անգամ մասնակցեցին մարզի ներկայացուցիչները: Երկար վիճաբանությունից հետո որոշվեց ԼՂԻՄ բոլոր ձեռնարկությունները վերաենթարկեցնել Ադրբեջանի նախարարների խորհրդին: Անկասկած, այդ որոշումն ընդունվեց Հայաստանի ՀՀՇ-ի ղեկավարության և արցախցի նրանց կամակատարների համաձայնությամբ, որն, այդուհանդերձ, արցախցիների համար անընդունելի քայլ էր: Ընդունված որոշումը պետք է կատարվեր տասնօրյա ժամկետում: Վ.Պոլյանիչկոն Ադրբեջանի ղեկավարության անունից խորամանկորեն վստահեցնում էր, թե Ղարաբաղում կպահպանվի արտակարգ դրությունը, և այն խախտողները, անկախ ազգությունից, կարտաքսվեն մարզի տարածքից: Նա պահանջեց՝ Ղարաբաղն իր բոլոր կապերը խզի Հայաստանի հետ: Բանը հասավ նրան, որ Պոլյանիչկոյի պահանջով Մարտունիում շրջկոմի առաջին քարտուղար նշանակվեց ոմն Ռահման Ռահմանովիչ: Լեոնարդ Պետրոսյանի նախաձեռնությամբ հունիսի 20-ին տեղի ունեցած մարզային ակտիվի նիստն ընդունեց առճակատման քաղաքականությունից երկխոսության քաղաքականության անցնելու մարտավարություն[113]: Դրանից մեկ օր առաջ՝ հունիսի 19-ին հրավիրված մարզխորհրդի ընդլայնված

[112] *Նույն տեղում, գ. 319, թ. 7-8:*
[113] *«Հայաստանի Հանրապետություն», 22.06.1991:*

նստաշրջանը, որին մասնակցում էին նաև շրջխորհուրդների նախագահները, հասարակական-քաղաքական կազմակերպությունների ղեկավարները և այլք, մշակել էր Արցախի հետագա գոյատևման ծրագիր: Ոմանք, օրինակ, Վահան Հարությունյանը, այն կարծիքին էին, որ այդ ժամանակ Ղարաբաղում նման ծրագիր ունենալը խիստ անհրաժեշտ էր: Որպես փաստարկ՝ նշվում է, որ 1991թ. ապրիլ-մայիսին մարզային և տեղական իշխանությունների անկազմակերպվածության պայմաններում երկրամասի բնակչությունն անպատրաստ էր զինված դիմադրություն ցույց տալ ադրբեջանական լայնածավալ հարձակումներին: Մարզխորհուրդը ծրագրել էր կայունացնել մարզի քաղաքական ու տնտեսական վիճակը և կանխել «Կոլցո» գործողության հետագա ընթացքը: Վահան Հարությունյանը նշում է, որ մարզխորհրդի նոր ղեկավարությունը ջանքեր էր գործադրում Մոսկվայի օգնությամբ վերականգնել մարզխորհուրդը, մշակել արցախահայության գոյատևության կայուն պլան և նախապատրաստվել զինված դիմադրություն ցույց տալու ադրբեջանական բռնարարքներին[114]:

Լեոնարդ Պետրոսյանի նախաձեռնությամբ հունիսի 24-ին Մոսկվա ուղարկվեց նոր պատվիրակություն[115], որի նպատակն էր երկրի ղեկավարության հետ քննարկել մարզում խորհրդային իշխանությունները վերականգնելու, Արցախի հիմնախնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու և ադրբեջանական կողմի հետ հնարավոր երկխոսություն սկսելու հարցերը: Պատվիրակությանը հունիսի 27-ին ընդունեց ԽՍՀՄ սահմանադրական հանձնաժողովի նախագահ Ս.Ալեքսեևը: Այդ հանդիպման ժամանակ Հայաստանից հաղորդումով հանդես եկավ ՀՀ արդարադատության նախարար Վ.Ստեփանյանը: Ներկայացված էր երկու նախագիծ՝ Հայաստանի և Ադրբեջանի: Լեռնային Ղարաբաղի պատվիրակության անունից ելույթ ունեցավ Կարեն Բաբուրյանը: Որևէ որոշում չկայացվեց: Այն պետք է ընդունվեր երեք շաբաթ անց: Պատվիրակությանը հունիսի 28-ին ընդունեց Արկադի Վոլսկին: Նրա միջամտությամբ պատվիրակությանը, որին միացել էր նաև Զորի Բալայանը, հունիսի 29-ին ընդունեց ԽՍՀՄ փոխնախագահ Վ.Յանաևը: Այդ նույն օրը պատվիրակությանն ընդունեց նաև Ա.

[114] **Арутюнян В. Б.,** *նշվ. աշխ., էջ 32-33:*
[115] *Պատվիրակության կազմը՝ Հենրիխ Պողոսյան, Շմավոն Պետրոսյան, Մաքսիմ Միրզոյան, Կարեն Բաբուրյան, Գեորգի Պետրոսյան և Լևոն Մելիք-Շահնազարյան:*

Լուկյանովը, որը ևս հավանություն տվեց պատվիրակության առաջարկություններին: Սակայն նա կողմնակից էր, որ Ադրբեջանի հետ երկխոսությունը տեղի ունենա Մոսկվայում կամ Ստեփանակերտում և ոչ թե Բաքվում: Նա խոստացավ արագացնել երկխոսության կայացումը Ադրբեջանի ղեկավարության հետ, իսկ մարզխորհրդի վերականգնման և Ղարաբաղի վիճակն ուսումնասիրելու համար այնտեղ ուղարկել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողով: Արցախի պատվիրակությանն ընդունեցին նաև ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ.Յազովը, ներքին գործերի նախարար Բ.Պուգոն, ներքին զորքերի հրամանատար Յու. Շատալինը, գլխավոր դատախազի տեղակալ Տրուբինը և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ: Նրանք բոլորն էլ առատ խոստումներ տվեցին, սակայն դրանցից ոչ մեկն էլ չկատարվեց: Մ. Գորբաչովը չընդունեց պատվիրակությանը, սակայն ›ծանոթ էր վերջինիս կողմից հունիսի 29-ին իրեն ուղարկած նամակի բովանդակությանը: Այդ նամակում նշվում էր, որ Լեռնային Ղարաբաղի հարցը փակուղի է մտել բոլոր մակարդակների կառավարման մարմինների բազմաթիվ սխալների հետևանքով: Նաև նշվում էր, որ դրան առանձնապես նպաստել է փոխադարձ առճակատման քաղաքականությունը և երկխոսությունից հրաժարվելը: Նամակի հեղինակներն ափսոսանք էին հայտնում, որ արցախցիների երկխոսության կոչն անտեսվել է ոչ միայն Ադրբեջանի ղեկավարության, այլև Միության կենտրոնական իշխանությունների կողմից: Արցախի պատվիրակությունը երկրի նախագահին խնդրել էր միջնորդի դերը հանձնարարել իշխանության կենտրոնական մարմիններին: Նամակի վերջում արցախցի պատվիրակները հույս էին հայտնում, որ «խաղաղ բանակցությունների հիման վրա Ղարաբաղի խնդրի լուծման ուղղությամբ ԼՂԻՄ-ի հայկական կողմի բարի կամքի դրսևորման նախաձեռնությունը կարժանանա Ձեր հավանությանն ու համակողմանի աջակցությանը»[116]:

Այն օրերին, երբ Լեռնային Ղարաբաղի պատվիրակությունը Մոսկվայում ուղիներ էր որոնում խաղաղ բանակցություններ սկսելու համար, ադրբեջանական օմոնականները հուլիսի 3-ին Արցախում ապօրինի ձերբակալեցին մոտ 100 մարդու: Այդ նույն օրը օմոնականները շրջապատեցին Քարինտակ գյուղը, պատանդ վերցրին 30 տղամարդու և բռնագրավեցին 100 գլուխ

[116] *«Հայաստանի Հանրապետություն», 07.07.1991:*

խոշոր եղջերավոր անասուն: Այդ հրահանգը, փաստորեն, տրվել էր մարզի ազգությամբ ռուս դատախազի և պարետ Ժուկովի կողմից: Նմանատիպ ահաբեկչական գործողություններ կատարվեցին նաև Մարտունու շրջանի Նոր շեն, Աշան, Սպիտակաշեն, Մուշկապատ, Հադրութի շրջանի Քարագլուխ, Հին Թաղեր, Արևշատ և Շահումյանի շրջանի մի շարք գյուղերում: Այդ ամենի մասին տեղյակ պահվեց Մ.Գորբաչովին: Նա, հուլիսի 3-ին ընդունելով ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ Լյուդմիլա Հարությունյանին և Հենրիխ Պողոսյանին ու լսելով նրանց բողոքը, խոստացավ անմիջապես վերջ տալ ԼՂԻՄ-ում հակասահմանադրական բոլոր դրսևորումներին: Սակայն, նա իր խոստումը կատարելու փոխարեն, հրաման արձակեց, և հուլիսի 4-ից Շահումյանի շրջանում վերացվեց արտակարգ դրության ռեժիմը, որը չափազանց ծանր հետևանքներ ունեցավ արցախահայության համար:

Ադրբեջանի իշխանությունները գործում էին ավելի վայրագ: ԽՍՀՄ ուժային նախարարությունները չէին թաքցնում, որ Ադրբեջանի ղեկավարության խնդրանքով միայն ապրիլի 30-ից մինչև մայիսի 17-ը Ադրբեջանի և Հայաստանի սահմանամերձ շրջաններում ու ԼՂԻՄ-ում անցկացված զինված կազմավորումների զինվորական գործողությունների հետևանքով, որի ժամանակ օգտագործվել են ուղղաթիռներ և զրահամեքենաներ, սպանվել է 91 հայ և տեղահանվել 3000 հայ ընտանիք, Հայաստանում զոհվել են ներքգործնախարարության 14 և վիրավորվել 28 աշխատողներ, պատանդ են վերցվել ու զինաթափվել 60 հոգի և այլն[117]: ՀՀ ԳԽ, հուլիսի 6-ին հանդես գալով հայտարարությամբ, մերկացրեց խորհրդա-ադրբեջանական նման հակահայ քաղաքականությունը և դատապարտեց Մ.Գորբաչովի հրամանը՝ Շահումյանի շրջանից ներքին ուժերը դուրս բերելու վերաբերյալ[118]:

Լեոնարդ Պետրոսյանը մի քանի անգամ հանդիպել էր Վ. Պուլյանիչկոյի հետ և որոշ հարցերի վերաբերյալ նրա հետ եկել համաձայնության, մանավանդ Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև երկխոսության հնարավորության հարցում: Վահան Հարությունյանը մարզային իշխանությունների այդ քայլը գնահատել է որպես «գիտակից խաղ դաժան շրջափակման պայմաններ-

[117] *"Правда", 26.06.1991.*
[118] *«Հայաստանի Հանրապետություն», 09.07.1991:*

ռում»: Իբրև դրա շնորհիվ «մարզը ստացավ հազարավոր տոննա ալյուր, շաքար, վառելիք և այլ ապրանքներ, որոնց մի մասը պահեստավորվեց հետագայում պաշտպանության կարիքների համար»[119]: Թե դա որքանով է ճշմարիտ, առայժմ զերծ ենք մնում մեկնաբանությունից: Փաստը մնում է փաստ, որ 1991թ. հունիսի 25-ին «Ժամանակ» ծրագրով, հետո նաև տեղեկատվական այլ միջոցներով հաղորդվեցին, որ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներից կազմվել է մի խումբ՝ բանակցելու ԼՂԻՄ հայկական և ադրբեջանական համայնքների հետ: Բանը հասել էր նրան, որ Մոսկվայի կողմից Լեռնային Ղարաբաղի մարզը հայտարարվեց «համայնք», որի դեմ Լեոնարդ Պետրոսյանի գլխավորած մարզխորհուրդը չբողոքեց ու ոչ մի ձայն չհանեց:

«Կոլցո» գործողության տրամաբանական շարունակությունը հանդիսացավ ադրբեջանական օմօնականների և ԽՍՀՄ ներքին զորքերի գործողություններն Արցախ-Շահումյանում: Հունիսի 5-ին Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղ մտան օմօնականները, իսկ հուլիսի 6-ին Շահումյանի շրջանի հայկական գյուղերից դուրս բերվեցին ներքին զորքերը, և ազերիներն անմիջապես փորձեցին ներխուժել Մանաշիդ, Երքեջ և Բուգլուխ: Հուլիսի 7-ին Մանաշիդի մոտ կանգնած էր ադրբեջանական 150 բեռնատար ավտոմեքենա՝ գյուղի բնակիչներին և նրանց ունեցվածքը տեղափոխելու համար: Շահումյանի շրջանում տեղակայված խորհրդային բանակի հրամանատարությունը հուլիսի 13-ին շրջանի բնակիչներից պահանջեց երեք օրվա ընթացքում տեղափոխվել Հայաստան: Խորհրդա-ադրբեջանական համատեղ ուժերը հուլիսի 14-ին ներխուժեցին Մանաշիդ և Բուգլուխ ու դուրս քշեցին բնակիչներին, որոնք ստիպված տեղափոխվեցին Վերիշեն: Հայկական այդ գյուղերը լիովին թալանվեցին ազերի ավազակախմբերի կողմից: Հուլիսի 15-ին Երքեջը ռմբակոծվեց ՄԻԳ-23 կործանիչ ինքնաթիռներից: Գյուղ ներխուժած զինվորականներն ու օմօնականները, հանդիպելով ինքնապաշտպանական ուժերի համառ դիմադրությանը և տալով մեկ տասնյակի չափ զոհեր ու ծանր վիրավորներ, հետ նահանջեցին: Հանուն արդարության իրենց ձայնը բարձրացրած և այդ ծանր օրերին Շահումյանում գտնվող Ռուսաստանի ժողովրդական պատգամավոր Անատոլի Շաբաթն ու ռուսական մամուլի ներկայացուցիչ Կիրիլ Ալեքսեևը ձերբակալվեցին և արտաքսվեցին Շահումյանից: Դա կատարվել

[119] **Арутюнян В. Б.,** *նշվ. աշխ., էջ 32:*

է արտակարգ դրության պարետ Վ.Ժուկովի հրամանով, որն այդ իրադարձությունների նախօրյակին խաղաղ բնակչության դեմ ծավալված բռնությունների համար արժանացել էր Ա.Շաբաթի կշտամբանքին:

Ադրբեջանի իշխանությունների պահանջով Շահումյանի և Լեռնային Ղարաբաղի հետ երևանից ուղղաթիռային կապն ընդհատվեց: Դա ավելի ծանրացրեց Արցախի առանց այն էլ դժվարին վիճակը: Արցախցիների հերոսական պայքարի շնորհիվ հուլիսի 19-ի լույս 20-ի գիշերը հակառակորդը, տալով շուրջ 100 սպանված, դուրս քշվեց Հաթերքից: Հուլիսի 21-ին ազերի օմօնականներից ազատագրվեցին Մաղավուզն ու Հոռաթաղը, ապա Չափարը, Զարդախաչը և Իմերեթ-Քերեվանդը: Անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով գործի էր դրվել ԽՍՀՄ ներքին զորքերի և ադրբեջանական ՕՍՕՆ-ի հզոր զինանոցը. տանկերի, ծանր հրետանու, մարտական ուղղաթիռների օգնությամբ զինվորականներն ու օմօնականները ծավալեցին իրենց վայրագությունները տասնյակ հայկական գյուղերում, որոնց հետևանքով զոհվեցին 41 և վիրավորվեցին շուրջ 70 մարդ: Պատանդ տարվեց 335 խաղաղ բնակիչ, որոնցից երեքը տանջամահ արվեցին ադրբեջանական բանտերում, ամբողջությամբ դատարկվել էր 20 բնակավայր, տեղահանվել էր մոտ 5000 մարդ: Երեք հայկական գյուղեր բնակեցվել էին ազերիներով: Մեծ վնաս էին կրել նաև Հայաստանի սահմանամերձ գյուղերը, նյութական վնասը կազմել էր 50 մլն ռուբլի[120]:

1991թ. հուլիսին Հայաստանի Գերագույն խորհրդում Արցախի շուրջ ծավալվեց սուր բանավեճ: Քննարկման էր ներկայացվել Արցախի հիմնահարցի լուծման վերաբերյալ երկու նախագիծ: Մեկը 59 պատգամավորների կողմից առաջարկված որոշման նախագիծն էր, երկրորդը՝ ԼՂԻՄ-ի աշխատավորության լիազոր ներկայացուցիչների քաղաքական նախաձեռնությունը, որով մարզային իշխանության մարմինները պատրաստակամություն էին հայտնում ադրբեջանական իշխանությունների հետ քաղաքական բանակցությունների միջոցով լուծումներ որոնել՝ ԽՍՀՄ Սահմանադրության և օրենքների սահմաններում: Պարզապես պատգամավորներին առաջարկվում էր ընտրություն կատարել բացահայտ առճակատման և քաղաքական երկխոսության միջև: Դեռևս հուլիսի 9-ին մի խումբ պատգամավորների

[120] *«Խորհրդային Ղարաբաղ», 10.07.1991:*

կողմից հրապարակված որոշման նախագիծը պահանջում էր արցախահայության պայքարը ճանաչել ազգային-ազատագրական: Նախագծում նաև ասված էր, որ 1989թ. դեկտեմբերի 1-ի որոշումն ընդունվելուց հետո Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ոչ մի անգամ չի քննարկել Ղարաբաղի վերաբերյալ որևէ հարց: Մյուս կողմից էլ Լեռնային Ղարաբաղում իշխանության վերին մարմինների բացակայության պայմաններում չկային ուժեր, որոնք արցախյան շարժումը կարողանային ղեկավարել անսխալ: Հենց դրա հետևանքով էր, որ հնարավոր դարձավ արցախահայության դեմ խորհրդային ներքին զորքերի և ադրբեջանական բարբարոս խմբերի գործողությունները: ՀՀ ԳԽ-ն հարցի քննարկմանը ձեռնամուխ եղավ հուլիսի 15-ին: Դեռևս հուլիսի 5-ին տեղի ունեցած հանրահավաքում «Արցախ» հայրենակցական միությունը հայտարարել էր, որ Հայաստանում չկա որևէ քաղաքական կուսակցություն, որն ունենա Արցախի ազատագրության վերաբերյալ հատուկ ծրագիր, իսկ Ղարաբաղյան համազգային շարժման ալիքի վրա իշխանության եկած ՀՀՇ-ի ուժերը որևէ նոր բան չեն առաջարկում հիմնախնդիրը լուծելու համար: Հուլիսի 13-ին «Արցախ» հայրենակցականի կողմից Ազատության հրապարակում հրավիրված հանրահավաքում երբ առաջարկվեց արցախյան պայքարը ճանաչել որպես ինքնապաշտպանության շարժում, դրանից խրտնեցին ՀՀՇ-ականները: Ըստ այդ հանրահավաքում ընդունված բանաձևի՝ «Հայաստանի նոր ղեկավարությունը ընտրել» էր «անկախության գործընթացի այնպիսի տարբերակ, որը քաղաքական իր պայքարի մեջ Արցախին թողնում է միայնակ»[121]:

Արցախի հարցի քննարկման շուրջ ելույթ ունեցան ավելի քան 20 պատգամավորներ: Հրանտ Խաչատրյանը, Արկադի Մանուչարովը, Դավիթ Վարդանյանը, Կիմ Բալայանը, Էդուարդ Եգորյանը և ուրիշներ արեցին հակասական առաջարկություններ: Առանձնապես վիճահարույց էր Արկադի Մանուչարովի ելույթը: Նա հայտարարեց, թե «Կռունկ» կոմիտեի լուծարումից հետո չի հաջողվել Արցախում ստեղծել քաղաքական որևէ մարմին, որը գործեր իրատեսական ռազմավարությամբ և հսկեր ու տնօրիներ իրադրությունը: Ավելին՝ ըստ Մանուչարովի՝ Արցախում ի հայտ էին եկել զանազան խմբավորումներ, որոնցից ամեն մեկն իր ընտրած ճանապարհը համարում էր միակ ճիշտը: Դրա հետևանքով էլ Շարժումը ջլատվել ու տարաբաժանվել է: Արկադի Մանուչարովի հավաստմամբ՝ այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղում չկար որևէ կառույց, որևէ քաղաքական ուժ, որը կարողանար ղեկավարել ազգային-ազատագրական պայքարը[122]: Ստացվում է՝ քանի Մանուչարովը կար, պայքարը գնում էր ճիշտ հունով, իսկ երբ նա հեռու էր Շարժումը ղեկավարելուց, ապա ամեն ինչ գնում էր վարընթաց: Ա.Մանուչարովի այդ դատողությունն անընդունելի էր: Մի՞թե, ասենք, Ազգային խորհուրդը սխալ հունով էր տանում պայքարը:

Այսպիսով՝ ՀՀ ԳԽ նստաշրջանը քննարկում էր «Արցախում հայ ժողովրդի պայքարն ազգային-ազատագրական շարժում ճանաչելու» մասին և Ադրբեջանի հետ բանակցություններ սկսելու ու փոխզիջման լուծումներ գտնելու վերաբերյալ ԼՂԻՄ-ի աշխատավորության լիազոր-ներկայացուցիչների 1991թ. մայիսի 16-ի հայտարարությանը հավանություն տալու հարցը: Ազգային խորհրդի նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը առաջարկեց հավանություն տալ Լեռնային Ղարաբաղի լիազոր-ներկայացուցիչների՝ հունիսի 29-ին Մ.Գորբաչովին ուղղված նամակին, որը բխում էր մայիսի 16-ին ընդունած որոշումից և, ըստ էության, ԼՂԻՄ-ում սահմանադրական կարգ հաստատելու ծրագիր էր: Ղարաբաղյան պայքարը ազգային-ազատագրական պայքար ճանաչելու օգտին քվեարկեց 34 պատգամավոր: Մյուսին հավանություն տալու կողմ էին 124 պատգամավոր, որը, սակայն, բավական չէր որոշում ընդունելու համար: Կրկին կատարվեց քվեարկություն: Այս անգամ հօգուտ երկրորդ նախագծի քվեարկեց 136 պատգամավոր՝ դեմ՝ 10, ձեռնպահ՝ 18[123]: Գերագույն խորհրդի անդամներից ոմանց մեկնաբանությամբ, եթե ընդունվեր մյուս առաջարկությունը և Ղարաբաղյան շարժումը ճանաչվեր որպես ազգային-ազատագրական պայքար, ապա Արցախի հարցը կստանար միջազգային հնչողություն և չէր դիտվի Ադրբեջանի ներքին հարց: Այդ դեպքում Հայաստանը հնարավորություն կստանար բացահայտ պաշտպանել Արցախին: Լ.Տեր-Պետրոսյանը լիովին համոզված էր, որ «բանակցությունների միջոցով պետք է լուծվի Արցախի հարցը, որն այսօր նշանակում է կասեցնել Արցախի և Շահումյանի հայաթափումը... ելքը բանակցությունների ուղին

[121] *«Ուրբաթ», 19.07.1991:*

[122] *«Հայաստանի Հանրապետություն», 19.07.1991:*

[123] *Նույն տեղում, 16.07.1991:*

ընտրելն է»[124]: Մինչդեռ Իգոր Մուրադյանը գտնում էր, որ Շարժումը պետք է ունենա «զինված պայքարի իրավիճակով օժտված ազգային-ազատագրական շարժման կարգավիճակ», և որ թշնամին պետք է արյամբ հատուցի իր կատարած դաժանությունների համար, և պետք է ճանաչվի ցեղասպանությունը[125]:

Եվ այսպես՝ երկար վիճաբանությունից հետո ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորների ՀՀՇ-ական մեծամասնությունը հրաժարվեց արցախցիների պայքարը ճանաչել ազգային-ազատագրական: Սակայն դա չէր նշանակում, թե ՀՀ Գերագույն խորհուրդը երես թեքեց Արցախը պաշտպանելուց: Գերագույն խորհրդի շատ պատգամավորներ հաստատ կանգնած էին արցախահայությանը պաշտպանելու դիրքերում, անկախ այն բանից, թե նրա պայքարն ազգային-ազատագրական էր, թե ինքնապաշտպանական:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում Բորիս Պուգոն հանդես եկավ անպատասխանատու հայտարարությամբ, որը, կեղծելով իրավիճակը, նշեց, թե իբր Շահումյանի շրջանի մի շարք գյուղերում, մանավանդ Մանաշիդում, Էրքեջում և Բուզլուխում խաղաղ բնակիչներ չկան, այնտեղ կան միայն գրոհայիններ: ՀՀ Գերագույն խորհուրդը, հուլիսի 9-ին հանդես գալով հայտարարությամբ, դատապարտեց Մոսկվայի այդ սադրանքը: Հենց ներքին գործերի նախարար Բ.Պուգոյի վրա էր ընկնում այդ ժամանակ 5000-ից ավելի հայ բնակիչների բռնի տեղահանման պատասխանատվությունը: ՀՀ Գերագույն խորհուրդը երկրի նախագահից և Գերագույն խորհրդից պահանջեց «հատուկ հանձնաժողով ուղարկել՝ Շահումյանի շրջանի գյուղերում հայ բնակչության առկայությունը տեղում պարզելու և պատասխանատվության ենթարկել այն անձանց, ովքեր ապակողմնորոշում են երկրի իշխանության բարձրագույն մարմիններին և դրանով իսկ հրահրում նոր բռնի գործողություններ և տեղահանություններ»[126]:

1991թ. հուլիսի 23-ին Նովո-Օգարևում տեղի ունեցած բարձր մակարդակի բանակցությունների ժամանակ Այազ Մութալիբովը խոստացավ Ղարաբաղից դուրս բերել հանրապետական հատուկ ջոկատների զորամասերը և դադարեցնել անձնագրային

[124] *Նույն տեղում:*
[125] *«Ազատամարտ», N23, 1991:*
[126] *«Հայաստանի Հանրապետություն», 11.07.1991:*

ռեժիմի ստուգումները, եթե այնտեղից դուրս բերվեն «հայ գրոհայինները»[127]: Իսկ դա նշանակում էր Արցախը զինաթափել և Շահումյանը հանձնել թուրք դահիճներին: Այդ ժամանակ հակառակորդի հարձակումները լայնածավալ բնույթ էին ստացել մանավանդ Շահումյանի և Մարտակերտի շրջաններում: ԼՂԻՄ իշխանությունները անդրադարձան Ադրբեջանի հետ բանակցություններ սկսելու խնդրին: Մարզխորհրդի գործկոմի հուլիսի 18-ին և 19-ին տեղի ունեցած նիստը համաձայնություն տվեց ադրբեջանական կողմի հետ բախումը բանակցությունների ուղիով լուծելու վերաբերյալ մարզխորհրդի պատգամավորների ներկայացուցիչների մայիսի 16-ի և մարզի աշխատավորների լիազորներկայացուցիչների հունիսի 19-ի նիստի առաջարկությանը: Այդ նիստում Լեոնարդ Պետրոսյանն առաջարկեց Ադրբեջանի ղեկավարության հետ հանդիպելու և բանակցելու համար հուլիսի 20-ին Բաքու ուղարկել մարզային և շրջանային ղեկավարներից կազմված պատվիրակություն: Երկար վիճաբանությունից հետո որոշվեց պատվիրակության կազմում ընդգրկել մարզխորհրդի և շրջխորհուրդների նախագահներին[128], չնայած Ադրբեջանը պաշտոնապես չէր ճանաչում նրանց լիազորությունները: Այդ նույն նիստում նաև քննարկվեց և ընդունվեց նամակ, որում շարադրված էին Բաքու մեկնող պատվիրակության պահանջները Ադրբեջանի ղեկավարությունից: Նամակում նշված էր, որ մարզի բնակչության մեծամասնությունը համաձայն է վերականգնել հայ-ադրբեջանական հարաբերությունները և ուղիներ որոնել բախումները կանխելու համար: Առաջարկվում էր բանակցությունների ժամանակ քննարկել հետևյալ հարցերը. ժողովրդական պատգամավորների բոլոր մակարդակի իշխանությունների և կուսակցության մարզկոմի ու շրջկոմների վերականգնման կարգն ու ժամկետը, մարզի տարածքից բոլոր տեսակի զինյալ ուժերի դուրսբերումը, ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ներքին ուժերի տեղակայումը մարզի սահմաններում, Ղարաբաղի և Շահումյանի շրջանի շրջափակման վերացումը, բռնատեղա-

[127] *Նույն տեղում, 14.08.1991:*
[128] *Բաքու մեկնած պատվիրակության կազմը՝ Լ. Պետրոսյան (մարզխորհրդի նախագահի պաշտոնակատար), Վ. Գրիգորյան (մարզկոմի բաժնի վարիչ), Վ. Գաբրիելյան (Մարտակերտի շրջկոմի առաջին քարտուղար), Վ. Քոչարյան (Ասկերանի շրջխորհրդի նախագահ), Մ. Միրզոյան (Ստեփանակերտի քաղխորհրդի նախագահ) և Ս. Սեյրանյան (Մարտունու շրջգործկոմի նախագահ):*

հանված բնակչությանն իրենց բնակավայրեր վերադարձնելը և Շահումյանի շրջանի վարչատարածքային ամբողջականության վերականգնումը[129]:

Բաքու մեկնած պատվիրակության անդամների մի մասի, մանավանդ շրջխորհուրդների նախագահների իրավունքները, ինչպես նշվել է, կասեցվել էին միաբենական և հանրապետական իշխանությունների որոշումներով: Պատվիրակությունը մինչև բանակցությունների սկսվելը Ադրբեջանի իշխանություններից պահանջեց վերականգնել նրանց իրավունքները: Սակայն ադրբեջանական կողմը պնդեց, որ պատվիրակությունը կարող է բանակցություններ վարել միայն նամակում շարադրված հարցերի շուրջ: Ադրբեջանի նախագահի նստավայրում Այազ Մութալիբովը ԼՂԻՄ պատվիրակությանն ընդունեց հուլիսի 20-ին: Հանդիպումը տեղի ունեցավ ժամը 11^{30}-ից մինչև ժամը 14^{00}: Հանդիպման մասին կազմվել է արձանագրություն, որի մի պատճենը պահվում է ԼՂՀ պետական արխիվում: Հանդիպման ժամանակ Այազ Մութալիբովը հայտարարել է, թե մայիսի 30-ին հանրապետության կոմկուսի պլենումում, որին ներկա էին 600 հոգի, առաջարկվել է լուծարել ինքնավար մարզը, սակայն ինքը դեմ էր գնացել դրան: Ընդհակառակը, պետք է ընդլայնել նրա իրավունքները: Սակայն Ադրբեջանի ղեկավարությունը թույլ չի տա՝ Հայաստանը միջամտի մարզի կառավարմանը: Ոչ ոք չի խանգարի մարզը մշակութային, լեզվական կապեր ունենա Հայաստանի հետ: Նաև նշեց, որ երբ ԽՍՀՄ նախագահի օգնականը մոտեցել է իրեն և ասել՝ եկեք մարզին տանք հանրապետության իրավունք, նրան պատասխանել է, որ արդեն ուշ է. գնացքը գնացել է: Այդ հարցը կվերանայվի հետո: Նա նաև նշել է, որ մարզին մեծ վնաս է հասցրել հատուկ կոմիտեն, որը մարզի տնտեսությունը կտրել է հանրապետությունից: Դա սխալ է եղել: Մենք պետք է մարզ առաքենք վառելիք, ալյուր, օգնենք բերքահավաքին: Մեզ մոտ՝ հանրապետությունում, կուսակցությունից հեռացել է 35 հազար մարդ: Ես միշտ կապի մեջ եմ Լ. Տեր-Պետրոսյանի հետ: Ինձ համար անհասկանալի է մարզից Հայաստանի խորհրդարանում պատգամավորներ ունենալը[130]: Ա. Մութալիբովի խոսքն, անշուշտ, ոչ մի վստահություն չներշնչեց մարզի պատվիրակությանը: Նրա անկազմակերպ ասածներից փչում էր կեղծիքի և

[129] **Арутюнян В. Б.,** *նշվ. աշխ., էջ 53-55:*
[130] *Նույն տեղում, գ. 320, թ. 15-16:*

ստորության հոտ: Դրա վառ ապացույցն է այն, որ պատվիրակության նամակում առաջարկված պահանջներից ոչ մեկը չընդունվեց Ադրբեջանի կողմից: Պատճառաբանվեց, թե նամակում ասված այն միտքը, որ մարզի «բնակչության մեծամասնությունը» համաձայն է բախումը վերացնել բանակցությունների միջոցով, չի համապատասխանում իրականությանը: Ի դեպ, ԼՂԻՄ-ից Բաքու պատվիրակություն մեկնելու մասին Արցախում իմացել էին հուլիսի 20-ի երեկոյան «ժամանակ» ծրագրի հաղորդումից: Մարզի բնակչությունը խիստ վրդովմունքով էր ընդունել այդ լուրը: Ինչպես պարզվեց, Բաքու պատվիրակություն ուղարկելը հիմնականում կատարվել էր գաղտնի, նույնիսկ առանց մարզային ակտիվի իմացության: ԼՂԻՄ պատվիրակության և Այազ Մութալիբովի հանդիպման մասին մարզային ռադիոն հաղորդեց միայն հուլիսի 29-ին: Մարզի բնակչության մեծամասնությունը սխալ և չմտածված էր համարում Բաքու պատվիրակություն ուղարկելը, մանավանդ որ մերժվել էին ներկայացված բոլոր պահանջները: Այդուհանդերձ, Լ.Տեր-Պետրոսյանի առաջարկությունն ընդունած Լեոնարդ Պետրոսյանի ջանքերը վերջացան անփառունակ, չնայած պատվիրակությունը Բաքվում իրեն պահել է արժանավայել[131]:

Հուլիսի 23-ին տեղի ունեցած մարզխորհրդի գործկոմի նիստը քննարկեց «ԼՂԻՄ ներկայացուցիչները Ադրբեջանի Հանրապետության ղեկավարության հետ հանդիպման արդյունքների մասին» հարցը: Ելույթ ունեցան 20 հոգի: Նրանք բոլորն էլ մերկացրին Ադրբեջանի իշխանությունների վարած հակաղարաբաղյան քաղաքականությունը: Այնուամենայնիվ, գործկոմը նպատակահարմար գտավ հետագայում ևս շարունակել երկխոսության նման պրակտիկան՝ միայն Կենտրոնի ներկայացուցչի մասնակցությամբ: Լ. Պետրոսյանը իր ելույթում պատմեց Մութալիբովի հետ ունեցած առանձնազրույցի մասին, որը տեղի էր ունեցել պատվիրակության հետ հանդիպման ավարտվելուց հետո: Ըստ Լ. Պետրոսյանի բացատրության՝ նրանք ոչ մի համաձայնության չէին եկել[132]:

Արցախ-Շահումյանում իրագործվող հակահայկական քայլերը վրդովեցրել էին շատերին: ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Վ.Սիմոնովը, ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավոր Լ.

[131] *Նույն տեղում, էջ 56-59:*
[132] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 320, թ. 20-27:*

Պոնոմարյովը, Լենինգրադից նույնպես պատգամավոր Ա.Վինշիկովը, օգոստոսի 4-ին ԽՍՀՄ ղեկավարությանը ՌԽՖՍՀ ղեկավար Բ.Ելցինին և Ա.Մութալիբովին ուղարկած հեռագրում խոսելով Շահումյանի շրջանում իրագործվող ահաբեկչությունների մասին, պահանջում էին.

1. Խորհրդային բանակի ստորաբաժանումները տեղավորել իրենց հիմնական զորամասերում:

2. Շտապ դադարեցնել Մանաշիդ, Բուզլուխ և Երքեջ գյուղերի վերաբնակեցումը ադրբեջանցիներով:

3. Բռնի տեղահանված գյուղերից և ողջ Շահումյանի շրջանից դուրս բերել ադրբեջանական ՕՄՕՆ-երը:

4. Հայկական և ադրբեջանական գյուղերի սահմանագծում պահակակետեր տեղակայել ներքին զորքերի այն զորամասերից, որոնք նախկին բախումներին չեն մասնակցել:

5. Բռնազաղթված բոլոր ընտանիքներին հնարավորություն տալ վերադառնալու Բուզլուխ, Մանաշիդ և Երքեջ գյուղերը[133]:

* * *

1991թ. օգոստոսի 19-ին Մոսկովյան հեռուստատեսությունն ու ռադիոն աշխարհին տեղեկացրին, որ ԽՍՀՄ-ում տեղի է ունեցել պետական «հեղաշրջում», տապալված է նախագահ Մ.Գորբաչովը և իշխանությունն անցել է Արտակարգ դրության պետական կոմիտեի (ԱԴՊԿ) ձեռքը: Վ.Պոլյանիչկոն անմիջապես ցուցում տվեց Լեռնային Ղարաբաղում իրագործել ԱԴՊԿ-ի բոլոր պահանջները: Պարետ Գ.Ժուկովը նույնիսկ պահանջեց «Խորհրդային Ղարաբաղ» թերթում տպագրել ԱԴՊԿ-ի ընդունած բոլոր փաստաթղթերը, սակայն թերթի խմբագրությունը հրաժարվեց կատարել պարետի պահանջը: Մարզգործկոմի անդամները օգոստոսի 19-ի օրվա վերջին հավաքվելով, քննարկեցին ԱԴՊԿ-ի հայտարարությունը և որոշեցին ոչ մի կարծիք չհայտնել տեղի ունեցածի վերաբերյալ և առայժմ լինել չեզոք[134]: Մարզգործկոմը այդ նույն օրը հրավիրեց նաև պետանվտանգության և ներքին գործերի մարզային վարչությունների, դատախազության և ռազմական պարետության աշխատողների խորհրդակցություն, որտեղ նրանք պետք է հայտնեին իրենց կարծիքները ԱԴՊԿ-ի վերաբերյալ: Վ.Պոլյանիչկոն տեղեկանալով այդ մասին՝ փորձում է

[133] *«Հայաստանի Հանրապետություն», 6.08.1991:*
[134] *ԼԴՀ ՊԱ, Ֆ. 1, ց. 2, գ. 322, թ. 1-4:*

նույն ժամին իր մոտ հրավիրել նրանց, ում հրավիրել էր մարզգործկոմը: Սակայն դա ձախողվում է: Վ.Պոլյանիչկոյի ղեկավարած կազմկոմիտեն հոգեվարքի մեջ էր: Դրանից հետո մարզի օրինապահ մարմիններն այլևս չճանաչեցին կազմկոմիտեին և չէին կատարում Վ.Պոլյանիչկոյի պահանջները:

Օգոստոսի 21-ին խռովությունը ճնշվեց: Թվում էր, թե դարաբաղյան իրադարձություններն այլ ընթացք կստանային, սակայն դա տեղի չունեցավ: Չորրորդ բանակի հրամանատար գեներալ Սոկոլովը և 23-րդ դիվիզիայի հրամանատար գնդապետ Բուդեյկինը, անտեսելով ԽՍՀՄ պաշտպանության նոր նախարար Ե.Շապոշնիկովի՝ կրակը դադարեցնելու և Շահումյանի շրջանի Վերիշեն գյուղից զորքերը հետ քաշելու մասին հրամանը, շարունակում էին կատարել Ա.Մութալիբովի և Վ.Պոլյանիչկոյի հրամանները: Օգոստոսի 23-ին երկրի բարձրագույն իշխանություններին Զորի Բալայանի ուղարկած հեռագրում պահանջվում էր պատասխանատվության ենթարկել խունտայի գործակալ Վ.Պոլյանիչկոյին, որի գլխավորությամբ էին իրագործվել Արցախում տեղի ունեցած վերջին վայրագությունները[135]: Օգոստոսի 23-ին ԼՂԻՄ մարզգործկոմը, բաց նամակ հղելով ԽՍՀՄ նախագահ Մ.Գորբաչովին, ՌԽՖՍՀ նախագահ Բ.Ելցինին և ԽՍՀՄ Գլխավոր դատախազությանը, պահանջեց պատասխանատվության ենթարկել Ղարաբաղում իրագործվող հանցագործությունների պարագլուխներին, որոնք խունտայի կողմնակիցներից էին[136]:

1991թ. օգոստոսյան այդ օրերին «Արցախ» ռադիոկայանը Ստեփանակերտում տարածեց արցախահայությանն ուղղված, «Արցախի ազատության մարտիկների դիմումը», որտեղ ասված է, որ «հայերի զանգվածային բռնատեղահանումը լրիվ մերկացրեց Բաքվի կարմիր բանակի բասմաչների հրեշավոր էությունը»: Դիմումի հեղինակները, բացասական գնահատելով Ա.Մութալիբովի հետ հուլիսի 20-ի բանակցությունները, հանգել էին հետևյալ եզրակացության. «Հողն ու ազատությունը պահելու միակ ուղին պայքարն է: Բնությունը ոչնչացնում է նրանց, ովքեր հպատակվում են: Այսօր ողջ Արցախով մեկ վառվում է պարտիզանական պատերազմի կրակը: Բռնատեղահանված գյուղերի բնակչությունը, ջոկատներ կազմելով, լի է իր տները զենքի ուժով ետ բերելու վճռականությամբ: Հողը պիտի այրվի օկուպանտների

[135] Ուլուբաբյան Բ., *նշվ. աշխ., էջ 265-266: «Երկիր», 02.09.1991:*
[136] *«Ուրբաթ», 30.08.1991:*

ոտքերի տակ»: Արցախի ազատամարտիկներն իրենց սուրբ պարտքն էին համարում պաշտպանել հայրենի հողն ու ազատությունը[137]:

1991թ. օգոստոսի 29-ին Բաքվում տեղի ունեցավ Ադրբեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան, որն ընդունեց ադրբեջանական պետության անկախության վերականգնման մասին Հռչակագիր: Ըստ էության, դա նշանակում էր, որ Ադրբեջանը դուրս էր գալիս ԽՍՀՄ-ի կազմից: Հռչակագրում ասված է, որ նորանկախ Ադրբեջանի հանրապետությունն ընդգրկված է լինելու 1918–1920թթ. մուսավաթական Ադրբեջանի հանրապետության սահմաններում: Փաստորեն, Բաքուն հրաժարվեց լինել Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը: Հետագայում՝ նույն թվականի հոկտեմբերի 18-ին, Ադրբեջանը, ընդունելով նոր Սահմանադրություն, վերականգնեց մուսավաթական Ադրբեջանի Հանրապետությունը, որը ոչ մի պետության իրավահաջորդը չէր, չուներ այլ պետությունների կողմից ճանաչված սահմաններ և իր կազմում չուներ ոչ Նախիջևանը և ոչ էլ Լեռնային Ղարաբաղը[138]:

Սեպտեմբերի 8-ին նշանակված էին Ադրբեջանի նախագահի ընտրությունները: Հիմնական թեկնածու Այազ Մութալիբովն էր, որը հատուկ խնդրել էր Մ.Գորբաչովին մինչև ընտրությունների օրը Շահումյանից դուրս չբերել 4-րդ բանակի 23-րդ դիվիզիան: ԼՂԻՄ մարզխորհրդի գործկոմը դեռևս օգոստոսի 5-ին քննարկել էր Ադրբեջանի նախագահի ընտրություններին ղարաբաղցիների մասնակցության հարցը և որոշել հավանություն տալ Ադրբեջանի Հանրապետության նախագահի ընտրություններին

[137] *Նույն տեղում: Ես բախտ եմ ունեցել Ստեփանակերտում մի քանի անգամ լսել «Արցախ» ռադիոկայանի հաղորդումները: Բանվորական խմբի ղեկավար Ռաֆայել Գաբրիելյանը ինձ պատմել է հետևյալը. որոշել էին ընդհատակյա ռադիոկայան ստեղծել: Կապի բնագավառի աշխատող Վիլենը ժապավենի վրա կատարում էր գրանցումները, տանում կենտրոնական փոստ և միացնում ռադիոյի գծին: Ձայնագրիչը տրամադրել էին Ռոբերտ Քոչարյանն ու Մաքսիմ Միրզոյանը: Պոլյանիչկոյի պնակալեզները ութ ամիս շարունակ գլուխ էին ջարդում՝ գտնելու հաղորդումների կենտրոնը, սակայն չէին կարողանում: Մինչդեռ «Արցախ» ռադիոկայանը իր հաղորդումներով և շարունակում էր շանթ ու կրակ թափել թշնամու գլխին:*

[138] **Манасян А.**, *Карабахский конфликт ракурсы правового подхода, Ер., 1998, с. 3-20: Տես նաև «Երկիր», 30.08.1991, «Հայաստանի Հանրապետություն», 23.07.2004:*

մարզի բնակչության մասնակցությանը, եթե նախագահի ընտրություններին համատեղ անցկացվեն նաև մարզխորհրդի ժողովրդական պատգամավորների ընտրություններ: Այդ որոշումը սկզբում մամուլում չհրապարակվեց և գաղտնի էր պահվում մարզի բնակչությունից: Սակայն քանի որ մերժվեց արցախցիների պահանջը, հետևապես նրանք հրաժարվեցին մասնակցել Ադրբեջանի նախագահի ընտրություններին: Բացի այդ, Ադրբեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանի ընդունած Հռչակագիրն արցախահայությանը կանգնեցրել էր նոր ու ճակատագրական խնդրի առջև: Ադրբեջանը, իրեն դուրս բերելով ԽՍՀՄ կազմից, հույս ուներ իր հետ տանել նաև ԼՂԻՄ-ը: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1990թ. ապրիլի 3-ի որոշման երրորդ հոդվածով Միությունից դուրս եկող հանրապետության սահմանների մեջ գտնվող ազգային-վարչական միավորները լիակատար իրավունք ունեին տնօրինելու իրենց ճակատագիրը՝ ԽՍՀՄ-ից դուրս գալ բաժանվող հանրապետության հետ միասին կամ մնալ ԽՍՀՄ-ի կազմում կամ էլ տնօրինել սեփական բախտը՝ դառնալով սուվերեն պետություն: Այդ որոշմամբ ԼՂԻՄ-ը իրավունք ուներ միանգամայն օրինական ճանապարհով բաժանվել նորանկախ Ադրբեջանի Հանրապետությունից և դառնալով իր սեփական ճակատագրի տերը՝ կիրառել անկախության իր իրավունքը:

Միանգամայն հստակ էր, որ խորհրդային կայսրության հետ մեկտեղ փլուզվում էր նաև գաղութային Ադրբեջանը: Անհրաժեշտ էր շտապել և ձեռքից բաց չթողնել ընձեռված պատմական պահը: 1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան՝ բոլոր մակարդակների պատգամավորների մասնակցությամբ[139]: Մարզխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ Շմավոն Պետրոսյանը, դրականորեն գնահատելով Լեոնարդ Պետրոսյանի գործունեությունը, առաջարկում է նրան ընտրել մարզխորհրդի գործկոմի նախագահ: Իր դիմումի համաձայն՝ մարզ-

[139] *Նստաշրջանին մասնակցել են Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորներից՝ 7, պետական մարմինների աշխատողներից՝ 21, բաժնի վարիչներից՝ 6, մարզի տարբեր պաշտոնի ղեկավարներից՝ 8, Ասկերանի շրջանից՝ 5, Ստեփանակերտ քաղաքից՝ 41, Հադրութի շրջանից՝ 9, Մարտակերտի շրջանից՝ 29, Ասկերանի շրջանից՝ 12, Մարտունու շրջանից՝ 21, Շուշիի շրջանից՝ 2, Շահումյանի շրջանից՝ 35 հոգի (ԼՂՀ ՊԱ, ֆ. 1,գ. 2, գ. 305, թ. 8-10):*

գործկոմի անդամությունից ազատվում է Լ. Ղազինյանը, և նրա փոխարեն ընտրվում է Լ. Պետրոսյանը: Ապա «Իրավիճակը երկրում և ԼՂՀՄ խորհուրդների ժողովրդական պատգամավորների խնդիրները» հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես է գալիս Լ. Պետրոսյանը: Նա շեշտում է, որ մարզի ամբողջ բնակչության և ողջ հայության ուշադրությունը կենտրոնացվում է այս նստաշրջանի և նրա մասնակիցների դիրքորոշման վրա: Մենք հիմա դարձել ենք ավելի առողջամիտ, ավելի զգույշ, ձեռք ենք բերել նրբանկատություն և սառը դատողություն, շատ թե քիչ տիրապետել ենք ժողովրդավարության արվեստին, ավելի լրջախոհ ենք մոտենում երկրամասի տնտեսական զարգացման հարցերին, անիմաստ և ոչ պետքական գործադուլին: Մենք պետք է ավելի շատ զբաղվենք ստեղծագործական աշխատանքով: Այսօր կարող ենք ավելի հեշտությամբ լուծել մեր առջև դրված ամենալուրջ, դժվարին հարցերն ու խնդիրները:

Զեկուցողը հստակորեն շեշտում է, որ հիմա մեր առջև կանգնած է ամենալուրջ, ավելի պատասխանատու խնդիր, որը պահանջում է ռացիոնալ, մաթեմատիկական ճշգրտությամբ, անսխալ լուծում: Այս քաղաքական գերլարվածության վիճակում ամենից առաջ անհրաժեշտ է ժողովրդի միասնություն, նրա համախմբվածության ապահովում, որը պետք է դառնա հետագա բոլոր հաջողությունների գրավականը: Այսօրվա նիստը հանդիսանում է մեր երկրամասի աշխատավորների ներկայացուցիչների ամենապատասխանատու հավաքը[140]:

Ելույթ ունեցողներ Վ. Վանյանը, Ս. Հակոբյանը, Վ. Լազարյանը, Տ. Սոբոլևան, Լ. Մելիք-Շահնազարյանը, Վ. Սարգսյանը, Գ. Բեգլարյանը, Բ. Օվչյանը, Օ. Եսայանը, Լ. Սարգսյանը, Ս. Դավդյանը և ուրիշներ, պաշտպանելով զեկուցման մեջ առաջադրված դրույթները, կոչ էին անում վերջնականապես վճռել մարզի քաղաքական հարցը: Ապա ելույթ ունենալով՝ Լ. Պետրոսյանը, նշում է, որ այսօր պետք է վճռվի ամենահրատապ հարցը: Բացատրում է, որ ինքը մի քանի անգամ հանդիպել է Պոլյանիչկոյի հետ, և խոսել են Արցախի հետ կապված հարցերը քաղաքակիրթ եղանակով լուծելու մասին: Ադրբեջանի տեսակետը միանգամայն պարզ է՝ «Ղարաբաղն առանց հայերի»: Մենք պատասխանել ենք. «Զենք կվերցնենք ու մեզ կպաշտպանենք»: Արկադի Մանուչարովը բազմիցս ճիշտ է, երբ կուռ միասնության կոչ է անում: Մենք պետք է պատմական այս ծանր պայմաններում ոչ թե խոսքով, այլև գործով մի բռունցք դառնանք[141]: Ապա առաջարկություն է մտցվում նստաշրջանի օրակարգը լրացնել հետևյալ հարցով՝ «Լեռնային Ղարաբաղի հայկական հանրապետության հռչակման և նրա պետական իշխանության ու կառավարման ժամանակավոր մարմինների ձևավորման մասին»: Առաջարկությունն ընդունվում է միաձայն:

Ընդմիջումից հետո դահլիճ է հրավիրվում Շահումյանի շրջանից եկած պատվիրակությունը: «Կուրանտը» թերթի թղթակից Կիրիլ Ալեքսեևիչը ողջունում է արցախցիներին, որոնք իրենց այս նստաշրջանում բարձրացրել են իրենց ձայնը հանուն ազատության և ժողովրդավարության: Նա հայտարարում է, որ երկրի ժողովրդական ուժերը, Մոսկվան և Լենինգրադը ողջունում և պաշտպանում են արցախցիների պայքարը[142]:

Նստաշրջանում բոլոր ելույթ ունեցողները ջերմորեն պաշտպանում են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը հանրապետություն հայտարարելու գաղափարը: Նստաշրջանը, բազմակողմանիորեն քննության առնելով ստեղծված վիճակը, ընդունեց որոշում և Հռչակագիր՝ ԼՂԻՄ և դրան կից Շահումյանի շրջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ) հռչակելու մասին[143]: Հռչակագրում շարադրված բոլոր սկզբունքային հարցերը հիմնավորված էին և ապացուցված, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը պատմական անհրաժեշտություն է, որը կարող է «ինքնուրույն որոշել իր պատմական իրավական կարգավիճակը»[144]:

---

[140] *ԼՂՀ, ՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 305, թ. 8-10:*

[141] *Նույն տեղում, թ. 13:*

[142] *Նույն տեղում, թ.16:*

[143] *Նույն տեղում, թ. 16-47:*

[144] *«ԼՂ Հանրապետություն», 12.12.1996:*

Նստաշրջանը քննարկեց նաև մարզային խորհրդի խնդիրներն ու անելիքները՝ կապված երկրամասում ստեղծված իրավիճակի հետ:

ԼՂԻՄ մարզխորհրդի նստաշրջանը համապատասխան դիմումներ հղեց ԽՍՀՄ ժողպատգամավորների 5-րդ արտակարգ համագումարին, Ռուսաստանի նախագահին և Լեռնային Ղարաբաղի ու ադրբեջանական ժողովուրդներին:

Ահա այսպես. պատմական ճակատագիրը Արցախին դուրս բերեց նոր եզրագիծ, որն ընթացավ ավելի ծանր ու դաժան ուղիով:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՉՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՐՑԱԽՈՒՄ (1991թ. սեպտեմբեր – 1992թ. մայիս)

1. ԼՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումով արցախահայության ազգային-ազատագրական պայքարը թևակոխեց պատմական նոր փուլ: Իրական անկախության ճանապարհին ԼՂՀ ստեղծումն ամենավճռորոշ և գործնական քայլն էր: Դրան հաջորդեցին իրավական, քաղաքական, ռազմական և դիվանագիտական ինքնահաստատման գործողություններ: ՀՀ Գերագույն խորհուրդը դեմ չէր ԼՂՀ ստեղծմանը և հայտարարեց, թե արցախցիները գտել են հարցի լուծման բանալին[1]:

Ռազմաքաղաքական այդ ծանր ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը չէր կարող անտարբեր թողնել ռազմատենչ Բաքվին և նրա գլխավոր հովանավոր Թուրքիային: Եվ ինչ, Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունը սեպտեմբերի 3-ի իր որոշումով արցախցիների այդ քայլը որակեց որպես դավաճանություն՝ ուղղված «Ադրբեջանի ամբողջականության և անկախության դեմ»: Ուժային մարմիններին հանձնարարվեց միջոցներ ձեռնարկել արցախցիներին զինաթափելու, սեպտեմբերի 2-ի նստաշրջանը կազմակերպողների նկատմամբ քրեական գործ հարուցելու և նրանց պատասխանատվության ենթարկելու համար[2]: Ի պատասխան արցախցիների դրսևորած աննկուն կամքի՝ ազերի ելուզակները զանգ-

---

[1] *Հետագայում լրագրող Վահրամ Աղաջանյանը իր մի հոդվածում գրել է. «Ազատագրական շարժման 4-րդ տարում թույլ տրվեց կոպտագույն, ամենամեծ թերևս, ստրատեգիական սխալը. 1991-ին հռչակվեց ԼՂՀ անկախությունը: Ըստ էության, տեղի ունեցավ գիտակցված, թե չգիտակցված շեղում սկզբնական նպատակներից՝ այստեղից բխող ողբերգական բոլոր հետևանքներով», և «դա, վնասից բացի, ոչինչ չտվեց մեր ժողովրդին, և նախատեսված էր միայն թերարժեքության բարդույթով տառապողների համար»: Հեղինակը փորձում է «ապացուցել», թե ԼՂՀ անվտանգության ամենավտանգավոր հետևանքը ներազգային պառակտվածության սերմանումն է՝ «հայաստանցի-ղարաբաղցի», ըստ երևույթին, դրսից ներմուծված կործանարար բանաձևով: Դա թերևս մտածելու տեղիք է տալիս:*

[2] *"Бакинский рабочий", 04.09.1991.*

վածային նոր հարձակումներ ձեռնարկեցին Արցախ-Շահումյանի և Հայաստանի սահմանամերձ շրջանների վրա: Ադրբեջանից ԽՍՀՄ ժողպատգամավոր ոմն Ռաֆիկ Իսմայիլով, սեպտեմբերի 3-ին ելույթ ունենալով ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումարում, զայրացած հայտարարեց, թե ադրբեջանական տարածք հանդիսացող ԼՂԻՄ-ում նոր հանրապետության ստեղծումն անօրինական է: Ստացվում է, որ Շահումյանի շրջանի լուծարումը և նրա բռնակցումը Գերամբոյի շրջանին օրինական է, իսկ հանրապետություն կազմելու մասին Լեռնային Ղարաբաղի և Շահումյանի շրջանի ընդունած համատեղ որոշումը, որը չէր հակասում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1990թ. ապրիլի 3-ի որոշման սկզբունքներին, անօրինական է: Զ.Բալայանը մեղադրեց կենտրոնական իշխանություններին այն բանի համար, որ երեք տարի շարունակ արյուն էր հեղվում Ղարաբաղում, սակայն դա ոչ ոքի չէր անհանգստացնում: Ի պատասխան հանդես եկած Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահ Էլմիրա Կաֆարովան, պատգամավորին և կնոջը ոչ վայել պահվածքով վիրավորելով Զ.Բալայանին, պահանջեց նրան և մյուսներին, ովքեր իբր «կազմակերպել են Ղարաբաղյան շարժումը, քրեական պատասխանատվության ենթարկել»: Հետո ադրբեջանցի պատգամավորները ցուցադրաբար հեռացան նիստերի դահլիճից:

1991թ. սեպտեմբերին կար այն համոզմունքը, որ արդեն մոտ է Ղարաբաղյան հիմնախնդրի լուծումը: Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանում սեպտեմբերի 9-ին հայտարարվեց, թե շուտով կվերականգնվեն մարզային իշխանությունները, մարզի տարածքից դուրս կբերվի ադրբեջանական ՕՄՕՆ-ը և բանակցություններ կսկսվեն Հայաստանի ու Ադրբեջանի միջև[3]: Եվ, իրոք, սեպտեմբերի 16-ին տեղի ունեցած ԽՍՀՄ նախարարների խորհրդի նիստը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ում վերականգնել մարզային և տեղական իշխանությունները, մարզի տարածքից դուրս բերել բանակը և բոլոր ռազմական միավորումները[4]: Ի պատասխան այդ որոշման՝ Ադրբեջանի ժողճակատի պարագլուխ Ա.Ալիևը հանրապետության հեռուստատեսությամբ կոչ արեց ազերիներին՝ Լեռնային Ղարաբաղ ուղարկել 200-հազարանոց զինյալ ուժեր՝ իբրև «այնտեղ կարգ հաստատելու համար»: Նա բոլոր ազերիներից պահանջեց զինվել և պատերազմ

[3] *«Հայաստանի Հանրապետություն», 10.09.1991:*
[4] *"Правда", 17.09.1991.*

սկսել Հայաստանի դեմ: Հենց ժողճակատի ճնշման տակ Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանը նոյեմբերի 26-ին որոշում ընդունեց լուծարել ԼՂԻՄ-ը և Ստեփանակերտը վերանվանել Խանքենդ[5], որի համար Ա.Մութալիբովը հետագայում խիստ զղջաց: Ադրբեջանի այդ որոշումը Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում գնահատվեց որպես սադրանք հայ ժողովրդի նկատմամբ:

1991թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման միջնորդի ու երաշխավորի դերը ստանձնեցին Ռուսաստանի և Ղազախստանի նախագահներ Բորիս Ելցինն ու Նուրսուլթան Նազարբաևը: Նրանք, ժամանելով Անդրկովկաս, սեպտեմբերի 22-ին Ստեփանակերտում բանակցություններ վարեցին ԼՂՀ ղեկավարության հետ, իսկ հաջորդ օրը երկխոսության սկիզբը դրվեց Ժելեզնովոդսկի «Դուբովայա ռոշչա» առողջարանում: Շուրջ 12 ժամ շարունակվեցին Բ.Ելցինի, Ն.Նազարբաևի, Լ.Տեր-Պետրոսյանի և Ա.Մութալիբովի դռնփակ բանակցությունները, որին մասնակցում էին նաև ԽՍՀՄ պաշտպանության նախարար Ե.Շապոշնիկովը և ԽՍՀՄ ներքին գործերի նախարար Վ.Բարաննիկովը: Դիտորդի կարգավիճակով Ղարաբաղի Հանրապետությունից ներկա էին Ռոբերտ Քոչարյանը և Լեոնարդ Պետրոսյանը:

Բանակցությունները դյուրին չընթացան: Այն մի քանի անգամ ընդհատվեց, որովհետև ադրբեջանական կողմը խնդրում էր ժամանակ տալ խորհրդակցությունների համար: Ի վերջո, սեպտեմբերի 24-ին՝ 0 ժամ 45 րոպեին, ստորագրվեց եզրափակիչ կոմյունիկեն: Նրանում նշվեց, որ մինչև 1992թ. հունվարի մեկը հաստատել հրադադար, ճանաչել իշխանության օրինական մարմինների լիազորությունները, կոնֆլիկտի գոտուց դուրս բերել բոլոր սպառազեն կազմավորումները, բացառությամբ ԽՍՀՄ ներքգործնախարարության ներքին զորքերի ու ԽՍՀՄ պաշտպանության նախարարության զորամասերի:

Դիտորդների աշխատանքային խմբին հանձնարարվեց միջոցառումներ մշակել դադարեցնելու կրակը, չեզոքացնելու բոլոր սպառազեն կազմավորումները, անվտանգության երաշխիքներ ստեղծել կոնֆլիկտի գոտում ապրող բոլոր քաղաքացիների համար: Առաջարկվեց տեղահանված բնակչությանը փուլ առ փուլ վերադարձնել իրենց նախկին բնակավայրերը, անհապաղ ազատ արձակել պատանդներին, վերականգնել տրանսպորտի նորմալ

[5] *"Бакинский рабочий", 27.11.1991.*

աշխատանքները, լրատվությունը լինի օբյեկտիվ, կազմակերպել երկու հանրապետությունների լիազոր պատվիրակությունների հանդիպում և պատրաստել երկկողմ պայմանագրեր, առաջարկություններ նախապատրաստել հաջորդ փուլում կոնֆլիկտը կարգավորելու վերաբերյալ և այլն: Ստեղծվեց աշխատանքային խումբ, որն իր աշխատանքները սկսեց հոկտեմբերի մեկից[6]:

1992թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացվեց հանրաքվե, որի արդյունքների հիման վրա սեպտեմբերի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը հռչակեց Հայաստանի Հանրապետության անկախությունը[7]: Սեպտեմբերի 24-ին ՀՀ Գերագույն խորհուրդը դիմում հղեց քաղաքացիներին և աշխարհասփյուռ հայությանը, որտեղ կոչ էր արված համախմբվել և միասնաբար ձեռնամուխ լինել ժողովրդավարական ու անկախ Հայաստանի արարմանը՝ հանուն գալիք սերունդների բարօրության ու երջանկության[8]: Հոկտեմբերի 16-ին տեղի ունեցան ՀՀ նախագահական ընտրություններ, և հանրապետության նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը:

1991թ. սեպտեմբերին Ղարաբաղի արտակարգ դրության շրջանի պարետ նշանակվեց գեներալ-մայոր Բ.Մակսինը: Նա, հոկտեմբերի 8-ին հանդիպելով Ստեփանակերտի աշխատանքի և պատերազմի վետերանների հետ, խոստացավ թույլ չտալ խաղաղ բնակչության նկատմամբ ուժի գործադրում: Սակայն արցախահայության վիճակը շարունակում էր մնալ ծանր: Օգոստոսի 24-ից դադարել էին ինքնաթիռների թռիչքները Ստեփանակերտ, սեպտեմբերին մուտք չէր գործել ոչ մի գնացք, վառելիքի բացակայության պատճառով սեպտեմբերի 19-ից չէր աշխատում Ստեփանակերտի ավտոձեռնարկությունը, հաճախակի անջատվում

[6] *«Հայաստանի Հանրապետություն», 25.09.1991: Ստեփանակերտում Բ. Ելցինին և Ն. Նազարբաևին Ղարաբաղում ստեղծված վիճակին հանգամանորեն ծանոթացրել էին Արկադի Մանուչարովը, Լեոնարդ Պետրոսյանը և Օլեգ Եսայանը: Տեղի էր ունեցել հանրահավաք, որտեղ իրենց ելույթներում Բ. Ելցինն ու Ն. Նազարբաևը հույս հայտնեցին, թե անպայման կլուծվի Արցախի հիմնահարցը: Չնայած Ա. Մութալիբովն ամբողջ մեկ ժամ դիմադրում էր, որպեսզի Լեռնային Ղարաբաղից ներկայացուցիչներ չմասնակցեն ժելեզնովոդսկի բանակցություններին, սակայն դա նրան չհաջողվեց:*

[7] *Հանրաքվեին մասնակցել է հանրապետությունում ընտրական իրավունք ունեցող բնակչության 94,39 տոկոսը («Հայաստանի Հանրապետություն», 23.09.1991):*

[8] *«Հայաստանի Հանրապետություն», 25.09.1991:*

էր էլեկտրականությունը, վտանգված էր գազի մատակարարումը[9]: Ադրբեջանը չէր ուզում կատարել Ժելեզնովոդսկի կոմյունիկեի պահանջները: Անդրեյ Նույկինը իր «Ղարաբաղյան օրագիր» հոդվածում[10] օրինակ էր բերում, որ սեպտեմբերի 29-ի լույս 30-ի գիշերը Կարաչինարի վրա արձակվել էր 250 հաուբիցային արկ, որի հետևանքով առաջացել էին ավերածություններ: Այնտեղ կրակում էին մարդկանց վրա, որովհետև հայ էին: Արցախ-Շահումյանում օր օրի ավելանում էին սպանությունների և մարդկանց պատանդ վերցնելու դեպքերը: Եթե 1990թ. Արցախում թշնամու գնդակից զոհվել էր 43 հոգի, ապա 1991 թ. այդ թիվը հասել էր 153-ի: 1991թ. աշնան վերջին Ադրբեջանի բանտերում կային ավելի քան 250 պատանդներ, որոնցից շատերին աշխատեցնում էին Դաշքեսանի լեռնամետալուրգիական քարհանքերում և այլ ծանր տեղերում: Ադրբեջանը մեծ թվով ռազմական տեխնիկա էր կենտրոնացնում Արցախի ադրբեջանական գյուղերում, Շուշի, Աղդամ, Միրբաշիր, Ֆիզուլի և Լաչին քաղաքներում: 1991թ. աշնանն ավելի էր սեղմվել Արցախը շրջափակող օղակը: Նոյեմբերի 20-ին Մարտունու շրջանի Բերդաշեն (Կարաքենդ) գյուղի տարածքում՝ դեպի սարը ձգված թեքության վրա, աղետի ենթարկվեց «Մի-8» ռազմական ուղղաթիռը, որը, Աղդամից օդ բարձրանալով, թռչում էր Մարտունու կողմը: Ուղղաթիռում գտնվող բոլոր 23 հոգին զոհվում են, այդ թվում նաև Ղարաբաղի արտակարգ դրության նոր պարետ գեներալ-մայոր Ն.Ժենկինը, Ժելեզնովոդսկի հռչակագիրն իրականացնող ռուս և դազախ մի շարք պաշտոնյաներ, Ադրբեջանից ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորներ և այլն: Ադրբեջանում փորձեցին արցախահայերին մեղադրել ուղղաթիռը պայթեցնելու մեջ, սակայն չստացվեց: Ամբողջ Արցախը սգում էր Նիկոլայ Ժենկինի՝ այդ արդար և բարեկիրթ զորականի մահը: Նշանակվելով պարետ՝ նա հենց առաջին օրվանից փորձում էր արցախցիների համար լուծել որոշ կենցաղային հարցեր: Օրինակ՝ երբ Տող գյուղից հեռացած ազերիները փորձեցին կրկին վերադառնալ այնտեղ, Ն.Ժենկինը պայման դրեց. դա հնարավոր կլինի, եթե Շահումյանի, Շուշիի և Հադրութի շրջանների 24 գյուղերից բռնագաղթված բոլոր հայերը վերադառնան իրենց գյուղերը:

[9] Աբրահամյան Հ., *Ճակատագրին ընդառաջ, էջ 144:*

[10] *"Известия", 19.10.1991.*

1991թ. աշնանը հասունացել էր Արցախի տարածքում գտնված ադրբեջանական բնակավայրերի, որոնք դարձել էին հակառակորդի կրակակետ, ազատագրության և այնտեղ տեղակայված հրետանահրթիռային կայանքները ոչնչացնելու խնդիրը: Այդ գործողությունները նախ սկսվեցին Հադրութի շրջանում: Գեներալ Արթուր Աղաբեկյանը պատմում է, որ շրջանում կազմակերպված ֆիդայական ջոկատները սկզբում կատարում էին ահաբեկչական գործողություններ՝ որպես հակառակորդի գործողությունների պատասխան: Ի հակակշիռ «Կոլցո» գործողության՝ Հադրութի շրջանում ինքնապաշտպանները մշակեցին մի գործողություն, որը պայմանականորեն անվանվեց «Խանձաձորի մարտ»: Մշակված պլանի համաձայն՝ միավորվեցին 10 ջոկատներ և իրականացրին գործողությունը՝ «շրջանի բնակչությանը ապացուցելով, որ մեր հողի ճակատագիրը մեր ձեռքին է»[11]: Խանձաձորից հետո հստակ երևաց, որ Արցախը պետք է մաքրել թշնամուց, որին հետևեց Տողը: Այդ գյուղը փառավորվել էր իր պատմական անցյալով: Արաբական Բուղա խանը 9-րդ դարի կեսերին 28 անգամ փորձել էր գրավել գյուղը, բայց չէր կարողացել: Տողեցիները իրենց խիզախությամբ աչքի էին ընկել նաև 1905-1906 թվականներին թուրք-թաթարների դեմ մղված պայքարում: Մինչև 1988թ. շարժման սկիզբը գյուղն ունեցել է 1800 բնակիչ, որից 900-ը ազերիներ էին: Առաջիններից մեկը հենց Տողում սկսեցին ստորագրություններ հավաքել Հայաստանի հետ վերամիավորելու համար: Տողում բնակվող ազերիներին հեռացնելու և հայերի կյանքն անվտանգ դարձնելու համար այստեղ եկան մի խումբ հայդուկներ, ինչպես և գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանը: Դեռևս 1991թ. ապրիլի 27-ին ՀՀ ՆԳ նախարարությունը ԽՍՀՄ ներքին գործերի նախարար Բ.Պուգոյին ուղարկած հեռագրում նշել էր, որ ԼՂԻՄ Հադրութի շրջանի Տող գյուղի ադրբեջանական հատվածում ԼՂԻՄ-ի հատուկ շրջանի պարետությանը ենթարկվող գործող համակարգից դուրս Ադրբեջանական ԽՍՀ ՆԳ նախարարության օմօնը ինքնակամ ստեղծել է պարետատուն: Այնտեղ օմօնը դիմում էր կամայականությունների, թույլ էր տալիս օրինականության զանգվածային խախտումներ հայ ազգաբնակչության նկատմամբ: Ապրիլի 27-ից մինչև 29-ը շրջանի Տող, Տումի, Ազոխ, Դրախտիկ և Մեծ Թաղեր գյուղերում իրականացվել էին համատարած խուզարկություններ, կալանավորումներ և ծերբակալություններ: Կալանավորվել էին 40 հայազգի մարդիկ, որոնք ենթարկվում էին ծեծի, վիրավորական այլ գործողությունների, քաղաքացիների արժանապատվության նսեմացման: Ձերբակալվածներից ոմանց տարել էին Ֆիզուլի, որոնց ճակատագիրը մնում էր անհայտ:

Տողի փրկությունը դարձել էր հրատապ խնդիր: 1991թ. հոկտեմբերին Մարտակերտից Տող եկավ Վլադիմիր Բալայանի ինքնապաշտպանության ջոկատը, Հադրութից Արթուր Աղաբեկյանի, Ստեփանակերտից Կարո Բաբայանի և Աշոտ Դուլյանի խմբերը, Հայաստանից Մանվել Գրիգորյանի, ինչպես և ուրիշ խմբեր, ընդամենը 100 մարդ: Կազմված պլանի համաձայն՝ Տողից Վիլեն Գրիգորյանի խումբը սկզբից պետք է ապահովեր հետախուզությունը և տեղանքում կողմնորոշվելը: Տող եկան բժիշկներ Վալերի Մարությանը, Կարեն Բալայանը, Վլադիմիր Մուսայելյանը, բուժքույրեր Գալյան, Լիդան, Ալվարդը: Բերվեց նաև շարժական բուժկետ: Մշակվեց մարտավարական առումով շատ գրագետ, հատուկ պլան, ինչպես գրոհային խմբերի, այնպես էլ թիկունքային ների համար: Տողի գործողությունները ղեկավարում էր Արկադի Տեր-Թադևոսյանը՝ փորձառու և մարտավարական գործողություններին հիանալի տիրապետող սպա: Տողի գործողություններն այնքան սահուն և անսպասելի եղան, որ թուրքերը չհասցրին ուշքի գալ: Հազիվ դիմադրելով մեկ ժամ՝ սկսեցին խուճապահար փախչել գյուղից: Օգնության եկան ռուսական երկու զրահամեքենա: Հայ մարտիկները, իմանալով ռուսաստանյան ստորաբաժանման ազդականչերն ու հաճախականությունը, զրահամեքենաներին կարգադրեցին չկրակել: Ադրբեջանցիները Ֆիզուլու ուղղությամբ հեռացան ստեղծված միջանցքով: Իրոք, 1991թ. հոկտեմբերի վերջին Տողի ազատագրումը վճռորոշ եղավ շարժման պատմության մեջ: Գործողության ավարտից հետո «Ուրալ» մակնիշի մեքենայով Վլադիմիր Բալայանի խումբը ցուցադրաբար Մարտակերտ վերադարձավ զինվորական համազգեստով և զենքը ձեռքին: Արցախցիների սրտերը լցված էին ցնծությամբ: Տողի ազատագրումից մեկ շաբաթ անց ազատագրվեց նաև Հադրութի շրջանի Սարինշեն գյուղը[12]: Եվ այսպես՝ սկսվել էր պատմական մի նոր՝ Արցախը ազերիներից մաքրագարդելու շրջան:

[11] *«ԼՂ Հանրապետություն», 09.05.1995:*

[12] *Նույն տեղում, 31.10.1996:*

1991թ. աշնանը Բաքվի «Ազատլըգ» («Ազատություն») հրապարակում Ազգային ճակատի կողմից անցկացվող հանրահավաքներում բացի հայերին վարկաբեկելուց պահանջում էին ստեղծել պրոֆեսիոնալ բանակ և արշավել Ղարաբաղ: Ազգային ճակատի համաիսլամական և համաթուրքական «Գորշ գայլեր» կազմակերպությունը բնակչությանը հրահրում էր հայ ժողովրդի դեմ և խորացնում ատելությունը նրա նկատմամբ: Հոկտեմբերի 28-ին Ստեփանակերտում կայացած արտադրական ձեռնարկությունների տնօրենների խորհրդի նիստը, քննարկելով ստեղծված տնտեսական և քաղաքական ծանր դրությունը, հարց բարձրացրեց ստեղծել ԼՂՀ պաշտպանության խորհուրդ և զինված ուժեր: Դա բխում էր արդեն Ադրբեջանում բանակ ստեղծելու և այն Լեռնային Ղարաբաղի դեմ հանելու վտանգին դիմագրավելու հրամայականից: Արդեն Լեռնային Ղարաբաղի, հատկապես Ստեփանակերտի շուրջ գտնվող ադրբեջանական բոլոր բնակավայրերը, մանավանդ Շուշին, վեր էին ածվել ռազմական հենակետերի: Ստեփանակերտն ու մոտակա հայկական գյուղերը 1991թ. սեպտեմբերի երրորդ տասնօրյակից սկսած անընդհատ կրակի տակ էին: Նոյեմբերի սկզբին ԽՍՀՄ ՊՆ, ՆԳՆ և ՊԱԿ-ի մի խումբ գեներալներ, ժամանելով Լեռնային Ղարաբաղ, ծանոթացան ընդհանուր վիճակի հետ: ՆԳՆ ներքին զորքերի նոր հրամանատար գեներալ-լեյտենանտ Վ.Սավինը, նոյեմբերի 8-ին ելույթ ունենալով համամիութենական ռադիոյով և ամփոփելով ստուգման արդյունքները, հայտարարեց, թե ԽՍՀՄ ՆԳՆ ստորաբաժանումները առաջիկայում դուրս չեն բերվի Լեռնային Ղարաբաղից, որովհետև նրանք պետք է պաշտպանեն երկրամասի խաղաղ բնակչությանը: Թե՛ այդ հայտարարությունը և թե՛ վերջին շրջանում արցախահայության նկատմամբ Արցախի տարածքում տեղակայված խորհրդային զինված ուժերի դրսևորած բարի վերաբերմունքը ոգևորել էին մարզի հայությանը:

Այնուամենայնիվ՝ 1991թ. դեկտեմբերին Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղը ներքաշեց պատերազմական գործողությունների մեջ՝ նպատակ ունենալով Արցախը հայաթափել և այն նվաճել պատերազմի միջոցով: Շուշիից, Կրկժանից, Ջանհասանից, Խոջալուից և Մալիբեյլուից տարբեր տրամաչափի հրանոթներից և այլ զինատեսակներից ադրբեջանական զինված կազմավորումները անընդհատ ռմբակոծում էին Ստեփանակերտը և մոտակա հայկական գյուղերը: Ավերվեցին մեծ թվով բնակելի շենքեր, հիմնարկ-ձեռնարկություններ, այդ թվում մարզկոմի նախկին և

մարզխորհրդի շենքերը, կենտրոնական հեռագրատունը, մշակութային մի շարք կենտրոններ: Մարզխորհրդի, քաղխորհրդի և ինքնապաշտպանական շտաբի հրահանգով Ստեփանակերտի բոլոր բնակելի շենքերի և այլ կառույցների ներքնահարկերը վերածվեցին ապաստարանների:

ԼՂՀ իշխանությունները երկրամասի պաշտպանությունը կազմակերպելուց և բնակչության անվտանգությունն ապահովելուց բացի ունեին նաև մեկ այլ կարևոր խնդիր՝ արագացնել հանրապետության կայացման գործընթացը: Այդ ճանապարհին կարևոր էր 1991թ. նոյեմբերի 26-ին տեղի ունեցած ԼՂՀ ժողովրդական պատգամավորների գործադիր խորհրդի նստաշրջանը, որը որոշում ընդունեց 1990թ. ապրիլի 3-ի որոշման հիման վրա Լեռնային Ղարաբաղում հանրաքվե անցկացնելու մասին: Այն նշանակվեց դեկտեմբերի 10-ին՝ Մարդու իրավունքների պաշտպանության օրը, Ադրբեջանում անցկացվելիք համանման հանրաքվեից մեկ շաբաթ առաջ: Այդ օրը արցախահայությունը պետք է համաժողովրդական քվեով հաստատեր 1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակված ԼՂՀ անկախությունը: Նաև ընդունվեց ժամանակավոր կանոնադրություն ԼՂՀ Գերագույն խորհրդի ընտրությունների վերաբերյալ: ԽՍՀՄ ՆԳՆ զորքերը Լեռնային Ղարաբաղից դուրս բերելու Ադրբեջանի խորհրդարանի պահանջի կապակցությամբ նստաշրջանը հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղը պատրաստ է այդ զորքի մի մասը տեղակայել իր տարածքում: Նստաշրջանը հայտարարեց, որ մինչև Սահմանադրության ընդունումը հանրապետությունում կգործեն ԽՍՀՄ օրենքները[13]:

Արդեն հոգևարք ապրող ԽՍՀՄ-ը իր վերջին սադրանքներն էր մոգոնում: 1991թ. նոյեմբերի 27-ին տեղի ունեցած ԽՍՀՄ Պետական խորհրդի նիստը, քննարկելով «ԼՂԻՄ-ում, Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջաններում իրադրության կայունացման միջոցառումների մասին» հարցը, ընդունեց մի որոշում, որը կրում էր ձևական և անիրականանալի բնույթ: Պետական խորհուրդը առաջարկում էր Ադրբեջանի և Հայաստանի Հանրապետություններին չեղյալ հայտարարել այն բոլոր ակտերը, որոնք փոխում են ԽՍՀՄ Սահմանադրության մեջ արձանագրված ԼՂԻՄ իրավական կարգավիճակը, այսինքն՝ պահանջվում էր ԼՂԻՄ-ի տարածքում վերա-

[13] *«Հայաստանի Հանրապետություն», 28.11.1991:*

կանգնել սահմանադրական կարգը և շարունակել բանակցությունները երկու հանրապետությունների միջև, Ժելեզնովոդսկի հռչակագրի համաձայն՝ հակամարտության գոտուց դուրս բերել ապօրինի զինված կազմավորումները, երկու հանրապետությունների միջև սահմանի ամբողջ երկայնքով ստեղծել անվտանգության գոտի, վերսկսել երկաթուղային տրանսպորտի, գազամատակարարման և կենսաապահովման մյուս հաղորդակցությունների աշխատանքը[14]: Ադրբեջանը հրաժարվեց կատարել ԽՍՀՄ բարձրագույն իշխանության այդ որոշումը, իսկ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը հայտարարեց, թե Լեռնային Ղարաբաղի հարցը պետք է վճռվի միջազգային ատյաններում:

1991թ. դեկտեմբերի 10-ի ԼՂՀ անկախության հանրաքվեին ներկա գտնվելու համար աշխարհի մի շարք երկրներից եկան 40 անկախ դիտորդներ, այդ թվում Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխոսնակ Քերոլայն Քոքսը: Քվերակության իրավունք ունեցող 132328 արցախցիներից քվեարկության ներկայացան 108736-ը (82,2%), որոնցից 108615-ը (99,89%) քվեարկեցին Արցախի անկախության օգտին: Հանրապետության տարածքում ապրող ադրբեջանցիները հանրաքվեին չմասնակցեցին[15]:

Դիտորդներն արձանագրեցին, որ ԼՂՀ-ում անկախության հանրաքվեն անցել է միջազգային բոլոր նորմերին համապատասխան, և ոչ մի խախտում չի արձանագրվել: Նրանք հատուկ դիմում հղեցին աշխարհի խորհրդարաններին և Ռուսաստանի Դաշնության նախագահին, որտեղ նշված է, որ ադրբեջանական կողմն ամեն կերպ փորձել է խոչընդոտել հանրաքվեի անցկացմանը: Միայն այդ օրը նրանց կողմից արձակված հրթիռների ու

[14] *Նույն տեղում, 29.11.1991: Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովը հրաժարվել էր մասնակցել ԽՍՀՄ պետխորհրդի նիստին:*

[15] *Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի որոշ իրավաքաղաքական հարցեր, Եր., 1994, էջ 17: Նկատենք, որ 1991 թ. դեկտեմբերի 10-ի դրությամբ Շահումյանի շրջանի հետ միասին ԼՂՀ-ն ուներ 207678 բնակիչ, որոնցից 166066-ը՝ հայ, 38737-ը՝ ադրբեջանցի և 2875-ը՝ ռուս: Քվեարկությանը չմասնակցած ադրբեջանցիների թիվը կազմել է 10555 հոգի (ԼՂՀ ՊԱ, ֆ. 1,ց. 3,գ. 40, թ. 1): Այդ ժամանակ Շահումյանի շրջանի 18 բնակավայրերի բնակչությունը կազմում էր 20675 հոգի, որից 9965-ը՝ տղամարդ, 1066-ը՝ կին: Դրանցից հայեր՝ 15921 (77,2%), ազերիներ՝ 3910 (18,9%), ռուսներ՝ 791 (3,8%), այլք՝ 3(0.1%) (ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 3, գ. 142, թ. 1):*

արկերի պայթյունից զոհվել են 7 և վիրավորվել 11 մարդ[16]: Անկախ դիտորդներն արձանագրեցին նաև, որ ադրբեջանական կողմը «վարում է զավթողական պատերազմ ազատության և ժողովրդավարության համար մարտնչող Լեռնային Ղարաբաղի հայերի դեմ»: Նրանք գտնում էին, որ Ռուսաստանը պետք է հավաստի 1813թ. հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի պայմանագիրը կատարելու պարտականությունը և լինի Արցախի ժողովրդի խաղաղ կյանքի երաշխավորը: Նրանք առաջարկում էին մինչև Արցախից խորհրդային բանակի հեռանալը հայերին վերադարձնել նրա իսկ աջակցությամբ զավթված հայկական բնակավայրերը[17]:

Արցախում անցկացված հանրաքվեն ողջունեցին Ռուսաստանից, Ուկրաինայից, Անգլիայից, Գերմանիայից, Բուլղարիայից, աշխարհի այլ երկրներից եկած դիտորդներն ու լրագրողները, ԽՍՀՄ և Ռուսաստանի Դաշնության ժողովրդական պատգամավոր, «Ժողովրդական Ռուսաստան» շարժման համակարգիչ խորհրդի համանախագահ Յուրի Աֆանասևը, ԽՍՀՄ ժողպատգամավոր, գնդապետ Վլադիմիր Սիմոնովը և ուրիշներ: Նրանք ի լուր աշխարհի հայտարարեցին, որ իրենք տեսան «մարտնչելու պատրաստ արցախցիներին...»[18]:

1991թ. դեկտեմբերի 16-ին ԼՂՀ խորհրդի գործադիր կոմիտեի անունից դիմում հղվեց ՄԱԿ-ին, ինչպես և Անկախ Պետությունների Համագործակցությանը (ԱՊՀ), որով խնդրվում էր ԼՂՀ-ն ճանաչել որպես անկախ պետություն, որը երաշխավորում է «միջազգային ճանաչված բոլոր նորմերի, մարդու՝ անկախ ազգային պատկանելիությունից և կրոնական համոզմունքներից իրավունքների և ազատությունների պաշտպանումը»[19]:

1991թ. դեկտեմբերի 18-ին և 20-ին տեղի ունեցած ԼՂՀ մարզխորհրդի գործադիր կոմիտեի նիստը, քննարկելով խորհուրդների ժողովրդական պատգամավորների ընտրությունները կազմակերպելու հարցը, որոշում է այն անցկացնել կազմակերպված: Քննարկվեց նաև մարզի տարածք ոչ օրինական ռազմական միավորներ մտցնելու հարցը, և անհրաժեշտ համարեց ամեն

[16] Արշակյան Ա., *Մահ չիմացյալ մահ, մահ իմացյալ՝ անմահություն, էջ 515-520:*

[17] *«Հայաստանի Հանրապետություն», 14.12.1991:*

[18] *«Խորհրդային Ղարաբաղ», 18.12.1991:*

[19] *«Երկիր», 18.12.1991:*

կերպ կանխել այն[20]: ԼՂՀ մարզխորհրդի գործկոմը դիմում հղեց Ադրբեջանի Հանրապետության նախագահ Ա.Մութալիբովին, խորհրդարանին և ադրբեջանական ժողովրդին, որտեղ ընդգծված էր, որ դեկտեմբերի 10-ին ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն հաստատել է արցախցիների անկումն կամքը: Սակայն շարունակվող անկայունությունը և պատերազմական վիճակը երկու կողմերին էլ պատճառում են մեծ կորուստներ: ԼՂՀ-ն պատրաստակամություն հայտնեց հավասար իրավունքներով և պարտականություններով բանակցություններ սկսել Ադրբեջանի Հանրապետության հետ և պարտավորվում էր միջազգային նորմերին համապատասխան իր տարածքում հարգել ազգային փոքրամասնությունների շահերն ու իրավունքները[21]: Այդուհանդերձ, Ադրբեջանը շարունակում էր չընդունել ԼՂՀ գոյության փաստը և իր ծավալապաշտական նկրտումներն իրագործելու համար ժամ առ ժամ ուժեղացնում էր ռազմական ճնշումը: Այդ ժամանակ խորհրդային ներքին զորքերը պատրաստվում էին հեռանալ Լեռնային Ղարաբաղից: Դեկտեմբերի 24-ին «Ազատություն» ռադիոկայանը հաղորդեց, թե Ստեփանակերտում շուրջ 10 հազար կին ու երեխա շրջապատել են նրանց և խլել մոտ 1000 միավոր զենք: Լրատվամիջոցները դեկտեմբերի 27-ին հաղորդեցին, թե ԼՂՀ սահմաններից հեռացել է ներքին զորքերի վերջին զինվորականը, և արցախահայությունը մնացել է իր սեփական ուժերի հույսին:

Արցախում չկային հաց ու վառելիք, Ստեփանակերտը կրկին զրկվել էր ջրից: Երևանից թռչող ուղղաթիռները, հաղթահարելով բոլոր դժվարությունները, վայրէջք էին կատարում Քոլատակում, Կարմիր շուկայում, Ճարտարում, Գիշիում, Տումիում, Ստեփանակերտի մարզադաշտում և որտեղ հնարավոր էր: Նրանք Արցախ էին հասցնում պաշտպանության միջոցներ, սննդամթերք, դեղորայք, վառելիք, կամավորներ, իսկ Արցախից Երևան տեղափոխում հիվանդներին, վիրավորներին, երեխաներին, ծերերին: «Երկիր» օրաթերթի թղթակցի այն հարցին, թե ինչպես է Հայաստանը պետական մակարդակով զբաղվում Արցախի պաշտպանության խնդրով, երբ Ալմա Աթայում ստորագրվել է համաձայնագիր, ըստ որի Հայաստանը պարտավոր է հարգել հարևան պետության սահմանները, ՀՀ պաշտպանության

[20] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 333, թ. 6-9:*
[21] *«Երկիր», 21.12.1991:*

կոմիտեի նախագահ Վազգեն Սարգսյանը պատասխանել է. «Արցախի ժողովուրդն ինքն է կազմակերպում իր պաշտպանությունը, իսկ մենք նրան օգնում ենք, ինչպես կարող ենք: Այս հանգամանքն այն է, որ մենք կարող ենք Արցախին օգնել որպես դաշնակից պետություն... Արցախի ժողովուրդը մերն է, Արցախի հողը մերն է, և մենք իրավունք չունենք այդ հարցում մի կողմ քաշվել... Արցախը պետք է վերածենք հզոր ռազմական ամրոցի: Ադրբեջանը վաղ թե ուշ կհամակերպվի Արցախի գոյության հետ... Ադրբեջանցիներն իրենց արմատները չունեն Արցախում և չեն ուզում նրա համար զոհվել: Նրանց զոռով քշում բերում են մեր դեմ կռվելու...»: Վազգեն Սարգսյանն այդ հարցազրույցում արել է նաև հետևյալ արժեքավոր դիտողությունը. «Չի կարելի կռվող տղաների մեջ կուսակցական տարբերություն դնել: Տղաների թափած արյունը չի կարող այս կամ այն կուսակցությանը պատկանել: Առավել ևս՝ թափված արյունը չի կարող նվիրվել այս կամ այն կուսակցությանը, երբ կա մեծագույն սրբությունը՝ ազգը, որի զոհասեղանին էլ իրենց կյանքն են դրել նրա լավ զավակները»[22]:

ԼՂՀ Գործադիր կոմիտեի նախագահի պաշտոնակատար Լեոնարդ Պետրոսյանը, դեկտեմբերի 23-ին հանդես գալով հայտարարությամբ՝ ուղղված ԱՊՀ անդամ երկրների նախագահներին ու խորհրդարաններին, բացահայտեց Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ կատարվող հանցագործությունները և ԱՊՀ ժողովուրդների ու նախագահների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ «Ադրբեջանի կողմից իրագործվող խոշորամասշտաբ հարձակման անուղղելի հետևանքների համար պատասխանատվությունն ընկնում է ոչ միայն նրա ղեկավարության, այլև բոլոր նրանց վրա, ովքեր անտարբեր մնացին ավելի քան երեք տարի տառապող Լեռնային Ղարաբաղի ժողովրդի բազմաթիվ դիմումներին ու ժամանակին գործուն միջոցներ չձեռնարկեցին հարձակվողներին կանգնեցնելու համար»[23]:

[22] *Նույն տեղում, 28.12.1991:*
[23] *Նույն տեղում, 24.12.1991: 1991 թ. դեկտեմբերի 21-ին Ալմա Աթայում հավաքվելով՝ Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ներկայացուցիչները (10) ստորագրեցին հռչակագիր, որով ի լուր աշխարհի հայտնվում էր, որ ԱՊՀ-ի կազմակերպումով ԽՍՀՄ-ը դադարեցնում է իր գոյությունը: Ընդհանուր միտումն այն էր, որ պետք է հարգվեն «ազգային փոքրամասնությունների իրավունքները» («Հայաստանի Հանրապետություն», 27.12.1991):*

ՀՀ Գերագույն խորհուրդը, դեկտեմբերի 26-ի փակ նիստում քննության առնելով ԼՂՀ-ում ստեղծված վիճակի մասին հարցը, ընդունեց հայտարարություն, որով ԱՊՀ երկրներին կոչ էր արվում «գործուն միջոցներ ձեռք առնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության անվտանգության և կենսագործունեության ապահովման համար»[24]: Ի պատասխան այդ հայտարարության՝ Ադրբեջանը նույն օրը դադարեցրեց Ստեփանակերտի էլեկտրագազամատակարարումը, իսկ 28-ին պայթեցրեց Աղդամից Ստեփանակերտ մտնող և այնտեղից շրջանները գնացող գազատարը:

Արցախցիների մյուս կարևոր հարցը Հանրապետության Գերագույն խորհրդի ձևավորումն էր: Նախատեսված էր, որ Գերագույն խորհրդում, որն անվանվեց ԼՂՀ Խորհրդարան, իսկ հետո՝ ԼՂՀ Ազգային ժողով, պետք է ընտրվեր 81 պատգամավոր: Ընտրությունների օրը նշանակվեց դեկտեմբերի 28-ը: Ընտրությունների անցկացման կարգը հաստատվեց ԼՂՀ գործկոմի խորհրդի դեկտեմբերի 19-ի նիստում: Ստեղծվեց Կենտրոնական ընտրական հանձնաժողով: ԼՂՀ Գերագույն խորհրդի ընտրությունների մասին տեղյակ պահվեց հանրապետության ադրբեջանաբնակ գյուղերի բնակիչներին, և նրանց ուղարկվեցին ընտրություններին վերաբերող բոլոր փաստաթղթերը: Սակայն ադրբեջանցիները բոյկոտեցին ընտրությունները՝ վայնասուն բարձրացնելով արցախցիների դեմ:

Չնայած հանրապետությունում ռազմական դրություն էր, և չէին դադարում ռմբակոծությունները, նախընտրական հանրահավաքները մարդաշատ էին: Պատգամավորության թեկնածուներն ընտրողների հետ հանդիպումների ժամանակ հիմնական ուշադրությունը դարձնում էին հայրենիքի պաշտպանության, թշնամուն հակահարված տալու համար բոլոր ուժերը միավորելու, ստեղծված տնտեսական ծանր վիճակը հաղթահարելու և այլ կենսական խնդիրների վրա:

1991թ. դեկտեմբերի 28-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի ընտրություններն անցան Ադրբեջանի պարտադրած պատերազմական գործողությունների պայմաններում: Միայն այդ օրը արցախցիները տվեցին 18 զոհ, տասնյակ վիրավորներ, ռմբակոծվեց ավելի քան 40 բնակավայր, ավերվեցին Ստեփանակերտի մարզային ու մանկական հիվանդանոցները և բազմաթիվ այլ շինու-

[24] *«Հայաստանի Հանրապետություն», 27.12.1991:*

թյուններ[25]: Երկու օր անց՝ դեկտեմբերի 30-ին, ԱՊՀ երկրների ղեկավարները, դիմելով Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարներին, կոչ արեցին Ղարաբաղյան հիմնախնդիրը լուծելու համար ակտիվացնել բանակցությունները, սակայն Ա.Մութալիբովը ոչ միայն չընդունեց այդ կոչը, այլև պահանջեց չմիջամտել Ադրբեջանի անկախ հանրապետության ներքին գործերին: Այդ նույն օրը Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի 18 ակադեմիկոսներ, դիմելով Բ.Ելցինին, խնդրեցին միջամտել, որպեսզի վերջ տրվի Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող արյունահեղությանը: Նույն օրը ԼՂՀ Գործադիր կոմիտեն, հեռագիր հղելով ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին, Եվրամիության ղեկավարներին, ԱՊՀ երկրների ղեկավարներին և զորքերի գլխավոր հրամանատար, ավիացիայի մարշալ Ե.Շապոշնիկովին, հաղորդեց, որ թնդանոթների կիրառմամբ իրականացվում է ԼՂՀ հայերի ցեղասպանություն, որի պատասխանատվությունը բացառապես ընկնում է Ադրբեջանի հանրապետության ղեկավարության վրա: Նաև նշվում է, որ Նոր տարվա նախօրեին շուրջօրյա հրետակոծման հետևանքով ավերվել են հայկական տասնյակ բնակավայրեր, սպանվել ու վիրավորվել են հարյուրավոր խաղաղ բնակիչներ, այդ թվում կանայք, ծերեր և երեխաներ[26]:

1992թ. հունվարի 4-ին կրկին Ստեփանակերտ ժամանեց Քերոլայն Քոքսը: Նրա հետ էին տարբեր երկրներից 10 դիտորդներ: Եկել էին նաև Ռուսաստանի մի խումբ խորհրդարանականներ և արտասահմանյան լրագրողներ՝ ներկա գտնվելու ԼՂՀ նորընտիր Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանին: Նրանք դատապարտեցին ադրբեջանական իշխանությունների կողմից արցախահայության դեմ կազմակերպված վայրագությունները: Նրանք տեսան նաև Ստեփանակերտի նկուղներում պատսպարված մարդկանց և հերոսաբար դիմադրող արցախցիներին: Բավական է նշել, որ միայն Ամանորի գիշերը ազերի վայրագները հարձակում էին գործել Ասկերանի շրջանի վրա և ներխուժել Խրամորթ գյուղը, որի հետևանքով զոհվել են 7 հայ բնակիչներ՝ 6 ծերունի և մեկ երեխա, 13-ամյա մի աղջիկ տարվել է պատանդ: Ընդհարումներ էին տեղի ունեցել նաև Շահումյանի շրջանում, որի ժամանակ հակառակորդն օգտագործել է ծանր զրահատեխ-

[25] Արշակյան Ա., *նշվ. աշխ., էջ 550-567, 630-631:*
[26] *«Հայաստանի Հանրապետություն», 04.01.1992:*

նիկա: Հունվարի 1–2-ը Ստեփանակերտը անընդհատ ենթարկվել է ռմբակոծության[27]:

1992թ. հունվարի 6-ին իր աշխատանքները սկսեց Գերագույն խորհրդի նստաշրջանը: Ընտրված 51 պատգամավորներից 48-ի մասնակցությամբ[28] և 80 դիտորդների ու լրագրողների ներկայությամբ «Հայր մերով» ԼՂՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը սկսեց աշխատանքները: Առաջին նիստում ընդունվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության Հռչակագիրը, որով ԼՂՀ-ն հայտարարվեց անկախ պետություն, որի տարածքում պետք է գործեն միայն ԼՂՀ Սահմանադրությունն ու օրենքները: Հռչակագրում ասված է, որ ԼՂՀ-ում ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին, նրա տարածքում ապրող բոլոր բնակիչները հանրապետության քաղաքացիներ են, որոնք գտնվում են ԼՂՀ պաշտպանության տակ: Հանրապետության ամբողջ տարածքը, նյութական և հոգևոր հարստությունները պատկանում են հանրապետությանը և նրա ժողովրդին: ԼՂՀ պետական լեզուն հայերենն է[29]: Որոշվեց ստեղծել հանրապետության իշխանության բարձրագույն մարմիններին ենթակա սեփական ռազմական ուժեր, որոնց հիմնական խնդիրը պետք է լինի ԼՂՀ սահմանների պաշտպանությունը և բնակչության անվտանգության ապահովումը:

ԼՂՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը հունվարի 8-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ ընտրեց 33-ամյա պատմաբան Արթուր Մկրտչյանին: Նախագահի տեղակալ ընտրվեց Գեորգի Պետրոսյանը, քարտուղար՝ Վլադիմիր Հակոբյանը: Նախագահի առաջին տեղակալի տեղը մնաց թափուր, որովհետև այդ տեղի համար առաջադրված թեկնածուներից ոչ մեկն անհրաժեշտ ձայներ չստացավ:

Նստաշրջանում ընդունվեց արտաքին դրության մասին որոշում, և ստեղծվեցին մի շարք հանձնաժողովներ: Պաշտպանության և անվտանգության հանձնաժողովի նախագահ ընտրվեց Վալերի Բալայանը, արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ՝ Լևոն Մելիք-Շահնազարյանը, կրթության, գիտության, լեզվի, մշակույթի և լրատվության հանձնաժողովի նախագահ՝ Համլետ Գրիգորյանը: Մարզային դատարանն ու դատախազությունը համապատասխանաբար վերանվանվեցին ԼՂՀ Գերագույն դատարան և Գերագույն դատախազություն: Ստեղծվեց հանրապետության նախարարների խորհուրդ, որի նախագահ հաստատվեց տնտեսագետ Օլեգ Եսայանը, տեղակալ՝ Բորիս Առուշանյանը:

ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը կոչով դիմեց ՄԱԿ-ին, աշխարհի բոլոր պետություններին, մասնավորապես ԱՊՀ երկրներին՝ խնդրելով ճանաչել ԼՂՀ-ն և օգնել կանխելու արցախահայության ցեղասպանությունը[30]:

Այսպիսով՝ ԼՂՀ-ի համար ստեղծվեց ակտիվ և պատասխանատու շրջան: Իշխանության եկան Ղարաբաղյան պայքարում կոփված նոր ուժեր, որոնք անելու շատ բան ունեին:

Մինչ ԼՂՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը հունվարի 3-ին ստացվել էր ՀՀ Գերագույն խորհրդի դիմումը, որտեղ նշված է, որ արցախահայության ազգային-ազատագրական պայքարը թևակոխել է նոր՝ պետականության հաստատման շրջան: ՀՀ Գերագույն խորհուրդը համոզված էր, որ այն կընթանա միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ օրինական հիմքերի վրա դնելով ԼՂՀ քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը: Նաև ասված է, որ ՀՀ Գերագույն խորհուրդը հայ ժողովրդի անունից հավաստիացնում է ԼՂՀ Գերագույն խորհրդին, որ բոլոր միջոցներով զորավիգ կլինի Արցախի պետականության հաստատմանն ու ամրապնդմանը: Սակայն այդպես էլ ՀՀ բարձրագույն իշխանությունը պաշտոնապես չշնորհավորեց ԼՂՀ նորընտիր իշխանություններին: Պատճառը, թերևս, հայ հեղափոխական դաշնակցության անդամի՝ Արցախի Գերագույն խորհրդի նախագահ ընտրվելն էր:

---

[27] *Նույն տեղում:*

[28] *Ճանապարհները փակ լինելու պատճառով երեք պատգամավոր չէին կարողացել հասնել Ստեփանակերտ:*

[29] Աբրահամյան Հ., *նշվ. աշխ., էջ 151:*

[30] *Նույն տեղում, էջ 153:*

2. ԼՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ

Ադրբեջանի հակահայ քաղաքականության հետևանքով 1991 թվականի վերջին Արցախը ներքաշվեց պատերազմական գործողությունների մեջ: ԼՂՀ-ի բոլոր առաջարկությունները մերժվում էին, և Ադրբեջանը հրաժարվում էր նրա հետ բանակցություններից: Ադրբեջանա-թուրքական քարոզչությունը աշխարհով մեկ աղաղակում էր, թե իբր Լեռնային Ղարաբաղում գործում են վարձկաններ և ոչնչացնում են այնտեղ ապրող ազերիներին: Դա պաշտոնապես ժխտեցին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից Արցախի հարցերով հատուկ հանձնաժողովի քարտուղար Սուրեն Զոլյանը և ԼՂՀ Գերագույն խորհրդի պաշտպանության ու անվտանգության հանձնաժողովի նախագահ Վալերի Բալայանը: 1991թ. հունվարի 10-ին «գրադ» կայանքից ռմբակոծվեց Ստեփանակերտը, իսկ 13-ին՝ Շահումյանը: Ստեփանակերտը «ալազան» հրթիռներով և «Տ-12» ականներով կրկին ռմբակոծվեց հունվարի 13-ի լույս 14-ի գիշերը: Այդ օրերին Շահումյանի շրջկենտրոնը գնդակոծվեց «նուրս» կայանքից և 100 մմ հրանոթներից, որի հետևանքով զոհվել էին հինգ հոգի: Ֆիզուլու կողմից չէր դադարում Հադրութի ռմբակոծումը: Հակառակորդի լայնածավալ հարձակումների հետևանքով Արցախի վիճակը հունվարի 14-ին ծայրաստիճան ծանրացել էր: Զոհերի և ավերածությունների թիվը աճում էր ժամ առ ժամ: Ստեփանակերտն ու Մարտունին հունվարի 20-ի գիշերը ենթարկվեցին զանգվածային հրետակոծության: Ամիրանլար ադրբեջանական բնակավայրի կողմից արձակված հրթիռներից ու արկերից Մարտունիում զոհվեցին ութ հոգի: Ստեփանակերտը հիմնականում ռմբակոծվում էր Շուշիի և Ջանհասանի կրակակետերից, որոնց հետևանքով զոհվեցին երկու հոգի, այդ թվում ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Վիգեն Շիրինյանը: Բնակչությանը և վիրավորներին օգնություն ցույց տալու համար Հայաստանից Արցախ ժամանեցին մի խումբ բժիշկներ: Վեցերորդ շաբաթն էր, ինչ չէր աշխատում Ստեփանակերտի հացի գործարանը, 12 օր էր, ինչ անջատված էր էլեկտրաէներգիան, արդեն չորրորդ ամիսն էր, ինչ Ստեփանակերտը կապ չուներ դրսի աշխարհի հետ, հինգերորդ օրն էր, ինչ անընդհատ ռմբակոծվում էին մարզի բոլոր շրջկենտրոնները և գյուղերը: ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանը, հունվարի 15-ին պատասխանելով լրագրողների հարցերին, նշեց, որ սահմանային գոտու բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով հանրապետությունում ստեղծվող բանակի կողքին դեռևս գոյություն ունեն աշխարհազորային ջոկատները, որոնք զինվորագրված են Արցախի պաշտպանությանը: Նորաստեղծ հանրապետության նախագահը վստահեցնում էր, որ բնակչությանը պաշտպանելու և նրանց կենցաղային ծանր պայմանները թեթևացնելու համար հանրապետության իշխանությունները կանեն հնարավոր ամեն ինչ: Այդ օրերին ռումբերի պայթյունի տակ Ստեփանակերտի փողոցներից հավաքում էին կենցաղային աղբը, ավտոմեքենաներով ջուր էին բերում և բաժանում բնակչությանը: Բոլոր շենքերի նկուղները մաքրվել և վեր էին ածվել ռմբապաստարանների, արտեզյան ջրհորներում տեղադրվել էին փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, որպեսզի ջուր մատակարարվի, քաղաքի բնակչությանը բաժանում էին մոմ, նավթավառներ և այլ կենցաղային խիստ անհրաժեշտության ապրանքներ, որոնք ուղղաթիռներով բերվում էին Հայաստանից: Նախապատրաստվում էին բնակչությանը կտրոններով ալյուր վաճառել: ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահը մամուլի ասուլիսում հայտարարեց, թե Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետությունները պետք է լինեն միասնական, իսկ դրա համար անհրաժեշտ է գործողության մեջ դնել 1989 թվականի դեկտեմբերի 1-ի որոշումը: Լրագրողներից մեկի այն հարցին, թե ՀՀ-ն կճանաչի ԼՂՀ-ն, Ա.Մկրտչյանը բացասական պատասխանեց՝ ասելով, թե ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը նույնիսկ շնորհավորական հեռագիր չի ուղարկել ԼՂՀ իշխանություններին[1]:

Հայաստանի իշխանությունների նման դիրքորոշումը ծննդով արցախցի երևանաբնակ մի խումբ գիտնականների[2] ստիպեց «Պատմությունը մեզ չի ների» վերտառությամբ բաց նամակ հղել Լ.Տեր-Պետրոսյանին և նրան հիշեցնել, որ Հայաստանի անբաժանելի մաս Արցախի և արցախահայության բախտը դրված է խաղաքարտի վրա, մինչդեռ Հայաստանի իշխանություններն Արցախի նկատմամբ բռնել են անվճռական կեցվածք, որից օգտվում է Ադրբեջանը և ժամանակակից բոլոր միջոցներով զինված ուժեր է նետում Արցախի դեմ: «Արցախում – շարունակում էին

[1] *«Ուրբաթ», 24.01.1992:*

[2] *Նրանք էին՝ Լ. Աղալովյան, Ս. Մելքումյան, Ս. Սուլեյմանյան, Ռ.Դալլաքյան, Ս. Հայրապետյան և Ս. Աբրահամյան:*

նամակի հեղինակները,– դրությունը օրեցօր բարդանում է: Ադրբեջանի նպատակն է խեղդել Արցախի ազգային-ազատագրական պայքարը և հայաթափել երկրամասը: Անկախ պետականություն, Գերագույն խորհուրդ, նախագահ ունեցող ՀՀ-ի աչքի առաջ ամայացան Գետաշենը և Մարտունաշենը, Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը, որի համար պատմությունը մեզ չի ների»: Նամակի հեղինակները Լ.Տեր-Պետրոսյանին զգուշացնում էին չհավատալ թուրքական խորամանկ դիվանագիտությանը և Արցախի փրկությունը կազմակերպելու համար անում էին մի շարք գործնական առաջարկություններ[3]:

ԼՂՀ իշխանությունները Արցախի պաշտպանական ուժերի առաջ խնդիր դրեցին լռեցնել Ստեփանակերտը և շրջակա հայկական գյուղերը ռմբակոծող թշնամու կրակակետերը: Նրանք հունվարի 11-ին լուրջ հարված հասցրին Մալիբեկլուին և Ղուշչուլարին, որտեղի կրակակետերից ոչ միայն ռմբակոծվում էին Ստեփանակերտը, այլև Ասկերանի շրջանի մի շարք հայկական գյուղեր: Ստեփանակերտն անընդհատ ռմբակոծվում էր մանավանդ Կրկժան թաղամասից, որտեղի կրակակետը լռեցնելու համար կենտրոնացվեցին մի քանի կամավորական ջոկատներ: Չարիքի բուն դարձած Կրկժանը գրավելու համար կազմվեց 13 հոգուց բաղկացած մի ջոկատ, որի առաջին գրոհն ավարտվեց անհաջող: Գրոհի ժամանակ մարտիկներից երկուսը զոհվեցին: Կրկժանի գրավումը և այնտեղ գտնվող կրակակետերի ոչնչացումը դարձել էին կենսական անհրաժեշտություն: Դա պետք է արվեր շտապ, քանի դեռ ազերիները նոր ուժերով չէին ամրապնդել իրենց պաշտպանական դիրքերը: Ուստի, Կրկժանի երկրորդ գրոհը տեղի ունեցավ նախապատրաստական լուրջ աշխատանքներից հետո: Հակառակորդը երեք օր ոչ միայն կատաղի դիմադրում էր, այլև փորձում էր հակագրոհով ներխուժել հայոց դիրքերը: Ադրբեջանական օմօնականներին օգնում էին ծանր տեխնիկայով զինված ռուսական ստորաբաժանումներ: Սակայն հայ մարտիկները փոքրաթիվ ուժերով հունվարի 19–20-ը լիովին ազատագրեցին Կրկժանը՝ Ստեփանակերտը մշտապես կրակի տակ պահող ազերիների ռազմական հենակետերից մեկը: Այդ

[3] *«Երկիր», 18.21.1992:*

հաղթանակն ունեցավ հոգեբանական և քաղաքական կարևոր նշանակություն[4]:

Հունվարի 20-ին տեղի ունեցած ԼՂՀ Գխ նախագահության նիստը, լսելով հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Սերժ Սարգսյանի հաղորդումը հանրապետության պաշտպանության մասին, ընդունեց ի գիտություն ու հայտարարեց օգտագործել հնարավոր բոլոր միջոցները և հանրապետության սահմանները զերծ պահել թշնամու ներխուժումից[5]:

Այն օրերին, երբ նախապատրաստվում և իրագործվում էին Կրկժանի գործողությունները, ստեփանակերտցի մի խումբ ազատամարտիկների հաջողվեց Մարտունի փողոցի տակով թունել փորելով հասնել ռուսական բանակի զորամասի քիմիական պահեստին ու դուրս բերել բավականին թվով ինքնաձիգներ: Այս հանդուգն փաստը խիստ ցնցել էր ռուսական հրամանատարությանը: Հայ ազատամարտիկներին նաև հաջողվել էր հսկողության տակ առնել Շուշի-Քյոսալար-Զանհասան-Յալուբքենդ ճանապարհը, որտեղով այդ գյուղերը գենք, զինամթերք և սննդամթերք էին ստանում Շուշիից: Հայ ազատամարտիկները պայթեցրին նաև Շուշի-Ղուբաթլու բարձր լարման էլեկտրահաղորդալարի աշտարակներից մեկը, ինչպես նաև Շուշի-Լաչին ավտոճանապարհի մի հատվածը: Ի պատասխան ազերիների գործողությունների՝ հայ ազատամարտիկները Շոշ գյուղից սկսեցին ռմբակոծել Շուշին, իսկ Մարտունուց՝ Ամիրանլարը:

1992 թ. հունվարի երկրորդ կեսին թեժ մարտեր տեղի ունեցան Քարին տակի մատույցներում: Շուշիի բարձունքից ազերիներն անընդհատ գրոհում էին, սակայն ներքևում գտնվող Քարին տակը մնում էր անառիկ: Պարզապես կրկնվում էր 1905–1906 թթ. պատմությունը, երբ թաթարները (ազերիները) չնայած մեծ ջանքեր գործադրեցին, սակայն չկարողացան գրավել Քարին տակը: Այդ գյուղը գտնվում է Շուշի-Գորիս-Քարավաճառ երանկյունու հարավարևելյան ծայրամասում: Քարինտակը և Բերդաձորը կորցնել, նշանակում է Հայաստանի հետ արհեստականորեն 4 կիլոմետր բաժանվածությունը հասցնել 70 կմ-ի: Հենց պայքարի սկզբից Քարին տակը և Բերդաձորը գտնվում էին ուշադրության կենտրոնում: Կրակների տարափի տակ Քարին

[4] *Կրկժանի մարտերի մասին ավելի հանգամանորեն տես Ղարիբյան Գ., Արթուրը: Արծվի թռիչք էր նա, Եր., 1999, էջ 104–109:*

[5] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, գ. 1, գ. 1, թ. 5:*

տակը կարողացավ 18 կիլոմետրանոց կյանքի ու փրկության ճանապարհ բացել դեպի մոտակա հայկական գյուղերը: Գյուղին օգնության եկավ ապարանցի տրակտորիստ Լյովան: «Արցախ» հայրենակցական միության գործուն աջակցությամբ Երևանից հայրենի գյուղ վերադարձած Միշա Պետրոսյանը գյուղի նախկին ջրաղացի տեղում կանգնեցրեց երկհարկանի ջրաղաց, ստեղծեց հացաթխման փուռ՝ բավարար հիմքերի վրա դնելով բնակչության կենսաապահովումը: Գյուղը պաշտպանելու համար «Արցախ» հայրենակցականի ջանքերով այնտեղ հասցվեցին ինքնապաշտպանության զինական միջոցներ: Գյուղ հասավ նաև երևանաբնակ քարինտակցիներից կազմակերպված 14 հոգուց կազմված ազատամարտիկների մի ջոկատ: Շուշիի ժայռերի բարձրությունից թափվող քարաբեկորների և վառվող անվադողերի հեղեղումների, ինչպես նաև գնդակոծումների ու հրթիռակոծումների քառամյա հոգեբանական պատերազմից հետո թուրք բարբարոսները 1992թ. հունվարի 26-ի գիշերը շրջապատման երկաթյա օղակի մեջ առան գյուղը և առավոտյան ժամը 6^{30}-ին սկսեցին գրոհը: Այդ ռազմական գործողությունները անձամբ ղեկավարում էր պաշտպանության նախարար Մեհտիևը: Քարին տակի հերոսական մարտը շարունակվեց 12 ժամ. կենաց ու մահու մարտեր էին կենդանի ուժով ու գերակշիռ տեխնիկայով թշնամու դեմ: Քարին տակի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարն էր ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Վ.Առուշանյանը: Երբ մինչև ատամները զինված 250 ազերիներ զրահամեքենաների օգնությամբ մոտեցան գյուղի մատույցներին, նրա պաշտպանները ստիպված նահանջեցին առաջավոր դիրքերից: Ժողովրդին օգնեց քաշաթուխպը, որն իջել էր գյուղի վրա: Գյուղի պաշտպանության դիրքերում էին 60-70 ազատամարտիկ: Մի բուռ մարդիկ, մարտնչելով թվական գերազանցություն ունեցող հակառակորդի դեմ, մարտը շարունակեցին մինչև երեկոյան ժամը յոթը: Մինչ այդ հակառակորդի թիվը հասել էր 500-ի, որոնց մի մասին հաջողվել էր մտնել գյուղի ծայրամասը և հրդեհել հինգ տուն: Քարին տակին առաջինն օգնության հասավ Շոշի ինքնապաշտպանական ջոկատը՝ Ս.Հայրյանի հրամանատարությամբ: Հակառակորդը պարտություն կրեց և մարտադաշտում թողնելով 74 սպանված ու 70 վիրավոր՝ նահանջեց: Հայերից զոհվեցին 18 հոգի, այդ թվում Ս.Հայրյանը, Վ.Առուշանյանը և ուրիշներ: Քարինտակում հայերի հաղթանակն ահ ու սարսափ առաջ բերեց Շուշիի ազերիների շրջանում և արագացրեց նրանց

տեղահանումը: Անառիկ Քարին տակը հետագայում կարևոր հենակետ դարձավ Շուշիի կրակակետերը լռեցնելու գործում[6]:

1992թ. հունվարի 27-ին մարտեր տեղի ունեցան նաև Հադրութի շրջանի 8որ գյուղի մոտակա Խուրհատ բարձունքին տիրելու համար: Հունվարի 28-ին ադրբեջանական ռազմական «Մի-8» ուղղաթիռը, որը, հայկական գյուղերը ռմբակոծելով, Աղդամից Շուշի ռազմամթերք էր տանում, կործանվեց Շուշիի մոտակայքում: Ա.Մութալիբովը փորձեց դա բարդել հայ «ահաբեկիչների» վրա: Այդ դեպքերից մեկ օր առաջ՝ հունվարի 27-ին, հայ ազատամարտիկները գրավել էին Դայբալի գյուղը, ապա մտնելով Ջանհասան՝ ոչնչացրել հակառակորդի մի քանի կրակակետեր: Հունվարի 28-ի երեկոյան ազերի օմօնականները գերել էին «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթի թղթակիցներ Դարյա Ասլանովային, Օլեգ Ստարոխինին, Տողի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար Վիգեն Գրիգորյանին և ազատամարտիկ Սամվելին: Հայ ազատամարտիկներին հաջողվել էր փրկել նրանց՝ թշնամուն արժանին հատուցելով: Այսպիսով՝ ինչպես ցույց են տալիս իրադարձությունները, հայ ազատամարտիկները այլևս սովորական վրիժառուներ չէին, այլ դարձել էին թշնամուն ոչնչացնող և սարսափի մատնող ուժ: Իսկ թուրք-ազերիները դարձել էին անասելի դաժան ձերբակալված կամ պատանդ տարված հայ ազատամարտիկների նկատմամբ[7]:

---

[6] *Քարին տակի մարտերի մասին տես* Աբրահամյան Հ., *նշված աշխ., էջ 158, «ԼՂ Հանրապետություն», 2.09.1996, «Երկիր», 27.01.1994 և այլն: Քարին տակի դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ռայա Մուսայելյանը երկու տետրերի մեջ գրի է առել գյուղի գլխով անցածը՝ «Սաքառումի և հերոսամարտի տպագրություն» վերնագրով: Սա տողեր 1992 թ. հունվարի 26-ի գրառումից. «Առավոտյան ժամը 4-ին իմացանք, որ պաշարված ենք: «Խաչին բարձունքից» «խոսում էր» Այլոշայի գնդացիրը: Մեր տղաները մեզ թուրքի ձեռքը չեն տա՝ մտածեցինք: Հետո ծանր վիրավորվեց Այլոշան: Անմահացան Ալբերտ և Անժելա Աբաղյանները (ամուսիններ), Միշան, Հենրիխը, Նորապսակ Արշավիրը, Կամելան, Նարինեն, Վոլոդյան, ընկեր Անյան (մանկապարտեզի դաստիարակչուհին): Մեր քաջ հրամանատար Վաղարշակի հետ: Կարե՞նը, որ հորեղբոր՝ Վաղարշակի հետ ազատամարտիկներին «կարմիր բերետավորներից» փրկել, Ստեփանակերտի հիվանդանոցի երկրորդ հարկից փախցրել տարել էր Ավետարանոց, երեք օր անց այնտեղից էլ տեղափոխել Երևան» («ԼՂ Հանրապետություն», 02.09.1996):*

[7] *Սա թե ինչ է պատմում արցախյան պայքարի ակտիվ մասնակից Էմիլ Բալայանը: Նրա վկայությամբ՝ 1992թ. հունվարի 1-ին Շուշիի բանտում մոտ*

Հունվարի 27-ին տեղի ունեցած հանրապետության ԳԽ նախագահության նիստը նախ լսեց վարչապետ Օլեգ Եսայանի հունվարի 21-25-ը Հայաստան կատարած այցելության արդյունքները և ապա որոշեց հաջորդ օրը հրավիրել ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջան ու քննարկել հանրապետության ներքին ու արտաքին վիճակի հետ կապված մի շարք հարցեր[8]: Սակայն Ազգային խորհրդի նախագահ Ա. Մկրտչյանի Երևան մեկնելու պատճառով այն հետաձգվեց, և այդպես էլ մինչև նույն թվականի հունիսի սկիզբը հնարավոր չեղավ հրավիրել Ազգային խորհրդի նստաշրջան:

ԽՍՀՄ լուծարումից հետո Հայաստանի իշխանություններն առաջարկել էին սպառազինությունների զրոյական տարբերակ՝ ոչ մի միավոր զենք ոչ Հայաստանին, ոչ էլ Ադրբեջանին, և խստագույն հսկողություն: Մինչդեռ Ադրբեջանը բոլոր միջոցներով ջանում էր ավելի շատ զենք ու զինամթերք ունենալ: Դրա համար էլ ադրբեջանցիները սկսեցին հափշտակել հանրապետությունում տեղակայված ռուսական զորամասերի զենքն ու զինամթերքը: 1992թ. հունվարի 29-ին, հարձակվելով 295-րդ դիվիզիայի հետախուզական վաշտի վրա, հափշտակեցին 12 զրահամեքենա: Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարությունը փետրվարի 19-ին համաձայնվեց Ադրբեջանին

60 հայորդի կար: Էմիլը խնապատցի Սուրեն Շատրյանի հետ 5 ամիս տառապում էր թիվ 5 խցում: Հունվարի 1-ին երկու «սև ագռավներով» ծեծելով Շուշի-Լաչին-Ջեբրայիլ-Իմիշլի-Բաքու երթուղով նրանց տարան Բայիլի բանտը, որտեղ 5 օր պահելուց հետո տեղափոխեցին Շուվելյանի մեկուսարան: Այդտեղ էին Բերդաձորից Արթուրը, Մեծ Թաղերից Յուրի Դանիելյանը, Քաջավանից Արարատը և Առնո Մկրտչյանը, որը ծերբակալվել էր իբրև Սալաթինի՝ թուրք լրագրողուհու սպանության կապակցությամբ:

Բերդաձորի պաշտպանությունը գլխավորում էին Անդրանիկ Հարությունյանը, ժաննա Գալստյանը և ֆիզիկայի ուսուցիչ բնիկ բերդաձորցի Առնո Մկրտչյանը: 130 բերդաձորցիներ ծերբակալվել և նետվել էին Շաուշիի ու Լաչինի մեկուսարանները: Առնոյին անգթորեն ծեծում էին օրական մի քանի անգամ: Շուվելյանում էին մայոր Դարիբ Հարությունյանը, Յու. Ջհանգիրյանը, որոնց տանջամահ էին անում: Առնոն խոր գիտելիքների, անկրկնելի հմայքի տեր մարդ էր:

11 հոգու դատեցին, որից 5-ին, այդ թվում և Առնոյին, դատապարտեցին մահվան: Մի քանի ամիս անց Առնոյի դիակը, մի արկղի մեջ տեղավորված, փոխանակեցին ազերիների դիակների հետ («ԼՂ Հանրապետություն», 05.03.1998):

[8] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, ց. 1, գ.1, թ.8-9:*

հանձնել թիկունքի սպառազինությունների պահեստների մի մասը և ուղղաթիռային էսկադրիլիան: Դրա հաջորդ օրը ադրբեջանական զինվորականները Բաքվում հափշտակեցին «գրադ» կայանք: Անդրկովկասում պահեստավորված էր շուրջ 30 հազար վագոն զինամթերք, որի զգալի մասը գտնվում էր Ադրբեջանի տարածքում, որից առյուծի բաժին ստանալու Ադրբեջանի հնարավորությունները բավականին մեծ էին: Ադրբեջանի իշխանությունները շտապում էին օգտվել այդ հնարավորությունից, զինել իրենց բանակը և այն ուղղել Արցախ-Հայաստանի դեմ:

Նման պայմաններում Արցախի պաշտպանությանը և բնակչությանը բազմաբնույթ օգնություն ցույց տալու հարցերը խիստ կարևոր էին և հրատապ: Այդ նպատակով էլ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանը հունվարի 27–28-ը կատարեց առաջին պաշտոնական այցը Երևան: Նրա նպատակն էր հանդիպել Լ.Տեր-Պետրոսյանի, ինչպես և խորհրդարանի նախագահի և այլ պաշտոնյաների հետ: Նա, հունվարի 28-ին հանդիպելով ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորների և լրագրողների հետ, հակիրճ ներկայացրեց ԼՂՀ-ի տնտեսական և քաղաքական վիճակը ու հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղում, մանավանդ նրա սահմանների շրջաններում, բացահայտ պատերազմ է: Ա.Մկրտչյանը նաև տեղեկացրեց, որ հակառակորդը հեռահար զենքով պարբերաբար ռմբակոծում է Ստեփանակերտը, Մարտունին, Հադրութը, Շահումյանը և այլ բնակավայրեր: Պատերազմ վարելու համար, ասաց նա, Արցախի միջոցները խիստ սահմանափակ են: Արցախը դրսի աշխարհի հետ կապվում է միայն զինվորական ռադիոկայանների միջոցով: ԼՂՀ ղեկավարն առաջարկեց ստեղծել համապատասխան հասարակական կարծիք և ճիշտ ներկայացնել Արցախի վիճակը, ինչպես նաև մշակել ու իրագործել ընդհանուր և միասնական ազգային քաղաքականություն: Լ.Տեր-Պետրոսյանը ԼՂՀ ԳԽ նախագահ Արթուր Մկրտչյանին ընդունեց նույն օրը և նրան հասկացրեց, որ իր համար հաճելի կլիներ, եթե Արցախի նախագահը լիներ ՀՀՇ-ական: Նա Ա.Մկրտչյանից պահանջեց հրաժարական տալ՝ հասկացնելով, որ հակառակ դեպքում ինքը կարող է հրաժարվել Լեռնային Ղարաբաղին օգնություն ցույց տալուց[9]: Հետո, փետրվարի 3-ին տեղի ունեցած ԼՂՀ ԳԽ նախագահության նիստում Ա.

[9] Աբրահամյան Հ., *նշվ. աշխ., էջ 158-159:*

Մկրտչյանը այդ մասին հաղորդեց.[10] ԼՂՀ Գերագույն խորհրդի անդամները խիստ վրդովվեցին:

Արցախ-Ղարաբաղում ստեղծված ծանր վիճակը անհանգստացնում էր համաշխարհային հանրությանը: Հայ-ադրբեջանական խորացող հակասություններին վերջ տալու համար ԱՄՆ-ի Կոնգրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Կլեյբորն Ֆելը, երեք օր գտնվելով Հայաստանում, ԱՄՆ վերադառնալուց հետո նախագահ Ջ. Բուշին կոչ արեց Բ.Ելցինին առաջարկել վերջ դնել Ղարաբաղի հարցում Հայաստանի և Ադրբեջանի միջև ընթացող պայքարին: Վաշինգտոնը որոշեց, Ադրբեջանին զրկել օգնությունից, քանի դեռ Լեռնային Ղարաբաղն ու Հայաստանը գտնվում էին շրջափակման մեջ: Ա. Սախարովի գինակից և նրա գործը շարունակող Անատոլի Շաբաթը՝ որպես Հելսինկյան հանձնաժողովի անդամ, հանդես գալով ԱՄՆ-ի Կոնգրեսում, պաշտպանեց արցախահայության դատը և նրա ապրելու ու գոյատևելու իրավունքը: Նա համոզված էր, որ արցախցիների պայքարը ոչ թե ազգային հարց է, այլ կոմունիստական վարչակարգի դեմ կազմակերպված առաջին անհնազանդության օրինակը[11]: Համանման բողոքներ ու պահանջներ հնչեցին նաև այլ ամբիոններից: Սակայն դրանք շարունակվում էին մնալ անհետևանք, իսկ Արցախում ավելի էին ուժեղանում պատերազմական գործողությունները: ՀՀ ԳԽ-ն դիմում հղեց ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի անդամ երկրներին, ԱՊՀ-ի երկրներին, ԵԱՀԿ-ին, Եվրախորհրդարանին, որտեղ ասված էր, որ Ադրբեջանը սկսել է իր դաժանությամբ աննախադեպ տոտալ պատերազմական գործողություններ ԼՂՀ-ի դեմ: Քաղաքների և գյուղերի խաղաղ բնակչությունների նկատմամբ կիրառվում են ամենաբարբարոս, զանգվածային ոչնչացման զենքեր, այդ թվում միջազգային օրենքներով արգելված «գրադ» տիպի հրթիռակոծվող սարքավորումներ, «ուրագան» հրթիռներ: Կան բազմաթիվ սպանվածներ: Ադրբեջանի ղեկավարությունը պետականորեն իրագործում էր ցեղասպանության քաղաքականություն: ՀՀ ԳԽ-ն պահանջում էր քննարկել Լեռնային Ղարաբաղում՝ կանխելու համար ազգաբնակչության ոչնչացումը[12]: Այդ օրերին Բաքվում

[10] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, գ. 1, գ. 1, թ. 16:*

[11] *«Ազատամարտ», N4, հունվար 1992: Տե՛ս նաև «Հայաստանի Հանրապետություն», 29.01.1992:*

[12] *«Հայաստանի Հանրապետություն», 18.02.1992:*

անընդհատ տեղի ունեցող հանրահավաքներում ժողովակատը մեղադրում էր Այազ Մութալիբովին իբրև Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման գործում դրսևորած անվճռականության համար և պահանջում կտրուկ միջոցներ ձեռնարկել Լեռնային Ղարաբաղից դուրս բերելու հայ գրոհայիններին ու ադրբեջանցիներին պաշտպանել նրանց հարձակումներից[13]:

ԼՂՀ իշխանությունների համար ամենահրատապ խնդիրը հանդիսանում էր հանրապետության պաշտպանության հարցը: Հունվարի 31-ին տեղի ունեցած ԳԽ նախագահությունը քննարկելով Ստեփանակերտում տեղակայված 366-րդ գունդը, մարզից դուրս բերելու հնարավոր բացասական հետևանքների հետ կապված հարցը[14], անհրաժեշտ գտավ բանակցություններ սկսել անդրկովկասյան ռազմական շրջանի ղեկավարության հետ: Այդ նպատակով փետրվարի 10-ին տեղի ունեցած ԳԽ նախագահության նիստի որոշմամբ Թիֆլիս մեկնեց վարչապետ Օլեգ Եսայանը[15]: Մինչ այդ հանրապետության ԳԽ նախագահությունը հունվարի 31-ին ընդունել էր հայտարարություն, որտեղ նշված է. «Լեռնային Ղարաբաղում տիրող կացությունը վերածել է խոշորածավալ ռազմական բախման: Շարունակվող պաշարման, սովի, ցրտի պայմաններում ադրբեջանական կողմը խաղաղ բնակչության դեմ կիրառում է տանկեր, այլ զրահատեխնիկա, հրետանի և հրթիռային կայանքներ:

Այդ իրադրությունում նախկին ԽՍՀՄ-ի զինված ուժերի ներկայությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում, ուժեր, որոնք հաստատուն չեզոք դիրք էին բռնել, լուրջ կասեցուցիչ գործոն էին հանդիսանում Լեռնային Ղարաբաղի հողում երկարամյա բախման զարգացման և Ադրբեջանի ու Հայաստանի միջև պատերազմի վերածման գործում: Այդ զինված ուժերի դուրսբերումը, ինչի վրա համառում էր Ադրբեջանի ղեկավարությունը, կլիներ հայ ժողովրդի դեմ Ադրբեջանի Հանրապետության ռազմական հարձակման ուղղակի խրախուսանք, այսուհետ առաջարկվում է ԼՂՀ տարածքում պահել Ռուսաստանի զինված ստորաբաժանումներ և գտնում, որ ԼՂՀ կառավարությունը ինքը կարող է ընդունել իր տարածքում եղած զինված ուժերի զորամասերի կարգավիճակի վերաբերյալ որոշում: Նաև

[13] *Նույն տեղում, 06.02.1992:*

[14] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, գ. 1, գ. 1, թ. 16:*

[15] *Նույն տեղում, թ. 20-21:*

ասվեց, որ հանրապետության տարածքից զինված ուժերի դուրսբերման հետ կապված ծանր հետևանքների համար ողջ պատասխանատվությունը կընկնի նրանց վրա, ովքեր կընդունեն նման որոշում: ԼՂՀ Գերագույն խորհուրդը հույս է հայտնում, որ «ԱՊՀ անդամ պետությունների բարձրագույն ղեկավարները ըմբռնումով կվերաբերվեն Լեռնային Ղարաբաղում ստեղծված ծայրաստիճան սրված կացությանը և թույլ չեն տա բախման հետագա ծավալում, բախում, որն արդեն քիչ մարդկային կյանքեր չի խլել[16]»:

Այդ նույն օրը ԼՂՀ ԳԽ նախագահությունը հանդես եկավ երկրորդ հայտարարությամբ, որտեղ նշված է, որ փետրվարի 14-ից սկսած Ադրբեջանի ռազմական կազմավորումները Արցախի քաղաքացիական բնակչության դեմ օգտագործում են «գրադ» համակարգը, որի հետևանքով ավերվել և այրվել են հարյուրավոր տներ, այդ թվում դպրոցներ ու մանկապարտեզներ, զոհվել և վիրավորվել են տասնյակ մարդիկ: Ադրբեջանը, փաստորեն, վարում է խաղաղ բնակչության ոչնչացման նպատակաուղղված քաղաքականություն: Այդ ամենի ողջ պատասխանատվությունն ընկած է Ադրբեջանի իշխանությունների վրա[17]: Իսկ փետրվարի 19-ին, դիմելով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բ. Գալլիին, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին, Ռուսաստանի պրեզիդենտ Բ. Ելցինին, ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջ. Բուշին, Մեծ Բրիտանիայի վարչապետ Ջ. Մայջորին, Գերմանիայի կանցլեր Հ. Կոլին և Ֆրանսիայի պրեզիդենտ Ֆ. Միտերանին, նշում է, որ քանի ինքնիշխան ԼՂՀ-ի նկատմամբ Ադրբեջանական Հանրապետության նվաճողական գործողությունները գնալով ավելի են ծավալվում, խնդրվում է օգտագործել իրենց մեծ հեղինակություններն ու հնարավորությունները, որպեսզի լուծեն հետևյալ հարցերը.

1. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի առաջիկա նիստում քննարկել ԼՂՀ տիրող իրավիճակը:

2. Անհապաղ տարածաշրջան մտցնել ՄԱԿ-ի խաղաղարար ուժերը:

3. Լեռնային Ղարաբաղը հայտարարել աղետի գոտի:

4. ՄԱԿ-ում Ադրբեջանի անդամության հարցը քննարկելիս հաշվի առնել նաև ԼՂՀ-ի շահերը[18]:

---

[16] *Նույն տեղում, թ. 13:*
[17] *Նույն տեղում, թ. 33:*
[18] *Նույն տեղում, թ.34-40:*

Սակայն այդ ամենը մնաց միայն բողոք:

1992թ. փետրվարի 10-ին տեղի ունեցած ԼՂՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը զբաղվեց Գերագույն խորհրդի մարմինների և գործադիր օղակների կազմավորման հարցերով, ինչպես նաև լսեց Լ.Մելիք-Շահնազարյանի զեկուցումը ԼՂՀ արտաքին դրության վերաբերյալ: Այդ նստաշրջանում որոշվեց Ստեփանակերտի Լենինի անվան հրապարակը վերանվանել Ազատության հրապարակ, իսկ փետրվարի 12-ը հայտարարել Անկախության օր՝ ի պատիվ 1988թ. փետրվարի 12-ին (մինչդեռ պետք է լինի 13-ին) Ստեփանակերտում տեղի ունեցած առաջին բազմահազարանոց հանրահավաքի: Թուրք-ազերիները ևս չէին մոռացել այդ օրը, և Ստեփանակերտի վրա արձակեցին 110 արկ՝ առաջ բերելով բազմաթիվ զոհեր ու ավերածություններ: Փետրվարի 16-ի գնդակոծությունների հետևանքով Ստեփանակերտի Չկալովի անվան փողոցի վրա գտնվող 75 բնակարանանոց շենքի փլատակների տակ մնացին 20 բնակիչներ: Թշնամին Ստեփանակերտը ռմբակոծում էր «գրադ» և «փոթորիկ» կայանքներից: Հաջորդ օրերին Մարտունու, Շահումյանի և Մարտակերտի շրջանների մի շարք բնակավայրեր նույնպես ենթարկվեցին զանգվածային ռմբակոծությունների: Միայն փետրվարի 19-ին Ստեփանակերտի վրա արձակվեց 300 արկ: Այդ օրը քաղաքում զոհերի թիվն անցավ 20-ից:

1992թ. փետրվարին ամենահրատապ խնդիրներից մեկը Ստեփանակերտի մոտերքում գտնվող ադրբեջանական գյուղերի կրակակետերի վերացումն էր: Մալիբեկլուն ոչ միայն փակել էր Ստեփանակերտ-Նգի-Մարտունի ճանապարհը, այլև Ստեփանակերտը դարձրել էր մշտական թիրախ: Այստեղից անընդհատ ռմբակոծվում էին քաղաքի արևելյան ծայրամասը և Կարկառի ափին գտնվող արդյունաբերական ձեռնարկությունները: Այդ իսկ պատճառով Մալիբեկլուի և նրա հարևանությամբ գտնվող Ղուշչիլարի կրակակետերի ոչնչացումը դարձել էր օրվա ամենակարևոր պահանջը: Մալիբեկլուն արցախահայության համար մեծ դժբախտություններ էր առաջ բերել նաև 1905–1906 և 1918–1920 թվականներին: Մալիբեկլուի կրակակետերից ռազմական գործողությունները սկսվեցին 1992թ. փետրվարի 9-ին՝ ժամը 21:00-ին: Աշոտ Ղուլյանի[19] առաջին վաշտի, Պետրոս Ղևոնդյանի, Սամվել

---

[19] *Աշոտ Ղուլյանը (Բեկոր) ծագումով Արցախի Ասկերանի շրջանի Խնծրիստան գյուղից էր: Ճակատագրի բերումով ծնողները հայտնվում են Բաք-*

Եղիազարյանի «Արաբո» և կամավորական ևս երկու ջոկատների մարտիկները սկսեցին գործողությունները: Համաձայն ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի նախնական պլանի, նկարագրում է Մհեր Հարությունյանը, առաջին փուլում առաջին վաշտը ճակատային գրոհ էր ձեռնարկելու հակառակորդի հիմնական դիրքերի ուղղությամբ, իսկ Վարդան Ստեփանյանի միացյալ ջոկատը թիկունքից հարվածելով շրջապատման սպառնալիք էր ստեղծելու: Առաջին վաշտը Մալիբեկլուի նորակառույցների կողմից մտավ և հասավ գյուղամեջ: Սակայն մյուս ջոկատին չի հաջողվում դուրս գալ հակառակորդի թիկունքը: Կեսգիշերին տրվեց մարտական գործողությունները դադարեցնելու հրաման: Ադրբեջանցիներին հեռանալու հնարավորություն էր տրվել: Գիշերվա ընթացքում գյուղը համարյա դատարկվեց: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը, փետրվարի 10-ին վերսկսելով գրոհը, նույն օրվա երեկոյան հարված հասցրին նաև Ղուշչիլարում հապճեպ դիրքավորվող ադրբեջանցի զինյալներին: Փետրվարի 11-ին վնասազերծվեցին նաև Ներքին ու Վերին Ղուշչիլար գյուղերի կրակակետերը[20]: Այսպիսով՝ փետրվարի 11-ին և 12-ին լիովին ջախջախվեցին այդ գյուղերում ծվարած ազերիների ուժերը, և հայ ազատամարտիկները այդ տարածքները վերցրին իրենց հսկողության տակ: Մալիբեկլուի կրակակետերը լռեցնելու գործին ակտիվ մասնակցեցին նաև Երևանի, Պռոշյան գյուղի և Աբովյանի ազատամարտիկները[21]: Մալիբեկլուի ազատագրության ժամանակ հայ ազատամարտիկները ոչ մի զոհ չտվեցին, մինչդեռ հակառակորդի զոհերի թիվը հասել էր 100-ի: Հայ ազատամարտիկների

վում, որտեղ և 1959 թ. ծնվում է Աշոտը: Նա 17 տարեկան էր, երբ հայտնվեց Ստեփանակերտում և իր հոգով ու ողջ կյանքով կապեց հայրենի լեռնաշխարհի ճակատագրի հետ: Նրա պատանեկան տարիների ընկեր և մարտական զինակից Արկադի Կարապետյանը պատմում է, որ Աշոտի բախտը չէր բերում ոստիկանության հետ հարաբերություններում: Ազատամարտիկ Բեկորը իր գործունեությունը սկսել է զենք ստեղծելով: Զենքերի փորձարկման ժամանակ երեք անգամ վիրավորվել էր: Ինքնաշեն նռնակի փորձարկման ժամանակ պայթած նռնակի մի քանի փոքրիկ բեկորներ մնացել էին Աշոտի մարմնում, դրա համար էլ ստացել էր «Ասկոլկա» (Բեկոր) անունը: Արցախյան պայքարի տարիներին նա կռվել է Հադրութում, Մարտակերտում, Մալիբեկլուում, Խոջալուում, Կրկժանում, Շուշիում, Քարինտակում, Նորից Մարտակերտում... Զոհվել է 1992թ. օգոստոսի 25-ի գիշերը Դմբրոնում: Թաղված է Ստեփանակերտում:

[20] *«Ազատ Արցախ», 11.02.1999:*

[21] Ղարիբյան Գ., *Արթուրը: Արծվի թռիչք էր նա, էջ 111-113:*

ձեռքն անցավ բավականին քանակությամբ զինամթերք: Ղուշչիլար գյուղում հայտնաբերել էին վառելիքի, սննդի և զինամթերքի պահեստներ: Այսպիսով՝ Ստեփանակերտն ազատվեց արևելյան կողմից հրետակոծությունից, և բացվեց Ստեփանակերտ-Նոգի-Մարտունի ճանապարհը, որը փակվել էր երկու տարի առաջ: Այդ ճանապարհի վրա գտնվող Մուշկապատ, Հաղորտի, Կղարծի, Սպիտակաշեն և Գիշի գյուղերին անընդհատ վնաս պատճառող Ղարադաղլու գյուղի չեզոքացումը նույնպես դարձել էր օրվա պահանջ: Հայ մարտիկների կողմից ճշտվեցին Ղարադաղլուի բոլոր կրակակետերի տեղերը: 1992թ. փետրվարի 17-ի գիշերը Վրիժառու ազատամարտիկները հարմար դիրքեր էին զբաղեցրել: Լուսաբացին ինքնապաշտպանության ջոկատները տարբեր կողմերից մտան գյուղը և սկսեցին տուն առ տուն ազատագրել այն: Աշոտ Ղուլյանի վաշտը և Մանվել Եղիազարյանի «Արաբո» ջոկատը ճեղքեցին հակառակորդի պաշտպանության գիծը: Գյուղի բնակիչները նախօրոք հեռացել էին: Օմոնականներն ու ադրբեջանական բանակի զինվորները դիմադրում էին կատաղի: Այդուհանդերձ, փետրվարի 17-ին վնասազերծվեց Ղարադաղլուն, առգրավվեց 70 միավոր մարտական զենք, մեծ քանակությամբ զինամթերք, ոչնչացվեց 15 ասկյար, և գերվեց շուրջ 60 մարդ[22]:

Մարտունու շրջանում մյուս վտանգավոր բնակավայրերից էր Վերին Վեյսալու գյուղը, որը գտնվում էր Ճարտարից Մարտունի տանող ճանապարհի վրա ու մտնում էր Ֆիզուլիի շրջանի մեջ: Գյուղի կրակակետերի վերացման համար գործողությունները սկսվեցին 1992թ. փետրվարի 22-ին: Ինքնապաշտպանական ջոկատները բաժանվել էին չորս հարվածային խմբի: Ճարտարից, նկարագրում է Մհեր Հարությունյանը, Կոհակու յալի մոտով շարժվելու էր Ստեփանակերտի ջոկատը, աջ կողմով Ղուզե Ճարտարի ջոկատն էր առաջանալու, ձախով՝ Կոհակու յալի վրայով՝ Գիշու, իսկ Գյունե Ճարտարից տեղի խմբերն էին հարվածելու: Մինչ այդ ինքնապաշտպանության ուժերը փակել էին Ալիբալիի խաչմերուկը՝ օգնություն հասցնելու փորձերը խափանելու նպատակով: Ըստ երևույթին, ազերիները տեղյակ են եղել հայ ազատամարտիկների ձեռնարկումներին: Նրանք սկսեցին ճողոպրել խաչմերուկի ուղղությամբ, իսկ օմոնականները փորձում էին ապահովել իրենց ցեղակիցների փախուստը: Ֆիզուլու կողմից փորձ արվեց օգնության հասնել, սակայն չհաջողվեց: Շար քարի

[22] *«Ազատ Արցախ», 18.02.1989:*

ուղղությամբ «միջանցք» էր բացվել խաղաղ բնակիչների հեռանալու համար[23]: Փետրվարի 22-ի օրվա վերջին Վերին Վեյսալուն ազատագրվեց: Այդ, ինչպես և Ղարադաղլուի կրակակետերի վնասազերծումը ռազմավարական կարևոր հաղթանակ էր Մարտունու շրջանի համար, որը Մարտունին դարձրեց անառիկ և բացեց ներքին ճանապարհները:

Ադրբեջանի ռազմական ուժերը Ղարաբաղը բնաջնջելու նոր պլան էին մշակել, որի իրագործման համար նախ և առաջ անհրաժեշտ էր մեծ քանակությամբ զենք ու զինամթերք: Նրանք առանց որևէ դիմադրության հանդիպելու փետրվարի 23-ին գավթեցին խորհրդային բանակի Ադդամում գտնվող օկրուգային զինապահեստը, որտեղ պահվում էր 728 վագոն հրետանային և 245 վագոն հրթիռային արկ, 131 վագոն հրաձգային ռազմամթերք: Զինվորական փորձագետների կարծիքով այն կհերիքեր մեկ տարվա լարված պատերազմի համար[24]: Դրանից հետո Ստեփանակերտի, Մարտունու, Ասկերանի և այլ բնակավայրերի ռմբակոծումն ավելի ուժեղացվեց: Ա.Մութալիբովը փետրվարի 22-ին Ադրբեջանում հայտարարեց զորակոչ՝ իբր Ղարաբաղի և նրա շուրջ ստեղծված իրավիճակի թելադրանքով: Հանրապետության ազգային բանակում ծառայելու համար պետք է հավաքագրվեին 20-40 տարեկան բոլոր պահեստայինները: Թուրք-ազերիները փորձում էին սարսափ տարածել զանգվածային բնաջնջման զենքի օգտագործմամբ: Այդ մասին ՀՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում փետրվարի 24-ին շեշտեց Արկադի Մանուչարովը և Հայաստանի իշխանություններից պահանջեց բազմապատկել օգնությունը ԼՂՀ-ին: Փետրվարի 24-ի նստաշրջանի փակ նիստում քննարկվեց Արցախի վիճակի հարցը, և որոշվեց թշնամուն հակահարված տալու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել:

Ստեփանակերտի համար ամենավտանգավորը Խոջալուն էր, որը փակում էր Ստեփանակերտ-Ասկերան մայրուղին: Երկար ժամանակ այնտեղից ավերիչ կրակ էր թափվում Ստեփանակերտի և հայկական մի շարք բնակավայրերի վրա: Լաչինի նախկին բնակիչ Յուսուփ Քյարիմովի վկայությամբ, Խոջալուի քաղխորհրդի նախագահ Էլման Մամեդովը օդանավակայանի պարետ Արիֆ Հաջիևին հրամայել էր Լաչինից, Աղջաբեդուց և այլ բնակավայրերից Խոջալու տեղափոխել մարդկանց և ստիպել բնակվել

[23] *Նույն տեղում:*
[24] Հասրաթյան Ս., *նշվ. աշխ., էջ 28:*

այնտեղ: Հրամայվել էր գնդակահարել նրանց, ովքեր կփորձեին իրենց ընտանիքները դուրս բերել Խոջալուից: Է.Մամեդովին էին ենթարկված այդտեղի բոլոր զինված կազմավորումները: Եթե որևէ ընտանիք ցանկանում էր տեղափոխվել, ապա Մամեդովին տալիս էին 3-4 հազար ռուբլի կաշառք: Հենց այդ գումարներով էլ նա Բաքվում գնեց երկու բնակարան և այնտեղ տեղափոխեց իր ընտանիքը[25]:

ԼՂՀ ինքնապաշտպանական ջոկատները, դեռևս փետրվարի 15-ից դիրքավորվելով Խոջալուի արևմտյան մասի երկարությամբ, ադրբեջանական կողմին առաջարկել են թողնել Խոջալուն և հեռանալ: Ի պատասխան՝ ազերիները սկսեցին ավելի հուժկու ռմբակոծել Ստեփանակերտը: Այդ ժամանակ Ադրբեջանում տիրում էր ներքին քաղաքական անկայունություն: Ժողովրդական ճակատը, ձգտելով տապալել Ա.Մութալիբովի իշխանությունը, գործում էր հաշվենկատ ու հախուռն: Նույնիսկ մտածում էին Խոջալուն հանձնել և դրա համար մեղադրել Մութալիբովին ու նրան զրկել իշխանությունից: Այդ ընթացքում ԼՂՀ-ում լուրջ նախապատրաստական աշխատանքներ էին տարվում Խոջալուի կրակակետերը լռեցնելու համար: Նախատեսվեց առաջին հերթին գրավել օդանավակայանը, որտեղ վաղուց իշխում էին օմօնականները: Դա պետք է իրականացնեին Աշոտ Ղուլյանի և Կարոյի գլխավորած վաշտերը: 1992թ. փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը նռնականիգներով և ավտոմատներով զինված հայկական ջոկատները հասան առաջավոր դիրքերին: Անակնկալի եկած հակառակորդը, թողնելով մի քանի դիակ, նահանջեց: Առանց զոհի և վիրավոր տալու հայ մարտիկներն առաջացան դեպի օդանավակայան և հայտնաբերեցին թշնամու կրակակետերի տեղակայումը: Օդանավակայանի աջ կողմից հարձակվում է Բալլուջայի (Այգեստան) ջոկատը, որին աջակցում էին Աշոտ Ղուլյանի վաշտը և ՀՀՊ ջոկատի մարտիկները: Հակառակորդը ստիպված նահանջեց: Հայ ազատամարտիկներին հաջողվեց լռեցնել օդանավակայանում տեղակայված կրակակետերը: Օդանավակայանում ծածանվեց Հայոց եռագույնը: Ապա հայ ինքնապաշտպանական ուժերը տարբեր կողմերից մտան Խոջալու: Նախօրոք կազմված պլանի համաձայն՝ գլխավոր ճանապարհի կողմից թողնվել էր միջանցք, որպեսզի Խոջալուում մնացած

[25] *«Արցախ», 30.05.1992:*

բնակիչները կարողանային հեռանալ դեպի Աղդամ[26]: Այսպիսով՝ 1992թ. փետրվարի 26-ին՝ մի քանի ժամվա ընթացքում, հայ ինքնապաշտպանական ուժերը, տալով ութ զոհ և 20 վիրավոր, ջախջախեցին Խոջալուում տեղակայված ադրբեջանական ուժերը և լռեցրին այդտեղի բոլոր կրակակետերը: Հայ ազատամարտիկները գերեցին 150 հոգի, որից 63-ը թուրք-մսխեթցի, հակառակորդից առգրավեցին 3 զրահամեքենա, 2 հրթիռային կայանք, մեկ թնդանոթ, մեծաքանակ զինամթերք և մոտ 100 միավոր մարտական զենք: Ադրբեջանական մամուլում զոհված ազերիների թիվը նշվել է 400–2000 հոգի, որոնց մեծ մասն իբր խաղաղ բնակիչներ են եղել: Իրականում Խոջալուում խաղաղ բնակիչներ շատ քիչ էին մնացել: Ա.Մութալիբովն ապրիլի 3-ին «Նեզավիսիմայա գազետա»-ին տված հարցազրույցում հայտարարել է, թե Խոջալուի ողբերգությունը կազմակերպել են մարդիկ, ովքեր ուզում էին իր հրաժարականը: Նա ասաց, որ ինքը հեռախոսով կապվել է Արթուր Մկրտչյանի հետ և նրանից խնդրել միջանցք թողնել խաղաղ բնակչության հեռանալու համար: Ա.Մկրտչյանը խոստումը կատարել է, և իրականում, այնտեղ այդքան զոհեր չեն եղել: «Իզվեստիա» թերթն իր հերթին 1992թ. նոյեմբերի 12-ին գրել է, թե ազերիները Խոջալուում տվել են 450 զոհ և 400 վիրավոր: Սակայն փաստ է, որ Խոջալուի բնակիչների դիակները հայտնաբերվել են այդտեղից 7-10 կմ հեռավորության վրա՝ Աղդամի մատույցների մոտ, որտեղ կանգնած է եղել ադրբեջանական բանակը: Մոտ 40 մուսուլմանական ընտանիք մնացել էր Խոջալուում: Հակառակորդն իր հետ տարել է ավանում պահվող հայազգի 34 պատանդների[27]: Ադրբեջանը աշխարհով մեկ աղմուկ է բարձրացնում, թե իբր հայ ազատամարտիկները Խոջալուում կազմակերպել են ադրբեջանցիների մասսայական սպանդ: Դա լիովին մերժում է թեկուզ և Արցախի ազգային-ազատագրական ուժերի հրամանատար Ա.Տեր-Թադևոսյանի հետևյալ հրամանը՝

[26] Ղարիբյան Գ., *Արթուրը: Արծվի թռիչք էր նա, էջ 114-116:*
[27] *«Երկիր», 04.03.1992:*

«Հրաման Արցախի ժողովրդաազատագրական բանակի հրամանատարներին ու մարտիկներին.

6.09.1991թ. *N1* *Հադրութ*

Բոլոր մարտիկներին ու հրամանատարներին խստիվ արգելվում է ոչնչացնել հակառակորդի կանանց ու երեխաներին, տանջանքներ կիրառել գերիների նկատմամբ, անարգել դիակները: Սույն հրամանը խախտողները կդատվեն ռազմական ժամանակի օրենքներով:

Արցախի ժողովրդաազատագրական բանակի ստորաբաժանումների հրամանատարները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն ջոկատներում կարգապահությանը և վճռականորեն կանխեն մարտիկների ցանկացած հակաօրինական գործողությունները»[28]:

Արցախի ժողովրդաազատագրական բանակի այդ հրամանը կատարվում էր ամենայն խստությամբ: Իմիջիայլոց, Խոջալուի գրավման օրը Երևանից ստացվել էր հեռագիր, որտեղ ասվում էր, թե Ղարաբաղ է ժամանում Իրանի վարչապետ Վիլայեթին, ուստի պետք է կանգնեցնել գործողությունը և ապահովել վարչապետի անվտանգությունը: Սակայն գործողությունը չի ընդհատվում, իսկ Վիլայեթիի ինքնաթիռը վայրէջք է կատարում Գյանջայում:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը, մարտի 4-ին քննարկելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Խոջալու գյուղում տեղի ունեցած իրադարձությունների մասին» հարցը, ընդունեց հայտարարություն, որտեղ ասված է. «Ադրբեջանի սպառազեն կազմավորումների կրակակետերի ոչնչացումը և Խոջալու գյուղի մոտակա ԼՂՀ միակ օդանավակայանի ապաշրջափակումը, որոնք հարուցված են ԼՂՀ-ի համար կենսական նշանակությամբ, լուրջ արձագանք են ստացել Ադրբեջանի Հանրապետության և ուրիշ երկրների զանգվածային լրատվության միջոցներում: Խոջալուում տեղակայված Ադրբեջանի ազգային բանակի զորամասերը լրիվությամբ շրջափակել էին ԼՂՀ Ասկերանի շրջանը հանրապետության մայրաքաղաքի հետ կապող ճանապարհները, ծանր հրետանուց պարբերաբար գնդակոծում էին Ստեփանակերտ քաղաքը և հայկական մյուս բնակավայրերը»: Այնուհետև բացատրվում է, որ, «Չնայած մարտական

[28] *Տես Արկադի Տեր-Թադևոսյանի անձնական արխիվ:*

գործողությունների գոտուց Խոջալուի բնակիչների դուրս գալու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնապաշտպանության ուժերի կողմից ստեղծված միջանցքին, գյուղի խաղաղ բնակչության մի հատվածը չի օգտվել այդ հնարավորությունից: Նրանք բոլորն էլ՝ շուրջ 200 մարդ, ըստ իրենց ցանկության, առանց որևէ նախնական պայմանների, ուղեկցվել են սահմանից այն կողմ»[29]:

1992թ. մարտի 10-ին հրաման է ստացվում 366-րդ մոտոհրաձգային գունդը, որը տեղակայված էր Ստեփանակերտում, Ղարաբաղից դուրս բերելու մասին: Մինչ այդ՝ մարտի 1-ի ուշ երեկոյան, ԱՊՀ-ի զինված ուժերը դեսանտ էին իջեցրել Բալլուջա գյուղում, որտեղ մեկ շաբաթ առաջ տեղակայվել էր 366-րդ գնդի գումարտակներից մեկը: 750 հոգուց բաղկացած դեսանտը գլխավորում էր ԱՊՀ-ի զինված ուժերի անդրկովկասյան տեղամասի հրամանատար, գեներալ Գրեկովը: Դեսանտային ուժերը զինաթափել էին ինքնապաշտպանական ուժերին և հսկողության տակ վերցրել բոլոր ճանապարհները: Շտապ Բալլուջա են մեկնում ԼՂՀ Գերագույն խորհրդի պաշտպանության և անվտանգության հանձնաժողովի նախագահ Վ.Բալայանն ու արտաքին հանձնաժողովի նախագահ Լ.Մելիք-Շահնազարյանը: Գեներալը նրանց հաղորդում է, որ իրենց հիմնական նպատակն է ապահովել 366-րդ գնդի դուրսբերումը Ղարաբաղից: ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը ԱՊՀ-ի զինված ուժերի գլխավոր հրամանատար Ե.Շապոշնիկովին խնդրում է գունդը թողնել Ստեփանակերտում, սակայն մերժում է ստանում: 1992թ. մարտի առաջին կեսին 366-րդ գունդը դուրս է բերվում Ղարաբաղից, որը խիստ ցավալի էր արցախահայության համար:

Խոջալուի ազատագրումով բացվել էր Ստեփանակերտի օդանավակայանը, ինչը մեծ նշանակություն ունեցավ Հայաստանի հետ կապի ամրապնդման և Արցախի պաշտպանության ուժեղացման գործում:

Ադրբեջանի իշխանությունները, ձգտելով վերականգնել կորցրածը, ուժեղացնում են ճնշումն Արցախի վրա: Մարտի 3-ին հրթիռակոծման զոհ դարձավ Շահումյանից Երևան 17 խաղաղ բնակիչներ փոխադրող զինվորական «Մի-24» ուղղաթիռը: Մարտունու արևելյան կողմում գտնվող Ամիրանլար և Մուղանլու ադրբեջանաբնակ գյուղերից մարտի 11-ին 100-ից ավելի արկեր

[29] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, գ.1, գ. 2, թ. 8-9:*

արձակվեցին Մարտունի քաղաքի ուղղությամբ՝ առաջ բերելով ավերածություններ և զոհեր: Այդ նույն օրը Հողեր գյուղից ռմբակոծվեց Հադրութի շրջանի Դուդուկչի գյուղը, իսկ Շահումյանի շրջանի Ղարաչինար գյուղը ռմբակոծվեց «գրադ» կայանքից, որի հետևանքով զոհվեցին 3 հոգի[30]: Արցախի ինքնապաշտպանական ուժերը, մարտի 12-ին անցնելով պատասխան գործողությունների, Ասկերանի ուղղությամբ հետ մղեցին հակառակորդի հարձակումները, չեզոքացրին կրակակետերը և հակառակորդին ստիպեցին լքել դիրքերը: Հայ ազատամարտիկները գրավեցին մեկ «գրադ» կայանք, մեկ հաուբեց, ԱՊՀ 4-րդ բանակին պատկանող երկու գրահամեքենա, մեկ Տ-72 տիպի տանկ, 3 թեթև հրասայլ: Հրկիզվեց Աղդամի մատույցներում գտնվող վառելանյութերի բազան: Հակառակորդը մարտադաշտում թողեց մեկ տասնյակից ավելի սպանված: Մարտակերտի շրջանի ադրբեջանաբնակ Սրխավենդ գյուղը վեր էր ածվել Ադրբեջանի բանակի ամուր հենակետի: Հայ ազատամարտիկները մարտի 12-ին համառ մարտերով ազատագրեցին Սրխավենդը՝ տալով 4 զոհ և մի քանի վիրավոր, իսկ հակառակորդի զոհերի թիվն անցավ երկու տասնյակից: Այնուհետև մարտերը շարունակվեցին Ղազանչին ազատագրելու համար: Ազերի բարբարոսները գյուղը վառել էին, և այնտեղ զոհվել էին 30 մարդ, անհայտ կորել 100-ը: Հայ ազատամարտիկները մարտի 14–15-ին ազատագրեցին այդ գյուղը ևս[31]:

Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտը շարունակվում էր անընդհատ ռմբակոծվել Շուշիի և հյուսիսային կողմի ադրբեջանաբնակ գյուղերի կրակակետերից: Շուշիից հրետակոծվում էին նաև Քարին տակը, Շոշը և այլ հայկական գյուղեր: Հակառակորդը մարտի 16-ին ռմբակոծեց Ասկերանը, Բաղարան, Ճարտարը, Սոսը և Մաճկալաշենը: Ի պատասխան՝ հայկական կողմը ռմբակոծեց Շուշին, Աղդամը, Թարթառը և Ֆիզուլին, որի հետևանքով զոհվեցին 26 հոգի[32]:

Թուրք–ազերիներն իրենց գործողություններն ակտիվացրել էին նաև Հայաստանի սահմանամերձ շրջաններում: Մարտի 12-ի վաղ առավոտյան հրետակոծեցին Տավուշի շրջանի Այգեպար, Մովսես, Ներքին Կարմիրաղբյուր, Չորաթան գյուղերը և Ներքին Շեն բնակատեղին: Զոհվեցին զգալի թվով կանայք, երե-

[30] *«Երկիր», 04.03.1992:*
[31] *"Голос Армении", 13.03.1992.*
[32] *"Бакинский рабочий", 18.03.1992.*

խաներ և մեծահասակներ: Հակառակորդը, ներխուժելով Այգեպարի պահածոների գործարանը, այն ավերեց[33]:

1992թ. մարտի 19-ին Երևան այցելեց Բուտրոս Ղալիի հատուկ դեսպան Սայրուս Վենսը: Նա եկել էր ՄԱԿ-ի քարտուղարի համար ստույգ տեղեկություններ պատրաստելու տարածաշրջանի մասին: Բացի այդ, նա հանձնարարություն ուներ ուղիներ փնտրել Լեռնային Ղարաբաղում կրակը դադարեցնելու և առճակատումը խաղաղ ճանապարհով լուծելու համար[34]: Նա, Ստեփանակերտ ժամանելով, հանդիպեց Արթուր Մկրտչյանի և Օլեգ Եսայանի հետ, որոնցից էլ ստացավ իրեն հետաքրքրող հարցերի պատասխանը[35]:

3. ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՄԱՔԱՅԻՆ ԿԱՊԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

1992թ. գարնանը արցախցիների գերխնդիրը հանրապետության պաշտպանության ուժեղացման հարցն էր և «ԼՂՀ նախարարների խորհրդի մասին» օրենքի հիման վրա, մինչև ԼՂՀ պաշտպանության նախարարության կազմավորումը ԼՂՀ նախարարների խորհրդին առընթեր պաշտպանության ուժերի կազմավորումը ստեղծելը: Դեռևս փետրվարի 24-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում էր ընդունել ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի (ԻՊՈՒ) ստեղծման մասին, որտեղ նշված է. «Ելնելով նրանից, որ Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության նկատմամբ տարվող ցեղասպանության, թալանի և բռնության քաղաքականությունը և հայկական գյուղերի զանգվածային բռնատեղահանումը հանգեցրել են Լեռնային Ղարաբաղի շահերը պաշտպանելու կոչված կամավորական ջոկատների ստեղծմանը», որոշեց «Կազմավորված զինված ջոկատները ճանաչել որպես ԼՂՀ ինքնապաշտպանության ուժեր և դրանք ենթարկել միասնական հրամանատարության» և միևնույն ժամանակ «ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերում ներգրավված զինապարտներին» համարել զինակոչված[1]: ԼՂՀ Գերագույն խորհրդի 1992թ. մարտի 4-ի որոշումով ԼՂՀ ԻՊՈՒ-ի հրամանատար էր նշանակվել գնդապետ Ա.Տեր-Թադևոսյանը: Այդ նույն որոշմամբ հաստատվել էր նաև ԼՂՀ պաշտպանության խորհրդի կազմը՝ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյան (նախագահ), Օլեգ Եսայան, Վիտալի Բալասանյան, Սերժ Սարգսյան, Արկադի Տեր-Թադևոսյան, Ռոբերտ Քոչարյան և Արկադի Կարապետյան[2]: Ելնելով «ԼՂՀ նախարարների խորհրդի մասին» օրենքի 24-րդ հոդվածից՝ 1992թ. մարտի 26-ին ԼՂՀ նախարարների խորհրդին առընթեր ստեղծվեց Պաշտպանության կոմիտե, որի նախագահ նշանակվեց Սերժ Սարգսյանը: Նրան հանձնարարվեց 10-օրյա ժամկետում առաջարկություններ ներկայացնել Պաշտպանության կոմիտեի կառուցվածքի, կանոնադրության և անձնակազմի մասին: ԼՂՀ Պաշտպանության կոմիտեն առանց հապաղելու ձեռնարկեց ինքնապաշտպանական ջոկատների միավորման, նյութատեխնիկական բազայի ստեղծման, սպառազինության ու տեխնիկայի հայթայթման, մատակարարման և կազմակերպչական այլ խնդիրների լուծման աշխատանքները: Պաշտպանության կոմիտեի այդ օրերի ամենահրատապ խնդիրը Շուշիի ազատագրումն էր և Ստեփանակերտի շուրջը գտնվող ադրբեջանական բնակավայրերում տեղակայված կրակակետերի ոչնչացումը: Այդ խնդիրները լուծելու համար ղեկավարությունը նպատակահարմար գտավ Արթուր Մկրտչյանի հանդիպումը Լ.Տեր-Պետրոսյանի հետ: Վերջինս կրկին Ա.Մկրտչյանին հասկացրեց, որ նա պետք է տա հրաժարական ու իր տեղը զիջի ՀՀՇ ներկայացուցչի: Ա.Մկրտչյանը Ստեփանակերտ վերադառնալուց հետո Հայաստանի նախագահի հետ ունեցած հանդիպման մասին հանգամանորեն տեղյակ պահեց ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության անդամներին: Սակայն վերջիններիս մեծամասնությունը դեմ էր Ա.Մկրտչյանի հրաժարականին և դատապարտեց նրա զիջողական կեցվածքը, որն ակնկալում էր իր հրաժարականի գնով ապահովել Հայաստանի օգնությունն Արցախին[3]:

Հանրապետության ներքին կյանքի ամրապնդումը հույժ կարևոր խնդիր էր, որին ԳԽ նախագահությունն անդրադարձավ ապրիլի 3-ին տեղի ունեցած նիստում: Քննարկելով «ԼՂՀ իշխանության և կառավարման տեղական մարմինների աշխատան-

---

[33] *«Երկիր», 13.03.1992:*
[34] *«Հայաստանի Հանրապետություն», 20.03.1992:*
[35] *Նույն տեղում, 21.03.1992:*
[1] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, ց. 1, գ. 1, թ. 46:*

[2] *Նույն տեղում::*
[3] Աբրահամյան Հ., *Նշվ. աշխ., էջ 160:*

քի արդյունավետությունը ուժեղացնելու լրացուցիչ միջոցառումների մասին» հարցը՝ ընդունեց որոշում, ըստ որի՝ «մինչև տեղական ինքնակառավարման մասին օրենքի ընդունումը և ԼՂՀ իշխանության տեղական մարմինների նոր ընտրությունների անցկացումը շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդներին և նրանց գործկոմներին թույլատրել բացառության կարգով գործկոմի նախագահի պաշտոնում ընտրել նաև տվյալ խորհրդի պատգամավոր չհանդիսացող անձանց»: Այնուհետև նշվում է, որ անհրաժեշտության դեպքում շրջանային և քաղաքային խորհուրդների գործկոմների ղեկավարների նշանակումը իրականացվում է ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության կողմից՝ ԼՂՀ նախարարների խորհրդի ներկայացմամբ: Ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդների գործկոմներին իրավունք է ընձեռվում գործկոմների սեղմ կազմերով որոշումներ ընդունելու: Հանձնարարվում է Գերագույն խորհրդի պետական շինարարության, իրավակարգի և օրենսդրության հարցերի հանձնաժողովին արագացնել ԼՂՀ-ում տեղական ինքնակառավարման մասին և իշխանության տեղական մարմինների ընտրությունների մասին օրենքների նախագծերի մշակումը և առաջարկումը Գերագույն խորհրդի նստաշրջանին[4]:

Ապրիլի 11–13-ը Արցախում էր Քերոլայն Քոքսը: Նա գնաց և տեսավ Մարաղայի ողբերգությունը: Մարաղայում ապրում էր 4660 մարդ: Թուրք-ազերիների ավելի քան 1000 զինվորներից բաղկացած մի զորամաս, 15 տանկի և մի քանի տասնյակ զրահատեխնիկայի ուղեկցությամբ, ապրիլի 10-ին ներխուժեց գյուղ, կողոպտեց, քար ու քանդ արեցին տները և սպանվեց 57 խաղաղ բնակիչ: Գյուղի բնակչությունն արտաքսվեց, իսկ 13 հոգի պատանդվեց[5]: Արցախի ինքնապաշտպանական ուժերի նոր գործողությունների հետևանքով թշնամին Մարաղայում թողեց ավելի քան 100 դիակ: Պարզվում է, որ Մարաղայի վրա հարձակման ժամանակ զրահամեքենաները վարում էին ԱՊՀ զինված ուժերից վարձված մասնագետներ: Մարաղայի սպանդի պատասխանատվությունն ամբողջովին ընկնում է Ադրբեջանի իշխանությունների խղճի վրա[6]:

[4] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, ց. 1, գ. 2, թ. 32-33:*

[5] Մելիք-Շահնազարյան Լ., *Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Եր., 1998, էջ 97-103:*

[6] *Նույն տեղում:*

1992թ. ապրիլյան այդ օրերին լրատվական միջոցները հաղորդեցին, որ ԱՄՆ-ի նախագահ Ջ.Բուշը երկու անգամ զանգել է Լ.Տեր-Պետրոսյանին և հայտնել, որ ԱՄՆ-ը պաշտպանում է դարաբաղցիներին, ու պետքարտուղար Բեյքերը, լինելով Բաքվում, դատապարտել է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի շրջափակումն Ադրբեջանի կողմից: Սակայն ազերիները շարունակում էին նեղացնել շրջափակման օղակը և նոր «մարաղաներ» կազմակերպել: Այդ նպատակով էլ նրանք ավելի շատ վարձկաններ էին կենտրոնացնում Շուշիում, Աղդամում, Ֆիզուլիում և այլ բնակավայրերում: Միայն Շուշիում կային 100 վարձկաններ: Հենց նրանք էին «գրադ» կայանքներից կրակ տեղում Ստեփանակերտի և հայկական գյուղերի վրա: Միայն ապրիլի 8-ին արձակվեց 70 արկ, որոնց հետևանքով ավերվեցին բազմաթիվ բնակելի և հասարակական շենքեր:

Այդ ծանր պայմաններում ԼՂՀ ԳԽ նախագահությունը և նախարարների խորհրդը, դիմելով հանրապետության բնակչությանը և գլուխ խոնարհելով նրանց զոհողությունների, հոգեկան կորովի և անմնացորդ նվիրումի առջև, նշում է, որ պատերազմում զոհվում են խաղաղ բնակչությունը, ծայրահեղ վատթարացել է ժողովրդի ապրելակերպը, մեծանում է անօթևանների և սովյալների թիվը: «Սակայն,- շարունակում ենք ընթերցել,- ձեր կրած զրկանքները և հալածանքները, ձեր վճռականությունը և հաստատակամությունը նշանավորվեցին և նշանավորվում են պատմական հաղթանակով. վկան՝ մեր նորելուկ անկախ հանրապետությունը, որը վճռել է տերը լինել իր ժողովրդի ճակատագրի և անպայման տերը կլինի»: Ապա նշված է, որ բոլորը պետք է ճանաչեն այն պարզ ճշմարտությունը, որ ԼՂՀ ժողովուրդը գոյության կռիվ է մղում և պաշտպանում իր տունն ու պատիվը, հայրենիք ունենալու իր իրավունքը:

Վերջում հայրենի երկրամասի բնակչությանը կոչ է արվում «սթափ և սառնասիրտ գնահատել Արցախի ներկա իրավիճակի ողջ բարդույթը, չենթարկվել խուճապահարույց սադրանքների: Ժամանակի հրամայականն է դիմակայել ցանկացած դավերի... Մեկ անգամ ևս հիշենք. անարգ ու բիրտ ուժին բոլորս միասին դիմագրավենք որպես մեկ հոգի և մեկ մարմին»[7]:

1992թ. ապրիլի 14-ին դժբախտ պատահարի հետևանքով ընդհատվեց Արթուր Մկրտչյանի կյանքը: Այդ նույն երեկոյան տե-

[7] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, ց. 1, գ. 2, թ. 32-33:*

դի ունեցած ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության և ինքնապաշտպանության ուժերի հրամանատարական կազմի համատեղ նիստում Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ Գեորգի Պետրոսյանը խնդրեց ինքնապաշտպանության ուժերի հրամանատարին և ամբողջ անձնակազմին տեղեկացնել հետևյալը. «Համազգային սգի այս օրերին և ընդհանրապես հանրապետության համար ներկա ժամանակահատվածում անսահման կարևոր է ամբողջ ժողովրդի միասնությունն ու համախմբվածությունը: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը պիտի ունենան միասնական հրամանատարություն, որպեսզի բացառվի ինքնակամ գործունեությունը»[8]: ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահի պարտականությունները ժամանակավոր ստանձնեց Գեորգի Պետրոսյանը: Ապրիլի 14-ի ուշ երեկոյան ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունն ու նախարարների խորհուրդը հանրապետության բնակչությանն ուղղել էին կոչ, որտեղ ասված էր. «Ծանր կորուստը չպիտի խախտի մեր շարքերը, չպիտի ջլատի մեր ուժերը: Մենք ձեզ կոչ ենք անում մնալ սառնասիրտ, չենթարկվել սադրանքների ու դիմակայել բոլոր դավերին: Մեր պայքարը արդարացված է: Մեր որոշումը՝ անդառնալի: Արցախի ազատության և անկախության սուրբ գաղափարին նվիրաբերեց իր կյանքը Արթուր Մկրտչյանը: Թող արյամբ սրբագործված այս գաղափարը միավորի մեր ուժերը, համախմբի մեր շարքերը: Արթուր Մկրտչյանի կամքի լավագույն կատարումը նրա որդեգրած ուղում հավատարիմ մնալն է»[9]:

Արթուր Մկրտչյանի մահը սգում էր ամբողջ Արցախը:

Շուշիի ազատագրումը և Արցախը Հայաստանի հետ ցամաքային միջանցքով միացնելը պատմական անհրաժեշտություն էր, որի հետաձգումը և դանդաղումը կլիներ սխալ: Հայոց Շուշին ավելի քան 70 տարի գտնվում էր գերության մեջ: Ազերիներն այն վերածել էին մի որջի, որտեղից անընդհատ մահ էր սփռվում հայկական բնակավայրերի, հատկապես Ստեփանակերտի վրա: Ստեփանակերտը անընդհատ ռմբակոծվում էր ոչ միայն Շուշիից, այլև Ջանհասանից, Քյոսալարից, Ղայբալուից և Աղդամի կողմից: Բավական է նշել, որ 1991-ի նոյեմբերից մինչև 1992-ի մայիսի սկիզբը այդ կրակակետերից Ստեփանակերտի վրա արձակվել է 4741 արկ, որից մոտ 3 հազարը՝ «գրադ» կայանքներից: Այդ

[8] *«Երկիր», 16.04.1992: Տե՛ս նաև ԼՂՀ, ՊԱ, ֆ. 254, գ. 1, գ. 2, թ. 56:*
[9] *«Երկիր», 16.04.1992:*

հրետակոծությունների հետևանքով զոհվել են 111 և վիրավորվել 332 բնակիչներ՝ մեծ մասը կանայք, երեխաներ և ծերեր: Ավերվել են 370 բնակելի տուն և շինություն[10]:

Թուրք-ազերիները, 1992թ. մարտի 29-ին զգալի ուժերով Ստեփանակերտի վրա հարձակման անցնելով, թեժ մարտերից հետո թողնելով 100-ից ավելի սպանված՝ 14-ի դիմաց, հետ շպրտվեցին: Ապրիլի 28-ին և 29-ին դարձյալ Ստեփանակերտի և Քարաշենի (Դաշուշեն) հայկական դիրքերի վրա հարձակվեցին մոտ 700 ազերիներ[11]: Ֆիզուլու շրջանի տարածքից հրետակոծվեցին Հադրութը, Մելիքշենը, Մարտունու շրջանի Հերհեր գյուղը և Կարմիր շուկա ավանը: Մայիսի 2-ի առավոտյան Ստեփանակերտի ծննդատան վրա ընկած ռումբից զոհվեցին 6 հոգի, որոնցից երկուսը՝ նորածին: Մայիսի 2-ի լույս 3-ի գիշերը Ստեփանակերտի վրա արձակվեց ավելի քան 120 հրթիռ և արկ: Ռմբակոծությունը շարունակվեց 13 ժամ: Ստեփանակերտի բնակիչներից մոտ 1000-ը մնացին անօթևան:

ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը, մայիսի 1-ին դիմելով աշխարհի պետություններին, տեղյակ պահեց, որ Լեռնային Ղարաբաղի բնակչությունը սովահար է, զուրկ ջրից, էլեկտրականությունից, ապրելու հնարավորությունից: Նախագահությունը խնդրում էր մարդասիրական օգնություն ցույց տալ արցախցիներին[12]: Այդ նույն օրը ԼՂՀ ինքնապաշտպանության կոմիտեն, հանդես գալով հայտարարությամբ, տեղյակ պահեց, որ սահմանամերձ շրջաններում գործող ադրբեջանական դիվերսիոն խմբերը գազանաբար հաշվեհարդար են տեսնում հայազգի խաղաղ բնակչության, այդ թվում կանանց ու երեխաների հետ: Քաղաքներն ու գյուղերը ռմբակոծվում են: Միայն մեկ շաբաթում Շուշիի կողմից Ստեփանակերտի վրա արձակվել է 1000 արկ, որից 800-ը՝ ռեակտիվ: Զոհվել է 20 խաղաղ բնակիչ, փլատակների են վերածվել հարյուրավոր բնակելի տներ, մի շարք ձեռնարկություններ: Շուշիից դուրս էր բերվել ամբողջ խաղաղ բնակչությունը, փոխարենը շարունակում են այնտեղ ժամանել զինամթերքներով բեռնավորված մեքենաների նոր շարասյուներ: Ադրբեջանի լրատվամիջոցները շարունակում էին ստահոդ լուրեր տարածել՝ իբր հայկական կողմը օգտագործել է քիմիական զենք: Այդ կեղծիքի նպատակը, ասվում էր հայտարարության մեջ,

[10] *«Ազգ», 09.05.1992:*
[11] *«Երկիր», 30.04.1992:*
[12] *Նույն տեղում, 26.05.1992:*

միանգամայն պարզ է՝ Ադրբեջանի կողմից ծրագրված ագրեսիան ներկայացնել որպես «պատասխան ստիպողական գործողություններ»[13]: ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերին հայտնի էր դարձել, որ թուրք-ազերիները պլանավորել էին մայիսի 9-ին մտնել Ստեփանակերտ և կոտորել կամ վտարել ամբողջ բնակչությանը: Մայիսի 7-ին հակառակորդի «Մի-21» երեք մարտական ուղղաթիռներ Ստեփանակերտի վրա գրոհեցին Ղայբալուի կողմից: Միաժամանակ Շուշիի և Ջանհասանի դիրքերից «գրադ» կայանքներից Ստեփանակերտի վրա արձակվեցին 200 հրթիռ և մի քանի այլ տիպի արկեր: Եղան զոհեր, վիրավորներ, հրդեհ բռնվեց երկաթուղային կայարանում և քաղաքի բնակելի թաղամասերում[14]:

Ադրբեջանի «բնաջնջողական պատերազմի» քաղաքականության հետևանքով ԼՂՀ մայրաքաղաքում և այլ բնակավայրերում ստեղծվել էր օրհասական կացություն: Ստեփանակերտը կանգնած էր սովի եզրին: Քաղաքում գործում էին միայն կենսապահովման որոշ օղակներ: Չկար հեղուկ վառելիք, իսկ մայիսի 1-ից լրիվ անջատվել էր էլեկտրաէներգիան: Բնակչությանը միայն ալյուր կամ հացահատիկ էր բաժանվում, ռումբերի պայթյունի տակ հաց թխվում էր բացառապես զինվորների և հիվանդանոցների համար: Հազարավոր ընտանիքներ մնացել էին անօթևան: Քաղաքի բնակիչներին հնարավոր օգնություն էին ցույց տալիս գյուղերում ապրող համագյուղացիներն ու հարազատները: Հարյուրավոր ընտանիքներ ստիպված էին քաղաքից տեղափոխվել գյուղեր: Ահա թե ինչու նման իրավիճակում Շուշիի և ադրբեջանական մյուս կրակակետերի ոչնչացումն ու Հայաստանի հետ ցամաքային կապի ապահովումը դարձել էին կենաց ու մահվան հարց: Այդ էին թելադրում երկրամասի համապարփակ շրջափակումը, շուրջօրյա հրթիռակոծությունը, ստեղծված չափազանց ծանր ու անտանելի կենսապայմանները: Հանրապետության տնտեսությունը լրիվ կաթվածային վիճակում էր: Գ.Պետրոսյանը մայիսի 8-ի երեկոյան հաղորդել է Երևան. «Վերջին շաբաթվա ընթացքում ադրբեջանցիները լայնածավալ հարձակումներ են գործում Ստեփանակերտի վրա: Վիճակն անտանելի էր դառնում: Եվ մայիսի 7-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության նիստը Պաշտպանության խորհրդից պահանջեց լուծնել թշնամու կրակակետերը, ապահովել խաղաղ բնակչության ան-

[13] *«Ուրբաթ», 08.05.1992:*
[14] Հասրաթյան Ս., *նշվ. աշխ., էջ 34:*

վտանգությունը: Երեկ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը դիմեցին վճռական գործողությունների: Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի հարձակումը ամեն գնով պետք է կասեցվեր: Մենք ապրելու այլ տարբերակ չունենք: Իրադրությունն այժմ բարդ է, և մենք ամեն ինչ անելու ենք, որպեսզի Շուշին դադարի ԼՂՀ-ի հանդեպ ագրեսիայի օջախ լինելուց: Ես համոզված եմ, որ ողջ հայ ժողովուրդն այսօր մեր կողքին է և աջակցելու է մեզ: Աստծո և մեզ վրա է հույսներս»[15]:

Շուշիի ազատագրմանը նախորդեցին դիվանագիտական մեծ ջանքեր: ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը բազմիցս բողոքներ էր ներկայացնում միջազգային հանրությանը, խոշոր տերությունների և միջազգային բազմաթիվ կազմակերպությունների ու խնդրելով նրանց միջնորդությունը՝ վերջ տալ Արցախի նկատմամբ Ադրբեջանի բացահայտ ագրեսիային: 1992թ. մարտ-ապրիլին բազմաթիվ երկրների ներկայացուցիչներ, քաղաքական և հասարակական գործիչներ, ժամանելով Լեռնային Ղարաբաղ, խոստանում էին ազդել ագրեսորի վրա, սակայն Ստեփանակերտի և հանրապետության բազմաթիվ բնակավայրերի ռմբակոծումը չէր դադարում:

Գնալով խորանում էր Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի միջազգայնացումը: 1992թ. գարնանը, ընդառաջելով Արցախի բողոքներին և պահանջներին, ԵԱՀԿ-ն որոշեց ադրբեջանական առճակատման գոտում տեղադրել մինչև 200 դիտորդներ: Դիտորդական խմբի ղեկավար նշանակվեց Շվեդիայի արտգործնախարարի տեղակալ Մոսբերգը, որը, դեռևս իր պարտականությունների կատարմանը չանցած, բանակցություններ էր սկսել Ադրբեջանի խորհրդարանի և կառավարության հետ[16]: Ապրիլի 28–30-ը Կոպենհագենում տեղի ունեցած սեմինար-գիտաժողովը քննարկեց նաև Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսեթիայի և Աբխազիայի հարցերը: Այդ գիտաժողովին Հայաստանից մասնակցեցին Գերագույն խորհրդի Արցախի հարցի վերաբերյալ հանձնաժողովի նախագահ Սեյրան Բաղդասարյանը, քարտուղար Սուրեն Ջոլյանը, Մոսկվայից Յուրի Բարսեղովը և ուրիշներ: Հայկական կողմը նշեց, որ Հայաստանից Արցախին ցույց տրված օգնությունը միջազգային օրենքների տեսակետից չի դիտվում որպես հարևան երկրի ներքին գործերին միջամտություն, իսկ ադրբեջանական կողմը հայտարարեց, թե Ադրբեջանի համար

[15] *«Երկիր», 09.05.1992:*
[16] *«Երկիր», 28.04.1992:*

Արցախի հիմնախնդրի լուծումը արցախցիներին մշակութային ինքնավարություն շնորհելն է[17]:

Լիտվայի և Շվեդիայի սոցիալ-դեմոկրատների նախաձեռնությամբ 1992թ. ապրիլի 15–22-ը Ռիգայում տեղի ունեցավ «Ազգային հարցը ժամանակակից աշխարհակարգում» թեմայով կոնֆերանս, որին մասնակցեցին նախկին ԽՍՀՄ-ի մի շարք հանրապետությունների ներկայացուցիչներ: Կոնֆերանսը քննարկեց նաև Լեռնային Ղարաբաղի հարցը: Ադրբեջանի ներկայացուցիչը, կեղծելով պատմական ճշմարտությունը, հայտարարեց, թե իբր հայերը Ղարաբաղ են եկել 150 տարի առաջ, և ադրբեջանցիները նրանց տվել են հաց ու բնակատեղեր: Հայ պատվիրակությունը, պատասխանելով կեղծարարներին, ապացուցեց, որ Լեռնային Ղարաբաղը բուն հայկական հող է, և որ հայերը այդ տարածքում ապրում են հազարավոր տարիներ, իսկ ներկայումս պայքարում են իրենց իրավունքների և անկախության համար: Կոնֆերանսի նախագահ Յանիս Տոմելիսը իր եզրափակիչ խոսքում շեշտեց, որ Արցախը վարում է ազգային-ազատագրական պայքար, իսկ ադրբեջանական կողմը հանդես է գալիս զավթողի դերում[18]:

ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը մայիսի 6-ին՝ Թեհրան մեկնելու նախօրյակին հայտարարեց, թե Լեռնային Ղարաբաղի հարցը միջազգային բնույթ է կրում, իսկ դա նշանակում է, որ այն պետք է վճռի միջազգային հանրությունը, ըստ որում ղարաբաղցիների մասնակցությամբ[19]: Ադրբեջանի իշխանություններն իրենց հերթին, ապրիլի 16-ին դիմելով աշխարհի պետությունների ղեկավարներին և ՄԱԿ-ին, հայտարարել էին, թե իբր հայկական կողմը նախապատրաստվում է հայերի ցեղասպանության օրը՝ ապրիլի 24-ին, գրավել Շուշին և կազմակերպել այնտեղի ադրբեջանցիների ցեղասպանություն: Դրանից ելնելով՝ ադրբեջանական կողմը խնդրում էր միջամտել և Ղարաբաղյան հարցը վճռել խաղաղ ճանապարհով[20]: Ինչպես երևում է, Ադրբեջանը փորձում էր Արցախի հարցը միջազգայնացնել, որպեսզի կարողանար պահել Շուշին և Լաչինը: Այդ նույն օրերին Ադրբեջանը նախապատրաստվում էր նախագահական ընտրությունների, Ա.Մութալիբովը տվել էր հրաժարական: Նախագահի թեկնածու, Ազգային անկախության կուսակցության ղեկավար Էհթիբար Մամեդովը

[17] *Նույն տեղում, 05.05.1992:*
[18] *«Ուսանող», 04.05.1992:*
[19] *"Огонек", N14-15, от 4-18 апреля, 1992.*
[20] *"Бакинский рабочий", 16.04.1992.*

ընտրողներին խոստանում էր գինել մեկ միլիոն 200 հազար մարդ և անհապաղ լուծել Ղարաբաղի հարցը:

1992թ. փետրվարի 27-ին Խոջալուն ազատագրվելուց հետո, պատմում է Արկադի Տեր-Թադևոսյանը, նրա սեղանին է դրվել Շուշիի քարտեզը: «Քանի որ ես չէի պահանջել այդ քարտեզը,– շարունակում է նա,– միանգամից չհասկացա, թե այդ ինչ է նշանակում: Մենք դեռ ուշքի չէինք եկել Խոջալուն ազատագրելուց հետո, մանավանդ որ Ադրբեջանն աշխարհով մեկ աղմուկ էր բարձրացրել, երբ անմիջապես բերում են Շուշիի քարտեզը և հայտարարում, թե հիմա էլ պետք է ազատագրենք Շուշին ու առանց ուշացնելու ոչնչացնենք այնտեղ տեղակայված կրակակետերը: Ստացվել էր այնպես, որ Շուշիի ազատագրման անհրաժեշտությունը հասունացել էր «ներքևներում»[21]:

ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի հանձնարարությամբ՝ նախարարության շտաբի պետ գեներալ Գուրգեն Դալիբալթյանը և օպերատիվ վարչության պետի տեղակալ Լեոնիդ Մարտիրոսյանը պատասխանատու էին Ղարաբաղում իրագործվելիք ռազմական գործողությունների և հետևանին նախապատրաստելու համար: Վ.Սարգսյանի հանձնարարությունը՝ ազատագրել Ստեփանակերտի հարավային կողմի մուսուլմանական բնակավայրերը և ոչնչացնել այնտեղի կրակակետերը, կատարվել էր: Մնում էր ազատագրել հյուսիսային և արևմտյան կողմերի Ջանհասան, Քյոսալար, Ղայբալի, Շուշի և այլ բնակավայրերն ու ոչնչացնել այնտեղի կրակակետերը: Օդանավակայանը ազատագրվելուց հետո աստիճանաբար կարգավորվում էին ռազմական տեխնիկայի ու ռազմամթերքի հետ կապված հարցերը: Շուշիի ազատագրման համար 1992թ. մարտ-ապրիլին կատարվեցին բավականին նախապատրաստական աշխատանքներ: Այդ ժամանակ Ա.Տեր-Թադևոսյանը կազմեց Շուշիի ազատագրման օպերատիվ պլանը: Գեներալ Գ.Դալիբալթյանը նշում է, որ Ա.Տեր-Թադևոսյանը վերին աստիճանի բարեխղճորեն էր կատարում Վ.Սարգսյանի հանձնարարությունները և շատ հարցերում անմիջապես խորհրդակցում էր նրա հետ: Վ.Սարգսյանը Արցախի ուժերից պահանջում էր լուծել ռազմական կարևոր խնդիրը՝ բացել Լաչինի միջանցքը: «Շուշիի ազատագրմանը,– պատմում է Գ.Դալիբալթյանը,– նախապատրաստվել

[21] *Արկադի Տեր-Թադևոսյանի, ինչպես և գեներալներ Գուրգեն Դալիբալթյանի, Սերգո Օհանյանի և Լեոնարդ Մարտիրոսյանի վկայությունները տե՛ս հեղինակի արխիվում:*

էինք ամենայն լրջությամբ, ռազմական բոլոր պահանջներին համապատասխան: Ընդհանուր պլանը մի քանի անգամ ճշտվել, հաստատվել էր ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի կողմից, ուղարկվել ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությանը և դարձել գործողության ուղեցույց»: Գեներալը նաև վկայում է, որ բոլոր «գործողությունների գաղափարները մշակվում էին Հայաստանի պաշտպանության կոմիտեում դեռևս 1991-ի ամռանից սկսված: Այն ժամանակ մենք մտածում էինք, թե որտեղից ճեղքենք Հայաստանի կողմի՞ց, թե՞ Լեռնային Ղարաբաղի տարածքից, որպեսզի հետո չասեն, թե հայերը զավթիչներ են, նրանք սկսեցին պատերազմը: Մենք որոշեցինք դեպի Ստեփանակերտ ուղիղ ճանապարհ բացել Լաչինով: Ի դեպ, Լաչինով ամենակարճ ճանապարհն է»: Ըստ Գ.Դալիբալթյանի՝ «Շուշիի ազատագրման օպերացիայի մշակման հիմքում դրված էր անսպասելիությունը»[22]:

Շուշիի օպերատիվ գործողությունները մշակվել էին խիստ գաղտնի պայմաններում: Այստեղ կարևոր դեր ուներ նաև ոգու ուժը: Ամբողջ հայ ժողովուրդը պատրաստ էր ազատագրել Շուշին: Քանի որ հակառակորդը շատ էր վախենում շրջապատումից, հայկական կողմի գործողությունները կրում էին շրջանցիկ բնույթ: Օպերացիան ստացել էր «Հրազդան» կոդային անվանումը, ընդ որում՝ Շուշիինը՝ «Հրազդան-1», Լիսագորինը՝ «Հրազդան-2», Լաչինինը՝ «Հրազդան-3»: Օպերացիան իրագործելու ժամանակ կիրառվել են հետևյալ ռազմավարական մարտավարությունը՝ շրջանցիկ գործողություններ, անսպասելիություն, կրակի ուղղությունների անընդհատ փոխում՝ ընդհուպ Աղդամի կրակակետերի ուղղությամբ:

Շուշիի ազատագրման թե՛ օպերատիվ պլանի կազմման ծանրությունը և թե՛ իրագործման ղեկավարումը ընկած էին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի հրամանատար Ա.Տեր-Թադևոսյանի վրա: Այդ ժամանակ նրա համար գերխնդիրը ոչ թե Շուշիի ազատագրումն էր, այլ Հայաստանի հետ ճանապարհային ուղիղ կապ ունենալը: Այլ հարց է, թե այդ ճանապարհը որտեղով պետք

[22] *Գուրգեն Հարությունի Դալիբալթյանը ծնվել է 1926 թ. հունիսի 5-ին Վրաստանի Նինոծմինդի շրջանի Ալագյալ գյուղում: Նա խորհրդային և հայ ռազմական գործիչ է, 1996 թ-ից՝ գեներալ-գնդապետ: 1995-ին նշանակվել է ՀՀ նախագահի խորհրդական և ՀՀ ռազմական գլխավոր տեսուչ: Արցախյան պատերազմի ակտիվ ղեկավարներից է: Պարգևատրվել է ՀՀ «Մարտական խաչ» և ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշաններով:*

է անցներ՝ Շուշի քաղաքո՞վ, թե՞ այլ շրջաններով: Շուշիի ազատագրումն ու միջանցքի բացումը փոխկապակցվում էին, հատկապես որ Ստեփանակերտին սպառնացող վտանգը չէր նվազել: Ա.Տեր-Թադևոսյանի հաստատմամբ Շուշիի օպերացիայի պլանի վրա աշխատել են անդադար, առանց որևէ պահ կորցնելու:

Մինչև Շուշիի օպերացիայի պլանի վերջնական տարբերակի կազմումը ստեղծվել էին մի քանի հետախուզական խմբեր, որոնց հանձնարարված էր ուսումնասիրել հակառակորդի ուժերի տեղակայումը, դիրքերը և ճշտել քանակական տվյալները: Թշնամու հետ շփման գիծը ձգվում էր 20-25 կիլոմետր: «Մենք,– հիշում է Ա.Տեր-Թադևոսյանը,- պետք է ստույգ տվյալներ ունենայինք յուրաքանչյուր քառակուսի մետր տարածության մասին, որպեսզի լավ իմանայինք հակառակորդին: Եվ երբ համադրեցինք բոլոր տվյալները, հանգեցինք այն եզրակացության, որ թշնամին մեզ գերազանցում էր բոլոր չափանիշներով՝ և հրետանիով, և՛ տանկերով, և՛ աշխարհագրական դիրքով: Տարրական հաշվարկները ցույց էին տալիս, որ թշնամու նկատմամբ նույնիսկ եռապատիկ-քառապատիկ ավելի գինուժ ունենալու դեպքում շատ մեծ դժվարություններ ենք ունենալու»: Եվ հենց դա էր պատճառը, որ գեներալ Գ.Դալիբալթյանն իր նախնական հաշվարկներով ենթադրում էր Շուշին ազատագրելու համար ունենալ առնվազն 10 հազար զինվոր:

Ա. Տեր-Թադևոսյանը հետախուզական ջոկատների հրամանատարներից պահանջում էր հակառակորդի մասին տվյալներ ձեռք բերել ամեն օր, ամեն ժամ: Նա ամեն ինչի մասին զեկուցում էր Վազգեն Սարգսյանին և Սերժ Սարգսյանին: Այն ժամանակ ԼՂՀ ԻՊՈՒ-ի շտաբ մուտք ունեին խիստ սահմանափակ թվով մարդիկ: «Իմանալով ՀՀ նախագահի շրջապատը,– պատմում է Ա.Տեր-Թադևոսյանը,– մենք ամեն ինչին շատ զգույշ էինք մոտենում, որպեսզի չիովին բացառվեր տվյալների արտահոսքը»: Նրա հավաստմամբ գաղտնի տվյալներին տիրապետում էին ինքը, շտաբի պետ Ֆ.Գզոդյանը, և Վ.Հարությունյանը, որն աշխատում էր քարտեզների վրա: «Մի քարտեզը,– շարունակում է Կոմանդոսը,– կախված էր ինձ մոտ՝ պատից, մյուսը փռված էր սեղանին, որի վրա պիտի ցույց տրվեր ընդհանուր մտահղացումը: Երկու քարտեզ էլ ունեինք գաղտնի, որոնց ոչ ոք չէր կարող մոտենալ, բացի ինձնից, Ֆելիքս Գզոդյանից և Վիտալի Հարությունյանից: Ես բոլորին չէ, որ վստահում էի...»:

1992թ. մայիսի 4-ին, Ա.Տեր-Թադևոսյանի ստորագրած հրամանի համաձայն, մայիսի 8-ին՝ ժամը 2.30-ին, Շուշիի ուղղությամբ արձակված առաջին արկերը ազդարարեցին գրոհի սկիզբը: Ռազմական գործողությունների ընթացքում Ա.Տեր-Թադևոսյանի կողքին էին գեներալ Գ.Դալիբալթյանը, շտաբի պետ Ֆ. Գզողյանը, կապի պետ Ա.Փափազյանը և բուժգումարտակի պետ Վ.Մարությանը: Այդ օրը ԼՂՀ Գերագույն խորհրդի և կառավարության գրեթե բոլոր անդամները, Գ.Պետրոսյանի և Օ.Եսայանի գլխավորությամբ, զինվորական համազգեստով էին, և ամեն մեկը մի կարևոր հանձնարարություն էր կատարում: Բոլորին մարտի էին առաջնորդում Արցախի թեմի առաջնորդ Պարգև սրբազանի օրհնությունն ու աղոթքը: Շուշիի դեմ ելել էր ամբողջ արցախահայությունը: Հայաստանից Արցախ էին գնացել բժիշկների 23 բրիգադ, կապի աշխատողներ, պատրաստի վիճակում էին ուղղաթիռները, Գորիսի մոտակայքում կենտրոնացված էին ՀՀ պաշտպանության նախարարության ուժեր: Դ.Բաղդասարյանի «Դնեպր» հրետանային միավորման «12-ԿԱ» 19 հրանոթները տեղավորված էին Խնածախ, Հարթաշեն, Տեղ և Խնձորեսկ գյուղերում: Կուտակել էին 800 արկ, որոնցից 600-ը նախատեսված էր միայն Լաչինը ռմբակոծելու համար: Վիրավորներին ընդունելու և անհրաժեշտ վիրահատություններ կատարելու համար պատրաստ վիճակում էին Ստեփանակերտի, Գորիսի և Երևանի մի շարք հիվանդանոցներ: Համազգային այդ պայքարը ոգևորել էր բոլորին:

Համաձայն մարտական հրամանի՝ ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը կազմված էին չորս հարձակողական խմբերից: 1. «26»-ի (Հյուսիսային) ուղղություն՝ Ստեփանակերտ-Շուշի մայրուղի, հրամանատար՝ Վալերի Չիթչյան: 2. Շոշի (Արևելյան) ուղղություն՝ Մխիթարաշեն-Շուշի բերդաքաղաք (բանտ և հիվանդանոց), հրամանատար՝ Արկադի Կարապետյան: 3. Լաչինի (Հարավային) ուղղություն՝ Սղնախ-Զարիսլու (Զառիս)– Լիսագոր, հրամանատար՝ Սամվել Բաբայան: 4. Քյոսալարի (Հյուսիսարևմտյան) ուղղություն՝ Բալլուջա-Ջանհասան-Քյոսալար, հրամանատար՝ Սեյրան Օհանյան: Կար նաև պահեստային ստորաբաժանում, որի հրամանատարն էր Յուրի Հովհաննիսյանը:

Հարձակումը սկսելու նախորդ օրը՝ մայիսի 7-ի ուշ երեկոյան, տեղի էր ունեցել ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության արտահերթ նիստ, որտեղ քննարկվեց հանրապետությունում ստեղծված ծանր կացությունը, որն առաջացել էր տնտեսական

շրջափակման հետևանքով: Գերագույն խորհրդի առաջարկությամբ կեսգիշերին տեղի էր ունեցել ԼՂՀ պաշտպանության խորհրդի նիստ, որտեղ որոշում էր ընդունվել Ստեփանակերտի շուրջ գտնվող թշնամու բոլոր կրակակետերի ոչնչացնելու մասին[23]:

Գեներալ Լեոնիդ Մարտիրոսյանը վկայում է. «Իմ հանձնարարությամբ կազմվել էր Շուշիի տեղանքի մանրակերտը, որի վրա բոլոր հրամանատարները ճշգրտել էին, թե ով որ ուղղությամբ է շարժվելու: Ըստ էության, գործողությունների ամբողջ պլանը փորձարկվել է տեղանքի մանրակերտի վրա: Դա խիստ անհրաժեշտ էր, որովհետև Շուշի մտնելու միայն մեկ ճանապարհ կա, մնացած կողմերը ժայռեր են և ձորեր: Մանրակերտի վրա աշխատանքներն ավարտելուց հետո կազմեցինք հրետանու խմբավորման պլանը: Ես անմիջապես զբաղվում էի հրետանու նախապատրաստման և կրակը ղեկավարելու հարցերով: Կատարելով Կոմանդոսի և գեներալ Դալիբալթյանի պահանջը՝ մայիսի 8-ի գիշերվա 2.30-ին հրամայեցի սկսել կրակը: Հրետանին սակավաթիվ էր, և մասնագիտական տեսակետից դա հրետանային նախապատրաստություն անվանել ճիշտ չի լինի: Շուշին բաժանել էինք երեք մասի: Մեր ջոկատների մոտենալուն պես կրակի ուղղությունը քաղաքի մի կողմից տեղափոխում էինք մյուսը: Այդպես էինք գործում, որպեսզի չվնասեինք Ղազանչեցոց եկեղեցին և պատմական արժեք ներկայացնող մյուս շինությունները: Սկզբում մոտ 40 րոպե անընդհատ կրակում էինք: Մայիսի 9-ի առավոտյան ժամը 7-ին Կոմանդոսը հրամանատարական կետից եկավ Ստեփանակերտ, գրկեց ինձ, համբուրեց և ասաց. «Վե՛րջ: Մեր երազանքն իրականացավ: Շուշին վերցրել ենք: Գնում եմ քնելու»:

Ա.Տեր-Թադևոսյանը փաստում է. «Մեր տվյալներով հակառակորդն ուներ մոտ 2300 մարդ: Երբ այդ մասին զեկուցեցի Վազգեն Սարգսյանին, նա հարցրեց, թե մենք որքան մարդ ունենք: Ասացի՝ 1700: Նա չհավատաց, որ մենք այդքան մարդկանցով կարող ենք կռվել և հաղթել: Սակայն ռազմական գործողությունների պլանն այնպես էր մշակված, որ ես համոզված էի հաղթանակի հաջողության մեջ: Շուշիի օպերացիան ռազմագիտության պատմության մեջ, իմ համոզմամբ, եզակի երևույթ է: Ղարաբաղյան պատերազմում, հատկապես Շուշիի ազատագրման գործում, չափազանց մեծ էր Վազգեն Սարգսյանի դերը: Չնայած նա գի-

[23] *«Արցախ», 30.05.1992:*

տեր, որ մենք ունեինք ավելի քիչ ուժեր, քան հակառակորդը, սակայն հավատաց մեզ և համաձայնվեց սկսել Շուշի-Լաչին օպերացիան: Եվ երբ Սերժ Սարգսյանից ստացա հարձակումը սկսելու թույլտվություն, էլ ոչ մի որոպե չհապաղեցի»[24]:

Շուշիի օպերացիայի հիմնական գործողություններն արտացոլվում էին մարտական հրամանում և ռազմական քարտեզների վրա: Պլանը մշակելիս հաշվի էին առնվել հայկական ուժերի ունեցած առկա զենքն ու զինամթերքը: Անընդունելի էր այն տեսակետը, թե իբր «հրամանատարությունը հակառակորդի զորամիավորումների իրական հնարավորության մասին ստույգ տեղեկություններ չուներ»[25]: Շուշիի ազատագրման գործողություններին մասնակցել է մոտ 60 ջոկատ: Մանրամասն հաշվի էին առնվել յուրաքանչյուր ջոկատի հնարավորությունները, ճշգրտվել էր, թե որ ջոկատը որ ուղղությամբ պետք է տեղակայվեր, և որ ջոկատի հրամանատարը ինչի է ընդունակ: Գլխավոր ուղղությունների պատասխանատուներ էին նշանակվել վստահելի և ունակ հրամանատարներ՝ Սեյրան Օհանյան, Վիտալի Չիթչյան, Արկադի Կարապետյան, Աշոտ Ղուլյան, Դուշման (Վարդան), Սամվել Բաբայան, Յուրա Հովհաննիսյան, Վալերի Բալայան, Նվեր Զախոյան և ուրիշներ: Զևակերպվել էր հրամանատարական այնպիսի կորիզ, որին ամբողջությամբ վստահում էր վերին հրամկազմը: Պատերազմի, մանավանդ Շուշիի օպերացիայի ժամանակ կամավորական ու կադրային սպաները դարձել էին անքակտելի միասնություն: Ա.Տեր-Թադևոսյանի վկայությամբ նրան շատ է օգնել գեներալ Գուրգեն Ղալիբալթյանը, որի ներկայությունը ոգևորում էր բոլորին: «Նա,– պատմում է Կոմանդոսը,– որպես անձ, որպես զինվորական, իր վարքով ու պահվածքով բացառիկ դեր է խաղացել Շուշիի օպերացիայի ժամանակ: Այն խնդիրները, որոնք Վազգեն Սարգսյանի կողմից դրված էին նրա վրա, նա կատարել է անթերի»:

---

[24] *Իմիջիայլոց, մայիսի 6-ին Լ. Տեր-Պետրոսյանի ինքնաթիռը վայրէջք կատարեց Թեհրանի «Մեհրան» օդանավակայանում: Իրանի նախագահ Հ. Ռաֆսանջանիի և Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Յաղուբ Մամեդովի հետ հանդիպումների ժամանակ Հայաստանի նախագահը չգիտեր, որ Շուշին ազատագրվել է: Չգիտեր, որովհետև պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը նրան տեղյակ չէր պահել Շուշիի օպերացիան սկսելու մասին, և հնարավոր է, որ դա դրական դեր է խաղացել Շուշիի ազատագրման գործում:*

[25] Ղարիբյան Գ., *Արթուրը: Արծվի թռիչք էր նա, էջ 117:*

Ռազմաքաղաքական խնդիրներից զատ Շուշիի գործողություններից առաջ ուսումնասիրվել էր Ադրբեջանի Հանրապետության բարդ քաղաքական վիճակը: Հայկական հրամանատարությունը գիտեր, որ հակառակորդի զինված ուժերում կային երկպառակություններ և անհամաձայնություններ, որոնց օգտագործումը շատ կարևոր էր: Այդ տեսակետից Շուշիի օպերացիայի ռազմական ղեկավարությունը նպաստավոր վիճակում էր: Հակառակորդի թերևս գերակշռող, սակայն անկայուն ուժերի դիմաց կանգնած էր բարոյապես կայուն, հաղթանակի ձգտող հայոց ոգին, որը պատրաստ էր հաղթահարել բոլոր դժվարությունները, միայն թե տեսներ Շուշին ազատագրված: Հայկական հրամանատարությունը այդ բարդ իրավիճակում գործեց սառնասրտորեն և ռազմավարական իմաստով ընդունեց ճիշտ որոշումներ: Առանձին դրվագներում վճռական դեր խաղաց պահեստային ստորաբաժանումը, որն իր քաջարի հրամանատար Յուրի Հովհաննիսյանի գլխավորությամբ հրաշքներ էր գործում: Այդ ժամանակ հայոց ռազմահրամանատարական միտքը կենտրոնացված էր «Հրազդան» և «Հարսանիք լեռներում» օպերատիվ պլանների իրագործման վրա, պլաններ, որոնց համադիր վերլուծությունը մեծապես կօգնի այդ խոշոր իրադարձության պատմագիտական հետազոտությանը: Շուշիի օպերացիայի պլանի այդ երկու տարբերակի գոյությունը, որի մասին չգիտեին նույնիսկ շատ հրամանատարներ, ըստ Ա.Տեր-Թադևոսյանի, պայմանավորված էր մի շարք հանգամանքներով, ամենից առաջ գաղտնապահությամբ: Ըստ էության, այդ երկու տարբերակների միջև շատ լուրջ, էական տարբերություններ չկային, սակայն առաջնությունը տրվել է «Հարսանիք լեռներում» տարբերակին, որի մասին գիտեին չորս հոգի՝ Ա.Տեր-Թադևոսյանը, շտաբի պետ Ֆ.Գզողյանը, քարտեզագիրը և Սերժ Սարգսյանը: «Հարսանիք լեռներում» տարբերակի «Խիստ գաղտնի» օպերատիվ քարտեզի վրա նույնիսկ բացակայում է այն հաստատողի ստորագրությունը: Այդ քարտեզպլանը գտնվում էր միայն գլխավոր հրամանատար Ա.Տեր-Թադևոսյանի իրավունքի տակ: Նա հպարտությամբ նշում է, որ Շուշիի գրավումը ռազմական արվեստի փայլուն օրինակ է, և որ դա հնարավոր եղավ հայ ռազմավարական մտքի մարտիկների սխրանքների ու ոգու արիության շնորհիվ: Շուշիում տեղի ունեցավ այն, ինչ հայտնի էր վաղուց՝ երբ քո ոգին ավելի բարձր է, քան թշնամունը, ապա վաշտը կարող է հաղթել գնդին:

Ինչպես ասվեց, 1992թ. մայիսի 7-ի երեկոյան տեղի ունեցած ԼՂՀ ԳԽ արտահերթ նիստի առաջարկությամբ կեսգիշերին տեղի ունեցած պաշտպանության խորհրդի արտահերթ նիստում ճշգրտվեցին վերջին մանրամասները: Հակառակորդի կրակակետերը լռեցնելու համար այլևս այլընտրանք չէր մնացել, որովհետև այդ վերջին օրերին հակառակորդը առանձնակի դաժանությամբ էր գնդակոծում մայրաքաղաքը, շրջկենտրոնները, սահմանամերձ գյուղերը: Մայիսի 7-ին հակառակորդը Շուշիից և Ջանհասանից «գրադի» 200 արկ էր արձակել Ստեփանակերտի վրա, ապա գնդակոծել երեք «Մի-24» ուղղաթիռներից և անցել լայնածավալ գրոհի: Հավանական է՝ թուրքերը համոզվել էին, թե հայերը երբեք չեն համարձակվի հարձակվել Շուշիի վրա: Նաև ասվեց, որ Շուշիի գրավման և այնտեղի կրակակետերի ոչնչացման համար ռազմական գործողությունները սկսվեցին 1992թ. մայիսի 8-ի գիշերը՝ ժամը 2^{30}-ին: Այդ գործողությունները պետք է սկսվեին մայիսի 4-ին, սակայն հետաձգվել էին եղանակի անապասելի փոփոխության պատճառով: Արևելյան ուղղությամբ շարժվող զորամասերը Շուշիին մոտեցան երեք ենթաուղղություններով: Ձախ թևում գործում էր Շոշ գյուղի ինքնապաշտպանական ջոկատը՝ Արգամ Հարությունյանի հրամանատարությամբ, որի ենթակայության տակ էին դրված Արկադի Կարապետյանի դասակից 11 զինվոր: Այն հանձնարարություն ուներ այդ գիշեր մտնել Շուշի: Վալերի Դանիելյանի 31 հոգուց բաղկացած դասակը գիշերվա ժամը 2-ին գտնվում էր Շոշի ջրաղացների մոտ, որտեղ նրանց դիմավորում է առաջին վաշտի հրամանատար Աշոտ Ղուլյանը: Ըստ պլանի՝ վերջինիս վաշտը Շուշիի պարիսպներին պետք է մոտենար Շոշ գյուղի կողմից՝ ամենադժվարամատչելի լանջով: Աշոտ Ղուլյանի 15-հոգանոց ջոկատը և նրա աջ թևում գտնվող Վալերի Բաղրյանի ու Վիլեն Սաֆարյանի Քարաշենի ինքնապաշտպանական ջոկատները շարժվում էին Շուշիի բանտի ուղղությամբ: Այդ ուղղությամբ պահեստազորում էին գտնվում դաշնակցության վաշտի՝ ջուղայեցի Հրանտ Սինասյանի դասակը և Վիլեն Զաքարյանի «Մոստ» խումբը:

Հակառակորդը դիրք էր գրավել Շոշի կամրջից ոչ շատ հեռու: Նրանց փախուստի մատնեցին Լևոն Մնացականյանի ականանետային կրակոցները: Քանի որ տարածքն ականապատված չէր, և հակառակորդը խուճապահար էր, հայ 12 մարտիկներ, գրավելով առաջին բարձունքը, պատրաստվում էին շարունակել

առաջ շարժվել: Սակայն հակառակորդը, օգնական ուժեր ստանալով, սկսեց կատաղի դիմադրել: Հայ մարտիկների դիրքն անկապաստ էր, բացի այդ, նրանցից ութը վիրավորվել էին: Հայ հրետանավորների կրակային աջակցությամբ ազատամարտիկները կարողացան մարտադաշտից դուրս բերել վիրավորներին: Աշոտ Ղուլյանի վաշտը, որը շարժվում էր բանտի ուղղությամբ, պարիսպներից 150 մետր հեռավորության վրա խրամատավորվում է: Ինչպես նկարագրում է Արմեն Դանիելյանը, այդտեղ կատաղի մարտեր բռնկվեցին: Հակառակորդի պաշտպանությունը դասավորված էր վատ տեսանելի տեղանքում: Նման դիրքից հեշտությամբ կարելի էր կրակի տակ պահել շրջակա ողջ տարածքը: Թշնամին գնդացիրներից անընդհատ կրակի տակ էր պահում տարածքը՝ չթողնելով տղաներին առաջանալ: Երբ սկսեցին աշխատել հայոց հրետանին և ականանետները, թուրքերը խուճապի մատնվեցին: Հայ հրետանավորները գերազանց էին համագործակցում հետևակի հետ: Թշնամին որոշ ժամանակ դադարեցրեց գնդակոծումը: Օգտվելով դրանից՝ Աշոտ Ղուլյանը հրամայում է հանկարծակի գրոհել և մագլցելով պարսպապատերը՝ ներխուժել բերդ[26]: Առաջին և հատուկ վաշտերը, հասնելով բանտի պարիսպներին, ուս ուսի կանգնելով, բարձրանում են չորս մետր բարձրություն ունեցող պարիսպը: Աշոտ Ղուլյանը չնայած վիրավորված էր, սակայն մնում էր շարքում: Առավոտյան ժամը 6^{30}-ին նա Ա.Տեր-Թադևոսյանին հաղորդում է, որ ինքը նստած է Շուշիի բերդի պատին, և շուտով կմտնեն քաղաք[27]: Հակառակորդի «ԻՄ-25» ինքնաթիռը գնդակոծում է հայ մարտիկների դիրքերը: Աշոտ Ղուլյանի և Վալերի Դանիելյանի ջոկատները, արհամարհելով դա, գրավում են բանտը և սկսում հետապնդել նահանջող հակառակորդին: Այդ ժամանակ Ղարմետաքսկոմբինատի Շուշիի մասնաճյուղի շենքի ուղղությամբ առաջացած ջոկատը հակառակորդի ճնշման տակ ստիպված էր նահանջել և ամրանալ ավելի հարմար բնագծերում: Բանտի մոտից թշնամին շարունակում էր «գրադ» կայանքից հրթիռակոծել Ստեփանակերտը: Հրթիռակոծումը պետք է լռեցվեր, սակայն դրան խանգարում էր բանտի պարիսպների տակ շարունակվող նշված կատաղի մարտը:

Հայ ինքնապաշտպանները 1992թ. մայիսի 8-ի լուսադեմին հարձակման էին անցել ամբողջ ճակատով: Քաղաքի վճռական

[26] *«Ազատ Արցախ», 09.05.2000:*

[27] Դանիելյան Ա., *Բեկորն ինչպես որ կար (Հուշապատում), Ստեփանակերտ, 2000, էջ 34:*

ճակատային գրոհը սկսվեց արևելքից՝ Ստեփանակերտից և Շուշից: Քաղաք մտած Աշոտ Ղուլյանի և Վալերի Դանիելյանի ջոկատները հասնում են Շահ-Դաջարների գերեզմանոցին, իսկ Ռաֆայել Գալստյանի և Յաշա Խանջյանի դասակները, ոչնչացնելով հակառակորդի ՀՄՄ-1-ի անձնակազմը, գրավում են բոլորովին նոր զրահամեքենան[28]: Ապա մարտով հասնում են Շուշիի կուսշրջկոմի նախկին շենքին: Շարունակելով փողոցային մարտերը՝ հայ մարտիկները գնում են դեպի Ղազանչեցոց եկեղեցին: Միևնույն ժամանակ աջ թևի ուղղությամբ Քռասնիի և Քարաշենի ինքնապաշտպանական ջոկատները, հաղթահարելով բնական արգելքները և կանխելով հակառակորդի դիմադրությունը, շարժվում են ավտոբազայի ուղղությամբ: Հետո նրանք ուղղություն են վերցնում դեպի երեք աշտարակների բարձունքը, որտեղ ամրացած հակառակորդը լքում է դիրքերը և սկսում ճողոպրել: Հակառակորդը շարունակում էր կատաղի դիմադրել քաղաքից ոչ հեռու գտնվող ֆերմայի մոտ: Այդ մարտում զոհվում են Օլեգ Փիրումյանը, Օսիպով Գագիկը, Հովսեփ Հովսեփյանը: Առեղծվածային պայմաններում անհետանում է Ռազմիկ Թավրիզյանը, վիրավորվում են Աշոտ Թևոսյանը և Արմեն Կարապետյանը: Զոհվում է նաև Քռասնիի ջոկատից Կիմ Մարտիրոսյանը: Խճուղով Շուշի տանող կենտրոնական ճանապարհով առաջ էին շարժվում հայկական տանկերը, զրահապատները, ՀՄՄ-ները, ավտոմեքենաները: Քաղաքի մատույցներում վառվում էին երկու կողմերի տանկեր: Այդ ուղղությամբ շարժվող մարտիկները հանգստանում էին, երբ Կարմիր գյուղի կողմից երևացին թշնամու երեք ուղղաթիռներ և չկառավարվող հրթիռներ արձակեցին հայ ազատամարտիկների դիրքերի ու կուտակման վայրի վրա: Դրան հետևեց հարաբերական որոշ դադար[29]:

Վալերի Չիթչիյանի հրամանատարության տակ գտնվող ուժերը, մայիսի 8-ի վաղ առավոտյան Շուշիի հյուսիսային կողմից սկսելով ռազմական գործողությունները, սերտ համագործակցելով արևելյան և հյուսիսարևմտյան ուղղություններով գործող ուժերի հետ, պետք է հասնեին քաղաքի ծայրամաս և այն հսկողության տակ առնեին: Ստեփանակերտ-Շուշի մայրուղով մեկ տանկի և երկու ՀՄՄ-1-ի աջակցությամբ հարձակման էր անցել Գագիկ Սարգսյանի գլխավորած չորրորդ վաշտը: Կրկժանի կողմից Ալիկ Հայրապետյանի ՀՄՄ-2-ը կրակի տակ էր առել երեք

[28] Հարությունյան Մ., *նշվ. աշխ., էջ 105:*
[29] *Նույն տեղում, էջ 107:*

աշտարակների բարձունքը: Ձախ կողմից գրոհում էին Արթուր Պողոսյանի և Սամվել Կարապետյանի, իսկ աջ կողմից Կարեն Մարտիրոսյանի և Վահան Ղարիբյանի դասակները: Չորրորդ վաշտը կարողացավ գրավել երեք աշտարակների գագաթը, որը կարևոր նշանակություն ունեցավ ռազմական գործողությունների հետագա ելքի համար: Ավտոբազայի մոտերքում կեռմանի ետևից անակնկալ դուրս գալով՝ հակառակորդի մի տանկ խփեց հայոց առաջագնա տանկին: Նրա անձնակազմից փրկվեց Գագիկ Ավշարյանը, իսկ Շահեն Սարգսյանն ու Աշոտ Ավանեսյանը զոհվեցին: Ասես մի այահ թուլացավ մարտական թափը: Չորրորդ վաշտը, միանալով գրոհող մյուս ստորաբաժանումներին, շարունակեց առաջխաղացումը: Այդ ուղղությամբ ևս հակառակորդը դիմում է փախուստի: Կարեն Ներսիսյանի գլխավորած վեցերորդ վաշտը, գրավելով շրջարդմիավորման պահեստների տարածքը և երաժշտական գործիքների գործարանի ուղղությամբ ձգվող բարձունքը, դադարեցրեց երեք աշտարակների բարձունքի և շրջարդմիավորման պահեստների նկատմամբ վերահսկողության հաստատումը[30]: Այդ ուղղությամբ մարտնչած Հովսեփ Հովսեփյանը պատմում է, որ իրենց ջոկատը պետք է Շուշի մտներ Կրկժանի և Ղայբալուի կողմից: Նրանց հետ էր նաև Ստեփանակերտի 6-րդ գումարտակը: Ջոկատը բաղկացած էր 13 հոգուց: Հետախուզական ջոկատը ճանապարհի կեսից հետ էր դարձել: Հակառակորդը հայ ազատամարտիկներին այդ կողմից չէր սպասում՝ ժայռը համարելով անառիկ: Նախատեսված օգնությունը 40 րոպեի փոխարեն հասավ վեց ժամ հետո: Ջոկատից երվանդ Կարապետյանը զոհվում է, չորս ազատամարտիկ էլ վիրավորվում են: Սակայն լուսադեմին ջոկատն արդեն դուրս էր եկել ժայռի գագաթը՝ հենց Շուշիի դիմաց[31]:

Հյուսիսային ուղղությամբ գործող ուժերին հաջողվեց դուրս գալ «26»-ի ամրակետը և փակել Շուշիից Ջանհասան ձգվող ուժերի հետադարձ ճանապարհը: Այսպիսով՝ մայիսի 8-ի կեսօրվա դրությամբ Շուշիի պաշտպանությունը ճեղքվում էր նաև հյուսիսից և արևելքից: Քաղաք մտած ջոկատները կռվում էին շուկայի շրջակայքում և կենտրոնական թաղամասերում: Երեկոյան ժամը 18-ին հայ ազատամարտիկները, գրավելով քաղաքի կենտրոնը և ազերիների հսկողության տակ թողնելով միայն հարավային հատվածը, փողոցային մարտերով մոտենում են

[30] *Նույն տեղում, էջ 102:*
[31] *«Ազգ», 13.05.1992:*

Ղազանչեցոց եկեղեցուն, որը ազերիների կողմից վերածվել էր զինապահեստի: Առաջ շարժվող վաշտերը գտան հսկայական քանակությամբ զենք և զինամթերք: Բավականին արագ ականազերծեցին ականապատված ծուղակները, շնորհիվ դեռ հարձակումից առաջ կազմակերպված փայլուն հետախուզական գործողությունների: Երեկոյան թուրքերի հսկողության տակ մնում էր միայն հարավային հատվածը: Հակառակորդը շտապ նահանջում էր: Մայիսի 9-ի կեսօրին մարտերը մղվում էին հեռուստաաշտարակի մոտերքում: Կեսգիշերին ադրբեջանական ուժերը դիմեցին փախուստի: Շուշին ազատագրված էր: Քաղաքի պուրակներից քաղված առաջին գարնանային ծաղիկները բերվեցին Ստեփանակերտ և դրվեցին Արթուր Մկրտչյանի գերեզմանին[32]:

Հիմա տեսնենք, թե ինչ վիճակ էր տիրում մյուս երկու ուղղություններով:

Հարավային (Լաչինի) ուղղությամբ գործող ուժերը շարժվում էին Փոքր Քիրսի և Նաբիլար-Զարիստ ուղղություններով՝ դեպի Լիսագոր-Լաչին: Նրանց մայրուղին սկսվել էր Ավետարանոց-Աղնախ ելագծից: Նախատեսված էր նախ գրավել Քիրսի ստորոտը, վնասազերծել այնտեղ գտնվող ազերիների ռազմական հենակետը, որտեղից ռմբակոծվում էր Ստեփանակերտը և շրջակա հայկական բնակավայրերը, հետո միայն սկսել Շուշիի գրոհը: Սակայն, ինչպես նշում է Ա.Տեր-Թադևոսյանը, անսպասելի տեղացած առատ ձյան պատճառով Սամվել Բաբայանի ստորաբաժանումը չկարողացավ ժամանակին դուրս գալ նախանշված սահմանագիծը և զբաղեցնել համապատասխան դիրքերը: Բացի այդ, նրա ղեկավարած զորամասերի միջև տարաձայնություններ կային, մանավանդ դաշնակցական ջոկատների հետ: Եվ եթե չլինեին այդ հանգամանքները, ապա հնարավոր կլիներ ճիշտ կազմակերպել նախապատրաստական աշխատանքները և խուսափել մի շարք ավելորդ դժվարություններից: Իրավիճակը շտկելու

[32] *Շուշիի ազատագրումից մեկ տարի անց Սամվել Բաբայանը նշել է, թե իբր քաղաքում մարտեր տեղի չեն ունեցել, և որ այն ազատագրվել է առանց գրոհի ու անարյուն («Արցախ», 09.05.1993): Իսկ պաշտոնական Բաքուն մինչև օրս շարունակում է պնդել, թե իբր Շուշին հայերի կողմից գրավվել է պաշտպանության նախարար Ռահիմ Գաջիևի դավաճանության հետևանքով: Իրականում հայկական ուժերի հուժկու հարվածների տակ Շուշիում գտնվող հազարից ավելին ազերի ասկյարները մատնվել էին խուճապի, տարանջատվել և դարձել անկառավարելի: Ըստ էության, նրանց ավելի շատ մտահոգում էր իրենց կյանքի փրկությունը, քան թե քաղաքի պաշտպանությունը:*

և տեղում անհրաժեշտ լուծումներ տալու համար շտապ այնտեղ է ուղարկվում շտաբի պետ Ֆելիքս Գզոդյանը, որը և շտկում է վիճակը: Միայն մայիսի 7-ին՝ եղանակի մեղմացումից հետո, Լաչինի ուղղությամբ շարժվող Վալերի Բալայանի և Ժիրայր Սեֆիլյանի ստորաբաժանումները կարողանում են դուրս գալ նախատեսված դիրքերը և նպաստել ընդհանուր հարձակման հաջողությանը:

Հաղթահարելով բազում դժվարություններ՝ հայկական ուժերին հաջողվում է գրավել Զարիսլուի բարձունքները և կրակի տակ առնել Շուշիից Լաչին հակառակորդի նահանջի ճանապարհը: Այդ մարտերում հակառակորդը կորցրեց երեք տասնյակ սպանված, մեկ «գրադ» կայանք, մեկ տանկ, 4 ՀՄՄ-1, մեկ քարշակ, մեծ քանակությամբ ՄՄ-21-ի հրթիռներ, երեք «Իգլա» տիպի հրթիռ և այլն[33]: Տումի գյուղի ինքնապաշտպանական ջոկատը և «Քիրս» խումբը, կրակի տակ առնելով Մուսուլմանլար գյուղը, կանխեցին Քիրսի ճակատում յուրայիններին օգնության հասնելու հակառակորդի փորձերը: Լեռնային մարտերում հայ ինքնապաշտպանական ուժերը ցուցաբերեցին անասելի խիզախություն և կուտակեցին մարտական փորձ, որը հետո օգտագործվեց այլ ռազմաճակատներում:

Հարավային ուղղությամբ գործող ուժերի Շուշի-Լաչին մայրուղի դուրս գալուն նպաստեցին մանավանդ Քարին տակում կենտրոնացված ստորաբաժանումները, որոնց հիմնական խնդիրն էր փակել Լաչին-Լիսագորից Շուշիին օգնության եկող թշնամական ուժերի ճանապարհը: Նրանք, տիրելով Կարմիր քար կոչված բարձունքին, Նաբիլարի մոտ դուրս եկան Շուշի-Լաչին ճանապարհը և փակեցին այն: Մայիսի 9-ի առավոտյան Քարին տակի ուժերը ազատագրեցին նաև Տիգկանց քերծը, դուրս եկան մայրուղի: Շուշիից ճողոպրող հակառակորդը ստիպված էր շրջանցել մայրուղին և պահեստային ճանապարհով՝ Սահակաղբյուր կոչված տեղամասով, հեռանալ դեպի Լիսագոր-Լաչին: Ժիրայր Սեֆիլյանի և Վալերի Բալայանի, ինչպես և Բերդաձորի ջոկատները պետք է շրջապատեին Զարիսլուն, գրավեին Լիսագորի ռազմավարական բարձունքը և այդ հատվածում փակեին Լաչին-Շուշի մայրուղին: Սակայն նրանք, հասնելով Զարիսլուի բարձունքներին, չգարգացրին գործողությունները և միայն խուճապ պատճառեցին հակառակորդին: Այսպիսով՝ Հարավային (Լաչինի) ուղղությամբ գործող ուժերը կարողացան հակառա-

[33] Հարությունյան Մ., *նշվ. աշխ., էջ 109:*

կորդին շեղել Շուշիի ճակատից, բազմապատկել նրա խուճապը՝ զրկելով Զարիսլուում ուժերը վերախմբավորելու և հարձակման անցնելու հնարավորությունից: Ասենք նաև, որ այդ ուղղությամբ գործող որոշ զորամասեր, շեղվելով հիմնական խնդրից, շտապեցին Շուշի՝ ապրելու այն գրավելու բերկրանքը:

Հյուսիսարևմտյան ուղղությամբ գործող Սեյրան Օհանյանի գլխավորած ուժերը պետք է վերացնեին Զանհասանի և Քյոսալարի կրակակետերը ու օգնեին Շուշիի ազատագրմանը: Այդ ուղղությամբ հակառակորդի կուտակած ուժերի թվաքանակը և բարդ տեղանքը նրան առավելություն էին տալիս: Դա նկատի ունենալով՝ ԻՊՈՒ շտաբն այդ ուղղությամբ կենտրոնացրեց մարտունակ և շարժուն ստորաբաժանումներ: Շուշիի ազատագրման պլանի համաձայն՝ հյուսիսարևմտյան ուղղությամբ հարձակումը պետք է ընթանար երկու ենթաուղղություններով, և շեղելով հակառակորդի ուշադրությունը՝ ճնշեին Կարագյավ ու Զանհասան գյուղերի կրակակետերը: Այդ կարևոր խնդիրը պետք է լուծեին Բաղարա և Բալլուջա գյուղերի ինքնապաշտպանական ստորաբաժանումները, «Կումայրի», «Հրանտ» և «Վաչո» հետախուզական խմբերը: Զանհասանից Քյոսալար տանող ճանապարհի ուղղությամբ շարժվում էր նաև «Արաբո» ջոկատը: Հակառակորդը, հայ մարտիկների սրընթաց ու հանկարծահաս գրոհից խուճապահար, նահանջում էր: Հայ ազատամարտիկները, ամրանալով թշնամու բնագծերում, կասեցրին հակառակորդի հակահարձակումը և կազմակերպված նահանջը: Մայիսի 8-ին՝ ժամը 10-ի կողմերը, հյուսիսարևմտյան ուղղությամբ արդեն գրավվել էին թշնամու բոլոր կրակակետերը: Զանհասանում եղած ազերի զինվորներն ու սակավաթիվ բնակիչները փախել էին Քյոսալար: Նրանց հետապնդումը վրիպում էր և ունեցավ ողբերգական հետևանք, քանի որ հակառակորդի հետևակը, Քյոսալարի կողմից հարձակման անցնելով, տանկերի և զրահամեքենաների կատաղի կրակի օգնությամբ շրջափակման մեջ առավ «Կումայրի» ջոկատը: Հայ քաջերը հերոսաբար դիմադրեցին՝ տալով 12 զոհ:

Հակառակորդը, Շուշիից օժանդակ ուժեր ստանալով, կրկնեց հարձակումը Զանհասանի ուղղությամբ: Նոր զոհերից խուսափելու համար Ս.Օհանյանը նահանջի հրաման տվեց: Ա.Տեր-Թադևոսյանի հրամանով՝ նրան օգնության շտապեց Յու.Հովհաննիսյանի պահեստային ստորաբաժանումը, որը փրկեց իրավիճակը: Գյումրիի երկրապահ ջոկատի մարտիկներ Մանուկ Հարությունյանը և Արշակ Մարտիրոսյանը նշում են, որ իրենց ջոկատն առաջադրանք ուներ ոչնչացնել Զանհասանում տեղակայված «գրադ» կայանքը: Նրանց ջոկատի դեմ եղած թշնամու տանկն ու զրահամեքենան փակում են ճանապարհը: Ջոկատը, հայտնվելով շրջապատման մեջ, կարողանում է խլել հակառակորդի մեկ զրահամեքենա և մեկ տանկ[34]: Հրազդանի երկրապահ ջոկատի հրամանատար Սասուն Միքայելյանը պատմում է, որ 63 հոգուց բաղկացած իրենց ջոկատը հանձնարարություն ուներ փակել Շուշիից Քյոսալար տանող ճանապարհը: Նրանց հետ էր նաև Ստեփանակերտի 8-րդ զորաջոկատը: Հայ քաջերը 6 ժամ շարունակ մարտեր են մղում, մինչև կարողանում են գրավել Շուշին Քյոսալարից բաժանող բարձունքը[35]: Մայիսի 8-ի կեսօրին հակառակորդը գրոհում է տանկերով: Զոհվում է ստեփանակերտցի Ալբերտ Ներսիսյանը, վիրավորվում են Սասուն Միքայելյանը և Սամվել Պետրոսյանը:

Հակառակորդի փորձերը՝ Զանհասանի մոտ շրջապատել հայ ազատամարտիկներին, անհաջող են անցնում: Փոխարենը հենց իրենք են ընկնում շրջափակման մեջ: Մարտում զոհվում են Վազգեն Սարգսյանը, Արմեն Պետրոսյանը, մահացու վիրավորվում է Վասակ Բարսեղյանը: Ի վերջո հայ մարտիկներին հաջողվում է փակել հակառակորդի նահանջի ճանապարհը դեպի Շուշի և Զանհասան-Քյոսալարը կտրել Շուշիից: Սակայն հակառակորդը շարունակում էր դիմադրել: Հայ մարտիկները մտնում են Զանհասան: Նրանք, Կարագյավի ուղղությամբ զարգացնելով ճնշումը, հակառակորդին զրկում են Շուշիից օգնություն ստանալու հույսից: Մայիսի 9-ի առավոտյան հայ քաջերը մտան Քյոսալար: Հակառակորդը ճողոպրեց դեպի Լաչին: Ստեփանակերտը, ի վերջո, ծերբազատվեց թշնամու վտանգավոր կրակակետերից:

1992թ. մայիսի 8-ի երեկոյան, երբ դեռ Շուշիում չէին լռել կրակոցները, Վազգեն Սարգսյանը հայտարարեց. «Այն, ինչ կատարվում է Արցախում, հրաշք է... Արցախը պաշտպանում է իրեն, բայց կար անավարտության զգացում: Իսկ քանի Շուշին կար, Արցախում ապրել անհնար էր: Ամեն օր տասնյակ խաղաղ բնակիչներ էին սպանվում: Հեքիաթ աղբյուրի գլխին կախված հրեշ էր Շուշին: Կամ պիտի Արցախը կուլ գնար, կամ ոչնչացներ նրան... մեր ժողովրդի մի հատվածն այստեղ՝ Արցախում, կենաց և մահու

[34] *«Ազգ», 13.05.1992: «Երկիր», 09.05.1992:*
[35] *Նույն տեղում:*

կռիվ է տալիս, և մենք այստեղ անտարբեր մնալու բարոյական իրավունք չունենք... Պատերազմն առաջին հերթին ոգու պայքար է: Այսօր մեր ոգին կռվում է: Մեր ոգին այսօր հաղթում է»[36]:

Շուշիի ազատագրումով և հակառակորդի մյուս կրակակետերի լռեցումով Ստեփանակերտը և հարևան բնակավայրերը շունչ առան: Երկու օրում թշնամու դիմադրությունը կոտրվեց: Այդ հերոսական մարտերում խիզախությամբ աչքի ընկան ԼՂՀ ԻՊՈՒ-ի տասնյակ վաշտեր, հետախուզական և այլ ստորաբաժանումներ, հարյուրավոր ազատամարտիկներ: Հակառակորդը տվեց 300 զոհ, 600-700 վիրավոր, 13 գերի: Թշնամուց առգրավվեց կամ խփվեց մոտ 10 միավոր զրահատեխնիկա, տասնյակ միավոր այլ փոխադրամիջոցներ, «գրադի» հարյուրավոր հրթիռներ ու արկեր, մի քանի միավոր հրետանի և այլ զենք ու զինամթերք:

Շուշին ազատագրելու համար հայկական կողմը տվել է մոտ 70 (կամ 57) զոհ, 120 վիրավոր: «Շուշիի ազատագրման համար» մեդալով սկզբում պարգևատրվել են 696 հոգի[37]:

Շուշիի ազատագրումից հետո ռազմական գործողություններն ընդունեցին ԼՂՀ-ի և Ադրբեջանի միջև սահմանային պատերազմի բնույթ, իսկ ԼՂՀ անկախությունը դարձավ ամբողջական և անշրջելի: Շուշիի ռազմական գործողություններն առաջին լուրջ մարտական մկրտությունն էին ԼՂՀ ԻՊՈՒ-ի համար և իրենց արժանի տեղը գտան հայ ազգային–ազատագրական պայքարի պատմության տարեգրությունում: Շուշիի ազատագրումը բարձրացրեց մեր ժողովրդի մարտական ոգին և բարոյահոգեբանական հարված հասցրեց թշնամուն, որը հետո չկարողացավ ազատվել պարտվողի հոգեբանությունից:

Շուշիի ազատագրումը դեռ լիակատար հաղթանակ չէր, քանի որ Գորիս տանող ճանապարհը բացելու համար մարտեր

[36] *«Երկիր», 09.05.1992:*

[37] *«Ազատ Արցախ», 09.05.1992: «Հայաստանի Հանրապետություն», 09.05.1992:* Հարությունյան Մ., *նշվ. աշխ., էջ 124:* Բալայան Զ., *Դրախտ և դժոխք, Եր., 1995, էջ 152 և այլն: Դեպքերին ականատես Զորի Բալայանը գրել է, որ հենց այդ ժամանակ, երբ դեռևս Շուշիի շրջակայքում ավտոմատային կրակոցներ էին լսվում, հաղթողները համագարկ էին տալիս, քաղաքում բռնկված հրդեհը իր գործն էր անում: Հիմնականում վառվում էին զինանոցները, որոնք գտնվում էին մասնավոր տներում և միլիցիայի նկուղներում: Ըստ ԼՂՀ ԳԽ կազմած ցուցակի՝ Շուշիի ազատագրմանը մասնակցել է 775 հոգի (ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, ց. 1, գ. 15, թ. 8-28): «Շուշիի ազատագրման համար» մեդալով պարգևատրվածների թիվը հետագայում անցել է 1000-ից:*

էին պահանջում: Հակառակորդը, մայիսի 12-ին լայնածավալ գործողություններ սկսելով Շահումյանի և Մարտակերտի շրջաններում, փորձեց շեղել հայ ինքնապաշտպանական ուժերի ուշադրությունը: Օդուժով անընդհատ ռմբակոծում էին Ասկերանի շրջանի Շոշ, Քռասնի, Մարտունու շրջանի Ավդուռ, Սյուրիշեն, Նորշեն և այլ գյուղեր: Հայ ազատամարտիկները, Աշան և Նորշեն գյուղերի կողմից հարձակվելով Աղդամի շրջանի Գյուլափլու գյուղի ուղղությամբ, հակառակորդին ստիպեցին վերադառնալ ելման կետ: Թշնամին Աղդամի կողմից մայիսի 10-ին հարձակվեց Նախիջևանիկ, Աղբուլաղ, Դահրազ, Փրջամալ և Վարազաբուն գյուղերի ուղղությամբ, սակայն հանդիպելով ուժեղ դիմադրության՝ ետ դարձան: Ազերիները քայլեր ձեռնարկեցին նաև Ֆիզուլու կողմից՝ փորձելով ճեղքել Տողի պաշտպանությունը, սակայն հանդիպելով հայ ազատամարտիկների համառ դիմադրությանը՝ հետ նահանջեցին:

ԼՂՀ Գերագույն խորհուրդը 1992թ. մայիսի 11-ին դիմում հղեց հանրապետության բնակչությանը, որտեղ նշված է. «Արցախի ազատագրական պայքարը թևակոխում է իր բախտորոշ փուլը: Ադրբեջանի կառավարությունը վիժեցնում է Ղարաբաղի հիմնահարցը խաղաղ ճանապարհով լուծելու մեր բոլոր ջանքերը: Մենք ետ չենք կանգնի մեր ընտրած ուղուց: Ազատությունը գերադասում ենք կյանքից, որովհետև չենք դատապարտվել հավերժական ստրկության: Սակայն դեռ վաղ է վերջնական հաղթանակ ակնկալել»: Այնուհետև ասված է, որ «մեզ է վիճակված կերտել մեր ապագան, մեր պայքարը խարսխվում է մեր հավաքական կամքի անմնացորդ նվիրումի և կազմակերպության վրա: Վերջնական հաղթանակի հասնելու համար դառնանք միասնական ոգի և մարմին»[38]:

ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը, մայիսի 13-ին հանդես գալով նոր հայտարարությամբ, նշեց, թե 1988թ. փետրվարից սկսած՝ Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունը բռնել է հայ բնակչության բռնատեղահանման միտված հետևողական կուրս: Հակառակորդը շարունակում է ռմբակոծել հանրապետության բնակավայրերը, և հանրապետության տնտեսությանը հասցվել է ավելի քան 3,5 միլիարդ ռուբլու վնաս[39]: ԼՂՀ Գերագույն խորհուրդը հանրապետության բնակչությանը կոչ էր

[38] *«Երկիր», 12.05.1992:*

[39] *«Արցախ», 30.05.1992:*

անում միասնական ուժերով դիմադրել հակառակորդին և ի չիք դարձնել նրա նկրտումները:

1992թ. մայիսի 8-ի կեսօրին Կուբաթլուի և Լաչինի շրջաններից գնդակոծվեցին Գորիսի սահմանամերձ Կոռնիձոր, Խնածախ և Շուռնուխ գյուղերը, որի հետևանքով զոհվեցին չորս հոգի: Գնդակոծությունները շարունակվել են նաև մյուս օրերին: Հակառակորդը մայիսի 9-ին կրակ բացեց Կապանի շրջանի Ճակատեն, Գեղանուշ և Այունիք գյուղերի վրա: Մայիսի 10-ին գնդակոծվեցին Դավիթ Բեկ, Եղվարդ և այլ գյուղեր ու Կապան քաղաքը: Հայկական սահմանապահների գործողություններով լռեցվեցին Աղբենդ, Ղազանչի և Սեյիդլար գյուղերի կրակակետերը: Մայիսի 9-ի երեկոյան Սիսիանում հարկադրաբար վայրէջք կատարեց Գորիս-Երևան ուղերթի «ՅԱԿ-40» ինքնաթիռը, որը հարձակման էր ենթարկվել ադրբեջանական «ՍՈՒ-25» կործանիչի կողմից: Ինքնաթիռը պայթել է, երբ անձնակազմը և 26 ուղևորները դուրս էին եկել ու բավականաչափ հեռացել: Մայիսի լույս 10-ի գիշերը «գրադից» գնդակոծվել է Իջևանի Վազաշեն և Կիրանց գյուղերը, զոհվել են 3 և վիրավորվել 13 հոգի: Մայիսի 10-ին գնդակոծվել են Տավուշի շրջանի համարյա բոլոր գյուղերը, որի հետևանքով կային զոհեր և ավերածություններ: Գնդակոծությունները շարունակվել են նաև հաջորդ օրերին[40]:

Ինչպես նշվեց, մայիսի 8-ից մարտերը չէին դադարում Արցախի սահմանների ամբողջ երկարությամբ: Բաքուն հաղորդեց, թե հայերը նվաճել են 50 հազար բնակիչ ունեցող Շուշին և ամբողջ բնակչությանը ոչնչացրել: Նաև հաղորդվեց, թե իբր հայերը քաղաքը գրավել են ազերիների դավաճանության հետևանքով: Ադրբեջանի ԳԽ նախագահի պաշտոնակատար Յա.Մամեդովը մայիսի 11-ին հանրապետության հեռուստատեսությամբ հայտարարեց, թե Շուշիում դավաճանություն է եղել, և դավաճանները չեն խուսափի պատասխանատվությունից: Նա իր ազգակիցներին վստահեցնում էր, թե մոտ ժամանակներս Շուշին կրկին կդառնա ադրբեջանական[41]: Մինչդեռ իրականում ոչ մի դավաճանություն էլ տեղի չէր ունեցել, պարզապես ազերիները չկարողացան դիմանալ հայ ինքնապաշտպանների ճնշմանը և, իրենց պարտված զգալով, ճողոպրել էին Շուշիից:

ԼՂՀ ԻՊՈՒ-ի առաջ խնդիր դրվեց մի քանի օրվա ընթացքում բացել կենսական հույժ կարևորություն ունեցող Շուշի-

[40] *«Հայք», N19, 13-19.05.1992:*
[41] *"Бакинский рабочий", 12.05.1992.*

Լաչին-Գորիս ճանապարհը, որը հնարավորություն կտար ապահովել հանրապետության բնակչության նորմալ կենսագործունեությունը: Հայ ազատամարտիկները մայիսի 15-ին ազատագրեցին Լիսագորը, իսկ մայիսի 17-ին՝ Բերդաձորի ենթաշրջանը, որը հայաթափվել էր մեկ տարի առաջ: Արդեն բաց էր Լաչին մտնելու ճանապարհը:

Շուշիի ազատագրմանը և Շուշի-Լաչին-Գորիս ճանապարհի բացմանը մեծապես նպաստել են նաև Գորիսի շրջանում տեղակայված ուժերը: «Դնեպր» հրետանային միավորման հրամանատար Դ.Բաղդասարյանը գրում է, որ մայիսի 7-ի առավոտյան մարտական վիճակի էր բերվել ամբողջ հրետանին: Այդ նույն օրը՝ ժամը 9-ին, ռադիոյով դիմելով Լաչինի կայազորի գինվորներին և քաղաքում մնացած խաղաղ բնակչությանը, հայկական կողմը պահանջել է խնայել իրենց կյանքը և արագ հեռանալ քաղաքից: Այնուհետև հուժկու կրակ է բացվել Լաչինի ուղղությամբ: Լաչինցիները հեռանում են Ղուբաթլու տանող ճանապարհով: Մայիսի լույս 9-ի գիշերը Լաչինն ամբողջովին դատարկվել էր: Մնում էր, որ հայ մարտիկներն արագ մտնեին այնտեղ: Դ.Բաղդասարյանը գեներալ Գ.Դարիբալթյանին ուղարկում է ռադիոգիր. «Լաչինը և ամբողջ միջանցքն ազատ են ազերիներից, բնակչությունն ու զորքը հեռացել են, ձեզ ոչ մի դիմադրություն չի սպասում, առանց հապաղելու առաջ շարժվեք, հակառակորդը կարող է ուշքի գալ և վերադառնալ: «Դնեպր»[42]»:

Ղարաբաղյան ուժերն առաջ շարժվելով մայիսի 18-ին մտնում են Լաչին, ապա դուրս գալիս Հայաստանի Հանրապետության սահմանը: Այսպիսով՝ երեք տարի պահանջվեց Արցախի շրջափակման օղակը զենքի ուժով ճեղքելու համար:

Բացվեց կյանքի ճանապարհը, և Արցախը ընդմիշտ կապվեց մայր Հայաստանի հետ:

[42] Բաղդասարյան Դ., *նշվ. աշխ., էջ 110-122:*

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒՑ ՄԻՆՉԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ (1992 ՄԱՅԻՍ–1994 ՄԱՅԻՍ)

1. 1992թ. ԴԱԺԱՆ ԱՄՌԱՆԸ

Շուշիի և Լաչինի ազատագրումից հետո, ԼՂՀ պաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանի բնորոշմամբ, «մի տեսակ տիրում էր տոնական տրամադրություն, շատերը գտնում էին, որ իրենց բաժին կռիվը արել-վերջացրել են, այն պետք է շարունակեն նորերը, զորակոչիկները»[1]: Հակառակորդը, օգտվելով դրանից, ծավալեց զանգվածային հարձակում՝ Շահումյանի շրջանից մինչև Հադրութ: ԼՂՀ ԳԽ նախագահությունը, մայիսի 11-ին դիմելով հանրապետության բնակչությանը, նշել է, որ Արցախի ազատագրական պայքարը թևակոխում է իր բախտորոշ փուլը, ռազմական գործողությունները ծավալվում են աննախընթաց չափով: Նախագահությունը հանրապետության բնակչությանը զգուշացնում էր, որ հակառակորդի նկատմամբ տարած հաղթանակները չպետք է մեզ գլխապտույտի հասցնեն: Դեռ վաղ է վերջնական հաղթանակ ակնկալել: Հակառակորդը պատրաստ է առավելագույն զոհողության գնով իր խաբված ժողովրդի մոտ ձեռք բերել քանիցս չարդարացված քաղաքական այցեթուղթ: Դիմումի վերջում ասված է. «Մեզ է վիճակված կերտել մեր ապագան, վերականգնել ավերված շենքերն ու քաղաքները, պաշտպանել հայրենի տունը: Մեր պայքարը խարսխվում է մեր հավաքական կամքի, անմնացորդ նվիրումի և կազմակերպվածության վրա», հետևապես բոլորս դառնանք մի միասնական ոգի ու մարմին[1]: Իսկ մայիսի 13-ի ընդունած հայտարարության մեջ նշված է, որ ադրբեջանական օմոնականների և ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի աջակցությամբ Արցախի և Շահումյանի գյուղերի բնակիչների տեղահանումը ուղեկցվում էր խաղաղ բնակիչների սպանություններով, թալանով և դիակապտությամբ: Նաև նշված է, որ Արցախում և նրա հարևանությամբ գտնվող ադրբեջանական բնակավայրերը ծառայեցվել են իբրև կրակակետեր, որոնց

[1] ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, գ. 1, գ. 3, թ. 9-10:

նետած արկերի հետևանքով տվել ենք հարյուրավոր զոհեր ու վիրավորներ, ոչնչացվել են մեծ թվով շինություններ, հանրապետության բնակչությանը կանգնեցրել են սովի և համաճարակի սպառնալիքի առաջ: Հիմա էլ շարունակվում են հայկական գյուղերի զանգվածային գնդակոծումները՝ այս անգամ կիրառելով նաև մարտական ուղղաթիռներ և ինքնաթիռներ[2]: Արցախահայությունը չէր կարող թույլ տալ, որ Ստեփանակերտը փոշիանար: Շուշին, օգտագործելով իր բնական հարմար դիրքը, չորս կողմը մահ և ավերածություններ էր սփռում: Ինչպես տեսանք, գորդյան այդ հանգույցը լուծելու համար Արցախից պահանջվեց գերմարդկային ուժերի լարում: Ժամանակակիցը արդարացիորեն գրել է. «Պատմությունը մեր ձեռքին դրեց սուր, որպեսզի լուծենք այն, որպեսզի կարողանանք ապացուցել մեր գոյատևման իրավունքը, ապացուցենք, որ մենք արժանի ժառանգներն ենք մեր նախնիների»[3]:

Չորս տարի շարունակ Արցախը գտնվում էր շրջափակման մեջ: Համարյա չէին աշխատում արդյունաբերական ձեռնարկությունները, և գյուղատնտեսությունը հայտնվել էր քայքայման եզրին: 1991թ. աշնանացան արտերից հավաքվել էր 61 հազար տոննա հացահատիկ, իսկ մարզի պահանջը տարեկան կազմում էր 130-150 հազար տոննա: Շրջափակումի ճեղքումից և Ստեփանակերտ-Գորիս ճանապարհի բացումից հետո Հայաստանը օգնության ձեռք էր մեկնում Արցախին: ԼՂՀ գյուղատնտեսության և պարենամթերքների նախարարի պաշտոնակատար Արմո Ծատուրյանի բերած տվյալներով՝ 1992թ. մայիսի երկրորդ կեսին Արցախը Հայաստանից ստացել էր 300 տոննա ալյուր, Ջավախքից՝ 80 տոննա կարտոֆիլ: Որպեսզի հնարավոր լիներ կազմակերպել 1992թ. բերքահավաքը, ԼՂՀ կառավարությունը Հայաստանի Հանրապետության արդյունաբերության նախարարությունից խնդրել էր պատրաստել և ուղարկել 16 հազար մանգաղ, 5 հազար գերանդի, 2 հազար եղան: Այո՛, գործի դրվեցին պապենական ավանդական գործիքները: Դեռևս մարտին Հայաստանից ստացվել էր հինգ տոննա բանջարանոցային կուլտուրաների սերմեր, որոնք վաճառվել էին կոլտնտեսություններին և անհատ մարդկանց: Քանի որ հանրապետությունում ձգձգվում էր ԳԽ-ի կողմից հողի մասին օրենքի ընդունումը, ԼՂՀ նախարարների խորհրդի

[2] Նույն տեղում, թ. 11-12: Տես նաև «Արցախ», 30.15.1992:
[1] «Արցախ», 30.05.1992:

հատուկ կարգադրությամբ պարտավորեցվել էր քաղաքային, շրջանային, ավանային և գյուղական խորհուրդներին ու գյուղատնտեսական ձեռնարկություններին հողի ռացիոնալ օգտագործման նպատակով քաղաքացիներին և աշխատանքային կոլեկտիվներին հողամասեր հատկացնել քաղաքների մերձակայքում և ավաններում[4]:

Հանրապետությունում առանձնապես ծանր էր անասնապահության վիճակը: Թուրք-ազերիներն արցախցիներից գողացել էին մոտ 12 հազար գլուխ անասուն: Անասունների զգալի կորուստ էր տրվել նաև կերի պակասության պատճառով: Անասնագլխաքանակի կորուստը վերականգնելու համար տարիներ էին պետք: Գյուղերից կաթ և ձու չէին կարողանում քաղաք բերել վառելիք չլինելու պատճառով[5]:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը ստիպված էր մայիսի 19-ին քննարկել հանրապետության տարածքից որոշ արտադրատեսակների արտահանումը ժամանակավորապես արգելելու հետ կապված հարցը և ընդունել որոշում, ըստ որի՝ արգելվում էր ԼՂՀ-ից մեկնող քաղաքացիներին թույլատրվող նորմերից ավելի պարենային մթերքներ և ժողովրդական սպառման ապրանքներ դուրս բերել: Այդ որոշումը բխում էր պատերազմող Արցախի շահերից[6]: Այդ նույն նիստում հաստատվում է նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին ուղղված դիմումի տեքստը, որտեղ խնդրվում էր «հավաստել ԼՂՀ-ի նկատմամբ Ադրբեջանի Հանրապետության կողմից ագրեսիայի ակտի առկայությունը և ագրեսորի դեմ կիրառել ՄԱԿ-ի կանոնադրությամբ նախատեսված հատուկ միջոցառումներ»[7]:

Շուշին ազատագրվելուց հետո վերականգնվում էր Ստեփանակերտի բնականոն կյանքը: Վերսկսվում էին կրթական հաստատությունների պարապմունքները, որոնք հրետակոծության հետևանքով դադարեցվել էին տարվա սկզբին: Մայիսի 20-ին Հայաստանից ԼՂՀ հասավ սննդամթերքներով, շինանյութով, վառելիքով բարձված հարյուրից ավելի ավտոմեքենաներից բաղկացած շարասյուն: Այդ օրը Ստեփանակերտում տոնական տրամադրություն էր: Արցախ էին հասցրվել բավականին վառելիք,

[4] *Նույն տեղում:*
[5] *Նույն տեղում:*
[6] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, գ.1, գ. 3, թ. 18:*
[7] *Նույն տեղում, թ. 28-29:*

սննդամթերք և ժողովրդատնտեսական այլ ապրանքներ: Օգնություններ էին գալիս Գորիսից, Սիսիանից, Արտաշատից, Երևանից, Աբովյանից և այլ քաղաքներից, հարյուրավոր հիմնարկ-ձեռնարկություններից, «Գթություն» բարեգործական միությունից, «Արցախ» հայրենակցականից: Այդ օրերին «Վարանդա» հայրենակցական ընկերությունը Արցախի Մարտունու շրջան ուղարկեց չորս միլիոն ռուբլու արժողությամբ պաշտպանական միջոցներ, սննդամթերք և վառելիք[8]: Արցախին օգնության ձեռք էին մեկնում նաև սփյուռքահայությունը և միջազգային մի շարք կազմակերպություններ: Մայիսի 26-ին Ստեփանակերտ է ժամանում ՄԱԿ-ի պատվիրակությունը Ֆրանչեսկո Վենդրելի գլխավորությամբ, որը, ԼՂՀ իշխանությունների հետ քննարկելով Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման ուղիները, միևնույն ժամանակ նպատակ ուներ ուսումնասիրել Արցախում տիրող կացությունը և այդ մասին զեկուցել ՄԱԿ-ին, որպեսզի որոշվի երկրամասին ցույց տրվելիք օգնության ձևերն ու չափը[9]: Հինգ ամիս էր, ինչ Արցախը զրկված էր էլեկտրականությունից, կանգնած էին արտադրական ձեռնարկությունները, չէին աշխատում ջրմուղ կայանքները: Լաչինը ազատագրվելուց հետո անմիջապես սկսվեց Ստեփանակերտ-Լաչին-Գորիս էլեկտրագծի նորոգումը, որն ավարտվեց հունիսի առաջին օրերին և Ստեփանակերտ հասավ 110 կիլովատ հզորությամբ էլեկտրական հոսանքը: Նախատեսվել էր Մարտակերտի շրջանի վերին տարածքն ապահովել Սարսանգի էներգիայով:

Հայաստանի օգնությունը դարձել էր անփոխարինելի: ԼՂՀ վարչապետ Օլեգ Եսայանը մայիսի 28-ին նշեց, որ արդեն Հայաստանից եկել են շուրջ 120 մեքենաներ, որոնք բերել են ալյուր, վառելիք, տարբեր սննդամթերքներ: Գորիսի շրջանից ուղարկվել էր 130 ծանրոց դեղորայք, ծխախոտ, Արցախ էր հասել 140 տոննա ցեմենտ: Նաև նշեց, որ Հայաստանի կառավարությունը Լեռնային Ղարաբաղին տրամադրել է 20 միլիոն ռուբլի բյուջետային վարկ, որի մի մասը կանխիկ դրամով: Իսկ ԼՂՀ-ն իր հերթին 18 բեռնատար մեքենա սեփական արտադրանք ուղարկեց Հայաստան[10]:

[8] *Աբրահամյան Հ.*, Երբ հայրենիքը վտանգի մեջ է, էջ 46-47:
[9] *«Արցախ», 30.05.1992:*
[10] *«Հայաստանի Հանրապետություն», 28.05.1992:*

1992թ. մայիս-հունիսին Արցախում խիստ բարդացել էր քաղաքական դրությունը[11]: Բանն այն էր, որ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ինչպես և ՀՀՇ-ական պարագլուխները դեմ էին, որ Արցախում ՀՅԴ-ն որոշ հեղինակություն ունենար: Արթուր Մկրտչյանի մահից հետո նախագահության պաշտոնը վարում էր նույնպես դաշնակցության անդամ Գեորգի Պետրոսյանը: 1992թ. մայիսից Արցախում հանդես էին եկել նոր գործոններ՝ քաղաքական իշխանության ամրապնդում և մարտերում ձևավորված ղարաբաղյան բանակի հզորացում: Հայաստանի ՀՀՇ-ական իշխանությունների համար Ղարաբաղի ամրապնդումը կարևոր նշանակություն ուներ ամենից առաջ իրենց դիրքերն այնտեղ ուժեղացնելու համար: Իսկ դա պահանջում էր ամրապնդել հսկողությունը ԼՂՀ-ի վրա: 1992թ. ապրիլի 20-ին Հայաստանում բացվել էր ԼՂՀ ներկայացուցչություն: Դա ԼՂՀ ղեկավարությանը հնարավորություն տվեց երկրամասը պաշտպանել «Հայաստանի ներքաղաքական պայքարի ազդեցությունից և փաստորեն վերացրել էր քաղաքական շահարկումների գլխավոր լծակներից մեկը՝ Լեռնային Ղարաբաղի անանուն ձայնը»[12]: ԼՂՀ իշխանությունները Հայաստանին առաջարկել էին ինքնուրույն լուծել սեփական խնդիրները և ինքնուրույն կայացնել որոշումներ: Սակայն ՀՀՇ-ական իշխանությունը չէր ցանկանում զրկվել ազդեցիկ գործոն հանդիսացող Լեռնային Ղարաբաղի ձայնից: Ըստ Լ.Տեր-Պետրոսյանի՝ Ղարաբաղը միշտ պետք է կանգնած լիներ իր կողքին, և Հայաստանի ազգային խորհրդի արցախցի պատգամավորները պետք է պաշտպանեին իր տեսակետը: Պարզապես, Հայաստանի ղեկավարության կոնկրետ քաղաքականության հետևանքով ԼՂՀ-ում ձևավորվել էր «դիկտատուրայի» համակարգ: Պատերազմական սարսափի տակ արցախցիները ստիպված էին անձնատուր լինել Հայաստանի հիշական իշխանության ճնշմանը: Հանդես էին գալիս նոր դեմքեր, որոնց մոտ վեր էր բարձրանում անձնական իշխանությունը և ՀՀՇ-ականների օրինակով ճնշումներ գործադրում ժողովրդի վրա: Անկասկած, նման դեմքերը

[11] *Այդ օրերին Արցախում ստեղծված քաղաքական վիճակի մասին խոսել է Վլադիմիր Հարությունյանը «ԼՂՀ ԳԽ 1992 թ. հունիսյան նստաշրջանի գաղտնիքները» վերտառությամբ հոդվածում (""Голос Армении", 19, 21 և 23.06.2001):*

[12] *"Голос Армении", 21.06.1992.*

արժանանում էին ՀՀՇ-ական իշխանությունների հովանավորությանը:

1992թ. հունիսի 2-ից մինչև 6-ը Ստեփանակերտի Վ.Փափազյանի անվան թատրոնի դահլիճում տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ առաջին գումարման առաջին նստաշրջանը, որին մասնակցում էին ՀՀ ԳԽ պատվիրակությունը (Բաբկեն Արարքցյան, Վազգեն Սարգսյան, Սեյրան Բաղդասարյան և Բագրատ Ասատրյան), Հայաստանի մի շարք քաղաքական կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, հյուրեր և հրավիրյալներ: Ժողովրդական պատգամավորներին և հրավիրվածներին ողջունեցին ՀՀ ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանը և Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխոսնակ Քերոլայն Քոքսը: ԼՂՀ ԳԽ-ի այդ նստաշրջանում հատուկ տեղ գրավեց Լևոն Տեր-Պետրոսյանի և Դաշնակցության միջև բորբոքվող հակամարտությունը: Այդ ժամանակ, ինչպես ակնարկվել է, Լեռնային Ղարաբաղում Դաշնակցությունն ուներ մի շարք ազդեցիկ դիրքեր թե՛ ղեկավարության շրջանում և թե՛ բանակում: 1992թ. հունվարից սկսած՝ այդ երկու քաղաքական ուժերից յուրաքանչյուրը ձգտում էր ավելի մեծացնել իր ազդեցության ոլորտը: 1992թ. մայիսից ԼՂՀ-ի վրա ավելի էր ուժեղացել հիշական ղեկավարության վերահսկողությունը: Լ.Տեր-Պետրոսյանը ձգտում էր Արցախի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանի օգնությամբ պահպանել հավասարակշռությունը արցախյան բանակում: Այդ ժամանակ զգալիորեն բարձրացել էր Ա.Տեր-Թադևոսյանի հեղինակությունը, ինչը, սակայն, ՀՀՇ-ականների սրտովը չէր: Նրանք աշխատանքներ էին տանում Կոմանդոսին մեկուսացնելու համար: Նման հրամանատարի անձի վարկաբեկումը Լ.Տեր-Պետրոսյանի ՀՀՇ-ական իշխանությունների համար օրվա հարց էր: Դրանում նրանց աջակցում էին արցախյան բանակի որոշ ղեկավարներ: Դա արդեն միանգամայն ակնհայտ դարձավ ԼՂՀ ԳԽ-ի հունիսյան նստաշրջանում: Հակասություններ ի հայտ էին եկել նաև ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանի և Արկադի Տեր-Թադևոսյանի միջև:

ԼՂՀ ԳԽ ժողովրդական պատգամավորների պահանջով որոշվեց նախ դռնփակ նիստում լսել ՀՀ ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանի ու ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի ելույթները ՀՀ և ԼՂՀ փոխհարաբերությունների ու ռազմական դրության մասին: Նրանց ելույթներից միանգամայն հստակ էր, որ Հայաստանի համար նպատակահարմար էր ԼՂՀ

ԳԽ նախագահ ընտրել ՀՀՇ-ական: Մինչ այդ հարցի քննարկումը նստաշրջանը քննարկեց հանրապետության զինանշանի, դրոշի և օրհներգի հարցերը: Ընդունվեց ԼՂՀ դրոշը, որի հեղինակը ԱՄՆ-ում ապրող պարսկահայ հայտնի դիզայներ Վահե Ֆաթահյանն էր: Դրոշն իրենից ներկայացնում է Հայաստանն ու Արցախը խորհրդանշող եռագույնի տարանջատված, բայց իրար միանալու միտված մեծ ու փոքր մասերը:

Հունիսի 3-ի առավոտյան վերսկսված նիստը քննարկեց ԼՂՀ ԳԽ նախագահի թափուր պաշտոնի համար ընտրության հարցը, որը և դարձավ հակասությունների բացահայտ դրսևորման հիմնական օղակը: Նախագահի պաշտոնի համար առաջադրվել էին թեկնածուներ Գեորգի Պետրոսյանը, Ռոբերտ Քոչարյանը, Լեոնարդ Պետրոսյանը և Վագիֆ Գալստյանը: Վերջին երկուսն ինքնաբացարկ հայտարարեցին: Մնացել էին դաշնակցական և ՀՀՇ-ի աջակցությանը արժանացած մյուս թեկնածուները: Ըստ որում, Գեորգի Պետրոսյանի օգտին քվեարկեցին 30, իսկ Ռոբերտ Քոչարյանի օգտին 23 պատգամավորներ[13]: Ձայների նման վիճակով հնարավոր չէր որոշել հաղթողին: Այժմ խոսենք ըստ նստաշրջանի արձանագրության: Քվեարկության արդյունքները հաղորդելուց հետո ողջույնի խոսքով հանդես են գալիս Բ. Արարքցյանը և Վ. Սարգսյանը: Բաբկեն Արարքցյանը նշում է, որ Արցախը պետք է դուրս գա տնտեսական և քաղաքական շրջափակումներից և աշխարհին ապացուցի, որ կունենա իր պետականությունը, իր ինքնուրույնությունը: Հայաստանը իր ամբողջ ուժերը կներդնի բոլոր խնդիրները լուծելու համար, ըստ որում՝ Հայաստանն ու Արցախը պետք է գտնեն համագործակցված միջոցառումներ և միասին ներկայանան աշխարհին: Այս առումով ԼՂՀ ԳԽ-ի առաջ դրված են լուրջ խնդիրներ: Դրանք մի ամբողջ շարք համալիր խնդիրներ են թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական առումով[14]: Վազգեն Սարգսյանը նշում է, որ Հայաստանն ու Արցախը նույն ժողովուրդն են, անում են նույն գործը, պայքարում են միասին: Այն, ինչ կատարվում է Արցախում, հրաշք է: Իմացեք, Հայաստանի պաշտպանության նախարարությունը երբեք տարբերություն չի դրել, և Արցախը միշտ էլ դիտվել է որպես Հայաստանի մի մասը: Արցախի համար կռվել են ամբողջ Հայաստանի ժողովուրդը, այն էլ պետական մա-

[13] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, ց. 4, գ. 1, թ. 20:*
[14] *Նույն տեղում, թ. 46-47:*

կարդակով: Արցախ է ուղարկվել 1400 տոննա զինամթերք՝ 3 միլիոն ռուբլու արժողությամբ: Շուշիի օպերացիան մանրամասն մշակվել է պաշտպանության նախարարության շտաբում, եղել են լրացումներ: Մենք դա պիտի անեինք և պարտավոր էինք անել: Հաղթանակի գործում առանձնապես մեծ է Արցախի զինվորների ներդրումը: Ոչ ոք մեզ չի կարող հաղթել, եթե մենք չպառակտվենք: Պայքարը մտնում է նոր փուլ, և պետք է որակական նոր փոփոխություններ մտցնել: Հիշենք. 7 հազար հոգուց բաղկացած բանակը պահելու համար անհրաժեշտ է ունենալ 1 միլիարդ 507 միլիոն ռուբլի[15]:

Բաբկեն Արարքցյանը, կրկին ելույթ ունենալով, նշում է, որ բոլորիս միասնական լինելու հարցին հաճախակի է անդրադառնում ՀՀ ԳԽ նախագահությունը: Հարցը բազմակողմանի է: Այն ավելի մանրամասն կվերլուծվի, երբ ԼՂՀ ղեկավարությունը հնարավորություն կունենա հանդիպելու ՀՀ ԳԽ նախագահության հետ: Այն կարծիքը, որ հիմա պիտի հայտնեմ, Հայաստանի իշխանությունների կարծիքն է: Այսօր հիմնական հարցը, որ դրվում է, հետևյալն է. Հայաստանի իշխանությունները ինչպիսին են տեսնում Արցախի և Հայաստանի ապագան: Բարդ հարց է, բայց պետք է պատասխան գտնել:

Առաջին հերթին Արցախը պետք է դառնա ամեն տեսակետից ապահովված, և, ամենակարևորը, Արցախի բնակչության անվտանգության համար պետք է լինեն երաշխիքներ: Այդ հարցը դարձել է ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի քննարկման առարկա: Արցախի և Հայաստանի միջև ստեղծված միջանցքը ամեն գնով պետք է պահպանվի: Դա հնարավոր է միայն միջազգային ուժերն օգտագործելով: Կա երկու սկզբունք՝ պատերազմ թե խաղաղություն: Քանի որ միջազգային իրավիճակը մեզ համար բարենպաստ չէ, մանավանդ որ Թուրքիան ամեն կերպ օգնում է Ադրբեջանին, ուստի պետք է փորձել դուրս գալ այդ վիճակից և պահպանել ձեռք բերված բոլոր նվաճումները: Այդ հարցում Արցախի հետ պետք է տանենք համաձայնեցված աշխատանք: Եթե չլիներ Հայաստանի կողմից այդքան զենքի տեղափոխումը, ի՞նչ կլիներ վիճակը: Հնարավոր է, Հայաստանը լինի այնպիսի իրավիճակում, որ չկարողանա օգնել Արցախին: Հետևապես պետք է այնպիսի քաղաքականություն վարել, որը չստեղծի անբարենպաստ պայմաններ: Պատերազմը դեռ ավարտված չէ, ամենադժվարը առջևում է:

[15] *Նույն տեղում, թ. 50-51:*

Թե՛ Հայաստանում և թե՛ Արցախում այդ առթիվ պետք է լուրջ քննարկումներ լինեն, և ճշգրտվեն մոտեցումները[16]:

Այնուհետև ճառով հանդես եկավ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը: Նա, խոսելով արցախահայության ձեռք բերած հաջողությունների մասին, նշեց, որ մեր ժողովրդի տիտանական աշխատանքի լուսապսակը դարձավ Ադրբեջանի ղեկավարության կողմից Արցախը շրջափակման օղակում խեղդելու քառամյա քաղաքականության ձախողումը: Նա հայտարարեց, որ Արցախի կամավորական ուժերը վնասազերծել են ադրբեջանական բանակի ավելի քան 40 ռազմակայաններ, և որ տարածաշրջանում այսօր Արցախը իրենից ներկայացնում է ոչ միայն քաղաքական, այլև ռազմական ուժ: Նա նաև նշեց, որ ստեղծված ծանր պայմանների հետևանքով Ստեփանակերտից հեռացել է բնակչության մի մասը: Ապա խոսեց հանրապետության դիվանագիտական կապերի, մանավանդ Հայաստանի հետ ունեցած քաղաքական, տնտեսական և ռազմական կապերի մասին, որտեղ ԼՂՀ-ի մշտական ներկայացուցչությունը բավականին մեծ աշխատանք է կատարում: Խոսելով Ադրբեջանի հետ ունեցած հարաբերությունների մասին՝ շեշտեց, որ այդ պետության հետ կարող ենք խոսել միայն հավասարի իրավունքով: Ցավ հայտնեց, որ հանրապետությունում գարնանացան չի կատարվել, չեն աշխատում արդյունաբերական ձեռնարկությունները, ապրանքների գների խիստ տարբերություններ կան ԼՂՀ-ում և Հայաստանում: Պետություն կառուցելու համար ԼՂՀ-ում դեռևս պետք է ընդունվեն շատ օրենքներ, ամրապնդվի բանակը: Այդ ամենում պետք է ելնել տնտեսավարման համաշխարհային փորձից, շուկայական տնտեսությունից և հողի նկատմամբ մասնավոր սեփականության հաստատումից: Հողը հարկավոր է վերադարձնել ժողովրդին[17]:

Հունիսի 3-ի նիստում Բ. Արարքցյանը, երրորդ անգամ ելույթ ունենալով, խոսում է Հայաստանի իշխանությունների հետ Արթուր Մկրտչյանի վարած բանակցությունների մասին և կոչ է անում այդ ձեռնարկումը շարունակել ու բոլոր հարցերը քննարկել միասին, անգամ այն հարցերը, երբ ընդհանուր հայտարարի չենք եկել: Կարևորը համագործակցելն է: Սա բոլորիս կարծիքն է: Հույս է հայտնում, որ խորհրդարանը կընդունի ճիշտ որոշումներ[18]:

Նստաշրջանը նաև անդրադառնում է ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի հրամանատար Ա. Տեր Թադևոսյանի գրավոր հայտարարությանը: Այն մեջ ենք բերում ազատ թարգմանությամբ. Մարդիկ են զոհվում, ցորենն են գողանում, ո՞ւմ է հուզում սա: Այս չորս օրում մոռացել ենք, թե աշխարհում ինչ է կատարվում: Հարկավոր է արգելել կուսակցական խմբավորումները: Ես հասկանում եմ, թե այստեղ հիմա ինչ է կատարվում. լիովին նորմալ քաղաքական պայքար է: Բայց պիտի պատկերացնեք ձեր բոլոր ասածների հետևանքները: Ինչո՞ւ մենք՝ զինվորականներս, պետք է լուծենք ձեր հիմնական հարցերը: Մեզ զինվորական հեղաշրջում չի սպառնում: Բանակն առայժմ կառավարելի է, բայց ձեր գործողությունները նյարդայնացնում են նրանց: Դաշնակները այստեղ են բերել բանակ: Ո՞վ է այդ իրավունքը տվել նրանց: Ես հարգում եմ այդ կուսակցությանը, սակայն չի կարելի այդ կուսակցության անունից խառնաշփոթություն սարքել: Խնդրում եմ ընդհատել նստաշրջանը և անցկացնել ընտրություններ: Հետո էլ՝ հիմա զորքերի կուտակում է նկատվում սահմաններում: Մեզ հարկավոր է լրջորեն վերաբերվել այս ամենին[19]:

Կոմանդոսն, ըստ էության, իր հայտարարության մեջ բացահայտ խոսեց ՀՅԴ գործունեության դեմ: Նա Գ.Պետրոսյանին մեղադրեց այն բանում, որ վերջինս իր գործունեությամբ իբր խանգարում է ինքնապաշտպանության ուժերի հրամանատարության աշխատանքներին: Ոմանք այն կարծիքին են, որ Կոմանդոսի այդ հայտարարությունը կաթվածահար է արել նստաշրջանի աշխատանքը և պառակտում մտցրել Գերագույն խորհրդի ու զինված ուժերի հարաբերություններում: Այն ժամանակ, ինչպես հետո հեղինակիս բացատրել է Ա.Տեր-Թադևոսյանը, նա չէր հասկանում, որ իր այդ քայլով օժանդակել է Լ.Տեր-Պետրոսյանի ՀՀՇ-ական իշխանությանը:

Տեղի ունեցած ընտրությունների երկրորդ փուլում երկու թեկնածուներից էլ ոչ մեկը անհրաժեշտ քանակությամբ ձայներ չհավաքեց: Որոշվեց ԳԽ նախագահի ընտրությանը վերադառնալ հուլիսի վերջին՝ խորհրդարանի պատգամավորական թափուր տեղերի կրկնական ընտրությունների անցկացումից երկու շա-

[16] *Նույն տեղում, p. 54-60:*
[17] *Նույն տեղում, p. 61-65:*
[18] *Նույն տեղում, p. 67-68:*
[19] *Նույն տեղում, p. 104:*

բաք հետո: Այդ դժվարին ժամանակ ԼՂՀ ԳԽ նախագահ չընտրելը մեծ բաց էր: Այդ երևույթը արցախցիներն ընդունեցին բացասաբար[20]: Գեորգի Պետրոսյանը մնաց նախագահի պաշտոնակատար, սակայն ինքնապաշտպանական ուժերի հրամանատարության շրջանում խորանում էր անվստահությունը: ՀՅԴ ներկայացուցիչները պահանջում էին նստաշրջանի աշխատանքները շարունակել մինչև հաղթական ավարտ: Սակայն մերժվեց նրանց պահանջը[21]:

Այս ամենը, անկասկած, իր բացասական հետևանքը թողեց Արցախի ազգային-ազատագրական պայքարի և նրա քաղաքական հոգեբանության վրա: Հակառակորդը չէր կարող այդ ամենը չտեսնել և չօգտվել դրանից: Այդ ժամանակ Ադրբեջանի ժողովրդական ճակատը հանրապետության իշխանություններին թելադրում էր իր կամքը: Նրանք բնակչությանը կոչ էին անում համախմբվել հայության դեմ: Հանրահավաքներում հայության դեմ հնչում էին ստոր կոչեր և անբարոյական հայտարարություններ: Ժողճակատի կոչով արագորեն կազմավորվում էին նոր զորամասեր և ուղարկվում Ղարաբաղյան ռազմաճակատ: Նույնիսկ «Թուրքիա ձեռնարկած է լայնածիր եւ եռուն քաղաքական գործունեութեան՝ ի նպաստ Ազրպէյճանի, առանց թաքնուելու: Պաքուի մէջ կոչ եղած է եւ կամաւորներ կ'արձանագրուին, որոնք պիտի դրկուին Լաչին եւ այլուր»[22]:

1992թ. մայիսի 18-ին հրաժարվեց Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Յա. Մամեդովը: Նրան փոխարինեց ԱժԵ-ի փոխնախագահ Իսա Գամբարը: Հունիսի 5-ին Բաքվի հեռուստատեսությամբ հանդես գալով՝ նախագահի թեկնածուներ Յա.Մամեդովը, Ն.Սուլեյմանովը, Ա.Իսմայիլովը և Ա.Էլչիբեյը ինչեր ասես, որ չէին խոստանում Ադրբեջանի ժողովրդին: Բոլորն էլ նույնն էին ասում՝ Ղարաբաղը մաքրել հայերից: Հունիսի 7-ին տեղի ունեցած նախագահական ընտրություններում հաղթանակ տարավ ընդդիմադիր ժողովրդական ճակատի ղեկավար Ա.Էլչիբեյը: Այդ ժամանակ Թուրքիան, որն ամեն կերպ օժանդակում էր Ադրբեջանին, փորձում էր Ղարաբաղի հարցում ճնշում գործադրել Հայաստանի վրա, սակայն ԱՊՀ բանակի գլխավոր հրամանատար Եվգենի Շապոշնիկովը, հանդես գալով հայտարարությամբ, շեշտեց, որ Լեռնային Ղարաբաղի հարցում արտաքին միջամտությունը կարող է դառնալ համաշխարհային նոր պատերազմի պատճառ: Նա կոչ արեց բոլոր երկրներին, նախ և առաջ Ռուսաստանին, Թուրքիային և ԱՄՆ-ին, հրաժարվել նման հայտարարություններից:

Շուշիի և Լաչինի անկումից հետո հակառակորդն իր ուժերը կենտրոնացրեց Շահումյանի, Մարտակերտի և Մարտունու ուղղությամբ: «Երկիր-երկիր» հրթիռներով ավերում էին Կարաչինարն ու Մանաշիդը: Մայիսի 26-ին կրակի տակ էր վերցվել Մարտունին, իսկ 27-ին՝ Մարտակերտը: Հունիսի 1-ից հարձակման թիրախ էր դարձել Հադրութի շրջանի մի շարք գյուղեր: Հակառակորդի նպատակն էր հայ պաշտպանների ուշադրությունը շեղել Շահումյանը և Մարտակերտը պաշտպանելուց: Հունիսի 13-ի լուսաբացին Ադրբեջանի զորամիավորումները հարձակման անցան Շահումյանի շրջանի բնակավայրերի վրա: Չէին լռում «գրադի» հրթիռները: Կեսօրին տանկերը շարժվում են Բուզլուխի, Ղարաչինարի, Հայ Պարիսի ուղղությամբ: Յուրաքանչյուր բնակավայրի վրա գրոհում էին 12-16 միավոր զրահատեխնիկա: Բուզլուխի պաշտպանները ստիպված էին անտառով դուրս գալ Վերինշեն: Ավերվում են Հայ Պարիսը, Կարաչինարը, Խրխափոտը, Նորշենը, Ռուս Պարիսը: Հակառակորդը երկու օրում գրավում է 11 գյուղ և հունիսի 14-ի գիշերը մտնում Շահումյան: «Երգնկա», «Արաբո», «Մեծն Տիգրանի», Բաղրամյանի, Հոկտեմբերյանի, Գյուլիստանի, Վերինշենի, Կարոտի, Հակոբի և այլ ջոկատներ ու խմբեր ստիպված էին նահանջել՝ մեծ վնաս հասցնելով հակառակորդ ուժերին[23]: Միայն հունիսի 12-ին թուրք-ազերիները ԼՂՀ-ի վրա նետել էին 500 միավոր ռազմական տեխնիկա, այդ թվում 200 տանկ, 10 ինքնաթիռ, 20 հազար ականյար: Շահումյանում զոհվեց մոտ 500 մարդ, որոնցից 50 կին ու երեխա տրորվել էին տանկերի թրթուրների տակ: Շուրջ 14 հազար մարդ, որոնցից չորս հազարը՝ երեխա, կուտակվել էին Գյուլիստանում: Պաշտպանության խմբերի հրամանատար Շահեն Մեղրյանը 200 ավտոմատավորներով ապահովում էր բնակչության ելքը Գյուլիստանից, որոնք անտառներով ու լեռնային կածաններով շարժվում էին դեպի Հաթերք, Տոնաշեն և Ուռեկան: Հակառակորդը հունիսի 16-ին ճեղքում է հայկական պաշտպանությունը և գրավում Չայ-

[20] *Арутюнян В. Б.*, часть IV, с. 144.
[21] *"Голос Армении"*, 23.06.2001.
[22] *Պալեան Յ. Արցախի ազատագրական պայքարը՝ պրիսմակէս դիտուած, Փարիզ, 2001, էջ 336:*

[23] *«Երկիր», 01.10.1994:*

լուն և Ուռեկանը: Թշնամու առաջխաղացումը մեծ դժվարությամբ կանգնեցվում է հունիսի 20-ին: Սակայն հուլիսի 3-ին Քարավաճառից անցնելով հարձակման՝ թուրք-ազերիները շարժվում են դեպի Չափար և Գետավան: Այդ նույն երեկոյան Գյուլիստանից ճեղքելով պաշտպանության գիծը՝ ազերիների մեկ ուրիշ զորամիավորում հարձակվում է Հաթերքի վրա, և հայ գաղթականների 10-հազարանոց խումբը ընկնում է շրջափակման մեջ: Մինչև կեսգիշեր հակառակորդը գրավում է Հաթերքը և Թարթառի ամբողջ ձախ ափը: Գաղթականները և տեղի գյուղերի բնակչությունը մի կերպ փրկվում են: Հայ ազատամարտիկները շատ թույլ էին զինված: Օրինակ՝ Մանաշիդը պաշտպանող «Արաբո» ջոկատը ուներ ընդամենը մեկ նռնականետ ու մեկ հետևակի մեքենա, մինչդեռ նրա դեմ հակառակորդը ուներ յոթ տանկ: Կարաչինարում ընդամենը մեկ տանկ կար, մինչդեռ այդտեղ հայ պաշտպանների դեմ նետվել էր 12-ը: Բուզլուխի 15 պաշտպանների վրա հարձակվել էին շուրջ 500 ասկյար: Շահումյանում հայերի դեմ նետվել էին չորրորդ բանակի առանձին ստորաբաժանումներ: Այնուամենայնիվ, Հայաստանից խոստացած օգնությունը չստացվեց[24] :

Մարտակերտի օղակը սեղմվում էր: Քաղաքի դեմ նետվել էր 70 միավոր զրահամեքենա: Մինչ այդ Վլադիմիր Բալայանը և Լեոնիդ Ազգալդյանը հսկայական աշխատանք էին տարել քաղաքն ու գյուղերը պաշտպանելու համար: Ազերիները, ռուսական նախկին չորրորդ բանակի զորամասերի աջակցությամբ, Շահումյանի շրջանի ինքնապաշտպանների դիմադրությունը կոտրելուց հետո շտապում էին որքան հնարավոր է արագ գրավել Մարտակերտն ու շրջանի մյուս գյուղերը:

Հակառակորդը հույսը դրել էր մարդկանց և զենքի թվաքանակի գերակշռության վրա: 1992թ. հունիսի տվյալներով՝ Ադրբեջանը Ռուսաստանի Դաշնությունից ստացել էր 137 տանկ, 300-ից ավելի հետևակի մեքենա, 170-ից ավելի հրանոթային համակարգ, 130-ից ավելի ականանետ, 33 «գրադ» կայանք (ԲՄ-21), տասնյակ «Մի-24» ռազմական ուղղաթիռներ, «ՍՈՒ-24» ճակատային ռմբակոծիչներ, հետախուզական ՄԻԳ-եր, տասնյակ հազարավոր ինքնաձիգ, 2000 գնդացիր, ԱՊՀ-ի նախկին 4-րդ բանակի բոլոր պահեստները, թիկունքային կառույցներ, Կասպից նավատորմի հրանոթների 30 տոկոսը: 1992թ. հունիսի վերջին

[24] *Նույն տեղում:*

Հայաստանին և Ադրբեջանին հանձնված սպառազինությունների հարաբերությունը կազմում էր 1 : 5: Նույն թվականի ամռան վերջին Հայաստանը ոչ մի ինքնաթիռ չուներ, մինչդեռ Ադրբեջանն ուներ տասնյակ ինքնաթիռներ: Ադրբեջանը փորձում էր Լեռնային Ղարաբաղին ճնշել զենքի ուժով: Կասպիական նավատորմիդի նավերից հանված ծովային թնդանոթներից Միրբաշիրի կողմից մայիսի 25-ից սկսեցին ռմբակոծել Մարտակերտի շրջանի Թալիշ և Չլդրանի հարևան գյուղերը: Ուժերը կենտրոնացնելով արևելյան և հարավարևելյան հատվածներով շուրջ 120 կմ երկարությամբ՝ հակառակորդն անցել էր հարձակման, որին մասնակցում էին 150 միավոր զրահատեխնիկա և մի քանի հազար հետևազոր: Գլխավոր հարվածներն ուղղված էին Ասկերանի, Կիչան-Քոլատակի, Չլդրանի և Շահումյանի շրջանի հյուսիս-արևելյան հատվածի դեմ: Կան տվյալներ, որ այդ օրերին հակառակորդն օգտագործել է քիմիական զենք և թունավոր նյութերով ավիառումբեր[25]: Հակառակորդի ձեռնարկած մարտական գործողությունների բնույթը վկայում է, որ նրանք վաղօրոք էին պլանավորել և նախապատրաստվել այդ գործողություններին: Չնայած Արցախի ինքնապաշտպանական ուժերը փորձեցին դիմակայել թշնամուն, սակայն ուժերը չբավականացան: Շատ ազատամարտիկներ մինչև վերջին շունչը դիրքերում կռվեցին և զոհվեցին հերոսաբար: Գյուղերը դատարկվում էին հակառակորդի ճնշման տակ: Բոլորը՝ կին թե տղամարդ, մանուկ թե ծեր, հիվանդ ու հաշմանդամ, հեռանում էին հայրենի օջախներից: Տագնապը խորացավ, երբ երևացին «ՍՈՒ-25» կործանիչները: Մարդիկ գերմարդկային ճիգերով օգնում էին միմյանց, կիսում վերջին կտոր հացը: Եղան և մարդիկ, որոնք չկարողացան կտրվել պապենական հողից և հարազատ օջախներից: Շահեն Մեղրյանի գլխավորած ինքնապաշտպանության մի մարտական ջոկատ չհեռացավ շրջանի տարածքից, և պայքարը շարունակվեց պարտիզանական եղանակով[26]: «Շահումյանի անկումից հետո,– բացատրում է Վազգեն Սարգսյանը,– քաղաքական հակասությունները, քաղաքական տարաձայնությունները լցվեցին խրամատներ: Եվ երբ բոլորը բոլորին մեղադրեցին դավաճանության

[25] *«Արցախ», 15.06.1992.*

[26] *Շահումյանի շրջանը հակառակորդի կողմից գրավելու մասին տես Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, գոյության պայքար, Երևան, 1993, էջ 82-85:*

մեջ, Շահումյանը վաճառելու մեջ, խրամատներում նստած զինվորները սկսեցին իրենք ևս այդ մասին մտածել: Իրականում Շահումյանը ոչ ոք չէր վաճառել»: Հետո բացատրում է, թե ինչու Շահումյանում տեղի ունեցավ այդ ողբերգությունը: Պարզապես, երբ Հայաստանի և Արցախի իշխանությունները զբաղված էին Հռոմ գնալու կամ չգնալու հարցով, Ադրբեջանը կենտրոնացրեց իր ողջ ուժերը և հակահարված տվեց: «Շահումյանում,– շարունակում է նա,– հարվածը շատ կտրուկ էր, անսպասելի: Շահումյանում մեր դեմ կռվեցին, ավա՜ղ, դարձյալ ռուսական տանկերը: Այնտեղ կուտակված տեխնիկան մի գիշերվա ընթացքում ծավալվեց, ծավալվեց մեծ թափով, ռազմական բոլոր օրենքներով, և կարողացան Շահումյանում հասնել հաջողության: Ցավոք սրտի, մենք չկարողացանք Գյուլիստանում պաշտպանություն կազմակերպել, միակ բանը, որ այնտեղ կարելի էր անել և չարվեց, որն ամենամեծ սխալն էր: Դրանից հետո գործեց խուճապը»[27]: Վազգեն Սարգսյանը նաև նշել է, որ Շահումյանի անկումից հետո ոգին ընկավ նաև Արցախում, կռվող ուժերի մեջ խուճապ մտավ: Նույնիսկ եղան դեպքեր, երբ կռվող ուժերից շատերը լքեցին խրամատները և հեռացան՝ պատճառաբանելով, թե Արցախի խնդիրն արդեն լուծված է, իրենք այստեղ անելու էլ ոչինչ չունեն[28]:

Շահումյանում տեղի ունեցած իրադարձությունները վիճաբանության հարց դարձան Հայաստանի քաղաքական շրջաններում: ՀՀ ԳԽ պատգամավոր Խաչիկ Սաֆարյանը, որը նոր էր վերադարձել ԼՂՀ-ից, հունիսի 19-ին հանդես գալով «Լրաբեր» հեռուստաձրագրով, փորձեց Շահումյանում տեղի ունեցած ողբերգությունը բարդել Շահումյանի ինքնապաշտպանության ուժերի հրամանատար, ՀՅԴ անդամ Շահեն Մեղրյանի վրա: Վերջինս այդ առթիվ տված հարցազրույցում ասաց. «Ես հայրենիք եմ կորցրել: Եվ ոչ թե այն պատճառով, որ վատ եմ կռվել, այլ այն պատճառով, որ մեզ վրա եկած ուժերը... ուղղակի երևակայության մեջ չի կարող տեղավորվել... Հարվածն այնքան լավ էր նախապատրաստված, այնքան հուժկու էր, որ երբ պաշտպանության առաջին գիծը Հայ Պարիս տեղամասում տեղի տվեց, և տանկերն արդեն մտնում էին շրջկենտրոն, հասկանո՞ւմ եք՝ ինչ կատարվեց: Կատարվեց այն, ինչից միշտ վախեցել ենք: Հետևում՝ մեր ու մանուկ, ծեր, հաշմանդամ, իսկ տանկերն արդեն մտել են... Դրությունը կփրկվեր միայն, եթե ժամանակին օգնություն գար...»[29]: Պարզվում է, որ Հայաստանից խոստացել էին 2000 հետևակ և 30 տանկ ուղարկել: Շահումյանի ինքնապաշտպանության ուժերը 12 ժամ շարունակ կռվեցին, սակայն ոչ մի օգնություն չստացան: Նոր միայն որոշում են շրջանի բնակչությանը էվակուացնել[30]:

Մեկ ամիս շարունակ Շահումյանում էր գտնվում նույնպես ՀՀ ԳԽ պատգամավոր Ռաֆիկ Ղազինյանը: Նա պատմում է, որ Շահումյանում էր գտնվում ՀՅԴ մի ջոկատ՝ Կարոտի գլխավորությամբ: Բաղրամյանի շրջանից եկած մի ջոկատ մտավ Կարոտի հրամանատարության տակ: Ապա եկավ Սարոն իր «Երգնկա» խմբով: Միայն Բուզլուխում 120 զինված տղաներ կային, բոլորն էլ ՀՅԴ անդամներ: Շահումյանում կռվում էին նաև Հակոբի ջոկատը, Պողոսի գլխավորած Գյուլիստանի ջոկատը, Նովիկի գլխավորած Վերինշենի ջոկատը, Երքեջում կռվող «Մեծն Տիգրանի» ջոկատը: ՀՅԴ Հոկտեմբերյանի ջոկատը գործում էր Մանաշիդում: Վերինշենի մյուս ջոկատը գլխավորում էր ԼՂՀ ԳԽ պատգամավոր Հակոբյանը: Պարզվում է, որ այդ բոլոր ուժերի գործողությունները արդյունավետ չէին կազմակերպվել: Ռ.Ղազինյանը նաև վկայում է, որ Շահումյանի այդ ողբերգական իրադարձություններից 15-20 օր առաջ կարող էին ազատագրել Գետաշենը, սակայն խնամքով մշակված գործողությունը խափանվել է վերևից: Ըստ նրա՝ շահումյանցիների դեմ կռվում էին «մորեգույն բերետավորները», հատուկենտ թուրքեր էին երևում: Հայ ինքնապաշտպանական ջոկատների տղաները «կռվում էին հերոսաբար՝ անգամ չունենալով որևէ հակատանկային ական: Բոլոր ջոկատներում կար մի գիտակցություն՝ որքան հնարավոր է երկար դիմադրել, որ ժողովուրդը կարողանա հեռանալ: Տղաների դիմադրության հետևանքով 400-500 «մորեգույն բերետավորներից» վերջում մնացել էին 45-50-ը»[31]:

Երբ արդեն բնակչությունը կուտակվել էր Գյուլիստանում, Շահեն Մեղրյանը կապվում է Վազգեն Սարգսյանի հետ և օգնություն խնդրում: Հրամանատարությունը գտնում էր, որ Գյուլիստանում կուտակված բնակչությունը փրկելու միակ ուղին գյուղը

[27] *Սարգսյան Վ., Ոգու փորձություն, Եր., 2000, էջ 213, 217:*
[28] Նույն տեղում, էջ 215:

[29] *«Երկիր», 20.06.1992.*
[30] *Նույն տեղում:*
[31] *Նույն տեղում.*

հանձնելն է: Բնակչության հետ հեռանում են 200 ազատամարտիկներ: Քսան կիլոմետրից ավելի բարձունքը մարդիկ հաղթահարում են 5-6 ժամում: Կանայք քայլում էին՝ տանելով երեխաներին, ծերերին: Ռադիոկապ չկար: Անտառներով հասնում են երիցմանկաց վանքը: Մաղավուզից կապվելով Մարտակերտի ինքնապաշտպանական ուժերի հետ՝ հայտնում են, որ անտառներում 2-3 հազար մարդ կա: Առավոտյան Մարտակերտից ու Մաղավուզից մեքենաներ են գալիս և բնակչությանը տեղափոխում[32]:

Մի քանի օր անց Ռաֆիկ Ղազինյանը լրացնում է իր պատմածը. Լեռնային Ղարաբաղ եկած ՀՀ Ազգային խորհրդի նախագահ Բաբկեն Արարքցյանը, փոխանակ մտահոգվելու Շահումյանի ճակատագրով, անընդհատ կրկնում էր, թե Ղարաբաղում պետք է ղեկավար ընտրվի Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը ձեռնտու մարդ, հակառակ դեպքում Հայաստանը Արցախի համար ոչինչ չի անի: Թե՛ նա և թե՛ Վահան Շիրխանյանը հասկացնել էին տալիս, որ եթե ԼՂՀ ԳԽ նախագահ չընտրվի Ռոբերտ Քոչարյանը, ապա արցախցիները թող ոգնության ոչ մի հույս չունենան: Ռ.Ղազինյանը եզրափակում է իր խոսքը. «Երևանում վարկաբեկված ՀՀՇ-ականները փորձում էին Ղարաբաղում իշխանությունը վերցնել իրենց ձեռքը: Հենց այդ նպատակին էլ զոհեցին Շահումյանը»[33]:

Մեկ ուրիշ անձ՝ Դնեպրիկ Բաղդասարյանը, որը Շահեն Մեղրյանի խնդրանքով, որպես նրա խորհրդական, յոթ ամիս գտնվել է Շահումյանի շրջանում, վկայում է, որ շրջանի բոլոր զորամիավորումների անձնակազմի իրական ընդհանուր թվաքանակը 300 մարդուց չէր գերազանցում: Ընդ որում, մինչև 1991թ. դեկտեմբերի վերջը մարտական հրաձգության զենքով զինված էին հատուկ գնդի «Մեծն Տիգրանի» մարտիկները, իսկ տեղական աշխարհազորայինները՝ հազիվ կիսով չափ: Հակատանկային և հակաօդային պաշտպանության միջոցներ ընդհանրապես գոյություն չունեին: Դ.Բաղդասարյանի ստեղծած հրետանային մարտկոցի վրա էր դրված հակառակորդի հետ շփման 30-կիլոմետրանոց սահմանագծի հսկողությունն ու պաշտպանությունը: Դ.Բաղդասարյանը, երկու օրով գալով Երևան, պաշտպանության կոմիտեի ղեկավարությանը հասկացնում է, որ Շահումյանի պաշտ-

[32] *Նույն տեղում:*
[33] *Նույն տեղում, 26.06.1992:*

պանության վիճակն ու կարգն այնպես չէ, ինչպես կարծում են: Նա առաջարկում է ուժեղացնել շրջանի ռազմական պաշտպանունակությունը և Շահեն Մեղրյանին կից ստեղծել կանոնավոր դաշտային շտաբ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության կոմիտեի կողմից գործուղված մի քանի սպաներից, իսկ զինված ուժերի անձնակազմի թվաքանակը շրջանում հասցնել առնվազն 1000 հոգու: Պարզվում է նաև, որ Շահումյանի շրջան թափանցած զինված խմբերը չէին ենթարկվում տեղական հրամանատարությանը, թափառում էին շրջանում և վնասից բացի ոչ մի օգուտ չէին տալիս: Դնեպրիկ Բաղդասարյանը բերում է այսպիսի մի օրինակ. 1992թ. սկզբին Շահումյանում հայտնվել է մի խմբավորում ՀՀՇ-ական ակտիվիստ Արայիկի գլխավորությամբ, որի տղաները ծեծել էին շրջկենտրոնի գյուղխորհրդի նախագահին նրա համար, որ նա համարձակվել էր հարցնել, թե ովքեր են նրանք և ինչ գործ ունեն շրջանում: Հետո այդ Արայիկ կոչեցյալը տղաների հետ ներխուժել էր Շահեն Մեղրյանի շտաբ, զենք շաչեցնելով աղմուկ, աղաղակ բարձրացրել, հայհոյել նրան ու բոլոր շահումյանցիներին: Անշուշտ, այդպիսիները շրջանից դուրս են վտարվել: Դնեպրիկ Բաղդասարյանը պատմում է, որ Շահումյանի պաշտպանության շտաբի պետ «բեղավոր» անունով 23-ամյա ավագ լեյտենանտ Սերգեյ Չալյանը, որը ծննդով շահումյանցի էր և Երևանից գնացել էր կամավոր, իր վրա էր վերցրել 30-կիլոմետրանոց ճակատագծի պաշտպանության կազմակերպման օպերատիվ խնդիրը, որը նրա ուժերից վեր էր: Բացի այդ, հատուկ գնդի ղեկավարությունն ու անձնակազմը լարված հարաբերությունների մեջ էին Շահեն Մեղրյանի և նրա շտաբի հետ, որը հանդիսացավ «Շահումյանի պաշտպանության փլուզման պատճառականության շղթայի օղակներից մեկը»: Հենց «Շահումյանի հատուկ գնդի զորամիավորումը 1992թ. հունիսի 12-ին առանց հրամանի, ինքնագլուխ լքել էր Կարաչինարի իր դիրքը և, գնդի հրամանատարի գլխավորությամբ, փախուստի դիմել Մարտակերտի շրջան»[34]:

Ահա այսպես. բացվում է մառախուղը, և պարզորոշ երևում է, թե ինչու հանձնվեց Շահումյանի շրջանը. կարևոր մի հանգամանք, որը և հանդիսացել է Արցախի հետագա դժբախտությունների հիմնական պատճառներից մեկը:

[34] *Բաղդասարյան Դ., նշվ. աշխ., էջ 79-91:*

* * *

Հայրենի հողը պաշտպանելու և թշնամուն ջախջախիչ հարված հասցնելու համար Արցախին հարկավոր էր ամուր բանակ, մանավանդ կոփված սպայակազմ: 1992թ. հունիսի 16-ին տեղի ունեցած ԼՂՀ ԳԽ նախագահության նիստը դիմում հղեց աշխարհի հայորդի սպաներին, կադրային զինվորականությանը, հայկական երիտասարդությանը, որը մեջ ենք բերում առանց որևէ կրճատման.

«Սիրելի՛ հայրենակիցներ, հայրենիքի վրա կախվել է արյունարբու թշնամու մահաբեր վտանգը: Վերջին օրերին Ադրբեջանի ազգային բանակը արդիական ռազմական տեխնիկայի բոլոր միջոցներով՝ աննախադեպ լայնամասշտաբ ռազմական գործողություններ է ծավալում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գրեթե ողջ սահմանների ուղղությամբ: Ունենալով զինական բացահայտ առավելություններ՝ հակառակորդն առանձին հատվածներում թափանցել է մեր տարածքը: Հայ ինքնապաշտպանական ուժերը, կասեցնելով թշնամու առաջխաղացումը, դիմում են համարձակ հակագրոհի՝ ի չիք դարձնելով հակառակորդի ժամանակավոր հաջողությունները: Արցախցին պատրաստ է մեռնել, բայց երբեք չհանձնվել թշնամուն:

Հայրենակիցնե՛ր, Արցախի պաշտպանությունը, սակայն, միայն արցախցիների գործը չէ: Այն ողջ հայ ժողովրդի սուրբ պարտքն է: Մեր ինքնապաշտպանական ուժերը զգում են տեխնիկայի և կենդանի ուժի՝ կադրային զինվորականության և սպաների կարիք: Մենք կոչ ենք անում բոլոր հայկազուններին, ովքեր ունեն ազգային հպարտություն և արյան կանչի բնական զգացում, որոնց համար սրբություն է հայրենի հողը՝ գալ Արցախ և զորավիգ լինել հայրենիքի ազատագրության նվիրական նպատակին:

Թո՛ղ հայրենասիրությունը և հաջողությունը միշտ ուղեկից լինեն մեզ»[35]:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը և նախագահի կից խորհուրդը, 1992թ. հունիսի 18-ին, իսկ պաշտպանության խորհուրդը հունիսի 19-ին հանդես գալով որոշումով ու կոչով, շահումյանցիներին ոգևորում էին ոտքի ելնել հայրենի հողը ազատագրելու և թշնամուն ոչնչացնելու համար: Մինչդեռ հակառակորդը շարժվում էր

[35] *ԼՂՀ, ՊԱ, ֆ. 254, գ. 1, գ. 3, թ. 35-36:*

առաջ՝ գրավելով Մարտակերտի շրջանի Թալիշ, Չայլու, Մատաղիս, Տոնաշեն, Լենինավան, Մարաղա, Ասկերանի շրջանի Նախիջևանիկ, Ֆրջամալ, Դահիրազ, Վարազաբուն գյուղերը: Հունիսի 16-ին և 17-ին մարտեր էին գնում Նորշեն-Մյուրիշեն-Ավդուռ գծից դեպի Ավդալ-Գյուլափլու ընկած տարածքում: Սրխավենդում հակառակորդը կրեց լուրջ կորուստներ՝ կորցնելով 400 զինվոր և 10 միավոր զրահատեխնիկա: Ասկերանի շրջանում թշնամին թողեց 100-ից ավելի դիակ, և ոչնչացվեց ութ զրահամեքենա, իսկ Չայլու-Թալիշ-Մատաղիս հատվածում՝ 60-ից ավելի զինվոր և 8 զրահատեխնիկա[36]: Հետաքրքիրն այն է, որ երբ Շուշին ու Լաչինը ազատագրվեցին, Թուրքիայից մինչև ԱՄՆ աղմուկ բարձրացրին և հայերին մեղադրեցին ագրեսիայի մեջ, իսկ երբ ամբողջ Շահումյանը օկուպացվեց, և Մարտակերտի ու Ասկերանի շրջանների տասնյակ գյուղեր վեր էին ածվել փլատակների, և մի քանի տասնյակ հազար բնակիչներ հեռացել էին իրենց օջախներից ու դարձել փախստականներ, այդ նույն տերությունները համրացել էին:

Արցախի հերոսական ուժերը հակառակորդին կանգնեցրին հունիսի 18-ին: Այդ նույն օրը ԼՂՀ ԳԽ նախագահությունը դիմում հղեց հանրապետության բնակչությանը, որտեղ ասված է. «Ադրբեջանի ազգային բանակի աննախադեպ հարձակման պատճառով հանրապետությունում ստեղծվել է ծանր իրավիճակ: Անհամեմատ գերակշիռ ռազմական տեխնիկայի և կենդանի ուժի շնորհիվ թշնամուն հաջողվել է որոշակի հաջողությունների հասնել ռազմաճակատի տարբեր հատվածներում: ԼՂՀ ինքնապաշտպանության մարտիկները հերոսաբար կռվում են ամեն մի թիզ հողի համար՝ զգալի կորուստներ պատճառելով հակառակորդին, որն արդեն 1000-ից ավելի զոհ ու վիրավորներ է տվել: Ռազմաճակատի ամբողջ երկայնքով մեկ մեր քաջորդիներին հաջողվել է կասեցնել զավթողի առաջխաղացումը և աստիճանաբար հետ մղել նրան: Միայն Մարտակերտի շրջանի վերին գոտում է թշնամին առայժմ պահում զինագրաված տարածքները:

Քույրե՛ր և եղբայրնե՛ր:

Արցախի իշխանությունները բոլոր միջոցները ձեռնարկում են հայրենի հողը հրոսակներից պաշտպանելու և ժողովրդի անվտանգությունն ապահովելու համար... Արցախի՛ տղամարդիկ, եկել է հայրենասիրությունը գործով ապացուցելու ժամը: Թշնա-

[36] *«Արցախ», 18.06.1992:*

մին, ինչպես միշտ, մեր հողում կգտնի իր մահն ու անփառունակ պարտությունը: Կենաց-մահու այդ պայքարում հաղթանակը մերը կլինի»[37]:

Այո՛, հանրապետության վիճակը շատ ծանր էր և գտնվում էր լուրջ վտանգի տակ: Ելնելով դրանից՝ ԼՂՀ ԳԽ նախագահության և նախարարների խորհրդի հունիսի 18-ի որոշմամբ ԼՂՀ տարածքում մտցվեց արտակարգ դրություն և ելնելով թշնամու կողմից հյուսիսային և հյուսիսարևելյան որոշ տարածքներ թշնամու կողմից գրավված լինելուց՝ այդ տարածքներում ծավալել զանգվածային պարտիզանական շարժում, որի մեջ ներգրավել գերազանցապես Շահումյանի և Մարտակերտի շրջանների երիտասարդությանը ու խաղաղ այլ ուժերի[38]: Նախագահությունը միևնույն ժամանակ որոշեց ընդլայնել պաշտպանության խորհրդի կազմը և նրան օժտել ԼՂՀ պետական իշխանության և կառավարման մարմինների կարգադիր ու գործադիր լիազորություններ այն ծավալով, ինչը նախատեսված է «Արտակարգ դրության մասին» օրենքի 20 և 21-րդ հոդվածներով: Այդ նույն որոշմամբ պաշտպանության խորհրդի կազմը ընդլայնվեց վեց հոգով[39]: ԼՂՀ նախարարների խորհրդի որոշմամբ՝ հունիսի 20-ին հանրապետության ամբողջ տարածքում անցկացվեց մասնակի զորահավաք՝ 18-40 տարեկան զինապարտների, իսկ սպաների՝ մինչև 50 տարեկան, հատուկ պատրաստություն ունեցող կանանց՝ 19-ից մինչև 30 տարեկան: Քաղաքացիներին արգելվեց առանց արտոնության մեկնել հանրապետությունից:

Լեռնային Ղարաբաղի սահմանի ամբողջ երկայնքով շարունակվում էին հակառակորդի սանձազերծած մարտական գործողությունները: Արցախցիները աշխարհի երկրների խորհրդարաններին և կառավարություններին, միջազգային կազմակերպություններին կոչ էին անում ազերիների ագրեսիան կանխելու, ԼՂՀ-ի բնակչությանը և բոլոր բռնագաղթվածներին մարդասիրական օգնություն ցույց տալու համար: Իր հերթին Ադրբեջանի նորընտիր նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին, ՆԱՏՕ-ի ղեկավարությանը և ԵԱՀԿ-ին նույնպես կոչ էր անում «գործուն միջոցներ ձեռնարկել» կանխելու Հայաստանի ագրեսիան Ադրբեջանի նկատմամբ, դադարեցնել ռազմական

[37] *Նույն տեղում:*
[38] ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, ց. 1, գ. 3, թ. 44-45:
[39] *Նույն տեղում, թ. 12:*

գործողությունները, որոնք իբր ուղղված էին «ադրբեջանական բնակչության ֆիզիկական ոչնչացմանը և տարածքների բռնագրավմանը»[40]:

1992թ. հունիսի 22-ին տեղի ունեցած ՀՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը քննարկեց Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված քաղաքական վիճակի հարցը: Բանն այն է, որ հունիսի 2-5-ը Հռոմում կայացել էր հունիսի 23-ին Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորմանը նվիրված Մինսկում Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդի (ԵԱՀԽ, հետագայում՝ Կոմիտե) շրջանակներում կայանալիք կոնֆերանսի ընթացքը նախապատրաստող հանդիպում[41]: Դա պայմանավորված էր նրանով, որ Ադրբեջանը պահանջել էր վերացնել միջազգային կոնֆերանսի անցկացման մասին ԵԱՀԿ-ի մարտի 24-ի որոշումը, քանի որ դրանից հետո արցախցիներն ազատագրել էին Շուշին և Լաչինը: ԼՂՀ-ն հրաժարվել էր մասնակցել այդ խորհրդակցությանը, որովհետև նա ցանկանում էր «այնպիսի իրավեր ստանալ, որն աներկմտորեն» Արցախի իշխանություններին ճանաչեր «ամբողջ բնակչության ներկայացուցիչների»[42]: Չնայած արցախցիների պահանջը միանգամայն օրինական էր, այդուհանդերձ, Հայաստանի իշխանությունները ջանքեր չէին խնայում, որ ԼՂՀ-ի պատվիրակությունը մասնակցեր Հռոմի խորհրդակցության աշխատանքներին: Նախատեսվել էր հերթական խորհրդակցությունն անցկացնել հունիսի 15–16-ին: Նոր խորհրդակցություն հրավիրելու պահանջը բխել էր նրանից, որ անհրաժեշտ էր մինչև կոնֆերանսը դիտորդներ ուղարկել տարածաշրջան: Նախապատրաստված փաստաթղթում չորս հարցերից երեքը անմիջականորեն վերաբերում էին Լեռնային Ղարաբաղին: Դա նշանակում էր, որ որևէ որոշում կարելի էր ընդունել միայն ԼՂՀ-ի իշխանությունների մասնակցությամբ և համաձայնությամբ: Դրա համար էլ Հայաստանի ներկայացուցիչը պնդել էր, որ ԼՂՀ ներկայացուցչի մասնակցությունը այդ նախապատրաստական աշխատանքներին պարտադիր է: Ասենք, որ Մինսկի կոնֆերանսի մասնակից պետությունները այն համոզմանն էին, որ հունիսի 23-ին

[40] *«Հայաստանի Հանրապետություն», 19.06.1992:*
[41] *Մինսկի խմբի անդամ պետությունները՝ Ռուսաստան, Միացյալ Նահանգներ, Ֆրանսիա, Գերմանիա, Չեխոսլովակիա, Իտալիա, Բելառուս, Շվեդիա, Հայաստան, Թուրքիա և Ադրբեջան:*
[42] *«Հայաստանի Հանրապետություն», 05.06.1992:*

անպայման տեղի կունենար Մինսկի կոնֆերանսը: Նրանք Հայաստանին պատվիրել էին ապահովել Լեռնային Ղարաբաղի մասնակցությունը հունիսի 15-ին Հռոմում կայանալիք երկրորդ հանդիպմանը: Սակայն ԼՂՀ-ն դարձյալ հրաժարվեց պատվիրակություն ուղարկել Հռոմ: Այդ հարցի լուծումը ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանից և նրա շուրջը պտտվողներից շատ ջանքեր պահանջեց, մինչև ԼՂՀ ներկայացուցիչները մեկնեցին Հռոմ: Առանց այն էլ հունիսին տեղի ունեցած ԼՂՀ ԳԽ նստաշրջանը, որը չընտրեց Լ.Տեր-Պետրոսյանին թեկնածու-նախագահ, նրան հանել էր համբերությունից: Հիմա էլ՝ Հռոմ մեկնելու հարցը: Նա շատ լավ էր հասկանում, որ Հռոմ չմեկնելու հարցում Արցախն արդարացի էր: Սակայն ի՞նչ աներ, երբ խոստացել էր անպայման ապահովել ԼՂՀ ներկայությունը: Հենց այդ առումով էլ հարցը քննվեց հունիսի 22 – 23-ը տեղի ունեցած ՀՀ ԳԽ նստաշրջանում, որի շուրջ զեկուցումով հանդես եկան ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը և ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը: Լ.Տեր-Պետրոսյանը բորբոքված հայտարարեց, թե Լեռնային Ղարաբաղի հարցը թե՛ Արցախում և թե՛ Հայաստանում իշխանության համար կուսակցությունների միջև մղված պայքարի խաղաքարտ է դարձել: Նաև նշեց, որ վերջերս Հայաստանի և Ղարաբաղի իշխանությունները չեն գործում համաձայնեցված: Գեորգի Պետրոսյանը այն միտքն արտահայտեց, որ Հայաստանը պարտավոր է հաշվի առնել արցախցիների կարծիքը: Չէ՞ որ Արցախը չի կարող գնալ մի խորհրդակցության, որին որպես լիիրավ անդամ, այն էլ վետոյի իրավունքով, պետք է մասնակցի նաև Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնքի ներկայացուցիչը: «Նման մոտեցումը չի նպաստում Արցախի հարցի քաղաքական լուծմանը»,– վերջում եզրակացրեց Արցախի ԳԽ նախագահի պաշտոնակատարը[43]:

ՀՀ ԳԽ նստաշրջանում ելույթ ունեցած ընդդիմադիր կուսակցությունների և պատգամավորական խմբերի ներկայացուցիչները արցախյան վերջին անհաջողությունների համար հիմնականում մեղադրում էին Հայաստանի իշխանություններին և պահանջում ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Մինչդեռ ՀՀՇ-ի խմբակցությունը սխալ էր համարում ստեղծված պայմաններում ԼՂՀ-ն ճանաչելը: Դրա փոխարեն գտնում էր, որ պետք է ամրացնել Արցախի պաշտպանությունը, բացի այդ,

[43] *Նույն տեղում, 23.06.1992:*

ԼՂՀ-ն իր արտաքին քաղաքական քայլերը պետք է անպայման համաձայնեցնի Հայաստանի հետ[44]: Նստաշրջանից Արցախ վերադառնալով՝ պատգամավոր Համլետ Գրիգորյանը, պատասխանելով «Արցախ» թերթի թղթակցի հարցերին, նշել է, որ նստաշրջանն ընթացել է խորհրդարանական տաք մթնոլորտում, որի հիմնական պատճառը ՀՀՇ-ի և ընդդիմադիր կողմի դիրքորոշումներն էին: Նաև նշեց, որ Լ.Տեր-Պետրոսյանի կարծիքով վերջին անհաջողությունների հիմնական պատճառները հանդիսանում են ներկուսակցական պայքարը, Հայաստանի և Արցախի իշխանությունների չփոխհամաձայնեցված գործողությունները և միջազգային գործելաբեմում ԼՂՀ-ի ղեկավարության պասիվությունը: Արցախը Հռոմ չի գնացել, որի համար մեղադրում է Լ.Տեր-Պետրոսյանը, որովհետև պաշտոնական հրավեր չի ստացել, և հետո՝ ԵԱՀԿ-ի՝ Լեռնային Ղարաբաղի գծով Մինսկյան կոնֆերանսի նախագահ Մարիո Ռաֆայելին դեռ մոսկովյան հանդիպման ժամանակ մեզ հայտնել էր, որ ԼՂՀ-ի ներկայացուցիչները և Շուշիի շրջանի, այսինքն՝ ադրբեջանական համայնքի ներկայացուցիչները օժտված են նույն կարգավիճակով, որի հետ արցախցիները չէին կարող համաձայնվել: Եվ, չնայած դրան, Արցախը սպասում էր հրավերի, բայց այդպես էլ չստացավ: Արցախցիները կողմնակից են, որ միջազգային բոլոր հավաքներին ԼՂՀ-ն մասնակցի որպես բանակցությունների ինքնուրույն լիիրավ սուբյեկտ[45]:

ՀՀ խորհրդարանի պատգամավորների քննարկման էր դրված հինգ նախագիծ, որոնք ներկայացվել էին ՀՀ ԳԽ հանձնաժողովների և խորհրդարանական խմբերի կողմից: Այդ բոլոր նախագծերը ներառվեցին մի նախագծի մեջ, որը, սակայն, չընդունվեց: Պատգամավորների կարծիքով՝ դրան գայթաքար ծառայեց հետևյալ ձևակերպումը. «Հայաստանի Հանրապետության համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում»: Որոշման ընդունումը հետաձգվեց: ԼՂՀ ԳԽ նախագահությունը, հունիսի 27-ին նամակ հղելով Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի վերաբերյալ Մինսկի կոնֆերանսի նախագահ պարոն Մարիո Ռաֆայելիին և Հռոմում կայանալիք նախապատրաստական հանդիպման

[44] *Նույն տեղում, 24.06.1992:*
[45] *Նույն տեղում, 24.06.1992:*

մասնակից երկրներին, պատմում է այն դժվարությունների մասին, որոնց առաջ կանգնած էր Ղարաբաղի Հանրապետությունը: Այդ առթիվ մայիսի 30-ին և հունիսի 4-ին ուղարկված հայտարարություններն արժանացել էին Ռաֆայելի ուշադրությանը: ԼՂՀ ԳԽ-ն բացատրում է, թե ինչու Լեռնային Ղարաբաղը պատվիրակություն չի ուղարկել Հռոմ: Պատճառներից մեկը Ադրբեջանի ագրեսիվ գործողություններն են, որոնք ուղղված են Արցախի Հանրապետության դեմ: Այն փաստաթղթում, որի տակ պետք է ստորագրի նաև Լեռնային Ղարաբաղը, նրա օրինական ընտրված իշխանությունների կարգավիճակը իջեցվում է մինչև «հայկական համայնքի ներկայացուցիչների, և հանրապետության բնակչության 90 տոկոսի ընտրած իշխանությունների ներկայացուցչությունը հավասարեցվում է ադրբեջանական համայնքի ներկայացուցչությանը, ինչը միանգամայն անընդունելի է»: Բացի այդ, Հռոմի նախնական հանդիպման գործունեության ուղղվածությունն է Լեռնային Ղարաբաղը պահել Ադրբեջանի Հանրապետության կազմում: Հենց այդ ամենի պատճառով էլ ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշում է ձեռնպահ մնալ Հռոմի խորհրդաժողովի նախնական աշխատանքին մասնակցելուց[46]: Այնուամենայնիվ, Հայաստանի իշխանությունների ճնշմամբ ԼՂՀ ԳԽ նախագահությունը ստիպված էր հուլիսի 1-ին որոշում ընդունել ԵԱՀԿ-ի շրջանակներում պատվիրակություն ուղարկել Հռոմ (Հրանտ Խաչատրյան և Բորիս Առուշանյան): Պատվիրակությունը Հռոմ մեկնեց հուլիսի 2-ին: Այնտեղ որոշում ընդունվեց ռազմական գործողությունները դադարեցնել հուլիսի 9-ից, որպեսզի հնարավոր լիներ հաջող կազմակերպել Մինսկի խորհրդաժողովի նստաշրջանը: Սակայն, ինչպես ցույց տվեց հետագա ընթացքը, Ադրբեջանը չիրագործեց այդ որոշումը, իսկ ԱՄՆ-ը հայտարարեց, թե դադարեցնում է օգնությունը Ադրբեջանին, եթե նա չհրաժարվի Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ուժ գործադրելու մեթոդներից:

1992թ. հունիսի 22–23-ին և 29-ին տեղի ունեցած ՀՀ ԳԽ նստաշրջաններում Արցախի հետ առնչվող հարցերի քննարկումն, ըստ էության, Արցախը գլխացավանք էր դարձրել ՀՀՇ-ական պարագլուխների համար, և ամեն կերպ փորձում էին Արցախից հրաժարվել նվազագույն վնասներով: Այդ քննարկումների ժամանակ բազմիցս շոշափվեց նաև Շահումյանի հարցը:

[46] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, գ. 1, գ. 3, թ. 58-59:*

Դեռևս հունիսի 15-ին ՀՀ ԳԽ-ում ունեցած իրենց ելույթում նախագահի անվտանգության գծով խորհրդական Աշոտ Մանուչարյանը և պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը հայտարարել էին, թե Շահումյանը թշնամուն էր անցել, որովհետև Ռուսաստանն Ադրբեջանին է հանձնել երկու մոտոհրաձգային դիվիզիայի ամբողջ տեխնիկան, և որ ներկայումս Շահումյանը հանձնելու մեղավորներ փնտրելու պահանջը օգուտ չի բերի[47]:

Ըստ էության Հայաստանի խորհրդարանը Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ որևէ հստակ կարծիք չուներ: Նստաշրջանում առաջարկվեցին իրարամերժ կարծիքներ: ՀՀՇ-ական կարասում քացախած Աշոտ Բլեյանը հայտարարեց, թե Ղարաբաղի հիմնահարցի լուծումը ԼՂՀ-ի կայացման կամ առավել ևս միացման ճանապարհով՝ «Հայաստանի ուժերից վեր է»: Դա, պարզապես, պարտվողական քաղաքականություն էր, որը նշանակում էր Ղարաբաղին պարտադրել Նախիջևանի ճակատագիրը: Անկասկած, Աշոտ Բլեյանը պաշտպանում էր Ադրբեջանի ժողովրդական ճակատի դիրքորոշումը՝ «մշակութային ինքնավարության» կարգավիճակով Ղարաբաղը հանձնել Ադրբեջանին: Մշակութային ինքնավարության մասին բլեյանական այդ առաջարկությունը նույնիսկ զարմանք հարուցեց սփյուռքահայության շրջանում: Հունիսի 27–28-ին Փարիզի ռադիոյի հայերեն հաղորդման մեջ ասվեց, որ Հայաստանի խորհրդարանի երեսփոխան Բլեյանի «ղարաբաղցիք պետք է գոհանան *մշակութային ինքնավարությամբ*՝ ազգպէճական լուծի տակ», և որ, ըստ Բլեյանի, «Արցախի ազատագրական պայքարը կը վտանգ է Հայաստանը եւ արգելք կըլլայ անոր զարգացման»: ՀՀՇ-ական պատգամավորները նրան չլռեցրին, որովհետև «թրքամէտ քաղաքականութիւնը ազգային-կառավարական վարքագիծ է»[48]: Մյուս ելույթ ունեցող ՀՀՇ-ականները դուրս չեկան Աշոտ Բլեյանի առաջարկության շրջանակներից: ՀՅԴ ներկայացուցիչներ Կ.Բալայանը և Ս.Ղազարյանը, անդրադառնալով Շահումյանի շրջանի ողբերգական իրադարձություններին, շեշտեցին, որ հիմքից զուրկ են պաշտոնական հավաստիացումները, թե իբր իշխանությունները ամեն ինչ արել են Շահումյանի շրջանը պաշտպանելու համար: Մինչև ոսկորները ՀՀՇ-ական էդուարդ եգորյանը Արցախահայությանը մեղադրեց, թե իբր նրանց ղեկավարությու-

[47] *«Երկիր», 16.06.1992:*
[48] *Պալեան Յ., նշվ. աշխ., էջ 349-350:*

նը չի լսում և չի ենթարկվում Հայաստանի դեկավարությանը: Նա գտնում էր, որ միակ ճիշտ քայլը կլինի կազմակերպել քաղաքական վիճակի բազմակողմանի քննարկումներ, դրանք ներկայացնել խորհրդարան, «որից հետո մտածել որոշման կամ ձեռնարկվելիք որոշակի քայլերի մասին»: Իսկ ՀՀ ԳԽ արտաքին հարաբերությունների հարցերի հանձնաժողովի նախագահ Դավիթ Վարդանյանը և ՀՅԴ ֆրակցիայի ներկայացուցիչ Գագիկ Հովհաննիսյանն իրենց ելույթներում հեգնանքի ենթարկեցին ՀՀՇ-ական դիրքորոշումը, այն ՀՀՇ-ի, որը, իշխանության գալով արցախյան պայքարի ալիքների վրա, հիմա փորձում էր թիկունքից փախչել և Արցախը հանձնել Ադրբեջանի հոշոտմանը[49]:

1992թ. հունիսին տեղի ունեցավ ոչ պակաս մի իրադարձություն ևս: Հունիսի 29-ին հեռուստատեսությամբ ելույթ ունեցավ Լևոն Տեր-Պետրոսյանը, որն, ըստ նրա մեկնաբանության, կապված էր Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծված իրադրության հետ: Անկասկած, նրա անհանգստությունն ու պատճառաբանությունը հնչում էին կեղծ և մտացածին: Իր միտքը բացատրում էր նրանով, որ Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև ընթացող պատերազմի հետևանքով Հայաստանն ու հայ ժողովուրդը հայտնվել են չափազանց ծանր վիճակում: Հայաստանի նախագահը դրանում մեղավոր էր համարում ընդդիմությանը, ավելի ճիշտ՝ նրա որոշ շարժիչ ուժերին: Եվ այդ ուժերը նա համարում էր Հայ հեղափոխական դաշնակցությունը: Հայաստանը պետք է խուսափի հարևանի հետ հնարավոր պատերազմից և պահպանի Լեռնային Ղարաբաղը: Ըստ Լ.Տեր-Պետրոսյանի՝ եթե առաջիկա մի քանի օրում Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները չմասնակցեն Հռոմի հանդիպմանը, ապա Հայաստանի և Ղարաբաղի նկատմամբ կկիրառվի համապատասխան սանկցիաներ, որը կլինի ահավոր: Եվ դրա փաստացի մեղավորը այն կուսակցությունն է, որը ներկայացնում է Գեորգի Պետրոսյանը, այն դաշնակցությունը, որը իբր չորս տարում Արցախ է ուղարկել ընդամենը 230 «Կալաշնիկով» ավտոմատ, մինչդեռ այնտեղ կռվող յոթ հազար մարտիկները զինված են ավտոմատներով և ավելի ծանր զենքերով: Երկարատև և ծանծրալի ելույթից հետո նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը առաջարկում է կասեցնել Հայ հեղափոխական դաշնակցության գործունեությունը Հայաստանում: Փակվում են դաշնակցության մամուլը, հրատարակչությունները, խլվում նրանց ունեցվածքը, և մասսայական հալածանք է սկսվում քաղաքական այդ կուսակցության դեմ: Դա կամայականություն էր, բռնարարք, որը խիստ բացասական հետևանքներ թողեց ինչպես Հայաստանի քաղաքական կյանքի, այնպես էլ Արցախի ազգային-ազատագրական պայքարի վրա:

Այդ հանգամանքը չէր կարող չանհանգստացնել արցախահայությանը: Հունիսի 30-ին տեղի ունեցած ԼՂՀ ԳԽ նախագահությունը, անդրադառնալով այդ հարցին, ընդունեց հայ ժողովրդին ուղղված հետևյալ դիմումը. «Հայրենակիցնե՛ր, վերջին օրերին ծայրաստիճան լարվել է քաղաքական իրավիճակը Հայաստանում, որը բացասաբար է անդրադառնում նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վրա: Ցավով նշում ենք, որ դրությունը ապակայունացնելու նպատակով փորձեր են արվում մեզ ներքաշել քաղաքական պայքարի մեջ: Սա անընդունելի է, քանի որ մենք միշտ էլ մեր բոլոր ջանքերը ներդրել ենք նման ապակայունացում թույլ չտալու համար, իսկ Արցախյան շարժումը հիմք է դրել համայն հայ ազգի համախմբանն ու միավորմանը: ԼՂՀ իշխանությունները միշտ էլ ձգտել են լինել քաղաքական կայունության երաշխիք:

Այս առնչությամբ ստիպված ենք ի լուր ամենքի հայտարարել, որ Արցախի իշխանությունները հավատարիմ կմնան իրենց քաղաքական ուղեգծին և ըստ ամենայնի կձգտեն նպաստել Հայաստանում քաղաքական կայունության ապահովմանը: Սակայն քաղաքական ոչ մի խաղ, ոչ մի նպատակ չեն կարող ստիպել, որ Արցախի իշխանությունները հրաժարվեն պահանջատիրությունից: Մենք թույլ չենք տա, որ քառամյա պայքարի ընթացքում բազում զոհողությունների գնով գաղութային լծից ազատված ժողովուրդը կրկին հայտնվի ստրկության ճիրաններում:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը Հայաստանի, Արցախի և ի սփյուռս աշխարհի ամբողջ հայությանը կոչ է անում այս ճակատագրական պահին համախմբվել, զերծ մնալ իրադրության ապակայունացմանը միտված քայլերից և բոլոր ջանքերն ուղղել հայրենի պաշտպանության սուրբ գործին»[50]:

Արցախի հարցում Լ.Տեր-Պետրոսյանը հանգիստ չուներ: ՀՀ ԳԽ չորրորդ նստաշրջանի հերթական եռօրյա նիստի վերջին օրը՝ հուլիսի 1-ին, ելույթ ունենալով Լեռնային Ղարաբաղի հար-

[49] *Նույն տեղում:*

[50] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, g. 1, գ. 3, թ. 66:*

ցի շուրջ, որի քննարկումը շարունակվում էր, ԼՂՀ-ի ճանաչումը կրկին համարեց անպատեհ, և որ իբր այն ժողովրդին տանում է արկածախնդրության ճանապարհով: Նա պատգամավորներին կոչ արեց հարցը հանել և ոչ մի որոշում չկայացնել: Սակայն նստաշրջանը նման որոշում չընդունեց:

Հայաստան-Արցախում տեղի ունեցող այդ իրադարձությունները սակայն չէին կարող չգրավել հայ մտավորականության ուշադրությունը: Եվ ահա Բեյրութում տպագրվող «Ազդակ» թերթի հուլիսի 8-ի համարում հրապարակվեց Հայաստանի շուրջ 70 դոկտոր, պրոֆեսորների, գրողների, դասախոսների նամակը՝ ուղղված Լևոն Տեր-Պետրոսյանին, որում քննարկվում է նախագահի և կառավարության վտանգավոր քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ, որովհետև ՀՀՇ-ական որոշ պարագլուխներ ձգտում էին հունից հանել արդեն ձևավորված և հանրաքվեով հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգաշահ գործունեությունը: Նամակի հեղինակները մերկացնում են ՀՀՇ-ականներին, որոնք, շահարկելով «Ղարաբաղ» կոմիտեի անվանումը, անցնելով իշխանության գլուխ, հետագայում գործնականորեն հրաժարվեցին Արցախը Մայր Հայաստանին միավորելու վերաբերյալ 1989 թ. դեկտեմբերի 1-ի ընդունած որոշումից: Եվ Հայաստանի որոշ ղեկավարներ ԼՂ Հանրապետության նախագահի պաշտոնում իրենց թեկնածուի ընտրությունը կապում էին Արցախին ցույց տրվելիք հետագա օգնության հետ: Արհամարհելով ԼՂՀ-ի և ողջ հայության շահերը՝ բլեյանների, եգորյանների, բաղդասարյանների տիպի Փանջունիները ձգնում էին հայ ժողովրդի վզին փաթաթել այն հիմարությունը, ըստ որի Արցախի փրկության միակ ուղին Ադրբեջանի կազմի մեջ մնալն է: Նամակի հեղինակները ցասումով են գրում. «Անհանդուրժելի է Արցախի պաշտպանության և սոցիալ-տնտեսական օգնության հարցերը կապել քաղաքական և պաշտոնական նեղլիկ շահերի հետ»: Նրանք համոզված էին, որ ՀՀՇ-ական այդ քաղաքականությունը տանում էր Արցախի հայաթափման ուղին և մի փոքր ուշ՝ Զանգեզուրի, Սևանի կորուստը: Իսկ վերջում՝ «Արցախը մեր հայրենիքի մի մասն է, նա ամբողջ հայերի հայրենիքն է, նաև մեր ծնուած մանուկների սուրբ օրրանը: Իսկ հայրենիքի բախտի ու ճակատագրի տերը ողջ հայությունն է»:

Այդուհանդերձ, հուլիսի 8-ին հրավիրված ՀՀ ԳԽ արտահերթ նստաշրջանը, «Հիմնվելով միջազգային իրավունքի հիմնադրույթների, ազգերի ինքնորոշման իրավունքի, ինչպես նաև Լեռ-

նային Ղարաբաղի Հանրապետության անկախության մասին 1991 թվականի դեկտեմբերի 10-ի հանրաքվեի արդյունքների վրա, հարգելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը և նրա ազգաբնակչության իրավունքները պաշտպանելու վճռականությունը, հավաստելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնահարցի քաղաքական լուծման ուղուն իր հավատարմությանը, նշելով, որ կպաշտպանի Արցախի հարցի այն լուծումը, որը կընդունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, անընդունելի համարելով մի շարք միջազգային փաստաթղթերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որպես Ադրբեջանի մաս ամրագրելու փորձերը, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշում է.

1. Հետևողականորեն սատար կանգնել ԼՂ Հանրապետությանը և նրա բնակչության իրավունքների պաշտպանությանը:

2. Հայաստանի Հանրապետության համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ ԼՂ Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում»[51]: Իսկ մինչ այդ որոշման ընդունումը հուլիսի 9-ին տեղի ունեցած ՀՀ Անվտանգության խորհրդի նիստը, քննարկելով ՀՀ-ի կողմից ԼՂՀ-ին ցուցաբերող տնտեսական և մարդասիրական օգնությունը ճիշտ կազմակերպելու և երկու կառավարությունների գործողությունները համադրելու հարցերը, ընդունեց որոշումներ, որոնք բխում էին ԼՂՀ-ի շահերից[52]:

1992թ. ամառային այդ օրերին, երբ Շահումյանի շրջանը և Մարտակերտի ու Ասկերանի տասնյակ գյուղեր բռնազավթվել էին թուրք-ազերիների կողմից, ՀՀ ԳԽ-ն ստեղծել էր այդ ամենի պատճառներն ուսումնասիրող հանձնաժողով, որը, հուլիսի 4-ին հանդես գալով հայտարարությամբ, խնդրում էր ականատեսներին, մարտական գործողություններին մասնակիցներին և տեղյակ անձանց իրենց գրավոր վկայությունները, տեղեկությունները և նյութերը ուղարկեն ՀՀ Գերագույն խորհուրդ: Մինչև հանձնաժողովի զեկուցման արդյունքներով ՀՀ ԳԽ-ի համապատասխան որոշման ընդունումը, քաղաքական գործիչներին, լրագրողներին, պաշտոնատար անձանց խնդրվում է զերծ մնալ Շահումյանի շրջանի և Մարտակերտի շրջանի հյուսիսային հատվածի անկման պատճառներին վերաբերող հրապարակային գնահատա-

[51] *Նույն տեղում:*
[52] Նույն տեղում:

կաններից և մեկնաբանություններից[53]: Ասենք, որ այդ հանձնաժողով կոչվածը այդպես էլ ոչինչ չարեց, ոչ մի պատճառ չբացահայտեց, և ամեն ինչ թողեց մշուշի մեջ:

* * *

1992թ. հունիսի երրորդ տասնօրյակի սկզբին հակառակորդը մոտեցել էր Ասկերանին, իսկ Մարտակերտը հայտնվել էր հրետակոծության կիզակետում: Հանրապետության բնակչության շուրջ 40 տոկոսը բռնել էր բռնագաղթի ճանապարհը: Այդ օրերին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, արձագանքելով Հայաստանի և ԼՂՀ բողոքներին, հրավիրում է նիստ, որտեղ խորհրդի բոլոր 15 անդամները անհանգստություն են հայտնում ղարաբաղյան արյունոտ իրադարձությունների վերաբերյալ: Խորհուրդը որոշեց ՄԱԿ-ի ներկայացուցչություններ բացել Երևանում և Բաքվում ու դիտորդ ուղարկել Լեռնային Ղարաբաղ: Հունիսի 22-ին Ստեփանակերտում տեղի ունեցած բազմահազարանոց հանրահավաքը, որը կազմակերպել էր Ղարաբաղի ժողովրդական ճակատը, հանրապետության ղեկավարներից պահանջեց կարգ մտցնել հանրապետությունում և երկրամասի բոլոր մարդկանց ոտքի հանել թշնամու դեմ պայքարելու համար[54]: Հանրապետությունում ընկել էր կարգապահությունը, անգործունեության էր մատնվել Ստեփանակերտի քաղխորհուրդը: Ժողովուրդը դժգոհ էր հանրապետության ղեկավարներից, մանավանդ Հռոմ պատվիրակություն ուղարկելու կապակցությամբ: Պատերազմի և աշխատանքի վետերանների, ինչպես նաև մարզային նախկին ղեկավարության ներկայացուցիչները, հանդիպելով ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի հետ, ներկայացրեցին իրենց պահանջները այդ բոլոր հարցերի վերաբերյալ[55]: Մինչդեռ այդ օրերին թշնամին, հսկայական ուժեր կենտրոնացնելով, ձգտում էր գրավել Մարտակերտը և բացել Ստեփանակերտ տանող ճանապարհը: Հունիսի 28-ին ազերիներն ուժեղացրին ճնշումը ոչ միայն Մարտակերտի, այլև Ասկերանի, Մարտունու և Հադրութի ուղղություններով: Մասսայական ռմբակոծություններին հաջորդեց զանգվածային գրոհը՝ մեծ թվով ռազմական տեխնիկայի կիրառմամբ: Հակառակորդին հաջողվեց Ասկերանի շրջանում գրավել

[53] *Նույն տեղում, 04.07.1992:*
[54] ***Арутюнян В. Б.***, նշվ. աշխ., էջ 646:
[55] Նույն տեղում, էջ 146:

առանձին պահակակետեր, Մարտունու շրջանում ընդհուպ մոտենալ Ճարտար և Մաճկալաշեն գյուղերին ու հասնել մինչև Կարմիր շուկայի ծայրամասը, Հադրութի շրջանում՝ Ցոր գյուղին, Տողի պահակակետին և գինու գործարանին[56]: Շատ բնակավայրեր վեր էին ածվել պաշտպանական ամրոցների: 270 բնակիչ ունեցող Սղնախը ապաստան էր տվել 350 ստեփանակերտցու[57]: Նման օրինակները շատ են: Հայ մարտիկները հերոսաբար դիմադրում էին կատաղած թշնամուն: Ասկերանի ուղղությամբ իր դիպուկությամբ աչքի էր ընկել 15-ամյա Սուրեն Մանվելյանը: Դպրոցական այդ խիզախ մարտիկը ավտոմատային կրակահերթով ոչնչացրեց 30 ազերի ասկյարի[58]: Միայն Տողի ուղղությամբ հակառակորդը տվեց 300 զոհ, 4 գերի, որոնցից մեկը՝ ազգությամբ չեչեն: Ոչնչացվեցին 9 հրասայլ և 7 միավոր այլ ռազմական տեխնիկա[59]: Հունիսի 29-ին ազերիների 500 հոգուց բաղկացած մի ստորաբաժանում շարժվում է Ասկերանի շրջանի Նախիջևանիկ գյուղի ուղղությամբ: Թշնամու դեմ գործում էր Վանիկ Սիերյանի դասակը, որտեղ 13-ամյա էռնեստ Գրիգորյանը և 16-ամյա Գրիգորը իրենց քաջությամբ ետ չէին մնում կռվող ազատամարտիկներից[60]: Ադրբեջանի բանակային կազմավորումները, հուլիսի 4-ին Մարգուշավանի և Փափռավենդի կողմից լայնածավալ հարձակում սկսելով Մարտակերտ քաղաքի վրա և ունենալով մի քանի հազարավոր հետևակ, ինքնաթիռներ, ուղղաթիռներ, «գրադ» կայանքներ, թնդանոթներ, ծանր տանկեր և այլ զրահատեխնիկա, հաջողվեց ճեղքել Արցախի ինքնապաշտպանական գիծը և ընդհուպ մոտենալ քաղաքին: Մահու և կենաց պայքար մղելով՝ քաղաքի մատույցներում կանգնեցվեց թշնամին: Ստանալով հակահարված՝ այն նահանջում է: Սակայն հաջորդ օրը հակառակորդի «ինտերնացիոնալ» բանակը, որի շարքերում կային վարձկան ռուսներ, ուկրաինացիներ, չեչեններ, ցախուրներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ, նորից անցնում են զանգվածային գրոհի և, կոտրելով ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը, ներխուժում են քաղաք[61]: Հայկա-

[56] *Հասրաթյան Ս.*, նշվ. աշխ., էջ 48-49:
[57] *«Արցախ», 06.07.1992.*
[58] *Հասրաթյան Ս., նշվ. աշխ., էջ 49.*
[59] Նույն տեղում:
[60] Նույն տեղում:
[61] Նույն տեղում:

կան ինքնապաշտպանության ջոկատները ստիպված էին հուլիսի 5-ին թողնել Մարտակերտը և նահանջել դեպի Ներքին Հոռաթաղ գյուղը[62], որն ուներ առավել հարմար դիրքեր: Այդ նույն գիշերը Քելբաջարի շրջանից Մարտակերտի շրջան ներխուժելով՝ ազերի զորամիավորումները գրավեցին Հաթերքը և հրկիզեցին այն: Միևնույն ժամանակ Ասկերանի շրջանում հայկական ուժերը, անցնելով հակահարձակման, ազատագրեցին Նախիջևանիկը, Ֆրջամալը, Դահրազը, Վարազաբունը և Աղբուլաղը: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շտաբի տվյալներով՝ 1992թ. հունիսի 12-ից մինչև հուլիսի 1-ը ոչնչացվել է թշնամու 34 տանկ, 45 ԲՏՌ և 800 զինվոր: Այդ օրերին հակառակորդի վերահսկողության տակ ընկան Մոխրաթաղ, Ներքին Հոռաթաղ, Դամիրլու, Կուսապատ, Մեհմանա, Ջանյաթաղ գյուղերը: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը հուլիսի 6-7-ը, առաջին անգամ օգտագործելով սեփական «Կոբրա» ուղղաթիռները, գնդակոծեցին Մարտակերտում և Մարտունու շրջանի Կուրոպատկինո, Ամիրանլար ու Մուղանլու ադրբեջանական բնակավայրերում գտնվող հակառակորդի դիրքերը: Հուլիսի 10-ի դրությամբ Մարտակերտի հյուսիսում ռազմաճակատի գիծն անցնում էր Դրմբոն-Գյուլաթաղ հատվածով: Հետևում մնում էր Չլդրան-Արխավենդ-Ղազանչի մարտագիծը, որի գրավումով, իրոք, հակառակորդը հնարավորություն

[62] *Շահումյանում և Մարտակերտում կրած անհաջողությունների պատճառները ոմանք բացատրում են քաղաքական անհամաձայնություններով: Այն ժամանակ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի գլխավոր հրամանատար Ա. Տեր-Թադևոսյանը, հետագայում պատասխանելով լրագրողուհի Ալվարդ Բարխուդարյանի հարցին, այսպես է պատասխանել. «Հիմա արդեն ստույգ գիտենք, որ Մարտակերտը վերցրել է ռուսական 10-րդ դեսանտաօդային դիվիզիան, որի համար վճարել են նրան: Խուճապը սկսվել էր Շահումյանի անկումից հետո: Հունիսի 15-16-ին մենք պետք է հակահարձակման անցնեինք: Դրա համար ակնարկներ տվեցինք տարածքը: Ցավոք, մեր բոլոր գործողությունների մասին թշնամին մեզնից շուտ գիտեր: Ճիշտ է, Ադրբեջանի կառավարությունն ու քաղաքական կուսակցությունների առաջնորդներն իրար ուտում էին: Նույնը եղավ մեզ մոտ Մարտակերտի նախօրեին: ՀՀՇ-ն և Դաշնակցությունը անվերջ հարաբերություններ էին պարզում, չէին կարողանում որոշել, թե ում ձեռքին պիտի լինի իշխանությունը: Ստեփանակերտում համատեղ ժողով արեցին: Փոխադարձ մեղադրանքներ էին ներկայացնում, թե ով սկզբից հեռացրեց իր ջոկատները՝ ՀՀՇ-ն, թե Դաշնակցությունը: Փոխանակ բոլորս ռազմաճակատում լինեինք, Ստեփանակերտում հարաբերություններ էինք պարզում: Մարտակերտը հանձնելուց մի քանի օր հետո հրամանատարությունը փոխանցեցի Սամվել Բաբայանին» («Առավոտ», 27.06.1998):*

կստանար լուրջ սպառնալիք ստեղծել ինչպես Խաչենի հովտի, այնպես էլ հանրապետության կենտրոն Ստեփանակերտի համար:

Լեռնային Ղարաբաղի համար ստեղծված այս ծանր վիճակը օգտագործում էին Ադրբեջանի պարագլուխները: Աբուլֆազ Էլչիբեյը դեռևս նախագահական ընտրություններից առաջ հունիսի 5-ին, հանդես գալով հեռուստատեսությամբ, փորձել էր Ղարաբաղի բարդույթի ամբողջ մեղքը բարդել արցախահայության վրա և նույնիսկ հայտարարել էր, թե Ղարաբաղի հայերը Ադրբեջանում կարող են ստանալ միայն մշակութային ինքնավարություն: Նա չթաքցրեց, որ ադրբեջանական բանակում պայմանագրային սկզբունքով ծառայում են 400 ռուս սպաներ[63]: Իսկ մեկ ամիս անց ավելի հստակ էր հնչում նախագահ Էլչիբեյի ձայնը: Նա չափազանց մոտալուտ էր համարում ազերիների լիակատար հաղթանակը: ՀՀ ԳԽ նախագահությունը և ՀՀ կառավարությունը, որպես պատասխան, հուլիսի 5-ին հայտարարեցին, որ Լեռնային Ղարաբաղի խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու ուղղությամբ գործադրված ջանքերին Ադրբեջանը պատասխանում է լայնամասշտաբ հարձակումով: Հայաստանի իշխանությունները նշեցին, որ ամեն ինչ կանեն՝ զորավիգ կանգնելու Ղարաբաղի ինքնորոշված ժողովրդին և իշխանություններին՝ կասեցնելու և հետ մղելու Ադրբեջանի ագրեսիան ԼՂՀ-ի դեմ[64]:

Ադրբեջանը ԼՂՀ-ն վեր էր ածել աղետի գոտու: Հանրապետության իշխանությունները, հուլիսի 5-ին դիմելով ՄԱԿ-ին և աշխարհի բոլոր երկրների ղեկավարներին ու խորհրդարաններին, խնդրում էին ճանաչել ԼՂՀ-ի անկախությունը՝ համոզված լինելով, որ «դա կփրկի երիտասարդ ժողովրդավարական պետությունը, որը ազգային-ազատագրական պայքար է մղում հանուն իր ինքնորոշման»[65]: Արցախ-Ղարաբաղում տեղի ունեցած այդ ողբերգական իրադարձությունների մասին Հայաստանի Հանրապետությունը դիմում էր հղել ԱՊՀ պետությունների կառավարություններին՝ կոչ անելով «անհապաղ գործուն միջոցներ ձեռնարկել Ադրբեջանի նկատմամբ՝ կոնֆլիկտի ծավալումը կանխարգելելու» համար[66]: Սակայն այդ դիմում-կոչերը մնում էին

[63] *"Бакинский рабочий", 06.06.1992.*
[64] *«Հայաստանի Հանրապետություն», 07.07.1992:*
[65] *Նույն տեղում:*
[66] *Նույն տեղում:*

անհետևանք: Հանրապետության վրա կախված վտանգը ստիպեց ԼՂՀ ԳԽ նախագահությանը և ԼՂՀ նախարարների խորհրդին հուլիսի 7-ին դիմել հանրապետության բոլոր քաղաքացիներին.

«Հայրենակիցներ, եղբայրներ և քույրեր:

Մեծ վտանգ է կախվել մեր հողի վրա: Ոչնչացվում են մեր հին մասունքները, մեր նախնիների օջախները, հրի են մատնվել Արցախի որոշ գյուղեր: Այս տագնապալի օրերին բոլորիս անհրաժեշտ է դրսևորել հանգստություն, ողջամտություն, բարձր կարգապահություն...

Բարեկամներ, մեր դեմ կանգնած է նենգ և թվով զգալիորեն գերակշռող հակառակորդ... Իրադրությունը ծայրաստիճան ծանր է... Յուրաքանչյուր արցախցի պետք է հասկանա՝ առանց մեզ մեր հողը ոչ ոք չի պաշտպանի: Եվ որքան մենք շուտ հասկանանք այդ բանը, այնքան շուտ հաջողությունների կհասնենք, քանի որ արդարացի պայքար մղող ժողովրդին հնարավոր չէ ընկճել»[67]:

Արցախցիները, արձագանքելով իշխանությունների կոչին և ելնելով հայրենի հողը պաշտպանելու սուրբ պահանջից, պայքարի բոլոր ձևերն օգտագործում էին հայրենի ոստանը պաշտպանելու համար: Նույնիսկ անտարբեր չգտնվեց ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի նախագահ Մարիո Ռաֆայելին: Նա առաջարկեց 1992թ. հուլիսի 9-ի 01 ժամից 30 օրով կրակը դադարեցնելու համաձայնության գալ: Եվ չնայած Ադրբեջանի իշխանությունները տվել էին համաձայնություն, սակայն հուլիսի 9-ին՝ տեղական ժամանակով ժամը 11-ին, ՍՈՒ-25 ռեակտիվ երկու ինքնաթիռներից ռմբակոծեցին Ասկերանի շրջանի Նորագյուղ բնակավայրը: Այդ նույն օրը խոշորամասշտաբ հարձակում ձեռնարկվեց Մարտակերտի շրջանի մի քանի գյուղերի վրա: Կային զոհեր: ԼՂՀ ԳԽ նախագահությունը և նախարարների խորհուրդը, հանդես գալով հայտարարությամբ, պատրաստակամություն հայտնեցին ցուցաբերել գործարար համագործակցություն, եթե համանման պատրաստակամություն հայտնի նաև մյուս կողմը[68]: Մինչդեռ Ադրբեջանի իշխանությունները չէին ցանկանում հրաժարվել զավթողական քաղաքականությունից: Հուլիսի 19-20-ը ՍՈՒ-25 և ՄԻԳ-24

[67] *Նույն տեղում:*
[68] *Նույն տեղում: Տես նաև ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, գ. 1, գ. 4, թ 10-11:*

ինքնաթիռներից ռումբեր նետվեցին Ստեփանակերտի վրա[69], որոնք առաջ բերեցին մեծ ավերածություններ, զոհեր և վիրավորներ: Ազերիները նույնիսկ հայտարարեցին, թե Ադրբեջանն իր հաղթանակը կնշի, երբ հայերից լիովին կազատագրվեն ոչ միայն Ղարաբաղը, այլև Զանգեզուրն ու Սևանա լճի ավազանը[70]: Սակայն հայկական ուժերը, ձեռնարկելով միջոցառումներ, հուլիսի երկրորդ տասնօրյակի սկզբին ազատագրեցին Կուսապատը, Մեհմանան, Զանյաթաղը, Գյուլաթաղը, Հաթերքը, Զարդախաչը, Ումութլուն, Մեծ շենը, Մաղավուզը: Սակայն մի քանի օր անց Արցախի ինքնապաշտպանության ուժերը ստիպված էին այդ գյուղերը կրկին զիջել հակառակորդին:

Ադրբեջանը ենթադրում էր ունենալ հզոր բանակ և օրերի ընթացքում ավարտել «Ղարաբաղի հարցը»: Նախագահ Ա.Էլչիբեյի խնդրանքով Թուրքիայից Ադրբեջան եկան 150 պաշտոնաթող սպաներ և լավ վարժված երիտասարդ «կոմանդոսներ, որոնք պետք է ծառայեին նախ և առաջ արցախահայության դեմ կռվող ադրբեջանական բանակում»[71]: Իսկ մինչ այդ Ստեփանակերտ ժամանելով՝ Չեչնիայի արտգործնախարարության ներկայացուցիչ Արթուր Ումանսկին հայտարարել էր. «Փաստերը վկայում են, որ Լեռնային Ղարաբաղում մղվող ռազմական գործողություններին ադրբեջանական բանակի կազմում մասնակցում են Չեչնիայի քաղաքացիներ: Ես հաղորդում եմ անձամբ Զոհար Դուդաևի պահանջը. բոլոր չեչենները, ովքեր մասնակցում են այս եղբայրասպան պատերազմին, թողնեն և վերադառնան հայրենիք»[72]:

Արցախի փրկությունը դարձել էր ամենահրատապ խնդիրը: Հուլիսի 22-ին Երևան ժամանեց ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանի գլխավորած պատվիրակությունը, որը հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահի, խորհրդարանի և կառավարության անդամների հետ, ու քննարկեցին ռազմաքաղաքական, տնտեսական և միջազգային ատյաններում Ղարաբաղի հիմնախնդրին վերաբերող հարցեր: Այդ նույն օրը տեղի

[69] *1992թ. հուլիսի 12-ի լույս 13-ի գիշերը Ստեփանակերտում անհայտ մարդկանց մի խումբ իջեցրել էր Ստեփան Շահումյանի արձանը: Քաղաքը 1923 թ-ից կրում է նրա անունը: Արձանը վերականգնվել է 1998թ. սեպտեմբերի 28-ին:*
[70] *«Հայաստանի Հանրապետություն», 14.07.1992:*
[71] *Նույն տեղում:*
[72] *Նույն տեղում:*

ունեցած ՀՀ ԳԽ նախագահության ընդլայնված նիստը, որին մասնակցում էր ԼՂՀ ԳԽ պատվիրակությունը, քննարկեց Արցախին օգնություն ցույց տալու հարցը, և անհրաժեշտ համարվեց հնարավորին բոլոր միջոցներով օգնել[73]:

Արցախում տեղի ունեցող իրադարձությունները, մանավանդ արևելյան և հյուսիսային հատվածներում հակառակորդի սանձարձակ գործողությունները, առաջ քաշեց իրագործել պաշտպանության վերակառուցմանը և կատարելագործմանն ուղղված մի շարք հիմնախնդիրներ: Պայքարի ֆիդայական ժամանակն անցել էր, հարկավոր էր ունենալ բոլոր պահանջներին համապատասխան պաշտպանական բանակ: ԼՂՀ ինքնապաշտպանության կոմիտեի նախագահի հրամանով հուլիսի կեսերից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքը բաժանվեց Հադրութի, Մարտունու, Ասկերանի ու Մարտակերտի մարտական գործողությունների և Ստեփանակերտի ու Շուշիի պաշտպանական շրջանների: Ըստ այդ հրամանի՝ ԼՂՀ-ի տարածքում գործող բոլոր մարտական ստորաբաժանումները, ջոկատները և կազմավորումները անհապաղ պետք է ենթարկվեին այն գոտու հրամանատարությանը, որտեղ տեղավորված էր տվյալ զինվորական միավորումը[74]: Անկասկած, այդ քայլը դրական ազդեցություն ունեցավ կանոնավոր բանակ ստեղծելու գործընթացի վրա: Այդ առանձին-առանձին ռազմական միավորումների գործունեությունը համակարգելու նպատակով յուրաքանչյուր պաշտպանական շրջանում ստեղծվեց զինվորական շտաբ: Ձևավորվում էին գումարտակներ, վաշտեր, դասակներ և ջոկեր: Ռազմական գործողություններն այնուհետև իրագործվում էին միասնական կենտրոնական հրամանատարության ներքո: Հակառակորդը նորանոր ուժեր էր նետում Ղարաբաղի ռազմաճակատ: Մինչդեռ ԼՂՀ ԻՊՈՒ-ն, հյուսիսարևելյան ուղղությամբ հետապնդելով թշնամու նահանջող զորքերին, հուլիսի 30-ին դուրս եկավ Մարտակերտի մատույցները և մտավ Ներքին Հոռաթաղ: Վազգեն Սարգսյանը օգոստոսի 15-ին Հայաստանի հեռուստատեսությամբ ունեցած իր ելույթում շեշտեց, որ միայն վերջին մեկ ամսվա ընթացքում թշնամին Մարտակերտի շրջանում տվել է 1000-ից

[73] *Նույն տեղում, 23.07.1992:*
[74] *Նույն տեղում, 23.07.1992:*

ավելի զոհ[75]: Մարտեր էին մղվում Մատաղիս և Լևոնարխ գյուղերի մատույցներում:

Մարտակերտի շրջանում անընդհատ տեղի էին ունենում դիրքային փոփոխություններ: Ստեփանակերտը ենթարկվում էր ռմբակոծության: Օգոստոսի 5-ի ուշ երեկոյան «գրադ» կայանքից հրթիռակոծման հետևանքով զոհվեցին 32 և վիրավորվեցին 75 մարդ: Օգոստոսի 9-ին Ամիրանլարի կողմից հրետակոծության էր ենթարկվել Մարտունի քաղաքը, որի վրա ընկել էր 110 արկ: Այդ նույն երեկոյան Աղդամի կողմից Գյուլափլուի կրակակետերից 130 հրետանային արկ է տեղացել Ավդուռ գյուղի վրա: Հրետակոծվել են նաև Հադրութն ու Ասկերանը: Արցախում տեղի ունեցած այդ իրադարձությունների վերաբերյալ ՀՀ արտաքին գործերի նախարարը օգոստոսի 7-ին հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ վճռականորեն դատապարտեց Ադրբեջանի հերթական ագրեսիան և պահանջեց դադարեցնել մարտական գործողությունները[76]: Դրանից մեկ օր առաջ՝ օգոստոսի 6-ին, հայտարարությունով հանդես էին եկել նաև ԼՂՀ ԳԽ նախագահությունը և հանրապետության նախարարների խորհուրդը, որտեղ նշված էր, որ Ադրբեջանի վարձկանների և ռազմական օդուժի օժանդակությամբ զավթվել են Շահումյանը, Մարտակերտի շրջանի մեծ մասը, և հիմա նոր փորձեր են ձեռնարկվում մնացած տարածքները գրավելու համար: ԼՂՀ ԳԽ նախագահությունը և նախարարների խորհուրդը, դիմելով միջազգային հանրությանը, աշխարհի բոլոր երկրների խորհրդարաններին, կոչ էին անում անհապաղ միջոցառումներ ձեռնարկել ԼՂՀ-ի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիան սանձելու և հայ ազգաբնակչության եղեռնը կանխելու համար[77]: Ըստ հավաստի տեղեկությունների՝ Ադրբեջանը Ուկրաինայից ստանում էր մարտական տեխնիկա և այն օգտագործում ԼՂՀ-ի դեմ: Ադրբեջանի կողմից կռվողների շարքերում կային ոչ քիչ վարձկան ուկրաինացիներ: Այդ նույն օրերին մի խումբ արցախցի մտավորականներ, նամակ հղելով Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կրավչուկին և Ուկրաինայի ԳԽ-ին, կոչ արեցին օգտագործել իրենց դիրքերը և հնարավորությունները՝ Լեռնային Ղարաբաղում անհապաղ դադարեցնել արյունա-

[75] *Սարգսյան Վ., Ոգու փրկություն, էջ 221:*
[76] *«Հայաստանի Հանրապետություն», 08.08.1992:*
[77] *«Արցախ», 08.08.1992:*

հեղությունը: Միևնույն ժամանակ խնդրում էին Ադրբեջանից ետ կանչել բոլոր վարձկան ուկրաինացիներին:

1992թ. ամռանը արցախահայության վիճակը ծանր էր նաև նրանով, որ Ստեփանակերտի տևական հրթիռակոծությունների և հրետակոծությունների հետևանքով ավերվել, շարքից դուրս էին եկել գրեթե բոլոր հիվանդանոցները, բուժհիմնարկները, հսկայական վնաս էր հասցվել առողջապահության նյութատեխնիկական բազային: Անշուշտ, քայլեր էին ձեռնարկվում ավերված բուժհիմնարկների վերականգնման ուղղությամբ: Հնարավոր միջոցներով օգնություն էին ցույց տալիս Երևանից: Աստիճանաբար հունի մեջ էր դրվում հումանիտար օգնության բաշխումը: Ազերիների նպատակն էր ոչ միայն ռազմական տեսակետից, այլև տնտեսապես խեղդել երիտասարդ հանրապետությունը և նրա բնակչությանը լրիվ մատնել սովի: Օրինակ՝ բերքահավաքը տապալվեց Ամարասի հովտում: Այնտեղ թշնամին ոչնչացրել էր 1290 հեկտար ցորենի և գարու արտեր, իսկ մնացած 600 հեկտարը հնարավոր չէր հնձել: Այրվում էր արցախցու քրտինքով աճեցված հանապազօրյա հացը: Իսկ Մարտակերտի լեռնային գյուղերում բերքահավաքը տապալվում էր վառելիք չլինելու պատճառով[78]: Եվ չնայած Ստեփանակերտն ամեն օր ռմբակոծության էր ենթարկվում, այդուհանդերձ աշխատանքներ էին տարվում Ղարմետաքսկոմբինատը վերականգնելու համար: Արդեն օգոստոսի 1-ին շարք էին մտել 300-ից ավելի գործող հաստոցներ: Օգոստոսի վերջի տվյալներով՝ կոմբինատը տվել էր 250 հազար մետր գործվածք, որն իրացման էր ուղարկվել Երևան և Քութայիսի[79]:

[78] *Նույն տեղում.*
[79] *Նույն տեղում, 31.08.1992:*

2. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ 1992-Ի ԱՇՆԱՆԸ

Հանրապետության իշխանությունները, քաղաքական ուժերը, ամբողջ ժողովուրդը մտահոգված էին կասեցնել հակառակորդի առաջխաղացումը և նրան դուրս քշել հայրենի հողից: Հանրապետության վարչապետ Օլեգ Եսայանը օգոստոսի 10-ին ԼՂՀ ԳԽ նախագահությանը ներկայացրեց իր հրաժարականի մասին դիմում, որտեղ ասված էր. «Հաշվի առնելով ԼՂ Հանրապետության գոյությանը սպառնացող առկա իրավիճակը և ԼՂՀ Գերագույն խորհրդի նիստերի գումարման ու անցկացման անհնարինությունը՝ Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ գերադասելի է նախարարների խորհրդի հետ համատեղ ԼՂՀ-ում հայտարարել ռազմական դրություն մինչև 1992թ. դեկտեմբերի 31-ը և ստեղծել սահմանափակ կազմով պաշտպանության խորհուրդ՝ նրան օժտելով ռազմական դրությունն իրականացնելու անհրաժեշտ իշխանությամբ»[1]: Փաստորեն, հանրապետությունում առաջ էր եկել ճգնաժամային իրավիճակ: ԼՂՀ ԳԽ նախագահության հրամանագրով օգոստոսի 12-ից հանրապետությունում հայտարարվեց ռազմական դրություն: Ահա այդ հրամանագիրը.

«Ադրբեջանի Հանրապետության կողմից լայնամասշտաբ ագրեսիայի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի զգալի մասի օկուպացման կապակցությամբ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում է.

1. Վեց ամսվա ժամկետով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հայտարարել ռազմական դրություն:

2. Հայտարարել ԼՂՀ 1947–1974թթ. ծնված արական սեռի քաղաքացիների զորահավաք: Զորահավաքի առաջին օրը համարել 1992թ. օգոստոսի 12-ը:

3. Միջոցներ ձեռնարկել մեկ շաբաթվա ընթացքում զորահավաքի ենթակա ԼՂՀ-ի սահմաններից դուրս գտնվող ԼՂՀ բոլոր քաղաքացիներին վերադարձնելու համար:

4. ԼՂՀ պաշտպանության ուժերի շտաբին, ՆԳՆ-ին, ազգային անվտանգության վարչությանը, պարետությանը, զինկոմիսարիատին և դատախազությանը՝ ապահովել պատերազմական ժամանակի օրենքներին համապատասխան այս հրամանագրի կատարումը:

[1] *«Արցախ», 13.08.1992:*

5. Ընդունված որոշման մասին երեք օրվա ընթացքում տեղեկացնել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնակատար՝ Գ.Պետրոսյան
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի քարտուղար՝ Վ.Հակոբյան

12 օգոստոսի, 1992թ.,
ք. Ստեփանակերտ»[2]:

Ռազմական դրության մասին հրամանագրում հիմնավորված էր հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու հիմքը, ռազմական դրության ռեժիմն իրականացնող մարմինների իրավունքները, պետական իշխանության բոլոր տեղական մարմինների, պետական հասարակական հիմնարկների, կազմակերպությունների ու ձեռնարկությունների պարտավորությունները, ռազմական դրության ռեժիմն իրականացնող մարմինների կարգադրություններին և հրահանգներին չենթարկվելու, ինչպես նաև ռազմական դրությունում հայտարարված վայրերում կատարված հանցագործությունների համար մեղավորներին պատերազմական ժամանակի օրենքների համաձայն քրեական պատասխանատվության ենթարկելու, ռազմական տրիբունաներին հանձնված գործերի քննման կանոնների և այլ հարցերի մասին[3]: ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը օգոստոսի 13-ին հեռագրեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին.

«Հարգելի՛ Լևոն Հակոբի

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծվել է ռազմաքաղաքական ճգնաժամային իրավիճակ: Վտանգի տակ են ԼՂՀ-ի գոյությունը, նրա բնակչության կյանքն ու անվտանգությունը: Այս պայմաններում անհրաժեշտ են կտրուկ և անհապաղ միջոցառումներ իրավիճակի կայունացման ուղղությամբ:

Այս նպատակով ԼՂՀ-ում հայտարարված է ռազմական դրություն: Նախատեսվում է զորակոչել 18-ից 45 տարեկան տղամարդկանց:

[2] *Նույն տեղում, 15.08.1992: Տես նաև ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, գ. 1, գ. 4, թ. 33-34:*
[3] *«Արցախ», 15.08.1952:*

Վերոշարադրյալի կապակցությամբ խնդրում ենք ձեր աջակցությունը՝ վերադարձնել ԼՂՀ-ի բոլոր այն բնակիչներին, որոնք ենթակա են զորակոչման և հրաժարվում են զինվորական ծառայությունից, ինչպես նաև արգելել Հայաստանից այլ հանրապետություններ արցախցիների մեկնումը»[4]:

Հրապարակվում է նաև հանրապետության ներքին գործերի նախարարության հետևյալ կարգադրությունը. «1992 թվականի օգոստոսի 12-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում ռազմական դրություն մտցնելու կապակցությամբ առաջարկում ենք հայտարարության պահից հաշված երեք օրվա ընթացքում քաղաքի և շրջանների զինվորական պարետատանը, իշխանության տեղական մարմիններին՝ կամավոր հանձնել անօրեն պահվող մարտական զենքը:

Նշված ժամկետում զենքը կամավոր չհանձնած անձինք պատերազմական ժամանակի օրենքների համաձայն կենթարկվեն քրեական պատասխանատվության»[5]: ԼՂՀ ԳԽ նախագահությունը դիմում է հղում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին, որտեղ նշված էր, որ ելնելով ստեղծված վիճակից՝ ԼՂՀ նախագահությունը ԼՂՀ տարածքում հայտարարել է վեց ամիս ժամկետով ռազմական դրություն[6]:

1992թ. օգոստոսի 15-ին տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահության նիստ, որը, քննարկելով վարչապետ Օլեգ Եսայանի հրաժարականի հարցը, որոշեց այն ընդունել և ստեղծել ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ)՝ բաղկացած յոթ հոգուց: Պաշտպանության պետական կոմիտեի նախագահ նշանակվեց ԼՂՀ ժողովրդական պատգամավոր Ռոբերտ Սեդրակի Քոչարյանը: Նա, ստանձնելով ԼՂՀ ՊՊԿ նախագահի և ԼՂՀ վարչապետի պաշտոնները, իր վրա վերցրեց մեծ պատասխանատվություն:

ՊՊԿ-ին հանձնվեցին նախարարների խորհրդի բոլոր գործառնությունները, ինչպես նաև ԳԽ լիազորությունների մի բավականին մասը: ԳԽ-ն պետք է զբաղվեր օրենսդիր գործունեությամբ և արտաքին քաղաքականության հարցերով, իսկ ՊՊԿ-ի վրա դրվեցին տնտեսական, պատերազմական և մի շարք այլ

[4] *Նույն տեղում: Տես նաև ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, գ. 1, գ. 4, թ. 33:*
[5] *«Արցախ», 15.08.1992:*
[6] *Նույն տեղում, 18.08.1992:*

հարցեր: ԼՂՀ ՊՊԿ-ն ԻՊՈՒ-ի առաջ խնդիր դրեց կարճ ժամանակամիջոցում ուղղել մինչ այդ թույլ տրված բացերը, կայունություն հաստատել ռազմաճակատում, նախապատրաստվել հակահարձակման անցնելու և հակառակորդի կողմից գրավված տարածքները ազատագրելու համար: ՊՊԿ-ն հարց դրեց ստեղծել կանոնավոր բանակ:

Սակայն թշնամին հանգիստ չէր տալիս Արցախի և Հայաստանի ինքնապաշտպանության ուժերին: «Նովոստի» ծրագիրը օգոստոսի 9-ին հաղորդել է, որ Ադրբեջանի բանակի կողմից տարածքներ են գրավվել ՀՀ Կրասնոսելսկի շրջանից, այդ թվում և Արծվաշենը: Եվ պատահական չէր, որ 1992թ. օգոստոսի 15-ին ունեցած իր հեռուստաելույթում Վազգեն Սարգսյանը նշել է, որ «...Արծվաշենի անկումը ևս ամենաուղիղ կերպով տեսնում եմ Շահումյանի խնդրի շահարկման հետ»[7]: Ապա նշում է, որ Արծվաշենում չմնաց ոչ մի կռվող արծվաշենցի, որը պետականորեն ստացել էր զենք, իսկ զենք ստացել էին 250 հոգի: Դրանից Արծվաշենում մնացել էին միայն 78-ը: Արծվաշենը գրավվեց, որովհետև արծվաշենցիներն Արծվաշենը չպահեցին գոնե երկու օր[8]: Այդ առթիվ Հայաստանի ներկայացրած բողոքները դրական հետևանք չունեցան: Թշնամին, շարունակելով իր բարբարոս քաղաքականությունը, օգոստոսի 24-ին մինչև ուշ գիշեր ուժգին հրետակոծեց Գորիսի Ստրոյկա-Մալխուլափ սահմանահատվածի դիրքերը, որոնք գտնվում էին հայ ինքնապաշտպանական ուժերի հսկողության տակ: Նույն օրը՝ առավոտյան ժամը 10-ից, Կուբաթլուի և Զանգելանի շրջաններից վերսկսվել էր Կապան քաղաքի և շրջանի գրեթե բոլոր սահմանամերձ գյուղերի հրետակոծությունը: Իսկ Սրաշեն գյուղի մոտ ծավալված մարտերի ընթացքում զոհվեցին գյուղի ինքնապաշտպանական ջոկատից չորս ազատամարտիկ: Օգոստոսի 24-ի երեկոյան և 25-ի առավոտյան թեժ մարտեր տեղի ունեցան Մարտակերտի շրջանի Դրմբոն և Գյուլաթաղ գյուղերի մոտ: Այդ նույն օրերին Ամիրանլար և Մուղանլու գյուղերից հրետակոծվեց Մարտունի քաղաքը, որի հետևանքով կային զոհեր և ավերածություններ: Ֆիզուլու շրջանից հրետակոծության ենթարկվեց Հադրութի շրջանի Դուդուկչի գյուղը: Դեռևս օգոստոսի 16-ին՝ ուշ երեկոյան, տանկերի և ռազմական այլ տեխնիկայի աջակցությամբ ադրբեջանական խմբավորումները

[7] Սարգսյան Վ., *Ոգու փորձություն, էջ 215:*
[8] *Նույն տեղում, էջ 218:*

փորձել էին ճեղքել Մարտունի քաղաքի պաշտպանությունը, ներխուժել Սյուրիշեն, Ավդուռ, Բերդաշեն և Ճարտար գյուղերը: Սակայն հակառակորդի այդ գործողությունները վերջացել էին անհաջողությամբ[9]: Օգոստոսի 18-ին, 22-ին և 23-ին Ստեփանակերտը ենթարկվեց օդային ռմբակոծության, որի հետևանքով զոհվեցին 40 և վիրավորվեցին 200-ից ավելի խաղաղ բնակիչներ: Նրանց գերակշիռ մասը կանայք էին, ծերունիներ և երեխաներ[10]: Օգոստոսի 25-ի երեկոյան ադրբեջանական օդուժի կողմից ռմբակոծվեցին Մարտունու շրջանի Մուշկապատ, Հաղորտի և Կոլխոզաշեն գյուղերը, որի հետևանքով վիրավորվեցին 10-ից ավելի խաղաղ բնակիչներ: ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանը հայտարարեց, թե այդ ամենի հիմնական պատասխանատվությունն ընկնում է Ռուսաստանի վրա, որը միակողմանի կարգով ժամանակակից տասնյակ մարտական ինքնաթիռներ էր հանձնել Ադրբեջանին[11]:

Արցախի Հանրապետությունում օր օրի ավելանում էր բռնագաղթվածների թիվը: Դեռևս Շահումյանի ողբերգության օրերին հուլիսի 16-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը ստեղծել էր ԼՂՀ նախարարների խորհրդին առընթեր բռնատեղահանված քաղաքացիներին մարդասիրական օգնություն ցույց տալու հարցերի գծով հանրապետական վարչություն, որը մեծ անելիքներ ուներ: Այդ վարչության խնդիրների մեջ էր մտնում նաև բռնագաղթվածներին հայրենի գյուղեր վերադարձնելու խնդիրը:

1992թ. ամռանը դաժան պայքար էր գնում մանավանդ Շուշի-Գորիս ճանապարհի մոտերքում: Դեռևս հուլիսի 29-ին ՀՀ նախագահի հրամանով արտակարգ դրություն էր մտցվել Գորիսում և Կրասնոսելսկում: Այդ նույն օրը Լաչինի շրջանի Խոչազ գյուղի մոտ շրջափակման մեջ էր ընկել 25 հոգուց բաղկացած հայ ազատամարտիկների մի ջոկատ, որոնցից 17-ը զոհվել են, իսկ երեքը՝ կորել անհայտ: Հակառակորդի 200-հոգանոց ջոկատի դեմ հերոսաբար մարտնչել են բուժքույրերի պարտականություններ կատարող երկու կին: Օգոստոսին ճանապարհի հարավի և հյուսիսի կողմից հակառակորդն անընդհատ հարձակումներ էր գործում մայրուղին փակելու համար: Հայ ազատամարտիկները շարունակում էին հերոսաբար դիմադրել և անխափան պահել

[9] *«Արցախ», 18.08.1992:*
[10] *«Հայաստանի Հանրապետություն», 25.08.1992:*
[11] *«Ուրբաթ», 28.08.1992:*

ճանապարհը: Այդ օրերին իրենց գործողություններն ուժեղացրին Շահումյանի շրջանի ինքնապաշտպանության ուժերը, որի շտաբը հայտարարեց. «Մենք Ադրբեջանի կառավարությունից պահանջում ենք խաղաղ բնակչությանը դուրս բերել զավթած և ադրբեջանական բանակի ռազմական հենակետերի վերածած հայկական բնակավայրերից, որպեսզի հայ պարտիզանների կողմից հարազատ գյուղերն ազատագրելիս չլինեն անմեղ զոհեր»[12]: ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեն հանրապետության բնակչությանը զգուշացնում էր, որ Ադրբեջանը նպատակ ունի զենքի ուժով լուծել դարաբաղյան հիմնահարցը: Պաշտպանության կոմիտեն բնակչությանը տեղյակ է պահում, որ միջոցառումներ են ձեռնարկվում հանրապետության պաշտպանության բարձրացման և ժողտնտեսության ամբողջ համալիրը պատերազմական պայմաններում աշխատելու ռեժիմի փոխադրման ուղղությամբ: Նաև նշվում է, որ հանրապետությունում անց է կացվում համընդհանուր զորահավաք: ՊՊԿ-ն հանրապետության բնակչությանը կոչ էր անում. «Այսօր, ինչպես երբեք, մեզ անհրաժեշտ են համախմբվածություն, հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու՝ մեծից մինչև փոքր, հայրենիքի փրկության համար ամեն ինչ անելու պատրաստակամություն:

Մեր փոխարեն ոչ մեկը մեր հողը չի պաշտպանի:

Արդարությունը մեր կողմն է, և ոչ մեկին չի հաջողվի կոտրել ազատության և անկախության նկատմամբ ունեցած ժողովրդի կամքը»[13]:

Հանրապետության բոլոր բնակիչները, կազմակերպությունները, հիմնարկ-ձեռնարկությունները և ուսումնական հաստատությունները, արձագանքելով ՊԱԿ-ի կոչին, կատարում էին նույնիսկ անհնարինը և ազգովին պաշտպանում հայրենի հողը: Անշուշտ, կային և այնպիսիները, որոնք, այդ ծանր ու դաժան օրերին չդիմանալով և անձնականը բարձր դասելով հայրենիքի շահերից, հեռացան Հայաստան կամ Ռուսաստան:

ԼՂՀ ԳԽ արտաքին հարաբերությունների հանձնաժողովը, հանդես գալով հայտարարությամբ, Ադրբեջանին առաջարկեց ողջ սահմանի երկարությամբ դադարեցնել կրակը[14]: Իսկ Հայաստանի Հանրապետությունը, դիմելով ՄԱԿ-ին, նկարագրելով Արցախում ստեղծված ծանր վիճակը, խնդրում էր շտապ կարգով հրավիրել Անվտանգության խորհրդի նիստ և քննարկել Հայաստանում ու Լեռնային Ղարաբաղում արագորեն ծավալվող իրադրությունը[15]: ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանն իր հերթին մեղադրում էր համաշխարհային հանրության միջազգային կազմակերպությունների անտարբերությունն այն փաստի նկատմամբ, որ Ադրբեջանի ղեկավարությունը փորձում էր «Ղարաբաղի խնդիրը լուծել ոչ թե բանակցությունների ուղիով, ոչ նույնիսկ մարտի դաշտում, այլ հայկական քաղաքների և գյուղերի խտաբնակ քաղամասերի բարբարոսական ռմբակոծությունների միջոցով»[16]: Այդ ամենից ելնելով Մարիո Ռաֆայելին առաջարկեց 60-օրյա հրադադար, սակայն Ադրբեջանի արտաքին քաղաքական հարցերի գծով պետական խորհրդական Վաֆա Գուլիզադեն այդ առաջարկությունը համարեց անիրագործելի, իբրև դրանում շեշտը դրված էր միայն կողմերի բարի կամքի վրա[17]: Վաթսունօրյա զինադադար հաստատելու վերաբերյալ կողմերը համաձայնության էին եկել օգոստոսի 24-ին Ալմա-Աթայում, սակայն Ադրբեջանը շարունակում էր անտեսել և ռազմական գործողությունները տեղափոխել էր գիշերները[18]: Ալմա-Աթայում Ղազախստանը առաջարկել էր վերացնել շրջափակումը, ընդհարման տարածքում արգելել ինքնաթիռների, տանկերի, հրանոթների և այլ ծանր տեխնիկայի օգտագործումն ու հսկողություն սահմանել իրադարձությունների վրա: Ալմա-Աթայի բանակցությունները եղել են խիստ դժվար, և Ադրբեջանի պատվիրակությունը չի ընդունել արված առաջարկությունները: Բայց հետո, երբ Ն.Նազարբաևը հեռախոսով խոսել է Ա.Էլչիբեյի և Լ.Տեր-Պետրոսյանի հետ, Ադրբեջանը համաձայնվել է սեպտեմբերի 1-ից դադարեցնել կրակը ընդհարման տարածքում: Հայկական կողմը վստահ չէր, որ Ադրբեջանը կկատարի այդ առաջարկությունը, քանի որ նա սպասում էր ԵԱՀԿ-ի սահմաններում որոշում, բացի այդ Ռաֆայելին հայտարարել էր, թե ԵԱՀԿ-ն դիտորդներ է ուղարկելու միայն երեք ամիս հետո: Ադրբեջանը հենց այդ էր ուզում և դրա համար էլ շարունակում էր վարել հարձակողական մարտեր

[12] «Հայաստանի Հանրապետություն», 01.09.1992:
[13] «Արցախ», 20.08.1992:
[14] «Հայաստանի Հանրապետություն», 25.08.1992:

[15] Նույն տեղում, 26.08.1992:
[16] Նույն տեղում:
[17] Նույն տեղում, 01.09.1992:
[18] Նույն տեղում, 04.09.1992:

և հասել էր ժամանակավոր հաջողությունների[19]: Ելնելով վերոհիշյալ համաձայնությունից՝ սեպտեմբերի 3-ին Իջևանում ստորագրվեց մի փաստաթուղթ, որի համաձայն՝ Բաքվում և Երևանում Նազարբաևի անձնական ներկայացուցչի հետ նախապատրաստվում էին հաջորդ քայլերին: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, Ադրբեջանը չհարգեց իր իսկ հանձն առած պարտավորությունները: Հայաստանի Հանրապետությունը, ելնելով Ադրբեջանի բռնած այդ դիրքից, գտնում էր, որ Ալմա-Աթայի հուշագիրը և Իջևանի արձանագրությունը անհնար է իրագործել, որովհետև բացակայում է վերահսկողության մեխանիզմը[20]: Մինսկի խորհրդաժողովի նախագահ Մ.Ռաֆայելին պահանջում էր դադարեցնել կրակը, առանց որևէ նախնական պայմանի: Սակայն Ա.Էլչիբեյը պատասխան նամակով պահանջում էր Ադրբեջանին վերադարձնել Շուշին, Լաչինը և Լեռնային Ղարաբաղից դուրս բերել հայկական էքսպեդիցիոն կորպուսը[21]:

1992թ. սեպտեմբերի 2-ին լրանում էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծման մեկ տարին: ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը ՀՅՊ օրգան «Դրոշակին» տված հարցազրույցում, պաշտպանելով հանրապետությունում ՊՊԿ-ի ստեղծման անհրաժեշտությունը, ընդգծել է, որ ՊՊԿ-ի և ԼՂՀ ԳԽ նախագահության որոշումներն ընդունվում են միասին, և բոլոր ջանքերն ուղղված են հանրապետության պաշտպանության ապահովմանը: Այս ազատագրական պայքարում Արցախին մեծ օգնություն է ցույց տալիս Հայաստանի Հանրապետությունը: Ենթադրվում է նաև օգնություն ստանալ սփյուռքահայությունից, որը պետք է լինի ավելի գործնական[22]: Արցախի ազատամարտիկները որոշել էին հանրապետության ստեղծման տարելիցը դիմավորել ռազմական հաջողություններով: Այդ օրերին առանձնապես մարտական էին գործում Մարտունու շրջանի ինքնապաշտպանության ուժերը Մոնթե Մելքոնյանի հրամանատարությամբ[23]: Նրա գլխավորած ուժերը սեպտեմբերի 4-ին գրա-

---

[19] *Նույն տեղում, 10.09.1992: Տես նաև* **Арутюнян В. Б.**, *նշվ. աշխ, էջ 166:*

[20] *«Հայաստանի Հանրապետություն», 10.09.1992:*

[21] *«Արցախ», 12.09.1992:*

[22] *«Դրոշակ», 1992, N11, էջ 17-20:*

[23] *Մոնթե Մելքոնյանը (Ակո) ծնվել է 1957թ. նոյեմբերի 25-ին ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի նահանգի Վայսելյա ավանում: Ավարտել է Բերքլիի համալսարանի հնագիտության բաժինը: Հետո իրեն նետել է հայ ժողովրդի ազատագրական պայքարի հորձանուտը և ապրել փոթորկալի կյանքով: Նա 22*

վեցին Ավդալար և Գլուլափլու գյուղերը, որոնք սեպի պես խրված էին ԼՂՀ Մարտունու ու Ասկերանի շրջանների տարածքների միջև, և որտեղից անընդհատ ռմբակոծվում էր Ստեփանակերտը: Այդ օրերին ազատագրվեցին նաև Նախիջևանիկ, Փիրջամալ և Արանզամին գյուղերն արդեն որերորդ անգամ: ԼՂՀ ՊՊԿ-ն սեպտեմբերի 2-ին, հանդես գալով հայտարարությամբ, նշում է, որ հակառակորդի ուժերը, մանավանդ օդուժը, շարունակում են հարվածներ հասցնել ոչ միայն ռազմական օբյեկտներին, այլև շարունակում են բարբարոսաբար ռմբակոծել խաղաղ բնակավայրերը՝ կիրառելով միջազգային կոնվենցիաներով արգելված 500-կիլոգրամանոց և կասետային ավիառումբեր, որոնց զոհեր դարձան հարյուրավոր անմեղ քաղաքացիներ, որոնցից մեծամասամբ կանայք և երեխաներ: Այս պայմաններում, շարունակում էր ՊՊԿ-ն, ԼՂՀ իշխանությունները ստիպված են միջոցներ ձեռնարկել իր քաղաքացիների կյանքն ու անվտանգությունն ապահովելու օդային հարձակումներից[24]: ԼՂՀ պաշտպանության ուժերի ղեկավար Սերժ Սարգսյանը «Արցախ» թերթին տված հարցազրույցում նշել է, որ վերջին օրերին Արցախի պաշտպանության ուժերը Գյուլիստանի մոտ հակառակորդից խլել է 8 տանկ, հետևակի 2 մարտական մեքենա, ոչնչացվել է հակառակորդի մեծ թվով կենդանի ուժ, ետ են շպրտվել Ճարտարի և Մաճկալաշենի ուղղությամբ բարբարոսների հարձակումները: Վ.Սարգսյանը միևնույն ժամանակ հարց բարձրացրեց ձերբակալել և ետ բերել բոլոր դասալիքներին[25] :

տարեկան հասակում անդամագրվել է Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակին (ԱՍԱԼԱ): Գալով Արցախ-Ղարաբաղ՝ Մոնթե Մելքոնյանը 1991թ. սեպտեմբերի 14-ին ոտք դրեց պատմական Գյուլիստանի հողի վրա: Այդ հավերժ վրիժառուն իրեն ամբողջովին դրսևորեց, երբ 1992թ. փետրվարի 4-ին ուղարկվեց ԼՂՀ Մարտունու շրջան, որն այդ ժամանակ ամենատկար կետերից էր: Մեկ ամիս անց նշանակվեց շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար: Մեկուկես տարի կանգնած լինելով շրջանի ինքնապաշտպանության գլուխ՝ նա արեց այն ամենը, ինչ հնարավոր էր, և շրջանը դարձրեց անառիկ: Նա զոհվել է 1993թ. հունիսի 12-ին Աղդամի մոտ գտնվող Մարգիլի գյուղում: Սարմինը ամփոփված է Երևանի Եռաբլուրում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Արցախի հերոս» բարձրագույն կոչումով և «Ոսկե արծիվ» շքանշանով: Մոնթե Մելքոնյանը միևնույն ժամանակ ՀՀ Ազգային հերոս է:

[24] *«Արցախ», 02.09.1992:*

[25] *Նույն տեղում, 08.09.1992:*

ԼՂՀ մեկ տարվա բոլորման օրը իշխանությունները շեշտեցին, որ արդեն կայացել են ԼՂՀ-ն և նրա բանակը: Արցախի Հանրապետության ղեկավարները նշում են, որ Հայաստանը պետք է լավ հասկանա, որ այս պատերազմը ճակատագրական է, և որ Արցախում է վճռվում հայ ժողովրդի բախտը: Եթե նախկինում ղարաբաղցիները հասել են Սարդարապատ, ապա հիմա էլ հայ ժողովուրդը պիտի հասնի Ղարաբաղ: Ազգային խորհրդի կրթության, գիտության, լեզվի, մշակույթի և լրատվության հանձնաժողովի նախագահ Համլետ Գրիգորյանը նշեց, որ ցավալի է, երբ հանրապետության տարեդարձը դիմավորում ենք այսպիսի անելանելի պայմաններում: Բոլորիս ցանկությունն է՝ Հայաստանը շուտ ոտքի կանգնի և ավելի շատ հոգատար լինի Արցախի նկատմամբ[26]: ԼՂՀ ԳԽ պատգամավոր Հրանտ Խաչատրյանը այն միտքն արտահայտեց, որ եթե Հայաստանում ժամանակին ստեղծվեր ազգային բանակ, ապա Արցախի ճակատագիրն այսօր վտանգի տակ չէր լինի, իսկ Գերագույն խորհրդի քարտուղար Վլադիկ Հակոբյանը նշեց, որ քաղաքական շարժառիթների պատճառով չի ամրապնդվել Հայաստանի և ԼՂՀ ռազմաքաղաքական կապերը: Նա այն կարծիքը հայտնեց, որ ծեռնտու կլինի, եթե ժամանակավոր տարագրված հայկական երկու պետությունները մշակեին միասնական ազգային քաղաքականություն[27]:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսությունը շարունակում էր անկում ապրել: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 1989 թվականից մինչև 1992 թվականի աշնան սկիզբը հանրապետության տնտեսությունը կրել էր 1 միլիարդ 336 միլիոն 802 հազար ռուբլու վնաս, բնակելի ֆոնդի կորուստը կազմել էր 516 հազար քառակուսի մետր: Լիովին կազմալուծվել էր արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը: Հանրապետության տնտեսությունը փոքր-ինչ սկսել էր կարգավորվել Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհի բացումից հետո: Մի քանի ձեռնարկություններ՝ կոշիկի, կոնդենսատորների, էլեկտրատեխնիկական, պոլիգրաֆիական միավորում, Շուշի քաղաքի հացի գործարան և այլն, սկսել էին աշխատել: Սակայն կենսական խիստ նշանակություն ունեցող ձեռնարկությունները՝ մսի, կաթի, Ստեփանակերտի հացի և այլն, չէին աշ-

[26] *«Ազատամարտ», 10.10.1992:*
[27] *Նույն տեղում:*

խատում: Ալյուր չկար, կաթի փոշի չկար: Ակնկալվում էր օգնություն ստանալ Հայաստանից: Իսկ ինչ հնարավոր էր՝ կոնյակի սպիրտ, գինի, օղի, միս և այլն, Ղարաբաղից դուրս էր տարվում առանց թույլտվության: Առաջ էր եկել մի տեսակ անիշխանություն: Կռվող հանրապետությունից այդ ռազմավարական ապրանքների, որոնցով պետականորեն կարելի էր շատ հարցեր լուծել, դուրս տարվելը, պարզապես հանցագործություն էր: Մինչև սեպտեմբեր Ստեփանակերտի յուրաքանչյուր բնակիչ ամսական ստանում էր երկու կիլոգրամ ալյուր: Արդեն սեպտեմբերից սկսած՝ քաղաքի ամեն մի բնակիչ ամսական ստանում էր 400 գրամ շաքար, օրական 300 գրամ հաց: Իշխանությունները հոգում էին նաև գյուղերի բնակիչների և մտավորականության մասին[28]:

Դրությունը ծանր էր նաև գյուղատնտեսության մեջ: Հանրապետության տարածքի մի մասը զավթվել էր թշնամու կողմից, դաշտերը կրակի էին մատնվել, բավականին անասուններ գողացվել: Քաղաքներում և գյուղերում ավերվել էին բնակելի շատ տներ, շինություններ, դպրոցներ, մանկապարտեզներ, գործարաններ: Շինարարական հիմնարկները գտնվում էին ֆինանսական ճգնաժամի մեջ և զրկված էին նյութատեխնիկական բազայից: Մի շարք արտադրատեսակներ մնում էին գործարաններում կուտակված: Միայն էլեկտրատեխնիկական գործարանում կար 15426 լուսամփոփ, որոնց տեղափոխման համար չկար վառելանյութ[29]:

* * *

Իրավիճակը շարունակվում էր մնալ խիստ լարված: Ադրբեջանը ոչ մի միտում չուներ հրաժարվել իր ռազմատենչ քաղաքականությունից: Նախագահ Ա.Էլչիբեյը, հեռուստատեսությամբ դիմելով ռազմաճակատում կռվող իր ասկյարներին, կոչ էր անում մինչև վերջին շունչը կռվել «Ադրբեջանի սուրբ հողի համար»: Նա հորդորում էր «չվախենալ վիրավորվելուց կամ մահացու գնդակից, քանի որ այնքան էլ սարսափելի չէ ռազմաճակատում վրա հասած մահը, և ադրբեջանցի զինվորի համար պատիվ պետք է համարվի խրամատում մեռնելը»[30]: Հակառակորդը նոր ուժերով

[28] *Նույն տեղում, N36, սեպտեմբեր:*
[29] *Նույն տեղում:*
[30] *"Бакинский рабочий", 07.09.1992: Տե՛ս նաև «Արցախ», 08.09.1992:*

համալրում էր ռազմաճակատները և գրոհում ցամաքից ու օդից: Սեպտեմբերի 6-ին թշնամու ուժերը փորձեցին ետ գրավել Ասկերանի շրջանի ազատագրված գյուղերը, սակայն Արցախի ԻՊ ուժերը արժանի հակահարված հասցրին և ետ մղեցին: Մինչ այդ հակառակորդի բանակի ստորաբաժանումները սեպտեմբերի 2-ին հարձակվել էին Չլդրանի վրա, սակայն ԼՂՀ ԻՊ ուժերը հարկադրեցին նահանջել նախկին դիրքերը: Այնտեղ հակառակորդը կորցրեց 2 տանկ և 30 զինվոր: Թշնամու ստորաբաժանումները սեպտեմբերի 3-ին շարժվեցին Կիչան-Արխավենդ ուղղությամբ, սակայն ԻՊ ուժերի հարվածներից ստիպված էին ետ նահանջել: Ճակատագծի ձախ թևում անցնելով հակահարձակման՝ ԻՊՈՒ ստորաբաժանումները, վերագրավելով Հարությունագոմերի բարձունքները, ընդհուպ մոտեցան Վաղուհաս և Վերին Հոռաթաղ գյուղերին[31]: Սեպտեմբերի 4–6-ը ձեռնարկված հակագրոհների ժամանակ ԻՊՈՒ ստորաբաժանումները Ասկերանի շրջանում ազատագրեցին 8 գյուղ: Այդ օրերին հայ մարտիկները խփեցին թշնամու երկու ՄԻ-24 ուղղաթիռ և մեկ ՄԻԳ-21 ինքնաթիռ, որոնք ռմբակոծում էին Ստեփանակերտը և շրջակա բնակավայրերը[32]: Սեպտեմբերի 7-ի երեկոյան ԻՊՈՒ մարտիկները հակահարձակում ձեռնարկեցին Մարտակերտի ճակատում: Հակառակորդից ազատագրեցին Կոճղոտ ու Պողոսագոմեր գյուղերը: Մարտերը շարունակվում էին Դրմբոն, Վաղուհաս, Մեհմանա գյուղերի մատույցներում: Այդ ուղղությամբ թշնամին կորցրեց 100-ից ավելի զինյալներ[33]: Հակառակորդը մեծ կորուստներ տվեց նաև Մարտունու շրջանում: Սեպտեմբերի 7-ի վաղ առավոտյան ուժգին հրետակոծության ենթարկվեց Մաճկալաշեն գյուղը: Մեծ ուժեր կենտրոնացնելով՝ հակառակորդը փորձում էր ճեղքել այդ ուղղությամբ ստեղծված ամուր պաշտպանությունը: Սակայն հանդիպելով աներևակայելի դիմադրության, տալով 120-ից ավելի զոհ՝ նահանջեց: ԻՊ ուժերի վերահսկողության տակ անցավ Մաճկալաշեն գյուղի հարավարևելյան ողջ տարածքը[34]: Սոս գյուղից գնդացրորդ Անդրեյ Գրիգորյանը հենց մարտի դաշտից «Արցախին» գրել է. «Սեպտեմբերի 6-ի առավոտյան 6 տանկով,

[31] *Արցախի պետական համալսարանի տեղեկագիր, N1, Ստեփանակերտ, 2001,էջ 109:*
[32] *«Արցախ», 08.09.1992:*
[33] *Նույն տեղում, 20.09.1992:*
[34] *Նույն տեղում: Տես նաև* Հասրաթյան Ս., *նշվ. աշխ., էջ 67:*

600–700 հետևակ զինվորներով թշնամին հարձակում գործեց Ամարասի ուղղությամբ: Անընդհատ խփում էին գյուղի մեր խրամատների վրա: Օգնության հասան Ճարտարի և Մաճկալաշենի ջոկատները: Թշնամու նահանջն ուժեղացրին մեր «գրադ» կայանքը, տանկերը և հրանոթները: Սեպտեմբերի 7-ի առավոտյան ժամը 6-ին կատաղած թշնամին կրկին հարձակվեց: Ամբողջ Ամարասի ձորակը բռնված էր կրակի բոցով: Ժամը 5-ին թշնամին ետ շպրտվեց իր դիրքերից»[35]:

Ադրբեջանը ձգտում էր սասանել արցախահայության բարոյական ոգին և մինչև ձմեռ իր օգտին ավարտել պատերազմը: Նոր ուժեր կուտակելով Արցախի հյուսիսային մասում՝ նպատակ ուներ տիրանալ Լաչինի միջանցքին և Արցախի կապը կտրել Հայաստանի հետ: Արցախի ԻՊ ուժերի հերոսական գործողությունների հետևանքով զգալիորեն բարելավվեց օպերատիվ իրադրությունը Հադրութի, Մարտունու և Ասկերանի պաշտպանական շրջաններում: Միայն սեպտեմբերի 1-ից մինչև 11-ը Արցախի տարբեր ռազմաճակատներում հակառակորդը տվել էր 600-700 զոհ[36]:

1992թ. ամառային ծանր օրերին, մանավանդ օգոստոսին, երբ ամբողջովին հայաթափվել էր Շահումյանը, ընկել էին Մարտակերտն ու տասնյակ հայկական գյուղեր և իրական վտանգը համընդհանուր էր դարձել Արցախի համար, Հայաստանի պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը օգոստոսի 15-ին ելույթ ունենալով Հայաստանի հեռուստատեսությամբ, կոչ արեց ստեղծել կամավորների գումարտակ, որը, հետո, հայտնի դարձավ Մահապարտների «Արծիվ» գումարտակ անունով: Վազգեն Սարգսյանը կամավորականներին կոչ արեց ստեղծել 500 հոգանոց զորագունդ, որը պետք է կռվեր Արցախի ամենաբարդ հատվածում[37]:

Օգոստոսի 16-ի վաղ առավոտվանից սկսվեցին հավաքագրվել կամավորական ջոկատները: Մեկ օրվա ընթացքում հավաքագրվել էին 500 ազատամարտիկներ, որոնք անցյալում մասնակցել էին տարբեր ռազմական գործողությունների և կռվելու փորձ ունեին: Նրանց նշանաբանն էր. կամ մահ, կամ ազատություն: Զորավարժություններն անց էին կացնում N գնդում և

[35] *«Արցախ», 10.09.1992:*
[36] *Նույն տեղում, 12.09.1992:*
[37] Սարգսյան Վ., *Ոգու փորձություն, էջ 207-228:*

մարտակայանում: 500 կամավորներից ընտրվեցին 375-ը: տասնօրյա պարապմունքներից հետո ստեղծվեց առաջին գումարտակը, կազմավորվեց 9 հրաձգային դասակ, ականանետային, հակատանկային առանձին վաշտեր, «Հ» պայմանական անունը կրող դասակը, կապի ծառայությունը: Կազմակերպչական աշխատանքները գլխավորում էին Աստվածատուր Պետրոսյանը և Արկադի Տեր-Թադևոսյանը: Գումարտակի հրամանատար նշանակվեց մարտական հարուստ փորձ ունեցող ազատամարտիկ Հովսեփ Հովսեփյանը, մարտական տեղակալ Սեյրան Անթանեսյանը[38]:

Օգոստոսի 27-ին գումարտակը կազմ-պատրաստ էր: Մեկ օր հետո մահապարտների «Արծիվ» գումարտակը կանգնեց պատվո տողանի: Օգոստոսի 29-ին սկսվեց զենքի բաշխումը: Ուշ գիշերին գումարտակը բարձրացավ Եռաբլուր: Տղաները ծաղիկներ դրեցին զոհված իրենց ընկերների շիրիմներին: Մոմերի լույսի ներքո հատուկ վաշտի հրամանատար Գարիկ Շառոյանը ընթերցեց մահապարտ Արծիվների երդման տեքստը, ապա ամբողջ գումարտակը երդվեց: Երդումն ընդունեց Վազգեն Սարգսյանը: Օգոստոսի 30-ին մահապարտները ճանապարհ ընկան և ուշ գիշերին հասան Ստեփանակերտ:

Գանձասարից թշնամին գտնվում էր 3-4 կմ հեռու: Այդ գիծը պաշտպանում էին ընդամենը 30 ազատամարտիկներ: Արցախի ԻՊ ուժերի հրամանատարության հանձնարարությամբ մահապարտները պետք է պաշտպանեին Սրխավենդ-Կիչան-Չլդրան-Վաղուհաս-Վանք-Օխի բարձունք-հատվածը: Ըստ հետախուզական տվյալների՝ 300 հայ կամավորների դիմաց կանգնած էր հակառակորդի կանոնավոր բանակի 3000-անոց զորամիավորում: Մահապարտները Վաղուհասում խուճապի մատնեցին հակառակորդին: Սեպտեմբերի 15-16-ը ռազմաճակատի այդ հատվածում հակառակորդը ծանր պարտություն կրեց: Սեպտեմբերի 18-ի գիշերը մոմերի լույսի ներքո գումարտակը հավաքվեց Գանձասարի եկեղեցու գավթում, և պարզվեց, որ ազատամարտիկներից 120-ը կնքված չէին: Հենց այդ գիշեր մոմի լույսի ներքո տղաները կնքվեցին: Սեպտեմբերի 19-ին մահապարտները, անցնելով գրոհի, ազատագրեցին Չլդրանը, Վաղուհասը, Հարությունգոմերը և ապահովեցին Սարսանգի ջրամբարի անվտան-

[38] *«Հայաստանի Հանրապետություն», 30.08.1997:*

գությունը: Հետագայում «Արծիվ-1»-ի մարտական ուղին շարունակեցին «Արծիվ-2» և «Արծիվ-3» կամավորական ջոկատները[39]:

Հայաստանի օգնությունը Արցախին հետզհետե մեծանում էր և ավելի գործնական դառնում: Հայոց համազգային շարժման վարչությունը, կոչով դիմելով հայ ժողովրդին, նշել է, որ հրոսակները շարունակում են առաջխաղացումը և սպառնում են Խաչենի հովտին ու Արցախի ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհներին: Արցախի վիճակը դառնում է օրհասական: Միմիայն հայ ժողովրդի բոլոր մարտունակ ուժերի աջակցությամբ ԼՂՀ նորակազմ բանակը կարող է ջախջախիչ հարված տալ թշնամուն: Միասնություն և հաղթանակ. սա է նշանաբանը: ՀՀՇ վարչությունը կոչ էր անում բոլոր արցախցիներին և հայրենի հողի համար կռվելու պատրաստ յուրաքանչյուր հայ քաջորդու՝ արցախյան մարտադաշտ մեկնելու, մեր երկիրն ու ազգային արժանապատվությունը պաշտպանելու համար ներկայանալ զորահավաքի[40]:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կայուն հիմքի վրա դրվեց նաև հակաօդային պաշտպանության ուժերի ստեղծման անհրաժեշտ գործը: Արդեն 1992-ի գարնանից արցախյան երկինքն ուներ արժանի պաշտպաններ: Աստիճանաբար կատարելագործվեցին հակաօդային ուժերը: Առաջնահերթ խնդիր դարձավ ռադիոլոկացիոն կայանքներ ունենալը: Ձեռք բերված առաջին ռադիոլոկացիոն կայանքի օգնությամբ հունիսի 12-ին Ասկերանի մոտ խփվել էր հակառակորդի ՍՈՒ-25 ինքնաթիռը: Այնուհետև մեկը մյուսի հետևից արցախյան երկնքում խփվեցին բազմաթիվ ինքնաթիռներ և ուղղաթիռներ: ԼՂՀ հակաօդային պաշտպանությունը հագեցված էր ժամանակակից տեխնիկական միջոցներով[41]:

Հանրապետությունում կայուն հիմքերի վրա դրվեց նաև զրահատանկային ծառայությունը: 1992թ. ապրիլին չորրորդ վաշտի հրամանատարի՝ տեխնիկայի գծով Յուրի Պողոսյանի և նրա համախոհների նախաձեռնությամբ ստեղծվել էր ԼՂՀ ԻՊՈՒ նորոգման բազան, որտեղ վերանորոգվում էր զրահատեխնիկան: Գումարտակը համալրվեց զինագործներով, էլեկտրոնային, կապի սարքավորումների, նորոգող-փականագործների բարձր որա-

[39] *Նույն տեղում:*
[40] *Նույն տեղում, 08.09.1992:*
[41] Հասրաթյան Սենոր, *Ղարաբաղյան պատերազմ, էջ 70-71:*

կավորում ունեցող մի շարք մասնագետներով: Երկու ամսվա ընթացքում վերանորոգվեց և մարտադաշտ ուղարկվեցին ավելի քան 15 ռազմավարային հրասայլ և այլ զրահատեխնիկա: Նաև պատահում էր, որ գումարտակի զինվորները նորոգումներն իրականացնում էին հենց ռազմաճակատի առաջին գծում[42]:

Չափազանց եռանդուն էր գործում ԼՂՀ ՊՊԿ-ն, որը թե ռազմաճակատի և թե հանրապետության բնակչության հուզող բազում հարցերին ձգտում էր դրական լուծում տալ: Այսպես. սեպտեմբերի 7-ին որոշում ընդունեց շուկայական ազատ գների և սակագների մասին, որը պետք է կիրառվեր սեպտեմբերի 10-ից սկսած, իսկ սեպտեմբերի 8-ին որոշում ընդունեց «ԼՂՀ նվազագույն աշխատավարձի, նվազագույն կենսաթոշակի, բյուջետային հիմնարկների աշխատողների, կենսաթոշակների, կրթաթոշակների և նպաստների չափերի մասին» որոշումը, որը հանրապետության բնակչության կողմից ընդունվեց ուրախությամբ: Եվ չնայած շարունակվում էր մայրաքաղաք Ստեփանակերտի ռմբակոծումը, և բնակչությունը հիմնականում տեղավորված էին ներքնահարկերում, այդուհանդերձ, շարունակվում էին ավերված բնակավայրերի, շինությունների, փողոցների վերականգնման աշխատանքները, ուսումնական և բուժհիմնարկները թեկուզ ամենանվազագույն չափով ստանում էին պահանջվող միջոցներ: Ուշադրության կենտրոնում էին զոհված և ռազմաճակատներում կռվող ազատամարտիկների ընտանիքները: Մի փոքր ուշ՝ 1992թ. հոկտեմբերի 12-ի, ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանի կարգադրությամբ կարգավորվեց հանրապետության ԻՊՈՒ-ի ստորաբաժանումներում ծառայության մեջ գտնվող աշխատողների աշխատավարձը: Ըստ որում՝ 1992-ի սեպտեմբերի 1-ից աշխատանքից ազատվում են ԻՊՈՒ ստորաբաժանումներում իսկական ծառայության մեջ գտնվող անձինք՝ պահպանելով նրանց աշխատանքի տեղը մինչև ծառայության ավարտը: Միաժամանակ հանձնարարվեց կոլտնտեսության վարչություններին՝ կոլտնտեսության անդամ աշխատողների հետ հավասար գյուղատնտեսական մթերքներով ապահովել ԼՂՀ ԻՊ ուժերի շարքերում գտնվող անձանց և նրանց ընտանիքների անդամներին[43]:

1992թ. սեպտեմբերի կեսերին հակառակորդը, չնայած ալմաաթյան պայմանավորվածությանը, շարունակում էր բարբարոսական գործողությունները: Նա նոր հարձակումներ ձեռնարկեց Մարտունու շրջանի ուղղությամբ: Սեպտեմբերի 19-ի առավոտյան հակառակորդը փորձեց ներխուժել Ճարտարի տարածք: Մարտունու ՊՇ ստորաբաժանումներին հաջողվեց ետ շպրտել թշնամուն և տիրանալ թիվ 40 և 50 պահակակետերին: Հակառակորդն ամրացել էր Ուրյանա սարի վրա, որտեղից պարբերաբար ռմբակոծում էր Ճարտար, Մաճկալաշեն և Սոս գյուղերը: Ազերի տանկերից սեպտեմբերի 20-ին արկակոծվեցին հայկական պաշտպանական դիրքերը: Սակայն հայ հրետանավորները խափանարար կրակով փակեցին թշնամու առաջխաղացումը[44]: Բայց և այնպես հակառակորդը հարձակման անցավ Մարտունու շրջանի Բերդաշեն, Մաճկալաշեն և Սոս գյուղերի ուղղություններով: Մարտերը շարունակվեցին մինչև ուշ երեկո: Հայկական այդ գյուղերի վրա արձակվել են մոտ 900 արկ և հրթիռ: Ազերիները ստիպված էին նահանջել՝ թողնելով 150 սպանված և խփված 8 տանկ: Զոհվել էր 16 ազատամարտիկ, վիրավորվել 7-ը: Հաջորդ օրը թուրք-ազերիները նոր գրոհ ձեռնարկեցին Մաճկալաշենի վրա, որին մասնակցում էր 12 տանկ: Սակայն այդ գրոհը ևս կասեցվեց: Այդ օրերին հակառակորդը Ասկերանի ուղղությամբ կորցրեց 100 ասկյար: Թուրք-ազերիները սեպտեմբերի 19-ին փորձեցին փակել Լաչինի միջանցքը: Ղոչազ գյուղի մոտ նրանց «դիմավորեցին» հայկական ուժերը: Հակառակորդը, թողնելով 25 սպանված, նահանջեց: Այդ մարտում ազատամարտիկները տվել են երեք զոհ և 5 վիրավոր: Միայն այդ վերջին մեկ օրվա մարտերի ժամանակ հակառակորդը տվել էր 275 զոհ[45]: Սեպտեմբերի 21-ի օրվա երկրորդ կեսին ՄԻԳ-25 ինքնաթիռները գնդիկավոր ռումբեր նետեցին Ստեփանակերտի, Ասկերանի շրջանի Բաղարա, Բալլուջա, Շոշ, Մարտունու շրջանի Հաղորտի գյուղերի վրա: Զոհվեց 4 և վիրավորվեց 19 խաղաղ բնակիչ: Հայ ազատամարտիկները խփեցին մեկ ինքնաթիռ[46]: Սեպտեմբերի 23-ին հակառակորդը գրոհ ձեռնարկեց Մարտունի քաղաքից հյուսիս-արևելք ուղղությամբ, սակայն թողնելով 15 դիակ՝ նահանջեց: Ապա տանկային գրոհ ձեռնարկվեց Գևորգավանի ուղղությամբ: Հակառակորդի 6 տանկեր և 100 հետևակայիններ սրընթաց մոտեցան հայկական պաշտպանական դիրքերին: Սակայն հայ ազատամար-

[42] *Նույն տեղում, էջ 71-72:*
[43] *«Արցախ», 20.10.1992:*
[44] *Արցախի պետական համալսարանի տեղեկագիր, N1, 2001, էջ 113:*
[45] *«Հայաստանի Հանրապետություն», 21.09.1992:*
[46] *Նույն տեղում, 22.09.1992:*

տիկների տեղատարափ կրակի տակ թշնամին նահանջեց՝ թողնելով 10 դիակ և գրոհային խմբի տանկեր[47]: Այդ նույն երեկոյան հակառակորդը տանկային գրոհ ձեռնարկեց Բերդաշենի երկար քար դիրքերի վրա: Բերդաշենցի մարտիկները կարողացան ետ շպրտել հակառակորդի գրոհը: Այդ օրերին Ասկերանի շրջանի Աղբուլաղ գյուղի ուղղությամբ շարժվող 6 տանկեր, 2 ՀՄՄ և հարյուրավոր հետևակներ ենթարկվեցին Մարտունու ՊՇ տանկերի հրետակոծությանը, որի հետևանքով շարքից հանվեցին 4 տանկ և 3 զրահամեքենա: Թշնամին, կեղծ լուրեր տարածելով, թե իբր գրավել է Մարտունու շրջանը, ամեն կերպ փորձում էր դա իրականացնել: Սեպտեմբերի 23-24-ը փորձեցին ներխուժել Մարտունու պաշտպանության շրջան, սակայն Մոնթե Մելքոնյանի գլխավորած ուժերը ձախողեցին հակառակորդի գործողությունները: Մինչ այդ՝ սեպտեմբերի 19-20-ը, Ասկերանի պաշտպանական շրջանում տեղի էին ունեցել ահեղ մարտեր, սակայն ազերիները, տալով տասնյակ զոհեր, ետ քաշվեցին: Սեպտեմբերի 18-ին Կուբաթլուի ռազմական հենակետում տեղակայված «գրադ» կայանքից հրթիռակոծության ենթարկվեցին Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը: Երկու օր շարունակվում էր հրթիռակոծությունը: Այս անգամ հարձակման թիրախ դարձան նաև Լաչինի ու Զաբուխի շրջակայքը: Նույնիսկ փորձեցին գրավել Լաչինի միջանցքը, սակայն կանգնեցվեցին մոտ 12 կմ հեռավորության վրա: Ապա փորձեցին Սարիբաբա ռազմավարական բարձունքից առաջանալ Լիսագորի ուղղությամբ, սակայն հետ շպրտվեցին: Հակառակորդը մեծ ջանքեր էր գործադրում փակել Լաչինի միջանցքը: Նա հույս ուներ կտրել ԼՂՀ ԻՊ ուժերի թիկունքը և Մարտակերտի ու Մարտունու ուղղություններով դուրս գալ Ստեփանակերտի վրա: Սակայն Լաչինի միջանցքը պաշտպանող հայկական կազմավորումները հերոսաբար պաշտպանեցին ռազմավարական մայրուղին[48]: Հակառակորդը փորձում էր Արցախի վրա ճնշում գործադրել օդուժի միջոցով: Սակայն հայ ազատամարտիկների համար սարսափելի ոչինչ չկար: Հակառակորդը Չլդրանի մոտ տվեց 27 զոհ, և խփվեց Տ-72 երեք տանկ: Նույն օրը՝ սեպտեմբերի 26-ին, դաժան մարտեր տեղի ունեցան Ասկերանի շրջանի Փառուխ գյուղի մոտ[49]: Սեպտեմբերի 29-ի գիշերը և 30-ի

[47] *Արցախի պետական համալսարանի տեղեկագիր, 2001, էջ 113-114:*
[48] *Նույն տեղում, էջ 114:*
[49] *«Հայաստանի Հանրապետություն», 29.09.1992:*

առավոտյան թշնամու ռազմական ինքնաթիռները ռմբահարվածներ հասցրին Գորիս-Լաչին ուղեհատվածի պաշտպանական դիրքերին, ինչպես նաև ռմբակոծեցին Ասկերանի շրջանի Ավետարանոց, Հադրութի շրջանի Ազոխ, Մեծ Թաղեր, Տումի գյուղերը: «Գրադ» կայանքից և հեռահար հրանոթներից ռմբակոծվեցին Մարտակերտի շրջանի Վանք, Կիչան, Ասկերանի շրջանի Խաչեն, Ուլուբաբ, Հադրութի շրջանի Էդիլլու, Մարտունու շրջանի Նոր շեն գյուղերը[50]: Սեպտեմբերի 30-ի առավոտյան հակառակորդը լայնածավալ հարձակում վերսկսեց Լաչինի միջանցքի ուղղությամբ: Միջանցքի հյուսիսային հատվածի ուղղությամբ գրոհ ձեռնարկեցին Քելբաջարի շրջանից: Ծանր մարտեր ընթացան Ղոչազ և Տիգիկ գյուղերում: Հայ քաջարի մարտիկները ետ մղեցին թշնամու առաջխաղացումը[51]:

Արցախահայությունը խիստ վրդովված էր, ատելությամբ և վրեժխնդրությամբ լի: Այդ օրերին «SOS-Ղարաբաղ» Հելսինկյան քաղաքական ասամբլեայի (ՀՔԱ) Լեռնային Ղարաբաղի կոմիտեն, հանդես գալով հայտարարությամբ, նշել է, որ համաշխարհային հանրության լռությունը հուշում է, որ աշխարհն այսօր չի հասկանում ղարաբաղյան ողբերգությունը և ողջ տարածաշրջանի համար հակամարտության պայթյունավտանգությունը: Ադրբեջանի բարբարոսական գործողությունների զոհ են դառնում առաջին հերթին կանայք, ծերունիներն ու երեխաները: Ներկայումս ամեն օր ռմբակոծվում է Արցախի տարածքը: Լեռնային Ղարաբաղի ՀՔԱ-ն, հիշեցնելով բոլոր ազգային կոմիտեներին, միջազգային կազմակերպություններին ու կուսակցություններին, կոչ էր անում կասեցնել արյունահեղությունը Ղարաբաղում և աջակցել ՀՔԱ Հայաստանի կոմիտեի «SOS-Ղարաբաղ» գործողությանը, որի նպատակն է ԼՂՀ բնակչությանը ցույց տալ հումանիտար օգնություն[52] :

1992թ. սեպտեմբերի 19-ին Սոչիում հանդիպեցին Հայաստանի և Ադրբեջանի պաշտպանության նախարարներ Վ.Սարգսյանը և Ռ.Ղազիևը, որոնք ստորագրեցին հետևյալ համաձայնագիրը. «Մինչև սեպտեմբերի 25-ը հրաման տալ բոլոր սպառազեն կազմավորումներին՝ դադարեցնելու ռազմական գործո-

[50] *«Արցախ», 01.10.1992:*
[51] *Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, N1, 2001, էջ 115:*
[52] *«Հայաստանի Հանրապետություն», 22.09.1992:*

ղությունները և սեպտեմբերի 25-ին՝ ժամը 24-ից, դադարեցնել կրակը զենքի բոլոր տեսակներից, երկու ամսով բոլոր տեսակի ռազմական գործողությունների մորատորիում հաստատել Ադրբեջանական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի ամբողջ երկայնքով և Լեռնային Ղարաբաղի շրջանում, հրադադարի պահից ձեռնամուխ լինել զինվորական կազմավորումների և զենքի բոլոր տեսակների փուլ առ փուլ ետքաշմանը այն կետեր, որոնք ապահովում են կողմերի անվտանգությունը՝ նկատի ունենալով նշված ժամանակամիջոցում լրիվ ետ քաշել զորքերը»: Ստորագրողները դիմում են Ռուսաստանին, Վրաստանին, Բելառուսին, Ուկրաինային և Ղազախստանին իրենց դիտորդներն ուղարկել կրակի և ռազմական գործողությունների դադարեցման շրջան[53]:

1992թ. սեպտեմբերի 21-ին Նախիջևանի ԻՀ առաջին սահմանապահ ուղեկալում տեղի ունեցան հայ-ադրբեջանական հերթական բանակցությունները, որի ընթացքում քննարկվեցին կրակի դադարեցմանը, սահմանամերձ շրջանների բնակչության անվտանգության ապահովմանը, հաղորդակցական ճանապարհների վերագործարկմանը և այլ խնդիրների վերաբերող հարցեր: Ստորագրվեց արձանագրություն, որի համաձայն՝ սեպտեմբերի 22-ին՝ ժամը 15-ից, կրակը դադարեցնել Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանի ողջ երկայնքով, ինչպես նաև Մեղրու և Զանգելանի շրջանների հատվածում[54]:

Սեպտեմբերի 23-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 47-րդ նստաշրջանում ելույթ ունենալով՝ Լևոն Տեր-Պետրոսյանը նշեց, որ «Չունենալով ոչ մի հողային պահանջ Ադրբեջանից՝ Հայաստանը պնդել է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդին չի կարելի վերածել էթնիկական փոքրամասնության և նրան զլանալ ինքնորոշման իրավունքը, չի կարելի թույլատրել, որ հողային ամբողջականության սկզբունքի քողի տակ տեղահանվի կամ ոչնչացվի այդ ժողովուրդը»: Հայաստանի նախագահը գտնում էր, որ Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգությունը պետք է ապահովվի միջազգային կայուն երաշխիքներով: Եվ չնայած Լեռնային Ղարաբաղի խորհրդարանը դրականորեն պատասխանեց ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի նախագահի ներկայացրած զինադադարի կոչին, սակայն Ադրբեջանը չարձագանքեց[55]:

Սոչի քաղաքի մոտերքում՝ «Կավկազ» պահակային նավի վրա, Ռուսաստանի ռազմական նախարար Պավել Գրաչովի նախագահությամբ ստորագրված վերոնշյալ համաձայնագիրը ինչոր հույսեր էր ներշնչում արցախահայությանը: Սակայն, ցավոք, այդ փաստաթուղթը ևս մնաց թղթի վրա: Սերժ Սարգսյանը, սեպտեմբերի 25-ին նամակ հղելով Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովին, նշել է, թե ըստ կրակը դադարեցնելու վերաբերյալ սեպտեմբերի 19-ին Սոչիում ստորագրված համաձայնության՝ ԼՂՀ-ն, հավատարիմ մնալով իր սկզբունքներին, պատրաստ է հրաման արձակել կրակը դադարեցնելու վերաբերյալ, եթե Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը ևս պատրաստ լինի դրան: Իսկ Ադրբեջանի պաշտպանության նախարար Ռահիմ Ղազիևը հայտարարեց, թե կասկածում է Սոչիի համաձայնագրի կատարման վրա, որովհետև իբր այն իրականացնելու մեխանիզմ չկա[56]:

Եվ, այսպես, 1992թ. ամռանը հակառակորդի սկսած մասսայական հարձակումներին հերոսաբար հակահարված էին տալիս հայոց ուժերը: Հենց այդ ժամանակ՝ սեպտեմբերին էլ վերջնականապես կազմավորվեց ԼՂՀ պաշտպանության բանակը, որը հանդիսացավ հանրապետության գոյատևման գլխավոր երաշխիքը:

Ռազմաճակատներն ամրապնդելու նպատակով ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարության հրամանով 1992թ. սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին ռազմաճակատի հյուսիսային հատված տեղափոխվեցին Կենտրոնական պաշտպանական շրջանի 2-րդ և 3-րդ գումարտակները, որոնք պետք է աջակցեին Առաջածորի և Վաղուհասի ուղղություններում գործող 5-րդ պաշտպանական շրջանի ուժերին: Լաչինի միջանցք տեղափոխվեց Ակնաղբյուրի և կենտրոնական պաշտպանական շրջանի առաջին գումարտակի անձնակազմը: Հոկտեմբերի սկզբին տեղ հասնելով՝ մարտի մեջ մտան մի քանի անգամ գերազանցող թշնամու ուժերի դեմ: Ակնաղբյուրի գումարտակը թշնամուն ջախջախեց Դեյիանի, Սուսուղդալի և Սուարասիի շրջաններում: Հակառակորդի կատաղի գրոհը ետ մղվեց նաև Շռլանի

[53] *Նույն տեղում:*
[54] *Նույն տեղում, 23.09.1992:*

[55] *Նույն տեղում, 24.09.1992:*
[56] *Նույն տեղում, 26.09.1992:*

մատույցներում: Արևելյան զորախմբին հաջողվեց հակառակորդի հենակետերը ոչնչացնել Ֆինգա-Այրազար-Ղոչազ հատվածներում, իսկ Դահրավի գումարտակը Վաղուհասի ուղղությամբ կորուստներ պատճառեց թշնամուն և վերացրեց Լիսագոր-Շուշի բնագծում Ղարաբաղյան ուժերի թիկունքում հակառակորդի հարձակվելու վտանգը[57]: Թշնամին մտադիր էր վերահսկողության տակ առնել Ասկերանի շրջան տանող ճանապարհը: Սակայն դա ավարտվեց անհաջողությամբ: Հակառակորդը կորցրեց մոտ 25 զինվոր, մեկ S-72 և երկու մարտական մեքենա[58]: Այսպես. 1992թ. հունվարից մինչև նույն տարվա օգոստոսի վերջը ութ ամսում, տվել էր 5 հազար զոհ, 18 հազար վիրավոր, դասալիք էին դարձել շուրջ 20 հազար ասկյար: Այդ ժամանակաշրջանում Ադրբեջանի բանակը կորցրել էր 115 հրասայլ և մեկ տասնյակից ավելի ինքնաթիռներ ու ուղղաթիռներ[59]: Մինչդեռ հայկական կողմը տվել էր 1050 զոհ, և շարքից դուրս էր եկել 15 հրասայլ[60]: Սա էր իրական պատկերը:

Ադրբեջանի արտգործնախարար Թոֆիկ Գասումովը սեպտեմբերի սկզբին հայտարարել էր, թե «Լեռնային Ղարաբաղի երկնքում գործող ռազմական ինքնաթիռները Ադրբեջանին ուղղակիորեն տրամադրել են Ռուսաստանի իշխանությունները»[61]: Ադրբեջանը մեծամեծ խոստումներ էր տալիս և ձգտում սիրաշահել իր ասկյարներին: Օրինակ՝ Բաքվի նավթային քարերի նավթագազաարդյունաբերական ծովային վարչության կոլեկտիվը 100 հազար ռուբլու դրամական մրցանակ էր սահմանել ադրբեջանական բանակի այն զինվորին, ով առաջինը ադրբեջանական դրոշը կծածաներ Ստեփանակերտի վրա[62]:

Սոչիում ստորագրված համաձայնությունը ևս վեր էր ածվել անիրագործելի փաստի, որովհետև, ինչպես տեսանք, ռազմաճակատներում չէին դադարել ռազմական գործողությունները, և Ադրբեջանը ԼՂՀ մայրաքաղաքն ու այլ բնակավայրեր ոչնչացնելու համար մի քանի անգամ բազմապատկել էր օդուժի գործողությունները: Սեպտեմբերի վերջին ժամանելով՝ դիտորդները

[57] Հասրաթյան Ս., նշվ. աշխ., էջ 75:
[58] *«Հայաստանի Հանրապետություն», 01.10.1992:*
[59] Հասրաթյան Ս., *Գոյամարտ, Ստեփանակերտ, 1998, էջ 17:*
[60] Նույնի՝ *Ղարաբաղյան պատերազմ, էջ 84:*
[61] *«Արցախ», 08.09.1992:*
[62] *Նույն տեղում:*

ձգտում էին գործողության մեջ դնել Սոչիի համաձայնությունը և անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները: Սակայն այդ բնագավառում խոչընդոտները սաստիկ շատ էին և գրեթե անիրագործելի: Օրինակ՝ Ամիրանլարի, Մուղանլուի և Կուրոպատկինոյի կրակակետերից անընդհատ հրետակոծվում էր Մարտունի քաղաքը: Այդ կրակակետերի լռեցնելը դարձել էր խիստ անհրաժեշտություն, որն իրագործվեց Մարտունու ՊՇ-ի կողմից հոկտեմբերի 2-ին, և Մարտունի քաղաքը վերջնականապես ազատվեց հրետակոծությունից[63]:

Մարտակերտի ռազմաճակատը շարունակում էր մնալ բոլորից ծանր: 1992թ. հոկտեմբերին հյուսիսային ռազմաճակատի ղեկավարությունը հանձնվեց Կենտրոնական պաշտպանական շրջանի հրամանատար Սամվել Կարապետյանին, որը և նախաձեռնեց մարտագծի այդ հատվածում կազմակերպել ամուր պաշտպանություն ու կանգնեցնել թշնամու հետագա առաջխաղացումը[64]:

Հոկտեմբերի կեսերին պատերազմական գործողությունների հիմնական թատերաբեմը դարձել էր Լաչինի միջանցքը: Հակառակորդը լայնածավալ գործողություններ էր ձեռնարկում հյուսիսից և հարավից: Քելբաջարի և Կուբաթլուի շրջանների ռազմական հենակետերից պարբերաբար հրթիռա-հրետակոծվում էին մարդասիրական միջանցքին հարող տարածքները և ինքնապաշտպանության ուժերի դիրքերը: Հոկտեմբերի 4-ին հակառակորդը հարձակում գործեց Լիսագորի ուղղությամբ՝ նպատակ ունենալով ճեղքել հայկական ուժերի պաշտպանությունը և դուրս գալ ավտոմայրուղի: Հակառակորդի առաջխաղացումը կանգնեցվեց, և նրան ստիպեցին նահանջել՝ թողնելով 20 դիակ: Թշնամու գերձայնային կործանիչները չորս անգամ ռմբակոծեցին հայկական ջոկատների դիրքերը և ավտոմայրուղու մերձակա գոտիները: Խփվեց հակառակորդի ինքնաթիռներից մեկը:

Հակառակորդին լռեցնելու համար լայնածավալ գործողություններ ձեռնարկեցին Հադրութի շրջանի հարավային սահմանները պաշտպանող ստորաբաժանումները: Թիվ մեկ խնդիրը դարձավ Խծաբերդ գյուղի շրջակայքում գտնվող Թոփաղաճ լեռան գրավումը, որն իշխում էր Լաչինի և Կուբաթլիի շրջանների զգալի տարածքների վրա: Հոկտեմբերի 12-ին հակառակորդը

[63] *Նույն տեղում, 08.10.1992:*
[64] Հասրաթյան Ս., *Ղարաբաղյան պատերազմ, էջ 77:*

դուրս քշվեց, և իրար ետևից հայ ազատամարտիկները գրավեցին բոլոր կարևոր դիրքերը: Այդ ռազմական գործողությունների շնորհիվ բացվեց Ղարաբաղ-Հայաստան երկրորդ ճանապարհը՝ Հադրութ-Գորիս հատվածով: Իսկ երկու օր անց՝ հոկտեմբերի 14-ին, թշնամին ակտիվ գործողություններ սկսեց միջանցքի հյուսիսային կողմից՝ Ղոչազ լեռան ուղղությամբ: Հակառակորդը հույսը դնելով տեխնիկայի և կենդանի ուժի գերազանցության վրա, փորձում էր տիրել Ղոչազի բարձունքին: Սակայն հայ մարտիկների խելամիտ մարտավարության շնորհիվ՝ հակառակորդը նահանջեց՝ մարտադաշտում թողնելով բազմաթիվ զոհեր և զինատեխնիկա: Հետո ռազմական գործողությունները տեղափոխվեցին Սարի Բաբա լեռան փեշերը: Հակառակորդը, Գորիսի շրջանի սահմանամերձ գյուղերը և միջանցքի հարավային տարածքները գնդակոծության էր ենթարկում Խրմանլարի և Մազմազակի կրակակետերից: ԼՂՀ ԻՊ ուժերի կողմից ձեռնարկված վճռական գործողությունների արդյունքում լռեցվեցին այդ կրակակետերը, և ապահովվեց երթևեկությունը Ստեփանակերտ-Լաչին-Գորիս մայրուղիով[65]: Նոյեմբերի 20-ին ղարաբաղյան ուժերը, Լաչինի հյուսիսային շրջանում հակառակորդին ճնշելով Հայի Բազար, Լուլիդազ, Ղոչլու և Դարաջանլի բնակավայրերի ուղղությամբ, խորացան դեպի Քելբաջարի կողմը[66] :

Հակառակորդը փորձեց ակտիվություն ցուցաբերել մնացած ռազմաճակատներում: Հոկտեմբերի 29-ին լայնածավալ գրոհ ձեռնարկեց Աբդալ-Գյուլափլի ուղղությամբ, որն ավարտվեց անհաջողությամբ, և կորցրեց հետևակի երկու մարտական մեքենա և այլ ռազմական տեխնիկա: Ազերիների փորձերն անհաջողությամբ ավարտվեց նաև հոկտեմբերի 30-ին Խրամորթ գյուղի ուղղությամբ սկսած հարձակումը: Մարտունու շրջանի Ուրյան լեռան կողմից ճարտարի ուղղությամբ նոյեմբերի սկզբին կատարված հարձակումը վերջացավ հակառակորդի կողմից երկու հրասայլ և մեկ հետևակի մարտական մեքենա կորցնելով: 1992թ. նոյեմբերի սկզբին հակառակորդը հարձակումները ակտիվացրեց հյուսիսային ռազմաճակատում, Առաջածոր և Չլդրան գյուղերի արանքում, որը ետ մղվեց հայ ազատամարտիկների կողմից: Իսկ նոյեմբերի 9-ին Լաչինի շրջանի հատվածում՝ Սաֆյան և Հյուսիսային Տիգիկ բնակավայրերի շրջակայքում, սկսված մարտական

[65] *Նույն տեղում, էջ 78-79:*
[66] *Նույն տեղում, էջ 85:*

գործողությունների արդյունքում ԼՂՀ ԻՊ ուժերը հակառակորդին ստիպեցին ետ նահանջել: Հակառակորդը, որպեսզի ԻՊ ուժերի ուշադրությունը շեղի միջանցքի ապահով պաշտպանությունը կազմակերպելուց, դեռևս հոկտեմբերի կեսերից սկսած հրետանային նշանառության թիրախ դարձրեց Ստեփանակերտը: Աղդամի շրջանից «գրադ» կայանքներն անընդհատ հրթիռակոծում էին Ստեփանակերտն ու Ասկերանի շրջանի մի շարք գյուղեր: Միայն հոկտեմբերի վերջին օրերին Ստեփանակերտը մի քանի անգամ ռմբակոծվեց հակառակորդի օդուժի կողմից: Նոյեմբերի 22-ին ԼՂՀ ԻՊ ուժերը Մարտունու շրջանում դուրս եկան հանրապետության պետական սահման և 20 կմ երկարությամբ պահակակետեր տեղադրեցին: Նոյեմբերի առաջին կեսերին ռազմական գործողություններն ավելի թեժացան Մարտակերտի շրջանում: Այս անգամ նախահարձակվողը հանդիսացավ ղարաբաղյան կողմը: ԼՂՀ ԻՊ ուժերը կարողացան շեշտակի հարվածով ազատագրել Վաղուհաս, Հարությունագոմեր ու Կոճողոտ գյուղերը և ընդհուպ մոտենալ Չլդրանին: ԻՊ ուժերը հսկողության տակ առան Թարթառ-Մարտակերտ-Քելբաջար մայրուղին: Համարձակ և դիպուկ գործողությունների հետևանքով հայկական ուժերը նոյեմբերի 15-ին ազատագրեցին ռազմական կարևորագույն ու հանգուցային կետ հանդիսացող Չլդրան գյուղը և հակառակորդին ստիպել նահանջել Դրմբոնի կողմը: Չլդրանը գրավելու ժամանակ թշնամին մարտադաշտում թողեց 70 սպանված, հայկական կողմը տվեց 7 զոհ: Նոյեմբերի 13-ի երեկոյան ՄԻԳ, ՍՈՒ և Լ-29 տիպի 6 ինքնաթիռներով ռմբակոծվեց Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի շրջակայքը[67]: Նոյեմբերի 15-ի օրվա վերջին ԼՂՀ ԻՊ ուժերը ընդհուպ մոտեցան Թարթառ-Մարտակերտ-Քելբաջար մայրուղուն: Սակայն հակառակորդին հաջողվեց նոյեմբերի 16-ին կանգնեցնել ղարաբաղյան ուժերի առաջխաղացումը և կրկին հակահարձակողական գործողություններ ծավալել: Այս անգամ հակառակորդի հարվածային հիմնական ուղղությունը Վաղուհասի ճակատն էր: Նոյեմբերի 17-ին ԼՂՀ ԻՊ ուժերը հակառակորդի դեմ կենաց ու մահու մարտեր էին մղում ամբողջ ռազմաճակատի երկարությամբ: Թշնամին փորձում էր ճեղքել հայկական ուժերի պաշտպանական գիծը: Դեկտեմբերի 6-ին Աղդամի կողմից Ասկերանի շրջանի ուղղությամբ ադրբեջանական զինված կազմավորումների սկսած լայնածավալ հարձակումը կրում էր «Մորկա-

[67] *«Հայաստանի Հանրապետություն, 17.11.1992:*

հողմ» անունը: Այն գլխավորում էր Ադրբեջանի բանակի գլխավոր շտաբի փորձառու զորավարներից մեկը: ԼՂՀ ԻՊ ուժերի հակահարվածի շնորհիվ «Մրրկահողմ» գործողությունը լիովին ձախողվեց, հակառակորդը մարտադաշտում թողեց 5 տանկ, 3 զրահամեքենա, 150 սպանված: Հայկական կողմը տվեց 7 զոհ և 9 վիրավոր[68]:

Շահումյանի շրջանը և Մարտակերտի հյուսիսային շրջանը հակառակորդի կողմից զավթվելուց հետո այնտեղ կազմակերպվեց պարտիզանական պայքար, որը գլխավորում էր Շահումյանի շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Շահեն Մեղրյանը[69]: Հայդուկային այդ ջոկատը ահ ու սարսափ էր տարածում թշնամու շարքերում: 1992թ. հոկտեմբերի 21-ին պարտիզանները Սարսանգ-Հաթերք ճանապարհի վրա շարքից հանեցին հակառակորդի չորս բեռնատար մեքենա և ոչնչացրին ազերիների 9 զինյալների: Հենց նրանք վերցրին Շահումյան ավանից դեպի Վերինշեն ընկած տարածքում գտնվող հակառակորդի ուղեկալը, ռազմական 3 մեքենա և 10 ասկյարի: Պարտիզանների նման գործողությունները, որոնց հետևանքով թշնամին ոչ քիչ կորուստներ տվեց, նպաստեցին Մարտակերտի ռազմաճակատում գործող ինքնապաշտպանության ուժերի հաջողություններին[70]:

Ուխտադրուժ հակառակորդն անընդհատ ավելացնում էր ռազմական ուժերը: 1992թ. նոյեմբերի տվյալներով՝ Ադրբեջանի ազգային բանակն ուներ 297 միավոր Տ-72 մակնիշի տանկ, 171 միավոր ԲՄՊ-1, 225 միավոր ԲՄՊ-2, մինչդեռ սովորական զինված ուժերի մասին պայմանագրի ու Բուդապեշտյան համաձայ-

[68] *Նույն տեղում, 08.12.1992:*

[69] *Շահեն Մեղրյանը ծնվել է 1952թ. հունվարի 3-ին Շահումյանի շրջանի Գյուլիստան գյուղում: Ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Աշխատել է հայրենի շրջանի գյուղատնտեսական խոշոր ձեռնարկությունում որպես տնտեսագետ, հետո՝ պահածոների գործարանի տնօրեն: 1991թ. գարնանից աշխատել է շրջխորհրդի գործկոմի նախագահ և շրջանի ինքնապաշտպանության ուժերի գլխավոր հրամանատար: 1992թ. ամռանը, Շահումյանի անկումից հետո, Շահեն Մեղրյանը գլխավորում էր պարտիզանական շարժումը: 1993թ. ապրիլի 17-ին նա մի խումբ ընկերների հետ զոհվեց ուղղաթիռում դարանակալ թշնամու արկից: Զոհված հերոսներին հողին հանձնեցին Երևանի Եռաբլրի հուշահամալիրում:*

[70] Նանագյուլյան Ա., *Շահեն, եր., 1993:*

նագրի համաձայն՝ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի համար սպառազինության և տեխնիկայի հետևյալ առավելագույն քանակություն է սահմանվել. մարտական տանկեր՝ 220 միավորից ոչ ավելի, մարտական զրահապատ մեքենաներ 220 միավոր, այդ թվում՝ ծանր սպառազինության մարտական մեքենաներ՝ 11-ից ոչ ավելի, հրետանային համակարգեր՝ 285 միավոր, մարտական ինքնաթիռներ՝ 100 միավոր, հարվածային ուղղաթիռներ՝ 50 միավոր[71]: Արդեն շարքից հանվել էին հակառակորդի ՍՈՒ տիպի կործանիչ ինքնաթիռները: Որոշեցին օգտագործել ՄԻԳ ինքնաթիռներ, սակայն այդ ինքնաթիռների համար Ռուսաստանից պետք է ձեռք բերեին հրթիռներ: Երբ հոկտեմբերի 9-ին Բաքվում հանդիսավոր պայմաններում նշվում էր ազգային բանակի ստեղծման տարեդարձը, նախագահ Ա.Էլչիբեյը հանրապետության բնակչությանը վստահեցնում էր, որ շուտով խանքենդիի վրա կծածանվի Ադրբեջանի դրոշը, իսկ դրա համար պետք է ավելի ուժեղացվի բանակը: Նա, երբ նախագահ էր ընտրվում, խոստացել էր երեք ամսում լուծել Արցախի խնդիրը: Այդ ժամանակը վաղուց էր անցել: Հետո խնդրել էր 10 օր, մինչդեռ անցել էր մեկ ամիս[72]: Հոկտեմբերի 9-ին Բաքվի Ազատլըգ հրապարակում տեղի ունեցած զորահավաքի պատվավոր հյուրն էր Թուրքիայի ռազմական նախարար Նեզաթ Այազը: Դա լոկ հարգանքի տուրք չէր և ոչ էլ դիվանագիտական հավուրպատշաճություն: Թուրքիան առաջինը ճանաչեց Ադրբեջանի անկախությունը և միջազգային ասպարեզում ներկայացնում է նրա շահերը: Ադրբեջանում տիրող անկայունությունը չէր կարող չանհանգստացնել ավագ եղբորը: Այստեղ՝ ազգային բանակում, դասալքությունները և օրինախախտումները համատարած բնույթ էին կրում: Կան տվյալներ, որ միայն Մարտունու ռազմաճակատի ուղղությամբ գործող ազերիների մի գումարտակից դասալիք էին եղել 180 ասկյար: Նույնիսկ Ադրբեջանի ներքին գործերի նախարար Ի.Համիդովը ծեծել էր «Այնա» («Հայելի») թերթի թղթակից Ջ.Հյուսեյնովին իբրև ռազմաճակատից ոչ ճիշտ տեղեկություններ տպագրելու համար, որի պատճառով էլ հոկտեմբերի 3-ին քսանից ավելի խոշորագույն թերթերի խմբագիրներ և տասնյակ լրագրողներ դիմել էին գործադուլի[73]: Հոկտեմ-

[71] *«Արցախ», 21.11.1992:*

[72] *Նույն տեղում, 10.10.1992:*

[73] *Նույն տեղում, 08.10.1992:*

բերի կեսերին Ադրբեջանում լրացուցիչ զորահավաք էր սկսվել ազգային բանակը համալրելու համար: Այդ զորակոչվածները, որոնք 18-20 տարեկան պատանիներ էին, ուղիղ ուղարկվում էին Ղարաբաղյան ռազմաճակատ: Այդտեղ քիչ ազդեցություն չունեին վարձկանները, առանձնապես Աֆղանստանից, Պակիստանից, Ուկրաինայից, Ռուսաստանից և այլ երկրներից[74]:

Արցախցիները, բացի ռազմաճակատներում մարտնչելուց, շարունակում էին արդարացի պահանջներ ներկայացնել միջազգային հանրությանը: ԼՂՀ ՊՊԿ-ն 1992թ. հոկտեմբերի 15-ին հայտարարում է, որ մարտնչելով թվապես գերակշռող հակառակորդի դեմ երբեք չենք նահանջի, չնայած ահավոր երկրաշարժը, շրջափակումը և պետական սահմանների պաշտպանությունը ուժասպառ են արել Հայաստանի տնտեսությունը: Մինչդեռ առանց Մայր Հայաստանի Ղարաբաղը չի գոյատևի: ՊՊԿ-ն կոչ էր անում պատժել բոլոր նրանց, ովքեր թալանում էին ժողովրդական սեփականությունը և հարվածում ինքնապաշտպանության գործին: Իսկ Լևոն Տեր-Պետրոսյանը նոյեմբերի 11-ին լրագրողների հետ ունեցած հանդիպման ժամանակ շեշտել է, որ բոլորիս համար հիմնական խնդիրը զինադադարն է և Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորումն ու նրա նորմալ կենսագործունեությունը[75]: Ելնելով ստեղծված իրադրությունից՝ ԼՂՀ ՊՊԿ-ն և ԼՂՀ ԳԽ նախագահությունը կարգադրություն հրապարակեց, որը հանրապետության զինկոմիսարիատին հանձնարարում էր հայտարարել հանրապետության բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների զորակոչ: ԼՂՀ ՊՊԿ-ն միաժամանակ դիմեց ՀՀ կառավարությանը, բարձրագույն կրթության և գիտության նախարարությանը, հանրապետության զինկոմիսարիատին՝ խնդրելով ցուցում տալ համապատասխան ատյաններին՝ անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել Լեռնային Ղարաբաղում ծնված, Հայաստանի ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների զորակոչը կազմակերպված անցկացնելու և հայրենիքի պաշտպանության սրբազան պարտքը կատարելու համար նրանց ուղարկել ԼՂՀ[76]: Մարտակերտի շրջանում ԼՂ Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի լիա-

[74] *Նույն տեղում, 05.11.1992:*
[75] *«Հայաստանի Հանրապետություն», 14.11.1992:*
[76] *«Արցախ», 20.10.1992:*

զոր ներկայացուցիչ Բորիս Բաբայանը, նոյեմբերի 3-ին դիմելով ԼՂՀ-ից դուրս ժամանակավորապես ապաստանած մարտակերտցիներին, նրանց հիշեցնում էր, որ հակառակորդը կանգնեցվել է Վաղուհաս-Ղազանչի երկարությամբ, ու միջոցներ են ձեռնարկվում բռնագրավված տարածքները ազատագրելու և մարդկանց իրենց մշտական բնակության վայրերը վերադարձնելու համար: Սակայն շատ մարտակերտցիներ, խուսափելով պարտադիր զինվորական ծառայությունից, թաքնվում են Հայաստանում, ԱՊՀ-ի և այլ երկրներում: Նրանք պետք է վերադառնան հայրենիք և կանգնեն նրա պաշտպանության դիրքերում[77]:

Արցախի ճակատագիրը խիստ մտահոգում էր աշխարհի շատ ժողովուրդների և քաղաքական գործիչների: ԱՄՆ-ի սենատորներ Ջոզեֆ Լիբերմենը, Քյելբորն Փելլը, Արլեն Սպեկտորը և Ռոբերտ Դոհուլը, դիմելով նախագահ Բուշին, նշում են, որ Ադրբեջանի կողմից Հայաստանի խաղաղ բնակչության և Ղարաբաղի դեմ լայնամասշտաբ ռմբակոծումը Կովկասի հակամարտության սրման լուրջ վտանգ է ներկայացնում: Ժամանակակից ռազմական տեխնիկա, հատկապես ՍՈՒ-25 գրոհային ինքնաթիռների օգտագործումը հայ բնակչությանը դրել է ծայրահեղ ողբալի վիճակում: Ադրբեջանի կողմից իրագործվող քայլերը հարցականի տակ են դնում հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ կոնստրուկտիվ երկխոսության ցանկությունը: Սենատորները կարծում էին, որ Կովկասի ճգնաժամը պետք է հանդիսանա ՄԱԿ-ի օրակարգի առաջին հարցերից մեկը: Նրանք համոզված էին, որ «Միջազգային հանրությունը պետք է գործի, քանի դեռ բոլոր հայերը չեն քշվել Ղարաբաղից, և զոհերի թիվը չի շատացել Հայաստանում ու Ադրբեջանում»[78]:

Հակառակորդի հետ բանակցություններ սկսելու գաղափարը ոմանց մոտ նստվածք էր տալիս: ՀՀ ԳԽ 55 պատգամավորներ, դիմելով Ադրբեջանի և Հայաստանի Հանրապետությունների նախարարներին, խորհրդարաններին, քաղաքական գործիչներին և մտավորականությանը կոչ էին անում առանց որևէ միջնորդի և առանց նախապայմանների բանակցություններ սկսել:

[77] *Նույն տեղում, 05.11.1992: Այդ ժամանակ հայ փախստականների թիվը Արցախից կազմում էր 114 հազար, որից 83 հազարը՝ Հյուսիսային Արցախից, իսկ 31 հազարը՝ Շահումյանի և Մարտակերտի շրջաններից (Анексия и депортация, Степанакерт, 1998, с. 13).*
[78] *«Արցախ», 20.10.1992:*

ԼՂՀ ԳԽ նախագահությունը հույս հայտնեց, որ ՀՀ ԳԽ-ն առաջիկա նիստում կքննարկի այդ դիմումը, և կտրվի սկզբունքային գնահատական: Ըստ էության, Հայաստանի մի խումբ խորհրդականներ չէին ճանաչում ԼՂՀ-ն որպես հակամարտության սուբյեկտ, որով ջուր էին լցնում հակառակորդի ջրաղացին, և Հայաստանը համարվում էր ագրեսոր: ԼՂՀ ԳԽ նախագահությունը ամբողջ աշխարհի առաջ մի անգամ ևս հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ոչ ոքի չէր լիազորել «տնօրինելու իր ճակատագիրը և չի ընդունի իրեն պարտադրված որոշումները»[79]: ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը այն համոզման էր, որ արցախյան խնդիրը պատերազմով չի լուծվի: Նա այդ մասին խոսեց նոյեմբերի 13-ին «Իզվեստիա» թերթին տված հարցազրույցում: Նա հույս էր հայտնում, որ Ադրբեջանը ևս դա կըմբռնի և կընդունի կրակի լրիվ ու անվերապահ դադարեցումը: Նրա կարծիքով միայն դրանից հետո «արդեն հանգիստ, խաղաղ իրավիճակում կարելի կլինի քննարկել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը»: Պարզվում է, որ այդ նվագի պատվիրողը և առաջին պարողը հանդիսացել էր ՀՀ ԳԽ պատգամավոր, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանը, որը, 1992թ. նոյեմբերի 5-10-ը գտնվելով Բաքվում, այնտեղից վերադառնալուց հետո «Ազգի» նոյեմբերի 14-ի համարում հանդես էր եկել թուրքական «խրատներով»:

Աշոտ Բլեյանի պրագմատիզմը հասնում էր ցինիզմի: Նրա այդ քայլի մասին իրենց վճռական խոսքն ասացին շատերը, ինչպես «Արցախ-Հայաստան» հասարակական-քաղաքական կազմակերպությունը, պրոֆեսոր Սուրեն Զոլյանը, Ռուբեն Թորոսյանը և ուրիշներ: Դեռևս նոյեմբերի 4-ին պատգամավոր Արկադի Սարգսյանը 18 պատգամավորների անունից խորհրդարանում հրապարակել է հայտարարություն, որտեղ ասված է, թե Աշոտ Բլեյանի հետ պայմանավորվել էինք 55-ի ստորագրած ուղերձը քննարկել խորհրդարանում: Սակայն նա առանց խորհրդարանի և ուղերձի տակ ստորագրած պատգամավորների իմացության մեկնել է Մոսկվա, այնտեղից էլ՝ Բաքու: Նա խաբել ու ստորագրել է տվել 55 պատգամավորների և այդ փաստաթուղթը հասցրել Բաքու: Շավարշ Քոչարյանը հայտարարեց, թե այդ փաստաթղթի տակ ստորագրողները, ըստ էության, Հայաստանը ճանաչում են

[79] *«Երկիր», 14.11.1992: Տես նաև ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, գ. 1, գ. 6, թ. 10-12:*

որպես կոնֆլիկտի մի կողմ, մինչդեռ պատերազմը գնում է Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև[79]:

1992 թվականը Արցախի պատմության մեջ մտավ որպես փորձության, տաք, հուսախաբված և կարծր տարի: Ադրբեջանի կողմից պարտադրված պատերազմը արցախահայությունից խլեց հարյուրավոր կյանքեր, առաջ բերեց մեծ ավերածություններ, որի հետևանքով երկրամասը կրեց նյութական մեծ վնաս: Չնայած դրան՝ այդուհանդերձ, արցախահայությունը դիմանում էր մեծագույն դժվարություններ հաղթահարելով: Արցախի ոգու արիությունը անընկճելի էր[80]:

[79] **Арутюнян В. Б.,** *նշվ. աշխ., էջ 205:*

[80] *1992թ. նոյեմբերի 17-ին տեղի ունեցած ԼՂՀ ԳԽ նախագահության նիստում քննարկվեցին հանրապետության օրհներգի և զինանշանի ընդունման, ԳԽ ապարատի վերակառուցման, նրա հաստիքացուցակի հաստատման, ինչպես և այլ կազմակերպչական հարցեր: Օրհներգի հարցում առաջնությունը տրվեց ստեփանակերտցի երգահան Արմեն Նասիբյանի և բանաստեղծ Վարդան Հակոբյանի ստեղծած տարբերակին: Դա էլ հաստատվեց: ԳԽ նախագահությունը ընտրեց զինանշանի ստեփանակերտցի նկարիչ Լավրենտ Դալայանի տարբերակը՝ բացված թևերով արծիվը, գլխավերևում՝ արևաշողեր արձակող Արտաշեսյան թագը, կենտրոնում՝ ԼՂՀ պետական դրոշը և Քիրս լեռան ֆոնի վրա «Տատիկ ու պապիկ» անդրիապատկերը, ներքևում՝ մագիլների մեջ առնված խաղողի վազը, թթի պտուղները, ցորենի հասկերը, վերևի կիսաշրջան «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Արցախ» մակագրությամբ հանդերձ: ԼՂՀ օրհներգը առաջին անգամ հնչեց հանրահռչակ դիրիժոր Օհան Դուրյանի ղեկավարած Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ: 1992թ. նոյեմբերի վերջին ԼՂՀ ԳԽ շենքին բարձրացվեց արցախյան եռագույն դրոշը:*

3. ԼՂՀ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԴԻՐՔԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ (1993 ՀՈՒՆՎԱՐ–ՀՈՒՆԻՍ)

Մեկ տարի առաջ Ադրբեջանը Արցախին ներքաշեց պատերազմի մեջ: Արցախցու գլխավոր գենքը հանդիսացան նրա արիությունը և հաղթելու ձգտումը: Թշնամու կողմից նորանոր խմբաքանակներով զինատեսակների կիրառումը ռազմաճակատներում ավելի էր բորբոքում արցախցիների ատելությունը և բարձրացնում հաղթելու նրա ցասումը: Հակառակորդի զինական գերակշռությանը հանդիպելով արցախցիների հնուտ մարտավարությունն ու խիզախությունը հոդս էր ցնդում: Եվ չնայած 1992թ. ամառվանից ավելի ծանրացան արցախցիների հոգսերը, և նոր ծավալ ընդունեց ներհանրապետական լարվածությունը, այդուհանդերձ, նրանք մնացին անսասան: Մեկուսացված և չճանաչված Արցախի Հանրապետությունը հույսը դրել էր իր և Մայր Հայաստանի պաշտպանական ուժերի վրա: Անողոք թշնամին բռնազավթել էր հանրապետության տարածքի մի բավականին մասը, որի ազատագրումը դարձել էր ամենահրատապ խնդիրը:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը, 1992թ. դեկտեմբերի 10-ին դիմելով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին, պետությունների ընկերակցություններին և աշխարհի պետություններին, նշում է, որ Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունը բռնել է հայերով բնակեցված ԼՂՀ բնակչության բռնատեղահանման և նրանց ֆիզիկապես ոչնչացման քաղաքականություն: Ապա համառոտակի շարադրելով մարզի անցած պատմական ուղին՝ խնդրում է ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գոյության փաստը և, ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն, ագրեսորի դեմ կիրառել պատժամիջոցներ[1]:

Ղարաբաղյան հերոսամարտի 6-րդ տարին՝ 1993 թվականը, Արցախ մտավ չափազանց ծանր քայլերով: ԼՂՀ ԳԽ նախագահությունը և ՊՊԿ-ն, դեկտեմբերի 30-ին հանդես գալով համատեղ հայտարարությամբ, նշեցին, որ հակառակորդի ճնշման դեմ կարելի է կանգնել միայն ուժով, և յուրաքանչյուր հայի պարտքն է Արցախը վերածել անառիկ ամրոցի: Արցախցիները պետք է ոչ միայն հերոսաբար հաղթահարեն թշնամու կողմից ստեղծված բոլոր դժվարությունները, այլև թեթևացնեն ձմռան

[1] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, գ. 1, գ. 6, թ. 57-58:*

ծանրությունը: Բնակչությանը տեղյակ է պահվում, որ սկսել են աշխատել հանրապետության ձեռնարկությունները, և, անկասկած, 1993 թվականը Արցախի համար կհանդիսանա բեկման տարի[2]: Ռուսաստանի Դաշնության նախագահ Բ.Ելցինը և ԱՄՆ-ի նախագահ Դ.Բուշը, 1993թ. հունվարի 3-ին հանդես գալով հայտարարությամբ, խոր մտահոգություն հայտնեցին Լեռնային Ղարաբաղում, ինչպես և Հայաստանի ու Ադրբեջանի միջև ընկած սահմանում չդադարող արյունալի ողբերգության առթիվ: Նրանք անհանգիստ էին, որովհետև, ինչպես ասվում է հայտարարության մեջ, ծգծգվող կատաղի հակամարտությունը շարունակում էր բազմապատկել մարդկային զոհերի թիվը խաղաղ բնակչության շրջանում, անհամար վնասներ պատճառել երկու պետությունների տնտեսությանը, վարկաբեկել ժողովրդավարական միտումները դրանց զարգացման ընթացքում, ապակայունացնել իրավիճակը Անդրկովկասի ամբողջ տարածաշրջանում: Երկու նախագահները պահանջում էին անհապաղ դադարեցնել արյունահեղությունը, շեշտակի շրջադարձ կատարել դեպի կոնֆլիկտի քաղաքական լուծումը և շուտափույթ գումարել Լեռնային Ղարաբաղին նվիրված Եվրախորհրդակցության Մինսկի խորհրդաժողովը՝ բոլոր վիճելի հարցերը կարգավորելու համար[3]: Լ.Տեր-Պետրոսյանը, հանդես գալով Ռուսաստանի և ԱՄՆ-ի նախագահների համատեղ հայտարարության առթիվ, նշել է, որ Ղարաբաղյան հիմնախնդիրը կարող է և պետք է կարգավորվի ոչ թե ռազմական, այլ խաղաղ ճանապարհով, ոչ թե մարտի դաշտում, այլ բանակցությունների սեղանի շուրջ, և որ զինված հակամարտությունը հանցավոր և անհեռանկարային է: ՀՀ նախագահը, բարձր գնահատելով Ռուսաստանի Դաշնության և ԱՄՆ-ի պատրաստակամությունը՝ համատեղ ջանքերով շարունակել աջակցել լուծումների որոնման գործին, ամենից առաջ ԵԱՀԿ-ի շրջանակներում, Ադրբեջանի ղեկավարությանը կոչ էր անում վերսկսել երկկողմ և բազմակողմ բանակցությունները Լեռնային Ղարաբաղում և սահմանամերձ շրջաններում կրակի անհապաղ դադարեցման վերաբերյալ որպես բարդույթի խաղաղ կարգավորման առաջին փուլ[4]:

[2] **Арутюнян В. Б.**, *նշվ. աշխ., էջ 243-244:*

[3] *"Голос Армении", 08.01.1993, «Հայաստանի Հանրապետություն», 06.01.1993:*

[4] *«Հայաստանի Հանրապետություն», 08.01.1993:*

Ինչպես նախորդ շատ փաստաթղթեր, այնպես էլ Ելցինի և Բուշի այդ համատեղ հայտարարությունը մնացին միայն որպես բարի ցանկությունների ժեստ: ԱՄՆ-ի նոր նախագահ Բիլ Քլինթոնը նույնիսկ չցանկացավ Լեռնային Ղարաբաղի հարցում համագործակցել Ելցինի հետ, չնայած այս վերջինը ևս վճռական ոչինչ չձեռնարկեց: Եվ չնայած Հայաստանի նախագահ Լ.Տեր Պետրոսյանը և ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանը պաշտպանեցին երկու խոշոր տերությունների նախագահների հայտարարությունը, սակայն սառույցը տեղից չշարժվեց: Ընդհակառակը, Ադրբեջանը փորձում էր չեզոքացնել հայկական կողմի գլխավոր հաղթաթուղթը, այն, որ Ղարաբաղը ինքնուրույն ռազմաքաղաքական միավոր է, ուժի կենտրոն, որի հետ դժվար էր այլևս հաշվի չնստել: Ադրբեջանը բոլոր ջանքերը գործադրում էր Հայաստանը ներքաշել պատերազմի մեջ: Իսկ Բաքվի բարոյալքված իշխանությունները ձգտում էին գերակշռության հասնել սեփական ժողովրդի դժբախտության հաշվին:

Շահումյանի և Մարտակերտի ողբերգություններից հետո առաջացած խուճապը և ստեղծված ծանր կացությունը հաղթահարվել էին, կայունացել ռազմաճակատը: Ժամանակի լրատվամիջոցները հաղորդել են, որ հունվարի 15-ին ԼՂՀ հակաօդային պաշտպանության ուժերը ոչնչացրել են հակառակորդի ռազմաօդային ուժերի չորս ինքնաթիռ: Օդաչուներից մեկը՝ ազգությամբ ռուս մայոր Անատոլի Չիստյակովը, որը գերի էր ընկել, վկայություն է տվել, որ Ադրբեջանի օդային ուժերի հրամանատարությունը քանիցս իրեն և մյուս վարձկան սպաներին խնդրել էր մարտական թռիչքների ժամանակ օգտագործել քիմիական միջուկով արկեր: Սակայն նա, ինչպես և մյուս վարձկանները, հրաժարվել են դա անել[5]:

1993թ. հունվարյան այդ օրերին Ադրբեջանի բանակային կազմավորումները լայնածավալ մարտական գործողություններ ձեռնարկեցին տարբեր ուղղություններով՝ նպատակ ունենալով զավթել ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք բնակավայրեր և բեկում մտցնել ռազմաճակատներում: Սակայն Մարտակերտի և Ասկերանի ռազմաճակատներում նա կրեց պարտություններ և հինգ օրում կորցրեց յոթ ռմբակոծիչ, իսկ 1992թ. հունիսի 13-ից սկսած՝ 22-ը[6]: Հակառակորդը որոշ դիրքերում ունեցավ նաև մասնակի հաջողություններ: Հունվարի 13–14-ին ռմբակոծեցին Առաջածորի հիվանդանոցը, որի հետևանքով զոհվեց հինգ, և վիրավորվեց 12 մարդ: Հունվարի 20-ին իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ Մարտակերտի շրջանի Վանք գյուղի ավիառմբակոծության հետևանքով ողբերգաբար զոհվեց Մարտակերտի շրջանում ԼՂՀ ՊՊԿ-ի ներկայացուցիչ, ԼՂՀ ժողովրդական պատգամավոր Բորիս Բաբայանը: Ասենք, որ 1993թ. փետրվարի կեսի դրությամբ զոհվել էին ԼՂՀ ժողովրդական վեց պատգամավորներ[7]:

1993թ. փետրվարի 11-ին ԼՂՀ ԳԽ-ն դիմում հղեց Լեռնային Ղարաբաղի բնակչությանը, որտեղ նշված է, որ հինգ տարի առաջ սկսված արցախահայության ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը առաջ է բերել նոր խնդիրներ, ծնվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որը կանգնած է արցախահայության ազգային-ազատագրական պայքարի գլուխ, և որը կարողացավ ղեկավարել շրջափակման ճեղքումը, ազգային բանակի ստեղծումը, ոչնչացնել հանրապետության ներսում գտնվող թշնամական գրեթե բոլոր հրակետերը: Ապա նշված է, որ առանց զոհերի և զրկանքների հաղթանակ չեն կռում: Հանուն ազատության պետք է բոլորը զինվեն[8]:

1993թ. փետրվարի սկզբից ընթացող ռազմական գործողությունները մտան նոր փուլ: ԼՂՀ ԻՊ ուժերի առաջ խնդիր էր դրված ազատագրել հյուսիսային ռազմաճակատներում կորցրած տարածքները և պահպանել պաշտպանական բնագծերը մյուս հատվածներում: Այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղի երիտասարդության 65-70 տոկոսը գտնվում էր ԻՊ ուժերի շարքերում: Հանրապետության ողջ տարածքում կամավոր ծառայում էին նույնիսկ ծերունիներ և նրանք, ովքեր առողջական վիճակի պատճառով կարող էին հրաժարվել զինվորական ծառայությունից:

Նահանջի ճանապարհ չկար: Ետևում արնաքամ լինող Արցախն էր: Նախկինում Մարտակերտի շրջանը լքած ջոկատները վերադառնում էին իրենց դիրքերը: Որոշ տվյալներով՝ այդ ժամանակ Արցախի բանակում կար 15 տարեկան 150 զինվոր, և 14 տարեկան տանկի հրամանատար: 1992թ. հունվարի 1-ից մինչև

[5] *Նույն տեղում, 26.01.1993:*
[6] *«Արցախ», 21.01.1993:*

[7] *«Ազգ», 19.02.1993:*
[8] *«Արցախ», 13.02.1993:*

1993թ. հունվարի կեսերը միայն Մարտունու շրջանում խփվել է թշնամու 57 տանկ[9]:

1993թ. փետրվարի սկզբից մարտերը շարունակվում էին Մարտակերտի շրջանում: Ըստ ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարության կողմից մշակված պլանի՝ ԼՂՀ ԻՊ ուժերը պետք է իրականացնեին Վաղուհաս-Զագլիկ-Թալիշ, Չլդրան-Դրմբոն-Կուսապատ-Մարտակերտ և Սրխավենդ-Բաշ-Գյունեփայա-Մանիքլու-Ջանյաթաղ-Գյուլաթաղ-Մարտակերտ ուղղություններով: Ռազմական այդ գործողությունները պետք է իրականացնեին Կենտրոնական պաշտպանական շրջանի ստորաբաժանումները, 54-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակը, Հայաստանից եկած մահապարտների կամավորական ջոկատը[10]: 1993թ. փետրվարի սկզբին տեղի ունեցած մարտերի ժամանակ հակառակորդը Մարտակերտի ռազմաճակատում կորցրեց 200 ասկյար: Նա ամեն կերպ փորձում էր ետ վերցնել Մեհմանան և Դրմբոնը, սակայն ԼՂՀ ԻՊ ուժերը հաջողությամբ կասեցրին այդ գործողությունները: Մարտակերտի շրջան ժամանած Ադրբեջանի պաշտպանության նախարար Ռահիմ Ղազիևը և ներքին գործերի նախարար Համիդովը ցինիկաբար հայտարարեցին, թե բոլոր հայերին կոչնչացնեն, և մի քանի բեռնատար դիակներ կուղարկվեն Բաքու՝ ցուցադրելու քաղաքի զբոսայգում: Մինչդեռ դրա փոխարեն կարող էին ամիսներ շարունակ ռազմաճակատում ընկած իրենց զինվորների դիակները հավաքել և տեղափոխել այդ նույն Բաքու: Անցնելով հակահարձակման՝ Արցախի ուժերը փետրվարի 5-ից սկսած ազատագրեցին Չլդրանը, Հարությունագոմերը, Պողոսագոմերը, Կոճողոտը, Բաշ–Գյունեփայան, Վաղուհասը, Ղազարահողը, Վերին Հոռաթաղը և այլ գյուղեր[11]:

Հակառակորդը Ֆիզուլու կողմից շարունակում էր հրետակոծել Հադրութը, Էդիլլուն և այլն բնակավայրեր, իսկ Աղդամի մոտերքում տեղակայված կրակակետերից անընդհատ ռմբակոծում էին Ասկերանի շրջանի սահմանամերձ բնակավայրերն ու հայկական պաշտպանական դիրքերը: Մարտունու շրջանի Կարմիր շուկա ավանը ռմբակոծվում էր Ֆիզուլու շրջանի Ղաջար գյուղի կրակակետերից: Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհը շարունակում էր գործել անխափան: Ղոչազ գյուղի մոտերքից «գրադ» կայանքից ուժգին հրթիռակոծման էին ենթարկվում Գորիսի շրջանի սահմանամերձ Տեղ և Խնձորեսկ գյուղերը: Ադրբեջանի Ղազախի շրջանի տարածքից հրետակոծվում էին Նոյեմբերյանի շրջկենտրոնն ու շրջանի Բերդավան գյուղը, իսկ Գետաբեկի շրջանի տարածքից հրետակոծվում էին Կրասնոսելսկ շրջկենտրոնը և Ճամբարակ գյուղը: Տանկերից և «գրադ» կայանքներից հրետակոծվում էին Կապանի շրջանի Եղվարդ գյուղը: Հրետակոծվում էին նաև Իջևանի շրջանի սահմանամերձ բնակավայրերը և Տավուշի շրջանի հայկական պաշտպանական դիրքերը:

* * *

Արցախում և Հայաստանում ընդհանուր քաղաքական վիճակը մնում էր լարված և անկայուն: Արցախի ժողովրդական ճակատի վարչության անդամները, հանդիպում ունենալով ԼՂՀ ԳԽ նախագահության անդամների հետ և քննարկելով հանրապետության ռազմաքաղաքական իրադրությունը, ԼՂՀ-ն միջազգայնորեն ճանաչելու ուղղությամբ տարվող աշխատանքների ընթացքը, հանդես եկան հայտարարությամբ, որտեղ խոսվում էր հանրապետության պետական կառուցվածքների ամրապնդման, ԼՂՀ ԳԽ-ի և ԼՂՀ ՊՊԿ-ի միջև արգասաբեր համագործակցության օգտին, հանրապետությունում ռազմական դրության ժամկետը լրանալու և այն երկարաձգելու վերաբերյալ Գերագույն խորհրդի նախագահության և այլ հարցերի մասին: Գիտենք, որ 1992թ. օգոստոսի 12-ի ԼՂՀ ԳԽ նախագահության հրամանագրով ԼՂՀ-ում հայտարարվել էր ռազմական դրություն վեց ամիս ժամկետով: Ռազմական դրության ժամկետը լրանում էր փետրվարի 12-ին: Մինչև հաշվետվության լսումը ԼՂՀ ԳԽ-ն փետրվարի 10-ին որոշում էր ընդունել «երեք ամսով՝ մինչև 1993թ. մայիսի 12-ը, երկարաձգել 1992թ. օգոստոսի 12-ի ԼՂՀ ԳԽ նախագահության թիվ 0099-1 հրամանագրով ԼՂՀ ողջ տարածքում հայտարարված ռազմական դրության ռեժիմի ժամկետը[12]: Միևնույն ժամանակ հրաման էր ստորագրվել «1993թ. փետրվարի 18-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության նիստում լսել ԼՂՀ պաշտպանության պետկոմի հաշվետվությունը վեց ամսվա գործունեու-

[9] *«Ազգ», 16.01.1993:*
[10] *Հասրաթյան Ս., նշվ. աշխ., էջ 91:*
[11] *«Արցախ», 20.02.1993:*
[12] *Նույն տեղում, 13.02.1993:*

թյան մասին»: ԼՂՀ ԳԽ նախագահությունը իրավասու էր ՊՊԿ-ի սահմանված լիազորություններով աշխատանքի վեց ամսվա ժամկետի ավարտումից հետո լսել այդ մարմնի հաշվետվությունը: Սակայն պաշտպանության պետկոմը գտնում էր, որ քանի դեռ ռազմական դրության ռեժիմի ժամկետը, որն իրականացնում էր ՊՊԿ-ն, երկարաձգվել է, ուստի նրա հաշվետվությունը կարող է լսվել միայն այդ ժամկետը լրանալուց հետո: Փաստորեն, առաջ էր եկել հակասություն պետության օրենսդիր և գործադիր մարմինների միջև: Ասենք, որ ԳԽ-ն այդ վեց ամսում զբաղվել է միայն իր վրա վերցրած արտաքին հարաբերությունների հետ առնչվող հարցերով: Դա արդարացուցիչ չէր: Կամայականություն էր նաև հաշվետվությունից ՊՊԿ-ի հրաժարվելը: ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանը փետրվարի 12-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությանը հղած նամակում փորձում էր հաշվետվությունից իր հրաժարվելը բացատրել այնպիսի հանգամանքներով, որոնք համոզիչ չէին: Իբր ԼՂՀ ԳԽ-ն ռազմական դրությանը մոտենում էր «մակերեսային», և շատ քիչ էր համարում ռազմական դրության երկարաձգումը երեք ամիս ժամկետով, քանի որ իբր «ռազմական դրության ժամկետի այդպիսի կարճատև երկարաձգումը դավագրգռում է զորակոչման ենթակա անձանց և նրանց տանում բոլոր ձևերով դրանից խուսափելուն և սպասողական դիրք գրավելուն»: Նա նաև մեղադրում էր ԼՂՀ ԳԽ-ին, որը, «վեց ամսվա ընթացքում փաստորեն ոչ մի հետաքրքրություն չցուցաբերելով ռազմական դրության կանոնակարգի իրականացման հարցերի նկատմամբ, չփորձելով ՊՊԿ-ին որևէ աջակցություն ցույց տալ՝ նրա առջև կանգնած խնդիրները լուծելու գործում, ԳԽ նախագահությունն ընտրել է նրա վրա, այսպես ասած, «ներգործելու» անընդունելի ձևը: Եվ, վերջապես, տարակուսանք է հարուցում ռազմական դրության հարցը առանց ՊՊԿ-ի և ինքնապաշտպանության ուժերի կարծիքը հաշվի առնելու, իսկ առավել ևս առանց դրանց ներկայացուցիչներին հրավիրելու քննարկման դնելը»: Իսկ վերջում առաջարկում էր, որ «նախագահությունն իր վրա վերցնի ռազմական դրության կանոնակարգի իրականացման գործունեությունը և այստեղից բխող ողջ պատասխանատվությունը»[13]: Անշուշտ, ՊՊԿ-ի այդ դիրքորոշումը և ԼՂՀ ԳԽ-ին սպառնալը արդարացուցիչ չէր, մանավանդ որ հանրապետության համար ստեղծված ծանր պայմաններում

[13] *Նույն տեղում, 18.02.1993:*

մեկը մյուսին մեղադրելը անընդունելի էր: Ասենք, որ Հայաստանի իշխանությունների, մանավանդ ՀՀՇ-ական գործիչների կողմից ԼՂՀ ԳԽ-ի վրա գրոհը չէր դադարում: ԼՂՀ ՊՊԿ անդամներն ու Երևանից նրանց «ոգեշնչողները» ջանքեր չէին խնայում ԼՂՀ ԳԽ-ին զրկել նրա բոլոր իրավունքներից: Արցախի ԳԽ-ի մի խումբ պատգամավորներ, որոնք գործում էին ՊՊԿ-ի հանձնարարություններով, ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանին բազմաթիվ անհիմն մեղադրանքներ ուղղեցին և նրանից պահանջեցին անօրինական, հակասահմանադրական փոփոխություններ մտցնել ԼՂՀ պետական իշխանությունների կառույցներում: Բանը հասավ նրան, որ ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանը նույնիսկ հրաժարվեց Գերագույն խորհրդի նախագահությանը հանձնել ՊՊԿ-ի բոլոր որոշումներն ու հրամանագրերը:

Այդ միջադեպը պետք է հարթվեր առանց հապաղման: ԼՂՀ ԳԽ նախագահության հասցեին հնչող չկշռադատված մեղադրանքներին պետք է վերջ տրվեր, պետք է կանխվեին նաև Պաշտպանության պետական կոմիտեին հասցեագրված հրապարակային ելույթները: ԼՂՀ ԳԽ նախագահությունը, փետրվարի 17-ին հանդես գալով հայտարարությամբ, նշեց, որ զանգվածային լրատվության միջոցներով քայլեր են ձեռնարկվում իրար հակադրել ԼՂՀ օրենսդիր և գործադիր իշխանությունները, չկշռադատված մեղադրանքներ են հնչում օրինավոր ընտրված ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության հասցեին: Գերագույն խորհրդի նախագահությունը ողջախոհության է կոչում հանրապետության ներքաղաքական իրավիճակի նորմալացմամբ շահագրգիռ բոլոր անձանց և մարմիններին: Այնուհետև ասված է. «Ոչ ոք իրավունք չունի մոռանալու, որ ինքը հսկայական պատասխանատվություն է կրում Արցախի և ողջ Հայաստանի ճակատագրի համար: Պատմությունը մեզ եզակի հնարավորություն է ընձեռել անմնացորդ ավանդ մուծելու ժողովրդի ազատագրման և միավորման գործին, և ոչ ոք չի ների մեզ, եթե ձեռքից բաց թողնվի այդ հնարավորությունը[14]:

1993թ. փետրվարին լրանում էր արցախահայության ազգային-ազատագրական պայքարը սկսելու հինգերորդ տարին: ԼՂՀ ԳԽ նախագահությունը, փետրվարի 11-ին դիմում հղելով Լեռնային Ղարաբաղի բնակչությանը, նշում է, որ հանրապետու-

[14] *Նույն տեղում, 20.02.1993: ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, ց. 1, գ. 4, թ. 66-67:*

թյան Գերագույն խորհրդի նախագահությունը Արցախի պատմության այդ հերոսական և խռովահույզ ժամանակաշրջանում իր պարտքն է համարում խոնարհվել ազգային-ազատագրական պայքարի այդ բախտորոշ փուլում ընկած նահատակների, կրած զոհաբերությունների, դրսևորված անկոտրում կամքի, հոգեկան կորովի առջև: Այդ շրջանում շահագրգիռ ուժերի ջանքերով ինքնորոշման պայքարը ծախողվեց ազգամիջյան պատերազմով, և արցախահայությանը մնում էր «գնալ պետականության ստեղծման ճանապարհով»: Սակայն հակառակորդը ամեն կերպ խոչընդոտում էր դրան: Արցախահայությունը գիտակցում է, որ «առանց զոհերի և զրկանքների հաղթանակ չեն կռում», և որ «ազատությունը ձեռք է բերվում ուժերի գերագույն լարումով, կազմակերպվածությամբ»[15]:

1993թ. փետրվարի 6-ին Երևանում տեղի ունեցած հանրահավաքը, որը կազմակերպել էր «Ազգային ինքնորոշում» միավորումը, իշխանություններից պահանջեց հրաժարական տալ, քանի որ հանրապետությունում խախտվում էին ժողովրդավարական օրենքները: Այդ առթիվ հանդես գալով՝ ԼՂՀ պաշտպանական կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանը՝ նշեց, որ Հայաստանում տեղի ունեցող վերջին դեպքերը և աճող լարվածությունը խիստ անհանգստացնում են արցախցիներին, որովհետև նրանք չունեն այլ թիկունք և հենարան, բացի Մայր Հայաստանից: Ապա նշում է, որ արցախցիները լավ գիտեն, որ Հայաստանի բնակիչներն ապրում են արտակարգ ծանր օրեր, չունեն լույս, ջերմություն, սնունդը սակավ է ու թանկ: Հիշեցնում է, որ այն պայմաններում, որոնցում նրանք գտնվում են հիմա՝ այս ձմեռ, Արցախի ժողովուրդն ապրում է արդեն չորս տարի: Միայն մի տարբերությամբ՝ սովին ու ցրտին Արցախում գումարվում են նաև մահաբեր հրետակոծություններն ու ռմբակոծությունները, ինչից Հայաստանի ժողովրդի մեծ մասը հեռու է: Եվ, չնայած դրան, Արցախի ժողովուրդը ապրում է ու դիմակայում ահեղ թշնամուն: Դիմակայում է շնորհիվ միասնության: Երբ հանրահավաքում պահանջում են իշխանությունների հրաժարականը, ապա դա թիկունքից հարված է Արցախին ու նրա բանակին: Սերժ Սարգսյանը կոչ էր անում լինել միաբան, որովհետև «Իր հողի համար կռվող ազգը իրավունք չունի լինել անմիաբան»[16]:

[15] *«Արցախ», 13.02.1993:*

[16] *«Հայաստանի Հանրապետություն», 09.02.1993:*

Ինչպես ասվել է, այդ վերջին 4-5 տարիներին ԼՂՀ տնտեսությունը պարզապես կաթվածահար էր եղել: Հանրապետության տնտեսությունների մի մասը թշնամու բարբարոսությունների հետևանքով զրկվել էր գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու հնարավորությունից: Չնայած դրան՝ գյուղացիները հնարավորություններ էին ստեղծում բերք ու բարիք արարել և պաշտպանել հայրենիքը: Օրինակ՝ Մարտունու շրջանի բերքի կեսը կորստի էր մատնվել և 1992թ. հավաքել էր ընդամենը 4860 հա արտերի բերքը ու ստացել հազիվ 5943 տ հացահատիկ, որից 540 տ հատկացվել էր ինքնապաշտպանական ուժերին: 1993թ. համար կատարվել էր ընդամենը 3300 հա աշնանացան: Ավելի ծանր վիճակում էին մյուս շրջանները, իսկ Մարտակերտի շրջանում՝ բոլորից վատ: Անհրաժեշտ էր կանխել հանրապետության տնտեսության անկումը: Սահմանվեց արտադրվող մթերքների լրիվ հաշվառում, և կանխվեց արտահանումը: ԼՂ Հանրապետության պարետ Մուրադ Պետրոսյանի հաղորդումից իմանում ենք, որ միայն երկու ամսում կանխվել է ԼՂՀ սահմաններից դուրս տարվող 100 տ կոնյակի սպիրտ, խոզեր, անասուններ, 6 տ ընկույզ, 40 պարկ շաքարավազ և այլ մթերքներ[17]: «Հայաստան» համահայկական հիմնադրամը «Արցախ» ծրագրի սահմաններում ձեռք էր բերել 98 մլն ռուբլու դիզելային վառելանյութ: Հայաստանի Հանրապետությունը Արցախին հատկացրել էր 1800 տ հացահատիկային ալյուր: 1993թ. գարնանացանը կատարելու համար ձեռք էին բերվել 92 մլն ռուբլու արժողությամբ սերմացուների տեսականի և քիմիական պարարտանյութեր: ՀՀ կառավարության որոշմամբ՝ ֆինանսների նախարարությունը վարկային էմիսիայի ընդհանուր ծավալից ԼՂՀ պետական բյուջեին հատկացրել է 98 մլն ռուբլի, որից պետական կենտրոնացված կապիտալ ներդրումների գծով առաջացած պարտքերի մարման համար՝ 50 մլն ռուբլի, բյուջետային հիմնարկներին վառելիքի ձեռքբերման և էլեկտրաէներգիայի լրացուցիչ ծախսերի համար՝ 48 մլն ռուբլի: Վարկային էմիսիայի հաշվին ՀՀ կենսաթոշակային և զբաղվածության ֆոնդին հատկացվել է մեկ մլրդ 410 մլն ռուբլի՝ 1992թ. պարտքերի մարման համար: Այդ գումարից 50 մլն ռուբլի հատկացվեց ԼՂՀ կենսաթոշակային և զբաղվածության

[17] *Նույն տեղում, 19.02.1993:*

ֆոնդին՝ նույն նպատակների համար[18]: Օգնությունները շարունակվում էին:

Շարունակվում էր ԼՂՀ արդյունաբերական ճյուղերի ինտեգրացումը Հայաստանի Հանրապետության նմանօրինակ ճյուղերի հետ: ՀՀ-ն ձգտում էր բարելավել Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական իրավիճակը: 1993թ. գարնանացանը կատարելու համար Հայաստանից Ղարաբաղ էր ուղարկվել 579 տոննա վառելիք, 570 տոննա ցորեն, ավելի քան 600 տոննա կարտոֆիլ, 200 տոննա գարի: «Հայապտան» համահայկական հիմնադրամը իր հերթին ուղարկել էր 1090 տ վառելիք: Արցախից հեռացած 60 հազար մարդուց 40 հազարը վերադարձել էին[19]:

Միջոցներ էին ձեռնարկվում Ստեփանակերտի ջրամատակարարումը և կոյուղու հարցերը կարգավորելու համար: ԼՂՀ ՊՊԿ-ի որոշմամբ՝ ապրիլի 1-ից հանրապետությունում աշխատանքի վարձատրության նվազագույն չափը սահմանվեց 3000 ռուբլի: Վերանայվեցին կենսաթոշակների, նպաստների և կրթաթոշակների չափերը: Մայիսի 5-ին ՊՊԿ-ում տեղի ունեցած խորհրդակցությունում, որին մասնակցում էին հանրապետության կառավարության, նախարարությունների և կազմակերպությունների ղեկավարները, նշվեց, որ ընթացիկ տարվա չորս ամսում հանրապետությունում կապիտալ ներդրումների ծավալը կազմել է 85 մլն ռուբլի, որից ավելի քան 80 միլիոնը բաժին է ընկել շինմոնտաժային աշխատանքներին: Դրական տեղաշարժ էր, երբ չորս ամսում ապրանքաշրջանառության ծավալը հասել էր 129 միլիոն ռուբլու: Նաև նշվեց, որ 1992թ. կատարվել է 10 հազար հեկտար աշնանացան[20]:

Առաջընթաց քայլեր էին ձեռնարկվում նաև մշակույթի բնագավառում: Հանրապետությունում գործում էին դպրոցները, Շուշիում հիմնադրվել էր երաժշտական դպրոց, վերաբացվել էր Ստեփանակերտի թատրոնը, «Արցախ» հրատարակչությունը տպագրում էր գրքեր[21]:

Անհրաժեշտ էր կայունություն ստեղծել հանրապետության ներքին կյանքում, հաստատել ամուր կարգ ու կանոն: Այդ ուղղությամբ բավականին աշխատանք կատարեցին հանրապետության

[18] *Նույն տեղում, 06.03.1993:*
[19] *Նույն տեղում, 27.05.1993:*
[20] *«Արցախ», 08.05.1993:*
[21] *«Հայաստանի Հանրապետություն», 06.05.1993:*

Գերագույն խորհուրդը և ՊՊԿ-ն: 1993թ. փետրվարի 22-ին ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանը ստորագրեց կարգադրություն, որով քաղաքական գրաքննություն մտցվեց հանրապետության զանգվածային լրատվության միջոցների նկատմամբ, որի նպատակն էր խուսափել հանրապետության պաշտպանությունը վտանգող նյութերի հրապարակումից[22]: Դա, անշուշտ, կարող էր լուրջ վնաս հասցնել հանրապետությունում ժողովրդավարության զարգացմանը: Այդ կարգադրությունը նախ և առաջ վերաբերում էր քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների անունից արվող հայտարարություններին ու հրապարակումներին: Ասենք նաև, որ գրաքննություն մտցնելը լրիվ համապատասխանում էր պատերազմող երկրի բնույթին:

1993թ. գարնանը հերթական անգամ Արցախ այցելությունից հետո Քերոլայն Քոքսը, վերադառնալով Անգլիա, ելույթ է ունենում Լորդերի պալատում, նշելով, որ մի խնդրում Արցախն ու Հայաստանը միասնական են, քանի որ նրանց ողբերգությունը փոխադարձ կապակցության մեջ է: Նա շեշտում է, որ Ղարաբաղը հանդիսանում է Հայաստանի մի մասը, չնայած այն 1920-ական թվականների սկզբին բռնակցվել է Ադրբեջանին: Սակայն նրա հայ բնակիչները շարունակել են ապրել իրենց հինավուրց հողում: Ադրբեջանի բռնություններից ազատվելու համար հազարավոր արցախցիներ ստիպված էին հեռանալ հայրենի հողից և բնակություն հաստատել Հայաստանում: Ադրբեջանի և Թուրքիայի կողմից շրջափակման հետևանքով Հայաստանի վիճակը ևս մնում է ծանր: Սարսափելի շրջափակումները մեծ վնասներ են հասցնում Հայաստանին և Ղարաբաղին: Արցախցիների տառապանքները անսահման են: Մեկ օրում Ստեփանակերտի վրա պայթել է 400 հրթիռ, որոնք արձակվել էին Շուշիի կրակակետերից: Ահա թե ինչու ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը ստիպված էին գրավել Շուշին և ոչնչացնել այնտեղի կրակակետերը: Ադրբեջանն ու թուրքը աղմուկ են բարձրացնում Խոջալուի շուրջը: Մութալիբովը չի ժխտում, որ հայերը միջանցք են տվել, որպեսզի Խոջալուի բնակիչները հեռանան: Ղարաբաղցիները կարողանում են իրենց հողում դիմակայել կատաղած Ադրբեջանի հարձակումներին: Նրանք ոչ մի անգամ չեն հանձնվի: Վերջին օրերին Ադրբեջանը Հայաստանին սպառնում էր նույնիսկ ատո-

[22] *Նույն տեղում, 26.02.1993:*

մային ռումբով: Ամեն ինչով պետք է օգնել Ղարաբաղին և Հայաստանին[23]:

* * *

Հակառակորդը նորանոր ուժեր էր նետում ռազմաճակատ՝ համոզված լինելով, որ կարճ ժամանակամիջոցում հարցը կլուծվի հօգուտ Ադրբեջանի: Սակայն ռազմական օրենքները և հայ ազատամարտիկների գործողությունները թելադրում էին իրենց կանոնները: 1993թ. փետրվարի 19-20-ը մղված հաջող մարտերից հետո ազատագրվեց Հաթերքի ենթաշրջանը՝ Հաթերք, Չափար, Զարդախաչ, Իմերեթ-Քերվենդ, Զագլիկ, Ումութլու գյուղերը, և բացվեց Քելբաջար-Մարտակերտ գլխավոր ավտոմայրուղին: Թարմ ուժեր ստանալով՝ հակառակորդը փետրվարի 26-ին գրոհում է Սարսանգի հիդրոհանգույցը վերահսկող հայ պաշտպանական ջոկատների դիրքերը: Մարտի 6-7-ը հայ ազատամարտիկները, հակառակորդին հասցնելով նոր ջախջախիչ հարվածներ, ազատագրեցին Կուսապատը, Մոխրաթաղը, Մեծ Շենը և Գյուլաթաղը: Ոչնչացվեցին թշնամու 150 զինյալներ, 4 հրասայլ և հետևակի մարտական մեքենա: ԼՂՀ պաշտպանական ուժերի պատասխանատու Սերժ Սարգսյանը մարտի 20-ին հաղորդեց, որ փետրվարի 5-ից սկսած՝ վճռական բեկում է մտցվել Մարտակերտի ամբողջ ռազմաճակատում: Արդեն ազատագրվել են 27 մեծ և փոքր գյուղեր, այդ թվում Սարսանգի հիդրոհանգույցի ջրամբարտակի գոտին: «Մեր դեմ,– ասաց նա,– լուրջ հակառակորդ է կանգնած: Եվ չնայած դրան, նա իրար ետևից պարտություն է կրում: Միայն հունվարից սկսած ոչնչացվել են 1350 ադրբեջանական հետևակայիններ, 42 զրահատեխնիկա և հրասայլ, 8 ինքնաթիռ ու ուղղաթիռ[24]»:

Այդ ամենը համբերությունից հանեց նախագահ Էլչիբեյին: Նա պաշտոնանկ արեց պաշտպանության նախարար Ղազիևին և ռազմական դատարանի նախագահ Իբրահիմովին: Պաշտպանության նոր նախարար Դադաշ Ռզևը չէր վայելում քաղաքական հեղինակություն: Երկրում իշխանությունը կենտրոնացված էր ներքին գործերի նախարար Իսկենդար Համիդևի ձեռքում, որը հենվում էր «Գորշ գայլեր» կուսակցության վրա: Այդ ժամանակ Բաքվում բավականին ակտիվացել էին ընդդիմադիր

[23] *"Голос Армении", 10.03.1993:*

[24] *«Հայաստանի Հանրապետություն», 20.03.1993:*

ուժերը: «Ազգային անկախություն» կուսակցությունը փողոցներում և հրապարակներում կազմակերպում էր հանրահավաքներ և միտինգներ, որոնք ուղղված էին Էլչիբեյի իշխանության դեմ:

Հենց այդ օրերին՝ մարտի 30-ին, ԼՂՀ ԳԽ նախագահությունը դիմում հղեց Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհրդին և ադրբեջանական ժողովրդին: Այն բնորոշվում էր ադրբեջանական և հայ ժողովուրդների հանդեպ պատասխանատվության զգացումով: Ասված է, որ Ադրբեջանի զինված ուժերը, օգտագործելով այլազգի վարձկանների հնարավորությունները և զրահատեխնիկան, զավթել են մեր հայրենիքի մի հատվածը: Այդ ամենը ուղեկցվում է երիտասարդ մարդկանց կորստով: Ադրբեջանում արդեն հողին են հանձնել 27 հազարից ավելի զինվորներ, երիտասարդ ադրբեջանցիների մի քանի հազար դիակներ էլ թաղվել են Արցախի հողում: Իսկ մի՞թե ադրբեջանցի մայրերը նրանց դրա համար էին ծնել: Արցախի Գերագույն խորհուրդը հակառակորդին հիշեցնում է, որ այդ պատերազմը մեզ համար սրբազան է, Հայրենական: Բոլոր դարաբաղցիները՝ մեծից մինչև փոքր, ելել են պաշտպանելու իրենց նախնյաց գերեզմանները: Ադրբեջանական կողմին կոչ է արվում նստել բանակցությունների սեղանի շուրջ և փորձել դադարեցնել այս անիմաստ պատերազմը: Հույս է հայտնվում, որ ադրբեջանական կողմը կմոտենա ըմբռնումով և կդադարեցնի ագրեսիան[25]: Սակայն այս դիմումն էլ մնաց անարձագանք:

Արցախի ազատագրական ուժերը մինչև ապրիլի 12-ը հակառակորդից մաքրեցին Մարտակերտի շրջանի ամբողջ արևելյան հատվածը: Մարտեր էին գնում Մարտակերտին հարող Պուշկեն յալ բարձունքի համար: Հայ ազատամարտիկները, զարգացնելով հարձակումը, ազատագրեցին Թալիշը: Ադրբեջանի իշխանությունները վիճակը շտկելու համար մեծ ուժեր կենտրոնացրին Լաչինի շրջանում և անընդհատ կրակի տակ էին պահում միջանցքը: Մարտերը չէին դադարում նաև Մարտունու շրջանում: Ապրիլի սկզբներին Արցախի ազատամարտիկներն ազատագրեցին Ֆիզուլիի շրջանի Ղաջար և Դիվանլար բնակավայրերը և տիրացան մարտավարական կարևոր նշանակություն ունեցող Խազազի բարձունքին: Հայ մարտիկները շարունակում էին մարտական գործողություններ ծավալել Քելբաջարի շրջանի տարածքում: Ապրիլի 3-ին հայկական ուժերը գրավեցին շրջկենտրոն

[25] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, ց. 1, գ. 8, թ. 52-53:*

Քելբաջարը: Ադրբեջանի նախագահ Էլչիբեյը հանրապետության ամբողջ տարածքում 60 օրով մտցրեց արտակարգ դրություն: Բաքվի զինվորական պարետ, ոստիկանության գեներալ-մայոր Ա.Ալլահվերդիևի հրամանով՝ ապրիլի 9-ից սկսած՝ ժամը 00-ից մինչև ժամը հինգը, Բաքու քաղաքում սահմանվեց պարետային ժամ: Իսկ այդ օրերին հայկական ուժերը, Քելբաջարի շրջանում շարժվելով դեպի հյուսիս, գրավում են Իսթիսուն՝ հայկական պատմական Բաղնիքն Արքունական[26]: Քելբաջարում հաջողությամբ իրագործված ռազմական գործողությունների հետևանքով Արցախը կարողացավ ապահովել իր համար կենսական նշանակություն ունեցող Լաչինի մարդասիրական միջանցքի անվտանգությունը և վերացրեց շրջափակման վտանգը: Մամուլը հաղորդում էր, որ ազերիները հեռանում են նրանց համար բաց թողնված միջանցքով:

1993թ. ապրիլի 6-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը և ԱՄՆ-ի պետքարտուղար Ու.Քրիստոֆերը հայտարարեցին, թե հայկական ուժերը պետք է հեռանան Քելբաջարից, իբր հայկական ուժերի վերջին շաբաթվա հարձակողական գործողությունները վտանգի տակ են դրել Լեռնային Ղարաբաղի առճակատումը խաղաղ ճանապարհով լուծելու ջանքերը և լրացուցիչ տառապանքներ են պատճառում շրջանի անմեղ քաղաքացիական բնակչությանը: ԱՄՆ-ը առճակատման բոլոր կողմերին կոչ էր անում ձեռնպահ մնալ ռազմական լուծում փնտրելուց և վերադառնալ բանակցությունների սեղանի շուրջ[27]:

ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Մանուկյանը ապրիլի 7-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսում հայտարարեց, թե

---

[26] *Արցախի ազատամարտիկներին հաջողվել էր ազատագրել հայոց պատմական հողերը՝ Աղահեճը (Լաչին) և Ծարը (Քելբաջար): 1890-ական թթ. տվյալներով Արցախի տարածքում կային ավելի քան 3 քաղաք, 10 գյուղաքաղաք և 360 գյուղ, որոնց ավելի քան կես միլիոն բնակիչները ցիրուցան էին դարձել աշխարհով մեկ: Չափար գյուղից մինչև Դաղի կամ Խութավանք ընկած տարածքում կային 66 ավերակ գյուղեր: Քելբաջարի շրջանի ամենախոշոր հայկական բնակավայրերը հանդիսացել են Եռանաշաղը, Խոթը և Մեսրոպավանը, որոնք ամայացել են XVII դարի սկզբներին:*

Ըստակի (Հաթերքի) գավառում ավերակ է դարձել 30 գյուղ: Սոթը՝ Մեծ Սյունիքի չորրորդ գավառը, ունեցել է 75 հայկական գյուղ: Սոթի կազմի մեջ էր մտնում նաև Ծարը: Մեծ Սյունիքի 6-րդ գավառը հանդիսանում էր Աղահեճը՝ 43 գյուղերով: Դրանք հետո մտել են Արցախի կազմի մեջ: Ծարով էին անցնում Վայոց ձորը, Դվինն ու Պարտավն իրար հետ կապող ուղիները:

[27] *«Ազգ», 08.04.1993:*

գոյություն ունի միասնական հայոց բանակ, և որ Հայաստանի ու Ղարաբաղի զինված ուժերը այդ բանակի բաղկացուցիչ մասերն են: Հայդուկային ջոկատների հիմքի վրա ստեղծված կանոնավոր ստորաբաժանումները «դաս» են տալիս Ադրբեջանի ուժերին: Իրոք, Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերի կողմից Քելբաջարի շրջանի ազատագրումը ռազմական առումով ամենաճիշտ և արդարացված քայլն էր, հակառակ դեպքում լրիվ վտանգի տակ էր Լեռնային Ղարաբաղի գոյությունը: Քելբաջարի շրջանում հայոց ուժերի հաջող գործողությունները բավականին ամրապնդեցին Արցախի դիրքերը հյուսիսային տարածքում, և հույս ներշնչեց, թե «Ղարաբաղը կհաղթի և ի վերջո կհասնի նրան, որ իրավաբանորեն կհաստատվի այն, ինչը փաստացի իրականություն է»[28]:

Հենց այդ ժամանակ՝ 1993-ի ապրիլին, հայոց մեծ եղեռն իրագործած Թուրքիան և նրա դաշնակից Ադրբեջանը փորձում էին աշխարհին համոզել, որ այդ պատերազմը իբր Ադրբեջանի և Հայաստանի հակամարտության արդյունք է: ԼՂՀ ՊՊԿ նախագահի արտաքին քաղաքական հարցերի գծով խորհրդական Արկադի Ղուկասյանը նշեց, որ եթե Ղարաբաղը կրակը դադարեցնող կողմ է, ապա նաև հակամարտ կողմ է, և որ նա պետք է ստորագրի դիտորդների մանդատային, օրացուցային և մնացած բոլոր փաստաթղթերը: Նաև նշեց, որ Թուրքիան, հանդիսանալով Մինսկի գործընթացի պետություններից մեկը, ցուցաբերում է հանդիպակաց նախաձեռնություն: Այդ քայլով իսկ ձգտում է խնամարկուի դեր խաղալ և ակտիվացնել իր դերը տարածաշրջանում: Փաստորեն մեկ տարի ընթացող բանակցություններում Ադրբեջանն ու Թուրքիան միշտ էլ նախնական պայմաններ են առաջ քաշել կրակի դադարեցման, Լաչինն ու Շուշին վերադարձնելու, Ղարաբաղի կարգավիճակը որոշելու համար: Մինսկի գործընթացի բոլոր երկրներն էլ դեմ էին, երբ Թուրքիան ու Ադրբեջանը առաջ էին քաշում նախնական պայմաններ: Մինչդեռ Լեռնային Ղարաբաղը կողմ էր կրակի դադարեցմանը՝ առանց նախապայմանների: Թուրքիան և Ադրբեջանը պնդում էին ցրել զինվորական ոչ կանոնավոր կազմավորումները: Դրանով նրանք փորձում էին միակողմանի զինաթափել ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը: Իբր Ադրբեջանն ու Հայաստանը ճանաչված պետություններ են, հետևապես նրանց բանակները օրինական են:

---

[28] *Նույն տեղում:*

Իսկ քանի որ Ղարաբաղը ճանաչված պետություն չէ, այդ նշանակում է՝ նրա ուժերը իբր «ոչ կանոնավոր ռազմական կազմավորումներ են»[29]:

Այդ ամենին գումարվեց նաև այն, որ 1993թ. ապրիլի 8-ին Ռուսաստանի Դաշնության նախագահ Բ.Ելցինի նախաձեռնությամբ Սոչիում տեղի ունեցած ՌԴ պաշտպանության նախարար Պ.Գրաչովի, ՀՀ պետնախարար Վ.Սարգսյանի և Ադրբեջանի պետքարտուղար Փ.Հուսեյնովի հանդիպման ժամանակ քննարկման նյութ հանդիսացած տարածաշրջանում ստեղծված իրավիճակը և հայ-ադրբեջանական հակամարտության նոր սաստկացումը հարցի առթիվ առաջարկվեց անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները: Հակամարտող կողմերին նման առաջարկությամբ դիմեցին նաև Եվրոպայի տնտեսական համագործակցության 12 երկրներ: Մինչ այդ հարցը քննարկվել էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում, և ընդունվել հակամարտող կողմերին ուղղված հայտարարություն, որը պահանջում էր անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները, հնարավորություններ ստեղծել դրսից ստացվող մարդասիրական օգնությունը անարգել տարածաշրջան հասցնելու համար և նպաստել ԵԱՀԿ-ի շրջանակներում հարցի լուծմանը: Հայաստանի Հանրապետությունը միացել էր այդ կոչին, և նույնիսկ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը ապրիլի 1-ին ԼՂՀ ռազմական իշխանություններին կոչ էր արել նույնպես միանալ այդ կոչին: Մինչդեռ Ադրբեջանը ոչ միայն խոչընդոտում էր ԵԱՀԿ-ի գործընթացին, այլև պաշտոնապես հրաժարվեց դրան մասնակցելուց: Հայաստանի վերաբերմունքը Արցախի նկատմամբ միանգամայն հստակ էր: Ապրիլի 8-ին տեղի ունեցած բրիֆինգում ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Արամ Աբրահամյանը աշխարհին տեղեկացրեց, որ «որքան էլ ծանր լինի հանրապետության վիճակը, Հայաստանի իշխանությունները չեն փոխի Ղարաբաղյան խնդրի նկատմամբ իրենց քաղաքական դիրքորոշումը, որովհետև այս անգամ իրենց մեջքին զգում են ժողովրդի աջակցությունը»: Արամ Աբրահամյանը դա բացատրում էր նրանով, որ ինչպես իշխանությունները, այնպես էլ ժողովուրդը և ընդդիմությունը հստակ գիտակցում են, թե հանուն ինչի են կրում այսօրվա դժվարությունները[30]:

[29] *Նույն տեղում:*
[30] *«Երկիր», 09.04.1993:*

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ապրիլի 6-ին տարածեց մի հայտարարություն, որը վերաբերում էր Լեռնային Ղարաբաղում մարտական գործողությունների սաստկացումը կանխելուն: Անվտանգության խորհուրդը հայկական և ադրբեջանական կողմերից պահանջում էր «անհապաղ դադարեցնել բոլոր մարտական գործողությունները, որոնք սպառնալիք են ներկայացնում շրջանի խաղաղության և անվտանգության համար, և զինվորական կազմավորումները դուրս բերել ռազմական գործողությունների հետևանքով օկուպացված շրջաններից»[31]: Ասենք, որ Անվտանգության խորհրդի նիստը հրավիրվել էր Ադրբեջանի խնդրանքով: Կրած անհաջողություններից ադրբեջանական կողմը կորցրել էր իր գլուխը: Ապրիլի 6-ին հրավիրված Ադրբեջանի ազգային մեջլիսի փակ նիստը, քննարկելով ռազմաճակատում կրած անհաջողությունների պատճառները և որևէ ելք գտնելու հնարավորությունները, որոշել էր օգնություն խնդրել դաշնակից երկրներից: Թուրքիան հրաժարվեց ռազմական միջամտությունից, իսկ Ռուսաստանը մի կողմ էր քաշվել և հակամարտող կողմերից պահանջում էր իրար հետ լեզու գտնել[32]:

ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը, 1993-ի ապրիլի 9-ին պատասխանելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հայտարարությանը, նշել է, որ անհատական ինքնապաշտպանություն է վարում իր երկրի տարածքի մի հատվածում, որը օկուպացվել է Ադրբեջանի Հանրապետության կողմից, ազատագրելու համար: Նաև նշված է, որ Մարտակերտի շրջանի բնակչության անվտանգությունը ապահովելու համար ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը ձեռնարկեցին քելբաջարյան խմբավորման կրակակետերի ոչնչացմանը միտված անհրաժեշտ միջոցառումներ: Այդ ընթացքում ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը Քելբաջարի շրջանի խաղաղ բնակչությանը հնարավորություն են ընձեռել հեռանալ մարտական գործողությունների գոտուց: Ապա՝ ԼՂՀ-ն բոլոր անհրաժեշտ հնարավորություններն ունի՝ մերժելու Ադրբեջանի նկրտումները: ԼՂՀ ԳԽ նախագահությունը խնդրում էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ դատապարտել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետականության դեմ ուղղված ռազմական ագրեսիան[33]:

[31] *«Ազգ», 08.04.1993:*
[32] Ուլուբաբյան Բ., *նշվ. աշխ., էջ 645:*
[33] *«Արցախ», 15.04.1993:*

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի վերոհիշյալ հայտարարության առթիվ ապրիլի 8-ին հայտարարությամբ հանդես եկավ նաև ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, որում ՀՀ կառավարությունը իր տագնապն էր հայտնում Լեռնային Ղարաբաղի հակամարտության սաստկացման առթիվ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հայտարարության կապակցությամբ: ՀՀ արտաքին գործերի նախարարությունը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի այդ հայտարարությունը բնորոշեց ոչ հավասարատես: Բանն այն է, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը Ադրբեջանին երբևէ պատասխանատու չի ճանաչել Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ հայկական գյուղեր ու շրջաններ ներխուժելու և թալանելու, կոնֆլիկտի ընթացքում շարունակ մահաբեր զենքեր կիրառելու, խաղաղ բնակավայրերի օդային ռմբակոծումների, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի շրջափակումների, Հայաստան անցնող գազատարների և կամուրջների ոչնչացմանը հանգեցնող պետական ահաբեկչական գործողությունների, այդ շրջանի հայ բնակչության ջարդերի ու բռնագաղթերի համար, ինչպես նաև չի դադարեցրել Ադրբեջանին՝ ռազմական լուծմանը հետամուտ քաղաքականության համար: Նաև նշվում է, որ Հայաստանը հիասթափված է, որ այդ հայտարարության մեջ արտահայտվել է ազգերի ինքնորոշման սկզբունքը, և, որ նույնքան կարևոր է, անտեսվել են Լեռնային Ղարաբաղի անվտանգության պահանջները: Շեշտված է, որ Քելբաջարի շրջանում Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերի ձեռնարկումը հետևանք էր այն վերահաս վտանգի, որ Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի և Լաչինի մարդասիրական միջանցքի համար ներկայացնում էին այնտեղ տեղակայված ադրբեջանական ստորաբաժանումների ռազմական գործողությունները: Հիշեցվում էր, որ ՀՀ կառավարությունը շարունակելու է ջանքեր գործադրել հրադադարի կայացման ուղղությամբ՝ բանակցությունների միջոցով Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծումը ԵԱՀԿ-ի Մինսկի կոնֆերանսում հնարավոր դարձնելու համար[34]:

Ի լրումն այդ ամենի՝ ԼՂՀ ինքնապաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանը, հանդես գալով հայտարարությամբ, նշեց, որ հանրապետության ինքնապաշտպանության ուժերը նպատակ չունեն գրավել Ադրբեջանի Հանրապետության տարածքները: Խոսքը գնում էր Մարտակերտի շրջանի բնակչության անվտանգության ապահովման մասին, և որ կրակակետերի լռեցման գործողությունները բխում էին ռազմական անհրաժեշտությունից[35]: Իսկ մինչ այդ՝ դեռևս ապրիլի 1-ին, Լ.Տեր-Պետրոսյանը ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանից պահանջել էր դադարեցնել ռազմական գործողությունները ռազմաճակատներում և նստել բանակցությունների սեղանի շուրջ[36]: Ռոբերտ Քոչարյանը ապրիլի 2-ին, պատասխանելով Հայաստանի նախագահին, նշել է. «Ամիսներ շարունակ մենք բազմիցս պաշտոնապես հավաստել ենք մեր պատրաստակամությունը անհապաղ և առանց նախապայմանների զինադադար հաստատելու մասին: Սակայն մեր կոնստրուկտիվ ջանքերը վիժեցվել են մի կողմից Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականության, մյուս կողմից Մինսկի համաժողովում ԼՂՀ-ի մասնակցության կարգավիճակի անորոշության պատճառով: Մենք համոզվել ենք, որ ԵԱՀԿ-ի շրջանակներում ընթացող բանակցությունները Ադրբեջանը օգտագործում է քողարկելու համար իր ռազմական նկրտումները, որի վկայությունն են մարտ ամսին նրա սանձազերծման լայնածավալ հարձակումները Մարտակերտի շրջանում և Լաչինի մարդասիրական միջանցքում»: Հիշեցնելով մարտի 31-ի իր հայտարարությունը՝ Ռ.Քոչարյանը շարունակում է, որ ԼՂՀ իշխանությունները հարկադրված էին օգտվելու ինքնապաշտպանության իրենց բնական իրավունքից և ոչնչացնել Արցախի համար վտանգ ներկայացնող ռազմական հենակետերը: Հայաստանի նախագահին վստահեցնում էր, որ ԼՂՀ-ն մտադրություն չունի Ադրբեջանից տարածքներ գրավել, բայց և միաժամանակ չի կարող չհակադրվել սպառնացող վտանգներին: Այդուհանդերձ ԼՂՀ-ն պատրաստ է նստել բանակցությունների սեղանի շուրջ՝ ռազմական գործողությունները դադարեցնելու նպատակով: Ինչ խոսք, եթե համանման վճռականություն ցուցաբերի նաև ադրբեջանական կողմը[37]:

Բացի այդ, ԼՂՀ ԳԽ նախագահությունը ապրիլի 19-ին ստիպված էր հանդես գալ հայտարարությամբ՝ նշելով, որ ԼՂՀ իշխանությունները, կողմնակից լինելով հակամարտության խաղաղ կարգավորմանը, միշտ աջակցել են խաղաղարար գործողություններին: ԼՂՀ Հանրապետությունը, կատարելով հրադա-

[34] *«Երկիր», 09.04.1993:*

[35] **Арутюнян В. Б.** *Նշվ. աշխ., մաս 5-րդ, Եր., 1997, էջ 54:*

[36] *«Արցախ», 06.04.1993:*

[37] *Նույն տեղում: Տես նաև "Известия", 06.04.1993:*

դարի վերաբերյալ պայմանավորվածությունը, իսկ բոլորովին վերջերս էլ՝ ի պատասխան Ռուսաստանի Դաշնության նախաձեռնությանը, միակողմանի դադար է հայտարարել: Մինչդեռ ադրբեջանական կողմը պարբերաբար խախտում է բոլոր խաղաղարար առաքելությունները: Այս օրերին ադրբեջանական կողմը, նոր ուժեր կուտակելով ԼՂՀ Հադրութի և Մարտունու շրջաններին հարակից ադրբեջանական շրջաններում, նախաձեռնել է լայնածավալ հարձակողական գործողություններ և վտանգի տակ դրել հազարավոր մարդկանց կյանքը: Արցախի իշխանությունը կոչ էր անում ուկսել երկկողմ բանակցություններ՝ հույս ունենալով, որ համաշխարհային հանրությունը ըմբռնումով կվերաբերվի դրան և կաջակցի այդ գործընթացին[38]:

Որ ՄԱԿ-ը վճռական քայլերի չէր դիմում և սանձում Ադրբեջանի բարբարոս գործողությունները, այդ մասին է խոսվում ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանի 1993թ. մայիսի սկզբին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին ուղղված նամակում, որտեղ քննադատվում է միջազգային որոշ կազմակերպությունների կողմից հաճախ ոչ ունակ որոշումներ ընդունելու պրակտիկան, ինչպես նաև չեն հետաքրքրվում ԼՂՀ Մարտակերտի, Շահումյանի և Հադրութի շրջաններից բռնագաղթված բազմահազար մարդկանց ճակատագրերով: Միայն որոշ նյութական օգնություն ցույց տալով հնարավոր չէ վճռել փախստականների հարցը: Պարզապես ՄԱԿ-ը, ԵԱՀԿ-ն, Ռուսաստանը և այլ պետությունների խաղաղարար ջանքերը պետք է լինեն ուրդյունավետ, և կրակը դադարեցվի հակամարտության տարածքներում: ԼՂՀ ղեկավարությունը մնում էր խիստ դժգոհ մանավանդ Անվտանգության խորհրդի ապրիլի 30-ի որոշումից, որում «հաշվի չեն առնվել քաղաքական դրույթները, կոնկրետ՝ անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գոյությունը և մեր հանրապետության բնակչության անվտանգության հետ կապված մեր շահերը»: Ապա ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին վստահեցնում էր, որ «ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի ցանկացած տեղաշարժումներն ունեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում Ադրբեջանի զինված ուժերի առաջխաղացումը կանխելու կամ չեզոքացնելու նպատակ միայն»[39]:

[38] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, գ. 1, գ.8, թ. 69-70:*
[39] *Նույն տեղում, 08.05.1993:*

Համանման հայտարարությամբ հանդես եկավ նաև ԼՂՀ ՊՊԿ-ն, որտեղ նշված է, որ ԼՂՀ կառավարությունը կրկին հաստատում է իր ծգտումը հակամարտության խաղաղ կարգավորման նկատմամբ և հավաստիացնում է, որ ԼՂՀ պաշտպանության բանակի ռազմական գործողությունները պատասխան միջոցներ են և պայմանավորված են բացառապես խաղաղ բնակչության անվտանգության ապահովման շահերով: ՊՊԿ-ն պատրաստակամություն է հայտնում ուղիղ բանակցությունների մեջ մտնել ադրբեջանական կողմի հետ[40]: Ելնելով այդ ամենից՝ ԼՂՀ-ն ապրիլի 16-ից միակողմանի հայտարարեց հրադադար:

1993թ. մարտի 21-22-ը տեղի ունեցած ԼՂՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը լսեց և ի գիտություն ընդունեց ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռ.Քոչարյանի և ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի հաշվետվությունները: ԼՂՀ ԳԽ նստաշրջանը փորձեց ընտրել հանրապետության ԳԽ նախագահ: Սակայն այս անգամ ևս առաջադրված թեկնածուներից ոչ մեկը չընտրվեց:

Ապրիլի 20-ին ԼՂՀ ժամանեց ԵԱՀԿ-ի դիտորդների առաջապահ խումբը, վեց հոգուց բաղկացած, Ֆինլանդիայից գնդապետ Հապոնենի գլխավորությամբ: Նրանք հանդիպումներ ունեցան ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանի և ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հրամանատարների հետ: Այդ այցելության մասին պայմանավորվել էին դեռևս փետրվար-մարտին Հռոմում տեղի ունեցած Մինսկի խմբի հանդիպումների ժամանակ[41]: Դիտորդների խումբը, լինելով Լաչինում, Շուշիում և այլ տեղերում, հանդիպելով Գեորգի Պետրոսյանի և Ռոբերտ Քոչարյանի հետ, ապրիլի 22-ին մեկնեց Աղդամ: Խմբի ժամանման օրը ԼՂՀ ԳԽ նախագահությունը, հանդես գալով հայտարարությամբ, նշել է, որ ԼՂՀ իշխանությունները կողմնակից են հակամարտության խաղաղ կարգավորմանը, և որ ԼՂՀ-ը, միշտ էլ կատարել է հրադադարի վերաբերյալ պայմանավորվածությունները: Սակայն ադրբեջանական կողմը պարբերաբար խախտում է դրանք՝ ի չիք դարձնելով բոլոր խաղաղարար առաքելությունները: Նաև նշված է, որ հակառակորդը հզոր ուժեր է կենտրոնացրել ԼՂՀ Հադրութի և Մարտունու շրջաններին հարակից ադրբեջանաբնակ շրջաններում ու կրկին սպառնալով ԼՂՀ գոյությանը՝ վտանգի տակ է

[40] *Նույն տեղում, 13.04.1993:*
[41] *«Հայաստանի Հանրապետություն», 24.03.1993:*

դրել հազարավոր մարդկանց կյանքեր: ԼՂՀ ԳԽ-ն ընդգծել է, որ վաղուց հասունացել է Ադրբեջան-ԼՂՀ երկխոսության անհրաժեշտությունը, քանի որ փորձը ցույց է տվել, որ առանց ԼՂՀ իշխանությունների մասնակցության բոլոր կարգի բանակցությունները դատապարտված են ձախողման[42]:

Ապրիլի 20-ին ՀՅԴ ԼՂՀ Կենտրոնական կոմիտեն հանդես եկավ հայտարարությամբ: Բանն այն է, որ ապրիլի կեսերին Մոսկվայում տեղի էր ունեցել բանակցություններ Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների միջև, որի ժամանակ համաձայնության էին եկել կրակը դադարեցնել Լեռնային Ղարաբաղում և հայ-ադրբեջանական սահմանում: Համաձայնագիրը նախատեսում էր ազատագրված հողային մեծ տարածքների զիջումներ և մի շարք անընդունելի պայմաններ: Պարզվում է, որ Մոսկվայում տեղի ունեցած այդ գաղտնի բանակցություններին ԼՂՀ ՊՊԿ-ի ներկայացուցիչը՝ նախագահի խորհրդականը, մասնակցել էր առանց ԼՂՀ ԳԽ նախագահության իմացության և չճշտված կարգավիճակով: Այդ համաձայնագիրը, դրվելով իրագործման ընթացքի մեջ, մեծ հարված էր հասցնում արցախյան պայքարին: Ոչ դաշնակցությունը, ոչ էլ ուրիշ որևէ կազմակերպություն չէին կարող ընդունել որևէ պայմանագիր, որը կարող էր ի չիք դարձնել հայրենիքի ազատագրության համար մարտիկների թափվող արյունը:

Այս օրինակը, ասված է ՀՅԴ հայտարարության մեջ, մի անգամ ևս համոզում է, որ ԼՂՀ ՊՊԿ-ն ամբողջովին ներքաշվել է Հայաստանի իշխանությունների քաղաքական խաղերի մեջ և սկսել է վարել ինքնակամ արտաքին քաղաքականություն, առանց այն համաձայնեցնելու ԼՂՀ ԳԽ-ի հետ: Իսկ դա ԼՂՀ-ին զրկում է ինքնուրույն քաղաքականություն վարելու հնարավորությունից: Փաստերը համոզում են, եզրափակվում է հայտարարությունը, որ ՊՊԿ-ն գործում է ԼՂՀ ԳԽ-ից գաղտնի և առանց նրան իրազեկ պահելու իր գործողությունների մասին[43]:

Նկատենք, որ 1988թ. գարնանից Հայաստանում ազգային հարցը մղվել էր երկրորդ պլան, շարժման հունը թեքվել էր դեպի ընկերային և տնտեսական պահանջատիրություն, և Ղարաբաղյան շարժման մեջ սկսել էին դերակատար լինել ապազգային ուժեր՝ այլախոհական և ժողովրդական: «Ղարաբաղ» կոմիտեն

[42] *«Երկիր», 21.04.1993:*
[43] *Նույն տեղում:*

դարաբաղյան հիմնախնդրից անցավ Խորհրդային Միության քայքայման գործընթացի ոլորտ: Մինչդեռ Արցախում այլ էր վիճակը: Այստեղ սկսվեց ազգային-ազատագրական պայքար: Օր օրի այն վերածվեց հայ-ադրբեջանական հակամարտության և ստացավ միջազգային բնույթ: Հայաստանում իշխանության եկած ՀՀՇ-ականները անծրագիր և անհեռանկար սեփականաշնորհեցին հանրապետության հողերը, մանր և խոշոր ձեռնարկությունները, քաջալերվեց չարչիական առևտուրը, լայն ճանապարհ տրվեցին չարաշահումներին, և, պարզապես, ազգային հարստությունը փոշիացվեց: Ստեղծվեցին անլույս, ցուրտ և անտանելի պայմաններ, միայն թե կարողանային «պղտոր ջրում ձուկ որսալ»: Շարժումը ծնեց նաև շրջափակում և էներգիայի տագնապ, որից ավելի աշխուժացան սեփական գրպանները հարստացնողները: Խորհրդային Միությունը քայքայվեց, կարող և ունակ մասնագետները չեզոքացվեցին, իշխանության եկավ նախկին կոմերիտական-կուսակցական պարտոկրատիան, որի մերկ քաղաքականության հետևանքով աղքատության եզրին հասած ժողովուրդը սկսեց գաղթել այլ երկրներ: Արձաններ քանդող այդ անբանների մեղքով Հայաստանը կորցրեց իր բարոյական և ազգային դիմագիծը: Այստեղ իրագործվող ահաբեկչությունն ու անխնա թալանը անցել էին բոլոր սահմանները: Այս ամենի ուշադիր քննությունը համոզում է, որ Հայ հեղափոխական դաշնակցության Լեռնային Ղարաբաղի Կենտրոնական կոմիտեի վերոհիշյալ ահազանգը սխալ չէր:

1993թ. գարնանը տեղի էին ունեցել նաև հատկանշական այլ իրադարձություններ: 1993թ. մայիսի 7-ին ԼՂՀ ԳԽ նախագահության որոշմամբ հիմնվեց «Շուշիի ազատագրման համար մեդալ», իսկ մայիսի 10-ին Արցախի թեմի առաջնորդ Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը օծեց Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի հանդիսավոր բացումը: Համալսարանը կազմավորվեց Ստեփանակերտում գործող Վանաձորի մանկավարժական ինստիտուտի բաժանմունքի և Հայաստանի պետական ճարտարապետական համալսարանի մասնաճյուղի հիմքի վրա: Համալսարանն ուներ վեց ֆակուլտետ և 14 ամբիոն: Այնտեղ սովորում էին երկու հազար ուսանողներ: Համալսարանում աշխատում էին 80-ից ավելի գիտական աստիճաններ և կոչումներ ունեցող դասախոսներ: Համալսարանի ստեղծման գործում կա-

րևոր ավանդ ունեն Երևանի բուհերը, ԼՂՀ և Հայաստանի Հանրապետության իշխանությունները[44]:

Արցախում հետզհետե աշխուժանում էին քաղաքական-հասարակական կազմակերպությունները: 1992-ին գրանցվել էր Արցախի ժողովրդական ճակատը, որը գլխավորում էր ԼՂՀ ԳԽ պատգամավոր Սուրադ Պետրոսյանը: Արցախի ժողովրդական ճակատի առաքելությունն էր մեկ միասնական կազմակերպության մեջ միավորել Արցախի ժողովրդին: Արցախում գործում էին նաև չգրանցված այլ քաղաքական ուժեր, որոնց թվում էր Հայ հեղափոխական դաշնակցությունը և Հայ երիտասարդական ազգային ճակատը[45]: Կային նաև բարեգործական ընկերություններ՝ «Ամարաս», ԼՂՀ մայրության հիմնադրամ և այլն: Այս վերջինը հիմնել է «Մայրական երախտագիտության Արցախի քաջորդիներին» մեդալը, որի առաջին հանձնումը կայացավ 1993 թ. Շուշիի ազատագրության տարեդարձի օրը: Հիմնադրամը օգնում է ծնողազուրկ երեխաներին, ինչպես և նորածին արցախցիներին[46]:

* * *

1993թ. հունիսին իրադարձությունները և բանավեճերը հիմնականում պտտվում էին Քելբաջարի շրջանը Ադրբեջանին վերադարձնելու հարցի շուրջ: Ապրիլի կեսերից Քելբաջարի շրջանը գտնվում էր ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հսկողության տակ: ՀՀՇ-ական ուժերը՝ Լ.Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, կատարելով Թուրքիա-ԱՄՆ-Ռուսաստան եռակողմ պահանջը, փորձում էին արցախցիներին համոզել հակառակորդին վերադարձնել Քելբաջարի շրջանը: Այդ օրերին Ադրբեջանը շուրջ 5000 զինվոր և մեծ քանակությամբ զինտեխնիկա էր կենտրոնացրել Մարտակերտի և Ասկերանի ուղղությամբ: Նման պայմաններում համաձայնել Քելբաջարի շրջանը ազերիներին հանձնելու մտքի հետ նշանակում էր հանրապետության գոյությունը դնել հարցականի տակ: Ապրիլի 26-28-ը Պրահայում տեղի էր ունեցել ԵԱՀԿ-ի Ավագ պաշտոնյաների կոմիտեի նիստը, որը քննարկեց Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների հարցը: Այնտեղ որևէ որոշում չընդունվեց, որովհետև քելբաջարյան իրադարձությունների կապակցությամբ ադրբեջանական կողմը ներ-

[44] *«Արցախ», 13.05.1993:*
[45] *Նույն տեղում, 25.05.1993:*
[46] *«Հայաստանի Հանրապետություն», 15.05.1993:*

կայացրել էր բողոք: ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, մայիսի մեկին հանդես գալով հայտարարությամբ, պարզաբանեց, որ Պրահայում տեղի ունեցած նիստի ժամանակ Քելբաջարի հարցը պարտադրվել է Ադրբեջանի կողմից: Հենց այդտեղ մարտի 1-ին Հռոմում ընդունված փաստաթղթերի վավերացումը կախման մեջ էր դրվել Քելբաջարի իրադարձություններից: Քանի որ վավերացումը հետաձգվեց Ադրբեջանի պնդմամբ, ուստի կրկին փակուղի մտավ ԵԱՀԿ-ի՝ Լեռնային Ղարաբաղի Մինսկի խմբի աշխատանքը: Տարօրինակն այն է, որ ԵԱՀԿ-ի Ավագ պաշտոնյաների կոմիտեի նախագահը գրանցել էր մի հայտարարություն, որով Ադրբեջանին հնարավորություն էր տրվում խուսափել հետագա բանակցություններից և հակամարտության կարգավորումն ու զինադադարը պայմանավորել Քելբաջարում մարտական գործողություններով: Ահա նման պայմաններում ԼՂՀ-ն ստիպված էր դիմել ինքնապաշտպանության՝ ելնելով իր ժողովրդի և սահմանների անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունից: Այնուհետև ասված է, որ ԼՂՀ-ն պատրաստ է լրջորեն քննարկելու Քելբաջարի հարցը կայուն երաշխավորված զինադադարի, ԼՂՀ-ի բնակչության անվտանգության ապահովման, շրջափակումների վերացման միասնական միջոցառումների պայմաններում[47]:

Պրահայի ժողովից երկու օր անց ապրիլի 30-ին, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, քննարկելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, մայիսի 5-ին ընդունեց բանաձև՝ 822/1993: Այն պահանջում էր անհապաղ դադարեցնել թշնամական գործողությունները և հաստատել երկարատև խաղաղություն, ուժերը դուրս բերել Քելբաջարի շրջանից և Ադրբեջանի կողմից գրավյալ տարածքներից, վերահսկել բանակցային գործընթացը, վերացնել Մինսկի խմբի գործընթացն արգելող խոչընդոտները, անարգել թույլ տալ, որ հումանիտար օգնությունները տեղ հասնեն և այլ պահանջներ: Այդ որոշումը, ինչ խոսք, չէր բխում Ղարաբաղյան հարցի հիմնական պահանջներից: ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին, մայիսի 11-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանին ուղարկած նամակում պաշտպանելով 822-րդ բանաձևը, Հայաստանի կառավարությանը կոչ էր անում անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները, հակամարտության բոլոր կողմերի վերադարձ բանակցու-

[47] *Նույն տեղում, 04.05.1993:*

թյունների սեղանի շուրջ, Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերը դուրս բերել Քելբաջարի շրջանից վստահեցնելով, որ այդ շրջանը այլևս վտանգ չի ներկայացնի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի համար[48]:

Ցավոք, Ադրբեջանի կառավարությունը մերժեց ՄԱԿ-ի թիվ 822 բանաձևի ոգին և հրաժարվեց վերադառնալ բանակցությունների գործընթացին ԵԱՀԿ-ի շրջանակներում: Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպան Վլադիմիր Ստուպիշինը մայիսի 18-ին Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Թուրքիայի, ինչպես նաև ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի կողմից Հայաստանի Հանրապետությանը և ԼՂՀ-ին հանձնեց առաջարկությունների լրամշակված նոր փաթեթ, որտեղ նշված էին պայմաններ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822 բանաձևի կատարման վերաբերյալ[49]: Այդ առթիվ հայտարարությամբ հանդես գալով՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը իրազեկ պահեց, որ նախաձեռնության նոր տարբերակը քննարկվում է Հայաստանում և ԼՂՀ-ում, սակայն Ադրբեջանը շարունակում է իր հակահայկական գործողությունները, որը խիստ ցավալի է[50]: Այդ նոր առաջարկության պատասխանը պետք է տրվեր մայիսի 26-ին: Այդ նախաձեռնության հիմնական սկզբունքը հանդիսանում էր զինադադարը, որպեսզի հնարավոր լիներ շարունակել բանակցությունները հարցը խաղաղ կերպով լուծելու համար: Մյուս կարևորությունը Քելբաջարի շրջանից ԼՂՀ գորքերի ետքաշումն էր, ուր մտել էին զուտ ռազմական տրամաբանությունից ու անհրաժեշտությունից ելնելով: Ըստ առաջարկության՝ ռազմական գործողությունները պետք է դադարեցվեին հունիսի 1-ից, որը ոչ միայն նշանակում էր զինադադար, այլ նաև զինված կազմավորումների և ռազմական տեխնիկայի որևէ տեղաշարժի անհնարինություն: Այդ նշանակում է, ըստ առաջարկության, երբ հունիսի 3-ին Քելբաջարից դուրս կբերվեին ռազմական ստորաբաժանումները, երկու օր առաջ արգելված կլինեին ռազմական գործողությունները: Ստացվում է, որ այդ գրաֆիկով անկարելի կդառնար Քելբաջարի վերառազմականացումը: Համաձայն այդ տարբերակի՝ դիտորդները տարածաշրջան կհասնեին զինադադարից 10 օր առաջ[51]:

1993թ. մայիսին տեղի ունեցավ մի իրադարձություն ևս, որն առնչվում էր դարձյալ Քելբաջարի խնդրին: Մայիսի 3-ին Բաքու, Երևան և Ստեփանակերտ էր հանձնվել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը կարգավորելու վերաբերյալ նոր առաջարկություն, որը մշակվել էր ապրիլի 29-30-ը Մոսկվայում ՌԴ ներկայացուցիչ Վ.Կազիմիրովի, ԱՄՆ-ի և Թուրքիայի իշխանությունների ներկայացուցիչներ Դ.Մարեսկոյի և Վ.Վուլալի կողմից: Չնայած այդ փաստաթուղթը ամբողջովին չի հրապարակվել, սակայն «Իզվեստիա» թերթի մայիսի 5-ի համարում տպագրվել էին առանձին հատվածներ, ըստ որի՝ հայկական ուժերը Քելբաջարից պետք է դուրս բերվեին մայիսի 9-14-ը, մայիսի 12-ից սկսած՝ կրակի դադարեցում և զորքերի փոխադրում, Ռուսաստանի, Թուրքիայի և ԱՄՆ-ի հսկողությամբ մայիսի 17-22-ը ժամանում Հայաստանի և Ադրբեջանի միջև նախնական բանակցությունների անցկացում, մայիսի 24-25-ը՝ Հռոմում ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի շրջանակների սահմաններում բանակցությունների վերսկսում և մինչև հուլիսի 1-ը խնդրի կարգավորման համընդհանուր ծրագրի պատրաստում: Կողմերը կամ պետք է ընդունեին ծրագիրն ամբողջությամբ, կամ էլ հրաժարվեին նրանից: Ադրբեջանի պետքարտուղար Ալի Քերիմովը մայիսի 6-ին հայտարարեց, թե եռակողմ ծրագիրը շատ բանով համընկնում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822 բանաձևի հետ: Ադրբեջանն ընդունում է այդ ծրագիրը, սակայն Հայաստանը՝ ոչ: Արդեն մայիսի 6-ին Ժիրայր Լիպարիտյանը հայտարարեց, թե ոչ Հայաստանը և ոչ էլ Ղարաբաղը չեն մասնակցել այդ բանակցություններին: Հայաստանը համաձայն էր ԼՂՀ պատասխանի հետ, ըստ որի՝ զորքերի դուրս բերումը հնարավոր էր համարվում ԵԱՀԿ-ի դիտորդների ժամանելուց հետո: Փաստորեն, Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը մերժեցին ռուս-ամերիկյան նախաձեռնությունը, չստորագրեցին փաստաթղթի տակ և միայն ուղարկեցին իրենց դիտողություններն ու ցանկությունները[52]:

Անկասկած, այդ առաջարկությունը իրական չէր, թեկուզ այն պարզ պատճառով, որ հենց այդ ժամանակ Թուրքիան պլանավորել էր Ադրբեջան ուղարկել 3000 ռազմական մասնագետ-

[48] *Նույն տեղում, 14.05.1993:*
[49] *Նույն տեղում, 19.05.1993:*
[50] *Նույն տեղում, 22.05.1993:*
[51] *Նույն տեղում, 25.05.1993:*
[52] *«Ազգ», 07.05.1993:*

ներ իր կադրային ու պահեստային ուժերից և 300 մլն դոլար հատկացնել ադրբեջանական բանակը մոդեռնիզացիայի ենթարկելու համար:

Ընդհանրացնենք. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ապրիլի 30-ին ընդունած Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ թիվ 822 որոշումը Հայաստանի Հանրապետությունում գնահատվեց որպես մի քայլ ՄԱԿ-ի կողմից Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ բանակցություններին առավել սերտորեն առնչվելու ուղղությամբ: ՀՀ արտաքին գործերի նախարարությունը գտնում էր, որ Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ լուծման, ներառյալ և Քելբաջարի հարցի հետ առնչվող խնդիրները հաղթահարելու միակ ձևը ռազմական գործողությունների դադարեցումն է: ՀՀ ԱԳ նախարարությունում գտնում էին, որ այդ որոշման մի շարք ձևակերպումներ չեն համապատասխանում Հայաստանի կառավարության դիրքորոշմանը: Մայիսի 10-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսում ՀՀ նախագահության լրատվության ղեկավար Արամ Աբրահամյանը դրականորեն գնահատեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822 բանաձևը: Նա կտրականապես մերժեց օտարերկրյա և տեղական մամուլի պնդումն այն մասին, թե «ՄԱԿ-ի 822-րդ բանաձևը Հայաստանի դիվանագիտական անհաջողությունն է»[53]: Իսկ ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին հղած նամակում իր անհանգստությունն է արտահայտել ԼՂ իրադրության վերաբերյալ ապրիլի 30-ի ՄԱԿ-ի ընդունած վերոհիշյալ փաստաթղթի առթիվ: Դրանում հաշվի չէր առնվել Ղարաբաղի Հանրապետության գոյության փաստը և ԼՂՀ բնակչության անվտանգության ապահովման հետ կապված նրա շահերը: Գեորգի Պետրոսյանը ԼՂՀ ղեկավարության անունից վստահեցնում էր, որ իրենք հարգում են մարդու իրավունքների և միջազգային անվտանգության պահպանմանը նպաստող ՄԱԿ-ի բոլոր սկզբունքները: Նա հույս էր հայտնում, որ ԼՂՀ-ն կդառնա միջազգային հանրության լիիրավ անդամ[54]:

ՄԱԿ-ի թիվ 822 բանաձևը և Հռոմում ընդունված փաստաթուղթը Հայաստանում, ընդհանուր առմամբ, գնահատվեցին բացասական և պարտվողական: Առաջին անգամ ՄԱԿ-ը փաստաթուղթ ընդունեց, որտեղ խոսվում էր Քելբաջարի շրջանի մասին և

[53] *Նույն տեղում, 13.05.1993:*
[54] *Նույն տեղում, 05.05.1993:*

չէր հիշատակվում Մարտակերտի, Շահումյանի և Արծվաշենի մասին: Հայաստանում բացասական գնահատվեց նաև այն, որ Հայաստանի իշխանությունները չէին ցանկանում ճանաչել ԼՂՀ-ի անկախությունը[55]: ԱԻՄ-ի նախագահ Պարույր Հայրիկյանը ՀՀ ԳԽ-ի նստաշրջանում առաջարկեց ճանաչել ԼՂՀ անկախությունը, որի օգտին քվեարկեցին 80 պատգամավոր: Սակայն առաջարկությունն ընդունելու համար դա բավարար չէր:

1993թ. մայիսյան այդ օրերին Ադրբեջանի դիվանագիտությունը ՄԱԿ-ի թիվ 822 բանաձևը համարեց իր խոշոր հաղթանակը: Նույնիսկ Ադրբեջանի նախագահ Ա.Էլչիբեյը մայիսի 12-ին հայտարարեց, թե ինքը պատրաստ է Ղարաբաղի հայությանը տալ ինքնավարություն, միայն դրա համար Հայաստանի զինված ուժերը պետք է հեռանան Լաչինի և Քելբաջարի շրջաններից:

Վերադառնանք Քելբաջարի հարցին: Մայիսի 14-15-ը Մոսկվայում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի հարցի քննարկում, որին մասնակցում էր ԵԱՀԿ-ի Մինսկի համաժողովի նախագահի ներկայացուցիչը: Արված առաջարկություններն ընդունվելու դեպքում հունիսի 3-ին ժնևում պետք է սկսվեին «ոչ ձևական բանակցություններ», և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ Մինսկի կոնֆերանսը պետք է սկսվեր հուլիսի 21-ից ոչ ուշ: Ռուսաստանը, ԱՄՆ-ը և Թուրքիան կոչ էին անում ընդունել նոր գրաֆիկը: Այդ առթիվ մայիսի 25-ին Երևանի Ազատության հրապարակում տեղի ունեցած բազմահազարանոց հանրահավաքը ՀՀ նախագահից պահանջեց.

1. Ցուցաբերել հաստատակամ և ինքնուրույն դիրքորոշում և «ոչ» ասել յուրաքանչյուր միջնորդված նախաձեռնության, որը վտանգում է հայոց Արցախ աշխարհի գոյությանը և հետամուտ է միակողմանի զիջումների:

2. Մերժել ղարաբաղյան հակամարտության հանգուցալուծման գործընթացում Թուրքիայի՝ որպես կանխակալ և հակահայ կեցվածք ցուցաբերող պետության որևէ մասնակցություն[56]:

Իր դժգոհությունը արտահայտեց նաև Լեռնային Ղարաբաղը: Հայաստանում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Մանվել Սարգսյանը մայիսի 26-ին Հայաստանում Ռուսաստանի և ԱՄՆ-ի ներկայացուցիչներին տեղյակ է պահում եռակողմ նախաձեռնության վերաբերյալ ԼՂՀ իշխանությունների անհամաձայնությունը,

[55] *«Ազատամարտ», N18, մայիս, 1993:*
[56] *Նույն տեղում, N21, մայիս-հունիս, 1993:*

որը չի համապատասխանում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 822-րդ բանաձևի ոգուն, իսկ դա արդյունք է Թուրքիայի անմիջական մասնակցության: Քանի որ եռակողմ նախաձեռնությունը չի ապահովում ԼՂՀ-ի բնակչության անվտանգությունը, հետևապես այն չի կարող ընդունվել ԼՂՀ կողմից, չնայած Հայաստանն ու Ադրբեջանը այն ընդունել են: ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանը մայիսի 27-ին ՍՆԱՐՔ-ի թղթակցին արեց հետևյալ հայտարարությունը. Լեռնային Ղարաբաղը հանդես է եկել և շարունակում է հանդես գալ հակամարտության խաղաղ կարգավորման կողմնակից: Ադրբեջանի կողմից հարկադրված պատերազմին նախ և առաջ անհրաժեշտ է խաղաղություն: Ահա թե ինչու ԼՂՀ ղեկավարության պատասխանը եռյակի նախաձեռնությանը ամենից առաջ բխում է արցախցիների շահերից[57]: ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը և ՊՊԿ-ի նախագահ Ռ.Քոչարյանը, դիմելով ԵԱՀԿ-ի գործող նախագահ տիկին Մ.Ուգլասին, որում դրականորեն գնահատելով համաշխարհային ընկերակցության անդամների խաղաղարար ջանքերը իրենց դիտողություններն են ներկայացնում Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Թուրքիայի և ԵԱՀԿ-ի նախաձեռնության առնչությամբ: Նշված է, որ այդ փաստաթղթում բացակայում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության անվտանգության պատշաճ երաշխիքները, ինչպես նաև երաշխիքներ չկան, թե կողմերը կկատարեն պարտավորությունները և պատասխանատվություն կկրեն դրանք չկատարելու համար: Կասկած է հարուցվում Թուրքիայի մասնակցությանը, որը իրական շահագրգռվածություն ունի տարածաշրջանում, ռազմական և տնտեսական օգնություն է ցույց տալիս հակամարտ կողմին, որը հանդիսանում է ՄԱԿ-ի ապրիլի 30-ի բանաձևի ուղղակի խախտում: ԼՂՀ-ի ղեկավարությունը վստահություն էր հայտնում կատարել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822 բանաձևը ամբողջությամբ, եթե հակամարտ կողմը դրսևորի տվյալ բանաձևը կատարելու պատրաստակամություն: Նաև նշվում է, թե արցախահայությանը մտահոգություն է պատճառում, որ ՄԱԿ-ի անդամ Ադրբեջանը խուսափում է կատարել իր պարտականությունները, ինչը չի դատապարտվում միջազգային ընկերակցության, մասնավորապես ԵԱՀԿ-ի անդամների կողմից: ԼՂՀ ղեկավարությունը հույս էր հայտնում, որ առճակատող կողմերը անհապաղ

[57] **Արտյոնյան Վ. Ե.,** *նշվ. աշխ., էջ 93:*

կկատարեն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822 բանաձևը: Նրանք գտնում էին, որ ռազմական գործողությունների և թշնամական ակտերի դադարեցումը, ներառյալ կրակի և ամեն տեսակի շրջափակման վերջնական դադարեցումը, պիտի ձևակերպվի մի փաստաթղթով, որը իրավաբանական ամբողջական ուժ ունենա[58]: 1993թ. հունիսի 2-ին ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանը, հանդես գալով նոր հայտարարությամբ, Ադրբեջանի ղեկավարությանը կոչ արեց անհապաղ սկսել երկկողմ բանակցություններ, քանի որ «Ղարաբաղյան հիմնախնդրի որոշումը հնարավոր է միայն խաղաղ գործընթացի անշրջելիության դեպքում»[59]:

Բանակցությունների և քննարկումների ընթացքում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822 բանաձևը ավելի կատարելագործվեց և Մարիո Ռաֆայելին հունիսի 7-ին այն ուղարկեց Հայաստանի Հանրապետությանը, որի համար արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանը պատասխան նամակում շնորհակալություն է հայտնում և տեղեկացնում, որ Հայաստանի կառավարությունն ընդունում է այդ նոր առաջարկությունները[60]: Ռաֆայելի կողմից Հայաստանի Հանրապետությանն ուղարկած հակամարտության կարգավորմանը միտված ԵԱՀԿ-ի նոր նախաձեռնությամբ նախատեսվում էր Անտվանգության խորհրդի 822-րդ բանաձևի իրականացման հրատապ քայլերի գրաֆիկը սկսել հունիսի 11-ից և ավարտել հուլիսի 5-6-ը: Այդ գրաֆիկը հիմնականում վերաբերում էր Քելբաջարից հայկական ուժերի դուրսբերման ընթացքին և հսկողության սահմանմանը[61]:

Արցախցիներն այդպես էլ չհասկացան, թե ինչու Հայաստանի կողմից անտրտունջ ընդունվեց այդ նախաձեռնությունը, այլ ոչ թե հիմք չընդունվեց ԼՂՀ-ի մերժումը, քանի որ այդ փաստաթղթում, ըստ էության, նոր ոչինչ չկար: Հայաստանի ՀՀՇ-ական կառավարությունը արագորեն պատրաստեց Մարիո Ռաֆայելիի նամակի պատասխանը, որում, ինչպես ասվեց, հավանություն էր տրվում որպես ՄԱԿ-ի թիվ 822 բանաձևի սկզբունքներին համապատասխանող փաստաթղթին և կոչ էր անում, Ղարաբաղն ու Ադրբեջանը ևս նույն մոտեցումը ցույց տան:

[58] *«Արցախ», 01.06.1993:*
[59] **Արտյոնյան Վ. Ե.,** *նշվ. աշխ., էջ 96:*
[60] *«Հայաստանի Հանրապետություն», 09.06.1993:*
[61] *Նույն տեղում:*

Նույնիսկ ՀՀ նախագահի արտակարգ գործերի դեսպան հորջորջված Դավիթ Շահնազարյանը Հայաստանի հեռուստատեսությամբ հայտարարեց, թե Մինսկի խմբի ղեկավար Մարիո Ռաֆայելին Մինսկի խորհրդաժողովի անդամ երկրների ներկայացուցիչներին ուղարկել է մի փաստաթուղթ, որն իբր բխում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822 բանաձևի էությունից: Որոշ բացատրություններ տալուց հետո պարոն Դ.Շահնազարյանը այդ փաստաթուղթը գնահատում էր շատ ձեռնտու[62]:

Այդ չարաբաստիկ փաստաթղթի՝ «Անհետաձգելի միջոցառումների ժամանակացույց»-ի պատասխանը պետք է պատրաստ լիներ հունիսի 11-ին: Մինչ այդ՝ հունիսի 9-ին, Երևան ժամանեց Ռուսաստանի արտգործնախարար Բարաննիկովը: Նա, հանդիպումներ ունեցավ Հայաստանի և ԼՂՀ ղեկավարների հետ, ու, քննարկելով ԵԱՀԿ նոր նախաձեռնությունը, հանգեց նրան, որ այդ առաջարկությունները պետք է հիմք հանդիսանա Արցախի հիմնահարցը լուծելու համար: Այդ հանդիպման ժամանակ Գեորգի Պետրոսյանը պնդեց, որ առկա փաստաթղթերում բացակայում են արցախահայության անկախ և ապահով կյանքի համար երաշխիքները: Երևանից վերադառնալուց հետո ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունում երկար քննարկվեց Քելբաջարի շրջանը հակառակորդին վերադարձնելու հարցը[63]:

Եռյակի դիրքորոշման և Հայաստանի ղեկավարության զիջողական քաղաքականության դեմ տեղի էին ունենում բազմաթիվ ցույցեր և բողոքներ: Մայիսի 19-ին Երևանի պետական համալսարանի առջև բողոքի և պահանջի ցույցի հավաքված ուսանողները հուշագիր հանձնեցին ՀՀ Գերագույն խորհրդին, որտեղ շեշտված էր, որ հերթական անգամ արցախահայությունը կանգնել է միջազգային դավադրության փաստի առջև: ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Թուրքիայի կողմից վերջնագրային կարգով ներկայացվել է ԼՂՀ անվտանգության որևէ գործուն երաշխիք չապահովող ու նրա համար անընդունելի դրույթներ պարունակող եռակողմ առաջարկության ժամկետը, որով պահանջվում է զիջել ազատագրված Քելբաջարը: Սա արցախյան պատերազմում Թուրքիայի միջնորդության առաքելության տրամաբանական արդյունքն է: Թուրքիան ծայրահեղ կողմնակալ դիրքորոշում ունի, հետևապես նա ոչ մի բարոյական իրավունք չունի հանդես

[62] Աբրահամյան Հ., *ճակատագրին ընդառաջ, էջ 201:*
[63] *Նույն տեղում, էջ 201-202:*

գալու խաղաղարարի դերում: Երբեք չպետք է անտեսվի Արցախի հարցով բանակցություններում Ղարաբաղի Հանրապետության վճռորոշ դերը, և պետք է մերժվի Թուրքիայի միջնորդությունը: Հուշագրի վերջում շեշտված է, որ որևէ մեկը իրավունք չունի հայ ազատամարտիկների և արցախահայության նվաճումները նրանց թիկունքում առևտրի առարկա դարձնել[64]: Տասնյակ և հարյուրավոր հիմնարկ-ձեռնարկություններ, հասարակական և քաղաքական ուժեր Հայաստանի իշխանություններից վճռակամորեն պահանջում էին մերժել եռյակի պահանջը: Ավելի սուր և վճռական էին արցախցիները. նրանք իրենց բողոքներում շեշտում էին, որ Քելբաջարի ետհանձնումը հակառակորդին հավասար է ինքնասպանության: Չէ՞ որ Քելբաջարը, ըստ էության, Մարտակերտի և ամբողջ Ղարաբաղի մուտքն է: Հայրենիքի համար կորցրել ենք երկու հազար ազատամարտիկ: Ի՞նչ պիտի պատասխանենք նրանց: Եվ թող արցախցիներին չվախեցնեն ոչ Թուրքիայով, ոչ Ամերիկայով և ոչ էլ Ռուսաստանով[65]:

Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը Բաբկեն Արարքցյանի, Դավիթ Շահնազարյանի և այլոց հետ հունիսի 12-ին մեկնեցին Գորիս՝ նախօրոք պահանջելով այնտեղ ժամանելու ԼՂՀ ղեկավարներին՝ Գերագույն խորհրդի նախագահության անդամների հետ: Այդ հանդիպման հիմնական նպատակն էր պատրաստել ԵԱՀԿ-ին ուղարկվող պատասխանը: Խորհրդակցությունը տեղի ունեցավ տաք վիճաբանության պայմաններում: Դիրքորոշումների ամենահակառակ կետում էին ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը և ԳԽ նախագահության անդամ Համլետ Գրիգորյանը: Լ.Տեր-Պետրոսյանը ամեն կերպ փորձում էր ապացուցել, թե «Անհապաղ միջոցառումների ժամանակացույցի» ընդունումը շահութաբեր է: Հետաքրքիր է. զոհերի գնով ազատագրված Քելբաջարի շրջանը, որը Արցախի համար ուներ խիստ ռազմավարական նշանակություն և հանդիսանում է արցախահայության ապահովության գոտի, թուրքին վերադարձնելով՝ ի՞նչ շահ կարող էինք ունենալ: Այդ հանդիպման ժամանակ քստմնելի դեր էին խաղում Բաբկեն Արարքցյանն ու Դավիթ Շահնազարյանը: Նրանք ամեն կերպ փորձում էին ստիպել Արցախի ներկայացուցիչներին՝ ստորագրել այդ փաստաթղթի տակ: Արցախցիները

[64] *«Երկիր», 20.05.1993:*
[65] *"Время", 02.06.1993:*

պնդում էին, որ իրենց ամբողջական պատասխանը պետք է ձևակերպվի Ստեփանակերտում, այլ ոչ թե Գորիսում:

Երկու օր անց հունիսի 14-ին՝ օրվա կեսին, նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի շքախումբը ուղղաթիռով ժամանեց Ստեփանակերտ, և օդանավակայանից ուղիղ գնացին Գերագույն խորհուրդ: Լ.Տեր-Պետրոսյանի հանդիպումը ԼՂՀ իշխանությունների հետ կրել է բացահայտ քաղաքական բնույթ: Այդ մասին հաղորդել է նաև «Նովոստի» ծրագիրը: Ժամը 13-ին ԼՂՀ Գերագույն խորհրդին ներկայացվեց հետևյալ հայտարարությունը, որը կարելի է անվանել վերջնագիր. «Հայաստանի Հանրապետությունն իր խորին մտահոգությունն է հայտնում վճռական պահերին որոշում կայացնելու, պատասխանատվություն ստանձնելու հարցում Լեռնային Ղարաբաղի իշխանությունների դրսևորած անկարողության, ինչպես նաև զինադադար հաստատելու բացառիկ պատեհությունը չօգտագործելու համար:

Հայաստանի Հանրապետությունը վստահ է, սակայն, որ Լեռնային Ղարաբաղի իշխանությունները կկարողանան բարձր կանգնել երկրորդական ու նախաձեռնության հետ չառնչվող նկատառումներից՝ դրսևորելով իրենց իբրև ժողովրդի իսկական ղեկավարներ և, քանի դեռ ուշ չէ, անհրաժեշտ որոշում կայացնել ի շահ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգության ու խաղաղության՝ գիտակցելով սեփական ժողովրդի ճակատագրի նկատմամբ ու պատմության առջև իրենց պատասխանատվությունը»[66]:

Հայաստանի նախագահը ԼՂՀ իշխանություններին մեղադրում էր անկարողության մեջ: Զվարճալի էր այն, որ պարոն նախագահը ԼՂՀ իշխանություններից պահանջում էր իրենց դրսևորել իբրև «ժողովրդի իսկական ղեկավարներ»:

Լևոն Տեր-Պետրոսյանի պահանջով հրավիրվեց ԼՂՀ ԳԽ նախագահության և ԼՂՀ ՊՊԿ-ի անդամների համատեղ նիստ, որն անցավ ծանր մթնոլորտում ու աննախադեպ ճնշումների տակ: ՊՊԿ-ի անդամները, Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ, պատրաստակամություն հայտնեցին ստորագրել ԵԱՀԿ-ի նոր նախաձեռնությունը: Նույնիսկ բանակի հրամանատարությունը հայտնեց, թե կճանաչի հանրապետության իշխանությունների ցանկացած որոշում: Նիստում քննարկվեց ՄԱԿ-ի Անվտան-

[66] *«Երկիր», 15.06.1993: Տես նաև «Հայաստանի Հանրապետություն», 15.06.1993:*

գության խորհրդի 822-րդ բանաձևի իրականացման ուղղությամբ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի ձեռնարկած անհապաղ քայլերի կարգացուցակը և ժամանակացույցին համաձայնություն տալու ու դրանով իսկ Քելբաջարի շրջանը հակառակորդին վերադարձնելու հարցը: Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության անդամներից Գեորգի Պետրոսյանը, Համլետ Գրիգորյանը, Վալերի Ղազարյանը, Վալերի Բալայանը, հանդես գալով խիստ քննադատությամբ, պահանջեցին մերժել ԵԱՀԿ-ի նոր նախաձեռնությունը: Գերագույն խորհրդի 10 անդամներից Գեորգի Պետրոսյանը, Համլետ Գրիգորյանը, Վալերի Ղազարյանը, Վալերի Բալայանը և Լևոն Մելիք-Շահնազարյանը մերժում են Լևոն Տեր-Պետրոսյանի պահանջը, իսկ Կարեն Բաբուրյանը, Վալերի Ալեքսանյանը, Սլավիկ Աղաբալյանը, Հրանտ Խաչատրյանը և Վլադիկ Հակոբյանը, տեղի տալով Լ.Տեր-Պետրոսյանի ճնշմանը, համաձայնվում են Քելբաջարի շրջանը վերադարձնել թուրքին:

ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի սարքած այդ տհաճ ներկայացումն ունեցավ հետևյալ վախճանը. այդ նույն երեկոյան հրավիրվեց ԼՂՀ ԳԽ նախագահության նիստ: Քանի որ Քելբաջարի հարցում նախագահության անդամների ձայները կիսվել էին, ուստի ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը, որը չէր համաձայնվում ստորագրել Մինսկի խմբի ժամանակացույցը, տալիս է հրաժարական: Համաձայն «ԼՂՀ Գերագույն խորհրդի մասին» օրենքի՝ ԳԽ նախագահի պարտականությունները մինչև ԳԽ նստաշրջանը դրվեցին նախագահի առաջին տեղակալի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանի վրա: Նա ստորագրեց կարգացուցակը և այդ փաստաթղթին ուղեկցող նամակով դիմեց ԵԱՀԿ-ի Մինսկի խորհրդաժողովի նախագահ Մարիո Ռաֆայելիին, որտեղ նշված է, թե նամակի և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 822-րդ բանաձևի իրականացման կարգացուցակի քննարկումը ԼՂՀ ԳԽ նախագահության ընդլայնված նիստում հանգեցրել է ԼՂՀ ղեկավարության և ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարական կողմի միջև լուրջ տարաձայնությունների, որոնք փաստորեն հանգեցին ներքաղաքական ճգնաժամի, և որ իրավիճակը կարող է դուրս գալ վերահսկողությունից: Ապա հայտնում է, որ առաջ եկած առարկությունները հիմնված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի՝ հերթական անգամ խաբվելու երկյուղի վրա: Եվ որ ԵԱՀԿ-ի կողմից ներկայացված փաստաթուղթը լրացուցիչ քննարկման անհրաժեշտություն ունի: Հույս է հայտնում, որ առաջիկա օրերին հնա-

ռավոր է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում դիրքորոշման վերջնական պարզում[67]: Կարեն Բաբուրյանը ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար ընտրվելուց անմիջապես հետո, մի այլ նամակ հղելով ԵԱՀԿ-ի Մինսկի խորհրդաժողովի նախագահ Մարիո Ռաֆայելիին, նշել է. «Հաշվի առնելով ինը երկրների նախաձեռնության ընդունման հետ կապված ԼՂՀ-ում բարդացած իրավիճակը, ինչպես նաև իրականության փոխվելը հանրապետությունում, որի հետևանքով մի շարք ստորաբաժանումներ դուրս են եկել վերահսկողությունից, առաջարկում եմ մեկ ամսով հետաձգել առաջարկված կարգացուցակի միջոցառումների ժամկետները: Ժամանակի նման հետձգումը մեզ հնարավորություն կտա կայունացնելու իրավիճակը և ապահովելու ստանձնած պարտավորությունների կատարումը»[68] :

Անկասկած, Լ.Տեր-Պետրոսյանը «արժանվույն է գնահատում» Կարեն Բաբուրյանի ստորագրությամբ աշխարհ եկած այդ փաստաթղթերը: ԼՂՀ ԳԽ նախագահության անդամները շատ լավ էին հասկանում, որ ՀՀ նախագահը Արցախ կատարած այդ այցով ամենից առաջ ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար, ՀՅԴ անդամ Գեորգի Պետրոսյանին պաշտոնազրկելու նպատակ ուներ: Եվ նա հասավ իր նպատակին[69]: «Հայլուրի» թղթակցի այն հարցին, թե Գորիսի խորհրդակցության ընթացքում և դրանից հետո Գեորգի Պետրոսյանը Հայաստանի ղեկավարության կողմից ենթարկվե՞լ է շանտաժի ու ահաբեկումների, ԼՂՀ ԳԽ մամուլի քարտուղար Գեղամ Բաղդասարյանը պատասխանել է. «ԼՂՀ ղեկավարության վրա ազդելու համար օգտագործվել են այնպիսի փաստարկներ, որոնք դուրս են դիվանագիտության և բանավեճերի ընդունված սահմաններից»[70]:

Լևոն Տեր-Պետրոսյանը Երևան վերադառնալով անմիջապես շնորհակալական հեռագիր է ուղարկում Կարեն Բաբուրյանին, որտեղ նշված է, թե «ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնում Ձեր առաջին գործողությունները ցույց են տալիս Ձեր քաղաքական հասունությունը և անձնական համարձակությունը, ինչպես և Արցախի ժողովրդի ճակատագրական պահին իր վրա վերցնելու

[67] *«Արցախ», 15.06.1993:*
[68] *Նույն տեղում, 17.06.1993:*
[69] Աբրահամյան Հ., *Ճակատագրին ընդառաջ, էջ 203-204:*
[70] *«Երկիր», 15.06.1993:*

պատասխանատվությունը»[71]: ՀՀ նախագահը Կարեն Բաբուրյանին հրավիրում է Երևան՝ բանակցություններ վարելու համար: Նրանց հանդիպումը տեղի ունեցավ հունիսի 23-ին և ավարտվեց «արդյունավետ զրույցով»: Հետո իր ելույթներից մեկում նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը կնշի, որ ինքը «ոչ թե գնացել է Լեռնային Ղարաբաղ նրանցից դրական պատասխան կորզելու», այլ գնացել էր «ընդամենը պատասխան կորզելու՝ այո կամ ոչ»[72]: Իսկ մինչ այդ՝ 1993թ. հունիսի 26-ին տեղի ունեցած ՀՀՇ-ի 5-րդ համագումարում արտասանած իր ճառում ջանքեր չէր խնայում արդարացնել իրեն և ժխտել իր կողմից ԼՂՀ իշխանությունների վրա ճնշում գործադրելու փաստը: Մինչդեռ ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը այդ իրադարձություններից երկու ամիս անց խոստացել է, որ «Գրաֆիկի ընդունման ժամանակ... որոշ ճնշում Հայաստանը գործադրել էր Ղարաբաղի վրա»[73]:

4. ԼՂՀ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1993 ՀՈՒՆԻՍ–ԴԵԿՏԵՄԲԵՐ)

1993թ. գարնան վերջին և ամռան սկզբին Արցախի ռազմաճակատներում իրադրությունը փոխվեց: Հակամարտության գոտում երկամսյա հարաբերական դադարից հետո հակառակորդը հունիսի սկզբներին վերսկսեց հարձակողական գործողությունները՝ նպատակ ունենալով վերադարձնել կորցրածը և դրանով իսկ կայունություն հաստատել Ադրբեջանի ներքաղաքական կյանքում: Ռազմական գործողություններ էին ընթանում համարյա բոլոր ռազմաճակատներում: Հակառակորդի ուշադրության կենտրոնում էր արևելյան ռազմաճակատը: Այնտեղ կուտակելով հզոր հարվածային ուժեր՝ նպատակ ուներ ճեղքել Մարտունի-Ասկերան-Մարտակերտ պաշտպանական գիծը և ներխուժել հանրապետության խորքը:

Արցախի ազատամարտիկներն ունեին ժամանակակից պատերազմ վարելու գրեթե երկու տարվա փորձ: Այն, ոչ պաշտոնական տվյալներով, 1993թ. հունիսի սկզբին իր շարքերում ուներ 20 հազարից ոչ պակաս մարդ, և զինված էր արդիական ռազմական

[71] *«Հայաստանի Հանրապետություն», 18.06.1993:*
[72] Ուլուբաբյան Բ., *նշվ. աշխ., էջ 699:*
[73] *«Հայք», 18.08.1993:*

տեխնիկայով: Բանակում ծառայում էին Խորհրդային Միության նախկին զինծառայողներ, ուսուցիչներ, ինժեներներ: Հունիսի տվյալներով՝ Արցախի բանակի հաշվում կային խփված 14 ինքնաթիռ, 17 ուղղաթիռ, 165 տանկ և 200 միավոր այլ զինտեխնիկա[1]: Մոսկովյան մամուլը հաղորդել է, որ Ղարաբաղում գաղափարախոսությունից մինչև կենցաղ ամեն ինչը ռազմականացված է: Ռազմական թեմատիկան ղարաբաղյան լրատվության մեջ (չորս թերթ, «Արցախ» հանդեսը, տեղական ռադիոն և հեռուստատեսությունը) բռնում էր հիմնական տեղը: Հանրապետությունում մեծ հեղինակություն ուներ նաև Հայոց առաքելական եկեղեցին, որի ամբողջ քարոզչությունը նույնպես նվիրված էր հայ ազատամարտիկների ոգու բարձրացմանը: Միայն այդ վերջին տարիներին բացվել էին 10 եկեղեցիներ: Հոգևորականներն իրենց քարոզչության մեջ հիշեցնում էին զոհերին և ողջերին կոչ անում հոգեպես ամրանալ ու դիմակայել բոլոր դժվարություններին[2]: Հանրապետության ՊՊԿ-ի նախագահ Ռ.Քոչարյանը հորդորում էր. եթե ցանկանում ես կենդանի մնալ և ապրել քո հողի վրա, պետք է առաջնորդվես «խաղաղություն ես ուզում, պատրաստվիր պատերազմի» սկզբունքով: Արցախում գրեթե ռազմական իշխանություն էր: Այստեղ ամբողջ իշխանությունը և հանրապետության լրիվ պատասխանատվությունը կենտրոնացված էին նրա ձեռքում: Արցախի մարտնչող բանակին հիմնականում կերակրում և տաքացնում էին արցախցիները: Բավականին օգնում էր նաև Հայաստանը: Մասնակի օգնություն ստանում էին սփյուռքից:

Թշնամին շարունակում էր մասսայական հրետակոծությունները և ռմբակոծությունները: Հունիսի 9-ի գիշերը Կուբաթլուի շրջանի ռազմական հենակետերից տանկերի և հետևակի մարտական մեքենաներից հրետակոծվեց Հադրութի շրջանի սահմանամերձ բնակավայրերն ու Լաչինի մարդասիրական միջանցքի հարավային պաշտպանական դիրքերը: ԼՂՀ պաշտպանական բանակի կազմավորումները ստիպված էին դիմել պատասխան գործողությունների: Այդ նույն գիշերը Ադրբեջանի տարածքից հրածգային զենքերով գնդակոծվեցին Իջևանի, Կրասնոսելսկի և Գորիսի շրջանների հայկական պաշտպանական դիրքերը:

[1] *"Московские новости". N23, 06.06.1993.*
[2] *Նույն տեղում:*

1993թ. հունիսի 12-ին Մարտունու պաշտպանական շրջանի ստորաբաժանումները, իրենց վրա վերցնելով հարվածի հիմնական ծանրությունը, խփեցին հակառակորդի չորս հրաձայլ, մեկ հետևակի մարտական մեքենա և մեկ «Շտուրմ-4» հակատանկային միջոց: Այդ օրը Աղդամի շրջանի Մարգիլի գյուղի մոտ հետևակի մարտական մեքենայի կրակոցից զոհվեց ԼՂՀ պաշտպանության բանակի Մարտունու շրջանի ուժերի հրամանատար, մեր ժամանակների լեգենդ դարձած Մոնթե Մելքոնյանը: Նա այն անձն էր, որի շուրջ դեռ կենդանության օրոք ստեղծվել էին բանահյուսական երկեր, պոեմներ և կինոնկարներ: Նա զոհվեց՝ չկրելով ոչ մի պարտություն ու հայ ժողովրդին ներշնչելով միայն հաղթանակներ: ԼՂՀ ՊՊԿ-ի և ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարության կողմից հղված մահախոսականում ասված է. «Ծանր կորուստ կրեցին Արցախի Զինված ուժերը, ամբողջ հայ ժողովուրդը: 1993թ. հունիսի 12-ին հայրենիքի ազատագրության համար մղված մարտերում հերոսի մահով ընկավ ԼՂՀ պաշտպանության բանակի Մարտունու պաշտպանական շրջանի հրամանատար Մոնթե Մելքոնյանը (Ավո): Թշնամու գնդակը մեր շարքերից խլեց կենդանության օրոք իսկական լեգենդ դարձած մի մարդու...»[3]:

Թշնամին շարունակում էր նոր ուժեր նետել ռազմաճակատ, մանավանդ հյուսիսային հատված: Չնայած հունիսի 14-ի գիշերը և 15-ի առաջին կեսին Արցախի ազատամարտիկներն ազատագրեցին Լյուլասազն ու Տոնաշենը, սակայն հակառակորդը հունիսի 14-ին որոշ հաջողություններ ունեցավ Հակոբ Կամարի բնակավայրի ուղղությամբ: Հակառակորդը նոր հարձակումներ ձեռնարկեց նաև այլ ուղղություններով: Ադրբեջանի իշխանությունները փորձում էին հերթական անգամ ղարաբաղյան խաղաքարտն օգտագործել սեփական սայթաքումները կոծկելու նպատակով: Անկասկած, ստեղծված իրավիճակում, ինչպես հայտարարել էր ԼՂՀ մամուլի կենտրոնը, հանրապետության իշխանություններն ամեն ինչ անում էին ապակայունացումից և խոշոր ընդհարումներից խուսափելու համար[4]: Հակառակորդի վերահսկողության տակ գտնվող Մարտակերտի հեռուստաաշտարակի և Պուշկեն յալ բարձունքներից անընդհատ կրակի տակ էին պահվում հյուսիսարևելյան ռազմաճակատի երկարությամբ տեղա-

[3] Հասրաթյան Ս., *նշվ. աշխ., էջ 107:*
[4] *«Արցախ», 15.06.1993:*

կայված ղարաբաղյան ուժերի դիրքերը: ԼՂՀ պաշտպանական բանակի հրամանատարությունը կատարեց ուժերի և միջոցների վերախմբավորում, որի նպատակն էր լիովին ազատագրել Մարտակերտի շրջանը: Հակառակորդը դիմում էր նոր քայլերի: Նրանք ռուս և ուկրաինացի վարձկաններին փորձարկելուց հետո հիմա էլ հրավիրել էին պակիստանյան փորձառու «ասերի»: Այդ մասին աշխարհին տեղյակ պահեց իսրայելցի լրագրողուհի Բագիտ Ռապինան «Բավար» թերթում: Նա Բաքվում ականատես էր եղել պակիստանցի 14 օդաչուների: Լրագրողուհին վկայել է, որ Ադրբեջանի թիկունքում կանգնած էին Թուրքիան և Պակիստանը[5]: Հենց այդ օրերին՝ հունիսի 21-ին, հակառակորդի օդուժը ակտիվ գործողություններ ձեռնարկեց Մարտունու ռազմաճակատի ուղղությամբ՝ ռմբակոծելով շրջանի Գիշի և Մուշկապատ գյուղերը: Նախորդ օրը՝ հունիսի 20-ին, հակառակորդի զինված կազմավորումները անընդմեջ գրոհ էին ձեռնարկել Ասկերանի և Մարտակերտի ուղղություններով, որոնք ուղեկցվում էին հրթիռահրետանային գնդակոծություններով և առաջ բերեցին զոհեր ու վիրավորներ: Հայ ինքնապաշտպանների հերոսական գործողությունների հետևանքով ոչնչացվեցին Աղդամի մոտակայքում տեղակայված մի քանի կրակակետեր: Այդ օրերին հակառակորդին հաջողվեց հուժկու հրետակոծության ենթարկել Ստեփանակերտը, որը բազմաթիվ զոհերի պատճառ դարձավ: Չնայած ԼՂՀ ղեկավարությունը շահագրգռված էր հակամարտության խաղաղ կարգավորման ծրագրի իրականացմամբ, որը հունիսի 14-ին ստորագրել էին ԼՂՀ ղեկավարները, այնուհանդերձ հայ ինքնապաշտպանները ստիպված էին պատասխան գործողություններ ձեռնարկել հակառակորդի այդ բարբարոսությունների դեմ:

1993թ. հունիսի երկրորդ կեսին հյուսիսարևելյան ռազմաճակատում գրեթե չէին դադարում ռազմական գործողությունները: Հակառակորդը ամեն գնով ուժեղացնում էր ճնշումը: Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխոսնակ Քերոլայն Քոքսը, հերթական անգամ լինելով Արցախում, հունիսի 18-ին Ստեփանակերտից բաց նամակ հղեց ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ ինը երկրների ղեկավարներին՝ նշելով, որ ինքը Լեռնային Ղարաբաղ է ժամանել ԵԱՀԿ-ի խաղաղ նախաձեռնությանը տրված դրական պատասխանի հաջորդ օրը և վկա է, թե ինչպես Ղարաբաղի քաղաքներն ու գյուղերը կրկին դարձել են ադրբեջանական բանակի

[5] *«Հայաստանի Հանրապետություն», 22.06.1993:*

նշանակետ: Ադրբեջանը խախտում է զինադադարի վերաբերյալ պայմանագիրը: Քերոլայն Քոքսը հունիսի 22-ին Մոսկվայում գրականության Կենտրոնական տանը լրագրողների հետ ունեցած հանդիպման ժամանակ պատմել է, որ Քելբաջարի շրջանից երբ ադրբեջանցի զինյալները դուրս էին եկել, այնտեղ բախտի քմահաճույքին էին թողնվել բավականին կանայք և երեխաներ, որոնք տեղափոխվել ու ապահով վիճակում գտնվում են Ստեփանակերտում: Բարոնուհի Քոքսը նաև նշել է, որ ինքը հանդիպել է Ադրբեջանում գտնվող հայ գերիների և պատանդների հետ, որոնց վիճակը չափազանց ծանր է, և ենթարկվում են ահավոր տանջանքների: Ադրբեջանը այսօր միակ երկիրն է, որ խաղաղ բնակչության դեմ օգտագործում է «օդ-հող» տեսակի հրթիռներ: Փաստորեն, Ադրբեջանը ոչնչացնում է Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչությանը[6]:

1993թ. հունիսի 17-ի առավոտյան հակառակորդը լայնածավալ նոր հարձակում էր սկսել նաև Հադրութի շրջանի վրա՝ օգտագործելով հրետանի և մարտական օդուժ: Դրան նախորդել էր Ադրբեջանի այն քարոզչությունը, թե իբր ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը գրավել են Աղդամ քաղաքը: Իրոք, Աղդամի գրավումը հրատապ խնդիր էր: Սակայն նախ պետք էր ազատագրել Մարտակերտը: Այն պահելու համար հակառակորդը մարտի մեջ մտցրեց մարտական ինքնաթիռներ և մեծ թվով զինուժ: Հունիսի 26-ին հայկական զորամասերի ճնշման տակ հակառակորդը սկսել էր նահանջել Մարտակերտից: Արցախի պաշտպանության բանակի մարտիկները դաժան մարտերից հետո ազատագրեցին հեռուստաաշտարակի և Պուշկեն յալի բարձունքները: Հունիսի 28-ին ազատագրվեց Մարտակերտ քաղաքը: Ադրբեջանական կազմավորումները հեռանում էին առանց մարտերի: Լրագրող Վարդան Ղևրիկյանը իր «Մարտակերտ-վերադարձ» ակնարկում պատմում է, որ ԼՂՀ մարտիկները նախ գրավեցին քարհանքը, ապա, առաջ շարժվելով, թշնամուն դուրս շպրտեցին և գրավեցին հեռուստաաշտարակը, որը վճռեց նաև Պուշկեն յալ բարձունքի ճակատագիրը: Հակառակորդի խայտառակ փախուստից հետո ռազմադաշտում մնացին մեծ թվով տարբեր տեսակի զենքեր: Թուրք-ազերիները, սակայն, քաղաքից հեռանալուց առաջ այն ականապատել էին: Հունիսի 27-ի կեսօրից հետո հայ սակրավոր-

[6] **Арутюнян В. Б.**, *նշվ. աշխ., էջ 114:*

ները սկսեցին ականազերծման աշխատանքները: Մարտակերտը փրկված էր[7]:

Նշվեց, որ 1993թ. հունիսյան այդ օրերին խառն ու անկայուն էր Ադրբեջանի ներքին քաղաքական կյանքը: Եվլախ քաղաքի նախկին բրդի գործարանի տնօրեն, 34-ամյա գնդապետ, Ադրբեջանի ազգային հերոս Սուրաթ Հուսեյնովի իրավասության տակ գտնվող ուժերը Գյանջայում ապստամբեցին: Հունիսի 4-ին այդ զինված խմբերը հարձակվել էին պետական հիմնարկների, զորամասերի և այլ օբյեկտների վրա՝ նպատակ ունենալով առգրավել զենք, զինամթերք ու վերցնել պատանդներ: Իրադարձությունների կազմակերպիչները ձերբակալվել էին: Նրանց դեմ կռվող կառավարական զորքերը պարտություն էին կրել օդանավակայանի շրջանում: Քաղաքում տիրում էր խառնաշփոթություն: Ապստամբներին գլխավորում էին Սուրաթ Հուսեյնովը և նախկին պաշտպանության նախարար Ռահիմ Ղազիևը, որոնք պաշտոնից ազատվել էին տարբեր պատճառներով: Գյանջայում զոհերի և վիրավորների թիվը հասնում էր 260-ի: Վարչապետ Փանահ Հուսեյնովը հրաժարական տվեց: Սուրաթ Հուսեյնովը պահանջում էր Ա.Էլչիբեյի հրաժարականը և հրավիրել էր խորհրդարանի արտակարգ նստաշրջան: Ապստամբ ուժերը, գրավելով Գյանջա-Բաքու ճանապարհի վրա գտնվող Եվլախ և Աղդաշ քաղաքները, շարժվում էին դեպի մայրաքաղաք: Արդեն հունիսի կեսերին գտնվում էին Բաքվից 150 կմ հեռավորության վրա: Իսկ մինչ այդ՝ հունիսի 9-ին, Բաքվում հրավիրված Միլի մեջլիսի արտակարգ նիստում հանրապետության ներքին գործերի նախարար Ա.Ալլահվերդիևը Գյանջայի դեպքերի համար մեղադրել էր Սուրաթ Հուսեյնովին և պահանջել պատժել նրան: Ընդդիմության ղեկավար Էհթիբար Մամեդովը պահանջեց խորհրդարանի նախագահ Իսա Ղամբարի հրաժարականը: Նույնը պահանջեցին նիստին մասնակցող խորհրդարանի 200 պատգամավորները: Հանրապետության Գերագույն դատարանի նախագահ Թանիա Քերմելին պահանջեց Ա. Էլչիբեյի հրաժարականը: Նրա պահանջը պաշտպանեցին կոմունիստ պատգամավորներն և ժողովակատի մի շարք ներկայացուցիչներ: Այդ նույն օրը Բաքու ժամանեց Նախիջևանի Գերագույն խորհրդի նախագահ Հեյդար Ալիևը[8]:

[7] Ղևրիկյան Վ., *Չսկսված և չավարտված պատերազմը, Եր., 2004, էջ 195-199::*

[8] *«Ազգ», 10.06.1993:*

Գյանջայում հակամարտ ուժերի միջև բախումները խիստ սրվել էին, և զոհերի թիվը հասել էր 270-ի, վիրավորներինը՝ 600-ի: Հունիսի 13-ին Բաքվում բացվեց Միլի մեջլիսի արտակարգ նիստ, որն ընդունեց Իսա Ղամբարի հրաժարականը: Հեյդար Ալիևը շտապ մեկնում է Գյանջա և հանդիպում ունենում Սուրաթ Հուսեյնովի հետ, որի հսկողության տակ էր գտնվում հանրապետության երկրորդ խոշոր քաղաքը: Հուսեյնովը նորից պահանջում է Ա.Էլչիբեյի և ամբողջ կառավարության հրաժարականը: Այդ օրերին Էլչիբեյը լքում է Բաքուն և ապաստան գտնում Նախիջևանի Օրդուբադի շրջանում: Խորհրդարանը նրան հեռացնում է պաշտոնից և նախագահի լիազորությունները հանձնում Հեյդար Ալիևին: Այսպիսով՝ Ալիևը դարձավ Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար, որը Սահմանադրության կոպիտ խախտում էր: Մեջլիսի ձայների մեծամասնությամբ Սուրաթ Հուսեյնովը հունիսի 30-ին նշանակվեց վարչապետ:

Ադրբեջանում կատարված պետական այդ հեղաշրջումը ուներ քաղաքական աստառ, որից հեռու չէին թուրքական իշխանությունները և այլ տերություններ: Ադրբեջանի արևմտամետ և թուրքամետ քաղաքական կողմնորոշվածությունը, իրոք, չէր կարող չանհանգստացնել Ռուսաստանին: Ակնհայտ է, որ այդ հեղաշրջումից հետո Ռուսաստանի համար կբացվեին նոր հնարավորություններ, որոնցից զրկվել էր Էլչիբեյի իշխանության ժամանակ: Ադրբեջանի վրա ազդելու լծակներից մեկը «ղարաբաղյան գործոնն» էր: Այդ նշանակում է, որ Ռուսաստանը կարող էր քաղաքական ճնշում գործադրել Հայաստանի և ԼՂՀ-ի վրա: Կան փաստեր, որ Ռուսաստանը Հուսեյնովի գնդերին տրամադրում էր մարտական տեխնիկա և զինամթերք, որոնք, ինչ խոսք, հետո օգտագործվեցին Հայաստանի ու ԼՂՀ-ի դեմ[9]:

Ճակատագրի բերումով Հեյդար Ալիևը, դառնալով Ադրբեջանի նախագահ, փորձում էր յուրահատուկ ձևով լուծել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: Նա մշտական կապի մեջ էր Հայաստանի իշխանությունների հետ: Անկախ դրանից՝ Ադրբեջանի օդուժը, բազմիցս ներխուժելով ԼՂՀ տարածք, կասետային ռումբեր էր նետում խոշոր բնակավայրերի վրա: Հունիսի 26-ին հակառակորդի օդուժը, կրկին ներխուժեց ԼՂՀ-ի տարածք և նետեց բազմաքանակ ռումբեր: Արցախի ինքնապաշտպանական ուժերի հիմնական խնդիրը դարձավ լռեցնել Աղդամի կրակակետերը,

[9] *«Երկիր», 02.07.1993:*

որտեղից անընդհատ հրթիռահրետակոծվում էին Ստեփանակերտը, Ասկերանի, Մարտունու և Մարտակերտի շրջանների բնակավայրերը: Այդ օրերին ԼՂՀ կառավարությունը հրապարակեց համաշխարհային հանրությանն ուղղված դիմում, որտեղ նշված է, որ վերջին օրերին ադրբեջանական ռազմական կազմավորումները օդուժի և ծանր հրետանու օժանդակությամբ կատաղի գրոհ են ձեռնարկել Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու և Հադրութի շրջանների ուղղությամբ՝ խախտելով ԵԱՀԿ-ի միջնորդությամբ ստեղծված պայմանավորվածությունը: Դրա համար էլ ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը ստիպված են եղել դիմելու պատասխան գործողությունների, որի պատասխանատվությունը ընկնում է ազերի զավթիչների վրա[10]: ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը, հունիսի 29-ին նամակով դիմելով ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի նախագահ Մարիո Ռաֆայելիին, ցավով նշել է, որ այդ վերջին օրերին վիճակն ավելի է սրվել՝ ԼՂՀ սահմանամերձ բնակավայրերը, ինչպես և Ստեփանակերտ քաղաքը հրթիռահրետանային և օդուժի կրակի ենթարկելու հետևանքով: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի կողմից միայն վերջին շաբաթում խփվել է ադրբեջանական երկու ինքնաթիռ: Նախագահի պաշտոնակատարն այդ ամենը կապում էր հանրապետությունում ներքաղաքական ճգնաժամի հետ, որտեղ իշխանության համար պայքարող հակադիր ուժերը օգտագործում էին Ադրբեջանի և ԼՂՀ-ի միջև ընթացող պատերազմը որպես իրենց նպատակին հասնելու միջոց: Եվ չնայած Ռուսաստանի Դաշնության ԱԳ նախարարության միջնորդությամբ Ադրբեջանի և ԼՂՀ-ի միջև հունիսի 27-ին ստորագրվել էր համաձայնություն ռազմական գործողությունները մեկ շաբաթով դադարեցնելու վերաբերյալ, և ղարաբաղյան կողմը կատարել էր իր վրա վերցրած պարտականությունը, սակայն հակառակ կողմը Աղդամի կողմից շարունակում էր հրթիռակոծել Ստեփանակերտը և առաջ բերել ավերածություններ ու զոհեր: ԼՂՀ իշխանությունները միջազգային ատյաններից պահանջում էին միջոցառումներ ձեռնարկել կրակը դադարեցնելու համար և արցախահայությանը փրկել ցեղասպանությունից:

[10] **Арутюнян В. Б.**, *նշվ. աշխ, էջ 119-120:*

* * *

Այսպես. մեկ տարի առաջ հակառակորդին հանձնված Մարտակերտը ազատագրվեց: Դա արցախահայության ազգային-ազատագրական պայքարի պատմության ամենավառ էջերից է, որը արձանագրվեց մաքառումի, զոհաբերությունների և արյան գնով: Ադրբեջանը շարունակում էր կեղծել ամեն ինչ: Հուլիսի 2-ին Մինսկի խմբի նախագահ Մարիո Ռաֆայելիին հղած նամակում Կարեն Բաբուրյանը հայտնում է, որ ադրբեջանցիները շարունակում են բարբարոսաբար ոչնչացնել Լեռնային Ղարաբաղը, որի դեմ ոչ մի միջոցառում չի ձեռնարկված միջազգային հանրության կողմից[11]:

Պատերազմը, ըստ մամուլի հաղորդման, Ադրբեջանից խլել էր իբրև ութ հազար կյանք: Այդ մասին գրել էր «Լոս Անջելես թայմս» թերթը 1993թ. հունիսի 28-ին: Որպեսզի պարտությունից խուսափեն, Ադրբեջանի ռազմատենչ ուժերը փորձում էին ամեն գնով պահել Մարտակերտը, սակայն դա նրանց չհաջողվեց[12]: Խայտառակ պարտությունը լիակատար էր[13]:

Դեռևս իրեն Ադրբեջանի նախագահ հորջորջող Ա.Էլչիբեյը հունիսի 28-ին, Նախիջևանի իր որջից՝ Քալաքի (Քաղաքիկ) գյուղից դիմելով աշխարհի պետությունների խորհրդարանների ղեկավարներին և ժողովրդական ուժերին, տագնապ էր հնչեցնում, թե Աղդամը հայտնվել է պաշարման մեջ: Նա աշխարհի պետությունների ղեկավարներից խնդրում էր ապահովել Ադրբեջանի տարածքի անձեռնմխելիությունը[14]: Այնուհանդերձ, մարտերը չէին դադարում նախ և առաջ հակառակորդի մեղքով: Ռազմական գործողությունները շարունակվում էին ինչպես Արցախի տարածքում, այնպես էլ Հայաստանի սահմանամերձ շրջաններում: Հունիսի 30-ին Կապանի շրջանի «Տրիցատկա» կոչվող տարածքում ադրբեջանական կազմավորումները հայկական պաշտպանական դիրքերի ուղղությամբ գրոհ ձեռնարկեցին: Տեղի ունեցած թեժ մարտերի ընթացքում հայկական կողմը տվեց մեկ զոհ և մի քանի վիրավոր: Այդ նույն օրը մարտեր տեղի ունեցան նաև

[11] *«Հայաստանի Հանրապետություն», 03.07.1993:*

[12] *«Երկիր», 30.06.1993:*

[13] *Այդ օրերին արցախահայության դահիճ հանցագործ Վ. Պոլյանիչկոն հանդիսանում էր Հյուսիսային Օսեթիայում և Ինգուշիայում արտակարգ դրություն մտցնելու կապակցությամբ ժամանակավոր կառավարության ղեկավարը: Այդտեղ էլ նա ստացավ արժանի պատիժ՝ ահաբեկվեց:*

[14] *«Երկիր», 30.06.1993:*

Շիկահողի գոտում: Իսկ Արցախում Աղդամի կողմից շարունակվում էին հրետակոծվել Ասկերանի և Մարտակերտի շրջանների հայ ազատամարտիկների պաշտպանական դիրքերը[15]: Թշնամու այդ գործողությունները անպատասխան չէին մնում: Ադրբեջանի բանակի կազմավորումները հուլիսի 4-ին օդուժի, զրահատեխնիկայի և տանկերի մասնակցությամբ լայնածավալ հարձակում սկսեցին Մարտակերտի, Ասկերանի և Հադրութի շրջանների ուղղությամբ: Ամենաուժեղ կրակակետերը տեղավորված էին Աղդամում և նրա շրջակայքում: Արցախի բանակի հակաօդային պաշտպանության մարտիկներին հաջողվեց խփել մեկ ՍՈՒ-25:

Կարեն Բաբուրյանը հայտարարեց, որ հուլիսի 4-ի առավոտյան օդուժի և հրետանու աջակցությամբ ադրբեջանական բանակի ստորաբաժանումները լայնածավալ հարձակման են անցել ԼՂՀ արևելյան սահմանի ողջ երկայնքով: Այդ նույն օրը հինգ անգամ ռմբակոծվեց Ստեփանակերտը: ԼՂՀ պաշտպանական ուժերը պատասխան գործողություններով հակառակորդին ետ մղեցին ելման դիրքերը: ԼՂՀ իշխանությունները պատրաստակամություն էին հայտնում հակառակորդի հետ սկսել բանակցություններ[16]:

1993թ. հուլիսի 13-ին Ստեփանակերտ ժամանեց Մարիո Ռաֆայելին: Տարածաշրջան նրա այցի մասին հունիսի 29-ին որոշում էր ընդունել Պրահայում տեղի ունեցած Եվրախորհրդակցության ավագ պաշտոնատար անձանց կոմիտեն: Մինչ Ստեփանակերտ այցելելը Ռաֆայելիի խումբը հուլիսի 9-ին նախ եղել էր Բաքվում: Հեյդար Ալիևը նրան հայտնել էր, թե գրաֆիկի կատարումը հետաձգվում է անորոշ ժամանակով: Ռաֆայելին հուլիսի 11-ին Երևանում հանդիպել էր Լևոն Տեր-Պետրոսյանի հետ, վերջինս խոստացել էր ամեն ինչում աջակցել նրան[17]: Ռաֆայելին այցելեց Աղդամ և համոզվեց, որ այն չի գրավվել հայկական ուժերի կողմից: Ժամանելով Ստեփանակերտ՝ նրա գլխավորած պատվիրակությունը նախ ծանոթանում է ընդհանուր իրադրության հետ, ապա հայտարարում, թե Ղարաբաղը հանդիսանում է կոնֆլիկտի կողմերից մեկը: Հենց այդ նույն օրը, երբ Ռաֆայելին գտնվում էր Ստեփանակերտում, Ասկերանը և մոտակա գյուղերը անընդհատ ռմբակոծվում էին Աղդամի կրակակետերից: ԼՂՀ

[15] *Նույն տեղում, 01.07.1993:*
[16] *Նույն տեղում, 06.07.1993:*
[17] *«Հայաստանի Հանրապետություն», 13.07.1993:*

ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանը, մեկնաբանելով Ռաֆայելիի Ստեփանակերտ գալու նպատակը, նշել է. «Մենք չենք կարող բանակը դուրս բերել Քելբաջարից մեր հանրապետության բնակչության անվտանգությունը վնասելով»: Նա շեշտել է, որ պետք է գործող հսկողություն սահմանել ԵԱՀԿ-ի կողմից: Քանի որ ծրագիրը պետք է իրագործվեր հուլիսի 16-ից սկսած, ԼՂՀ ղեկավարությունը Ռաֆայելիին խնդրում է մի քանի օր ժամանակ տալ պլանի որոշ կետերը ճշտելու համար: Բայց քանի որ ԼՂՀ ղեկավարությունն իր հարցերին սպառիչ պատասխան չստացավ ԵԱՀԿ պատվիրակության անդամներից, ուստի այդ պատճառով էլ հարցը չլուծվեց, և վճռորեն պատասխանեց, որ Քելբաջարից հայկական ուժերի դուրսբերումը կիրականացվի միայն դիտորդների արդյունավետ հսկողության դեպքում[18]: Չնայած Ռաֆայելիի և ԼՂՀ ղեկավարների չորս ժամ շարունակված բանակցությունները ցանկալի արդյունքների չհանգեցին, այդուհանդերձ, ինչպես հայտարարեց Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Վլադիմիր Ստուպիշինը, «ԼՂՀ դե ֆակտո ճանաչումն իրողություն է»[19]: ԼՂՀ ղեկավարությունը Ռաֆայելիին հավաստիացրեց, որ հավատարիմ են մնում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822 բանաձևին և ԵԱՀԿ-ի խաղաղարար գործընթացի շրջանակներում ընդունված ժամանակացույցին[20]: Հուլիսի 14-ին Ռաֆայելին վերադարձավ Երևան: Նա իր հետ Ղարաբաղից բերել էր հինգ ադրբեջանցի պատանդ, որոնց հանձնեց Շվեյցարիայի Կարմիր խաչին՝ նրանց Բաքու տեղափոխելու համար:

Իրավիճակը ռազմաճակատում ավելի ծանրացավ 1993թ. հուլիսի կեսերին: Հակառակորդը նոր գրոհներ էր ձեռնարկել Մարտակերտի, Ասկերանի և Մարտունու ուղղություններով: Այդ օրերին Ասկերանի ուղղությամբ ռազմական գործողությունները տեղափոխվել էին Աղդամի մատույցները: Աղդամում տեղակայված կրակակետերը չէին լռում, ամեն օր այնտեղից արձակված հարյուրավոր արկեր էին պայթում Արցախի հողում: Հետագայում գեներալ-մայոր Վիտալի Բալասանյանը նշել է. «Աղդամի օպերացիան օրախնդիր անհրաժեշտություն էր դարձել: Եթե չոչնչացվեին Աղդամի կրակակետերը, ապա ողջ Ղարաբաղը կանգնում էր ու հետագայում էլ կանգնելու էր լուրջ պրոբլեմների առաջ:

[18] *Նույն տեղում, 15.07.1993:*
[19] *«Երկիր», 17.07.1993:*
[20] *«Հայաստանի Հանրապետություն», 05.07.1993:*

Հրո ճարակ էին դարձել ոչ միայն Աղդամին հարակից մեր գյուղաքաղաքները, այլև Աղդամը ինքը ռազմական այն որջն էր, այն ռազմակայանն էր, որ հանգիստ չէր տալիս ամբողջ Ղարաբաղին: Աղդամի կրակակետերից հակառակորդը ռեալ հնարավորություն ուներ ճնշման տակ պահելու մեր բոլոր դիրքերը՝ խեղճացնելով նաև մայրաքաղաք Ստեփանակերտը: Օդուժը այնքան վնասներ չէր պատճառել Ստեփանակերտին, որքան Աղդամից արձակված հրթիռները»[21]:

Աղդամը գտնվում է Ղարաբաղի լեռնաշղթայի արևելյան ստորոտում, նույնանուն հարթավայրում: Երկաթուղային կայարան է, խճուղային հանգույց: Այդ քաղաքը 1973թ. ուներ 22,6 հազար բնակիչ: Ըստ մոսկովյան «Էնցիկլոպեդիչեսկիյ սլովար»-ի (1989) Աղդամը քաղաքի կարգավիճակ ունի 1828 թվականից, որը բացարձակ սուտ է, որովհետև 1912թ. այն մի սովորական գյուղակ էր, որն ուներ 60 ծուխ 260 բնակչությամբ, որոնց կեսը հայեր էին և աշխատում էին այդտեղ կառուցված Ահարոնյանի, Սողոմոնովի, Խուբլարյանի և Բաղդասարովի օղեթորման և գինու գործարաններում ու նրանց խաղողի այգիներում: Կան տվյալներ, որ այստեղ առաջին քարե շինությունը կառուցել են հայերը սպիտակ քարից, որից էլ առաջացել է Աղդամ անունը (սպիտակ տուն): Աղդամը գտնվում է Եվլախից Ստեփանակերտ-Շուշի և Մարտունի-Ֆիզուլի տանող ճանապարհների խաչմերուկում: Ունի աշխարհագրական հարմար դիրք: Այն ապրանքափոխանակության և առևտրի կապող օղակ էր լեռնային (հայկական) և տափաստանային (թուրքերի) գյուղերի միջև: Աղդամը զարգացող քաղաք էր, որտեղ ամեն ինչի հիմքը կաշառքն էր: Ադրբեջանի իշխանությունների կողմից Ղարաբաղը վերացնելու ծրագրերում կարևոր տեղ էր հատկացվում Աղդամին: Աղդամ քաղաքն իր շրջանով մոտ 180 000 բնակչություն ուներ: Այդ նշանակում է, որ ԼՂՀ պաշտպանական ուժերը գործ ունեին հզոր ուժի հետ: Այն ժամանակվա Արցախի պաշտպանական ուժերի գլխավոր հրամանատար Սամվել Բաբայանը հետագայում նշել է, որ հայկական կողմը Աղդամի գրոհին պատրաստվում էր դեռևս 1992 թվականից: Թուրքերը չէին սպասում, թե հայերը կխփեն Աղդամին: Նա համոզմունք է հայտնում, որ Ադրբեջանը Աղդամում

[21] *«Հայրենյաց պաշտպան», N25-26, 2003:*

տվել է առնվազն 40 հազար զոհ, այսինքն՝ ամեն հայի դիմաց նրանք կորցրել են 6-7 զինվոր[22]:

Աղդամի ազատագրումը և այնտեղի կրակակետերի ոչնչացումը այն ժամանակվա ղեկավարներից ոմանց սրտովը չէր, և խուսափում էին պատասխանատվություն կրելուց: Վիտալի Բալասանյանը հիշում է, որ «Նույնիսկ այն պահին, երբ մենք արդեն մտել էինք Աղդամ, հենց նույն գիշերը այդ նույն ղեկավարներից հրահանգ ստացանք դուրս գալ Աղդամից, բայց զորքը հրաժարվեց նրանց կամքը կատարելուց: Մենք նրանցից ոչ միայն հրաման չենք ստացել լռեցնել կրակակետերը, այլև նրանք մեզ խանգարել են այն իրագործելու, և, փառք Աստծո, որ մեր շարքերում կային իրավիճակը ճիշտ գնահատող անձնավորություններ, որոնց շնորհիվ էլ մենք կատարեցինք վճռորոշ ու ճակատագրական քայլեր»[23]: Երևի ստեղծված այդ վիճակը նկատի ուներ Հեյդար Ալիևը, երբ այդ օրերին հեռախոսով խնդրեց Լևոն Տեր-Պետրոսյանին, որ նա օգնի վիճակը Ղարաբաղում կարգավորելու համար, սակայն Հայաստանի նախագահը պատասխանեց, թե ԼՂ-ի զորքերն այլևս չեն կառավարվում[24]: Այդուհանդերձ, Արցախի պաշտպանության բանակը ստիպված ու պարտադրված էր գնալ վճռորոշ քայլերի: Սակայն 1993թ. հուլիսի 20-ի առավոտյան հրետանային նախապատրաստությունից հետո, հակառակորդի ուժերը հարձակման անցան Ասկերանի շրջանի Նախիջևանիկ, Խնապատ և Ֆիրջամալ գյուղերի ուղղությամբ: Նրանք հանկարծակի գրոհներ ձեռնարկեցին նաև Մարտունու պաշտպանական դիրքերի, իսկ հուլիսի 23-ին՝ Հադրութի շրջանի Էդիլլու գյուղի վրա: ԼՂՀ ռազմական ղեկավարությունը ստեղծված վիճակում գերադասեց իր ռեզերվային ուժերի գերակշիռ մասը կենտրոնացնել Ասկերան-Աղդամ հատվածում և կանխել հակառակորդի առաջխաղացումը դեպի մայրաքաղաք Ստեփանակերտ: ԼՂՀ մարտիկներին հաջողվեց հակառակորդին հակադրել խոր և կազմակերպված պաշտպանություն: Մարտական գործողությունների նախապես մշակված ծրագրի համաձայն անցում տեղի ունեցավ պաշտպանական մարտերից հակահարձակման, որի

[22] Մարգարյան Ս., *Չհայտարարված պատերազմի կիզակետ, Ստեփանակերտ, 1999, էջ 7: Չենք կարող համաձայնվել, որ Աղդամը տվել է այդքան զոհ: Դա անհավատալի է:*

[23] *«Հայրենյաց պաշտպան», N25-26, 2003:*

[24] *«Երկիր», 17.07.1993:*

իրագործման համար առիթ ստեղծեցին հակառակ կողմի ուժերի գործողությունները: Հուլիսի 21-ի երեկոյան Աղդամի կողմից արձակված 12 արկ կրկին ընկան Ստեփանակերտի վրա, որոնք առաջ բերեցին բազմաթիվ զոհեր և ավերածություններ: Ահա այդ ժամանակ էլ Արցախի զինված ուժերի առաջ խնդիր դրվեց վերացնել Աղդամի ռազմական հենակետը[25]:

Նախատեսված էր Աղդամի՝ այդ քաղաք-հրեշի ազատագրումը իրականացնել երեք ուղղությամբ հարձակում իրականացնելով Խդրլուից ու Շելիից Ասկերանի գնդի և Մարգիլուից մարտունեցիների ու ստեփանակերտցիների ուժերով: Ըստ պաշտպանության բանակի շտաբի մշակած օպերատիվ-մարտավարական պլանի՝ Աղդամի ուղղությամբ գործող հակառակորդի զինուժի հզոր ռազմակայանի վերացման մարտական գործողությունը պետք է իրականացնեին հրամանատարներ Մովսես Հակոբյանի 2-րդ, Վիտալի Բալասանյանի 3-րդ և Սամվել Կարապետյանի Կենտրոնական պաշտպանական շրջանների զորամասերը: Նաև նախատեսված էր Աղդամի հարավային, հյուսիսային և կենտրոնական ուղղություններով փոխհամագործակցված հարված հասցնել հակառակորդին, կոտրել նրա դիմադրությունը և դուրս գալ Աղջաբադի տանող ավտոճանապարհի բնագիծը[26]: Քանի որ դեռևս հուլիսի 5-ից սկսած մինչև հուլիսի 21-ը հայկական զորամասերը գրավել էին մի շարք ռազմակետեր և ընդհուպ մոտեցել քաղաքին, հետևապես ուշացնելը կլիներ ճակատագրական սխալ: Հուլիսի 21-ի լուսաբացին Վիլեն Սաֆարյանի և Ռոբերտ Հակոբջանյանի գումարտակները երկու թևերով գրոհելով գրավեցին Շելին, որը մեծ խոչընդոտ էր Աղդամ մտնելու համար: Շելին կորցնելով՝ Աղդամի պաշտպանները փաստորեն զրկվեցին վերջին ապավենից: Այնուհետև հայ ազատամարտիկները մտան Կասիմլի, Ղարադաղլու և Փոլադլու: Կենտրոնական պաշտպանական շրջանի ջոկատները, ոչնչացնելով Սայբալուի և հարակից կրակակետերը, Կարկառի կամրջի մոտ հանդիպեցին ասկերանցիներին ու ստեփանակերտցիներին: Այդ կամուրջը Աղդամի հարավային մուտքն էր: Արթուր Հարությունյանի գումարտակը դիրքավորվեց Գուրդլար գյուղից ներքև՝ Կարկառի աջ ափին: Հաջորդ օրը՝ հուլիսի 22-ին, ազատամարտիկները Ասկերանի կողմից շարժվում են Աղդամի գինեգործարանի ուղղությամբ: Այդտեղ հասավ նաև խնապատցիների վաշտը: Հայ զինվորները երեք խմբի բաժանված առաջ շարժվեցին, ու երեկոյան կողմ նրանք «Հաղթանակի հուշարձանի» մոտ էին, որտեղից էլ սկսվում էր բուն քաղաքը: Հուլիսի 23-ի առավոտյան հայ ազատամարտիկների դիրքերը Աղդամից 1,5 կմ-ի վրա էին: Շարժվելով մայրուղու վրա գտնվող նախկին խորհրդային բանակի զորանոցների ուղղությամբ՝ հայ ազատամարտիկները լռեցրին հակառակորդի կրակոցները և մտան Աղդամ: Կենտրոնից և ձախից գնում էին Ասկերանի պաշտպանական շրջանի ու 71-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակի ստորաբաժանումները՝ ԿՊՇ-ն՝ Սամվել Կարապետյանի հրամանատարությամբ, իսկ հարավ արևմտյան կողմից՝ Մարտունու 2-րդ և 3-րդ պաշտպանական շրջանի ազատամարտիկները Մովսես Հակոբյանի գլխավորությամբ: Մարտունեցիներն ու ստեփանակերտցիները քաղաքի վրա գրոհեցին ամբողջ թափով: Բարդա թեքվող ճանապարհի շրջակայքում հայ ազատամարտիկները հանդիպեցին ուժեղ դիմադրության: Նրանց հաջողվում է այդտեղ փշրել թշնամու դիմադրությունը և առաջ շարժվել ու հասնել Աթեմազլի գյուղին: Հաջորդ օրը ոչնչացվեցին Քենգերլիի և Սարիջալիի հենակետերը: Եվ այսպես հուլիսի 24-ին Աղդամը լրիվ գտնվում էր հայ ազատամարտիկների հսկողության տակ, և ոչնչացվել էին բոլոր կրակակետերը[27]: Հետո, ինչպես վկայում է Վիտալի Բալասանյանը, Աղդամի ռազմագործողությամբ միանշանակ վճռվեց մնացած բոլոր շրջանների ազատագրության հարցը: Ադրբեջանի ռազմական ու քաղաքական ղեկավարությունը մեծ հույսեր էին կապում Աղդամի հետ: Իսկ հիմա՝ Աղդամի անկումից հետո, Ֆիզուլիում, Ջեբրայիլում, Կուբաթլիում լուրջ դիմադրություն այնքան էլ չի եղել[28]:

Ադրբեջանը աշխարհով մեկ աղմուկ բարձրացրեց: Նախագահի պաշտոնակատար Հեյդար Ալիևը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին և Գլխավոր քարտուղարին աղիողորմ հաղորդում էր, թե «հայ ագրեսորները զավթել են Ադրբեջանի տարածքի 17 տոկոսը», բոլորը միասին՝ 503 բնակավայր, և որ փախստականների ու հարկադիր վերաբնակների թիվը հասել է 507 հազարի[29]: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին կողմերին կոչ էր անում

[25] Հասրաթյան Ս., *նշվ. աշխ., էջ 113-114:*
[26] *Նույն տեղում, էջ 115:*

[27] *«Հայրենյաց պաշտպան», N25-26, 2003:*
[28] *Նույն տեղում:*
[29] *«Ազգ», 29.07.1993:*

դադարեցնել ռազմական գործողությունները: Նա նշում էր, որ Եվրախորհրդակցության Մինսկի խումբը եռանդագին փորձում է պլաններ մշակել կրակը դադարեցնելու և մնացած խնդիրները քաղաքական եղանակով լուծելու համար[30]: Ադրբեջանի պաշտպանության նախարարության և ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբի միջև համաձայնություն է ձեռք բերվում հուլիսի 25-ի 0:0 ժամից ռազմաճակատի ողջ երկայնքով եռօրյա հրադադար հաստատելու մասին, որի ընթացքում Ադրբեջանի և ԼՂՀ-ի ղեկավարությունների միջև պետք է տեղի ունենային բանակցություններ: Մարիո Ռաֆայելին Հռոմում տարածած հայտարարության մեջ ինը պետությունների անունից դատապարտում է Աղդամի վրա հարձակումը: Նման հայտարարությամբ հուլիսի 24-ին հանդես էր եկել նաև Ռուսաստանի արտգործնախարարությունը: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, հուլիսի 29-ին կրկին անդրադառնալով դարաբաղյան հակամարտությանը, ընդունեց 14 կետից բաղկացած թիվ 853 բանաձևը, որտեղ դատապարտվում էին «Աղդամի շրջանի ազատագրման» և այդ վերջին օրերին «Ադրբեջանի հանրապետության մյուս տարածքների բռնագրավումը»: Այդ փաստաթղթում նաև դատապարտվում էին թշնամական գործողությունները տարածաշրջանում, պահանջվում էր հակամարտությանը մասնակցող զավթիչ ուժերը անհապաղ և լրիվ դուրս բերել Աղդամի շրջանից, ինչպես և Ադրբեջանի Հանրապետությունից վերջերս բռնազավթված մյուս բոլոր շրջաններից[31]: Ռուսաստանի կողմից արված հայտարարության մեջ Լեռնային Ղարաբաղը նույնպես ճանաչվում էր որպես նվաճող կողմ:

1993թ. հուլիսի 28-ին Թարթառի և Մարտակերտի շրջանների սահմանագլխին հանդիպեցին Ադրբեջանի և ԼՂՀ բարձր պաշտոնյաներից կազմված պատվիրակությունները, որտեղ քննարկվեց հուլիսի 24-ին և 26-ին տեղի ունեցած հանդիպումների ժամանակ ձեռք բերված հրադադարը հինգ օրով երկարաձգելու հարցը ու երկու հանրապետությունների ղեկավարների բարձր մակարդակի հանդիպման հնարավորությունը: Այդ հանդիպման արդյունքում ստորագրվեց համաձայնագիր, ըստ որի՝ հրադադարը երկարաձգվեց յոթ օրով: ՀՀ արտաքին գործերի նախարարությունը ողջունեց հայ-ադրբեջանական այդ բանակցությունները և մտահոգություն հայտնեց ՄԱԿ-ի թիվ 853 բանաձևը իրագործելու

[30] *«Հայաստանի Հանրապետություն», 24.07.1993:*
[31] *«Երկիր», 31.07.1993:*

առթիվ: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը պահանջում էր հայերի կողմից Աղդամի և ավելի շուտ նվաճված տարածքներն ազատագրել[32]: Արցախի ժողովրդական ճակատը, հուլիսի 31-ին հանդես գալով հայտարարությամբ, իր տարակուսանքը հայտնեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 853 բանաձևի ընդունման կապակցությամբ, որտեղ դատապարտվում է Լեռնային Ղարաբաղի հայերի կողմից Ադրբեջանի Աղդամ քաղաքի գրավման փաստը: Նաև նշված է, որ Աղդամը Ադրբեջանի գլխավոր ռազմական հենակետերից մեկն էր, որտեղից մոտ երկու տարի հրթիռահրետակոծության են ենթարկվել ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտը և շրջակա բնակավայրերը, որի հետևանքով անդամալուծվել է ԼՂՀ-ն արտաքին աշխարհի հետ կապող միակ օդանավակայանը, շարքից դուրս են եկել Ստեփանակերտի համարյա բոլոր խոշոր ձեռնարկությունները, ավերվել են բնակելի տների մեծ մասը, ամբողջությամբ քարուքանդ է արվել Ասկերան շրջկենտրոնը: Այդ ժամանակամիջոցում խոշոր տերություններից որևէ մեկը չի փորձել պաշտպանել ԼՂՀ խաղաղ բնակչությանը: Եվ հիմա մեզ մեղադրում էին նրա համար, որ ստիպված ենք եղել լռեցնել Աղդամում և նրա շրջակայքում տեղաբաշխված ռազմական հենակետերը: Արցախի ժողովրդական ճակատը համաշխարհային հանրությանը տեղյակ է պահում, որ արցախահայությունը պատրաստ է կյանքի գնով պաշտպանել իր հայրենիքի ազատությունը, և որ ԼՂՀ-ն երբեք չի կարող մտնել Ադրբեջանական Հանրապետության կազմի մեջ, քանի որ դա կործանման դանդաղ գործողության ուղին է[33]: Իսկ օգոստոսի 4-ին ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը, նամակ հղելով ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին, հաղորդել է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կողմնակից է Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև ռազմական հակամարտության խաղաղ կարգավորմանը: ԼՂՀ-ն դժգոհ էր նրանից, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 853-րդ բանաձևն ընդունվել էր չստուգված ու միակողմանի տեղեկատվության հիման վրա: ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատարը խնդրում էր ՄԱԿ-ին իր ներկայացուցչին ուղարկել Լեռնային Ղարաբաղ՝ տեղում ծանոթանալու իրադրությանը[34]: Ասենք նաև, որ ԵԱՀԿ-ի Մինսկի խոր-

[32] *«Հայաստանի Հանրապետություն», 03.08.1993:*
[33] *«Արցախ», 03.08.1993:*
[34] *Նույն տեղում, 07.08.1993:*

հրդաժողովի նախագահ Մարիո Ռաֆայելիին նույն օգոստոսի 4-ին Կարեն Բաբուրյանի հղած նամակում դժգոհություն էր հայտնվում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 853 բանաձևի առթիվ, որը միակողմանիորեն դատապարտում էր Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի գործողությունները, և որի հիմքում ընկած էր Մ.Ռաֆայելիի զեկուցագրի նախագիծը: Կարեն Բաբուրյանը Ռաֆայելիին հիշեցնում է, որ հուլիսի 23-ին ինքը նամակ էր գրել, որտեղ շարադրված են եղել բոլոր փաստերը, մանավանդ հուլիսի 21-ին, 22-ին և 23-ին Աղդամի կողմից Ստեփանակերտն ու Ասկերանը ռմբակոծության ենթարկվելու առթիվ: Նաև նշված է, որ արցախցիները չեն կարող թույլ տալ անպատիժ կերպով սպանել իրենց երեխաներին ու կանանց: Դրա համար էլ Արցախի ուժերը հարկադրված են եղել անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ապահովելու նրանց անվտանգությունն ու պաշտպանությունը: Արցախցիները այլընտրանք չունեին, քան լռեցնել իրենց վրա կրակող հրանոթները և ստեղծել պաշտպանության գոտի: Պարոն Ռաֆայելիին կոչ է արվում «պատշաճ ուշադրությամբ վերաբերվել ԼՂՀ-ի դիրքորոշմանը և բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկել մեր տարածաշրջանում խաղաղության հաստատումն արագացնելու նպատակով»[35]:

Մի քանի օրվա հրադադարը, որը ձեռք էր բերվել երկու կողմերի միջև, ոչինչ էլ չփոխեց: Օգոստոսի 9-ի գիշերը ծանր մարտեր տեղի ունեցան Մարտունու շրջանի Ուրյան լեռան բարձունքի շրջակայքում: Երկու կողմերն էլ ունեցան զոհեր: ԼՂՀ պաշտպանական ուժերին հաջողվել էր ետ մղել հակառակորդի հարձակումը: Նոր հրատապ խնդիր հանդիսացավ Ֆիզուլու և Ջեբրայիլի կրակակետերի լռեցումը:

* * *

ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի նախաձեռնությամբ 1993թ. օգոստոսի 1-ին Գորիսում տեղի էր ունեցել հանրապետության Անվտանգության խորհրդի ընդլայնված նիստ, որին մասնակցեցին նաև ԼՂ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը, ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ԼՂՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը և ԼՂՀ արտաքին գործերի նախարար Արկադի Ղուկասյանը: Նիստում քննարկվեց արցախյան հակամարտության իրավիճակը միջազգային հանրության հակազդեցության պայմաններում: Մշակվեց առաջիկա քաղաքական և դիվանագիտական գործունեության կոնկրետ ծրագիր, որը վերաբերում էր Ֆիզուլու, Ջեբրայիլի և այլ կրակակետերի վերացմանը:

Հակառակորդը օգոստոսի 6-ի գիշերը հարձակում ձեռնարկեց Հադրութի ուղղությամբ, իսկ օգոստոսի 7-ի առավոտյան հրետանային ուժեղ նախապատրաստությունից հետո հարձակումներ սկսեցին Մարգիլլու-Բերդաշեն և Խծաբերդ-Հին Թաղեր ուղղություններով: Հակառակորդը միևնույն ժամանակ անընդհատ ռմբակոծում էր Մելիքաշեն, Էդիլլու, Հադրութ, Թաղավարդ, Ջարդանաշեն և այլ գյուղեր: Հրթիռահրետակոծությունը իրագործվում էր Ֆիզուլու շրջանից: Օգոստոսի 8-ի գիշերը կրկին ռմբակոծվեցին Մարտունու և Հադրութի շրջանների, ինչպես նաև Գորիսի և Կապանի շրջանների բնակավայրերը, որոնց հետևանքով եղան զոհեր ու ավերածություններ: Հակառակորդը գրոհներ էր ձեռնարկում մանավանդ Մարտակերտի շրջանի ուղղությամբ: Նրանք փորձեցին ռազմաճակատի գիծը ճեղքել Աղդամ-Ասկերան ուղղությամբ, սակայն ստանալով արժանի հակահարված՝ ետ շպրտվեցին: ԼՂՀ ուժերին հաջողվեց առաջ անցնել և ամրանալ նոր դիրքերում[36]: Օգոստոսի 11-ին Մինսկի խմբի ինը պետություններ, հանդես գալով հայտարարությամբ, խոր մտահոգություն էին հայտնում Մարտունի-Ֆիզուլի-Հադրութ գոտում ռազմական գործողությունների սաստկացման կապակցությամբ: Նրանք կոչ էին անում անհապաղ դադարեցնել մարտական գործողությունները և անմիջապես շփումների միջոցով վերականգնել հրադադարը, ձեռնպահ մնալ բնակավայրեր և այլ տարածքներ գրավելուց, գնդակոծումներից և ռմբակոծումներից[37]:

1993թ. օգոստոսի լույս 12-ի գիշերը և առավոտյան Ֆիզուլու շրջանի տարածքից «գրադ» կայանքից և տանկերից կրկին հրթիռահրետակոծվեցին Հադրութը, Էդիլլուն, Տրախտիկը, որոնք առաջ բերեցին զոհեր և բավականին ավերածություններ: Հակառակորդը գրոհներ ձեռնարկեց նաև ԼՂՀ հյուսիսարևելյան սահմանի ուղղությամբ՝ Մարտակերտի և Խանլարի շրջանների սահմաններում: Նա օգոստոսի 13-ին կրկին փորձեց ճեղքել Աղդամ-Ասկերան ռազմաճակատի գիծը, սակայն ետ շպրտվեց: Ադրբեջանի քարոզչությունը աշխարհով մեկ աղմուկ-աղաղակ էր բարձ-

[35] *Նույն տեղում:*

[36] *Նույն տեղում, 14.08.1993:*

[37] *«Հայաստանի Հանրապետություն», 13.08.1993:*

ռացրել, թե հայկական ուժերը հարձակումներ են գործում Ֆ. ·ուլի քաղաքի վրա: Իրոք, Ֆիզուլու կրակակետերի վերացումը դարձել էր հույժ կարևոր խնդիր: Ֆիզուլու և Ջեբրայիլի շրջաններից փորձում էին ճեղքել ԼՂՀ բանակի դիրքերը: Նույնիսկ Հադրութի վրա նետվեց 500-կիլոգրամանոց ռումբ, որն առաջ բերեց մեծ ավերածություններ: Ֆիզուլու կողմից Մարտունու շրջան ներխուժած մի խոշոր խմբավորում շրջապատման մեջ ընկավ և ոչնչացվեց: Վերացվեցին հակառակորդի մի քանի կրակակետեր, որտեղից անընդհատ հրթիռահրետակոծվում էին Մարտունի քաղաքը և հանրապետության այլ բնակավայրեր[38]: Ադրբեջանի պաշտպանության նախարարի պաշտոնակատար Սաֆար Աբիևի և ԼՂՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի միջև օգոստոսի 15-ին տեղի ունեցավ հանդիպում, որը դրական հետևանք չունեցավ: Օգոստոսի 16-ին ադրբեջանական բանակը շարունակում էր Հադրութի և Կուբաթլուի սահմանում գրոհել ԼՂՀ պաշտպանության բանակի դիրքերը: Քանի որ սկսվել էին հայ-ադրբեջանական բանակցությունները, ուստի օգոստոսի 17-ից մարտական գործողությունները թուլացան: Ադրբեջանի լրատվական միջոցները աղմուկ էին բարձրացրել, թե ղարաբաղյան զորամիավորումները շարունակում են իրենց հարձակողական գործողությունները և գրավել են Ֆիզուլին: Ղարաբաղի բանակի շտաբի պետ Սեյրան Օհանյանը հանդես եկավ հայտարարությամբ և նշեց, թե Արցախի բանակի առջև նման խնդիր չի դրված:

Օգոստոսի 17-ի երեկոյան ԼՂՀ ԳԽ նախագահությունը Բաքվից ստացավ Հեյդար Ալիևի հետևյալ հեռագիրը. «Ադրբեջանի ղեկավարությունը փոխվարչապետ Ռ.Գուլևին լիազորում է 5 օրվա ընթացքում Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի բարձր ղեկավարների միջև հանդիպում կազմակերպելու շուրջ վարել բանակցություններ»[39]: Հանդիպման արդյունքում պայմանավորվում են 1993թ. օգոստոսի 18-ի ժամը 18-ից հինգ օր ժամկետով հակամարտության գոտում սահմանել հրադադար: Հինգ տարվա մեջ առաջին անգամ Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև կնքված այդ համաձայնագիրը ցույց տվեց, որ Ադրբեջանը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Ուրիշ հետևությունը ճիշտ չէր լինի: Ադրբեջանի Հանրապետության նախագահի պաշտոնակատար Հեյդար Ալիևը, օգոստոսի 23-ին ելույթ ունենալով Բաքվի հեռուստատեսությամբ, նշեց, որ միասնական հրամանատարության բացակայության և ցածր կարգապահության հետևանքով ադրբեջանական բանակը կրում է անհաջողություններ: Ալիևը նաև հաղորդեց, որ Ֆիզուլի քաղաքի վարչակարգի ուղղակի հրամանով բնակչությունը և գինված ուժերը թողել են քաղաքը[40]: Իրոք, օգոստոսի 22-ին ԼՂՀ ՊԲ առաջին և երկրորդ պաշտպանական շրջանների ստորաբաժանումների ճնշման տակ 160-րդ ադրբեջանական գնդի ստորաբաժանումները հարկադրված էին թողնել Ֆիզուլի քաղաքը և շուրջ 1380 քառ. կմ տարածք ունեցող համանման շրջանը: Հաջորդ օրը ղարաբաղյան զորքը մտավ Ադրբեջանի Լենքորանի գումարտակի կողմից պաշտպանվող Ջեբրայիլի շրջանը: Երկու օր անց ազատագրեցին 1050 քառ. կմ մակերես ունեցող համանման շրջանը: Օգոստոսի 31-ին ԼՂՀ ՊԲ զորամասերը մտան Կուբաթլուի շրջան և արդեն Իրանի սահմանից գտնվում էին 4-5 կմ հեռավորության վրա: Հայոց հաղթարշավը շարունակվում էր:

Ռուսաստանի արտգործնախարարությունը օգոստոսի 24-ին հայտարարեց, թե «վերջին օրերին ուշադրություն են գրավում Ղարաբաղի հայերի ակտիվ ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղի սահմաններից դուրս՝ Ֆիզուլի-Ջեբրայիլ վտանգավոր գոտում: Մարտական գործողությունների առաջխաղացումը դեպի Իրանի սահմանը սպառնում էր մեկուսացնել Ադրբեջանի խիտ բնակեցված մի շարք շրջաններ և տասնյակհազարավոր խաղաղ բնակիչների փախստական դարձնել: Դա չի կարող արդարացվել որևէ ռազմական անհրաժեշտությամբ, հակամարտող կողմի զինվորական միավորումները չեն կարող այստեղ այլևս սպառնալ հայկական ուժերին»: Ռուսաստանը պահանջում էր դադարեցնել ռազմական գործողությունները և հարձակվող ուժերը ետ քաշել ԼՂՀ սահմանները[41]: Այդ հայտարարությունից մի քանի օր անց, օգոստոսի 27-ին, ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում տեղի ունեցավ Ռուսաստանի նախագահի հատուկ հանձնարարությունների դեսպան Վլադիմիր Կագիմիրովի հանդիպումը ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար

---

[38] *«Արցախ», 17.08.1993:*

[39] *Նույն տեղում, 18.08.1993: Լ. Տեր-Պետրոսյանի օգոստոսի 31-ի հրամանագրով Սերժ Ազատի Սարգսյանը նշանակվեց ՀՀ պաշտպանության նախարար:*

[40] *"Бакинский рабочий", 24.09.1993.*

[41] *«Երկիր», 25.08.1993:*

Կարեն Բաբուրյանի և ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ, ու քննարկվեցին հակամարտության կարգավորման մի քանի տարբերակներ: Սակայն կողմերը միասնական եզրակացության չհանգեցին: Այդ նույն օրը՝ օգոստոսի 27-ին, ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը նամակ հղեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին, որտեղ ասված է. «Մեր բազում դիմումների անտեսումը հանգեցրեց նրան, որ աշխարհը մինչև օրս չգիտի ճշմարտությունը ԼՂՀ ժողովրդի տառապանքի մասին, որն ամեն օր ենթարկվում է հրթիռահրետանային հարվածների և ռմբակոծությունների՝ խեղդվելով շրջափակման ճիրաններում: Մենք պատրաստ ենք ներկայացնել հարյուրավոր փաստեր Ադրբեջանի կողմից ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերը խախտելու վերաբերյալ, որոնք մնում են անպատիժ: Միևնույն ժամանակ Լեռնային Ղարաբաղի պաշտպանական բանակի կողմից ձեռնարկված ցանկացած պատասխան գործողություն արժանանում է ՄԱԿ-ի խիստ դատապարտմանը»[42]: Իսկ օգոստոսի 30-ին ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, հանդես գալով հայտարարությամբ, մերկացրեց այդ վերջին օրերին պաշտոնական Բաքվի կողմից բարձրացված աղմուկը այն մասին, թե իբր ԼՂՀ ուժերի ճնշման հետևանքով Ադրբեջանի Հանրապետությունում ուժեղացել է ներքաղաքական պայքարը: ՊՊԿ-ի նախագահը նշում է, որ վերջերս ձեռք բերված հնգօրյա դադարը խախտել է ադրբեջանական կողմը: Ավելի քան մեկ տարի է, Շահումյանի շրջանի և Մարտակերտի բնակչության մի մասը փախստականներ են: Այսօր այն կազմում է ԼՂՀ բնակչության 20 տոկոսը: Այդ հարցը շրջափակված Արցախում ավելի ծանր է, քան Ադրբեջանում, որի բնակչության հինգ տոկոսն է բնակվում պատերազմական Արցախի շուրջը: Ռ. Քոչարյանը ցանկություն էր հայտնում անհապաղ բանակցությունների մեջ մտնել փախստականների հարցի շուրջ և կրակի դադարեցումը նրանց բնակավայրերում[43]: Հենց այդ առաջարկության հիման վրա օգոստոսի 31-ին ԼՂՀ և Ադրբեջանի պատվիրակությունների կողմից ստորագրվեց տասնօրյա հրադադար, որը պետք է գործեր սեպտեմբերի 1-ից մինչև 10-ը: Այդուհանդերձ, Ադրբեջանի իշխանությունները չէին ցանկանում տեղի տալ և ընդունել ճիշտ ու անհերքելի փաստարկումները: Ի պատասխան այդ օրերին ՀՀ նախագահի և ԱԳՆ հայ-

[42] *Նույն տեղում, 28.08.1993:*
[43] **Арутюнян В. Б.,** *նշվ. աշխ., էջ 183-184:*

տարարությունների՝ Ադրբեջանի ԱԳՆ-ն հանդես եկավ մի խիստ պերճախոս հայտարարությամբ, որում Հայաստանի նկատմամբ շարադրված էին կեղծիքներ և անճշտություններ: Ադրբեջանի ԱԳ նախարարը իր հայտարարությունը եզրափակում էր հետևյալ զայրույթով. «Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը խոր զայրույթ է հայտնում և վճռական բողոք հայտարարում ընդդեմ Հայաստանի, որ օգտագործելով անջատողականության քաղաքական խաղաքարտը՝ փորձում է տարածաշրջանում կատարվող իրադարձությունների համար խուսափել պատասխանատվությունից և հաստատապես հույս ունի, որ Միացյալ ազգերի կազմակերպությունը, միջազգային հանրությունն ընդհանուր առմամբ ի զորու կլինեն տարբերել ճշմարտությունն ու կեղծիքը և իրենց վերջնական արդարացի վերաբերմունքը կարտահայտեն ագրեսորի նկատմամբ»: Եվ չնայած Ադրբեջանի ԱԳ նախարարի այդ վրդովմունքին՝ ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ընդառաջելով Հեյդար Ալիևի ԼՂՀ ղեկավարության հետ բանակցությունները շարունակելու վերաբերյալ ցանկությանը[44] և լիովին կիսելով ՀՀ նախագահի պատրաստակամությունը, սեպտեմբերի 1-ին հանդես գալով հայտարարությամբ, ցանկություն հայտնեց հանրապետության զինված ուժերը անհապաղ ետ քաշել Խոջիկ-Խանլիկ-Չերեյի գծից և վերադառնալ նախկին զբաղեցրած դիրքերը, բացի այդ, պատրաստակամություն է հայտնում բանակը դուրս բերել Կուբաթլուի գյուղերից[45]:

ԼՂՀ հռչակման երկրորդ տարեդարձի օրը՝ սեպտեմբերի 2-ին, ԼՂՀ ԳԽ նախագահությունը դիմում հղեց հանրապետության քաղաքացիներին, որտեղ մերկացվում է Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականությունը, որը իրագործվում էր Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Ասված է, որ արցախցիները իրենց ազատությունը, անկախությունը և նորածին պետության պաշտպանությունը հարկադրված են իրականացնել պատերազմի պայմաններում, որովհետև Ադրբեջանը չի հրաժարվում ուժային քաղաքականությունից: Նա, հետամուտ լինելով իր հայակուլ քաղաքականությանը, ավերում է տասնյակ և հարյուրավոր գյուղեր ու քաղաքներ, զոհվում են հարյուրավոր երիտասարդ մարդիկ: Պատերազմը խլում է նյութական և մարդկային հսկայական ռեսուրսներ:

[44] *«Հայաստանի Հանրապետություն», 31.08.1993:*
[45] *Նույն տեղում, 02.09.1993:*

Արցախահայությունը հերոսական պայքարի է ելել: Նորաստեղծ մեր քաջարի բանակը հուժկու հարվածներ է հասցնում թշնամուն: Մենք կառուցում ենք նոր պետություն և ձգտում խորացնել ԼՂՀ միջազգային ճանաչման գործընթացը: Մեր ժողովուրդը ցանկանում է ապրել խաղաղ, բոլոր հարևանների հետ հաշտ և կողջունի Ադրբեջանի հետ խաղաղ բանակցությունները[46]:

* * *

1993թ. սեպտեմբերի 2-ին ԼՂՀ հռչակման երկրորդ տարվա արդյունքների ամփոփումը ցույց տվեց, որ Ադրբեջանի կողմից պատերազմի մեջ ներքաշված Արցախի տնտեսությունը զգալի վնաս էր կրել: Պատերազմական գործողությունների հետևանքով ոչնչացվել էր հանրապետության արդյունաբերական ֆոնդերի 70 տոկոսը, երեք անգամ պակասել են ցանքատարածությունները, զգալիորեն կրճատվել էր անասնագլխաքանակը: Հանրապետության բնակչության մեկ երրորդ մասը դարձել էր փախստական կամ էլ զրկվել բնակարաններից: Ադրբեջանի բանակի կողմից օկուպացված տարածքներից Ադրբեջան են տարվել արտադրական բոլոր սարքավորումները, հումքն ու նյութերը, իրենց բնակարաններից ժամանակավոր հեռացած հայերի ամբողջ ունեցվածքը: Յոթմիլիոնանոց Ադրբեջանի կողմից 160-հազարանոց Լեռնային Ղարաբաղի դեմ սկսված այդ պատերազմը, ինչպես երևում է, զավթողական էր և ավազակային[47]: Իբր այդ ամենը քիչ էր, հիմա էլ Թուրքիան էր սպառնում հայ ժողովրդին: Ադրբեջանը ռազմական մեծ օգնություն էր ստանում իր հովանավորից: Այդ առթիվ ԵԱՀԿ-ի շրջանակներում գործող միջազգային կոնգրեսի կազմկոմիտեն հանդես գալով նախազգուշական հայտարարությամբ, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի և ԱԽ-ի մշտական անդամների ուշադրությունը հրավիրում էր ղարաբաղյան հակամարտության հարցում Թուրքիայի ծայրաստիճան վտանգավոր դիրքորոշման մասին: Այդ հայտարարությունը սեպտեմբերի 13-ին ուղարկվել էր Բուտրոս Ղալիին և ԱԽ-ի մշտական անդամ երկրների ղեկավարներին: Այնտեղ ասված է, որ այն պահին, երբ Ադրբեջանի ու ԼՂՀ ներկայացուցիչների միջև դժվարությամբ հաջողվել է սկսել բանակցությունների գործընթացը, Թուրքիայի նախագահ Ս.Դեմիրելը և վարչապետ Թ.Չիլլերը հանդես են գալիս Թուրքիայի ռազմական միջամտության հնարավոր լինելու վերաբերյալ աննախադեպ հայտարարությամբ: Թուրքիան ակտիվորեն մասնակցում է Հայաստանի շրջափակմանը՝ արգելելով նույնիսկ մարդասիրական օգնության տեղափոխումը: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարից և ԱԽ-ից պահանջվում էր Թուրքիային ստիպել պահպանել ուժի սպառնալիք չգործադրելու միջազգային կյանքի օրենքը[48]:

1993թ. սեպտեմբերի 7-ին ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանը հայտարարեց, թե ընդառաջելով խաղաղ գործընթացին՝ ԼՂՀ ղեկավարությունը հրաման է տվել հանրապետության բանակային զորամասերը դուրս բերել Կուբաթլուից և հարակից մի շարք գյուղերից: Հայտարարության մեջ նաև նշված է, որ ԼՂՀ-ն ոչ մի տարածքային հավակնություն չունի Ադրբեջանի նկատմամբ, և որ ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի գործողությունները բացառապես կրում են պաշտպանական գործողություն և թելադրված են հանրապետության բնակչության անվտանգությունն ապահովելուց[49]: Սեպտեմբերի 10-ին Ստեփանակերտում ստացվեց ԵԱՀԿ-ի բանակցական գործընթացի ԱՄՆ-ի դեսպան Ջոն Մարեսկոյի Ռոբերտ Քոչարյանին ուղղված նամակը, որում ցանկություն էր հայտնում, որ ԼՂՀ-ն կատարի ՄԱԿ-ի ԱԽ-ի որոշումները և նպաստի Մինսկի խմբի գործունեությանը: Դրա տրամաբանական շարունակությունը հանդիսացավ սեպտեմբերի 9-11-ը Մոսկվայում տեղի ունեցած ԵԱՀԿ-ի ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գծով Մինսկի խմբի կոնսուլտացիան, որին մասնակցեց նաև ԼՂՀ ներկայացուցիչը: Սեպտեմբերի 13-ին դարձյալ Մոսկվայում տեղի ունեցավ ԼՂՀ արտգործնախարար Արկադի Ղուկասյանի և Ադրբեջանի ԳԽ փոխնախագահ Ֆիատդին Ջալիլովի հանդիպումը, որտեղ պայմանավորվեցին հրադադարը շարունակել մինչև բանակցությունների վերջը[50]: Սեպտեմբերի 14-ին ստորագրվեց համատեղ կոմյունիկե, ըստ որի՝ հրադադարը երկարաձգվեց մինչև հոկտեմբերի 5-ը: Նաև նախատեսվեց, որ սեպտեմբերի 22-ին Փարիզում հանդիպեն ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի անդամները, որին մասնակցելու համար Մարիո Ռաֆայելին հրավիրեց ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտո-

---

[46] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, g. 1, գ. 11, p. 6-7:*
[47] *"Время", 01.09.1993:*

[48] *«Երկիր», 14.09.1993:*
[49] **Арутюнян В. Б.,** *նշվ. աշխ, էջ 187-188:*
[50] *«Հայաստանի Հանրապետություն», 15.09.1993:*

նակատար Կարեն Բաբուրյանին: Այդ հանդիպման նպատակն էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 822 և 853-րդ բանաձևերը անհապաղ իրագործելու վերաբերյալ գրաֆիկի կատարումը: Սեպտեմբերի 23-ին Ասկերանի սահմանագծում հանդիպելով, Ադրբեջանի և ԼՂՀ ներկայացուցիչները քննարկեցին ԼՂՀ մտնող երկաթգծի աշխատանքային ռեժիմի վերականգնման, Եվլախ-Ստեփանակերտ-Գորիս-Նախիջևան գազամուղի վերաշահագործման, ԼՂՀ սահմանակից ադրբեջանական շրջաններին ոռոգման ջրի մատակարարման վերսկսման հետ կապված հարցերը, սակայն դրանք մնացին անկատար: Սեպտեմբերի 24-ին Մոսկվայում Ռուսաստանի Դաշնության արտգործնախարարության միջնորդությամբ տեղի ունեցավ ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի և Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Հեյդար Ալիևի հանդիպումը: Նրանք Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ համաձայնության եկան, որ հակամարտության կարգավորմանն ուղղված Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ջանքերը պետք է համադրվեն ԵԱՀԿ-ի շրջանակներում տեղի ունեցող գործընթացի հետ[51]:

Հոկտեմբերի 3-ին Ադրբեջանում անցկացվեցին հանրապետության նախագահի ընտրություններ: Հեյդար Ալիևի օգտին քվեարկեց ընտրություններին մասնակցածների 95 տոկոսը[52]: Այդ օրերին Լեռնային Ղարաբաղը և Ադրբեջանը ձեռք բերեցին ժամանակավոր հրադադարի վերաբերյալ նոր պայմանավորվածություն, որի համաձայն՝ այն երկարաձգվեց մինչև նոյեմբերի 5-ը ներառյալ:

Ադրբեջանում ձերբակալված, գերված կամ պատանդ վերցված հայերի նկատմամբ իրագործվում էին անասելի դաժանություններ ու կտտանքներ: 1993թ. աշնանը Բաքվի բանտերից մեկում մահացավ 1991թ. մայիսի 15-ին «Կոլցո» գործողության ժամանակ անօրեն կալանավորված Բերդաձորի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ, չորս երեխայի հայր Առնո Մկրտչյանը: Նրան տանջամահ էին արել: Ադրբեջանի իշխանությունները Ա.Մկրտչյանին հինգ համագյուղացիների հետ 1992թ. մահվան էին դատապարտել Բաքվում կայացած դատական մի ֆարսով: Այդ «դատ» կոչվածը կայացել է իրավական, տեղեկատվական և բարոյական մեկուսացման պայմաններում: Ավելի վաղ, ինչպես ասվել է, Յուրի Ջհանգիրյանին և միլիցիայի գնդապետ Ղարիբ Հարությունյանին նույնպես ենթարկել էին գազանային խոշտանգումների ու տանջամահ արել: Վտանգի տակ էին մահվան դատապարտված բերդաձորցիներ Արկադի Հայրիյանի, Հրաչիկ Պետրոսյանի, Արվիդ Մանգասարյանի, Գագիկ Հարությունյանի, Գառնիկ Առստամյանի և շատ-շատերի կյանքը: ՀՀ ԳԽ Արցախի հանձնաժողովը, նոյեմբերի 30-ին հանդես գալով հայտարարությամբ, միջազգային հանրության և կազմակերպությունների ուշադրությունը մեկ անգամ ևս հրավիրում էր խորհրդային բանակի և Ադրբեջանի օմոնի կողմից 1991թ. գարնանն ու ամռանը պատանդ վերցված և Ադրբեջանի դատարանների կողմից մահապատժի դատապարտված հայերին պարբերաբար խոշտանգումների ենթարկելու փաստերի մասին: Բոլորին կոչ էր արվում բարձրացնել իրենց ձայնը ընդդեմ Ադրբեջանի բանտերում կալանավորների նկատմամբ անմարդկային վերաբերմունքի, անել ամեն ինչ մահվան դատապարտված բերդաձորցիներին, ինչպես և Հոռաթաղ գյուղի բնակիչ Արկադի Հայրյանի կյանքը փրկելու համար[53]:

Ադրբեջանը շարունակում էր խախտել հրադադարը: ԵԱՀԿ-ի նախագահ, Շվեդիայի արտգործնախարարի անձնական ներկայացուցիչ, դեսպան Մաթիաս Մոսբերգի պատվիրակությունը, հոկտեմբերի 12-ին լինելով Ստեփանակերտում, հանդիպումներ է ունենում ԼՂՀ ղեկավարների հետ, լսում նրանց բողոքները, ապա լինում արդյունաբերական մի շարք ձեռնարկություններում: Այդ նույն օրը ադրբեջանական կողմը, հերթական անգամ խախտելով զինադադարը, Հադրութից հարավ ձեռնարկեց նոր գրոհ, որը կասեցվեց ԼՂՀ ուժերի կողմից: ԵԱՀԿ-ի պատվիրակությունը ոչինչ էլ չձեռնարկեց դրա դեմ: Ադրբեջանի նորընտիր նախագահ Հեյդար Ալիևը նույնիսկ հայտարարեց, թե Ադրբեջանի տարածքի 20 տոկոսը օկուպացվել է հայկական զորքերի կողմից, և հանրապետության մոտ մեկ միլիոն քաղաքացիական բնակչություն

---

[51] *Նույն տեղում, 28.09.1993: Սեպտեմբերի 27-ին լուր ստացվեց, որ Հեյդար Ալիևի կարգադրությամբ Բաքվի բանտից ազատվել է ԼՂ մարզկոմի նախկին առաջին քարտուղար Բորիս Կևորկովը, որը ձերբակալվել էր 1992թ. մայիսի 24-ին Բաքվի օդանավակայանում: Նա մահացել է Մոսկվայում 1998թ. դեկտեմբերին: Վկայություն կա, որ նա վերջին տարիներին հուշեր է գրել, որոնց ճակատագիրը մեզ մնում է անհայտ:*

[52] *Հ. Ալիևը նախագահ ընտրվելուց մի փոքր անց՝ նոյեմբերի 26-ին, ընդունվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը լուծարելու մասին Ադրբեջանի Հանրապետության որոշումը:*

[53] *«Հայաստանի Հանրապետություն», 02.12.1993:*

մնացել է անօթևան և առանց գոյության միջոցների, ավերվել է ադրբեջանական հանրապետության օկուպացված շրջանների տնտեսական ենթակառուցվածքները, ոչնչացվել են Ադրբեջանի պատմության և մշակույթի եզակի հուշարձաններ: Անշուշտ, այդ ամենը շատ է չափազանցված, ինչպես հատուկ է Ադրբեջանի քարոզչությանը: Ադրբեջանական «Իստիգալ» թերթը հաղորդել է, թե իբր պատերազմի հետևանքով Ադրբեջանի գյուղատնտեսությունը կրել է 200 մլրդ ռուբլու վնաս: Միայն վերջին շրջանում Ադրբեջանը կորցրել է 1 մլն գլուխ անասուն, 8000 տ բամբակ, 50 հազար տոննա ցորեն, 147 հազար տոննա խաղող[54]: Ադրբեջանը զրպարտում էր, թե իբր ԼՂՀ-ում պահվում են մի քանի հազար ռազմագերիներ ու պատանդներ[55]: Ըստ Ալիևի՝ հայ-ադրբեջանական հակամարտության 5 տարիների ընթացքում զոհվել է 16 հազար ազերի, 22 հազարը՝ վիրավորվել, մեկ միլիոն բնակիչ էլ դարձել է փախստական[56]: Հետաքրքիր է՝ պաշտոնական Բաքվի և իր կողմից սանձազերծված պատերազմից ի՞նչ էր սպասում Հեյդար Ալիևը:

Արտասահման մեկնած ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանը, հոկտեմբերի 24-ին Փարիզի «Ինտերկոնտինենտ» հյուրանոցում տեղի ունեցած մամուլի ասուլիսում անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ՄԱԿ-ի ԱԽ-ի վերջին՝ թիվ 874 բանաձևին, հայտարարեց, որ ԼՂՀ-ն որպես Ադրբեջանի մաս ձևակերպումը բոլորովին չի նպաստում խնդրի կարգավորմանը: Դա նպատակամղված է Մինսկի կոնֆերանսի արդյունքների կանխորոշմանը, որը մեծապես կասկածի տակ է դնում տարածաշրջանում խաղաղության գործընթացին ԼՂՀ-ի մասնակցությանը:

Սակայն հոկտեմբերի 22-ին և 23-ին Ադրբեջանի ռազմատենչ ուժերը ճեղքեցին ԼՂՀ բանակի պաշտպանական բնագծերը: Ակնհայտ դարձավ, որ Ադրբեջանը հաստատված զինադադարն օգտագործել էր նոր ուժեր կուտակելու և Լեռնային Ղարաբաղի դեմ ավելի արդյունավետ պատերազմ մղելու համար: Հոկտեմբերի 24-ին ԼՂՀ ՊԲ-ն զարգացնելով առաջխաղացումը, գրավեց Արաքսի ափին գտնվող Հորադիզ կայարանի երկաթուղային հանգույցը, որը հանդիսանում էր հարավային ռազմաճակատում հակառակորդի բանակին սնող հիմնական երակը:

[54] *Նույն տեղում, 05.11.1993:*
[55] *Նույն տեղում, 23.10.1993:*
[56] *Նույն տեղում, 04.11.1993:*

Արդյունքում՝ դարաբաղյան զինուժը Զանգելանի շրջանը, Ջեբրայիլի և Կուբաթլուի շրջանների դեռևս չազատագրված տարածքները մեկուսացրեց Ադրբեջանից: Հոկտեմբերի 23-ին Հորադիզի մերձակայքում տեղի ունեցած ծանր մարտերի ժամանակ հայկական կողմը կորցրել էր 9, և վիրավորվել էին 48 զինվոր: Իսկ ադրբեջանական կողմը տվել էր 97 զոհ և կորցրել 7 միավոր զրահատեխնիկա: Հայկական կողմը առգրավել էր նաև 4 «գրադ» կայանք: Ակտիվ մարտեր էին գնում Զանգելանի կրակակետերը ոչնչացնելու համար[57]: Մինչև 1993թ. ձմեռը Ադրբեջանը կորցրեց վերահսկողությունը Հորադիզից մինչև Հայաստանի պետական սահմանը ձգվող տարածքի վրա: Դա արդյունք էր նրա, որ ադրբեջանական կողմը կրկին բաց էր թողել հրադադարը երկարաձգելու հնարավորությունը: Հակառակորդը շարունակում էր նորանոր դավեր նյութել ու ավելի խորացնել հակամարտությունը: Այդ օրերին՝ հոկտեմբերի 18-ին, Ասկերանի շրջանի Սունջինկա տեղամասում դարանակալ թշնամու գնդակից զոհվեց 26-ամյա փոխգնդապետ, ակնառու հրամանատար Նորայր Դանիելյանը, որի մահը մեծ կորուստ էր արցախահայության համար[58]:

Ադրբեջանական կողմը, հաճախակի խախտելով հրադադարը, փորձում էր մեղքը բարդել հայկական կողմի վրա: Նոյեմբերի 29-ին Ադրբեջանի արտգործնախարարությունը, հանդես գալով հայտարարությամբ, աղաղակում էր, թե իբր հայկական կողմը չի կատարում ՄԱԿ-ի թիվ 822, 853 և 874 բանաձևերը, ու գավթել են Ադրբեջանի տարածքի 20 տոկոսը[59]: Անշուշտ, հակառակորդը առիթ էր որոնում ռազմական գործողությունները վերսկսելու համար: Դեկտեմբերին այն վերսկսեցին Ասկերանի

[57] *«Ազգ», 26.10.1993:*
[58] *Նորայր Էդուարդի Դանիելյանը ծնվել է 1967թ. օգոստոսի 1-ին Մարտակերտի շրջանի Գյուլաթաղ գյուղում: Միջնակարգ դպրոցն ավարտել է Ներքին Հոռաթաղում: Սպա ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ընդհանուր տեխնիկական առարկաների և ֆիզիկայի բաժինը: 1990թ. Նորայրը Քաջարանի համայնքի պետն էր: Նույն թվականի հոկտեմբերի 24-ին ծերբակալվել է և մեկուկես տարի պահվել թշնամու բանտերում: 1992-ի ապրիլին ազատվել է ու վերադառնալով Գյուլաթաղ՝ շարունակել է իր ազգասիրական գործունեությունը: Նույն թվականի նոյեմբերին նշանակվել է Մարտակերտի պաշտպանական շրջանի հրամանատար: 1993թ. ընտրվել է ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավոր: Հետմահու արժանացել է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանի:*
[59] *«Հայաստանի Հանրապետություն», 01.12.1993:*

ուղղությամբ, Մարտակերտի շրջանում, հարավարևելյան ուղղությամբ և Հադրութից հարավ[60]: Դեկտեմբերի 16-ին 10-օրյա ժամկետով հրադադար հաստատվեց Ադրբեջանի և ԼՂՀ-ի միջև: Այն կնքվել էր Ռուսաստանի Դաշնության արտգործնախարարության միջնորդությամբ: Սակայն Բաքուն մտացածին պատրվակով խուսափում էր այդ պայմանավորվածության վավերական ձևակերպումից: Դեկտեմբերի 16-ից սկսած՝ ադրբեջանական կազմավորումները տասնյակ միավորների հասնող զրահատեխնիկայի օժանդակությամբ անընդհատ գրոհում էին ԼՂՀ ՊԲ դիրքերը Հադրութ-Մարտունի ուղղությամբ: ԼՂՀ ռազմական հետախուզության տվյալներով՝ աֆղան մոջահեդներից բացի ադրբեջանցիների կողմից կռվում էին նաև Իվանովոյից, Վլադիմիրից, Կալուգայից և Տամբովից վարձկաններ: Միայն այդ օրերին Մարտակերտի ուղղությամբ գործող հակառակորդը կորցրեց 137 ադրբեջանցի զինյալ, իսկ Աղբուռուն կոչված տեղամասի ուղղությամբ՝ 45 զինյալ[61]:

1993թ. դեկտեմբերի 17-ից մինչև 26-ը հարաբերական հրադադար էր: Դեկտեմբերի 28-ին՝ ռազմական գործողությունները վերսկսվելուց հետո, ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը ստիպված էին թողնել Թալիշը և Մատաղիսը, Մարտունու շրջանի Աղբուռուն տեղամասի մեկ դիրք և 13 պահակակետ Փափրավենդ գյուղի մոտակայքում: Վիճակը ծանրացավ Փափրավենդ-Սալախլի-Քենգերլի հատվածում: Դեկտեմբերի 29-ին ԼՂՀ պաշտպանական ուժերը, անցնելով հարձակման և ճնշելով թշնամուն, ընդհուպ դուրս եկան Թարթառի ջրանցքի աջափնյակ[62]: ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը, հանդես գալով հայտարարությամբ, բացահայտեց Ադրբեջանի ռազմական գործողությունների նպատակը՝ նշելով, որ հակառակորդը «մերժում է հակամարտության խաղաղ կարգավորման բոլոր նախաձեռնությունները» և հույսը դնում է միայն հիմնախնդրի ռազմական լուծման վրա: ՀՀ նախագահը կոչ էր անում ելնել իրականությունից, այլ ոչ թե քարոզչական նպատակներից[63]: Հակառակորդը, ստանալով արժանի հակահարված, համաձայնվեց և ցանկություն հայտնեց քննարկել Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու հարցը: Այդ

[60] *Նույն տեղում, 23.12.1993:*
[61] *«Ազգ», 30 և 31.12.1993:*
[62] Հասրաթյան Ս., *Գոյամարտ, էջ 25-26:*
[63] *«Հայաստանի Հանրապետություն», 25.12.1992:*

մտքին էին եկել մի քանի օր առաջ Ալանդական կղզիներում ավարտված բանակցություններից հետո: ԼՂՀ արտգործնախարարությունը, հանդես գալով հայտարարությամբ, նշեց, որ այդ վերջին ութ օրում ադրբեջանական զինված կազմավորումները տասնյակ միավոր զինտեխնիկայի աջակցությամբ անընդհատ գրոհում են հակամարտության ամբողջ գծի երկարությամբ, որն առաջ է բերում զոհեր և վիրավորներ: ԼՂՀ կողմը պահանջում էր հակառակորդից վերջ տալ ռազմական գործողությունների սաստկացմանը[64]: Այնուամենայնիվ, ադրբեջանական կողմը, որպեսզի կարողանա հակահարված հասցնի հայկական կողմին, շարունակում էր զինվել և ձեռք բերել զենքի նոր խմբաքանակ: 1992թ. հուլիս-օգոստոսին նախկին ԽՍՀՄ-ից ստացած զենքից բացի Ադրբեջանը 1993թ. մայիսին լրացուցիչ ստացել էր 105 միավոր զրահամեքենա և 42 միավոր հրետանային կայանք: Այդ ամենից բացի Ադրբեջանի արտգործնախարարությունը 1993թ. սեպտեմբերին հայտարարել էր, թե հանրապետությունը Ուկրաինայից գնել է 50 տանկ: Ասենք նաև, որ հակառակորդը բավականին քանակությամբ զենք և զինամթերք էր ստանում մանավանդ Թուրքիայից:

5. ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ ՀԲԱԴԱԴԱՐԻ ԿՆՔՈՒՄԸ

1993թ. դեկտեմբերի կեսին Արաքսից միջև Օմար, ավելի քան 180 կմ երկարությամբ, հակառակորդի վերսկսած հարձակումները շարունակվում էին: Արցախի պաշտպանական ուժերը դիմադրում էին խիզախությամբ և հասցնում արժանի հակահարվածներ: 1994թ. Ամանորի առթիվ ԼՂՀ ԳԽ նախագահությունը և ՊՊԿ-ն, դիմելով հանրապետության բնակչությանը, նշել են, որ անցած տարում ավելի է ստվարացել որդեկորույս ծնողների, այրիացած կանանց, որբացած մանուկների թվաքանակը: Հակառակորդը, աննախադեպ լայնածավալ ռազմական գործողություններ ծավալելով, վերջին երկու շաբաթում փորձում էր վերադարձնել կորցրածը և, ձերբազատվելու համար պարտվողի ամոթալի խարանից, փրկել իր վարկը: Սակայն թշնամու հարձակ-

[64] *Նույն տեղում, 29.12.1993:*

ման թափը, բախվելով Արցախի պաշտպանական բանակի ամրակուռ վահանին, ջարդուփշուր էր լինում[1]:

1994թ. հենց առաջին օրերին պարզ դարձավ, որ դեկտեմբերին Ադրբեջանի սկսած հարձակումը մատնվում էր ձախողման: Ռազմաճակատի ամբողջ երկայնքով ծանր ու դժվարին մարտեր էին ընթանում: Արցախի ուժերին հաջողվեց գրեթե բոլոր ուղղություններով կասեցնել թշնամու գրոհները: Սակայն վերջինիս հաջողվեց հունվարի 5-ին հարավարևելյան ուղղությամբ ճեղքել ռազմաճակատը և 5 կմ լայնությամբ 15 կմ խորանալ Հադրութի ուղղությամբ: Դրան նպաստել էր Իրանի Իսլամական Հանրապետության տարածքով թշնամու մի խոշոր դիվերսիոն խմբավորման անցումը Արցախի ԻՊ ուժերի թիկունքը: Այդ օրը հակառակորդը տվեց 30 սպանված և 77 վիրավոր: Հայկական կողմից զոհվել են 5, վիրավորվել 3 մարտիկներ: Հունվարի 6-ի գիշերը հայ մարտիկներին հաջողվեց ոչնչացնել մեկ մարտական մեքենա, մեկ S-72 տիպի տանկ, առգրավել զինամթերքով բեռնված երկու ավտոմեքենա: 1994-ի հունվարի սկզբներին հարավային ռազմաճակատ փոխադրվեցին Կենտրոնական պաշտպանական շրջանի զինուժը և 71-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակը, որոնք պետք է համագործակցեին առաջին և երկրորդ պաշտպանական շրջանների ուժերի հետ: Արցախի պաշտպանական ուժերի հրամանատարությունը կարողանում էր ժամանակին ապահովել զորամասերի ռազմաճակատից ռազմաճակատ արագ տեղաշարժելը, ստորաբաժանումների միջև անսխալ փոխհամագործակցությունը, սահմանված ժամկետում տիրապետել օպերատիվ իրավիճակին, ճիշտ և համապատասխան եզրակացության հանգել և այլն:

Հակառակորդի վիճակը համեմատաբար նպաստավոր էր Մարտակերտի շրջանի Մատաղիս-Հակոբ Կամարի հատվածում: Այստեղ մարտերը սկսվել էին հունվարի 2-ին: Հունվարի 6-ին հակառակորդը, 27 զրահատեխնիկայի օժանդակությամբ վերսկսելով գրոհը, նպատակ ուներ զարգացնել առաջխաղացումը Մարտակերտի շրջանի հյուսիսարևելյան հատվածում: Սակայն նա, թողնելով 450-ից ավելի սպանված, ստիպված էր ետ քաշվել: Այստեղ հայկական կողմը տվեց 4 զոհ և 17 վիրավոր[2]: Հունվարի 10-ի առավոտյան ժամը 7-ին նոր հարձակում սկսելով՝ հակառակորդը փորձեց Հակոբ Կամարու ուղղությամբ ռևանշ վերցնել, սակայն կորցրեց 350-ից ավելի զինյալների: Ազերիները Փափրավենդ-Սալախլի-Քենգերլի ուղղությամբ անընդհատ գրոհում էին Ասկերանի պաշտպանական շրջանի ուժերի դիրքերի վրա: Այստեղ ևս թողնելով 160 դիակ՝ ետ շպրտվեցին: Մարտունու պաշտպանական ուժերը Աղբուռունի ուղղությամբ ետ էին վերցրել գրաված պահակակետը, ոչնչացրել թշնամու 3 տանկ և հակառակորդին հետ շպրտել 12 կմ: ԼՂՀ բանակի հարավային խմբավորումը, հունվարի 12-ին անցնելով հակահարձակման, ոչնչացրեցին թշնամու կրակակետերը Կորգան, Աշաղի Աբդուռահմանլու և Յուխարի Սեյիդահմեդլու բնակավայրերում: Հորադիզի ուղղությամբ հայկական ուժերի գործողությունները հաջողություն չունեցան և տվեցին մարդկային կորուստներ: Այդ օրերին հայ մամուլը գրել է. «Արցախում թեժ մարտեր են: Ողնաշարը փշրված օձի նման գալարվելով ֆշշում ու գալիս է թուրք զորքը... Թուրք հրահանգիչներն են մարզում ադրբեջանական զինվորներին, ասկյար են դարձնում: Աֆղան մոջահեդներն են համալրել նրանց շարքերը... Թիկունքում պատժիչ ջոկատները գնդակահարում են նահանջողներին, փախչողներին, դասալիքներին... Հսկայական կորուստներ են տալիս: Բայց գալիս են:

Ադրբեջանական բանակի դեմ ժայռի նման անսասան կանգնած են հայոց քաջերը: Պահ է վճռական ու բախտորոշ: Արցախի բախտն է վճռվում ռազմաճակատում...»[3]:

Անթաղ էին մնում ադրբեջանական բանակի հարյուրավոր դիակներ: Օրինակ՝ Մարտունու և Աղդամի շրջանների սահմանագծում ստեղծվեց ընդհանուր գերեզման, որտեղ թաղվեցին 200 զոհված ազերի զինվորներ: Շուրջ 350 անթաղ դիակներ էին ընկած Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղի շրջակայքում: Այդ վերջին 20 օրերին ոչնչացվել էին շուրջ 800 ազերի ասկյարներ, որոնք հիմնականում 18-19 տարեկան բաքվեցի և սումգայիթցի պատանիներ էին: ԼՂՀ ՊԲ մարտիկները հարկադրված էին զբաղվել ազերի դիակների թաղմամբ[4]: Բացի այդ, Ադրբեջանում, ինչպես ցույց էին տալիս գերիների հարցաքննությունները, 15 տարի ազատազրկման կամ գնդակահարության դատապարտվածները ռազմաճակատ էին քշվում, նրանց հետ նաև հասարակ բանվորները, ծառայողներն ու գյուղացիների որդիները:

---

[1] *«Արցախ», 01.01.1994:*
[2] *Նույն տեղում, 08.01.1994:*
[3] *«Երկիր», 13.01.1994:*
[4] *«Հայաստանի հանրապետություն», 13.01.1994:*

1993թ. հոկտեմբերին ղարաբաղյան ռազմաճակատ նետված 190-րդ բրիգադի երկրորդ գումարտակի անձնակազմի 97 հոգուց դեկտեմբերի վերջին դիրքերում մնացել էին ընդամենը 32 հոգի[5]: Հակառակորդի բանակում բարոյալքումը չէր կարող չթողնել իր բացասական հետևանքը: «Բուտոն գլոբ» թերթի մի հրապարակման համաձայն՝ Աֆղանստանի մի պաշտոնյա խոստովանել է, որ երկրի վարչապետ Հեքմաթյարի ղեկավարած Հեզբի Իսլամի կուսակցությունը զինյալներ էր ուղարկել Ադրբեջան՝ օգնելու վերջինիս Հայաստանի դեմ մղվող պատերազմում: Նաև հաղորդել է, թե Ադրբեջանի ինքնաթիռը Ջալալաբադ է հասցրել սպանված Հեզբ զինյալների դիակները[6]: Մամուլում հրապարակված մի այլ հաղորդումից տեղեկանում ենք, որ արդեն 1994թ. ապրիլին Ադրբեջանում կային 2500-ից ավելի մոջահեդներ: Ադրբեջանը շահագրգռված էր ավելի շատ մոջահեդներ ներգրավել[7]: Բանն այն է, որ Ադրբեջանի իշխանությունները փորձում էին ժխտել մոջահեդների մասնակցությունը պատերազմական գործողություններին: ԼՂՀ ազգային անվտանգության պետկոմի վարչության պետ Կամո Աբրահամյանը ապացուցում էր, որ աֆղան վարձկանների ժամանելուց անմիջապես պահեստից զորակոչվել էին 50 զինծառայող թարգմանիչներ, որոնք 1993թ. օգոստոսի 19-ին ուղարկվել են «Գյորան» վարժական կենտրոնի թիվ 160 զորամասի հրամանատարի տրամադրության տակ: Սակայն նրանցից ներկայացել են 26-ը, իսկ 13-ը ինքնակամ լքել են զորամասը: Մոջահեդները, թվով 522 հոգի, զորամաս են հասել օգոստոսի 15-ին[8]: Գաղտնիք չէր, որ Ադրբեջանը բացի թուրքական զենք գործադրելուց, Ղարաբաղի ազատագրական ուժերի դեմ կռվում էին նաև այդ երկրի «Գորշ գայլեր» ռազմականացված նեոֆաշիստական մոտ 200 գրոհայիններ[9]:

Այդուհանդերձ, հայկական ուժերը ամրապնդվում և նոր ոգի էին առնում: Նրանք պետք է հաղթեին: Հարկավոր էին նոր ուժեր, որպեսզի կարողանային ռազմաճակատի ամբողջ երկայնքով դիմագրավել հակառակորդին: ԼՂՀ ԳԽ նախագահությունը 1994թ. հունվարի 13-ին հրամանագիր ընդունեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեին ԼՂՀ տարածքում մասնակի զորակոչ անցկացնելու լրացուցիչ լիազորություններ տալու մասին», որի համաձայն՝ ՊՊԿ-ն որոշեց հանրապետության տարածքում հայտարարել 45-ից մինչև 50 տարեկան արական սեռի քաղաքացիների զորակոչ: Այն իրագործելու համար ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որը ղեկավարում էր ԼՂՀ ՊԲ հրամանատարի տեղակալ, գեներալ-մայոր Քրիստափոր Իվանյանը[10]: Հավաքագրված զինապարտների համար մարտական դասընթացներ անցկացնելու համար ստեղծվեց հատուկ վարժաուսումնական գունդ: Կարևոր էր նաև հունվարի 11-ին հրապարակված ԼՂՀ ԳԽ նախագահության «Զինվորական հանցագործությունների համար քրեական պատասխանատվության մասին» ԼՂՀ օրենքի կիրառման կարգի պարզեցման մասին հրամանագիրը, ըստ որի՝ պաշտպանության բանակի զինվորական տրիբունալի համակարգում ստեղծվեցին ռազմադաշտային դատարաններ, որոնք իրավունք ստացան պատասխանատվության ենթարկել նրանց, ովքեր դիմում էին դասալքության, ինքնակամ հեռանում զորամասերից, փորձում խուսափել զինվորական ծառայությունից կամ էլ հրաժարվում զենք գործածելուց[11]: Այդ հրամանի ընդունումը և կիրառումը պատերազմի մեջ գտնվող երկրի համար օրինաչափ երևույթ է և համապատասխանում էր ժամանակի պահանջներին:

1994թ. հունվարի 10-ի երեկոյան Մոսկվայից «Ճշմարտության պահ» հաղորդաշարով եթեր հեռարձակվեց լրագրող Անդրեյ Կարաուլովի հարցազրույցը ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: Լեռնային Ղարաբաղի մասին այս հաղորդումը իր տեսակի մեջ «Օստանկինոյից» հինգ տարվա մեջ միակն էր,

---

[5] Հասրաթյան Ս., *նշվ. աշխ., էջ 159-160:*
[6] *«Հայաստանի հանրապետություն», 07.01.1994:*
[7] *Նույն տեղում, 28.04.1994:*
[8] *«Արցախ», 12.01.1994:*
[9] *«Լրագիր», 06.04.1994:*

[10] *Քրիստափոր Իվանի Իվանյանը ծնվել է 1920թ. դեկտեմբերի 20-ին Թիֆլիսում: Ավարտել է տեղի հրետանային ուսումնարանը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1946–1949թթ. սովորել և ավարտել է Մոսկվայի Ս. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան: Ծառայել է նախկին ԽՍՀՄ մի շարք զորամասերում: 1968թ. նշանակվել է 14-րդ բանակի հրետանու պետ և ստացել գեներալ-մայորի կոչում: Արցախյան շարժումը զինվորական ծառայության կոչեց պաշտոնաթող գեներալին: Նա իր ջանքերը գործադրեց ՀՀ բանակի ստեղծման գործում: Ազատագրական մարտերում ցուցաբերած խիզախության համար արժանացել է «Արցախի հերոս» բարձրագույն կոչման և պարգևատրվել «Ոսկե արծիվ» շքանշանով: Մահացել է 1999թ. (Տես Հասրաթյան Ս., Գեներալ Իվանյան, Եր., 2004):*
[11] *«Արցախ», 15.01.1994:*

որում հնարավորություն տվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ներկայացնող կողմին պատմել իսկությունը հակամարտության վերաբերյալ: Թերևս արժե անդրադառնալ այդ հաղորդման ժամանակ առաջադրված մի քանի հարցերի և նրանց տրված պատասխաններին: Նախ՝ Ռոբերտ Քոչարյանը նշեց, որ Ղարաբաղը երբևէ չի եղել Ադրբեջանի տարածք: Ապա նշեց, որ 150-հազարանոց Ղարաբաղը պատերազմում է յոթ-միլիոնանոց Ադրբեջանի դեմ: Հանրապետության բոլոր քայլերը ուղղված են ռազմական դիրքերի բարելավմանը՝ անշուշտ հաշվի առնելով տեղանքի առանձնահատկությունները: Հետո ժխտեց Խոջալուի շուրջը բարձրացված ազերիների աղմուկը, որտեղ տեղադրված հրանոթներից և «գրադ» կայանքից անվերջ ռմբակոծվում էր Ստեփանակերտը: Այն դեպքում, երբ Խոջալուն դրոշ են դարձրել, ինչո՞ւ չեն հիշատակվում Սումգայիթը, Բաքվի ջարդերը, Մարաղան, Գետաշենը: «Ինչո՞վ եք այսօր զինված» հարցին ՊՊԿ-ի նախագահը պատասխանում է. «ժամանակակից զենքով: Մեր բախտը բերեց այնքանով, որ Ղարաբաղի տարածքում տեղաբաշխված էր երեք զորամաս», որոնք պետք է զենքը հանձնեին Ադրբեջանին, բայց բաժին ընկավ Ղարաբաղին, որովհետև դա ղարաբաղցիների բաժինն էր: Ստեփանակերտում տեղակայված էր 366-րդ մոտոհրաձգային գունդը 320 հոգի անձնակազմով, բայց ուներ լրիվ անձնակազմի՝ 1250 հոգու սպառազինություն: Գնդի սպաների 70 տոկոսը հայեր էին: Ստեփանակերտը ամեն օր ռմբակոծվում էր Շուշիից և այլ տեղերից: Կային և զոհեր զինվորներից: Մի՞թե նրանք կարող էին պաշտպանել ադրբեջանցիներին: Հայաստանից 18 տարեկան զինվորներ չեն կռվում Արցախում, բայց կան կամավորներ: Արցախի բանակում վարձկաններ չկան, որովհետև «սա մեր պատերազմն է»: Իսկ վերջում Ռ.Քոչարյանը հաղորդում է հետևյալ հեռագիրը. «Ադրբեջանը, մերժելով կրակը դադարեցնելու ռուսական նախաձեռնությունը, դեկտեմբերի սկզբին սկսել է լայնածավալ հարձակում ռազմաճակատի ողջ գծով: Արդեն մեկ ամսից ավելի շարունակվում են կատաղի մարտերը: Վիճակը շատ բարդ է: Հարավային թևում ադրբեջանական բանակը, չնայած մեծաթիվ կորուստներին, զգալիորեն առաջ է շարժվել: Հարձակման համար օգտագործվում է հարևան երկրի տարածքը: Ադրբեջանի հարձակումը նախապատրաստել են բավականին հիմնավոր: Հայտնվել են մեծ թվով նոր տանկեր և զրահամեքենաներ, զորքը զինված է 1993թ. արտադրության հրազենով, ամերիկյան հակատանկային միջոց-

ներով, ամերիկյան նռնակներով ու ռադիոկայաններով, թուրքական ականանետներով: Անընդմեջ աշխատում է հրետանին: Այս ամենը խոսում է զենքի ու զինամթերքի խոշոր ծավալների, օգնությունների մասին, այն դեպքում, երբ ՄԱԿ-ի ԱԽ-ն արգելել է սպառազինություն մատակարարել տարածաշրջան: Ադրբեջանի բանակում կռվում են աֆղան մոջահեդներ, մասնագետներ Թուրքիայից, բազմաթիվ վարձկաններ Ռուսաստանից և Ուկրաինայից: Սնում է ենթադրել, թե ով է այս ամենի համար վճարում: Մեզ համար շատ դժվար է դիմագրավել հարձակումներին, մենք շատ քիչ ենք բոլորի դեմ կռվելու համար: Կանգուն ենք ժողովրդի արիության ու կամքի շնորհիվ»[12]:

Աշխարհին ուղղված այդ հեռագրում ասված էր գրեթե բոլորը:

* * *

Ռազմաճակատներում ստեղծված կարճատև անդորրը խախտվեց ադրբեջանական զորքերի հուժկու հրետակոծությամբ: Հայկական դիրքերի վրա թափվեցին հարյուրավոր արկեր: Հաճախադեպ էր գործում նաև հակառակորդի օդուժը: Շուրջ 250 ադրբեջանական հետևակայիններ 5 զրահամեքենայի աջակցությամբ հունվարի 13-ին քանիերորդ անգամ գրոհեցին Մատաղիս-Հակոբ Կամարի հատվածում: Հակառակորդը, տալով 76 զոհ, խուճապահար ետ փախավ: Մարտունի-Հադրութ մայրուղին կտրելու նպատակով հակառակորդը հունվարի 14-ին հարձակման անցավ Մարտունի-Ֆիզուլի հատվածում: Սակայն Արցախի ուժերի ճնշման տակ թշնամին ստիպված էր նահանջել նախկին դիրքերից ավելի հեռու: Այսպես. հակառակորդը նոր հարձակում էր ձեռնարկել Օմարից մինչև Արաքս[13]: Սկզբում թշնամու ուժերին հաջողվեց դուրս գալ Քելբաջարը Գյանջայի հետ կապող ճանապարհի խաչմերուկը: ԼՂՀ ՊԲ հրամանատարությունը այնտեղ կենտրոնացրեց 3-րդ, 4-րդ, 5-րդ ու Կենտրոնական պաշտպանական շրջաններից 71 և 54-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակներից ընտրված հարվածային մի քանի ստորաբաժանումներ, որոնք պետք է ցանկացած գնով կասեցնեին թշնամու առաջխաղացումը և ետ շպրտեին նրան: Հունվարի 24-ին Արցախի ԻՊ ուժերին հաջողվեց խաչմերուկի մոտ արգելակել հակառակորդին: Մեկ օր անց հակառակորդը նոր հարձակում ձեռնար-

[12] *Նույն տեղում, 11.01.1994:*
[13] *Նույն տեղում, 15.01.1994:*

կեց Մարտակերտի հեռուստաաշտարակի և Պուշկին յալ բարձունքի ուղղությամբ, սակայն կորցնելով Տ-72 տիպի երեք հրասայլ և 50 զինվոր՝ ետ նահանջեց: Հունվարի 26-ին արևելյան և հարավարևելյան մարտագծի ողջ երկարությամբ անցնելով հարձակման և կորցնելով Տ-72 տիպի 1 հրասայլ, 2 զրահամեքենա և մեկ հրանոթ՝ ստիպված էր նահանջել: Հունվարի 23-ին Ասկերանի շրջանի Սխնաղ գյուղի մոտ հակառակորդը կորցրեց մեկ գրոհիչ ինքնաթիռ[14]:

Ադրբեջանի իշխանությունները, չնայած բազմիցս արված առաջարկություններին, խուսափում էին վիճելի հարցերը լուծել անարյուն, խաղաղ ճանապարհով: Նրանք ամեն կերպ փորձում էին Ղարաբաղի զինված կազմավորումների կողմից այդ վերջին ժամանակներում գրավված տարածքներն ազատագրել մարտական գործողությունների միջոցով: Բաքուն չցանկացավ ընդունել դեռևս դեկտեմբերի 10-ին և 30-ին Ռուսաստանի միջնորդությունը կրակը ժամանակավոր դադարեցնելու վերաբերյալ, որն ավելի բարենպաստ պայմաններ կստեղծեր ռազմական գործողությունների լիակատար դադարեցման մասին համաձայնագիր կնքելու համար՝ ընդգրկելով նաև հայ-ադրբեջանական սահմանում միջադեպերի բացառումը: Ստեփանակերտն ու Երևանը համաձայն էին Մոսկվայի այդ առաջարկություններին, սակայն Ադրբեջանը դեմ գնաց, որի արդյունքում կրեց նոր պարտություններ և տվեց մեծ կորուստներ[15]:

1994թ. հունվարյան այդ օրերին Ռուսաստանի հայ համայնքները բաց դիմում հղեցին Ռուսաստանի Դաշնության նախագահ Բ.Ելցինին, այդ պետության խորհրդարանին և կառավարությանը, որտեղ ասված է, որ Ադրբեջանը նպատակ է դրել ուժով ճնշելու Ղարաբաղի բնակչության ազատագրական շարժումը, ծավալել վարձկանների աննախադեպ հավաքագրում Աֆղանստանից, Թուրքիայից, Ռուսաստանից, Ուկրաինայից և այլ երկրներից: Այդ հանրապետությունը անընդմեջ ստանում է սպառազինություն, ներգրավվում են մասնագետներ: Փորձեր են արվում անհատական վարձկանների հավաքագրման պրակտիկայից անցնել արդեն մի շարք երկրների՝ այդ նպատակի համար ներգրավմանը: Այնուհետև նշվում է, որ Ղարաբաղը եղել է Ռուսաստանի կազմի մեջ, 200 տարի առաջ դարձել է Ռուսաստանի

[14] *Նույն տեղում, 26.01.1994:*
[15] *Նույն տեղում, 15.01.1994:*

առաջին դաշնակիցը: Նա Ռուսաստանին տվել է շատ ականավոր գործիչներ: Նամակի հեղինակները պահանջում էին, որ այդ ազնիվ դաշինքը պետք է այսուհետև էլ պահպանվի, որի համար պետք է շահագրգռված լինի Ռուսաստանը[16]:

Հակառակորդը նախապատրաստվում էր նոր, լայնածավալ հարձակման: Հունվարի 27-ի գիշերը գրոհ ձեռնարկեց Հակոբ Կամարի գյուղի ուղղությամբ: Սակայն հայկական ուժերի հակահարվածից ազերիները ստիպված էին ետ նահանջել ելման դիրքերը: Այդ նույն օրը խոշոր ուժերով գրոհեցին նաև Մարտունու պաշտպանական շրջանի զորքերի դիրքերը, որը հաջողություն չբերեց թշնամուն: Այն կրկնվեց հունվարի 30-ի գիշերը, որը նույնպես կասեցվեց: Հունվարի 25-27-ը հակառակորդը կորցրեց 19 միավոր զրահատեխնիկա, այդ թվում 16 տանկ[17]: 1994-ի հունվարի վերջերին թեժ մարտեր էին տեղի ունենում Օմարի լեռնանցքի վրա: Արցախյան ուժերը, առաջ անցնելով, կտրել էին հակառակորդի ճանապարհը և օղակման մեջ առել թշնամական մի խմբավորում: Փետրվարի 2-ին տեղի ունեցած թեժ մարտերի ընթացքում ղարաբաղյան ուժերին հաջողվեց ոչնչացնել հակառակորդի Տ-72 տիպի 5 տանկ և ավելի քան 50 զինվոր ու սպա:

1994թ. փետրվարի 11-ից սկսվեց Արցախի բանակի հարձակումը Քելբաջարի ռազմական հենակետերի վրա: Ազերի ուժերը երեք օրվա մարտերից հետո, չկարողանալով կազմակերպել կանոնավոր դիմադրություն, լքում են իրենց դիրքերը և դիմում խուճապահար փախուստի: Օմարի բարձունքը և լեռնանցքը անցնում են ԼՂՀ պաշտպանության բանակի հսկողության տակ: Բարձունքի գրավման ժամանակ իր անօրինակ սխրանքով փայլում է ԼՂՀ պաշտպանության բանակի առանձին գումարտակի փոխհրամանատար Պետրոս Ղևոնդյանը[18]: Մարտեր մղելով գլ-

[16] *«Հայաստանի Հանրապետություն», 25.01.1994:*
[17] *«Հայք», N6, 25.1.05.1994:*
[18] *Պետրոս Ղևոնդյանը՝ ԼՂՀ պաշտպանության բանակի մայոր, Շուշիի դաշնակցական առանձին գումարտակի փոխհրամանատար, ծնվել է 1964 թվականի հունվարի 30-ին Աշտարակի շրջանի Տեղեր գյուղում: Սովորում էր Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետի երրորդ կուրսում, երբ անդամագրվեց արցախյան ազատագրական պայքարին: Մասնակցել է բազմաթիվ ճակատամարտերի՝ Շահումյան, Մարտակերտ, Հադրութ և այլն: Զոհվել է 1994թ. փետրվարի 14-ին Օմարում: 1999թ. հետմահու արժանացել է ԼՂՀ «Արցախի հերոս» բարձրագույն կոչման և «Ոսկե արծիվ» շքանշանի («Ազատ Արցախ», 13.02.1999: Գևորգյան Հ., Պետոն, Բեյրութ, 1996):*

խավոր ուղղություններից մեկում՝ գումարտակը Պետրոսի հրամանատարությամբ շրջանցում է թշնամուն և Մարտակերտի, Ստեփանակերտի ջոկատների ու Ասկերանի Արշոյի գումարտակի հետ կազմակերպված համատեղ գործողության շնորհիվ աքցանի մեջ առնում թշնամու զորախմբերին: Եվ, այսպես, Արցախի հյուսիսային այդ խոշորագույն դարպասը գրավված էր: Փետրվարի 14-ին, դիրքերում ամրացված զինվորների մատակարարման խնդիրները լուծելու, ինչպես նաև անընդհատ տեղացող ձյան հետևանքով փակված ճանապարհների բացման համար համապատասխան տեխնիկա է բերվում, իսկ Պետրոսը դիրքավորվում է գլխավոր մայրուղում: Ճանապարհին վիրավոր զինվորին փրկելու ժամանակ Պետրոսը զոհվում է հակառակորդի ականի պայթյունից[19]:

1994թ. փետրվարի կեսերին հակառակորդը, նոր ուժեր կենտրոնացնելով Մարտունու պաշտպանական շրջանի Նովրուզլու և Յուսիփջանլու բնակավայրերի ուղղությամբ, փետրվարի 16-ին և 17-ին անցավ հարձակման Աշաղի-Ավդուռահմալի բնակավայրի ու Աղբուռուն տեղամասում և, տալով մեծ կորուստներ, նահանջեց: Փետրվարի 18-ի գիշերը հայկական ուժերը թշնամուց մաքրեցին Քելբաջարի շրջանի հյուսիսային մասը, և Օմար լեռնանցքի վրայով ամբողջ վերահսկողությունն անցավ Արցախի պաշտպանության բանակի ձեռքը[20]: Փետրվարի վերջին թշնամին հարձակման անցավ Աշաղի Մեյիդահմեդլու բնակավայրից մինչև Հորադիզ ճակատային գիծը: Մարտի 11-ին հակառակորդի ռազմական ուժերը նոր գրոհ ձեռնարկեցին Աղդամից հարավ: Այդ բոլոր գրոհներն էլ ետ մղվեցին: Ղարաբաղյան ուժերը, հակահարձակման անցնելով Գյուլիստանի և Թալիշի ուղղությամբ, զբաղեցրին ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք բարձունքներ: Ապրիլի երկրորդ կեսին գրեթե բոլոր ուղղություններով հակառակորդի վրա ճնշում էին գործադրում ղարաբաղյան ուժերը: Նրանց հաջողվեց հսկողության տակ վերցնել Աղդամ-Բարդա մայրուղին: Ահա այդպիսին էր ընդհանուր վիճակը ռազմաճակատներում հրադադարին նախորդած օրերին: Ադրբեջանը չէր ցանկանում ընդունել իր պարտությունը և հաշվի չէր նստում տված զգալի կորուստների հետ: Միայն 1993թ. դեկտեմբերի 18-ից մինչև 1994թ. փետրվարի սկիզբը՝ 1,5 ամսվա ընթացքում, համաձայն ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբի պետ Սեյրան Օհանյանի վկայակոչած տվյալների, ադրբեջանական կողմը կորցրել էր մոտ 5 հազար զինվոր ու սպա, մեկ ռազմական ինքնաթիռ, 62 միավոր զրահատեխնիկա, այդ թվում 36 տանկ, 12 հրանոթ և հրետանային կայանք, որոնցից երեքը՝ «գրադ» տիպի, մեծ թվով այլ սպառազինություններ: Հիշյալ ժամանակահատվածում ինքնական գերի էին հանձնվել 26 ազերի զինյալներ, որոնց մեջ կային նաև այլ պետությունների քաղաքացիներ: Նույն ժամանակամիջոցում ղարաբաղյան կողմից զոհվել են մոտ 300 մարտիկ, զրահատեխնիկայի կորուստը կազմել է 24 միավոր[21]: Փոքր անց՝ «Օբշչայա գազետա»-ն գրել է, որ միայն 1994թ. հունվար ամսին ղարաբաղյան ճակատում զոհվել են 5300 ազերի զինվոր և սպա: Այլ աղբյուրների հիման վրա դեկտեմբերի 18-ից հետո ադրբեջանական բանակը տվել էր 8000 սպանված և ավելի քան 25 հազար վիրավոր: Միայն Օմարի լեռնանցքում, հենց ազերիների տվյալներով, փետրվարի սկզբին զոհվել են 1500 զինծառայող, կորցրել 100 միավոր զրահատեխնիկա և երկու ինքնաթիռ[22]: Ակնհայտ է, որ այդ կորուստները չէին լինի, եթե Ադրբեջանի ղեկավարությունը սթափ մտածեր և հույսը չդներ ռազմական գործողությունների վրա ու չփորձեր իր զավթողական և բարբարոս քաղաքականությունը իրագործել ռազմական ճանապարհով: Մերժելով խաղաղ բանակցությունների միջոցով վիճելի հարցերը լուծելու առաջարկությունները՝ ադրբեջանական կողմն անընդհատ «ցուցաբերում» էր նոր նախաձեռնություն, որի արդյունքում կորցնում էր տարածքներ: Ռուսաստանի Դաշնության նախագահի հատուկ ներկայացուցիչ Վլադիմիր Կազիմիրովը 1994թ. հունվարի 27-ին «Նեզավիսիմայա գազետա» թերթին տված հարցազրույցում նշել է, որ «Ղարաբաղյան հակամարտությունը միանգամից լուծելու փորձերը դատապարտված են անհաջողության»: Ելնելով այդ համոզումից՝ ՌԴ միջնորդական առաքելությունը շեշտը դրել էր հենց հակամարտության մասնակիցների հետ հաճախակարգված բանակցությունների վրա: Հակամարտության լուծման գործում Ռուսաստանի միջնորդական ջանքերը շարունակվում էին հաստատակամությամբ և ամենատարբեր ձևերով: Օրինակ՝ հունվարի 18-20-ը Ա.Կազիմիրովը Մոսկվայում բանակցություններ է վարել Ադրբե-

[19] *«Ազատ Արցախ», 13.02.1999: Գևորգյան Հ., Պետոն, Բեյրութ, 1996:*
[20] *«Արցախ», 13 և 19.02.1994:*
[21] *«Հայաստանի Հանրապետություն», 08.02.1994:*
[22] *Նույն տեղում, 16.03.1994:*

ջանի և Հայաստանի արտաքին գործերի նախարարներ Հ.Հասանովի և Վ.Փափազյանի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ա.Ղուկասյանի հետ: Ռուսաստանը կողմնակից էր անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները, ազատագրել գրավված տարածքները, վերացնել տնտեսական ու տրանսպորտային շրջափակումը, բռնագաղթվածներին հնարավորություն ընձեռել վերադառնալու իրենց բնակավայրերը և անցնել վիճելի հարցերի քաղաքական լուծմանը՝ ներառյալ Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի փոխընդունելի սահմանումն ու ճշգրտումը:

Այդ հանդիպման ժամանակ Ադրբեջանը հերթական անգամ ձախողեց Լեռնային Ղարաբաղում ժամանակավոր և համընդհանուր հրադադար հաստատելու Ռուսաստանի նորացված նախաձեռնությունը: Բացի այդ, Բաքուն մերժեց նաև ԵԱՀԿ-ի խաղաղարար ջանքերը: Պարզապես Ադրբեջանի ղեկավարությունը փնտրում էր ղարաբաղյան հարցի բացառապես ռազմական լուծում: Այն, որ Ադրբեջանի իշխանությունները ագրեսիվ և անզիջում դիրք էին գրավել ղարաբաղյան հակամարտության մեջ՝ ձգտելով վերջնականապես ապավինել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի ուժային մեթոդներով լուծմանը, դա է ապացուցում այս ամբողջ պայքարի պատմությունը: Ազերիները այնքան գազազած էին, որ նույնիսկ ադրբեջանական բանտերում պահվող հայերի նկատմամբ իրագործում էին ամենաանմարդկային արարքներ: ԼՂՀ արտաքին գործերի նախարարը իր բողոքում միջազգային հանրության ուշադրությունը հրավիրում էր այդ փաստի վրա և կոչ անում ջանքեր գործադրել ռազմագերիների նկատմամբ Բաքվի իշխանությունների կողմից իրագործվող հալածանքները կասեցնելու համար[23]:

ՌԴ ռազմական նախարար Պավել Գրաչովի նախաձեռնությամբ փետրվարի 18-ին տեղի ունեցավ նոր եռակողմ հանդիպում, որին ներկա էին նաև ՀՀ և ԱՀ պաշտպանության նախարարներ Սերժ Սարգսյանը, Մամեդռաֆի Մամեդովը, ԼՂՀ ներկայացուցիչ Բակո Սահակյանը: Պ.Գրաչովը հայտարարեց, որ եթե այս անգամ էլ կողմերը համաձայնության չեկան, ինքն այլևս հանդես չի գա որպես միջնորդ: Նա նշեց, որ Ռուսաստանի անաչառ միջնորդությունը բխում է Հայաստանի, Ադրբեջանի, նաև Ռուսաստանի ազգային շահերից և ընթանում է Ղարաբաղի հիմ-

[23] *Նույն տեղում, 15.02.1994:*

նախնդրի վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրով զբաղվող եվրախորհրդակցության Մինսկի խմբի բանաձևերի շրջանակներում: Նա վճռորոշ ասաց. «Հակամարտությունը ուժային եղանակներով կարգավորելու ուղիներ չկան»: Այդ հանդիպման նպատակն էր մարտական գործողությունները փուլ առ փուլ դադարեցնելու և հարցի քաղաքական կարգավորման վերաբերյալ պայմաններ ստեղծելու առաջարկությունների քննարկումը: Հանդիպման արդյունքում ստորագրվեց Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ արձանագրություն, որով նախատեսվում էին հրադադարի հաստատում և ռազմական գործողությունների լրիվ դադարեցում ու կողմերի զորքերի հետ քաշում համաձայնեցված սահմաններ: Պ.Գրաչովը կոչ էր անում խստորեն պահպանել ձեռք բերված համաձայնությունները և դրա հիման վրա անհապաղ անցնել լիամասշտաբ քաղաքական համաձայնագրի կնքման: Արձանագրության մեջ կողմերն արտահայտել են իրենց կամքը՝ վերջ դնել արյունահեղությանը, աջակցել այն բանաձևերի կատարմանը, որոնք այդ առթիվ ընդունել էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, և նպաստել Լեռնային Ղարաբաղին նվիրված ԵԱՀԿ-ի հաշտության խորհրդաժողովի շրջանակներում հակամարտության համապարփակ կարգավորմանը[24]:

1994թ. գարնանային այդ օրերին համեմատաբար ակտիվ էր գործում դեռևս փետրվարի 18-ին մոսկովյան հանդիպման ժամանակ Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի զինվորական ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծված Ռուսաստանի զինվորական գերատեսչության հանձնաժողովը, որը գլխավորում էր Ռուսաստանի պաշտպանության փոխնախարար, գեներալ-գնդապետ Գեորգի Կոնդրատևը: Այս վերջինը նկավ Բաքու, ապա՝ Երևան: Նրա նպատակն էր կազմակերպել փոխգործողություն և ստանալ մոսկովյան հանդիպման արդյունքների հիման վրա ստորագրված արձանագրության դրույթները կենսագործելու կողմերի վերջնական համաձայնությունը: Այդ փաստաթղթով նախատեսված էր լիակատար հրադադար, զորքերի հետքաշում պայմանավորված դիրքեր, փոխադարձ անվտանգության գոտիների ստեղծում: Նաև նախատեսված էր անվտանգության գոտում խառը կազմի պահակակետերի տեղադրում և միացյալ շտաբի ստեղծում Ռուսաստանի, Հայաս-

[24] *Նույն տեղում, 24.02.1994:*

տանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներից: Շտաբի կազմում պետք է ընդգրկվեին շուրջ 250 մարդ:

Համաձայն այդ արձանագրության՝ ռազմական գործողությունները դադարեցվեցին 1994թ. մարտի 1-ի 00 ժամից: Սակայն լարվածությունը դեռևս պահպանվում էր ղարաբաղյան հակամարտության գոտու հարավարևելյան հատվածում: Ադրբեջանական ուժերը շարունակում էին անընդհատ գրոհել ղարաբաղյան ուժերի դիրքերը Ֆիզուլու ուղղությամբ: ՌԴ ՊՆ միջնորդությամբ ձեռք բերված մարտի 1-ից հրադադարի մասին համաձայնագրի ծախողումը կատարվել էր Ադրբեջանի կողմից և անհնարին դարձրել միջնորդական ջանքերը: Մարտի 2-ին Մոսկվայում տեղի ունեցած ՌԴ միջնորդությամբ կայացած բանակցություններին Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները չմասնակցեցին, որովհետև նախորդ պայմանավորվածությունը Ադրբեջանի մեղքով խախտվել էր ու արդյունք չէր տվել, հետևապես գնալն իմաստ չուներ[25]: Այդ առթիվ անհանգստացել էին նույնիսկ ՄԱԿ-ում: Մարտի 9-ի երեկոյան Անվտանգության խորհուրդը դռնփակ խորհրդակցությունում քննարկեց Լեռնային Ղարաբաղի հարցը, որտեղ Բուտրոս Ղալին հայտնեց իր անհանգստությունը Լեռնային Ղարաբաղում հակամարտության շարունակման և լարված իրադրության պահպանման առնչությամբ[26]: Իրոք, ղարաբաղյան հակամարտության գոտում իրավիճակը նախկինի պես մնում էր լարված, մարտական գործողությունները շարունակվում էին հարավարևելյան հատվածում: Մարտեր էին գնում Ալխանլու բնակավայրի մոտակա իշխող բարձունքների համար[27]:

Մոսկվայում շարունակվում էին բանակցությունները ՌԴ,ՀՀ, ԱՀ և ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցությամբ: Այն ղեկավարում էր ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ, արտգործնախարարության հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Վլադիմիր Կազիմիրովը: Այդ բանակցություններին առաջին անգամ մասնակցում էին նաև ԵԱՀԿ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գծով Մինսկի խմբի նախագահի տեղակալ, Շվեդիայի դեսպան Մաթիաս Մոսբերգը և ԵԱՀԿ-ի դիտորդական առաքելության ղեկավար գեներալ Ավանտե Բերգը: Բանակցությունների ընթացքում կողմերին ներկայացվել էր ռուսաստանյան

[25] *Նույն տեղում, 10.03.1994:*
[26] *Նույն տեղում, 11.03.1994:*
[27] *Նույն տեղում, 25.03.1994:*

միջնորդի մշտական համաձայնագրի նախագիծը, ինչպես նաև Ադրբեջանից Հայաստան և ԼՂՀ տրանսպորտային, էներգետիկ և հաղորդակցության այլ միջոցների բնականոն գործունեության վերականգնում: Որոշվեց նախագծի լրամշակված տարբերակն ուղարկել Ադրբեջանի, Հայաստանի և ԼՂՀ բարձրագույն իշխանություններին:

Ղարաբաղյան հիմնախնդրի լուծումը անհանգստացնում էր նաև ԱՊՀ մյուս երկրներին: Մարտի 31-ին Անդրկովկաս մեկնեց ԱՊՀ միջխորհրդարանական ասամբլեայի պատվիրակությունը՝ կազմված Ռուսաստանի, Ղրղզստանի և Բելառուսի ներկայացուցիչներից: Պատվիրակությունը գլխավորում էր Ղրղզստանի ԳԽ նախագահ Մեդետկան Շերիմկուլովը: Պատվիրակության խնդիրն էր լինել Բաքվում, Երևանում և Ստեփանակերտում, հանդիպել ղեկավարության և աշխատավորների հետ: Ռուսաստանի և ԱՊՀ երկրների միջնորդությամբ ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման շրջանակներում ԼՂՀ Շուշիի շրջանի Եղծահող գյուղում ապրիլի 2-ին տեղի ունեցավ հանդիպում ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի խաղաղարար առաքելության վերոհիշյալ պատվիրակների և ԼՂՀ ղեկավարների միջև, որտեղ քննարկվեցին հակամարտության խաղաղ կարգավորման ու ռազմական գործողությունների դադարեցման մեխանիզմի ստեղծմանն առնչվող խնդիրների իրականացման ուղիները: Չանցած մի քանի օր՝ ապրիլի կեսերին, Մոսկվայում տեղի ունեցած ԱՊՀ երկրների գագաթնաժողովի օրերին Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևը, հանդիպում ունենալով ԵԱՀԿ-ի ներկայացուցիչների հետ, հայտարարեց, թե Ադրբեջանը կողմնակից է ղարաբաղյան հակամարտության կարգավորման ԵԱՀԿ-ի միջնորդությանը: Դա նշանակում էր շիկացնել Ղարաբաղի շուրջ առանց այն էլ բորբոքված քաղաքական կրքերը: Ասենք, որ միջխորհրդարանական վեհաժողովի առաքելությունը Անդրկովկաս և հանդիպումը կողմերի հետ նպատակ է ունեցել նրանց համաձայնեցնել «Զինված համաձայնությունը դադարեցնելու և դրա հետևանքների վերացման անցնելու համաձայնագրի» նախագծի հետ, ըստ որի՝ առաջնահերթ խնդիր էին արյունահեղության անհապաղ դադարեցումը և զորքերի հետ քաշումը: Նաև նախատեսվում էր հրադադարից հետո տասնօրյա ժամկետում քննարկել կողմերի առաջարկությունները ռազմական գործողությունները չվերսկսելու միջազգային երաշխիքների ամրապնդման վերաբերյալ, և որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը կսահմանվի հետագայում փոխզիջ-

ման հիման վրա: Չնայած կողմերը համաձայն էին փոխզիջումային ուղիով դուրս գալ ստեղծված վիճակից, սակայն կային բարդություններ: Ադրբեջանը դեմ էր Լեռնային Ղարաբաղի մասնակցությանը համաձայնագրին, իսկ Հայաստանը՝ կողմ, Լեռնային Ղարաբաղը հաստատ երաշխիքներ էր պահանջում: 1994թ. ապրիլի 5-ին Ստեփանակերտ ժամանելով ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի Ֆրանսիայի դեսպան Էլեն Դյուբուան հանդիպումներ ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանի, ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանի ու արտաքին գործերի նախարար Արկադի Ղուկասյանի հետ, և քննարկելով ղարաբաղյան հիմնախնդրի հետ կապված որոշ հարցեր՝ նշվել է, որ հակամարտության կարգավորման գործընթացը բարդացնող խնդիրներից է երկու զուգահեռ միջնորդական ջանքերի առկայությունը, որը հակամարտության կողմերին խուսանավելու հնարավորություն է տալիս: Իսկ դա պահանջում է միավորել Ռուսաստանի և ԵԱՀԿ-ի ջանքերը[28]:

Չնայած բանակցությունները շարունակվում էին, սակայն Ադրբեջանի օդուժը ապրիլի 10-ին ներխուժեց ԼՂՀ տարածք և ռմբակոծեց Ստեփանակերտը: Թշնամու հիմնական թիրախը հանդիսանում էին մարդաշատ վայրերը՝ քաղաքային շուկա, ուսումնական հաստատություններ, գործարաններ և այլն, մի բան, որը դեռևս 1992 թվականից սկսած խիստ քննադատության էր ենթարկվում: Ադրբեջանն իր այդ վայրագ գործողություններով ցույց տվեց, որ միտում չունի հրաժարվել ԼՂՀ ժողովրդի դեմ պետական ահաբեկչությունից, որի նպատակն էր քաղաքացիական բնակչության բնաջնջումը, իսկ դա նշանակում է կոպիտ ձևով ոտնահարել միջազգային իրավունքը, հատկապես ժենևյան կոնվենցիաները: ՀՀ Գերագույն խորհուրդը կոչ էր անում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, ԵԱՀԿ-ին, ԱՊՀ-ի միջխորհրդարանական վեհաժողովին, Եվրախորհրդարանին՝ խստագույնս դատապարտել քաղաքացիական բնակչության դեմ ռազմական գործողությունները, միջազգային իրավունքով նախատեսված գործնական և շուտափույթ միջոցներ ձեռնարկել՝ թույլ չտալ բնակավայրերի հետագա ռմբակոծումները և կանխարգելել Ադրբեջանի Հանրապետության անընդունելի գործելակերպը[29]: Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ

[28] *Նույն տեղում, 06.04.1994:*
[29] *Նույն տեղում, 12.04.1994:*

Ռուսաստանի արտգործնախարարության կողմից նախապատրաստվող բարձր մակարդակի բանակցությունների և ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի նախատեսված ապրիլին Պրահայում կազմակերպվող հանդիպման նախօրյակին Ադրբեջանի վերոհիշյալ գործողությունները խստորեն դատապարտվեցին ԼՂՀ իշխանությունների կողմից, և պահանջվեց դադարեցնել այդ վայրագությունները: Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովը, Մոսկվայում հանդիպելով Ադրբեջանի ԳԽ նախագահ Ռ. Գուլիևի հետ, նրանից պահանջեց ապրիլի 28-ի գիշերը հակամարտության գոտում դադարեցնել կրակը, եթե համանման որոշում ընդունի նաև Հայաստանը: Այդ հանդիպման ժամանակ առաջարկվել է նաև ստեղծել փոխադարձ անվտանգության գոտի: Ադրբեջանական կողմը նույնիսկ առաջարկել է կողմերի շփման գիծ մտցնել Ռուսաստանի զորքեր և տարանջատումն իրականացնել փուլ առ փուլ: Հակամարտության կարգավորման Ռուսաստանի պլանի համաձայն՝ հայկական կազմավորումները պետք է ազատեին նախկինում գրաված Ադրբեջանի բոլոր տարածքները և վերադառնալ Լեռնային Ղարաբաղի սահմանները[30]:

ԼՂՀ արտաքին գործերի նախարար Արկադի Ղուկասյանի և ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատար Սամվել Բաբայանի ստորագրությամբ՝ ապրիլի 28-ին Մոսկվա ուղարկված ղարաբաղյան կողմի պատասխանում ԼՂՀ ղեկավարությունն իր համաձայնությունն էր հայտնում 1994թ. ապրիլի 29-ի ժամը 00.01-ից ապահովել լիակատար հրադադարը և ռազմական գործողությունների դադարեցումը՝ կատարելով նույն թվականի փետրվարի 18-ի քառակողմ արձանագրության կետերը: ԼՂՀ ղեկավարությունը գտնում էր, որ հիշյալ արձանագրությամբ նախատեսված ռազմատեխնիկական միջոցառումների ողջ համալիրի իրականացումը միայն կարող է երաշխավորել ռազմական գործողությունների կայուն դադարեցումը և բարենպաստ պայմաններ ստեղծել քաղաքական խնդիրների լուծման համար ու պատրաստ է համապատասխան հրամաններ տալ, հենց որ միջնորդ Ռուսաստանը հաստատի հակամարտող կողմից նույնպիսի փաստաթղթի ստացումը[31]:

Ադրբեջանին ոչինչ չէր մնում անել, քան ընդունել ՌԴ առաջարկությունը և հայտարարել 1994թ. ապրիլի 28-ի 0:0 ժամից

[30] *Նույն տեղում, 28.04.1994:*
[31] *Նույն տեղում, 29.04.1994:*

ղարաբաղյան ռազմաճակատում կրակը դադարեցնելու իր պատրաստակամության մասին:

Այո՛, թշնամին ծնկի էր եկել: Սակայն ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի նոր նախագահ Յան Էլիասոնից մինչև Ռուսաստան, մինչև Հայաստանի ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյան, փորձում էին վերադարձնել արցախյան ուժերի բազում զոհերի գնով գրավյալ տարածքները, միայն թե «խաղաղություն և ապաշրջափակում» լինի: Պարոն Բ.Արարքցյանի ռոմանտիկան ավարտվում էր, երբ դուրս էր գալիս բանակցությունների սենյակից: Հետո սանձը հանձնվում էր Աշոտ Բլեյանին և նրան առաջ մղում: Պարոն Բլեյանը 1994-ի ապրիլի 30-ին «Հայաստանի Հանրապետություն» թերթում հանդես գալով, առաջարկում էր, որ Հայաստանը ճանաչի Ադրբեջանի սահմանների անձեռնմխելիությունը, իսկ Լեռնային Ղարաբաղը ճանաչել որպես Ադրբեջանի անքակտելի մաս: Հետաքրքիրն այն է, որ Բաքվում նախօրոք գիտեին Բլեյանի այդ ճամարտակության տպագրության օրը, և Բաքվի ռադիոյով ու հեռուստատեսությամբ հատուկ հաղորդում տրվեց նրա այդ հոդվածին նվիրված[32]:

1994թ. գարնանը ՀՀ ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանը մրմնջում էր. «Հայաստանը ներկայումս տարածքային ոչ մի հավակնություն չունի Ադրբեջանի նկատմամբ: Լեռնային Ղարաբաղը որպես հանրապետություն մենք չենք ընդունում և ապագայում էլ չենք ընդունի: Եթե Լեռնային Ղարաբաղի ռազմական կազմավորումների հրամանատարությունը չհամաձայնվի այս համաձայնագրի պայմաններին, ապա Հայաստանն իր կողմից կստիպի ընդունել այդ պայմանները»[33]:

Ադրբեջանի նախագահ Հ.Ալիևը, ապրիլի 12-ին հանրապետության հեռուստատեսությամբ ելույթ ունենալով և դիմելով արցախահայությանը, նշել էր. «Դուք՝ Ղարաբաղում հիմնավորված հայերդ, արդեն 150 տարի է, ինչ ապրում եք այստեղ... Այդ 150 տարիների ընթացքում դուք ադրբեջանցիների հետ համատեղ ապրել եք խաղաղության և բարեկամության պայմաններում»: Ապա հարցնում է, թե ինչու դիմեցին այս տեսակ արյունահեղությանը: Նախ՝ արցախահայերն իրենց բնօրրանում ապրում են ոչ թե 150 տարի, այլ մի քանի հազար տարի, բացի այդ, ստացվում է, որ արցախցիներն են պատերազմը սկսել: Հետո էլ թե՝ «մենք ապագայում ևս կպաշտպանենք ձեզ՝ որպես Ադրբեջանի քաղաքացիների, որպես մեր համաերկրացիների: Կպաշտպանենք ձեր իրավունքները և ձեզ համար կստեղծենք խաղաղ կյանքի բոլոր պայմանները»[34]: Եվ դա ասում էր այն Ալիևը, ինչպես նշվել է, որը դեռևս 1991թ. Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանում պարծենում էր, թե երբ ինքը Ադրբեջանի կոմկուսի առաջին քարտուղար էր, իր ջանքերով Լեռնային Ղարաբաղում հայերի թիվը նվազել է 10 տոկոսով, իսկ ադրբեջանցիների թիվը ավելացել էր մի քանի անգամ[35]:

ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի 1994թ. փետրվարի 8-ի որոշման համաձայն՝ Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի խորհրդարանների նախագահների հանդիպումը պետք է տեղի ունենար Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում, որտեղ պետք է քննարկվեին հակամարտության խաղաղ կարգավորման հեռանկարներին վերաբերող հարցեր: Համաձայն այդ որոշման՝ մայիսի 4-ին Բիշքեկում սկսվեց ԱՊՀ միջխորհրդարանային համաժողովը: Հայաստանի պատվիրակությունը ղեկավարում էր ՀՀ նախագահ Բաբկեն Արարքցյանը, Ադրբեջանի պատվիրակությունը՝ Միլի մեջլիսի նախագահ Ռասուլ Գուլիևը, ԼՂՀ-ն՝ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը: Հանձնաժողովը ընթանում էր Ղրղզստանի ԳԽ նախագահ Մեդետկան Շերիմկուլովի նախագահությամբ: Խորհրդակցությանը մասնակցեցին ՌԴ խորհրդի նախագահ Վլադիմիր Շումեյկոն և Ալանդյան կղզիների (Ֆինլանդիա) պատվիրակությունը՝ Ալանդյան նահանգի խորհրդարանի նախագահ Յանսոն Ռուգերի գլխավորությամբ: Համաժողովի ժամանակ Բաբկեն Արարքցյանը մնում էր իր հին երգին՝ «Գրաված տարածքները՝ խաղաղության և շրջափակումների վերացման դիմաց»: ՌԴ խորհրդարանի ղեկավար Վլադիմիր Շումեյկոյի առաջարկությունը ավելի գործնական էր և տվյալ պահին ընդունելի: «Ադրբեջանի ղեկավարությունը վերջապես պետք է ճանաչի բարդույթի երկրորդ կողմին՝ Լեռնային Ղարաբաղի ղեկավարությանը: Բանն այն է, որ առանց

---

[32] **Арутюнян В. Б.**, *նշվ. աշխ., էջ 340:*

[33] *«Երկիր», 17.03.1994: Այստեղ խոսքը վերաբերում է 1994 թ. մարտի 12-ին Իջևան-Ղազախ սահմանագլխին Ադրբեջանի և Հայաստանի ԳԽ-ի նախագահներ Գուլիևի և Արարքցյանի միջև տեղի ունեցած հանդիպման ժամանակ պայմանավորվածությանը:*

[34] Ուլուբաբյան Բ., *նշվ. աշխ., էջ 786:*

[35] *«Հայաստանի Հանրապետություն», 02.02.1994:*

Լեռնային Ղարաբաղի ղեկավարությանը կոնֆլիկտի կողմ ճանաչելու անհնար է այլևս վերացնել հակամարտությունը»[36]:

1994թ. մայիսի 5-ին ստորագրվեց «Բիշքեկի արձանագրությունը», որի տակ կա նաև ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանի ստորագրությունը: Ադրբեջանի պատվիրակությունը այն ստորագրեց մայիսի 8-ին: Չնայած դրան՝ այնուամենայնիվ Ադրբեջանի կողմից շարունակվում էին հրետակոծվել Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերի դիրքերը: Մայիսի 16-ին ՌԴ պաշտպանության նախարար Պավել Գրաչովը Մոսկվա հրավիրեց Ադրբեջանի և Հայաստանի պաշտպանության նախարարներին ու ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի գլխավոր հրամանատարին (Մամեդրաֆֆի Մամեդով, Սերժ Սարգսյան և Սամվել Բաբայան) և նրանց առաջարկեց մի պայմանագիր, որով հաստատվում էր հրադադար մայիսի 17-ի 0:0 ժամից, ըստ որում՝ երկու կողմերի զորքերը ռազմաճակատի ամբողջ երկայնքով ետ պիտի քաշվեին 5-10 կմ, որպեսզի հակամարտողների միջև երկարությամբ էլ տեղադրվեին, այսպես կոչված, խաղաղարար ուժերը, որոնք պետք է լինեին ռուսական զորքերը: Իմիջիայլոց, ԼՂՀ գլխավոր հրամանատարը մինչ այդ կատարել էր Բիշքեկի որոշումը և հրամայել էր միակողմանի դադարեցնել կրակը ռազմաճակատի իր կողմի ամբողջ երկարությամբ մայիսի 9-ի ժամը 0:0-ից:

Բիշքեկյան արձանագրությունը պարունակում է կոնկրետ առաջարկություններ՝ ուղղված հակամարտող բոլոր կողմերին զինված հակամարտության դադարեցման, տարածաշրջանում դիտորդների տեղաբաշխման հարցերի շուրջ, ինչպես նաև ԱՊՀ շրջանակներում խաղաղարար զինված ուժերի ստեղծման հարցը ԱՊՀ մասնակից պետությունների խորհրդարաններում քննարկելու առաջարկությունները: Վլադիմիր Շումեյկոն, իր եզրափակիչ ճառում անդրադառնալով բիշքեկյան հանդիպումների արդյունքներին, որ ղարաբաղյան զինված հակամարտության խաղաղ կարգավորման հարցում առկա են երեք սկզբունքային մոտեցումներ, նախ՝ կրակի դադարեցում, երկրորդ՝ արձանագրել, որ գոյություն ունեն հակամարտության երեք կողմեր՝ Ադրբեջան, Հայաստան և Լեռնային Ղարաբաղ, և որ Ադրբեջանը պետք է ճանաչի Լեռնային Ղարաբաղին որպես բանակցությունների լիիրավ կողմ, երրորդ՝ հարգելով միջազգային բոլոր կազ-

[36] *«Հայք», 10.03.1994:*

մակերպությունների դերը խաղաղության հաստատման գործընթացում՝ ամենից առաջ պետք է փորձեն հակամարտությունը կարգավորել ԱՊՀ խաղաղարար զինված ուժերը: Առանց այդ պայմանների հնարավոր չէ լուծել հիմնախնդիրը[37]:

Ադրբեջանի պաշտպանության նախարարը մայիսի 16-ին Մոսկվայում հայտարարեց, թե ինքը լիազորված չէ ստորագրել պայմանագիրը, և վերադարձավ Բաքու: Պարզվում է, որ Բաքվում ժողովրդական ճակատը և 13 այլ կուսակցություններ ժողովրդին ոտքի էին հանել և պահանջում էին «ռուսամետ» Ալիևի հրաժարականը: Չնայած դրան՝ այդուհանդերձ, 1994թ. մայիսի 17-ից առ այսօր ռազմաճակատում տիրում է հրադադար: Իսկ դա բիշքեկյան բանակցությունների փայլուն հետևանքն է: Մայիսի 19-ի գիշերը ՌԴ և ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի նախագահի օժանդակությամբ հակամարտության գոտում կրակի և ռազմական գործողությունների լիակատար դադարեցման մասին նոր պայմանավորվածություն ձեռք բերվեց, որը փոխադարձ պարտավորվածություն էր ներկայացնում կողմերից յուրաքանչյուրին:

Հետո Բաքվում տեղի ունեցած մամուլի ասուլիսում Վ.Կազիմիրովը ասաց, որ, ըստ պլանի, Ռուսաստանի նախագիծը բաղկացած է եղել երեք հիմնական փուլից՝ հրադադար, բոլոր գրաված տարածքների ազատում, բացի Շուշիից և Լաչինից, և բանակցությունների փուլ, որի ընթացքում պետք է քննարկվեր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը: Նախատեսված էր այդ ամենը կատարել 34 օրում:

ԵԱՀԿ-ի և Ռուսաստանի Դաշնության ներկայացուցիչները (Յան Էլիասոն և Վլադիմիր Կազիմիրով) մայիսի 16-ին իրենց գոհունակությունը հայտնեցին պահպանվող զինադադարի կապակցությամբ: Ասվեց, որ այն արդյունք է մայիսի 12-ին Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի պաշտպանական ուժերի հրամանատարների միջև ձեռք բերված համաձայնության, որը ԵԱՀԿ-ի և ՌԴ միջնորդական ջանքերի հետևանք է[38]:

Այսպիսով՝ հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման հարցի շուրջ Ադրբեջանի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բանակցությունները, որոնք Մոսկվայում սկսվել էին մայիսի 16-ին, ընդհատվեցին: Արձանագրությունը չստորագրեց

[37] *«Հայաստանի Հանրապետություն», 07.05.1994: Տե՛ս նաև նույն տեղում, 16.05.1994:*

[38] *Նույն տեղում, 17.03.1994:*

Ադրբեջանի զինվորական պատվիրակության ղեկավարը: Փոխադարձ պայմանավորվածության համաձայն՝ մայիսի 24-ին շփման կետ պետք է մտցվեին ԱՊՀ՝ առավելապես ռուսական զինված ուժերը՝ թվով 1800 մարդ: Դրանից հետո պետք է կատարվեր հակամարտող ուժերի տարանջատումը[39]: Պայմանավորվածության այդ վերջին կետը այդպես էլ մնաց օդում կախված:

[39] *«Հայք», 17.05.1994:*

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՐՑԱԽՅԱՆ ԲԱՐԴՈՒՅԹԸ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՐՁԱՆՈՒՏՆԵՐՈՒՄ

1. ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԲՌՆԱԳԱՂԹԵՑՈՒՄԸ

Ակնհայտ է, որ ադրբեջանահայությունը կարևոր դեր է խաղացել Բաքվի, Գանձակի, Մինգեչաուրի և Ադրբեջանի այլ քաղաքների ու բնակավայրերի սոցիալ-տնտեսական շինարարության և մշակութային կյանքի զարգացման գործում: Հայերի ստեղծարարությունը և հասարակական, տնտեսական ու մշակութային կյանքում ունեցած տեղը խիստ անհանգստացնում էին ազերիներին: Ադրբեջանից հայերին դուրս մղելու և նրանց ունեցվածքը հափշտակելու ճաղտնածածուկ քաղաքականությունը վաղուց էր դարձել Ադրբեջանի պետական գործելակերպ: Ակնհայտ է, որ դեռևս 1918-1920 թթ. ոչնչացվել և մասամբ էլ բռնագաղթեցվել էին Արեշի և Նուխիի մոտ 60 հազար հայեր: Թուրքազերիները հայերի ջարդեր կազմակերպեցին նաև Բաքվում, Նախիջևանում, Գանձակում, Ղարաբաղում և այլ տեղեր:

Ադրբեջանահայության բռնագաղթեցման ազերիների ծրագրային քաղաքականությունը ավելի էր արմատավորվել խորհրդային իշխանության տարիներին: Նախապատերազմյան և հետպատերազմյան տարիներին հազարավոր հայ ընտանիքներ հարկադրված էին Ադրբեջանից հեռանալ Հայաստան, Վրաստան, Ռուսաստան, Միջին Ասիա և այլ տեղեր: Ադրբեջանից հայերի բռնագաղթեցման և արտաքսման պետական քաղաքականությունը նոր ծավալներ ընդունեց հատկապես Ղարաբաղյան շարժման տարիներին: Բերենք այսպիսի մի օրինակ. եթե 1979 թ. մարդահամարի տվյալներով Ադրբեջանի 18 գյուղական շրջաններում ապրում էին 64675 հայեր, ապա 1992թ. աշնանն այդ շրջաններում ոչ մի հայ չկար[1]:

Ղարաբաղյան շարժման սկզբից Ադրբեջանի պետական քարոզչությունը բացահայտ ռազմարշավ էր սկսել հանրապետությունում ապրող հայության դեմ: Դա բացահայտորեն կատարվում էր Ադրբեջանի կոմունիստական վարչակարգի ղեկավարությամբ: Ադրբեջանի իշխանությունների այդ քաղաքականության

[1] Օհանջանյան Փ., *նշվ. աշխ., էջ 21:*

առաջին զոհերը դարձան Հյուսիսային Արցախի հայկական բնակավայրերը: Ադրբեջանից հայերի բռնագաղթեցման և նրանց նկատմամբ զանգվածային ջարդեր կազմակերպելու բնորոշ օրինակը Սումգայիթն է, որտեղ մի քանի օրվա ընթացքում այնտեղ ապրող հայերը, ենթարկվելով ամենաստորացուցիչ բռնարարքների, ստիպված էին թողնել իրենց օջախները և ցրվել աշխարհով մեկ:

Ադրբեջանի իշխանությունները վաղուց էին փորձում Շուշին լրիվ «մաքրել» հայերից: Եվ ազերիների բռնությունների հետևանքով, ինչպես նշվել է, 1988թ. մայիսին և սեպտեմբերին այնտեղի հայերը լրիվ արտաքսվեցին:

1988թ. նոյեմբերի վերջերից սկսած՝ Ադրբեջանում կազմակերպեցին հայերի զանգվածային ջարդեր Խանլարում, Մինգեչաուրում, Նուխիում, Աղդամում, Եվլախում և այլուր: Վիճակը շատ ծանր էր մանավանդ Կիրովաբադում, որտեղ այդ ժամանակ բնակվում էր շուրջ 45000 հայ: Այստեղ հայերի վրա առաջին հարձակումը տեղի էր ունեցել 1988թ. փետրվարին, երբ հայկական թաղամաս ներխուժեցին շուրջ 1000 ազերիներ[2]: Ազերիները հայերի դեմ գործողությունները վերսկսեցին նոյեմբերին: Հայերը պաշտպանվելու համար հավաքվել էին հայկական եկեղեցում: Հենց այդ օրերին՝ նոյեմբերի 22-ին, հայկական թաղամասում տարերայնորեն հանդես եկան ինքնապաշտպանական խմբեր, և ստեղծվեց հայերի պաշտպանության կոմիտե: Այդ նույն օրը ազերի գազազած ամբոխը կրկին ներխուժեց հայկական թաղամաս: Տեղի հայ երիտասարդության աջակցությամբ կազմակերպվեց հայկական թաղամասի հերոսական պաշտպանությունը: Հայերը զրկված էին ջրից, դեղորայքից և բժշկական օգնությունից: Քաղաքում թալանվել և հրկիզվել էր 1028 հայի բնակարան[3]: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 23-ին, Գանձակ մտան խորհրդային բանակի զորամասերը և կարգ հաստատեցին: Հետագայում Գանձակի Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր-Սահակ քահանա Սահակյանը վերհիշել է, որ 1988թ. նոյեմբերի 21-ին 15-ից մինչև 25 տարեկան թուրքեր, զինված քարերով, փայտերով, դանակներով, կացիններով, երկաթե ձողերով, աղմուկ-աղաղակներով շարժվել են դեպի եկեղեցի, որտեղ

[2] **Мелик-Шахназарян Л.**, *Гандзак. Нейтраченный мир (Воспоминания очевидца), Степанакерт, 1996, с. 12.*

[3] *«Մեղադրվում են», Եր., 1989, էջ 33, 39 և 42:*

պատսպարվել էին բազմաթիվ հայեր: Հայոց թաղամասի վրա հարձակվել էին շուրջ հինգ հազար թուրքեր: Նրանք, որոնց առաջնորդում էին Հայաստանից տեղափոխված ազերիները, ավերում ու թալանում էին հայերի տները: Տեր-Սահակ քահանայի խնդրանքով հայերին օգնության են հասնում խորհրդային զինվորականները և հայկական թաղամասից դուրս քշում գազանացած ազերիներին: Թուրք-ազերիները սարսափելի դաժանություններ էին գործում ոչ միայն հայկական թաղամասում բնակվող հայերի նկատմամբ: Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, հայերից բացի, ապաստան էին գտել նաև բազմաթիվ ռուս, ուկրաինացի, վրացի կանայք, որոնց ամուսինները հայեր էին: Թուրքերի կատարած գազանությունների մասին Տեր-Սահակ քահանան զարհուրելի օրինակներ է բերում: Այդ օրերին ստեղծված «Գանձակ-Կիրովաբադի հայության պաշտպանության կոմիտեն» Տեր-Սահակի հետ ամեն ինչ անում էր քաղաքի հայությանը փրկելու համար[4]:

Ամբողջ Ադրբեջանում հնչում էին հայերին ջարդելու, նրանց ոչնչացնելու և հանրապետությունից դուրս քշելու կոչեր: Քարոզչական բոլոր միջոցները նպաստում էին իրադարձությունների հակահայ քաղաքականության իրագործմանը:

Իրավիճակը խիստ բարդացել էր նաև Հայաստանում, որտեղ ապրում էին մոտ 160000 ազերիներ: 1987թ. վերջից և 1988-ի սկզբից սկսած՝ Ադրբեջանի քարոզչության հետևանքով հարյուրավոր ազերիներ, վաճառելով կամ փոխանակելով իրենց բնակարանները և տանելով ամբողջ գույքը, իրենց ընտանիքներով հեռանում էին Կապանի, Արտաշատի, Արարատի և այլ շրջաններից ու տեղափոխվում Սումգայիթ, Նախիջևան, Շուշի կամ Բաքու: Նրանք իրենց ներկայացնում էին որպես դարաբաղյան հակամարտության առաջին զոհեր: Կապանից հեռացածները, հայտնվելով Սումգայիթում, այնտեղ տեղի ունեցած միտինգներում սարսափազդու պատմություններ էին հորինում իբրև իրենց նկատմամբ «հայերի կողմից իրագործված վայրագությունների մասին»[5]: Այդ «փախստական» կոչեցյալները հազար ու մի կեղծ լուրեր էին տարածում և իրենց ազգակիցներին գրգռում հայերի դեմ: Դրան խիստ աջակցում էր ադրբեջանական

[4] *«Գարդմանի կանչ», N7, 2003: Գանձակ քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու զանգերը վերջին անգամ դողանջեցին, և սուրբ պատարագ մատուցվեց 1989 թ. մարտի 26-ին:*

[5] *«Հայրենյաց պաշտպան», N27-28, 2003:*

քարոզչական մեքենան: Իսկ դրա հիմնական նպատակն է աշխարհին ցույց տալ, որ Հայաստանում ադրբեջանցիների նկատմամբ բռնությունները իբր եղել են մինչև սումգայիթյան ջարդերը, և որ Սումգայիթը դրանց պատասխանն է եղել: Բաքվի քարոզչական մեքենան մինչև հիմա կանգ չի առնում և շարունակում է տարածել ստահոդ այդ կեղծիքը: Հայտնի է, որ Բաքվի իշխանությունները դեռևս խորհրդային տարիներին ոչ միայն Արցախում, այլև Հայաստանում ունեցել են թուրք ազգաբնակչության հետ աշխատող և նման գործողություններ կազմակերպելու ունակ կառույցներ[6]:

1988թ. ամառվանից սկսած՝ զանգվածային էր դարձել բնակարանների փոխանակումը: Օր օրի մեծանում էին Հայաստանից հեռացող ազերիների և Ադրբեջանից եկող հայ փախստականների թիվը:

Ադրբեջանահայության նկատմամբ Ադրբեջանի պետական ահաբեկչության քաղաքականությունը չէր հանդիպում կենտրոնական իշխանությունների դիմադրությանը: Ադրբեջանի իշխանությունները, իրականությունը շրջելով, աշխարհով մեկ աղաղակում էին, թե իբր Ադրբեջանից հայերը հեռանում են իրենց ցանկությամբ, իսկ Հայաստանից ադրբեջանցիները բռնագաղթվում են ջարդված ու թալանված: Ա.Վեզիրովը Ս.Հարությունյանին 1988թ. օգոստոսի 24-ին ուղարկած նամակում բողոքում է Հայաստանում ապրող «ադրբեջանցիների ծանր վիճակի» համար: Նա հայտնում է, որ 1988թ. օգոստոսի 25-ի դրությամբ Հայաստանից Ադրբեջան է տեղափոխվել 2956 ադրբեջանցի ընտանիք՝ 13286 մարդ, հիմնականում Արարատի, Մասիսի, Ազիզբեկովի, Եղեգնաձորի և այլ շրջաններից: Ըստ Ա.Վեզիրովի՝ նրանք վախից թողել էին իրենց տները և հեռացել Հայաստանից[7]: Ադրբեջանի ներքին գործերի նախարարության տվյալներով՝ 1988թ. փետրվարի 20-ից մինչև հունիսի 28-ը Հայաստանի 8 շրջաններից հեռացել էր 3635 ադրբեջանցի ընտանիք՝ 16291 մարդ, մինչդեռ նույն ժամանակաշրջանում, ըստ Հայաստանի անձնագրային ծառայությունների տվյալների, հեռացել էր ընդամենը 1249 ադրբեջանցի ընտանիք՝ 4920 մարդ[8]: Ինչպես երևում է բերված տվյալներից, Ադրբեջանի իշխանությունները, հավատարիմ մնա-

[6] *Նույն տեղում:*
[7] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 127, գ. 564, թ. 82:*
[8] *Նույն տեղում, գ. 87, գ. 20, թ. 63:*

լով իրենց կեղծելու սկզբունքներին, այս անգամ ևս չէին խորշում խաբելուց: Հետաքրքիր է նաև այն, որ Ա.Վեզիրովը իր վերոհիշյալ նամակում ոչ մի խոսք չէր ասում այդ ժամանակ արդեն Ադրբեջանի ամբողջ տարածքում հայերի դեմ սկսված զանգվածային բռնարարքների մասին, որի հետևանքով իրենց տներն ու ունեցվածքը թողած՝ Ադրբեջանից մի կերպ փախչում էին հազարավոր հայ ընտանիքներ:

Ադրբեջանից հայերի բռնագաղթեցումը դժվարին վիճակ էր ստեղծել նաև Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի իշխանությունների համար: Բռնագաղթված տասնյակ հազարավոր մարդկանց համար պետք էր շատ թե քիչ տանելի պայմաններ ստեղծել և հոգալ նրանց բազմաթիվ կարիքները: Իսկ այդ ամենի համար Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի իշխանությունները պատրաստ չէին: 1988թ. հունիսի 16-ին տեղի ունեցած մարզխորհրդի գործկոմի նիստը, քննարկելով Սումգայիթի բռնագաղթված ընտանիքներին բնակարաններով ապահովելու հարցը, քաղաքային և շրջանային խորհուրդների գործկոմներին իրավունք վերապահեց անհատական բնակարաններ կառուցելու համար հատկացնել հողամասեր, բնակարաններ ստանալու համար ոմանց անհերթ հերթագրել և անհատական բնակարաններ կառուցողներին հատկացնել ֆինանսական միջոցներ: Ստեղծվեց հանձնաժողով՝ զբաղվելու Արցախ եկածներին տեղավորելու և աշխատանքով ապահովելու հարցերով[9]: Նույն թվականի հուլիսի 4-ին տեղի ունեցած մարգխորհրդի գործկոմի նիստը, քննարկելով Շուշիում ինքնագլուխ, անօրեն բազմահարկ բնակելի շենքեր կառուցելու փաստը՝ իբրև Հայաստանից եկած «փախստականներին» բնակարաններով ապահովելու համար, նշեց, որ այստեղ կառուցվում են հինգհարկանի բնակելի շինություններ մանավանդ Ղազանչեցոց եկեղեցու շուրջը, որը կատարվում է ինքնագլուխ և անօրեն: Քաղաքում խախտվել է գլխավոր պլանը, ոչնչացվում են գերեզմանոցները: Մարգխորհուրդը որոշում է անհապաղ կանգնեցնել այդ շինարարությունները և պատասխանատվության ենթարկել մեղավորներին: Արձանագրվեց նաև, որ քաղաքում անօրեն գրանցում են Հայաստանից և Ադրբեջանի այլ շրջաններից եկածներին: Այդ հոսքը չի դադարում, նույնիսկ վերջերս բավականին ավելացել է: Նրանց մարզ գալը «կազմակերպված խմբերով, նախօրոք նշված ուղերթով վերջին օրերին բավա-

[9] *ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, գ. 2, գ. 281, թ. 19-20:*

կանին ավելացել է, և ներկայումս նրանք կազմում են 1660 հոգի»: Նրանց մի մասին տեղավորում են Մարտունիում, Ասկերանի և Շուշիի շրջանների գյուղերում: Այդ երևույթը կրում է «կազմակերպված բնույթ, որը հեռու գնացող նպատակ է հետապնդում»:

Խիստ քննադատելով ներքին գործերի մարզային վարչությանը, որը չէր պայքարում այդ անօրինությունների դեմ՝ մարզխորհուրդը պահանջում էր կարգ ու կանոն հաստատել և բոլոր նրանց, ովքեր անօրեն ճանապարհով մարզի տարածք են եկել, դուրս բերել այդտեղից[10]:

Անօրեն ճանապարհով ազերիները կուտակվում էին մանավանդ Ասկերան-Ստեփանակերտ խճուղու վրա գտնվող Խոջալու գյուղում: 1988թ. նոյեմբերի 1-ին տեղի ունեցած մարզխորհրդի գործկոմը, քննարկելով Խոջալու և Մալիբեկլու գյուղերում Ադրբեջանի իշխանությունների կողմից տարվող անօրեն շինարարությունների հարցը, նշում է, որ սեպտեմբերի 18-ից հետո վիճակն ավելի է սրվել Խոջալու գյուղում: Այդտեղ, սկսած հոկտեմբերի 25-ից, լայն թափով կառուցվում են արդյունաբերական ձեռնարկություններ, որը չի նախատեսված մարզային պլանով: Շինհրապարակներում կուտակվել են մեծ թվով մարդիկ, շինանյութեր, մեքենաներ, որոնք հապշտապ այդտեղ են բերվել հանրապետության այլ վայրերից: Կոպտորեն խախտվել է հողային օրենսդրությունը՝ առանց համաձայնեցվելու մարզային և շրջանային իշխանությունների հետ: Ադրբեջանի իշխանությունները իրենց այդ քայլով մարզում, փաստորեն, ստեղծել են անկայուն վիճակ և վրդովմունք առաջ բերել մարզի բնակչության մեջ: Ադրբեջանը բացահայտորեն փորձում է խախտել մարզի դեմոգրաֆիկ կառուցվածքը և արհեստականորեն ավելացնել ազերիների թիվը: Մարզխորհուրդը որոշում է այդ անօրենությունների մասին հայտնել ԽՍՀՄ Գերագույն դատախազությանը և նրանից պահանջել վերջ տալ Ադրբեջանի այդ մեքենայություններին[11]:

Ադրբեջանից հայերի բռնագաղթը համընդհանուր բնույթ ստացավ 1988թ. նոյեմբերին: Բաքվում տեղի ունեցող հանրահավաքներում հնչում էին հայերին բնաջնջելու և հանրապետությունից դուրս քշելու կոչեր, որոնք հաճախ ուղեկցվում էին կոպիտ վիրավորանքներով ու արտահայտություններով: Մինչդեռ, հակառակ դրան, 1988–1990թթ. Հայաստանում տեղի ունեցած հան-

[10] Նույն տեղում, գ. 282, թ. 19-21:
[11] *Նույն տեղում, գ. 282, թ. 7-8:*

րահավաքների և ցույցերի ժամանակ, ինչպես ակնարկվել է, կոչեր էին հնչում զգույշ լինել ադրբեջանցիների նկատմամբ՝ շեշտելով, որ նրանք մեղք չունեն, և որ հանցագործները Ադրբեջանի իշխանություններն ու ազգայնամոլ ուժերն են: Եվ եթե այդ ժամանակաշրջանում Հայաստանում ադրբեջանցիների և հայերի միջև որևէ միջադեպ է եղել, ապա դրա մեծ մեղքը պատկանել է ամենից առաջ ադրբեջանական լրատվամիջոցներին և իշխանություններին, որոնց ազգայնամոլ կոչերին հետևում էին հայաստանաբնակ ադրբեջանցիները: Ինչեր ասես, որ չէին հորինում Ադրբեջանի լրատվամիջոցները և իրենց հայրենակիցներին կոչ անում շտապ հեռանալ Հայաստանից: Ադրբեջանցիները Հայաստանից սկսեցին զանգվածային հեռանալ 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո: 1988թ. շրջխորհուրդների տվյալներով՝ այդ ժամանակ Հայաստանում ապրում էր 155044 ազերի (շուրջ 33000 ընտանիք): Երկրաշարժին հաջորդած 18 ամսում Հայաստանից հեռացել էին բոլոր ադրբեջանցիները: Եթե Ադրբեջանը չփոխհատուցեց այնտեղից բռնագաղթված և իրենց ունեցվածքը թողած հայերին, ապա Հայաստանը լիովին փոխհատուցեց ադրբեջանցիներին: Ադրբեջանի խնայդրամարկղներում հայերին պատկանող բավականին մեծ գումարներ էին մնացել, ինչպես նաև մեծ թվով բնակարաններ, այգիներ, հողատարածքներ և այլն: Այդ բոլորը ազերիները հափշտակել են և յուրացրել: Մասնագետների հաշվումներով՝ 1988թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանից գնացած ադրբեջանցիներին, ովքեր չէին կատարել բնակարանների փոխանակում, փոխհատուցվել է 76 մլն ռուբլի, որից 72,5 մլն սռացել են լեռնային գյուղերից հեռացած և իրենց տները չվաճառած ադրբեջանցիները[12]:

1979թ. մարդահամարի տվյալներով՝ Ադրբեջանում բնակվում էին 475,5 հազար հայեր, որոնցից ավելի քան 300 000-ը 1988-1990թթ. բռնագաղթվել են[13]: Գրիգոր Ավագյանի հաշվումներով՝ այդ բռնագաղթվածներից 218 000-ը հանգրվանել են Հա-

[12] *«Իրավունք», 12-18.04.2002:*
[13] Մելիք-Շահնազարյան Լ., *Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի հանրապետության խաղաղ բնակչության դեմ, էջ 30 և 32:*

յաստանում, 31 000-ը՝ Լեռնային Ղարաբաղում[14], մնացածը՝ Ռուսաստանի Դաշնությունում կամ այլ տեղեր: Ադրբեջանցիները Հայաստանում թողել են 29819 հազար տուն և բնակարան, որոնցից 22428-ը օրինական կարգով վաճառվել կամ փոխանակվել էին, 2309 տուն փլվել էր երկրաշարժից, իսկ 3852-ը բնակության համար պիտանի չէին: Ադրբեջանից բռնագաղթված հայերը թողել են 92 հազարից ավելի տուն և բնակարան: Մեկ այլ տվյալով՝ վերոհիշյալ ժամանակաշրջանում Ադրբեջանից դուրս է եկել 83 հազար հայ ընտանիք[15]: Հայաստանից գնացած մեկ թուրք-ազերի ընտանիքին Ադրբեջանում ընկնում էր հայերի թողած ավելի քան երեք բնակարան:

Ադրբեջանի պետական քարոզչությունը կանգ չէր առնում ոչ մի կեղծիքի առաջ, մանավանդ բռնագաղթեցման և թողած սեփականության փոխհատուցման հարցում: Գրիգոր Ավագյանը 1990թ. մարտի 6-ին Հայկոմկուսի Կենտկոմի քարտուղար Գալուստ Գալոյանին և "Коммунист" թերթին գրած նամակում ներկայացնում էր Ադրբեջանի գրողներ Վահաբզադեին, Անարին և ուրիշների, որոնք աշխարհով մեկ աղաղակում էին, թե իբր ադրբեջանցիները Հայաստանում թողել են ավելի շատ թվով բնակարաններ և 6,5 հազար քառակուսի կիլոմետր տարածք, որը զգալիորեն շատ է, քան Լեռնային Ղարաբաղի տարածքը: Մինչդեռ իրականում Հայաստանից գնացած ադրբեջանցիները զբաղեցնում էին ընդամենը 1,2 հազար քառ. կմ տարածք: Ադրբեջանում պետական մասշտաբի կեղծիքը հասել էր նրան, որ նույնիսկ հայտարարում էին, թե իբր Հայաստանից հեռացել են 500 հազար ադրբեջանցիներ[16]:

Ադրբեջանից հայերի բռնագաղթն ուղեկցվում էր ջարդերով և սպանություններով: Միայն 1988թ. սեպտեմբեր-դեկտեմբերին, ոչ լրիվ տվյալներով, բռնագաղթի ժամանակ զոհվել են 270 հայազգի խաղաղ բնակիչներ, իսկ մի քանի հազարն էլ ստացել են մարմնական վնասվածքներ[17]:

---

[14] *Այլ տվյալներով՝ Լեռնային Ղարաբաղ էր եկել 20-21 հազար փախստական, որոնցից 15-16 հազարը մնացել են Ստեփանակերտում, 1000-ը տեղափոխվել են մարզի գյուղերը, մնացածը մեկնել են այլ վայրեր («Խորհրդային Ղարաբաղ», 15.01.1991):*

[15] **Авакян Г.**, *Нагорный Карабах. Ответ фальсификаторов, Ер., 1991, с 100. «Հայրենյաց պաշտպան», N27-28, 2003:*

[16] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 127, գ. 814, թ. 54:*

[17] **Մելիք-Շահնազարյան Լ.**, *նշվ. աշխ., էջ 29:*

Հայաստանի կոմկուսը և իշխանությունները քայլեր էին ձեռնարկում հանրապետության տարածքում կանխելու ազգամիջյան ընդհարումները և ապահովելու ազերիների ու մյուս ազգությունների խաղաղ կյանքը: Այդ են հաստատում արխիվային բազմաթիվ վավերագրեր և նյութեր: Հայկոմկուսի Կենտկոմի բյուրոն, 1988թ. նոյեմբերի 29-ին քննարկելով «Իրավիճակը հանրապետությունում և այն նորմալացնելու մասին» հարցը, արձանագրեց, որ հանրապետությունում վիճակը խիստ բարդացել է, մանավանդ խառը բնակչություն ունեցող շրջաններում (Գուգարք, Կալինինո, Գորիս, Վարդենիս և այլն) թե ադրբեջանցիների և թե հայերի կողմից զենք չէր օգտագործվել, և զոհեր չեն եղել: Նաև նշվեց, որ նոյեմբերի 29-ի դրությամբ Ադրբեջանից Հայաստան է բռնագաղթվել 19800 հայ: Դժվար էր նրանց կենսապայմաններն ապահովել, մանավանդ որ միայն Երևանում չէին աշխատում 161 արդյունաբերական ձեռնարկություններ, իսկ 123-ն էլ աշխատում էին կիսով չափ: Օրինապահ մարմիններից պահանջվեց արդյունավետ միջոցներ ձեռնարկել «բնակչության անվտանգությունն ապահովելու համար և թույլ չտալ անթույլատրելի երևույթներ և ազգային հողի վրա որևէ միջադեպ»[18]: Հայկոմկուսի Կենտկոմի բյուրոն, դեկտեմբերի 4-ին կրկին անդրադառնալով հանրապետությունում ստեղծված ընդհանուր իրավիճակին, որոշում ընդունեց «Հանրապետությունում ազգամիջյան ընդհարումներն անհետաձգելիորեն կանխելու վերաբերյալ», և առաջարկվում է առանց ուշացնելու վիճակը կարգավորել Գուգարքի շրջանում ու կանխել այնտեղից ադրբեջանցիների արտագաղթը[19]:

Երկրաշարժից հետո Հայաստանից ադրբեջանցիների արտագաղթը զանգվածային բնույթ ընդունելու կապակցությամբ Հայկոմկուսի Կենտկոմի բյուրոն, դեկտեմբերի 22-ին քննարկելով «Հայկական ԽՍՀ-ից ադրբեջանցի բնակիչների զանգվածային մեկնումը և ազգամիջյան հարաբերությունների կայունացման հարցը», ի գիտություն ընդունեց, որ արդեն հանրապետությունից հեռացել էին 135 հազար ադրբեջանցիներ կամ հանրապետությունում ապրող բոլոր ադրբեջանցիների 78,6 տոկոսը: Հանրապետության գլխավոր դատախազին հանձնարարվեց գործ հարուցել նրանց նկատմամբ, ովքեր տոն էին տալիս ազգամիջյան

---

[18] *ՀԱԱ, ֆ. 1, գ. 82, գ. 30, թ. 7-8:*

[19] *Նույն տեղում, թ. 13-17:*

հարաբերությունների սրմանը[20]: Հայկոմկուսի Կենտկոմի բյուրոն, 1989թ. հունվարի 3-ին անդրադառնալով ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1988թ. դեկտեմբերի 5-ի «Ադրբեջանական ՍՍՀ-ում և Հայկական ՍՍՀ-ում քաղաքացիների սահմանադրական իրավունքների կոպիտ խախտումների մասին» որոշման իրագործմանը և վերլուծելով հանրապետությունում տեղ գտած որոշ սխալներն ու բացթողումները, որոշեց ձեռնարկել համապատասխան միջոցներ: Առաջարկվեց կոնկրետ քայլեր ձեռնարկել հանրապետության բոլոր քաղաքացիների ունեցվածքն ու սեփականությունը պաշտպանելու համար[21]:

1989թ. հունվարի 14-ին Հայկոմկուսի բյուրոն, դարձյալ անդրադառնալով հանրապետությունում կուսակցական, պետական և տնտեսական մարմինների կողմից ազգամիջյան հարաբերությունների հարցում թույլ տված սխալներին, ի գիտություն ընդունեց, որ արդեն Հայաստանից հեռացել էին 145 հազար ադրբեջանցիներ, որոնցից 94 հազարը՝ նոյեմբերի 24-ից հետո: Այդ ընթացքում ազգամիջյան հողի վրա տեղի ունեցած ընդհարումների առթիվ հարուցվել էր 154 քրեական գործ[22]: Ազգամիջյան ընդհարումներն իբրև չկանխելու համար հանրապետությունում ԽՄԿԿ շարքերից հեռացվել էին 13 ղեկավար աշխատողներ, զբաղեցրած պաշտոններից ազատվել 24-ը, 68-ը ստացել կուսակցական տույժ[23]: Հայաստանի ՆԳ նախարար Հուսիկ Հարությունյանի կողմից փետրվարի 14-ին Հայկոմկուս ուղարկված տեղեկանքում նշված է, որ անկայուն դիրքորոշման, ծառայողական պատասխանատվությունները չկատարելու և ազգամիջյան հարցերի հետ կապված՝ պաշտոնից հեռացվել է 24 աշխատակից, 67 հոգի կրել են կարգապահական տույժ, որոնցից ինը՝ պետ և յոթ տեղակալ[24]: Եվ այդ ամենից հետո Հայկոմկուսի բյուրոն անբավարար է համարել ՆԳՆ գործունեությունը հանրապետությունում հասարակական կարգը պահպանելու և ազգամիջյան հողի վրա հանցագործությունները չկանխելու համար[25]:

[20] *Նույն տեղում, թ. 65-68:*
[21] *Նույն տեղում, գ. 83, գ. 50, թ. 5-9:*
[22] *Նույն տեղում, թ. 42:*
[23] *Նույն տեղում, թ. 43, 44-48:*
[24] *Նույն տեղում, գ. 87, գ. 38, թ. 44:*
[25] *Նույն տեղում, թ. 44-45:*

1989թ. հունիսի 21-ին Հայկոմկուսի Կենտկոմի բյուրոն, քննարկելով ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նույն թվականի ապրիլի 15-ի որոշումը՝ «Ադրբեջանական և հայկական ազգության քաղաքացիների մշտական բնակավայրեր վերադառնալու մասին», ընդունեց որոշում, որտեղ նշվեց, որ Ադրբեջանի և Հայաստանի միջև ազգամիջյան հարաբերությունները կարգավորելու համար այդ որոշումը պետք է ընդունվի որպես գործողության ծրագիր: Նույնիսկ առանց խոր վերլուծության առաջարկվեց ստեղծել միջհանրապետական հանձնաժողով, որը Ադրբեջանի և Հայաստանի միջև ազգամիջյան հարաբերությունները կարգավորելու նպատակով պետք է ընդուներ գործողության ծրագիր և զբաղվեր բռնագաղթվածներին իրենց մշտական բնակավայրերը վերադարձնելու գործով[26]:

Ադրբեջանում շարունակում էին թմբկահարել և բռնագաղթեցման մեջ մեղադրել հայերին՝ երևույթները ներկայացնելով ծուռ հայելու մեջ: ԽՍՀՄ ԳԽ նստաշրջանում Զորի Բալայանը, 1989թ. հոկտեմբերի 3-ին պատասխանելով Ադրկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Վեզիրովին, նշեց, որ Հայաստանից հեռացել են 150 հազար ադրբեջանցիներ, այլ ոչ թե 160 հազար, որոնց վճարվել է 70 մլն ռուբլի: Նաև շեշտեց, որ դրանց մեծամասնությունը Հայաստանից հեռացել են երկրաշարժից հետո: Իսկ Ադրբեջանից փախստական հայերին ոչ մի կոպեկ էլ փոխհատուցում չի վճարվել: Այսօր Հայաստանում անօթևան է մնացել մեկ միլիոն մարդ: Ինչու չի հիշվում, որ 50 հազար հայ բռնագաղթվել է Կիրովաբադից, 70 հազարը՝ Խանլարի և Դաշքեսանի շրջաններից: Այսօր Ադրբեջանում մնացել են շուրջ 150 հազար հայ Լեռնային Ղարաբաղում, 22 հազար էլ՝ Շահումյանի շրջանում ու Խանլարի շրջանի հինգ բնակավայրերում: Վեզիրովն այս ամբիոնից ասաց, թե Լեռնային Ղարաբաղից դուրս են եկել 10 հազար ադրբեջանցիներ, որը ճիշտ չէ[27]:

Ադրբեջանում հայերի նկատմամբ իրագործված բռնարարքներն ավելի դաժանորեն դրսևորվեցին Բաքվում, որտեղ ապրում էին ավելի քան 200 հազար հայ: Ա.Վեզիրովը, հունվարի 13-ին հանդիպելով ժողովակատի պարագլուխների հետ, քաջալերեց նրանց հանցագործ բռնարարքները: Բաքվում հայերի

[26] *Նույն տեղում, գ. 57, թ. 46:*
[27] *«Ազատ Արցախ», 10.02.2000: Զորի Բալայանի գործածված թվերն ընդհանրացված են, սակայն շատ մոտ են ճշմարտությանը:*

ջարդը և նրանց քաղաքից արտաքսելը կրում էին կազմակերպված բնույթ[28]: Որ Մոսկվան Բաքվի սարսափելի իրադարձություններին արձագանքեց միայն հունվարի 19-ին, երբ հարյուրավոր դիակներ էին ընկած փողոցներում, խոսում է խորհրդային իշխող ուժերի թողտվության մասին: Բաքվի ամբողջ հայությունը բռնագաղթվեց Հայաստան, Ռուսաստանի Դաշնություն և արտասահմանյան երկրներ:

Ադրբեջանից հայերի բռնագաղթն ու տեղահանումը նոր ծավալ ընդունեցին 1991թ. ապրիլ-հունիսին: Անձնագրերի ստուգման անվան տակ Արցախում և Շահումյան-Գետաշենում հարյուրավոր հայեր անօրեն կերպով ձերբակալվեցին: Ինչպես նշվել է, 1991թ. «Կոլցո» գործողության հետևանքով Գետաշենից և Մարտունաշենից բռնագաղթվեց այդ գյուղերի հայ բնակչությունը: Դրան հաջորդեցին Բերդաձորն ու Հադրութի շրջանը: Հայկական գյուղերից բնակչությանը բռնի տեղահանելու համար Ադրբեջանի իշխանությունների կողմից մշակվել էր հատուկ հրահանգ, ըստ որի՝ 2-3 օր առաջ ԽՍՀՄ ներքին զորքերը շրջապատում էին գյուղը, որից հետո ազերի օմօնականները ներս էին խուժում, թալանում բնակարանները, կատարում ջարդ, հետո գյուղացիներից պահանջում թողնել գյուղը: Թալանի նպատակով հաճախ ազերի օմօնականների հետ գյուղ էին ներխուժում նաև զինվորականներ և քաղաքացիական անձնավորություններ: Գյուղերի հայ տղամարդկանց ձերբակալում և տանում էին շրջկենտրոններ՝ Ֆիզուլի, Շուշի, Ջեբրայիլ և Լաչին, ծեծի ու ծաղրանքի ենթարկելով ստիպում ստորագրել դիմումներ մշտական բնակավայրերից իբր կամավոր հեռանալու մասին: Հետո ոմանց բաց էին թողնում, իսկ ոմանց դեմ էլ քրեական գործ հարուցում: Անկախ նրանից, թե կամավոր հեռանալու վերաբերյալ «դիմում» էին ստորագրել, թե ոչ, բոլորին զենքի ուժով լցնում էին ավտոմեքենաները և տեղափոխում հայ-ադրբեջանական սահման: Հադրութի շրջանի Առաքել գյուղի բնակիչ Ա.Ծատուրյանի վկայությամբ՝ 1991թ. մայիսի 12-16-ին բռնի ուժով՝ ավտոմատների փողերի ներքո, իրենց գյուղի բնակիչներին հարկադրել են փաստաթուղթ ստորագրել, թե իբր ուզում են ապրել Հայաստանում և խնդրում են իրենց տեղափոխել այնտեղ: Բարբարոսները անձնագրերը ստուգելու նպատակով խուզարկել էին գյուղի բոլոր տները, թալանել ամեն ինչ, տարել անասուններն ու

[28] Մովսեսովա Ի., Հովնանյան Ա., *Բաքվի ջարդերը. Եր., 1992, էջ 40:*

թռչունները: Նույն շրջանի Ջրաբերդ գյուղից 104-ամյա Թագուհի Սարգսյանը Հայաստանի Գերագույն խորհուրդ ուղարկած նամակում գրել է, որ օրը ցերեկով իրենց տուն ներխուժած խուժանը ռուս զինվորի հետ ինչ-որ թուղթ տվեցին և ստիպեցին ստորագրել: «Ես,– շարունակում է ալեհեր կինը,– չպիտի տեսնեի, թե ինչ արեցին զինված երիտասարդները փեսայիս ու աղջկաս հետ: Մեզ կիսամերկ լցրին բեռնատարն ու տարան... Մեծահասակներից մեկը՝ Էդիկ Ալեքսանյանը մահացավ ճանապարհին»[29]:

Ահա այսպիսի վայրագություններով 1991թ. ապրիլի 30-ից մինչև մայիսի 20-ը բռնի տեղահանվեցին Խանլարի շրջանի Ազատ, Մարտունաշեն, Գետաշեն, Շուշիի շրջանից Մեծ շեն, Ծաղկածոր, Եղծահող, Հին շեն, Հադրութի շրջանից Արևշատ (Դոլանլար), Ծամձոր, Քարագլուխ, Ցոր, Ջրաբերդ (Մուլքուդարա), Կարմրաքար (Բինյուլու), Սարի շեն (Շաղախ), Սարալանջ (Ջիլան), Քարինգ (Արփագյադուկ), Խանձաձոր (Աղջաքենդ), Պետրոսաշեն, Սպիտակաշեն, Բանաձոր (Բանազուր) և Առաքել (Առաքյուլ) գյուղերը:

Հայկական գյուղերի բռնագաղթը, սպանությունները, խոշտանգումները հիմնականում կատարում էին ազերի օմօնականները: Պատահել են նաև դեպքեր, երբ խորհրդային զինվորները կանխել են հայկական գյուղերի բռնագաղթեցումը: Օրինակ՝ երբ ազերի օմօնականները 1991թ. մայիսի 15-ին փորձեցին տեղահանել Քարին տակ գյուղի բնակչությանը, խորհրդային զինվորականները կանխեցին և գյուղից դուրս քշեցին օմօնականներին: Կամ ուրիշ օրինակ. երբ Հադրութի շրջանի Ցոր գյուղի բնակիչները 1991թ. մայիսի 21-ին վերադարձան իրենց գյուղը, և օմօնականները փորձեցին կրկին տեղահանել նրանց, ԽՍՀՄ ներքին զորքերի զինվորները թույլ չտվեցին: ԽՍՀՄ ներքին զորքերի ավագ լեյտենանտ Ա.Բեգրուչկոն վկայել է, թե ինչպես էին ազերի օմօնականները բռնություններ գործադրել Հադրութի շրջանի հայկական գյուղերում: Բռնագաղթման ժամանակ միայն Հադրութի և Բերդաձորի գյուղերում զոհվել էին հինգ խաղաղ բնակիչներ[30]:

[29] *«Հայք», 22.05.1991:*

[30] *Депортация населения армянских сел НКАО и прилегающих районов, апрель-июль, 1991, Ер., 1995, с. 11.*

Ադրբեջանի իշխանությունները օմօնականների ձեռքով ամենուր հալածում էին հայերին և նրանց նկատմամբ իրագործում տանջանքի տարատեսակ միջոցներ: 1991թ. մայիսի 15-ին Շուշիի շրջանի հայկական գյուղերից Լաչին տարվեց 120 տղամարդիկ, որոնցից 43-ը պահվեցին կալանատներում և բանտերում ու ենթարկվեցին անլուր կտտանքների:

Ա.Սախարովի հիշատակին նվիրված «Խաղաղություն, առաջընթաց, մարդու իրավունքներ» առաջին միջազգային կոնգրեսի փորձագետների խմբի 1991թ. մայիսի 25-29-ը հայ-ադրբեջանական սահմանային գոտի կատարած ուղևորության և բռնագաղթեցման վերաբերյալ ստուգումների արդյունքների հաշվետվության մեջ նշված է, որ տեղի է ունեցել մի շարք գյուղերի լիակատար, բռնի տեղահանություն, որի հետևանքով տուժել են հազարավոր հայեր: Խորհրդային ներքին զորքերը ապրիլի 30-ին, մայիսի 6-ին և մայիսի 14–16-ին տանկերով, ուղղաթիռներով և զրահամեքենաներով շրջապատել են Գետաշենը, Բերդաձորը և Հադրութի շրջանի գյուղերի բնակչությանը: Նրանք ադրբեջանական օմօնի հետ ներխուժում էին գյուղերը, կալանում բնակիչներին, խոշտանգում, ահաբեկում մարդկանց, ապօրինաբար բռնագրավում նրանց տները, ավտոմեքենաները, անասուններն ու անձնական ունեցվածքը: Այդ գործողություններից մի քանիսին ներկա են եղել և անձամբ ղեկավարել Ադրբեջանի ՆԳ նախարարի առաջին տեղակալ Մամեդովը և շրջանների ղեկավար աշխատողներ: Օմօնականները բնակչությանը ստիպում էին ստորագրել ոչ ցանկալի փաստաթղթեր[31]:

Ադրբեջանի իշխանություններից հաջորդ հարվածը կրեց Շահումյանի շրջանը, որի մոտ 15 հազար հայ բնակիչները ստիպված էին 1992թ. ամռանը հերոսական մարտեր մղելով հեռանալ իրենց օջախներից: Թուրք-ազերիները ծրագրել էին հայաթափել ամբողջ Ադրբեջանը, սակայն բռնագաղթեցման Ադրբեջանի պետական քաղաքականությունը, դեմ առնելով Արցախի անառիկ ոգուն, փշուր-փշուր եղավ:

[31] *«Հայաստանի Հանրապետություն», 28.06.1991:*

2. ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՋՈԿԱՏՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Արցախի ազգային-ազատագրական պայքարը և, ընդհանրապես, շարժումը ծնեց հայդուկային (ֆիդայական) պայքար և ինքնապաշտպանության երկրապահ ջոկատներ: Դրանք սկզբում առաջ եկան տարերայնորեն, ինքնաբուխ, հայդուկի հոգեբանությամբ և ֆանատիկ հավատով: Բայց Արցախյան պայքարը ջրի երես էր հանել տասնամյակներ շարունակ խորհրդային «բարեկամության» և «ինտերնացիոնալիզմի» մասին սուտ ու կեղծ քարոզչությունը: Խորհրդային կայսրապետության «ինտերնացիոնալ օղակ» հանդիսացած Ադրբեջանը կայսրապետության տարիներին վեր էր ածվել գաղափարական ահաբեկչության և գաղութային տերության, որի կազմում ապրող տասնյակ ժողովուրդներ ուծացվում էին և չքանում պատմական ասպարեզից: Եվ, պարզ է՝ Ադրբեջանի ազգայնամոլ իշխանությունները չէին հանդուրժի արցախահայությանը, որը դարձել էր այդ փուչ գաղափարախոսությունը խորտակելու որոշակակիրը: Արցախահայությանը իր պատմական բնօրրանից կտրելու և դուրս մղելու համար ազերիները գործողության մեջ դրեցին ավազակային բազմաթիվ խմբերի հետ միասին նաև ՆԳ նախարարության հատուկ նշանակության ոստիկանական զինված ջոկատները: Հայկական բնակավայրերի վրա հարձակվելու, կողոպտելու, թալանելու և բնակչությանը սարսափի ու ահաբեկչության մեջ պահելու համար նրանք իրենց հսկողության տակ էին վերցրել ԼՂԻՄ-ի ներքին ճանապարհները և երկրամասում ու սահմանամերձ տարածքներում գտնվող ազգակիցների բնակավայրերը դարձրել ռազմական հենակետեր: Հաշտվել այդ երևույթի հետ և թողնել, որ այդպես շարունակվի, այլևս անկարելի էր:

Դեռևս 1988թ. փետրվարյան օրերին, հատկապես Սումգայիթյան ողբերգությունից հետո, Երևանի Թատերական հրապարակում կոչեր հնչեցին՝ արցախահայությանն ու հանրապետության սահմանները պաշտպանելու համար կազմակերպել ինքնապաշտպանական ջոկատներ: Առաջինը Ստեփանակերտում և ԼՂԻՄ-ի մի շարք բնակավայրերում առաջ եկան ընդհատակյա ինքնապաշտպանական ջոկատներ, որոնք զինված էին որսորդական հրացաններով և ինքնաշեն զենքերով: Ստեփանակերտի ինքնապաշտպանական ջոկատները, իսկ նրանք մի քանիսն էին, գիշերները հսկում էին քաղաքի փողոցներն ու թաղա-

մասերը, քաղաք մտնող մայրուղիները, որպեսզի ներս չթափանցեն ազերի զինյալ ավազակախմբեր: Խորհրդային զորամիավորումները օդակի մեջ էին առել անզեն ժողովրդին: Նույնիսկ արցախցիներից խլվեցին և մարզի տարածքից դուրս տարվեցին հակակարկտային հրանոթները: Ահա այս պայման-ներում ստեղծվեց ինքնապաշտպանության ուժերի մարզային շտաբ, որը ձեռնամուխ եղավ միավորելու կամավորական ջոկատները: Ջոկատների մեծամասնությունը գտնվում էր գյուղերում, որոնցում ընդգրկված էին 14-ից մինչև 60 տարեկան տղամարդիկ, որոնցից շատերն առաջին անգամ էին զենք վերցնում: Ջոկատներին մտահոգում էր երկրամասի բնակչության ինքնապաշտպանության հարցը: Դրանում նրանք ստանում էին մարզի բնակչության բազմակողմանի օգնությունը: Ինքնապաշտպանության ջոկատներ էին ստեղծվել մարզի գրեթե բոլոր բնակավայրերում, ամենից առաջ սահմանամերձ: Գյուղեր մտնող ճանապարհներին դրվել էին հսկողության կետեր, որտեղ հերթապահությունը շուրջօրյա էր: Հետո, երբ այդ ջոկատները վերափոխվել էին մարտական ջոկատների, ապահովության նպատակով նրանք տեղավորվում էին քիչ բնակչություն ունեցող բնակավայրերում՝ զբաղեցնելով թափուր տները, չօգտագործվող դպրոցները, ակումբները և այլ հասարակական շենքեր: Որոնում և ընտրում էին վտանգի դեպքում արագ հեռանալու համար գաղտնի ուղիներ: Մարտական ջոկատների կարիքները, մանավանդ սննդի, հոգում էին տվյալ գյուղերի բնակիչները: Ինքնապաշտպանական ջոկատներում ընդգրկված ազատամարտիկների աշխատատեղերը պահպանվում էին, և աշխատավարձերը հաճախ ավելացվում մինչև 50 տոկոս: Ջոկատայինների հերթափոխությունը կատարվում էր ինքնապաշտպանության մարզային շտաբի իմացությամբ կամ էլ հանձնարարությամբ: Հիմնարկ-ձեռնարկությունների, կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների հաշվին օրական մեկ անգամ կերակրում էին ջոկատայիններին: Մարզի տարածքի սահմանամերձ վայրերում փորվում էին խրամատներ, պատրաստվում ծածկատնակներ, զենքի և զինամթերքի պահպանման թաքստոցներ: Ընդհանրապես՝ ինքնապաշտպանական ջոկատների մարտիկները կարգապահ էին, կազմակերպված և մարտական: Նրանք կայացնում էին ինքնուրույն վճիռներ, կազմում գործողությունների պլաններ և օգնության հասնում այն բնակավայրերին, որտեղ առկա էր վտանգը: Այդ մասին ավտոմեքենաների վրա տեղադրված հեռախոսակայաններից անմիջապես հաղորդվում էր մարզային շտաբ:

Ինքնապաշտպանության մարտիկները գյուղական կոոպերատիվներում և տնտեսություններում ձևակերպվում էին իբրև անդամներ և կատարում էին զանազան բնույթի աշխատանքներ:

Արցախի և Հայաստանի ինքնապաշտպանական ջոկատները ամենից առաջ նեղվում էին զենքի և զինամթերքի խիստ պակասությունից: Չնայած զինապահեստները աստիճանաբար հարստանում էին տարբեր ուղիներով ձեռք բերված զինամթերքի հաշվին, սակայն դրանք շատ քիչ էին: Երկրամաս մտած յուրաքանչյուր միավոր զենքի մասին պարտադիր պետք է իմանային մարզային շտաբում: Հնատիպ և որսորդական զինատեսակներին ավելանում էին կարաբիններ, ավտոմատներ, նռնակներ, իսկ ավելի ուշ՝ գնդացիր և հրետանի: Մարզի տարբեր տեղերում ստեղծվում էին կետեր, այն էլ գաղտնի, որտեղ ինքնուս զինագործները նորոգում էին զենքերը: Ասենք նաև, որ հատուկ ուշադրություն էր դարձվում ազատամարտիկների ռազմական ուսուցմանը: Նախ և առաջ հրաձգությանը:

Ինքնապաշտպանության կամավորական և մարտական ջոկատները սկզբում գործում էին ֆիդայական օրենքներով ու սովորություններով: Նրանք հպարտությամբ իրենց անվանում էին ֆիդայիներ թե՛ արտաքին տեսքով և թե՛ իրենց գործելակերպով: Պայքարի ավանդական այդ կերպը Արցախում շարունակվել է մինչև պաշտպանության բանակի ստեղծումը: Արցախում կազմակերպվող ինքնապաշտպանական ջոկատները սկզբում համալրվում էին հայաստանաբնակ արցախցիների և Հայաստանից ու այլ տեղերից եկածների հաշվին:

Ինքնապաշտպանական խմբեր և ջոկատներ կազմակերպվում էին նաև Հայաստանում, քանի որ հանրապետության սահմանների երկայնքով ապրող թուրք-ազերիների հակահայկական գործողությունները օր օրի ավելի նոր թափ էին առնում: Երևանի Թատերական հրապարակում տեղի ունեցած առաջին հանրահավաքների ժամանակ ինքնապաշտպանական ջոկատներ ստեղծելու վերաբերյալ հնչած կոչերը լայն արձագանք գտան ամբողջ հանրապետությունում: Ստեղծված առաջին ջոկատները մեկնում էին Արցախ: Այդ ժամանակ հիմնականը և որոշիչը ինքնաբուխ հայրենասիրությունն էր, որը համակել էր շատերին: Հայրենիքի փրկության հույսը դեռևս կամավորական ջոկատներն էին, որոնց թիվը Արցախ-Հայաստանում հասնում էր ավելի քան 300-ի: Հայոց ազգային բանակի (ՀԱԲ) կոմիսար Վարդան Վարդանյանը պատմում է, որ Հայաստանում առաջին մարտական ուժերից

ՀԱԲ-ը ձևավորվել է 1989թ. օգոստոսի 4-ին: Այդ օրը ՀԱԲ-ում զինվորագրվել էին 3000 տղամարդ, կին և աղջիկ: ՀԱԲ-ի հիմնական խնդիրն էր ապահովել Հայաստանի սահմանների անձեռնմխելիությունը և ջոկատներ անցկացնել Արցախ: ՀԱԲ-ը, ըստ Վարդան Վարդանյանի, հանրապետության բնակչությանը կոչ էր անում հրաժարվել գործադուլներից և արտադրել զենք ու զինամթերք[1]: ՀԱԲ-ի հրամանատարն էր Ռազմիկ Վասիլյանը: 1989թ. ամռանը այն իրենից ներկայացնում էր որպես կամավորական բանակ և հայ ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպող ուժ: Մինչև 1990թ. Բաքվի կոտորածը ՀԱԲ-ը ուներ 5-6 հազար մարդ: Հետո այն օրեցօր համալրվում էր նոր մարտիկներով: Արդեն 1990թ. Մեղրիից մինչև Նոյեմբերյան սահմանի երկայնքով ՀԱԲ-ն ուներ տասնյակ շտաբներ և ռազմական ջոկատներ: Այն ժամանակ ՀԱԲ-ում ցուցակագրվել էր 18-70 տարեկան 160 հազար մարդ[2]: ՀԱԲ-ի գործունեությանը ի սկզբանե խիստ խոչընդոտում էր «Ղարաբաղ» կոմիտեն: Եվ պատահական չէր, որ 1990թ. օգոստոսի 19-21-ը Նոյեմբերյանի շրջանում տեղի ունեցած մարտերը ՀՀՇ-ականները որակեցին իբրև պրովոկացիա[3]: Ճիշտ է նաև, որ ՀԱԲ-ի մեջ մտնում էին նաև զանազան քրեական տարրեր, առանձին հանցագործ խմբեր, կատարում անօրինական գործողություններ ու վարկաբեկում նրան: Այդուհանդերձ, կամավորական հիմունքներով ծնված ՀԱԲ-ը ուներ մեծ հեղինակություն, և բնակչությունը վստահում էր նրան:

Հայ կամավորական ջոկատները Արցախում, թե Հայաստանում կանգնած էին խորհրդաադրբեջանական ուժերի դեմ, որոնց վիճակը այսպես է բնորոշել Հայաստանի պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը. «Սկզբում տարերային էին, չկոորդինացված և տեղի էին ունենում Հայաստանի ու Արցախի պաշտպանության համակարգող միասնական կենտրոն-կառույցի բացակայության պայմաններում: Եվ սակայն դրանք այն կենսական սաղմերն էին, որոնցից անկախության հռչակումից անմիջապես հետո պիտի ծնվեին հայոց փառապանծ բանակի ստորաբաժանումները»[4]:

[1] *«Ծանր վարագույր: Պատմում է ՀԱԲ-ի կոմիսար Վարդան Վարդանյանը», Եր., 1992, էջ 5:*
[2] *Նույն տեղում, էջ 5-17: Նշված թիվը թերևս կասկածելի է:*
[3] *Նույն տեղում, էջ 14:*
[4] *«Հայաստանի Հանրապետություն», 29.01.2002:*

Հետագա ամբողջ ընթացքը ցույց տվեց, որ կամավորական ջոկատները Արցախում և Հայաստանում «փայլուն կերպով կատարեցին իրենց առջև իրենց իսկ կողմից դրված խնդիրները»[5]: Կամավորական ջոկատները, ռազմականացված հիմնարկություններից, հակակարկտային հրետանու կրակակետերից, բուհերի և այլ ուսումնական հաստատությունների ռազմագիտության դասարաններից, հնարավոր նաև այլ տեղերից զենք հայթայթելով, կամավորաբար, հայրենասիրական ու բարոյական արժեքներից դրդված, մեկնում էին սահմանի ամենաթեժ կետերը՝ հայրենի հողը պաշտպանելու համար: Մասիսի շրջանի «Զորավար Անդրանիկ», սևանցի Սարոյի, հրազդանցի Սասունի, «Սասունցի Դավիթ», Հայաստանի «Աֆղանցիների», «Մերգելյան», Բյուրեղավանի, Գյումրիի «Արամ», Ուջանի «Վահագնածին», Արարատի երկրապահների, «Տեր Վահան», Նոր Արեշի «Արաբո», «Մալաթիա», Մոնթեի «Հայրենասիրական ջոկատը», Նորիկի «Մեծն Տիգրանի», «Կոնդ», «Գարեգին Նժդեհ», «Մուշ», «Սասուն», «Ապարան», «Փարբի», «Աշտարակ», Թալինի, Ջերմուկի, Կապանի, Սիսիանի, Արցախի և տասնյակ այլ մարտական ջոկատներ ու խմբեր ազերիների դեմ պայքարում ցուցաբերել են նվիրվածություն և խիզախություն: Ապացույց՝ եռաբլուրը և այլ հազարավոր զոհվածներ: Նրանք արյան գնով էին պաշտպանում հայրենի ոստանը, արցախյան հողը, հայոց պատիվը: Հայաստանում կազմակերպված կամավորական ջոկատները, հաղթահարելով բոլոր դժվարությունները, ոտքով լեռնային ճանապարհներով և արահետներով, զենքն ու զինամթերքը շալակած, հայտնվում էին Արցախում կամ Հայաստանի ամենաթեժ կետերում՝ Արարատում, Զանգեզուրում, Տավուշում, Նոյեմբերյանում, Բերդաձորում, Գետաշենում, Շահումյանում, Հադրութում, Ասկերանում և այլ տեղերում: Ազերի օմօնականները խորհրդային ուժերի աջակցությամբ, հաճախ էլ ուղեկցությամբ, անձնագրային ստուգումների անվան տակ կատարում էին սարսափելի արարքներ: Նրանց դիմակայում էին հայ կամավորական ջոկատները, պաշտպանում խաղաղ բնակչությանը և հարկ եղած պարագայում էլ արժանի հակահարված հասցնում: 1989թ. դեկտեմբերի 8-ին Կոռնիձորի կռիվներում զոհվեց Ուջանի «Վահագնածին» երկ-

[5] *Նույն տեղում: Արցախում կամավորական ջոկատների առաջին հրամանատարը եղել է Արկադի Կարապետյանը («ԼՂ Հանրապետություն», 12.02.1998):*

ռապատ ջոկատի մարտիկ Նորայր Հարությունյանը[6]: Նա այդ պայքարում զոհված առաջին երկրապահն էր, որի համար մարտական ընկերները փոխհատուցեցին հակառակորդի մի քանի զոհերով:

Ինչպես նշվել է, 1990թ. հունվարին դաժան հալածանքների ենթարկվեցին Բաքվի հայությունը, Շահումյանի շրջանի Մանաշիդ, Խանլարի շրջանի Կուշչի-Արմավիր և Գետաշեն գյուղերի բնակիչները, ծերբակալվեց Շահումյանի շրջանի ղեկավարությունը և տարվեց Կիրովաբադի բանտը: Այդ վերջին անօրինությունը Հյուսիսային Արցախի ինքնապաշտպանական ուժերին ստիպեց կատարել պատասխան գործողություններ և հակառակորդին ստիպել ազատել Շահումյանի շրջանի ղեկավարությանը:

Բաքվում հայերի նկատմամբ իրագործված սարսափները ստիպեցին անկախության համար ոտքի ելած հայությանը հնչեցնել իր ձայնը և գործողության մեջ դնել իր ոգու ուժն ու ցասումը: Ազերի զինյալ ավազակախմբերը հաճախակի էին կրկնում իրենց ոտնձգությունները սահմանամերձ հայկական բնակավայրերի վրա՝ անշուշտ «ստուգելու համար հայերի մարտական պատասխանատվության աստիճանը»[7]: Առաջին բախումը տեղի ունեցավ 1990թ. հունվարի 14-ի երեկոյան Արարատի շրջանի Քյարքի գյուղի տարածքում: Հունվարի 15-ի գիշերը թշնամու հետ փոխհրաձգության ժամանակ զոհվեց Արարատի շրջանի Ավշար գյուղի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար Տիգրան Մելիքյանը[8]: Այդ նույն օրը՝ հունվարի 15-ին, երբ ԽՍՀՄ նախագահ Մ.Գորբաչովի հրամանով Արցախում մտցվեց արտակարգ դրություն, և Ադրբեջանի կողմից լուծարվեց Շահումյանի շրջանը, բնական է, հայ ժողովրդի վրդովմունքը պետք է դրսևորվեր կոնկրետ գործողություններով: Եվ երբ հունվարի 17-ին Նախիջևանի սահմանամերձ Երասխավանի ուղղությամբ ազերի զինյալները ռազմական գործողություններ ծավալեցին, որի հետևանքով եղան զոհեր, Արարատի երկրապահները դիմեցին պատասխան քայլերի: Թշնամուն հակահարված տալու համար Հայաստանի տարբեր տեղերից հունվարի 18-ին Երասխավան մեկնեցին բազմաթիվ կամավորական ջոկատներ, որոնց գործողությունների

[6] *«Երկրապահ», 16.01.2002:*

[7] *Նույն տեղում:*

[8] *Հետագայում Քյարքին ազատագրվելուց հետո գյուղը վերանվանվեց Տիգրանաշեն՝ ի պատիվ զոհված Տիգրանի հիշատակին:*

համակարգումն իր վրա վերցրեց Արարատի երկրապահ ջոկատի հրամանատար Վազգեն Սարգսյանը: Հայ կամավորական ջոկատները, հունվարի 19-ին անցնելով հակագրոհի, «շնորհիվ ճշգրիտ ծրագրված գործողությունների, ոչնչացնելով թշնամու հետախուզական վաշտը», գրավեցին նրա զինյալ ուժերի հենակետ գինու գործարանը: Ազերի զինյալները, թողնելով բազմաթիվ դիակներ, դիմեցին փախուստի[9]: Այդ մարտերում հերոսաբար զոհվեց Մովսես Գյորգիսյանը, որը հետմահու արժանացավ ՀՀ Ազգային հերոսի բարձրագույն կոչման և պարգևատրվեց «Հայրենիքի» շքանշանով: Զոհվեցին նաև երևանցի Երվանդ Սաղումյանը, Արարատի շրջանի Արմաշ գյուղից Գևորգ Զեյնալյանը և նույն շրջանի Գորգավանից Ռուբիկ Բազիկյանը: Հայ կամավորների այդ անձնուրաց սխրանքը համոզեց, որ հաղթելու գրավականը նախ և առաջ հանդիսանում են համախմբվածությունն ու միասնությունը: Երասխավանը հայությանը մղեց դեպի կազմակերպված ու կշռադատված գործողությունների և Վազգեն Սարգսյանին ստիպեց սկսել միավորել Հայաստանի զինյալ ջոկատները:

Թուրք-ազերիները նոր ոտնձգություններ կատարեցին հունվարի 23-ին Եղեգնաձորի սահմանամերձ շրջանում: Հակառակորդի գնդակից զոհվեց Արզնի գյուղի կամավորական ջոկատի մարտիկ Վարուժան Ոսկանյանը: Հակառակորդը հունվարի 27-ին նոր ոտնձգություն կատարեց Երասխավանի հատվածում: Թշնամու կողմից գնդակոծության հետևանքով զոհվեց Դրազդանի շրջանի Վարդանանք (Ալափարս) գյուղի երկրապահ ջոկատի մարտիկ Հարազատ Սահակյանը: Այդ ամենը առաջ բերեց հանրապետության բնակչության բուռն վրդովմունքը:

Վիճակը մանավանդ ծանր էր Արցախ-Շահումյան-Գետաշենում: Խորհրդային ուժերի կողմից արգելվում էին ուղղաթիռների թռիչքները Գետաշեն և Շահումյան: Խիստ դժվարացել էին կամավորական ջոկատների այնտեղ մեկնելը և ընկերներին հերթափոխելը: 1990թ. հունվարի 28-ին Երևան էին ժամանել Դ.Յազովն ու Վ.Բագատինը: Այդ նույն օրը՝ ժամը 16-ին, Ֆիոլետովի փողոցի վրա գտնվող Հայոց ազգային բանակի շտաբի մոտ հայտնվեցին խորհրդային շուրջ 30 դեսանտային զրահամեքենաներ, և առանց որևէ նախազգուշացման ու պահանջի զինվորականները կրակ բացեցին ՀԱԲ-ի մարտիկների վրա, որի հետևանքով զոհվեց Կոռ-

[9] *«Երկրապահ», 22.01.2002:*

նիձորում և Երասխավանում մարտնչած ազատամարտիկ Էդուարդ Մարկոսյանը[10]:

Մոսկվայից յուրաքանչյուր պահի սպասվող սպառնալիքը և անընդհատ հրահրումները ստիպում էին մի միասնական կենտրոնի ենթակայության տակ համախմբել Հայաստանում կազմակերպված ինքնապաշտպանական, երկրապահ բոլոր ջոկատները, որոնց ամենուր կամավոր անդամագրվում էին տարաբնույթ զինյալ միավորումներ: Արցախ-Հայաստանի պաշտպանության հարցը դարձել էր հույժ կարևոր խնդիր, որը ստիպում էր մարտունակ բոլոր ուժերի համախմբումը մի կենտրոնի մեջ: Եվ ահա 1990-ի հունվարի վերջին և փետրվարի սկզբին կամավորական ջոկատները բարձրացրին Արցախ-Հայաստանի ինքնապաշտպանության կենտրոն կազմակերպելու հարցը: Սակայն պարզվեց, որ ոչ բոլորն էին ցանկանում հրաժարվել ֆիդայականությունից կամ խմբապետությունից: Ճիշտ է, Երասխավանի մարտերից հետո զգալիորեն բարձրացել էր Արարատի երկրապահ ջոկատի հրամանատար Վազգեն Սարգսյանի հեղինակությունը, և տասնյակ ջոկատներ ու խմբեր ընդունում էին նրան, որպես ընդհանուր հրամանատարի և նրանից էին ստանում մարտական առաջադրանքներ: Վազգեն Սարգսյանի հետ կապի մեջ էին նաև Հյուսիսային Արցախում, Մարտունու և Հադրութի շրջաններում, Մարտակերտում և մյուս տեղերում գործող ինքնապաշտպանական ջոկատները: Վազգեն Սարգսյանը ձգտում էր 1917թ. Անդրանիկի օրինակով ստեղծել երկրապահ զորամիավորում: Այդ գաղափարը նրա մեջ ծնվել էր Ղարաբաղյան շարժման սկզբին, առանձնապես սումգայիթյան ոճրագործությունից հետո, երբ պարզ դարձավ, որ խորհրդային ուժերը ոչ կպաշտպանեն հայ ժողովրդին և ոչ էլ կպատժեն ազերի ոճրագործներին: Եվ այսպես՝ «սումգայիթյան ցեղասպանությունը, հայերի ջարդերն ու տեղահանությունները յուրաքանչյուր հայի ստիպեցին ավելի լրջորեն մտածել ինքնապաշտպանության ազգային կեցվածքի մասին»[11]:

Պայքարը չէր դադարում, անընդհատ կրկնվում էին հակառակորդի ավազակային հարձակումները: Վազգեն Սարգսյանի բերած տվյալներով՝ 1990-ի հունվարից երեք ամսվա ընթացքում հակառակորդի կողմից կատարվել է 151 հարձակում, որոնց հետևանքով վիրավորվել էր 99 մարդ, սպանվել 19-ը: Այդ նույն

[10] *Նույն տեղում, 21.01.2002:*
[11] *Նույն տեղում, 25.01.2002:*

թվականի աշնանը թշնամու կողմից կատարվել է 18 ավազակային հարձակում, և զոհվել է 9 մարդ[12]:

Հայաստանի կամավորական, ինքնապաշտպանական, երկրապահ և այլ կարգի ջոկատներն ու խմբերը շուրջ երկու տարի գործել են առանց կենտրոնի: 1990թ. մայիսի 20-ին տեղի ունեցած Գերագույն խորհրդի ընտրություններից հետո, երբ Վազգեն Սարգսյանն ընտրվեց ՀԽՍՀ ԳԽ ներքին գործերի և պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, նրա կոչով ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ենթակայության տակ անցան բոլոր երկրապահ զորամիավորումները: Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն, հանդես գալով հայտարարությամբ, նշել է, որ ազգային զորամիավորումների վերականգնման խնդիրը ծնվեց Սումգայիթից հետո, երբ պարզ դարձավ, որ խորհրդային բանակը չի պաշտպանի հայ ժողովրդին: Այդ ժամանակ էլ «Ղարաբաղ» կոմիտեն ձեռնամուխ եղավ երկրապահ ջոկատների ստեղծմանը սահմանամերձ շրջաններում և Արցախում՝ իրադրության թելադրանքով: Այդ ջոկատների հիմնական նպատակն էր արտաքին վտանգից պաշտպանել Հայաստանի և Արցախի սահմանները: Ապա ասված է, որ ազգային զորամիավորումների ստեղծումը տանում է դեպի անկախ պետականության վերականգնում: Անհրաժեշտություն զգացվեց այդ ջոկատները պետական կառուցվածքում միավորելու, մանավանդ որ նրանց «անջատ գոյության տևականությունը հղի է ժողովրդին պառակտելու և վերջնականապես հուսալքելու վտանգով»[13]: Հայտարարությունը վերջանում է հետևյալ դիրքորոշումով. «Հայ ժողովրդի համար շրջադարձային ու բախտորոշ այս պահին, առավել քան երբևէ, մեզ անհրաժեշտ է միասնություն և համախմբվածություն, ազգային խնդիրներն ամեն ինչից վեր դասելու քաղաքական լրջություն մեր ժողովրդի սրբազան խնդիրն ի կատար ածելու համար»[14]:

Ազգային զորամիավորումների վերականգնման գործընթացը շարունակվեց մինչև Հայաստանի ազգային բանակի ստեղծումը: Միավորված երկրապահ զորամիավորումները 1990թ. ամռանը կարևոր դեր խաղացին հանրապետության սահմանների պաշտպանության գործում: Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպար

[12] Սարգսյան Վ., *Ոգու փրկություն, էջ 191:*
[13] *«Հայք», 10.06.1990:*
[14] *Նույն տեղում:*

գյուղի պաշտպանության դիրքերում օգոստոսի 20-ին քաջի մահով զոհվեցին «Գարեգին Նժդեհ» ջոկատի հրամանատար Սոս Նալդոռանյանը և Հարություն Մուրադյանը՝ մարտերում հայտնի «Միայնակ գայլը»:

ԽՍՀՄ նախագահի 1990թ. հուլիսի 25-ի հրամանագրի համաձայն՝ պետք է զինաթափվեին բոլոր անօրեն ստեղծված զինված ջոկատները: Լևոն Տեր-Պետրոսյանը «Մոսկովսկիե նովոստի» թերթին տված հարցազրույցում նշել է, որ զինաթափումը դրվել է հանրապետական իշխանությունների վրա: Հայաստանի զինված խմբերը, որոնք հիմնականում առողջ ուժեր են, մոտ ժամանակներս կմտնեն իրավապահ մարմինների կառուցվածքներ, և նրանց օգնությամբ, առողջացնելով բուն միլիցիան, պայքարելու ենք քրեական տարրերի դեմ: Այդ ժամանակ Հայաստանի Հանրապետությունում կային վեց հազար աշխարհազորայիններ[15]:

Հայաստանում իշխանության հասած ՀՀՇ-ականները գերադասեցին դիմել բռնության, որի հետևանքով օգոստոսի վերջին Երևանում դավադիր կրակոցների զոհ դարձան Աշտարակի ինքնապաշտպանության ջոկատի հրամանատար Գեղազնիկ Միքայելյանը (Չաուշ) և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Վիտյա Այվազյանը: Երկուսն էլ հետմահու արժանացել են ՀՀ Ազգային հերոսի բարձրագույն կոչման և պարգևատրվել «Հայրենիքի» շքանշանով: Անկասկած՝ 1990թ. օգոստոսին ՀԱԲ-ի դեմ կատարվել է անօրինություն: Դրանում մեծ մեղք ունեին ՀՀՇ-ն և ՊԱԿ-ը: Լևոն Տեր-Պետրոսյանի իշխանությունը ՀԱԲ-ին համարում էր Հայկոմկուսի դրածո և նրա ջախջախումը՝ խիստ անհրաժեշտ: 1990 թ. օգոստոսի 28-29-ին ՀԱԲ-ի գլխավոր զորակայանը, որտեղ կային 150-200 հոգի, ռմբակոծվեց ՀՀՇ-ի զինված ջոկատների կողմից: ՀԱԲ-ի գլխավոր զորակայանի դեմ կրակում էին նույնիսկ «Էրեբունի» հյուրանոցի տանիքից: ՀՀՇ-ականների նպատակն էր պատժել ՀԱԲ-ի ղեկավարներին իբրև ավազակների[16]:

1990 թ. օգոստոսի 23-ին Անկախության հռչակագիրն ընդունվելուց հետո նոր ճանապարհ բացվեց Հայաստանի ազգային բանակի ստեղծման համար: ՀՀ Գերագույն խորհրդի որոշմամբ սկսվեց ՆԳ նախարարությանը կից ձևավորվել հատուկ

[15] *"Московские новости", N33, 19.08.1990.*
[16] *Ծանր վարագույր.... էջ*

գունդը: Դա, ինչպես վկայում է Վազգեն Սարգսյանը, դժվար աշխատանք էր, որովհետև գործընթացը պետք է սկսվեր զրոյից, մանավանդ որ տղաների մեծամասնությունը չէր ուզում հրաժարվել ֆիդայական պայքարից: Բանն այն է, որ կային հոգեբանական դժվարություններ, տղաներն ունեին սոցիալական հիմքեր: Սակայն առողջ դատողությունը վեր կանգնեց ամեն ինչից, և հատուկ գունդ մտնելու համար դիմեցին հինգ հազարից ավելի երիտասարդներ[17]: Երևանի հատուկ գունդը հիմնադրվեց 1990թ. սեպտեմբերի 20-ին: Նրա կազմում ընդգրկվեցին Հայաստանի շրջաններում և Երևանում գործող 26 վաշտեր: Այդ գնդից էր Ջիվան Աբրահամյանը, որը զոհվեց 1991թ. հուլիսի 20-ին Շահումյանի շրջանի Վերին Հնձեն գյուղի Շամփրապտուկ բարձունքը պաշտպանելու ժամանակ: Նա հետմահու արժանացել է ՀՀ «Ազգային հերոս» բարձրագույն կոչման և պարգևատրվել «Հայրենիքի» շքանշանով: Հինգ վաշտեր էլ ձևավորվեցին Արարատում, Գորիսում, Վարդենիսում, Իջևանում և Մեղրիում: Այսպիսով՝ հանրապետության սահմանների պաշտպանությունը կենտրոնանում էր հատուկ գնդի ձեռքում: Խնդիր էր դրված այդ աշխատանքը կազմակերպել պետականորեն, քանի որ պաշտպանական ջոկատները և պաշտպանական գործը չպետք է պետական կառուցվածքից դուրս լինեն: Միևնույն ժամանակ մշակվում է երկրապահ ջոկատների կարգավիճակը:

ՀՀ կառավարության որոշմամբ՝ նախարարների խորհրդին առընթեր 1991թ. ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտե, որը մեծ աշխատանք կատարեց ազգային բանակ ստեղծելու համար: Նմանատիպ կառույց արդեն գործում էր Լեռնային Ղարաբաղում: Եվ այս ամենով «զգալիորեն հեշտացվեց բարդագույն պայմաններում Հայաստանի, Արցախի և Շահումյանի պաշտպանական գործողությունների համակարգման խնդիրը»: Այդ ամենը, փաստորեն, դարձավ այն հիմքը, որի վրա հետո ստեղծվեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը[18]:

ՀՀ նախագահի 1991թ. դեկտեմբերի 4-ի հրամանագրով ստեղծվեց ՀՀ պաշտպանության նախարարություն, իսկ 1991թ. դեկտեմբերի 5-ի հրամանագրով պաշտպանության նախարար նշանակվեց Վազգեն Սարգսյանը: 1992թ. հունվարի 28-ին կառա-

[17] Սարգսյան Վ., *Ոգու փորձություն, էջ 189-190:*
[18] *«Հայաստանի Հանրապետություն», 29.01.2002:*

վարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մասին» որոշումը, որով հայտարարվեց Հայոց ազգային բանակի ստեղծման մասին: Նորաստեղծ նախարարության ենթակայությանը հանձնվեցին ներքին գործերի նախարարության միլիցիայի պարեկապահակային գունդը, հատուկ նշանակության օպերատիվ գունդը և հանրապետական զինվորական կոմիսարիատը: Մի փոքր ուշ հիմնվեց պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատը[19]:

Հայաստանի ինքնապաշտպանական և մարտական ջոկատների համար ծանր տարի էր 1991 թվականը, երբ Արցախը և Շահումյան-Գետաշենը լրիվ շրջափակված էին ու Հայաստանից կտրված: 1991թ. ապրիլ-մայիսին ադրբեջանական օմոնականների և խորհրդային ուժերի կողմից իրագործված «Կոլցո» գործողությունը ծանր կացության մեջ էր դրել հայությանը: Այդ մասին արդեն խոսվել է: Միայն ավելացնենք, որ 1991թ. մարտ-ապրիլին մի քանի ինքնապաշտպանական ջոկատներ գտնվում էին Գետաշենում և Մարտունաշենում, որոնք խորհրդաազերական հրոսակների դեմ կռվում էին հերոսաբար: Մարտում զոհվելը հայ ազատամարտիկի համար սարսափելի չէր, միայն թե պաշտպաներ հայոց հողը, հայրենի ոստանը: Գետաշենում հայ ազատամարտիկներն իրենց պսակեցին փառքով:

Գետաշեն-Մարտունաշենին հաջորդեցին Բերդաձորը, Հադրութը, ապա՝ Շահումյանը: Հադրութի շրջանում 14 գյուղեր թշնամուն հանձնվեցին գրեթե առանց դիմադրության: Տվյալներ կան, որ թշնամուն հանձնված որոշ գյուղերի ղեկավարներ խոչ-

[19] Միլիցիայի օպերատիվ հակազդեցության ջոկատի (ՄՕՀՋ) նախկին ծառայողներն ու սպաները պնդում են, թե ՀՀ բանակի հիմքերը դրվել են ոչ թե 1992թ. հունվարի 28-ին ՀՀ պաշտպանության նախարարության հիմնադրմամբ, այլ 1990-ի հուլիսի 30-ին, երբ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Վլադիմիր Մարգարյանցի համապատասխան որոշմամբ ձևավորվեց 1114 հոգուց բաղկացած Միլիցիայի օպերատիվ հակազդեցության ջոկատը: ՄՕՀՋ-ի հիմնական գործառնությունները հստակեցվել են նույն թվականի օգոստոսի 14-ին ՀԽՍՀ ՆԳ նախարարի հրամանով, այդ թվում՝ ՀՀ սահմանների պաշտպանության հարցը: Մի քանի օր անց՝ հոկտեմբերի 30-ից, ՄՕՀՋ-ի ուժերով և միջոցներով կազմակերպվել է Գորիսի, Կապանի, Մեղրիի և այլ շրջանների անվտանգության ապահովումը՝ տեղական ինքնապաշտպանական ջոկատների հետ համագործակցելով («Առավոտ», 08.11.2003):

ընդոտել են իրենց գյուղերի տարածքներում ինքնապաշտպանական ջոկատների գործունեությունը[20]: Կամավորական ինքնապաշտպանական ջոկատները իրենց վրա էին վերցրել գյուղերի պաշտպանությունը և փորձում էին հակառակորդի դեմ տարվող պայքարին տալ համընդհանուր բնույթ: Սակայն դրա համար ամենից առաջ հարկավոր էր զինվել: Ռազմիկ Պետրոսյանի վկայությամբ՝ Արցախի ինքնապաշտպանության շտաբը մշակել էր մոբիլիզացիոն ընդհանուր պլան, ըստ որի՝ բոլոր ջոկատայինները գիտեին, թե տագնապի դեպքում ով ինչ պիտի անի: Շտաբը մշտապես կապի մեջ էր Երևանի, Աբովյանի, Գորիսի, Սիսիանի, Կիրովականի և այլ կենտրոնների հետ: Այն պատրաստ էր ցանկացած պահի դուրս բերել 10 հազար հոգի: Սակայն նրանց մեծամասնությունը անզեն էր: Դա ամենամեծ ցավոտ կողմն էր: Զենք ձեռք էին բերում տարբեր ճանապարհներով: Ռուսաստանից կարաբիններ, հրացաններ, ավտոմատներ, նռնակներ, ականներ, փամփուշտներ և այլ զինատեսակներ բերվում էին սոլյարայուղով լցված ավտոցիստեռնների մեջ: Հայաստանից գնացքով զենք էին տեղափոխում հանքային ջրերի անվան տակ[21]:

1991թ. գարնանը, երբ իրավիճակն ավելի էր սրվել, անհրաժեշտություն զգացվեց ինքնապաշտպանության ուժերը միավորել և ստեղծել մարտական ստորաբաժանումներ: Նույն թվականի հուլիսի վերջին Ստեփանակերտում տեղի ունեցավ ինքնապաշտպանական ուժերի ղեկավարների խորհրդակցություն, որտեղ որոշվեց ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի ժամանակավոր «Օ» («Օբորոնի») գոյություն ունեցած խմբի հիման վրա, որը ղեկավարում էր Մուրադ Պետրոսյանը, ստեղծել ինքնապաշտպանական ուժերի շտաբ, որի մեջ մտան Ս.Սարգսյանը, Ռ.Քոչարյանը, Գ.Պետրոսյանը, Մ.Պետրոսյանը, Վ.Բալայանը և ուրիշներ: Շտաբը հաշվառում էր ԼՂԻՄ-ի տարածքում գտնվող բոլոր կամավորական և մարտական ջոկատները, գբաղվում նրանց զինման և մարտական բարձր պատրաստության հարցերով: Խմբերի մեծացումը կապված էր ունեցած զենքի քանակից, իսկ գործունեության հիմքում դրված էր խստագույն կարգապահությունը: Մարզի բոլոր հասուն տղամարդիկ, ինչպես նաև կանայք և պատանիներ, մտնում էին ինքնապաշտպանական ջոկատների մեջ: Հայաստանի ուսումնական հաստատություններում սովորող ար-

[20] «Ազգ», 01.06.1991:

[21] Պետրոսյան Ռ., Արցախ. պատերազմ, զինադադար, էջ 72-81:

ցախցի շատ ուսանողներ ընդհատում էին ուսումը, վերադառնում հայրենի երկրամաս, մտնում ինքնապաշտպանական ջոկատներ: 1991թ. օգոստոսին՝ Հաթերքում տեղի ունեցած իրադարձությունների օրերին, երբ ինքնապաշտպանական ուժերը գերեվարեցին խորհրդային մի զորամաս և ստիպեցին կատարել գերիների փոխանակում, Սերժ Սարգսյանը դուրս եկավ ընդհատակից որպես ԼՂԻՄ-ի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար, ներկայացավ գնդապետ Ժուկովին և գեներալ-մայոր Վ.Ստարիկովին[22]:

Լեռնային Ղարաբաղում տեղերից առաջարկություններ էին ստացվում ստեղծել պաշտպանական բանակ, մանավանդ որ Ադրբեջանում այդ գործընթացը սկսվել էր: Սակայն պաշտպանության բանակ ստեղծելու համար դեռևս չկային իրական պայմաններ: Տարածքում դեռ գործում էր խորհրդային բանակը, չկային ֆինանսական միջոցներ և նյութատեխնիկական բազա: Էլ չենք խոսում ռազմական մասնագետների, բժիշկների, հոսպիտալների բացակայության և այլ հարցերի մասին: Մնում էր շարունակել և ուշադրություն դարձնել ինքնապաշտպանական ուժերի ամրապնդման ու մարտունակության բարձրացման վրա: Ինքնապաշտպանության ուժերի մարտունակության բարձրացման շարքերն ընդլայնելու հարցը առանձնապես գտնվում էր նորաստեղծ ԼՂՀ-ի ուշադրության կենտրոնում: Իսկ երբ 1991թ. սեպտեմբերին խորհրդային ուժերը ետ քաշվեցին, և դեմ առ դեմ մնացին հայերն ու ազերիները, խիստ հրամայական դարձավ ինքնապաշտպանական ուժերի կառուցվածքի վերանայման հարցը: Նախ ուժեղացվեցին Շահումյանի շրջանի ինքնապաշտպանական ուժերը, որոնք 1991-ի սեպտեմբերին ազատագրեցին Բուզլոխը և Էրքեջը: Այդ մարտերում հերոսաբար էին մարտնչում «Արաբո», «Ալաշկերտ», «Մեծն Տիգրանի» և այլ ջոկատներ: Հերոսաբար էին մարտնչում նաև Մարտակերտի, Մարտունու, Ասկերանի և Հադրութի շրջաններում գտնվող ինքնապաշտպանական ջոկատները: Ինչպես արդեն նշել ենք, Հադրութի շրջանի Տող գյուղում իրադրությունն այն չափ սրվեց, որ այն վերածվեց բացահայտ ռազմական գործողությունների: Թուրք-ազերիների հակահայկական գործողությունների դեմ պայքարելու համար ստեղծված Տողի ինքնապաշտպանական ջոկատը, որը գլխավորում էր Արկադի Տեր-Թադևոսյանը, կարողացավ գյուղը մաքրել ազերիներից[23]:

Արցախի ինքնապաշտպանական ջոկատների թիվը օրեցօր ավելանում էր: Արցախից, Հայաստանից և այլ տեղերից հարյուրավոր կամավորներ էին մտնում ինքնապաշտպանական ջոկատներ: Գեներալ Արթուր Աղաբեկյանը պատմում է, որ 1991թ. նոյեմբերին ԼՂՀ բոլոր շրջանների ինքնապաշտպանության հրամանատարները շտապ կանչվել էին Ստեփանակերտ: Այդ խորհրդակցությանը մասնակցում էին Վազգեն Սարգսյանը և գեներալ Գուրգեն Դալիբալթյանը: Խորհրդակցության հիմնական նպատակը կանոնավոր բանակի ստեղծումն էր: Ելույթ ունեցողներից Ռոբերտ Քոչարյանը, Վազգեն Սարգսյանը, Սերժ Սարգսյանը, Գուրգեն Դալիբալթյանը, Արկադի Տեր-Թադևոսյանը և Վալերի Բալայանը առաջարկեցին ստեղծել կանոնավորական բանակ: Այդտեղ էլ առաջարկվում է Արցախում ստեղծել պաշտպանական բանակ և պաշտպանության պետական կոմիտե: ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի նախագահ է նշանակվում Սերժ Սարգսյանը, տեղակալ՝ Արկադի Կարապետյանը, իսկ շտաբի պետ՝ Արկադի Տեր-Թադևոսյանը: Քանի որ արդեն կային մարտական ստորաբաժանումներ, որոշվեց դրանք թողնել մեկ ընդհանուր հրամանատարության տակ[24]:

Արցախի և Հայաստանի ինքնապաշտպանական ուժերի գործողությունները տեղի էին ունենում համակարգված: Ակնհայտ է, որ ԼՂՀ տարածքը ազերիներից մաքրվեց հենց ինքնապաշտպանական ուժերի անդուլ ջանքերի շնորհիվ: 1992թ. սկզբին Արցախում կային ինքնապաշտպանության 10-ից ավելի ջոկատներ ու վաշտեր, որոնց մեջ ընդգրկված էին մոտ 1000 կամավորներ[25]: Նրանք պետք է մարտնչեին 1991-ի վերջին ԼՂՀ սահմանամերձ շրջաններ բերված ազերիների 18 գումարտակների դեմ, որոնք ունեին 63 զրահամեքենա, 2 տանկ, ավելի քան 27 հրանոթ[26]:

1992թ. գարնանը, ինչպես տեսանք, արցախցիների գերխնդիրը երկրամասի պաշտպանությունն էր և հանրապետության

---

[22] **Арутюнян В. Б.**, *նշվ. աշխ., մաս 4, էջ 41:*

[23] Մկրտչյան Շ., *Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա, Եր., 1996, էջ 49-53:*

[24] *«Հայոց աշխարհ», 13.07.2002:*

[25] Հասրաթյան Ս., *Գոյամարտ, էջ 6:*

[26] Հարությունյան Մ., *Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 52:*

պաշտպանական ուժերի կազմակերպումը: Այդ նույն թվականի փետրվարի 24-ին, ինչպես նշվել է, ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշում է ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի (ԻՊՈՒ) հրամանատար նշանակել գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանին: Այդ նույն որոշմամբ հաստատվեց նաև ԼՂՀ պաշտպանության խորհրդի կազմը: Ելնելով «ԼՂՀ Նախարարների խորհրդի մասին» օրենքի 24-րդ հոդվածից՝ 1992թ. մարտի 26-ին ԼՂՀ նախարարների խորհրդին առընթեր ստեղծվեց պաշտպանության կոմիտե, որի նախագահ հաստատվեց Սերժ Սարգսյանը: ԼՂՀ պաշտպանության կոմիտեն առանց հապաղելու ձեռնարկեց ինքնապաշտպանական ջոկատների միավորման, նյութատեխնիկական բազայի ստեղծման և կազմակերպչական այլ խնդիրների լուծման աշխատանքներին:

ԼՂՀ պաշտպանության կոմիտեի գլխավոր և ամենաառաջնահերթ խնդիրը դարձավ Շուշիի ազատագրումը և Ստեփանակերտի հյուսիսային կողմում գտնվող ադրբեջանական բնակավայրերում տեղակայված կրակակետերի ոչնչացումը: Դա հայ ինքնապաշտպանական ուժերի կողմից հերոսաբար իրագործվեց մայիսի 8-9-ը, և բացվեց Շուշի-Լաչին-Գորիս ճանապարհը: 1992թ. մայիսի 9-ը համարվեց ԼՂՀ պաշտպանական բանակի ստեղծման օր: Արդեն հունիսի վերջին Արցախի բանակում մարտնչում էին շուրջ յոթ հազար ազատամարտիկներ[27]: Արցախի բանակի ամբողջական կազմավորման գործընթացը հանգույցին հասավ այդ նույն թվականի սեպտեմբերին:

3. ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ

Արցախի ազգային-ազատագրական պայքարն իր մեջ ընդգրկել է նաև հայ հասարակական ու քաղաքական բոլոր ուժերը Արցախում, Հայաստանում և Սփյուռքում: Չկար որևէ հասարակական-քաղաքական ուժ, որը չաջակցեր Արցախյան պայքարին՝ սկսած նյութական օգնությունից մինչև մարտադաշտում հերոսաբար կռվելը: Շարժումը միաձույլ դարձրեց տարբեր հայացքների ու համոզմունքների պատկանող հազարավոր մարդկանց, որոնց համար Արցախը Հայաստանի հետ վերամիավորման հիմնախնդիրը դարձել էր ժամանակի հրամայականը: Արցախի հերոսա-

[27] *«Հայաստանի Հանրապետություն», 30.06.1992:*

կան պայքարի պատմությունը ցույց տվեց, որ ճակատագրական պահերին հիրավի կարևոր նշանակություն ունի ժողովրդի միասնությունը: Առանց դրան, թերևս, հնարավոր չէր հաղթանակ տանել թուրք-ազերիների դեմ և ազատություն բերել Արցախին: Ակնհայտ է, որ Արցախյան շարժումն ուղղված չէր Խորհրդային Միության դեմ: Այն նպատակ ուներ Արցախ-Ղարաբաղը դուրս բերել Ադրբեջանի կազմից: Ահա թե ինչու հայ հասարակական և քաղաքական ուժերը պաշտպանում էին արցախահայությանը ու նպաստում նրա հաղթանակին:

Արցախյան շարժմանը սատար կանգնել՝ նշանակում է ամուր կապվել ազգային խոր արմատների ու մեր ժամանակների աշխարհաքաղաքական իրադարձությունների հետ: Հենց դրա համար էլ 20-րդ դարի ութսունական թվականների վերջին և իննսունականների սկզբին հայ հասարակական ու քաղաքական ուժերը թեքվեցին դեպի Ղարաբաղյան շարժումը: Թե այդ ուժերն ինչ քաղաքական շահեր ու նպատակներ էին հետապնդում, դա կարևոր չէ: Պարզապես, մեզ հետաքրքրում է շարժմանը նրանց անմիջական մասնակցության և հաղթանակին նպաստելու իրողության համազգային ըմբռնումը: Եվ քանի որ Ղարաբաղը միայն հիմնահարց չէ, այլ նաև ճակատագիր ու գոյության խնդիր, ուստի անհրաժեշտ էր հաղթական ավարտին հասցնել հայության գոյապայքարը:

Արցախյան պայքարում կարևոր դեր է ունեցել մանավանդ Հայ հեղափոխական դաշնակցությունը, որը հանդիսացել է պայքարում առանձնացվող ուժերից մեկը: Արցախյան պայքարի հենց սկզբից դաշնակցությունը մեծ աշխատանք է կատարել սփյուռքում՝ համագործակցելով այնտեղ գործող մյուս քաղաքական ուժերի հետ: 1988թ. սեպտեմբերին հայ ավանդական մյուս կուսակցությունների հետ հանդես գալով համատեղ հայտարարությամբ՝ Երևանի ցուցարարներից պահանջում էին վերջ տալ գործադուլներին և հանրահավաքներին՝ համոզված լինելով, որ Արցախի հարցը պետք է լուծվի Կրեմլում: Անկասկած, այդ հայտարարությունը դժգոհություն առաջ բերեց Երևանում, որովհետև սկսեցին սփյուռքահայ քաղաքական ուժերին մեղադրել «դավաճանության» մեջ: Դա մի այնպիսի ժամանակաշրջան էր, երբ Հայկոմկուսը հեղինակազրկվել էր ժողովրդի աչքին: Մինչդեռ Հայ հեղափոխական դաշնակցությունը ուներ «ազգային–ազատագրական պայքարի հարուստ կենսափորձ, որ զինք կը յատկանշեր հայ իրականութեան մեջ գործող բոլոր մյուս քաղաքական

ուժերէն»[1]: ՀՅԴ-ն ստանձնեց ծանր, միաժամանակ սուրբ պատասխանատվություն մյուս հասարակական ուժերի և քաղաքական կուսակցությունների համեմատությամբ: Արցախցիներին օդ ու ջրի պես հարկավոր էր զենք և զինամթերք: ՀՅԴ-ն կարողանում էր այդ դժվարին խնդիրը լուծել և պայքարի միջոցներ հասցնել Արցախ: 1989թ. դեկտեմբերին գրված մի փաստաթղթից հստակ երևում է, որ այն ժամանակ դաշնակցությունը կողմնակից էր ժամանակավոր սառեցնել Ղարաբաղյան պայքարը, մարզը թողնել միութենական իշխանությունների ուղիղ ենթակայության տակ, փորձել դուրս գալ շրջափակումից, բացել երկաթուղին, կապ հաստատել Իրանի հետ, հնարավորություններ ստեղծել արտասահմանյան ներդրումների համար և ուժեր գործադրել առաջիկա 4-5 տարում դուրս գալ ճգնաժամից և այլն: Ըստ դաշնակցության՝ միայն դրանից հետո կարելի կլիներ վերադառնալ «հայկական հողերի խնդրին», բայց արդեն լայն պլանով[2]: Սակայն մինչ այդ՝ 1988թ. օգոստոսին, Աթենքում տեղի ունեցած ՀՅԴ 24-րդ ընդհանուր ժողովը որոշում էր ընդունել վերադառնալ «Դէպի Երկիր»: Համառ պայքարից հետո ՀՅԴ-ն հայրենիքում հանգրվանեց միայն 1990 թվականին: Մինչ այդ ստեղծվել էին բաժանմունքներ, որոնք կատարում էին կուսակցության գլխավոր մարմնի հրահանգները, որոնցից ամենակարևորը Արցախի ինքնապաշտպանությանն աջակցելն էր: Իսկ երբ Արցախում ստեղծվեց պետականություն, արդեն ՀՅԴ-ն գործում էր նրա հետ[3]:

Կատարելով 1988թ. օգոստոսի 24-ի ընդհանուր ժողովի որոշումը՝ Դաշնակցության գործիչները արդեն 1989թ-ին Արցախում ստեղծել էին ֆիդայական ջոկատների ցանց: Դա կատարվում էր անաղմուկ և արցախցիների ջերմ աջակցությամբ ու մասնակցությամբ: Միայն հետո՝ 1997թ., ԼՂՀ արտաքին գործերի նախարար Արկադի Ղուկասյանը հայտարարեց, թե «Հ.Յ. Դաշնակցությունը Արցախ եկած առաջին կուսակցությունն է: Մենք զենքի պէտք ունէինք, անոնք մեզի զենք բերին»[4]: 1989թ. հուլիսին ՀՅԴ բյուրոն հայտարարեց, թե Դաշնակցությունը Արցախում է և «հայ ժողովրդի յեղափոխական կամքը եւ ոգորումները մարմնացնելու պատմական իր պատասխանատվութեան վրայ»: Ապա՝ «Հնչում է ժամը արցախեան շարժման հասունացման... Հնչում է ժամը համազգային միասնամ պահանջատիրութեան, ոչ մէկ խուսափում արտօնեալի և պատմական այդ պատասխանատվութենէն»[5]:

ՀՅԴ բյուրոյի, ՍԴՀԿ Կենտրոնական վարչության և ՌԱԿ Կենտրոնական վարչության 1990թ. հունվարի 25-ին Խորհրդային Միության Գերագույն խորհրդի նախագահությանն ուղղված համատեղ հեռագրում նշված է, որ երկու տարի է, ինչ արցախահայությունը ծանր օրեր է ապրում: Արցախը, որ մնում է Ադրբեջանի կազմում, Ստալինի մեղքով է: Սումգայիթից մինչև Կիրովաբաադ հայերի սպանդ է կազմակերպված: Խորհրդային Միության անտարբերությունը զարմանք և վրդովմունք է առաջ բերում: Հայ ժողովուրդը ոչ մի ատելություն չունի Ադրբեջանի ժողովրդի նկատմամբ: Հայ ազգային երեք կուսակցությունները մտահոգված են Լեռնային Ղարաբաղի և այն Հայաստանին միացնելու հարցով[6]:

ՀՅԴ-ն հնարավորին բոլոր միջոցներով պաշտպանում էր Արցախի ազգային-ազատագրական պայքարը և արցախցիների իրավունքները: 1992թ. ամռանը, երբ ՀՀ ԳԽ նստաշրջանում քննարկվում էր Արցախի ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դիրքորոշման հարցը, ՀՅԴ պատգամավորական խմբակցությունը, հանդես գալով հայտարարությամբ, բոլոր պատգամավորներին կոչ արեց անշեղորեն քննարկել ԼՂՀ ճանաչման հարցը և չդադարեցնել խորհրդարանի աշխատանքը մինչև որոշակի արդյունքի հասնելը[7]:

Երբ Արցախում վիճակն ավելի ծանրացավ, 1992թ. ամռանը հրավիրված Դաշնակցության 25-րդ ընդհանուր ժողովը հանձնարարեց Հայաստանում գործող իր ուժերին այնտեղ հզորացնել ինքնապաշտպանության ջոկատները: Մինչ այդ՝ 1990թ. սեպտեմբերի 2-ին, ՀՅԴ-ն դիմելով հայ ժողովրդին, ընդգծել էր Արցախին սպառնում է մահացու վտանգը: Նա գտնում էր, որ հնարավոր է բոլոր միջոցներով նպաստել Արցախի ինքնապաշտպանության գործին, բարձրացնել արցախահայության դիմադրական կորովը, ինչպես նաև նպաստել մարզի տնտեսական հզորացման

[1] «Ազդակ», 20 փետրվարի, 1998, Բացառիկ, էջ 10:
[2] ՀՀ ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 34, թ. 79:
[3] «Ազդակ», էջ 8:
[4] Նույն տեղում, էջ 11:

[5] Նույն տեղում:
[6] «Դրոշակ», 1990, N21, էջ 2-3:
[7] Նույն տեղում, N5, 1992, էջ 15:

ծրագրին: 1990թ. դեկտեմբերին ՀՅԴ-ն հանդես գալով «Խոսք հայ ժողովրդին» հայտարարությամբ, հավաստեց, որ Դաշնակցությունը «ավելի քան պատրաստ է մինչև վերջին շունչ քայլելու նուիրման իր ճանապարհին»[8]:

1990 թվականից ավելի էր ծանրացել արցախահայության վիճակը: Խորհրդային ուժերի աջակցությամբ ազերիները ճնշման տակ էին վերցրել Ստեփանակերտը, Հադրութը, Մարտունին, Ասկերանը և այլ բնակավայրեր: Քաղաքական և ռազմական ճնշումը Արցախին կանգնեցրել էր Ադրբեջանին վերաենթարկվելու վտանգի առաջ: Սակայն արցախցիները մերժեցին այդ բոլոր սպառնալիքներն ու սադրանքները: Այդ ժամանակ էլ որոշվեց, ինչ էլ որ լինի, ազերիներին դուրս քշել երկրամասից, որին էլ նվիրվեց նաև դաշնակցությունը: 1991թ. առաջին կեսին Լեռնային Ղարաբաղը, Գետաշենն ու Շահումյանը Հայաստանի հետ ունեին օդային կապ: Հենց այդ ժամանակ՝ 1991թ. մայիսի 1-ին, ՀՅԴ բյուրոն և ՀՅԴ Հայաստանի ԿԿ-ն հայտարարությամբ հանդես եկան, ըստ որի կուսակցությունը կազմակերպչական իր բոլոր կարողությունները դնում է Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի ենթակայության տակ՝ Արցախ-Շահումյանի հայության պաշտպանությունը պետականորեն ապահովելու պահանջով:

Դաշնակցությունը կարևոր դեր խաղաց նաև Ղարաբաղի պաշտպանական բանակի ստեղծման գործում: Եվ երբ Օմարից մինչև Արաքս ընկած տարածքը վեր էր ածվել ռազմաճակատի, Արցախի և Հայաստանի դաշնակցական կոմիտեները զորակոչ հայտարարեցին իրենց շարքերում: Դաշնակցությունը հայտարարեց, որ այս պատերազմում Ղարաբաղը դատապարտված է հաղթելու:

Հասարակական և քաղաքական մյուս ուժերը ևս քիչ ջանքեր չէին գործադրում Արցախի հիմնահարցը դրականորեն լուծելու համար: Նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր խնդրին մոտենալ ավելի հստակ և գործնական: Պայքարի հենց սկզբից առաջ էր եկել կուսակցությունների և հասարակական ուժերի մի նոր հարթություն՝ պահանջատիրություն, ինքնորոշում կամ էլ միացում: Առաջադրված նոր խնդիրներից էր՝ համայն հայությունը մեկ ամբողջություն է, որի մի բաղկացուցիչ մասը հանդիսանում է հայոց Արցախը: Դրանով, փաստորեն, Արցախի բարդույթը դիտ-

[8] *«Ազդակ», էջ 12:*

վում էր որպես համայն հայության գոյատևման խնդիր և ապագայի բանալի: Սփյուռքը լիովին ընդունում էր, որ Արցախի խնդիրը համայն հայության խնդիր է: Եվ ահա հանդես եկած Արցախի անկախության հարցը քննարկվում էր տարբեր ելակետերից: Օրինակ՝ ՀՅԴ-ն, ինչպես միշտ, առաջ էր մղում պահանջատիրություն և Հայ դատ, Ինքնորոշում միավորումը պաշտպանում էր արցախցիների՝ ինքնորոշման իրավունքը, իսկ ԱԺՄ-ն՝ ազգային և համազգային արժեքների վրա հիմնված ժամանակակից պետության ստեղծումը: Պարզապես՝ եթե ՀՅԴ-ն հենվում էր հայրենասիրական զգացումների վրա, ապա ԱԺՄ-ն՝ ընդդիմադիր մոտեցման:

Հայ քաղաքական կուսակցություններից իր որոշ ակտիվությամբ առանձնանում էր Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը, որը 90-ական թվականներին բավականին աշխատանք էր տանում Արցախի հիմնահարցի շուրջ Հայաստանի ընդդիմադիր ուժերը միավորելու ուղղությամբ: Որպես նպատակ առաջ էր քաշել «Ի պաշտպանություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» համահայկական համաժողովի հրավիրումը և դրա միջոցով ընդդիմության «ղարաբաղյան կողմնորոշման ամրապնդումը»:

Հայաստանի ԴԿ-ն 1992թ. հունվարի 24-ին իր նախագահության նիստում հարց դրեց, որ սովի, ցրտի ու մահվան ճիրաններում գտնվող Արցախը պետք է զգա Հայաստանի շունչը[9]: Այդ նիստում ելույթ ունեցած Արցախ-Հայաստան քաղաքական կուսակցության ներկայացուցիչ Սերգեյ Մելքումյանը հայտարարեց, թե ծանր վիճակում գտնվող Արցախին Հայաստանի կողմից ցույց տրվող օգնությունն անբավարար է[10]: Իսկ քաղաքագետ Հակոբ Հակոբյանը շեշտեց, որ Արցախի պայքարը, լինելով ազգային-ազատագրական, պետք է միջազգային ճանաչում գտնի և լայն աջակցություն ստանա: Նա առաջարկեց լայնորեն քննարկել 1989թ. դեկտեմբերի 1-ի որոշումը և այն ընդունել որպես գործողության ծրագիր[11]: «Հայրենիքի միությունից» Ժաննա Ասիրյանը գտնում էր, որ արցախցիներին կփրկի միայն նրանց զինվելը: ԱԻՄ-ի ներկայացուցիչը քաղաքական ուժերից պահանջեց նյութական և ռազմական օգնություն ցույց տալ Արցախին: Առա-

[9] *ՀԱԱ, ֆ. 4335, ց. 1, գ. 12, թ. 4:*
[10] *Նույն տեղում:*
[11] *Նույն տեղում, թ. 5:*

ջարկվեց ստեղծել աշխատանքային խումբ բոլոր շահագրգիռ ուժերի մասնակցությամբ[12]:

1993թ. ապրիլի 10-ին տեղի ունեցած ՀՊԿ առաջին համագումարը համոզված էր, որ «Հայաստանի Հանրապետության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչումը կարևոր նշանակություն կունենա ԼՂՀ-ն միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչելու խնդրում, որն անհրաժեշտ է արցախահայության ինքնորոշման իրավունքի հարգման համար՝ որպես Արցախի հիմնահարցի քաղաքական լուծման իրավունք»[13]:

Ազգային ինքնորոշում միավորումը (ԱԻՄ), 1991թ. ամռանը հանդես գալով հայտարարությամբ, չընդունեց նույն թվականի հուլիսի 16-ի ՀՀ ԳԽ հայտարարությունը՝ արցախահայության պայքարը ազգային-ազատագրական պայքար չճանաչելու և 1989թ. դեկտեմբերի 1-ի որոշումը կյանքում չիրագործելու ու այն սառեցնելու վերաբերյալ իշխանությունների մոտեցումը: Այդ հայտարարության մեջ նաև նշված է, որ Հայաստանի ԳԽ-ն իր վերջին հայտարարությամբ Շահումյանի շրջանն ուղղակիորեն, իսկ ԼՂԻՄ-ն անուղղակիորեն ճանաչում է Ադրբեջանի տարածք: Հայաստանի կառավարությունը կողմնակից է «վերացնել ԼՂԻՄ-ի վերաբերյալ ընդունված հակասահմանադրական», այսինքն՝ 1989թ. դեկտեմբերի 1-ի վերամիավորման մասին պատմական որոշումը: ԱԻՄ-ը անվստահություն է հայտնում ՀՀ Գերագույն խորհրդին, նրա նախագահությանը, նախագահին և Հայաստանի Հանրապետական կուսակցությանը[14]:

1991թ. մայիսի 31-ին ձևավորվեց հասարակական-քաղաքական կազմակերպությունների կարծիքների ընդհանրություն հայ-ադրբեջանական հարաբերությունների հնարավոր զարգացման վերաբերյալ: ԱԻՄ-ից Վարդան Անտոնյանի և Արամ Սահիրադյանի կարծիքով՝ դա կարող է կախված լինել երկու հանրապետությունների քաղաքական կարգավիճակից: Նրանք գտնում էին, որ դա ամենից առաջ կապված է Արցախի հիմնահարցի հետ, որն ունի լուծման երկու տարբերակ՝ ինքնորոշում կամ ցեղասպանություն: Նրանք համոզված էին, որ ԽՍՀՄ կազմից դուրս գալու նպատակով անցկացվելիք հանրաքվեի դրական արդյունքը անհրաժեշտ պայման կլինի միջազգային իրավունքի սուբ-

[12] *Նույն տեղում, թ. 5-6:*
[13] *Նույն տեղում, գ. 15, թ. 96:*
[14] *Նույն տեղում, ֆ. 4517, գ. 1, գ. 18, թ. 56:*

յեկտ դառնալու և հնարավորություն կտա Հայաստանին վերաբերող բոլոր հարցերը ԽՍՀՄ ներքին խնդիրների շրջանակներից դուրս բերել միջազգային ասպարեզ: Նրանք նպատակահարմար էին գտնում Արցախի հարցում Ադրբեջանի հետ լեզու գտնել և վիճելի հարցերը լուծել միայն քաղաքական ճանապարհով[15]:

ՀՀՇ նեկայացուցիչ Դավիթ Շահնազարյանի կարծիքով՝ Հայաստանի և Ադրբեջանի Հանրապետություններում պետք է բացառվեր երրորդ կողմի միջամտությունը: Նա պահանջում էր՝ այդ երկու հանրապետությունների ներկայացուցիչները հանդիպեին և արտահայտեին իրենց ժողովուրդների պահանջները: Դ.Շահնազարյանը գտնում էր, որ Արցախի հարցը պետք է կարգավորվի ոչ թե ուժային հակադրման, այլև բանակցությունների միջոցով, և որ Արցախը պետք է լինի բանակցող կողմերից մեկը: Հատկապես, ըստ Դ.Շահնազարյանի, Արցախում մարզային իշխանությունների վերականգնումը պետք է լիներ բոլոր տեսակի բանակցությունների անհրաժեշտ նախապայման[16]:

ՀՅԴ քաղաքական դիվանի ներկայացուցիչ Ռուբեն Հովսեփյանի կարծիքով՝ քանի դեռ Գետաշենի, Մարտունաշենի, Բերդաձորի և Հադրութի շրջաններից բռնագաղթվածները չեն վերադարձել իրենց բնակավայրերը, և նրանց տարածքներում գործում են ազերիներ-օմոնականները, ՀՅԴ-ն չի կարող ընդունել հայ-ադրբեջանական հարաբերությունների հաստատում՝ ինչ մակարդակով էլ դա լինի: Ակնհայտ է, որ հայերի բռնի տեղահանությունը իրենց պատմական բնօրրանից մարդու իրավունքների կոպիտ ոտնահարում է և թե տեղահանության թուրքական եղանակի նորօրյա դրսևորում, որը պիտի դատապարտվի և պատժվի միջազգային օրենքներով[17]

Հայկոմկուսի ներկայացուցիչներ Ա.Սաֆարյանը և Ե.Անանիկյանը պաշտպանում և խրախուսում էին Ադրբեջանի հետ բարիդրացիական հարաբերությունների վերականգնումը: Նրանք առաջարկում են հրավիրել ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի նիստ և քննարկել ստեղծված վիճակը: Նրանց կարծիքով՝ Արցախի հարցում տեղաշարժի կարելի է հասնել միջպետական բանակցությունների, քաղաքական կոնսուլտացիաների և կշռադատ-

[15] *Նույն տեղում, գ. 2, գ. 1, թ. 2:*
[16] *Նույն տեղում, թ. 3:*
[17] *Նույն տեղում, թ. 4:*

ված փոխզիջումների ճանապարհով[18]:

Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության կարծիքով՝ հայ-ադրբեջանական հարաբերությունները կլինեին ավելի թշնամական, եթե հայ ժողովուրդը գլուխ չծռի մի գլխավոր նախապայմանի առաջ, այսինքն, եթե չհաշտվի Արցախի և Նախիջևանի թուրքացման հետ: Այդ կուսակցությունը անմտություն էր համարում հույսեր կապել, թե իբր երկու հանրապետություններում իշխանության կգան «դեմոկրատները»[19]:

ՀԴԿ, ՍԴՀԿ, ԱԻՄ, ՀՀԿ կուսակցությունները և «Արցախ» հայրենակցական միությունը, 1992թ. փետրվարի 5-ին դիմելով նախագահ Լ.Տեր-Պետրոսյանին, ՀՀԽ-ին և ՀՀԿ-ին կոչ էին անում անհապաղ ճանաչել ԼՂՀ-ն և նրա հետ հաստատել միջազգային համակողմանի հարաբերություններ, գործի դնել քաղաքական ու դիվանագիտական բոլոր լծակները, հասնել ԼՂՀ-ի դե ֆակտո և դե յուրե ճանաչմանը Ռուսաստանի Դաշնության և այլ պետությունների կողմից, ԼՂՀ-ի անվտանգությունն ու նրա սահմանների անձեռնմխելիությունն ապահովելու նպատակով անհապաղ դիմել աշխարհի բոլոր պետություններին, Հայաստանի Հանրապետության կառավարության արտաքին քաղաքական գործունեության կարևորագույն խնդիրներից համարել ԼՂՀ-ի՝ իբրև միջազգային իրավունքի սուբյեկտի և արցախահայության ազգային-ազատագրական շարժման ճանաչումը, ՄԱԿ-ի և այլն, հասարակական կազմակերպությունների ուշադրությունը հրավիրել Արցախում Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների ոտնահարման վրա և ջանքեր գործադրել Արցախի հիմնահարցի քաղաքական կարգավորման ուղղությամբ[20]:

1988թ. փետրվարի 20-ին ԱԻՄ-ի նախագահի պաշտոնակատար Պարույր Հայրիկյանը Մ.Գորբաչովին հղած հեռագրում նշել է, որ Քուռ գետից հարավ ընկած հայկական տարածքներն ուրիշներին է տրվել Մոսկվայի կամքով: Մոսկվան էլ պիտի ուղղի այդ սխալը: Սակայն տասնամյակներ շարունակ մեր սպասումը չիրականացավ: Ներկայումս Արցախի բնակչությունը ինքնորոշման իրավունքով վճռել է միանալ Հայաստանին: Հետևապես՝ պետք է «անհապաղ վավերացնել Լեռնային Ղարաբաղի բնակ-

[18] Նույն տեղում, թ. 5:
[19] Նույն տեղում, թ. 6:
[20] Նույն տեղում, գ. 2, թ. 4-6:

չության որոշումը»[21]: ԱԻՄ-ը գտնում էր, որ Մոսկվան ոտնահարել է Արցախի ինքնորոշման իրավունքը և հիմնահարցը ցանկանում է լուծել այնպես, ինչպես լուծվել է արևմտահայության և Նախիջևանի հարցը: ԱԻՄ-ը պնդում էր, որ Լեռնային Ղարաբաղի մարզային խորհուրդը սահմանադրական որոշումով ինքնորոշվել է, պաշտոնապես դուրս է եկել Ադրբեջանի կազմից և միացել Հայաստանին, որը պետք է ճանաչում գտնի: Այդ նշանակում է, որ Արցախի վերամիավորումը Հայաստանին պետք է ճանաչել դե ֆակտո, այսինքն՝ արդեն կատարված փաստ[22]: Իսկ երբ 1989թ. հունվարի 12-ի ԽՍՀՄ ԳԽ հրամանագրով արձակվեցին ԼՂԻՄ իշխանությունները, և սահմանվեց կառավարման հատուկ ձև, ԱԻՄ-ն իր պաշտոնական հայտարարությամբ այն բնորոշեց որպես «Արցախի ձերբակալությունը սահմանադրությամբ օրինականացնող ակցիա», և որ Կրեմլը այդ հրամանագրով Ղարաբաղը դարձյալ բռնի կերպով անջատում է Խորհրդային Հայաստանից ու ստեղծում «բռնավարչություն»: Անգա նշված է, որ «մարզի մշակութային, տնտեսական և ընկերային զարգացմանը Հայաստանի ունենալիք կապը կամ մասնակցությունը, որպիսիք հնարավոր էր ԼՂԻՄ-ի նախկին կարգավիճակով, այժմ կախված է մնում խունտայի քմահաճույքից»: Դեռ ավելին՝ փետրվարի 21-ին և հուլիսի 18-ին ոտնահարվեց ԼՂԻՄ-ի բնակչության ինքնորոշման իրավունքը, իսկ հիմա բռնավարչախումբը հայերին զրկում է իրենց արդար իրավունքների համար քաղաքական պայքարը շարունակելու իրավունքից և հնարավորությունից: ԱԻՄ-ը կոչ էր անում այդ հրամանագիրը չեղյալ համարել, քանի որ «Արցախի հարցի արդարացի միակ լուծումը բնակչության կամքի անվերապահ կատարումն է»[23]:

ԱԻՄ-ի 1991թ. հուլիսի 10-ին արած հայտարարության մեջ նշված է, որ Արցախը գտնվում է մահվան օղակի մեջ, և նրան սպառնում է կործանում, եթե հայրենիքը պետականորեն չօգնի նրան: Նա կոչ էր անում «սատար կանգնել հերոսական Արցախի ժողովրդին, որոնք մորթվում, անարգվում, բռնաբարվում և խոշտանգվում են թուրք ելուզակների կողմից»[24]: ԱԻՄ-ը կողմ էր ԼՂՀ-ն ճանաչել որպես անկախ պետություն, որպես միջազգային իրա-

[21] Նույն տեղում, թ. 3:
[22] Նույն տեղում, թ. 14:
[23] Նույն տեղում, թ. 18-19:
[24] Նույն տեղում, թ. 55:

վունքի սուբյեկտ և «շարունակել ջանքերը Արցախի հիմնահարցի քաղաքական կարգավորման ուղղությամբ»[25]:

Հայաստանի քաղաքական ընդդիմադիր ուժերը իրենց ջանքերը համատեղ գործադրում էին ճանաչել Արցախի Հանրապետությունը և ամեն գնով պաշտպանել Հայաստանի սահմանները[26]: Նրանք, 1993թ. հունիսին հանդես գալով կոչով, շեշտում են, որ Հայաստանի հիշական իշխանությունը հանրապետությունը հասցրել է կործանման եզրին: Միակ փրկությունը նրա հրաժարականն է հօգուտ ազգային համաձայնության իշխանության:

Հայ քաղաքական ուժերը, 1992թ. ամռանը հանդես գալով համատեղ կոչով, միջազգային հանրությանը տեղեկացրին, որ հակառակորդը նոր մեծ ուժեր է նետել Լեռնային Ղարաբաղի դեմ, որպեսզի բնաջնջի հայկական հերոսական եզերքը: Արցախի վիճակը դառնում է օրհասական: Միայն հայ ժողովրդի մարտական բոլոր ուժերի աջակցությամբ ԼՂՀ նորակազմ բանակը կարող է ջախջախիչ պատասխան տալ թշնամուն: Ստեղծված իրավիճակը, ասված է այդ կոչում, հայ ժողովրդից պահանջում է վեր կանգնել քաղաքական ու գաղափարական տարաձայնություններից, լարել բոլոր ուժերը և ազգովին զինվորագրվել Արցախի ինքնապաշտպանության սրբազան գործին: Որպես նշանաբան կոչ է արվում միասնության և հաղթանակի: Հայտարարության մեջ շեշտվում է, որ բոլոր արցախցիները և հայրենի հողի համար կռվելու պատրաստ յուրաքանչյուր հայ քաջորդի պետք է պատրաստ լինեն «արցախյան մարտադաշտ մեկնելու, մեր երկիրն ու ազգային արժանապատվությունը պաշտպանելու համար ներկայանալ զորահավաքի նորաստեղծ միջկուսակցական շտաբ...»[27]:

Արցախյան գոյապայքարում ուրույն տեղ ունի «Արցախ-Հայաստան» քաղաքական կուսակցությունը (ՀՔԿ), որը ձևավորվել է 1992 թվականին: Հենց սկզբից կուսակցությունը անհրաժեշտ էր գտնում կապերն ամրապնդել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների միջև: Կայուն կապ էր ստեղծվել կուսակցության և Հայաստանի Գերագույն խորհրդի անդամ արցախցի պատգամավորների միջև: Երբ 1992թ. ապրիլի 13-ին ՀՀ խորհրդարանի նիստում նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը

[25] *Նույն տեղում, գ. 52, թ. 14-15:*
[26] *Նույն տեղում, գ. 67, թ. 3:*
[27] *Նույն տեղում, գ. 2, գ. 2, թ. 35:*

հայտարարեց, թե Արցախի պաշտպանության հարցը Արցախի ժողովրդի գործն է, այն քննարկվեց նույն օրը տեղի ունեցած կուսակցության ընդհանուր ժողովում, և խստորեն դատապարտվեց նախագահի այդ դիրքորոշումը[28]:

Կազմակերպությունը աշխատանքներ էր տանում Հայաստանի կողմից ԼՂՀ-ն ճանաչելու համար: 1992թ. ապրիլի 28-ին կուսակցության ժողովում լսվեց Լենսեր Աղալովյանի, Սերգեյ Մելքումյանի և Ալեքսանդր Մանասյանի կազմով հանձնաժողովի զեկուցումը, որը ապրիլի 24-ին մասնակցել էր ՀՀ ԳԽ Արցախի հանձնաժողովի նիստին: Այդ նիստին մասնակցել էին նաև մյուս քաղաքական ու հասարակական ուժերի ներկայացուցիչները: Նիստին ներկա էին նաև ԳԽ նախագահ Բ.Արարքցյանը և ԼՂՀ ԳԽ նախագահ Օ.Եսայանը: Պարզվում է, որ բոլոր կուսակցություններն էլ կողմնակից էին ճանաչել Արցախի անկախությունը, բացի ՀՀՇ-ից: Այդ ուժի ներկայացուցիչ Դավիթ Շահնազարյանը պնդել է, թե ԼՂՀ-ն ճանաչելու համար պահը հարմար չէ: Հանձնաժողովի նախագահ Ս.Բաղդասարյանը և տեղակալ Ս.Զոլյանը առաջարկել էին բանակցություններ հրավիրել ՀՀ և ԼՂՀ խորհրդարանների միջև և քննարկել ԼՂՀ ճանաչման հարցը: Իսկ Բ.Արարքցյանը առաջարկեց այդ հարցով զբաղվել միայն Արցախում ղեկավար ընտրվելուց հետո[30]: Հետագա ընթացքն ապացուցեց, որ ՀՀՇ-ն ոչ մի անգամ չի ցանկացել ճանաչել Արցախի Հանրապետությունը: Հայաստանի կողմից ԼՂՀ-ի ճանաչման հարցում հետևողական էր նաև ԼՂ Հանրապետության առաջին նախագահ Արթուր Մկրտչյանը, որը նույնիսկ այդ առթիվ գրություն էր ուղարկել Հայաստանի Հանրապետության իշխանություններին[31]: Հայաստանում ԼՂՀ-ի լիազոր ներկայացուցիչ Մանվել Սարգսյանը հանդես եկավ մի հայտարարությամբ, որը փաստորեն բողոքի նոտա էր: Նա նշեց, որ ՀՀ ղեկավարները Արցախի անունից ինչ-որ հայտարարություններ են անում և ուղարկում այլ տեղեր, որն անընդունելի է: Նա պահանջեց վերջ տալ ոչ ընդունելի նման դիվանագիտությանը[32]: Կուսակցության ժողովը ստեղծեց մի հանձնաժողով, որը զբաղվում էր Արցախի տնտեսությանը և պաշտպանությանը օգնություն ցույց տալու գործով:

[28] *Նույն տեղում, ֆ. 4514, գ. 9, գ. 2, թ. 8:*
[30] *Նույն տեղում, թ. 21-23:*
[31] *Նույն տեղում, թ. 24-25:*
[32] *Նույն տեղում, թ. 26:*

1992թ. հունիսին «Արցախ-Հայաստան» կուսակցության ընդհանուր ժողովը, լայնորեն քննարկելով «Դրությունը Արցախում և Շահումյանում» հարցը,մերկացրեց ազերիների և Ռուսաստանի ուժերի հակահայ գործողությունները, ինչպես և այն երկրների իշխանություններին, որտեղից ազերիների շարքում վարձու զինվորներ էին կռվում արցախահայության դեմ: 1992թ. հոկտեմբերի 10-ին կուսակցության ժողովում քննարկվելով «Իրավիճակը Արցախում» հարցը՝ խիստ քննադատության ենթարկվեց «Ղարաբաղ» կոմիտեն, որը, ծնվելով Արցախի ազգային-ազատագրական շարժումից, դարձել էր այդ շարժման հակառակորդ: Նշվեց, որ «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Էդուարդ Եգորյանը, արտահայտելով կոմիտեի կարծիքը, հայտարարել է, թե Արցախի ազգային-ազատագրական շարժումը դարձել է իրենց խանգարող հիմնական գործոն[33]: Կուսակցության ընդհանուր ժողովն այն տեսակետն է հայտնում, որ հանրապետության այսօրվա ղեկավարները, որոնք հիմնականում «Ղարաբաղ» կոմիտեի անդամներն են, չեն կարող փրկել ոչ Արցախը և ոչ էլ Հայաստանը: Այս վիճակից դուրս գալու միակ ելքը կոալիցիոն կառավարության ստեղծումն է: Կրկին ՀՀ իշխանություններից պահանջում էր ճանաչել Արցախի Հանրապետությունը[34]:

«Արցախ-Հայաստան» ՀՔԿ-ի նախաձեռնությամբ 1992թ. հոկտեմբերի 10-ին տեղի ունեցած ծննդով արցախցի մտավորականության հանրահավաքն ընդունեց բանաձև, որն անընդունելի էր համարում Հայաստանի Հանրապետության իշխանությունների վարած քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նկատմամբ և պահանջում էր Արցախի հիմնահարցին նվիրված հետագա բոլոր բանակցություններին ԼՂՀ-ի լիիրավ մասնակցությունը, ՀՀ իշխանությունները հանդես գան հայտարարությամբ, որտեղ շեշտվեր, որ Արցախը երբեք Ադրբեջանի տարածք չի եղել, Արցախի պաշտպանության հարցում մի կողմ դնել կուսակցական, ընկերային, նեղ վրեժխնդրական քաղաքականությունը և մի հզոր բռունցք դարձնել համայն հայությանը՝ նրա հոգեմտավոր, ֆիզիկական ներուժը նպատակաուղղելով Արցախի հուսալի պաշտպանությանը, հիմնահարցի լուծմանը և այլն[35]:

[33] *Նույն տեղում, գ. 3, թ. 10:*
[34] *Նույն տեղում, թ. 11:*
[35] *Նույն տեղում, թ. 21-23:*

Կուսակցությունն իր մի շարք փաստաթղթերում հողին հավասարեցրեց Աշոտ Բլեյանի դիրքորոշումը Արցախի հիմնահարցի վերաբերյալ, մանավանդ նրա հեղինակած նամակը՝ ուղղված Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարներին: Բլեյանի՝ Արցախի նկատմամբ դիրքորոշումը բնորոշվեց որպես բացահայտ դավաճանություն[36]:

«Արցախ-Հայաստան» ՀՔԿ-ն ջանքեր էր գործադրում միավորել ՀՀ գործող քաղաքական և հասարակական ուժերին ու նրանց գործողություններն ուղղել դեպի Արցախի պաշտպանության հիմքը: 1993թ. հունվարի 26-ին, քննարկելով դրանից մեկ շաբաթ առաջ տեղի ունեցած «Արցախի հիմնահարցը և Հայաստանի հասարակական-քաղաքական կազմակերպությունների դիրքորոշումը» օրակարգով կազմակերպված խորհրդակցության արդյունքները, այն գնահատեց դրական: Խորհրդակցությանը մասնակցած հասարակական և քաղաքական ուժերի ներկայացուցիչները միաձայն ընդունեցին «Արցախ-Հայաստան» ՀՔԿ-ի ներկայացրած պահանջները՝ հնարավորին բոլոր ուժերով օգնել Արցախի ազգային-ազատագրական պայքարին և այն հասցնել հաղթանակի[37]: Ամենից առաջ անդրադարձան Արցախի տնտեսության, մանավանդ արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման հարցերին: Այդ խնդիրը ավելի հանգամանորեն քննարկվեց մարտի 29-ին «Կլոր սեղանի» շուրջ տեղի ունեցած հավաքում, որին ներկա էին քաղաքական և հասարակական ուժերի ներկայացուցիչներ, մտավորականներ, մասնագետներ և գիտնականներ: Կուսակցության վարչության նախագահ Լենսեր Աղալովյանը, ներկայացնելով Հայաստանում գտնվող սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, հիմնականում դա կապեց Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի իշխանությունների անհետևողական, ապազգային քաղաքականության հետ և հիմնավորեց այն տեսակետը, որ կառավարության վարած քաղաքական կուրսը «Հայաստանի այսօրվա վիճակի բարեփոխման հուսադրող ոչ մի երաշխիք չի խոստանում: Դեռ ավելին՝ գնալով վիճակը վատանում է, դառնում անելանելի»[38]: Զարմանալին այն է, որ ՀՀ իշխանավորները դա փորձում էին բացատրել Լեռնային Ղարաբաղում ծավալվող ազգային-ազատագրական

[36] *Նույն տեղում, թ. 32:*
[37] *Նույն տեղում, թ. 47:*
[38] *Նույն տեղում, գ. 4, թ. 5:*

պայքարով: Իսկ չէ՞ որ այդ պատերազմում ձեռք բերված հաջողություններում, անշուշտ, կա՝ոչ միայն Հայաստանի, այլև ողջ հայ ժողովրդի ներդրումը: Հայաստանում կատարվող անարդարությունները, շարունակեց Լ.Աղալովյանը, ապօրինությունները, հանցավոր ամենաթողությունը «բացատրել Արցախում ծավալվող պատերազմով, մեր կարծիքով, սխալ է: Դա նույնիսկ հայ ժողովրդին Ղարաբաղի դեմ լարելու մի փորձ է»[39]: Բոլոր ելույթ ունեցողներն էլ Հայաստանի իշխանություններից պահանջեցին երկիրը դուրս բերել ստեղծված ծանր վիճակից և ուժեղացնել օգնությունը Լեռնային Ղարաբաղին:

Հասարակական և բարեգործական կազմակերպությունների մեջ, թերևս, արժանի տեղ ունեին «Գթություն» բարեգործական կազմակերպությունը և «Արցախ» հայրենակցական միությունը: Այս վերջինիս հիմնական խնդիրը հանդիսանում էր հնարավոր բոլոր միջոցներով օգնել հայրենի Արցախին[40]: Սկզբնական շրջանում միությունը ջանում էր Արցախից դուրս բնակվող արցախցիների կապերն ամրապնդել հարազատ երկրամասի հետ, օժանդակել հայրենի երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացմանը, նրան ցույց տալ ֆինանսական և տեխնիկական օգնություն, նպաստել, որպեսզի միության յուրաքանչյուր անդամ մասնակցություն ունենա Արցախի մշակույթի և հոգևոր արժեքների վերականգնման, պահպանման և քարոզչության գործին, ապա հետագայում հիմնական է դառնում երկրամասի պաշտպանությանն աջակցելու խնդիրը: Միությունը, որն ամենածանր տարիներին ղեկավարում էին Ալեքսանդր Մանասյանը, ապա՝ քանդակագործ Յուրի Հովհաննիսյանը և պատմաբան Համլետ Հարությունյանը, ձեռք էր բերում սնունդ, հագուստ, պաշտպանության միջոցներ, ուղարկում Գետաշեն-Շահումյան, Լեռնային Ղարաբաղ և Բերդաձոր: Լաչինի միջանցքը բացվելուց հետո վիճակը միանգամայն փոխվում է: Իրար հետևից Արցախ էին ուղարկվում սննդամթերքներով, պաշտպանության միջոցներով և շինանյութերով բեռնված ավտոմեքենաների շարասյուներ: «Արցախ» հայրենակցականը նաև ճնշում էր գործադրում Հայաստանի ՀՀՇ-ական իշխանությունների վրա և Արցախի իրավունքները պաշտպանում միջազգային ատյաններում: «Արցախ» հայրենակցականի հետ համագործակցում էին տասնյակ այլ հասարակական կազմակերպություններ, այլազգիների ընկերություններ և ներդնում ֆինանսական ու նյութական միջոցներ: Հայրենիքը պաշտպանելու համար «Արցախ» հայրենակցականը կազմակերպել է 60 ջոկատ, որոնցից հասցրեց զինել 10-12-ը և փոխադրել Արցախ: Այդ ջոկատները հերոսաբար մասնակցեցին Քարին տակի, Մարտունու, Ասկերանի, Մարտակերտի և Հադրութի մի շարք մարտական գործողություններին: «Արցախ» հայրենակցականին օգնում էին տասնյակ բարերարներ, որոնց ներդրումները հասել էին 42 միլիոն ռուբլու[41]: Արժե հիշատակել կոշիկի «Մասիս» արտադրական միավորման 7-րդ ֆաբրիկայի տնօրեն Ժյուլվերն Հովհաննիսյանին, որը նյութական օգնություն է ցույց տվել Հադրութի գումարտակին, «Արաբո», «Սասուն», «Ապարան», «Փարբի», «Աշտարակ» և Թալինի մի քանի ջոկատների, մարտնչող ազատամարտիկներին է ուղարկել մի քանի հազար զույգ կոշիկ, 18 տոննա ձեթ, 17 միլիոն ռուբլու պաշտպանության միջոցներ, 120 տոննա բենզին, 75 տոննա սոլյարկա, տարբեր տեսակի 9 մեքենաներ, մեկ ճաշարանի սարքավորում, վիրավորներին և հիվանդներին ցույց է տվել 15 մլն ռուբլու ֆինանսական օգնություն և այլն[42]: Նա այդ ամենը կատարել է «Արցախ» հայրենակցական միության աջակցությամբ: Ասենք նաև, որ միությունը նպաստել է 57 հազար բռնագաղթվածների հայրենի օջախներ վերադարձնելուն:

Ընդհանրապես, Հայաստանում քաղաքական ուժերի միջև տեղի ունեցող պայքարը և նրանց հին ու նոր վեճերի տեղափոխումը Արցախ՝ ազգային-ազատագրական պայքարի առաջին գիծ, շատ էր անհանգստացնում արցախցիներին: Արցախի Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղից 25 հոգու ստորագրությամբ 1992թ. սեպտեմբերի սկզբին ՀՀ ԳԽ-ին, ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությանը, ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեին և Հայաստանի քաղաքական կուսակցություններին ուղղված բաց նամակում հեղինակները համոզմունքով ու ականատեսի վստահությամբ հայտնում են, որ ԼՂՀ-ում վերջին շրջանի ռազմական անհանգստությունները Շահումյանում, Մարտակերտում առաջին հերթին, բացատրվում են հենց դրանով: «Պետական ազգային բանակի,– գրում են նրանք,– միասնական ռազմավարության

[39] *Նույն տեղում, թ. 6:*

[40] *Մանրամասն տե՛ս* Աբրահամյան Հ., *Երբ հայրենիքը վտանգի մեջ է, Ե., 1997:*

[41] *Նույն տեղում, էջ 81:*

[42] *Տե՛ս հեղինակի անձնական արխիվ:*

փոխարեն մենք ունենք կուսակցական տեղամասերի բաժանված ռազմազինվորական կազմավորումներ... Դատապարտելով արցախյան հիմնահարցի կուսակցական շահարկումը՝ անհրաժեշտ ենք համարում ժամանակավորապես կասեցնել կուսակցությունների գործունեությունը Արցախում... Մենք գտնում ենք, որ դա պետք է կատարվի բոլոր կուսակցությունների համաձայնությամբ և այն բանի գիտակցությամբ, որ մեր առաջիկա ողջ պատմության համար պետք է ստեղծենք պատմական նոր մտածելակերպ, ազգային նոր մարտավարություն, որը բացառում է ազատագրական պայքարում կուսակցական շահերի ռազմաճակատի գիծ տեղափոխելը»: Արցախցիները կոչ էին անում. «Համազգային կուսակցական կողմնորոշումից զերծ բանակի ստեղծումն Արցախում և այստեղ կուսակցական պայքարի սառեցումը մինչև կռվի հաղթական ավարտը՝ սա է մեր գոյապայքարի ճշմարիտ ուղին»[43]:

Այստեղ Հայկոմկուսի և ՀՀՇ-ի մասին հանգամանորեն չենք անդրադարձել, որովհետև վերոհիշյալ շարադրանքում բավականին խոսվել է քաղաքական այդ ուժերի այս կամ այն դիրքորոշման մասին:

4. ՀԱՅ ԿԻՆԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ, մանավանդ օտարերկրյա նվաճողների դեմ մղված պայքարում, անգնահատելի դեր է ունեցել հայ կինը: Չի եղել որևէ ճակատագրական իրադարձություն, երբ հայ տղամարդու կողքին կանգնած չլիներ հայ կինը: Մեծն Նժդեհն է ասել. «Մայրերի ափերի մեջ պիտի փնտրել ազգի ճակատագիրը»: Պատմիչ Եղիշեի արտահայտությամբ՝ «Հայոց աշխարհի փափկասուն տիկինները» ոչինչ չխնայեցին հայոց Արցախը ազատ և մայր հայրենիքի հետ տեսնելու համար: Դեռևս ութսունական թվականների կեսերին, երբ կատարվում էր ստորագրահավաք, Արցախի կանայք ջերմորեն ու ոգևորված մասնակցում էին, և Մոսկվա ուղարկված ստորագրությունների ցուցակում կային տասնյակ հազարավոր արցախցի կանանց ստորագրություններ: Թե՛ Արցախում, և թե՛ Հայաստանում տեղի ունեցած հանրահավաքներում հնչում էր հայ կնոջ ձայնը՝ միացում: 1988-ի հունվարին արցախցիների բողոքները

[43] *«Արցախ», 08.09.1992:*

Մոսկվա տանողներից էր Լենա Գրիգորյանը: Նույն թվականի փետրվարի սկզբին Մոսկվա բողոքելու մեկնած պատվիրակության կազմում էին սոցիալիստական աշխատանքի հերոս Գոհարիկ Սարինյանը և դերասանուհի Ժաննա Գալստյանը: 1988թ. փետրվարի 13-ին Ստեփանակերտում տեղի ունեցած առաջին համընդհանուր հանրահավաքի մասնակիցների զգալի մասը կանայք էին, որոնք բքին ու սառնամանիքին, գիշեր ու ցերեկ չէին հեռանում Ստեփանակերտի Լենինի անվան հրապարակից: Հնչում էին Ժաննա Գալստյանի, մանկավարժական ինստիտուտի դասախոս Արզիկ Մխիթարյանի, խոհարար Արաքսյա Աղասարյանի և այլոց կրակոտ կոչերը: Այդ օրերին ակտիվ էին գործում նաև Ստեփանակերտի կուսշրջկոմի երկրորդ քարտուղար Հասմիկ Միքայելյանը, մետաքսի կոմբինատից Գալյա Առստամյանը, մանկավարժական ինստիտուտից Ռոնա Բալայանը և ուրիշներ: Այդ նրանք՝ արցախցի կանայք Ստեփանակերտի Լենինի անվան հրապարակում արտասուքով խնդրեցին ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Գ.Ռազումովսկուն և ԽՍՀՄ ԳԽ նախագահի առաջին տեղակալ Պ.Դեմիչևին հայրենի հողն ազատել թուրքի ճանկերից: Երբեք էլ պատահական չէր, որ, երբ մարտի սկզբին Արցախում ստեղծվեց «Կռունկ» կոմիտեն, հանրահավաքների կազմակերպման հանձնաժողովի նախագահ ընտրվեց Ժաննա Գալստյանը[1]: 1988-ի գարնանային այդ օրերին, Արցախի որ ծայրում էլ լինեիր, ամենուր հավաքված էին կանայք, որոնք քննարկում էին հայրենիքի պաշտպանության հետ կապված հարցեր: Մարտի 6-ին Ստեփանակերտում տեղի ունեցած սգո հանրահավաքում Սվետլանա Պետրոսյանը, Նադյա Բաղդասարյանը, Արզիկ Մխիթարյանը և Ռիմա Քոչարյանն իրենց ելույթներում մերկացրին Սումգայիթի հանցագործներին և պահանջեցին նրանց ենթարկել պատասխանատվության: Մի քանի օր անց՝ մարտի 9-ին, երբ Արցախից նոր պատվիրակություն մեկնեց Մոսկվա, նրա կազմում էին ջուլհակուհի, կուսմարզկոմի բյուրոյի անդամ Սայիդա Օրբելյանը և մարզխորհրդի պատգամավոր, բանվորուհի Տատյանա Սոբոլևան, որոնք ցանկություն ունեին արցախցիների ցասումը հասցնել խորհրդային իշխանավորներին: Արցախահայության պայքարի այդ օրերին կոչերով հանդես էին գալիս երգչուհի Նաիրուհի Ալավերդյանը, Մարտունու շրջանից Անգելինա Հովսեփյանը, Միլվա Բալայանը, Զեմմա Ավետիսյանը, Ժաննա Խա-

[1] Խաչատրյան Ս., *նշված աշխ., էջ 247:*

չատրյանը և հարյուրավոր այլ կանայք: Ստեփանակերտի և մարզի շատ կանայք առանձնապես մեծ նվիրվածություն ցուցաբերեցին 1988թ. փետրվարի 20-ի մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը հրավիրելու գործում:

1988թ. այդ հերոսական օրերին Հայաստանի քաղաքներում և մյուս խոշոր բնակավայրերում տեղի ունեցած հանրահավաքներում ակտիվ էր հնչում մանավանդ կանանց ձայնը: Սիլվա Կապուտիկյանը, Մարո Մարգարյանը, Լյուդմիլա Հարությունյանը, Լարիսա Ալավերդյանը, Գրետա Միրզոյանը, Ալվարդ Պետրոսյանը և շատ ուրիշներ իրենց բոցաշունչ ելույթներով աշխարհի ժողովուրդներին կոչ էին անում սատար կանգնել արցախահայությանը, մարտնչել նրա գոյատևության համար: Երբ 1988-ի փետրվարի 26-ին Մ.Գորբաչովն ընդունեց Զորի Բալայանին և Սիլվա Կապուտիկյանին, վերջինս ԽՄԿԿ Գլխավոր քարտուղարին ներկայացրեց հայ ժողովրդի պահանջը՝ կատարել արցախահայության ցանկությունը և Արցախը վերամիավորել մայր հայրենիքի հետ:

Տարիներ առաջ մեր մի գրքում խոսել ենք երևանցի մի կնոջ մասին, որը, թերևս, արժե մեջ բերել. «Սիրով ու երախտագիտությամբ ենք մտաբերում Երևանի պետական համալսարանի դասախոս Հասմիկ Հարությունյանին, որը, չնայած իր պատկառելի տարիքին, ամեն կերպ աշխատում էր թեթևացնել վիրավորների, որբերի, կարիքավորների և փախստականների վիճակը: Առավոտից մինչև ուշ երեկո նա շարժման մեջ էր. լինում էր նախարարություններում, հիմնարկ-ձեռնարկություններում, պաշտոնյաների մոտ, մշակույթի հաստատություններում, «Արցախ» հայրենակցականի համար ձեռք էր բերում սննդամթերք, հագուստեղեն, դեղորայք, դրամ և այլ միջոցներ»: Ասված է նաև մեկ ուրիշ կնոջ մասին: «Նվիրվածությամբ ու երիտասարդական ավյունով էր աշխատում մանկավարժ, թոշակառու Քնար Աթաբեկյանը, որն ամբողջ օրն անցկացնում էր ծերանոցներում, հիվանդանոցներում, բռնագաղթվածների կողքին: Նա իր հոգատարությամբ... օրինակ էր հանդիսանում, հիացմունք պատճառում շատերին»[2]:

Արցախյան գոյապայքարում քիչ ներդրում չունեն Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի պատգամավոր Գալինա Ստարավոյտովան, հրապարակախոսներ Ինեսա Բուրկովան,

[2] Աբրահամյան Հ., *Երբ հայրենիքը վտանգի մեջ է, էջ 80-81:*

Գալինա Նույկինան, Մոսկվայում գործող զինվորական մայրերի կոորդինացիոն խորհրդի անդամ Լյուբով Կուզնեցովան, Հայաստանի «Զինվորի մայր» հասարակական կազմակերպության կոմիտեի նախագահ Գրետա Միրզոյանը, Հայաստանի բարեկամների ընկերության համանախագահ Գալինա Կուլիկովան և ուրիշներ, որոնք իրենց ճառերով, հոդվածներով ու պրակտիկ գործունեությամբ ոգևորում էին արցախցիներին ու բարոյական սատար կանգնում նրանց:

Արցախահայության ազգային-ազատագրական պայքարին ցույց տված օգնության տեսակետից յուրահատուկ տեղ ունի Անգլիայի Լորդերի պալատի փոխխոսնակ Բարոնուհի Քերոլայն Քոքսը, որը 2005 թվականի սեպտեմբերի դրությամբ 60 անգամ այցելել է Լեռնային Ղարաբաղ՝ ամեն անգամ բերելով դեղորայք, բժշկական սարքավորումներ, սննդամթերք և այլ անհրաժեշտ ապրանքներ: Նա Ստեփանակերտ քաղաքի պատվավոր քաղաքացուհի է:

Երբ 1990թ. սեպտեմբերին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Զորի Բալայանը Մոսկվայում նստել էր հացադուլի, նրա օրինակին հետևել էին նաև Արցախի մի խումբ կանայք: Այդ կապակցությամբ նրանք Մոսկվայի հացադուլավորներից ստացել են հետևյալ հեռագիրը. «Մենք շնորհակալ ենք Արցախի կանանց՝ մայրերին, քույրերին զորավիգ լինելու համար: Այդ դժվարին ժամանակներում Արցախի ժողովուրդը պետք է համախմբի իր բոլոր ուժերն ու կամքը, որպեսզի տոկա մեր ծանր ու տևական պայքարում: Մենք դիմում ենք կանանց՝ դուք որպես մայրեր չպետք է ձեր կյանքը վտանգի ենթարկեք և հացադուլ անեք:

Դուք հարկավոր եք Արցախին: Դուք հարկավոր եք մեր երեխաներին...»[3]:

Բուլղարուհի կինովավերագրող Ցվետանա Պասկալովան Արցախի հերոսական պայքարի մասին նկարահանեց բազմաթիվ փաստագրական նյութեր և ներկայացրեց աշխարհին՝ մերկացնելով թուրք-ազերիների բարբարոսությունները Արցախում: Բնիկ շուշեցի Լևոն Քոչարյանի դուստր, աշխարհահռչակ գիտնական Անդրեյ Սախարովի կին Ելենա Բոնները իրեն ամբողջովին նվիրել է հայրենի Արցախի իրավունքների պաշտպանությանը և ջանքեր չի խնայել աշխարհին համոզել, որ Ադրբեջանի իշխանու-

[3] *«Խորհրդային Ղարաբաղ», 23.09.1990.*

թյուններն Արցախի նկատմամբ իրագործել են ամենադաժան արարքներ: 1988թ. վերջին ամուսնու հետ լինելով Արցախում՝ Ելենա Բոնները էլ ավելի ատելությամբ լցվեց թուրք-ազերիների կատարած վայրագությունների նկատմամբ: Ծննդով արցախցի Լարիսա Ալավերդյանը, 1991թ. ստեղծելով ընդդեմ իրավական կամայականության «Պատանդների պաշտպանության ֆոնդ» հասարակական բարեգործական կազմակերպությունը, օժանդակել է 1800 պատանդների հայրենի օջախներ վերադառնալուն, այդ թվում 20 երեխայի:

Հայ կանայք թե՛ Արցախում, թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում ակտիվորեն մասնակցում էին ցույցերին, հանրահավաքներին, գործադուլներին և համանման բողոքներին: Նրանք իրենց ելույթներում Մոսկվայից և աշխարհից պահանջում էին օգնել և արդարացիորեն լուծել արցախահայության պահանջը: Ժաննա Գալստյանը, 1989թ. մայիսի 11-ին ելույթ ունենալով Մատենադարանի մոտ տեղի ունեցած հանրահավաքում, ներկայացրել է արցախցիների պահանջները, որոնք շարադրված էին Հայկոմկուսի Կենտկոմին և մյուս իշխանավորներին ուղղված նամակում: Այդտեղ անվստահություն էր հայտնվում Հատուկ կառավարման կոմիտեին և ցասումի խոսք ասվում Ադրբեջանի իշխանությունների նկատմամբ[4]: Մայիսի 21-ին դարձյալ Մատենադարանի դիմաց տեղի ունեցած հանրահավաքում բանաստեղծուհի Մարո Մարգարյանը պահանջեց ձերբակալել սումգայիթյան բոլոր հանցագործներին և տալ արժանի պատիժ: Նա միևնույն ժամանակ շեշտեց, որ ոչ մի ժողովուրդ չի գտնվում այնպիսի ծանր վիճակում, ինչպես հայ ժողովուրդը, որի ճակատագիրը պետք է անհանգստացնի համայն մարդկությանը[5]: Իսկ «Արմենպրեսի» թղթակցուհի Մերի Յուզբաշյանը քննադատական խոսք ուղղեց հանրապետական հեռուստահաղորդմանը, որը խուսափում էր ճշմարտությունը ասելուց[6]:

Արցախի կանայք խիստ վճռական էին և պահանջկոտ: Նրանք ոչ մի րոպե չէին դադարեցնում իրենց պայքարը և նամակ-բողոքներով հեղեղում էին խորհրդային բարձրագույն մարմինները և աշխարհի շատ կազմակերպություններ: Նրանք 1990թ. հոկտեմբերին կոչով դիմելով աշխարհի կանանց՝ գրել են. «Հայոց Արցախի կանայք այսօր զինվորյալ են ու ոտքի են ելել հանուն ազատության և խաղաղության, մարդու բնական իրավունքի և կնոջ սուրբ կոչման, որը կյանքեր ծնելու հատկությամբ հակադրվում է խորհրդային բանակի և ադրբեջանցի գրոհայինների համաստիյուռ դերին»: Նրանք, աշխարհի կանանց պատմելով արցախահայության տառապանքների, ձգտումների և անզիջում պայքարի մասին, կոչ էին անում Արցախից հանել Ադրբեջանի ապօրինի կազմկոմիտեին, վերականգնել մարզի խորհրդային իշխանությունը, բացել Արցախը Հայաստանի հետ կապող բոլոր ճանապարհները և ապահովել ռադիոհեռուստատեսության նորմալ աշխատանքը[7]: Արցախի կանայք, դիմելով նաև երկրամասում տեղակայված ԽՍՀՄ ՆԳ նախարարության ներքին զորքերի ստորաբաժանումների անձնակազմին, կոչ էին անում չենթարկվել սադրանքների և հիշեն, որ իրենք էլ ունեն մայրեր ու քույրեր:

Արցախի ճակատագիրը մտահոգում էր շատ-շատերին: 1988թ. մայիսի 11-ին Մատենադարանի մոտ տեղի ունեցած հանրահավաքում ելույթ ունենալով՝ Գալինա Ստարավոյտովան շեշտեց, որ այս պայքարում հայ ժողովուրդը մենակ չէ, երկրի լավագույն և ազնիվ մարդիկ արձագանքում են նրանց պահանջին, ժողովուրդ, որի համար թանկ է դեմոկրատիայի գաղափարները և հումանիզմը[8]:

Առանձնապես ակտիվ և վճռական էր գործում Կանանց հայկական հանրապետական խորհուրդը, որի նախագահությունը, 1991թ. հունվարի 11-ին դիմելով ԽՍՀՄ նախագահ Մ.Գորբաչովին, այլ պաշտոնյաների և ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին, նշում էր, որ Հայաստանի կանայք տոկունությամբ դիմակայում են ցրտին, կիսասովին, սակայն անհանդուրժելի են մեր ժողովրդի դեմ մշտապես ձեռնարկվող լրատվական կեղծ ելույթները: Հայաստանի կանանց ցնցել էր երիտասարդ հղի կնոջ՝ Անժելա Գրիգորյանի սարսափելի սպանության մասին լուրը, մինչդեռ այդ մասին երկրի զանգվածային լրատվամիջոցները լռում էին: Այդ նամակ-բողոքում ցասումով է խոսվում Լեռնային Ղարաբաղում կազմակերպվող հանցագործությունների առթիվ, որի պատասխանատվությունը նախ և առաջ ընկնում էր Ադրբեջանի ղեկավա-

[4] ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 39ա, թ. 15: «Ուրբաթ», 19.10.1990:
[5] Նույն տեղում, թ. 44:
[6] Նույն տեղում, թ. 46:

[7] «Ուրբաթ», 19.10.1990:
[8] ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 39ա, թ. 17:

ության վրա: Պահանջվում էր ԼՂԻՄ-ի վերաբերյալ արդարացի որոշում կայացնել[9]:

1991թ. փետրվարի 20-ին լրացավ ԼՂ Ինքնավար Մարզի մարզխորհրդի պատմական որոշման երեք տարին: Այդ օրը մարդկային ծովը կրկին ալեկոծել էր Ստեփանակերտի Հաղթանակի հրապարակը: Ելույթ ունեցան Ղարմետաքսկոմբինատի բանվորուհի Սվետլանա Պետրոսյանը, պտուղ-բանջարեղենի վերամշակման, մթերման և իրացման ԼՂԻՄ ձեռնարկության գլխավոր հաշվապահ Թամարա Շվեդովան, կոշիկի ֆաբրիկայի բանվորուհի Էլզա Բաղդասարյանը, N 3 մսուր-մանկապարտեզի դաստիարակչուհի Եկատերինա Դուբինինան, որոնք դատապարտեցին Ադրբեջանի իշխանությունների հակահայկական քաղաքականությունը ղարաբաղյան հիմնահարցում և մի անգամ ևս հավաստեցին ողջ արցախահայության անհողդող վճռականությունը՝ համախմբված ու միասնական ուժերով շարունակել արդար պայքարը[10]:

Արցախից պատերազմի և աշխատանքի մի խումբ վետերանների հետ Ռոզա Ավանեսյանը և Գոհարիկ Սարինյանը, հանդես գալով բաց նամակով, առաջարկում էին վերականգնել մարզային իշխանությունները, վերացնել ճանապարհների շրջափակումը, բեկանել Ադրբեջանի բարձրագույն իշխանության բոլոր այն միջոցառումները, որոնք ուղղված էին մարզում ժողովրդագրական իրավիճակի բռնի փոփոխությանը և մարզի տարածքից դուրս բերել ադրբեջանական միլիցիայի հատուկ ջոկատների անվան տակ գործող անօրինական զինված խմբավորումները[11]: Ստեփանակերտ քաղաքից 9 երեխաների մայր Ռ.Ղահրամանյանը «Այլընտրանք չկա» վերտառությամբ նամակում շեշտել է, որ առաջին անգամ չէ, որ կանգնում ենք անարդար բռնության և ամպագոռգոռ կեղծությունների դեմ հանդիման: Մենք մեր հողից հեռանալու ոչ տեղ ունենք, ոչ էլ ցանկություն, իսկ որպես ստրուկ ապրելը անհամատեղելի է մեր բնությանը: Մենք մտադիր ենք ազատ ապրել և գոյատևել այստեղ՝ Արցախում, իսկ եթե հարկ լինի, նաև մեռնել այստեղ, խառնվել

[9] *«Խորհրդային Ղարաբաղ», 12.01.1991:*
[10] *Նույն տեղում, 21.02.1991:*
[11] *Նույն տեղում, 30.04.1991:*

մեր պապերի աճյուններին, մեր արյունով ապահովել մեր զավակների ապագան[12]:

1991թ. մայիսի 9-ին տեղի ունեցած հայ կանանց խորհրդի նախագահության ընդլայնված նիստը, քննարկելով Գետաշենի և Մարտունաշենի հայ ազգաբնակչության բռնի տեղահանման, ինչպես և Հայաստանի սահմանամերձ շրջաններում խորհրդային բանակի կողմից սանձազերծված բռնությունների հետ առնչվող հարցերը, ընդունեց բողոքի դիմում՝ ուղղված ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պերես դե Կուելյարին, Մարդու իրավունքների հանձնաժողովին, կանանց, երեխաների և ընտանիքի հարցերով զբաղվող փորձագետների խմբին, միութենական հանրապետությունների կանանց կազմակերպություններին, լրատվության զանգվածային միջոցներին, որտեղ մասամբ ասված է. «Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակասություններն այս երեք տարիների ընթացքում Կենտրոնի կողմից ոչ միայն չստացան խելամիտ, քաղաքական լուծում, այլև արհեստականորեն փոխադրվեցին ռազմական գործողությունների ոլորտ: Ադրբեջանի ենթակայության հայկական, իսկ այժմ արդեն հենց Հայաստանի գյուղերը դարձել են հարձակումների, թալանի, բռնության օջախներ, որոնք խորհրդային բանակի և ներքին զորքերի ստորաբաժանումների լայնածավալ աջակցությամբ կատարում են ադրբեջանական օմոնականները: Ռազմական գործողությունների ժամանակ օգտագործվում են զրահամեքենաներ, հրետանի, գյուղերը ենթարկվում են տևական շրջափակումների, որի հետևանքով կան բազմաթիվ զոհեր խաղաղ բնակչության շրջանում, տուժում են կանայք, երեխաներ և ծերունիներ...»[13]:

Կանայք և նրանց բազմաթիվ կազմակերպություններ, հանդես գալով հայտարարություններով, բողոք-նամակներով, ցույցերով, աշխարհին ներկայացնում էին Արցախի հիմնահարցը և պետություններից ու քաղաքական ուժերից պահանջում արդարացի լուծել այն, վերջ տալ թուրք-ազերիների մոլեռանդությանը, որոնք փորձում էին արցախահայության ազգային-ազատագրական պայքարին տալ կրոնական երանգ, որը ոչ մի կապ չունի Արցախի բարդույթի հետ: Հայ կանանց հասարակական-քաղաքական կոմիտեի անդամ Մ.Ավդալյանը (Մ.Վանե), հանդես գալով

[12] *Նույն տեղում, 02.05.1991:*
[13] *«Հայաստանի Հանրապետություն», 11.05.1991:*

«Հայ կանայք բողոքում են» հայտարարությամբ, նշել է, որ ՄԱԿ-ը փորձում է ստիպել արցախցիներին ուժերը դուրս բերել Քելբաջարից և դրանով իսկ վտանգի առաջ կանգնեցնել Արցախի ողջ բնակչությանը: Մինչդեռ դա քաղաքական չարաշահում է, այլ ոչ թե խաղաղարար քայլ: Իսկ որտե՞ղ է եղել ՄԱԿ-ը, երբ Ադրբեջանը զավթել է Արցախի տարածքի զգալի մասը և բնակչությանը կանգնեցրել ոչնչացման եզրին: Եվ ցավալին այն է, որ այսօր, շարունակում է հեղինակը, ազերիներին թիկունք են կանգնել Հայոց ցեղասպանություն իրագործած թուրքերը: Ելնելով այդ ամենից հայ կանայք իրենց որդիներին կորցրած մայրերի անունից կոչ էին անում բոլորին ճանաչել Ղարաբաղի ժողովրդի իրավունքը՝ իր նախնիների հողի վրա ունենալ անկախ պետություն[14]:

Արցախի կանայք վճռականորեն պահանջում էին Ադրբեջանի բանտերից ազատել անմեղ հայ բանտարկյալներին և պատանդներին: 1991թ. մարտի 8-ին Արցախի կանայք Ադրբեջանի իշխանությունների դեմ բողոքի ցույց կազմակերպեցին Ստեփանակերտում և պահանջեցին այդ օրերին ձերբակալված և Շուշիի բանտ տարված երեք անմեղ հայորդիներին ազատել: Այդ օրը Ստեփանակերտի կանանց բողոքի երթին միացան քաղաքի բոլոր բնակիչները:

1991թ. Արցախում հիմնվել է Մայրության ֆոնդը Հասմիկ Միքայելյանի կողմից: Այն հազարավոր երեխաների ցույց է տալիս օգնություն, մանավանդ որբերին և բազմազավակ ընտանիքներին: Բարեգործական այդ կազմակերպությունը նույնիսկ ստեղծեց, ինչպես նշվել է, «Մարտական երախտագիտության Արցախի քաջորդիներին» մեդալը, որի առաջին հանձնումը տեղի ունեցավ 1993թ. մայիսի 9-ին՝ Շուշիի ազատագրության տարեդարձի օրը[15]:

Բազմաթիվ արցախցիներ, այդ թվում և կանայք, թողել էին հայրենի ոստանը և հանգրվանել Հայաստանում կամ Ռուսաստանում: Զոհված և մարտնչող ազատամարտիկների մայրեր էմմա Աբրահամյանը, Բելա Մեսրոպյանը, Էլլա Գրիգորյանը, Նադյա Մեհրաբյանը, Ասկինա Առաքելյանը, Սվետլանա Պետրոսյանը, Ժասմեն Պետրոսյանը, Գյուլչորա Իսրայելյանը և Ալինա Միրզոյանը, դիմելով հանրապետությունը թողած հայրենակիցներին,

[14] *"Голос Армении", 13.07.1993.*

[15] *«Հայաստանի Հանրապետություն», 15.05.1993:*

նշել են, որ Արցախի հպարտ ու ազատասեր ժողովուրդը հինգերորդ տարին է, դաժան, արյունալի պայքար է մղում իր նախնիների հողում ապրելու և ստեղծագործելու իրավունքի համար: Թշնամին փորձում է ոչնչացնել Արցախի ամբողջ հայությանը և ընդմիշտ լուծել դարաբաղյան հիմնահարցը: Նաև նշված է, որ Արցախում հայտարարված է ռազմական դրություն, որտեղ յուրաքանչյուր բնակիչ պարտավոր է մոբիլիզացնել բոլոր ուժերը, որպեսզի մեր երկիրը դառնա հզոր բռունցք, անառիկ բերդ: Միայն այդ դեպքում կարող ենք պաշտպանել մեր հողը և զավթիչներից ազատել բռնագրավված բնակավայրերը: Սակայն այսօր կան մարդիկ, որոնք գտնվում են հայրենի օջախներից հեռու վայրերում և սպասում են լավագույն ժամանակների: Արցախի կանայք, դիմելով նրանց, կոչ էին անում վերադառնալ հայրենի օջախները և նվիրվել նրանց պաշտպանությանը: Նրանք հավատացած էին, որ Արցախի մայրերի ձայնը կլսեն և կարձագանքեն իրենց կոչին[16]:

Արցախցիները, օգտագործելով աշխարհի հասարակական-քաղաքական կազմակերպությունների ամբիոնները, արդարացիորեն ներկայացնում էին իրենց պահանջները: 1995թ. սեպտեմբերի 5-ին Լոս Անջելեսում կայացած Ամերիկայի Հայկական համագումարի հոբելյանական 25-րդ նիստում Արցախի համալսարանի դասախոս Արգիկ Մխիթարյանը հայտարարել է. «Արցախցին երբեք չի հրաժարվի նախնյաց հողում ազատ և ապահով ապրելու իր դարավոր երազանքից, չի ընդունի իրեն պարտադրվող ազգային փոքրամասնության նվաստացուցիչ կարգավիճակը: Դա ծաղր է արդարության սկզբունքին... Ադրբեջանը պարտավոր է ընդունել..., որ Արցախը Հույս է, Հավատ է, Հայրենիք է...»[17]:

Արցախահայության պայքարին սատար էին կանգնում աշխարհասփյուռ կանայք, որոնք իրենց ձայնը բարձրացնում էին հանուն Արցախի ազատության: 1992թ. հոկտեմբերին Երևանում տեղի ունեցավ կանանց միջազգային հանձնաժողովի նիստ, որի աշխատանքներին ԼՂՀ-ից մասնակցեց Հասմիկ Միքայելյանը: Այն քննարկեց ժողովրդի կենսապայմանների բարելավման, ժողովրդավարության հաստատման և ամրապնդման, Հայաստանում բնապահպանության, պատերազմի և խաղաղ գոյակցության

[16] *«Արցախ», 18.09.1992:*

[17] Բաբայան Բ., *Արցախի կինը պատմության մեջ, Եր., 1998, էջ 90:*

հարցերը: Հանձնաժողովին մասնակցում էին աշխարհի կանանց միջազգային ինտերնացիոնալ ֆեդերացիայի վարչության անդամներ Սառա Հարդերը, Դեբորա Ուելչը, Հայ կանանց միջազգային ասոցիացիայի վարչապետ Բարբարա Քետչյանը, փոխվարչապետ Իվա Մեծորյանը, ԱՄՆ-ի կանանց ազգային խորհրդի նախագահ Մարիամ Չեմբեռլենը, Հարվարդի և Բոստոնի համալսարանների դասախոսներ Սյուհեն Հորբերը և Զոուն Մեքսը, Անկախ պետությունների համագործակցության և Մերձբալթյան հանրապետությունների կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նախկին բաքվեցի, Սումգայիթի և Բաքվի ջարդերին նվիրված գրքի հեղինակ Իրինա Մովսիսյանը իր ելույթում շեշտեց, որ չպատժված Սումգայիթը ծնեց նոր աղետներ ԽՍՀՄ տարածքում, իսկ Հասմիկ Միքայելյանը պատմեց, թե սահմռկելի ինչ ահավոր պայմաններում են ապրում Արցախի կանայք, մայրերն ու երեխաները: Արդեն հինգերորդ տարին է, ինչ խաթարված է մանկական, դպրոցական և բուժհիմնարկների գործունեությունը: Նա իր ելույթում աշխարհի կանանց միջազգային կազմակերպություններից պահանջեց կոնկրետ գործարար մասնակցություն ցուցաբերել Արցախի հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը: Նա հարց դրեց՝ կանայք բոլոր լծակները օգտագործեն և ճնշում գործադրեն պետական համակարգերի վրա՝ գլխավոր նպատակ համարելով կանխելու պատերազմը և հաստատելու խաղաղություն: Հանձնաժողովը դատապարտեց Ադրբեջանի գործողությունները, արգելված զենքի օգտագործումը խաղաղ բնակչության դեմ և հռչակագիր ընդունելով՝ աշխարհի կանանց կոչ անում համախմբել դեմոկրատական ուժերին հանուն մարդու իրավունքների հաստատման և խաղաղության, ընդդեմ բռնության և պատերազմի[18]:

Արցախյան գոյապայքարի տարիներին հարյուրավոր կանայք կատարում էին հասարակական-քաղաքական լայն աշխատանք, որոնց գործունեությունը նվիրված էր հայրենիքի պաշտպանությանը: 1989թ. օգոստոսի 16-ին տեղի ունեցած ԼՂԻՄ ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում Ազգային խորհրդի անդամներ էին ընտրվել Նորա Ավագումյանը (մետաքսկոմբինատից), Նախշուն Ավանեսյանը (Սոսի կոլտնտեսության նախագահ), Սիլվա Բալայանը (Մարտունու երիտշրջկոմի քարտուղար), Էլմիրա Վահանյանը (Մարտակերտի երիտ-

[18] *«Արցախ», 23.10.1992:*

շրջկոմի քարտուղար), Լյուդմիլա Գրիգորյանը (բժշկուհի), Զոյա Պետրոսյանը (Մարտակերտի N 1 դպրոցի ուսուցչուհի), Գրետա Սահակյանը (մարզային կինխորհրդի նախագահ) և Լիդիա Սարգսյանը (Ստեփանակերտի N 8 դպրոցի ուսուցչուհի): Նրանցից ոմանք տղամարդկանց հետ միասին ոչ միայն լայն մասսայական աշխատանք էին տանում մարզի բնակչության շրջանում, այլև զենքը ձեռքին մարտնչում էին թշնամու դեմ:

Այդ տարիներին ծնվեցին «Գթություն», «Հիշատակ», «Մայրություն» հիմնադրամներն ու մարդասիրական կազմակերպությունները, որոնց նախաձեռնողները հանդիսացել են կանայք: Այդ կազմակերպությունները օգնություն էին ցույց տալիս կարիքավոր ընտանիքներին, որբ երեխաներին, հաշմանդամներին: Կինխորհրդի նախաձեռնությամբ «Գթություն» բարեգործական միությունը և Մայրության հիմնադրամը կազմակերպել էին կանանց խմբեր, որոնք գործում էին գուլպաներ և ուղարկում ազատամարտիկներին: Կանանց նախաձեռնությամբ էր, որ 1991թ. ձմռանը Ստեփանակերտի գրեթե բոլոր բարձրահարկ շենքերի նկուղները մաքրվեցին, և այնտեղ ապաստան գտան հազարավոր մարդիկ: Քաղաքի կանայք էին պաշտպանում գործարանները, ֆաբրիկաները, մաքրում փողոցները, նույնիսկ կատարում գիշերային հերթապահություն[19]:

Պատմական այն ծանր օրերին, երբ հազարավոր կանայք երեխաներին և հիվանդներին խնամում էին նկուղներում, Ստեփանակերտի միջքաղաքային հեռախոսակայանի կանանցից և ոչ մեկը չլքեց իր աշխատատեղը, չնայած անընդհատ գտնվում էին «ալազանների» և «գրադների» հարվածների տակ: Հպարտությամբ է խոսվում Էլմիրա Հարությունյանի, Գրետա Կարապետովայի, Օֆելյա Բարխուդարյանի, Գալինա Բաղդասարյանի, Նաիրա Ծատուրյանի և կապի մյուս աշխատող կանանց մասին[20]:

Ազգային-ազատագրական պայքար... Ծանր ու դաժան տարիներ... Սակայն դիմացան: Դիմացավ հայ կինը՝ իր ուսերի վրա տանելով անասելի դժվարություններ: Երբ 1992թ. հունիսին Շահումյանի կանայք Գյուլիստանից հեռանում էին դեպի Հաթերք, նրանք իրենց ուսերի վրա տանում էին երեխաներին, հիվանդներին և ծերերին: Այդ վիճակում էին նաև մյուս գյուղերից նահանջող կանայք: Հայրենական մեծ պատերազմի տարիներին

[19] *Նույն տեղում, 16.01.1993:*
[20] *Նույն տեղում, 30.09.1993:*

ռազմաճակատ էին մեկնել 1800 արցախցուհիներ, իսկ 500 կին էլ վիրավորներին խնամում էին էվակուացիոն հոսպիտալներում: Արցախի ազգային-ազատագրական պայքարը ռազմի դաշտ տարավ նաև հարյուրավոր կանանց, որոնք հերոսաբար մարտնչեցին Գետաշենում, Շահումյանում, Մարտակերտում, Շուշիում, Ասկերանում, Մարտունիում, Դիզակում, Բերդաձորում: Այդ ծանր օրերին Հայաստանից և այլ տեղերից Արցախ էին գալիս ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք և իրենց կյանքը նվիրաբերում Արցախի պաշտպանությանը: Վերոհիշյալ Վիկտոր Կրիվոպուսկովը հարգանքով է խոսում Երևանի գյուղակադեմիան ավարտած Էջմիածնի շրջանի Արշալույս գյուղից Նազիկ Ամիրյանի մասին, որը, մի խումբ համագյուղացի տղաների հետ եկել էր Հադրութի շրջանի Դուդուկչի գյուղը՝ իբրև այդտեղ կոոպերատիվ կազմակերպելու և գյուղմթերքներ գնելու համար, սակայն իրականում նրանք գյուղը պաշտպանում էին թուրք-ազերիների անընդհատ հարձակումներից: Նազիկը տղաների հետ ձերբակալվում է 1990թ. նոյեմբերի 17-ին խորհրդային ՆԳ նախարարության զինվորների կողմից «անձնագրային ստուգման» ժամանակ, տարվում Ստեփանակերտ, որտեղ տղաներին հաջողվում է հիվանդանոցից փախչել, իսկ Նազիկը մնում էր ներքին ուժերի հսկողության տակ: Նրա կյանքը փրկելու համար քիչ ջանքեր չէին գործադրել ընդհատակյա ուժերը, նաև ինքը՝ Վիկտոր Կրիվոպուսկովը: Քաջարի Նազիկ Ամիրյանը մնում էր անդրդվելի և ամբողջ մեկ ամիս տանում էր այդ ծանրությունը[21]:

Ինչպես չհպարտանալ Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան հայկական դրամատիկական թատրոնի դերասանուհի Ժաննա Գալստյանի խիզախություններով, որի անունը մեզ հայտնի է: «Կռունկի» անդամ Ժաննան իր կրակոտ, շիտակ ու սկզբունքային ելույթներով, բոցաշունչ ճառերով ոգևորում էր հանրահավաքների եկած տասնյակ հազարավոր մարդկանց: Երբեք էլ պատահական չէր, որ Ադրբեջանի հանրապետական դատախազությունը դրամական խոշոր պարգև էր խոստացել նրան, ով Բաքու կհասցներ Ժաննա Գալստյանին[22]: Արցախյան պատերազմին մասնակցած կանանց մասին գրած իր մի հոդվածում Արցախի պետական համալսարանի դասախոս Ռոնա Բալայանը գրել է. «Արցախի հերոսամարտում առաջին վաշտի

[21] **Кривопусков В.,** *Мятежный Карабах, с. 93-99.*
[22] *«Արցախ», 24.12.1992:*

հրամանատար Բեկորի (Աշոտ Ղուլյանի) կողքին հայտնվեց և քաջաբար մարտնչեց Արցախ աշխարհի պարծանքն ու պատիվը մարմնավորող, թատերական բեմահարթակը ռազմադաշտով փոխարինած ռազմի դաշտերում հրաշքներ գործող Ժաննա Գալստյանը»[23]: Նա կանանց կոչ էր անում և ոգեշնչում անսահման հավատ ունենալ գալիք հաղթանակների նկատմամբ: Ամբողջ ազատագրական պայքարի ընթացքում Ժաննան զենքը ցած չդրեց: Վիկտոր Կրիվոպուսկովը իր գրքում հատուկ վերնագիր է նվիրել Ժաննային, որտեղ պատմվում է, թե ինչպես է նա 1990թ. դեկտեմբերի 16-ի գիշերը ձերբակալվել Բերդաձորում և տեղափոխվել Ստեփանակերտ: Նրա փրկության համար պայքարում էին այդ օրերին Մոսկվայում գտնվող Զորի Բալայանը, Ստեփանակերտում՝ Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը, նաև ինքը՝ Վիկտոր Կրիվոպուսկովը: Եվ նա փրկվեց, ու մինչև պատերազմի վերջ փոխգնդապետ Ժաննա Գալստյանը մնաց մարտական դիրքերում[24]:

Ծանր և դժվարին ուղի է անցել արցախյան բանակի N 46492 զորամասի հրամանատարի թիկունքի գծով տեղակալ, պատերազմի բովով անցած, գնդապետի զինվորական աստիճանի հասած Էլմիրա Աղայանը: Նա հնարավորին բոլոր միջոցներով օգնում էր, հոգատար և ուշադիր վերաբերմունք էր ցույց տալիս հայրենի հողը պաշտպանող զինվորների նկատմամբ:

1991թ. ամռանը ծանր վիճակ էր ստեղծվել Շահումյան-Մարտակերտում: Ազերի օմօնականները խորհրդային բանակի աջակցությամբ բռնություններ և անօրինություններ էին իրագործում հայ բնակչության նկատմամբ: Օգոստոսի սկզբին թշնամին կրկին շրջապատեց Հաթերքը: Հայ ինքնապաշտպանական ուժերի գլխավորությամբ Հաթերքի կանայք ստեղծեցին «Փառանձեմ» ջոկատը, որի անունը կնքել են գյուղի բնակիչները՝ ելնելով հայոց Փառանձեմ թագուհու անունից: Ջոկատի կազմակերպիչներից էին Քնարիկ Սիմոնյանը և Սիրանույշ Առուշանյանը և ուրիշներ: Ջոկատի մեջ ընդգրկվել էին 65-70 տարեկան

[23] *Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Ստեփանակերտ, N1, 2001, էջ 101:*
[24] **Кривопусков В.,** *նշված աշխ., էջ 111-113: Արցախյան գոյապայքարի 10-րդ տարեդարձի առթիվ Ժաննա Գալստյանը պարգևատրվել է «Արիության համար», իսկ ՀՀ նախագահի հրամանագրով՝ «Մովսես Խորենացու» մեդալներով: 1998թ. նա արժանացել է Բրիտանական միջազգային կազմակերպության կողմից սահմանված «Ոսկե սիրտ» շքանշանի:*

Ռոմելա Մակյանը, Լարիսա Դավթյանը, Հասմիկ Հարությունյանը, Նուբար Հակոբյանը, Գյուլնարա և Անահիտ Իսկանդարյանները, Էդիլյա Հայրապետյանը, Սվետլանա և Անահիտ Պետրոսյանները, Զոյա Օհանյանը: Գյուղ լուր էր հասել, թե օմօնականները գյուղացիներից պատանդ էին տարել: Քնարիկ Սիմոնյանը մի խումբ կանանց հետ ներկայանում է հրամանատար գեներալին և բանակցում: Հրամանատարի տեղակալ ադրբեջանցին ծխացող ռումբ է նետում կանանց կողմը: Չնայած 7-8 կին վիրավորվել էին, բայց ետ չնահանջեցին: Նրանք պահանջում են ազատել գյուղից պատանդ տարված 13 հոգուն: Այդ ժամանակ գյուղին էր մոտենում ռուս զինվորներով լի մի ավտոմեքենա: Կանայք փակում են մեքենայի ճանապարհը: Քնարիկ Սիմոնյանը, բարձրանալով մեքենա., զինվորներին բացատրում է, որ նրանց «ձեռքով կատարվող հանցագործությունների համար պատասխանատվությունն ընկնում է ոչ միայն նրա հեղինակների, այլ նաև այդ հանցագործությունները կատարողների վրա»[25]: Հենց այդ ժամանակ էլ մյուս կանայք զինաթափում են 43 զինվորներին, որոնց օգնության է հասնում Հաթերքի տղամարդկանց ջոկատը՝ Արամ Գրիգորյանի ղեկավարությամբ:

Հաթերքում տեղի ունեցածի մասին օգոստոսի 14-ին հաղորդվեց աշխարհի բազմաթիվ լրատվամիջոցներով: Արցախ շտապեցին մի քանի ռուս գեներալներ, ինչպես նաև ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր, գնդապետ Վիլեն Մարտիրոսյանն ու Հայաստանի պաշտպանության կոմիտեի նախագահ Վազգեն Սարգսյանը: Հաթերք բերվեցին բավականին թվով զինվորականներ և սպառնացին գյուղը լրիվ ոչնչացնել, եթե ազատ չարձակեն գերված զինվորներին: Սակայն այդ սպառնալիքն արդյունք չտվեց: Օգոստոսի 16-ին Երևանի Ազատության հրապարակում տեղի ունեցած բազմահազարանոց հանրահավաքը պաշտպանեց հաթերքցիների այդ խիզախ ձեռնարկումը: «Փառանձեմի» անունից հեռագիր ուղարկվեց Մ.Գորբաչովին, Բ.Ելցինին և Զինվորական մայրերի կոմիտեին ու հաղորդվեց, որ «Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի մի խումբ կանայք ստիպված էին, իբրև ծայրահեղ միջոց, պատանդ վերցնել ավելի քան 30 զինվորների ու սպաների ԽՍՀՄ ՆԳ նախարարության ներքին զորքերից:

Ադրբեջանական օմօնի բանդաները ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի օգնությամբ երկար ժամանակ պատանդ էին վերցնում

[25] *«Հայաստանի Հանրապետություն», 27.02.1998:*

հայերին և հանձնում ադրբեջանցիների տնօրինությանը: Այսպես. վերջին երեք ամսվա ընթացքում օմօնականները ներքին զորքերի աջակցությամբ բռնագաղթեցրել են տասնյակ հայկական գյուղերի բնակիչների, կալանքի տակ առել 500 մարդու: Ժողովրդի համբերության բաժակը լցվել է: Այսօր պատանդ դարձան նրանք, ովքեր բռնության գործիք էին օմօնականների ձեռքին:

Արցախի մայրերը մեկ պայման են դնում՝ վերադարձնել իրենց զավակներին, որոնք գտնվում են ադրբեջանական կալանատներում...»[26]:

Օգոստոսի 18-ին Հաթերք ժամանեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, գնդապետ Ն.Սիմոնովը զինվորականների մի խումբ մայրերի հետ: Նրանք, ծանոթանալով պատանդ զինվորականների վիճակի հետ և համոզվելով, որ նրանք գտնվում են տանելի պայմաններում, բանակցությունների մեջ մտան «Փառանձեմի» հետ: Գեներալ Ստարիկովը հայտնում է, որ Վ.Պոլյանիչկոն պահանջել է բանակը գործադրել Հաթերքի դեմ և ազատել պատանդ զինվորներին: Ի վերջո ստիպված էին ընդունել «Փառանձեմի» առաջարկած պայմանները և կատարել պատանդների փոխանակում[27]: Այդ օրերին Թալինի շրջանի Ներքին Սասնաշեն գյուղի կանայք գլխաշոր են ուղարկել «Փառանձեմ» ջոկատին հետևյալ մակագրությամբ. «Ընդունեք ձեռագործ այս շալը և խնդրում ենք տալ այն ֆիդայուհուն, որը կռվել գիտե սատունցիաբար»:

Հետո «Փառանձեմի» շատ կանայք մասնակցել են բազմաթիվ մարտերի: Հաթերքի ազատագրման ժամանակ Սիրանույշը վիրավորվեց, սակայն մարտադաշտից չհեռացավ: Գեներալ-մայոր Ժորա Գասպարյանը հիշում է. «Հաթերքից Սիրանույշ անունով մի ճերմակահեր կին միշտ մարտի դաշտում էր՝ ավտոմատն ուսած, պատահել է՝ թեժ մարտի ժամանակ հարցրել եմ՝ Հաթերքից քանի՞ հոգի կան, միայն այդ կինն է եղել...»[28]: Սիրանույշ Առաքելյանը, լինելով Սուրիկ Հայրապետյանի ջոկատի զինվոր, հենց առաջին օրվանից կատարում էր ամենատարբեր առաջա-

[26] *"Голос Армении", 17.08.1991.*

[27] *Նույն տեղում, 17.22.1991: Հետագայում Արկադի Տեր-Թադևոսյանը նշել է, որ «Փառանձեմի» գործողությունները կատարվել է ինքնապաշտպանական ջոկատի ակտիվ մասնակցությամբ («Առավոտ», 27.05.1998):*

[28] Մարգարյան Ս., *Մարտակերտ. Չհայտարարված պատերազմի կիզակետ, էջ 22:*

դրանքներ: Նա ժամապահ էր, հետախույզ, կռվել է առաջին գծում: Նա իր համարձակությամբ և անվեհերությամբ ոգևորում էր ջոկատայիններին: Նա 1993թ. փետրվարի 20-ին խիզախաբար մասնակցեց հայրենի հաթերքի ազատագրման համար մղված մարտերին: Սիրանույշը մասնակցել է նաև Չլդրանի, Կիչանի, Մեհմանայի, Գետավանի, Մաղավուզի, Ումուբլուի, Զարդախաչի, Հարությունգոմերի և այլ գյուղերի կռիվներին: Դաղիվանքի ազատագրության օրը նրա կամարների տակ օրհնեց Արցախի ազատարար հերոս տղաներին: Սիրանույշ Առաքելյանը այն խիզախ կինն է, որը, կատարելով հրամանը, կարողացավ կապը վերականգնել «Անտառի տղաների» և «Գյուղի տղաների» միջև: Նրան շատերը կոչում էին Սորաքույր[29]:

Արժե հիշել նաև Էլմիրա Ամիրջանյանին: Նա ապրում էր Քարին տակ գյուղում ամուսնու՝ Մարտինի և երեխայի հետ գյուղի ծայրամասում գտնվող իրենց տանը: 1992թ. հունվարի 26-ին հակառակորդը երբ անցավ հարձակման, առաջինը վառեցին նրանց տունը: Մարտինը, Էլմիրան և երեխան իջան նկուղ, որովհետև անընդհատ կրակոցի տակ էին և չէին կարող դուրս գալ: Էլմիրան ամուսնուն խնդրում է վերջին փամփուշտները պահել իրենց համար: Նկուղ ներխուժած ասկյարը սպանվում է: Էլմիրան ձեռքին բռնած կացինը ցած է դնում և վերցնում ամուսնու ավտոմատը: Վառվող գերանները սկսում են թափվել: Երեխան՝ Միհրիկը, ձայն չէր հանում: Էլմիրան թթվի տակառից հանում է ջուրը և լցնում իրենց վրա, որ չվառվեն: Բարեբախտաբար երեկոյան կողմ թշնամին նահանջեց: Ոչ ոք չէր պատկերացնում, թե ինչ հրաշքով փրկվեց այդ ընտանիքը[30]:

Այն սարսափելի օրերին, երբ Արցախը բոլոր կողմերից ռմբակոծվում էր, Ստեփանակերտի փողոցներում երևացին զինվորական համազգեստով, ավտոմատն ուսած, ուսապարկով աղջիկներ: Դրանք «Կանանց գումարտակի» զինվորներն էին, 13 աղջիկներ՝ Կարինե Դանիելյան, Ռիտա Տերտերյան, Սաֆուրա Շահրամանյան, Մարգարիտա Քարամյան, Վարդուշ Գևորգյան, Լյուբով Դանիելյան, Եվգենյա և Գայանե Առստամյաններ, Մարգարիտա և Արեգա Սարգսյաններ, Անահիտ Պետրոսյան, Անահիտ Թամրազյան և Սիաննա Մնացականյան: Նրանցից Ռիտա Տերտերյանը (Բաղալյան) աշխատում է ԼՂՀ ներքին գործերի նա-

[29] *«ԼՂ Հանրապետություն», 13.06.1995:*
[30] *Նույն տեղում, 02.09. 1996:*

խարարության փորձակրիմինալիստական բաժնի պետ, ավագ փորձագետ-ձգաբան: Նա պատմում է, որ մի օր Ղարմետաքսկոմբինատի պատին կպցված էր հայտարարություն՝ «Հավաքագրվում է աղջիկների գումարտակ»: Նա 1992թ. սեպտեմբերին ներկայանում է Կոմանդոսին Արկադի Տեր-Թադևոսյանին և նրան համոզում իրեն՝ երեք երեխայի մորը, որի հայրը թշնամու արկից զոհվել էր նույն թվականի ապրիլի 12-ին, ընդունել աղջիկների գումարտակում: Պարապմունքները տեղի էին ունենում Շուշի քաղաքում: Պարապմունքներն ավարտվելուց հետո նա, 35 կմ ճանապարհ կտրելով, հասնում է Եղծահող: Աղջիկներին ոգևորում էր գումարտակի հրամանատար Գագիկ Գրիգորյանը: Հետո 1993-ի ծմռանը, Ռիտան ոտքերը ցրտահարվելու պատճառով տեղափոխվում է հիվանդանոց ու երկար ժամանակ բուժվում[31]:

Արցախյան ազատագրական պատերազմը բացահայտեց շատ կամավորուհիների: Դրանցից էր Բաքվում ծնված, սակայն արցախյան ոգով մեծացած Ստալինա Ասրյանը, որը ծնվել է 1973թ. սեպտեմբերի 11-ին: 1989-ին Բաքվից արձակուրդ գալով Ստեփանակերտում բնակվող քրոջ մոտ այլևս հրաժարվեց վերադառնալ: 1990-ի հունվարին ծնողները մի կերպ փրկվելով կոտորածից, մեկ ճամպրուկով կարողացան դուրս գալ այդ դժոխքից: Այդ ժամանակ Ստալինան սովորում էր առևտրի ուսումնարանում: Մի օր ուսումնարան գնաց Աշոտ Ղուլյանը և ասաց, որ իրենց բուժքույրեր են պետք: Ստալինան առանց տատանվելու տվեց իր համաձայնությունը: Նա սկսեց հաճախել բուժքույրական կուրսեր: Հետո դարձավ Սամվել Հարությունյանի հրամանատարությամբ կազմավորված Կենտրոնական պաշտպանական շրջանի երկրորդ գումարտակի բուժքույրը: 1992թ. սեպտեմբերից սկսած Ստալինան գումարտակի կազմում մասնակցեց Դրմբոնի, Չլդրանի, Գյուլաթաղի, Վաղուհասի, Մանիքլուի, Սեյսուլանի, Ումուդլուի, Զանյաթաղի, Մաղավուզի, Հարությունագոմերի, Սարսանգի և այլ գյուղերի համար մղված ծանր մարտերին: Վերջին մարտից առաջ հրամանատարությունը որոշել էր Ստալինային թողնել թիկունքում: Սակայն վերջինս գերադասեց լինել հայրենյաց պաշտպան մարտիկների կողքին: 1993թ. մարտի 30-ին Հակոբ Կամարի գյուղի մոտերքում հրամանատարական մեքենան պայթեց ականից, և զոհվեցին գումարտակի հրամանատարն ու քույր Ստալինան: Հայոց երիտասարդ դուստրը հավա-

[31] *Նույն տեղում, 08.03.1997:*

տարիմ մնաց իր նախնիների քաջազնական, ազատաբաղձ ոգուն ու արժանացավ «Պատերազմի աստվածուհի» անվանը[32]:

Ինչպես կարելի է չխոսել Զուխրա Հայրապետյանի մասին, որը դեռևս 1988թ. փետրվարյան օրերից, լինելով շտապօգնության քույր, բժշկական օգնություն էր ցույց տալիս ցուցարարներին հանրահավաքներում և երթերում: Իսկ հետո, երբ հակառակորդն անցավ հարձակման, Զուխրան զենք վերցրեց հայրենի ոստանը պաշտպանելու համար: Մասնակցեց Կրկժանի, Շուշիի, Ասկերանի և Մարտակերտի շրջանների բազմաթիվ գյուղերի ազատագրության համար մղված մարտերին: Իսկ 1993 թվականից նա Կենտրոնական պաշտպանության շրջանի առաջին գումարտակում ղեկավարում էր բուժկետը: Զուխրան գումարտակի հետ մնաց մինչև 1994թ. վերջը[33]:

Երևանի N 12 պոլիկլինիկայի բուժքույր Աիդա Սերոբյանը՝ երկու երեխաների մայր, 1992թ. հունիսին մեկնեց Արցախ և մինչև 1994թ. հուլիսը այստեղ էր: Իսկ հետո իր ծառայությունը շարունակեց Հայաստանի տարածքում: Նա առաջին կին ազատամարտիկն էր, որը պարգևատրվեց «Մայրական երախտագիտություն՝ Արցախի քաջորդիներին» մեդալով: Նա կռվել է Մարտակերտում, Վերին Հոռաթաղում, Սարսանգում: Նա սիրում է կրկնել. «Կինը ոգեշնչող ուժ է եղել պատերազմի դաշտում... Նույնիսկ վախկոտ տղամարդն էլ կնոջ ներկայությունից ամաչում՝ ձգտում է քաջ երևալ»[34]:

«Արցախ» հայրենակցական միության վարչության անդամ Կարինե Գևորգյանը ծնվել է 1956թ. դեկտեմբերի 7-ին Վարդենիսի շրջանի Խաչաղբյուր գյուղում՝ մանկավարժի ընտանիքում: Պոլիտեխնիկ ինստիտուտն ավարտելուց հետո աշխատում էր «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման հերթափոխի պետ, մասնագիտությամբ քիմիկոս-ինժեներ էր: Նա «Կանաչների» միության անդամ էր, շարժման առաջին մասնակիցներից: Կարինեն դեռ Երևանում ակտիվ աշխատանք էր տանում վիրավոր ազատամարտիկներին և բռնագաղթվածներին օգնություն ցույց տալու համար: 1992թ. նոյեմբերին մեկնեց Արցախ՝ որպես զինվոր՝

[32] Վարդումյան Հ., *Կին ազատամարտիկներ, Եր., 2003, էջ 8-9: Առստամյան Գ., Սպասում, Եր., 1996, էջ 209: «Ազատ Արցախ», 11.09.1999 և այլն:*

[33] *Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, N1, 2001, էջ 102:*

[34] *«Արցախ», 12.11.1992: «ԼՂ Հանրապետություն», 24.08.1996:*

սկզբում Կոմանդոսի, ապա գումարտակի հրամանատար Մորուքի (Ռաֆիկ Համբարձումյան) հրամանատարության տակ: Կարինեն իր անձնական օրինակով քաջալերում էր մարտիկներին: Նա ռազմի դաշտում թե բուժքույր էր, թե հետախույզ, թե հրաձիգ: Չնայած 1992թ. Վաղուհասի մոտ վիրավորվեց, սակայն առաջին գծից ետ չքաշվեց: Կարինեն անցել է պատերազմի երկար ու դժվարին ճանապարհ՝ Գետավան, Հաթերք, Քելբաջար, Սարսանգ, Մեծ Շեն: Նա շատ էր ուզում մասնակցել Մարտակերտի ազատագրության մարտերին: 1993թ. հունիսի 13-ի լուսաբացին սկսվեց մարտը: Կարինեենց զորամասը մարտնչում էր Մաղավուզ գյուղի մոտակայքում: Վիրավորներին օգնություն էր պետք: Կարինեն նետվում է առաջ: Նա սողալով հասնում է վիրավոր մարտիկին: Բայց ահա կողքին պայթեց թշնամու արկը: Այս անգամ նրա վերքը մահացու էր[35]:

Կանանց շարքերում մաքառում և հրաշքներ էին գործում կին դիպուկահարները: Նրանցից էր Մարգարիտա Սարգսյանը: Նա ծնվել է 1960թ. փետրվարի 13-ին Մարտունու շրջանի Հացի գյուղում: 1971թ. մշտական բնակության է փոխադրվել Ստեփանակերտ: 1976թ. ավարտելով մաթեմատիկական թեքումով դպրոցը՝ ընդունվել է տեղի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ բաժին և ավարտել 1981 թվականին: Սակայն նա աշխատանքի անցավ Ղարմետաքսկոմբինատում որպես ջուլհակուհի, հետո՝ հերթափոխի պետ: Արցախի ազատագրական պայքարի սկզբին զինվորագրվեց ազատամարտիկների ջոկատին: Մտնելով կանանց գումարտակ՝ Մարգարիտան հերոսաբար տարավ բոլոր դժվարությունները: Նա դարձավ հրաձգային չեմպիոնուհի և ստացավ օպտիկական նշանառության հրացան ու մինչև վերջ անբաժան մնաց դրանից: Մարտական գործողություններին սկսեց մասնակցել 1992թ. նոյեմբերի 19-ից Սարիբաբայում: Նա, ոչնչացնելով զրահամեքենայի մեջ թաքնված հակառակորդի նշանառուին, բացեց ճանապարհը: Մարգարիտան հետո մասնակցեց Լաչինի մարդասիրական միջանցքի պաշտպանության համար մղված կռիվներին: Մարտերից մեկի ժամանակ Մարգարիտը անշեղ նշանառությամբ վերջ տվեց թուրք մեխանիկին,

[35] Նանագյուլյան Ս., *Արծիվները բարձունքներ են տենչում, գիրք Գ, Երևան, 1993, էջ 24-30: «Բագին», Պեյրութ, 1993, N9-12, էջ 351-356:* Վարդումյան Հ., *ԿԻՆ ազատամարտիկներ, էջ 6-7: «Հայաստանի Հանրապետություն», 27.02.1998 և այլն:*

որին հետևեց թշնամու խուճապը: Նա զոհվեց 1993թ. օգոստոսի 18-ին Կուբաթլուի շրջանի Բաշարաթ գյուղի մոտ: Մարգարիտը ոչնչացրել է հակառակորդի 37 զինվոր: ԼՂՀ նախագահի հրամանագրով հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած քաջության համար հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով[36]:

Արցախի հերոսամարտիկներից է Ռուզաննա Եսայանը: Ծնվել է 1968 թվականին Էջմիածին քաղաքում: Նա, ավարտելով Լենինգրադի բժշկական ուսումնարանը, աշխատում էր Էջմիածնի հիվանդանոցում: Արցախյան պատերազմի սկզբին անդամագրվելով Հադրութի շրջանում մարտնչող Մանվել Գրիգորյանի ջոկատին՝ 24-ամյա հայուհին հագավ ռազմական համազգեստ, կախեց սանիտարական պայուսակը, հրաժեշտ տվեց հարազատներին ու գնաց: Դա 1992թ. սեպտեմբերի 19-ին էր: Նա ջոկատում ծառայում էր Հերմինեի հետ: Ռուզաննան կարճ ժամկետում կազմակերպեց օրինակելի բուժկետ, ստեղծեց խիստ կարգուկանոն: Հերմինեի զոհվելը մեծ կորուստ էր Ռուզաննայի համար: 1992թ. դեկտեմբերի 12-ին Հադրութի շրջանի Ուխտաձոր գյուղի պաշտպանության համար ահեղ մարտեր էին գնում: Յոթ հոգի ծանր վիրավորվեցին, հարկավոր էր նրանց տեղափոխել շրջկենտրոնի հիվանդանոց: Եվ ահա «Մահվան ճանապարհով» շարժվում է սանիտարական մեքենան, որին խփում է թշնամու արկը: Բոլորի հետ զոհվում է նաև Ռուզաննան[37]:

Ալինա Աբրահամյանը ծնվել է 1970թ. փետրվարի 2-ին Մարտունու շրջանի Աշան գյուղում: Նա 1989–1991 թվականներին զինծառայության մեջ է եղել Լենինգրադում և Գերմանիայում: Վերադառնալով հայրենի գյուղ՝ կոլտնտեսությունում աշխատում էր որպես տրակտորիստ: Նրա անվեհեր ու ընբոստ ոգին չէր կարող հանգիստ մնալ: Ուստի մեկնեց ռազմաճակատ: Նա զոհվել է 1992թ. օգոստոսի 17-ին Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղում[38]:

---

[36] Վարդումյան Հ., *Կին ազատամարտիկներ, էջ 10-12: Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկատու, էջ 103-104:* Բաբայան Բելա, *Արցախի կինը պատմության մեջ, էջ 82-83: «Արցախ», 23.09.1993:*

[37] Վարդումյան Հ., *Կին ազատամարտիկներ, էջ 22-24: «Բագին», 1993, էջ 272-275:* Առստամյան Գ., *Իմ սերը ձեզ հետ է, ողջեր և նահատակներ, Եր., 1998, էջ 220-221 և այլն:*

[38] *«Բագին», 1993, N9-12, էջ 197:*

Արցախի խիզախ կանանցից էր Անուշ Ավագյանը, որը ծնվել է 1968թ. ապրիլի 24-ին Մարտակերտի շրջանի Լյուլասազ գյուղում: Նա, 1990թ. անդամագրվելով Կարո Բաբայանի հրամանատարությամբ գործող 2-րդ դասակին, երկու երեխաներին թողնելով տանը, մի գերխնդիր ուներ՝ հաղթել թշնամուն: Զինվոր և բուժքույր Անուշը հարազատ վաշտի հետ փառավոր մարտական ուղի անցավ՝ Խոջալու, Շուշի, Լաչին, Բերդաձոր, Մարտակերտի և Ասկերանի շրջաններ: Նա վիրավորվեց, բուժվեց և կրկին վերադարձավ գումարտակ: Իր համառությամբ Անուշը դարձավ ԲՄՊ-ի անձնակազմի հրամանատար: 1993թ. հունվարի 15-ից Շուշիի գումարտակի կազմում մասնակցում էր հարձակողական գործողություններին և մեծ կորուստներ պատճառում հակառակորդին: Հետո՝ Չլդրանի և Դրմբոնի ազատագրության համար մղված մարտեր: 1993թ. փետրվարի 7-ին թշնամու արկի բեկորը խլեց Անուշի կյանքը, երբ նախապատրաստվում էին հարձակվել Վաղուհասի վրա[39]:

«Հրաշք կին» էին անվանում Անյա Ավանեսյանին, որը ծառայում էր որպես քույր-տնտեսուհի: Չնայած զորամասի տնտեսության կազմակերպիչն էր, սակայն չէր հեռանում ծանր հիվանդներից[40]:

Առաջին կին կամավորներից էր Քանաքարա Ղարայանը: Նա ծնվել է 1948թ. օգոստոսի 6-ին Ասկերանի շրջանի Դարհավ գյուղում: Ապրում էր Ստեփանակերտում և խնամում երկու երեխա: Ընտանիքով ժամանակավոր տեղափոխվեցին Ասկերանի Խնձրիստան գյուղը, որտեղ Քանաքարան մտնում է տեղի վաշտը և կատարում բուժքրոջ պարտականություններ: Նա զինվորների համար և՛ մայր էր, և՛ քույր: Շուշիի գրավման օրերին անընդհատ գտնվում էր դիրքերում: 1992թ. հուլիսի 13-ին թշնամին Քարագլխի ուղղությամբ մեծամասշտաբ հարձակում էր սկսել: Քանաքարան վազում էր դեպի վիրավորի կանչը, սակայն արկը պայթեց կողքին: Նա առաջին կին ազատամարտիկ զոհն էր: Նրա համար սգում էր ողջ Ստեփանակերտը[41]:

---

[39] Վարդումյան Հ., *Կին ազատամարտիկներ, էջ 3-5:* Առստամյան Գ. *Սպասում, էջ 162-163:* Բաբայան Բ., *Արցախի կինը պատմության մեջ, էջ 84 և այլն:*

[40] Բաբայան Բ., *Արցախի կինը պատմության մեջ, էջ 84,* Առստամյան Գ., *Սպասում, էջ 209 և այլն:*

[41] Վարդումյան Հ., *Կին ազատամարտիկներ, էջ 25-27:* Առստամյան Գ., *Սպասում, էջ 208 և այլն:*

Մարգարիտ Թառանյանը առաջիններից մեկն էր, որ մտավ «Կանանց գումարտակ»: Երբ մեկնել է ռազմաճակատ, նա պահել է զինվորական օրագիր: Սա մի հատված. 1994թ. մարտին էր, մարտեր էին գնում Կուբաթլուի համար: Չորսով՝ Կարինե, Անահիտ, Գայանե և Մարգարիտ, գնդի հետ շարժվում էին դեպի Բաշարաթ գյուղը: Կարինեն վիրավորվեց: Վիճակը ծանր էր: Զոհվեց Մարգարիտ Սարգսյանը, որի հետ զոհվեցին Վազգենը, Աշոտն ու Գարիկը: Մարգարիտ Թառանյանը հետո մնաց զինվոր ու հայրենիքի պաշտպան[42]:

Անահիտ Պետրոսյանը «Կանանց գումարտակից» էր, մասնակցել է Լաչինի շրջանի Շուլան գյուղի ազատագրման մարտերին: Անահիտ Թամրազյանը նույն գումարտակից էր: Նա, մարտի դաշտում կորցնելով ամուսնուն, վճռեց նրա վրեժը առնել: Լյուբա Հայրիյանը իրեն նվիրեց հայրենիքի պաշտպանությանը և անասելի տոկունություն ցուցաբերեց հրետանային մարտկոցի կազմում: Արևիկ Սարգսյանը Չլդրանից մինչև Ալիբաբա հաղթահարել է բազմաթիվ դժվարություններ ու ապահովել ռազմամթերքների տեղափոխման գործը: Նա Արցախյան շարժման առաջին կապավորներից է: Ավետլանա Աբրահամյանը չնայած ստացել էր բազմաթիվ վերքեր, հավատը չկորցնելով հաղթանակի նկատմամբ, շարունակել է մասնակցել բազմաթիվ մարտերի: Էջմիածնեցի Արեգա Սարգսյանը կարողացել է ապահովել հեռախոսակապը ռազմաճակատների միջև: Լիդա Գրիգորյանը, իր երեք դստերին պահ տալով, մեկնեց ռազմաճակատ և իր ուժերը ներդրեց Շուշիի ու Լաչինի ազատագրության համար մղված մարտերին: Եվգենյա Առուստամյանը, որը նույնպես «Կանանց գնդից» էր, ծնվել է Ստեփանակերտում, աշխատել է էլեկտրատեխնիկական գործարանում: Թողնելով երեք երեխաներին՝ նա մեկնեց ռազմաճակատ: Նա բազմիցս վիրավորվել է և այսօր էլ իր մարմնի մեջ բեկորներ է կրում[43]:

Հասմիկ Բաղդասարյանը ծնվել է 1970թ. հունիսի 26-ին Շուշի քաղաքում: Մարզային վերականգնողական կենտրոնում աշխատում էր որպես բուժքույր: Նրա երկու եղբայրներն ու հայրը մարտնչում էին Քարին տակում, իսկ ինքը ջոկատների հետ մեկնում էր թեժ կետերը: Շուշիի ազատագրման նախօրյակին՝

[42] *«Հայրենյաց պաշտպան», N21, 2003:*

[43] *«Արցախ», 23.09.1993: Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկատու, էջ 104-105:*

ապրիլի 28-ին, Սղնախ էին տեղափոխվել բուժքույրեր Հասմիկը, Լիդան, Ալվարդը, Գյուլնարան և Նաիրան: Նրանք սպասարկում էին 300 հոգուց կազմված ջոկատին: Հասմիկը շատ էր երազում տեսնել հայրենի Շուշին ազատագրված: Շուշին ազատագրվելուց հետո 1992-ի հունիս-հուլիսին Հասմիկն արդեն Մարտակերտում էր՝ դաշտային հոսպիտալում՝ անբաժան ընկերուհու՝ Լիդայի հետ: Երկուսով 10 օրում 170 վիրավոր էին հանել առաջավոր դիրքերից: 22-ամյա Հասմիկը դիմանում էր այդ լարվածությանը: Կրակագծից նոր վիրավորներ էին բերել Ստեփանակերտի զինվորական հոսպիտալ: 1992թ. օգոստոսի 22-ն էր: Այդ օրն էլ Հասմիկը զոհվեց թշնամու ռմբակոծությունից[44]:

Արցախյան պատերազմի տարիներին հերոսաբար զոհվել են Ադելա Աբրահամյանը (1992թ. հունվարի 1-ին՝ Քարին տակ), Անյա Հակոբյանը (1992թ. մարտի 5-ին, Քարին տակ), Ֆրիդա Հարությունյանը (1992թ. մարտի 4-ին, Ղազանչի), Ստելլա Մկրտչյանը (1993թ. հունվարի 20-ին, Վանք), Սուսաննա Սաղաթելյանը (1996թ. նոյեմբերի 2-ին, Ստեփանակերտ), Աղավնի Դանիելյանը (1996թ. նոյեմբերի 2-ին, Ստեփանակերտ) և այլն:

Ալինա Նասիբյանը ծնվել է 1975թ. օգոստոսի 19-ին Աշխաբադ քաղաքում: 1989թ. Նասիբյանների ընտանիքը բնակություն էր հաստատել Մարտունի քաղաքում: Պատերազմի տարիներին Ալինան Ներսես Սողոմոնյանի գնդում կապավոր-հեռախոսավարուհի էր: 1996թ. ՏՀ պաշտպանության նախարարի կողմից արժանացել է գերազանցիկ կապավորի պատվոգրի: Մահացել է 1997թ. հուլիսի 12-ին[45]:

Կարինե Դանիելյանը «Կանանց գնդից» էր, դիպուկահար: Ծնվել է Շուշիում: Աշխատում էր հաշվապահ: Երբ աղջիկները հավաքվեցին Շուշիի ուսումնական կենտրոնում, նա անմիջապես բարեկամացավ նրանց հետ: Նա բոլորին զարմացնում էր իր անվախությամբ: Կարինեն գլխից ծանր վիրավորվեց Խծաբերդի մոտ, երբ վիրավորներին դուրս էր բերում մարտի դաշտից: Դեռևս գամված է անկողնում:

Նաիրա Սահակյանը ծնվել է 1970թ. մարտի 9-ին Երևանում: Նա ընդգրկվել էր «Աղբյուր Սերոբ» ջոկատում: Ջոկատը Ասկերանի շրջան մեկնեց 1991 թվականին: Հետո, երբ ջոկատը Լաչի-

[44] Վարդումյան Հ., *Կին ազատամարտիկներ, էջ 31-33:*

[45] Աբրահամյան Հ., Հարությունյան Հ., *Արցախի համար զոհված վարանդացիները 1988–2001, Եր., 2003, էջ 248*

նում էր, Նաիրան ոչ միայն գթության քույր էր, այլև զինվոր, հմուտ հետախույզ: Կոմանդոսը նրան կնքել էր «Սպիտակ աղվես» անվամբ: 1993թ. գարնան սկզբին «Աղբյուր Սերոբ» ջոկատը մեկնեց Մարտակերտի շրջան: Ոսկան Գյուլումյանի գումարտակը, որի մեջ մտնում էր ջոկատը, տեղավորվել էր Կուսապատ գյուղում: Զորամիավորումը մարտի 9-ին ընկել էր շրջապատման մեջ: Ազերիները միանգամից հարձակվեցին բոլոր դիրքերի վրա: Նահանջի ժամանակ Նաիրան հակառակորդի ուշադրության կենտրոնում էր: Երբ պահեստային ուժերը հասան օգնության, գրոհն արդեն վերջացել էր: Թուրքերը կտրել և տարել էին Նաիրայի գլուխը:

Լորիտա Վարդանովան ծնվել է 1970թ. հունվարի 31-ին Բաքու քաղաքում: Նրան մի օր անհետանալուց, վեց ամիս անց գտան Արմավիրի ջոկատում: Այդ ժամանակաշրջանում նա եղել է Արցախում, փրկել վիրավորներին: Բուժքույր էր և զինվոր: 1991թ. մեկնեց Մեղրիի շրջան, որտեղ մասնակցեց մի շարք մարտերի: 1992թ. ջոկատներ կազմակերպվեցին Արարատի շրջանում: Լորիտան ընդգրկվեց գումարտակում որպես բուժքույր ու մարտիկ: Նույն թվականին մեկնեցին Ֆիզուլիի ռազմաճակատ: Հանգստանալուց հետո գումարտակը կրկին ռազմաճակատ մեկնեց 1993թ. դեկտեմբերի 28-ին, այս անգամ՝ Մարտակերտի շրջան: Թշնամին ամրացել էր Հակոբ Կամարի գյուղի տարածքում: Հունվարի 3-ին էր: Էջմիածնեցի Հովիկին օգնության հասնելով՝ վիրակապում էր նրան: Հենց այդ ժամանակ էլ արկի բեկորը գտավ Լորիտային: Վերքը ծանր էր: Հասցրին Ստեփանակերտ, սակայն ուշ էր, մահացավ վիրահատական սեղանի վրա:

Նարինե Առաքելյանը ծնվել է 1976թ. օգոստոսի 3-ին Քարին տակ գյուղում: 1991թ. թուրք հրոսակները հարձակվեցին Քարին տակի վրա: Գյուղի ինքնապաշտպանության ջոկատը Վաղինակ Առուշանյանի հրամանատարությամբ հերոսաբար դիմադրում էր մի քանի անգամ գերակշռող թշնամուն: Ինքնապաշտպանության գործին միացել էին Նարինեի հայրը, մայրը, երկու եղբայրները: Նարինեն ևս իրեն նվիրեց հայրենի գյուղի պաշտպանությանը: Նա դարձավ կապավոր: Նարինեն իր Չալո անունով շանը սովորեցրել էր կապավորի դեր կատարել: Նրա միջոցով էր ծխախոտ ուղարկում դիրքերում գտնվող ազատամարտիկներին: 1991թ. նոյեմբերի 17-ին թուրքերը կրկին հարձակվել էին գյուղի վրա: Սակայն մեծ զոհեր տալով՝ ազերիները դիմեցին փախուստի: 1992թ. հունվարի 26-ին հակառակորդի մեծ ուժեր

նորից հարձակվեցին գյուղի պաշտպանական դիրքերի վրա: Նանոն, ինչպես գյուղում ասում էին նրան, նույնպես շտապեց դիրքեր: Ինքնապաշտպանության տղաները հրաշքներ էին գործում: Փամփուշտը վերջանում էր: Նանոն թռավ պահեստ՝ փամփուշտ բերելու: Բայց նա խփվեց կրծքից:

Գայանե Մարգարյանը ծնվել է 1975թ. փետրվարի 23-ին Եղեգնաձոր քաղաքում: Նա Արցախում հայտնվեց 1993թ. սեպտեմբերի 15-ին: Ստեփանակերտում հանդիպեց Մարտակերտի գումարտակի բուժքույր Թամարա Աբրահամյանին: Վերջինս ներկայացրեց տղաներին: Հրամանատար Իլյիչ Բաղրյանի հանձնարարությամբ մեկ ամիս մնաց թիկունքի հենակետում: Գայանեն իր գործունեությամբ ապացուցեց, որ կարող է կռվող զինվոր լինել: Եվ երբ դեկտեմբերին սկսվեցին թեժ մարտերը, Գայանեն, որպես բուժքույր, օգնում էր Թամարային: Գնդացրորդ Արամը սիրահարվել էր Գայանեին: Գումարտակը կատարեց նրանց հարսանիքը: Սակայն հինգ ամիս անց գնդացրորդ Արամը զոհվեց Մատաղիսի համար մղվող մարտերից մեկում: Գայանեն վերցրեց ամուսնու գնդացիրը և այլևս ցած չդրեց: Գումարտակը մարտնչում էր Մաղավուզի մատույցներում: Դա 1994-ի հունվարի 9-ին էր: Գայանեն Չայլու գյուղից երեք ազատամարտիկների հետ քաջաբար դիմադրում էր: Եվ չորսն էլ՝ Գայանե Մարգարյանը, Զավեն Բաբայանը, Գարիկ Թարվերդյանը և Թևան Խալաֆյանը, քաջաբար զոհվեցին: Գայանեի մարմինը հողին հանձնվեց Եղեգնաձոր քաղաքի «Եռաբլուրում»:

Հեղինե Բդոյանը ծնվել է 1973թ. մայիսի 30-ին Երևանում: Նա սկզբում Հադրութի շրջանի ջոկատում էր: Հետո տեղափոխվեց Մանվել Գրիգորյանի ջոկատը: Հեղինեն ջոկատում կապավոր էր: Տղաները հաճախ նրան Հերմինե էին անվանում: Երբ ջոկատ եկավ Ռուզաննա Եսայանը, նրանք դարձան քույրեր: Հեղինեն առաջին գծի կապավորն էր: 1992թ. աշնանը Հադրութի շրջանի Ուխտաձոր (Էդիլլու) գյուղի ազատագրման համար մարտեր էին մղվում: Հեղինեն թշնամու կրակոցի տակ կարողացավ միացնել կտրված լարերը և վերականգնել կապը: Նա ծանր վիրավորվեց: Հասցրին Հադրութի հիվանդանոց: Դա 1992-ի նոյեմբերի 16-ին էր: Մահացավ դեռ վիրահատության սեղանին չհասած:

Նունե Աբրահամյանը ծնվել է 1966թ. հուլիսի 30-ին Երևանում: Աշխատում էր հետվնասվածքային վերականգնողական թերապիայի կենտրոնում: Նա, մերժելով ամուսնական շատ նպաս-

տավոր առաջարկություններ, գերադասեց ծառայել իր ժողովրդին: Ընդգրկվեց «Արծիվ-24» ջոկատում: Իսկ երբ կանչեց Արցախը, գնաց առանց երկմտելու: Նա ընկերուհու՝ Անահիտ Լոպոյանի հետ ընդգրկվեց գումարտակի կազմի մեջ՝ որպես գթության քույր: Նունեն առաջին մարտական մկրտությունը ստացավ 1992թ. Արծվաշենում: Հետո կրկին մեկնեց Արցախ: Տասն ամիս նրանից լուր չկար: Իսկ այդ ընթացքում նա տասնյակ ազատամարտիկների փրկել է մահից: Նա հասավ Քելբաջար: Թուրքերը չէին կարողանում հաշտվել Օմարի լեռնանցքը կորցնելու մտքի հետ: «Արծիվ-24»-ը նույնպես Օմարում էր: Ջոկատը Յանշակ գյուղի մոտ շրջափակման մեջ ընկավ: Հերթական անգամ, երբ Նունեն փորձում էր օգնության հասնել վիրավոր ազատամարտիկներին, ինքը վիրավորվեց կրծքից: Դա 1994-ի հունվարի 31-ին էր: Հասցրին Դրմբոնի զինվորական հիվանդանոց: Սակայն նրան փրկելը անհնարին էր: Նրա մարմինը ամփոփվեց Երևանի Եռաբլուրում:

Մարիետա Սարգսյանը ծնվել է 1965թ. փետրվարի 7-ին Մասիսի շրջանի Նոր Խարբերդ գյուղում: Դառը ճակատագիր է ունեցել նա: Երբ եկավ 1988-ը, Մարիետան զինվորագրվեց ազատամարտին: Սկզբում Սասուն Ղազարյանի ջոկատում էր: 1989-ին կռվեց Երասխում, ապա՝ Նոյեմբերյանի շրջանում, հետո՝ Գորիսի շրջանի Խնձորեսկ և Հարթաշեն: 1990թ. ընդգրկվեց «Մեծն Տիգրանի» ջոկատում: Ապա՝ Շահումյանի շրջան, Ստեփանակերտ, Լաչինի շրջան: 1991-ին տեղափոխվեց Մասիսի շրջանի «Զորավար Անդրանիկ» ջոկատ, մասնակցեց Արծվաշենի, Շամշադինի (Տավուշ) շրջանի, Շահումյանի պաշտպանական գործողություններին: Ամենուր Մարիետան իրեն պահում էր տղամարդու նման: Նա իսկական զինվոր էր: Երբ 1992-ին ստեղծվեց Մասիսի շրջանի գորամասը, Մարիետան ընդգրկվեց նրա կազմում և հունվարի 21-ին մեկնեց Լաչինի շրջան՝ Կոբրա: Հետո տեղափոխվեց Մոլալար: Ճանապարհին էլ նշեցին նրա ծնունդը: Երեք օր անց՝ 1992-ի փետրվարի 10-ին, թշնամու արկի բեկորը խոցեց նրան: Բժիշկները չկարողացան փրկել Մարիետայի կյանքը, մահացավ ապրիլի 18-ին:

Ալվարդ Վարդանյանը ծնվել է 1948թ. հոկտեմբերի 11-ին, ՀՀ Մարտունու շրջանի Զոլաքար գյուղում: Նա ԱԻՄ-ական էր և ակտիվորեն մասնակցում էր Լաչինի շրջանում ծավալված մարտական գործողություններին: 1992թ. հուլիսի 28-ին զինվորականների հետ մեկնեց Սիմավան-6: Այստեղ էլ հանկարծ ընկան կրակի տակ: Այդ օրը շատերը զոհվեցին, այդ թվում և Ալվարդը:

Սեդա Սողոմոնյանը ծնվել է 1960թ. ԼՂՀ Մարտունու շրջանի Սոս գյուղում: Ամուսնացած էր և չորս երեխայի մայր: Ամուսինը՝ Վաչագանը՝ զոհվել էր: Սեդան 1991թ. դեկտեմբերի 7-ին զինվորագրվեց Մաճկալաշենի զինջոկատում, որտեղ անդամագրված էր ամուսինը: Նրա մուտքը զինջոկատ ոգեշնչեց շատ երիտասարդ տղաների ու աղջիկների: Սեդան ջոկատի խոհարարն էր: Նա մարտնչեց Մաճկալաշենից մինչև Ալխանչի, ապա մասնակցեց Մարտակերտի շրջանի ազատագրմանը: 1993թթ. աշնանը Մաճկալաշենի ջոկատը փոխադրվել էր Ներքին Դիլիղարդա գյուղը: Սեդան այնտեղ էր: Նա զինվորականների համար ոչ միայն խոհարար էր, այլև մայր, քույր, զինվորական ընկեր: Սեդան ծառայել է մինչև 1995-ի դեկտեմբերի վերջը, որից հետո անցնել է խաղաղ աշխատանքի: Նա կատարել է նաև օրագրային գրառումներ, որոնք բավականին հետաքրքիր են[46]:

Տանյա Առուստամյանը, որը ծնվել է Ավետարանոց գյուղում, պատերազմի հենց սկզբից աշխատում էր մարզային հիվանդանոցի վիրաբուժական բաժնում: Նա զինվորական ծառայության գնաց 1993 թվականին: Տանյան բարեխղճորեն կատարում էր Վալերի Մարությանի հանձնարարությունները և հիվանդ վիրավորներին ուղեկցում Երևան: Շուշիի ռազմական գործողությունների ժամանակ ընկերուհու՝ 18-ամյա Գյուլնարայի հետ հայտնվեցին հրետանավորների գնդում և, երկու շաբաթ մարտեր մղելով, հասան Գորիս: Հետո Տանյան երևաց «Ցեխձորում» առաջավոր գծից ոչ շատ հեռու զինվորական հոսպիտալում: Ջմեռ էր: Վրանում և վիրահատարանն էր, և վիրակապարանը, և հիվանդասենյակը: Բժշկական ծառայության պետ Պավել Աթոյանը մի որպես հանգիստ չուներ: Այստեղ էր և բժիշկ Արցախ Բունյաթյանը, որը վերջին ժամանակներում հրատարակել է այդ տարիներին գրած բժշկի իր օրագրերը: Տանյան, այստեղ անցկացնելով ամիսներ, ստանում էր իր երկրորդ զինվորական «մկրտությունը»: Աղդամի ռազմական գործողություններից հետո զինկոմիսարիատը չորս հոգի պահանջեց Ասկերանի պաշտպանական շրջանում աշխատելու: Տանյան այստեղ էր: Հետո Գյուլուջայի ուղղությամբ տեղի ունեցած գործողությունների օրերին Տանյան կրակի գծից վիրավորներ էր հանում: Այնտեղ էլ ծանր վիրա-

[46] Առուստամյան Գ., *Իմ սերը ձեզ հետ է, ողջեր և նահատակներ, էջ 122-126:*

վորվեց: Նրան վիրահատեց Վալերի Մարությանը: Հետո Ասկերանի պաշտպանական շրջանի չորրորդ գնդի լազարեթում պրապորշիկ Տանյան բուժակ էր[47]:

Այո՛, հարյուրավոր կանայք իրենց նվիրել են հայրենիքի պաշտպանությանը և փառավորվել: Նրանցից ետ չէին մնում հազարավոր կոլտնտեսուհիներ, բանվորուհիներ, ծառայողուհիներ, լրագրողուհիներ, որոնք փառք բերեցին Արցախի կանանց: Ինչպես չհիշել Սարտակերտի գումարտակի բուժքույր Թամարա Աբրահամյանին, գթության քույր Անահիտ Լոպոյանին, վաշտի հրամանատար Հեղինե Հովհաննիսյանին, Սեդա Վարդանյանին, Մարինե Մարտիրոսյանին, Աիդա Սերոբյանին, Գայանե Առստամյանին, Աղավնի Տեր-Սիմոնյանին, Աղավնի Սահակյանին, Հեղինե Բրուտյանին, Վարդուհի Գևորգյանին և շատ շատերի, որոնց մասին պետք է գրվի էջ առ էջ, դրվագ առ դրվագ: Նրանք արժանի են մեծարման ու հերոսացման:

5. ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Մեր ազգային վերազարթոնքի շարժումը ցնցեց նաև սփյուռքահայությանը: Վերջապես, խորհրդային կայսրապետությունում բարձրացել էր ըմբոստության ալիք: Եվ դա սկիզբ էր առել Արցախ-Ղարաբաղից: Սփյուռքահայությունը վաղուց էր ծանոթ Արցախի հիմնախնդրին, մանավանդ, երբ 60-70-ական թվականներին սփյուռքահայ մամուլում այդ առթիվ տպագրվել էին բազմաթիվ հոդվածներ և նյութեր, նույնիսկ խորհրդային վերադաս իշխանություններին ուղղված արցախահայության բողոքնամակները: Հազարավոր սփյուռքահայ երիտասարդներ ցանկություն էին հայտնում մեկնել Արցախ և պաշտպանել հայրենի հողը: Հետագայում ոչ քիչ սփյուռքահայեր մասնակցեցին Արցախի ազգային-ազատագրական պայքարին: Սփյուռքահայությունը մեծ ուժ է ներկայացնում: Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարարության մի հաշվետվության մեջ նշված է, որ շարժման սկզբին արտասահմանյան ավելի քան 60 պետություններում բնակվում էին մոտ 2,5 մլն հայեր: Արտասահմանում տպագրվում էին 150 անուն հայկական թերթեր: Այնտեղ գործում են 3 քաղաքական կուսակցություններ՝ սոցիալ-դեմոկրատական

[47] «ԼՂ Հանրապետություն», 07.04.1995:

«Հնչակ», լիբերալ-դեմոկրատական «Ռամկավար» և ազգայնական «Դաշնակցություն»: Գործում էին նաև տարբեր բնույթի 70 հասարակական կազմակերպություններ, որոնցից ամենամասսայականը հանդիսանում է Համընդհանուր բարեգործական միությունը: Պայքարի սկզբին դրանք խորհրդային Հայաստանի հետ կապերի մեջ էին, բացի Դաշնակցությունից[1]: Դրան հավելենք նաև այն հանգամանքը, որ արտասահմանյան 55 տարբեր երկրներից Հայաստանի ուսումնական հաստատություններում սովորում էին 1560 ուսանողներ, որոնք պաշտպանում էին Արցախի հերոսապայքարը[2]:

1988թ. փետրվարյան իրադարձություններից հետո սփյուռքահայ մամուլը և լրատվության մյուս միջոցները անընդհատ հաղորդումներ էին տալիս Հայաստան-Արցախում տեղի ունեցող իրադարձությունների մասին և պաշտպանում արցախահայության արդարացի պահանջը: Լեռնային Ղարաբաղի հարցը քանի որ դիտվում էր որպես ԽՍՀՄ ներքին խնդիր, ուստի թե՛ սփյուռքահայությունը և թե՛ այդ հարցով հետաքրքրվող արտասահմանյան քաղաքական ու պետական ուժերը փորձում էին խնդրին լուծում տալ խորհրդային օրենսդրական դաշտի շրջանակներում: Իսկ երբ 1991թ. ԽՍՀՄ-ը վերջնական փլուզվեց, և Արցախի հարցը դադարեց ԽՍՀՄ ներքին խնդիր լինելուց, այնուհետև Արցախի հիմնախնդրի կարգավորման փորձերը շարունակվեցին ԱՊՀ անդամ երկրների շրջանակներում: Նշենք, որ արցախյան գոյապայքարի այդ շրջանում պայքարը տարվում էր ցույցերի, հանրահավաքների և այլ ձևերով: Արտասահմանում թե՛ սփյուռքահայերը և թե՛ այլ ժողովուրդներ նույնպես կազմակերպում էին ցույցեր, երթեր, Մոսկվա ուղարկում բազմաթիվ բողոքներ, պահանջներ, հանդես գալիս հայտարարություններով:

Ըստ էության, հայ քաղաքական որոշ ուժեր՝ ՀՅԴ, «Հնչակ», ԱՍԱԼԱ և այլն, սահմանափակված լինելով սփյուռքում, պայքարի սկզբնական շրջանում զրկված էին դրան ակտիվորեն մասնակցելուց: Սակայն իրադարձություններն արագորեն փոխվեցին: Սփյուռքի հայությունը շուտով կողմնորոշվեց և պաշտպանեց Արցախը խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու պահանջը: Արխիվային մի փաստաթղթից իմանում ենք, որ դեռևս նախափետրվարյան շրջանում արտասահմանի հայկական համայնք-

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 33, թ. 104:
[2] Նույն տեղում, թ. 110:

ները հաճախակի քննարկում էին Հայաստանի «տարածքային ներքին խնդիրները»՝ կապված Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հարցերի հետ: 1988թ. հունվարին և փետրվարին այդ հարցի քննարկումն ավելի էր աշխուժացել: Բավական է նշել, որ միայն 1987 թվականին հայկական հարցը մի քանի անգամ լսվել էր միջազգային կազմակերպություններում կամ էլ մի շարք պետությունների ազգային օրենսդրական մարմիններում: Այդ նույն փաստաթղթում նաև նշված է, որ հատկապես ԱՄՆ-ի և Ֆրանսիայի Հայկական համայնքներում նկատվում էր Ղարաբաղի և Նախիջևանի վերաբերյալ հարցերի քննարկում, որին ներգրավվում էին հասարակական ավելի մեծ ուժեր[3]: Սան Ֆրանցիսկոյում գտնվող ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսի հաղորդումից տեղեկանում ենք, որ 1987թ. աշնանը հյուպատոսության շենքի դիմաց տեղի էր ունեցել ցույց, որի մասնակիցները պահանջել էին Հայաստանի «տարածքային ներքին խնդիրների արդարացի լուծում»: Նրանք միևնույն ժամանակ պահանջել են իրենց առաջ քաշած հարցը հասցնել խորհրդային ղեկավարությանը: Այդ օրերին ԱՄՆ հայկական լրատվությունը լայնորեն տարածել է ԱՄՆ-ի Արևելյան թեմի և Կանադայի արքեպիսկոպոս Թորգոմ Մանուկյանի ԽՍՀՄ ղեկավարությանն ուղարկած ուղերձը, որով պահանջում էր լուծել Արցախի հարցը[4]: Ուշադրության արժանի է նաև 1987թ. նոյեմբերի 25-ին Կալիֆոռնիայում ստեղծված «Հայկական մտավորականների խորհուրդը», որը, ըստ հիմնադիրների հայտարարության, ստեղծվել է «շահագրգռվածություն ցուցաբերելու Հայաստանի տարածքային ամբողջականությունը վերականգնելու և Հայաստանի անվտանգությունը ապահովելու պանթուրքական հետագա հանցավոր պլաններից»: Այդ հայտարարության մեջ նաև նշված է, որ խորհուրդը նպատակ ունի միավորել աշխարհի հայության մտավորականների ներկայացուցիչներին, ովքեր մտահոգված են Հայաստանի ամրապնդման հարցով: Որպես առաջնակարգ խնդիր՝ խորհուրդը ջանում էր չեզոքացնել Նախիջևանի և Ղարաբաղի համար Հայաստանին սպառնացող պանթուրքական ռազմատենչ ուժերի վտանգը: Հայկական մտավորականության խորհուրդը պլանավորել էր «Աշխատանքներ տանել Նախիջևանի մարզը Հայաստանի հետ վերա-

[3] *Նույն տեղում, գ. 9, թ. 8:*
[4] *Նույն տեղում:*

միավորելու համար» և «Պաշտպանել Ղարաբաղի բնակչությանը, երբ նա ցանկություն հայտնի միավորվել Հայաստանին»[5]:

Ակնհայտ է, որ վերակառուցման ճանապարհին ավելի էր սրվում ազգային հարցը, որի կենտրոնում էր գտնվում Արցախը: Դաշնակցության լրատվամիջոցները հաղորդում էին, որ ԼՂԻՄ Ադրբեջանի կազմում գտնվելը «Հակասում է ՍՍՀՄ Սահմանադրությանը և Ինքնավար Մարզի ու Հայկական ՍՍՀ-ի բնակչության կամքի ազատ դրսևորմանը»[6]: Աթենքում էր գտնվում «Հայկական ժողովրդական շարժման» (ՀԺՇ) կենտրոնի խորհուրդը: Հայաստանի ՊԱԿ-ի հաղորդումից իմանում ենք, որ այն բաց նամակ էր ուղարկել Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանին, որտեղ շեշտված էր, որ Նախիջևանն ու ԼՂԻՄ-ը Ադրբեջանի ենթակայության տակ են թողնվել անօրեն, և որ ժամանակն է վերականգնել արդարությունը: Այդ փաստաթղթից նաև իրազեկվում ենք, որ դեռևս 1987-ին ՀԺՇ-ն Աթենքում կազմակերպել էր կոնֆերանս «Հայկական հարցը և թուրքական էքսպանսիոնիզմ» թեմայով, որի աշխատանքներին մասնակցել էին 11 երկրներից եկած հայ պատգամավորներ[7]:

Հրապարակված և արխիվային նյութերի ուսումնասիրությունը համոզում է, որ Ղարաբաղի և Նախիջևանի հարցերի վերաբերյալ հասարակական ակտիվությունը միավորում և իրար մոտեցնում էր արտասահմանյան հայկական համայնքների տարբեր քաղաքական ուժերին: Օրինակ՝ սոցիալ-դեմոկրատական «Հնչակ» կուսակցության ԽՍԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ.Գորբաչովին ուղարկած հուշագրության մեջ արձանագրված է այն պահանջները, որոնք ներկայացրել էին նաև մյուս քաղաքական ուժերը[8]:

Արտասահմանյան հայ մամուլը, մանավանդ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Կանադայում, Արգենտինայում, Եգիպտոսում և այլ տեղեր, շարունակում էին բազմաթիվ հոդվածներ և նյութեր հրապարակել Նախիջևանի ու Ղարաբաղի հարցին նվիրված: Շատ թերթեր հանդես էին գալիս առաջարկություններով և

[5] *Նույն տեղում, թ. 11:*
[6] *Նույն տեղում, գ. 11, թ. 39:*
[7] *Նույն տեղում, թ. 46:*
[8] *Նույն տեղում, գ. 9, թ. 8:*

միջնորդություններով, հանգամանորեն հաղորդում Երևանում տեղի ունեցող ցույցերի ու հանրահավաքների մասին[9]:

1988թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ մարզխորհրդի որոշումից հետո Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու վերաբերյալ հարցի քննարկումը ավելի մասսայական բնույթ էր կրում արտասահմանյան հայ համայնքներում և լրատվական հրապարակումներում: Առանձնապես սրությամբ էր քննարկվում Սումգայիթում և Ադրբեջանի մյուս հայաշատ բնակավայրերում հայերի նկատմամբ կիրառվող բռնարարքները: Սփյուռքահայությունը խիստ վրդովված էր և պահանջում էր վճռական քայլեր ձեռնարկել ու պատժել հանցագործներին: Թե՛ «Ամերիկայի ձայն» և թե՛ «Բի-բի-սի» ռադիոկայանները հաղորդելով Սումգայիթում տեղի ունեցած բարբարոսության մասին, անարգանքի սյունին էին գամում այդ հանցագործությունը կազմակերպողներին[10]: Հայերի մեծ ցույցեր էին կազմակերպում Կանադայի Տորոնտո, Վանկուվեր, Մոնրեալ և այլ քաղաքներում: Մոնրեալում ցուցարարները խորհրդային գլխավոր հյուպատոսությանը հանձնել էին թռուցիկ, որտեղ պահանջվում էր Լեռնային Ղարաբաղի հարցը լուծել առանց ուշացնելու: Իսկ Սան Ֆրանցիսկոյում մասսայական հանրահավաքի ներկայացուցիչները, հանդիպելով ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսի հետ, նրան էին ներկայացրել իրենց պահանջները և Մ.Գորբաչովին ուղղել հուշագիր, որտեղ առաջարկվում էր «լուծել Լեռնային Ղարաբաղի բնակչության պահանջը»[11]: Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու խնդիրը ավելի էր կարծրանում սփյուռքահայ գաղափարախոսության մեջ: Հաղորդելով ստույգ տվյալներ՝ ֆրանսիական «Կոտիդեն դե Պարի» թերթը գրում էր, որ «Ադրբեջանի քաղաքներում տեղի են ունենում հայերի կոտորածներ», որի դեմ պետք է պայքար ծավալել[12]:

Ակնհայտ է, որ խորհրդային կարգերի կործանմամբ խիստ շահագրգռված էին արևմտյան տերությունները: Հետևապես, այդ պետությունները կամա թե ակամա աջակցում և նպաստում էին սփյուռքահայությանը, որոնք, պաշտպանելով արցախահայությանը, պայքարում էին ԽՍՀՄ հակաազգային քաղաքականության դեմ: Արտասահմանյան հայ և այլալեզու լրատվամիջոց-

[9] *Նույն տեղում, թ. 9:*
[10] *Նույն տեղում, թ. 96:*
[11] *Նույն տեղում, թ. 98:*
[12] *Նույն տեղում, թ.116:*

ները, քայլ առ քայլ հետևելով Մոսկվայում, Երևանում, Բաքվում և Ստեփանակերտում տեղի ունեցող իրադարձություններին, կոչ էին անում աշխարհի սթափ մտածող մարդկանց իրենց պայքարը ուղղել արցախահայության նկատմամբ իրագործվող բռնարարքների մերկացմանը: Փարիզի «Մոնդ» թերթը, իր յուրաքանչյուր համարում տպագրելով Արցախին վերաբերող նյութեր, վստահեցնում էր, որ Ֆրանսիայում բոլորը գիտեն Ղարաբաղի, նրա հիմնահարցի և նրա նկատմամբ կատարվող բռնարարքների մասին, իսկ «Կոտիդեն դե Պարի», «Գարդին» թերթերը, «Գոլոս Արմենիի» ռադիոկայանը և այլ լրատվամիջոցներ, շարունակելով հաղորդումներ տարածել Ղարաբաղում և Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ, հիմնական մեղավորը համարում էին խորհրդային կայսրապետությանը: «Ամերիկայի ձայն» ռադիոկայանը հաղորդել է, որ ԱՄՆ-ի սենատոր Էդվարդ Քենեդին Վիրժինայի նահանգում գտնվող իր դղյակում կազմակերպել էր ընթրիք ի պատիվ ԱՄՆ-ի «Հայկական ազգային միավորման», որի անդամները Լեռնային Ղարաբաղի հարցով Վաշինգտոնում հանդիպել էին խորհրդային դեսպանի հետ: Քենեդիի խորհրդով հայերը խորհրդային դեսպանին էին հանձնել ԼՂԻՄ-ի վերաբերյալ նյութեր: Սփյուռքահայ ներկայացուցիչներն այդ հանդիպման ժամանակ խնդրել էին Քենեդիին, որպեսզի նա հանդես գա որպես միջնորդ և Գորբաչովին խնդրի «Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին միացնելու հարցով»[13]: Ամերիկյան մամուլը համոզված կարծիք ուներ Ադրբեջանի իշխանությունների հակահայ քաղաքականության նկատմամբ: 1988-ի մարտին «Վաշինգտոն պոստը» գրել է, թե «Սումգայիթում տեղի ունեցած անկարգությունը ունի ոչ թե ազգամիջյան ընդհարումների բնույթ, այլ միակողմանի ջարդ, հայերի կոտորած»[14]: Այդ օրերին Լոս Անջելեսի օրենսդիր ժողովի անդամ Յավորսկին հայտարարել է, թե «քաղաքի մունիցիպալ խորհուրդը բանաձև է ընդունել՝ կոչ անելով Լեռնային Ղարաբաղը միավորել Հայկական ԽՍՀ-ին և պաշտպանել ԼՂԻՄ-իմ հայության իրավունքներն Ադրբեջանում», և որ այդ կոչն ուղարկվել է Գորբաչովի անունով[15]:

1988թ. փետրվար-մարտյան օրերին կային նաև ուժեր՝ որոնք պաշտպանում էին Ադրբեջանի իշխանությունների բռնա-

[13] *Նույն տեղում, թ. 118:*
[14] *Նույն տեղում, թ. 123:*
[15] *Նույն տեղում, թ. 137:*

բարքները ադրբեջանահայության նկատմամբ: Թերևս առաջին դիրքում էր Թուրքիան, որը շահագրգռված չէր միջազգային արենայում Հայկական հարցի բորբոքումից»[16]: Թուրքական լրատվությունը Ղարաբաղի հարցում լռում էր, միայն հրապարակում էր հակահայկական բնույթի նյութեր: 1988թ. ապրիլի 19-ին Հայաստանի ՊԱԿ-ի նախագահը հաղորդել է Հայկոմկուսի Կենտկոմ, որ Թուրքիայում հրապարակվող նյութերում հիմնականում խոսվում է այն մասին, որ թուրքերը էթնիկական կապ ունեն ԽՍՀՄ մուսուլման բնակչության հետ, մանավանդ ադրբեջանցիների: Նրանք նաև ջանքեր էին գործադրում ապացուցելու, թե իբր ԼՂԻՄ-ը և Նախիջևանը պատմականորեն պատկանում են «Ադրբեջանի թուրք ժողովրդին»[17]:

ԱՄՆ-ի հայերը, ինչպես երևում է արխիվային մեկ այլ փաստաթղթից, առանձնապես դժգոհ էին Կալիֆոռնիայի նահանգապետ Ջ.Թեքմեջյանից, որը «Լեռնային Ղարաբաղի հարցում ցուցաբերում էր «անգործություն»: Իսկ երբ մարտի վերջին ձերբակալվեց Պարույր Հայրիկյանը, սփյուռքահայությունը միանգամից պոռթկաց: Ասենք նաև, որ քանի դեռ արևմտյան տերությունների պայքարն հիմնականում ուղղված էր ԽՍՀՄ-ի դեմ և ամեն կերպ կողմնակից էին նրա թուլացմանն ու տապալմանը, օր օրի ավելի էին ուժեղացնում իրենց հակախորհրդային քաղաքականությունը: Օրինակ՝ 1988թ. մարտի 4-ի մի հաղորդագրության մեջ նշված է, որ արևմտյան տերությունները «Ամերիկայի ձայն», «Ազատություն», և «Ազատ Եվրոպա» ռադիոկայաններին ցուցում էին տվել ավելացնել հաղորդումները Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների և հայ-ադրբեջանական հարաբերությունների լարվածության վերաբերյալ: Հայաստանի ՊԱԿ-ի հաղորդումից տեղեկանում ենք, որ ԱՄՆ-ի Հատուկ ծառայությունները ԽՍՀՄ-ի դեմ գաղափարական նոր ակտեր ձեռնարկելու համար որոնում էին նոր մեթոդներ, որպեսզի կարողանային ավելի սրել ազգամիջյան հարաբերությունները[18]:

1988թ. գարնանը և ամռանը Լեռնային Ղարաբաղին պաշտպանելու հարցում սփյուռքահայության պայքարը լայն թափ էր ստացել: Տասնյակ հարյուրավոր նամակ-բողոքներ էին ստացվում Մոսկվայում և Երևանում, որի հեղինակները պահանջում էին

[16] *Նույն տեղում, գ. 12, թ. 24:*
[17] *Նույն տեղում, գ. 13, թ. 60:*
[18] *Նույն տեղում, գ. 12, թ. 23:*

լուծել Արցախի հարցը: Սփյուռքահայ Մինաս Գելեշյանը Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի հասցեով ուղարկած նամակում առաջարկում էր փակել Հայաստանի ատոմակայանը, Երևանի «Նաիրիտը» և ոչնչացնել Չեռնոբիլից եկած ճառագայթված կենսամթերքը: Նա վստահ էր, որ «վերակառուցման քաղաքականութեան ոգիին համապատասխանող քայլեր եւս պիտի առնուին՝ սրբագրելու համար հայ ժողովուրդի հողային իրաւունքներու գծով առկայ անարդարութիւնները, վերադարձնելով Խորհրդային Հայաստանին կամայականօրէն անջատուած հայկական հողերը՝ իրենց իրաւատիրոջ՝ հայ ժողովրդին»: Գելեշյանը իր ձայնը միացրել էր Հայաստանի հայրենակիցների ձայնին, որոնք պահանջում էին Խորհրդային Ադրբեջանի իշխանության տակ գտնվող Նախիջևանն ու Ղարաբաղը վերամիացնել Խորհրդային Հայաստանին[19]: Նույն թվականի մարտի 23-ին Հայկոմկուս ուղարկված Կանադայի Մոնրեալ քաղաքի բնակիչ Քաջունի Մարի-Ռոզևը գրել է. «Յարգարժան առաջին քարտուղար, Հայ ժողովրդի պահանջներուն արդուն սկզբունքներէն մեկնելով, այսու կու գամ զօրակցութիւնս արտահայտել իմ ազգակիցներուս՝ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՐԴԱՐ ՊԱՀԱՆՋԻՆ», Լեռնային Ղարաբաղը Սովետական Հայաստանին վերակցելու առնչութեամբ: Միաժամանակ կը փափաքիմ խոր մտահոգութիւն յայտնել Սովետական Ադրբեջանի հայութեան հանդէպ գործուած ջարդերուն նկատմամբ:

Կ'ակնկալեմ, որ ձեր արդար որոշումով եւ գործնական քայլերով պիտի սրբագործէք 65 տարիներ առաջ գործուած սխալը եւ արդարութիւն վերահաստատէք հայ ժողովրդին»[20]:

1988թ. ամռանը Հայկական համաշխարհային համագումարի Գերմանիայի մասնաճյուղի ատենապետ Ճորճ Աբոշեյանի ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ.Գորբաչովին ուղարկած հեռագրում շեշտված է, որ հայ բնակչություն ունեցող «Ղարաբաղը անարդարօրէն կը պատկանի Խորհրդային Ազրպէյճանի պետական կողմին» և որ այս վերջին «մի քանի օրերուն, երբ մեկ միլիոնէ աւելի հայեր իրենց կամքի արտահայտութեան, յանուն Ղարաբաղի Խորհրդային Հայաստանի միացման փողոցները իջած էին, այդ կարելի է դասել իբրև հանրային ցուցադրութիւն իրենց ինքնորոշման ոգիին»: Հեղինակը ապա նշում է, որ իր այդ

[19] *Նույն տեղում, գ. 127, գ. 685, թ. 25:*
[20] *Նույն տեղում, թ. 7:*

«հեռագրով կ'արտասանենք մեր նեցուկութիւնը Հայաստանի և Ղարաբաղի մեր քույրերուն և եղբայրներուն, յանուն իրենց ջանքերուն, խաղաղ միջոցներով Ղարաբաղի միացումը մեր հայրենիքին, Սովետական Հայաստանին»[21]: Կարելի է համանման բազմաթիվ նամակներ, հեռագրեր, հայտարարություններ մեջբերել: Այստեղ կարևորը, սակայն, այն է, որ սփյուռքահայությունը բոլոր միջոցներով սատար էր կանգնում հայ ժողովրդի օրինական պահանջին և պաշտպանում Արցախի արդարացի ընդվզումը: Նրանց հիմնական խնդիրն էր «հայերին պաշտպանել ցեղասպանությունից»[22]:

Ստեղծված պայմաններում աստիճանաբար բարձրանում էր մանավանդ Դաշնակցության դերն ու հեղինակությունը ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, Հունաստանում, Արգենտինայում և այլ երկրներում: Սփյուռքում և Հայաստանում չկար որևէ միջոցառում, որին գործուն չմասնակցեր Դաշնակցությունը և հանդես չգար կոնկրետ առաջարկություններով: Դաշնակցությունը, իրագործելով քարոզչության տարբեր ձևեր, հանդես էր գալիս զգույշ: Դաշնակցության Բյուրոն, ըստ Հայաստանի ՊԱԿ-ի նախագահի բնորոշման, սթափ էր գնահատում իրենց մասնակցությունը Լեռնային Ղարաբաղի խնդրին, մանավանդ որ հակառակորդները կարող էին այն շահարկել, թե իբրև բերվել է արտասահմանից, այն էլ Դաշնակցության կողմից: Տվյալ ժամանակաշրջանում Դաշնակցությունը առաջ չէր քաշում ինքնորոշման հարց, սակայն կողմնակից էր հայկական հողերի միավորմանը[23]:

Շարժման հենց սկզբից արևմտյան մի շարք տերություններ, մանավանդ ԱՄՆ-ը, առաջարկում էին հիմնախնդրի լուծման տարբերակներ, որոնք, սակայն, ուղեցույց լինել չէին կարող: Օրինակ՝ ԱՄՆ-ի սենատը 1988-ի հուլիսին ընդունել է որոշում և ներկայացրել հետևյալ պահանջները.

1. Խորհրդային կառավարությունը պետք է բավարարի հայ ժողովրդի օրինական պահանջը:

2. Խորհրդային կառավարությունը պետք է դադարեցնի հայ ժողովրդի իրավունքների լուրջ խախտումները:

[21] *Նույն տեղում, գ. 651, թ. 163:*
[22] *Նույն տեղում, գ. 87, գ. 13, թ. 60:*
[23] *Նույն տեղում, գ. 15, թ. 21:*

3. Եթե Խորհրդային Միությունը շարունակի հայ ժողովրդին դատապարտող քաղաքականությունը, ապա դա անխուսափելիորեն կազդի ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի հարաբերությունների վրա[24]:

Այս փաստաթղթի ընդունման օգտին ելույթ էին ունեցել սենատորներ Դոուլը, Մակկեյնը, Ուինստոնը, Խոլլինգեն, Չապին և ուրիշներ: Ելույթ ունեցողները առաջնորդվում էին նրանով, որ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ միավորման հայ բնակչության պահանջը ունի «օրինական բնույթ» և «համապատասխանում է բոլորի կողմից ընդունված մարդու իրավունքների նորմերին»: Սենատորները Մ.Գորբաչովից պահանջում էին «հայ ժողովրդի նկատմամբ ընդունել հրապարակայնություն»[25]:

Արցախի հիմնահարցը լայն արձագանք էր գտել նաև եգիպտահայ համայնքում: Եգիպտահայերը համերաշխ էին խորհրդային կարգերի հետ և պաշտպանում էին արցախահայության պահանջը: Նրանք միևնույն ժամանակ չէին պատկերացնում Հայաստանի ճակատագիրը առանց Խորհրդային Միության: Եգիպտահայ մամուլը հարց էր դնում լիովին բացահայտել Սումգայիթը և նրա իսկական պատճառները[26]:

Արցախ-Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ անտարբեր չէին կիպրոսահայերը: Նրանք դրվատանքով էին խոսում Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու պահանջի մասին: Խոսելով Սումգայիթում հայերի նկատմամբ կատարված բարբարոսությունների շուրջ և անդրադառնալով Բաքվում տեղի ունեցող հանրահավաքներին՝ դրանք բնորոշում էին որպես պանթուրքիզմ և այդ ամենը համեմատում Կիպրոսի հարցի վերաբերյալ Թուրքիայի դիրքորոշման հետ: Կիպրոսահայերին բոլորից շատ անհանգստացնում էր Ադրբեջանում ապրող հայերի ֆիզիկական անվտանգության խնդիրը[27]:

Եվրոպական պետություններից Անգլիայում ապրող հայերը Արցախի հարցի վերաբերյալ ցուցաբերում էին խիստ զսպվածություն: Նրանք Արցախի հիմնախնդիրը բխեցնում էին Անդրկովկասի ընդհանուր խնդիրներից: Լոնդոնի հայկական համայնքը ստեղծել էր «Ղարաբաղի հետ համերաշխության կոմիտե», որը կապ էր հաստատել Լոնդոնում գտնվող խորհրդային ներկայա-

[24] *Նույն տեղում, գ. 10, թ. 115-116:*
[25] *Նույն տեղում, թ. 116-117:*
[26] *Նույն տեղում, գ. 10, թ. 100-142:*
[27] *Նույն տեղում, թ. 175-177:*

ցուցչության հետ և հույս ուներ, որ արդար կլուծվի Արցախի հարցը[28]: Նույնիսկ այնտեղ գտնվող «Հնչակ» կուսակցության մասնաճյուղը Բեյրութ՝ իր կուսակցության ղեկավարությանը հաղորդել էր, որ խորհրդային խոշորագույն գիտնական Ա.Աղանբեկյանը Լոնդոնում գտնված ժամանակ հայտնել է, որ իբրև Խորհրդային Միությունում ստեղծվել է հանձնաժողով, և որոշման նախագիծ է մշակվել Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու վերաբերյալ[29]:

1988թ. սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին Բեյրութում ընդունվեց դաշնակցական բյուրոյի, ռամկավարների և հնչակյանների համատեղ հայտարարություն, որտեղ շարադրված է այդ կուսակցությունների մոտեցումը Ղարաբաղյան շարժմանը: Հայտարարության մեջ կոչ էր արվում արցախցիներին՝ «ձեռնպահ մնալ ծայրահեղ միջոցներից», որոնք են գործադուլը, դասադուլը, ծայրահեղ կոչերը, որոնք խախտում են հասարակական կարգը և մեծ վնաս են հասցնում տնտեսությանը, կրթությանն ու մշակույթին: Նաև ասված է, որ նման քայլերը բերում են մեր ժողովրդի հեղինակության անկմանը, նրա կապերը կտրում խորհրդային կենտրոնական իշխանություններից և մյուս հանրապետությունների ժողովուրդներից[30]:

Շվեյցարիայի հայկական գաղութը շարժման սկզբին ստեղծել էր «Ղարաբաղին աջակցելու կոմիտե», որը խնդրել էր խորհրդային կառավարությանը օգնություն ցույց տալ ԼՂԻՄ հայ ընտանիքներին: Այդ կոմիտեն 1988թ. սեպտեմբերի 28-ի նիստում մշակել է «Հայկական համաշխարհային շարժման» շվեյցարական բաժանմունքի պլան: Բաժանմունքի նախագահ Թորոս Սաղրանյանը և հայկական շարժման առաջնորդներից Ջ.Գարնուգյանը վերոհիշյալ նիստում առաջ քաշեցին հատուկ պատգամավորություն ուղարկել Ժնևում գտնվող Խորհրդային Միության գլխավոր ներկայացուցչություն և պահանջել Լեռնային Ղարաբաղի հայ ընտանիքներին օգնություն ցույց տալ[31]: Շվեյցարիայի հայ համայնքը առաջ էր քաշել ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ միավորելու պահանջը: Ժնևի հայկական եկեղեցու վանահայր Նասիմ Հայկազյանը գտնում էր, որ պետք է ուժեղացնել ստյուռքահայության

[28] *Նույն տեղում, գ. 15, թ. 162:*
[29] *Նույն տեղում, գ.11, թ. 4:*
[30] *Նույն տեղում, գ. 16, թ. 53-54:*
[31] *Նույն տեղում, թ. 56:*

դիրքորոշումը և պահանջել լուծել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: Նա նույնիսկ քննադատում էր կաթողիկոս Վազգեն Առաջինին «փափուկ և լիբերալ դիրքորոշում» ունենալու համար[32]:

Արցախի հիմնախնդրի հետ կապված նոր պահանջներ էին առաջ քաշում ֆրանսահայերը: Նրանք խորհրդային Միությունից պահանջում էին բանակը դուրս բերել Երևանից: Ֆրանսահայերը ցույցեր էին կազմակերպում Խորհրդային դեսպանության դիմաց և պահանջում «ԼՂԻՄ-ի հարցը վճռել արդարացիորեն»[33]: Իսկ հունահայությունը բողոք էր ներկայացրել Աթենքում խորհրդային դեսպանությանը, որ ԼՂԻՄ-ի մասին տվյալները կեղծվում են, ու ճիշտ հաղորդումներ չեն տալիս[34]:

Արցախի հիմնախնդրի հարցում խիստ վճռական էր ԱՍԱԼԱ-ն: Հայաստանի ՊԱԿ-ի մի հաղորդագրությունից իմանում ենք, որ Թուրքիայի դեսպանը Հռոմից հեռախոսով հայտնել է իր կառավարությանը, թե ԱՍԱԼԱ-ն նախապատրաստվում է վրեժ լուծել «Ադրբեջանում սպանված հայերի համար», և որ նա «պաշտպանում է դարաբաղյան հիմնախնդրի վերջնական նպատակը՝ ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելը»[35]:

1989–1991 թվականներին ստյուռքահայությունը ճնշում էր գործադրում ԽՍՀՄ ղեկավարության վրա և պահանջում լուծել Արցախի հարցը: ԱՄՆ-ի Զորյան ինստիտուտի ներկայացուցիչ Հերալդ Լիպարիդյանը հաղորդել է, որ ԱՄՆ-ում նկատվում է բնակչության զգալի մասի դժգոհություն կենտրոնական ղեկավարությունից, որը ցանկություն չէր ցուցաբերում որոշել հարցը կամ էլ ապահովել հայերի անվտանգությունը, որի ակնառու փաստը հանդիսանում է Սումգայիթը: Ինստիտուտի ղեկավարությունը հրապարակայնորեն հանդես էր գալիս ԼՂԻՄ-ի խնդրի լուծման օգտին: Առանց որևէ տարբերակ առաջ քաշելու ինստիտուտի ղեկավարությունը պահանջում էր առանց ուշացնելու Լեռնային Ղարաբաղը դուրս բերել Ադրբեջանի կազմից[36]:

1988-ի դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժից հետո ստյուռքի հիմնական ուշադրությունը ժամանակավոր շեղվեց ղարաբաղյան հիմնախնդրից և թեքվեց երկրաշարժի կողմը: Այդ

[32] *Նույն տեղում:*
[33] *Նույն տեղում, թ. 57:*
[34] *Նույն տեղում, թ. 62:*
[35] *Նույն տեղում, թ. 252:*
[36] *Նույն տեղում, գ. 33, թ. 40-41:*

օրերին Հայաստանում գտնվող ԱՄՆ-ից ՀՅԴ Կենտկոմի անդամ, Լոս Անջելեսում տպագրվող «Ասպարեզ» թերթի խմբագիր Աբրահամ Պապիկյանը, որի առաքելության նպատակն էր օգնություն կազմակերպել աղետյալներին, Երևանում հանդիպում ունենալով «Հայկական հարցի պաշտպանության ընկերություն» ինքնագործ կազմակերպության ղեկավարի հետ, նշել է, որ Դաշնակցությունը որոշել է հիմնովին փոխել իր վերաբերմունքը Հայկական ԽՍՀ-ի նկատմամբ, հրաժարվել նախկին նեգատիվ դիրքից և համագործակցել Հայրենիքի հետ: Նաև նշել է, որ Դաշնակցությունը մտադիր է արտասահմանյան հայերի ֆինանսական միջոցներն ուղղել դեպի Հայաստանի տնտեսությունը: Ա.Պապիկյանը նաև հայտարարել է, թե ինքը Հայաստան է ժամանել էմիսարական միսիայով՝ ուսումնասիրելու «Ղարաբաղյան հարցի» վիճակը: Տեղյակ պահեց, թե Դաշնակցությունը մտադիր է «հենակետ» ստեղծել «գաղափարական մուտք գործելու հանրապետություն»[37]:

Սփյուռքահայությունը իր բողոքի ձայնը բարձրացրեց «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին ձերբակալելու կապակցությամբ: Խորհրդային իշխանության այդ քայլը խիստ բացասական ընդունվեց սփյուռքահայության կողմից: Սփյուռքահայությունը հայ-ադրբեջանական ընդհարումը բնութագրում էր որպես «հայերի նկատմամբ ճնշում և նրանց ետ պահում արդարացի պահանջներից»: Սփյուռքի «Բարեգործական» ընկերությունը Լուիզ Սիմոնի ստորագրությամբ 1988-ի դեկտեմբերին նամակ էր ուղարկել ռամկավարներին, հնչակյաններին և այլ հայկական ընկերությունների՝ առաջարկելով հանդիպել ԽՍՀՄ-ի դեսպանների հետ և բողոք հայտնել «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալության առթիվ[38]:

Ռամկավար ազատական կուսակցության Կենտրոնական վարչությունը 1989թ. սեպտեմբերի 18-ին Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանին հղած նամակում տեղյակ էր պահում Մ.Գորբաչովին ուղարկված նամակի մասին, որտեղ սատար էր կանգնել Լեռնային Ղարաբաղին ու Հայաստանին: Այդ նույն օրը նոր նամակ էր ուղարկվել Մ.Գորբաչովին, որտեղ նշված է. «Հայկական և Ատրպէյճանական խորհրդային ընկերավարական հանրապետութիւններում միջեւ լարվածութիւնը հասած է այնպիսի աստիճանի մը, ուր երկու երկրներու բնակիչները իրենք զիրենք կը գտնեն աղիտաւոր պատերազմի մը եզրին: Աղէտ՝ որ շրջանը կրնայ վերածել նոր Լիբանանի:

Բոլոր տեղեկութիւնները կը հուշեն թէ Լեռնային Ղարաբաղի բնակչութեան ծրագրեալ կոտորածը վերահաս է: Վիթխարի պատուհասի մը ուրուականը կը թեւածէ այդ պաշարեալ երկրին վրայ: Չեզի կը դիմենք անյապաղ միջամտելու եւ կասեցնելու այս անողոքելի յառաջխաղացումը դեպի ողբերգութեան անդունդը»: Այնուհետև նշված է, որ այսօր Լեռնային Ղարաբաղը ամբողջովին շրջապատված է ազատ զինյալ հորդաներով, որոնք պատրաստ են նոր սումգայիթ իրագործել: Հայերի ջարդը կազմակերպողները տակավին անպատիժ են և ազատ շրջագայում են՝ միշտ պատրաստ՝ կրկնելու իրենց ոճիրը: Թվարկելով և մերկացնելով խորհրդային իշխանության հանցագործ քայլերը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ, խախտելով Սահմանադրությունն ու մարդու իրավունքների բանաձևը՝ հանգում է այն եզրակացության, որ հնարավոր չէ հանդուրժել «Լեռնային Ղարաբաղում ստեղծված կացությունը»: Ստեղծված տագնապից դուրս գալու միակ ուղին «ՔԱՂԱՔԱԿԱՆ լուծումն է՝ Լեռնային Ղարաբաղի վերամիացումը Հայաստանին: Սա վրեժխնդիր չէ, քանզի հին Արցախը 3000 տարիներ շարունակ հանդիսացել է Հայաստանի անբաժանելի մասը»: Իսկ վերջում՝ «Թող արդարութիւնը վերահաստատուի, պրն Նախագահ, թո՛ղ Արցախի հնամենի և սրբազան հողը վերջապես միանայ Հայաստանին, որպեսզի համայն աշխարհի մարդիկ վերստին հաւատան Ձեր անկեղծութեան՝ երբ շեշտեք ռամկավարացումի և հրապարակայնութեան սկզբունքները»[39] :

Թուրքիայում և Իրանում մուսուլմանական կազմակերպությունները և նրանց հարող հասարակական խմբերը դժգոհ էին, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը չէր լուծվում իրենց ցանկացածի պես, այսինքն՝ խնդրի լուծման ընթացքը դեմ է «Մեծ Թուրքիա» ստեղծելու գաղափարին: Թավրիզում մուսուլմանական առաջնորդները ընդունում են կոչ ընդդեմ հայ ժողովրդին: Այդտեղ կրոնավոր Մալակուտին առաջ էր քաշել հրահրիչ լոզունգ՝ «միասնական և անկախ Ադրբեջան ստեղծելու անհրաժեշտությունը», որտեղ մուսուլմանների իրավունքներն ու շարիաթի նորմերը կարող են գտնել իսկական հարգանք»[40]: Իսկ ինչ

[37] Նույն տեղում, գ. 34, թ. 10:
[38] Նույն տեղում, թ. 18:

[39] Նույն տեղում, գ. 33, թ. 276-278.
[40] Նույն տեղում, գ. 34, թ. 20:

մնում էր Թուրքիային, ապա այնտեղ ԼՂԻՄ-ի հարցի շուրջ ակտիվացել էին այդ պետությունում գոյություն ունեցող «Ադրբեջանի հետ եղբայրական օգնության և համերաշխության ընկերության» գործիչները: Այդ ընկերությունը ստեղծվել էր երկու տարի առաջ այստեղ ապրող ազերիների կողմից: Ընկերության կենտրոնը գտնվում էր Կահիրեում, որը մասնաճյուղեր ուներ Աղրը և Իգդիր քաղաքներում: Դա աջ ազգայնամոլների կազմակերպություն էր, որը, հանդես գալով Հայաստանի սահմանամերձ շրջաններում, Թուրքիայի կառավարությունից պահանջում էր «օգնություն ցույց տալ եղբայր-թուրքերին հայերի դեմ մղվող պայքարում»: Ընկերության ղեկավարությունը առաջ էր քաշել «Ադրբեջան ուղարկել զենք թուրքական հնագույն հողը պաշտպանելու համար»[41]:

1989թ. Թուրքիայում իրավիճակն ավելի էր սրվել: Կարսի մարզից «Հայրենիք» կուսակցության անդամ Սաբրի Արասը հանդես էր եկել հաղորդումով «Ղարաբաղ, Նախիջևան և թուրքական համատեղ համայնք» ստեղծելու վերաբերյալ: Հաղորդումը առաջ էր բերել հակախորհրդային և հակահայկական նեգատիվ տրամադրություն: Այն հագեցված էր պանթուրքական ոգևորությամբ, որը կոչ էր անում բոլոր թուրքերին, որոնք ապրում են այլ երկրներում, մասամբ ԽՍՀՄ-ում, միավորվել և պաշտպանել թուրք ժողովրդի իրավունքները, որոնք «ճնշվում են կոմունիստների կողմից»: Սաբրի Արասը գտնում էր, որ Լեռնային Ղարաբաղն ու Նախիջևանը կորցնելու դեպքում Թուրքիայի կապը կկտրվի Խորհրդային Միության մուսուլմանների հետ»[42]:

Հայկական ԽՍՀ մինիստրների խորհրդին առընթեր եկեղեցական խորհրդի նախագահ Ս.Վարդանյանը իր 1989թ. հայկական եկեղեցու գործունեության մասին զեկուցագրում նշել է, որ Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված ողբերգական իրադարձությունները ցնցել էին ամբողջ հայ ժողովրդին: 1989թ. նոյեմբերի 23-ին Հայկոմկուսի Կենտկոմ ուղարկված ՊԱԿ-ի նախագահ Վ.Բաղամյանցի հաղորդագրության մեջ նշված է, որ Սիրիայի հայ գաղութը խիստ դժգոհ է ՀՀՇ-ի առաջին համագումարի որոշումներից: Ասենք նաև, որ Սիրիայի հայկական գաղութը դեմ էր Հայաստանը ԽՍՀՄ-ի կազմից դուրս բերելուն և կողմնակից էր Արցախի վերամիավորմանը Հայաստանին: ԽՍՀՄ արտաքին

[41] *Նույն տեղում, թ. 21:*
[42] *Նույն տեղում, թ. 54:*

գործերի նախարարությունից ոմն Յ.Կոպլյակովը 1990թ. մարտի 13-ին Երևան և Բաքու ուղարկեց առաջարկություն, որը կազմել էր Անկարայում ԽՍՀՄ դեսպան Ա.Չերնաևը: Համաձայն այդ առաջարկության Անկարան ցանկություն էր հայտնել Անդրկովկասում փախստականների համար շինարարություն սկսել: Հայաստանի արտաքին գործերի նախարար Ա.Սկրտչյանը Հայաստանի կառավարությանը առաջարկել էր մերժել Թուրքիայի այդ ցանկությունը, քանի որ նման առաջարկությունը լուրջ չէր և հետապնդում էր քաղաքական նպատակներ[43]:

ԼՂԻՄ-ի հիմնախնդրի և Հայաստանի շրջափակման հարցը տակավին մնում էր խիստ հրատապ: Արտասահմանյան հայ ազդեցիկ կազմակերպությունները միջոցառումներ էին ձեռնարկում քննարկելու Հայաստանի շրջափակման հարցը և այն վերացնելու համար կոնկրետ առաջարկություններ ներկայացնել ԽՍՀՄ ղեկավարությանը: Արտասահմանում գործող հայ քաղաքական ուժերը, մանավանդ Դաշնակցությունը, փորձում էին ՄԱԿ-ում քննարկել «ԽՍՀՄ-ում հայ բնակչության անվտանգության մասին» հարցը: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պերես դե Կուելյարին ուղարկած կոչում պահանջում էին «անձամբ միջամտել Լեռնային Ղարաբաղի հարցին և պարտավորեցնել խորհրդային կառավարությանը, որպեսզի նա անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկի Հայկական ԽՍՀ շրջափակումը վերացնելու համար»[44]:

1989թ. վերջին Ռամկավար ազատական կուսակցությունը, կոչով դիմելով ամբողջ սփյուռքահայությանը, առաջ էր քաշում Խորհրդային Հայաստանին և Ղարաբաղին պաշտպանելու համար ստեղծել Համաշխարհային կոմիտե: Այդ կոմիտեի Կիպրոսի բաժանմունքը, հանդես գալով հայտարարությամբ, խիստ քննադատում էր Ադրբեջանը Հայաստանին շրջափակելու համար: Նրանք որոշեցին Հայաստանին օգնություն ցույց տալ օդանավերով՝ Լարնակա-Երևան ուղերթով[45]:

1990թ. գարնանը Իրանում նոր թափ էր առել Լեռնային Ղարաբաղին պաշտպանելու հարցը: Ի պատասխան դրան՝ իրանական ազերիները թռուցիկներ էին տարածում, որտեղ հայերին զրպարտում էին, թե իբր նրանց «ձեռքերը կեղտոտված են անմեղ ադրբեջանցիների արյունով»: Իրանի արտաքին գործերի նախա-

[43] *Նույն տեղում, գ. 46, թ. 16:*
[44] *Նույն տեղում, գ. 34, թ. 32:*
[45] *Նույն տեղում, գ. 47, թ. 1:*

ռարությունը և կրոնական ղեկավարները պաշտոնապես վստահեցրել էին այնտեղի հայ գաղութի ներկայացուցիչներին, որ թույլ չեն տա՝ տեղի ունենա հակահայկական որևէ գործողություն[46]:

Ինչպես նշվել է, ՀՅԴ-ն այն քաղաքական ուժն էր, որը գլխավորում էր սփյուռքահայության պայքարը և սատար էր կանգնել Արցախի հիմնախնդրին: Արխիվային մի հաղորդումից իմանում ենք, որ դաշնակցության ղեկավարությունը ֆրանսիական սոցիալիստական կուսակցության հետ նախնական քննարկումից հետո եկել էր այն եզրակացության, որ պետք է պաշտպանել «Ղարաբաղ» կոմիտեին[47]: Իսկ երբ Մ.Գորբաչովը նախապատրաստվում էր մեկնել Ֆրանսիա, այնտեղի Դաշնակցությունը որոշել էր հանդիպել նրա հետ և քննարկել «Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ միավորելու» հարցը: Հանդիպման դեպքում պետք է շոշափվեին նաև Հայաստանի դեմոկրատացման և Սումգայիթի հետ կապված հարցեր[48]: Դաշնակցությունը նույնիսկ մտադիր էր ֆրանսիական մի շարք թերթերի էջեր վարձակալել «նյութեր տպագրելու ԼՂԻՄ-ի կապակցությամբ»: Որոշվել էր նյութերը տպագրել ճշմարիտ և օբյեկտիվ[49]:

1989թ. վերջին Դաշնակցությունը ավելի էր հստակեցրել իր տեսակետը Ղարաբաղյան հարցում: Դաշնակցության բյուրոն եկել էր այն եզրակացության, որ ադրբեջանական կողմը սկսել է «սրբազան պատերազմ» հայերի դեմ և մտադիր է առաջ բերել զինված ընդհարում՝ ձգտելով «թույլ չտալ ԼՂԻՄ-ը դուրս բերել իր կազմից»[50]: Բյուրոն նաև նշել է, որ միջազգային ասպարեզում Ադրբեջանը օգտվում է Թուրքիայի ուղղակի աջակցությունից և ԱՄՆ-ի հովանավորությունից: Բյուրոն շեշտում է, որ Ղարաբաղյան հարցը դարձել է վերակառուցման քննություն, և եթե այն չորոշվի, ապա Խորհրդային Միությունում հակառակորդների դիրքերը կամրապնդվեն: Բյուրոն կոչ էր արել թույլ չտալ Ադրբեջանի հետ ուղղակի ընդհարում: Բյուրոյի կարծիքով վերակառուցման սկզբունքների իրագործման պայմաններում միայն հնարավոր

[46] *Նույն տեղում, թ. 25:*
[47] *Նույն տեղում, գ. 34, թ. 26:*
[48] *Նույն տեղում, թ. 38:*
[49] *Նույն տեղում, թ. 40:*
[50] *Նույն տեղում, թ. 62:*

կլիներ դեմոկրատական մեթոդներով պայքարել Ղարաբաղի համար[51]:

Կան տվյալներ, որ Հայ հեղափոխական դաշնակության առաջնորդները հերթական քարոզչություն էին ծավալել ԱՄՆ-ում՝ հայտարարելով, որ խորհրդային իշխանությունը միջոցառումներ չի ձեռնարկում ԼՂԻՄ-ի վիճակը կայունացնելու համար, և չի արգելվում Թուրքիայի ու Իրանի տարածքներից զենքի տեղափոխումը Ադրբեջան: Նման հանգամանքներում անհրաժեշտ է զինել ԼՂԻՄ-ի հայերին և ստեղծել ընդհատակյա զինված խմբեր՝ ադրբեջանցիների կողմից կատարվող հարձակումներից պաշտպանվելու համար: Հայ հեղափոխական դաշնակցությունը իր կողմնակիցներին կոչ էր արել անլեգալ կերպով զենք մատակարարել Հայաստան՝ շեշտելով, որ դա «հանդիսանում է սփյուռքահայության պարտքը»[52]:

Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմից դուրս բերելու հարցը միշտ էլ քննարկման առարկա էր հանդիսացել սփյուռքի տարբեր օջախներում: Սփյուռքի հայկական եկեղեցին, դաշնակցությունը, ռամկավարները և այլ քաղաքական ուժեր խիստ անհանգստացած էին Արցախում տեղի ունեցող արյունահեղ իրադարձություններից: Նրանք խորհրդային իշխանություններին առաջարկում էին հայ-ադրբեջանական սահմանի երկարությամբ տեղակայել զորամասեր: Նրանք խնդրում են նախագահ Ջ.Բուշին Մ.Գորբաչովի հետ ունենալիք հանդիպման ժամանակ քննարկել Արցախ-Հայաստանի վիճակը: Սփյուռքահայ գաղութը պլանավորել էր ցույցեր կազմակերպել արտասահմանյան խորհրդային ներկայացուցչությունների դիմաց, ստիպել, որպեսզի այդ ներկայացուցիչները հանդիպեն հայկական գաղութների ներկայացուցիչների հետ[53]:

ԱՄՆ-ի դաշնակցությունը սխալ էր համարում Հայաստանի անջատումը ԽՍՀՄ-ից: Այնտեղ բացահայտ քննադատում էին Պ.Հայրիկյանին և ՀՀՇ-ի առանձին ղեկավարների, որոնց քայլերը, իբր, կարող են հայ ժողովրդին տանել փակուղի: Նրանք գտնում էին, որ ՀՀՇ-ականները Մոսկվայի և Ադրբեջանի հակահայ

[51] *Նույն տեղում:*
[52] *Նույն տեղում, թ. 63:*
[53] *Նույն տեղում, թ. 65-66:*

քաղաքականության դեմ չունեն գործողությունների մշակված քայլեր[54]:

1990թ. մայիսի վերջին Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները խիստ անհանգստություն էին պատճառել սփյուռքահայ քաղաքական ուժերին: Դաշնակցության ղեկավարությունը գտնում էր, որ մայիսի 27-ին Երևանում տեղի ունեցած իրադարձությունները «ԽՍՀՄ իշխանությունների կողմից նախօրոք պլանավորված գործողություն էին», քանի որ «հայ ժողովրդի ձգտումը Խորհրդային Միության որոշ ղեկավարների սրտովը չէ»: Դաշնակցությունը նաև մեղադրում էր խորհրդային բանակի ղեկավարությանը, որ երբ Բաքվում սպանվում էին հայեր, ռազմական իշխանությունները չէին ձեռնարկել արյունահեղությունը կանխելու որևէ քայլ»[55]: Իրանի հայ քաղաքական ուժերը, մանավանդ դաշնակցությունը, խորհրդային ղեկավարներից պահանջում էին «ապահովել հայերի անվտանգությունը ԽՍՀՄ-ում և լուծել ղարաբաղյան հարցը»[56]: Նրանք քննադատում էին այն փաստը, որ Հայաստանում բազմաթիվ մարդիկ ունեին զենք, հաճախ տեղի էին ունենում մարդկային զոհեր, և ուժեղանում էին «մաֆիոզ խմբավորումները»: Նրանք կողմնակից էին Հայաստանում հաստատել բազմակուսակցական իշխանություն, որը հնարավորություն կտար սփյուռքի կուսակցություններին անմիջապես մասնակցել ազգային կարևոր խնդիրների վերաբերյալ որոշումների ընդունմանը: Դա նաև հնարավորություն կտար, ըստ դաշնակցության, լայնորեն օգտագործել սփյուռքի տնտեսական հնարավորությունները հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման գործում[57]:

Կարևոր է նշել նաև այն, որ արդեն 1990թ. ամռանը ԱՍՍԼԱ-ի ուշադրությունը բևեռված էր Ղարաբաղի հարցի շուրջը: ԱՍՍԼԱ-ն դժգոհ էր «ղարաբաղյան հարցի չլուծումից և դրանում ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների դիրքորոշումից»: ԱՍՍԼԱ-ն գտնում էր, որ պետք է Արևմուտքից ուժեր տեղափոխել ԽՍՀՄ և օգնել հայ ժողովրդին:

[54] *Նույն տեղում, գ. 47, թ. 45:*
[55] *Նույն տեղում, թ. 60:*
[56] *Նույն տեղում, թ. 61:*
[57] *Նույն տեղում, թ. 62:*

Թե՛ Սփյուռքը և թե՛ արտասահմանյան շատ ժողովուրդներ ավելի ակտիվացրին իրենց գործունեությունը Արցախի ազգային-ազատագրական պատերազմի տարիներին՝ 1991-1994 թվականներին: Բացի հանրահավաքներից, ներկայացված պահանջներից և կոչերից, նրանք, մեղադրելով Ադրբեջանին և Թուրքիային, պահանջում էին նրանց հարցը լսել միջազգային ատյաններում, մերկացնել նրանց բարբարոսությունները, որոնք նոր ցեղասպանություն էին իրագործում արցախահայության նկատմամբ: Սփյուռքը նանրնյութական և մարդկային օգնություն էր ցույց տալիս Արցախին: Կային սփյուռքահայեր, որոնք իրենց կյանքը նվիրեցին Արցախի ազատագրական պայքարին: Դրա վառ օրինակն է Մոնթե Մելքոնյանը:

Չնայած այս հարցը ներկայացվում է խիստ համառոտ, սակայն դա էլ բավական է գաղափար կազմելու, թե Արցախի ազգային-ազատագրական պայքարի տարիներին հայկական սփյուռքը, այնտեղ գործող հայ քաղաքական և հասարակական ուժերը, արտասահմանյան երկրները ինչպիսի դիրքորոշում են ունեցել արցախյան բարդույթի նկատմամբ:

6. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

1988-1991թթ. Ղարաբաղյան հիմնախնդիրը ենթադրվում էր լուծել Խորհրդային Միության լիազորության և ներքին գործերի շրջանակներում: 1991թ. սեպտեմբերի 23-ին Ժելեզնովոդսկում Ռուսաստանի և Ղազախստանի նախաձեռնությամբ կայացած բանակցություններում շրջանառության մեջ մտավ հակամարտությունը փուլ առ փուլ լուծելու առաջարկությունը: Ասել է թե՝ նախ հակամարտության գոտում առկա խնդիրները կարգավորել միջնորդների օգնությամբ, հետո սկսել բանակցային գործընթացը: Սակայն իրավիճակը փոխվեց նույն թվականի դեկտեմբերի 11-ին Բելովեժյան որոշումից հետո: Այդ ժամանակ էլ ԼՂ հիմնախնդիրը տեղափոխվեց որակապես այլ՝ միջազգային մակարդակ:

1992թ. հունվարից սկսած Ֆրանսիայում, Անգլիայում, ԱՄՆ-ում և այլ երկրներում խոսակցություններ էին գնում ԼՂ խնդրի լուծմանը գործուն մասնակցություն ունենալու առաջարկով[1]:

[1] *«Ազդակ», էջ 100:*

Մինչդեռ Թուրքիա կատարած պաշտոնական այցի ժամանակ Ադրբեջանի նախագահ Ա.Մութալիբովը հանդես եկավ ընդդեմ ԼՂ հարցի միջազգայնացմանը՝ այն հայտարարելով Ադրբեջանի ներքին գործը: Իսկ երբ 1992թ. հունվարի վերջին Հայաստանը և Ադրբեջանը դարձան ՄԱԿ-ի և Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդի անդամ, Լեռնային Ղարաբաղի հարցը դուրս եկավ Երևանի և Բաքվի ներքին գործ լինելուց: Այդ մասին հունվարի 30-ին ԵԱՀԿ Պրահայի նիստում հատուկ հայտարարեց Ռուսաստանի պատվիրակության ղեկավար Ե.Տերիևպինը:

Փետրվարի վերջին և մարտի սկզբին ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովը քննարկել էր Արցախի հարցը: Մարդու իրավունքների պաշտպան փաստաբանների անունից հարցը բարձրացրել էր Հրայր Պալյանը: Նա իր ելույթում ընդգծել է, որ տակավին չի ճանաչված Արցախի ժողովրդի ինքնուրույն իրավունքը, և ոտնահարվում են նրա մարդկային իրավունքներն ու ազատությունները: Հանձնաժողովի անդամներին բաժանվել էին «Լեռնային Ղարաբաղը և ազգային հակասությունները, մարդու իրավունքների ոտնահարում» աշխատանքային փաստաթուղթը: Հանձնաժողովի նիստում նույնիսկ փորձ էր արվել ստիպել միջազգային հանրությանը՝ լրջորեն գիտակցելու Արցախի իրադրության և ընդհանրապես ԽՍՀՄ-ում ազգամիջյան հակասությունների վտանգավորությունը: 1992թ. հունվարի վերջին ՀՀ արտաքին գործերի նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը լրագրողներին հայտարարեց, թե Լեռնային Ղարաբաղը չպետք է պատկանի ոչ Հայաստանին, ոչ Ադրբեջանին, դա է նրա անկախության առավել հավաստի ուղին: Այդ օրերին Ռ. Հովհաննիսյանը մասնակցելու էր Պրահայում ընթացող Հելսինկիի գործընթացի մասնակից երկրների արտգործնախարարների խորհրդի նիստին: Նա այն կարծիքին էր, որ Լեռնային Ղարաբաղի խնդիրն ընկած է մարդու իրավունքների և քաղաքացիների ինքնորոշման իրավունքների հարթության վրա: Ռ.Հովհաննիսյանը աշխարհին տեղյակ պահեց, որ Հայաստանի կառավարությունը պաշտպանում է Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանը միտված ամեն տեսակ խաղաղասիրական նախաձեռնությունները, այդ թվում և ՄԱԿ-ի խաղաղապահ ուժեր կամ Եվրոպայի անվտանգության ու

համագործակցության դիտորդների խումբ Լեռնային Ղարաբաղ ուղարկելը[2]:

Այնուամենայնիվ, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման եզրերը չէին երևում ամենից առաջ Ադրբեջանի իշխանությունների ոչ կառուցողական մոտեցման պատճառով: Միջազգային հանրությանն անհանգստացնում էր ԼՂՀ ծանր վիճակը, և նրան օգնելու ուղիներ էր որոնում: Հայաստանի առաջ քաշած Ղարաբաղի հիմնախնդրի միջազգայնացման հարցը հասունացել էր: Նախընտրելին բանակցային գործընթացով հիմնախնդրի լուծումն էր, սակայն ադրբեջանական կողմը փորձում էր այն լուծել ուժով:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ), 1992թ. փետրվարի 27-28-ը քննարկելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ կապված հարցը, շեշտեց սահմանների անձեռնմխելիությունը, և ԼՂՀ-ն ճանաչվեց Ադրբեջանի տարածքում՝ ինքնավարության իրավունքով: Միաժամանակ արձանագրվեց Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը և բանակցություններին նրա մասնակցելու անհրաժեշտությունը: Այդ քննարկումից առաջ՝ փետրվարի 25-ին, ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանն ուղերձ էր հղել աշխարհի 14 պետությունների ղեկավարներին, որում Ադրբեջանին մեղադրում էր արցախյան հիմնախնդիրը ռազմական ճանապարհով լուծելու մեջ՝ «չխորշելով իր ամբողջ զինանոցը Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչության դեմ օգտագործելուց»: Նաև նշվել է, որ Ադրբեջանը, ձգտելով Հայաստանի, և այլ երկրների ներքաշել պատերազմի մեջ, կանգ չի առնում ոչնչի առջև: Ադրբեջանի կողմից հրահրվող պատերազմը կանխելու նպատակով Հայաստանի նախագահն անում էր մի շարք կոնկրետ առաջարկություններ[3]:

1992թ. մարտի 24-ին Հելսինկիում ԵԱՀԿ արտահերթ հանդիպման ժամանակ որոշում ընդունվեց ապրիլի կեսերին Մինսկում կազմակերպել խորհրդաժողով շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ: Այդ խորհրդաժողովի կազմակերպիչներ Ֆրանսիայի ու Չեխոսլովակիայի արտաքին գործերի նախարարությունները հայտարարեցին «ԼՂՀ պատվիրակության լիարժեք իրավունքների պահպանման անհրաժեշտության մասին», չնայած Ադրբեջանը լիովին դեմ էր, որ նման պատվիրակության կազ-

[2] *«Հայաստանի Հանրապետություն», 01.02.1992:*
[3] *Նույն տեղում, 28.02.1992:*

մում լինեն Արցախի անկախության համար պայքարող գործիչներ:

1992թ. փետրվարի 28-ին և մարտի 24-ին ԵԱՀԿ համաժողովների ընդունած և Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված փաստաթղթերում հստակ ասված է, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի տարածք է: Համաձայն այդ փաստաթղթերի՝ արցախահայությունը դիտվում է որպես ազգային փոքրամասնություն, որին պետք է տրվի մշակութային ինքնավարություն: Հետևաբար, անտեսվում էր Լեռնային Ղարաբաղի բնիկ ժողովրդի՝ միջազգային իրավունքի բոլոր նորմերով արտահայտված կամքը: Հայտնի է, որ ԵԱՀԿ-ի Հելսինկյան եզրափակիչ ակտն ունի 10 սկզբունք: Դրանցից արցախահայության համար կարևոր են երկուսը, որոնցից մեկը տարածքների ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության սկզբունքն է, իսկ մյուսը՝ ազգերի ինքնորոշման իրավունքը: Այդ երկու հակադիր սկզբունքներից նախապատվությունը տրվում է տարածքային ամբողջականությանը: Տարբեր միջազգային կազմակերպություններում ձևավորված այս մոտեցումը, ցավոք, կիսում էին նաև ՀՀՇ-ական պարագլուխները, որի վառ ապացույցը նրանց օրոք Հայաստանի Հանրապետության կողմից վերոհիշյալ փաստաթղթի ընդունումն է[4]:

Եվրախորհուրդը, 1992թ. մարտի 9-ին կոչով դիմելով Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարներին, հորդորում էր կրակն անմիջապես դադարեցնել Լեռնային Ղարաբաղում: Այդ կապակցությամբ մարտի 11-ին Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Մ.Մամեդովը հեռախոսազրույց ունեցավ Ա.Մկրտչյանի հետ: Այն հիմնականում զինադադարի հարցի շուրջ էր: Ի վերջո, Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները մարտի 15-ին Թեհրանում ստորագրեցին Իրանի միջնորդությամբ ձեռք բերված զինադադարի համաձայնագիր-նախագիծը, իսկ մարտի 19-ին հակամարտող կողմերը ձեռք բերեցին մեկ շաբաթյա զինադադարի համաձայնություն, որը, սակայն, բազմիցս խախտվեց ազերիների կողմից:

Հայաստանի և Ադրբեջանի իշխանություններին դիմել էին նաև Բ.Ելցինն ու Ն.Նազարբաևը և կոչ արել բանակցություններ սկսել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի շուրջ[5]: Այդ կոչն

[4] «Երկիր», 08.05.1992:
[5] "Голос Армении", 06.03.1992:

արժանացել է մի շարք երկրների ու բազմաթիվ միջազգային կազմակերպությունների հավանությանը: ՄԱԿ-ի պատվիրակությունը Սայրուս Վենսի գլխավորությամբ, այցելելով տարածաշրջան, մարտի 10-ին Ստեփանակերտում հանդիպել էր Արթուր Մկրտչյանի հետ և քննարկել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին առնչվող որոշ հարցեր: Դրանից հետո՝ մարտի 24-ին, ԵԱՀԿ-ի անդամ երկրների արտաքին գործերի նախարարները, հավաքվելով Հելսինկիում, որոշեցին Մինսկում կազմակերպել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին նվիրված միջազգային կոնֆերանս:

Այսպիսով՝ 1992թ. փետրվար-մարտին Լեռնային Ղարաբաղի հարցը փաստորեն միջազգայնացվեց: Դրանում բոլորից շատ շահագրգռված էին Հայաստանի ՀՀՇ-ական իշխանությունները: Լ.Տեր-Պետրոսյանը նույնիսկ տեսակետ հայտնեց, թե «բանակցություններում Հայաստանը չպետք է հանդես գա որպես ակտիվ կողմ, որովհետև նա կարող է միայն այս կամ այն կերպ նպաստել ձեռք բերված պայմանավորվածությունների իրագործմանը և համաձայն է հարցի ցանկացած լուծմանը, որը կբավարարի Լեռնային Ղարաբաղի բնակչությանը»[6]: Արթուր Մկրտչյանը, մարտի 14-ին պատասխանելով «Ազգի» թղթակցի հարցին, նշել է, որ Ղարաբաղի հարցի միջազգայնացման կապակցությամբ իրենց ոչ ոք չի դիմել, դիմել են միայն Հայաստանին և Ադրբեջանին: Մինչդեռ, ըստ նրա, Հայաստանը կարող էր «ձիու քայլ կատարել» և առաջարկել Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև բախումը կարգավորելու իր միջնորդությունը: ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահը թղթակցի այն հարցին, թե Լեռնային Ղարաբաղի խնդրի միջազգայնացումը օգնո՞ւմ է խնդրի լուծմանը, պատասխանեց. «Իհարկե օգնում է, այն տեսակետից, որ Ադրբեջանն արդեն երբեմն ինչ-որ պատասխանատվություն է կրում իր արածների համար: Այնպես անպատիժ չի զգում, ինչպես մի երկու տարի առաջ, երբ խորհրդային կայսրության ժամանակ այդ խնդիրը անընդհատ փակվում էր Ադրբեջանի սահմաններում»[7]:

1992թ. մարտի վերջին տարածաշրջան այցելած ԵԱՀԿ նախագահ Իրժի Տինսպրի գլխավորած պատվիրակությունը Հայաստանին և Ադրբեջանին ներկայացրեց հակամարտության կարգավորման նախագիծ, որտեղ ներառված էին ազգային վար-

[6] «Հայաստանի Հանրապետություն», 19.02.1992:
[7] «Ազգ», 18.03.1992:

չական միավորների ինքնորոշման իրավունքի և սահմանների անձեռնմխելիության սկզբունքները: Ադրբեջանը նույնիսկ ընդունեց հետագա բանակցություններում Ղարաբաղի «երկու համայնքների» խորհրդակցական ձայնի իրավունքը: Այդ օրերին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը, հանդես գալով հայտարարությամբ, նշեց, որ «Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման առաջին քայլը կլինի հետևյալը. միջազգային հանրությունը կամ ԼՂՀ-ն կընդունի իբրև առանձին պետություն կամ ուղղակի բանակցություններ կվարի նրա հետ՝ իբրև լիիրավ գործակցի»[8]:

Ստեղծված այդպիսի վիճակում անհնարին էր Մինսկում հրավիրել խորհրդաժողով: Այն նախապատրաստելու հանձնարարությունը տրվել էր ԵԱՀԿ-ում Իտալիայի ներկայացուցիչ Մարիո Ռաֆայելիին: Միաժամանակ որոշում էր կայացվել 150-200 դիտորդներ տեղադրել հակամարտության գոտում:

Ինչպես նշվել է, ղարաբաղյան հարցում ԵԱՀԿ-ի և ՄԱԿ-ի աշխուժացման հետ որոշակի գործնական քայլեր ձեռնարկեց նաև Իրանը: Նա տարածաշրջան ուղարկեց պատվիրակություն արտաքին գործերի նախարար Մ.Վայեզիի ղեկավարությամբ, որի նպատակն էր բարձրագույն քաղաքական հանդիպում կազմակերպել Հայաստանի, Ադրբեջանի, ԼՂՀ-ի, Իրանի և Ռուսաստանի մասնակցությամբ: Այդ նախաձեռնության հետևանք էր նույն թվականի մայիսի 6-8-ը Թեհրանում նշված պետությունների մասնակցությամբ բանակցությունների սկիզբը, որը, սակայն, ձախողվեց այդ օրերին Շուշիի ազատագրման ռազմական գործողության իրականացման պատճառով:

Հունիսի 1-ին Հռոմում սկսված 11 երկրների ներկայացուցիչների խորհրդաժողովը որոշում ընդունեց Մինսկի համաժողովը անցկացնել հունիսի 23-ին: Ասվել է՝ քանի որ ԼՂՀ-ն պետք է համաժողովին մասնակցեր դիտորդի կարգավիճակով, ուստի հրաժարվեց պատվիրակություն ուղարկել Հռոմ: Դա խիստ անհանգստացրեց Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը, մանավանդ Լ.Տեր-Պետրոսյանին: Վերջինս սուր քննադատության ենթարկեց ԼՂՀ ղեկավարությանը: ԼՂՀ ԳԽ նախագահությունը, 1992թ. հունիսի 28-ին դիմելով Մինսկի կոնֆերանսի նախագահ Մարիո Ռաֆայելիին, բացատրեց ԼՂՀ-ի պատվիրակության Հռոմ չմեկնելու պատճառները: Մինչ այդ դեռևս մայիսի 19-

[8] *«Ազդակ», էջ 102:*

ին և 31-ին, Մարիո Ռաֆայելիին ուղարկած ԼՂՀ իշխանությունների նամակներում զգուշացվել էին Հռոմում անցկացվող խորհրդակցություններին և Մինսկում անցկացվելիք կոնֆերանսին ԼՂՀ-ի մասնակցությունը ապահովելու մասին: Կողմնակից լինելով, որ երկու հանրապետությունների միջև կոնֆլիկտի լուծումը հնարավոր է միայն խաղաղ ճանապարհով՝ ԼՂՀ-ն հայտնել է իր մտահոգությունները.

1. Ամեն անգամ Ադրբեջանը հարձակումներ է գործում բանակցությունների նախօրյակին, ինչպես որ եղել էր հունիսի 12-ին և հերթական անգամ հունիսի 28-ի առավոտյան Հռոմում հանդիպում սկսելուց առաջ, որը պետք է սկսվեր հունիսի 29-ին:

2. Օրինական ընտրված ԼՂՀ իշխանությունների կարգավիճակը իջեցվում է մինչև «հայկական համայնքի ներկայացուցիչների» կարգավիճակի:

3. Մոտեցում՝ ԼՂՀ-ն թողնել Ադրբեջանի կազմում:

Այդուհանդերձ, Հռոմ մեկնելու հարցը վեց ժամ շարունակ քննարկվեց ԼՂՀ ԳԽ նախագահության արտակարգ նիստում, որը որոշում կայացրեց ձեռնպահ մնալ Հռոմի նախնական խորհրդակցության աշխատանքին մասնակցելուց[9]: Սակայն Հայաստանի իշխանությունը Հռոմ ուղարկեց իր պատվիրակությունը: ԼՂՀ իշխանությունը ուրիշ ելք չուներ, քան կատարել ՀՀ ղեկավարության պահանջը: Մինչ այդ Հռոմում Հայաստանի ներկայացուցիչը Վաշինգտոնին և Մոսկվային մեղադրել էր ԼՂՀ-ի հանդեպ սանձազերծ ագրեսիայի համար Ադրբեջանի վրա բարերար ճնշում չգործադրելու մեջ: ՀՀ ղեկավարության լիազորությամբ Հայաստանի ներկայացուցիչ Քրիստիան Տեր-Ստեփանյանը հեռացել էր խորհրդաժողովից: Այդ ամենի մասին լայնածավալ խոսվել էր հունիսի 22-ին սկսված Հայաստանի ԳԽ արտահերթ նստաշրջանում, որի աշխատանքներին մասնակցեցին նաև ԼՂՀ ԳԽ նախագահության անդամները: ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը իր ելույթում մեղադրեց Լեռնային Ղարաբաղի ղեկավարությանը՝ իբրև նրանք ինքնագլուխ որոշումներ են կայացնում և անտեսում Հայաստանի կառավարության ու այլ մարմինների տեսակետները: Օրինակ բերեց հենց Եվրախորհրդի Հռոմի խորհրդաժողովին Ղարաբաղից պատվիրակություն չուղարկելը: Նրա ասածից հետևում էր այն, որ 1992թ. ամռանը արցախցիների կրած անհաջողությունների պատճառը այդ չարաբաստիկ Հռոմ չգնալն էր: Լեռ-

[9] *«Արցախ», 01.07.1992:*

նային Ղարաբաղի պատգամավորները հասկացան, որ պարոն Լ.Տեր-Պետրոսյանը միանշանակ խուսափում էր պատասխանատվությունից: Նրանք շատ լավ էին հասկանում, ինչպես նշվել է, որ Հայաստանի նախագահի այդ ելույթը նախ և առաջ ուղղված էր ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանի դեմ[10]:

Հռոմում որոշում ընդունվեց պատերազմական գործողությունները դադարեցնել մեկ ամսով՝ սկսած հուլիսի 9-ից, որպեսզի հնարավոր լիներ հաջող կազմակերպել Մինսկի խորհրդաժողովի նախապատրաստումը: Սակայն Ադրբեջանը խուսափեց իրագործել այդ որոշումը, իսկ ԱՄՆ-ն էլ հայտարարեց, թե դադարեցնում է օգնությունը Ադրբեջանին, եթե նա չհրաժարվի Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ուժ գործադրելու քաղաքականությունից: Հռոմի հանդիպումներին մասնակցող ԼՂՀ պատվիրակությունը օգոստոսի 4-ին հեռացավ բանակցությունների սեղանից, երբ հայտնի դարձավ, որ միջնորդ իրավական կողմը սկսել էր խուսափել Ղարաբաղի պատվիրակությանը հատուկ կարգավիճակ տալու խոստումը կատարելուց[11]:

1992թ. սեպտեմբերին Հռոմում ավարտվեց ԼՂ հարցին նվիրված խորհրդաժողովը առանց որևէ էական որոշման: Միայն հստակեցվեց, որ ԼՂ հարցի լուծումը վերապահվում է ԵԱՀԿ-ին, այլ ոչ թե ՄԱԿ-ին: Նաև պարզվեց, որ ԵԱՀԿ-ին զուգահեռ ընթացող մեկ այլ բանակցային գործընթացում վճռորոշ դեր ուներ Մոսկվան, որը, փորձելով չկորցնել գերտերության իր նախկին դիրքերը, հանդես էր գալիս կողմերի հետ աշխույժ շփումների նախաձեռնությամբ: Այդ հարցում Ռուսաստանը դիմում էր ոչ միայն արտաքին գործոց, այլև պաշտպանության նախարարության զորակցությանը[12]: Հատկանշական է այն, որ սեպտեմբերի 21-ին Ռուսաստանի պաշտպանության նախարար Պ.Գրաչովի նախաձեռնությամբ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի գործընկերների հետ Սոչիում տեղի ունեցած հանդիպման ժամանակ որոշում ընդունվեց հրադադարի և հետագայում ԼՂՀ-ից զորքերը դուրս բերելու մասին: Սակայն Սոչիի այդ համաձայնագիրը ձախողվեց: Նույնիսկ սեպտեմբերի վերջին Հայաստանի նախագահի խորհրդական Ժ.Լիպարիտյանը հայտարարեց, թե չի

[10] Աբրահամյան Հ., *Ճակատագրին ընդառաջ, էջ 179:*
[11] *Նույն տեղում, էջ 182:*
[12] *«Ազդակ», էջ 103:*

հավատում, որ արցախյան հակամարտությունը լուծվի միջազգային ատյաններում, և որ միայն երկու գործոն կարող են Ադրբեջանին ստիպել, որ համաձայնվի երկխոսության՝ ռազմական խոշոր պարտությունները և միջազգային հանրայնության ճնշումը:

Այստեղ անհրաժեշտ է անդրադառնալ մի սկզբունքային փաստաթղթի, որը ժամանակին լուրջ արձագանք չի ունեցել: 1992թ. նոյեմբերի 13-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը մի դիմում հղեց ՀՀ ԳԽ նախագահությանը, որտեղ վերլուծվում են Արցախի հիմնահարցի միջազգայնացմանն առնչվող որոշ խնդիրներ: ԼՂՀ ԳԽ նախագահությունը նշում է, որ հակամարտող կողմերին դիմումներ հղողները մի նժարի վրա են դնում դահիճն ու զոհը, ագրեսորն ու ագրեսիայի ենթարկվածը: Բոլոր այդ դիմումներում անտեսվում են Արցախի ժողովրդի շահերը, և մերժվում նրա ինքնորոշման իրավունքը:

Ադրբեջանը ի սկզբանե փորձում էր արցախյան հիմնահարցը աշխարհին ներկայացնել որպես Հայաստանի տարածքային ոտնձգություն իր նկատմամբ և ամեն ինչ անում էր իր իսկ սանձազերծած պատերազմի մեջ Հայաստանին ներքաշելու համար: Հայաստանը իր հերթին խուսափում էր պատերազմի մեջ ներքաշվելուց: Սակայն աշխարհը շարունակում էր հիմնահարցն ընդունել որպես Ադրբեջանի և Հայաստանի հակամարտություն և ԼՂՀ-ն ճանաչում էր որպես այդ հակամարտության սոսկ սուբյեկտ: Չգալով դրա անհիմն լիները՝ ԵԱՀԿ-ի շրջանակներում փորձում էին ԼՂՀ-ի ազգընտիր իշխանություններին մասնակից դարձնել հիմնախնդրի լուծմանը: Եվ ահա նման պայմաններում Հայաստանի մի խումբ խորհրդականներ ընդունում են մի դիմում, որտեղ դարձյալ խոսվում է Ադրբեջանի ու Հայաստանի ռազմական հակամարտության մասին, և կոչ էին անում բանակցությունների: Փաստորեն, նրանք, ԼՂՀ-ն չճանաչելով որպես հակամարտության սուբյեկտ, ջուր էին լցնում Ադրբեջանի պետական քաղաքականության ջրաղացին: Այդ դիմումի մեջ միակ գնահատելին այն է, որ հեղինակները համոզված էին, որ հիմնահարցը հնարավոր է լուծել բանակցությունների սեղանի շուրջ, մի բան, որ շարժման սկզբից կոչ էր անում արցախյան կողմը: ԼՂՀ ԳԽ նախագահությունը աշխարհին հայտարարում է, թե հանրապե-

տության ճակատագիրը տնօրինելու իրավունք ոչ ոքի չի շնորհվել, և չի ընդունվի իրեն պարտադրված ոչ մի որոշում[13]:

Լեռնային Ղարաբաղի հարցին անդրադառնալով՝ 1993թ. փետրվարի 26-ից մինչև մարտի 1-ը Հռոմում տեղի ունեցած Մինսկի խմբի հանդիպման ժամանակ ընդունվեց «Լիազորությունների պայմաններ» կոչվող փաստաթուղթը, որը սահմանեց ԼՂՀ ժամանելիք դիտորդների առաջադրանքները: ԼՂՀ պատվիրակությունը դժգոհություն հայտնեց այդ փաստաթղթի վերաբերյալ: Ակնհայտ է, որ ԼՂՀ պատվիրակությունը բանակցություններին չմասնակցելու հետևանքով փաստորեն 1992թ. սեպտեմբերից ԵԱՀԿ-ի գործը մտավ փակուղի: Պարզապես Հայաստանի արտաքին գործերի նախարարության որդեգրած սկզբունքային դիվանագիտությունը մեկ օրվա մեջ ջուրը նետվեց, այն էլ այն ժամանակ, երբ Արցախի ինքնապաշտպանության ուժերը հասել էին շեշտակի հաջողության: ԼՂՀ պատվիրակությունը 1993թ. այդ բանակցություններին մասնակցեց նույն կարգավիճակով, ինչն ուներ ԼՂ ադրբեջանական համայնքի ներկայացուցիչը: Հայաստանի և ԼՂՀ պատվիրակությունները համաձայնվեցին, որ օտար զորքերը դուրս բերվեն «համապատասխան պետությունից», ասել է թե՝ Ադրբեջանից, որն ուղղակիորեն սպառնում էր «ԼՂՀ ոչ միայն տարածքային ամբողջականությանը, այլև նրա իսկ գոյությանը»: Այդ փաստաթուղթը, ըստ ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Ռ. Հովհաննիսյանի գնահատման, «ծախող է, նրա բնույթը՝ պարտուողական, նրա հնարաւոր իրագործումը՝ ողբերգական»[14]:

1993թ. ապրիլին Արցախի ինքնապաշտպանական ուժերը, չեզոքացնելով ադրբեջանական հենակետերը, ազատագրեցին Քելբաջարի շրջանը: Մինչև սեպտեմբեր ազատագրվեցին նաև Աղդամի, Ֆիզուլու և Ջեբրայիլի շրջանները: Ռազմական այս հաջողությունները, բնականաբար, վերափոխեցին ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում: Իսկ դա չէր կարող չազդել ԵԱՀԿ (նաև ՄԱԿ-ի)-Ռուսաստան մրցակցության վրա: Այդ մասին՝ քիչ հետո:

Խաղաղության տանող ամենակարճ ճանապարհը, անկասկած, Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի ուղղակի հանդիպումն էր: ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը

[13] *«Արցախ», 13.11.1992:*
[14] *«Ազգ», 25.03.1993:*

«Հայք» թերթին տված հարցազրույցում հստակ ասել է. «Քանի դեռ Ղարաբաղը չի ընդունվել որպես հակամարտող կողմ և բանակցությունների կողմ, որևէ լուծման մասին խոսելն անիմաստ է: Ընդհակառակը՝ հակամարտությունն ավելի կուժեղանա»[15]:

Մինսկի խմբի նոր ղեկավարությունը, մանավանդ Ռաֆայելիին փոխարինած Յան Էլիասոնը, հակամարտության գոտի ժամանելով, ավելի մոտիկից ծանոթացավ ստեղծված վիճակի հետ: Քանի որ կրակը դադարեցնելու հիմնական միջնորդությունը պատկանում էր Ռուսաստանին, ուստի ՌԴ ԱԳՆ հատուկ հանձնարարություններով դեսպան, ղարաբաղյան հակամարտության շուրջ բանակցություններում այդ երկրի նախագահի անձնական ներկայացուցիչ Վլադիմիր Կազիմիրովի բացատրությամբ Մինսկի խմբի «ինքնակը» (բացի Հայաստանից և Ադրբեջանից) քիչ էր հետաքրքրվում Լեռնային Ղարաբաղում հակամարտության կարգավորման բուն խնդրով: Վ.Կազիմիրովը դրականորեն գնահատեց այդ վերջին օրերին տեղի ունեցած Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդի մասնակից երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդակցության ժամանակ ընդունված կոմյունիկեն, որի կետերից մեկը վերաբերում էր Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման խնդրին: Այնտեղ նշված է, որ Ռուսաստանը հատուկ անհամբերությամբ է վերաբերվում կարգավորման գործընթացի շարունակմանը, որովհետև «այդ հակամարտությունը լրջորեն դիպչում է նրա ազգային և պետական շահերին»[16]:

Բազմաթիվ բանակցություններ և հանդիպումներ էին տեղի ունենում թե՛ ԵԱՀԿ-ի, թե՛ ԱՊՀ և թե՛ այլ մակարդակներով, որտեղ կամա թե ակամա անդրադառնում էին Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորմանը: Հուլիսի 7-8-ը Վիեննայում տեղի ունեցած ԵԱՀԿ Մինսկի խմբի 9 երկրների ներկայացուցիչների հանդիպման ժամանակ հիմնականում քննարկվեցին հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման ռուսաստանյան ծրագիրն ու տվյալ հարցով Մինսկի խմբի մշակումները: Ըստ Կազիմիրովի՝ միակ բանը, ինչը ԵԱՀԿ մշակումներից կարելի է մտցնել ռուսաստանյան ժամանակացույցի մեջ, Մինսկի կոնֆերանսի բացման մտահղացումն է, ինչպես նաև հրադադարի ռեժիմի ամրապնդման վերաբերյալ խմբի նախագահ Յան Էլիա-

[15] *«Հայք», 18.08.1993:*
[16] *«Հայաստանի Հանրապետություն», 18.06.1994:*

սոնի առաջարկությունը, ոչն անհրաժեշտ է ստուգել մեծ համաձայնագրի հետ համատեղ: Ուրեմն՝ Վիեննայում հիմնականում քննարկվել է Ռուսաստանի ծրագիրը, ապա՝ Մինսկի խմբի ժամանակացույցը, Էլիասոնի առաջարկը և դեռևս ապրիլին՝ Պրահայում քննարկված մտադրությունների արձանագրությունը: Մինսկի խմբի ժամանակացույցը բաղկացած էր երկու մասից. 1. Մինսկի կոնֆերանսի հրավիրման անհրաժեշտությունը և 2. համատեղ համադրիչ հանձնաժողովի գործունեությունը ներկայացնող պահանջները: Էլիասոնը, դիմելով հակամարտող կողմերին, կոչ է արել տարածաշրջան դիտորդներ ուղարկելու վերաբերյալ, իսկ ռուսական ծրագիրը համաձայնագիր էր ենթադրում. այլ ոչ թե ժամանակացույց: Քանի որ քաղաքական համաձայնագիրը իրավաբանական փաստաթուղթ է, հետևապես այն ստորագրող կողմերը որոշակի պատասխանատվություն են ստանում: Հետևապես՝ ռուսական օրագիրը այլընտրանք չուներ: Վիեննայում առաջին անգամ բանակցությունների սեղանի շուրջ նստել էին հակամարտող երկու կողմերը՝ Լեռնային Ղարաբաղը և Ադրբեջանը: Մինչ այդ Եվրախորհրդարանը երկու բանաձև էր ընդունել, որոնք սկզբունքորեն ճիշտ էին արտահայտում ղարաբաղյան հակամարտության ընթացքը, սակայն սխալմամբ այն դիտում էին որպես Հայաստան-Ադրբեջան հակամարտություն: Վիեննա էին հրավիրվել Լեռնային Ղարաբաղն ու Ադրբեջանը, առանց Հայաստանի մասնակցության: Եվրոպական պետություններին հետաքրքրում էր այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղն օգտագործել է Ադրբեջանի կազմից դուրս գալու իրավունքը համապատասխան միջազգային իրավական նորմերի պահպանումով, որոնք ժամանակին գործում էին ԽՍՀՄ օրենքների տեսքով: Եվրախորհուրդ են ներկայացվել այն փաստաթղթերը, որոնք ապացուցում են, որ Լեռնային Ղարաբաղում անց է կացվել հանրաքվե միջազգային դիտորդների մասնակցությամբ[17]: Վլադիմիր Կազիմիրովը և այլոք ենթադրում էին, որ մինչև հուլիսի վերջը հնարավոր կլինի ստորագրել հայ-ադրբեջանական քաղաքական պայմանագիրը, որտեղ իբրև կընդգրկվի նաև Լաչինի ու Շուշիի հարցը: Հուլիսի երկրորդ կեսին կրկին Անդրկովկաս ժամանելով և հանդիպումներ ունենալով Ադրբեջանի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ղեկավարների հետ՝ Վ.Կազիմիրովը քննարկել է խաղաղության մեծ համաձայնագրի հարցը և միաժամանակ աշխատանքներ է տարել ԵԱՀԿ Մինսկի խմբի նախագահ Էլիասոնի առաջարկած տարբերակի վրա: Նա հետո այն միտքն արտահայտեց, թե խաղաղության մեծ ծրագրի նախապատրաստման և ԵԱՀԿ ու Ռուսաստանի ծրագրերի միավորման առնչությամբ ստեղծվել են նպաստավոր պայմաններ[18]: Հենց Յան Էլիասոնի և Վլադիմիր Կազիմիրովի կողմից ձեռնարկված միջոցառումների հետևանքով մայիսի 12-ին ձեռք բերված զինադադարը պահպանելու համար հուլիսի 27-ին ղարաբաղյան հակամարտության կողմերի միջև ստորագրվեց համաձայնագիր, որի համապատասխան՝ ԼՂՀ, ԱՀ և ՀՀ կրակը դադարեցրին: Հետո՝ սեպտեմբերին, Յան Էլիասոնը ժամանելով տարածաշրջան, հայտարարեց իր գոհունակությունը ղարաբաղյան հակամարտության գոտում կրակի դադարեցման ռեժիմի հաստատման վերաբերյալ: Նա մամուլի համար արած իր հայտարարության մեջ նշել է, որ հակամարտող կողմերի ցուցաբերած հավասարակշռությունը ներկա պայմաններում մեծ նշանակություն ունի: Այն նվազեցնում է թշնամանքի վերականգնման վտանգը և մեծ ներդրում է այս ողբերգական հակամարտության շուտափույթ կարգավորման համար անհրաժեշտ հոգեբանական պայմանի ստեղծման գործում[19]:

Ընդհանրապես, ղարաբաղյան հիմնահարցի քննարկումների ժամանակ հաճախակի շոշափում էին նաև գերիների ու պատանդների հարցը: Օգոստոսի 5-13-ը Մոսկվայում տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի, Ադրբեջանի և Հայաստանի արտգործնախարարությունների պատվիրակությունների հանդիպման ժամանակ հակամարտող կողմերի միջև համաձայնություն ձեռքբերվեց, որպեսզի Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջոցով փոխանակվեն բոլոր գերի և պատանդ երեխաներն ու կանայք: Այդ քայլը դրականորեն գնահատվեց միջազգային հանրության կողմից, և անհրաժեշտ համարվեց հետագայում ևս այդ քայլերը խորացնել: Այդ հանդիպման ժամանակ քննարկվեցին նաև հակամարտության կարգավորման քաղաքական համաձայնագրի նախագծի հիմնական կետերը, որոնց շուրջ կողմերը համաձայնության չեկան: Սեպտեմբերի 8-9-ը Մոսկվայում հանդիպեցին Հ.Ալիևը և Լ.Տեր-Պետրոսյանը, որին մասնակցեց նաև ՌԴ արտաքին գործերի նախարար Ա.Կազիմիրովը, և հակամարտող կող-

[17] *Նույն տեղում, 12.07.1994:*

[18] *Նույն տեղում, 28.07.1994:*

[19] *«ԼՂ Հանրապետություն», 07.09.1994:*

մները պարտավորվեցին հրադադարը պահպանել մինչև քաղաքական համաձայնագրի կնքումը: Ռուսաստանը խոստանում էր նպաստել կայուն և արդարացի խաղաղություն հաստատելու Անդրկովկասում[20]:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի քաղաքական լուծումը դարձել էր միջազգային կարևոր հարց: Այդ ուղղությամբ ջանքեր էին գործադրում թե՛ ՄԱԿ-ը, թե՛ ԵԱՀԿ-ն և թե՛ ԱՊՀ-ն: Հայաստանի նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը, 1994թ. սեպտեմբերի վերջին ելույթ ունենալով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում, հայտարարեց, թե «Հակամարտության մեջ են Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչությունը, որը ձգտում է հասնել ինքնորոշման, և Ադրբեջանի կառավարությունը, որը հրաժարվում է հաշվի առնել Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության իրավունքները: Հայաստանը բարոյական, դիվանագիտական և մարդասիրական օգնություն է ցուցաբերում այդ ազգաբնակչությանը և չի կարող համաձայնել որևէ ռազմական լուծման, որը հավասարազոր կլինի ցեղասպանության կամ կհանգեցնի Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության տեղահանմանը...»: Ապա բանախոսը նշել է, որ Հայաստանի հիմնական մտահոգության առարկան միշտ էլ եղել է Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության անվտանգության հարցը: Նա հույս հայտնեց, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծումը հնարավոր է ԵԱՀԿ խմբում Լեռնային Ղարաբաղի լիարժեք մասնակցությամբ[21]:

Պետք է ասել, որ ՌԴ արտաքին գործերի նախարարը դժգոհ էր Մինսկի խմբի գործունեությունից: Այդ մասին հոկտեմբերի 5-ին հայտարարեց Վլադիմիր Կազիմիրովը: Նա գտնում էր, որ Մինսկի խմբի որոշ երկրներ ցանկանում են ԵԱՀԿ-ն օգտագործել ոչ այնքան հակամարտությունը կարգավորելու, որքան սեփական աշխարհաքաղաքական շահերը քողարկելու համար: Ըստ Կազիմիրովի բացատրության՝ այդ պետությունները ջանում էին նվազեցնել Ռուսաստանի դերը և բացառել ԱՊՀ մասնակցությունը հակամարտության կարգավորմանը: Այդ ժամանակ ԵԱՀԿ-ն նախապատրաստվում էր հայկական և ադրբեջանական ուժերի միջև 180 կմ երկարությամբ տեղադրել 1600-2000 խաղաղապահ զինվոր, որը պետք է ղեկավարվեր ԵԱՀԿ-ի կողմից, այլ ոչ թե Ռուսաստանի: ԵԱՀԿ-ի այդ դիրքորոշումը չէր կարող առաջ

[20] «Հայաստանի Հանրապետություն», 20.09.1994:
[21] Նույն տեղում, 30.09.1994:

չբերել Ռուսաստանի դժգոհությունը, որը քիչ ջանքեր չէր գործադրել հրադադար հաստատելու համար: Այդ ժամանակ Յան Էլիասոնին փոխարինեց Մինսկի խմբի նոր նախագահ շվեդ դիվանագետ Անդրես Բյուրները, որը, նոյեմբերի 11-ին ժամանելով Ստեփանակերտ, ԼՂՀ ղեկավարների հետ ունեցած հանդիպման ժամանակ քննարկեց նույն թվականի ապրիլին կողմերի միջև համաձայնեցված վստահության միջոցառումների իրականացման հարցը: Ա. Բյուրների հետ Բաքվում ունեցած հանդիպման ժամանակ Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Հասան Հասանովը կրկին բարձրացրեց Շուշիի և Լաչինի հարցը: Ա.Բյուրները վտանգավոր էր համարում ժամանակավոր հրադադարի կնքումը և պահանջում էր ռազմական գործողությունների վերջնական հնարավորությունները նվազագույնի հասցնող մեխանիզմներ ստեղծել: Այդ երկու խնդիրներն իրագործելուց հետո միայն, գտնում էր Մինսկի խմբի նախագահը, հնարավոր կլինի ձեռնամուխ լինել գրավված տարածքների ազատագրմանը, որը պետք է լինի փուլային և ուղեկցվի պատանդների ու գերիների փոխանակությամբ և բոլոր տեսակի շրջափակումների վերացմամբ[22]:

1994թ. նոյեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 2-ը Բուդապեշտում տեղի ունեցավ ԵԱՀԿ-ի գագաթնաժողովը, որը քննարկեց նաև Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: Բարձր մակարդակի այդ ժողովում ելույթ ունենալով՝ ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը կարևոր համարեց Լեռնային Ղարաբաղում խաղաղության ձեռքբերումը և այդ գործում ԵԱՀԿ-ի դերը: Նա առաջարկեց խաղաղության հասնելու համար ցուցաբերել փուլային մոտեցում և տարածաշրջան ուղարկել միջազգային դիտորդներ: Ղարաբաղի մասին ԵԱՀԿ-ի ընդունած բանաձևում շեշտված էր բազմազգ խաղաղարար ուժեր կազմակերպելու սկզբունքը, որոնք կտեղավորվեին հակամարտության գոտում մշտական զինադադար հաստատելու համար: Ռուսաստանը առաջարկեց նման ուժեր ստեղծելու համար ստանալ նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համաձայնությունը: Դեկտեմբերի 12-ին Ստեփանակերտում հրավիրված մամլո ասուլիսում ԼՂՀ արտաքին գործերի նախարար Արկադի Ղուկասյանը հայտարարեց, թե առաջին անգամ պետությունների ղեկավարության մակարդակով քննարկվել է խաղաղությունը պահպանող ԵԱՀԿ բաժանարար ուժեր կազմակեր-

[22] Նույն տեղում, 19.11.1994:

պելու հնարավորությունը: ԼՂՀ արտաքին գործերի նախարարը նաև նշեց, որ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը շահագրգռված են տարածաշրջան ուղարկել միջազգային դիտորդներ: Եվ դա համարեց հայ դիվանագիտության առաջընթաց քայլ, քանի որ Ադրբեջանը միշտ դեմ է եղել տարածաշրջան միջազգային ուժեր մտցնելուն՝ ղարաբաղյան հակամարտությունը համարելով «ներքին» գործ: Չնայած Ադրբեջանը ստիպված էր ընդունել բաժանարար ուժեր մտցնելու, սակայն դեմ էր Ռուսաստանի միջնորդությանը[23]: Այդուհանդերձ, 1994թ. դեկտեմբերին տեղի ունեցած Բուդապեշտի գագաթնաժողովի որոշումը ընդգծեց հակամարտության առաջին փուլի հաղթահարման կարևորությունը:

Բուդապեշտի գագաթնաժողովից հետո հանդես էր եկել Եվրակազմակերպության նախատեսված խաղաղարար ուժերի գործունեության հետ կապված նոր հնարավորություններ: Դրանք կողմերին ներկայացնելու համար 1995-ի հունվարի վերջին Երևան, Բաքու և Ստեփանակերտ ժամանեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ, դեսպաններ Ա.Բյուրները և Վլադիմիր Կազիմիրովը: Նրանք, հունվարի 30-ին ժամանելով Ստեփանակերտ, բանակցություններ վարեցին ԼՂՀ ղեկավարության հետ: Դեսպանների այդ այցելության արդյունքում փետրվարի 6-ին Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները, հանդիպելով Մոսկվայում, քննարկեցին Ղարաբաղի խնդիրը, որին մասնակցեցին նաև Բյուրներն ու Կազիմիրովը: Այդ բանակցությունները երկար չշարունակվեցին, քանի որ Ադրբեջանը երաշխիքներ չէր տալիս ԼՂՀ հայ բնակչության անվտանգության հարցում: Բացի այդ, բանակցությունները փակուղի մտան ԼՂՀ պատվիրակության կարգավիճակի կապակցությամբ Ադրբեջանի դիրքորոշման պատճառով: Փաստորեն, Բաքուն փորձեց հրաժարվել Լեռնային Ղարաբաղը ճանաչել որպես հակամարտության կարգավորման լիիրավ կողմ: Պաշտոնական Ստեփանակերտը, հանդես գալով ԵԱՀԿ-ի և ՌԴ ջանքերի պաշտպանությամբ, որոնք նպատակամղվում էին հակամարտության գոտում հրադադարի ռեժիմի ամրապնդմանը, գտնում էր, որ ամենից առաջ հարկավոր է լուծել հատկապես ռազմատեխնիկական բնույթի հարցերը, ինչը նախատեսում էր հակամարտող կողմերի միջև միջազգային տարանջատիչ ուժերի տեղաբաշխումը, և ապա միայն ձեռնամուխ լինել քաղաքական հիմնախնդրի

[23] *Նույն տեղում, 14.12.1994:*

փաթեթի քննարկմանը: Պաշտոնական Ստեփանակերտը նաև գտնում էր, որ տարածքների հարցը ևս քաղաքական բնույթի է, և այն պետք է քննարկվի ղարաբաղյան ճգնաժամի քաղաքական կարգավորման ընդհանուր համատեքստում[24]:

Եվրակազմակերպության Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցությունները Մոսկվայում ավարտվեցին փետրվարի 10-ին: Վ.Օսկանյանը նշեց, որ Բուդապեշտի գագաթաժողովից հետո Մինսկի խմբի այս առաջին նիստը փաստորեն ձախողվեց, քանի որ ադրբեջանական կողմը, ինչպես ասվեց, հակադրվելով բուդապեշտյան փաստաթղթի հստակ ձևակերպմանը, Մինսկի խմբի համանախագահների հատուկ կարծիքին և Եվրակազմակերպության անդամ-երկրների մեծամասնության դիրքորոշմանը, չի ուզում ճանաչել Լեռնային Ղարաբաղը որպես հակամարտող կողմ[25]: Ասենք, որ Հունգարիայի արտաքին գործերի նախարար և ԵԱՀԿ նախագահ Կովաչը «Ազատություն» ռադիոկայանի թղթակցին ասել է, որ Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման հնարավորությունները նվազում են, և որ տարեսկզբին սկսված հաջող գործընթացը կանգ է առել: Բանակցությունները փակուղի մտնելու գլխավոր պատճառը Կովաչը տեսնում էր «այն, որ երկու կողմերը նոր վիճաբանություններ են սկսել բանակցություններում Լեռնային Ղարաբաղի բնակչության դերի շուրջ»[26]:

1995թ. մարտի 5-ին Ստեփանակերտ ժամանեց ԵԱՀԿ Մինսկի խմբի ԱՄՆ-ի ներկայացուցիչ Ջոզեֆ Փրեսըլին: Նա Ռ. Քոչարյանի հետ քննարկեց ԵԱՀԿ բուդապեշտյան հանդիպման որոշումների լույսի ներքո Ղարաբաղյան հարցի կարգավորման բանակցությունների գործընթացի զարգացման հեռանկարները: Ջոզեֆ Փրեսըլին Արցախի ղեկավարներին վստահեցրեց, որ ԱՄՆ-ը շահագրգռված է Ղարաբաղի հարցում քաղաքական համաձայնություն կնքելու վերաբերյալ: Ռոբերտ Քոչարյանը ամերիկացի դիվանագետի ուշադրությունը բևեռեց միջնորդների կողմից նախագծերի մշակման ժամանակ հակամարտող բոլոր կողմերի շահերը հավասարապես հաշվի առնելու անհրաժեշտության վրա: Մարտի վերջին կրկին տարածաշրջան այցելելով Ա. Բյուրները և Վ.Կազիմիրովը ԼՂՀ ղեկավարների հետ ունեցած

[24] *Նույն տեղում, 08.02.1995:*
[25] *«Արցախ», 14.02.1995:*
[26] *«ԼՂ Հանրապետություն», 07.04.1995:*

հանդիպման ժամանակ առաջ քաշեցին մոսկովյան խորհրդակցությունը շարունակելու խնդիրը, որը նախատեսվում էր սկսել մինչև մայիսի 12-ը, այսինքն՝ մինչև ռազմական գործողությունները դադարեցնելու վերաբերյալ համաձայնության գալու տարելիցը:

1995թ. գարնանը՝ մարտի 30-31-ին, Պրահայում տեղի ունեցավ ԵԱՀԿ ավագ խորհրդի առաջին հանդիպումը: Այդ կառույցը ստեղծվել էր դեկտեմբերին Բուդապեշտում տեղի ունեցած վեհաժողովի որոշմամբ, որը հանդիսանում էր ԵԱՀԿ պաշտոնյաների կոմիտեի իրավահաջորդը և պատասխանատու էր ԵԱՀԿ գործունեության վերահսկման, ղեկավարման ու համակարգման, այդ թվում կազմակերպության ընդհանուր քաղաքական ուղղությունների մշակման համար: Խորհուրդը քննարկեց ԼՂ հակամարտության կարգավորմանն առնչվող մի շարք հարցեր, մասնավորապես ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի համանախագահության միջնորդությամբ ընթացող բանակցությունները փակուղուց դուրս բերելու ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումները: Այդ հանդիպման եզրափակիչ փաստաթղթում ԵԱՀԿ մասնակից պետությունների պատվիրակությունները նշել են ԼՂՀ հակամարտության գոտում հրադադարի ամրապնդման կարևորությունը և մտահոգություն են հայտնել բանակցությունների անբավարար առաջընթացի կապակցությամբ: Կողմերին կոչ է արվել առանց նախապայմանների վերսկսել քաղաքական բանակցությունները և նպաստել ռազմագերիների ու պատանդների ազատ արձակման խնդրում ԵԱՀԿ ջանքերին: Մինչ այդ ավարտվել էր Մինսկի խորհրդաժողովի համանախագահության պաշտոնում Շվեդիայի միջնորդությունը, և ապրիլի 21-ից համանախագահի պաշտոնը ստանձնել էր Ֆինլանդիան:

1995թ. ապրիլի 28-ին Ստեփանակերտ ժամանեց ԵԱՀԿ ղարաբաղյան կարգավորման առաքելությունը, որի կազմում էին ԵԱՀԿ գործող նախագահի ներկայացուցիչ Իշտվան Դյարմատին (Հունգարիա), ԵԱՀԿ Լեռնային Ղարաբաղի շուրջ Մինսկի կոնֆերանսի համանախագահների ներկայացուցիչներ Ռենե Նիբերգը (Ֆինլանդիա) և Վլադիմիր Կազիմիրովը, ինչպես և այլ մասնագետներ: Ռոբերտ Քոչարյանը նրանց բացատրեց ղարաբաղյան կողմի դիրքորոշումը հակամարտության խաղաղ կարգավորման հարցում: ԵԱՀԿ ներկայացուցիչները արտահայտեցին հիմնահարցի փուլ առ փուլ լուծում նախապատրաստող բանակցային գործընթացը արագացնելու օգտին: Քննարկվեց նաև ռազմագերիների ու պատանդների փոխանակման հիմնահարցը[27]:

ՀՀ արտգործնախարարության մամլո կենտրոնը, 1995թ. ապրիլի 29-ին հանդես գալով հայտարարությամբ, արտահայտեց Հայաստանի իշխանությունների գնահատականը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ապրիլի 26-ին ընդունած Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ թիվ 884 բանաձևի 8-րդ կետի կապակցությամբ: Մինչ հայտարարություն ընդունելը Անվտանգության խորհուրդը լսել էր Եվրոպայի անվտանգության համագործակցության կազմակերպության Մինսկի խորհրդաժողովի համանախագահներ Յան Էլիասոնի և Վալենտին Լոգինովի հաշվետվությունը: Այդ հայտարարությունը պահպանել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ նախկինում ընդունած փաստաթղթերի ոգին: Փաստորեն ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը հավանություն տվեց նախագահական հայտարարությանը: Հայաստանում այդ հայտարարությունը դիտվում էր որպես Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի նկատմամբ միջազգային այդ հեղինակավոր ատյանի շարունակական հետաքրքրության և շահագրգռության դրսևորում[28]:

Այդ հանդիպումների հետևանքով ղարաբաղյան հակամարտության կողմերը համաձայնել էին սկսել խաղաղ կարգավորման բանակցությունները ԵԱՀԿ-ի մասնակցությամբ: ՀՀ փոխարտգործնախարար Վարդան Օսկանյանը մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ մարտի 30-31-ը Պրահայում տեղի ունեցած ԵԱՀԿ ավագ խմբի հանդիպման ժամանակ կողմերի կարգավիճակի մասին արված հայտարարությունը հիմք ընդունելով՝ ՀՀ-ն գնացել է բանակցությունների: Ըստ Վ.Օսկանյանի՝ այս անգամ բանակցությունները գնացել էին քաղաքական պայմանագրի և 5 առանցքային հարցերի մասին կողմերի տեսակետների շուրջ: Համանախագահողները առաջարկել էին հետևյալ առանցքային հարցերը՝ ԼՂՀ անվտանգության հարցը, ԼՂՀ քաղաքական կարգավիճակի հարցը և Հյուսիսային Արցախի փախստականների հարցը: Պայմանավորվել էին առաջիկա օրերին օրակարգի մեջ մտցնել նաև քաղաքական պայմանագրի

[27] *Նույն տեղում, 28.04.1995:*
[28] *Նույն տեղում:*

հարցը[29]: Ենթադրվում էր ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում մայիսի 15-20-ը Մոսկվայում հրավիրել բանակցություններ Լեռնային Ղարաբաղի խնդրի քաղաքական կարգավորման հարցի շուրջ: Դա ԵԱՀԿ բուդապեշտյան գագաթաժողովից հետո կլիներ բանակցությունների երկրորդ փուլը: Հիշենք, որ առաջին փուլը տեղի էր ունեցել փետրվարի 6-11-ին Մոսկվայում և վերջացել էր անհաջողությամբ: Ենթադրվում էր երկրորդ փուլում քննարկել քաղաքական մեծ համաձայնագրի ավելի վիճահարույց կետերը, մասնավորապես Լաչինի և Շուշիի հիմնախնդրի, ԼՂՀ հակամարտության լիիրավ կողմ ճանաչելու և ռազմագերիների հետագա ճակատագրի հետ կապված մի շարք հարցեր: Դեռևս Բուդապեշտում Ադրբեջանն ընդունել էր Լեռնային Ղարաբաղը ճանաչել հակամարտության լիիրավ անդամ, սակայն հետագայում, առանց որևէ լուրջ պատճառաբանության, հրաժարվել է դրանից: Իսկ 1995թ. մայիսին Մոսկվայում ընթացող բանակցությունների ժամանակ հիմնական վիճահարույց հարցերը դարձել էին Շուշիի և Լաչինի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի՝ որպես հակամարտության լիարժեք կողմ: Փակ դռների ետևում ընթացող այդ բանակցությունների հիմնական թեման մնում էր հրադադարի հետագա երկարաձգումը և խաղաղության վերջնական հաստատումը, ինչը հնարավորություն կտար հաջողությամբ շարունակել աշխատանքները քաղաքական մեծ համաձայնագրերի ստորագրության ուղղությամբ: Այնուամենայնիվ, Լեռնային Ղարաբաղի քաղաքական վիճակի որոշումը խիստ դժվարանում էր, որովհետև, ինչպես ասվել է բազմիցս, Ադրբեջանը հրաժարվում էր ԼՂՀ-ն ճանաչել որպես բանակցությունների կողմ[30]:

1995թ. հունիսի 15-20-ը ԵԱՀԿ Մինսկի կոնֆերանսի համանախագահների միջնորդությամբ Հելսինկիում տեղի ունեցան բանակցություններ, որտեղ ղարաբաղյան կողմը աշխատել է և՛ քաղաքական մեծ համաձայնագրի տեքստի, և՛ հանգուցային հարցերի վրա: Այդուհանդերձ, որևէ լուրջ առաջադիմություն չգրանցվեց: Ղարաբաղյան կողմը պահանջում էր բոլոր հիմնահարցերը միասնական համատեքստում լուծելու գաղափարը[31]:

ԵԱՀԿ շրջանակներում հաջորդ բանակցությունները տեղի ունեցան 1995թ. հուլիսի 24-28-ը ավստրիական Բադեն քաղաքում, որտեղ Լեռնային Ղարաբաղի պատվիրակությունը հիմնավորեց իր դիրքորոշումը բոլոր հիմնահարցերում: ԵԱՀԿ գործող նախագահ Իշտվան Դիարմատիչը կարծիք հայտնեց, թե ներկա վիճակը՝ ոչ պատերազմ, ոչ խաղաղություն, հղի է անկանխատեսելի հետևանքներով, և կոչ արեց արագացնել փաստաթղթի ընդունումը, որպեսզի նվազագույնի հասցվի ռազմական գործողությունների վերսկսման հավանականությունը: Այդ բանակցությունների ժամանակ ԼՂՀ պատվիրակությունը հայտարարեց, թե Լաչինն ու Շուշին չի կարելի համարել հանգուցային հարց, և միջնորդների ուշադրությունը հրավիրվեց Լեռնային Ղարաբաղի անվտանգության ու կարգավիճակի վրա: Ասել է թե՝ Ադրբեջանը Շուշիի հարցը արհեստականորեն էր մտցրել օրակարգի մեջ:

Բադենում ԼՂՀ պատվիրակության կողմից առաջ քաշվեց ԼՂՀ անվտանգության առնչությամբ Հայաստանի պատասխանատվությունը հետևյալ հանգամանքներում. 1. Եթե Ադրբեջանը հարձակվի Լեռնային Ղարաբաղի վրա, այդ դեպքում Հայաստանին տրվում է մանդատ, որով նրան իրավունք էր վերապահվում պաշտպանել Լեռնային Ղարաբաղի անվտանգությունը: 2. Հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի բնակչության սահմանափակ լինելը և ռելիեֆի առանձնահատկությունները՝ նպատակահարմար է հայկական զինված ուժերի ներկայությունն այստեղ: 3. Հայկական զինված կազմավորումները ԼՂՀ տարածքում հանդես կգան որպես տարանջատիչ ուժեր մի որևէ փուլում: ԼՂՀ արտաքին գործերի նախարար Արկադի Ղուկասյանը հանդես գալով արտահայտեց այն միտքը, որ Հայաստանի ներկայության գաղափարը ընդունվել է Մինսկի խմբի բոլոր անդամների կողմից, որը հանդիսանում է անշրջելի գործընթաց: Նախագահը նաև նշել է, որ ազատագրված տարածքներից արցախյան ուժերի չհեռանալը հենց բխում է արցախահայության անվտանգության ապահովումից, իսկ Մինսկի խումբը դա չի ընդունում[32]:

1995թ. հուլիսի 14-ին ԼՂՀ ժամանեց ԵԱՀԿ պատվիրակությունը ղարաբաղյան ճգնաժամի կարգավորման, Մինսկի խորհրդաժողովի համանախագահներ Հեյկկի Տալվիրիկի և Վալենտին Լոզինսկու գլխավորությամբ: Նրանք նպատակ ունեին խորհրդակցություններ անցկացնել ղարաբաղյան իշխանությունների ներկայացուցիչների հետ բանակցային գործընթացի քաղաքական համաձայնագրի սկզբունքային հարցերում դիրքորոշումնե-

[29] *Նույն տեղում, 24.05.1995:*
[30] *«Հայաստանի Հանրապետություն», 12.05.1995:*
[31] *«ԼՂ Հանրապետություն», 27.06.1995:*
[32] *Նույն տեղում, 01.08.1995:*

րի հստակեցման շուրջ: Ասենք, որ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին ևս որոշել էր իր խորհրդական Ալդո Այելլոյին ուղարկել Մոսկվա՝ Լեռնային Ղարաբաղի գծով Մինսկի խմբի հանդիպմանը մասնակցելու համար, որը պետք է տեղի ունենար սեպտեմբերի 11-12-ը: Իսկ մինչ այդ նա պետք է այցելեր Երևան, Բաքու և Ստեփանակերտ[33]:

1995թ. սեպտեմբերի 4-12-ը Մոսկվայում տեղի ունեցած ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցությունների հերթական փուլի ընթացքում սեպտեմբերի 4-8-ը բանակցություններն ընթացել են կողմերի միջև՝ համանախագահողների ներկայությամբ, իսկ սեպտեմբերի 11-12-ը տեղի է ունեցել ԵԱՀԿ Մինսկի խմբի լրիվ կազմի հանդիպումը:

Ընդհանրապես, 1994թ. դեկտեմբերին տեղի ունեցած բուդապեշտյան հանդիպումից հետո ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցություններն ընթանում էին երկու հունով. 1. բանակցություններ քաղաքական պայմանագրի շուրջ և 2. խորհրդակցություններ առանցքային հարցերի վերաբերյալ: Մոսկվան այդ հանդիպման ժամանակ հիմնական շեշտը դրեց քաղաքական պայմանագրի վրա, որն ունի երկու հիմնական մաս. 1. ընդհանուր և հիմնական, որը բաղկացած է 15 պարագրաֆներից և 2. չորս հավելվածներից: Մոսկովյան հանդիպման ժամանակ քննարկվեցին նաև հավելվածները: Քննարկվեց միայն առաջին հավելվածը, որը վերաբերում է ռազմատեխնիկական հարցերին: Ուշադրության արժանի է նաև այն, որ երբ բանակցությունների նախորդ փուլերում Լեռնային Ղարաբաղի անկախության խնդիրը դրվում էր առանցքային հարցերի շրջանակներում, ապա մոսկովյան այդ փուլում այն իր արտահայտությունը գտավ քաղաքական պայմանագրում: Առաջին հավելվածում հարցերը բազմաթիվ էին: Որոշ կետերի շուրջ ձեռք բերվեցին համաձայնություններ: Ենթադրվում էր բանակցությունների հաջորդ փուլը սկսել հոկտեմբերին Ֆինլանդիայում: Բացասական գնահատվեց այն, որ մոսկովյան բանակցությունների ժամանակ էական հաջողություններ չարձանագրվեցին: Եվ ահա հոկտեմբերի 9-15-ը Ֆինլանդիայի Ալանդյան կղզիներում տեղի ունեցավ ԼՂՀ հակամարտության կարգավորման ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի համանախագահության միջնորդությամբ վարվող բանակցությունների հերթական փուլը, որից անմիջապես

[33] *«Հայաստանի Հանրապետություն», 10.09.1995:*

հետո հոկտեմբերի 16-ին, Հելսինկիում գումարվեց Մինսկի խմբի ընդլայնված նիստ՝ Ադրբեջանի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի պատվիրակությունների մասնակցությամբ: Այդ բանակցությունների հերթական փուլի օրակարգում հակամարտության կողմերի միջև քաղաքական մեծ համաձայնագրի քննարկումն էր: Եվ, այսպես, Ֆինլանդիայի Ալանդյան կղզիների վարչական կենտրոնում՝ Մաարիանհամինում, հոկտեմբերի 9-ից մինչև 17-ը տեղի ունեցած ղարաբաղյան զինված համաձայնությունը դադարեցնելու վերաբերյալ համաձայնագրի կնքման շուրջ հայ-ադրբեջանական բանակցությունների հերթական փուլն այդպես էլ հաջողության չհասավ, և կողմերը որևէ համաձայնության չեկան[34]: Միայն համաձայնության եկան բանակցությունների հաջորդ փուլն անցկացնել Մոսկվայում, իսկ նոյեմբերի վերջին այն շարունակել Արևմտյան Եվրոպայի որևէ երկրում: Փաստը մնում է փաստ, որ ադրբեջանական կողմը պատրաստ չէր ոչ այդ ժամանակ և ոչ էլ մոտ ապագայում որևէ զիջում անելու[35]:

1995թ. նոյեմբերի 6-ին Մոսկվայում սկսվեց ԼՂ հակամարտության կարգավորմանն ուղղված ԵԱՀԿ Մինսկի համաժողովի համանախագահության միջնորդությամբ վարվող բանակցությունների հերթական փուլը: Օրակարգում էին զինված հակամարտության դադարեցման վերաբերյալ համաձայնագրով ենթադրվող ռազմատեխնիկական մի շարք հարցեր, որոնց համաձայնեցումը պետք է նպաստի հրադադարի ամրապնդմանը, խաղաղապահ գործողության իրականացմանը և Մինսկի գործընթացի հետագա զարգացմանը: Իսկ նոյեմբերի 22-ին Բոննում իր աշխատանքները սկսելով՝ Եվրակազմակերպության ԼՂՀ գծով Մինսկի խմբի հերթական նիստը նպատակ ուներ նախապատրաստել մոտ ապագայում Եվրակազմակերպության անդամ երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների Բուդապեշտում կայանալիք հանդիպմանը: Խոսքը մասնավորապես վերաբերում էր զինված հակամարտությունն ավարտելու քաղաքական համաձայնագրի մշակմանը, ըստ որի՝ պետք է ամրագրվեր 1994թ. մայիսից ի վեր Լեռնային Ղարաբաղում հաստատված զինադադարը: Սակայն, ցավոք, այստեղ ևս կողմերը պատրաստ չէին զիջման: Դեկտեմբերի 7-ին Բուդապեշտի Կոնգրեսների պա-

[34] *Նույն տեղում, 10.10.1995: Տես նաև «ԼՂ Հանրապետություն», 21.10.1995:*

[35] *«ԼՂ Հանրապետություն», 21.10.1995:*

լատում բացվելով ԵԱՀԿ նախարարների խորհրդի խորհրդակցությունը, որին մասնակցում էին արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները, դռնփակ նիստում երկու օր շարունակ քննարկում էր Ղարաբաղյան հիմնահարցը, որն այդպես էլ մնաց առանց որևէ հիմնավոր պատասխանի:

Ասենք, որ մինչև 1995թ. վերջը ԵԱՀԿ բանակցություններն ուղղված էին միջանկյալ լուծմանը՝ կարգավիճակի վերաբերյալ առավել դժվար հարցը թողնելով հետագայի համար: Ռոբերտ Քոչարյանը, պատասխանելով «ՄՀ» թերթի թղթակցի հարցին, նշել է, որ տևական ընդմիջումից հետո Միացյալ Նահանգները վերսկսել է Ղարաբաղի առնչությամբ միջնորդական ջանքերը: Ժոզեֆ Փրեսլը նշանակվել էր դեսպան հատուկ հանձնարարությունների գծով: Ռ.Քոչարյանը նաև նշել է, որ աշխարհաքաղաքական շահերն սկսում են ուրվագծվել: Ժոզեֆը Երևանում հայտարարել էր, որ եթե մինչև տարեվերջ չստացվի քաղաքական պայմանագիրը, հետո այն չի լինի[36]: Իսկ թղթակցի այն հարցին, թե ԼՂՀ-ի համար որ կարգավիճակն է անընդունելի համարվում, ԼՂՀ նախագահը հստակ պատասխանել է. «Անընդունելի են Ադրբեջանից որևէ կարգի ուղղահայաց ենթակայություն ենթադրող տարբերակները»[37]:

Բանակցությունները շարունակվում էին: Ենթադրվում էր, որ հաջորդ հանդիպումը տեղի կունենա 1996-ի հունվարի 9-13-ը Մոսկվայում: Նախատեսված էր քննարկել քաղաքական համաձայնագրի որոշ կետեր: Հավանական էր, որ բանակցությունների ավարտին տեղի ունենա Մինսկի խմբի հանդիպում: Սակայն հետո պարզ դարձավ, ինչպես լրագրողներին հայտարարել է ԼՂՀ ԱԳՆ Արկադի Ղուկասյանը, որ Ադրբեջանի կողմից ինչպես նախորդ հանդիպումների ժամանակ, այնպես էլ այդ ժամանակ զիջումները անխուսափելի են, մինչդեռ ԼՂՀ-ի քաղաքական կուրսը պարզ էր և հստակ: Այդ հանդիպման ժամանակ քննարկվեց Լեռնային Ղարաբաղի անվտանգության և հակամարտող կողմերի փոխադարձ անվտանգության հարցը: Այդուհանդերձ, այդ հանդիպումը ևս որևէ շոշափելի արդյունք չտվեց: ՌԴ ԱԳ նոր նախարար Ե.Պրիմակովը, հանդիպում ունենալով բանակցող կողմերի հետ, չնայած ադրբեջանական կողմը հրաժարվեց մասնակցել, նշեց, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ղարաբաղյան

[36] *Նույն տեղում, 14.12.1995:*
[37] *Նույն տեղում:*

հիմնախնդրի կարգավորման հարցը խիստ կարևոր է, և այդ գործում գնահատելի է Ռուսաստանի առանձնահատուկ դերը[38]:

ԼՂՀ ղեկավարությունը դրականորեն էր գնահատում բանակցային գործընթացի մի շարք փուլերում հանրապետության կարգավիճակի մասին հարցի քննարկումը, ինչպես նաև բանակցություններում Լեռնային Ղարաբաղի և նրա բնակչության հիմնախնդրի ճանաչումը որպես առանցքային: Ընդհանրապես, բանակցություններում սովորաբար քննարկվում էր նաև փոխզիջումների հարցը: Հայաստանը, անկախ այդ ամենից, բազմիցս հայտարարել էր, որ իր բոլոր ջանքերը գործադրելու է խնդրի խաղաղ կարգավորման համար: Նաև հայտարարվել է, որ ԼՂՀ բնակչության անվտանգության սպառնալիքի դեպքում ստիպված կլինի միջամտել, և որ Լեռնային Ղարաբաղի վրա Ադրբեջանի հարձակման դեպքում այն պետք է դիտվի «որպես հայտարարված պատերազմ Հայաստանին»[39]:

1996թ. մարտի 15-30-ը Մոսկվայում տեղի ունեցավ ԵԱՀԿ շրջանակներում ԼՂ հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցությունների հերթական փուլը: Ապրիլի 3-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսում ԼՂՀ ԱԳ նախարար Արկադի Ղուկասյանը նշել է, որ բանակցությունների այս փուլին նախորդել են Ռուսաստանի Դաշնության, ԵԱՀԿ-ի և ԱՄՆ-ի բարձրաստիճան ներկայացուցիչների այցերը հակամարտության գոտի: Բայց և այնպես նրանց դիրքորոշումները մնացել էին նույնը: Մոսկովյան այդ հանդիպման ժամանակ քննարկվել է ԼՂ կարգավիճակի հարցը: ԼՂՀ պատվիրակությունը այդ առթիվ ներկայացրել էր բավականին ծավալուն ծրագիր: Այդ քննարկմանը ադրբեջանական կողմը պատրաստ չէր: Փորձ է արվել ԼՂ անվտանգությունը փոխարինել տարածաշրջանային անվտանգությամբ: Ղարաբաղյան կողմը այն համոզման էր, որ բանակցային գործընթացը կարելի է խթանել միայն հանգուցային խնդիրների լուծմամբ[40]:

Ստեղծվել էր մի այսպիսի վիճակ. չէին գործում ԼՂՀ-ի նկատմամբ ՄԱԿ-ի ընդունած չորս որոշումները, և փաստորեն գործում էր ոչ խաղաղություն, ոչ պատերազմ վիճակը: Որևէ ստորագրված պայմանագիր ԵԱՀԿ Մինսկի խմբի սահմաններում դեռևս գոյություն չուներ: Եվ ամենակարևորը՝ մնում էր Լեռնային

[38] *Նույն տեղում, 23.01.1996:*
[39] *«Հայաստանի Հանրապետություն», 03.02.1996:*
[40] *«ԼՂ Հանրապետություն», 04.04.1996:*

Ղարաբաղի բնակչության անվտանգության խնդիրը: ԼՂՀ նախագահ Ռ.Քոչարյանը 1996թ. փետրվարի 3-ին Նյու-Յորքում տեղի ունեցած մամուլի ասուլիսում հստակորեն նշել է, որ Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգության գնահատականների չափանիշները պետք է որոշի բացառապես Ղարաբաղի ժողովուրդը: Պատասխանելով «Անատոլու» գործակալության հարցին՝ նա նշել է, որ Լեռնային Ղարաբաղը երբեք Ադրբեջանի մաս չի կազմել: Եղել է ներքին սահմաններ չունեցող ազգային միավորում: Խորհրդային Միության փլուզումից հետո այդ նույն տարածքում առաջացել են Ադրբեջանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը[41]:

ԼՂՀ հակամարտության կարգավորման ուղղությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի 1996թ. Մոսկվայում երրորդ հանդիպումը տեղի ունեցավ մարտի վերջին և ապրիլի սկզբին, որտեղ հիմնականում քննարկվեց քաղաքական մեծ պայմանագրի դրույթները և այլ առանցքային խնդիրներ: Ադրբեջանը, վկայակոչելով տարածքային ամբողջականության սկզբունքը և, հատկապես, իր Սահմանադրության հիմնադրույթները, պնդեց իր տեսակետը, ինչը խիստ սահմանափակում էր արծարծվող խնդրի շուրջ համաձայնության հասնելու հնարավորությունը[42]: Նույն թվականի մայիսի սկզբին տարածաշրջան ժամանած ՌԴ ԱԳ նախարար Եվգենի Պրիմակովը հակադիր կողմերին կոչ արեց քաղաքական համաձայնությանն ուղղված բանակցություններում փոխզիջումային հանգուցալուծումներ գտնել[43]: Հունիսի 7-ին Ռ. Քոչարյանը, Ստեփանակերտում ընդունելով Մինսկի խորհրդաժողովի պատվիրակությանը՝ ռուսաստանյան և ֆիննական համանախագահների ներկայացուցիչներ Վլադիմիր Կազիմիրովին և Ռենե Նիբերգին, մտահոգություն հայտնեց բանակցային գործընթացի վերջին երեք փուլերի անարդյունավետության առթիվ: Նա միևնույն ժամանակ ցանկություն հայտնեց, որ հակամարտության կողմերը հետագայում դրսևորեն ավելի ճկուն մոտեցում զինված դիմակայության դադարեցման վերաբերյալ համաձայնագրի նախագծի մշակման նկատմամբ: Ռ.Քոչարյանը շեշտեց, որ Ղարաբաղի հիմ-

[41] *«Հայաստանի Հանրապետություն», 06.02.1996:*
[42] *Նույն տեղում, 03.04.1996:*
[43] *Նույն տեղում, 21.05.1996:*

նահարցի վերջնական կարգավորման համար եղել և մնում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը[44]:

1996թ. հունիսի 14-18-ը Մոսկվայում տեղի ունեցավ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում նոր հանդիպում: Նախատեսվել էր, որ ԼՂՀ նախարարության պատվիրակությանը միանան նաև փորձագետներ Յուրի Բարսեղովը և Արսեն Մելիք-Շահնազարովը (երկուսն էլ Մոսկվայից): Հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ հուլիսի սկզբին Ստոկհոլմում: Մինսկի խումբը մշակել էր հակամարտության կարգավորման համաձայնեցված հիմք, որը հակամարտող կողմերին կողմնորոշում էր դեպի ապագա համաձայնագրերի ընդհանուր շրջանակները: Վալենտին Լոգինսկին բացատրել է, որ իրենք ելնում էին այն բանից, թե «կողմերը պետք է փոխզիջում գտնեն ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքական հարցերի լուծման բնագավառում, և նման փոխզիջման հարցում կարևոր դեր պետք է խաղա Եվրակազմակերպության Մինսկի խորհրդաժողովը»[45]:

1996թ. ամռան վերջին Վլադիմիր Կազիմիրովին փոխարինեց Յուրի Յուկալովը: Նույն թվականի սեպտեմբերի 18-ին «Հայաստանի Հանրապետություն» թերթում հրապարակվեց Լևոն Տեր-Պետրոսյանի «ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններն ու գերատեսչությունները» ծավալուն հոդվածը, որտեղ հանգամանորեն վերլուծելով Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման հետ առնչվող մի շարք հարցեր՝ նշեց, որ Հայաստանի արտաքին քաղաքականության ու տնտեսական հարաբերությունները սերտորեն կապված են Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ ծավալվող իրադարձությունների հետ: Արդեն չորրորդ տարին էր, ինչ ինտենսիվ բանակցություններ էին վարվում հարցին խաղաղ լուծում տալու համար: Սակայն բանակցությունները ցույց տվեցին, որ հիմնախնդրի լուծումը հնարավոր է փոխզիջումների միջոցով, չնայած փոխզիջման վերաբերյալ կողմերի տեսակետները խիստ տարբերվում են միմյանցից: ՀՀ նախագահը պարզաբանում է, որ եթե 1988-1992թթ. ԼՂ-ի հարցը դեռևս դիտվում էր որպես ԽՍՀՄ ներքին խնդիր, և այդ շրջանում պայքարը մղվում էր ցույցերի և տեղային ընդհարումների միջոցով, ապա 1992-1994 թվականներին ԼՂ-ի հիմնախնդրի միջազգայնացման գործընթացն ուղեկցվեց լայնածավալ

[44] *Նույն տեղում, 08.06.1996:*
[45] *Նույն տեղում, 18.06.1996:*

ռազմական գործողություններով և Ղարաբաղի պաշտպանության ուժերի կողմից հարակից տարածքների գրավմամբ: 1994թ. Բուդապեշտում կայացած ԵԱՀԿ անդամ երկրների նախագահների գագաթնաժողովում Լեռնային Ղարաբաղի մասին ընդունված որոշումը կարևորվեց նրանով, որ համադրվեցին Ռուսաստանի և ԵԱՀԿ միջնորդական ջանքերը՝ ստեղծելով Մինսկի հանձնաժողովի համանախագահների ինստիտուտը, և հաստատվեց ԵԱՀԿ կողմից խաղաղապահ ուժեր ստեղծելու ու տրամադրելու պատրաստակամությունը: 1995 թվականից սկսված՝ երրորդ փուլի ժամանակ շեշտը դրվեց բանակցային գործընթացի վրա, որը կողմերին հնարավորություն ընձեռեց կենտրոնանալ հիմնախնդրի առավել էական տարրերի վրա թե՛ ընթացակարգային, թե՛ բովանդակային առումով: Ըստ Հայաստանի նախագահի բացատրության՝ 1995-ի կեսերին ի հայտ եկավ մի լուրջ խնդիր: Մինչ այդ կողմերը և միջնորդները որդեգրել էին հարցի կարգավորման փուլային մոտեցումը, քաղաքական պայմանագրի ստորագրման միջոցով այդ զինադադարի ամրագրում և եզրափակիչ քայլ, Մինսկի հանձնաժողովում ԼՂ-ի կարգավիճակի վճռում: Այդ ժամանակ Մինսկի խումբը գերադասեց հիմնախնդրի լուծման փաթեթային լուծումը: Այն իրականացնելու նպատակով 1995թ. դեկտեմբերին կրկին Բուդապեշտում ԵԱՀԿ արտգործնախարարների հանդիպման ժամանակ որոշում ընդունվեց Մինսկի խմբին զուգահեռ բանակցային երկրորդ ուղի բացել, որտեղ կողմերի միջև ուղիղ շփումների միջոցով պետք է քննարկվեին ԼՂՀ-ի կարգավիճակին վերաբերող առանցքային խնդիրներ: 1996թ. այս երկու ուղիներով ընթացել են բանակցությունները: Ադրբեջանը պատրաստ չէր գնալ փոխզիջման, որի պատճառով էլ 1996թ. ամառվանից բանակցությունները Մինսկի խմբի շրջանակներում ընդհատվել էին:

Այդուհանդերձ 1996թ. հոկտեմբերի 28-29-ը Մոսկվայում տեղի ունեցավ ԵԱՀԿ Մինսկի խմբի հերթական հանդիպումը, որտեղ միայն շոշափվեցին Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի և անվտանգության հետ կապված առանցքային խնդիրները:

Նախատեսված էր դեկտեմբերի սկզբին Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոնում ԵԱՀԿ անդամ երկրների ղեկավարների հնարավոր հանդիպումը: Եվ ահա Լիսաբոնի «Բելեն» մշակութային կենտրոնի շենքում դեկտեմբերի 2-ին իր աշխատանքները սկսեց Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության 54 անդամ երկրների պետությունների և կառա-

վարությունների ղեկավարների չորրորդ հանդիպումը: ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ելույթ ունենալով այդ գագաթնաժողովում, նշեց, որ ողբերգության բացասման միակ հնարավորությունը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարգումն է: Ապա նշեց, որ ղարաբաղյան հիմնախնդիրը Ադրբեջանի կողմից առաջարկված սկզբունքների հիման վրա կախված կլինի ցեղասպանության կամ բռնի տեղահանության մշտական սպառնալիքը: Դրա համար պետք է հարգել ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքը[46]:

Լիսաբոնի գագաթնաժողովում Ադրբեջանը վետո դրեց հիմնական եզրափակիչ փաստաթուղթ-հռչակագրի վրա: Այդ ութէջանոց հռչակագիրը ամփոփում էր ԵԱՀԿ-ի երկու տարվա կատարած աշխատանքը, մասնավորապես ԵԱՀԿ-ի՝ որպես կազմակերպության ընթացքում ինստիտուտների կայացումը և տարբեր կոնֆլիկտների կարգավորումը: Գագաթնաժողովի ընթացքում Ադրբեջանը ճնշում գործադրեց ԵԱՀԿ-ի վրա Հայաստանին պարտադրելու համար այնպիսի փաստաթուղթ, որում հաստատվեր Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը և Ղարաբաղը հիշատակվեր որպես Ադրբեջանի մաս: ԵԱՀԿ նախագահը և Մինսկի խմբի համանախագահը փորձեցին Հայաստանի և Ադրբեջանի միջև կոնսենսուս գտնելու նպատակով հանդես գալ առաջարկով, որում թեև նշվում էր, որ կոնֆլիկտը պետք է լուծվի Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման և նրա բնակչության անվտանգության երաշխիքների հիման վրա, սակայն նաև հաստատվում էր Հայաստանի ու Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը և նշվում «Լեռնային Ղարաբաղի ինքնակառավարման բարձրագույն աստիճանը Ադրբեջանի կազմում»:

Պարզ է, որ նման ձևակերպումները և աշխատաձևը անընդունելի էին Հայաստանի համար: Ուստի Հայաստանի պատվիրակությունը վետո դրեց հռչակագրի 20-րդ պարագրաֆի վրա, որը պարունակում էր այդ առաջարկը ի գիտություն ընդունելու մասին կետը: Ստեղծված պայմաններում Ադրբեջանը պատասխան վետո դրեց ամբողջ հռչակագրի վրա: Սակայն պատվիրակությունների ճնշման տակ Ադրբեջանը ստիպված էր զիջել և հանել իր վետոն, մինչդեռ Հայաստանը չզիջեց: Արդյունքում ԵԱՀԿ-ի 1996թ. Լիսաբոնում տեղի ունեցած գագաթնաժողովը ԼՂ հարցի կապակցությամբ որևէ որոշում չընդունեց: Մի փոքր անց

[46] *Նույն տեղում, 04.12.1996:*

ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, թե ինչպիսի համաձայնագիր էլ կնքվի, այն պետք է բացառի հակամարտության կողմից որևէ մեկի ենթակայությունը մյուսին, ԼՂՀ-ն չի կարող գոյություն ունենալ անկլավային վիճակում, նրա անվտանգության մակարդակը բացառապես պետք է որոշվի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կողմից[47]:

Լիսաբոնի գագաթնաժողովի նախագահը հանդես եկավ հայտարարությամբ, որը նրա անձնական տեսակետն էր և չուներ իրավական ուժ: Այդ հայտարարության մեջ նշված է երեք սկզբունք. 1. Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը, 2. իրավական կարգավիճակ Լեռնային Ղարաբաղին՝ ինքնորոշման վրա հիմնված պայմանագրի համաձայն, ըստ որի՝ Լեռնային Ղարաբաղը ստանում է առավելագույն ինքնակառավարման իրավունք Ադրբեջանի կազմում և 3. Լեռնային Ղարաբաղի և նրա ողջ բնակչության երաշխավորված անվտանգություն՝ ներառյալ խնդրի կարգավորմանն ուղղված միջոցառումներում բոլոր կողմերի համաձայնությունն ապահովելու փոխադարձ պարտավորվածությունները:

Լիսաբոնի գագաթնաժողովում ՀՀ նախագահի հայտարարությունը լիովին բացահայտեց, որ 1994թ. Բուդապեշտի գագաթնաժողովում ձեռք բերված պայմանավորվածությունը անմիջական ընթացող բանակցությունների առարկա է, որը դեռևս չի ավարտվել, մինչդեռ գագաթնաժողովի նախագահի հայտարարությունը կանխորոշում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը: Միանգամայն հստակ է, որ հիմնահարցի լուծումը պետք է գտնել միջազգային իրավունքի սկզբունքների ու նախ և առաջ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի հիման վրա, և հայկական կողմը փոխզիջումային որոշում գտնելու նպատակով պատրաստ է շարունակել բանակցությունները բոլոր մակարդակներով:

ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը ֆրանսիական հեղինակավոր «Պոլիտիք էնտեռնասիոնալ» հանդեսին տված հարցազրույցում նշել է, որ Լիսաբոնի գագաթնաժողովում Հայաստանը մերժեց ԵԱՀԿ գործող նախագահի առաջարկած բանաձևը, որովհետև այն հակասում էր ԵԱՀԿ նախորդ որոշումներին, որոնց համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի ստատուսը պետք է սահմանվի ԵԱՀԿ Մինսկի կոնֆերանսում: Այդ բանաձևը, ըստ ՀՀ նախագահի, հիերարխիա էր սահմանում տարածքային ամբողջականության և ինքնորոշման հավասարազոր սկզբունքների միջև: Բացի այդ, առաջարկված լուծման դեպքում Ղարաբաղի հայության գլխին մշտապես կախված է լինելու ցեղասպանության վտանգը: Եվ, ընդհանրապես, չպետք է ինքնորոշման իրավունքն անտեսվի Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման խնդրում[48]:

ԼՂՀ Ազգային ժողովը, հանդես գալով հայտարարությամբ, խստությամբ քննադատության ենթարկեց ԵԱՀԿ գործող նախագահի հայտարարությունը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի վերաբերյալ և դիմելով ՄԱԿ-ին, ԱՊՀ-ին, միջազգային մյուս կազմակերպություններին՝ կոչ արեց ընբռնում և աջակցություն դրսևորել արցախահայության ազատության և ինքնորոշման ձգտման մեջ, ակտիվորեն օժանդակել արդարացի, ողջախոհ, փոխընդունելի որոշումների հիմքի վրա հակամարտության խաղաղ լուծմանը[49]:

Ռուսաստանի Դաշնության ԱԳ նախարարության ներկայացուցիչ Կարասինը 1997թ. հունվարի 23-ին հայտարարեց, թե Ռուսաստանը եղել ու մնում է հակամարտության վերաբերյալ ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի սկզբունքներին ու որոշումներին համապատասխան շուտափույթ կարգավորելու սկզբունքների դիրքորոշմանը, և որ Ռուսաստանը մտադիր չէ կողմերից մեկի հետ լիարժեք կապեր հաստատել՝ ի հաշիվ կամ ի վնաս մյուս կողմի: Այդ օրերին Լեռնային Ղարաբաղ ժամանելով՝ ԱՄՆ-ի կոնգրեսի անդամ Ֆրենկ Փալոունը հունվարի 29-ին Ստեփանակերտում հայտարարեց, որ «հարատև խաղաղության ու կայունության հաստատման միակ գրավականը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչումն է»[50]: ԱՄՆ-ի իշխանությունները փորձում էին ցույց տալ, որ կողմնակից են և պայքարում են Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորել խաղաղ ճանապարհով: ԱՄՆ-ը կոչ էր անում բոլոր կողմերին՝ կրկնապատկել իրենց ջանքերը ԼՂ-ի հակամարտությունը բանակցությունների միջոցով լուծելու համար: Նաև ասված է, որ ինքը աջակցում է հակամարտության բոլոր կողմերի համար խնդրի ընդունելի լուծմանը, քա-

[47] «ԼՂ Հանրապետություն», 01.01.1997:

[48] «Հայաստանի Հանրապետություն», 09.05.1997:

[49] «ԼՂ Հանրապետություն», 12.12.1996:

[50] «Հայաստանի Հանրապետություն», 30.01.1997:

նի որ միայն համաձայնեցված լուծումը կլինի կայուն և հարատև, իսկ դա պահանջում է փոխզիջում[51] :

Այնուհետև որոշ ժամանակ ղարաբաղյան խնդրի շուրջ բանակցությունները լռել էին: Գարնան սկզբին հայտնի դարձավ, որ մարտի 17-ին Փարիզում կկայանա ԵԱՀԿ հավաքը, իսկ ապրիլի սկզբին Մոսկվայում կհավաքվեն Մինսկի խմբի անդամները, և հակամարտող կողմերի մասնակցությամբ կվերսկսվեն բանակցությունները: Ապրիլի 1-4-ը ՌԴ արտգործնախարարությունում տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղին նվիրված բանակցություններում միջնորդի դերում հանդես եկան Լեռնային Ղարաբաղի խնդրով զբաղվող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահողները՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի ներկայացուցիչները, որոնք առայսօր անփոփոխ իրագործում են այդ ֆունկցիաները: Ըստ էության, տեղի ունեցած ընդմիջումը հետևանք էր Մինսկի խմբի համանախագահության փոփոխման: Լեռնային Ղարաբաղին նվիրված այդ բանակցությունների գործընթացի վերսկսումը կարևոր նշանակություն ուներ Արցախի հիմնախնդիրը փոխադարձաբար ընդունելի փոխզիջման հիման վրա քաղաքական միջոցներով վերջնականապես կարգավորելու որոնումներում: Այդ հարցում առավել վճռական էր տրամադրված Ֆրանսիան: Նրա արտաքին գործերի նախարար էրվե դը Շարեթը տարածաշրջան կատարած այցի ժամանակ հայտարարեց, թե «Ֆրանսիան կգործադրի բոլոր ջանքերը ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ կարգավորման գործում առկա խնդիրները լուծելու համար[52]»: Իր հերթին ԼՂ Հանրապետության կառավարությունը, մարտի 25-ին հանդես գալով հայտարարությամբ, կրկին քննադատելով Լիսաբոնի գագաթնաժողովի նախագահի չմտածված և հապճեպ առաջարկությունը, շեշտեց, որ այն կարող է ամենաբացասական ձևով անդրադառնալ հակամարտության բոլոր կողմերի դիրքորոշումների վրա, նաև ասված է, որ Մոսկվայում կայանալիք բանակցությունների փուլի նախօրեին հակամարտության կողմերի դիրքորոշումներում նկատվող խստացումը բխում է հենց ԵԱՀԿ-ի գործող նախագահի հայտարարությունից: ԼՂՀ կառավարությունը կոչ էր անում բոլոր շահագրգիռ կողմերին ակտիվացնել ջանքերը փոխզիջումների հիման վրա կայուն լուծում գտնելու համար[53]:

Մոսկվայի հանդիպման ժամանակ պարզ դարձավ, որ քաղաքական համաձայնագրի նախագծի մոտ 70 տոկոսը արդեն կողմերի հետ համաձայնեցվել էր, մնացած չհամաձայնեցված հարցերը ամբողջապես կապ ունեին հիմնախնդրի կարգավորման առանցքային խնդիրների հետ: Քննարկվեցին նաև Լաչինի ու Շուշիի հարցը: Քանի որ Լաչինը կապվում է ԼՂ անվտանգության հետ, տարածքային հարց չէ: Պատերազմում Ադրբեջանը պարտվել է: Լաչինը այն գներից մեկն է, որ Ադրբեջանը պիտի վճարի: Մոսկվայում կայացած ղարաբաղյան բանակցությունները, որոնք առաջինն էին եռանախագահության հաստատումից ի վեր, ոչ մի առաջընթաց չարձանագրեց: Հանդիպման ժամանակ չնայած Ադրբեջանը առաջարկություններ մտցրեց Լաչինի և Շուշիի նկատմամբ, սակայն դրանք անընդունելի էին[54]:

ԵԱՀԿ խմբի համանախագահներ Վալենտին Լոգինսկին, ժակ Բլոյին և Սթրոբ Թալբոտին, 1997թ. մայիսի վերջին ժամանելով տարածաշրջան, բանակցություններ վարեցին կողմերի հետ և նրանց կոչ արեցին փոխզիջումային լուծումներ գտնել: Հունիսի 13-ին ԼՂՀ ժամանեցին նաև Մինսկի խմբի համանախագահներ Յուրի Յուվալովը (Ռուսաստան), Ժորժ Ուժեյը (Ֆրանսիա) և Լին Պասկոյը (ԱՄՆ): Այդ նույն օրը Ստեփանակերտում էր գտնվում նաև ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի ռուսաստանյան համանախագահ Վալենտին Լոգինսկին: Լեռնային Ղարաբաղի ղեկավարության հետ նրանց հանդիպումը տեղի ունեցավ փակ դռների ետևում: Ղարաբաղյան կողմը պատվիրակության անդամներին հանձնեց ԼՂՀ ղեկավարության պատասխանը ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի համանախագահների ներկայացրած առաջարկությունների նախագծին: Հետո՝ հոկտեմբերի 16-ին, ֆրանսիական «Մոնդ» թերթին տված հարցազրույցում ԼՂՀ վարչապետ Լեոնարդ Պետրոսյանը պատմել է, որ այդ նույն տարվա հուլիսին Մինսկի խմբի համանախագահներ ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Սթրոբ Թալբոթը, ֆրանսիացի դիվանագետ ժակ Բլոն և Ռուսաստանի արտաքին գործերի փոխնախարար Բորիս Պաստուխովը ԼՂՀ ղեկավարությանը ներկայացրել էին համընդհանուր կարգավորման իրագործման երկու մասից բաղ-

[51] *Նույն տեղում, 31.01.1997:*
[52] *Նույն տեղում, 03.04.1997:*

[53] *«ԼՂ Հանրապետություն», 27.03.1997:*
[54] *«Հայաստանի Հանրապետություն», 09.04.1997:*

կացած մի ծրագիր: Առաջին մասը վերաբերում էր գրավյալ տարածքների փոխադարձաբար վերադարձնելուն՝ ԵԱՀԿ տարանջատիչ ուժերի տեղակայմամբ, իրենց բնակության վայրեր փախստականների վերադարձմանը և հաղորդակցության ճանապարհների ապաշրջափակմանը: Երկրորդ մասը անկլավի ապագա կարգավիճակի մասին էր, որը մերժվեց Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի կողմից: Վարչապետ Լ.Պետրոսյանը գտնում էր, որ բարդույթի միակ լուծումը փոխզիջումն է[55]:

1997թ. ամռանը դարաբաղյան խնդրում որոշ տեղաշարժեր էր նկատվում: Լեռնային Ղարաբաղ կատարած իր 32-րդ այցելությունից հետո Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Լորդերի պալատի փոխխոսնակ, բարոնուհի Քերոլայն Քոքսը, Լորդերի պալատում քննարկման դնելով Արցախի հիմնահարցը, անգլիական կառավարությունից պահանջեց երաշխավորել և նպաստել միջազգային հասարակայնությանը դարաբաղյան խնդրի լուծումը դարձնելու կենտրոնական հարց: Բարոնուհի Քոքսը անհիմն համարեց Ադրբեջանի կողմից Շուշիի և Լաչինի պահանջը, որովհետև այդ երկու քաղաքները Ղարաբաղի հայերի համար կենսական են: Այդ միջանցքը կյանքի ուղի է, իսկ Շուշին բարձունքից պաշտպանում է Ստեփանակերտը, որտեղից «Գրադ» կայանքից օրական գնդակոծվում էր նվազագույնը 400 անգամ: Եվրոպական հարցերով համակարգող լորդ Ուիթին իր ելույթում հայտարարեց, թե Անգլիան լիովին պաշտպանում է Մինսկի խմբի գործունեությունը[56]:

Սակայն Բաքուն իր պահանջներով անկառավարելի էր դառնում: Նա, ինչպես նշել է ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, Արցախին առաջարկում էր միակողմանի կարգով զորքերը հանել բոլոր տարածքներից և, ըստ էության, Լեռնային Ղարաբաղը ենթարկել Ադրբեջանին: Նա առաջարկում էր Ղարաբաղի հիմնախնդրի կիպրոսյան ուղի՝ Ղարաբաղը բաժանել երկու մասի և կազմակերպել ադրբեջանական ու հայկական վարչակազմեր: Ստացվում է, որ պարտված կողմը հաղթող կողմին առաջարկում է կապիտուլյացիա: Ծիծաղելին այն է, որ ադրբեջանական կողմը դա ներկայացնում էր որպես փոխզիջում[57]:

---

[55] *Նույն տեղում, 17.10.1997:*
[56] *Նույն տեղում, 29.07.1997:*
[57] *"Независимая газета", 10.09.1997.*

1997թ. սեպտեմբերի 18-ին Արկադի Ղուկասյանը, հանդես գալով Հայաստանի ազգային հեռուստատեսությամբ, բացահայտեց Մինսկի խմբի եռանախագահության առաջարկած նախագծի էությունը, ըստ որի՝ միջնորդները և Ադրբեջանը առաջարկում էին վերականգնել ստատուս քվեն՝ հիմք ընդունելով 1988 թվականը: Բայց դա անցյալ է, մեռյալ: Այդ դեպքում ԼՂՀ-ն առաջարկեց վերադառնալ 1918 թվականին, երբ Լեռնային Ղարաբաղը ճանաչվել էր վիճելի տարածք: ԼՂՀ նախագահը հայտարարեց, որ չնայած Արցախը ոչ մի կապ չունի Ադրբեջանի հետ, սակայն պատրաստ է նրա հետ քննարկել ցանկացած հարց: Նա հույս հայտնեց, որ Մինսկի խմբի եռանախագահությունը կներկայացնի նոր առաջարկություններ, որը կարտահայտի բոլոր կողմերի շահերը[58]: Մի փոքր անց Արկադի Ղուկասյանը «Կոմերսանտ դեյլի»-ի թղթակից Լեոնիդ Գանիկինին տված հարցազրույցում նշել է, որ միջնորդների կողմից Լեռնային Ղարաբաղին առաջարկված խնդրի լուծման միայն որոշակի տարրեր են պարունակում: Ապա նշել է, որ առաջարկվում է մեր զորքերը միակողմանի հանել գրավյալ տարածքներից, մինչդեռ Լեռնային Ղարաբաղի տարածքի 15 տոկոսն այսօր բռնազավթված է ադրբեջանական զորքերի կողմից: Ակնհայտ է, որ հանուն նավթի միջնորդները պաշտպանում են իրենց երկրների շահերը: Նրանք առաջարկում են նախ լուծել Ադրբեջանի պահանջը, որպեսզի հետո անցնեն Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին: Իսկ դա անընդունելի է[59]:

1997թ. աշնանը պարզ դարձավ, որ բանակցություններին որպես հիմք ընդունվել էր խնդրի փուլ առ փուլ կարգավորման տարբերակը, որի մանրամասնությունները պահվում էին գաղտնի: Միջնորդները փորձում էին Հայաստանի և Ադրբեջանի իշխանություններին համոզել, որ խնդրի փուլ առ փուլ կարգավորման տարբերակը միակն է, ըստ որի՝ առաջին փուլում հայկական զորքերը դուրս են բերվելու գրավյալ վեց շրջաններից, հաջորդ փուլում՝ Լաչինից և Շուշիից, որտեղ տեղավորվելու են միջազգային խաղաղարար ուժեր: Հետագայում տեղի են ունենալու փախստականների վերադարձ, շրջափակումների վերացում և այլն: Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը քննարկվելու է վերջին փուլում: ԼՂՀ-ն պաշտպանում էր փաթեթային կարգավորման տարբերակը, որը նշանակում է բոլոր քաղաքական

---

[58] *«Հայաստանի Հանրապետություն», 20.09.1997:*
[59] *«ԼՂ Հանրապետություն», 25.10.1997:*

հարցերի համաժամանակյա լուծում՝ կարգավիճակ, անվտանգություն, տարածք, փախստականներ և այլն:

Ընդունել փուլային տարբերակը նշանակում էր անվերապահ կապիտուլյացիա: Դատեցեք. հայկական կողմին պարզապես առաջարկվում էր ազատել գրավյալ տարածքները և վերջ: Դրանից հետո Ղարաբաղի կարգավիճակի շուրջ խոսակցությունները կարող են շարունակվել տարիներ և որևէ արդյունք չտալ, իսկ Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգությանը բացարձակապես ոչ մի երաշխիք: Ակնհայտ էր, որ Մինսկի խմբի եռանախագահների որոշ ակտիվացումը գնում էր ի վնաս Արցախի:

Եվ, այսպես, 1997թ. աշնանը առաջ էր եկել ղարաբաղյան հիմնախնդրի լուծման երկու տարբերակ՝ փուլային և փաթեթային, որոնց Լ.Տեր-Պետրոսյանի և Ա.Ղուկասյանի մոտեցումը առաջ էր բերել հուզական իրարանցում քաղաքական և հասարակական շրջանակներում: Դա լիովին բնական է, քանի որ այն շոշափում է համազգային նշանակություն ունեցող հարց՝ Լեռնային Ղարաբաղի անվտանգության և կարգավիճակի հարցը:

ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը կարծում էր, թե ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության առաջարկած նոր տարբերակը (փուլային) բանակցությունների հիմք ընդունելը ճիշտ է, քանի որ իբրև նախկին տարբերակը (փաթեթային) փաստորեն սպառել է իրեն: Մինչդեռ Լեռնային Ղարաբաղի նախագահը կարծում էր, որ ճիշտ կլինի վերադառնալ նախկին՝ փաթեթային տարբերակին և այն դարձնել քննարկման հիմք: Հայաստանում և Արցախում լայնորեն քննարկվում էր այդ խնդիրը, և մեծամասնության համար ընդունվել էր փաթեթային տարբերակը[60]:

ԼՂՀ նախագահ Ա.Ղուկասյանը մամուլի ասուլիսում հայտարարեց, որ եթե Հայաստանն ընդունում է փուլ առ փուլ տարբերակը, որն առաջարկվել է միջնորդների կողմից, չեմ պատկերացնում, թե դա ինչպես պետք է սկսել իրագործել: Մենք պատրաստ ենք Ադրբեջանի հետ կառուցելու հորիզոնական հարաբերություններ: Ադրբեջանը ձգտում է ղարաբաղի հիմնահարցի ուժային լուծում, որը մերժվում է մեր կողմից: Ղարաբաղի խնդիրը միայն ղարաբաղցիների խնդիրը չէ. դա նաև Հայաստանի և սփյուռքի խնդիրն է, այսինքն՝ համազգային բնույթ ունի: Միջնորդների խնդիրը չէ այս կամ այն սխեմաների պարտադրումը:

[60] *«Հայաստանի Հանրապետություն», 25.10.1997:*

Միջնորդներն առաջարկում են Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը: Մենք մերժել ենք այն: Ամենից առաջ պետք է լուծվի կարգավիճակի հարցը: Մեզ պետք չէ այն բանակցությունը, որտեղ պետք է քննարկվի փուլ առ փուլ փաթեթը[61]:

1997թ. հոկտեմբերի 4-ին Լ.Տեր-Պետրոսյանը և Արկադի Ղուկասյանը քննարկեցին ղարաբաղյան խնդրի կարգավորման հարցը: Այդ հանդիպմանը ներկա էին նաև Ռ.Քոչարյանը և արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Արզումանյանը: Լեռնային Ղարաբաղը մերժել էր համանախագահների այդ վերջին առաջարկությունը, որի համար էլ նա հայտարարվել էր ոչ կառուցողական: Հոկտեմբերի 7-ին ԼՂՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Արկադի Ղուկասյանը հայտարարեց, որ արցախցիների համար անկախության քննարկման հարց չկա, քանի որ հասել ենք դրան: Մենք չենք ընդունում լինել Ադրբեջանի կազմում: Իսկ հոկտեմբերի 12-ին Հայաստանում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Նաիրա Մելքումյանը հայտարարեց, որ Արցախը չի կարող ընդունել փուլային տարբերակը, նրա համար ընդունելի է փաթեթայինը: Ապա նշեց, որ Լեռնային Ղարաբաղը գրավյալ տարածքները դիտում է միայն որպես իր անվտանգությունն ապահովող երաշխիքներ և որ առաջին հերթին Ղարաբաղի կարգավիճակն է: Տիկին Մելքումյանը չէր սխալվում, երբ հայտարարեց, որ ցանկացած հայտարարություն, որն ընդունվում է առանց Ղարաբաղի ղեկավարության, թերի է ի սկզբանե: Առանց Ղարաբաղի մասնակցության չի լուծվի այդ հարցը, չի լինելու այդ հարցի կարգավորումը, մինչև Ղարաբաղը չտա իր համաձայնությունը[62]:

1997թ. վերջին Կոպենհագենում տեղի ունենալիք միջնորդների հանդիպման նախօրյակին Արկադի Ղուկասյանը նոյեմբերի 13-ին լրագրողներին հայտարարեց, թե «Բանակցային գործընթացը հետապնդելու նպատակով Կոպենհագենում պետք է ինչ-որ չափով չեզոքացվի լիսաբոնյան գագաթնաժողովի հայտարարությունը», և որ ԼՂՀ անվտանգությունը կարող է երաշխավորել միայն հանրապետության ճանաչումը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ: Արցախցիները պայքարում են անկախության համար և այդ գաղափարից չեն հրաժարվի: Հայաստանը պետք է

[61] *«ԼՂ Հանրապետություն», 11.10.1997:*
[62] *«Հայաստանի Հանրապետություն», 14.101997:*

պաշտպանի նրա դիրքորոշումը, մանավանդ որ ԼՂՀ և ՀՀ շահերը ընդհանուր շահեր են, և որ դրանք համընկնում են[63]:

1997թ. դեկտեմբերի 3-ին Ստեփանակերտ ժամանեց ԵԱՀԿ Մինսկի խմբի պատվիրակությունը համանախագահների գլխավորությամբ: ԼՂՀ ղեկավարների հետ ունեցած հանդիպման ժամանակ նրանք արտահայտվեցին «Լեռնային Ղարաբաղի հակամարտության դադարեցման շուրջ համաձայնագրի» առաջարկած նախագծի հիման վրա բանակցային գործընթացը շարունակելու անհրաժեշտության օգտին: Ընդգծվեցին բանակցությունների գործընթացի վրա Լիսաբոնի գագաթնաժողովում ԵԱՀԿ գործող նախագահի հայտարարության բացասական ազդեցությունը և ԵԱՀԿ իրավասու մարմինների կազմից նրա չեզոքացման անհրաժեշտությունը: Շեշտվեց բանակցություններում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը որպես ռազմաքաղաքական հակամարտության լիիրավ կողմ ապահովելու անհրաժեշտությունը[64]: Մի քանի օր անց դեկտեմբերի 15-ին, ԼՂՀ արտաքին գործերի նախարարությունը, հանդես գալով հայտարարությամբ, նշել է, որ հավաստելով միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը վտանգի չենթարկելու ԼՂՀ կառավարության ու ժողովրդի հաստատ վճռականությունը հայտարարում է վիճելի հարցերի լուծման համար ուժի կիրառումից կամ ուժի սպառնալիքից ձեռնպահ մնալու պարտավորություն ստանձնելու պատրաստականության մասին և հակամարտության մյուս կողմերին կոչ է անում նույնպես հանդես գալ նման հայտարարությամբ: ԼՂՀ ԱԳ նախարարությունը վստահեցնում էր, որ 1. ԼՂ հիմնահարցի կարգավորումը հնարավոր է միայն բանակցությունների միջոցով հակամարտության խաղաղ, արդարացի ու փոխընդունելի լուծման հիման վրա, 2. ԵԱՀԿ հովանու ներքո ընթացող բանակցությունները եզակի հնարավորություն են ներկայացնում Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերջնական ու համապարփակ կարգավորման համար: Այնուհետև պահանջվում է Լեռնային Ղարաբաղի՝ որպես հակամարտության կողմի դերը, և բանակցությունները չպետք է ունենան կանխորոշող որևէ նախնական պայմաններ[65]:

---

[63] *«ԼՂ Հանրապետություն», 20.11.1997:*
[64] *Նույն տեղում, 06.12.1997:*
[65] *Նույն տեղում, 16.12.1997:*

1997թ. դեկտեմբերի 18-19-ը Կոպենհագենում տեղի ունեցած ԵԱՀԿ արտգործնախարարների հանդիպման ժամանակ ՀՀ արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Արզումանյանը իր ելույթում նշեց, որ ոչ մի համաձայնություն չի կարող ձեռք բերվել առանց Լեռնային Ղարաբաղի անմիջական մասնացության: Ապա նշեց, որ Լիսաբոնի գագաթնաժողովում գործող նախագահի հայտարարությունը լուրջ հարված հասցրեց խաղաղ գործընթացին: Այնքանով, որքանով այն կանխորոշում էր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը, այդ հայտարարությունը կողմերի համար իմաստազրկեց հետագա երկխոսության անհրաժեշտությունը: Փաստորեն, Լիսաբոնից հետո կողմերի միջև տեղի էր ունեցել բանակցությունների միայն մեկ փուլ՝ ի տարբերություն նախալիսաբոնյան կանոնավոր ամենամսյա բանակցությունների: Լիսաբոնյան հայտարարությունը ոչ միայն անհնարին դարձրեց կարգավիճակի շուրջ բանակցությունները, այլև չափազանց բարդացրեց միջազգային համաձայնության ձեռքբերումը: Հայաստանի Հանրապետությունը դրական գնահատեց Կոպենհագենում արձանագրված արդյունքը, սակայն գագաթնաժողովից գագաթնաժողով ցիկլը հավերժ չի կարող շարունակվել: Այդ մասին ասվեց դեկտեմբերի 22-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսում Հայաստանի արտաքին գործերի փոխնախարար Վարդան Օսկանյանի կողմից:

Ադրբեջանը, մերժելով Լեռնային Ղարաբաղի հետ բանակցություններ սկսելու գործընթացը, անգամ համաձայն չէր նրան ճանաչել լիիրավ կողմ նրա իսկ կարգավիճակի շուրջ բանակցություններում: Որպեսզի վերջնական լուծումը լինի արդարացի և հարատև, ՀՀ արտգործնախարարը գտնում էր, որ այն պետք է հիմնվի հետևյալ բաղադրատարրերի վրա. Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի հարաբերությունները կանոնակարգող համաձայնագիր, որը Լեռնային Ղարաբաղին թույլ կտա լիակատար հսկողություն սահմանել իր տարածքի նկատմամբ և իր ճակատագրի տերը լինել, անվտանգության միջոցառումներ և երաշխիքներ, որոնք միանշանակորեն կբացառեն ռազմական գործողությունների վերսկսման հնարավորությունը ու անշրջելի կդարձնեն խաղաղ գործընթացը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղին աշխարհագրական այնպիսի սահմանների տրամադրումը, որը կվերացնի նրա մեկուսացված՝ անկլավային վիճակը:

Կոպենհագենում ԵԱՀԿ արտգործնախարարների հանդիպումը ԼՂ հարցով որևէ որոշում չընդունեց: Իսկ դրանում վճռորոշ

դեր ունեցավ ՀՀ արտգործնախարարի վերոհիշյալ ելույթը: Այդուհանդերձ, Կոպենհագենը լուրջ քայլ էր Լեռնային Ղարաբաղը որպես հակամարտության լիարժեք կողմ ճանաչելու ճանապարհին: Ըստ էության, միջազգային հանրությունը ընդունեց, որ առանց Լեռնային Ղարաբաղի հակամարտության լիարժեք կողմ ճանաչելու անհնարին է բանակցություններում հաջողության հասնել:

Կոպենհագենում ԵԱՀԿ գործող նախագահը հակամարտության բոլոր կողմերից պահանջում էր անհապաղ վերսկսել բանակցությունները Մինսկի խմբի համանախագահների առաջարկների հիման վրա: Սակայն խնդիրն այն է, որ Լեռնային Ղարաբաղի իշխանությունները ԵԱՀԿ համանախագահների առաջարկները որպես բանակցությունների հիմք չեն ընդունել և փոխարենը ներկայացրել են իրենց առաջարկները: Դա նշանակում է, որ նախ հանդիպում պետք է տեղի ունենար Մինսկի խմբի համանախագահների և Լեռնային Ղարաբաղի իշխանությունների միջև, և պիտի սկսվեր Ե.Պրիմակովի առաջ քաշած «մաքոքային դիվանագիտության» նոր փուլ՝ Բաքու-Երևան-Ստեփանակերտ տրորված արահետով:

Հայաստանի վարչապետ Ռոբերտ Քոչարյանը, «Իզվեստիա» թերթին տալով հարցազրույց, պարզաբանեց որոշ հանգամանքներ: Հայաստանը մշտապես հայտարարում էր, որ պատրաստ է աջակցել ցանկացած որոշման, որը կբավարարի Ղարաբաղին: Այդ բանաձևը խոցելի էր դարձնում Ստեփանակերտի դիրքորոշումը: Մինչդեռ, եթե Երևանն ունենար իր հստակ, պարզ տեսակետը, ապա, Ռ.Քոչարյանի պարզաբանմամբ, հիմնահարցի լուծումը ավելի կհեշտանար: Ակնհայտ է, որ Ղարաբաղը համազգային հիմնահարց է, և ցանկացած լուծում պետք է ձեռք բերվի համաձայնությամբ: Հայաստանի տեսակետի բացակայությունը հարուցում էր Ստեփանակերտի անվստահությունը և փաստորեն խանգարում բանակցությունների ընթացքին: «Եթե դա բացակայում է, ապա լրջորեն բարդանում է փոխհամաձայնությունը»,– եզրափակում է վարչապետը[66]: Իսկ ԱՄՆ-ի կոնգրեսական Ֆրենկ Փալոնի գլխավորած պատվիրակությունը, 1998թ. սկզբին լինելով ԼՂՀ-ում, նշել է, որ իր այցի նպատակն է ճշտել ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում անցկացվող բանակցություններում ԼՂՀ-ի դիրքորոշումը, ծանոթանալ այդ գործընթացում ԱՄՆ-ի դերի մասին արցախյան տեսակետին, ինչպես նաև ԼՂՀ-ի տնտեսական զարգացման հեռանկարներին: Նա նաև նշեց, որ իր կարծիքով ղարաբաղյան հակամարտության կարգավորման Մինսկի խմբի առաջարկությունները հիմնականում համապատասխանում[67] են Ադրբեջանի շահերին, և որ բանակցությունների ձգձգումը ձեռնտու է Ադրբեջանին: Նա ցավով նշեց, որ աշխարհի շատ պետություններ գերադասում են մեծ կարևորություն տալ Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը, քան Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքին: Ապա փաստեց, որ Մինսկի խմբի առաջարկություններն անընդունելի են Ղարաբաղի համար, քանի որ չեն ապահովում նրա անվտանգությունը[67]:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության Լեռնային Ղարաբաղի խնդրով Մինսկի խմբի նախագահները, մարտի 3-ին Վարշավայում հանդիպելով ԵԱՀԿ գործող նախագահ, Լեհաստանի արտաքին գործերի նախագահ Բրոնիսլավ Գերեմեկի հետ, քննարկեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հետ կապված հարցը և հակամարտող կողմերին կոչ արեցին հանդես բերել առավելագույն զսպվածություն և խուսափել այնպիսի հայտարարություններից կամ գործողություններից, որոնք կարող են հանգեցնել իրադարձությունների անվերահսկելի զարգացման կամ դժվարություններ հարուցել բանակցային գործընթացի համար[68]:

1998թ. փետրվարյան իրադարձություններից հետո Հայաստանի նոր իշխանությունները միջնորդներից պահանջեցին վերադառնալ կարգավորման փաթեթային հայեցակարգին: Այս անգամ Ադրբեջանը մերժեց փաթեթային լուծման առաջարկները և բացահայտ որդեգրեց ապակառուցողական դիրքորոշում: Այնուհետև հարցը փոխադրվեց երկկողմանի հանդիպումների ֆորմատ: 1998-2001թթ. տեղի ունեցան երկու տասնյակ հանդիպումներ Հ.Ալիևի և Ռ.Քոչարյանի միջև: Լեռնային Ղարաբաղը դուրս մղվեց իր իսկ կարգավիճակի շուրջ բանակցություններից, հրաժարվեցին նրան ճանաչել որպես կարգավորման գործընթացի կողմ, և հակամարտության սուբյեկտից վերածվեց հակամարտության օբյեկտի: Պարզապես Ռ.Քոչարյանն ու Հ.Ալիևը ղարաբաղյան հիմնախնդիրը ինքնորոշման հարցից տեղափոխեցին Հայաստան-Ադրբեջան տարածքային վեճի: Քոչարյան-Ալիև քա-

[66] *"Известия", 10.02.1998.*

[67] *«ԼՂ Հանրապետություն», 10.01.1998:*

[68] *«Հայաստանի Հանրապետություն», 05.03.1998:*

ղաքական մարաթոնը մինչև վերջինիս մահը, որը տեղի ունեցավ 2003թ. դեկտեմբերի 15-ին, որևէ առաջընթաց քայլ չգրանցեց: 1998թ. ապրիլի 28-ին Մոսկվայում, երբ հանդիպեցին Ռ.Քոչարյանն ու Հ.Ալիևը, Ռ.Քոչարյանը խոստումնալից հայտարարեց, թե «Ղարաբաղի հարցը պիտի լուծենք ամբողջությամբ»: Ըստ էության, Ռ.Քոչարյանը իր վրա վերցրեց նաև Արցախի ներկայացուցչի պատասխանատվությունը, որի հետևանքով Արցախը լրիվ չեզոքացվեց և դուրս մղվեց գործընթացից: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Յուրի Մերզլյակովը, 2004թ. հուլիսի 14-ին տեղի ունեցած ասուլիսում պատասխանելով այն հարցին, թե ե՞րբ է հնարավոր ԼՂ-ի վերադարձը բանակցային գործընթաց, պատասխանել է, որ ի սկզբանե ԼՂ-ն հակամարտության կողմ է ճանաչված, ԼՂՀ նախագահի ստորագրությունը դրված է հրադադարի փաստաթղթի տակ, իսկ ԵԱՀԿ-ն որոշում է կայացրել, որ բանակցությունը երեք կողմ պետք է ունենա: Այսօր բանակցություններն ընթանում են այն ֆորմատով, որն առաջացավ 1997 թվականից հետո կամ 1998-ի սկզբներին, երբ ՀՀ նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը[69]:

Ինչևիցէ: 1998թ. մայիսի 14-ին Ստեփանակերտ ժամանեց ԵԱՀԿ Լեռնային Ղարաբաղի գծով Մինսկի խմբի պատվիրակությունը: Նրանք, հանդիպելով ԼՂՀ ղեկավարության հետ, գործնականում ոչ մի նորություն չհաղորդեցին: Մայիսի 15-ին նրանց հետ հանդիպման ժամանակ Ռ.Քոչարյանը նշեց, որ Հայաստանը կողմ է հարցի կարգավորման փաթեթային տարբերակին՝ առանց նախապայմանների: Ըստ նրա՝ խնդրի էությունը և առանցքը Ղարաբաղի կարգավիճակն է, հետևաբար բանակցությունները պետք է սկսվեն հենց այդ հարցից, իսկ մնացած բոլոր խնդիրներն այս դեպքում շատ ավելի հեշտությամբ կկարգավորվեն: Նա բացառեց որևէ ուղղակի ենթակայություն Ադրբեջանին[70]: Ռ.Քոչարյանի այդ տեսակետը կիսում էր ԼՂՀ ղեկավարությունը, որի համար հստակ էր, որ Ղարաբաղը Ադրբեջանի մաս չի կարող կազմել և պատրաստ է վերջինիս հետ ստեղծել հորիզոնական հարաբերություններ:

Բանակցությունների գործընթացը ապա հայտնվեց փակուղում: Այդ մասին 1998թ. սեպտեմբերի 25-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 53-րդ նստաշրջանում հայտարարեց ՀՀ նախագահ

[69] *«Հայկական ժամանակ», 15.07.2004:*
[70] *«Հայաստանի Հանրապետություն», 16.05.1998:*

Ռոբերտ Քոչարյանը: Դրա հիմնական պատճառներն էին բանակցությունների գործընթացում Ղարաբաղի ներկայացուցչության հստակորեն չորոշված կարգավիճակը, Լեռնային Ղարաբաղի ղեկավարության հետ անմիջական բանակցություններից Ադրբեջանի հրաժարվելը, ինչպես նաև այն փաստը, որ Ադրբեջանը շարունակում է պնդել իր նախապայմանները Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակի վերաբերյալ, ինչը պետք է որոշվի բուն բանակցությունների ընթացքում[71]:

1998թ. աշնանը քննարկվում էր «ընդհանուր պետություն» ստեղծելու գաղափարը, որից, սակայն, Ադրբեջանը արագ հրաժարվեց: Ադրբեջանը, հրաժարվելով Լեռնային Ղարաբաղի հետ բանակցելուց, ցանկանում էր բանակցել միայն Հայաստանի հետ, առանց ԼՂՀ-ի մասնակցության[72]:

Մինսկի խումբը առաջարկեց Ղարաբաղի և Ադրբեջանի միջև հաստատել հորիզոնական կապեր, որը Ադրբեջանի կողմից դարձյալ մերժվեց: 1999թ. մարտի 11-ին Ստրասբուրգում Եվրախորհրդարանը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ընդունեց մի բանաձև, որը մասամբ պաշտպանում էր հակամարտության կարգավորման գծով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների վերջին ծրագիրը, որը հիմնված էր «ընդհանուր պետություն» սկզբունքի վրա: Ադրբեջանը կրկին մերժեց: ԼՂՀ-ի նախագահը պահանջեց բանակցություններ վարել առանց նախապայմանների: Նա հայտարարեց, որ «Առանց Ղարաբաղի ոչ ոքի չի լիազորի բանակցել իր փոխարեն»[73]: Հետագայում թե Ֆրանսիայում և թե ԱՄՆ-ում Ռ.Քոչարյանի և Հ.Ալիևի հանդիպումներն ու ընդհանուր եզրակացության մոտենալը այդպես էլ մնաց անավարտ: 2000թ. հունիսի սկզբին տարածաշրջան այցելած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին Երևանում հասկացրին, որ շատ ավելի արդյունավետ կլինի, եթե բանակցություններին անմիջականորեն մասնակցի նաև Լեռնային Ղարաբաղը, և որ Հայաստանի ու Ադրբեջանի կողմից ընդունված ցանկացած որոշում հնարավոր կլինի կյանքի կոչել միայն այն դեպքում, եթե դրան համաձայնեն Լեռնային Ղարաբաղի իշխանությունները ու ժողովուրդը: Համանախագահները համաձայնեցին,

[71] *Նույն տեղում, 26.09.1998:*
[72] *«Ազգ», 27.02.1998:*
[73] *«Հայաստանի Հանրապետություն», 08.12.1998:*

որ ցանկացած լուծում դատապարտվում է ձախողման, եթե կողմերից որևէ մեկի կարծիքը հաշվի չի առնվում[74]:

2000թ. հուլիսի 17-ից մինչև 19-ը Երևանում և Բաքվում լինելով Եվրոպայի անվտանգության ու համագործակցության կազմակերպության գործող նախագահ՝ Ավստրիայի ԱԳ նախարար Բենիտա Ֆերերո-Վալդները կոչ արեց Ռ.Քոչարյանին և Հ. Ալիևին՝ հաստատել փոխադարձ վստահության մթնոլորտ, որտեղ հակամարտության կարգավորումը կլիներ հեշտ և արագ[75]: ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 55-րդ նստաշրջանում (Հազարամյակի գագաթնաժողով) 2000թ. սեպտեմբերի 7-ին ունեցած իր ելույթում մի անգամ ևս շեշտեց, որ Հայաստանը մնում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման կողմնակից: Ապա նշեց, որ Հայաստանը բարձր է գնահատում Մինսկի խմբի ներդրումը հրադադարի ռեժիմի պահպանման գործում, և որ ուղիղ բանակցությունները Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև կլինեն ավելի արդյունավետ, որովհետև Լեռնային Ղարաբաղը դե ֆակտո կայացած է և երկխոսության համար բաց պետություն է: Ադրբեջանը, մերժելով հակամարտության կարգավորման վերաբերյալ միջնորդների վերջին առաջարկությունները, ավելի էր բարդացնում խնդիրը: ՀՀ նախագահը հույս էր հայտնում, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծումը իրագործելի է միայն կողմերի իրավահավասարության հիման վրա[76]:

Արցախի քաղաքական և հասարակական ուժերը[77] 2001թ. ապրիլի 26-ին՝ ԱՄՆ-ի Քի Ուեսթիում Ռ.Քոչարյանի և Հ.Ալիևի հանդիպումից քսան օր անց, հանդես եկան հայտարարությամբ, որտեղ նշված է, որ ղարաբաղյան հիմնահարցի կարգավորումը պետք է բխի պատմական իրավունքից, փաստացի իրավիճակից և Արցախի ժողովրդի անվտանգության ապահովման անհրաժեշտությունից: Նաև նշված է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնահարցը համազգային խնդիր է, նրա ցանկացած

[74] *Նույն տեղում, 07.07.2000:*
[75] *Նույն տեղում, 19.07.2000:*
[76] *Նույն տեղում, 09.09.2000:*
[77] *Արցախի արմենական կուսակցություն, Արցախի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, ՀՅՊ Արցախի կազմակերպություն, Արցախի կոմունիստական կուսակցություն, Արցախի պատերազմի վետերանների միություն, «Ժողովրդական Արցախ միություն», Հասարակական-քաղաքական շարժում և ԼՂՀ պատերազմի և աշխատանքի վետերանների խորհուրդ:*

լուծում իր իրավական ուժը պետք է ստանա համազգային քննարկումներից հետո՝ հանրաքվեի միջոցով[78]:

Արցախի բարդույթի գործընթացը շարունակվում է: Մինսկի խմբի կոնֆերանսի ծայրը դեռ չի երևում, չնայած համանախագահողները հույսեր են ներշնչում: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, 2004թ. հունիսի 23-ին Ստրասբուրգում ելույթ ունենալով Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանում (ԵԽԽՎ), պատասխանելով խորհրդարանական վեհաժողովի պատգամավորների և լրագրողների հարցերին, հստակեցրեց արցախյան հիմնախնդրի էությունը: Նա ընդգծեց, որ «Ղարաբաղը երբեք չի եղել անկախ Ադրբեջանի կազմում», և որ ԽՍՀՄ փլուզման արդյունքում նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում կազմավորվել են երկու անկախ պետություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը: Այդ նշանակում է, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ ոչ մի ընդհանուր բան չունի: Ապա նշեց, որ 1992-1994թթ. պատերազմն ադրբեջանական իշխանությունների ագրեսիայի արդյունք էր, որով նրանք փորձում էին էթնիկ զտումներ անցկացնել Լեռնային Ղարաբաղի տարածքում՝ այն զավթելու նպատակով: Ձևավորված դե ֆակտո իրավիճակը սեփական հողում ապրելու համար Լեռնային Ղարաբաղի հայերի անձնուրաց պայքարի արդյունք է: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը այսօր կայացած պետություն է: Նա պետք է ուղղակի մասնակցի բանակցային գործընթացին[79]: Չէ՞ որ դեռևս 1994թ. բուդապեշտյան ԵԱՀԿ գագաթնաժողովի որոշումների հիման վրա, որոնք ընդունվել են Հ.Ալիևի և Լ.Տեր-Պետրոսյանի համաձայնությամբ, բանակցող կողմեր են ճանաչվել Լեռնային Ղարաբաղը, Հայաստանը և Ադրբեջանը:

[78] *«Ազատ Արցախ», 01.05.2001:*
[79] *Նույն տեղում, 24.06.2004:*

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԼՂՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 1994 – 2000ԹԹ.

1. ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Զինադադար կնքվելուց հետո ԼՂՀ ԳԽ-ի և ՊՊԿ-ի հիմնական խնդիրն էին գրեթե ամբողջովին շարքից դուրս եկած տնտեսության վերականգնումը և բնակչության սոցիալական վիճակի բարելավումը: Առաջին քայլերը ձեռնարկվեցին Շուշիի ազատագրումից հետո, երբ վերականգնվեց տեղի ռադիոգործարանը: Այն իր աշխատանքները սկսեց խոհանոցային պարագաների արտադրությամբ: Վերականգնման տեմպերը արագացրել էր նաև կոնդենսատորների գործարանը: Այն նույնիսկ մասնաճյուղ բացեց Ճարտարում: Հայաստանի մասնագետների և դուստր ձեռնարկությունների աջակցությամբ 1993թ. աշնանը տարեսկզբի համեմատությամբ հանրապետության արդյունաբերության արտադրանքի ծավալն աճել էր 6,5 անգամ[1]: «Հայգորգի» օգնությամբ Ստեփանակերտի նախկին գորգագործական ֆաբրիկայի բազայի վրա ստեղծվեց «Արցախ» գորգագործական կոոպերատիվը, որը հետո ԼՂՀ ՊՊԿ-ի որոշմամբ վերանվանվեց «Զարինե» գորգագործական ֆաբրիկա որտեղ 1993թ. նոյեմբերին աշխատում էին 104 հոգի, և ամսական թողարկում էր 20-25 քառ.մ արտադրանք[2]: Արտադրվում էին «Արցախ», «Ղարաբաղ», «Սեվան», և այլ անուններով գորգեր, որոնք հիմնականում արտահանվում էին արտասահմանյան երկրներ:

1993թ. նոյեմբերի 1-ից իր աշխատանքները վերսկսեց Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանի Հաթերքի մասնաճյուղը, որտեղ աշխատում էին 40 հոգի: Վերագործարկվեց Ստեփանակերտի մսի կոմբինատը, որի արտադրանքը սկզբում ամբողջովին տրամադրվում էր հանրապետության պաշտպանության նախարարությանը: Աշխատանքներ էր տարվում վերականգնել Ստեփանակերտի մետաքսկոմբինատը՝ հանրապետության արդյունաբերական առաջնեկը: Եթե 1987թ. թողարկվել է 14 մլն 896,6 հազար մետր մետաքսի գործվածք, 1992-ին՝ 577,3 հազար մետր, ապա 1993թ. առաջին 7 ամսում՝ 517 հազար մետր: Հանրապետությունում 1987թ. արտադրվել են 1 մլն 136,4 հազար էլեկտրական սարքեր, 1992-ին չէր արտադրվել ոչ մի հատ, իսկ 1993-ի առաջին 7 ամսում արտադրվել էր 204 հազար սարք: 1987թ. արտադրվել էր 4 մլն 515 հազար զույգ կոշկեղեն, որի քանակությունը 1992-ին իջել էր 189 հազարի, իսկ 1993-ի յոթ ամսում արտադրվել էր 204 հազար զույգ: Հանրապետության արտադրության մեջ կարևոր դեր ուներ կոնյակի արտադրությունը: Եթե 1992թ. արտադրվել էր 147 հազար դեկալիտր, ապա 1993-ի յոթ ամսում այն կազմել է հազիվ 3 հազար դեկալիտր: Եթե ընդհանրացնենք, ապա 1993թ. 9 ամսում հանրապետությունում արտադրվել է 945,6 մլն ռուբլու արտադրանք 1992-ի արտադրված 162 մլն ռուբլու դիմաց[3]: Ստեփանակերտի քաղաքագլուխ Պավել Նաջարյանը «Նոյան տապան» լրատվական գործակալության թղթակցին տված հարցազրույցում հստակ ասել է, որ հանրապետության շատ ձեռնարկություններ չեն աշխատում, որովհետև մասնագետները հիմնականում գտնվում են բանակում, նույնիսկ չէին կարողանում օգտագործել Սարսանգի էներգիան[4]:

ԼՂՀ արդյունաբերությունը վերականգնելու համար Հայաստանի Հանրապետությունը շարունակում էր ցույց տալ օգնություն: Օրինակ՝ «Հայէլեկտրամեքենա» արտադրական միավորման գլխավոր տնօրեն Կարեն Դեմիրճյանը Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի համար սարքավորումներ գնելու նպատակով տրամադրել է 10 միլիոն ռուբլի[5]: ՀՀ ղեկավարությունը ԼՂՀ ԳԽ նախագահությանը և ԼՂՀ ՊՊԿ-ին հղած հեռագրում հույս էր հայտնում, որ Հայաստանում բոլոր դժվարությունները կհաղթահարվեն, և «արցախցիները, շոյված լինելով իրենց նկատմամբ Մայր հայրենիքի հոգատարությունից, լիահույս են, որ Հայաստանի Հանրապետությունը հետայսու ևս սատար կկանգնի Արցախի ազատագրական պայքարին, ԼՂՀ անկախության ամրապնդմանը և նրա միջազգային ճանաչմանը»[6]:

ԼՂՀ-ում կարևոր ուշադրություն էր դարձվում գյուղատնտե-

[1] «Հայաստանի Հանրապետություն», 16.09.1993:
[2] Նույն տեղում, 26.11.1993:
[3] Նույն տեղում, 22.12.1993:
[4] Նույն տեղում, 15.10.1993:
[5] «Արցախ», 14.09.1993:
[6] Նույն տեղում, 23.09.1993:

սության զարգացմանը և նրա քայքայված տնտեսության վերականգնմանը: 1993թ. օգոստոսի կեսերին հանրապետության գյուղատնտեսության և պարենի նախարարությունում հրավիրված խորհրդակցությունում, երբ ամփոփվեց բերքահավաքի ընթացքի և աշնանացանին նախապատրաստվելու աշխատանքները, նշվեց, որ արդեն հնձվել է 5508 հա աշնանացան, որից ստացվել է ընդամենը 6355 տ հացահատիկ, կամ մեկ հա-ից 11,5 ց, որը շատ էր ցածր: Սակայն դրա փոխարեն կոլտնտեսություններում աճեցվել էր առատ բանջարեղեն, որը, սակայն, Ստեփանակերտ փոխադրելը հանդիպել էր մեծ դժվարության ամենից առաջ փոխադրամիջոցների բացակայության պատճառով: 22816 հա աշնանացան կատարելու համար անհրաժեշտ էր 5274 տ բարձր որակի սերմացու, որի կեսից ավելին չկար, պետք է ներմուծվեր Հայաստանից[7]:

Պատերազմական գործողությունների հետևանքով շարքից դուրս էին եկել գրեթե բոլոր ճանապարհները: Դեռևս 1992թ. մարտի 3-ին հիմնադրված Համահայկական հիմնադրամի նախապատրաստական աշխատանքներից հետո՝ 1993-ի աշնանը, սկսվել էր Գորիս-Ստեփանակերտ տանող ճանապարհի կառուցումը, որը չափազանց կարևոր էր և ուներ մարտավարական մեծ նշանակություն:

Հարկավոր էր նաև կարգավորել դրամաշրջանառությունը: ԼՂՀ ՊՊԿ 1993թ. նոյեմբերի 19-ի որոշմամբ հանրապետության տարածքում 1993թ. նոյեմբերի 22-ից դադարեցվեց 1991-1992թթ. նմուշի ԽՍՀՄ պետական բանկի և Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի 1000, 5000 և 10 000 ռուբլիանոց դրամանիշերի շրջանառությունը: ԼՂՀ ՊՊԿ-ն խնդրել էր ՀՀ կենտրոնական բանկին՝ օժանդակություն ցուցաբերել ԼՂՀ-ում դրամաշրջանառություն կազմակերպելու գործում[8]:

Խիստ խախտված էր Ստեփանակերտի և շրջանների միջև համամասնությունը: 1993թ. նոյեմբերի 10-ին Հադրութում տեղի ունեցած ԼՂՀ նախարարների խորհրդի արտագնա նիստը, քննարկելով Ստեփանակերտ-Հադրութ հեռախոսակապի վերականգնման, ավտոճանապարհային հավաքակայանի ստեղծման, հեռուստահաղորդումների հեռարձակման դժվարությունների հաղթահարման և այլ հարցեր, անհրաժեշտ համարեց վերա-

[7] *Նույն տեղում, 19.08.1993:*

[8] *«Հայաստանի Հանրապետություն», 23.11.1993:*

կանգնել էլեկտրականություն մատակարարող գծերը, շրջկենտրոնը լեռնային գյուղերի հետ կապելու համար անցկացնել հեռախոսագծեր, վերականգնել ավերված գյուղերը, արագացնել աշնանացանի աշխատանքները և այլն[9]: Համանման արտագնա նիստեր տեղի էին ունենում նաև մյուս շրջկենտրոններում և ընդունում տվյալ շրջաններին վերաբերող կարևոր որոշումներ:

Այդ շրջանում նույնիսկ կազմվեց հանրապետության հետագա զարգացման ծրագիր: ԼՂՀ ՊՊԿ նախաձեռնությամբ հանրապետության նախարարների խորհուրդը, ներգրավելով տեղական կարող ուժերին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ծագումով ղարաբաղցի մի խումբ անվանի գիտնականների, ձեռնամուխ եղավ 1994-1996թթ. ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման մինչև 2005 թվականի հեռանկարային ծրագրի ստեղծմանը:

Ծրագրի ստեղծման հանձնաժողովի նախագահ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ հետագայում ՀԳԱԱ թղթակից անդամ ընտրված Յուրի Սուվարյանը խնդիրը կատարեց ամենայն պատասխանատվությամբ:

Հանրապետության համար կենսական նշանակություն ուներ պատերազմական գործողությունների հետևանքով ավերված բնակավայրերի և մշակույթի օջախների վերականգնման, գաղթված բնակչությանը վերադարձնելու, բնապահպանության, մանավանդ անտառների անխնա հատումը կանխելու և այլ հարցերի դրական լուծումը: ՀՀ կառավարությունը 455 մլն ռուբլի տրամադրեց ԼՂՀ կառավարությանը ավերված գյուղերը վերականգնելու համար: Պետք է վերականգնվեր 13 հազար ավերված բնակարան[10]: Արցախի գյուղերի վերականգնմանն ակտիվորեն մասնակցում էին Հայաստանի մի շարք կազմակերպություններ:

Ընդհանրապես, առաջընթաց էր նկատվում հանրապետության տնտեսության մեջ: 1993թ. ապրանքային արտադրանքի ծավալը նախորդ տարվա համեմատությամբ աճել էր 1,4 տոկոսով: Իրացվել էր 1 միլիարդ 330 միլիոն 579 հազար ռուբլու արտադրանք: Աշխատանքի արտադրողականությունը աճել էր 30,1 տոկոսով: Նախորդ տարվա համեմատությամբ՝ 1994թ. հունվարի 1-ի տվյալներով՝ 18,4 տոկոսով կամ 5114 գլխով ավելացել էր խոշոր եղջերավոր, 64,4 տոկոսով մանր եղջերավոր անասուն-

[9] *Նույն տեղում, 11.11.1993:*

[10] *Նույն տեղում, 23.10.1993:*

ների գլխաքանակը: Շինարարները կառուցել և շահագործման են հանձնել 1,8 հազար քառ. մ բնակելի տարածքով 25 միահարկ տներ, որոնք տրամադրվել են անօթևան մնացած քաղաքացիներին[11]:

1994թ. հունվարի 10-ին «Ճշմարտության պահ» հաղորդման ժամանակ Անդրեյ Կարաուլովի այն հարցին, թե «Ինչի՞ հաշվին է գոյատևում Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը», ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանը պատասխանել է. «Աշխատում է ողջ տնտեսությունը: Բնականաբար, հզորությունը նախկինը չէ, համարյա բոլոր տղամարդիկ բանակում են: Գյուղմթերքները չենք ներմուծում, բախումից առաջ էլ Ղարաբաղից հիմնականում արտահանվում էր ավելի, քան ներմուծվում էր»[12]:

1994թ. փետրվարի 20-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը և ԼՂՀ ՊՊԿ-ն, դիմելով հանրապետության բնակչությանը, նշել են, որ պատերազմն իր ողջ ծանրությամբ անդրադառնում է հանրապետության տնտեսության, մարդկանց կենսամակարդակի վրա, ծնում հակահասարակական անցանկալի երևույթներ, որոնց հաղթահարման միակ գրավականը հանրապետության բնակչության համախմբվածությունն է, վերջնական հաղթանակի համար հասարակական բոլոր ուժերի համագործակցության գիտակցումը: Կոչ անելով բնակչությանը՝ հիշեցնում էին, որ պատերազմի օրենքներն անողոք են, որոնց պարտադրված պետք է ենթարկվենք բոլորս, գիտակցենք, որ առանց զրկանքների և զոհերի հաղթանակ չեն կռում[13]:

ԼՂՀ-ում շարունակվում էր աշխատանքներ տարվել հանրապետությունում էլեկտրիֆիկացումը վերականգնելու, ջրամատակարարումը բարելավելու, ավերված գյուղերը վերականգնելու, լրատվական բոլոր միջոցները կյանքի կոչելու և այլնի ուղղությամբ: Առաջին հերթին վերականգնման և վերակառուցման կարիք ունեին 11760 տուն ու բնակարան:

[11] «Արցախ», 08.02.1994:
[12] «Երկիր», 12.01.1994:
[13] «Արցախ», 24.04.1994:

* * *

1994թ. մայիսին զինադադար հաստատվելուց հետո կարևորագույն խնդիրներից էր հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հարցը: Մարտական գործողությունների ողջ ընթացքում թուրք-ազերիների կողմից ԼՂՀ տնտեսությանը հասցվել էր 2,5 մլրդ ամերիկյան դոլարի վնաս: Միայն այդ վերջին տարիներին հակառակորդի կողմից պայթեցվել և ոչնչացվել են 167 եկեղեցի, 8 վանքային համալիր, 123 պատմական գերեզմանոց, 47 բնակավայր, ջարդվել և շինանյութի են վերածվել գեղարվեստական բարձր արժեք ունեցող 2500 խաչքար և ազգագրական վիմագիր, ավելի քան 10 հազար տապանաքար[14]: Առանձնապես մեծ վնաս էր կրել ժողովրդական տնտեսությունը: Միայն 1990թ. ազերի զինյալները հրկիզել են 2104 հա հացահատիկի դաշտ, իսկ 1992թ. ագրեսիայի հետևանքով հացահատիկի բերքը չի հավաքվել 15 հազար հեկտարից: Դաշտերում մնացել է նաև 3000 հա խաղողի և 200 հա պտղի բերքը[15]: Հանրապետության 11 հազար հա այգիներից մնացել էին 1300-ը: Թշնամին ոչնչացրել է Հադրութի և Ճարտարի շուրջ 3000 հա խաղողի առասպելական բերքի այգիները[16]: ԼՂՀ վարչապետ Լեոնարդ Պետրոսյանի բերած տվյալներով պատերազմի տարիներին ավերվել են գրեթե 8000 արդյունաբերական, գյուղատնտեսական, սոցիալական օբյեկտներ, շուրջ 7000 բնակելի շինություն, 172 կրթօջախ, 47 բուժհիմնարկ[17]: ԼՂՀ տարածքի ավելի քան 15 տոկոսը մնում է Ադրբեջանի տիրապետության տակ[18]:

Ադրբեջանը աշխարհով մեկ ոռնոց է բարձրացրել, թե ադրբեջանական հանրապետության 86,6 հազար քառ. կմ ընդհանուր տարածքի 20 տոկոսը, այսինքն՝ 8,78 հազար քառ. կմ-ը, զավթվել է Հայաստանի կողմից: Մինչդեռ ԼՂՀ բանակի հսկողության տակ գտնվում է հարևան հանրապետության ընդհանուր մակերեսի

[14] «Հայաստանի Հանրապետություն», 28.04.1994:
[15] «Լրաբեր», 11.06.1994:
[16] «Հայաստանի Հանրապետություն», 28.05.1994:
[17] «Արցախ», 27.06.1995:
[18] «Հայաստանի Հանրապետություն», 17.04.1995: Այդ տոկոսը ներառում է Մարտունու և Մարտակերտի շրջաններից 327 քառ. կմ, Շահումյանի շրջանը և Գետաշենը՝ 701 քառ. կմ («Առավոտ», 15.09.2005):

մոտ 10 տոկոսը: Անշուշտ, ազատագրված տարածքները ներկայացվում են ուռճացված: Բերենք վիճակագրական տվյալներ.

Շրջաններ	Տարածք (քառ. կմ)	Բնակչություն
Լաչին	1936	59500
Քելբաջար	1835	50600
Կուբաթլու	802	30300
Զեբրայիլ	1050	51600
Զանգելան	702	33900
Աղդամ	1094	158000
Ֆիզուլի	1386	100000
Ընդամենը	8780	350000

Առաջին հինգ շրջանի տարածքը լրիվ գտնվում է Արցախի ուժերի հսկողության տակ, որը կազմում է 6330 քառ. կմ: Ազերիների վկայած 8780 քառ. կմ տարածքը ճիշտ չէ, որովհետև ԼՂՀ բանակի վերահսկողության տակ գտնվում է այդ յոթ շրջանների ընդհանուր տարածքից 7059 քառ. կմ, որը կազմում է նախկին ադրբեջանական ԽՍՀ տարածքի 8 տոկոսը: Աղյուսակից հստակ երևում է, որ հնարավոր է մինչև 300–315 հազար փախստական, այլ ոչ թե մեկ միլիոն, ինչպես աղաղակում են Ադրբեջանում[19]:

Արցախի տնտեսության վերականգնումը, ամրապնդումը և հետագա զարգացումը ոչ միայն կբարձրացնեին երկրամասի պաշտպանունակությունը, այլև հնարավորինս կապահովեին հայրենի հողը լքած բնակիչների վերադարձը և ամբողջ տարածքի բնակեցումը: Դրա համար պետք էր ճշգրտորեն գնահատել երկրամասի աշխատանքային, հանքահումքային, ուժանյութային, ֆինանսական, մասնագիտական, ինչպես նաև մյուս պաշարները և սկսել մշակել դրանց արդյունավետ հատկացման գործակարգեր: Հենց դրա հիման վրա պետք է որոշվեին տնտեսական զարգացման գերակայություններն ու կողմնորոշումները: Ամենից առաջ պետք է կանխվեր բնակչության արտահոսքը: Ակնհայտ է, որ 18-րդ դարի կեսերին Արցախում բնակվում էր 100 հազար ընտանիք՝ 500 հազար բնակչությամբ: Լեռնային Ղարաբաղի

[19] *«Հայրենյաց պաշտպան», N24, 2003, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. Կարգավորման խնդիրներ: Խորհրդարանական լսումներ 29-30 մարտի, Երևան, 2006, էջ 104:*

բնակչության թիվը 1921թ. իջել էր 131,5 հազարի, որի 94,4 տոկոսը հայեր էին: 1979-ին այն հասնում էր 162 հազարի, որի 75 տոկոսն էին հայեր: Բնակչության դեմոգրաֆիկ կառուցվածքում հայերի տեսակարար կշիռը էապես փոխվել էր և 1990-ին հասել 195,2 հազարի, որի 98 տոկոսը հայեր էին: Հայերի թվի կտրուկ աճը պայմանավորված էր Ադրբեջանի տարբեր տեղերից եկած բռնագաղթվածներով: Սակայն 1990-1992թթ. պատերազմական իրադարձությունների պատճառով հանրապետության բնակչության թիվը նվազել էր և հասել 121 հազարի: Չնայած դանդաղ, սակայն հետագայում նկատվում էր բնակչության թվի աճ: Արդեն 1996-ին այն հասել էր 131,4 հազարի, որից քաղաքային բնակչությունը կազմել է 55,6 տոկոս[20]: Արցախի բնակչության աճի միտումը նկատվում էր նաև հետագայում: Ըստ որում 2001թ. հունվարի 1-ի դրությամբ այն հասել էր 141,5 հազարի, իսկ 2003թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 145 հազարի[21]: «ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին» ԼՂՀ օրենքի հիման վրա ներկայումս հանրապետությունը բաժանված է 7 շրջանի և շրջանի կարգավիճակ ունեցող Ստեփանակերտ քաղաքի: Հանրապետությունում կան 10 քաղաք և 290 գյուղ, որոնցից 13-ը ներառված են քաղաքային համայնքների մեջ, իսկ մնացածը՝ 267 գյուղական համայնքներում[22]: Նախատեսված է 2010 թվականին հանրապետության բնակչության թիվը հասցնել 250-300 հազարի: Իսկ դրա համար անհրաժեշտ է ստեղծել նյութական, բարոյահոգեբանական և կազմակերպական լուրջ նախադրյալներ:

1992թ. օգոստոսին երբ ստեղծվեց ՊՊԿ-ն, այն կարողացավ մոբիլիզացնել ԼՂՀ ամբողջ ռեսուրսները և ապահովել հաղթանակը: Արդեն 1994-ի վերջին մշակվել էին հանրապետության տնտեսական բարեփոխումների հիմնադրույթները, որոնք սկսեցին իրագործվել 1995 թվականի սկզբից: Անհրաժեշտ էր շտապել և օգտվել զինադադարից ու առաջ մղել տնտեսությունը, որովհետև նրա հետագա հզորացումից էին կախված հանրապետու-

[20] *«Ազդակ», 20 փետրվարի, 1998: Բացառիկ, էջ 107-108:*

[21] *«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանները թվերով», Ստեփանակերտ, 2003, էջ 11: Յավոք հետագայում այդ թիվը նվազել է: 2005թ. հոկտեմբերի 18-27-ին անցկացված մարդահամարի նախնական տվյալներով՝ ԼՂՀ բնակչության թվաքանակը կազմել է 137 հազար 443 մարդ («Առավոտ», 28.01.2006):*

[22] *Նույն տեղում, էջ 3:*

թյան պաշտպանունակության բարձրացումը և բանակի հզորացումը:

Խորհրդային իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղի արդյունաբերությունը ուներ խիստ միակողմանի և սահմանափակ բնույթ: Ադրբեջանին ձեռնտու էր Ղարաբաղի արդյունաբերությունն այն մակարդակի «զարգացնել», որպեսզի նպաստեր բնակչության հարաբերական փոփոխությանը՝ հօգուտ ադրբեջանցիների: Պրոֆեսոր Յուրի Սուվարյանը, 1994թ. նոյեմբերին հանդես գալով և հանգամանորեն վերլուծելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական վիճակը, ապացուցում էր, որ Հայաստանի ու Արցախի տնտեսությունների միասնականացման անհրաժեշտությունը բխում է Արցախի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու, նրա ռեսուրսների համալիր և արդյունավետ օգտագործման, արտադրական ուժերի ռացիոնալ տեղաբաշխման ու զարգացման, խոշոր տնտեսական և սոցիալական հիմնահարցերի համատեղ լուծման, ԼՂՀ պաշտպանության և, լայն առումով, հայկական պետականության ամրապնդման ու ազգային անվտանգության ապահովման խնդիրների կենսագործման շահերից:

Արցախն ունի օգտավետ բնական հարստություններ: Եվ պատահական չէր, որ խորհրդային իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի համար հանդիսանում էր որպես հումքային կցորդ, որը ստացել էր գլխավորապես ագրարային ուղղություն: Անբավարար էր արտադրական ենթակառուցվածքների և սոցիալական ոլորտի զարգացման մակարդակը: Ըստ Յու. Սուվարյանի՝ Արցախ-Հայաստանի տնտեսական միասնացումը պետք է նպաստի Արցախում կենսագործելու հետևյալ խնդիրները.

«– Ապահովել ԼՂՀ տնտեսական համակարգի անխափան գործունեությունը, համախմբել բոլոր ռեսուրսներն ու դրանք ծառայեցնել բնակչության նորմալ կենսագործունեությանը և ազգային-ազատագրական պայքարի հաղթական ավարտին,

– հետևողականորեն շարունակել հանրապետության՝ պատերազմից տուժած տնտեսության և սոցիալական ոլորտի գործունեության վերականգնմանը,

– ելնելով հանրապետության հանքահումքային, հիդրոէներգետիկ, ագրոարդյունաբերական համալիրի զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներից՝ իրականացնել, իսկ 21-րդ դարի սկզբից ակտիվացնել հանրապետության համար անհրաժեշտ նոր արտադրությունների ստեղծման քաղաքականությունը: Մասնավորապես, զարգացնել հիդրոէներգետիկան՝ նոր փոքր և միջին հիդրոէլեկտրակայանների կառուցմամբ, իրականացնել գունավոր մետաղների հանքավայրերի յուրացման, ճշգրիտ մեքենաշինության, շինարարական նյութերի, սննդի արդյունաբերության նոր ձեռնարկությունների ստեղծման աշխատանքներ,

– ապահովել ագրոարդյունաբերական համալիրի ներծյուղային կառուցվածքի վերակառուցում և զարգացման այնպիսի մակարդակ, որն առավելագույն չափով բավարարի հանրապետության պահանջը պարենի հիմնական տեսակների և գյուղատնտեսական հումքի նկատմամբ,

– առանձնակի ուշադրություն հատկացնել ենթակառուցվածքային ճյուղերի զարգացմանը, քանի որ դրանք տասնամյակներ շարունակ միտումնավոր չեն զարգացվել, ունեն խոշոր ռազմավարական նշանակություն, և այսօր դրանց անբավարար մակարդակը խանգարում է տնտեսության համալիր աճին»[23]:

Քանի որ հանրապետությունը գտնվում է պատերազմական վիճակում, հետևապես ԼՂՀ քաղաքական կարգավիճակի խնդրի լուծումը և իրականացվող տնտեսական քաղաքականությունը, բնական է, պետք է համապատասխանեն արտակարգ դրության պահանջներին: Ակներև է, որ երկարատև զինադադարը դեռևս բավարար չէ տնտեսական համակարգի արմատական փոփոխությունների, հատկապես լիբերալացման համար: Այսպիսի պայմաններում շուկայական հարաբերությունները ևս պետք է ունենա առանձնահատկություններ:

ԼՂՀ-ում բացի կառավարության ձեռնարկումներից էական քայլեր էր կատարում նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամը՝ «Արցախ» ծրագրի շրջանակներում: 1995թ. հունվարի սկզբի տվյալներով՝ հիմնադրամի միջոցներով Ստեփանակերտում կառուցվել է ԼՂՀ էլեկտրացանցի կենտրոնական ենթակայան և երեք ջրամատակարարման օբյեկտներ՝ Խոջալու-Ասկերան, Մուշկապատ-Մարտունի, Պարզագետ-Հադրութ: Ընդհանուր առմամբ 1994թ. հիմնադրամը Արցախում կատարել է ավելի քան 4 մլն ամերիկյան դոլարի աշխատանք[24]:

---

[23] *«Երկիր», 18.11.1994:*

[24] *«ԼՂ Հանրապետություն», 09.01.1995:*

Արցախում պետք է հատուկ ուշադրություն դարձնել սոցիալական հարցերին: 1995թ. հունիսի 19-ին ԼՂՀ կառավարությունը որոշում ընդունեց հանրապետությունում աշխատանքի վարձատրության նվազագույն չափի, բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձի, կենսաթոշակների, նպաստների և կրթաթոշակների չափերի բարձրացման մասին: Հունիսի 1-ից ԼՂՀ-ում աշխատավարձի նվազագույն չափը սահմանվեց 540 դրամ: Բոլոր կենսաթոշակները ավելացվեցին 430 դրամով[25]: Արագորեն վերականգնվում էին ավերված տներն ու բնակավայրերը:

Երկրամասի տնտեսության զարգացման հիմնական խթանը տնտեսական բարեփոխումներն էին: Տնտեսություններին հնարավորություն էր տրվում զբաղվել նրանով, ինչը շահութաբեր էր: Արցախում շահութաբեր է հացահատիկային կուլտուրաների մշակումը: Պլանավորվել էր հացահատիկի արտադրությունը հասցնել 50 հազար տոննայի: Ենթադրվում էր 1996թ. տալ 2450,0 մլն դրամի արտադրանք, ըստ որում նախատեսվում էր գյուղատնտեսական մթերքների արտադրության աճը նախորդ տարվա համեմատությամբ ապահովել 87,2 տոկոսով: Նախատեսվում էր արտոնություններ սահմանել Արցախում վերաբնակվողների համար: 1996թ. ապրիլի 30-ին ԼՂՀ վարչապետ Լ. Պետրոսյանը ստորագրեց որոշում, որի համաձայն՝ ԼՂՀ տարածքում վերաբնակվող քաղաքացիների ու նրանց ընտանիքների համար սահմանվում են արտոնություններ, ըստ որում ընտանիքի գլխավորին ցույց էր տրվում միանվագ օգնություն, Հայաստանից տեղափոխվածների ճանապարհածախսը վճարվում էր, նրանց ապահովում են բնակարանով, հողամասով, երկու տարի ժամկետով ազատվում են բնակարանային կոմունալ ծառայությունների վարձից, պահպանվում է վերաբնակիչների անընդհատ աշխատանքային ստաժը և այլն[26]:

Այդ ամենի հետևանքով ԼՂՀ-ում կյանքը աշխուժանում էր: Երկու տարում Ստեփանակերտի քաղաքային բյուջեն աճել էր մոտ 5,5 անգամ: Քաղաքում գործում էին 11 հանրակրթական և մաթեմատիկական թեքումով դպրոցներ, երաժշտական, արվեստի, գյուղատնտեսական տեխնիկում, բուժուսումնարան, պետհամալսարան, հասարակական և մանկական հիվանդանոցներ,

[25] *«Հայաստանի Հանրապետություն», 21.06.1995:*
[26] *«ԼՂ Հանրապետություն», 11.06.1996:*

ուռուցքաբանական դիսպանսեր, պոլիկլինիկաներ, ախտորոշման կենտրոն, զինվորական հոսպիտալ, շտապօգնության կայան, հակահամաճարակային կենտրոն և այլն: Հանրապետությունում գործում էր 148 հանրակրթական դպրոց, որոնցում սովորում էին 22044 աշակերտներ և դասավանդում 2025 ուսուցիչներ: Արցախի պետական համալսարանում սովորողների թիվը հասնում էր 2025-ի[27]:

Հանրապետությունում տարեցտարի մեծանում էր արտադրության ծավալը: 1996թ. ԼՂՀ-ում թողարկվել է 1 մլրդ 483 մլն դրամի ապրանքային արտադրանք: Հանրապետության միջին ցուցանիշը գերազանցել էր յոթ ձեռնարկություն՝ Հադրութի անտառտնտեսությունը, Ստեփանակերտի կոշիկի ֆաբրիկան, արտադրաշինարարական N 2, մսի ու շինանյութերի կոմբինատները, Շուշիի էլեկտրատեխնիկական գործարանը և «Արցախանտառ» պետական տնտեսության ձեռնարկությունը: Ժողսպառման ապրանքների արտադրությունը կազմել է 624,5 մլն դրամ: 1996թ. հանրապետությունում կատարվել է 6 մլրդ 161 մլն դրամի մանրածախ ապրանքաշրջանառություն[28]:

Հանրապետությունում տնտեսական հաջողությունները ակներև էին 1997 թվականին: Նախորդ տարվա համեմատությամբ համախառն ներքին արտադրանքն ավելացել էր 7,2, էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 40, բնակչության դրամական եկամուտները՝ 4,1, իրական աշխատավարձը՝ 25,5 տոկոսով: Նախորդ տարվա համեմատությամբ կարտոֆիլի արտադրությունն աճել էր 3,2, բանջարեղենինը՝ 2,2, բոստան-պարենայինը՝ 3,3 անգամ: Հանրապետությունում շարունակվում էր թափով առաջ գնալ «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործունեությունը: 1996 թվականին հիմնադրամը ԼՂՀ-ում կատարել է 5.499 ամերիկյան դոլարի աշխատանք՝ կառուցելով ավտոճանապարհներ, ջրատարներ, կամուրջներ, դպրոցական շենքեր, հիվանդանոց, օգնություն է ցույց տվել ազատամարտիկների ընտանիքներին, հաշմանդամ ու ծնողազուրկ երեխաներին, հանրապետություն է ներկրել վառելանյութ, սննդամթերք և այլն[29]: Կապիտալ ներդրումների և վերականգնողական աշխատանք-

[27] *Նույն տեղում, 01.01.1997:*
[28] *«Հայաստանի Հանրապետություն», 17.01.1997:*
[29] *«ԼՂ Հանրապետություն», 01.01.1997:*

ների փաստացի ծավալը 1996թ. կազմել է 2929,6 մլն դրամ, որը 1995 թվականի համեմատությամբ ավելացել էր 46,4 տոկոսով[30]:

Հիմա տեսնենք՝ ինչպիսին էր ընդհանուր վիճակը հանրապետության շրջաններում:

Մարտակերտի շրջան: Շրջանը ուներ 58 բնակավայր և 40 հազար բնակիչ, որից 8 հազար ազերիներ տեղավորված էին 9 գյուղերում: Պատերազմի տարիներին շրջանի տարածքի և բնակավայրերի մեծամասնությունը բռնագրավվել էր հակառակորդի կողմից: Բնակչության զգալի մասը ժամանակավոր հեռացել էին իրենց բնակավայրերից, որոնցից 13 հազարը վերադարձել էին 1994թ. մայիսի դրությամբ: Հրազդանի, Սիսիանի և Չարենցավանի շինվարչությունները վերականգնողական աշխատանքներ էին կատարում Կուսապատում, Ջանյաթաղում և Չափարում: Նույն թվականի նոյեմբերի տվյալներով՝ նախկինում 10-11 հազար բնակիչ ունեցող Մարտակերտ քաղաքում, որի բնակֆոնդի 70 տոկոսը վնասվել էր, վերաբնակվել էր 3000 մարդ[31]: Դեռևս չազատագրված են մնում Չայլուն, Լենինավանը, Մարաղան, Կարմիրավանը և Ջրաբերդը, որոնց վերադարձած բնակիչները վերաբնակվել են Մարտակերտում: Արդեն 1994թ. աշնանը շրջանի բնակչության թիվը հասել էր 19 հազարի: Թուրք-ազերիները գրաված գյուղերում և Մարտակերտ քաղաքում եղած արդյունաբերական ձեռնարկությունների բոլոր հաստոցները քանդել և տարել էին: Սակայն կանխվել է անտառների անխնա հատումը[32]:

Թե՛ հանրապետության և թե՛ շրջանային ղեկավարության ուշադրության կենտրոնում Սարսանգի հիդրոէլեկտրակայանի վերականգնումն էր: Այն արագորեն վերականգնվեց Հայաստանի մասնագետների օգնությամբ: Արդեն 1997թ. հունվարի 1-ի դրությամբ նախկինում գրավված 40 բնակավայրերից 36-ում վերականգնվել էին էլեկտրականությունը, նոր ենթակայաններ էին կառուցվել Մարտակերտում, Մաղավուզում, Ջագլիկում, Վերին Հոռաթաղում և Առաջածորում: Գործում էր Վանքի տեղական արդյունաբերական կոմբինատը, որն արտադրում էր մանրահատակ, մահճակալներ և այլ արտադրատեսակներ: Վերականգնվել էր Գետավանի սղոցարանը, գործում էր Ստեփանակերտի կոնդենսատորների (փոխարկիչ) գործարանի Հաթերքի մասնաճյուղը, աշխատում էր Առաջածորի շինվերանորոգման տնտեսաշվարկային տեղամասը: Թափով վերականգնվում էին սոցիալական օբյեկտներն ու մշակույթի օջախները: Վերականգնվել էին Չլդրանի շրջանային կենտրոնական հիվանդանոցը և Հարությունագոմերի միջնակարգ դպրոցի շենքը: Տեղամասային հիվանդանոցներ բացվեցին Վաղուհասում, Չլդրանում, Խնկաշենում, Քոլատակում և այլ գյուղերում: Մանկապարտեզներ էին բացվել Վանքում, Հաթերքում և Առաջածորում: Արդեն 1996 թվականին շրջանում գործում էին 16 բժշկական ամբուլատորիա, 12 բուժմանկաբարձական կետեր, հակահամաճարակային կայան, դեղատներ, շրջանային հիվանդանոց՝ 6 բաժանմունքներով: Մարտակերտի 200-համարանոց ավտոմատ հեռախոսակայանը փոխարինվել էր 1000-համարանոցով: 26 բնակավայրերում գործում էր հեռախոսային կապ: Աշակերտների թիվը 1995/96 ուսումնական տարում 1993/94 ուսումնական տարվա համեմատությամբ աճել էր 1,6 անգամ և հասել 2822-ի: 1996թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ շրջանում գործում էին 25 միջնակարգ, 8 ութամյա և 4 տարրական դպրոցներ, 30 գրադարան, 19 ժողստեղծագործական տներ և 1 երաժշտական դպրոց[39]:

Որոշ տեղաշարժեր նկատվում էին նաև գյուղատնտեսության բնագավառում: Շրջանում ձեռնամուխ էին եղել ծխախոտի եկամտաբեր ճյուղի վերականգնմանը: 1995թ. 1993թ. համեմատությամբ 45,17% ավելացել էր խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, մսի արտադրությունը՝ 5,4, կաթինը՝ 3,1 անգամ և այլն:

Մարտունու շրջան: Թշնամու ռմբակոծությունից Մարտունի քաղաքում ավերվել էին մոտ 500 շինություններ, որոնցից 50-ը նորոգվել էին մինչև 1994թ. նոյեմբերը: Աշխատանքներ էին տարվում վերականգնելու գինու գործարանները: Գործում էին գրեթե բոլոր առևտրական կետերը, մսուր-մանկապարտեզները, վերականգնվում էին շրջկենտրոնի պանրի և ասֆալտի գործարանները: Մարտունի քաղաքի համար կարևոր խնդիր էր խմելու ջրի հարցը: Ջրատար գիծ էր կառուցվում Մուշկապատ գյուղից մինչև Մարտունի՝ 11 կմ երկարությամբ: Ավարտելու վրա էր շրջկենտրոնի թռչնաբուծական ֆաբրիկայի լրիվ վերականգնման աշխատանքները: Գործում էին մշակույթի բոլոր օջախները, աշխա-

---

[30] *Նույն տեղում, 25.01.1997:*
[31] *«Ազատամարտ», N17, 1994:*
[32] *Նույն տեղում, N43, 1994:*

[39] *«ԼՂ Հանրապետություն», 01.01.1997:*

տանքներ էին տարվում ճանապարհները վերականգնելու և դաշտերը ականազերծելու համար:

Հադրութի շրջան: Պատերազմից խիստ տուժել էր շրջանի տնտեսությունը: Արագորեն վերականգնվում էր անտառտնտեսությունը: Ավարտվել էր Կարմիր շուկա-Հադրութ 35-կիլոմետրանոց նոր էլեկտրական գծի կառուցումը: Կառուցվում էր Հադրութ-Բանաձոր-Առաքել բարձր լարման գիծը: Շրջանում չկար սերմացու: Այն լիովին ձեռք էր բերվում Հայաստանից: 1993-ին շրջանում ընդամենը մնացել էր 200 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Արդեն 1994-ի ամռան սկզբին անասունների գլխաքանակը հասել էր 1000-ի: Շրջկենտրոնի և գյուղերի ավերված բնակարանները վերականգնում էին Աշտարակի և Աբովյանի շինարարական տրեստները: Դպրոցական նոր շենք էր կառուցվում Բանաձորում: «Արարատ» տրեստը վերանորոգման աշխատանքներ էր կատարում Բանաձոր և Էդիլլու գյուղերում, իսկ «Ֆրանս-Ղարաբաղ» կազմակերպությունը վերականգնում էր Առաքել գյուղը: Վերականգնվել էին մի շարք դպրոցներ:

Ասկերանի շրջան: Շրջանի մի շարք գյուղեր գրեթե լրիվ ավերվել էին: Ծավալուն աշխատանքներ էին տարվում դրանք, ինչպես և շրջանի մյուս գյուղերի ավերված տները վերականգնելու համար: Վերականգնվում էր Ասկերանի խմիչքների արտադրության գործարանը, մյուս արդյունաբերական ձեռնարկությունները, կառուցվում էին զինվորական համալիրներ և այլն: Գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ մոտեցել էին նախապատերազմյան մակարդակին: 1996-ին գործում էին շրջանի բոլոր կրթական և սոցիալական օջախները:

Շուշիի շրջան: Շուշի քաղաքն ուներ կոնդենսատորների, ռադիոյի գործարաններ, արտադրական ձեռնարկություն, կենցաղային սպասարկման կոմբինատ, շինմոնտաժային վարչություն և այլն: Դրանք բոլորն էլ վերականգնվել և գործում էին: Վերականգնվել էր շրջանի մեջ մտնող Քարին տակի և Բերդաձորի ենթաշրջանի գյուղերի անասնագլխաքանակը: Վերականգնվել էին նաև մի շարք բնակելի շենքեր ու Ղազանչեցոց Սուրբ Աստվածածին եկեղեցին: Քաղաքի վերականգնման աշխատանքներին մասնակցում էին Ջերմուկշինի և Սիսիանի շինբրիգադները: Արդեն գործում էր 100-տեղանոց հիվանդանոցը, առևտրի 20 ձեռնարկություն, Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը, Արամ Մանուկյանի անվան վարժարանը, ակումբագրադարանային տեխնիկումը, արհեստագիտական ուսումնարանը, երաժշտական դպրոցը, պետական տիկնիկային թատրոնը, 600-տեղանոց կինոթատրոնը, տպագրվում էր «Շուշի» թերթը և այլն:

* * *

Սովորաբար պատերազմը ենթադրում է ոչ միայն ունենալ ուժեղ քաղաքական իշխանություն, այլև տնտեսական քաղաքականության կենտրոնացում: Ցանկանային թե չցանկանային, ենթադրվում էին սեփականատիրության խորհրդային ձևերի փոփոխում և շուկայական հարաբերությունների զարգացում: Սակայն ծայրահեղ արմատական, ընկերային խիստ բևեռացման տանող բարեփոխումները բացարձակապես անընդունելի էին արցախյան իրականության համար: Նախանշանները համոզում էին, որ ապակենտրոնացումը և սեփականաշնորհումը կարող էին հանգեցնել ազգային հարստությունների փոշիացմանը: Արցախում ամեն ինչ կենտրոնացված ձևով պետք է ծառայեցվեր ռազմական կարիքներին: Արցախցիները տեսել էին, թե Հայաստանում ինչպես էր իրականացվել սեփականաշնորհումը, որը երկիրը կանգնեցրել էր բացարձակ կործանման եզրին: ԼՂՀ-ում հանգեցին նրան, որ երկրամասում սեփականաշնորհումը հնարավոր կլինի իրագործել միայն պատերազմից հետո՝ մի քանի տարիների ընթացքում, դանդաղ, աստիճանաբար, այլ ոչ թե հախուռն, ալան-թալանի պայմաններում:

Լուրջ քննարկումներից հետո նպատակահարմար գտնվեց Արցախում սեփականաշնորհումը սկսել մանր արտադրություններից, փոքր ձեռնարկություններից՝ զերծ մնալով խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների ապապետականացումից՝ դրա համար թողնելով համապատասխան անցումային շրջան: Արցախում գտնում էին, որ պետք չէ կրկնել կամ պատճենահանել Հայաստանի տնտեսության ոլորտում վերջին տարիներին կատարված քայլերը: Պարզապես, ի տարբերություն Հայաստանի, Արցախի իշխանությունների տնտեսական քաղաքականության հիմնական հատկանիշը հանդիսացավ աստիճանականությունը: Հայտնի է, որ պատերազմի տարիներին Արցախի մի շարք խոշոր ձեռնարկություններ վերակառուցվել էին և սպասարկում են պաշտպանության նախարարությանը:

ԼՂՀ-ում տնտեսության վերակառուցումը կատարվում է փուլային: Հանրապետության ղեկավարությունը նպատակահարմար գտավ խթանել և կանոնակարգել շուկայական տնտեսությունը: Այդ նպատակով նախատեսվեց 1996թ. սեփականաշնորհել ավելի քան 1400 փոքր ձեռնարկություններ: Արցախը տնտեսական ճգնաժամից կարող էր շուտ դուրս գալ, եթե այնտեղ կատարվեին օտարերկրյա ներդրումներ: Այսպիսով՝ բարեփոխումների ծրագրի հետ միաժամանակ պետք է իրագործվեր նաև մեծ ներդրումների ծրագիր ու արագացվեր վերաբնակեցման գործընթացը[34] :

Արցախի քայքայված, ավերված տնտեսությունները վերականգնվում էին Հայաստանի Հանրապետության ամենաակտիվ աջակցությամբ: Նման պայմաններում անհրաժեշտ էր արագացնել Հայաստանի և Արցախի տնտեսության միասնացման գործընթացը, որը նոր թափ կհաղորդեր Արցախի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Մասնագետների կողմից կատարվող ուսումնասիրությունները բերել էին այն համոզման, որ Արցախի տնտեսության առանձին ճյուղերի համալիր վերականգնումը և զարգացումը հնարավորություն կտան արտադրանքի մի մասը արտահանել ոչ միայն Հայաստան, այլև այլ երկրներ: Այդ արտադրատեսակներն են մետաքսը, կոշիկը, գորգեղենը, էլեկտրատեխնիկական արտադրանքը, գունավոր մետաղները, շինարարական

[34] *Նույն տեղում, 20.06.1996: Ներկա դրությամբ Արցախում ներդրումներ են կատարել 69 արտասահմանյան կազմակերպություններ, այդ թվում՝ Լիբանանից, ԱՄՆ-ից, Շվեյցարիայից, Անգլիայից, Ռուսաստանից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Կանադայից և այլ երկրներից: ԼՂՀ ազգային վիճակագրական տեղեկության համաձայն վերամշակվող և լեռնահանքային արդյունաբերության մեջ ներդրումներ են կատարել 25, գյուղատնտեսությունում՝ 10, մեծածախ և մանրածախ առևտրի մեջ՝ 11, շինարարության և հյուրանոցային բիզնեսում՝ 4-ական, այլ ոլորտներում՝ 19 արտասահմանյան ընկերություններ: Վերջին 4 տարում ԼՂՀ տնտեսության մեջ ներդրվել է շուրջ 40 մլն դոլար, որի առյուծի բաժինը՝ օտարերկրյա ներդրումներից:*

Իսկ ինչ վերաբերում է վերաբնակեցմանը, ապա միայն 2002 թ. վերաբնակեցվել է 105 ընտանիք, 2003-ին՝ 165 ընտանիք կամ 650 շունչ: Նախատեսվում էր 2004-ին վերաբնակեցնել 200 ընտանիք: ԼՂՀ-ն ունի վերաբնակեցման ծրագիր, ըստ որում՝ մինչև 2010թ. վերաբնակիչների թիվը պետք է հասցվի 68 հազարի: Ասենք նաև, որ 1994–2004 թթ. Արցախում և հարակից տարածքներում բնակեցվել է մոտ 23 հազար մարդ և վերականգնվել է 150 բնակավայր («Ազգ», 30.09.2004, 09.10.2004: «Կրթությունը և գիտությունը Արցախում», N3 – 4, 2004 թ., էջ 191-195):

բազմաթիվ նյութերը, հացահատիկը, մսամթերքը, կաթնամթերքը, ոգելից և ոչ ոգելից խմիչքները և այլն:

Արցախի ընդերքը հարուստ է մետաղական և ոչ մետաղական բազմաթիվ օգտակար հանածոներով՝ պղինձ, ոսկի, բազմամետաղներ և այլն: Վերջերս Մարտակերտի շրջանի Դրմբոնի ոսկու նախամշակման գործարանի կառուցումը և շահագործումը դրա լավագույն ապացույցն են: Այն կատարվում է Հայաստանի լեռնամետալուրգիական արդյունաբերության կողմից: Կարևոր է նաև փոքր և միջին էլեկտրակայանների, Հայաստանի ոչ նյութատար արտադրությունների մասնաճյուղերի հիմնումը, գյուղատնտեսական հումքի վերամշակման արտադրությունների զարգացումը ըստ որում նախատեսվում է արտադրությունը կազմակերպել բարձր արհեստագիտական հիմքի վրա, որպեսզի թողարկված արտադրանքը մրցունակությամբ համապատասխանի միջազգային չափանիշներին: Հնարավոր է զարգացնել մանավանդ զբոսաշրջությունը, որը մեծ օգուտներ կբերի հանրապետության տնտեսությանը:

ԼՂՀ տնտեսական բարեփոխումներ կատարելու ճանապարհին անհրաժեշտություն էին դարձել տնտեսության անկման կանխարգելումը և հետագա տնտեսական ակտիվության խթանումը: Առաջարկվեցին հանրապետությունում տնտեսական բարեփոխումների հետևյալ հիմնադրույթներն ըստ տնտեսության ոլորտների և ուղղությունների՝ կազմակերպակառուցվածքային բարեփոխումներ, գյուղատնտեսության բնագավառ, սպասարկման ոլորտ, բնակարանային տնտեսության ոլորտ, սոցիալական բնագավառ, բանկային բնագավառ, պետական ֆինանսների բնագավառ, վիճակագրություն, հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների համակարգի կազմակերպման բնագավառ[35]:

ԱՊՀ երկրներում փոփոխվում էին տնտեսական մեխանիզմները, զարգանում շուկայական հարաբերությունները: Ելնելով դրանից՝ ԼՂՀ-ում ընդունված տնտեսական բարեփոխումների ծրագրի գլխավոր նպատակն էր ձևավորել նոր տնտեսակարգ: Արցախի Հանրապետությունը բավականին ուշացել էր տնտեսության շուկայական զարգացման գործընթացից: Այդ մասին բացահայտ խոսվեց 1995թ. մարտի 11-ին Ասկերանի շրջանի Աստղաշեն (Դաշբուլաղ) գյուղում անցկացված ԼՂՀ կառավարու-

[35] *Նույն տեղում, 17.02.1995:*

թյան արտագնա նիստում: Այդ փուլում անհրաժեշտ համարվեց առկա կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների վերակառուցումը գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների՝ փայատիրական սկզբունքով հիմքում ունենալով հողը որպես պետական սեփականություն: Նաև խոսվեց այն մասին, որ պետությունն այլևս ի վիճակի չէ վարկեր տրամադրել այն տնտեսություններին, որոնք չէին կարողանում մարել նախկին պարտքերը: Այդ ժամանակ ԼՂՀ կոլտնտեսությունների պետական պարտքը կազմում էր 258 միլիոն դրամ: Պարզվում է, որ հանրապետության կոլտնտեսությունները նույնիսկ 50 տոկոսով չէին կարողանում կատարել պետական պատվերը[36]:

ԼՂՀ կառավարության նախագահության հերթական արտագնա նիստը, որը տեղի ունեցավ Մարտունի քաղաքում, հիմնականում անդրադարձավ փայատիրական հիմունքներով գյուղական կոլեկտիվ տնտեսությունների տնտեսավարող նոր սուբյեկտների ստեղծմանն առնչվող հարցերին: Թե այդ և թե ապրիլի 5-ին Ստեփանակերտում տեղի ունեցած ԼՂՀ կառավարության նախագահության նիստում նշվեց, որ ԼՂՀ կառավարությունը կազմակերպական զգալի աշխատանք է տանում տնտեսական բարեփոխումների ծրագիրը իրագործելու համար: Նաև շեշտվեց, որ պետական բյուջեի 51 տոկոսը նվիրված է սոցիալական ոլորտի խնդիրներին[37]:

1994-2000 թվականներին ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր ուղղությունները բխում էին հանրապետության առաջ կանգնած հետևյալ խնդիրներից:

Արցախում արդյունաբերության զարգացման առաջնեկները երևացել էին 19-րդ դարի կեսերին մետաքսագործության մեջ: Առաջին աշխարհամարտի նախօրյակին երկրամասում կային ավելի քան 40 մետաքսակարժական և մետաքսագործական ֆաբրիկաներ, ջրաղացաքարերի, սպիրտի և օղեթորման արտադրության մանր ձեռնարկություններ, առևտրի մեծ ցանց, հարյուրավոր արհեստանոցներ և այլն: Խորհրդային իշխանության տարիներին մարզի գրեթե բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները կենտրոնացված էին Ստեփանակերտում, մասամբ էլ Շուշիում: Դրանց թիվը հասնում էր 50-ի: Ղարաբաղյան շարժման նախօրյակին Արցախի արդյունաբերական ձեռնարկությունները ներկայացնում էին էլեկտրաուժային տնտեսությունը, շինանյութերի արտադրության ճյուղերը:

Խորհրդային Ղարաբաղում 1930-ական թվականներից մինչև 1970-ական թվականները կառուցվել էին ջրաէլեկտրակայաններ՝ Ստեփանակերտի, Մատաղիսի և Սարսանգի: Սարսանգի հիդրոկայանը շահագործման է հանձնվել 1976թ. դեկտեմբերի 24-ին 50 կվտ (ժամ էլեկտրաէներգիա) հզորությամբ: Սարսանգի էլեկտրաէներգիան օգտագործվում էր հիմնականում ադրբեջանական Միրբաշիրի, Բարդայի, Աղդամի, մասամբ էլ Մարտակերտի շրջաններում: Հիդրոկայանը շահագործման էր հանձնվել կիսատ-պռատ, նախագծից շեղումներով: Հրապարակված նյութերում տվյալներ կան, որ մոտ 80 մլն ռուբլի հատկացվել և օգտագործվել է հարևան ադրբեջանական շրջաններում սոցիալական, մշակութային և խրախճանքային բնույթի շինությունների վրա: Թուրք-ազերիները Մարտակերտի շրջանից ճողոպրելու ժամանակ շարքից հանել էին նաև Սարսանգի հէկ-ը: Հիդրոկայանի վերականգնումը ԼՂՀ-ի համար կենսական անհրաժեշտություն էր: Արցախի շինարարներին օգնության ձեռք մեկնեցին Հայէներգացանցշին, Հայէներգակարգավորում և Հայէներգոյի վարչության փորձառու կոլեկտիվները, և 1993-94թթ. կարգի բերվեց հէկ-ը, տեղադրվեց 250 հենասյուն, անցկացվեցին ավելի քան 200 կմ երկարությամբ 110 և 40-վոլտանոց գծեր և գյուղական բնակչությանն ու մայրաքաղաքին ապահովեցին էլեկտրաէներգիայով[38]: 1994թ. հոկտեմբերին շահագործման հանձնվեց նաև Կարմիր շուկա-Մարտունի 24 կմ երկարությամբ էլեկտրահաղորդման գիծը, որը կառուցվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Արցախ» ծրագրով: Արցախում եթե 1984թ. արտադրվել էր 93,2 մլն կիլովատ/ժամ էլեկտրաէներգիա, ապա 1994-ին այն կազմել է 58,7 միլիոն կիլովատ/ժամ, որը բավարարում էր ԼՂՀ էլեկտրաէներգիայի պահանջարկի հազիվ 1/3-ը: Հետագա տարիներին աստիճանաբար ավելացել է և 1999-ին կազմել է 82,8 մլն կվտ/ժ: Պահանջվող էլեկտրաէներգիայի մնացած 120 միլիոն կվտ/ժ-ը Արցախի Հանրապետությունը ստանում է Հայաստանից: Արցախում սպառվող էլեկտրաէներգիայի 7-8 տոկոսը օգտագործվում է արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտում, 30 տոկոսը՝ այլ ճյուղերում, բնակչությունը սպառում է ամբողջ էլեկտրաէներգիայի մոտ 40 տոկոսը, որը

---

[36] *Նույն տեղում, 14.03.1995:*

[37] *Նույն տեղում, 06.04.1995:*

[38] *«Ազատամարտ», N39, 1994: «ԼՂ Հանրապետություն», 19.10.1994:*

կազմում է 71,8 միլիոն կվտ/ժամ: Վերոնշյալ պլանի համաձայն նախատեսվում էր ԼՂՀ-ում կառուցել փոքր ծավալի հէկեր: Հանրապետության ջրաուժային պաշարները կազմում են 220 մեգավատ: Նպատակային օգտագործման դեպքում ԼՂՀ-ն կարող է բավականին ծավալներով էժան էլեկտրաուժ արտադրել ու դրա մի մասը արտահանել:

Արցախյան պատերազմի տարիներին հանրապետության մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ բավականին տուժել էին կամ էլ դադարել էին գործելուց: Հրադադարից հետո շատ թե քիչ հզորությամբ գործում էին 26 ձեռնարկություններ, որոնց համախառն արտադրանքի ծավալը 1996թ. կազմել է 1,4 մլրդ դրամ, իսկ 1999-ին գործող արդյունաբերական ձեռնարկությունները տվել են ավելի քան 3,65 մլրդ դրամի արտադրանք, որի գերակշիռ մասը կազմել է էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 2,08 մլրդ դրամ:

Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների շարքում կարևոր տեղ ուներ էլեկտրատեխնիկական գործարանը, որը գործում է 70-ական թվականների կեսերից: Տարիներ շարունակ այն եղել է Երևանի «Լույս» արտադրական միավորման կազմում և 80-ական թվականների վերջին տարեկան արտադրել է մեկ միլիոնից ավել լուսավորման լամպեր: Պատերազմական գործողությունների տարիներին զգալիորեն նվազել էր արտադրության աճը: Ստեփանակերտում գործում էր նաև էլեկտրատեխնիկական արդյունաբերության խտացուցիչների գործարանը, որը տարեկան թողարկում էր 500 հազար խտացուցիչ սարքեր: Այդ գործարանների արտադրական հզորության վերականգնումը նույնպես հրատապ խնդիր էր:

ԼՂՀ տարածքը հարուստ է շինարարական արտադրությունների համար անհրաժեշտ բազմաթիվ պաշարներով: Տասնամյակներ շարունակ Ադրբեջանի իշխանությունները կասեցրել են տեղական նշանակություն ունեցող այդ ճյուղի զարգացումը: Շինանյութերի արդյունաբերության խոշոր ձեռնարկություններից է Ստեփանակերտի շինանյութերի գործարանը, որի համար հումք է ծառայում Ասկերանի շրջանի Հարավ գյուղի մոտակայքում գտնվող հանքավայրից արդյունահանվող մարմարը: 1999թ. երեսպատման սալիկների արտադրությունը հասել էր 6003,0 հազար քառ. մ-ի: Մարտակերտի շրջակայքում գտնվող կրաքարի հանքավայրերից տարեկան արտահանվում է 2,5 մլն կանոնավոր ձևի շինաքար: Հանրապետության համար կարևոր նշանակու-

թյուն ունի նաև կրի արտադրությունը, որի տարեկան արտադրանքը հասնում է 500 տ-ի: Կրի համար լավագույն հումք է հանդիսանում Մարտակերտի կրաքարի հանքավայրից արդյունահանվող հումքը, որից կիր է արտադրվում Մարտակերտում և Ստեփանակերտում:

Ոչ մեծ ներդրումների դեպքում հնարավորություն կստեղծվեր վերականգնել ոչ միայն պատերազմի հետևանքով տուժած ձեռնարկությունները, այլև, հաշվի առնելով Հայաստանի այդ ճյուղի զարգացման բարձր մակարդակը, հիմնել վերջինիս հետ գործող նոր ձեռնարկություններ: Այդ տեսակետից մեծ նշանակություն կարող են ունենալ ԼՂՀ տարբեր շրջաններում մեծ քանակությամբ առկա հրակայուն կավերի, տարատեսակ քարանյութերի հանքավայրերը: Այդ ուղիով կարելի է զարգացնել կերամիկայի և հախճապակյա իրերի, գունավոր մարմարների մշակման արտադրությունները:

Նախապատերազմյան տարիներին թե՛ ներմուծվող և թե՛ տեղի անտառներից հատված փայտանյութի հիման վրա Լեռնային Ղարաբաղում առանձնահատուկ տեղ ուներ փայտամշակման արտադրությունը: Արտադրվում էր կահույք, մանրատախտակ, պատուհանի կառուցվածքներ: Ընդհանրապես, Արցախն ունի հարուստ փայտանյութ: Արցախի անտառները կազմում են 160 հազար հեկտար, որը բռնում է հանրապետության տարածքի 36,5 տոկոսը: Արցախի անտառների 58 տոկոսը գտնվում է Մարտակերտի շրջանում: ԼՂՀ անտառային պաշարները միջին հաշվով կազմում են 20 մլն խմ փայտանյութ: Ադրբեջանը տասնամյակներ շարունակ բարբարոսաբար հատում էր Արցախի ամենաարժեքավոր ծառատեսակները և որպես հումք ուղարկում Կիրովաբադի կահույքի ֆաբրիկա: Այդ նպատակով տարեկան մթերվում և դուրս էր բերվում 50-55 հազար խմ փայտանյութ: Միայն 1970-1990թթ. Մարտակերտի անտառներից մթերվել է շուրջ 400 հազար խմ շինարարական և վառելափայտ: Հիմնականում հատվել են հաճարենու, կաղնու, ընկուզենու արժեքավոր ծառատեսակները[39]: Նկատի ունենալով Արցախի փայտանյութի որակական բարձր հատկանիշները՝ կարելի է արտադրել մեծ պահանջարկ ունեցող բարձրորակ կահույք: Միևնույն ժամանակ հանրապետության բնական պաշարների պահպանումը դառնում է խիստ անհրաժեշտ: Այդ նշանակում է, որ պետք է շեշտակի ընդլայնել

[39] *«Երկիր», 29.01.1994:*

անտառատարածքները և բարելավել անտառի սանիտարական վիճակը:

ԼՂՀ արդյունաբերության ճյուղերից առավել զարգացած է թեթև արդյունաբերությունը, որի աշխատանքը հիմնականում հիմնված է տեղական հումքի վրա: Կարևոր տեղ ունեն մետաքսագործությունը, կոշկեղենի և գորգերի արտադրությունը:

Դեռևս 1920-ական թվականների երկրորդ կեսին կազմակերպվել էր «Ղարմետաքսկոմբինատը», որը գործում էր տեղում աճեցվող շերամի բոժոժի և ներմուծվող արհեստական մանրաթելի հիմքի վրա: 1984-ին «Ղարմետաքսը» արտադրել է 126 տ մետաքսի հումք, 83 տ մետաքսի ոլորաթել և 178 մլն քմ կոպիտ մետաքսակտոր: Սակայն մետաքսի ստացման վերջնական գործընթացը կատարվում էր Արցախից դուրս՝ Շաքիի մետաքսի կոմբինատում, որի հետևանքով մետաքսի կոմբինատը տարեկան կորցնում էր 60 մլն ռուբլի միայն այն պատճառով, որ այն դրված էր Շաքիի մետաքսի կոմբինատից կախման մեջ, և ամբողջ արտադրանքը թողարկվում էր այդ ձեռնարկության ապրանքանիշով՝ դրանով իսկ թաքցվելով մետաքսակտորի ղարաբաղյան ծագումը: Պատերազմի հետևանքով մասամբ ավերվել, մասամբ էլ չաշխատելու պատճառով 1996թ. կոմբինատը տվել է ընդամենը 75,3 հազար քառ. մ կոպիտ գործվածք: Նախատեսվում էր վերականգնել «Ղարմետաքսի» երբեմնի փառքը:

Հայտնի է, որ Ղարաբաղյան գորգերը մեծ համբավ էին վայելում դեռևս վաղ միջնադարում: Ղարաբաղում արտադրված գորգերը արտահանվում էին աշխարհի շատ երկրներ: Արցախում գորգագործության վերականգնումը, ինչպես ակնարկել ենք, սկսվել էր տակավին պատերազմական տարիներին: Հիշենք, որ 1995թ. արտադրվել է 608, 1996-ին՝ 234, իսկ 1999-ին՝ 305,7 քառ. մ: Գորգագործության զարգացումը ունի լավագույն հեռանկարներ:

Կոշիկի արտադրությունը Արցախում երկարատև պատմություն չունի, այն նոր է: Ստեփանակերտի կոշիկի գործարանը 1984թ. արտադրել է 4463 մլն զույգ կոշիկ: Գործարանը գործում էր Շուշիի կաշվի վերամշակման ձեռնարկության արտադրած կոշտ կաշվեղենի արտադրության վրա: Վերջինիս հզորությունը տարեկան կազմել է 1 մլն քառ. դմ: Կոշիկի ֆաբրիկան մեծ վնաս էր կրել պատերազմի հետևանքով, որի պատճառով էլ հաջորդ տարիներին արտադրությունը ընդհատվել է և միայն 2000 թ. է սկսել արտադրանք տալ:

Լեռնային Ղարաբաղում արտադրվում է նաև կահույք: Անգամ հրետակոծության դաժան օրերին Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկան շարունակում էր աշխատել, չնայած խիստ իջել էին արտադրանքի ծավալն ու որակը: 1999 թ. գործարանը տվել է 40.701 հազար դրամի արտադրանք: Այդ բնագավառում նախատեսվում էր հետագա առաջընթաց, մանավանդ որ երկրամասն ունի հարուստ հումքային բազա: Առանձնապես կարևոր է Վանքի նախկին ձեռնարկության հիմքի վրա կառուցված և ժամանակակից տեխնիկայով հագեցված ֆաբրիկան, որի արտադրած բարձր որակյալ մանրատախտակը արտահանվում է Եվրոպայի ամենազարգացած երկրներ:

Լեռնային Ղարաբաղում սննդի արտադրության համար հիմք է հանդիսանում սեփական հումքը: Առանձնանում են ոգելից և ոչ ոգելից խմիչքների, հյութերի, կաթնամթերքների և մսամթերքների արտադրությունները: Արցախում ոգելից խմիչքներ արտադրող գործարանները միավորված են գինեգործական տրեստի համակարգում: Տրեստի գործարանները տեղաբաշխված են Ստեփանակերտում, Ասկերանում, Կարմիր շուկայում, Գևորգավանում, Լենինավանում և այլ տեղեր: Պատերազմի տարիներին խիստ անկում էր ապրել գինու արտադրությունը: Եթե 1990թ. Լեռնային Ղարաբաղում արտադրվել է 196 հազար դեկալիտր գինի, ապա 1996թ. այն կազմել է 25,5 հազար դեկալիտր, իսկ 1999-ին՝ 12,4: Այդ նույն ժամանակաշրջանում կոնյակի արտադրության ծավալը կրճատվել է մոտ 6 անգամ և 1990թ. արտադրված 44 հազար դեկալիտրից իջել է 7,8 հազար դեկալիտրի: Հետագայում, ասենք 1999թ., այն ավելի է նվազել և հասել 4,4 հազար դեկալիտրի: Խիստ իջել էր նաև օղու արտադրությունը: 1996 թ. այն կազմել է 13,2 հազար դեկալիտր, իսկ 1999-ին՝ 1,5 հազար: Ապա սկսվել է օղու արտադրության ծավալը բարձրանալ և 2000թ. 9 ամսում կազմել է 6,18 հազար դեկալիտր:

Պատերազմի տարիներին խստորեն կրճատվել է կենդանական յուղի, մսամթերքի, պանրի և անարատ կաթնամթերքի արտադրության ծավալը: Եթե 1984-ին Արցախում արտադրվել է 948 տ կենդանական յուղ, ապա 1996-ին այն իջել էր 6,6, իսկ 1999-ին 2,7 տոննայի: Խիստ պակասել էր նաև մսամթերքի արտադրությունը: Մսի արտադրությամբ Լեռնային Ղարաբաղը միշտ էլ առաջնակարգ տեղ է գրավել: Եթե 1990թ. արտադրվել է 500 տ միս, ապա 1996թ. այն կազմել է 394,4, իսկ 1999-ին 76,4

տոննա: 2000 թվականից այն սկսել է աճել և այդ նույն թվականի 9 ամսում կազմել է 209,1 տ: Նկատվում է նաև կաթնամթերքի արտադրության աճ: Արցախի Հանրապետության 469,6 հազար հեկտար տարածքի 201,4 հազարը գյուղատնտեսական հողատարածքներ են, որոնցից 55,5 հազարը կազմում են վարելահողեր: Այդ լեռնային երկրի միջին բարձրությունը ծովի մակարդակից հասնում է 1100 մ-ի, տարածքի ավելի քան 80 տոկոսը տեղադրված է 500 մ բարձրության վրա: Երկրամասի կլիման բարեխառն է, տաք: Հանրապետության հողային պաշարները և բնակլիմայական պայմանները նպաստավոր են գյուղատնտեսության զարգացման համար: Իր նշանակությամբ գյուղատնտեսական արտադրությունը հանդիսացել և հանդիսանում է հանրապետության տնտեսության առաջատար ճյուղը: Այստեղ գյուղատնտեսական համախառն արտադրանքը գերազանցում է արդյունաբերության արտադրանքը ավելի քան 5 անգամ: 1996թ. հանրապետության գյուղատնտեսությունը տվել է 7,8 մլրդ դրամի արտադրանք: Այստեղ մինչև 90-ական թվականների վերջը պահպանվել են կոլտնտեսային և պետական տնտեսությունները, որոնք անգնահատելի դեր են խաղացել ղարաբաղյան պատերազմի տարիներին: Թերևս, այդ էր հիմնական պատճառը, որ այստեղ չէին շտապում Հայաստանի պես հախուռն լուծարել կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները և սեփականաշնորհել հողը: Արցախում պատերազմից հետո մտածում էին ագրոարդյունաբերական համալիրը փոխել աստիճանաբար, առանց շտապելու: Ագրոարդյունաբերական համալիրը խորհրդային տարիներին զբաղեցնում էր Ղարաբաղի էկոնոմիկայի 70 տոկոսը: Իննսունական թվականների երկրորդ կեսին հանրապետության հարստությունը մնում էր հողը, և մեծ հույսեր էին կապում գյուղատնտեսության զարգացման հետ: Արցախի ղեկավարությունն այն համոզման էր, որ բարեփոխումների ընդհանուր ծրագիրը պետք է սկսել գյուղից, որը հնարավորություն կտար գյուղացուն ազատ աշխատել իր հողի վրա, ստեղծել նոր տնտեսություններ, նոր ձեռնարկություններ: Խոսքը գյուղատնտեսական մթերքների վերամշակման մասին է: Բարեփոխումներով չէր նախատեսվում հողի սեփականաշնորհում, ուստի Արցախում չէին շտապում որոշում ընդունել հողի սեփականաշնորհման մասին: ԼՂՀ կառավարությունը գտնում էր, որ չպետք է միանգամից ցրել կոլտնտեսությունները: Ընդհանրապես չէին ցանկանում ցրել մանավանդ այն կոլտնտեսությունները, որոնք

տարին եզրափակում էին շահույթով: Պատերազմի և շրջափակման պայմաններում տնտեսավարման կոլտնտեսային ձևի գոյությունը Արցախում ավելի նպատակահարմար էր, քանի որ կարող էին որոշակի վարչական լծակների կիրառմամբ կարգավորել տնտեսությունների հարաբերությունները պետության և բանակի հետ: Չէին ցանկանում կտրուկ անցնել մասնավոր սեփականատիրությանը, որովհետև դա կարող էր առաջ բերել որոշ ցնցումներ: Այստեղ նախընտրելի համարեցին հողի վարձակալության ձևը: Նախատեսվեց ինքնալուծարվող կոլտնտեսություններում ստեղծել առանձին նոր սեփականության ձևեր: Վերացվեցին կոլտնտեսությունների և գյուղական խորհուրդների նախագահների պաշտոնները, ու ստեղծվեց մեկ՝ գյուղապետի պաշտոն: Ենթադրվում էր, որ նոր պայմաններում գյուղացին կաշխատի ավելի արդյունավետ: Նաև ենթադրվում էր, որ առաջ կգա սոցիալական շերտավորում: Խոսքը այս դեպքում այն մասին էր, որ հնարավորինս խուսափել դրանից և հավասար պայմաններ ստեղծել հանրապետության բոլոր քաղաքացիների համար ու երբեք թույլ չտալ հանրային սեփականության յուրացում և փոշիացում: Արցախցու համար պետք է ստեղծել այնպիսի պայմաններ, որ բնակչությունը ոչ թե գնա, հեռանա երկրամասից, այլ վերադառնա և մշտական բնակություն հաստատի այնտեղ: Ենթադրվում էր, որ Արցախի վերածնունդը դառնա համազգային խնդիր: Իսկ դա հիմնականում կապված է հանրապետության տնտեսության, մանավանդ գյուղատնտեսության շեշտակի զարգացման հետ: Թե՛ Արցախում և թե՛ Հայաստանում պետք է ապրել այն գաղափարով, որ յուրաքանչյուրի պարտքն է նպաստել Արցախի աննախադեպ զարգացմանը: Ճիշտ է, պատերազմի ժամանակ արցախցին, հայը հայրենիք էր պաշտպանում: Դա էլ ստիպեց լինել միասնական ու համախմբված: Հաղթանակը պահանջում էր հանրապետությունում սկսված բարեփոխումներն առաջ մղել անսայթաք և նպատակաուղղված քաղաքականությամբ:

ԼՂՀ գյուղատնտեսության մեջ առաջատար ճյուղը հանդիսանում է հացահատիկի, մանավանդ աշնանացան ցորենի մշակությունը: Հացահատիկի մշակումը զբաղեցնում է ԼՂՀ մշակովի հողատարածությունների 40 տոկոսը: Արցախում հացահատիկային ցանքերի բերքատվությունը միջին հաշվով կազմում է հեկտարից 20-25 ց: 1984-ին Արցախում կային 33 կոլտնտեսություններ, 40 պետական տնտեսություններ և 5 միջտնտեսական

ձեռնարկություն ու կազմակերպություն: Նրանց կատարած 61 հազար հեկտար ցանքսից 28,4 հազարը կազմում էին հացահատիկային կուլտուրաները: Խորհրդային տարիներին Արցախը տարեկան արտադրում էր մինչև 50-60 հազար տ հացահատիկ, որը բավարարում էր երկրամասի բնակչության միջին պահանջները: 1996-ին Արցախում արտադրվել է 40 հազար տոննա հացահատիկ, իսկ 1999-ին մեկ հեկտարից միջին հաշվով ստացվել է 12,4 ց, որը շատ ցածր էր: Հաջորդ տարիներին, ասենք 2002-2003թթ., հանրապետությունում ստացված առատ բերքը համոզում է, որ հնարավոր է այստեղ տարեկան ստանալ մինչև 100 հազար տոննա հացահատիկ, որի մի մասը կարտահանվի Հայաստան:

Արցախում լավագույն պայմանները կան զգալիորեն ավելացնելու ծխախոտի, կարտոֆիլի և բանջարեղենի արտադրությունը: Եթե 1984-ին մարզում արտադրվել է 40 տ ծխախոտ, 7,8 հազար տ կարտոֆիլ և 9,5 հազար տ բանջարեղեն, ապա 1996-ին՝ 15,4 տ ծխախոտ, 3257,3 տ կարտոֆիլ ու բանջարեղեն: 2002-2003 թթ. այդ ցուցանիշները զգալիորեն բարձր էին: 2002 թ. հանրապետությունում արտադրվել է 125313,4 ց կարտոֆիլ և 40207,5 ց բանջարեղեն: Արցախում գյուղատնտեսական մթերքների արտադրության շեշտակի բարձրացումը հնարավոր է, եթե կատարվեն կապիտալ ներդրումներ, և լուծվի ոռոգման հարցը:

Արցախի բուսաբուծության կառուցվածքում կարևորագույն տեղ են գրավում խաղողագործությունն ու պտղաբուծությունը: Այս ենթաճյուղերը զարգացած են Մարտակերտի, Մարտունու, Ասկերանի և Հադրութի շրջաններում: 1984-ին մարզն ուներ 14 հազար հա խաղողի բերքատու այգի: Այդ նույն թվականին մարզում արտադրվել է 164,2 հազար տ խաղող: Այստեղ մեկ հեկտարի բերքատվությունը կազմել է 116,1 ց: Պատերազմի տարիներին խաղողի այգիները հիմնականում դուրս էին եկել շարքից, և 1996 թ. հանրապետությունում արտադրվել է ընդամենը 3895 տ խաղող: Այգիները վերականգնելու համար հանրապետության կառավարությունը ձեռնարկել է որոշ քայլեր: 2002 թ. խաղողենու բերքատու այգիները հասել էին 1207,3 հա, և այդ նույն թվականին արտադրվել է 23934,0 ց խաղող: 1984թ. մարզում կային 1104 հա պտղատու այգիներ, որոնցից ստացվել է 1236 տ բերք: Դա շատ նվազ էր մարզի բնակչության պահանջները բավարարելու համար: Արդեն 1996թ. պտղատու այգիները զբաղեցնում էին 1600 հա տարածություն: Արցախն ի վիճակի է տարեկան

արտադրել 7-8 հազար տ պտուղ, չհաշված վայրի պտուղները, որոնցով հարուստ են երկրամասի անտառները: 2001 թ. 1341,9 հա պտղի այգիներից ստացվել է 11642,9 ց համախառն բերք: Չնայած քիչ էր, բայց հուսադրող էր:

Արցախում թթաբուծությունն ունի դարերի պատմություն: Թութը արցախցու համար կենսական նշանակություն ունի. մանավանդ նրանից թորված օղին, որը հայտնի է աշխարհում: Թթից պատրաստվում են նաև դոշաբ և չամիչ: Անցած դարի երեսնական թվականների վերջին Արցախում գործում էին օղեթորման ավելի քան 300 կաթսաներ: Եվ չնայած հետպատերազմյան տարիներին խորհրդային իշխանության մի շարք որոշումներ վտանգի տակ էին դրել թթենիների գոյությունը, այդուհանդերձ արցախցիները կարողացան պաշտպանել 2000 հա տարածք կազմող թթենիների այգիները, և նույնիսկ Հատուկ կոմիտեի կառավարման ժամանակ Արկադի Վոլսկու ակտիվ մասնակցությամբ պայմաններ ստեղծվեցին թթի օղու արտադրության ծավալն ընդլայնելու և այն արտահանելու համար: Ներկայումս թթի օղու արտադրության մեկ արդյունաբերական ձեռնարկություն կա Ասկերանում, որի արտադրանքն արտահանվում է արտասահման: Թթենիների այգիների սեփականաշնորհումը նպաստում է թթի օղու արտադրության ընդլայնմանը, որը բավարարում է արցախցիների կենսական պահանջը:

Ակնհայտ է, որ Լեռնային Ղարաբաղի անասունների մթերատվության ցուցանիշները մշտապես գերազանցել են Ադրբեջանի միջին հանրապետական ցուցանիշները: Ազգային-ազատագրական պատերազմի տարիներին Արցախի անասնապահությունը կրել է զգալի կորուստներ: 1985թ. հունվարի 1-ի տվյալներով մարզն ունեցել է 98,4 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 288,0 հազար ոչխար և այծ, 86,1 հազար գլուխ խոզ: Այդ նույն թվականին մարզում արտադրվել են 11,7 հազար տ միս (սպանդային), 56,3 հազար տ կաթ, 596 տ բուրդ (ֆիզիկական կշռով): Կովի միջին կաթնատվությունը կազմել է 2397 կգ: 1989-96 թթ. կովերի 31,4 հազար գլխաքանակը իջել է 15,7 հազարի, ոչխարների և այծերի գլխաքանակը 78,3 հազարից կրճատվել է 32,6 հազարի, խոզերի գլխաքանակը 68,4 հազարից իջել է 11,2 հազարի: 1996թ. արտադրվել է հազիվ 20 հազար տոննա կաթ: Ադրբեջանում արտադրվող խոզի մսի 40 տոկոսը տալիս էր Լեռնային Ղարաբաղը: Խոզաբուծության բարձր արտադրողական համալիրներ էին ստեղծված Թաղի, Տումիի, Հաթերքի, Վաղուհասի,

Չլդրանի, Վանքի, Ավետարանոցի, Նենգիի տնտեսություններում: Պատերազմից հետո հնարավոր էր փոքր ներդրումների միջոցով վերականգնել անասնագլխաքանակը և մթերքների արտադրությամբ գերազանցել նախապատերազմյան ծավալը: Արդեն 2002թ. հանրապետությունում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը հասել էր 40496-ի, որից կովերի գլխաքանակը՝ 20183, խոզերի գլխաքանակը՝ 14514-ի, ոչխարների և այծերի գլխաքանակը՝ 42669-ի, ըստ որում այդ նույն թվականին արտադրվել է 28234,2 տ կաթ, 60,1 տ բուրդ, 13457,3 հազար հատ ձու:

Իննսնական թվականների երկրորդ կեսին իրագործված բարեփոխումների հետևանքով առաջընթաց քայլ է կատարվել գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ: Սկսած 1995 թվականից՝ գյուղատնտեսության ոլորտում կատարվել են նոր՝ առաջադիմական տնտեսաձևերի ձևավորման քայլեր: Այդ նույն թվականին հատուկ որոշումով հողը համարվեց որպես պետական սեփականություն և տրվեց կոլտնտեսություններին՝ վարձակալության իրավունքով: Հանրապետության բոլոր տնտեսությունները վերակազմավորվեցին գյուղական կոլեկտիվ տնտեսությունների, իսկ մեկ տարի անց բազմաթիվ կոլեկտիվ տնտեսություններ վերածվեցին փակ բաժնետիրական տնտեսությունների, որոնց մեջ հստակորեն որոշված էր յուրաքանչյուր անդամի մասնաբաժինը: Արդեն 1997թ. հանրապետությունում կային 14300 գյուղացիական և 151 կոլեկտիվ տնտեսություններ:

Պատերազմական գործողությունների հետևանքով շարքից հանված և ավերված շինությունների ու բնակարանների վերակառուցման աշխատանքները սկսվել էին դեռևս 1991-1992 թվականներից: Այդ նպատակով եթե 1991-ին կատարվել է 77,7 հազար ռուբլու ներդրում, ապա 1992-ին այն հասցվել է 402,1 հազար դրամի, իսկ 1996-ին՝ 844,6 միլիոն դրամի: Այդ թվերը հետագայում շարունակել են աճել, ընդ որում ներդրումների 98 տոկոսը բաժին է ընկել ոչ արտադրական նշանակության շինություններին: 1999-ին իրականացվել է 4372024 դրամի կապիտալ շինարարություն, որից 2764.157-ը՝ պետության բյուջեից, «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներից՝ 611.834, այլ միջոցներից՝ 754.996 դրամ և այլն: Արցախում բնակարաններ անցյալում էլ շատ քիչ են կառուցվել: Ասենք, որ 1984-ին կառուցվել է ընդամենը 44,5 հազար քառ. մ բնակտարածություն, որից 20,5 հազար քառ. մ-ը՝ պետության և կոոպերատիվների հաշվին: Բնակարանաշինությունը և բնակարանների վերանորոգումը Արցախում շարունակում են ետ մնալ: Այսպես. եթե 1990թ. Արցախում շահագործման է հանձնվել 720 բնակարան՝ 37250 քառ. մ ընդհանուր մակերեսով, ապա 1991-1996թթ. շահագործման է հանձնվել ընդամենը 207 բնակարան՝ 14720 քառ. մ ընդհանուր մակերեսով: Մինչդեռ Արցախի զարգացման հեռանկարային պլանով նախատեսվում էր ամեն տարի առնվազն կրկնապատկել բնակարանային շինարարության հատկացումները: Հետագայում քայլեր ձեռնարկվեցին այդ բացն ուղղելու համար, և 2000թ. գործարկվել են 7960,2 մլն դրամի կապիտալ շինարարության հիմնական միջոցներ, որից 7213,7 մլն դրամը՝ շինմոնտաժային աշխատանքներ: 2002թ. կապիտալ շինարարության հիմնական միջոցները իջել են 4323,4 մլն դրամի, ընդ որում 2000թ. 19754,9 քառ. մ բնակտարածության փոխարեն 2002թ. շահագործման է հանձնվել 10363,4 քառ. մ օգտակար մակերես:

ԼՂՀ տարածքի համաչափ բնակեցումը և նրա արտադրողական ուժերի տրամաբանական տեղաբաշխումը պետք է կարգավորվի: Այսպես. մարզի բնակչության 40 տոկոսը կենտրոնացված է Ստեփանակերտում, որը, թերևս, նպատակահարմար չէ: 2001թ. հունվարի 1-ի տվյալներով՝ շրջաններում ամենախիտը բնակեցված էին Մարտունու շրջանում, որտեղ բնակվում էր 22803 մարդ, որոնց թիվը 2003թ. հունվարի 1-ի դրությամբ հասել է 23 հազարի: Բնակչության բնակեցումը պետք է արագացվեն առանձնապես Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում:

ԼՂՀ տնտեսության վերակառուցման և զարգացման կարևորագույն նախապայմաններից են փոխադրական ուղիների բարեկարգումը և նորերի կառուցումը: Խորհրդային իշխանության տարիներին այդ բնագավառը լրիվ մատնված էր անուշադրության, և մարզի ներքին ճանապարհները գտնվում էին անմխիթար վիճակում: 1980-ական թվականների վերջին մարզում ասֆալտապատված էր միայն Ստեփանակերտ-Աղդամ մայրուղին: Արցախյան պայքարի տարիներին ռազմավարական կարևոր նշանակություն ստացան ճանապարհների կառուցումն ու վերականգնումը: 58 կմ երկարությամբ Ստեփանակերտ-Շուշի-Լաչին-Գորիս ճանապարհն արմատապես վերակառուցվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով: Ներկայումս կառուցվում է Մարտակերտ-Ստեփանակերտ-Հադրութ հյուսիսարավ ճանապարհը՝ 180 կմ երկարությամբ, որն ունի ռազմավարական խոշոր նշանակություն: Անմխիթար վիճակում են գտնվում հանրապետության միջշրջանային, միջգյուղական և

գյուղական ճանապարհները, որոնց վերանորոգումն ու բարեկարգումը պետք է դառնա ԼՂՀ պետական խնդիրներից մեկը:

2000թ. հունվարի 1-ի դրությամբ ԼՂՀ-ում գոյություն ունեին պետռեգիստրում գրանցված 2023 տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից 1001-ը պատկանում էին անհատ ձեռներեցներին: Այդ ամենում պետական ձեռնարկություններ էին 84-ը: 2001թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում կար 276 պետական սեփականություն, 929-ը՝ կոոպերատիվ, և 774-ը՝ քաղաքացիների սեփականություն: Արդեն նույն թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ համապատասխանաբար՝ 288, 969 և 814: 2001թ. հունվարի 1-ի դրությամբ կային նաև 15 խառը սեփականություն, 21 օտարերկրյա քաղաքացիների սեփականություն և 8 հասարակական կազմակերպությունների սեփականություն: Այդ նույն տարում օտարերկրյա քաղաքացիների սեփականությունը ավելացել էր երեքով և հասել էր 24-ի: Հանրապետությունում 2001թ. սեփականաշնորհվել է 679 օբյեկտ, որոնցից 380-ը՝ Ստեփանակերտում, 55-ը Ասկերանի, 69-ը Մարտակերտի, 99-ը Մարտունու, 25-ը Շուշիի, 51-ը Հադրութի շրջաններում: Սեփականաշնորհման գործընթացը հանրապետությունում շարունակվում է: Դեռևս 1999թ. մարտի 12-ին ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը ՄԱԿ-ի նստավայրում մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է, որ ԼՂՀ-ն արդեն անցել է շուկայական հարաբերությունների, համարյա ավարտվել է սեփականաշնորհման գործընթացը, ստեղծվել է ժողովրդական պետություն, որն ամենակարևոր գործոնն է: Ապա նշել է, որ Լեռնային Ղարաբաղը բաց է բոլոր նախաձեռնությունների համար և պատրաստ է համագործակցելու բոլոր երկրների հետ[40]:

ԼՂՀ-ի կյանքում էական հարց է բնակչության սոցիալական վիճակի բարելավման խնդիրը: Դրա համար կարևոր նշանակություն ունեն առևտրի, կապի զարգացումը, շուկայական հարաբերությունների խորացումը, վարձատրության բարձրացումը, սեփականաշնորհման գործընթացի առաջմղումը, սպորտի և ֆիզիկական կուլտուրայի զարգացումը և այլն: Սրանք հարցեր են, առանց որոնց լուծման հնարավոր չէ բարձրացնել հանրապետության դերը: Ամենից առաջ անհրաժեշտ է խստորեն պայքարել գործազրկության դեմ: Այդ նշանակում է, որ պետք է վերականգնվեն նախկին բոլոր գործարանները, և կառուցվեն նորերը:

[40] *«Ազատ Արցախ», 18.03.1999:*

1999թ. հանրապետությունում գործազուրկների թիվը հասնում էր 3042-ի, որից 1909-ը՝ Ստեփանակերտ քաղաքում: 2000թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ գործազուրկների թիվը հասել էր 3450-ի: Գործազրկության դեմ ամենաարդյունավետ պայքարը նոր աշխատատեղերի բացումն է: 2000թ. բացվեց Ստեփանակերտի հացի գործարանը, որտեղ աշխատանքի տեղավորվեց 95 մարդ: 69 տեղ էլ բացվեց Ստեփանակերտի ալրաղացի վերաբացումից հետո: Ստեփանակերտում բացվեցին նաև Երևանի կաբելի գործարանի և նրբատախտակի արտադրության նոր մասնաճյուղեր, որտեղ բացվեցին 60 աշխատատեղեր: Բացվեց նաև Շուշիի ոսկերչական գործարանը, 60 աշխատատեղով: Մարտակերտի Վանք գյուղի փայտի վերամշակման գործարանում տեղավորվեց 120 հոգի: Նախատեսվեց մինչև 2000թ. վերջը 700 աշխատատեղ բացել և նոր շարք մտած արտադրական կարողությունների տարեկան համախառն արտադրանքը հասցնել 22,24 մլրդ դրամի: Մեծ աշխատանքներ են տարվում էներգետիկայի և ոռոգման ցանցի ընդլայնման ուղղությամբ[41]:

Հետզհետե զարգանում էր հանրապետության արտաքին առևտուրը: Այստեղ արտադրված ապրանքները արտահանվում են ԱՊՀ, եվրոպական, Մերձավոր Արևելքի երկրներ ու ԱՄՆ: Նկատվում է արդյունաբերության աճ, ըստ որում 2001 թվականին՝ 21,6 տոկոս, 2002թ.՝ 36,2, 2003թ.՝ 40: Եթե 1999-ին արդյունաբերության աճը կազմել է ընդամենը 3,8 մլրդ դրամ, ապա 2003-ին այն հասել է 11 մլրդ-ի: Եթե ԼՂՀ-ից 2001թ. արտահանվել է ընդամենը 5,4 մլն դոլարի արտադրանք, ապա 2002թ. այն կազմել է 14 մլն, իսկ 2003թ.՝ 18 մլն դոլար[42]: Վերջին երկու տարում վերականգնվել է Կարմիր շուկայի գինու գործարանը, սկսել են արտադրանք տալ Դրմբոնի պղնձի-ոսկու հանքաարդյունաբերությունը և Ստեփանակերտի պոլիէթիլենային խողովակների գործարանը: Դրմբոնի գործարանում աշխատողների թիվը կազմում է 1000-ից ավելի: Արագացվել է նաև Հյուսիսհարավ ճանապարհի շինարարությունը: Մարտունիում գործարկվել է խաղողից սպիրտ արտադրելու գործարանը: Ավարտվելու վրա է «Ենգիբարյան» ընկերության պահածոների գործարանի կառուցումը Կարմիր շուկա-Ստեփանակերտ մայրուղու վրա: Ստեփանակերտում սկսել է գործել հայ-շվեյցարական «Կա-

[41] *«Հայաստանի Հանրապետություն», 18.08.2000:*
[42] *"Голос Армении", 10.04.2004:*

րին» ձեռնարկությունը, որը մշակում է ղարաբաղյան քար, որտեղ զբաղված է 140 մարդ[43]:

Արցախում վերականգնվել է զբոսաշրջիկությունը: Բավական է նշել, որ միայն 2003թ. Լեռնային Ղարաբաղ է ժամանել 2500 զբոսաշրջիկ: Ըստ ԼՂՀ վիճակագրության տվյալների՝ յուրաքանչյուր տարի զբոսաշրջիկների հոսքն ավելանում է 35 %-ով: Միայն 2003թ. Ղարաբաղ զբոսաշրջիկներ են այցելել աշխարհի 70 երկրներից[44]:

ԼՂՀ-ում զարգանում են նաև կրթությունն ու մշակույթը: Եթե 2000/2001 ուսումնական տարում գործել է 212 հանրակրթական դպրոց՝ 23468 աշակերտներով, ապա 2002/2003 ուսումնական տարում համապատասխանաբար կազմել են 232 և 23712: 2002/2003 ուսումնական տարում գործել է երաժշտական, արվեստի և գեղարվեստի 10 դպրոց, որտեղ սովորողների թիվը հասել է 1589-ի: Այդ նույն ուսումնական տարում հանրապետությունում գործել են 4 միջին մասնագիտական հաստատություններ՝ 1539 սովորողներով: Արցախում գործում է մեկ բարձրագույն պետական հաստատություն, որտեղ 2002/2003 ուսումնական տարում սովորել է 3326 հոգի: Այդ նույն ուսումնական տարում գործել են մի քանի ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ 1211 սովորողներով: Հանրապետությունում գործում են 9 գրադարաններ, մեկ պետական մասնագիտական թատրոն, 6 թանգարաններ և այլն[45]: Այո, Արցախի հանրապետությունն ունի լավագույն հնարավորություններ առաջիկա տարիներին բարձրացնելու հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքի մակարդակը: Իսկ դրա համար հարկավոր են խոշոր ներդրումներ, համարձակ գործողություններ, երկրամասի հնարավորությունների խելացի օգտագործում և կառավարման ճկուն քաղաքականություն:

---

[43] *Նույն տեղում:*

[44] *«Հայկական ժամանակ», 18.06.2004:*

[45] *Վերոհիշյալ թվական տվյալները քաղվել են Народное хозяйство Азербайджанской ССР в 1984 году, Баку, 1985: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը», տեղեկատվական-վերլուծական եռամսյակային զեկույց, Ստեփանակերտ, 2001: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանները թվերով», Ստեփանակերտ, 2003: «Լեռնային Ղարաբաղը թվերով», Ստեփանակերտ, 2004 վիճակագրական ժողովածուներից:*

2. ՀԱՄԱԲԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

ԼՂՀ-ն ունի պետականության բոլոր հատկանիշները: Հանրապետությունը հետևողականորեն վարում է Ղարաբաղ-Ադրբեջան հակամարտության խաղաղ կարգավորման քաղաքականություն: Ամենագլխավորը, որ հանրապետությունը ձեռք է բերել, Արցախի բանակն է, որը պետության և ժողովրդի անվտանգության հիմնական երաշխիքն է:

Պատերազմական պայմաններում մոտ մեկ տարի տեղի չէր ունեցել ԼՂՀ Գերագույն խորհրդի նստաշրջան: Այն հրավիրվեց 1994-ի նոյեմբերի 23-24-ը: Նստաշրջանում ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանը իր ելույթում վերլուծեց ստեղծված տնտեսաքաղաքական իրավիճակը և առաջ քաշեց պետական իշխանության բարձրագույն մարմիններում կառուցվածքային փոփոխությունների, լուրջ տնտեսական վերափոխումների և դրանց համապատասխան օրենսդրական բազայի ու բարեփոխումների իրականացման մեխանիզմների ստեղծման անհրաժեշտությունը[1]:

Անհրաժեշտ էր հանրապետության կառավարման հին մեթոդները փոխարինել նորերով: Ասել է թե՝ առաջացել էր կառավարման նոր կուրսի կիրառման անհրաժեշտություն: Իսկ դրա համար հարկավոր էին համապատասխան նոր օրենքներ, որոնք և պետք է մշակվեին ու ընդունվեին Գերագույն խորհրդի կողմից:

ԼՂՀ խորհրդարանում բացակայում էր քաղաքական պայքարը, չկային խմբակցություններ: Մինչդեռ պայքարի խորհրդարանական մեթոդների գոյությունը խիտ պարտադիր է: Պատգամավոր Իգոր Մուրադյանը իր ելույթում շեշտեց, որ ցանկալի է՝ այդ պայքարը լինի ավելի սկզբունքային, չհենվի անձնական հակասությունների վրա[2]:

Մեկ ամիս անց՝ դեկտեմբերի 21-ին, ԼՂՀ ԳԽ նիստերի դահլիճում, նախորդ նստաշրջանի որոշմամբ, իր աշխատանքները

---

[1] *«ԼՂ Հանրապետություն», 30.11.1994:*

[2] *Նույն տեղում:*

վերսկսեց ԼՂՀ ԳԽ նստաշրջանը: Ստեղծվել էր պատգամավորական համաձայնողական խումբ, որը առաջ քաշեց Գերագույն խորհրդի իշխանության և կառավարման մարմինների կառուցվածքում փոփոխություններ մտցնելու հարցը: Այդ առթիվ հանդես գալով՝ պատգամավոր Մուրադ Պետրոսյանը առաջարկեց հանրապետությունում մտցնել նախագահական ինստիտուտ: Այդ առաջարկությունը նստաշրջանում առաջ բերեց բուռն վեճեր: Մի շարք պատգամավորներ՝ ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատար Սամվել Բաբայանը, ԼՂՀ արտաքին գործերի նախարար Արկադի Ղուկասյանը և ԼՂՀ պաշտպանության բանակի քաղբաժնի պետ Սերժ Առուշանյանը, առաջարկեցին քննարկել հանրապետությունում նախագահական կառավարում մտցնելու մասին օրենքի նախագիծը և ընտրել ԼՂՀ նախագահ: Պատգամավորների մեծամասնությունը, պաշտպանելով այդ առաջարկությունը, ընդունեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի մասին» օրենքը, համաձայն որի՝ ԼՂՀ առաջին նախագահը պետք է ընտրվեր երկու տարվա ժամկետով:

Դեկտեմբերի 22-ին նստաշրջանը փակ գաղտնի քվեարկությամբ (51 կողմ, 2 դեմ) ԼՂՀ նախագահ ընտրեց Ռոբերտ Սեդրակի Քոչարյանին: Դեկտեմբերի 23-ի առավոտյան նիստում տեղի ունեցավ ԼՂՀ առաջին նախագահի երդմնատվության արարողությունը[3]: ԼՂՀ նախագահ ընտրվելու առթիվ ողջույնի հեռագրերով շնորհավորեցին Լ.Տեր-Պետրոսյանը, Բ.Արարքցյանը, բազմաթիվ հայրենակիցներ, գիտության և մշակույթի ներկայացուցիչներ: ԼՂՀ նորընտիր նախագահ Ռ.Քոչարյանը՝ 1995 թ. Ամանորի առթիվ դիմելով հանրապետության բնակչությանը, նրանց ոգևորեց անցած տարում տարած փայլուն հաղթանակի առթիվ, սակայն շեշտելով, որ առջևում հանրապետության բնակչությանը սպասում է երկար ու դժվարին աշխատանք՝ պատերազմը, շրջափակումը, անցումը շուկայական տնտեսությանը, ստեղծել են մի այնպիսի իրավիճակ, որից դուրս գալու համար անհրաժեշտ են ուժերի առավելագույն նվիրում և համբերություն: Ռ. Քոչարյանը շեշտեց, որ երիտասարդ հանրապետության առաջ կանգնած են պաշտպանության բանակն այսուհետև ևս ամրապնդելու, տնտեսությունը բարեփոխելու, օրինականությունն ամրապնդելու, սոցիալական հիմնահարցերը լուծելու խնդիրները[4]:

1995թ. հունվարի 9-ին ԼՂՀ նախագահ Ռ.Քոչարյանի հրամանագրով ստեղծվեց ԼՂՀ պաշտպանության նախարարություն: Նախարար է նշանակվում մինչ այդ հանրապետության պաշտպանության բանակի հրամանատար, գեներալ-մայոր Սամվել Բաբայանը: Այդ օրերին նախագահը ստորագրեց նաև «Լեռնային Ղարաբաղի հանրապետության ժողովրդական պատգամավորների ընտրության մասին» օրենքը, որի առաջին հոդվածում ասված է, որ ԼՂՀ ժողովրդական պատգամավորների ընտրություններն իրականացվում են համընդհանուր, գաղտնի, հավասար և ուղղակի ընտրական իրավունքների հիման վրա, իսկ երկրորդ հոդվածով ԼՂՀ ժողովրդական պատգամավոր կարող են ընտրվել ԼՂՀ տարածքում ապրող և 21 տարին լրացած քաղաքացիները:

ԼՂՀ-ի գյուղական կյանքի կառավարման տվյալ ժամանակաշրջանի համակարգը այլևս չէր համապատասխանում ժամանակակից պահանջներին: Հանրապետության կառավարությունը, առաջնորդվելով նախագահի հրամանագրով, որոշում է ընդունում գյուղական խորհուրդների վերակազմման մասին: Համաձայն գյուղական համայնքի ղեկավարի (գյուղապետի) մասին ժամանակավոր կանոնադրության կոլտնտեսության նախագահը, նշանակվելով պետության կողմից, լինելու է նրա լիազորված անձը տվյալ տարածքում[5]:

Ձեռնարկված կարևոր միջոցառումներից էին նաև նոր որոշման ընդունումը, 1995թ. ապրիլի 1-ից հանրապետությունում գյուղատնտեսության արտադրության կազմակերպման և գյուղի կառավարման մեխանիզմում արմատական փոփոխություններ մտցնելու մասին, ըստ որի՝ կոլվարչությունների նախագահները դառնում են գյուղապետեր, իսկ կոլտնտեսություններն աստիճանաբար վեր էին ածվում փայատիրական վարձակալական հիմունքներով գործող գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: Ակնհայտ է, որ այդ վերջին տարիներին կոլվարչությունների և գյուղխորհուրդների նախագահների միջև ծագած հակասություն-

[3] *Նույն տեղում, 31.12.1994:*

[4] *Նույն տեղում, 31.12.1994: Այդ օրերին ԼՂՀ վարչապետ էր նշանակվել Լեոնարդ Պետրոսյանը, որը մինչ այդ ղեկավարում էր Հատուկ ծրագրերի վարչությունը:*

[5] *Նույն տեղում, 14.03.1995:*

ների հետևանքով շատ գյուղերում բարձիթողի վիճակում էին սոցիալական հարցերը, միջգյուղական և գյուղամիջյան ճանապարհները, և խարխլվել, քայքայման եզրին էին հասել լուսավորության, առողջապահության, սոցիալ-մշակութային, կենցաղային, առևտրի, հասարակական սննդի օբյեկտները: Գյուղերում վաղուց չէին գործում ռադիոն, հեռախոսը, էլեկտրականությունը: Նոր որոշմամբ գյուղական համայնքը պետք է ունենա կառավարման մեկ մեխանիզմ: Նա իր իրավասության սահմաններում պետք է լուծի տեղական նշանակության բոլոր հարցերը՝ սկսած գյուղմթերքների արտադրության կազմակերպման հետ կապված խոչընդոտները հաղթահարելուց ընդհուպ մինչև որդեգրման, զառամյալների և հաշմանդամների խնամակալության, գյուղի տարածքում պատշաճ սանիտարական վիճակի ապահովման և այլ հարցերի լուծում:

Նոր որոշման համաձայն՝ շրջանային վարչակազմերը իրենք էին նշանակում գյուղական համայնքի ղեկավարներին: Սակայն պարզվում է, որ շրջանային ղեկավարները հաճախ ստիպված էին լինում կատարել առանձին և բարձրաստիճան պաշտոնյաների միջնորդությունները կամ հանձնարարականները և գյուղապետեր են նշանակել առանց նկատի ունենալու տվյալ գյուղի տնտեսության շահերը: Իսկ դա խիստ դատապարտելի էր[6]:

1995թ. փետրվարի 7-ի նախագահի հրամանագրով նախագահին առընթեր ստեղծվեց անվտանգության խորհուրդ: Փետրվարի 14-ին տեղի ունեցած ԼՂՀ խորհրդարանը քննարկեց հանրապետությունում տնտեսական բարեփոխումների հիմնական դրույթները, որի մասին զեկուցումով հանդես եկավ վարչապետ Լեոնարդ Պետրոսյանը: Ըստ նրա՝ բարեփոխումների ծրագիրը պետք է իրականացվի փուլ առ փուլ: Այն թույլ կտար շուկայական հարաբերությունների համատեքստում նախադրյալ ստեղծել ակտիվ տնտեսական քաղաքականություն վարելու համար[7]: Վարչապետը հանգամանորեն խոսեց տնտեսության բոլոր ոլորտներում կառավարության կողմից մշակված բարեփոխումների մասին, ընդգծեց դրանց անհապաղ իրականացման անհրաժեշտությունը: Կառավարության ծրագրի հիմնական նպատակը հանրապետության տնտեսության անկման կանխարգելումն էր,

[6] *Նույն տեղում, 04.01.1995:*
[7] *Նույն տեղում, 15.02.1995:*

սեփականատիրության առանձին տարրերի արմատավորումը, Հայաստանի հետ տնտեսական նույն դաշտի ստեղծումը, որը հնարավորություն կտար կարճ ժամկետում ոտքի կանգնեցնել ԼՂՀ տնտեսությունը: Նստաշրջանը հաստատեց հանրապետության 1995թ. բյուջեն, ապա մի շարք օրենքներ՝ «ԼՂՀ օրենքը սեփականաշնորհման և ապապետականացման մասին», «ԼՂՀ օրենքը սեփականության մասին», «ԼՂՀ օրենքը ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին», «ԼՂՀ օրենքը արտասահմանյան ինվեստիցիաների մասին» և այլն: Նստաշրջանը լսելով կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Մուշեղ Օհանջանյանի հաղորդումը ընտրությունների նախապատրաստական աշխատանքների մասին, որոշեց ԼՂՀ խորհրդարանական ընտրություններն անցկացնել նույն թվականի ապրիլի 30-ին: Մի փոքր անց՝ ապրիլի 4-ին տեղի ունեցած ԼՂՀ կառավարության նախագահության նիստում հաստատվեցին մի շարք նոր որոշումների նախագծեր, որոնցից յուրաքանչյուրը, բնականաբար, կազմում էր հանրապետությունում իրագործվող բարեփոխումների գործընթացի իրավական դաշտի բաղկացուցիչ մասը:

ԼՂՀ-ում նախագահական ինստիտուտ մտցնելու առնչությամբ օրենսդիր իշխանության կառուցվածքում տեղի էին ունենում փոփոխություններ: Այդ վերջին նստաշրջանը նաև որոշում էր ընդունել կառավարման մարմինների կառուցվածքներում արմատական փոփոխություններ մտցնելու մասին: Նախագահական կառավարման անցնելու կապակցությամբ օրենքով որոշ ֆունկցիաներ պետք է տրվեն նախագահի իրավասությանը: Նորընտիր խորհրդարանը արդեն պետք է լինի մշտական գործող[8]:

ԼՂՀ-ում խորհրդարանական ընտրությունների նախընտրական աշխատանքներն ընթանում էին կազմակերպված ու թափանցիկ: Ստեղծվել էին 33 ընտրատարածքներ: Ընտրությունների նախօրյակին հանրապետության նախագահ Ռ.Քոչարյանը, դիմելով ազգաբնակչությանը, կոչ արեց ցուցաբերել ակտիվություն, ընտրությունների օրը ներկայանալ ընտրական տեղամասեր և կատարել իրենց քաղաքացիական պարտքը: Աշխարհի տարբեր տեղերից եկած միջազգային դիտորդները նշել են, որ ԼՂՀ խորհրդարանական ընտրություններն անցել են ժողովրդավարության մթնոլորտում, արդար ու թափանցիկ էին, պահ-

[8] *Նույն տեղում, 14.02.1995:*

պանվել են ժողովրդավարության սկզբունքները առկա միջազգային նորմերին համապատասխան, առանց որևէ խախտումների: Այն եղել է օրինակելի[9]: Թեկնածուների կողմից ինքնաբացարկում տալու պատճառով Ստեփանակերտի N 12 և Հադրութի N 18 ընտրատարածքներում ընտրությունները տեղի չէին ունեցել: Հինգ ընտրատարածքներում ընտրություններն անցկացվեցին հետո՝ հունիսի 30-ին: Ընտրություններին մասնակցել էին ընտրողների 79,7 տոկոսը:

Մայիսի 19-ին Ռ. Քոչարյանը ստորագրեց հանրապետության պաշտպանության բանակի զորամասային մարտական դրոշ հիմնադրելու մասին հրամանագիրը, որով փաստորեն խորհրդանշվեց ԼՂՀ պաշտպանության բանակի ձևավորման ավարտը[10]:

1995թ. մայիսյան այդ օրերին Ռ.Քոչարյանի հրավերով Արցախ ժամանեց Վեհափառ Գարեգին Ա-ն: Այդ օրը՝ մայիսի 19-ին, Արցախի մայրաքաղաքում «վարդերի անձրև տեղաց»: Արցախցիները Գարեգին Ա կաթողիկոսին և նրան ուղեկցող ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանին դիմավորեցին ծաղիկներով և հպարտագին ցնծությամբ: Գարեգին Ա-ի ժամանումը խորհրդանշում էր Արցախի և Հայաստանի հոգևոր միասնությունը: Արցախահայությունը հասկանում էր, որ հայ եկեղեցու հովվապետը Արցախ էր եկել հանրապետության վերականգնման հարցերը քննարկելու, ջանքերը ստեղծարար աշխատանքին ուղղելու համար: Ամենայն հայոց կաթողիկոսը Ստեփանակերտում ծաղկեպսակ դրեց Հայրենիքի պաշտպանների հուշայունին: Հյուրերը եղան զորամասերում, Ասկերանում, Ճարտարում, Հադրութում: Ամենուր նրանց դիմավորում էին մեծ ոգևորությամբ: Վեհափառը արցախցիներից բաժանվելուց առաջ ասաց. «Ես քիչ եմ ունեցել հոգևոր ներսուզման այնպիսի պահեր, որպիսիք ունեցա Ղարաբաղում այս մի քանի օրը ամենուրեք՝ սկսած Քաշաթաղից մինչև Ղարաբաղի վերջին շենը, ես հավատք տեսա, զորություն տեսա, և այդ զորության մեջ Աստված էր ապրում... Երբեք չէի կարող պատկերացնել, որ այս 7 տարվա պատերազմից հետո Ղարաբաղում կյանքը այսքան կազմակերպված կլինի: Պետական և զինվորական կառույցները տեսնելով՝ համոզվեցի, որ պետական

[9] *«Հայաստանի Հանրապետություն», 03.05.1995:*
[10] *Նույն տեղում, 20.05.1995:*

մտածողությունը այստեղ ամուր վեմի վրա է»[11]: Հայոց կաթողիկոսը իր անձնական ֆոնդից Արցախին հատկացրեց ֆինանսական միջոցներ մանկական հիվանդանոցի ինֆեկցիոն մասնաշենքի կառուցման համար:

1995թ. մայիսի 30-ին Ստեփանակերտի օդանավակայանն ընդունեց ՅԱԿ-40 առաջին քաղաքացիական ինքնաթիռը, որը չվերթ էր կատարել Երևան-Ստեփանակերտ երթուղիով: Ադրբեջանի ռազմաօդային ուժերի երեք կործանիչ օդ բարձրացան և թռիչք կատարեցին ԼՂՀ սահմանի երկայնքով: Այդ նույն օրը Ադրբեջանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, հանդես գալով հայտարարությամբ, նշեց, որ չվերթը կրկնվելու դեպքում կձեռնարկվեն ծայրահեղ միջոցներ: Այդ առնչությամբ ԼՂՀ պաշտպանության նախարարությունը, հանդես գալով պատասխան հայտարարությամբ, շեշտեց, որ ադրբեջանական կողմի այդ քայլը լի է վտանգով, մանավանդ որ Բաքու-Նախիջևան-Անկարա գիծը անցնում է ԼՂՀ սահմանների հարևանությամբ և կստանա համապատասխան գործողություն: ԼՂՀ հակաօդային պաշտպանության ուժերն իրենց տրամադրության տակ ունեն բավականին միջոցներ դրանք իրականացնելու համար[12]:

Խորհրդարանի նստաշրջանը սկսվեց հունիսի 23-ին: Կենտրոնական հանձնաժողովի նախագահ Մուշեղ Օհանջանյանը հայտարարեց, որ ընտրված պատգամավորներից ոչ մեկը որևէ կուսակցության անդամ չէ: ԼՂՀ խորհրդարանի նախագահ ընտրվեց Կարեն Բաբուրյանը: Նիստին մասնակցում էին Ռոբերտ Քոչարյանը, Լեոնարդ Պետրոսյանը, ԼՂՀ կառավարության անդամներ: Ինչպես այդ, այնպես էլ հաջորդ նստաշրջաններում ընդունված բոլոր օրենքներն ու օրենսդրական ակտերը հիմնականում ուղղված էին հանրապետությունում բարեփոխումների ծրագրի իրագործմանը: 1996թ. հունվարի 23-ին խորհրդարանի նիստում հանդես գալով հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, շոշափեց ԼՂՀ-ի սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական իրավիճակին առնչվող հարցեր: Նա նշեց, որ պահպանվող հրադադարը թույլ է տվել ստեղծել իրավական դաշտ և ձեռնամուխ լինել հանրապետության տնտեսության բարենորոգմանը: Շեշտեց, որ սկսած 1995 թվականից՝ հանրապետությու-

[11] *Նույն տեղում, 24.05.1995:*
[12] *«ԼՂ Հանրապետություն», 01.06.1995:*

նում իրականացվում են տնտեսական բոլոր ճյուղերն ընդգրկած համալիր բարեփոխումներ, առաջ է ընթանում առևտրական օբյեկտների սեփականաշնորհման գործընթացը, ագրարային հատվածում իրականացվում է կոլտնտեսությունների վերակառուցումը փայատիրական, գյուղացիական տնտեսությունների, գյուղացիները սկսել էին համարձակորեն վարձակալել հողերը: Հայտարարվեց, որ նկատելի հաջողություններ է ձեռք բերվել նաև էներգետիկայի զարգացման բնագավառում, ավարտվում է բանկային համակարգի վերակառուցումը, որն իրականացվում է ԼՂՀ-ում սեփական դրամի բացակայության հաշվառությամբ, հայրենիք են վերադառնում հազարավոր արցախցիներ: Նախագահը միաժամանակ ցավով նշեց, որ հանրապետությունում ճանապարհաշինարարությունն ընթանում է շատ դանդաղ, որի հիմնական պատճառը ֆինանսների սղությունն է: Ի լուր հայտարարեց, որ հատուկ ուշադրություն է դարձվում ռազմական շինարարության հարցին[13]:

Արցախի պետականության ամրապնդման և սոցիալ-քաղաքական հարցերին դրական լուծում տալու համար ձեռնարկվում էին մի շարք քայլեր: 1996թ. մարտի 12-ին ԼՂՀ ազգային խորհրդի նախագահ ընտրվեց Արթուր Թովմասյանը: Արցախի զորացմանը նպաստում է ազգային տուրքի կազմակերպումը, մանավանդ թելեմարաթոնը, որը շարունակվում է ամեն տարի: Խորհրդարանն ընդունել էր ԼՂՀ քաղաքացիության, պետական լեզվի, պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության սեփականաշնորհման մասին օրենքներ, առաջ էր գնում առևտրի, հասարակական սննդի, կենցաղային սպասարկման օբյեկտների սեփականաշնորհումը:

Հանրապետության խորհրդարանը ունի 6 հանձնաժողով, որոնք իրականացնում են հիմնական աշխատանքները[14]:

ԼՂՀ խորհրդարանը դարձել էր պրոֆեսիոնալ և մշտապես գործող: Ընդունվել էին իրավապահ և դատական մարմինների գործունեության, պատերազմական ժամանակի ռեժիմի պայմաններում ամբողջությամբ վերցրած հանրապետության կյանքը կանոնակարգող մի շարք կարևոր օրենսդրական ակտեր: Իրական բազա էր ստեղծվել ԼՂՀ-ում տնտեսական բարեփոխումների իրականացման համար: Քանի որ դեկտեմբերին լրանում էր ԼՂՀ

[13] *Նույն տեղում, 24.01.1996:*
[14] *«Հայաստանի Հանրապետություն», 10.02.1996:*

նախագահի լիազորությունների ժամկետը, ուստի հանրապետության Ազգային ժողովը մայիսի 22-ին ընդունեց օրենք «ԼՂՀ նախագահի ընտրությունների մասին», որն իրավական հիմք ստեղծեց նախագահական ընտրություններն անցկացնելու համար: Նոր օրենքով նախագահը պետք է ստանա իր ժողովրդի քվեն, այլ ոչ թե ընտրվի խորհրդարանական ճանապարհով: Նա պետք է ընտրվի հինգ տարի ժամկետով: Նախագահի թեկնածուների առաջադրման ժամկետը նախատեսվում է սկսել 45 օր առաջ, որովհետև այդքան օրերը բավական են, որ նախագահական պաշտոնի համար առաջադրված թեկնածուն հավաքի 1500 քաղաքացիների ստորագրություն՝ համամասնության սկզբունքով հանրապետության շրջանային կարգավիճակ ունեցող առնվազն չորս վարչատարածքային կառույցներից: Նոր օրենքով ընդունված է համարվում հանրապետության նախագահի այն թեկնածուն, որը ստանում է թեկնածուների օգտին տված ձայների կեսից ավելին[15]: Այդ օրենքը Ռ.Քոչարյանը ստորագրեց 1996թ. հունիսի 4-ին: Մեկ օր առաջ հունիսի 3-ին, ստորագրված օրենքով հիմնադրվեցին «Արցախի հերոս» կոչումը և «Արիության համար» մեդալը: Նույն թվականի օգոստոսի 29-ին տեղի ունեցած ԼՂՀ Աժ արտահերթ նիստը որոշեց ԼՂՀ նախագահի ընտրությունների օրը սահմանել նոյեմբերի 24-ին:

1996թ. սեպտեմբերի 2-ին նշվեց ԼՂՀ 5-րդ տարեդարձը: Այդ օրը Ռոբերտ Քոչարյանը հայտարարեց, թե Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կայացել է: Հանրապետությունում համաժողովրդական տոն էր: Բազմաթիվ շնորհավորական հեռագրեր ստացվեցին Հայաստանից և այլ տեղերից: Այդ օրը տեղի ունեցան մարզամշակութային միջոցառումներ՝ թենիսի բաց առաջնություն, վազքարշավ, ֆուտբոլի մրցախաղ: Տոնական մեծ համերգ էր Վերածննդի հրապարակում, որին մասնակցեցին Հայաստանի և Արցախի հանրահայտ կոլեկտիվներ:

Թե՛ Հայաստանում և թե՛ Արցախում նախապատրաստվում էին նախագահական ընտրությունների: Հայաստանում այն պետք է տեղի ունենար սեպտեմբերի 22-ին, իսկ Արցախում, ինչպես նշվեց, նոյեմբերի 24-ին:

Հայաստանում այն տեղի ունեցավ խիստ օրինախախտումներով: Եվ, չնայած դրան, սեպտեմբերի 25-ին նախագահ հայտարարվեց Լևոն Տեր-Պետրոսյանը: Այդ հանգամանքը խոցելի էր

[15] *«ԼՂ Հանրապետություն», 18.06.1996:*

Հայաստանի արտաքին քաղաքականության համար: Նոյեմբերի 24-ին ԼՂՀ-ում տեղի ունեցած նախագահական ընտրություններն անցան առանց խախտումների: Նախագահի երեք թեկնածուներից՝ Բորիս Առուշանյան, Հրանտ Մելքումյան և Ռոբերտ Քոչարյան, վերջինի օգտին քվեարկեց 60240 ընտրող, կամ քվեարկությանը մասնակցածների 88,91 տոկոսը: Ընտրություններին հետևում էին 9 պետություններից եկած 30-ից ավելի դիտորդներ: Նոյեմբերի 25-ին Լևոն Տեր-Պետրոսյանը հեռագրով շնորհավորեց Ռոբերտ Քոչարյանի փայլուն հաղթանակը: Դեկտեմբերի 23-ին տեղի ունեցած ԼՂՀ նախագահի պաշտոնի ստանձնման արարողության ժամանակ Ռոբերտ Քոչարյանն ասաց. «Եթե մենք լինենք միասնական, եթե Ղարաբաղի ժողովուրդը հստակ արտահայտի իր կամքը, եթե նույն կերպ հստակ և պարզ արտահայտեն իրենց կամքը հայ ժողովուրդը, Հայաստանի իշխանությունը և ամբողջ Սփյուռքը, մենք կկարողանանք հաղթահարել այն բոլոր ճնշումները, որոնք կարող են լինել ապագայում»[16]:

ԼՂՀ նորընտիր նախագահը 1997թ. Ամանորի առթիվ շնորհավորական խոսքում բարձր գնահատեց նախագահական ընտրությունների արդյունքները, ինչպես նաև շեշտեց հանրապետության տնտեսության արտաքին քաղաքականության մեջ կատարված դրական քայլերի և ռազմական շինարարության ասպարեզում ձեռք բերված նվաճումների մասին: Նա բնակչությանը կոչ արեց Նոր տարում ավելի բարձ խնդիրներ լուծել՝ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում, հաղորդակցության ծրագրի իրականացում, սոցիալական ոլորտի հիմնախնդիրներ և այլն[17]: Այդ ամենի հետ պետք է զարգացվի նաև պետական ապարատը և այն դարձվի ավելի ճկուն ու գործունյա: Ելնելով դեռևս «ոչ պատերազմ և ոչ խաղաղություն» սկզբունքից ԼՂՀ նախագահ Ռ.Քոչարյանը, 1997թ. հունվարի 25-ին ստորագրելով «Ռազմական դրություն ռեժիմի երկարացման մասին» հրամանագիր, այն երկարաձգեց մինչև 1998թ. հունվարի 1-ը:

1997թ. գարնանը իրադարձություններն ընթացան անսպասելի հունով: ՀՀ վարչապետ Արմեն Սարգսյանը հրաժարվեց այդ պաշտոնից, և Լ.Տեր-Պետրոսյանի հրամանով ՀՀ վարչապետ նշանակվեց Ռոբերտ Քոչարյանը: ԼՂՀ-ում նախագահի պարտականությունները դրվեցին վարչապետ Լեոնարդ Պետրոսյանի

[16] *«Հայաստանի Հանրապետություն», 24.12.1996:*
[17] *«ԼՂ Հանրապետություն», 01.01.1997:*

վրա: Այնուհետև քաղաքական պայքարի նոր խնդիր դարձավ հանրապետության նախագահի ընտրության հարցը: Նույն թվականի հուլիսի 6-7-ը Ստեփանակերտի Անկախության դահլիճում տեղի ունեցավ Արցախի քաղաքական ուժերի խորհրդակցություն՝ ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման միասնական դիրքորոշում մշակելու համար: Խորհրդակցությանը մասնակցեցին Հայաստանի քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Այն ընդունեց հետևյալ փաստաթուղթը. «Մենք՝ Հայաստանի քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներս, ս.թ. հուլիսի 6-7-ը մտավորականության ներկայացուցիչների և ԼՂՀ իշխանությունների մասնակցությամբ Ստեփանակերտում կայացած խորհրդակցությունում քննարկելով Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակը, հաստատում ենք հիմնահարցի վերաբերյալ հետևյալ սկզբունքները՝

– արցախահայության ինքնորոշման ապահովումը մնում է համայն հայության օրվա հրամայական,

– Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի միջազգային կարգավորումը պետք է ընթանա միջազգային իրավունքի բոլոր նորմերի հավասարակշռված կիրառմամբ և իրողությունների հաշվառմամբ՝ բացառելով դրսից պարտադրած որևէ լուծում,

– Ադրբեջանից անկախ լինելու արցախահայության արդեն իսկ իրագործված անսասան կամքը, որը վավերացվում է համաժողովրդական հանրաքվեի ՀՀ և ԼՂՀ օրենսդիր և գործադիր իշխանությունների որոշումներով, մասնավորապես ՀՀ ԳԽ 1992 թ. հուլիսի 8-ի որոշմամբ, ընդունվում է մեր կողմից որպես Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի համապարփակ կարգավորման հիմք:

Ելնելով նրանից, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորումը մտել է բեկումնային փուլ, ինչը յուրաքանչյուրից պահանջում է գործել սթափ ազգային համաձայնության և միասնության սկզբունքներին խիստ համապատասխան՝ մենք համայն հայությանը կոչ ենք անում.

– սատար կանգնել ԼՂՀ ամրապնդմանը՝ օգտագործելով բոլոր քաղաքական, դիվանագիտական և այլ լծակները,

– գործնականորեն օժանդակել ԼՂՀ տնտեսության վերականգնմանն ու զարգացմանը՝ դիտարկելով դա որպես ԼՂՀ պաշտպանության կարևորագույն երաշխիքներից մեկը:

Մենք նաև դիմում ենք ՀՀ և ԼՂՀ իշխանություններին, հայկական քաղաքական և հասարակական բոլոր կազմակերպություններին՝

– միջազգային և այլ ատյաններում շարունակել ԵԱՀԿ գործող նախագահի լիսաբոնյան հայտարարության դրույթների մերժման քաղաքական գիծը,

– համայն հայության ջանքերը նպատակաուղղել Լեռնային Ղարաբաղի հանրապետության և նրա ժողովրդի անվտանգության համակարգի հետագա կատարելագործմանը:

Կոչ ենք անում հայկական բոլոր կազմակերպություններին երկշաբաթյա ժամկետում միանալ սույն փաստաթղթին և հանդես գալ համաձայնության մասին հայտարարություններով:

Ստեփանակերտ, 7 հուլիսի, 1997թ.»:

Հայտարարությունը ստորագրել են 11 քաղաքական կուսակցություններ[18]:

ԼՂՀ նախագահի ընտրությունները նշանակված էր սեպտեմբերի 1-ին: Թեկնածուներ էին առաջադրվել Բորիս Առուշանյանը, Արթուր Թովմասյանը և Արկադի Ղուկասյանը: Ադրբեջանում նոր աղմուկ էր բարձրացել, և ազերի ընդդիմությունը նույնիսկ բողոք էր ուղարկել ՄԱԿ՝ Լեռնային Ղարաբաղում նախագահական ընտրությունները կանխելու կոչով[19]: Այդուհանդերձ նախագահական ընտրությունները տեղի ունեցան, և 90285 ընտրողից մասնակցեց 76245-ը, որոնցից 65937-ը կամ 89,3 տոկոսը ձայն տվեց Արկադի Ղուկասյանին: ԼՂՀ նախագահական ընտրություններին որպես դիտորդ մի շարք երկրներից ներկա էին 40 հոգի: Ֆրանսիացի Ռընե Ռուքին նշել է, որ «Մենք ճանաչում ենք Ղարաբաղը որպես պետություն», իսկ Հայաստանում Ռուսաստանի Դաշնության նախկին դեսպան Վլադիմիր Ստուպիշինը շեշտել է, որ «Ղարաբաղի ժողովուրդն ինքնորոշման իրավունք ունի»: ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը նույնիսկ որոշել էր հատուկ բանագնաց նշանակել Լեռնային Ղարաբաղում: Այդ անձը պետք է լիներ ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկյան համանախագահ Լին Պասկոն:

Արկադի Ղուկասյանը տարբեր առիթներով բազմիցս անդրադարձել է ԼՂՀ-ում քաղաքական ուժերի գործունեության գնահատմանը: Օրինակ՝ նա ընդգծել է, որ «Դաշնակցությունը Ղարա-

[18] *Տես* Բաղրյան Վ., *Ֆենոմեն, էջ 129-131:*
[19] *«Հայաստանի Հանրապետություն», 22.08.1997:*

բաղ եկած առաջին կուսակցությունն է: Արցախցիները զենքի կարիք ունեին, և նրանք զենք բերեցին: Երբ 1992 թ. կազմվեց ՊՊԿ-ն, մենք անմիջապես նկատեցինք, որ մեր զինակից եղբայրներից շատերը դաշնակցականներ էին: Այդ կուսակցության անդամությունը գաղտնի էր պահվում: Իսկ եթե լիներ ՀՀՇ, ապա դրա հետևանքով մենք բաժան-բաժան կլինեինք և կպարտվեինք: Մենք հրավիրեցինք Դաշնակցության ղեկավարության ժողով և հանձնարարեցինք սառեցնել կուսակցության անդամակցությունը: Բանակում այլևս դաշնակցականներ չպետք է լինեին: Թե՛ դաշնակցությունը և թե՛ ՀՀՇ-ն առանց դժվարության ընդունեցին դա: Զինվորը պետք է խիստ կարգավարժ լինի՝ անկախ այն բանից, թե որ կուսակցությանն է պատկանում: Այդ ժամանակ սահմանները փակվեցին, և բոլոր տղամարդիկ՝ մինչև 50 տարեկան, զինակոչի ենթարկվեցին: 14 տարեկան մի երեխա ոչնչացրեց հինգ թե վեց տանկ: Մենք կասեցրինք դաշնակցությանը, նրա գործունեությունը: Այժմ մեզ մոտ կա 2 գրանցված կուսակցություն՝ Դաշնակցություն և Համայնավարական կուսակցություն»[20]: ԼՂՀ-ի նախագահի նման պատասխանը պատահական չէր: Այդ ժամանակ հակասություններ կային ՀՀ և ԼՂՀ իշխանությունների միջև՝ կապված Արցախի հարցի կապակցությամբ: Դեռևս սեպտեմբերի 26-ին լրագրողների հետ ունեցած հանդիպման ժամանակ Լևոն Տեր-Պետրոսյանը, պատասխանելով «Բի-Բի-Սի»-ի թղթակցին չի ժխտել, որ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև կան տարաձայնություններ: Նա նշել է, որ Ղարաբաղի հարցի լուծման հինգ տարբերակ գոյություն ունի, որոնցից ՀՀ նախագահը հիմնական էր համարում փուլ առ փուլ և փաթեթային լուծումները: Շեշտեց, որ Հայաստանը կողմ է փուլ առ փուլ լուծմանը, չնայած Ղարաբաղը դա չի ընդունում[21]: Որպես դրա տրամաբանական շարունակություն՝ 1997թ. նոյեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետություն» թերթում հրապարակվեց Լևոն Տեր-Պետրոսյանի «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն: Լրջանալու պահը» վերտառությամբ հոդվածը: Ըստ էության, ՀՀ նախագահը ցանկություն ուներ իր այդ հոդվածով բանավեճ սկսել հայ ժողովրդի առջև ծառացած ամենակենսական հարցի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հնարավոր ուղիների շուրջ: Քանի որ պատերազմի բացառումը հույժ կարևոր

[20] *Նույն տեղում, 28.10.1997:*
[21] *Նույն տեղում, 27.09.1997:*

խնդիր է, ուստի Ղարաբաղի հարցը պետք է լուծվի միայն ու միայն խաղաղ բանակցությունների միջոցով: Եվ Ղարաբաղի հարցի լուծման միակ տարբերակը փոխզիջումն է: Ղարաբաղը շահել է ոչ թե պատերազմում, այլ ճակատամարտը, հետևապես պետք է գնա փոխզիջման: Ակնհայտ է, որ Ղարաբաղի անկախության հարցում մենք չունենք դաշնակիցներ, և առկա կնճիռը մեր փոխարեն ոչ ոք չի լուծելու: Այդ մենք պետք է լուծենք և լուծել ենք մեր ուժերի ներածին չափով:

Ահա սա է Լ.Տեր-Պետրոսյանի հոդվածի հիմնական գաղափարը:

Անշուշտ, Լ.Տեր-Պետրոսյանի հոդվածն ունեցավ բավականին արձագանքներ, և պիտի ասել, ճնշող մեծամասնությունը մերժեց նրա առաջ քաշած դրույթներից շատերը: Արկադի Ղուկասյանը նոյեմբերի 13-ին լրագրողներին հայտարարեց, որ ինքը համաձայն չէ Հայաստանի ներկայիս դիրքորոշմանն այն առումով, քանի որ քննարկվող տարբերակը տանում է ավելի դեպի պատերազմ: Պետք է ճիշտ ընկալել ու հասկանալ փոխզիջումը և պաշտպանել Ղարաբաղի դիրքորոշումը: Մեր անկախությունը կարող է երաշխավորել միայն ԼՂՀ-ի ճանաչումը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ: Ադրբեջանի մաս կազմելով՝ անհնարին է դե ֆակտո անկախ լինել, քանի որ այդ դեպքում խնդիրը կդրվի որպես Ադրբեջանի ներքին գործ[22]: Արցախի «Ժողովրդական ճակատ» կազմակերպության վարչությունը, հայության բոլոր քաղաքական կազմակերպություններին հղած դիմումում քննադատելով բոլոր անկումային տրամադրությունները, բարձր գնահատեց ազգային-ազատագրական շարժումը և կոչ արեց բոլոր քաղաքական ուժերին՝ միավորվել մի ընդհանուր խնդրի շուրջ[23]: «Ազատություն» ռադիոկայանը 1998թ. հունվարի 21-ին հաղորդել է, թե ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Լևոն Զուրաբյանը հայտարարել է, որ Ղարաբաղն իրավագոր է պաշտպանելու սեփական դիրքորոշումը, բայց իրավունք չունի միջամտել Հայաստանի ներքին գործերին: ԼՂՀ մամուլի քարտուղար Ժ.Կիրկորովան, հանդես գալով հայտարարությամբ, ժխտեց Լ.Զուրաբյանի ասածը՝ գտնելով, որ ԼՂՀ ղեկավարությունը պարտավոր է պաշտպանել սեփական ժողովրդի դիրքորոշումը, բացահայտել հիմնախնդրի լուծումն արգելակող

[22] «ԼՂ Հանրապետություն», 14.11.1997:
[23] Նույն տեղում, 24.01.1998:

պատճառները և գնահատական տալ հակամարտության կարգավորումը բարդացնող գործընթացներին[24]:

1997թ. նոյեմբերից հետո տեղի ունեցան իրադարձություններ, որոնք հանգեցրին անկախատեսելի հետևանքների: Մինչ այդ՝ 1997թ. նոյեմբերի 23-ին անցկացված լրացուցիչ ընտրությունների հետևանքով ԼՂՀ ԱԽ պատգամավոր էր ընտրվել Օլեգ Եսայանը, որը դեկտեմբերի 2-ին ընտրվեց Ազգային խորհրդի նախագահ: Այդ օրերին ԼՂՀ արտաքին գործերի նախարար նշանակվեց Նաիրա Մելքումյանը, իսկ 1998թ. փետրվարի 2-ին ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը հանդես եկավ պաշտոնից հրաժարվելու հայտարարությամբ: Արցախի հարցի արծարծումը ընդամենը պատրվակ էր: Պարզապես խաղաղության կուսակցությունը, ինչպես իրեն հորջորջել էր ՀՀՇ-ն, պարտություն էր կրել[25]: Նախագահի պարտականությունների ժամանակավոր կատարումն իր վրա վերցրեց վարչապետ Ռոբերտ Քոչարյանը: Նա նախագահ ընտրվեց մարտի 30-ին:

1998թ. փետրվարի 20-ին լրանում էր արցախահայության ազգային-ազատագրական պայքարի 10-րդ տարեդարձը: ՀՀ վարչապետ Ռ.Քոչարյանը արցախահայությանն ուղղած իր ուղերձում նշել է, որ այս բոլոր տարիները եկան փաստելու, որ արցախահայությունը վճռական է իր պայքարում, և ողջ ժողովրդի կամքն է ապրել ազատ և լինել իր ճակատագրի տերը: Այս տասը տարիների ընթացքում Հայաստանը, ինչպես և Սփյուռքը, միշտ զորավիգ են եղել արցախահայությանը, և մեր միասնության արդյունքը մեր հաղթանակներն են[26]: Փետրվարի 20-ին նախագահ Արկադի Ղուկասյանը, ուղերձով դիմելով ԼՂՀ բնակչությանը, նշել է, որ ազատության ու անկախության, սեփական ճակատագրի տնօրինման և արժանապատիվ կյանքի իրավունքը արցախցիները նվաճել են սեփական արյամբ ու քրտինքով, ուժերի գերագույն լարումով: Իր ինքնորոշման իրավունքը հարկադրաբար մարտի դաշտում կռած ու ինքնիշխան պետականության հիմքերը դրած արցախահայությունը պատրաստ է մինչև վերջ պաշտպանելու ձեռք բերած նվաճումները և այլևս չի հանդուրժի օտար լուծ: Նա հույս ներշնչեց արցախահայությանը, որ այսուհետև ևս մենք կհաղթահարենք բոլոր դժվարությունները

[24] Նույն տեղում:
[25] «Հայաստանի Հանրապետություն», 04.02.1998:
[26] Նույն տեղում, 19.02.1998:

ները[27]: Փետրվարի 20-ի առավոտյան հրավիրված ԼՂՀ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում ելույթ ունենալով՝ Արկադի Ղուկասյանը նշեց, որ «այսօր կարելի է վստահաբար ասել, որ տասնամյա հերոսական պայքարի մասին ոսկե տառերով կգրվի անկախության և ազատության համար հայ ժողովրդի մղած դարավոր պայքարի տարեգրությունում»[28]: ԼՂՀ Ազգային ժողովը ընդունեց հայտարարություն, որտեղ բարձր գնահատվեցին անցած տասը տարիներին ողջ հայ ժողովրդի դրսևորած արիությունն ու ոգու կայունությունը, կոչ արեց համախմբվել և իրականացնել հայ ժողովրդի առջև դրված ճակատագրական խնդիրները[29]:

Սումգայիթի ողբերգական տասնամյակի առթիվ Արցախի ժողովրդական ճակատը, ԼՂՀ մայրության կոմիտեն, «Մունք» մտավորականների ակումբը, ժողովուրդների իրավունքների ու ազատագրման ԼՂ Ազգային լիգան և Արցախի երիտասարդական միությունը, 1998-ի փետրվարի 27-ին հանդես գալով հայտարարությամբ, մերկացրին 10 տարի առաջ ադրբեջանական Սումգայիթ քաղաքում կազմակերպված ահավոր ոճրագործությունը:

Հայտարարությունը ստորագրող կազմակերպությունները աշխարհի բոլոր կազմակերպություններին կոչ արեցին նպաստել Սումգայիթում հայերի ցեղասպանության պաշտոնական դատապարտմանը[30]:

ԼՂՀ կառավարությունը փոփոխությունների խիստ կարիք ուներ: Մայիսի 27-ին ԼՂՀ խորհրդարանի ազգային անվտանգության և պետական շինարարության մշտական հանձնաժողովի նախագահ Մուրադ Պետրոսյանը, հանդես գալով հայտարարեց, թե ԼՂՀ կառավարությունից բողոքներ և դժգոհություններ շատ կան: Նա գնահատելով վարչապետ Լեոնարդ Պետրոսյանի ծառայությունը, այնուամենայնիվ առաջարկեց նրան փոխարինել մեկ ուրիշով[31]: Մի քանի օր անց՝ հունիսի 3-ին, նախագահի մամուլի ասուլիսում Արկադի Ղուկասյանը, անդրադառնալով կառավարության ճգնաժամի հարցին, հայտարարեց, թե վարչապետը դիմում է ներկայացրել պաշտոնից հրաժարվելու վերաբերյալ

[27] «ԼՂ Հանրապետություն», 20.02.1998:
[28] Նույն տեղում, 24.02.1998:
[29] Նույն տեղում:
[30] Նույն տեղում, 28.02.1998:
[31] «Հայաստանի Հանրապետություն», 28.05.1998:

և փորձեց վարչապետի պաշտոնը վերցնել իր վրա[32]: Սակայն ԼՂՀ խորհրդարանը նախագահի առաջարկությունը մերժեց: Հունիսի 11-ին Ստեփանակերտում տեղի ունեցած հանրահավաքը պահանջեց հանրապետության վարչապետ նշանակել Սամվել Բաբայանին: Հանրահավաքի մասնակիցները այդ մասին նույնիսկ գրավոր պահանջ ներկայացրին նախագահ Ա.Ղուկասյանին: Հունիսի 13-ին պաշտպանության նախարար Սամվել Բաբայանը անցկացրեց մամլո ասուլիս, որտեղ նշեց, որ արցախցիները բազում ավելի ծանր դժվարություններ են հաղթահարել, կհաղթահարեն այս դժվարությունը ևս: Նա ընդունելի համարեց կառավարության կառուցվածքային փոփոխությունը; Նպատակահարմար գտավ ստեղծել փոխվարչապետության ընդլայնված ինստիտուտ[33]: Սակայն ԼՂՀ վարչապետ նշանակվեց Ժիրայր Պողոսյանը, որը մինչ այդ եղել է վարչապետի տեղակալ:

ԼՂՀ-ում քաղաքական կարևոր իրադարձություն էր տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացումը, որը տեղի ունեցավ 1998-ի սեպտեմբերի 27-ին: Նախկինում գյուղապետերի ինստիտուտ մտցվելուց հետո գյուղապետերի նշանակման փորձն իրեն չարդարացրեց, և այդ ուղղությամբ հանրապետությունում թույլ տրվել բավականին կամայականություններ: Տեղական մարմինների ընտրությունների անցկացումը պետք է կատարվի կանոնադրության ոգուն համապատասխան, և պետությունը պետք է լինի արդար ընտրությունների երաշխավորը: Ինքնակառավարման մարմինների այդ առաջին ընտրություններին պետք է նախապատրաստվեին ամենայն պատասխանատվությամբ: Հանրապետության բնակչությունը դեռևս լավ չէր պատկերացնում, թե ինչպիսի փոփոխություններ կլինեն, երբ իշխանության ղեկն անցնի իրենց կողմից ընտրված թեկնածուի ձեռքը: Մինչդեռ, ըստ օրենքի, «տեղական ինքնակառավարումը բնակչության բարեկեցության, բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ գործող տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքային նշանակության հարցերը լուծելու իրավունքն ու կարողությունն է»: Այդ նշանակում է, որ նրանք զբաղվելու են համայնքի սոցիալ-կենցաղային պայմանների բարելավման գործով, ունենալու են սեփական բյուջե, հավաքելու են պետության կողմից սահման-

[32] Նույն տեղում, 04.06.1998:
[33] «ԼՂ Հանրապետություն», 14.06.1998:

ված հարկերը, օրենքի շրջանակներում իրենք են սահմանելու որոշ հարկեր ու տուրքեր: Համայնքն իր բյուջեն օգտագործելու է ավագանու խորհրդի կողմից մշակված համայնքի զարգացման ծրագրի համաձայն: Ավագանու խորհուրդը աշխատելու է հասարակական հիմունքներով, խորհուրդը հավաքվելու է ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ:

Նախատեսված էր հանրապետությունում ընտրել համայնքների ավելի քան 200 ղեկավարներ և ավագանու խորհրդի շուրջ 1500 անդամներ[34]: Համաձայն ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած տվյալների՝ 1998թ. սեպտեմբերի 27-ին և հոկտեմբերի 11-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքքշներով հանրապետությունում համայնքների ղեկավարներ էին ընտրվել 176 հոգի, որոնցից յոթը կանայք էին[35]:

ԼՂՀ-ում հողի սեփականաշնորհման հարցը դարձել էր քաղաքական հարց: Եվ ահա 1998թ. հունիսի 7-ին տեղի ունեցած կառավարության նիստում հաստատվեցին հողի սեփականաշնորհման կենտրոնական պետական, շրջանային ու տեղական հանձնաժողովների կանոնադրությունը և կենտրոնական պետական հանձնաժողովի կազմը: Փաստորեն արդեն սկսվել էր հողի սեփականաշնորհման գործընթացը: Տեղի էր ունենում գույքագրում, որն ավարտվելուց հետո միայն կսահմաներ մեկ շնչին որպես սեփականություն տրամադրվող հողաբաժնի չափը: Օրենքը նախատեսում է հողը յուրաքանչյուրին տրամադրել հավասարաչափ: Հետո հողի վաճառքը կկատարվի ազատ ձևավորվող գներով: Հողի մի մասը թողնվում է որպես պահուստային ֆոնդ: Ցանկացած քաղաքացի կարող է պահուստային ֆոնդից հող վարձակալել և օգտագործել[36]:

1998թ. հոկտեմբերի 12-ից ԼՂՀ-ում սկսվեց հողի սեփականաշնորհումը, որը մինչև 1999թ. փետրվարն արդեն ընդգրկել էր հանրապետության ցանքսերի և այգեգործական տարածքների շուրջ 85 տոկոսը: Գյուղացիների յուրաքանչյուր շնչի հատկացվում էր 6000 քառ. մ հողատարածք: Այդ շրջանում անասնագլխաքանակը չէր սեփականաշնորհվում: Հատուկ ուշադրություն էր դարձվում խաղողի այգիների սեփականաշնորհմանը: Հանրա-

[34] *«Ազատ Արցախ», 08.08.1998:*
[35] *Նույն տեղում, 22.10.1998:*
[36] *«ԼՂ Հանրապետություն», 14.06.1998:*

պետության կառավարությունը բնակչությանը տեղյակ պահեց, որ կգորակցի բոլոր նրանց, ովքեր հանդես կգան խաղողագործությունը զարգացնելու նախաձեռնությամբ: Պետությունը վարկեր էր նախատեսել խաղողագործության, ծխախոտագործության, այգեգործության, անասնապահության ոլորտներում զբաղված գործարարների համար: Նախատեսվում էր հոգալ գյուղտեխնիկայի մասին և ձեռք բերել վաճառահանման շուկա: Նախատեսվում էր օգտագործել արտասահմանյան և տեղական ներդրումները[37]:

1999թ. ամռանը ԼՂՀ-ում կրկին առաջ եկավ քաղաքական և տնտեսական ճգնաժամ: Հանրապետության նախագահի հրամանով հունիսի 24-ից պաշտոնից ազատվել էր Ժիրայր Պողոսյանը: Հունիսի 29-ին Աժ նիստերի դահլիճում խորհրդարանականների, կառավարության անդամների, լրագրողների և հասարակության ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպման ժամանակ նախագահ Արկադի Ղոկասյանը, հանդես գալով ճառով, այն գրեթե լրիվ ուղղել էր նախկին վարչապետ Ժիրայր Պողոսյանի վարած տնտեսական քաղաքականության դեմ, որը տանում էր հանրապետության տնտեսության նահանջ և քայքայում: Նա առանձնապես լուջ թերություններ էր թույլ տվել հարկային քաղաքականության մեջ, տնտեսության կազմակերպման և զարգացման, առողջապահության բնագավառում, սոցիալական ուղղվածության այլ ոլորտներում: Այդ ամենը չէր նպաստում բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանն ու ամրապնդմանը բնակչության շրջանում: Փաստորեն կառավարության կողմից քաջալերվում էր թալանը, որը ժողովրդի լայն զանգվածների շրջանում առաջ էր բերել խոր զայրույթ: Բանը հասել էր նրան, որ Ղարաբաղի պայմաններում ավանդապահ գյուղացուց սեփական յուրաքանչյուր թթենու համար չնախատեսված հարկ էր գանձվում: Արցախում սկսել էին այլևս չհավատալ իշխանությանը: Պարզապես կառավարությունը վարում էր ոչ ժողովրդական քաղաքականություն:

Հուլիսի 10-ին ԼՂՀ ժամանելով և Աժ նիստերի դահլիճում հանդիպում ունենալով ԼՂՀ Աժ պատգամավորների, կառավարության անդամների, ՊԲ բարձրագույն սպայական կազմի և հասարակության ներկայացուցիչների հետ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը մտահոգություն արտահայտեց ԼՂՀ-ում առաջացած անառողջ քաղաքական մթնոլորտի առթիվ, մի բան, որը կարող

[37] *Նույն տեղում, 16.02.1999:*

էր բացասաբար անդրադառնալ հանրապետության միջազգային հեղինակության վրա: Նա հույս հայտնեց, որ պետական ու հասարակական կյանքի հետևողական ժողովրդավարացման անհրաժեշտությունը Լեռնային Ղարաբաղում անպայման պետք է ընթանա Հայաստանում տեղի ունեցող այդ գործընթացի զարգացումներին համահունչ[38]:

Հուլիսի 30-ին նոր վարչապետ նշանակվեց Անուշավան Դանիելյանը: Նա «Ազատ Արցախ» թերթին տված հարցազրույցում բացահայտ նշեց, որ «Պատերազմում հաղթած ղարաբաղցին իրեն այսքան անօգնական չի զգացել»: Նա բացատրեց, որ կառավարության մի շարք որոշումներ արհեստական հակասություններ են առաջացնում տնտեսական միևնույն դաշտը հանդիսացող Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ-ի միջև: Որոշումների մի ամբողջ շարք (մանավանդ հարկային քաղաքականության ոլորտում) խոչընդոտում է երկրի տնտեսության ազատ զարգացմանը: Պետք է դրանք վերացվեն: Միայն հանրօգուտ աշխատանքով և համատեղ ջանքերով է հնարավոր երկիրը դուրս բերել տնտեսական ճգնաժամից:

Այնուհետև տեղի ունեցան հանդիպումներ և տասնյակ խորհրդակցություններ, որտեղ բնակչությանը բացատրվում էր ստեղծված տնտեսական և քաղաքական ճգնաժամից դուրս գալու հնարավորությունները: Օգոստոսի 13-ին կայացած կառավարության նիստում նախագահ Արկադի Ղուկասյանը հայտարարեց, թե մենք կարող ենք ձևավորել քաղաքացիական հասարակություն, մանավանդ որ հենց այդ է մեզանից սպասում աշխարհը, և հենց դրանով նաև կորոշվի միջազգային հանրության վերաբերմունքը մեր ժողովրդի նվիրական իղձերի և նպատակների նկատմամբ: Եթե մենք կարողացել ենք հաղթանակ շահել պատերազմում, ապա, հուսով եմ, կարող ենք հաղթել նաև խաղաղության պայմաններում[39]:

1999-ի հոկտեմբերի 27-ին ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցավ աննախադեպ ոճրագործություն, և ահաբեկչությանը զոհ գնացին ԱԺ նախագահ Կարեն Դեմիրճյանը, վարչապետ Վազգեն Սարգսյանը, ԱԺ փոխնախագահ Յուրի Բախշյանը, օպերատիվ հարցերի նախարար Լեոնարդ Պետրոսյանը, ԱԺ պատգամավոր, «Հայաստան» թերթի նախկին գլխավոր խմբագիր,

[38] *Նույն տեղում, 13.07.1999:*
[39] *Նույն տեղում, 14.08.1999:*

«Միասնություն» խմբակցության անդամ Հենրիկ Աբրահամյանը, ակադեմիկոս Միքայել Քոթանյանը, ԱԺ պատգամավորներ Արմենակ Արմենակյանը և Ռուբեն Միրոյանը: Հայ ժողովուրդը ատելությամբ և ցասումով ընդունեց այդ ծանր ողբերգությունը: Լարվածությունը չէր թուլանում նաև Լեռնային Ղարաբաղում: 1999թ. դեկտեմբերի 14-ին կառավարական շենքի մոտ վարչապետ Անուշավան Դանիելյանի դեմ կատարվեց հանցագործություն: Դեկտեմբերի 17-ին պաշտոնից ազատվեց ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատար Սամվել Բաբայանը: ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, դիմելով ժողովրդին, դատապարտեց այդ հակաժողովրդական, հակակառավարական գործողությունները[40]:

2000թ. հունվար-փետրվարին հանրապետությունում քաղաքական վիճակը շարունակում էր մնալ լարված: 1999թ. դեկտեմբերին ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, դիմելով արցախահայությանը, նշել է, որ այն բանից հետո, երբ վճռական գնահատական տրվեց ԼՂՀ նախկին վարչապետ Ժ.Պողոսյանի վարած վնասակար, դեպի փակուղի տանող սոցիալ-տնտեսական քաղաքականությանը, ընդդիմադիր ուժերը փորձեր արեցին կանխել մեր որդեգրած գործընթացը: Արցախի իշխանությունների նպատակն էր օրինականություն և արդարություն վերահաստատել հանրապետությունում, օրենքի գերակայությունը պարտադիր համարել յուրաքանչյուր քաղաքացու համար՝ անկախ նրա գրաված հասարակական-քաղաքական դիրքից: Սակայն ապակայունացնող ուժերը դիմեցին սպառնալիքի և բիրտ գործողությունների[41]:

Այդ ժամանակ Արցախի քաղաքական դաշտը բաժանված էր երկու մասի՝ նախագահ Արկադի Ղուկասյանի և ԼՂՀ պաշտպանության բանակի նախկին հրամանատար Սամվել Բաբայանի խմբակիցների միջև: Ակնհայտ է, որ Սամվել Բաբայանը երբ զինվորական էր, հայտնի դեմք էր, ռազմական խոշոր գործիչ, որը մեծ ծառայություններ է ունեցել պատերազմի տարիներին: Այն ծանր օրերին, երբ արցախցիների հաջողությունները մեկ տոկոս էլ չկային, նա և Ռոբերտ Քոչարյանը իրենց մեջ ուժ գտան ու արդեն անհույս թվացող ժողովրդական պայքարը ղեկավարեցին: Նրանք իրենց շատ վճռական պահեցին ու կռեցին հաղթանակը:

[40] *«Հայաստանի Հանրապետություն», 22.12.1999:*
[41] *«10-րդ նահանգ», N7, դեկտեմբեր, 1999:*

Սակայն ինչ մնում էր ներքին քաղաքականության մեջ Սամվել Բաբայանի դերին, ապա դա պետք է գնահատել ոչ օրինակելի[42]:

2000թ. հունվարի դրությամբ ԼՂՀ-ում գործում էին Սոցիալ-դեմոկրատական (Արկադի Սողոմոնյան), «Ազատություն» (Գրիգոր Աֆանասյան), Կոմունիստական (Վալերի Աթաջանյան), Հայ հեղափոխական դաշնակցություն, Քրիստոնեա-դեմոկրատական (Ալբերտ Ղազարյան), Ազգային-ժողովրդական (Սուրադ Պետրոսյան) քաղաքական կուսակցությունները, «Երկրապահ» միությունը, «Արցախի պատերազմի վետերանների միությունը» և այլն: Ըստ էության՝ ԼՂՀ-ում պետականորեն գրանցված և գործող քաղաքական կազմակերպություններից և ոչ մեկը ակտիվորեն չէր մասնակցում հանրապետության ընդհանրական կյանքին: Կուսակցությունները ազդեցություն չունեին իրականացվող արտաքին և ներքին քաղաքականության մշակման ու իրագործման վրա: Պարզապես երկրում պակասում էր ձևավորվող քաղաքական կուլտուրան, իսկ իշխանությունները չէին հանդուրժում այլախոհությունն ու այլակարծությունը: Հաճախ անհասկանալի էին և ոչ հստակ քաղաքական կուսակցությունների առաջնորդների հայտարարությունները: Ինքը՝ ԼՂՀ Ազգային ժողովը, իրեն հեռու էր պահում քաղաքականությունից, և դա խորհրդարանի ղեկավարության կողմից գնահատվում էր որպես դրական քայլ: Բանը հասել էր նրան, որ ոմանք նույնիսկ պահանջում էին փակել այս կամ այն կազմակերպությունը[43]: Բանակի նախկին հրամանատար Սամվել Բաբայանը բնակչությանը կոչ էր անում անդամակցել «Արցախի պատերազմի վետարանների միությանը» և «Երկրապահ» հասարակական կազմակերպությանը: Առաջինի նախաձեռնող խմբի անդամներ Վիտալի Բալասանյանը, Արշավիր Ղալումյանը և Ռազմիկ Պետրոսյանը, 2000թ. փետրվարի 1-ին հանդես գալով հայտարարությամբ, նշեցին, որ իրենց կազմակերպությունը, ի հակակշիռ «Երկրապահի», պառակտման առիթ չի տվել, պարզապես «Երկրապահը» վատ է կատարել իր անելիքները[44]:

ԼՂՀ-ում քաղաքական վիճակը բարդանալու կապակցությամբ 2000թ. հունվարի 13-ին հանրապետության կառավարությունը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ նշված է, որ

[42] *Նույն տեղում, N1,. հունվար, 2000:*
[43] *Նույն տեղում, N2, հունվար, 2000:*
[44] *«Ազատ Արցախ», 03.02.2000:*

վերջին ժամանակներում մի խումբ ուժեր փորձում են կրկին սրել հանրապետության ներքաղաքական իրադրությունը: Ոմանք մեկնում են հանրապետության շրջաններ և հակակառավարական ու հակապետական քարոզչությամբ զբաղվում: Ապա նշված է, որ «Երկրապահ» կազմակերպության ղեկավարները դիմում են ահաբեկչության և տարբեր սադրանքների: Նրանք ձգտում էին զավթել իշխանությունը, վերականգնել կորցրած դիրքերը, պետական բյուջեն օգտագործել անձնական կարիքների համար, բացահայտ թալանել սեփական ժողովրդին: Նրանք նաև փորձում էին նսեմացնել երկրապահի վեհ անունը, պղծում զոհված ազատամարտիկների սուրբ հիշատակը: ԼՂՀ կառավարությունը վստահեցնում էր հանրապետության աշխատավորներին, որ ամեն ինչ կանի երկրում ներքաղաքական իրավիճակը սրող ընդդիմադիր ուժերի սադրանքները կասեցնելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու[45]:

ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, պատասխանելով «Հայոց աշխարհ» թերթի թղթակցին, նշել է, որ Լեռնային Ղարաբաղում լարվածությունը ստեղծվել է այդ վերջին 1-1,5 տարվա ընթացքում, երբ ԼՂՀ պաշտպանության բանակի նախկին հրամանատարը փորձել է զբաղվել տնտեսությամբ, միջամտել կառավարության գործունեությանը, թելադրել իր պայմանները[46]:

2000թ. փետրվարի 25-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ԼՂՀ «Արցախի պատերազմի վետերանների միության» հասարակական կազմակերպության հիմնադիր համագումարը: Այն ընտրեց վարչություն, և միության նախագահ ընտրվեց հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ Վիտալի Բալասանյանը: Արցախի պատերազմի վետերանների միության հիմնադիր համագումարը որոշեց.

«1. Նեցուկ կանգնել ԼՂՀ իշխանություններին օրենքի գերակայության ու սոցիալական արդարության վերականգնման կուրսի իրականացման գործում:

2. Համագործակցել ԼՂՀ-ում գրանցված հասարակական կազմակերպությունների և կուսակցությունների հետ:

3. Սերտ կապ հաստատել ՀՀ «Երկրապահ» կամավորական միության հետ:

[45] *«Հայաստանի Հանրապետություն», 14.01.2000:*
[46] *«Ազատ Արցախ», 18.01.2000:*

4. Պարտավորեցնել ԱՊՎՄ հանրապետական վարչությանը՝ միջոցներ որոնել կազմակերպության սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման համար:

5. Օժանդակել ԼՂՀ զինված ուժերի զորացմանը և դեռահասների ու երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

6. Հանձնարարել ԱՊՎՄ հանրապետական վարչությանը՝ երեք ամսվա ընթացքում լուծել միության պաշտոնաթերթի հիմնադրման և լույսընծայման հարցը»[47]:

2000թ. մարտի 22-ին մահափորձ կատարվեց ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի դեմ: Այդ հանցագործ արարքը միանշանակ դատապարտվեց բնակչության կողմից: ԼՂՀ հասարակական և քաղաքական կազմակերպությունները, հանդես գալով հայտարարությամբ, խստորեն քննադատության ենթարկեցին ոչ միայն Արցախի որոշ ուժերի, այլև Հայաստանի մի շարք քաղաքական գործիչների և լրատվամիջոցների, որոնք իրենց հայտարարություններով ու վարկածներով փորձում էին կանխագուշակել հանցագործության հեղինակներին և քաղաքական ճնշում գործադրել հետաքննության վրա: Հայտարարության հեղինակները ժխտում էին Հայաստանի խորհրդարանում հոկտեմբերի 27-ին տեղի ունեցած ողբերգության հետաքննության մեթոդների տարածումը Արցախում[48]: Մամուլի բազմաթիվ նյութերի և դատավճիռը պնդում են, որ այդ ահաբեկչությունը կազմակերպել էր Սամվել Բաբայանը: Ակնհայտ է, որ այդ ժամանակ հանրապետությունում տիրում էր վախի, նսեմանալու, ճնշվածության զգացումը: Դրանից խուսափելու համար հարյուրավոր ազատամարտիկներ և այլ քաղաքացիներ Արցախից հեռացել էին Հայաստան և Ռուսաստան: ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանը, Հայաստանի ազգային հեռուստատեսությամբ տալով բացառիկ հարցազրույց, նշել է, որ Արկադի Ղուկասյանը շատ ակտիվ ջանքեր էր գործադրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օրինականություն հաստատելու համար, որը, սակայն, հանդիպեց դիմադրության և առաջ բերեց ահաբեկչության այդ գործողությունը[49]:

2000թ. մարտի 29-ին նախագահ Արկադի Ղուկասյանը ստորագրեց ԼՂՀ մարտի 15-ին խորհրդարանի ընդունած օրենքը

[47] *Նույն տեղում, 26.02.2000:*
[48] *Նույն տեղում, 23.03.2000:*
[49] *«Հայաստանի Հանրապետություն», 21.04.2000:*

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների մասին»: Պատգամավորների թիվը մնում էր 33-ը: Ազգային ժողովի ընտրությունները իրականացվում են մեծամասնական ընտրական համակարգի հիման վրա: Պատգամավոր կարող են ընտրվել 25 տարին լրացած ԼՂՀ այն քաղաքացիները, ովքեր մինչև ընտրությունների օրը առնվազն երեք տարի մշտապես բնակվել են ԼՂՀ-ում:

Ազգային ժողովի ընտրությունների նախօրյակին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նոր նախագահ էր ընտրվել Սերգեյ Դավթյանը: Ընտրությունների նախօրյակին ակտիվացել էին քաղաքական ուժերը: Ապրիլի 11-ին Ստեփանակերտի մշակույթի տանը տեղի ունեցած «Ժողովրդական Արցախ» միության քաղաքական կառույցի անդրանիկ կոնֆերանսին մասնակցեցին 181 պատվիրակներ: Քաղաքային կառույցի նախագահ ընտրվեց Վլադիմիր Թովմասյանը: Հենց այդ օրերին որոշվեց ԼՂՀ ԱԺ ընտրություններն անցկացնել 2000թ. հունիսի 18-ին: Ապրիլի 15-ին տեղի ունեցած ԺԱՄ-ի հիմնադիր համագումարը կարգախոս ընդունեց «Արդարություն», «Օրինականություն» և «Ժողովրդավարություն» սկզբունքները, որոնք պարտադիր պայմաններ են արցախահայության ազգային-ազատագրական պայքարի վերջնական նպատակին հասնելու ճանապարհին[50]:

Արցախում անցկացվելիք Ազգային ժողովի ընտրությունների կապակցությամբ Ադրբեջանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, հանդես գալով հայտարարությամբ, բողոք արտահայտեց դրա դեմ[51]: ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Օլեգ Եսայանը այն համարեց անօրեն, քանի որ Լեռնային Ղարաբաղը 12 տարի ապրում էր Ադրբեջանից անկախ կյանքով, և որ օրենսդրական մարմնի այդ ընտրություններն արդեն թվով երկրորդն էին հանրապետությունում: Չէ՞ որ ԼՂՀ-ն՝ որպես հակամարտության լիարժեք կողմ, պետք է ունենա կառավարման օրինական մարմիններ: Ադրբեջանի ԿԸՀ-ի հայտարարության մեջ ասվածը, թե իբր Լեռնային Ղարաբաղում առաջիկա ընտրություններն ուղղված են Ադրբեջանի տարածքային ամբողջականության դեմ, Օլեգ Եսայանը շեշտեց, որ Լեռնային Ղարաբաղը

[50] *Նույն տեղում, 18.04.2000:*
[51] *"Бакинский рабочий", 18.04.2000.*

երբեք Ադրբեջանի տարածք չի եղել, այլ խորհրդային ժամանակներում միայն ընդգրկված էր նրա կազմում[52]:

ԼՂՀ Ազգային ժողովի ընտրությունները տեղի ունեցան առանց որևէ էական խախտումների: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաղորդագրությունից իմանում ենք, որ պատգամավոր էին ընտրվել 33 հոգի: Ընտրություններին հետևող միջազգային դիտորդներն հայտարարեցին, որ գոհ են ընդհանուր արդյունքներից, որևէ բողոք-դիմում թեկնածուներից դատարան չի մտել[53]:

ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը «Հայաստանի Հանրապետություն» թերթին տված հարցազրույցում նշել է, որ Արցախում Ազգային խորհրդի ընտրություններն անցել են արդար և ժողովրդավարության հիմունքներին համապատասխան: Նոր Ազգային ժողովն անելու շատ բան ունի: Մի շարք օրենքների բացակայության պատճառով հանրապետությունը կանգնած է դժվարությունների առաջ:

Քանի որ ԼՂՀ-ն նորանկախ պետություն է, այն ձևավորում է կառավարման նոր համակարգեր: Նախագահը նաև նշեց, որ հրադադարից հետո ընկած ժամանակաշրջանում Արցախի հասարակական կյանքում տեղի են ունեցել այնպիսի փոփոխություններ, որոնք գնալով ձեռք էին բերում վտանգավոր ծավալներ: «Երկիրը գնում էր,– ասում է նախագահը,– դեպի տոտալիտարիզմ, ահ ու սարսափի մթնոլորտը բառոյապես կազմալուծում էր հասարակությանը: Կլանային շահերը հյուծում էին տնտեսական ու սոցիալական ոլորտները: Օրենքի գերակայությունը, օրենքի առաջ բոլորիս հավասարապես պատասխանատվությունը հռչակվեց որպես հասարակական կյանքի նորմ: Հանրապետության իրավապահ մարմինները թերացել են իրենց պարտականությունների մեջ: Ոչ մի քաղաքական ուժ, ոչ մի իշխանական թև, ոչ մի անհատ չպետք է շրջանցի օրենքն ու օրինականությունը: Պետք է արմատախիլ արվեն կոռուպցիան, կազմակերպված հանցագործությունը, թմրանյութերի առևտուրը և այլն»[54]:

---

[52] *«Ազատ Արցախ», 27.04.2000:*
[53] *Նույն տեղում, 20.06.2000:*
[54] *«Հայաստանի Հանրապետություն», 18.08.2000:*

ՎԵՐՋԱԲԱՆ

Դարերի խորքից եկող հայ ժողովրդի արցախյան հատվածի 20-րդ դարի հերոսական պատմությունը, իրավամբ, հանդիսանում է նրա գոյապայքարի փառավոր էջերից ամենահիշարժանը: Դա մի այնպիսի ժամանակաշրջան էր, երբ արցախահայությունը կարողացավ «աշխարհը շուռ տալ» և պատմության նժարի վրա դնել հարատևության պաշտպանության առասպելը: Աշխարհում ո՞վ է տեսել 14 տարեկան պատանին լինի տանկի հրամանատար: Բայց դա եղել է Արցախում, եղել է հայոց հողում: Այնտեղ 150 անչափահասներ հերոսաբար մարտնչել են թշնամու դեմ, այն թշնամու, որը «եղբայրության» անվան տակ տասնյակ տարիներ ճզմել, քամել, դատարկել էր Արցախը և փորձել ստեղծել նոր Նախիջևան:

Արցախը պայքարեց, ու դիմացավ: Արցախցին, ասել է թե՝ մեր միասնությունը հաղթեց: Եվ դա պետք է լիներ: Հայոց պատմության այս նոր էջի հիմքը ավելի ամրակուռ դարձավ: Այն պետք է ապագա սերնդին ցույց տա, որ հաղթանակը հենց այնպես չի գալիս, այն կերտվում է մարդկանց արյամբ, մեծ դժվարությամբ, երբ կա ազգի միասնություն, համաժողովրդական պայքար, երբ իշխում է հաղթանակի ոգին: Այդ պայքարը հիմնականում ձևավորվեց 1980-ականների կեսերին, գորբաչովյան վերակառուցման տարիներին: Այդ ժամանակ էլ հնչեց Արցախի ազգային-ազատագրական պայքարի զանգը: Եվ Արցախը դարձավ խորհրդային կայսրապետության խորտակման համար պայքարողների առաջնեկներից մեկը: Առաջին գաղտնի կազմակերպություն, ստորագրահավաք, պատվիրակությունների մեկնում Մոսկվա, մարզային խորհրդի արտահերթ նստաշրջան, պայքարի համաժողովրդական պոռթկում, սումգայիթյան ողբերգություն, «Ղարաբաղ» կոմիտե և «Կռունկ» միություն, բռնագաղթում, պատերազմ, զոհեր... Ո՞ր մեկը թվարկես: Յուրաքանչյուր մի դրվագ, մի հատված մի ամբողջ պատմություն է՝ իր բոլոր կողմերով: Իսկ Շուշիի ազատագրումը և մայր Հայաստանի հետ ցամաքային ճանապարհի բացումը բեկումնային, հերոսական քայլ էր: Աշխարհը ցնցվել էր, ապշել, թե ինչպես մի բուռ արցախցիներ կարողացան ելնել պայքարի յոթ միլիոնանոց թուրքերի դեմ և այն պսակել փայլուն հաղթանակով:

Արցախն ազատագրվեց Ադրբեջանի գաղութային լծից: Այդ նշանակում է ձեռնոց նետել մեծ տերությունների կողմից ընդուն-

ված տարածքային ամբողջականության գաղափարի դեմ և առաջ մղել ինքնորոշման պահանջը: Գաղտնիք չէր, որ դեռ էն գլխից Ադրբեջանը գաղտնածածուկ թե բացահայտ փորձում էր Արցախը հայաթափել: Մոսկվան արցախցիների ազգային-ազատագրական պայքարը որակեց ծայրահեղականների, անջատողականների, ազգայնամոլականների ելույթ: Եվ նա իր չհիմնավորված մի շարք որոշումներով դեմ առավ մի պատի, որն այդպես էլ չկարողացավ գետնին տապալել: Իսկ Հայաստանի կուսակցական և պետական այրերը ջուրը նետելով Լեռնային Ղարաբաղի բարդույթի վերաբերյալ գաղափարախոսությունը, ցավոք սրտի, ինչպես հետո խոստացավ այն ժամանակվա ղեկավար այրերից մեկը, «Ղարաբաղի հիմնախնդիրը կուսակցական պաշտոնական ատյաններից տեղափոխվեց փողոցներ ու հրապարակներ»: Եվ, իրոք, չկարողանալով ժողովրդի ճշմարիտ հարցադրումներին պատասխանել՝ ուստի հայության փայփայած գաղափարը գաղափարներ գցեց այնտեղ, որտեղ այդ մասին ճշմարտությունն էր ասվում[1]:

Հետո շարժումը որակական ու ծավալային նոր դրսևորումներ ստացավ: Արցախյան գաղափարը, ինքը՝ շարժումը, մոգական ուժով իր ետևից տարավ հարյուր հազարավոր մարդկանց և ԽՍՀՄ-ում առաջին անգամ Երևանում տեղի ունեցած մեկ միլիոնանոց հանրահավաքները ցնցում առաջ բերեցին խորհրդային երկրում: Արցախ-Հայաստանը, Սփյուռքը, քաղաքական ուժերը, աշխարհի շատ ժողովուրդներ, կազմակերպություններ, պետական և քաղաքական այրեր պաշտպանում էին Ղարաբաղյան շարժումը և խորհրդային կայսրապետության այրերից պահանջում Արցախի հարցը լուծել արդարացիորեն:

Եղան և վրիպումներ՝ Նախիջևանի, Ատոմակայանի, այլ ձեռնարկությունների անժամանակ փակում, արձանների խորտակում: Գորբաչովը շարունակում էր զոհի և դահճի հավասարության քաղաքականությունը: Նրա պահանջով բանտ նետվեցին շարժման ակտիվիստները: Հետո՝ նոր պահանջներ, նոր մարտեր: Ադրբեջանը իր ամբողջ ուժերը կենտրոնացրեց Արցախը բնաջնջելու համար: Հայ ժողովրդի փառապանծ զավակներ գեներալ-լեյտենանտ Նորայր Տեր-Գրիգորյանի, Վազգեն Սարգսյանի, Սերժ Սարգսյանի, գեներալներ Սամվել Բաբայանի, Արկադի

[1] Մովսիսյան Վ., *Հողի ճակատագրով: Մտորումներ տքնության: Եր., 2001, էջ 137:*

Տեր-Թադևոսյանի, Գ.Դալիբալթյանի, Ա.Զինևիչի, Ս.Օհանյանի, Ի. Իվանյանի և շատ ուրիշների ղեկավարությամբ հայոց ուժերը ելան պայքարի և տարան փայլուն հաղթանակ՝ հակառակորդին հասցնելով կործանարար հարվածներ, և փառքով պսակեցին հայ ժողովրդի անունը: Իսկ Արցախի ազատության համար իրենց կյանքը նվիրեցին ավելի քան 6000 ազատամարտիկներ: Փա՜ռք նրանց, փա՜ռք, հավերժ լույս...

Արցախցիները, օգտագործելով իրենց ոգու ուժն ու կորովը, տեր դարձան պապենական երկրին, մարդկային իրավունքներին: Ստեղծված Արցախի պետությունը հանդիսացավ ներկա ժամանակաշրջանում հիմնախնդրի լուծման բանալի: Լեռնային Ղարաբաղն այսօր ազատ է, անկախ, իր ճակատագիրը տնօրինում է Մայր Հայաստանի հետ համատեղ:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)
Ֆ. 1 – ՀՀԿ Կենտկոմ: g. 82, 83, 84, 85, 87, 127:
Ֆ. 409 – Էջմիածնի Գերագույն խորհուրդ:
Ֆ. 4514, g. 6 – «Վարանդա» հայրենակցական կազմակերպություն (ՎՀԿ):
Ֆ. 4514, g. 7 – Ազգային միասնության ուխտ (ԱՄՈՒ):
Ֆ. 4514, g. 9 – «Արցախ-Հայաստան» հասարակական-քաղաքական կազմակերպություն (ՀՔԿ):
Ֆ. 4516 – Հայոց համազգային շարժում (ՀՀՇ):
Ֆ. 4517 – Ազգային ինքնորոշում միավորում (ԱԻՄ):
Ֆ. 4535 – Հայաստանի դեմոկրատական կուսակցություն (ՀԴԿ):

ԼՂՀ պետական արխիվ.
Ֆ. 1 – ԼՂՀՄ մարզային խորհուրդ:
Ֆ. 2 – Հատուկ կոմիտե:
Ֆ. 250 – Մարզկոմի ֆոնդ:
Ֆ. 254 – Ազգային խորհուրդ:

Բ. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

1. ԹԵՐԹԵՐ

«Ազատ Հայք», 1988–1990:
«Ազատամարտ», 1990–1991:
«Ազգ», 1990–2004:
«Ազդակ» (Բեյրութ), 1967–1972, 1988–2000:
«Անկախություն», 1987–1992:
«Առավոտ», 1994–2004:
«Առերեսում», 1997–1998:

«Ավանգարդ», 1988–1995:
«Արցախականչ», 1990–1991:
«Արցախի համալսարան», 1998–2004:
«Գարդմանք» (հետագայում՝ «Գարդմանքի կանչ»), 1996–2004:
«Գրական թերթ», 1987–2004:
«Դաշնակցություն», 1993:
«Եղիցի լույս», (Ստեփանակերտ), 2000–2004:
«Երեկոյան Երևան», 1988–1994:
«Երկիր», 1991–1995:
«Երկրապահ», 2001–2004:
«Ինքնորոշում», 1989–1990:
«Իրավունք», 1989–2004:
«Կոմունիստ» (Բաքու), 1985–1989:
«Հայաստանի Հանրապետություն», 1990–2004:
«Հայկական ժամանակ», 1997–2004:
«Հայոց աշխարհ», 1996–2004:
«Հայրենիքի ձայն», 1988–1991:
«Հայրենիքի մարտիկ», 2000–2001:
«Հայրենյաց պաշտպան», 2000–2004:
«Հայք», 1989–2000:
«Մարտիկ», (Ստեփանակերտ), 1993–2001:
«Միացում» (տեղեկագիր), 1989:
«Մշակ», 1906:
«Մոլորակ», 1998:
«Պոլիտեխնիկ», 1991:
«Սովետական Հայաստան», 1985–1990:
«Սովետական Ղարաբաղ» (հետագայում փոփոխված անուններով Ստեփանակերտ), 1985–2004:
«10-րդ նահանգ», (Ստեփանակերտ), 1999–2000:
«Տնտեսագետ», 1989:
«Ուրբաթ», 1989–1991:
"Азербайджан", (Баку), 1989.

"Аргументы и факты", (Москва), 1988–2000.
"Бакинский рабочий", (Баку), 1988–1992, 2000.
"Вышка", 1988–1989.
"Голос Армении", 1990–2004.
"Зов Арцаха", 1991–1993.
"Известия", (Москва), 1988–2000.
"Коммунист", 1988–1990.
"Комсомольская правда", (Москва), 1988–1990.
"Московские новости", (Москва), 1990–2000.
"Независимая газета", (Москва), 1990–2000.
"Новое время", 1988.
"Правда", (Москва), 1995 –1995.
Социалистическая индустрия, (Москва), 1986–1989.

2. ԱՄՍԱԳՐԵՐ ԵՎ ՀԱՆԴԵՍՆԵՐ

«Արցախ», (Ստեփանակերտ), 1989–1991:
«Բագին» (Բեյրութ), 1993, 1996:
«Բանբեր Հայաստանի արխիվների», 1985–2004:
«Դրոշակ», 1988– 2000:
«Լրաբեր հասարակական գիտությունների», 1985– 2004:
«Կրթությունը և գիտությունը Արցախում», 2000– 2005:
«Հայկական բանակ», 1995– 2004:
«Հայրենիք», 1988– 1989:
«Մանկավարժ», 1988– 1991:
«Պայքար», 1996– 1997:
«Քաղաքական զրուցակից», 1989– 1990:
"Аврора", (Ленинград), 1988.
"Огонек", (Москва), 1992.
"Семья", (Москва), 1988.

Գ. ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Ազդակ, Բացառիկ (Բեյրութ), 20.02.1998:

Թովմասյան Վ. Հ., Աթաջանյան Վ. Ա., Ներսիսյան Յու. Բ., Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ, 1991:

Լեռնային Ղարաբաղը թվերով, Ստեփանակերտ, 2004:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարի նյութերը, Ստեփանակերտ, 1989:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության թվաքանակը 2001թ. հունվարի 1-ի դրությամբ, Ստեփանակերտ, 2001:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանները թվերով: (Վիճակագրական ժողովածու), Ստեփանակերտ, 2003:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը: Տեղեկատվական-վերլուծական եռամսյակային զեկույց, Ստեփանակերտ, 2001:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի որոշ իրավաքաղաքական հարցեր, Երևան, 1994:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. Կարգավորման ուղիներ խորհրդարանական լսումներ 29-30 մարտի, 2005 թ., Երևան, 2006:

Ղարաբաղյան ազատագրական պատերազմը 1988-1994, հանրագիտարան, Երևան, 2004:

Մեղադրվում են, Երևան, 1989:

Азербайджан в цифрах, Баку, 1964.

Азербайджанская аргументация и ее опровержение, Ереван, 1989.

Глазами независимых наблюдателей: Нагорный Карабах и вокруг него. Сборник материалов, Ереван, 1990.

Депортация населения армянских сел НКАО и прилегающих районов, апрель-июнь 1991 года, Ереван, 1995.

Достижения Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах, Степанакерт, 1963.

Заключение комитета Верховного Совета РСФСР по правам человека по итогам слушаний, посвященных нарушению прав человека в районе вооруженного конфликта в ряде районов Азербайджанской республики и республики Армения (конец апреля-май 1991 года), Ереван, 1992.

Закон Азербайджанской Советской Социалистической республики о Нагорно-Карабахской автономной области, Баку, 1997.

К истории образования Нагорном-Карабахской области Азербайджанской ССР 1918–1925, документы и материалы, Баку, 1989.

Конфликт в Нагорном Карабахе, Баку, 1990.

Легетимность Нагорного-Карабахского республики в материалах и документах, Ереван, 1995.

Нагорный Карабах в девятой пятилетке, Степанакерт, 1976.

Нагорный Карабах в 1918 –1923гг, Ереван, 1992.

Народное хозяйство Азербайджанской ССР в 1984 году, Баку, 1985.

Нагорный Карабах, весна-осень 1990, документы и материалы, Ереван, 1990.

Нагорный Карабах за годы Советской власти, Степанакерт, 1969.

Нагорный Карабах и вокруг него. Глазами независимых наблюдателей, Ереван, 1991.

Правда о Нагорном Карабахе, Степанакерт, 1989.

Правда о Нагорном Карабахе, весна-осень, 1990, документы и материалы, Ереван, 1990.

О политике в Армении и Арцахе, Ленинград, 1990.

Статус Нагорного Карабаха. В политико-правовых документах и материалах, Ереван, 1995

Перестройка и национальное отношение, Ереван, 1989.

Хроника НКАО, февраль 1988– февраль 1990, Баку, 1990.

Գ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Հրանտ, Արցախյան գոյամարտ, Երևան, 1991:

Աբրահամյան Հրանտ, Երբ հայրենիքը վտանգի մեջ է, Երևան, 1997:

Աբրահամյան Հրանտ, Ճակատագրին ընդառաջ, Երևան, 2000:

Աբրահամյան Հրանտ, Մկրտչյան Շահեն, Արցախի համար զոհված դիզակցիները, Երևան, 2000:

Աբրահամյան Հրանտ, Հարությունյան Համլետ, Արցախի համար զոհված վարանդացիները, 1988–2001, Երևան, 2003:

Ազիզբեկյան Ռ. Լ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Երևան, 1992:

Ադաջանյան Վահրամ, Ազգային հերոս Սամվել Բաբայան, Երևան, 2002:

Այվազյան Արմեն, Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը, Երևան, 1998:

Առաքելյան Վ. Բ., Ազիզյան Գ. Ն., Նրանք փառքով անմահացան, Երևան, 1999:

Առստամյան Գալյա, Սպասում, «Հուշեր», Ստեփանակերտ, 1996:

Առստամյան Գալյա, Իմ սերը ձեզ հետ է, ողջեր և նահատակներ, Երևան, 1998:

Առստամյան Գալյա, Ստեփանակերտ: Փառքի հուշամատյան 1988-2004, Երևան, 2005:

Արշակյան Անդրանիկ, Մահ չիմացյալ՝ մահ իմացյալ՝ անմահություն, Երևան, 1993:

Արշակյան Անդրանիկ, Արցախյան գոյապայքար (1985-1992),. Երևան, 2004:

Բաբայան Բելա, Արցախի կինը պատմության մեջ, Ստեփանակերտ, 1998:

Բալայան Զորի, Դժոխք և դրախտ, Երևան, 1995:

Բալայան Զորի, Բժիշկ Մարությանը և նրա «Պատերազմի հետքը երկար կմնա», Երևան, 1999:

Բալայան Զորի, երեկ, այսօր, վաղը, Երևան, 2001:
Բակուր, ...Եվ նրա շուրջ, Երևան, 1990:
Բակուր, Անգլուհու արցախյան ողիսականը, Երևան, 1994:
Բակուր, Երկխոսություն քարավանատի ճանապարհին, Երևան, 2003:
Բաղդասարյան Դ. Ս., Դիմակայություն, Երևան, 1998:
Բայունց Սլավա, Թալիշ. գոյության պայքար, Երևան, 2001:
Բարսեղով Յու., Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է, Երևան, 1990:
Բաղրյան Վարդգես, Ֆենոմեն, Ստեփանակերտ, 1998:
Բեգլարյան Հրաչիկ, Արցախ-Նամե, գիրք I և II, Ստեփանակերտ, 2000 և 2002:
Բեգլարյան Միքայել, Ղարաբաղի մեր Քարահունջը, Ստեփանակերտ, 2004:
Բունիաթյան Արցախ, Արյունոտ օր: Մարտակերտ, 1992–1993թթ., գիրք 2, Երևան, 2001:
Գաբրիելյան Կիմ, Ստեփանյան Վոլոդյա, Անավարտ կենսագրություն, Ստեփանակերտ, 1996:
Գալստյան Համբարձում, Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ, Երևան, 2002:
Գրիգորյան Համլետ, Հարությունյան Գրիշա, Արցախի դպրոցը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2005:
Գևորգյան Ռուբեն, Դատապարտված դափնիներ, Երևան, 1995:
Գևորգյան Հ., Պետոն, Բեյրութ, 1996:
Դանիելյան Արմեն, Բեկորը ինչպես որ կար, Ստեփանակերտ, 2000:
Դանիելյան Կոմիտաս, Արցախը չսանձված նժույգ, Երևան, 2001:
Դավթյան Բահատուր, Բաղդասարյան Նիկոլայ, Դաս հայրենյաց, Երևան, 1997:
Դևրիկյան Վարդան, Չսկսված և չավարտված պատերազմը, Երևան, 2004:
Եսայան Էռնեստ, Բույլ նահատակաց, Երևան, 1996:

Թադևոսյան Ռաֆիկ, Շուշիի ազատագրումը և Լաչինի միջանցքի բացումը, Երևան, 1999:
Իշխանյան Բ., Բաքվի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920:
Խաչատրյան Գրիշա, Ցավ հայրենյաց, մորմոք վարժապետի, Երևան, 1997:
Խաչատրյան Սերգեյ, Վաստակած պատիվ, Ստեփանակերտ, 2002:
Խոջաբեկյան Վ. Ե., Արցախը փորձության ժամին, Երևան, 1991:
Հակոբջանյան Արտաշես, Արցախյան ազատամարտի ակունքների մոտ, Երևան, 2001:
Հասրաթյան Սենոր, Ղարաբաղյան պատերազմ, Երևան, 2001:
Հասրաթյան Սենոր, Գոյամարտ, Ստեփանակերտ, 1998:
Հասրաթյան Սենոր, Գեներալ Իվանյան, Երևան, 2004:
Հարությունյան Ս. Ա., Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Երևան, 2000:
Ղազարյան Ալբերտ-Հայրիկ: Հիսուն օր Արցախում, Երևան, 1994:
Ղազարյան Ռաֆայել, Հաշվետու եմ..., Երևան, 2003:
Ղահրամանյան Կիմ, Հյուսիսային Արցախ, գոյության պայքար, Երևան, 1993:
Ղարիբյան Գ., Արթուր: Արծվի թռիչք էր նա, Երևան, 1999:
Մանուկյան Վազգեն, Հայկական երազանքը գոյատևման փակուղում, Երևան, 2002:
Մարգարյան Սիլվարդ, Մարտակերտ: Չհայտարարված պատերազմի կիզակետ, Ստեփանակերտ, 1999:
Մելիք-Շահնազարյան Լևոն, Սորբեջանական ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երևան, 1998:
Մելքումյան Սերգեյ, Լեռնային Ղարաբաղ, Երևան, 1990:
Մելքումյան Սերգեյ, Ճարտար, Երևան, 2003:
Մինասյան Էդիկ, Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990–2003 թթ.), Երևան, 2003:
Միրզոյան Վազգեն, Սարգսաշեն, Ստեփանակերտ, 1997:

Միքայելյան Դավիթ, Հոգու և կյանքի վերածնունդը Արցախում, Երևան, 2001:
Մկրտչյան Արթուր, Ի՞նչ է տեղի ունեցել Հադրութում, Երևան, 1992:
Մկրտչյան Լևոն, Արցախ-Ղարաբաղը իր անցյալով և ներկայով, Աթենք, 1988:
Մկրտչյան Շահեն, Արցախ, Երևան, 1991:
Մկրտչյան Շահեն, Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա, Երևան, 1996:
Մովսեսովա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը, Երևան, 1992:
Մովսիսյան Վլադիմիր, Հողի ճակատագրով. Ստորումներ մեծության, Երևան, 2001:
Մուսայելյան Բաբկեն, Հանուն Արցախի և հայրենի Մարտունու, Ստեփանակերտ, 1998:
Նանագյուլյան Սեդրակ, Արծիվները բարձունք են տենչում, գիրք Ա, Բ, Գ, Երևան, 1992–1993:
Նանագյուլյան Սեդրակ, Շահեն, Երևան, 1993:
Պալյան Հակոբ, Արցախի ազատագրական պայքարը՝ պրիսմակէս դիտուած, Փարիզ, 2001:
Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյան, Երկնային օգնութիւն քրիստոնեայ զինվորին, Երևան, 1995:
Պետրոսյան Դերենիկ, Հայրիկս ինչո՞ւ չի գալիս, Երևան, 2001:
Պետրոսյան Նիկոլայ, Ճարտարի անմահները, Երևան, 1999:
Պետրոսյան Ռազմիկ, Արցախ. պատերազմ. զինադադար, Երևան, 2001:
Սահակյան Արամայիս, Խաչ և սուր, Երևան, 1995:
Սարգսյան Վազգեն, Ոգու փորձություն, Երևան, 2000:
Սարենց Մուշեղ, Բեկոր, Երևան, 1993:
Սողոմոնյան Նվարդ, 1991. «Կոլցո», մաս 1, Ստեփանակերտ, 1994, մաս 2, Ստեփանակերտ, 1995:
Վարդանյան Վարդան, Ծանր վարագույր, Երևան, 1992:
Վարդումյան Հովիկ, Կին ազատամարտիկներ, Երևան, 2003:

Ուլուբաբյան Բագրատ, Արցախյան գոյապայքար, Երևան, 1994:
Ուլուբաբյան Բագրատ, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան 1997:
Օհանջանյան Փաշա, Ղարաբաղի ազատագրական պատերազմը, Երևան, 2000:
Абасов Али, Хачатрян Арутюн, Корабахский конфликт, Варианты решения идеи и реальность, Москва, 2004.
Авакян Григор, Нагорный Карабах. Ответ фальсификации, Ереван, 1991.
Арабян И. А., Геноцид и его наказуемость, Ереван, 1998.
Арутюнян В. Б., События в Нагорном Карабахе, ч. 1-6, Ереван, 1990 1997.
Бабанов Игор, Воеводский Константин, Карабахский кризис, Санкт-Петербург, 1992.
Бабаян Ида, Армения и Нагорный Карабах на политической сцене мира, Ереван, 1995.
Балаян Грайр, Нагорный Карабах и национальные конфликты в союзе, Ереван, 1991.
Барсегов Ю. Г., Народ Нагорного Карабаха- субъект права на самоопределение, Москва, 1993.
Барсегов Ю. Г., Самоопределение и территориальная целостность, Москва; 1993.
Барсегян Хикар, Истина дороже... К проблеме Нагорного Карабаха-Арцаха, Ереван, 1992.
Вермишева Седа, Депортация населения армянских сел НКАО и прилегающих районов: апрель-июн 1991 года, Ереван, 1995.
Геворкян Павел, Дневник судебного процесса о приступлениях против армянского населения Сумгаита, Степанакерт, 1998.
Геноцид армян в Азербайджане и Нагорном Карабахе, Степанакерт, 1998.
Григорян Владимир, Армения. 1988–1989, Ереван, 1999.
Золян Сурен, Нагорный Карабах: проблемы и конфликты Ереван, 2001.

Камалян Сейран, Карабах на пути к бессмертию, Краснодар, 1994.

Карсеци А., Конфликты между народами и пути их преодоления. К проблеме Нагорного Карабаха, Ереван, 1990.

Керолайн Кокс, Джон Айбнер, Этническая чистка продолжается. Война в Нагорном Карабахе, Ереван, 1998.

Кривопусков Виктор, Мятежный Карабах, Ростов-на-Дону, 2003.

Манасян А. С., Карабахский конфликт ракурсы правого подхода, Ереван, 1997.

Манасян Александр, Карабахский конфликт, Ереван, 2000.

Мелик-Шахназарян Левон, Гандзак. Неутраченный мир, Степанакерт, 1996.

Нагорный Карабах: аннексия и депортация, Степанакерт, 1998.

Нагорный Карабах. Историческая справка, Ереван, 1988.

Неналазанный геноцид, Степанакерт, 1998.

Оганян Николай, Карабахский конфликт. Этапы, подходы, решения, Ереван, 1997.

Папян Рафаэль, Маски террора, Ереван, 1992.

Сахаров Андрей, О Нагорной Карабахе, Ереван, 1996

Сумгаит... Геноцид... Гласность...? Ереван, 1989.

Хуршудян Л. А., Истина-единственный критерий исторической науки, Ереван, 1989.

Чобанян С. С., Государственно-организованный терроризм, Ереван, 1992.

2000-2005թթ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ առաջին. Արցախահայության ազգային-ազատագրական պայքարի նոր վերելքը (1985–1988 գարուն)

1. Պայքարի սկզբնավորումը 15
2. 1988թ. փետրվարի 20-ի մարզխորհրդի որոշումը 26
3. Շարժման համաժողովրդական բնույթը 54

Գլուխ երկրորդ. Պայքար սահմանադրական իրավունքների իրագործման և Արցախի հանրապետության ստեղծման համար (1988 մարտ – 1991 սեպտեմբեր)

1. Իրադարձությունների հետագա խորացումը 81
2. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988թ. հուլիսի 18-ի որոշումը և նրա հետևանքները 107
3. Հակահայկական դիրքորոշման նոր դրսևորումներ 141
4. Արցախ-Հայաստանի վերամիավորման համազգային շարժման ընդլայնումը 176
5. Իրավիճակի հետագա սաստկացումը 216
6. Արցախահայությունը դիմագրավում էր հակառակորդի նոր ճնշումներին 246

Գլուխ երրորդ. Հայ-ադրբեջանական չհայտարարված պատերազմը Արցախում (1991 սեպտեմբեր – 1992 մայիս)

1. ԼՂ Հանրապետության կայացման ընթացքը 307
2. ԼՂ Հանրապետության առաջին գործնական քայլերը 324
3. Շուշիի ազատագրումը և Արցախ-Հայաստան ցամաքային կապի հաստատումը 344

Գլուխ չորրորդ. Անհաջողությունները հաղթահարելուց մինչև պատմական հաղթանակը (1992 մայիս – 1994 մայիս)

1. 1992թ. դաժան ամռանը 372
2. Պաշտպանական մարտերը 1992թ. աշնանը 411
3. ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի դիրքերի ամրապնդումը (1993 հունվար-հունիս) 442
4. ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հարձակողական գործողությունները (1993 հունիս-դեկտեմբեր) 479
5. Պատերազմական գործողությունների դադարեցումը և հրադադարի կնքումը 509

Գլուխ հինգերորդ. Արցախյան բարդությը աշխարհաքաղաքական հորձանուտներում

1. Ադրբեջանի հայության բռնագրեթեցումը 531
2. Կամավորական ջոկատներից մինչև պաշտպանության բանակի ստեղծումը 545
3. Արցախյան շարժումը և հայ հասարակական-քաղաքական ուժերը 560
4. Հայ կինը և արցախյան շարժումը. 576
5. Արցախյան շարժման արձագանքները Սփյուռքում և արտասահմանյան երկրներում 604
6 Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի միջազգայնացումը 623

Գլուխ վեցերորդ. ԼՂՀ սոցիալ-տնտեսական հասարակական և քաղաքական կյանքը 1994–2000թթ.

1. Ձեռնարկումներ հետպատերազմյան տարիներին 668
2. Հասարակական-քաղաքական կյանքը Լեռնային Ղարաբաղում 701
Վերջաբան 727
Մատենագիտություն 730

ՀՐԱՆՏ ԲԱՐՍԵՂԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՄԱՐՏՆՉՈՂ ԱՐՑԱԽԸ
1917 – 2000

ԳԻՐՔ Գ
1985 – 2000

АБРАМЯН ГРАНТ БАРСЕГОВИЧ

СРАЖАЮЩИЙСЯ АРЦАХ
1917 – 2000

КНИГА В
1985 – 2000

Книга посвящена истории 1985 – 2000гг. Нагорного Карабаха-Арцаха национально-освободительной борьбе против азербайджанской тирании, вследствии чего Нагорный Карабах приобрел независимость.

ABRAHAMYAN HRANT BARSEGH

FIGHTING ARTSAKN
1917 – 2000

BOOK C
1985 – 2000

This book is donated the history of outrage against the Armenians who living in Artsakh and from 1985 to 2000 impeled national eman cipational fighting, as a con sequen

Խմբագիր՝ Գուրգեն Գեղամյան
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան

Համակարգչային
էջադրումը՝ Ալինա Հովսեփյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84/16, ծավալը՝ 46.5 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 250:

«Դիզակ պլուս» ՍՊԸ
Հ. Հակոբյան, 25
Ստեփանակերտ - 2007

ՀՐԱՆՏ ԲԱԲՍԵՂԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ծնվել է 1931թ. օգոստոսի 12-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Քերթ գյուղում: Ավարտելով Սոս-ի միջնակարգ դպրոցը՝ 1950թ. ընդունվել է Բաքվի Վ. Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետ: Այն 1954թ. ավարտել է գերազանցության դիպլոմով եւ որպես ուսուցիչ աշխատել Ֆիզուլի քաղաքում: Ապա զորակոչվել է խորհրդային բանակ, որտեղից զորացրվելուց հետո աշխատել է Լեռնային Ղարաբաղի մի շարք գյուղերի դպրոցներում: 1973թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Լեռնային Ղարաբաղը 1920-1937թթ.», իսկ 1997-ին՝ դոկտորական թեզ՝ «Արցախահայության ազատագրական պայքարը 1917-1923թթ.» թեմաներով:

Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Աբրահամյանը շուրջ 100 գիտական հոդվածների եւ ավելի քան 10 գրքերի հեղինակ է: «Արցախի հերոսամարտը» եւ «Թեւան» գրքերի համար 1998-ին, իսկ «Ճակատագրին ընդառաջ» գրքի համար՝ 2001թ. արժանացել է ԼՂՀ կառավարության Եղիշեի անվան ամենամյա մրցանակի: Ներկայումս աշխատում է «Արցախը 18-19-րդ դարերում» մենագրության վրա:

«ԴԻՋԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ